

MAT
ՄԱՏԹԵՈՍ

ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ

ՄԱՏԹԵՈՍԻ

Ավետարանների դասավորման մեջ առաջինը Մատթեոսի Ավետարանն է: Այս Ավետարանի հեղինակը Մատթեոս առաքյալն է (9.9), որը կոչվել է նաև Ղևի (Մր 2.14, Ղկ 5.27): Մատթեոսը պաշտոնով մաքսավոր էր, այսինքն՝ հարկահավաք, երբ Հիսուսը առաքելության կանչեց նրան:

Մատթեոսի Ավետարանն իր ընթերցողներին, հատկապես իր ժամանակի հրեա քրիստոնյաներին հայտնում է, որ Հիսուսն է այն Փրկիչը, որ Աստված խոստացել էր Հին Կտակարանի մարգարեությունների մեջ: Հիսուսը միայն եբրայեցի ժողովրդի Փրկիչը չէ, այլ ամբողջ աշխարհի:

Մատթեոսն իր Ավետարանը գրել է ժամանակագրական կարգով. այն սկսում է Հիսուսի ազգաբանությամբ և ծնունդով, նկարագրում է նրա մկրտությունն ու փորձությունը և ապա նրա քարոզչությունն ու բժշկությունները: Այնուհետև նա նկարագրում է վերջին անգամ Հիսուսի մուտքը Երուսաղեմ, նրա կյանքի վերջին շաբաթվա դեպքերը, խաչելությունն ու հարությունը:

Մատթեոս ավետարանիչը Հիսուսին ներկայացնում է որպես այն մեծ ուսուցիչը, որ իշխանություն ունի մեկնաբանելու Աստծու Օրենքը և քարոզելու Աստծու արքայության մասին: Հիսուսը Աստծու Օրենքի և Ուխտի հավատարիմ ծառան է, որը կատարում և ամբողջացնում է Աստծու ծրագիրը: Մատթեոսի Ավետարանում Հիսուսի ուսուցումները տրվում են հատուկ խմբավորումով և ընդհանուր դասավորությամբ՝ ըստ հետևյալ կարգի.

1. Լեռան քարոզը, որով Հիսուսը մեզ հայտնում է մեր պարտավորությունները՝ Աստծու արքայությանը արժանի լինելու համար (5-7-րդ գլուխներ):

2. Իր աշակերտներին տրված ցուցումներ՝ Աստծու արքայությունը քարոզելու իրենց առաքելության մասին (10-րդ գլուխ):

3. Երկնքի արքայության խորհուրդը և հետագա մեծ հաղթանակը պատկերող յոթ առակներ (13-րդ գլուխ):

4. Այս աշխարհում ինչպե՞ս ապրել որպես երկնքի արքայության զավակներ (18-րդ գլուխ):

5. Ուսուցումներ ներկա ժամանակների վախճանի և Աստծու արքայության գալստյան մասին (24-25-րդ գլուխներ):

ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Հիսուսի ազգաբանությունը և ծնունդը (1.1-2.23):
- Հովհաննես Մկրտչի առաքելությունը (3.1-12):
- Հիսուսի մկրտությունը և փորձությունը (3.13-4.11):
- Հիսուսի քարոզչությունը և նրա կատարած գործերը Գալիլեայում (4.12-18.35):

- Նրա երթըր Գալիլեայից Երուսաղեմ (19.1-20.34):
- Վերջին շաբաթը Երուսաղեմում ու նրա շրջակայքում (21.1-27.66):
- Հիսուսի հարությունը և նրա երևալն իր աշակերտներին (28.1-20):

1

Հիսուսի ազգատոհմը

(Ղկ 3.23-38)

¹ Այս է Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու, Աբրահամի որդու ազգաբանությունը՝

² Աբրահամը ծնեց Իսահակին. Իսահակը՝ Հակոբին. Հակոբը՝ Հուդային և նրա եղբայրներին. ³ Հուդան իր Թամար կնոջից ծնեց Փարեսին ու Ջարային, Փարեսը ծնեց Եզրոնին. Եզրոնը՝ Արամին. ⁴ Արամը՝ Ամինադաբին. Ամինադաբը՝ Նաասոնին. Նաասոնը՝ Սալմոնին. ⁵ Սալմոնն իր Ռախաբ կնոջից ծնեց Բոոսին. Բոոսն իր Հուլի կնոջից ծնեց Օբեդին. Օբեդը՝ Հեսսեին. ⁶ Հեսսեն՝ Դավիթ թագավորին: Դավիթ թագավորը ծնեց Սողոմոնին՝ Ուրիայի կնոջից. ⁷ Սողոմոնը ծնեց Ռոբոամին. Ռոբոամը ծնեց Աբիային. Աբիան՝ Ասաֆին. ⁸ Ասաֆը՝ Յուսաֆատին. Յուսաֆատը՝ Յորամին. Յորամը՝ Օզիային. ⁹ Օզիան՝ Յոաթամին. Յոաթամը՝ Աքազին. Աքազը՝ Եզեկիային. ¹⁰ Եզեկիան՝ Մանասեին. Մանասեն՝ Ամոսին. Ամոսը՝ Յոսիային. ¹¹ Յոսիան՝ Եքոնիային և նրա եղբայրներին՝ բաբելոնյան գերության շրջանում:

¹² Բաբելոնյան գերությունից հետո Եքոնիան ծնեց Սաղաթիելին. Սաղաթիելը՝ Ջորոբաբելին. ¹³ Ջորոբաբելը՝ Աբիուդին. Աբիուդը՝ Եղիակիմին. Եղիակիմը՝ Ազորին. ¹⁴ Ազորը՝ Սաղոկին. Սաղոկը՝ Աքինին. Աքինը՝ Եղիուդին. ¹⁵ Եղիուդը՝ Եղիազարին. Եղիազարը՝ Մատթանին. Մատթանը՝ Հակոբին. ¹⁶ Հակոբը ծնեց Հովսեփին, որը Մարիամի նշանածն էր, և Մարիամից ծնվեց Հիսուսը, որ անվանվեց Քրիստոս:

¹⁷ Արդ, Աբրահամից մինչև Դավիթը կա տասնչորս սերունդ, Դավթից մինչև բաբելոնյան գերությունը՝ տասնչորս սերունդ, և բաբելոնյան գերությունից մինչև Քրիստոսը՝ տասնչորս սերունդ:

Հիսուսի ծնունդը

(Ղկ 2.1-7)

¹⁸ Հիսուս Քրիստոսի ծնունդը այսպես եղավ. նրա մայրը՝ Մարիամը, նշանված էր Հովսեփի հետ, բայց նախքան ամուսնությունը Մարիամը հղի մնաց Սուրբ Հոգուց:

¹⁹ Հովսեփը՝ նրա նշանածը, որ արդար մարդ էր, չուզեց հանրության առջև խայտառակել նրան, այլ մտածեց լռեցյալն հետ վերցնել նշանը: ²⁰ Մինչ նա մտածում

^{1.1} «Քրիստոս» հուն. նշ է «Օծյալ», որ համապատասխան է եբր. «Մաշիահ» (Մեսիա) բառին, այսինքն՝ նա, որ Աստուծուց պիտի գար՝ փրկելու Իսրայելի ժողովրդին:

^{1.11} Դ Թգ 24.14-15, Բ Մն 36.10, Եր 27.20:

^{1.18} Ղկ 1.27:

^{1.19} «Նշանածը». բոց՝ «ամուսինը». հրեական նշանախոսությունը օրենքով համագոր էր ամուսնության, թեև առանց մարմնական հարաբերության: Այս իմաստով էլ, Մովսիսական Օրենքի համաձայն, նշանվածներն այլևս կոչվում էին այր և կին (հմտ Բ Օր 22.24), և նշանը հետ վերցնելը

էր այս մասին, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց նրան և ասաց.

- Հովսէփ, Դավթի՛ որդի, մի՛ վախեցիր ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետև նրա մեջ հղացվածը Սուրբ Հոգուց է:՝²¹ Նա մի որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես, որովհետև նա իր ժողովրդին պիտի փրկի իր մեղքերից:՝

²² Այս բոլորը պատահեց, որպեսզի կատարվի այն, ինչ Տերն ասել էր Եսայի մարգարեի միջոցով.

²³ «Ահա կույսը պիտի հղիանա և մի որդի պիտի ծնի,

և նրան պիտի կոչեն Էմմանուել»,

որ նշանակում է՝ Աստված մեզ հետ:՝

²⁴ Երբ Հովսէփն արթնացավ, կատարեց այն, ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայել էր իրեն, և ամուսնացավ իր նշանածի՝ Մարիամի հետ, ²⁵ բայց չհարաբերեց նրա հետ, մինչև որ Մարիամը ծնեց իր անդրանիկ որդուն, որի անունը Հիսուս դրեց:՝

2

Մոգերի այցելությունը

¹ Հերովդես թագավորի օրերին էր, որ Հիսուսը ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում: Եվ ահա արևելքից մոգեր եկան Երուսաղեմ՝² և հարցրին.

- Ուր է հրեաների նորածին թագավորը. մենք տեսանք նրա աստղը արևելքում և եկանք երկրպագելու նրան:

³ Երբ Հերովդես թագավորը լսեց այս, խռովվեց, և նրա հետ՝ Երուսաղեմի բոլոր բնակիչները: ⁴ Կանչեց ժողովրդի բոլոր ավագ քահանաներին ու Օրենքի ուսուցիչներին և հարցրեց նրանց, թե որտե՞ղ պիտի ծնվի Քրիստոսը:

⁵ Նրանք պատասխանեցին.

- Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, որովհետև Միքիա մարգարեն այսպես է գրել.

⁶ «Դու, Բեթղեհեմ, Հուդայի՛ քաղաք,

հռչակով նվագ չես Հուդայի մյուս քաղաքներից,

որովհետև քեզնից պիտի ելնի մի իշխան,

որ պիտի հովվի իմ ժողովրդին՝ Իսրայելին»:՝

⁷ Այն ժամանակ Հերովդեսը գաղտնաբար իր մոտ կանչեց մոգերին և նրանցից աստուգեց աստղի երևալու ժամանակը: ⁸ Ապա նրանց ուղարկեց Բեթղեհեմ՝

կոչվում էր կնոջն արձակել՝ ճիշտ ինչպես ամուսնության ժամանակ:

^{1.20} «Նշանածիդ», բոց՝ «կնոջդ», տես նախորդ ծնթ: «Նրա մեջ հղացվածը», բոց՝ «նրա մեջ ծնվածը»:

^{1.21} «Հիսուս», հուն. անվանաձևն է եբրայերեն «Հեսուս» (=Եհոշուահ) անվան, որ նշ է՝ «Տերը (Եհովան) փրկություն է», կամ՝ «Տերը փրկում է»:

^{1.21} Սբ 46.1, Ղկ 1.31:

^{1.23} Ես 7.14 [LXX]:

^{1.25} Ղկ 2.21:

^{2.1} «Հերովդես թագավոր». այս պատմության մեջ Մեծն Հերովդես կոչված թագավորն է, որ ՔԱ 37-4 թվականներին իշխեց ամբողջ Պաղեստինի վրա: Բեթղեհեմ քաղաքը Դավթի ծննդավայրն էր (Ա Թգ 16.1), Երուսաղեմից շուրջ յոթ կմ դեպի հարավ: «Բեթղեհեմ» նշ է «Հացի տուն»:

^{2.6} Սբ 5.2:

պատվիրելով.

- Գնացե՛ք, ստույգ տեղեկություններ քաղելով գտե՛ք երեխային, և երբ գտնեք, տեղեկացրե՛ք ինձ, որպեսզի ես էլ գամ և երկրպագեմ նրան:

⁹⁻¹⁰ Թագավորի այս հրահանգը լսելուց հետո մոզերը մեկնեցին: Նրանք չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան այն աստղը, որ տեսել էին արևելքում: Եվ ահա աստղը առաջնորդեց նրանց, մինչև որ եկավ ու կանգ առավ այն տեղի վրա, որտեղ գտնվում էր երեխան: ¹¹ Երբ տուն մտան, տեսան երեխային իր մոր՝ Մարիամի հետ, և մինչև գետին խոնարհվելով՝ երկրպագեցին մանկանը: Ապա բաց արեցին իրենց արկղիկները և Հիսուսին ընծայեցին իրենց նվերները՝ ոսկի, կնդրուկ և գնուռ:

¹² Հետո այլ ճանապարհով գնացին իրենց երկիրը, առանց Հերովդեսին հանդիպելու, ինչպես որ Աստված երազի մեջ հրահանգել էր նրանց:

Փախուստ դեպի Եգիպտոս

¹³ Երբ մոզերը մեկնեցին Բեթղեհեմից, Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց Հովսեփին ու ասաց.

- Վե՛ր կաց, վերցրո՛ւ մանկանն ու նրա մորը և փախի՛ր Եգիպտոս. այնտե՛ղ մնա, ինչքան որ կասեմ քեզ, որովհետև Հերովդեսը փնտրում է մանկանը՝ սպանելու համար նրան:

¹⁴ Հովսեփն արթնացավ, գիշերով վերցրեց մանկանն ու նրա մորը և գնաց Եգիպտոս, ¹⁵ որտեղ մնաց մինչև Հերովդեսի մահը: Այսպես իրականացավ Տիրոջ խոսքը՝ ասված Օվսիա մարգարեի բերանով. «Եգիպտոսից կանչեցի իմ որդուն»:

Մանուկների կտորածը

¹⁶ Իսկ Հերովդեսը, երբ տեսավ, որ մոզերը խաղ խաղացին իր հետ, սաստիկ զայրացավ և մարդ ուղարկեց, որպեսզի սպանեն Բեթղեհեմում ու նրա շրջակայքում գտնվող բոլոր երեխաներին, որոնք երկու տարեկան և կամ դրանից ավելի փոքր էին՝ նկատի ունենալով Հիսուսի ծննդյան ժամանակը, որ նա ստուգել էր մոզերից:

¹⁷ Այսպես իրականացավ այն, ինչ Տերն ասել էր Երեմիա մարգարեի բերանով.

¹⁸ «Մի գույժ լավեց Ռամայում,
ողբ, հեծեճանք և լացուկոճ դառնագին.
ողբում էր Ռաբբելն իր զավակներին
և չէր ուզում մխիթարվել,
քանզի նրանք այլևս չկային»:

Վերադարձ Եգիպտոսից

¹⁹ Հերովդեսի մահից հետո ահա Տիրոջ հրեշտակը Եգիպտոսում երազի մեջ երևաց

^{2.11} «Երբ տուն մտան». այս բառերը, ինչպես նաև դեպքերի ընթացքը ցույց են տալիս, որ մոզերի այցելությունը տեղի ունեցավ ոչ թե Հիսուսի ծննդյան գիշերը, այլ որոշ ժամանակ անց, երբ Հովսեփն ու Մարիամը մանկան հետ փոխադրվել էին հատուկ մի տուն:

^{2.15} Օս 11.1:

^{2.18} Եր 31.15:

Հովսեփին ²⁰ և ասաց.

- Վե՛ր կաց, վերցրո՛ւ մանկանն ու նրա մորը և վերադարձի՛ր Իսրայելի երկիրը, որովհետև մանկանը սպանել ուզողները մեռան:

²¹ Հովսեփը վեր կացավ, վերցրեց մանկանն ու նրա մորը և վերադարձավ Իսրայելի երկիրը: ²² Բայց երբ լսեց, թե Արքեղայոսն է թագավորում Հրեաստանի վրա իր հոր Հերովդեսի փոխարեն, վախեցավ այնտեղ գնալ: Դրա փոխարեն, երազի մեջ իրեն հրամայվածի համաձայն, գնաց Գալիլեայի կողմերը՝ ²³ և եկավ բնակվեց Նազարեթ քաղաքում, որպեսզի իրականանա այն, ինչ Տերն ասել էր մարգարեների միջոցով, թե՛ Նազովրեցի պիտի կոչվի:՝

3

Հովհաննես Մկրտչի քարոզչությունը

(Մկ 1.2-8, Ղկ 3.1-18, Հհ 1.19-28)

¹ Այն օրերին Հովհաննես Մկրտիչն սկսեց քարոզել Հրեաստանի անապատում՝ ² ասելով.

- Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է՝

³ Այս Հովհաննեսն էր այն անձը, որի մասին Եսայի մարգարեն խոսել էր՝ ասելով.

«Անապատում կանչողի ձայնն ասում է.

«Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը,

հարթեցե՛ք նրա շավիղները"»:

⁴ Հովհաննեսն ուղտի մազից պատրաստված հագուստ ուներ և մեջքին՝ կաշվե գոտի: Նրա կերակուրը մորեխ և վայրի մեղր էր: ⁵ Երուսաղեմից, ամբողջ Հրեաստանից և Հորդանան գետի բոլոր շրջաններից մարդիկ գնում էին նրա մոտ ⁶ և խոստովանելով իրենց մեղքերը՝ նրա ձեռքով մկրտվում էին Հորդանան գետում:

⁷ Երբ Հովհաննեսը տեսավ շատ սադուկեցիների և փարիսեցիների, որոնք եկել էին մկրտվելու իրենից, ասաց նրանց.

- Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ասաց ձեզ, թե կարող եք փախչել Աստծու գալիք պատժից:

⁸ Այսուհետև գործո՛վ ցույց տվեք, որ ապաշխարել եք: ⁹ Դուք ձեր մեջ մի՛ խորհեք, թե կարող եք ազատվել պատժից՝ ասելով. «Մենք Աբրահամի որդիներ ենք»: Ես ձեզ

^{2.22} «Արքեղայոսը» իր հորը՝ Հերովդես Մեծին, հաջորդեց ՔԱ 4-ին և Հրեաստանի ու Սամարիայի վրա իշխեց տասը տարի, մինչև ՔՀ 6 թ.:

^{2.23} «Նազովրեցի» նշ է «Նազարեթ քաղաքից»: Թե ՀԿ-ի ո՛ր մարգարեությունն է ակնարկում Մատթեոսը, մեզ համար հստակ չէ, բայց որոշակի է, որ Հիսուսը ճանաչվեց այդ անունով (տե՛ս Մտ 21.11): Նույն անունով ճանաչվեցին նաև առաջին քրիստոնյաները (Գրծ 24.5):

^{2.23} Մր 1.24, Ղկ 2.39, Հհ 1.45:

^{3.1} «Հրեաստանի անապատ» կոչված վայրը շատ քիչ բնակեցված մի շրջան էր՝ Երուսաղեմից դեպի արևելք և տարածվում էր մինչև Մեռյալ ծով:

^{3.2} Մտ 4.17, Մր 1.15:

^{3.3} Ես 40.3 [LXX]:

^{3.4} Դ Թզ 1.8:

^{3.7} Մտ 12.34, 23.33:

ասում եմ, որ Աստված կարող է այս քարերից էլ Աբրահամի որդիներ դուրս բերել:¹⁰ Կացինն ահա պատրաստ է՝ կտրելու ծառերն իրենց արմատներից: Այն ծառը, որ բարի պտուղ չի տա, պիտի կտրվի և կրակը գցվի:¹¹ Ես ձեզ ջրով եմ մկրտում իբրև նշան ապաշխարության, բայց նա, ով գալիս է ինձնից հետո, ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և կրակով: Նա ինձանից ավելի հզոր է, և ես նրա կոշիկները տանելու իսկ արժանի չեմ:¹² Քամհարը նրա ձեռքին է, նա կմաքրի իր կալը, ցորենը կհավաքի շտեմարանում, իսկ հարդը կայրի անշեջ կրակով:՝

Հիսուսի մկրտությունը

(Մր 1.9-11, Ղկ 3.21-22, Հհ 1.29-34)

¹³ Այն ժամանակ Հիսուսը Գալիլեայից Հորդանան գետը եկավ, Հովհաննեսի մոտ՝ մկրտվելու նրանից:¹⁴ Բայց Հովհաննեսն ընդդիմացավ նրան՝ ասելով.

- Ե՛ս պետք է քեզնից մկրտվեմ, և դու՞ ես գալիս ինձ մոտ:

¹⁵ Հիսուսը պատասխանեց.

- Թո՛ւյլ տուր հիմա, որ այսպես լինի, որովհետև այսպիսով մենք կատարած կլինենք Աստծու արդար կամքը:

Եվ Հովհաննեսը թույլ տվեց:¹⁶ Հիսուսը մկրտվելուց հետո իսկույն դուրս ելավ ջրից: Եվ ահա երկինքը բացվեց, ու նա տեսավ Աստծու Հոգին, որ իջնում էր ինչպես աղավնի և գալիս էր իր վրա:¹⁷ Եվ երկնքից լսվեց մի ձայն, որ ասում էր.

- Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ բարեհաճությունը:՝

4

Հիսուսի փորձությունը

(Մր 1.12-13, Ղկ 4.1-13)

¹ Հետո Հիսուսը Սուրբ Հոգու կողմից տարվեց անապատ՝ փորձվելու Սատանայից:՝

² Նա քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելուց հետո քաղց զգաց:

³ Այն ժամանակ փորձիչը՝ Սատանան, մոտեցավ նրան և ասաց.

- Եթե Աստծու Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց դառնան:

⁴ Հիսուսը պատասխանեց.

- Օրենքի գրքում գրված է. «Մարդ միայն հացով չի ապրում, այլ այն բոլոր խոսքերով,

^{3.9} Հհ 8.33:

^{3.10} Մտ 7.19:

^{3.12} «Քամհարը» եռաժանի կամ քառաժանի գործիք է, կոչվել է նաև հոսելի կամ եղան, որ գործածվում է կալում հարդախառն ցորենը քամուն տալով՝ հարդը ցորենից առանձնացնելու համար: Այստեղ այն օգտագործվում է իբրև Աստծու դատաստանի խորհրդանիշ:

^{3.12} Իմս 5.14, 23:

^{3.13} «Այն ժամանակ...». Հիսուսը իր հրապարակային գործունեությունն սկսեց շուրջ 27-28թթ.: Տե՛ս Ղկ 3.1 և ծնթ:

^{3.17} Ծն 22.2, Մղ 2.7, Ես 42.1, Մտ 12.18, 17.5, Մր 1.11, Ղկ 9.35:

^{4.1} Եբր 2.18, 4.15:

որ Աստված է ասել»։⁵

⁵ Ապա Սատանան Հիսուսին տարավ սուրբ քաղաքը՝ Երուսաղեմ, և նրան կանգնեցնելով տաճարի աշտարակներից մեկի վրա՝ ⁶ ասաց.

- Եթե Աստծու Որդին ես, դու քեզ այստեղից ցած գցիր, որովհետև սաղմունքում գրված է. «Աստված իր հրեշտակներին պիտի պատվիրի քեզ համար, և նրանք իրենց ձեռքերի վրա պիտի վերցնեն քեզ, որպեսզի ոտքդ քարին չխփվի»։⁷

⁷ Հիսուսն ասաց նրան.

- Օրենքի գրքում դարձյալ գրված է. «Քո Տեր Աստծուն չպիտի փորձես»։⁸

⁸ Հետո Սատանան Հիսուսին կրկին առավ տարավ մի շատ բարձր լեռան վրա և նրան ցույց տալով աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը՝ ⁹ ասաց.

- Այս բոլորը քեզ կտամ, եթե երկրպագելով պաշտես ինձ:

¹⁰ Այն ժամանակ Հիսուսն ասաց.

- Հետո՛ւ գնա, Սատանա՛, որովհետև Օրենքի գրքում գրված է. «Քո Տեր Աստծո՛ւն պիտի պաշտես և միայն նրա՛ն ծառայես»։¹¹

¹¹ Այն ժամանակ Սատանան թողեց նրան ու հեռացավ, և ահա հրեշտակները մոտեցան և ծառայում էին Հիսուսին:

Հիսուսն իր առաքելությունը սկսում է Գալիլեայում

(Մր 1.14-15, Ղկ 4.14-15)

¹² Երբ Հիսուսը լսեց, թե Հովհաննեսը բանտարկվել է, մեկնեց, գնաց Գալիլեա,¹³ և թողնելով Նազարեթը՝ եկավ բնակվեց լճի եզերքին գտնվող Կափառնայում քաղաքում, Չաբուղոնի և Նեփթաղիմի սահմաններում։¹⁴ Այսպիսով իրականացավ այն, ինչ Տերն ասել էր Եսայի մարգարեի բերանով.

¹⁵ «Երկի՛ր Չաբուղոնի, երկի՛ր Նեփթաղիմի, ճանապա՛րհ, որ ծովից տանում է դեպի Հորդանան գետ. դո՛ւ, Գալիլեա՛, երկի՛ր հեթանոսների։»¹⁶

¹⁶ Այն ժողովուրդը, որ խավարի մեջ էր ապրում, տեսավ մի մեծ լույս, և լույս ծագեց նրանց համար,

^{4.4} Բ Օր 8.3:

^{4.6} Մղ 91.11-12:

^{4.7} Բ Օր 6.16:

^{4.10} Բ Օր 6.13:

^{4.12} Մտ 14.3, Մր 6.17, Ղկ 3.19-20:

^{4.13} «Կափառնայում». Հիսուսի ապրած ժամանակ բավական մեծ մի քաղաք էր Գալիլեայի լճի հյուսիսարևմտյան ափին: Այստեղ էր գտնվում Պետրոսի տունը, որ Քրիստոսի գործունեության կենտրոնն էր դառնալու (հմմտ Մր 2.1, 9.33):

^{4.13} Հհ 2.12:

^{4.15} «Չաբուղոն» և «Նեփթաղիմ». սրանք Բարայելի 12 ցեղերից էին, որոնց բաժին ընկած էր կրամաք Քրիստոսի ապրած ժամանակ «Գալիլեա» անունով հայտնի նահանգի հյուսիսարևմտյան մասն էր կազմում:

^{4.15-16} Ես 9.1-2:

որ ապրում էին մահվան աշխարհի ու ստվերի մեջ»:

¹⁷ Դրանից հետո Հիսուսն սկսեց քարոզել՝ ասելով.

- Ապաշխարեցե՛ք, որովհետև մոտեցել է երկնքի արքայությունը:^{*}

Հիսուսը կանչում է չորս ձկնորսների

(Մր 1.16-20, Ղկ 5.1-11, Հհ 1.35-42)

¹⁸ Մինչ Հիսուսը շրջում էր Գալիլեայի լճի եզերքին, տեսավ երկու եղբայրների, որոնք ձկնորս էին. Սիմոնին, որ Պետրոս էր կոչվում, և նրա եղբորը՝ Անդրեասին: Նրանք ուռկանը ջուրն էին գցում ձուկ որսալու համար:

¹⁹ Հիսուսն ասաց նրանց.

- Հետևեցե՛ք ինձ, և ես ձեզ մարդու որսորդ կդարձնեմ:

²⁰ Նրանք իսկույն թողեցին ուռկանները և գնացին Հիսուսի հետևից:

²¹ Մի քիչ առաջ գնալով՝ Հիսուսն ուրիշ երկու եղբայրների էլ տեսավ՝ Ջեբեդեոսի որդիներին՝ Հակոբոսին և նրա եղբայր Հովհաննեսին, որոնք իրենց հոր՝ Ջեբեդեոսի հետ նավակի մեջ էին և իրենց ուռկաններն էին կարգի բերում: Հիսուսը նրանց էլ կանչեց: ²² Նրանք իսկույն թողեցին նավակն ու իրենց հորը և գնացին Հիսուսի հետևից:

Հիսուսն ուսուցանում է և բժշկում

(Մր 3.7-11, Ղկ 6.17-19)

²³ Հիսուսը, շրջելով Գալիլեայի բոլոր կողմերը, ուսուցանում էր ժողովարաններում, քարոզում Աստծու արքայության Ավետարանը և ժողովրդին բժշկում բոլոր ցավերից ու հիվանդություններից:^{*} ²⁴ Նրա համբավը տարածվեց ամբողջ Սիրիայում:

Մարդիկ նրա մոտ բերեցին այն բոլոր հիվանդներին, որոնք տառապում էին զանազան ցավերով ու հիվանդություններով՝ դիվահարների, լուսնոտների, անդամալույծների, և Հիսուսը բժշկեց նրանց:^{*} ²⁵ Ժողովրդի մի մեծ բազմություն, որ եկել էր Գալիլեայից, Դեկապոլիսից, Երուսաղեմից, Հրեաստանից և Անդրհորդանանից, գնում էր նրա հետևից:^{*}

5

Լեռան քարոզը

¹ Հիսուսը, տեսնելով ժողովրդի բազմությունը, բարձրացավ լեռան վրա և նստեց այնտեղ. նրա աշակերտները հավաքվեցին նրա շուրջը, ² և նա սկսեց ուսուցանել

^{*}4.17 Մտ 3.2:

^{*}4.23 «Ուսուցանում էր», «քարոզում էր», «բժշկում էր». սրանք Հիսուսի գործունեության երեք կարևոր ասպարեզներն են:

^{*}4.23 Մտ 9.35, Մր 1.39:

^{*}4.24 «Լուսնոտը» այն հիվանդն է, որ պարբերաբար ունենում է ջղային պրկումներ, գիտակցության կորուստ և նվաղում ու գետին է ընկնում (Մտ 17.14: Հմմտ Մր 9.17: Ղկ 9.39):

^{*}4.25 «Դեկապոլիս». հուն. մի տեղանուն է, որ նշ է «Տասը քաղաք»: Այս անունով կոչված նահանգը, որը տարածվում էր Գալիլեայի լճից դեպի հարավ-արևելք, ընդգրկում էր տասը քաղաքներ, որոնք գլխավորապես բնակեցված էին հեթանոսներով և հատկանշվում էին հելլենիստական մշակույթով:

նրանց՝ ասելով.

Երանիներ (Ղկ 6.20-23)

- ³ - Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:
- ⁴ Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք Աստծուց մխիթարություն պիտի գտնեն:՝
- ⁵ Երանի՛ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:՝
- ⁶ Երանի՛ նրանց, որոնք արդարության քաղցն ու ծարավն ունեն, որովհետև նրանք պիտի հագենան:՝
- ⁷ Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք Աստծուց ողորմություն պիտի գտնեն:
- ⁸ Երանի՛ նրանց, որոնք սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն:՝
- ⁹ Երանի՛ նրանց, որոնք խաղաղության հաստատման համար են աշխատում, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն:
- ¹⁰ Երանի՛ նրանց, որոնք հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:՝
- ¹¹ Երանի՛ ձեզ, երբ մարդիկ ձեզ նախատեն ու հալածեն, կամ ստելով՝ ձեր մասին ամեն տեսակ զրպարտություն անեն իմ հետևորդը լինելու համար:՝ ¹² Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև մեծ է ձեր վարձատրությունը երկնքում: Հիշեցե՛ք, որ նույն ձևով հալածանքի ենթարկվեցին նաև ձեզնից առաջ ապրած մարգարեները:՝

Երկրի աղը և աշխարհի լույսը (Մր 4.21, 9.50, Ղկ 8.16, 11.33, 14.34-35)

- ¹³ - Դո՛ւք եք երկրի աղը: Սակայն եթե երկրի աղը իր համը կորցնի, ինչո՞վ պիտի աղեն այն: Այլևս ոչ մի բանի չի ծառայի, այլ դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի:՝
- ¹⁴ Դո՛ւք եք աշխարհի լույսը: Մի քաղաք, որ լեռան վրա է կառուցված, չի կարող թաքնվել:՝ ¹⁵ Ոչ ոք ճրագը վառելով կաթսայի տակ չի պահում, այլ այն դնում է աշտանակի վրա, որպեսզի լույս տա տան մեջ գտնվողներին:՝ ¹⁶ Այդպես էլ թող ձեր

^{5.4} Ես 61.2:

^{5.5} Մղ 37.11:

^{5.6} Ես 55.1-2, Մր 24.21:

^{5.8} Մղ 24.3-4, Բ Եզր 7.98:

^{5.10} Ա Պտ 3.14:

^{5.11} Ա Պտ 4.14:

^{5.12} Բ Մն 36.16, Մր 2.8, Գրծ 7.52:

^{5.13} Մր 9.50, Ղկ 14.34-35:

^{5.14} Հհ 8.12, 9.5:

^{5.15} «Կաթսա». բոց՝ «գրվան», որ ցորենը և հացահատիկները չափելու փայտե խորը աման էր՝ շուրջ 20 կամ 40 կիլոգրամ տարողությամբ: «Աշտանակը» այսօր մեր լեզվում ընդհանրապես նշ է «մոմակալ», սակայն այստեղ գործածված է «ճրագարան» իմաստով: «Տան մեջ գտնվողներին». պետք է նկատի ունենալ, որ անցյալում մի ընտանիքի անդամներն ընդհանրապես ապրում էին միատեղ, մի սենյակում:

լույսը շողա մարդկանց առջև, որպեսզի նրանք տեսնեն ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է։

Օրենքի ճշմարիտ ուսուցումը

¹⁷ - Մի՛ կարծեք, թե ես եկա Մովսեսի Օրենքը կամ մարգարեների ուսուցումները ջնջելու. չեկա ջնջելու, այլ լրացնելու։¹⁸ Հաստատ ր իմացեք, որ ամբողջ Օրենքն ու բոլոր մարգարեությունները կետ առ կետ պիտի իրականանան առանց դրանցից մի բառ իսկ դուրս մնալու, մինչև որ գա այն օրը, երբ կանցնեն այս երկինքն ու երկիրը։¹⁹ Ով որ ամենափոքր պատվիրանն իսկ զանց անի և ուրիշներին էլ այդպես սովորեցնի, երկնքի արքայության մեջ նա հետինը պիտի համարվի։ Իսկ ով որ գործադրի պատվիրանները և ուսուցանի դրանք, երկնքի արքայության մեջ նա մեծ պիտի լինի։²⁰ Ասում եմ ձեզ, եթե Աստծու պատվիրանների նկատմամբ ձեր հավատարմությունը փարիսեցիների և Օրենքի ուսուցիչների ունեցած հավատարմությունից ավելին չլինի, երկնքի արքայությունը չեք մտնի։

Ուսուցում բարկության մասին

(Ղկ 12.57-59)

²¹ - Լսել էք, թե ինչ է ասվել անցյալում. «Մի՛ սպանիր, որովհետև ով սպանում է, պիտի դատապարտվի»։²² Իսկ ես ձեզ ասում եմ. ով որ առանց պատճառի բարկանա իր եղբոր վրա, պիտի հանձնվի դատարանի։ Ով որ իր եղբորը հիմար կոչի, աստյան պիտի բերվի, և ով որ իր եղբորն անմիտ կոչի, պիտի դատապարտվի դժոխքի կրակին։²³ Եթե զոհասեղանի վրա քո ընծան Աստծուն մատուցելու ժամանակ հիշես, թե եղբայրդ վշտացել է քեզնից,²⁴ քո ընծան զոհասեղանի առաջ թող, գնա նախ հաշտվի՛ր եղբորդ հետ և ապա ե՛կ, քո ընծան մատուցի՛ր Աստծուն։

²⁵ Երբ մեկը ինչ-որ խնդիր ունենա քեզ հետ և դատի տա քեզ, սկզբից համաձայնության՝ ն եկ նրա հետ՝ դեռևս դատարան չընկած, այլապես նա քեզ դատավորին կհանձնի, դատավորն էլ՝ ոստիկանին, և դու բանտ կնետվես։

²⁶ Համոզվա՛ծ եղիր, որ բանտից դուրս չես գա, մինչև չվճարես տուգանքիդ վերջին դահեկանը։

Ուսուցում շնության մասին

(Մտ 18.8-9, Մր 9.42-47)

^{5.15} Մր 4.21, Ղկ 8.16, 11.33:

^{5.16} Ա Պտ 2.12:

^{5.17} «[Մովսեսի] Օրենքը». այս անվանումով հասկացվում են ՀԿ առաջին հինգ գրքերը:

^{5.18} «Մի բառ». բոց՝ «մի հովտ կամ նշանախեց», հովտը եբրայական այբուբենի փոքրագույն տառն է, իսկ նշանախեցը որևէ տառ գեղեցկացնող պոչիկն է կամ ծայրագարդը:

^{5.18} Ղկ 16.17:

^{5.21} Ելք 20.13, Բ Օր 5.17:

^{5.22} Մի շարք ձեռ. չունեն «առանց պատճառի» բառերը:

²⁷ - Լսել էք, թե ինչ է ասվել. «Մի՛ շնանա»:²⁸ Իսկ ես ասում եմ ձեզ, թե ով որ ցանկությամբ նայի որևէ կնոջ, արդեն իսկ իր սրտում շնություն արած կլինի նրա հետ:²⁹ Եթե քո աջ աչքը գայթակղեցնում է քեզ, հանի՛ր և դե՛ն գցիր այն, որովհետև նախընտրելի է, որ քո անդամներից մեկը կորցնես, քան թե քո ամբողջ մարմնով դժոխք նետվես:³⁰ Եթե քո աջ ձեռքը գայթակղեցնում է քեզ, կտրի՛ր և դե՛ն գցիր այն, որովհետև նախընտրելի է, որ քո անդամներից մեկը կորցնես, քան թե քո ամբողջ մարմնով դժոխք նետվես:

Ուսուցում ապահարզանի մասին

(Մտ 19.7-9, Մր 10.4-12, Ղկ 16.18)

³¹ - Ասվել է նաև. «Ով որ արձակի իր կնոջը, թող նրան արձակման թուղթ տա»:³² Իսկ ես ձեզ ասում եմ. նա, ով իր կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի, ի՛նքը պատճառ կդառնա, որ նա շնանա: Նույնպես շնություն արած կլինի նա, ով ամուսնանում է արձակված կնոջ հետ:

Ուսուցում երդման մասին

³³ - Լսել էք նաև, թե ինչ է ասվել անցյալում. «Երդմնագանց մի՛ լինիր, այլ կատարի՛ր այն, ինչ երդվել էիր Տիրոջը»:³⁴ Իսկ ես ձեզ ասում եմ. -Բնավ մի՛ երդվեք, ո՛չ երկնքի վրա, որովհետև Աստծու գահն է,³⁵ ո՛չ երկրի վրա, որովհետև նրա ոտքի պատվանդանն է, ո՛չ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Թագավորի՝ Աստծու քաղաքն է,³⁶ և ո՛չ էլ քո գլխով երդվիր, որովհետև չես կարող մի մազ անգամ սպիտակ կամ սև դարձնել:³⁷ Պարզապես ձեր այոն թող այո լինի և ոչը՝ ոչ: Դրանից ավելին չարից է գալիս:

Ուսուցում վրեժի մասին

(Ղկ 6.29-30)

³⁸ - Լսել էք, թե ինչ է ասվել. «Աչքի փոխարեն աչք պիտի հատուցես, ատամի փոխարեն՝ ատամ»:³⁹ Իսկ ես ձեզ ասում եմ. -Մի՛ հակառակվիր քեզ չարիք անողին: Եթե մեկը քո աջ երեսին ապտակ տա, մյուս երեսդ էլ դարձրո՛ւ նրան:⁴⁰ Եվ եթե մեկը ուզի քեզ դատի կանչել շապիկդ առնելու համար, բաճկո՛նդ էլ տուր նրան:⁴¹ Եթե մեկը քեզ բռնադատի մեկ մղոն ճանապարհ միասին գնալ իր բեռը տանելու համար, նրա հետ երկո՛ւ մղոն էլ գնա:⁴² Եթե մեկը մի բան խնդրի քեզնից, տո՛ւր, և եթե մեկը մի բան

^{5.27} Ելք 20.14, Բ Օր 5.18:

^{5.29} Մտ 18.9, Մր 9.47:

^{5.30} Մտ 18.8, Մր 9.43:

^{5.31} Բ Օր 24.1-4, Մտ 19.7, Մր 10.4:

^{5.32} Մտ 19.9, Մր 10.11-12, Ղկ 16.18, Ա Կր 7.10-11:

^{5.33} ա Ղկ 19.12: բ Թվ 30.2, Բ Օր 23.21:

^{5.34} ա Հկ 5.12: բ Ես 66.1, Մտ 23.22:

^{5.35} ա Ես 66.1: բ Սղ 48.2:

^{5.38} Ելք 21.24, Ղկ 24.20, Բ Օր 19.21:

^{5.41} «Եթե մեկը քեզ բռնադատի», այս ակնարկությունը վերաբերում է հռոմեացի զինվորներին, որոնք

փոխ առնել ուզի քեզնից, երես մի՛ դարձրու:

Միրել թշնամիներին

(Ղկ 6.27-28, 32-36)

⁴³ - Լսել էք արդարև, թե ինչ է ասվել. «Միրի՛ր ընկերոջդ և ատի՛ր թշնամուդ»:⁴⁴ Իսկ ես ձեզ ասում եմ. -Միրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարություն՝ ևն արեք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, ովքեր չարչարում ու հալածում են ձեզ:⁴⁵ Այդպիսով դուք ձեր երկնավոր Հոր որդիները պիտի դառնաք, որովհետև նա իր արեգակը ծագեցնում է թե՛ չարերի և թե՛ բարիների վրա, և անձրև է տեղացնում թե՛ արդարների և թե՛ մեղավորների վրա:⁴⁶ Եթե ձեզ սիրողներին սիրեք միայն, Աստծուց ի՞նչ վարձատրություն կարող էք սպասել: Չե՞՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում:⁴⁷ Նմանապես, եթե միայն ձեր ազգակիցների հետ բարեկամություն անեք, հեթանոսներից ավելի ի՞նչ բան արած կլինեք: Չե՞՞ որ նրանք էլ նույնն են անում:⁴⁸ Արդ, կատարյալ է եղեք դուք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ:

6

Ուսուցում ողորմության մասին

¹ - Ջգո՛ւյշ եղեք, Աստծու հանդեպ ձեր պարտավորությունները մարդկանց ներկայությամբ մի՛ կատարեք ի ցույց նրանց, որովհետև այդ դեպքում վարձատրություն չեք ստանա ձեր երկնավոր Հորից:՝

² Երբ ցանկանաս ողորմություն անել, փող ու թմբուկով մի՛ արա դա՝ մարդկանց ուշադրությունը գրավելու համար, ինչպես անում են կեղծավորները ժողովարաններում և հրապարակներում՝ մարդկանցից փառավորվելու ակնկալությամբ: Վստահ եղեք, դա՛ է միայն նրանց վարձատրությունը:

³ Ընդհակառակը, երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջ ձեռքը: ⁴ Այսպիսով քո ողորմությունը ծածուկ արած կլինես, և քո Հայրը, որ անտեսանելի է և տեսնում է կատարածդ, քեզ կվարձատրի հայտնապես:

Ուսուցում աղոթքի մասին

(Ղկ 11.2-4)

կարող էին որևէ ժամանակ այսպիսի բան պահանջել մարդկանցից (հմտտ Սր 15.32):

^{5.43} Ղկ 19.18, Սր 12.4-7:

^{5.45} Սր 4.10:

^{5.47} «Ազգակիցների». բոց՝ «եղբայրների». «եղբայրներ» բառը սովորաբար գործածվում էր ազգակիցների համար: Գրբ. և մի շարք այլ ձևեր. այս բառի փոխարեն ունեն «բարեկամներ»: «Հեթանոսներից». գրբ.՝ «մաքսավորներից ու մեղավորներից»:

^{5.48} Ղկ 19.2, Բ Օր 18.13:

^{6.1} «Աստծու հանդեպ ձեր պարտավորությունները». բոց՝ «ձեր արդարությունը», այլ խոսքով՝ Աստծու առջև մարդուն արդարացնող գործերը, որոնցից Հիսուսն այստեղ ներկայացնում է երեքը՝ ողորմությունը, աղոթքը և ծոմապահությունը:

^{6.1} Մտ 23.5:

⁵ - Նմանապես, երբ դու աղոթես, չլինե՛ս կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում կանգնած աղոթել, որպեսզի մարդիկ տեսնեն իրենց աղոթելը: Վստա՛հ եղեք, դա՛ է միայն նրանց վարձատրությունը:՝ ⁶ Այլ երբ դու աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր դուռը և ծածո՛ւկ աղոթիր քո երկնավոր Հորը: Եվ քո Հայրը, որ անտեսանելի է և տեսնում է կատարածդ, քեզ կհատուցի հայտնապես:

⁷ Աղոթք անելիս մի՛ շատախոսեք հեթանոսների նման, որոնք կարծում են, որ եթե երկար աղոթեն, լսելի կլինեն:՝ ⁸ Արդ, նրանց չնմանվե՛ք, որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ է ձեզ պետք, նույնիսկ երբ դեռ բան չէք խնդրել նրանից: ⁹ Ուրեմն՝ այսպե՛ս աղոթեցեք.

Հա՛յր մեր երկնավոր,

թող սրբաբանվի քո անունը:

¹⁰ Թող գա՛ քո արքայությունը,

թող կատարվի՛ քո կամքը,

ինչպես որ երկնքում,

այնպես էլ երկրի վրա:

¹¹ Ամենօրյա մեր հացը

այսօր և ս տուր մեզ:

¹² Ների՛ր մեր հանցանքները,

ինչպես որ մենք ենք ներում

նրանց, որոնք մեր դեմ

նույնպես հանցանք են գործել:

¹³ Եվ թույլ մի՛ տուր,

որ ընկնենք փորձության մեջ,

այլ ազատի՛ր մեզ չարից.

քանզի քո՛նն են միշտ

արքայությունը, զորությունը և փառքը. ամեն:՝

¹⁴ Այո՛, եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների:՝ ¹⁵ Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձե՛զ չի ների ձեր հանցանքները:

Ուսուցում ծոմապահության մասին

¹⁶ - Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ եղեք կեղծավորների նման, որոնք կախում են

^{6.5} «Հրապարակների անկյուններում... աղոթել». բարեպաշտ հրեաները աղոթքի որոշակի ժամեր ունեին: Ոմանք դա օգտագործում էին հրապարակային վայրերում՝ իրենց աղոթասիրությունը ցուցադրելու համար (հմմտ Ղկ 18.10-14):

^{6.5} Ղկ 18.10-14:

^{6.7} Սր 7.14:

^{6.13} Հին ձեռ. շատերը չունեն «քանզի քոնն են... փառքը. ամեն» (հմմտ Ա Մն 29.10-12):

^{6.14-15} Սր 11.25-26:

^{6.14} Սր 28.1-5:

իրենց երեսը, որպեսզի մարդկանց ցույց տան, թե ծով են պահում: Վստահ եղեք, միայն դա՛ է նրանց վարձատրությունը: ¹⁷ Ընդհակառակը, երբ դու ծով պահես, օձի՛ր քո գլուխը և լվա՛ քո երեսը, ¹⁸ որպեսզի մարդիկ չտեսնեն, թե ծով ես պահում, այլ միայն քո Հայրը, որ անտեսանելի է. և քո Հայրը, որ տեսնում է կատարածդ, քեզ կվարձատրի հայտնապես:

Գանձ երկնքում

(Ղկ. 12.33-34)

¹⁹ - Ձեզ համար հարստություն մի՛ դիզեք երկրի վրա, որտեղ ցեցն ու ժանգը փչացնում են, կամ գողերը, ձեր պատը քանդելով, ներս են մտնում և գողանում այն: ²⁰ Այլ ձեր հարստությունը երկնքում մ՛ դիզեցեք, որտեղ ցեցն ու ժանգը չեն կարող փչացնել այն, և ոչ էլ գողերը կարող են ձեր պատը քանդելով ներս մտնել և գողանալ: ²¹ որովհետև որտեղ ձեր հարստությունն է, այնտեղ էլ կլինի ձեր սիրտը:

Հավատի ճրագը

(Ղկ 11.34-36)

²² - Աչքն է մարմնի ճրագը. եթե քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, ²³ իսկ երբ քո աչքը վատառողջ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Արդ, եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա որքան ավելի մթին է այդ խավարը:

Աստված և աշխարհիկ մտահոգությունները

(Ղկ 16.13, 12.22-31)

²⁴ - Մարդ չի կարող երկու տիրոջ ծառայել, որովհետև կա՛մ մեկին կսիրի և մյուսին կատի, կա՛մ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի: Նույնպես և դուք չեք կարող ծառայել Աստծուն այնքան ժամանակ, քանի դեռ ծառայում եք դրամին: ²⁵ Հետևաբար, մի՛ մտահոգվեք ձեր կյանքի համար, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք, ոչ էլ մտահոգվեք ձեր մարմնի համար, թե ի՛նչ պիտի հագնեք: Չե՞՞ որ կյանքն ավելի կարևոր է, քան կերակուրը, և մարմինն ավելի կարևոր է, քան հագուստը:

²⁶ Նայեցե՛ք երկնքի թռչուններին. ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ շտեմարանների մեջ ամբարում, և սակայն ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց: Չե՞՞ որ դուք Աստծու աչքին թռչուններից գերազանց եք: ²⁷ Մտահոգվելը մեկ կանգունով կավելացնի՞ ձեր հասակը: ²⁸ Կամ հագուստի համար ինչո՞ւ եք մտահոգվում: Օրինա՛կ վերցրեք վայրի շուշաններից և տեսե՛ք, թե ինչպես են աճում . ո՛չ աշխատում են, ո՛չ հյուսում: ²⁹ Հավատացե՛ք, որ Սողոմոնն իսկ, իր ամբողջ փառքի մեջ, չկարողացավ նրանցից մեկի նման գեղեցիկ հագնվել: ³⁰ Ուրեմն, եթե Աստված այդպես գեղեցիկ հագցնում է դաշտի միջի խոտին, որ այսօր կա և վաղը հնոց է նետվում, նրանցից շատ

^{6.17} Հղթ 10.3:

^{6.19} Հկ 5.2-3:

^{6.20} Սք 29.11:

^{6.29} Գ Թգ 10.4-7, Բ Մն 9.3-6:

ավելի լավ չի՞ հազցնելու ձեզ, թերահավատներ՝: ³¹ Հետևաբար, մի՛ մտահոգվեք ու
ասեք. «Ի՞նչ պիտի ուտենք կամ ի՞նչ պիտի խմենք կամ ի՞նչ պիտի հագնենք»: ³² Այդ
մտահոգությունները հատուկ են հեթանոսներին, քանի որ ձեր երկնավոր Հայրը գիտե
արդեն, որ ունեք այդ բոլորի կարիքը: ³³ Դուք նախ խնդրե՛ք, որ Աստու աբքայությունը
գա, աշխատե՛ք կատարել նրա կամքը, և Աստված այդ բոլորը ավելիով կտա ձեզ:

³⁴ Ինչո՞ւ ուրեմն մտահոգվել վաղվա մասին: Վաղվա մտահոգությունը վաղվա՛ն
թողեք: Յուրաքանչյուր օրվա նեղությունը ինքնին բավարար է:

7

Չդատել ուրիշներին

(Ղկ 6.37-38, 41-42)

¹ - Մի՛ դատեք ուրիշներին, որպեսզի Աստված էլ ձեզ չդատի. ² որովհետև ինչ
սկզբունքով որ դատեք ուրիշներին, Աստված նրանով է դատելու ձեզ, և ինչ չափանիշ
որ գործածեք, նույնը Աստված գործադրելու է ձե՛զ դատելու համար: ³ Ինչո՞ւ ես
տեսնում եղբորդ աչքի մեջ եղած շյուղը և չես անդրադառնում, որ աչքիդ մեջ գերան
կա: ⁴ Կամ ինչպե՞ս ես քո եղբորն ասում. «Թո՛ղ որ հանեմ աչքիդ միջի շյուղը», այն
դեպքում, երբ քո աչքի մեջ գերան ունես: ⁵ Կեղծավո՛ր, նախ հանի՛ր քո աչքից գերանը,
որ կարողանաս հստակ տեսնել և ապա՛ միայն հանել եղբորդ աչքի շյուղը:

⁶ Որևէ սրբություն շներին մի՛ տվեք, ձեր մարգարիտներն էլ խոզերի առաջ մի՛ գցեք,
որպեսզի չլինի թե դրանք կոխտեսն և դառնալով ձեզ վրա հարձակվեն:

Խնդրել և փնտրել

(Ղկ 11.9-13)

⁷ - Խնդրեցե՛ք Աստուց, և նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնե՛ք, բախեցե՛ք, և կբացվի
ձեր առաջ: ⁸ որովհետև խնդրողը պիտի ստանա, փնտրողը պիտի գտնի, և բախողի
առջև պիտի բացվի դուռը: ⁹ Ձեր մեջ կա՞ մի հայր, որի որդին եթե հաց ուզի, նա քար
տա նրան, ¹⁰ կամ ձուկ խնդրի, և նա օձ տա նրան: ¹¹ Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք
ձեր զավակներին բարի պարգևներ տալ, ապա ձեր երկնավոր Հայրը որքան ավելի
լավ պարգևներ կտա նրանց, որոնք դիմում են իրեն:

¹² Այն, ինչ ուզում եք, որ մարդիկ ձեզ անեն, նույնը դո՛ւք արեք նրանց. այս սկզբունքն
իր մեջ ամփոփում է Օրենքն ու մարգարեների ուսուցումները:

Նեղ դուռը

(Ղկ 13.24)

¹³ - Մտե՛ք նեղ դռնով, քանի որ կորստյան տանող դուռը լայն է, և ճանապարհը՝
ընդարձակ, և շատ են նրանք, որ մտնում են դրանով: ¹⁴ Մինչդեռ դեպի կյանք տանող

7.2 Սր 4.24:

7.7-8 Բ Եզր 2.13:

7.12 Տբ 4.15, Ղկ 6.31:

7.13-14 Սր 27.6:

դուռը նեղ է, և ճանապարհը՝ դժվարին, և քչերն են միայն, որ գտնում են այն:

Ծառը և նրա պտուղը

(Մտ 12.33, Ղկ 6.43-44)

¹⁵ Զգուշացե՛ք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարի կերպարանքով, բայց ներսից հափշտակող գայլեր են: ¹⁶ Իրենց գործերի՛ց կճանաչեք նրանց: Մի՞ թե փշից խաղող կքաղեն կամ տատասկից՝ թուզ: ¹⁷ Լավ ծառը լավ պտուղ է տալիս, իսկ վատ ծառը՝ վատ պտուղ: ¹⁸ Լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, և ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ: ¹⁹ Այն ծառը, որ լավ պտուղ չի տալիս, կտրվում և կրակն է նետվում: ²⁰ Ուրեմն՝ իրենց պտուղից կճանաչեք նրանց:

Ճշմարիտ աշակերտները

(Ղկ 13.25-27)

²¹ - Չկարծե՛ք, թե ով որ ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայություն է մտնելու. այլ մտնելու է միայն նա, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է: ²² Երբ այն օրը գա, շատերն ինձ պիտի ասեն. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ քո անունով փոխանցեցինք Աստծու պատգամները, քո անունով չար ոգիներ դուրս հանեցինք և քո անունով բազում հրաշքներ գործեցինք»: ²³ Այն ժամանակ ես նրանց պիտի հայտարարեմ. «Ձեզ բնա՛վ չեմ ճանաչում. հեռացե՛ք ինձանից դուք բոլորդ, որ չարիք էիք գործում»:

Ժայռի վրա շինել տունը

(Մր 1.22, Ղկ 4.32, 6.47-49)

²⁴ - Ուրեմն, ով որ լսում է իմ այս խոսքերը և գործադրում է դրանք, կնմանվի այն իմաստուն մարդուն, որն իր տունը շինում է ժայռի վրա. ²⁵ անձրևները գալիս են, գետերը՝ հորդում, հողմերը փչում և զարկում են այդ տանը, բայց տունը չի կործանվում, որովհետև ժայռի վրա է հաստատված: ²⁶ Իսկ ով որ լսում է իմ այս խոսքերը, բայց չի գործադրում դրանք, կնմանվի այն հիմար մարդուն, որ իր տունը շինում է ավազի վրա. ²⁷ անձրևները գալիս են, գետերը՝ հորդում, հողմերը փչում և զարկում են այդ տանը, և տունը կործանվում է: Եվ ի՛նչ ահավոր է լինում այդ տան կործանումը:

²⁸ Երբ Հիսուսը վերջացրեց այս խոսքերը, ժողովուրդը հիանում էր նրա ուսուցմամբ,²⁹ որովհետև ուսուցանում էր հեղինակությամբ և ոչ թե Օրենքի ուսուցիչների նման:

8

^{7.16} Մր 27.6:

^{7.19} Մտ 3.10, Ղկ 3.9:

^{7.20} Մտ 12.33:

^{7.22} «Փոխանցեցինք Աստծու պատգամները», բոց՝ «մարգարեացանք», որ անպայման ապագայի գուշակություն չի նշ, այլ ինչպես թարգմանված է՝ Աստծու պատգամախոսը լինել:

^{7.23} Մղ 6.8:

^{7.28-29} Մր 1.22, Ղկ 4.32:

Հիսուսը բժշկում է մի բորոտի

(Մր 1.40-45, Ղկ 5.12-14)

¹ Երբ Հիսուսն իջավ լեռից, մի մեծ բազմություն հետևեց նրան: ² Եվ ահա մի բորոտ, մոտենալով նրան, ծնկի եկավ ու ասաց.

- Տե՛ր, եթե կամենաս, կարող ես ինձ մաքրել:

³ Հիսուսն իր ձեռքը երկարեց, դիպավ նրան և ասաց.

- Կամենում եմ, մաքրվի՛ր:

Եվ իսկույն նրա բորոտությունը մաքրվեց: ⁴ Հիսուսն ասաց նրան.

- Նայի՛ր, ոչ ոքի բան չասես, այլ գնա՛ և դու քեզ ցո՛ւյց տուր քահանային: Ապա, իբրև վկայություն ժողովրդին, թե մաքրվել ես բորոտությունից, մատուցի՛ր քո գոհը, ինչպես հրամայել է Մովսեսը:

Հարյուրապետի ծառայի բժշկումը

(Ղկ 7.1-10, Հհ 4.46-54)

⁵ Երբ Հիսուսը Կափառնայում մտավ, նրան մոտեցավ հռոմեացի մի հարյուրապետ, ⁶ որ աղաչում էր՝ ասելով.

- Տե՛ր, ծառաս տանը անդամալույծ վիճակում սաստիկ տառապում է:

⁷ Հիսուսն ասաց.

- Ես կգամ և կբժշկեմ նրան:

⁸ Հարյուրապետը պատասխանեց նրան.

- Տե՛ր, ես արժանի չեմ քեզ իմ հարկի տակ ընդունելու. միայն մի բա՛ն ասա, և իմ ծառան կբժշկվի, ⁹ քանի որ ես էլ, որպես իշխանության ենթակա մարդ, ձեռքիս տակ զինվորներ ունեմ. մեկին ասում եմ՝ գնա՛, և գնում է, մեկ ուրիշին, թե՛՝ ե՛կ, և գալիս է, իմ ծառային, թե՛՝ այս բա՛նն արա, և անում է:

¹⁰ Երբ Հիսուսն այս լսեց, հիացավ և իրեն հետևողներին ասաց.

- Ասում եմ ձեզ, որ նույնիսկ Իսրայելում այսպիսի հավատ ունեցող մեկին չգտա:

¹¹ Իմացե՛ք նաև, որ արևելքից և արևմուտքից շատերը պիտի գան և երկնքի արքայության մեջ սեղան պիտի բազմեն Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ,¹² իսկ նրանք, որ երկնքի արքայության ժառանգորդներ պիտի լինեն, կնետվեն դուրս, խավարի մեջ, որտեղ լաց կլինեն ու կկրճտեն իրենց ատամները:

¹³ Հետո Հիսուսը հարյուրապետին ասաց.

- Գնա՛, ինչպես որ հավատացիր, այդպես թող լինի քեզ:

Եվ նույն պահին հարյուրապետի ծառան բժշկվեց:

Հիսուսը բժշկում է

(Մր 1.29-34, Ղկ 4.38-41)

8.4 Ղկ 14.1-32:

8.9 Բրք 3.33-35:

8.11 Ղկ 13.29:

8.12 Մտ 22.13, 25.30, Ղկ 13.28:

¹⁴ Ապա Հիսուսը եկավ Պետրոսի տունը և տեսավ, որ նրա զոքանչը պառկած էր ջերմության պատճառով: ¹⁵ Հիսուսը բռնեց նրա ձեռքից, և ջերմությունն անցավ: Նա ոտքի կանգնեց և սկսեց ծառայել նրան:

¹⁶ Երբ երեկո եղավ, Հիսուսի մոտ բերեցին բազում դիվահարներ: Հիսուսն իր խոսքով հանեց չար ոգիներին և բոլոր հիվանդներին բժշկեց, ¹⁷ որպեսզի իրականանա Եսայի մարգարեի բերանով ասվածը, թե՛ «Նա վերացրեց մեր հիվանդությունները և ցրեց մեր ցավերը»:

Ամեն ինչ թողնել՝ Հիսուսին հետևելու համար

(Ղկ 9.57-62)

¹⁸ Երբ Հիսուսն իր շուրջը տեսավ մի մեծ բազմություն, հրամայեց իր աշակերտներին, որ լճի մյուս կողմը գնան:

¹⁹ Օրենքի մի ուսուցիչ, մոտենալով նրան, ասաց.

- Վարդապե՛տ, ուր էլ որ գնաս, կգամ քո հետևից:

²⁰ Հիսուսը պատասխանեց.

- Աղվեսները որջ ունեն, երկնքի թռչունները՝ բույն, բայց Մարդու Որդին մի տեղ չունի գլուխը դնելու: ²¹ Մեկ ուրիշը, որ աշակերտներից էր, ասաց նրան.

- Տե՛ր, թո՛ւյլ տուր, որ նախ գնամ և թաղեմ իմ հորը:

²² Հիսուսը պատասխանեց.

- Դու հետևի՛ր ինձ և թո՛ւյլ տուր, որ մեռելները թաղեն իրենց մեռելներին:

Հիսուսը խաղաղեցնում է փոթորիկը

(Մր 4.35-41, Ղկ 8.22-25)

²³ Ապա Հիսուսը նավակ մտավ, և նրա աշակերտները հետևեցին իրեն: ²⁴ Հանկարծ մի ուժեղ փոթորիկ բարձրացավ լճի վրա, այնքան, որ ալիքները գրեթե ծածկում էին նավակը: Իսկ Հիսուսը ննջում էր: ²⁵ Աշակերտները մոտենալով արթնացրին նրան և ասացին.

- Տե՛ր, ազատի՛ր մեզ, ահա կորչում ենք:

²⁶ Հիսուսն ասաց նրանց.

- Ինչո՞ւ եք այդքան վախենում, թերահավատներ:

Հետո ոտքի կանգնեց, ասստեց հողմերին ու լճին, և կատարյալ խաղաղություն տիրեց: ²⁷ Բոլորն էլ հիացած ասում էին.

- Ինչպիսի՛ մարդ է սա, որ նույնիսկ հողմերն ու ծովը հնազանդվում են նրան:

Պ.17 Ես 53.4:

Պ.21 Մր 4.3-4:

Պ.22 «Թո՛ւյլ տուր, որ մեռելները թաղեն իրենց մեռելներին». մեռելների հանդեպ հարգանքը և նրանց թաղելու պարտականությունը Արևելքում շատ կարևոր էր համարվում: Սակայն այստեղ մեռել թաղելը խորհրդանշական մի արտահայտություն է, որ նշ է մեղքերի մեջ թաղված լինել և մահվան տանող բաներով զբաղվել: Հիսուսը կոչ է անում, որ իրեն հետևել ցանկացողը հրաժարվի այդպիսի զբաղումներից, որոնք հասում են Աստծու համար մեռած մարդկանց:

Երկու դիվահարների բժշկումը

(Մր 5.1-20, Ղկ 8.26-39)

²⁸ Երբ Հիսուսը լճի մյուս կողմը՝ գերգեսացիների երկիրը եկավ, նրա դեմ ելան երկու դիվահարներ, որոնք դուրս էին եկել ժայռափոր գերեզմաններից: Սրանք այնքան կատաղի էին, որ որևէ մարդ այդ ճանապարհով չէր համարձակվում անցնել: ²⁹ Սրանք աղաղակեցին՝ ասելով.

- Ի՞նչ ես ուզում մեզանից, Հիսու՛ս, Աստո՛ծ՝ Որդի, եկար, որ ժամանակից առաջ տանջե՛ս մեզ:

³⁰ Նրանցից քիչ հեռու խոզերի մի մեծ երամակ էր արածում: ³¹ Չար ոզիները աղաչում էին Հիսուսին՝ ասելով.

- Եթե մեզ դուրս ես հանելու, մեզ թո՛ւյլ տուր գնալ խոզերի երամակը:

³² Հիսուսն ասաց.

- Գնացե՛ք:

Եվ չար ոզիները, դիվահարներից դուրս ելնելով, գնացին խոզերի երամակը: Եվ ահա խոզերի ամբողջ երամակը խուժեց գառիթափից ցած, դեպի լիճը ու խեղդվեց այնտեղ:

³³ Խոզարածները փախան և քաղաք գնալով՝ պատմեցին կատարվածի մասին, նաև ինչ որ պատահել էր դիվահարներին: ³⁴ Քաղաքի բոլոր բնակիչները Հիսուսին ընդառաջ ելան և հենց որ տեսան նրան, աղաչեցին, որ հեռանա իրենց սահմաններից:

9

Հիսուսը բժշկում է մի անդամալույծի

(Մր 2.1-12, Ղկ 5.17-26)

¹ Հիսուսը նավակ մտավ և լճի մյուս կողմն անցնելով՝ եկավ իր քաղաքը: ² Եվ ահա մարդիկ նրա մոտ բերեցին մի անդամալույծի, որ պառկած էր մահճի մեջ: Հիսուսը, նրանց հավատը տեսնելով, ասաց անդամալույծին.

- Քաջալերվի՛ր, որոյա՛կ, քո մեղքերը ներված են քեզ:

³ Օրենքի ուսուցիչներից ոմանք իրենց մտքում ասացին. «Այս մարդը հայհոյում է»:

⁴ Հիսուսը, իմանալով նրանց մտածումը, ասաց.

- Դուք ինչու՞ եք ձեր մեջ չար բան մտածում: ⁵ Ի՞նչն է ավելի հեշտ. անդամալույծին «Քո մեղքերը քեզ ներված են» ասե՛լը, թե՞ «Վե՛ր կաց և քայլի՛ր» ասելը: ⁶ Բայց պետք է զիտենաք, որ Մարդու Որդին երկրի վրա իշխանություն ունի մեղքերը ներելու:

Ապա դառնալով անդամալույծին՝ ասաց.

- Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛ քո տունը:

՝8.28 «Գերգեսացիների երկիրը». հուն. ձեռագրերում այս քաղաքի անվան հանդիպում ենք երեք ձևերով՝ Գերգեսա, Գերասա, Գազարա կամ Գադարա: Հիշյալ քաղաքը գտնվում է Գալիլեայի լճի արևելյան ափին, Դեկապոլիս կոչված նահանգում (տե՛ս 4.25-ի ծնթ):

՝8.29 «Ժամանակից առաջ տանջես». տե՛ս Մր 5.10-ի և Հտ 9.1-ի ծնթ:

՝9.1 «Իր քաղաքը». այսինքն՝ Կափառնայում (հմմտ Մտ 4.13: Մր 2.1):

՝9.2 «Քո մեղքերը ներված են քեզ». տե՛ս Մր 2.7-ի ծնթ:

⁷ Անդամալույծը վեր կացավ և տուն գնաց: ⁸ Ժողովուրդը երբ այս բանը տեսավ, զարմացավ և փառավորում էր Աստծուն, որ այսպիսի իշխանություն է տալիս մարդկանց:

Հիսուսը կանչում է Մատթեոսին

(Մր 2.13-17, Ղկ 5.27-32)

⁹ Հիսուսը, այնտեղից մի քիչ առաջ գնալով, տեսավ Մատթեոս անունով մի մաքսավորի, որ նստել էր մաքսատանը՝ մաքս գանձելու: Հիսուսն ասաց նրան.

- Հետևի՛ր ինձ:

Մատթեոսը վեր կացավ և հետևեց Հիսուսին: ¹⁰ Եվ մինչ Հիսուսը նրա տանը սեղան էր նստել, բազմաթիվ մաքսավորներ և մեղավորներ էլ եկան ու նստեցին Հիսուսի և նրա աշակերտների հետ: ¹¹ Երբ փարիսեցիներն այս բանը տեսան, ասացին Հիսուսի աշակերտներին.

- Ձեր Վարդապետն ինչու՞ է մաքսավորների և մեղավորների հետ ուտում:

¹² Հիսուսը երբ այս լսեց, նրանց ասաց.

- Առողջները չեն, որ բժշկի կարիք ունեն, այլ հիվանդները: ¹³ Գնացե՛ք և սովորեցե՛ք, թե ինչ է նշանակում Աստծու այս խոսքը. «Ողորմություն եմ ուզում և ոչ թե զոհ».

քանզի ես չեկա արդարներին կանչելու, այլ մեղավորներին:՝

Ծոմապահության հարցը

(Մր 2.18-22, Ղկ 5.33-39)

¹⁴ Հովհաննեսի աշակերտներն ինչ-որ առիթով մոտեցան Հիսուսին և ասացին.

- Մենք և փարիսեցիներն ինչու՞ ենք հաճախ ծոմ պահում, իսկ քո աշակերտները չեն պահում:

¹⁵ Հիսուսը նրանց պատասխանեց.

- Մի՞ թե կարելի է հարսանքավորներին ասել, որ սուգ պահեն, երբ փեսան տակավին իրենց հետ է: Ժամանակը պիտի գա, երբ փեսան պիտի վերցվի իրենցից, և ապա իրենք էլ պիտի ծոմ պահեն:

¹⁶ Ոչ ոք չլվացված նոր կտորը չի գործածի հնացած հագուստի համար կարկատան անելու, քանի որ նոր կտորը, քաշվելով, հագուստը կպատռտի, և պատռվածքը ավելի մեծ կլինի: ¹⁷ Նմանապես, ոչ ոք նոր գինին հին տիկերի մեջ չի լցնի, այլապես տիկերը կպայթեն. գինին դուրս կթափվի, և տիկերը կփչանան: Ընդհակառակը, նոր գինին նոր տիկերի մեջ են լցնում, և երկուսն էլ պահվում են:

Իշխանավորի աղջիկը և հիվանդ կինը

9.10-11 Ղկ 15.1-2:

9.13 «Ես չեկա արդարներին կանչելու». այս խոսքն իսկական արդարների մասին չէ, այլ հեգնական իմաստ ունի և ուղղված է փարիսեցիների և այն բոլոր մարդկանց դեմ, ովքեր իրենք իրենց արդար են համարում և Քրիստոսի միջոցով փրկության կարիք չեն զգում: «Մեղավորներին». մի շարք ձեռագրեր ավելացնում են «ասպաշխարության»:

9.13 ա Մտ 12.7: ք Օս 6.6:

(Մր 5.21-43, Ղկ 8.40-56)

¹⁸ Մինչ Հիսուսը նրանց այս բանն էր ասում, ահա մի իշխանավոր մոտեցավ և ծնկի գալով՝ ասաց նրան.

- Աղջիկս հենց նոր մեռավ, բայց արի՛, ձեռքդ դի՛ր նրա վրա, և նա կկենդանանա:

¹⁹ Հիսուսը վեր կացավ և իր աշակերտների հետ գնաց նրա հետևից:

²⁰ Եվ ահա մի կին, որ տասներկու տարուց ի վեր տառապում էր արյունահոսությունից, Հիսուսի հետևից մոտեցավ և դիպավ նրա հագուստի քղանցքին: ²¹ Նա իր մտքում ասում էր. «Եթե միայն դիպչեմ նրա հագուստին, կբժշկվեմ»:

²² Հիսուսը հետ դարձավ և կնոջը տեսնելով՝ ասաց.

- Աղջի՛կս, քաջալերվի՛ր, քո հավա՛ տը քեզ բժշկեց:

Նույն պահին կինը բժշկվեց:

²³ Երբ Հիսուսն իշխանավորի տունը եկավ և տեսավ փողահարներին և խռովված ամբոխին,²⁴ նրանց ասաց.

- Մի կո՛ղմ քաշվեցեք, որովհետև այդ աղջիկը մեռած չէ, այլ ննջում է:

Բոլորն էլ սկսեցին ծաղրել նրան: ²⁵ Եվ երբ ամբոխը դուրս ելավ, Հիսուսը մտավ աղջկա սենյակը, բռնեց նրա ձեռքից, և աղջիկը վեր կացավ: ²⁶ Այս լուրը տարածվեց ամբողջ շրջանում:

Երկու կույրերի բժշկումը

²⁷ Եվ մինչ Հիսուսը մեկնում էր այդտեղից, երկու կույրեր սկսեցին գնալ նրա հետևից՝ աղաղակելով.

- Դավթի՛ Որդի, ողորմի՛ր մեզ:

²⁸ Երբ Հիսուսը տուն մտավ, կույրերը մոտեցան նրան: Հիսուսը հարցրեց նրանց.

- Հավատո՞ւմ եք, որ ես կարող եմ բժշկել ձեզ:

Նրանք ասացին.

- Այո՛, Տե՛ր:

²⁹ Այն ժամանակ Հիսուսը դիպավ նրանց աչքերին և ասաց.

- Ինչպե՛ս հավատում եք, թող այդպես լինի ձեզ:

³⁰ Եվ բացվեցին նրանց աչքերը: Հիսուսը նրանց խստիվ պատվիրեց՝ ասելով.

- Չգո՛ւյշ եղեք, թող ոչ ոք չիմանա:

³¹ Իսկ նրանք ելան և Հիսուսի համբավը տարածեցին ամբողջ շրջանում:

Համր մարդու բժշկումը

(Ղկ 11.14-15)

³² Կույրերի մեկնելուց հետո Հիսուսի մոտ բերեցին մի համր դիվահարի: ³³ Երբ Հիսուսը չար ոգին նրանից դուրս հանեց, համրն սկսեց խոսել: Բոլորն էլ հիացան ու

^{9.22} «Քո հավատը քեզ բժշկեց». բոց՝ «փրկեց»:

^{9.23} «Փողահարները» կամ սրնգահարները երաժիշտներ էին, որոնք սգի ժամանակ ընկերակցում էին եղերամայրերին:

ասացին.

- Այսպիսի բան դեռ չէինք տեսել Իսրայելում:

³⁴ Իսկ փարիսեցիներն ասում էին.

- Դա դևերի իշխանի միջոցով է հանում չար ոգիներին:՝

Հիսուսը քարոզում է Գալիլեայում

(Մր 6.34, Ղկ 10.2)

³⁵ Հիսուսը շրջում էր բոլոր քաղաքներում ու գյուղերում, ուսուցանում էր ժողովարաններում, Աստծու արքայության ավետիսն էր տալիս և բժշկում ժողովրդի բոլոր ախտերն ու հիվանդությունները:՝ ³⁶ Եվ տեսնելով ժողովրդի բազմությունը՝ Հիսուսը գթաց նրանց, որովհետև հոգնած էին և ցրված՝ հովիվ չունեցող ոչխարների նման:՝ ³⁷ Այն ժամանակ իր աշակերտներին ասաց.

- Հունձն առատ է, մշակները՝ քիչ:՝ ³⁸ Ուրեմն խնդրեցե՛ք հնձի Տիրոջից, որ մշակներ ուղարկի իր հնձի համար:

10

Հիսուսի տասներկու առաքյալները

(Մր 3.13-19, Ղկ 6.12-16, Գրծ 1.13)

¹ Հիսուսն իր մոտ կանչեց տասներկու աշակերտներին և նրանց իշխանություն տվեց պիղծ ոգիներն իրենց հնազանդեցնելու, մարդկանցից դուրս հանելու դրանք, ինչպես նաև բժշկելու բոլոր ցավերն ու հիվանդությունները:

² Տասներկու առաքյալների անունները սրանք են. առաջին՝ Սիմոն, որ Պետրոս կոչվեց, և նրա եղբայրը՝ Անդրեաս, ³ Ջեբեդեոսի որդիները՝ Հակոբոս և նրա եղբայրը՝ Հովհաննես, Փիլիպպոս և Բարթոլոմեոս, Թովմաս և Մատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Հակոբոս, Ղեբեոս, որ Թադեոս կոչվեց, ⁴ Սիմոն Նախանձահույզ և Հուդա Իսկարիովտացի, որ մատնեց նրան:՝

Հիսուսն ուղարկում է տասներկու առաքյալներին

(Մր 6.7-13, Ղկ 9.1-6, 10.3-12)

⁵ Հիսուսն այս տասներկու աշակերտներին ուղարկեց՝ պատվիրելով նրանց.

- Հեթանոսների շրջանները չգնաք և սամարացիների քաղաքները չմտնեք,՝ ⁶ այլ

^{9.34} Մտ 10.25, 12.24, Մր 3.22, Ղկ 11.15:

^{9.35} Մտ 4.23, Մր 1.39, Ղկ 4.44:

^{9.36} Թվ 27.17, Գ Թզ 22.17, Բ Մն 18.16, Եզկ 34.5, Մր 6.34:

^{9.37-38} Ղկ 10.2:

^{10.4} «Նախանձահույզ» բառի արամեերենն է «*Գանանացի*»: Իսրայելում կար այս անունով հրեական ազգայնական մի կուսակցություն, որ պայքարում էր հռոմեացիների դեմ:

^{10.5} «Հեթանոսների շրջանները». խոսքը վերաբերում է Գալիլեայից դեպի արևելք տարածվող Դեկապոլիս նահանգին: «Մամարացիները» հեթանոսների հետ խառնված հրեաներ էին, այդ պատճառով էլ հրեաները ամեն կապ խզել էին նրանց հետ:

գնացե՛ք հատկապես Իսրայելի տան կորած ոչխարների մոտ: ⁷ Եվ երբ գնաք, քարոզեցե՛ք՝ ասելով, թե երկնքի արքայությունը մոտեցել է: ⁸ Բժշկեցե՛ք հիվանդներին, մաքրեցե՛ք բորոտներին, հանե՛ք չար ոգիներին. ձրի առաք, ձրի էլ տվե՛ք: ⁹ Ձեր գոտիների մեջ մի՛ ունեցեք ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ և ո՛չ էլ պղնձադրամ: ¹⁰ Ճանապարհի համար ո՛չ պարկ վերցրեք, ո՛չ ավելորդ հագուստ, ո՛չ կոշիկ և ո՛չ էլ գավազան. քանզի աշխատողն արժանի է իր օրապահիկին:՝

¹¹ Երբ մի քաղաք կամ գյուղ մտնեք, տեսե՛ք, թե այնտեղ ո՛վ է արժանավոր ձեզ ընդունելու համար. այնտե՛ղ մնացեք, մինչև որ մեկնեք այնտեղից: ¹² Եվ երբ այն տունը մտնեք, բարևե՛ք տանտիրոջը՝ ասելով. «Ողջո՛ւյն ձեզ»: ¹³ Եթե տանեցիներն արժանավոր մարդիկ են, ձեր ողջույնի խաղաղությունը թող հանգչի նրանց վրա, իսկ եթե արժանավոր չեն, այն ժամանակ ձեր ողջույնը ձեզ թող վերադառնա: ¹⁴ Եվ եթե մի տան կամ քաղաքի բնակիչները ձեզ չընդունեն և ձեր խոսքը չլսեն, այդտեղից դուրս գնալիս թափ տվեք ձեր ոտքերի փոշին:՝ ¹⁵ Լա՛վ իմացեք, դատաստանի օրը Սողոմի և Գոմորի բնակիչների պատիժն ավելի թեթև պիտի լինի, քան այդ քաղաքինը:՝

Նեղություններ և հալածանքներ

(Մր 13.9-13, Ղկ 12.11-12, 21.12-17)

¹⁶ - Ահա ես ձեզ ուղարկում եմ որպես ոչխարներ՝ գայլերի մեջ: Ուստի խորազե՛տ եղեք օձերի պես և անմեղ՝ աղավնիների նման:՝ ¹⁷ Ջգո՛ւյշ կացեք, որովհետև կլինեն մարդիկ, որոնք ձեզ դատարան կտանեն և կծեծեն իրենց ժողովարաններում:՝ ¹⁸ Իմ պատճառով ձեզ կառավարիչների և թագավորների առաջ կհանեն, որպեսզի նրանց և բոլոր ազգերին իմ մասին վկայություն տաք: ¹⁹ Արդ, երբ դատելու տանեն ձեզ, հոգ մի՛ արեք, թե ի՛նչ պիտի ասեք կամ ինչպե՛ս պիտի ասեք, որովհետև ինչ որ պիտի ասեք, այդ ժամին պիտի տրվի ձեզ. ²⁰ քանի որ խոսողը դուք չեք լինելու, այլ ձեր Հոր Հոգին, որ պիտի խոսի ձեր միջոցով:

²¹ Եղբայրն իր եղբորը մահվան կմատնի, հայրը՝ իր զավակին: Չավակներն իրենց ծնողների դեմ կելնեն և կսպանեն նրանց:՝ ²² Ամեն մարդ իմ պատճառով կատի ձեզ:

՝10.7-15 Ղկ 10.4-12:

՝10.8 «Բժշկեցե՛ք հիվանդներին». մի շարք ձեռ. ավելացնում են «հարություն՝ և տվեք մեռելներին»:

՝10.10 Ա Կր 9.14, Ա Տմ 5.18:

՝10.12 «Ողջո՛ւյն ձեզ». պետք է գիտենալ, որ հայերենում, ինչպես և եբրայերենում, արամեերենում և արաբերենում, ողջույն նշ է «խաղաղություն»:

՝10.14 «Թափ տվեք ձեր ոտքերի փոշին». սա ամբողջական խզում արտահայտող մի արարք էր, որ ցույց էր տալիս, թե տվյալ անձը որևէ բան չի առել այդ քաղաքից կամ տնից և մերժում է հետը տանել նույնիսկ իր կոշիկների վրա նստած փոշին, հետևաբար ոչ մի բանով պարտական չէ այդ քաղաքին կամ տանը:

՝10.14 Գրծ 13.51:

՝10.15 ա Մտ 11.24: ք Ծն 19.24-28:

՝10.16 Ղկ 10.3:

՝10.17-20 Մր 13.9-11, Ղկ 12.11-12, 21.12-15:

՝10.21 Մր 13.12, Ղկ 21.16:

Բայց ով մինչև վերջ դիմանա, նա կփրկվի:

²³ Եվ երբ ձեզ հալածեն մի քաղաքում, փախե՛ք դեպի մեկ ուրիշը. և եթե այնտեղից էլ հալածեն ձեզ, փախե՛ք դեպի մեկ այլ քաղաք: Հաստատ՝ տ իմացեք, որ նախքան Մարդու Որդու գալուստը չեք կարողանա վերջացնել Իսրայելի քաղաքները:

²⁴ Աշակերտն իր ուսուցչից բարձր չէ, ոչ էլ ծառան՝ իր տիրոջից: ²⁵ Աշակերտին հերիք է, եթե լինի իր ուսուցչի նման, և ծառային՝ իր տիրոջ պես: Եթե տանտիրոջը Բեռզեբաբուղ կոչեցին, անշուշտ նույն բանն ավելի ո՞վ պիտի ասեն նրա ընտանիքի անդամներին: *

Ումի՞ց վախենալ

(Մր 8.38, Ղկ 9.26, 12.2-9)

²⁶ - Հետևաբար մի՛ վախեցեք նրանցից: Չկա ծածուկ բան, որ չհայտնվի, կամ գաղտնի բան, որ չիմացվի: ²⁷ Ինչ որ ասում եմ ձեզ խավարի մեջ, դուք հայտարարեցեք օրը ցերեկով, և ինչ որ ասում եմ ձեզ առանձնության մեջ, բարձրաձայն քարոզեցե՛ք տանիքների վրա: ²⁸ Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. դուք վախեցե՛ք մանավանդ նրանից, որ կարող է թե՛ հոգին և թե՛ մարմինը կորստյան մատնել դժոխքում: ²⁹ Մի՞ թե հինգ դահեկան չարժեն երկու ճնճղուկը, և սակայն նրանցից մեկն իսկ գետին չի ընկնում առանց ձեր Հոր գիտության: ³⁰ Իսկ ինչ վերաբերում է ձեզ, ձեր գլխի ամեն մի մազն անգամ հաշվված է: ³¹ Ուստի մի՛ վախեցեք, որովհետև դուք բոլոր ճնճղուկներից ավելի արժեք ունեք:

³² Ով որ մարդկանց առջև դավանի, թե հետևում է ինձ, ես էլ նրա՛ն ինձ հետևորդ պիտի դավանեմ Հորս առջև, որ երկնքում է: ³³ Իսկ ով ինձ ուրանա մարդկանց առջև, ես էլ նրա՛ն պիտի ուրանամ իմ Հոր առջև, որ երկնքում է:

Հիսուսը բաժանման պատճառ

(Մր 8.34-35, Ղկ 9.23-24, 12.51-53, 14.26-27)

³⁴ - Մի՛ կարծեք, թե ես եկա աշխարհին խաղաղություն բերելու: Ո՛չ, ես խաղաղություն բերելու չեկա, այլ սուր: ³⁵ Եկա բաժանելու որդուն հորից, աղջկան՝ մորից, հարսին՝ սկեսուրից: ³⁶ «Մարդուս թշնամիներն իր ընտանիքի անդամները պիտի լինեն»:

*10.22 ա Մտ 24.9, Մր 13.13, Ղկ 21.17: ք Մտ 24.13, Մր 13.13:

*10.24 ա Ղկ 6.40: ք Հհ 13.16, 15.20:

*10.25 «Բեռզեբաբուղ» հեթանոսական աստծու անունն է: Հրեաները նրան համարում էին դևերի կամ չար ոգիների իշխանը (հմտո Մտ 12.24, 26: Մր 3.22-23 : Ղկ 11.15, 18), այսինքն՝ Մատանան:

*10.25 Մտ 9.34, 12.24, Մր 3.22, Ղկ 11.15:

*10.26 Մր 4.22, Ղկ 8.17:

*10.33 Բ Տմ 2.12:

*10.34 «Խաղաղություն բերելու չեկա, այլ սուր». այս խոսքը չի հակասում Քրիստոսի ուսուցումներին, այլ հաստատումն է այն բանի, որ իր ներկայությունն ինքնաբերաբար պատճառ է դառնալու բաժանման՝ իրեն չընդունողներին հակադրելով ընդունողներին (տե՛ս նաև Ղկ 2.34-ի և 12.49-ի ծնթ):

*10.35-36 Մք 7.6:

³⁷ Ով իր հորն ու մորն ինձնից ավելի է սիրում, արժանի չէ ինձ: Ով որ իր տղային կամ աղջկան ինձնից ավելի է սիրում, արժանի չէ ինձ: ³⁸ Եվ ով իր խաչը չի վերցնում ու ինձ չի հետևում, արժանի չէ ինձ: ³⁹ Ով որ իր կյանքը իրեն է պահում, պիտի կորցնի այն, և ով որ իր կյանքը կորցնում է ինձ համար, պիտի գտնի այն:

Վարձատրություն

(Մր 9.40)

⁴⁰ - Ով ընդունում է ձեզ, ընդունած կլինի ինձ, և ով ի՛նձ է ընդունում, ընդունած կլինի ինձ ուղարկողին: ⁴¹ Ով ընդունում է մարգարեին՝ իբրև մարգարեի, մարգարեի հատուկ վարձ կստանա: Ով ընդունում է արդարին՝ իբրև արդարի, արդարի վարձ կստանա: ⁴² Եվ ով այս փոքրիկներից մեկին նույնիսկ մի բաժակ սառը ջուր տա խմելու որպես իմ աշակերտի, վստահ եղեք, որ իր վարձը չի կորցնի:

11

Հովհաննես Մկրտչի պատգամավորները

(Ղկ 7.18-35)

¹ Հիսուսն այս պատվերները իր տասներկու աշակերտներին տալուց հետո մեկնեց այնտեղից՝ քարոզելու և ուսուցանելու շրջակա քաղաքներում:

² Երբ Հովհաննեսը բանտում լսեց Քրիստոսի կատարած գործերի մասին, իր աշակերտներից ոմանց ուղարկեց Հիսուսի մոտ՝ ³ հարցնելու նրան.

- Դո՞ւ ես նա, որ գալու էր, թե՞ մեկ ուրիշին սպասենք:

⁴ Հիսուսը պատասխանեց.

- Գնացե՛ք և Հովհաննեսին պատմեցե՛ք, ինչ որ լսում եք ու տեսնում. ⁵ ահա կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրվում, խուլերը՝ լսում, մեռելները՝ հարություն առնում, և Ավետարանը քարոզվում է աղքատներին: ⁶ Երանի՛ նրան, ով իմ պատճառով իր հավատը չի կորցնում:

⁷ Երբ Հովհաննեսի աշակերտները մեկնեցին, Հիսուսն սկսեց Հովհաննեսի մասին խոսել ժողովրդին՝ ասելով.

- Ի՞նչ տեսնելու գնացիք անապատ. հողմից շարժվող եղե՞զ: ⁸ Հապա ի՞նչ տեսնելու գնացիք. փառավոր զգեստներ հագած մա՞րդ: Բայց նրանք, որ փառավոր զգեստներ են հագնում, թագավորական պալատներում են: ⁹ Հապա ի՞նչ տեսնելու գնացիք. մի մարգարե՞: Այո՛, վստահ եղեք, առավե՛լ մեկին, քան մի մարգարեի, ¹⁰ որովհետև Հովհաննեսի մասին է, որ Տերն ասում է մարգարեության մեջ. «Ահա քո առջևից

^{10.38} Մտ 16.24, Մր 8.34, Ղկ 9.23:

^{10.39} Մտ 16.25, Մր 8.35, Ղկ 9.24, 17.33, Հհ 12.25:

^{10.40} ա Ղկ 10.16, Հհ 13.20: բ Մր 9.37, Ղկ 9.48:

^{11.3} «Դո՞ւ ես նա, որ գալու էր». այս խոսքը, ՀԿ մարգարեական խոստումների համաձայն, վերաբերում է սպասված Մեսիային կամ Օծյալին:

^{11.5} ա Ես 35.5-6: բ Ես 61.1:

^{11.6} «Իմ պատճառով» կամ «իմ հանդեպ»:

ուղարկում եմ իմ պատգամաբերին, որ ճանապարհի պատրաստի քեզ համար»:¹¹ Վստահ եղեք, որ մարդկանց մեջ Հովհաննես Մկրտչից մեծը չի ծնվել. սակայն երկնքի արքայության մեջ ամենից փոքրը Հովհաննեսից ավելի մեծ է:¹² Հովհաննես Մկրտչի քարոզչության օրերից մինչև այսօր մարդիկ երկնքի արքայությունը ձեռք բերելու համար ուժ են գործադրում, և ուժեղները ձեռք են բերում այն:¹³ Մովսեսի Օրենքը և բոլոր մարգարեները երկնքի արքայության մասին մարգարեացան մինչև Հովհաննեսի ժամանակը:¹⁴ Եվ եթե ուզում եք ընդունել, Հովհաննեսն է Եղիան, որ գալու էր:¹⁵ Ով լսելու ականջ ունի, թող լսի:

¹⁶ Ո՞ւմ նմանեցնեմ այս սերնդի մարդկանց: Նրանք նման են այն փոքրիկներին, որոնք նստում են շուկայի հրապարակներում և ձայն են տալիս միմյանց՝¹⁷ ասելով. «Նվագեցինք ձեզ համար, բայց դուք չպարեցիք, ողբի երգեր երգեցինք, բայց դուք լաց չեղաք»:¹⁸ Եկավ Հովհաննեսը. ո՛չ ուտում էր և ո՛չ խմում, և ասում են. «Նա դիվահար է»:¹⁹ Եկավ Մարդու Որդին. ուտում է և խմում, և ասում են. «Ուտող ու խմող է այս մարդը, մաքսավորների և մեղավորների բարեկամ»: Բայց արդարության հետևորդները կարող են հասկանալ Աստծու իմաստությունը:

Անհավատ քաղաքներ

(Մտ 10.15, Ղկ 10.13-15)

²⁰ Ապա Հիսուսն սկսեց նախատել այն քաղաքներին, որտեղ ինքը բազում հրաշքներ էր գործել, բայց նրանք դարձի չէին եկել:

²¹ - Վա՛յ քեզ, Քորազի՛ն, վա՛յ քեզ, Բեթսայիդա՛. եթե այն հրաշքները, որ ձեր մեջ գործվեցին, կատարված լինեին Տյուրոսում և Սիդոնում, նրանց բնակիչները վաղուց քուրձ հագնելով և մոխրի վրա նստելով՝ ապաշխարած կլինեին:²² Ուրեմն, ասում եմ ձեզ. դատաստանի օրը Տյուրոսի և Սիդոնի բնակիչների պատիժն ավելի թեթև կլինի, քան ձերը:²³ Իսկ դո՛ւ, Կափառնայո՛ւմ, որ մինչև երկինք ես բարձրացել, պիտի իջնես մինչև դժոխք. որովհետև եթե Մոդոմում գործված լինեին այն հրաշքները, որ գործվեցին քո մեջ, վստահաբար նա կանգուն կլինեիր մինչև այսօր:²⁴ Ուրեմն, ասում

11.10 Մդ 3.1:

11.12 «Ուժեղները ձեռք են բերում այն» կամ «Բռնավորները հափշտակում են այն». այստեղ խոսքը հոգեկան գործության մասին է՝ նկատի ունենալով այն տևական հալածանքները, որոնք սպասում են արքայությանը աշակերտողներին:

11.12-13 Ղկ 16.16:

11.14 Մդ 4.5, Մտ 17.10-13, Մր 9.11-13:

11.19 «Բայց արդարության հետևորդները կարող են հասկանալ Աստծու իմաստությունը». բոց՝ «Աստծու իմաստությունը արդարացվեց իր որդիներից»: Հոգեպես իմաստուն մարդիկ կարող են տեսնել, որ Հովհաննես Մկրտչի և Հիսուսի գործունեությունն ու հեղինակությունը Աստծուց են գալիս և ոչ թե մարդկանցից (հմմտ 21.23-26):

11.21 «Քորազին», «Բեթսայիդա». Կափառնայումի հյուսիսում գտնվող քաղաքներ են: «Տյուրոս» և «Սիդոն». Փյունիկեի հարավում, Պաղեստինի սահմանին մոտիկ երկու նշանավոր քաղաքներ են, որոնց մասին մարգարեական կարևոր պատգամներ կան ՀԿ-ում (տե՛ս ներքևի հղումները):

11.21 Ես 23.1-18, Եզկ 26.1-28.26, Հվլ 3.4-8, Ամս 1.9-10, Զք 9.2-4:

11.23 «Մոդոմ». իր չարությամբ նշանավոր քաղաք, որ ենթարկվեց Աստծու պատժին (տե՛ս ներքևի

եմ ձեզ. դատաստանի օրը Սողոմոնի բնակիչների պատիժն ավելի թեթև կլինի, քան ձերը:

Գոհություն երկնավոր Հորը

(Ղկ 10.21-22)

²⁵ Այն ժամանակ Հիսուսն այսպես աղոթեց.

- Գոհություն եմ հայտնում քեզ, Հա՛յր, Տե՛ր երկնքի և երկրի, որ իմաստուններից և գիտուններից ծածկեցիր այն, ինչ հայտնեցիր պարզ ու համեստ մարդկանց: ²⁶ Այո՛, Հա՛յր, դու այդպես ցանկացար:

²⁷ Իմ Հայրն ամեն ինչ տվել է ինձ. ոչ ոք չի ճանաչում Որդուն, բացի Հորից, և ոչ ոք չի ճանաչում Հորը, բացի Որդուց կամ նրանից, ում Որդին ուզենա հայտնել:

²⁸ Եկե՛ք ինձ մոտ դուք բոլո՛րդ, հոգնաձնե՛ք և բեռնավորվաձնե՛ք, և ես պիտի հանգիստ տամ ձեզ: ²⁹ Վերցրե՛ք իմ լուծը ձեզ վրա և սովորեցե՛ք ինձնից, որովհետև հեզ եմ ու սրտով խոնարհ, և դուք ձեր հոգեկան հանգստությունը պիտի գտնեք:

³⁰ Քանի որ իմ լուծը տանելի է, և իմ բեռը՝ թեթև:

12

Շաբաթ օրը հարգելու հարցը

(Մր 2.23-28, Ղկ 6.1-5)

¹ Մի շաբաթ օր Հիսուսն անցնում էր ցորենի արտերի միջով. նրա աշակերտները քաղցած էին և սկսեցին հասկ քաղել և ուտել: ² Փարիսեցիները երբ այս տեսան, Հիսուսին ասացին.

- Տե՛ս, ի՛նչ են անում քո աշակերտները. մի բան, որ մեր Օրենքն արգելում է շաբաթ օրով անել:

³ Հիսուսը պատասխանեց.

- Չե՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ քաղց զգացին ինքը և նրանք, որ իր հետ էին: ⁴ Աստծու տուն չմտա՞վ և չկերա՞վ առաջավորության հացերը, մի բան, որ Օրենքի համաձայն թույլատրված չէր ո՛չ իրեն և ո՛չ էլ իր հետ եղողներին, այլ միայն քահանաներին: ⁵ Կամ չե՞ք կարդացել Օրենքում, որ շաբաթ օրերը տաճարում քահանաները սրբապղծում են շաբաթը, սակայն դա մեղք չի համարվում նրանց:

⁶ Ահա ասում եմ ձեզ, որ տաճարից ավելի մեծ մեկը կա այստեղ: ⁷ Եթե իսկապես

հղումները):

***11.23 ա** Ես 14.13-15: ք Ծն 19.24-28:

***11.24** Մտ 10.15, Ղկ 10.12:

***11.27 ա** Հհ 3.35: ք Հհ 1.18, 10.15:

***11.28-30** Մր 6.24-30, 24.19, 51.23-26:

***11.29 Եր 6.16:**

***12.1** Բ Օր 23.25:

***12.3-4** Ա Թզ 21.1-6:

***12.4** Ղկ 24.9:

***12.5** Թվ 28.9-10:

հասկանայիք, թե ի՛նչ է նշանակում Աստծու այս խոսքը. «Ողորմություն եմ ուզում և ո՛չ գոհ», ապա չէիք դատապարտի անմեղներին,⁸ որովհետև Մարդու Որդին տերն է շաբաթ օրվա:

Չորացած ձեռքով մարդու բժշկումը

(Մր 3.1-6, Ղկ 6.6-11)

⁹ Այդտեղից մեկնելով՝ Հիսուսը գնաց նրանց ժողովարանը: ¹⁰ Այնտեղ կար մի մարդ, որի ձեռքը չորացած էր: Ներկաները Հիսուսին ամբաստանելու դիտավորությամբ հարցրին.

- Մեր Օրենքը թույլատրո՞ւմ է բժշկել շաբաթ օրով:

¹¹ Հիսուսը պատասխանեց.

- Եթե ձեզնից մեկի միակ ոչխարը շաբաթ օրով փոսն ընկնի, ի՞նչ կանի. չի՞ բռնի ու չի՞ հանի այն: ¹² Իսկ մարդը ոչխարից որքա՞ն ավելի արժի: Ուրեմն՝ Օրենքը թույլատրում է շաբաթ օրով բարիք գործել:

¹³ Այն ժամանակ մարդուն ասաց.

- Ձեռքդ երկարի՛ր:

Նա երկարեց ձեռքը, և ահա չորացած ձեռքը առողջացավ մյուս ձեռքի նման: ¹⁴ Այս բանի վրա փարիսեցիները դուրս ելան ու սկսեցին խորհրդակցել, թե ինչպես սպանեն Հիսուսին:

Աստծու ընտրյալ ծառան

¹⁵ Հիսուսը, իմանալով այս, մեկնեց այդտեղից: Բազմաթիվ մարդիկ գնացին նրա հետևից, և նա բժշկեց բոլոր հիվանդներին՝ ¹⁶ խստիվ պատվիրելով նրանց, որ ուրիշներին իր մասին բան չասեն: ¹⁷ Այսպիսով իրականացավ այն, ինչ Տերն ասում է Եսայի մարգարեի բերանով.

¹⁸ «Ահա իմ ծառան, որին ընտրեցի,

և իմ սիրելին, որին հավանեցի:

Իմ հոգին նրա վրա եմ դնելու,

և նա բոլոր ազգերին

արդարություն է հռչակելու:՝

¹⁹ Նա ո՛չ հակառակելու է,

և ո՛չ էլ նրա ձայնն է լսվելու

հրապարակներում:

²⁰ Չախջախված եղեգը նա չի փշրելու,

և առկայծ ճրագը չի հանգցնելու,

մինչև արդարությունը չհաղթանակի:

²¹ Եվ բոլոր ազգերն իրենց հույսը

^{12.7} ա Մտ 9.13: ք Օս 6.6:

^{12.11} Ղկ 14.5:

^{12.18-21} Ես 42.1-4 [LXX]:

նրա վրա են դնելու»:

Հիսուսը և Բեեղզերուղը

(Մր 3.20-30, Ղկ 11.14-23, 12.10)

²² Ապա Հիսուսի մոտ բերեցին կույր ու համր մի դիվահարի, և Հիսուսը բժշկեց նրան, այնպես որ համր և կույր մարդն սկսեց խոսել ու տեսնել: ²³ Բոլոր ներկաները զարմացան և հարցնում էին.

- Մի թե սա է Քրիստոսը՝ Դավթի Որդին:

²⁴ Բայց փարիսեցիները երբ այս լսեցին, ասացին.

- Նա դների իշխանի՝ Բեեղզերուղի զորությամբ է հանում դներին:

²⁵ Երբ Հիսուսն իմացավ նրանց միտքը, ասաց.

- Ամեն թագավորություն, որ ինքն իր մեջ բաժան-բաժան է լինում, կործանվում է, և ամեն քաղաք կամ ընտանիք, որ ինքն իր մեջ բաժանված է, կանգուն չի մնում: ²⁶ Եթե Սատանան իր գործակալների դեմ է ելնում, ուրեմն իր մեջ բաժան-բաժան է եղած. արդ, նրա թագավորությունն ինչպե՞ս կարող է կանգուն մնալ: ²⁷ Եվ եթե ես Բեեղզերուղի զորությամբ եմ դուրս հանում դներին, ձեր հետևորդները ո՞ւմ զորությամբ են դուրս հանում դրանց: Ուրեմն հենց ձեր հետևորդները պիտի դատապարտեն ձեզ: ²⁸ Իսկ եթե Աստծու Հոգու զորությամբ եմ հանում չար ոգիներին, նշանակում է Աստծու թագավորությունն արդեն հասել է ձեզ վրա:

²⁹ Ոչ ոք չի կարող մի ուժեղ մարդու տունը մտնել և կողոպտել նրա ունեցվածքը, եթե նախապես չկապի այդ ուժեղ մարդուն: Դրանից հետո միայն նա կկողոպտի նրա տունը:

³⁰ Ով ինձ հետ չէ՝ հակառակ է ինձ, և ով ինձ հետ չի հավաքում՝ ցրում է: ³¹ Դրա համար ասում եմ ձեզ. մարդիկ ինչքան էլ մեղք գործեն կամ հայհոյություն անեն, Աստված պիտի ների նրանց այդ բոլորը, բայց նա չի ների նրան, ով հայհոյում է Սուրբ Հոգուն, այսինքն՝ նախատում է նրան: ³² Ով որ Մարդու Որդու դեմ խոսք ասի, Աստված պիտի ների նրան, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նա չի ների նրան ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ հանդերձյալում:

Ծառը և իր պտուղը

(Մտ 7.16-17, Ղկ 6.43-45)

³³ - Եթե ուզում եք լավ պտուղ ունենալ, ծառը առո՛ղջ պահեք, իսկ եթե ծառը լավ չպահեք, պտուղն էլ վատ կլինի. որովհետև ծառը իր պտուղից է ճանաչվում: ³⁴ Իժերի՛ ծնունդներ, ինչպե՞ս կարող եք բարի բաներ խոսել, երբ դուք ինքներդ չար եք, քանի որ

^{12.24} Մտ 9.34, 10.25:

^{12.29} Տբ 8.3:

^{12.30} Մր 9.40:

^{12.31} «Հայհոյում է Սուրբ Հոգուն». ինչպես ցույց է տալիս Մր 3.30-ը, հայհոյությունը Սուրբ Հոգու դեմ նշ է նույն Հոգու միջոցով կատարված Աստծու գործերը վերագրել Սատանային, ինչն աններելի է:

^{12.32} Ղկ 12.10:

^{12.33} Մր 27.6, Մտ 7.20, Ղկ 6.44:

բերանը սրտի մեջ եղածից է խոսում:՝ ³⁵ Բարի մարդը իր սրտի բարի գանձից բարիք է հանում, իսկ չար մարդը իր սրտի չար գանձից՝ չարիք: ³⁶ Ասում եմ ձեզ, դատաստանի օրը մարդ իր բոլոր դատարկ խոսքերի համար հաշիվ պիտի տա, ³⁷ որովհետև քո խոսքերով պիտի դատեն քեզ՝ կա՛մ քեզ արդարացնելու, կա՛մ դատապարտելու համար:

Հրաշքի խնդրանք

(Մտ 16.1-4, Մր 8.11-12, Ղկ 11.29-32)

³⁸ Այն ժամանակ Օրենքի ուսուցիչներից և փարիսեցիներից ոմանք ասացին Հիսուսին.

- Վարդապե՛տ, ուզում ենք, որ մի հրաշք գործես, և տեսնենք:՝

³⁹ Հիսուսը պատասխանեց նրանց.

- Աստծուն անհավատարիմ և չա՛ր սերունդ. նշան եք ուզում. Հովնան մարգարեի նշանից բացի ուրիշ նշան չի տրվելու ձեզ:՝ ⁴⁰ Ինչպես Հովնանը երեք օր՝ ցերեկ ու գիշեր, կես ձկան փորի մեջ մնաց, նույնպես էլ Մարդու Որդին երեք օր, ցերեկ ու գիշեր, երկրի ընդերքում պիտի մնա:՝ ⁴¹ Դատաստանի օրը նինվեացիները ձեր դեմ կելնեն և կդատապարտեն ձեզ, որովհետև նրանք Հովնանի քարոզությանը զոջացին իրենց մեղքերի համար: Եվ ահա Հովնանից ավելի մեծը կա այստեղ:՝ ⁴² Դարձյալ, դատաստանի օրը Հարավի թագուհին կելնի և կդատապարտի ձեզ, որովհետև նա իր հեռավոր երկրից եկավ լսելու Սողոմոն իմաստունի ուսուցումները: Եվ ահա Սողոմոնից ավելի մեծը կա այստեղ:՝

Չար ոգու վերադարձը

(Ղկ 11.24-26)

⁴³ - Երբ չար ոգին դուրս է ելնում մարդուց, գնում շրջում է անջրդի վայրերում՝ հանգիստ մի տեղ գտնելու համար: Եվ երբ չի գտնում, ⁴⁴ ինքն իրեն ասում է. «Գնամ իմ տունը, որտեղից դուրս եկա»: Ուստի վերադառնում է իր նախկին տունը և այն գտնում է դատարկ, մաքուր և կարգի բերված: ⁴⁵ Ապա գնում և բերում է իրենից ավելի չար յոթ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ բնակվում է այնտեղ. և այդ մարդու վերջը լինում է ավելի վատ, քան իր նախկին վիճակը: Իմացե՛ք, որ նույն բանը պիտի պատահի նաև այս չար սերնդին:

^{12.34} ա Մտ 3.7, 23.33, Ղկ 3.7: բ Մտ 15.18, Ղկ 6.45:

^{12.38} Մտ 16.1, Մր 8.11, Ղկ 11.16:

^{12.39} Մտ 16.4, Մր 8.12:

^{12.40} Հն 1.17:

^{12.41} «Նինվե». հին Ասորեստանի մայրաքաղաքը Տիգրիս գետի արևելյան ափին:

^{12.41} Հն 3.5:

^{12.42} «Հարավի թագուհի». ըստ Գ Թզ 10.1-10 հմբ, նա թագուհին էր Մաբա կոչված երկրի, որը ծաղկուն մի թագավորություն էր և գտնվում էր Արաբիայի հարավարևմտյան կողմում: Այժմ այդ երկիրը կոչվում է Եմեն:

^{12.42} Գ Թզ 10.1-10, Բ Մն 9.1-12:

Հիսուսի մայրն ու եղբայրները

(Մր 3.31-35, Ղկ 8.19-21)

⁴⁶ Հիսուսը դեռ խոսում էր ժողովրդի հետ, երբ նրա մայրն ու եղբայրները եկան և դրսում կանգնած՝ ուզում էին խոսել նրա հետ: ⁴⁷ Այնտեղ գտնվողներից մեկը նրան ասաց.

- Մայրդ և եղբայրներդ դրսում կանգնած են և ուզում են հետդ խոսել:

⁴⁸ Հիսուսը պատասխանեց նրան.

- Ո՞վ է իմ մայրը, կամ ովքե՞ր են իմ եղբայրները:

⁴⁹ Եվ նա, իր աշակերտներին ցույց տալով, ավելացրեց.

- Ահա՛ իմ մայրը և իմ եղբայրները. ⁵⁰ որովհետև ով կատարում է իմ երկնավոր Հոր կամքը, նա՛ է իմ եղբայրը, իմ քույրը և իմ մայրը:

13

Սերմնացանի առակը

(Մր 4.1-9, Ղկ 8.4-8)

¹ Նույն օրը Հիսուսը տնից դուրս եկավ և գնաց նստեց լճի եզերքին: ² Նրա շուրջը մի այնպիսի մեծ բազմություն հավաքվեց, որ նա նավակ մտավ և նստեց այնտեղ, իսկ ամբողջ բազմությունը կանգնած մնաց լճի եզերքին: ³ Եվ նա առակներով շատ բաներ էր սովորեցնում նրանց և ասում.

⁴ - Մի սերմնացան ելավ սերմ ցանելու: Երբ նա սերմանում էր, հատիկների մի մասն ընկավ ճանապարհի եզերքին, և թռչունները եկան ու կերան դրանք: ⁵ Ուրիշ հատիկներ ընկան ժայռոտ մի տեղ, ուր շատ հող չկար, և որովհետև հողը խորություն չունեց, իսկույն բուսան. ⁶ բայց երբ արևը ելավ, խանձվեցին, և քանի որ արմատ չունեին, չորացան: ⁷ Ուրիշ հատիկներ ընկան փշերի մեջ, և փշերը բարձրացան ու խեղդեցին դրանք: ⁸ Իսկ ուրիշներն ընկան լավ հողի մեջ և պտուղ տվեցին. մի մասը՝ մեկի տեղ հարյուր, ուրիշները՝ վաթսուն և կամ երեսուն: ⁹ Ով լսելու ականջ ունի, թող լսի:

Առակների նպատակը

(Մր 4.10-12, Ղկ 8.9-10)

¹⁰ Ապա աշակերտները մոտեցան Հիսուսին և հարցրին.

- Ինչո՞ւ ես առակներով խոսում նրանց հետ:

¹¹ Հիսուսը պատասխանեց նրանց.

- Դո՛ւք պետք է գիտենաք Աստծու արքայության գաղտնիքները, բայց ո՛չ նրանք.

¹² որովհետև ով ունի, նրան պիտի տրվի ավելիով, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի

^{12.47} Հուն. մի շարք ձեռագրեր չունեն այս հմբ:

^{13.1} «Տնից». տե՛ս Մր 2.1 և ծնթ:

^{13.2} Ղկ 5.1-3:

ունեցած փոքր բաժինն էլ:»¹³ Դրա համար է, որ ես առակներով եմ խոսում նրանց հետ, որովհետև նայում են, բայց չեն տեսնում, ականջ են դնում, բայց չեն լսում ու չեն հասկանում: ¹⁴ Այսպես է իրականանում նրանց նկատմամբ Եսայու մարգարեությունը, որ ասում է.

«Անդադար կլսեն, բայց չեն հասկանա,
շարունակ կնայեն, բայց չեն տեսնի,¹⁵
¹⁵ որովհետև այս ժողովրդի միտքը թանձրացել է.
նրանք խցել են իրենց ականջները
և փակել են իրենց աչքերը,
որպեսզի չլինի թե իրենց աչքերը տեսնեն,
և ականջները լսեն,
մտքերը հասկանան ու դարձի գան,
և ես բժշկեմ նրանց»:

¹⁶ Բայց երանի՛ ձեր աչքերին, որովհետև տեսնում են, և երանի՛ ձեր ականջներին, որովհետև լսում են: ¹⁷ Ասում եմ ձեզ, որ շատ մարգարեներ և արդարներ փափագեցին տեսնել ձեր տեսածները, բայց չտեսան, և ցանկացան լսել ձեր լսածները, բայց չլսեցին:

Հիսուսը մեկնաբանում է սերմնացանի առակը

(Մկ 4.13-20, Ղկ 8.11-15)

¹⁸ - Ուրեմն լսեցե՛ք, թե ի՛նչ է ուզում ասել սերմնացանի առակը: ¹⁹ Ճանապարհի եզերքին գտնվող հողը, որի մեջ ընկավ սերմը, նման է այն մարդուն, որը լսում է Աստծու արքայության մասին քարոզությունը, բայց չի հասկանում. չարը գալիս և հափշտակում է նրա սրտում սերմանվածը: ²⁰ Ժայռոտ հողը նման է այն մարդուն, որը Աստծու խոսքը հազիվ լսած՝ ուրախությամբ ընդունում է այն: ²¹ Սակայն սերմն արմատ չունի իր մեջ, այսինքն՝ նա հավատում է մի որոշ ժամանակի համար, և երբ նեղության և Աստծու խոսքի համար հալածանքի ենթարկվի, իսկույն կկորցնի իր հավատը: ²² Փշերով ծածկված հողը նման է այն մարդուն, որը լսում է Աստծու խոսքը, բայց երկրային կյանքի հոգսերը և հարստության հրապույրը խեղդում են այդ խոսքը, որ անպտուղ է դառնում նրա մեջ: ²³ Իսկ լավ հողը նման է այն մարդուն, որը լսում է Աստծու խոսքը ու հասկանում և պտուղ է տալիս. մեկի փոխարեն հարյուր, մեկ ուրիշը՝ վաթսուն և մեկ ուրիշը՝ երեսուն:

Որումի առակը

²⁴ Հիսուսը մի ուրիշ առակ էլ պատմեց նրանց և ասաց.

՝13.12 «Ով ունի, նրան պիտի տրվի ավելիով, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի...». այս նախադասության մեկնությունը հետևյալն է. նա, ով իր ունեցած հոգևոր հարստությունը, այսինքն՝ Աստծու խոսքը և մյուս պարզներն օգտագործում է իր և մանավանդ ուրիշների բարիքի համար, ավելիով պիտի հարստանա, իսկ այդ հարստությունը չօգտագործողն ի վերջո պիտի կորցնի այն:

՝13.12 Մտ 25.29, Մր 4.25, Ղկ 8.18, 19.26:

՝13.14-15 Ես 6.9-10 [LXX]:

՝13.16-17 Ղկ 10.23-24:

²⁵ - Մի մարդ լավ սերմեր սերմանեց իր արտի մեջ: Մի գիշեր, երբ ամեն մարդ քնի մեջ էր, նրա թշնամին եկավ, որոմ ցանեց ցորենի մեջ և գնաց: ²⁶ Երբ սերմերն աճեցին և սկսեցին հասկ դառնալ, այն ժամանակ երևաց և այդ որոմը: ²⁷ Տանտիրոջ ծառաները եկան և ասացին նրան. «Տե՛ր, մի թե դու քո արտի մեջ միայն լավ սերմեր չսերմանեցիր. հապա որտեղի՞ց է այդ որոմը»: ²⁸ Տերը պատասխանեց. «Թշնամի մարդու արած գործ է դա»: Ծառաներն ասացին. «Ուզո՞ւմ ես, որ գնանք և քաղհանենք որոմը»: ²⁹ «Ո՛չ,-պատասխանեց Տերը,-որպեսզի չլինի թե որոմը քաղելիս ցորենն էլ միասին արմատախիլ անեք: ³⁰ Թողե՛ք, որ երկուսն էլ միասին աճեն մինչև հնձի ժամանակը. ես այն ժամանակ հնձողներին կասեմ՝ նախ որո՞մը քաղեցեք, խրձե՛ր կազմեցեք այրելու համար և ապա միայն քաղեցե՛ք ցորենը և ամբարեցե՛ք իմ շտեմարաններում»:

Ահա ճիշտ սրա նման է երկնքի արքայությունը:

Մանանելի հատիկի օրինակը

(Մր 4.30-32, Ղկ 13.18-19)

³¹ Հիսուսը մի ուրիշ առակ էլ ներկայացրեց նրանց և ասաց.
- Երկնքի արքայությունը նման է մանանելի այն հատիկին, որ մարդ վերցնելով սերմանում է իր արտի մեջ: ³² Այն փոքր է բոլոր սերմերից, բայց երբ աճում, ավելի մեծ է լինում, քան բոլոր տունկերը, և դառնում է ծառ, այնպես որ երկնքի թռչունները գալիս և բույն են դնում նրա ճյուղերի մեջ:

Թթխմորի օրինակը

(Մր 4.33-34, Ղկ 13.20-21)

³³ Հիսուսը մի ուրիշ օրինակ էլ տվեց նրանց և ասաց.
- Երկնքի արքայությունը նման է այն թթխմորին, որ մի կին առնելով խառնեց մի պարկ այլուրի մեջ, մինչև որ ամբողջ խմորի աճը եկավ:
³⁴ Հիսուսը, առակներով խոսելով ժողովրդի հետ, այս բոլորն ուսուցանում էր նրանց: Առանց առակների նա ոչինչ չէր խոսում, ³⁵ որպեսզի իրականանա այն, ինչ Տերն ասում է մարգարեի բերանով. «Առակներով պիտի խոսեմ նրանց հետ և հայտնեմ աշխարհի սկզբից ի վեր ծածուկ մնացած բաները»:

Որոմների առակի մեկնությունը

³⁶ Ապա թողնելով ժողովրդին՝ Հիսուսը տուն եկավ: Նրա աշակերտները մոտեցան նրան և ասացին.

- Բացատրի՛ր մեզ արտի մեջ սերմանված որոմների առակը:

³⁷ Հիսուսը պատասխանեց.

- Լավ սերմեր սերմանողը Մարդու Որդին է, ³⁸ իսկ արտը՝ այս աշխարհը: Լավ սերմերն այն մարդիկ են, որոնք արքայության հետևորդներն են, իսկ որոմը նրանք, որ չարին են հետևում: ³⁹ Թշնամին, որ ցանեց որոմը, Սատանան է. հունձն այս աշխարհի

վախճանն է, և հնձողները հրեշտակներն են: ⁴⁰ Արդ, ինչպես որումը հավաքում և այրում են կրակի մեջ, այդպես էլ լինելու է այս աշխարհի վախճանին: ⁴¹ Այսինքն՝ Մարդու Որդին պիտի ուղարկի իր հրեշտակներին, որոնք իր արքայությունից պիտի հավաքեն բոլոր նրանց, ովքեր գայթակղության պատճառ են դառնում ու չարիք գործում: ⁴² Եվ նրանց պիտի նետեն բոցավառ հնոցի մեջ, որտեղ նրանք լաց պիտի լինեն ու կրճտեն իրենց ատամները: ⁴³ Այն ժամանակ արդարները երկնքի արքայության մեջ կփայլեն արեգակի նման: Ով լսելու ականջ ունի, թող լսի:՝

Պահված գանձի օրինակը

⁴⁴ - Երկնքի արքայությունը նման է մի արտի մեջ պահված գանձի: Երբ մեկն այն գտնում է, կրկին ծածկում է հողի տակ և ուրախությունից գնում վաճառում է իր ամբողջ ունեցածը ու գնում այդ արտը:

Մարգարտի օրինակը

⁴⁵ - Դարձյալ, երկնքի արքայությունը նման է այն վաճառականին, որը գեղեցիկ մարգարիտներ է որոնում: ⁴⁶ Երբ շատ թանկարժեք մի մարգարիտ է գտնում, գնում վաճառում է իր ամբողջ ունեցածը և գնում այդ մարգարիտը:

Ուռկանի օրինակը

⁴⁷ - Դարձյալ, երկնքի արքայությունը նման է ծովը նետված ուռկանի, որի մեջ ամեն տեսակ ձուկ է բռնվում: ⁴⁸ Երբ ուռկանը լցվում է, ձկնորսները ցամաք են քաշում այն և նստելով՝ առանձնացնում են ձկները. լավերը հավաքում են ամանների մեջ, իսկ անպետքները՝ թափում: ⁴⁹ Ահա այդպես է լինելու աշխարհի վախճանին: Հրեշտակները պիտի ելնեն, չարերին գատեն արդարների միջից ⁵⁰ և նետեն բոցավառ հնոցի մեջ, որտեղ նրանք լաց պիտի լինեն ու կրճտեն իրենց ատամները:

⁵¹ Ապա Հիսուսը հարցրեց իր աշակերտներին.

- Հասկացա՞ք իմ բոլոր ասածները:

- Այո՛, Տե՛ր,- ասացին նրանք:

⁵² Հիսուսն ասաց նրանց.

- Այսպես, ահա, Օրենքի որևէ ուսուցիչ, որ երկնքի արքայության աշակերտ է դառնում, նման է մի տանտիրոջ, որ իր գանձերից դուրս է բերում նորը և հինը:

Հիսուսը մերժվում է Նազարեթում

(Մր 6.1-6, Ղկ 4.16-24)

⁵³ Երբ Հիսուսը վերջացրեց այս առակները, մեկնեց այնտեղից ⁵⁴ և եկավ իր հայրենի գավառը, որտեղ սկսեց ժողովրդին ուսուցանել իրենց ժողովարանում: Լսողները զարմանում էին և ասում.

- Որտեղի՞ց է ձեռք բերել այսքան իմաստություն և հրաշագործ գորություն:՝ ⁵⁵ Սա

^{13.43} Հուն. «երկնքի արքայության» փոխարեն ունի «իրենց Հոր արքայության»:

^{13.43} Բ Եզր 7.97:

^{13.54} «Հայրենի գավառը». այսինքն՝ Նազարեթ քաղաքը, որտեղ մեծացել էր Հիսուսը:

ատաղձագործի որդին չէ՞, սրա մայրը Մարիամը չէ՞, և սրա եղբայրները Հակոբոսը, Հովսեփը, Միմոնը և Հուդան չէ՞ն: ⁵⁶Սրա քույրերը բոլորն էլ մեզ մոտ չէ՞ն բնակվում: Որտեղի՞ց է սրան այս ամենը:

⁵⁷ Եվ այդ պատճառով էլ դժվարանում էին հավատալ նրան:

Հիսուսն ասաց նրանց.

- Մարգարեն իր հայրենի գավառում և իր ընտանիքում պատիվ չունի:

⁵⁸ Եվ նրանց անհավատության պատճառով նա այնտեղ շատ հրաշքներ չգործեց:

14

Հովհաննես Մկրտչի մահը

(Մր 6.14-29, Ղկ 3.19-20, 9.7-9)

¹ Այն օրերին Հերովդես չորրորդապետը լսեց Հիսուսի համբավը՝ ² և իր ծառաներին ասաց.

- Նա՛ է Հովհաննես Մկրտիչը. նա՛ է, որ մեռելներից հարություն է առել, և դրա համար հրաշքներ են կատարվում նրա ձեռքով:

³ Արդարև Հերովդեսն ինքն էր ձերբակալել տվել Հովհաննեսին, շղթայել ու բանտ նետել էր տվել նրան, իր եղբոր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Հերովդիայի պատճառով.՝

⁴ որովհետև Հովհաննեսը Հերովդեսին ասում էր.

- Մեր Օրենքը չի թույլատրում, որ դու ամուսնանաս նրա հետ:

⁵ Այս պատճառով Հերովդեսն ուզում էր սպանել Հովհաննեսին, բայց վախենում էր ժողովրդից, քանի որ մարդիկ նրան ընդունում էին որպես մարգարեի:

⁶ Արդ, երբ Հերովդեսի ծննդյան տարեդարձը հասավ, Հերովդիայի աղջիկը հրավիրվածների առաջ պարեց, և դա այնքան հաճելի թվաց Հերովդեսին, ⁷ որ նա երդվելով խոստացավ նրան տալ, ինչ էլ որ նա ցանկանար: ⁸ Աղջիկը, նախապես խրատված լինելով իր մորից, ասաց.

- Հենց հիմա այստեղ, սկուտեղի վրա, Հովհաննես Մկրտչի գլուխը տուր ինձ:

⁹ Թագավորը շատ տխրեց, բայց հրավիրվածների առջև իր տված երդումի պատճառով հրամայեց, որ աղջկա ուզածը տան: ¹⁰ Եվ մարդ ուղարկելով՝ բանտում գլխատել տվեց Հովհաննեսին: ¹¹ Դահիճը, նրա գլուխը սկուտեղի վրա դրած, բերեց ու տվեց աղջկան, իսկ աղջիկն էլ այն տարավ իր մորը:

¹² Հովհաննեսի աշակերտները եկան, վերցրին մարմինը և թաղեցին, ապա եկան պատմեցին Հիսուսին:

Հինգ հազարի կերակրումը

՝13.57 Հհ 4.44:

՝14.1 «Հերովդես չորրորդապետ». Հերովդես Մեծի որդին է. կոչվել է նաև Հերովդես Անտիպաս, որը Գալիլեայի և Պերեայի վրա իշխեց ՔՄԱ - ՔՅ39: Սա Հիսուսի դատավարությունը կատարողներից մեկն էր:

՝14.3 «Հերովդիայի» և «Փիլիպպոս եղբոր». տե՛ս Մր 6.17-ի ծնթ:

՝14.3-4 Ղկ 3.19-20:

՝14.4 Ղկ 18.16, 20.21:

(Մր 6.30-44, Ղկ 9.10-17, Հհ 6.1-13)

¹³ Երբ Հիսուսը լսեց Հովհաննեսի գլխատման մասին, առանձին նավակ մտնելով՝ այդտեղից գնաց ամայի մի տեղ: Շրջանի քաղաքների բնակիչները, այս լսելով, քայլելով գնացին նրա հետևից: ¹⁴ Երբ Հիսուսը դուրս ելավ նավակից, տեսավ ժողովրդի մեծ բազմությունը, գթաց նրանց և բժշկեց հիվանդներին:

¹⁵ Երեկոյան նրա աշակերտները մոտեցան նրան և ասացին.

- Ամայի մի տեղում ենք, և ժամանակն էլ ուշ է. արձակի՛ր այդ ժողովրդին, որպեսզի գնան շրջակա գյուղերը և ուտելիք գնեն իրենց համար:

¹⁶ Հիսուսն ասաց.

- Հարկ չկա, որ նրանք գնան, դո՛ւք նրանց ուտելու բան տվեք:

¹⁷ Նրանք ասացին Հիսուսին.

- Այստեղ համարյա ոչինչ չունենք, բացի հինգ հացից և երկու ձկնից:

¹⁸ Հիսուսն ասաց.

- Այստե՛ղ բերեք դրանք:

¹⁹ Եվ հրամայեց, որ ժողովրդին նստեցնեն խոտի վրա: Ապա վերցնելով հինգ հացն ու երկու ձուկը՝ աչքերը երկինք բարձրացրեց, օրհնեց, կտրեց հացերը և տվեց աշակերտներին, որոնք բաժանեցին դրանք ժողովրդին: ²⁰ Բոլորն էլ կերան ու կշտացան, և աշակերտները, ավելացած կտորտանքները հավաքելով, տասներկու սակառ լցրին: ²¹ Ուտողները շուրջ հինգ հազար հոգի էին՝ չհաշված կանանց ու երեխաներին:

Հիսուսը քայլում է ջրի վրայով

(Մր 6.45-56, Հհ 6.15-21)

²² Ապա Հիսուսն իսկույն ստիպեց իր աշակերտներին, որ նավակ մտնեն և իրենից առաջ գնան լճի մյուս կողմը, մինչև որ ինքը ժողովրդին արձակի:

²³ Ժողովրդին արձակելուց հետո Հիսուսն առանձին բարձրացավ լեռը՝ աղոթելու: Երբ երեկո եղավ, Հիսուսն այնտեղ մենակ էր, ²⁴ մինչ նավակը, ցամաքից բավականին հեռու, ավեկոծության մեջ էր, որովհետև քամին իրենց դիմացից էր փչում: ²⁵ Գիշերվա չորրորդ պահին Հիսուսը, լճի վրա քայլելով, եկավ իր աշակերտների մոտ: ²⁶ Երբ նրանք Հիսուսին տեսան ջրի վրա քայլելիս, սարսափեցին և ասացին.

- Ինչ-որ ուրվական է:

Եվ վախից սկսեցին գոռալ:

²⁷ Հիսուսն իսկույն խոսեց նրանց հետ և ասաց.

- Քա՛ջ եղեք, ես եմ, մի՛ վախեցեք:

²⁸ Պետրոսը նրան ասաց.

- Տե՛ր, եթե դու ես, հրամայի՛ր, որ այս ջրերի վրա քայլելով քեզ մոտ գամ:

²⁹ Հիսուսն ասաց.

- Արի՛:

^{14.25} «Գիշերվա չորրորդ պահին». ըստ ժամերը հաշվելու հռոմեական եղանակի՝ գիշերվա չորրորդ պահը համապատասխանում էր առավոտյան ժամը 3-6-ին (տե՛ս Բառարանի Օր բառահոդվածը):

Եվ Պետրոսը նավակից իջավ ու ջրերի վրա քայլելով՝ սկսեց գնալ Հիսուսի մոտ:
³⁰ Բայց տեսնելով քամու սաստկությունը՝ վախեցավ, և երբ սկսեց սուզվել, աղաղակեց.
 «Տե՛ր, ազատի՛ր ինձ»: ³¹ Հիսուսն իսկույն երկարելով իր ձեռքը՝ բռնեց նրան ու ասաց.
 - Թերահավա՛տ, ինչո՞ւ կասկածեցիր:
³² Եվ երբ նավակ բարձրացան, քամին դադարեց: ³³ Նավակի մեջ գտնվող
 աշակերտները երկրպագեցին Հիսուսին և ասացին.
 - Իսկապես դու Աստծու Որդին ես:
³⁴ Ապա անցնելով հանդիպակաց կողմը՝ ցամաք ելան Գեննեսարեթում:
³⁵ Տեղացիները ճանաչեցին նրան, մարդ ուղարկեցին ամբողջ գավառով մեկ և բոլոր
 հիվանդներին բերեցին Հիսուսի մոտ: ³⁶ Աղաչում էին նրան, որ գոնե թույլ տա, որ
 հիվանդները դիպչեն իր զգեստի քղանցքին: Եվ նրանք, որ դիպան, բժշկվեցին:

15

Նախնիների ուսուցումներ

(Մր 7.1-13)

¹ Այն ժամանակ Հիսուսին մոտեցան փարիսեցիներ ու Օրենքի ուսուցիչներ, որոնք
 Երուսաղեմից էին եկել, և ասացին.

² - Ինչո՞ւ են քո աշակերտները անտեսում մեր նախնիների ավանդույթը: Օրինակ՝
 ճաշելուց առաջ չեն լվանում իրենց ձեռքերը:

³ Հիսուսը պատասխանեց նրանց.

- Իսկ դուք ինչո՞ւ եք անտեսում Աստծու պատվիրանը՝ ձեր ավանդույթը պահելու
 համար. ⁴ քանի որ Աստված ասում է. «Մեծարի՛ր քո հորը և մորը».⁵ և մի ուրիշ տեղ
 ասում է. «Ով որ իր հորը կամ մորն անիծի, մահվան պիտի դատապարտվի»:

⁶ Մինչդեռ դուք ասում եք. «Ով իր հորը կամ մորն ասի՝ "Այն օգնությունը, որ
 ստանալու էիր ինձնից, Աստծուն է նվիրված", պարտավոր չէ այլևս հարգելու իր հորը
 կամ մորը»: Ահա այսպիսով դուք անարգում եք Աստծու խոսքը՝ ձեր ավանդույթը
 պահելու համար: ⁷ Կեղծավորնե՛ր, Եսայի մարգարեն ճիշտ է մարգարեացել ձեր
 մասին, երբ ասում է.

⁸ «Այս ժողովուրդն ինձ
 մեծարում է միայն շրթունքներով,
 մինչ նրանց սիրտը շատ հեռու է ինձնից.»
⁹ Գուր են նրանք ինձ պաշտում,
 քանզի իրենց ուսուցումները

^{14.34} «Գեննեսարեթ»-ը բերրի մի հովիտ էր Կափառնայումի հարավարևմտյան կողմում, որ
 նույնանուն մի քաղաք էլ ուներ իր մեջ:

^{15.4} ա Ելք 20.12, Բ Օր 5.16: բ Ելք 21.17, Ղև 20.9:

^{15.6} «Աստծուն է նվիրված». բոց «կորբան է»: *Կորբանը* եբրայերենում նշ է «Աստծուն տրված նվեր,
 ընծա»: Եբրայական ավանդության համաձայն, Աստծուն նվիրված որևէ բան այլևս չէր կարելի ուրիշ
 բանի գործածել:

^{15.8-9} Ես 29.13 [LXX]:

մարդկանց կողմից տրված պատվիրաններ են»:

Ի՞նչն է մարդուն ապականում

(Մր 7.14-23)

¹⁰ Հետո Հիսուսն իր մոտ կանչեց ժողովրդին և ասաց.

- Լսեցե՛ք և հասկացե՛ք. ¹¹ ոչ թե բերանից ներս մտածն է պղծում մարդուն, այլ ինչ որ դուրս է ելնում բերանից, ա՛յն է պղծում մարդուն:

¹² Այն ժամանակ աշակերտները մոտեցան նրան և ասացին.

- Գիտե՞ս, որ փարիսեցիները, երբ լսեցին քո ասածը, գայթակղվեցին:

¹³ Հիսուսը նրանց պատասխանեց.

- Ամեն տունկ, որ իմ երկնավոր Հայրը չի տնկել, արմատախիլ պիտի լինի: ¹⁴ Թողե՛ք նրանց. կույրեր են, կույրերի առաջնորդ: Երբ կույրը մեկ ուրիշ կույրի է առաջնորդում, երկուսն էլ փոսն են ընկնում:

¹⁵ Պետրոսը խոսք առավ և ասաց Հիսուսին.

- Բացատրի՛ր մեզ այդ առակը:

¹⁶ Հիսուսն ասաց.

- Դեռևս դո՞ւք էլ եք անմիտ: ¹⁷ Չե՞ք իմանում, թե ամեն ինչ, որ մտնում է մարդու բերանը, նրա ստամոքսն է գնում և ապա դուրս է ելնում: ¹⁸ Մինչդեռ ինչ որ ելնում է մարդու բերանից, նրա սրտի՛ց է գալիս, և ա՛յդ է, որ պղծում է մարդուն. ¹⁹ որովհետև մարդու սրտից է, որ ելնում են չար մտածումները՝ սպանություն, շնություն, պտռնկություն, գողություն, սուտ վկայություն, հայհոյություն: ²⁰ Սրանք են, որ պղծում են մարդուն և ոչ թե անվաճ ձեռքերով ճաշ ուտելը:

Քանանացի կնոջ հավատը

(Մր 7.24-30)

²¹ Ապա այդտեղից ելնելով՝ Հիսուսը գնաց Տյուրոսի և Սիդոնի կողմերը: ²² Եվ ահա քանանացի մի կին, որ այդ կողմերից էր, եկավ Հիսուսի մոտ և բարձրաձայն ասաց.

- Տե՛ր, Դավթի՛ Ռոդի, ողորմի՛ր ինձ, աղջիկս տանջվում է չար ոգուց:

²³ Բայց Հիսուսը պատասխան չտվեց նրան: Այն ժամանակ աշակերտները մոտեցան և աղաչելով ասացին.

- Արձակի՛ր նրան, որովհետև աղաղակում է մեր հետևից:

²⁴ Հիսուսը պատասխանեց.

- Ես միայն Իսրայելի ժողովրդի կորած ոչխարների համար եմ ուղարկվել:

²⁵ Սակայն կինը մոտեցավ և նրա առաջ ծնկի եկած՝ ասաց.

- Տե՛ր, օգնի՛ր ինձ:

^{15.14} Ղկ 6.39:

^{15.18} Մտ 12.34:

^{15.22} «Քանանացի մի կին». Փյունիկեի բոլոր բնակիչները կոչվում էին նաև քանանացի (հմտտ Մր 7.26):

^{15.23} «Արձակի՛ր նրան». բոց՝ «արձակի՛ր», որ անպայման վտարելը չէ, այլ կարող է նշ նաև «փափազը կատարել և ճանապարհել»:

²⁶ Հիսուսը պատասխանեց.

- Ճիշտ բան չէ մանուկների ձեռքից հացն առնել և շներին զցել:

²⁷ Կինն ասաց.

- Այո՛, Տե՛ր, բայց նույնիսկ շներն իրենց տիրոջ սեղանից ընկած փշրանքներով են կերակրվում:

²⁸ Այն ժամանակ Հիսուսը նրան պատասխանեց.

- Ո՛վ կին, մեծ է քո հավատը, թող քո ուզածի պես լինի:

Եվ նույն պահին նրա աղջիկը բժշկվեց:

Հիսուսը բժշկում է շատերին

²⁹ Այնտեղից մեկնելով՝ Հիսուսը գնաց Գալիլեայի լճի եզերքը և լեռը բարձրանալով՝ նստեց այնտեղ: ³⁰ Մի մեծ բազմություն մոտեցավ նրան. նրանց մեջ կային կաղեր, կույրեր, համրեր, հաշմանդամներ և ուրիշ հիվանդներ, որոնց բերեցին և դրեցին Հիսուսի ոտքերի առջև: Եվ Հիսուսը բժշկեց նրանց: ³¹ Բոլորն էլ զարմանում էին՝ տեսնելով, որ համրերը խոսում են, կաղերը՝ քայլում, հաշմանդամները՝ բժշկվում, և կույրերը՝ տեսնում, և փառք էին տալիս Իսրայելի Աստծուն:

Չորս հազարի կերակրումը

(Մր 8.1-10)

³² Հիսուսն իր մոտ կանչեց իր աշակերտներին և ասաց նրանց.

- Խղճում եմ այս բազմությանը, որովհետև ահա երեք օր է, որ ինձ մոտ են և այլևս ոչինչ չունեն ուտելու: Չեմ ուզում տուն ուղարկել նրանց, որպեսզի չլինի թե՛ ճանապարհին ուշագնաց լինեն:

³³ Աշակերտներն ասացին.

- Հիմա այս ամալի վայրում որտեղի՞ց գտնենք այսքան բազմությանը կշտացնելու հաց:

³⁴ Հիսուսը պատասխանեց նրանց.

- Քանի՞ հաց ունեք:

Նրանք պատասխանեցին.

- Յոթ հաց և մի քիչ էլ մանր ձկներ:

³⁵ Հիսուսը ժողովրդին հրամայեց, որ նստեն գետնին: ³⁶ Ապա վերցրեց յոթ հացը և ձկները, շնորհակալություն հայտնեց Աստծուն, կտրեց և տվեց աշակերտներին, սրանք էլ բաժանեցին ժողովրդին: ³⁷ Բոլորն էլ կերան ու կշտացան, և աշակերտները, կտորտանքները հավաքելով, յոթ զամբյուղ լցրին: ³⁸ Իսկ ուտողները շուրջ չորս հազար հոգի էին՝ չհաշված կանանց ու երեխաներին:

³⁹ Շատ Հիսուսն արձակեց ժողովրդին և նավակ բարձրանալով՝ եկավ Մագդալայի սահմանները:՝

՝15.39 «Մագդալա». հուն. մի շարք հին ձեռ. այս անվան փոխարեն ունեն «Մագդան»: Մագդալան Կափառնայումից դեպի հարավ, Գալիլեայի լճակի արևմտյան ափին գտնվող մի քաղաք էր, իսկ Մագդանի վայրն անձանոթ է:

Հրաշքի խնդրանք

(Մտ 10.38-39, Մր 8.11-13, Ղկ 11.29-30, 12.54-56)

¹ Փարիսեցիներն ու սադուկեցիները մոտեցան Հիսուսին և նրան փորձելու համար մի նշան էին ուզում նրանից՝ Աստծուց նրա վկայված լինելը հաստատելու համար։

² Հիսուսը պատասխանեց նրանց.

- Արևամուտին, երբ տեսնեք, որ հորիզոնը կարմրել է, կասեք. «Վաղը եղանակը լավ պիտի լինի»։ ³ Իսկ առավոտյան, երբ երկինքը կարմրի և մթագնի, կասեք. «Այսօր փոթորիկ պիտի լինի»։ Երբ երկնքին նայելով կարող եք կանխատեսել գալիք եղանակը, ապա չե՞ք կարող ներկա ժամանակների նշանները տեսնելով՝ հասկանալ նրանց իմաստը։ ⁴ Աստծուն անհավատարիմ և չար այս սերունդը նշան է խնդրում, բայց Հովնան մարգարեի հետ պատահած հրաշքից բացի ուրիշ նշան չպիտի տրվի նրան։

Եվ նրանց թողեց ու գնաց։

Փարիսեցիների և սադուկեցիների խմորը

(Մր 8.14-21, Ղկ 12.1)

⁵ Աշակերտներն էլ լճի մյուս կողմն անցան, բայց մոռացան հաց վերցնել։ ⁶ Հիսուսն ասաց նրանց.

- Տեսնե՛ք, զգուշացե՛ք սադուկեցիների և փարիսեցիների խմորից։

⁷ Աշակերտներն իրենց մեջ մտածում էին և ասում. «Այսպես է ասում, որովհետև հաց չվերցրինք»։ ⁸ Հիսուսն իմացավ նրանց միտքը և ասաց.

- Թերահավատնե՛ր, ինչո՞ւ եք ձեր մեջ մտածում, թե հաց չունեք։ ⁹ Դեռևս չե՞ք հասկանում։ Չե՞ք հիշում, թե ինչպես հինգ հացով հինգ հազար հոգի կերակրվեցին, և կտորտանքներով քանի՞ սակառ լցրիք։ ¹⁰ Կամ երբ յոթ հացով չորս հազար հոգի կերակրվեցին, քանի՞ զամբյուղ լցրիք։ ¹¹ Արդ, ինչպե՞ս չեք հասկանում, թե հացի համար չե, որ ձեզ ասացի՝ զգուշացե՛ք փարիսեցիների և սադուկեցիների խմորից։

¹² Այն ժամանակ աշակերտները հասկացան, որ նա հացի խմորի մասին չէր խոսում, այլ իրենց զգուշացնում էր փարիսեցիների և սադուկեցիների ուսուցումներից։

Պետրոսի հայտարարությունը Հիսուսի մասին

(Մր 8.27-30, Ղկ 9.18-21)

¹³ Երբ Հիսուսը Փիլիպպոսի կառուցած Կեսարիայի կողմերը եկավ, իր

^{16.1} Մտ 12.38, Ղկ 11.16:

^{16.2-3} Հուն. և հայ. մի շարք ձեռագրեր չունեն այս համարները:

^{16.4} Մտ 12.39, Ղկ 11.29:

^{16.6} Ղկ 12.1:

^{16.9} Մտ 14.17-21:

^{16.10} Մտ 15.34-38:

աշակերտներին հարցրեց.

- Մարդիկ ի՞նչ են ասում Մարդու Որդու մասին. ո՞վ էմ ես:

¹⁴Նրանք պատասխանեցին.

- Ոմանք կարծում են, թե Հովհաննես Մկրտիչն էս, ոմանք՝ Եղիա մարգարեն, իսկ ուրիշները՝ Երեմիան կամ մարգարեներից մեկը:

¹⁵Հիսուսը հարցրեց նրանց.

- Իսկ դո՞ւք ինչ եք կարծում, ո՞վ էմ ես:

¹⁶Միմոն Պետրոսը պատասխանեց.

- Դու Քրիստոսն ես՝ կենդանի Աստծու Որդին:

¹⁷Հիսուսը նրան ասաց.

- Երանի՛ էք, Միմոն, Հովնանի՛ որդի, որովհետև դա քեզ հայտնողը մի մարդ չէր, այլ իմ Հայրը, որ երկնքում է: ¹⁸Եվ ես քեզ ասում եմ, որ դու ժայռ ես, և այդ ժայռի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին, որ մահն անգամ իր ամբողջ զորությամբ չկարողանա հաղթահարել: ¹⁹Քեզ պիտի տամ երկնքի արքայության բանալիները, և ինչ որ կապես երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում, և ինչ որ արձակես երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում:

²⁰Ապա Հիսուսը խստիվ պատվիրեց իր աշակերտներին, որ ոչ ոքի չասեն, թե ինքն է Քրիստոսը:

Հիսուսը խոսում է իր չարչարանքների, մահվան և հարության մասին

(Մր 8.31-33, Ղկ 9.22)

²¹Այս դեպքից հետո Հիսուսն իր աշակերտներին սկսեց հայտնել, թե պետք է, որ ինքը Երուսաղեմ գնա, այնտեղ շատ չարչարվի ավագ քահանաներից, Օրենքի ուսուցիչներից և երեցներից, սպանվի և երրորդ օրը հարություն առնի:

²²Պետրոսը նրան մի կողմ տարավ և սկսեց հակառակվելով վիճել նրա հետ ու ասել.

- Քա՛վ լիցի, Տե՛ր, այդպիսի բան թող չպատահի քեզ:

²³Հիսուսը, դառնալով Պետրոսին, ասաց.

- Հետն՛ս գնա, Մատանա՛, դու արգելք ես ինձ համար, որովհետև դու Աստծու ծրագրի մասին չես խոսում, այլ մարդկանց մտահոգությունն ես արտահայտում:

Հիսուսին հետևելու պայմանները

(Մր 8.34-9.1, Ղկ 9.23-27)

²⁴Ապա Հիսուսն իր աշակերտներին ասաց.

- Եթե մեկն ուզում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ

^{16.13} «Փրկիպպոսի կառուցած Կեսարիա». տե՛ս Մր 8.27:

^{16.14} Մտ 14.1-2, Մր 6.14-15, Ղկ 9.7-8:

^{16.16} Հհ 6.68-69:

^{16.19} «Կապել» և «արձակել» բառերն այստեղ նշ են «թույլատրել» և «արգելել», ինչպես նաև «ներել» և «չներել» (հմմտ Հհ 20.23)

^{16.19} Մտ 18.18, Հհ 20.23:

հետևից.²⁵ որովհետև ով որ ուզենա փրկել իր կյանքը, պիտի կորցնի այն, և ով որ ինձ համար կորցնի իր կյանքը, պիտի գտնի այն:²⁶ Ինչ օգուտ, եթե մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կյանքը կորցնի. որովհետև նա ինչ փրկագին պիտի տա իր կյանքը հետ վերցնելու համար:²⁷ Արդարև, Մարդու Որդին գալու է իր Հոր փառքով՝ իր հրեշտակների հետ միասին, և այն ժամանակ յուրաքանչյուրին պիտի հատուցի ըստ իր գործերի:²⁸ Վստահ եղեք, որ այստեղ գտնվողներից ոմանք չեն մեռնի, մինչև որ չտեսնեն Մարդու Որդուն, որը գալիս է իր թագավորությամբ:

17

Հիսուսի այլակերպությունը

(Մր 9.2-13, Ղկ 9.28-36)

¹ Վեց օր հետո Հիսուսն իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոս և Հովհաննես եղբայրներին և նրանց հանեց մի բարձր լեռ, որտեղ նրանք առանձին մնացին:

² Այնտեղ Հիսուսը կերպարանափոխվեց նրանց առաջ. նրա դեմքը արեգակի նման պայծառ դարձավ, և նրա զգեստները լույսի նման սպիտակ եղան:³ Եվ ահա երևացին Մովսեսն ու Եղիան, որոնք խոսում էին Հիսուսի հետ:⁴ Պետրոսը Հիսուսին ասաց.

- Տե՛ր, ի՛նչ լավ է այստեղ. եթե ուզում ես, երեք վրաններ շինենք, մեկը՝ քեզ, մեկը՝ Մովսեսի և մեկն էլ՝ Եղիայի համար:

⁵ Մինչ Պետրոսը խոսում էր, ահա լուսավոր մի ամպ ծածկեց նրանց. ամպի միջից լավեց մի ձայն, որ ասում էր.

- Սա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, սրա՛ն լսեցեք:

⁶ Երբ աշակերտներն այս լսեցին, սարսափահար՝ երեսի վրա գետին ընկան:

⁷ Հիսուսը մոտեցավ, դիպավ նրանց և ասաց.

- Ոտքի՛ ելեք, մի՛ վախեցեք;

⁸ Աշակերտներն աչքերը բարձրացրին և Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան:

⁹ Եվ մինչ լեռից իջնում էին, Հիսուսը պատվիրեց նրանց՝ ասելով.

- Մինչև Մարդու Որդին մեռելներից հարություն չառնի, ձեր տեսածը ոչ ոքի չպատմեք:

¹⁰ Այն ժամանակ աշակերտները հարցրին Հիսուսին.

- Հապա ինչո՞ւ Օրենքի ուսուցիչներն ասում են, որ նախ Եղիան պիտի գա:

^{16.24} Մտ 10.38, Ղկ 14.27:

^{16.25} Մտ 10.39, Ղկ 17.33, Հհ 12.25:

^{16.27} ա Մտ 25.31: բ Սղ 62.12, Հո 2.6:

^{16.28} «...չեն մեռնի, մինչև որ չտեսնեն Մարդու Որդուն, որը գալիս է իր թագավորությամբ». այս խոսքով Հիսուսը հավանաբար ակնարկում է մեկ շաբաթ հետո տեղի ունենալիք իր պայծառակերպության մասին: Ուրիշներն էլ այս խոսքի մեջ մի ակնարկություն են տեսնում Պենտեկոստի օրվա մասին, որից հետո քրիստոնեությունը արագ կերպով տարածվեց ամբողջ աշխարհում:

^{17.1-5} Բ Պտ 1.17-18:

^{17.5} ա Մտ 22.2, Սղ 2.7, Ես 42.1, Մտ 3.17, 12.18, Մր 1.11. Ղկ 3.22: բ Բ Օր 18.15:

^{17.10} Սղ 4.5:

¹¹ Հիսուսը պատասխանեց.

- Ճիշտ է, Եղիան, նախապես գալով, պիտի պատրաստի ամեն ինչ.* ¹² Բայց իմացե՛ք, որ Եղիան արդեն իսկ եկել է, սակայն մարդիկ նրան չճանաչեցին և նրա հետ վարվեցին, ինչպես որ ցանկացան: Նույնպես և Մարդու Որդին կչարչարվի նրանց ձեռքով:՝

¹³ Այն ժամանակ աշակերտները հասկացան, որ նա Հովհաննես Մկրտչի մասին էր խոսում:

Հիսուսը բժշկում է չար ոգուց բռնված տղային

(Մր 9.14-29, Ղկ 9.37-43)

¹⁴ Երբ ժողովրդին միացան, մի մարդ մոտեցավ, ծնկի եկավ Հիսուսի առջև ¹⁵ և ասաց. - Տե՛ր, ողորմի՛ր իմ որդուն, լուսնոտ է և սաստիկ տանջվում է. շատ անգամ կրակի մեջ է ընկնում, երբեմն էլ՝ ջրի մեջ: ¹⁶ Աշակերտներիդ մոտ բերեցի նրան, բայց նրանք չկարողացան բժշկել:

¹⁷ Հիսուսը պատասխանեց.

- Ո՛վ անհավատ և մոլորված սերունդ, մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ, մինչև ե՞րբ պիտի հանդուրժեմ ձեզ. այստե՛ղ բերեք նրան:

¹⁸ Ապա Հիսուսը սաստեց չար ոգուն, որը դուրս ելավ փոքրիկ տղայի միջից, և հենց նույն պահին էլ փոքրիկը բժշկվեց:

¹⁹ Ապա, երբ առանձին մնացին, աշակերտները մոտեցան Հիսուսին և հարցրին.

- Մենք ինչո՞ւ չկարողացանք դուրս հանել չար ոգուն:

²⁰ Հիսուսը պատասխանեց.

- Ձեր թերահավատությա՛ն պատճառով: Ասում եմ ձեզ, եթե մանանեխի մի հատիկի չափ հավատ ունենաք, պիտի կարողանաք այս լեռանն ասել. «Տեղափոխվի՛ր այստեղից այնտեղ», և նա պիտի տեղափոխվի: Ոչ մի բան անկարելի չի լինի ձեզ համար:՝ ²¹ Բայց այս տեսակ չար ոգուն աղոթքով և ծոմապահությամբ միայն կարելի է դուրս հանել:՝

Հիսուսը դարձյալ խոսում է իր մահվան և հարության մասին

(Մր 9.30-32, Ղկ 9.44-45)

²² Եվ մինչ նրանք շրջում էին Գալիլեայում, Հիսուսն ասաց իր աշակերտներին.

- Մարդու Որդին մատնվելու է մարդկանց ձեռքը, ²³ որոնք կսպանեն նրան, բայց երրորդ օրը նա հարություն պիտի առնի:

Այս խոսքի վրա աշակերտները շատ տխրեցին:

^{17.11} Մր 48.10:

^{17.12} Մտ 11.14:

^{17.20} «Մանանեխի մի հատիկի չափ». մանանեխի հատիկը սերմերի մեջ համարվում է ամենափոքրը (հմմտ 13.32):

^{17.20} Մտ 21.21, Մր 11.23, Ա Կր 13.2:

^{17.21} Հուն. շատ ձեռ. չունեն այս հմբ: Բայց տե՛ս Մր 9.29:

Տաճարի տուրքի վճարումը

²⁴ Երբ նրանք Կափառնայում եկան, տաճարի տուրք գանձողները մոտեցան Պետրոսին և հարցրին.

- Ձեր Վարդապետը տաճարի տուրքը չի՞ տալիս:

- Անշուշտ կտա, -ասաց Պետրոսը:՝

²⁵ Եվ երբ տուն մտան, Հիսուսը, կանխելով Պետրոսի ասելիքը, հարցրեց.

- Միմո՞ն և ի՞նչ ես կարծում, աշխարհի թագավորները հարկեր կամ տուրքեր ո՞ւմից են առնում. իրենց քաղաքացիներից, թե՞ օտարներից:

²⁶ Եվ երբ Պետրոսն ասաց՝ օտարներից, Հիսուսն ավելացրեց.

- Ապա, ուրեմն, քաղաքացիները ազատ են այդ տուրքից: ²⁷ Բայց որպեսզի չգայթակղեցնենք այդ մարդկանց, գնա՛ ծով ու կա՛րթ գցիր, և առաջին ձուկը, որ պիտի բռնես, վերցրո՛ւ, բա՛ց նրա բերանը. դու մի արծաթ դրամ պիտի գտնես այնտեղ. տա՛ր այդ դրամը և նրա՛նց տուր իմ ու քո տեղ:

18

Ո՞վ է մեծը

(Մր 9.33-37, Ղկ 9.46-48)

¹ Այդ պահին Հիսուսի աշակերտները մոտեցան նրան և հարցրին.

- Մեզնից ո՞վ է մեծը երկնքի արքայության մեջ:՝

² Հիսուսն իր մոտ կանչեց մի երեխայի և նրան կանգնեցնելով նրանց մեջ՝ ³ ասաց.

- Հաստատ՛ տ իմացեք, որ եթե չփոխվեք ու չլինեք մանուկների նման, երկնքի արքայությունը չեք մտնի:՝ ⁴ Արդ, ով իր անձը խոնարհեցնի այս մանկան նման, նա՛ է մեծը երկնքի արքայության մեջ: ⁵ Եվ ով որ իմ անունով մի այդպիսի մանուկ ընդունի, ի՛նձ ընդունած կլինի:

Գայթակղության հարց

(Մր 9.42-48, Ղկ 17.1-2)

⁶ Ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, լավ կլինեք, որ գայթակղեցնողի վզից մի մեծ երկանաքար կախվեր և նետվեր ծովի խորքը՝ ընկղմելու համար:՝ ⁷ Վա՛յ աշխարհին, քանի որ գայթակղություններն անպակաս են այնտեղ: Գայթակղություններ անպայման պիտի պատահեն, բայց վա՛յ այն մարդուն, որի ձեռքով ուրիշները գայթակղության մեջ կընկնեն: ⁸ Եթե քո ձեռքը կամ ոտքը քեզ գայթակղեցնում է, կտրի՛ր ու դե՛ն նետիր այն, որովհետև ավելի լավ է մեկ ձեռքով կամ

^{17.24} «Տաճարի տուրքը». ըստ Մովսիսական Օրենքի (Ելք 30.13-14), քսան տարին լրացած ամեն տղամարդ տարեկան երկու արծաթ դրամ (դահեկան) տուրք պետք է վճարեր տաճարին:

^{17.24} Ելք 30.13, 38.26:

^{18.1} Հուն. չունի «մեզնից» բառը:

^{18.1} Ղկ 22.24:

^{18.3} Մր 10.15, Ղկ 18.17:

^{18.6} «Մեծ երկանաքար». բոց՝ «էջի երկանաքար», այսինքն՝ մի էջի պտտեցրած մեծ երկանաքարը:

կաղ մտնել կյանք, քան երկու ձեռք և երկու ոտք ունենալ և ընկնել հավիտենական կրակի մեջ:՝ ⁹ Եվ եթե քո աչքն է գայթակղեցնում քեզ, հանի՛ր և դե՛ն նետո՛ր այն. ավելի լավ է միակնանի մտնել կյանք, քան երկու աչք ունենալ և ընկնել գեհե՛նի կրակի մեջ:՝

Կորած ոչխարի առակը

(Ղկ 15.3-7)

¹⁰ - Զգո՛ւյշ եղեք, մի՛ արհամարհեք այս փոքրիկներից և ոչ մեկին. իմացե՛ք, որ նրանց հրեշտակները երկնքում մշտապես տեսնում են իմ երկնավոր Հորը.՝ ¹¹ որովհետև Մարդու Որդին եկավ փրկելու կորածը:՝

¹² Ի՞նչ էք կարծում. եթե մի մարդ հարյուր ոչխարներից մեկը կորցնի, իննսունինը ոչխարները լեռան վրա չի՞ թողնի ու չի՞ գնա փնտրելու կորած ոչխարը: ¹³ Եվ եթե պատահի, որ գտնի, վստա՛հ եղեք, թե ավելի՛ կուրախանա այդ ոչխարի համար, քան իննսունինը ոչխարների համար, որոնք կորած չեն: ¹⁴ Նմանապես իմ Հայրը, որ երկնքում է, չի ուզում, որ այս փոքրիկներից մեկը կորչի:՝

Ազդարարություն մեղանշող եղբորը

¹⁵ - Եթե եղբայրդ քո դեմ մեղանշի, գնա հանդիմանի՛ր նրան, երբ երկուսով առանձին եք: Եթե քեզ լսի, քո եղբորը շահած կլինես:՝ ¹⁶ Իսկ եթե քեզ չլսի, ա՛ն քեզ հետ նաև մեկ կամ երկու հոգու, որպեսզի «երկու կամ երեք վկաների բերանով հաստատվի ամեն ամբաստանություն»:՝ ¹⁷ Իսկ եթե նրանց էլ չլսի, կասես հավատացյալների ներկայությամբ. և եթե նրանց էլ չլսի, նրան համարի՛ր որպես մի հեթանոս կամ մի մաքսավոր:

¹⁸ Հաստատ իմացե՛ք, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում, և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում:՝

Քրիստոսի ներկայությունը աղոթողների մեջ

¹⁹ - Նաև ասում եմ ձեզ. եթե երկրի վրա ձեզնից երկու հոգի միաբանվեն որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, իմ երկնավոր Հայրը կկատարի դա. ²⁰ որովհետև ուր որ երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ:

Աններող ծառայի առակը

^{18.8} Մտ 5.30:

^{18.9} Մտ 5.29:

^{18.10} Տբ 12.15:

^{18.11} Հուն. շատ ձեռ. չունեն այս հմբ:

^{18.11} Ղկ 19.10:

^{18.14} «Իմ Հայրը». մի շարք ձեռ. ունեն «ձեր Հայրը»:

^{18.15} Հուն. շատ ձեռ. չունեն «քո դեմ» բառերը:

^{18.15} Ղկ 17.3:

^{18.16} Բ Օր 19.15:

^{18.18} Տե՛ս 16.19-ի ծնթ:

^{18.18} Մտ 16.19, Հհ 20.23:

²¹ Այն ժամանակ Պետրոսը մոտեցավ Հիսուսին և հարցրեց.

- Տե՛ր, եթե եղբայրս մեղանչի իմ դեմ, քանի՞ անգամ պետք է ներեմ նրան. մինչև յո՞թ անգամ:

²² Հիսուսը պատասխանեց.

- Ոչ թե յոթ անգամ, այլ յոթանասուն անգամ յոթ:՝ ²³ Այսպես, երկնքի արքայությունը նմանվում է հետևյալին.-

Մի թագավոր կար, որ ուզեց իր ծառաների հաշիվները քննել: ²⁴ Երբ նա հաշվեքննությունն սկսեց, նրա մոտ բերեցին մի պարտապանի, որ միլիոնավոր ոսկի պարտք ուներ: ²⁵ Եվ քանի որ նա ի վիճակի չէր վճարելու այդ, տերը հրամայեց, որ նրան իբրև ստրուկի վաճառեն իր կնոջ ու զավակների հետ, վաճառեն նաև այն ամենը, ինչ ուներ, և պարտքը վճարեն: ²⁶ Ծառան թագավորի ոտքերն ընկավ և աղաչեց՝ ասելով. «Համբերի՛ր և ժամանա՛կ տուր ինձ, և ես բոլորը կվճարեմ քեզ»:

²⁷ Ծառայի տերը գթաց և պարտքը շնորհելով՝ ուղարկեց նրան:

²⁸ Իսկ ծառան, հազիվ դուրս ելած, գտավ իր ծառայակիցներից մեկին, որը մի չնչին գումար էր պարտք իրեն: Ծառան, նրա կոկորդից բռնելով, խեղդում էր նրան և ասում. «Վճարի՛ր ինձ քո պարտքը»: ²⁹ Ծառայակիցը նրա ոտքն ընկավ և աղաչեց՝ ասելով. «Համբերի՛ր և ժամանա՛կ տուր ինձ, և ես պարտքս կվճարեմ»: ³⁰ Բայց սա չուզեց լսել: Ընդհակառակը, գնաց և բանտ նետել տվեց նրան, մինչև որ պարտքը վճարեր:

³¹ Երբ մյուս ծառաները տեսան պատահածը, շատ նեղվեցին. եկան ու իրենց տիրոջը պատմեցին այն ամենը, ինչ եղել էր: ³² Այն ժամանակ տերը կանչեց այդ ծառային և ասաց. «Չա՛ր ծառա, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի, որովհետև աղաչեցիր ինձ: ³³ Պետք չէ՞ր, որ դու էլ ողորմեիր քո ընկերոջը, ինչպես ես ողորմեցի քեզ»: ³⁴ Եվ տերը բարկանալով նրան հանձնեց դահիճներին, որպեսզի պատժեն, մինչև որ վճարի իր բոլոր պարտքերը:

³⁵ Ապա Հիսուսն ավելացրեց.

- Նույն ձևով էլ իմ երկնավոր Հայրը պիտի վարվի ձեզ հետ, եթե ձեզնից յուրաքանչյուրն իր եղբորը սրտանց չների նրա հանցանքները:

19

Հիսուսը խոսում է ամուսնալուծության դեմ

(Մտ 5.31-32, Մր 10.1-2, Ղկ 16.18)

¹ Երբ Հիսուսն ավարտեց իր այս խոսքերը, թողեց Գալիլեայի շրջանը և գնաց Հրեաստանի սահմանները՝ Հորդանան գետի մյուս կողմը: ² Նրա հետևից գնաց մի մեծ բազմություն, և նա այնտեղ բժշկեց շատերին:

³ Փարիսեցիները Հիսուսին փորձելու մտադրությամբ մոտեցան նրան և հարցրին.

- Մեր Օրենքով մեկն իրավունք ունի՞ որևէ պատճառով արձակելու իր կնոջը:

^{18.21-22} Ղկ 17.3-4:

^{18.22} Ծն 4.24:

^{19.1} «Հորդանան գետի մյուս կողմը». այսինքն՝ արևելյան ափը, որն անցյալում կոչվում էր Սնդրհորդանան կամ Պերեա, իսկ այժմ կոչվում է Հորդանան:

⁴ Հիսուսը պատասխանեց նրանց.

- Մուրք գրքերում դուք չե՞ք կարդացել, թե Աստված սկզբից՝ ⁵ «արու և էգ ստեղծեց մարդկանց» և ասաց նրանց. «Դրա համար տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և միանա իր կնոջը, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն»:⁶ Հետևաբար, այլևս երկու չեն, այլ մեկ մարմին: Ուրեմն որևէ մեկը թող չբաժանի նրանց, ում Աստված միացրեց:

⁷ Փարիսեցիները դարձյալ հարցրին նրան.

- Հապա ինչո՞ւ Մովսեսը օրենք սահմանեց բաժանման թուղթ տալ կնոջը և արձակել նրան:

⁸ Հիսուսը պատասխանեց.

- Մովսեսը ձեր խստասրտության պատճառով թույլատրեց արձակել ձեր կանանց, բայց ստեղծագործության ժամանակ արձակելու խոսք չի եղել: ⁹ Իմացե՛ք նաև՝ ով իր կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի և մի ուրիշին է առնում, շնություն է անում, և ով արձակված կնոջն է առնում, նա էլ է շնություն անում:^{*}

Ամուսնություն և ամուրիություն

¹⁰ Աշակերտներն ասացին Հիսուսին.

- Եթե ամուսնությունն այդպես դատապարտության պատճառ կարող է լինել տղամարդու և կնոջ համար, ավելի լավ է չամուսնանալ:

¹¹ Հիսուսն ասաց.

- Բայց ամեն մարդ չի կարող առանց ամուսնության մնալ, այլ միայն նրանք, ում Աստված կարողություն է տվել, ¹² որովհետև մարդիկ չեն ամուսնանում այն դեպքում, երբ ծնունդով ներքինի են, կամ մարդկանց կողմից են ներքինի դարձած և կամ իրենք իրենց են ներքինի դարձրել երկնքի արքայության համար: Ով կարող է ընդունել իմ այս հաստատումը, թող կատարի այն:

Հիսուսն օրհնում է մանուկներին

(Մր 10.13-16, Ղկ 18.15-17)

¹³ Ժողովրդի միջից ոմանք մանուկներ բերեցին Հիսուսի մոտ, որպեսզի ձեռքը դնի նրանց վրա և աղոթի, սակայն աշակերտները սաստեցին բերողներին: ¹⁴ Հիսուսն ասաց.

- Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին, որ ինձ մոտ գան, մի՛ արգելեք նրանց, որովհետև այդպիսիներին է երկնքի արքայությունը:

¹⁵ Եվ իր ձեռքը դրեց նրանց վրա: Ապա մեկնեց այդտեղից:

Հարուստ երիտասարդը

(Մտ 20.16, Մր 10.17-31, Ղկ 13.30, 18.18-30)

*19.4 Ծն 1.27, 5.2:

*19.5 Ծն 2.24:

*19.7 Բ Օր 24.1-4, Մտ 5.31:

*19.9 Հուն. մի շարք ձեռ. չունեն «և ով...է շնություն անում» նախադասությունը:

*19.9 Մտ 5.32, Ա Կր 7.10-11:

¹⁶ Եվ ահա մեկը մոտեցավ Հիսուսին և հարցրեց.

- Բարի՛ Վարդապետ, ի՞նչ բարի գործ պետք է կատարեմ հավիտենական կյանքն ընդունելու համար:

¹⁷ Հիսուսը պատասխանեց.

- Ինչո՞ւ ես բարու մասին հարցնում ինձ. բարին մե՛կն է, միայն Աստված է բարի: Եթե ուզում ես հավիտենական կյանքը մտնել, պահի՛ր պատվիրանները՝

¹⁸ Նա հարցրեց.

- Ո՞ր պատվիրանները:

Հիսուսն ասաց.

- Հետևյալները. «Մի՛ սպանիր, մի՛ շնանա, մի՛ գողանա, սուտ վկայություն մի՛ տուր,՝

¹⁹ մեծարի՛ր քո հորն ու մորը» և «Մի՛րի՛ր ընկերոջդ քո անձի պես»:

²⁰ Երիտասարդն ասաց.

- Այդ բոլորը իմ մանկությունից ի վեր պահել եմ. ինձ դեռ ի՞նչ է պակասում:

²¹ Հիսուսը պատասխանեց.

- Եթե ուզում ես կատարյալ լինել, գնա՛, վաճառի՛ր ինչ որ ունես, և տո՛ւր աղքատներին. այդպիսով երկնքում գանձ կունենաս, և ապա արի՛ իմ հետևից:

²² Երիտասարդը երբ այս խոսքը լսեց, տրտմած գնաց, որովհետև շատ հարուստ էր:

²³ Հիսուսն իր աշակերտներին ասաց.

- Հաստատ իմացե՛ք, որ հարուստը շատ դժվար պիտի մտնի երկնքի արքայություն:

²⁴ Ավելին եմ ասում ձեզ. պարանը շատ ավելի հեշտ կմտնի ասեղի ծակից, քան հարուստը՝ Աստծու արքայություն:

²⁵ Երբ աշակերտներն այս լսեցին, շատ զարմացան և հարցրին.

- Ուրեմն ո՞վ կարող է փրկվել:

²⁶ Հիսուսը նայեց նրանց և ասաց.

- Մարդկանց համար այդ անկարելի է, բայց Աստծու համար ամեն ինչ կարելի է:

²⁷ Այն ժամանակ Պետրոսն ասաց.

- Ահավասիկ մենք թողեցինք մեր ամբողջ ունեցվածքը և եկանք քո հետևից. մենք ի՞նչ կլինենք:

²⁸ Հիսուսը պատասխանեց.

- Երկրորդ գալստյան, երբ Մարդու Որդին բազմի իր փառքի աթոռին, դուք էլ, որ հետևեցիք ինձ, պիտի բազմեք տասներկու գահերի վրա՝ դատելու Իսրայելի տասներկու ցեղերին:՝ ²⁹ Եվ ով որ թողել է տուն, եղբայրներ, քույրեր, հայր ու մայր, կին ու զավակներ և ազարակներ՝ ինձ համար, հարյուրապատիկը պիտի ստանա և հավիտենական կյանքը ժառանգի: ³⁰ Բայց շատերը, որ առաջինն են, պիտի լինեն

^{19.17} «Ինչո՞ւ ես բարու մասին հարցնում ինձ». մի շարք ձեռ. ունեն «Ինչո՞ւ ես բարի կոչում ինձ»:

^{19.18} **ա** Ելք 20.13, Բ Օր 5.17: **բ** Ելք 20.14, Բ Օր 5.18: **գ** Ելք 20.15, Բ Օր 5.19: **դ** Ելք 20.16, Բ Օր 5.20:

^{19.19} **ա** Ելք 20.12, Բ Օր 5.16: **բ** Ղև 19.18:

^{19.24} «Պարանը» բառի փոխարեն հուն. ունի «ուղտը»:

^{19.28} «Երկրորդ գալստյան» բառերի փոխարեն հուն. ունի «վերստին ծննդի [ժամանակ]»:

^{19.28} **ա** Մտ 25.31: **բ** Ղկ 22.30:

վերջինը, և շատ վերջիններ՝ առաջինը:

20

Այգու մշակների վարձը

¹ - Արդարև, երկնքի արքայությունը նման է հետևյալին.- Կալվաճատեր մի մարդ կար, որ վաղ առավոտյան գնաց մշակներ վարձելու, որ աշխատեն իր այգում: ² Նա մշակների հետ օրական մեկ արծաթ դահեկան վճարելու մասին համաձայնության գալուց հետո նրանց ուղարկեց իր այգին: ³ Ժամը իննի մոտերը դարձյալ գնաց և տեսավ ուրիշ մշակների, որոնք անգործ կանգնել էին հրապարակում: ⁴ Սրանց էլ ասաց. «Դո՛ւք էլ գնացե՛ք իմ այգին, և ինչ որ է ձեր իրավունքը, կտամ ձեզ»: ⁵ Սրանք ևս գնացին: Ապա կեսօրվա դեմ և կեսօրից հետո, ժամը երեքի մոտ, կրկին գնաց և նույն բանն արեց: ⁶ Ժամը հինգի մոտ, հրապարակ գալով, դարձյալ պարապ կանգնած մշակներ տեսավ և հարցրեց նրանց. «Ինչո՞ւ եք ամբողջ օրը պարապ կանգնել այստեղ»: ⁷ «Որովհետև ոչ ոք չվարձեց մեզ», - պատասխանեցին նրանք: Նրանց ասաց. «Դո՛ւք էլ այգի գնացե՛ք, և ինչ որ է ձեր իրավունքը, կստանաք»:

⁸ Երբ երեկո եղավ, այգու տերը իր գործավարին ասաց. «Կանչի՛ր մշակներին և տո՛ւր նրանց օրավարձը՝ վերջին մշակներից սկսած մինչև առաջինները»: ⁹ Նրանք, որ ժամը հինգի մոտ էին վարձված, մեկական արծաթ դահեկան ստացան: ¹⁰ Վաղ առավոտյան վարձվածների հերթը որ եկավ, կարծում էին, թե ավելին կստանան, բայց նրանք էլ մեկական արծաթ դահեկան ստացան: ¹¹ Երբ օրավարձն առան, սկսեցին տրտնջալ տիրոջ դեմ՝ ¹² ասելով. «Վերջին եկողները միայն մե՛կ ժամ աշխատեցին, մինչդեռ մենք ամբողջ օրն աշխատեցինք արևի տակ. իսկ դու մե՛զ նրանց հավասար համարեցիր»: ¹³ Կալվաճատերը նրանցից մեկին պատասխանեց՝ ասելով. «Բարեկա՛մ, ես քեզ չգրկեցի, դու մեկ արծաթ դահեկանի համաձայնեցի՞ր ինձ հետ. ¹⁴ ստացի՛ր օրավարձդ ու գնա՛: Ես ուզում եմ վերջին եկողներին էլ քո ստացածի չափ տալ. ¹⁵ մի՞ թե իրավունք չունեմ իմ դրամը գործածելու ուզածիս պես. կամ թե նախանձո՞ւմ ես, որ ես այսպես առատաձեռն եմ»:

¹⁶ Եվ Հիսուսը եզրակացրեց.

- Այսպես էլ նրանք, որ հիմա վերջինն են, պիտի առաջին լինեն, և առաջինները՝ վերջին. որովհետև կանչվածները շատ են, բայց ընտրվածները՝ քիչ:՝

Հիսուսը երրորդ անգամ խոսում է իր մահվան և հարության մասին

(Մր 10.32-34, Ղկ 18.31-34)

¹⁷ Եվ մինչ Հիսուսը Երուսաղեմ էր գնում, մի կողմ տարավ տասներկու աշակերտներին և ճանապարհին ասաց նրանց.

^{19.30} Մտ 20.16, Ղկ 13.30:

^{20.8} Ղկ 19.13, Բ Օր 24.15:

^{20.16} Հուն. մի շարք ձեռ. չունեն «որովհետև կանչվածները շատ են, բայց ընտրվածները՝ քիչ» նախադասությունը:

^{20.16} Մտ 19.30, Մր 10.31, Ղկ 13.30:

¹⁸ - Ահա գնում ենք Երուսաղեմ, որտեղ Մարդու Որդին պիտի մատնվի ավագ քահանաների և Օրենքի ուսուցիչների ձեռքը, որոնք մահվան պիտի դատապարտեն նրան ¹⁹ և ապա հանձնեն հեթանոսներին, որոնք պիտի ծաղրեն, ծեծեն և խաչ հանեն նրան, բայց նա երբորդ օրը հարություն պիտի առնի:

Զեբեդեոսի որդիների մոր խնդրանքը

(Մր 10.35-45, Ղկ 22.25-27)

²⁰ Այն ժամանակ Զեբեդեոսի որդիների մայրն իր զավակների հետ մոտեցավ Հիսուսին և ծնկի գալով մի բան էր ուզում նրանից.

²¹ - Ի՞նչ էս ուզում,- հարցրեց Հիսուսը:

- Խոստացի՛ր, որ իմ այս երկու զավակները պիտի նստեն քո արքայության մեջ, մեկը՝ քո աջ կողմում, մյուսը՝ ձախ կողմում:

²² Հիսուսը պատասխանեց.

- Չեք իմանում, թե ի՞նչ էք ուզում: Կարո՞ղ էք խմել տառապանքի այն բաժակից, որից ես խմելու եմ, կամ կարո՞ղ էք հանձն առնել այն մկրտությունը, որով ես եմ մկրտվելու:

- Կարող ենք,- պատասխանեցին նրանք:

²³ Հիսուսը նրանց ասաց.

- Արդարև, դուք պիտի խմեք այն բաժակից, որից ես եմ խմելու, և պիտի մկրտվեք այն մկրտությամբ, որով ես եմ մկրտվելու, բայց իմ աջ և ձախ կողմերում նստեցնելու իրավունք է ս չեմ տալու, այլ այդ տեղերը իմ Հա՛յրը պիտի տա նրանց, որոնց համար պատրաստել է:

²⁴ Երբ մյուս տասը աշակերտները լսեցին այս, բարկացան երկու եղբայրների վրա:

²⁵ Հիսուսն իր մոտ կանչեց բոլորին և ասաց.

- Գիտեք, որ ազգերի իշխանավորները տիրում են իրենց հպատակների վրա, և ղեկավարներն իշխում են իրենց ժողովուրդների վրա: ²⁶ Բայց ձեր մեջ այդպես չպետք է լինի: Եթե ձեզնից մեկը ուզենա մեծ լինել, ձեր սպասավորը պետք է լինի, ²⁷ և եթե ձեզնից մեկն ուզենա առաջինը լինել, ձեր ծառան պետք է լինի, ²⁸ որովհետև Մարդու Որդին չեկավ ուրիշներից ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իր կյանքը տալու որպես փրկագին շատերի համար:

Երկու կույրերի բժշկումը

(Մր 10.46-52, Ղկ 18.35-43)

²⁹ Երբ Հիսուսը և իր աշակերտները Երիքովից դուրս էին ելնում, մի մեծ բազմություն գնաց նրա հետևից: ³⁰ Ճանապարհի եզրին նստած երկու կույրեր, երբ լսեցին, որ Հիսուսն անցնում է, սկսեցին աղաղակել.

- Ողորմի՛ր մեզ, Հիսու՛ս, Դավթի՛ Որդի:

^{20.25-26} Ղկ 22.25-26:

^{20.26-27} Մտ 23.11, Մր 9.35, Ղկ 22.26:

^{20.29} «Երիքով»-ը Հորդանան գետի մոտերքում գտնվող մի քաղաք է՝ Երուսաղեմից շուրջ 22 կմ հեռու, դեպի հյուսիս-արևելք:

³¹ Ժողովուրդը սաստեց նրանց, որ լռեն, բայց նրանք շարունակեցին աղաղակել ավելի բարձր ձայնով:

³² Հիսուսը կանգ առավ, իր մոտ կանչեց կույրերին և հարցրեց.

- Ի՞նչ եք ուզում, որ անեմ ձեզ համար:

³³ Նրանք պատասխանեցին.

- Տե՛ր, թող մեր աչքերը բացվեն:

³⁴ Հիսուսը գրթաց և դիպավ նրանց աչքերին: Կույրերն իսկույն տեսան և գնացին Հիսուսի հետևից:

21

Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ

(Մր 11.1-11, Ղկ 19.29-40, Հհ 12.12-19)

¹ Երբ Երուսաղեմին մոտեցան և հասան Բեթփագե, Չիթենյաց լեռան լանջին, Հիսուսն իր աշակերտներից երկուսին ուղարկեց՝ ² պատվիրելով նրանց.

- Գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է, և այնտեղ անմիջապես կապված մի էջ կգտնեք՝ իր քուռակի հետ. արձակե՛ք և բերե՛ք: ³ Եվ եթե մեկն առարկի, ասացե՛ք. «Տիրոջը պետք է», և նա իսկույն թույլ կտա ձեզ:

⁴ Այս բանը պատահեց, որպեսզի իրականանա այն, ինչ Տերն ասել էր մարգարեի բերանով.

⁵ «Ասացե՛ք Երուսաղեմին.

- Ահա քո թագավորը գալիս է քեզ մոտ,

նա հեզ է և նստած մի էջի քուռակի վրա:»՝

⁶ Աշակերտները գնացին և կատարեցին այն, ինչ Հիսուսը պատվիրել էր իրենց:

⁷ Բերեցին էջն ու քուռակը և նրանց վրա դրեցին իրենց վերարկուները: Ապա Հիսուսը նստեց քուռակի վրա: ⁸ Ժողովրդի միջից շատերն իրենց վերարկուները փռում էին ճանապարհի վրա, ուրիշները ծառերից ճյուղեր էին կտրում և սփռում ճանապարհին:

⁹ Եվ ամբողջ բազմությունը, որ թափորի մեջ Հիսուսի առջևից էր գնում կամ հետևում նրան, աղաղակում էր.

«Օրհնություն և Ռավթի Որդուն,

օրհնյա՛լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով:

Օրհնություն և Բարձրյալին:»՝

^{21.1} «Բեթփագե» նշ է «Թզի տուն»: Սա Չիթենյաց լեռան արևելյան լանջին գտնվող մի փոքրիկ գյուղ է՝ Երուսաղեմից հազիվ մի քանի կմ հեռու: «Չիթենյաց լեռը» մի բլուր է, որ գտնվում է Երուսաղեմի արևելյան կողմում և քաղաքից բաժանված է «Կեղրոն» կոչված հեղեղատով կամ ձորակով:

^{21.5} «Երուսաղեմին». բոց՝ «Միոնի դասերը»: Աստվածաշնչի մեջ «դուստր» բառը փոխաբերաբար է գործածվում՝ մի քաղաքի կամ մի շրջանի բնակիչներին նշելու համար. այստեղ խոսքը վերաբերում է Միոնի լեռան, այսինքն՝ Երուսաղեմի բնակիչներին:

^{21.5} Զբ 9.9:

^{21.7} «Նստեց քուռակի վրա». բոց՝ «նրանց վրա»: Հավանաբար ակնարկում է վերարկուները:

^{21.9} «Օրհնություն և». բոց՝ «օվսաննա», որը օգնության մի կոչ է և նշ է «աղաչում ենք, փրկի՛ր» կամ «հիմա՛ փրկի՛ր»: Սղ 118.25-ը արտացոլող այս բառը ժամանակի ընթացքում վերածվել է

¹⁰ Երբ Հիսուսը Երուսաղեմ մտավ, ամբողջ քաղաքը դղրդաց:

- Ո՞վ է սա,- հարցնում էին քաղաքի բնակիչները:

¹¹ Իսկ ամբողջը պատասխանում էր.

- Սա Հիսուս մարգարեն է, Գալիլեայի Նազարեթ քաղաքից:

Հիսուսը մտնում է տաճար

(Մր 11.15-19, Ղկ 19.45-48, Հհ 2.13-17)

¹² Ապա Հիսուսը տաճար մտավ և վնդեց բոլոր նրանց, որոնք տաճարի շրջափակում ատուծախ էին անում: Նա շուռ տվեց լուսնայափոխների սեղաններն ու աղավնեվաճառների աթոռները՝ ¹³ և ասաց նրանց.

- Սուրբ գրքերում ասված է. «Իմ տունն աղոթքի տուն պիտի կոչվի», մինչդեռ դուք ավազակների որջի եք վերածել այն:՝

¹⁴ Տաճարում Հիսուսին մոտեցան կույրեր ու կաղեր, և նա բժշկեց նրանց: ¹⁵ Երբ ավագ քահանաներն ու Օրենքի ուսուցիչները տեսան Հիսուսի կատարած հրաշքները և լսեցին մանուկների աղաղակը, որոնք տաճարում գոչում էին՝ «Օրհնություն և Դավթի Որդուն», բարկացան ¹⁶ և ասացին Հիսուսին.

- Լսո՞ւմ ես, թե ի՞նչ են ասում դրանք:

Հիսուսը պատասխանեց.

- Այո՛, դուք չե՞ք կարդացել Սուրբ գրքի այս խոսքը, թե՛ «Մանուկների ու ծծկեր երեխաների բերանով գովեստ հյուսեցիր»:

¹⁷ Ապա նրանց թողնելով՝ Հիսուսը ելավ քաղաքից դուրս, դեպի Բեթանիա և այնտեղ զիշերեց:

Հիսուսն անիծում է թզենուն

(Մր 11.12-14, 20-24)

փառաբանական բացականչության, դրա համար էլ գրք. բնագրում այն թարգմանվել է «*օրհնություն և*»:
«Դավթի Որդուն». տե՛ս 9.27-ի ծնթ:

¹²1.9 Մղ 118.25-26:

¹²1.12 «Տաճար». մի շարք ձեռն.՝ «Աստծու տաճարը»: «Տաճարի շրջափակում». բռց՝ «տաճարում»: Այստեղ խոսքը վերաբերում է տաճարի արտաքին բակերից կամ գավիթներից մեկին, ուր թույլատրված էր նաև հեթանոսների մուտքը: «Լուսնայափոխների» ներկայությունը տաճարում բացատրվում է նրանով, որ օտար երկրներից ուխտի եկող հրեաները կարիք ունեին փոխելու իրենց դրամները, որպեսզի կարողանային գնել իրենց ընծաները կամ վճարել տաճարի տուրքը (հմմտ Մտ 17.23):

«Աղավնեվաճառների» կամ այլ կենդանիներ վաճառողների ներկայությունը հասկանալու համար պետք է գիտենալ, որ ուխտավորներն ընդհանրապես իրենց զոհի կենդանիներին (աղավնի, ոչխար կամ արջառ) գնում էին տեղում, դրա համար էլ վաճառողները տոնական օրերին լցնում էին տաճարի շրջափակը:

¹²1.13 Ես 56.7, Եր 7.11:

¹²1.16 Մղ 8.2 [LXX]:

¹²1.17 «Բեթանիա». նշ է «Արմավի տուն»: Սա Ձիթենյաց լեռան վրա գտնվող մի ուրիշ գյուղ էր, որտեղ ապրում էին Հիսուսի բարեկամ Ղազարոսը և նրա երկու քույրերը: Այժմ այդ գյուղը Ղազարոսի անունով կոչվում է *Էլ Ազարիե*:

¹⁸ Հաջորդ օրը, առավոտյան, երբ Հիսուսը քաղաք էր վերադառնում, քաղց զգաց:
¹⁹ Ճանապարհի վրա մի թզենի տեսնելով՝ մոտեցավ նրան, բայց տերևներից բացի վրան ոչինչ չգտավ: Նա թզենուն ասաց.

- Այսուհետև հավիտյան պտուղ չունենաս:

Եվ նույն պահին թզենին չորացավ: ²⁰ Աշակերտները երբ այս տեսան, զարմացան և հարցրին.

- Ինչպե՞ս թզենին մի վայրկյանում չորացավ:

²¹ Հիսուսը նրանց պատասխանեց.

- Վստահ եղեք, որ եթե հավատ ունենաք և չկասկածեք, ոչ միայն պիտի կարողանաք կատարել թզենուն պատահածը, այլ նույնիսկ եթե այս լեռանն ասեք՝ «Ելի՛ր ու ծո՛վն ընկիր», պիտի կատարվի: ²² Եվ աղոթելիս ինչ էլ որ հավատալով խնդրեք, կատանաք:

Հիսուսի իշխանության մասին հարցը

(Մր 11.27-33, Ղկ 20.1-8, Հհ 2.18-22)

²³ Ապա Հիսուսը եկավ տաճար: Մինչ նա ուսուցանում էր, նրան մոտեցան ավագ քահանաներն ու ժողովրդի երեցները և հարցրին.

- Ի՞նչ իշխանությամբ ես դու անում այս բաները, և ո՞վ տվեց քեզ այդ իշխանությունը:

²⁴ Հիսուսը պատասխանեց նրանց.

- Լա՛վ, ես էլ ձեզ մի հարց տամ. եթե պատասխանեք ինձ, ես էլ ձեզ կասեմ, թե ի՛նչ իշխանությամբ եմ անում այս բաները: ²⁵ Հովհաննեսի մկրտելու իշխանությունը որտեղի՞ց էր. Աստծո՞ւց էր տրված նրան, թե՞ մարդկանցից:

Նրանք սկսեցին իրար միջև խորհուրդ անել և ասել. ²⁶ «Եթե ասենք՝ "Աստծուց էր տրված", մեզ կասի՝ հապա ինչո՞ւ չհավատացիք նրան. իսկ եթե ասենք՝ "Մարդկանցից", ժողովրդից վախենում ենք, որովհետև ամեն մարդ գիտի, որ Հովհաննեսը ճշմարտապես մարգարե է»: ²⁷ Ուստի Հիսուսին պատասխանեցին.

- Չգիտենք:

Հիսուսն էլ նրանց ասաց.

- Ուրեմն ես էլ ձեզ չեմ ասի, թե ի՛նչ իշխանությամբ եմ անում այս բաները:

Երկու որդիների առակը

²⁸ - Արդ ասացե՛ք ինձ ձեր կարծիքը: Մի մարդ երկու որդի ուներ: Նա առաջին որդու մոտ գնաց և ասաց. «Տղա՛ս, այսօր գնա՛ այգում աշխատելու»: ²⁹ Նա պատասխանեց՝ ասելով. «Կգնամ, հայրի՛կ», բայց չգնաց: ³⁰ Ապա հայրը գնաց մյուս որդու մոտ և նույն բանն ասաց: Երկրորդ որդին պատասխանեց. «Չեմ գնա», բայց հետո զղջաց և գնաց:

³¹ Արդ, այս երկուսից ո՞ր մեկը կատարեց իր հոր կամքը:

- Երկրորդը, - պատասխանեցին նրանք: Հիսուսը նրանց ասաց.

- Ասում եմ ձեզ, որ մաքսավորներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ և ձեզնից առաջ մտնեն Աստծու արքայությունը. ³² որովհետև Հովհաննեսը եկավ և ձեզ ցույց

տվեց մի արդար կյանքի ճանապարհ, բայց դուք չհավատացիք նրան, իսկ մաքսավորներն ու պոռնիկները հավատացին: Դուք նույնիսկ այդ բանը տեսնելուց հետո չզոջացիք ու չհավատացիք նրան:՝

Չար մշակների առակը

(Մր 12.1-12, Ղկ 20.9-19)

³³ - Այս առակն էլ լսեցե՛ք: Կալվածատեր մի մարդ կար, որ մի այգի տնկեց, չորս կողմից ցանկապատեց այն, հնձանի համար փոս փորեց և աշտարակ շինեց, ապա այն վարձու տվեց մշակների, իսկ ինքը մեկնեց ուրիշ երկիր:՝ ³⁴ Երբ այգեկուրթի ժամանակը հասավ, իր ծառաներին ուղարկեց մշակների մոտ՝ բերքից իր բաժինն առնելու:

³⁵ Մշակները, նրա ծառաներին բռնելով, մեկին ծեծեցին, մեկին սպանեցին, իսկ մյուսին էլ քարկոծեցին: ³⁶ Այգու տերը դարձյալ ծառաներ ուղարկեց՝ թվով ավելի, քան նախկինները, բայց սրանց էլ նույն բանն արեցին: ³⁷ Վերջում իր որդուն ուղարկեց նրանց մոտ՝ մտածելով. «Թերևս իմ որդուց քաշվեն»: ³⁸ Բայց մշակները, երբ տեսան որդուն, իրենց մտքում ասացին. «Սա է ծառանգը, եկեք սպանենք սրան, որպեսզի տիրանանք նրա ծառանգությանը»: ³⁹ Եվ բռնելով նրան՝ այգուց դուրս հանեցին ու սպանեցին:

⁴⁰ Ապա Հիսուսը հարցրեց.

- Արդ, երբ այգու տերը գա, ի՞նչ կանի այդ մշակներին:

⁴¹ Նրանք պատասխանեցին.

- Այդ չար մշակներին անկասկած կսպանի և այգին վարձու կտա ուրիշ մշակների, որոնք նրա բերքի բաժինը նրան կտան իր ժամանակին:

⁴² Հիսուսը նրանց ասաց.

- Սուրբ գրքերում երբեք չե՞ք կարդացել.

«Այն քարը, որ շինարարները մերժեցին գործածել,

նա՛նկյունաքար եղավ.

Տերը կատարեց այս,

և մեր աչքին սքանչելի է»:

⁴³ Դրա համար ասում եմ ձեզ, որ ձեզնից կվերցվի Աստծու արքայությունը և կտրվի այն ժողովրդին, որ պտղաբեր կդարձնի այն: ⁴⁴ Ով որ այդ քարին բախվի, պիտի խորտակվի, և ում վրա որ այն ընկնի, պիտի ճզմի նրան:՝

⁴⁵ Երբ ավագ քահանաները, Օրենքի ուսուցիչները և փարիսեցիները լսեցին այս առակները, հասկացան, որ իրենց համար ասաց: ⁴⁶ Նրանք ուզում էին ձերբակալել Հիսուսին, բայց վախեցան ժողովրդից, որն իբրև մարգարեի էր ընդունում նրան:

^{21.32} Ղկ 3.12, 7.29-30:

^{21.33} Ես 5.1-2:

^{21.42} Սղ 118.22-23:

^{21.44} Հուն. սակավաթիվ ձեռ. չունեն այս համարը: Հմմտ Ղկ 20.18:

Հարսանիքի հրավիրվածների առակը

(Ղկ 14.15-24)

¹ Հիսուսը, իբրև պատասխան, դարձյալ սկսեց առակներով խոսել ժողովրդի հետ և ասաց.

² - Երկնքի արքայությունը նման է հետևյալին. - Մի թագավոր իր որդու համար հարսանիք արեց: ³ Նա ուղարկեց իր ծառաներին, որ հրավիրվածներին հարսանիքի կանչեն, բայց նրանք մերժեցին գալ: ⁴ Դարձյալ ուրիշ ծառաներ էլ ուղարկեց պատվիրելով նրանց. «Ասացե՛ք հրավիրվածներին. ճաշկերույթը պատրաստ է, իմ ցլիկներն ու պարարտ անասունները մորթված են, և ամեն ինչ կազմ ու պատրաստ է, եկե՛ք հարսանիք»:⁵ Բայց հրավիրվածները կարևորություն չտվեցին. մեկն իր ազարակը գնաց, մյուսը՝ իր առևտրին, ⁶ իսկ ուրիշներն էլ ծառաներին բռնեցին և ձեծելով սպանեցին:⁷ Թագավորը երբ լսեց այս, բարկացավ և ուղարկեց իր զինվորներին, որոնք ոճրագործներին սպանեցին և նրանց քաղաքն էլ այրեցին:⁸ Ապա թագավորն ասաց իր ծառաներին. «Հարսանիքը պատրաստ է, բայց հրավիրվածները արժանի չէին:⁹ Հիմա գնացե՛ք հրապարակ և ում որ գտնեք, հրավիրե՛ք հարսանիքի»:¹⁰ Դուրս գալով ճանապարհների վրա՝ ծառաները հավաքեցին բոլոր նրանց, ում գտան՝ թե՛ չարերին, թե՛ բարիներին, և հարսանիքի սրահը լցվեց հրավիրվածներով:¹¹ Երբ թագավորը ներս մտավ՝ նայելու հրավիրվածներին, տեսավ մի մարդու, որ հարսանիքին պատշաճ հագուստ չէր հագել,¹² և նրան ասաց. «Բարեկա՛մ, ինչպե՛ս այստեղ մտար առանց հարսանիքի հագուստ ունենալու»: Մարդը պապանձվեց:¹³ Այն ժամանակ թագավորը ծառաներին ասաց. «Կապե՛ք դրա ոտքերն ու ձեռքերը և դո՛ւրս նետեք դրան խավարի մեջ, թող այնտեղ լաց լինի ու կրճտի ատամները»:¹⁴ որովհետև կանչվածները շատ են, բայց ընտրյալները՝ քիչ:

Տուրք վճարելու հարցը

(Մր 12.13-17, Ղկ 20.20-26)

¹⁵ Այն ժամանակ փարիսեցիները գնացին և խորհրդակցեցին, թե ինչպե՛ս կարողանան Հիսուսին իր խոսքերով ծուղակը գցել:¹⁶ Նրանք Հիսուսի մոտ ուղարկեցին իրենց աշակերտներից ոմանց՝ Հերովդեսի կողմնակիցների հետ միասին: Սրանք Հիսուսին ասացին.

- Վարդապե՛տ, գիտենք, որ ճշմարտախոս ես և Աստծու կամքը ճշմարտությամբ ես ուսուցանում՝ առանց մտահոգվելու, թե ուրիշներն ի՞նչ կասեն, որովհետև աչառություն չես անում:¹⁷ Ուրեմն ասա՛ մեզ, ի՞նչ ես կարծում, մեր Օրենքի համաձայն՝ կայսրին տուրք պե՞տք է տանք, թե՞ ոչ:

¹⁸ Հիսուսը հասկացավ նրանց չարամտությունը և ասաց.

^{22.13} Մտ 8.12, 25.30, Ղկ 13.28:

^{22.14} Բ Եզր 8.3:

^{22.16} «Հերովդեսի կողմնակիցները». սրանք Հերովդես Անտիպասի (ՔԱ4-ՔՀ39) կողմնակիցներն էին, որոնք հանդուրժում էին հռոմեացիների տիրապետությունը՝ պարզապես Հերովդես Մեծի ընտանիքից մեկին իբրև իրենց թագավոր ունենալու համար:

- Կեղծավորներ, ինչո՞ւ եք փորձում ինձ: ¹⁹ Տո՛ւյց տվեք ինձ տուրքի արծաթ դրամը: Եվ նրանք բերեցին դրամը: ²⁰ Ապա Հիսուսը հարցրեց.
- Մա՞նձ պատկերն ու արձանագրությունն է՞:
- ²¹ Նրանք պատասխանեցին.
- Կայսրի:
- Այն ժամանակ Հիսուսն ասաց նրանց.
- Գնացե՛ք, ինչ որ կայսրին է պատկանում, կայսրի՛ն տվեք, և ինչ որ Աստծուն է պատկանում, Աստծո՛ւն տվեք:
- ²² Այս լսելով՝ զարմացան և թողեցին նրան ու գնացին:

Հարության հարցը

(Մր 12.18-27, Ղկ 20.27-40)

- ²³ Նույն օրը սաղուկեցիներից ոմանք եկան Հիսուսի մոտ: Սաղուկեցիներն ասում էին, թե մեռելների հարություն չկա: ²⁴ Նրանք Հիսուսին ասացին.
- Վարդապե՛տ, Մովսեսը մեզ հետևյալը սովորեցրեց. «Եթե մեկը մեռնի առանց զավակ ունենալու, նրա եղբայրը պետք է ամուսնանա նրա այրիացած կնոջ հետ, որպեսզի իր եղբորը զավակ տա»:
 - ²⁵ Արդ, մի ժամանակ մեզ մոտ յոթ եղբայրներ կային: Առաջինն ամուսնացավ և ապա մեռավ առանց զավակ ունենալու, ուստի կնոջն իր եղբորը թողեց:
 - ²⁶ Նույնը պատահեց երկրորդի, երրորդի, մինչև յոթերորդի հետ:
 - ²⁷ Բոլորից հետո կինն էլ մեռավ:
 - ²⁸ Արդ, մեռելների հարության ժամանակ կինը այդ յոթից ո՞ւմ է պատկանելու, քանի որ բոլորն էլ ամուսնացան նրա հետ:
 - ²⁹ Հիսուսը պատասխանեց.
 - Մոլորվածներ եք, որովհետև չեք հասկանում ո՛չ Մուրք գրքերը և ո՛չ էլ Աստծու զորությունը: ³⁰ Երբ մեռելները հարություն առնեն, այլևս չեն ամուսնանա, այլ կլինեն երկնքի հրեշտակների նման: ³¹ Իսկ հարության մասին չե՞ք կարդացել, թե Աստված ինչ է ասել ձեզ. ³² «Ե՛ս եմ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը»: Նշանակում է՝ Աստված մեռելների Աստվածը չէ, այլ ողջերի: ³³ Երբ ժողովուրդն այս լսեց, զարմացավ նրա ուսուցման վրա:

Մեծագույն պատվիրանը

(Մր 12.28-34, Ղկ 10.25-28)

- ³⁴ Իսկ փարիսեցիները երբ լսեցին, թե Հիսուսը պապանձեցրեց սաղուկեցիներին, իրար մոտ եկան:

^{22.20} «Պատկերն ու արձանագրությունը». այն օրերին հռոմեական դրամի մեկ երեսին կար Տիբերիոս կայսեր պատկերը, իսկ մյուս երեսին՝ լատիներեն հետևյալ արձանագրությունը. «Տիբերիոս կայսր Օգոստոս, որդի աստվածային Օգոստոսի»:

^{22.23} Գրծ 23.8:

^{22.24} Բ Օր 25.5:

^{22.30} «Երկնքի հրեշտակների». մի շարք ձեռ. ունեն «Աստծու հրեշտակների»:

^{22.30} Իմս 5.5:

^{22.32} Ելք 3.6:

³⁵ Նրանցից մեկը, Մովսիսական Օրենքի մի մասնագետ, Հիսուսին փորձելու համար հարցրեց.՝

³⁶ - Վարդապետ, Օրենքի մեջ ո՞րն է մեծագույն պատվիրանը:

³⁷ Հիսուսը նրան ասաց.

- «Միրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով»:՝ ³⁸ Մա է մեծագույն և կարևորագույն պատվիրանը. ³⁹ Երկրորդը սրա նման է. «Միրի՛ր ընկերոջդ քո անձի պես»:՝ ⁴⁰ Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ Օրենքը և մարգարեների ուսուցումները:

Ո՞ւմ որդին է Քրիստոսը

(Մր 12.35-37, Ղկ 20.41-44)

⁴¹ Երբ փարիսեցիները հավաքվեցին, Հիսուսը նրանց հարցրեց.

⁴² - Ի՞նչ կարծիք ունեք Քրիստոսի մասին, ո՞ւմ որդին է նա:

Նրանք պատասխանեցին.

- Դավթի:

⁴³ Հիսուսը նրանց ասաց.

- Բայց ինչպե՞ս է, որ Դավիթը, Սուրբ Հոգով ներշնչված, նրան Տեր է կոչում և ասում.

⁴⁴ «Տերն իմ տիրոջն ասաց

նստի՛ր իմ աջ կողմում,

մինչև որ քո թշնամիներին դնեմ ոտքերիդ տակ

իբրև պատվանդան»:՝

⁴⁵ Արդ, եթե Դավիթը նրան Տեր է կոչում, ինչպե՞ս նրա որդին կլինի:

⁴⁶ Ոչ ոք Հիսուսին չկարողացավ պատասխան տալ, և այդ օրվանից ոչ մեկը չէր համարձակվում նրան որևէ բան հարցնել:

23

Զգուշացում Օրենքի ուսուցիչներից և փարիսեցիներից

(Մր 12.38-39, Ղկ 11.43, 46, 20.45-47)

¹ Ապա Հիսուսը ժողովրդին և իր աշակերտներին ասաց. - ² Մովսեսի աթոռին նստեցին Օրենքի ուսուցիչներն ու փարիսեցիները:՝ ³ Հնազանդվեցե՛ք նրանց ասածներին և կատարեցե՛ք դրանք, բայց մի՛ արեք այն, ինչ նրանք են անում, որովհետև նրանք սովորեցնում են, բայց չեն կատարում: ⁴ Նրանք ծանր և դժվարակիր բեռներ են դնում մարդկանց ուսերին, մինչդեռ իրենք նույն բեռները կրելու

^{22.35} Մի շարք ձեռ. չունեն «[Մովսիսական] Օրենքի մի մասնագետ»:

^{22.35-40} Ղկ 10.25-28:

^{22.37} Բ Օր 6.5:

^{22.39} Ղկ 19.18:

^{22.44} Մղ 110.1:

^{23.2} «Մովսեսի աթոռին նստեցին». նշ է՝ իբրև Մովսեսի հաջորդներ. նրանք Օրենքն ուսուցանելու և մեկնաբանելու պաշտոն ունեն:

նվազագույն ճիգն անգամ չեն անում: ⁵ Ինչ որ անում են, մարդկանց աչքին երևալու համար են անում: Լայնացնում են իրենց գրապանակները և երկարացնում իրենց զգեստների ծուպերը: ⁶ Ընթրիքի ժամանակ սիրում են գրավել պատվավոր տեղերը և ժողովարաններում՝ առաջին աթոռները: ⁷ Հրապարակներում սիրում են մարդկանցից ողջույններ ընդունել և կոչվել «Վարդապետ», այսինքն՝ «ուսուցիչ»: ⁸ Բայց դուք որևէ մեկին «Վարդապետ» մի՛ կոչեք, որովհետև դուք բոլորդ եղբայրներ եք և ունեք մե՛կ ուսուցիչ: ⁹ Երկրի վրա ոչ մեկին «հայր» մի՛ կոչեք, որովհետև դուք ունեք մե՛կ Հայր, որ երկնքում է: ¹⁰ «Առաջնորդ» էլ մի՛ կոչվեք, որովհետև ձեր միակ առաջնորդը Քրիստոսն է: ¹¹ Ձեր միջից մեծը թող ձեր սպասավորը լինի: ¹² Ով որ իր անձը բարձրացնում է, պիտի խոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, պիտի բարձրանա:

Հիսուսը դատապարտում է Օրենքի ուսուցիչներին և փարիսեցիներին

(Մր 12.40, Ղկ 11.39-42)

¹³ - Վա՛յ ձեզ, կեղծավորնե՛ր՝ Օրենքի ուսուցիչնե՛ր և փարիսեցինե՛ր, որ երկնքի արքայությունը փակում եք մարդկանց առաջ: Դուք ինքներդ չեք մտնում և մտնել ուզողներին էլ թույլ չեք տալիս, որ մտնեն:

¹⁴ Վա՛յ ձեզ, կեղծավորնե՛ր՝ Օրենքի ուսուցիչնե՛ր և փարիսեցինե՛ր, որ մի կողմից հափշտակում եք այրիների սներն իրենց ձեռքից, իսկ մյուս կողմից կեղծավորությամբ երկարացնում եք ձեր աղոթքը. դրա համար ձեր դատապարտությունը ավելի խիստ պիտի լինի:

¹⁵ Վա՛յ ձեզ, կեղծավորնե՛ր՝ Օրենքի ուսուցիչնե՛ր և փարիսեցինե՛ր, որ մի կողմից շրջում եք ծով ու ցամաք՝ մեկին նորահավատ դարձնելու համար, իսկ երբ դա ձեզ հաջողվում է, նրան ձեզնից կրկնապատիկ ավելի դժոխքի արժանի եք դարձնում:

¹⁶ Վա՛յ ձեզ, կո՛ւյր առաջնորդներ: Դուք ասում եք. «Ով որ երդվի տաճարի վրա, երդումը կատարելու պարտավորության տակ չի մնա, բայց ով որ երդվի տաճարում եղած ոսկու վրա, պարտավոր է իր երդումը կատարել»: ¹⁷ Հիմարնե՛ր, կույրե՛ր, ո՞րն է ավելի կարևոր՝ ոսկի ն, թե՞ տաճարը, որ սրբազործում է ոսկին: ¹⁸ Կամ ասում եք. «Ով որ երդվի զոհասեղանի վրա, երդումը կատարելու պարտավորության տակ չի մնա, բայց ով որ երդվի զոհասեղանի վրա դրված ոսկու վրա, պարտավոր է իր երդումը կատարել»: ¹⁹ Հիմարնե՛ր, կույրե՛ր, ո՞րն է ավելի կարևոր՝ զո՞հը, թե՞ զոհասեղանը, որ

՝23.5 «*Գրապանակները*» հատուկ փոքրիկ տուփեր էին, որոնց մեջ դրվում էին մագաղաթե երիզներ, որոնց վրա գրված էին լինում Օրենքի գրքից մեկ-երկու հատվածներ: Փարիսեցիներն ու Օրենքի ուսուցիչները հատուկ օրերին դրանք կապում էին իրենց ճակատին կամ ձախ թևին: «*Երկարացնում զգեստի ծուպերը*». բարեպաշտ հրեաներն իրենց զգեստներին անցկացնում էին մանուշակագույն ծուպեր, որոնց դերը պատվիրանները հիշեցնելն էր (հմմտ Թվ 15.38-41):

՝23.5 ա Մտ 6.1: **բ** Բ Օր 6.8: **գ** Թվ 15.38:

՝23.8 «*Դուք որևէ մեկին "Վարդապետ" մի՛ կոչեք*», հուն. ունի «դուք "Վարդապետ" մի՛ կոչվեք»: «Դուք... ունեք մե՛կ ուսուցիչ». հուն. ավելացնում է «*Քրիստոսը*»:

՝23.11 Մտ 20.26-27, Մր 9.35, 10.43-44, Ղկ 22.26:

՝23.12 Ղկ 14.11, 18.14:

՝23.14 Շատ ձեռ. չունեն այս հմր: Հմմտ 12.40:

սրբագործում է զոհը: ²⁰ Հետևաբար, ով որ երդվում է զոհասեղանի վրա, երդված կլինի թե՛ զոհասեղանի և թե՛ այնտեղ եղածների վրա: ²¹ Ով որ երդվում է տաճարի վրա, երդված կլինի թե՛ տաճարի և թե՛ Աստծու վրա, որ բնակվում է այնտեղ: ²² Նույնպես, ով որ երդվում է երկնքի վրա, երդված կլինի թե՛ Աստծու գահի վրա և թե՛ Աստծու վրա, որ նստում է այնտեղ:՝

²³ Վա՛յ ձեզ, կեղծավորներ՝ Օրենքի ուսուցիչներ և փարիսեցիներ, որ տալիս եք անանուխի, սամիթի ու չամանի տասանորդը, բայց անտեսում եք Օրենքի կարևոր պարտավորությունը՝ արդարությունը, ողորմությունը և հավատարմությունը: Հարկավոր էր սրա՛նք գործադրել՝ առանց, սակայն, մյուսներն անտեսելու:՝ ²⁴ Կո՛ւյր առաջնորդներ, մի կողմից մժղուկն եք քամում, բայց մյուս կողմից կուլ եք տալիս ուղտը:

²⁵ Վա՛յ ձեզ, կեղծավորներ՝ Օրենքի ուսուցիչներ և փարիսեցիներ, որ պնակի և բաժակի դրսի կողմն եք մաքրում, մինչդեռ լավ գիտեք, թե դրանց ներսում եղող ուտելիքն ու խմելիքը ինչպիսի՛ հափշտակությամբ և աղտեղությամբ եք ձեռք բերել: ²⁶ Կո՛ւյր փարիսեցի, նախ մաքրի՛ր բաժակի և պնակի ներսի՝ կողմը. այդպիսով դրսի կողմն էլ մաքուր կլինի:

²⁷ Վա՛յ ձեզ, կեղծավորներ՝ Օրենքի ուսուցիչներ և փարիսեցիներ, որ նման եք կրով սպիտակեցրած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ են երևում, բայց ներսից լեցուն են մեռելների ոսկորներով և ամեն տեսակ պղծությամբ:՝ ²⁸ Նույնպես և դուք. դրսից մարդկանց արդար եք երևում, բայց ներսից լի եք կեղծավորությամբ և անօրենությամբ:

²⁹ Վա՛յ ձեզ, կեղծավորներ՝ Օրենքի ուսուցիչներ և փարիսեցիներ, որ մարգարեների շիրիմներն եք շինում և արդարների գերեզմանները զարդարում ³⁰ ու ասում. «Եթե մենք մեր հայրերի ժամանակ ապրած լինեինք, մարգարեների սպանությանը մասնակից չէինք լինի»: ³¹ Դրանով, ահա, դուք արդեն իսկ վկայում եք, թե որդիներն եք նրանց, որոնք կոտորեցին մարգարեներին: ³² Գնացեք ամբողջացրե՛ք ձեր հայրերի կիսատ թողած գործը: ³³ Օձե՛ր, իժերի՛ ծնունդներ, ինչպե՛ս պիտի կարողանաք փախչել դժոխքի դատապարտությունից:՝ ³⁴ Ահա ես ձեզ մոտ եմ ուղարկելու մարգարեների, իմաստունների և Օրենքի ուսուցիչների. նրանցից ոմանց դուք պիտի սպանեք, ոմանց՝ խաչը հանեք, ուրիշների էլ ձեր ժողովարաններում պիտի գանահարեք և հալածեք քաղաքից քաղաք: ³⁵ Այսպիսով՝ դուք բոլոր արդարների սպանության մասնակից եղած պիտի լինեք՝ սկսած անմեղ Աբելի արյունից մինչև արյունը Բարաքիայի որդի Զաքարիայի, որին սպանեցիք տաճարի և զոհասեղանի

^{23.22} Ես 66.1, Մտ 5.34:

^{23.23} «Մալիթ». հոտավետ փոքրիկ մի տունկ, որի ցողունը, տերևներն ու սերմերը օգտագործվում են իբրև համեմունք: «Չաման». համեմունքի տեսակ, որի սերմերը կծու համ են տալիս կերակուրներին:

^{23.23} Ղև 27.30:

^{23.27} «Կրով սպիտակեցրած գերեզման». հրեաներն իրենց գերեզմանները սպիտակեցնում էին կրով, որպեսզի չլինի թե մեկը սխալվելով դիպչի դրանց և ծխականոթեն «պղծվի»:

^{23.27} Գրծ 23.3:

^{23.33} Մտ 3.7, 12.34, Ղկ 3.7:

միջև: ³⁶ Հաստատ՝ տ իմացեք, դուք այս բոլոր ոճիրների պատիժը պիտի կրեք:

Հիսուսի սերը Երուսաղեմի հանդեպ

(Ղկ 13.34-35)

³⁷ - Երուսաղեմ, Երուսաղեմ, որ կոտորում էիր մարգարեներին և քարկոծում Աստծու կողմից քեզ մոտ ուղարկված մարդկանց. քանի՜ անգամ ուզեցի հավաքել քո որդիներին, ինչպես հավն է թների տակ հավաքում իր ձագերին, բայց դուք, Երուսաղեմի՛ բնակիչներ, չուզեցիք: ³⁸ Ահա «Ավերակ պիտի լինի ձեր տունը»: ³⁹ Բայց ասում եմ նաև ձեզ, որ այլևս չեք տեսնի ինձ, մինչև որ չասեք՝ «Օրհնյա՛լ լինի նա, որ գալիս է Տիրոջ անունով»:

24

Տաճարի կործանման մասին

(Մր 13.1-2, Ղկ 21.5-6)

¹ Հիսուսը տաճարից դուրս էր եկել և գնում էր, երբ աշակերտները մոտեցան նրան՝ տաճարի շինությունները ցույց տալու համար: ² Հիսուսն ասաց նրանց.

- Այս բոլոր շինությունները տեսնում եք, չէ՞. ասում եմ ձեզ, որ այս բոլորն էլ պիտի քանդվեն, քարը քարի վրա չպիտի մնա:

Նեղություններ, հալածանքներ և ավերումներ

(Մտ 10.17-23, Մր 13.3-13, Ղկ 21.7-19)

³ Եվ մինչ Հիսուսը նստած էր Ձիթենյաց լեռան վրա, աշակերտներն առանձին եկան և նրան հարցրին.

- Ասա՛ մեզ, ե՞րբ կպատահի այդ. ի՞նչ նշանով կիմանանք, թե ե՞րբ կլինի քո գալուստը և այս աշխարհի վախճանը:

⁴ Հիսուսը պատասխանեց նրանց.

- Չգո՛ւյշ եղեք, չլինի թե մեկը ձեզ խաբի, ⁵ որովհետև շատերը կգան իմ անունով և կասեն, թե՛ «Ես եմ Քրիստոսը», ու կմոլորեցնեն շատերին: ⁶ Դուք լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր. զգո՛ւյշ եղեք, չխռովվեք, որովհետև պետք է, որ դրանք պատահեն: Բայց դա չի նշանակում, որ աշխարհի վախճանն է: ⁷ Ազգերն ազգերի դեմ են կռվելու, և թագավորությունները՝ թագավորությունների դեմ: Չանազան վայրերում սով, համաճարակ և երկրաշարժեր են լինելու: ⁸ Բայց այս ամենը դեռ երկունքի սկիզբն է: ⁹ Այն ժամանակ ձեզ նեղության

^{23.35} ա Ծն 4.8: ք Բ Մն 24.20-21:

^{23.38} «Ձեր տունը». ակնարկություն է Երուսաղեմ քաղաքի և տաճարի մասին:

^{23.38} Եր 22.5:

^{23.39} Մղ 118.26:

^{24.3} Բ Եզր 4.51-5.19:

^{24.7} Բ Եզր 13.31:

պիտի մատնեն ու սպանեն, և բոլոր ազգերն իմ պատճառով պիտի ատեն ձեզ: ¹⁰ Այն ժամանակ շատերն իրենց հավատը պիտի կորցնեն, միմյանց պիտի մատնեն և միմյանց ատեն: ¹¹ Ապա բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն և շատերին մոլորեցնեն: ¹² Անօրենության շատանալուց շատերի սերը պիտի ցամաքի: ¹³ Բայց ով որ մինչև վերջ դիմանա, նա պիտի փրկվի: ¹⁴ Արքայության Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ իբրև վկայություն բոլոր ժողովուրդների, և ապա պիտի գա վախճանը:

Մեծ նեղությունը

(Մր 13.14-23, Ղկ 17.23-24, 21.20-24)

¹⁵ - Երբ սուրբ վայրում տեսնեք «Ավերվածի սրբապղծությունը», որի մասին խոսել է Դանիել մարգարեն (կարդացողը թող հասկանա),* ¹⁶ այն ժամանակ ովքեր Հրեաստանում են, թող փախչեն լեռները, ¹⁷ ով տանիքի վրա է, ցած իջնելուց հետո թող տուն չմտնի մի բան վերցնելու համար,* ¹⁸ և ով դաշտում է, թող հետ չդառնա իր վերարկուն վերցնելու համար:

¹⁹ Այդ օրերին վա յ հողիներին և ստնտու կանանց: ²⁰ Աղոթեցե՛ք, որ ձեր փախուստը ձմեռ ժամանակ կամ շաբաթ օր չպատահի. ²¹ որովհետև այնպիսի՝ մեծ նեղության օրեր պիտի գան, որոնց նմանը աշխարհի ստեղծագործության սկզբից մինչև այսօր չի պատահել և ոչ էլ պիտի պատահի: ²² Եվ եթե Աստված այդ օրերի թիվը պակասեցրած չլիներ, ոչ մեկը չէր փրկվի: Բայց իր ընտրյալների համար Աստված այդ օրերը պիտի պակասեցնի:

²³ Այն ժամանակ, երբ մեկը ձեզ ասի՝ «Ահավասիկ այստեղ է Քրիստոսը», կամ ասի՝ «Այնտեղ է», չհավատա՛ք, ²⁴ որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ պիտի ելնեն և մեծ հրաշքներ ու նշաններ կատարեն, որպեսզի մոլորեցնեն, եթե կարողանան՝ նույնիսկ Աստծու ընտրյալներին: ²⁵ Ահա ամեն ինչ սկզբից ասացի ձեզ: ²⁶ Հետևաբար, եթե ձեզ ասեն՝ «Ահավասիկ, անապատի մեջ է նա», չգնա՛ք, և կամ ասեն՝ «Մառանում է», չհավատա՛ք: ²⁷ որովհետև Մարդու Որդին գալու է կայծակի նման, որը երբ փայլատակի, պիտի լուսավորի ամբողջ երկնակամարը՝ արևելքից արևմուտք:*

Չ4.9 Մտ 10.22:

Չ4.13 Մտ 10.22:

Չ4.15 «Ավերվածի սրբապղծությունը». Դանիելի մարգարեության մեջ սա ակնարկություն է, որ վերաբերում է ՔԱ 168թ., երբ Մելնկյան թագավորներից Անտիոքոս Եպիփանեսը Երուսաղեմն ավերեց և տաճարը սրբապղծեց՝ Չնսին նվիրված մի զոհասեղան կանգնեցնելով այնտեղ: Քրիստոսը հայտնում է, որ շուտով երկրորդ անգամ կատարվելու է նույն մարգարեությունը, որն իրականացավ Ք270թ., երբ հռոմեացի զորավար Տրտոսն ավերեց Երուսաղեմը և տաճարն այրեց: Բայց նույն մարգարեությունը կատարվելու է նաև երրորդ անգամ՝ ժամանակների վախճանին (տե՛ս Բ Թս 2.4: Հմնտ Հտ 13.14-15):

Չ4.15 Դն 9.27, 11.31, 12.11, Ա Մկ 1.54, 6.7:

Չ4.17-18 Ղկ 17.31:

Չ4.21 Դն 12.1, Հտ 7.14:

Չ4.26-27 Ղկ 17.23-24:

Չ4.27 Ղկ 17.23-24:

²⁸ Անգղները հավաքվում են այնտեղ, որտեղ դիակ կա:

Մարդու Որդու գալուստը

(Մր 13.24-31, Ղկ 21.25-33)

²⁹ - Նեղության այդ օրերից անմիջապես հետո արեգակը կխավարի, և լուսինն այլևս չի փայլի. աստղերը կընկնեն երկնքից, և երկնային մարմինները կասասանվեն:³⁰ Ապա Մարդու Որդու նշանը կերևա երկնքում, և աշխարհի բոլոր ժողովուրդները կողբան, երբ տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է ամպերի վրա բազմած՝ զորությամբ և մեծ փառքով:³¹ Եվ երբ մեծաձայն փողը հնչի, նա իր հրեշտակներին կուղարկի, որպեսզի հավաքեն իր ընտրյալներին աշխարհի չորս կողմերից՝ երկնքի մեկ ծայրից մինչև մյուսը:

³² Թզենին թող օրինակ լինի ձեզ: Երբ տեսնում եք, որ նրա ճյուղերը փափկում են և տերև արձակում, կիմանաք, որ ամառը մոտ է:³³ Նույնպես և դուք, երբ իմ բոլոր ասածները կատարվեն, իմացե՛ք, որ Մարդու Որդու գալուստը մոտ է և արդեն հասնելու վրա է:³⁴ Վստահ եղեք, որ այս սերունդը դեռ չանցած՝ այս ամենը կպատահի:³⁵ Նույնիսկ եթե երկինքն ու երկիրը անհետանան, իմ խոսքերը չեն անհետանա:

Ոչ ոք չգիտի օրը կամ ժամը

(Մր 13.32-37, Ղկ 12.39-40, 17.26-30, 34-35)

³⁶ Սակայն ոչ ոք չգիտի, թե ե՛րբ է գալու այդ օրը կամ ժամը. ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը:³⁷ Եվ ինչպես եղավ Նոյի օրերին, այնպես պիտի լինի Մարդու Որդու գալստյան ժամանակ:³⁸ Այդ օրերին, երբ տակավին ջրհեղեղը չէր պատահել, մարդիկ ուտում էին ու խմում, կին էին առնում կամ մարդու գնում մինչև այն օրը, երբ Նոյը մտավ տապան:³⁹ Բայց ժողովուրդը չիմացավ այդ, մինչև որ ջրհեղեղն սկսվեց և բնաջնջեց բոլորին: Ահա այդպես կլինի նաև Մարդու Որդու գալստյանը:⁴⁰ Այն ժամանակ, երբ դաշտում երկու հոգի լինեն, նրանցից մեկը կվերցվի, և մյուսը կթողնվի:⁴¹ Կամ եթե երկու կին մի երկանքով ցորեն աղալիս լինեն, նրանցից մեկը կվերցվի, և մյուսը կթողնվի:⁴² Արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք, թե ե՛րբ կգա ձեր Տերը:⁴³ Ա՛յս էլ իմացեք, որ եթե տանտերը իմանար, թե ո՛ր ժամին կգա գողը, արթուն կմնար և թույլ չէր տա, որ գողը պատը քանդելով մտնի իր տունը:⁴⁴ Դրա համար դուք էլ պատրաստ եղեք, որովհետև Մարդու Որդին կարող է գալ ձեր չակնկալած ժամին:

^{24.28} Ղկ 17.37:

^{24.29} ա Ես 13.10, Հվլ 2.10, 31, 3.15, Հտ 6.12: ք Ես 13.10, Եզկ 32.7, Հվլ 2.10, 3.15: գ Ես 34.4, Հտ 6.13:

^{24.30} Դն 7.13, Զք 12.10-14, Հտ 1.7:

^{24.36} Մի շարք ձեռ. չունեն «և ո՛չ էլ Որդին» բառերը:

^{24.37} Ծն 6.5-8:

^{24.39} Ծն 7.6-24:

^{24.43-44} Ղկ 12.39-40:

Հավատարիմ և անհավատարիմ ծառաներ

(Ղկ 12.41-46)

⁴⁵ - Ուրեմն, ո՞վ է հավատարիմ և իմաստուն ծառան: Նա է, որին իր տերը ծառաների վրա վերակացու է կարգում, որպեսզի ճիշտ ժամանակին նրանց բաժին կերակուրը տա: ⁴⁶ Երանի՛ այն ծառային, որի տերը երբ գա, նրան գտնի իր պաշտոնը լավ կատարած: ⁴⁷ Ասում եմ ձեզ, որ տերն այդ ծառային վերակացու կկարգի իր բոլոր ստացվածքների վրա: ⁴⁸ Սակայն եթե ծառան չար լինի և իր մտքում ասի՝ «Տերն ուշանում է գալ», ⁴⁹ և սկսի իր ծառայակիցներին ծեծել, հարբեցողների հետ ուտել ու խմել, ⁵⁰ հանկարծ, նրա չակնկալած օրը և չիմացած ժամին, տերը կգա ⁵¹ և այն ժամանակ խստությամբ կպատժի նրան՝ կեղծավորների կարգին դասելով: Այնտեղ նա լաց կլինի և կկրճտի ատամները:

25

Տասը կույսերի առակը

¹ - Երկնքի արքայությունը նման կլինի հետևյալին.-

Տասը կույսեր կային, որոնք իրենց լապտերներն առած՝ դիմավորելու ելան փեսային: ² Նրանցից հինգը հիմար էին, իսկ մյուս հինգը՝ իմաստուն: ³ Հիմարներն իրենց լապտերներն առան, բայց իրենց հետ պահեստի ձեթ չվերցրին, ⁴ մինչդեռ իմաստուններն իրենց լապտերների հետ սրվակով ձեթ վերցրին: ⁵ Եվ երբ փեսան ուշացավ գալ, բոլորն էլ թմրեցին ու քնեցին:

⁶ Կեսգիշերին մի ձայն լսվեց. «Ահա փեսան գալիս է, դիմավորելո՛ւ ելեք նրան»: ⁷ Կույսերն արթնացան և սկսեցին իրենց լապտերները կարգի բերել: ⁸ Հիմար կույսերը իմաստուններին ասացին. «Ձեր ձեթից մի քիչ տվե՛ք մեզ, որովհետև մեր լապտերներն ահա հանգչում են»: ⁹ Իմաստուն կույսերը պատասխանեցին. «Ո՛չ, որովհետև գուցե չբավականացնի թե՛ ձեզ և թե՛ մեզ. լավ կլինի, որ գնաք խանութպանների մոտ և ձեզ համար ձեթ գնեք»:

¹⁰ Երբ նրանք գնացին ձեթ գնելու, փեսան եկավ, և ովքեր պատրաստ էին, փեսայի հետ մտան հարսանիքի սրահը, և դուռը փակվեց: ¹¹ Քիչ հետո եկան մյուս կույսերը և ասացին. «Տե՛ր, Տե՛ր, բա՛ց դուռը»: ¹² Փեսան պատասխանեց. «Իսկապես որ չեմ ճանաչում ձեզ»:

¹³ Ապա Հիսուսը եզրակացրեց.

- Ուրեմն արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք Մարդու Որդու գալստյան ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը:

Ինչպե՞ս շահույթով գործարկել դրամը

(Ղկ 19.11-27)

25.1 «Փեսային». մի շարք ձեռ. ավելացնում են «և հարսին»:

25.1 Ղկ 12.35:

25.11-12 Ղկ 13.25:

25.13 Շատ ձեռ. չունեն «Մարդու Որդու գալստյան» բառերը:

¹⁴ - Դարձյալ երկնքի արքայությունը նման կլինի հետևյալին.-

Մի մարդ կար, որ ուրիշ երկիր գնալիս կանչեց իր ծառաներին և նրանց հանձնեց իր ունեցվածքը, որ շահույթով գործարկեն: ¹⁵ Եվ ըստ իրենց կարողությունների՝ մեկին տվեց հինգ հարյուր ոսկի դրամ, մյուսին՝ երկու հարյուր և մեկ ուրիշին՝ հարյուր. ապա ճանապարհ ընկավ:

¹⁶ Ծառաներից նա, որ հինգ հարյուր ոսկի դրամ էր ստացել, իսկույն գնաց, գործարկության մեջ դրեց այն և հինգ հարյուր ևս շահեց: ¹⁷ Նույնպես նա, որ երկու հարյուր ոսկի դրամ էր ստացել, երկու հարյուր ևս շահեց: ¹⁸ Բայց նա, որ հարյուր ոսկի դրամ էր ստացել, գնաց հողը փորեց և իր տիրոջ դրամը թաքցրեց այնտեղ:

¹⁹ Բավական ժամանակ անց այդ ծառաների տերը եկավ և նրանցից հաշիվ պահանջեց: ²⁰ Նա, որ հինգ հարյուր ոսկի դրամ էր ստացել, հինգ հարյուր ևս բերեց և ասաց. «Տե՛ր, դու ինձ հինգ հարյուր ոսկի տվեցիր, ահավասիկ հինգ հարյուր ևս շահեցի»: ²¹ Տերն ասաց. «Ապրե՛ս, բարի և հավատարի՛մ ծառա, քանի որ այդ փոքրիկ գումարը գործարկելու մեջ հավատարիմ եղար, ավելի մեծ գործերի վրա պատասխանատու կկարգեմ քեզ. արի՛ և մասնակի՛ց եղիր քո տիրոջ ուրախությանը»:

²² Նա, որ երկու հարյուր ոսկի դրամ էր ստացել, մոտեցավ և ասաց. «Տե՛ր, դու ինձ երկու հարյուր ոսկի դրամ տվեցիր, ահավասիկ երկու հարյուր ևս շահեցի»: ²³ Տերն ասաց. «Ապրե՛ս, բարի և հավատարի՛մ ծառա, քանի որ այդ փոքրիկ գումարը գործարկելու մեջ հավատարիմ եղար, ավելի մեծ գործերի վրա պատասխանատու կկարգեմ քեզ, դո՛ւ էլ արի և մասնակի՛ց եղիր քո տիրոջ ուրախությանը»:

²⁴ Հետո մոտեցավ նա, որ հարյուր ոսկի դրամ էր ստացել և ասաց. «Տե՛ր, գիտեի, որ խիստ մարդ ես, հնձում ես, ինչ որ չես սերմանել, և հավաքում ես, ինչ որ չես ցանել: ²⁵ Վախեցա, ուստի գնացի և քո տված հարյուր ոսկի դրամը թաքցրի հողի մեջ:

Ահավասի՛կ, քո տվածը՝ քեզ»: ²⁶ Տերը պատասխանեց. «Չար և ծո՛ւյլ ծառա, եթե գիտեիր, որ հնձում եմ, ինչ որ չեմ սերմանել, և հավաքում եմ, ինչ որ չեմ ցանել, ²⁷ ապա դու պետք է քեզ հանձնած իմ դրամը գործարկողներին տայիր, որպեսզի վերադառնալիս ես տոկոսով միասին հետ վերցնեի այն»: ²⁸ Հիմա վերցրե՛ք սրանից հարյուր ոսկի դրամը և նրա՛ն տվեք, ով հազար ունի. ²⁹ որովհետև ունեցողին պիտի տրվի նույնիսկ ավելիով, իսկ չունեցողից պիտի վերցվի իր ունեցած փոքր բաժինն էլ:՝

³⁰ Իսկ այս անպիտան ծառային հանեցեք դո՛ւրս, խավարի մեջ: Թող լաց լինի այնտեղ և կրճտի ատամները:՝

Վերջին դատաստանը

³¹ - Եվ երբ Մարդու Որդին իր փառքով գա բոլոր հրեշտակների հետ, այն ժամանակ

՝25.14-30 Ղկ 19.11-27:

՝25.15 «Հինգ հարյուր ոսկի դրամ». բոց՝ «հինգ քանքար»:

՝25.27 «Գործարկող». բոց՝ «սեղանավոր»: Սեղանավորը այն մարդն էր, որի գործն էր որոշ գումարներ փոխ առնել և օգտագործել դրանք և որոշ ժամանակ անց մայր գումարը տոկոսով վերադարձնել տիրոջը, ինչպես այժմ անում են դրամատները:

՝25.29 Մտ 13.12, Մր 4.25, Ղկ 8.18:

՝25.30 Մտ 8.12, 22.13, Ղկ 13.28:

նա պիտի նստի իր թագավորական գահի վրա:՝³² Բոլոր ազգերը կհավաքվեն նրա գահի դիմաց, և նա մարդկանց պիտի բաժանի իրարից, ինչպես որ հովիվն է գատում ոչխարներն այծերից:՝³³ Ոչխարները պիտի կանգնեցնի իր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ կողմը:՝³⁴ Հետո թագավորը պիտի ասի իր աջ կողմը կանգնածներին. «Եկե՛ք, իմ Հո՛ր օրհնյալներ, և ժառանգեցե՛ք այն արքայությունը, որ պատրաստված է ձեզ համար աշխարհի սկզբից ի վեր,՝³⁵ որովհետև ես քաղցած էի, և ինձ կերակրեցիք, ծարավ էի, և ինձ ջուր տվեցիք, օտարական էի, և ինձ ընդունեցիք,՝³⁶ մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և ինձ խնամեցիք, բանտում էի, և այցելեցիք ինձ»:

³⁷ Այն ժամանակ արդարները կհարցնեն. «Տե՛ր, ե՛րբ տեսանք քեզ քաղցած և կերակրեցինք, կամ ծարավ և ջուր տվեցինք:՝³⁸ Ե՛րբ տեսանք քեզ օտարական և ընդունեցինք, կամ մերկ և հագցրինք:՝³⁹ Ե՛րբ տեսանք քեզ հիվանդ կամ բանտի մեջ և այցի եկանք քեզ»:՝⁴⁰ Թագավորը պիտի պատասխանի նրանց. «Ասում եմ ձեզ, որովհետև իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ, ի՛նձ արած եղաք»:

⁴¹ Ապա նա իր ձախ կողմը կանգնածներին պիտի ասի. «Անիծյալնե՛ր, հեռացե՛ք ինձնից, գնացե՛ք հավիտենական կրակը, որ պատրաստված է Մատանայի և նրա հրեշտակների համար.՝⁴² որովհետև ես քաղցած էի, և ինձ չկերակրեցիք, ծարավ էի, և ինձ ջուր չտվիք,՝⁴³ օտարական էի, և ինձ չընդունեցիք, մերկ էի, և ինձ չհագցրիք, հիվանդ էի ու բանտի մեջ, սակայն այցի չեկաք ինձ»:

⁴⁴ Այն ժամանակ նրանք պիտի հարցնեն. «Տե՛ր, ե՛րբ քեզ տեսանք քաղցած, ծարավ, օտարական, մերկ, հիվանդ կամ բանտի մեջ ու չօգնեցինք քեզ»:՝⁴⁵ Թագավորը պիտի պատասխանի նրանց. «Ասում եմ ձեզ, որովհետև իմ այս փոքր եղբայրներից մեկին չօգնեցիք, ի՛նձ օգնած չեղաք»:

⁴⁶ Եվ այսպես, նրանք պիտի գնան դեպի հավիտենական պատիժ, իսկ արդարները՝ հավիտենական կյանք:՝

26

Դավ Հիսուսի դեմ

(Մր 14.1-2, Ղկ 22.1-2, Հհ 11.45-53)

¹ Երբ Հիսուսն այս բոլոր խոսքերը վերջացրեց, իր աշակերտներին ասաց.

² - Ինչպես գիտեք, երկու օր հետո Ջատիկ է, և Մարդու Որդին պիտի մատնվի՝ խաչվելու համար:՝

³ Այն ժամանակ ավագ քահանաները, Օրենքի ուսուցիչներն ու ժողովրդի երեցները

^{25.31} ա Մտ 16.27: բ Մտ 19.28:

^{25.35-36} Մր 7.32-36:

^{25.46} Դն 12.2:

^{26.2} «Ձատիկ». բոց՝ «Պատեք», որն այս տոնի էրբ. անունն է և առաջին հերթին նշում է Աստծու հրեշտակի անցնելը Եգիպտոսից՝ եգիպտացիների անդրանիկ ծնունդներին հարվածելու, իսկ եբրայեցիների տներն ազատ թողնելու համար (հմմտ Ելք 12.11-13): Նույն բառը նշում էր նաև եբրայեցի ժողովրդի՝ Կարմիր ծովից անցնելը դեպի ազատագրություն և խոստացված երկիր:

^{26.2} Ելք 12.1-27:

հավաքվեցին Կայիափա անունով քահանայապետի ապարանքում ⁴ և որոշեցին նենգությամբ ձերբակալել Հիսուսին ու սպանել: Բայց ասում էին.

⁵ Այս տոնի ժամանակ թող չլինի, որպեսզի ժողովրդի մեջ խռովություն չծագի:

Հիսուսի օծումը Բեթանիայում

(Մր 14.3-9, Հհ 12.1-8)

⁶ Երբ Հիսուսը գտնվում էր Բեթանիայում, բորոտ Սիմոնի տանը, ⁷ նրան մոտեցավ մի կին, որ մի շիշ թանկարժեք յուղ ուներ, և յուղը թափեց Հիսուսի գլխին, երբ նա սեղան էր նստել: ⁸ Երբ աշակերտներն այս տեսան, բարկացան և ասացին.

- Ինչո՞ւ այսպես վատնել այդ անուշահոտ յուղը. ⁹ կարելի էր այն վաճառել թանկ գնով և դրամը տալ աղքատներին:

¹⁰ Հիսուսն իմացավ այդ և ասաց նրանց.

- Ինչո՞ւ եք անհանգստացնում այդ կնոջը, քանի որ նա մի լավ բան արեց ինձ համար:

¹¹ Աղքատներին միշտ ձեզ հետ ունեք, բայց ինձ միշտ ձեզ հետ չեք ունենա: ¹² Իմ մարմնի վրա նա այդ յուղը թափեց ի նշան իմ թաղումի: ¹³ Լավ իմացեք, որ աշխարհում ո՛ր էլ որ Ավետարանը քարոզվի, մարդիկ պիտի խոսեն նրա արածի մասին և հիշեն նրան:

Հուդան համաձայնում է մատնել Հիսուսին

(Մր 14.10-11, Ղկ 22.3-6)

¹⁴ Ապա տասներկու աշակերտներից մեկը, որը կոչվում էր Հուդա Իսկարիովտացի, գնաց ավագ քահանաների մոտ և ասաց նրանց.

¹⁵ - Ի՞նչ կտաք ինձ, եթե Հիսուսին ձեզ հանձնեմ:

Նրանք երեսուն արծաթ դահեկան հաշվեցին և տվեցին Հուդային: ¹⁶ Դրանից հետո նա հարմար առիթի էր սպասում Հիսուսին մատնելու համար:

Վերջին ընթրիքը

(Մր 14.12-26, Ղկ 22.7-28, Հհ 13.21-30, Ա Կր 11.23-25)

¹⁷ Բաղարջակերաց տոնի առաջին օրը աշակերտները, մոտենալով Հիսուսին, ասացին.

- Որտե՞ղ ես ուզում, որ պատրաստենք քեզ համար զատկական ընթրիքը:

¹⁸ Նա պատասխանեց.

- Գնացե՛ք քաղաք, այսինչ մարդու մոտ և ասացե՛ք նրան. «Վարդապետն ասում է՝ իմ ժամանակը մոտեցել է. քո տանն եմ ուտելու զատկական ընթրիքը իմ աշակերտների հետ»:

^{26.7} Ղկ 7.37-38:

^{26.11} Բ Օր 15.11:

^{26.12} «Ի նշան իմ թաղումի». տվյալ ժամանակի սովորության համաձայն, հրեաները որևէ թաղումից առաջ մեռելի մարմինը օծում էին անուշահոտ յուղով ու զմուռսով:

^{26.15} Զք 11.12:

¹⁹ Աշակերտները կատարեցին Հիսուսի հրահանգը և պատրաստեցին զատկական ընթրիքը: ²⁰ Երեկոյան Հիսուսն իր տասներկու աշակերտների հետ ընթրիքի նստեց:

²¹ Մինչ նրանք ուտում էին, Հիսուսն ասաց.

- Ասում եմ ձեզ, որ ձեզանից մեկն ինձ մատնելու է:

²² Աշակերտները խռովքի մատնվեցին, և նրանցից յուրաքանչյուրն սկսեց հարցնել նրան.

- Տե՛ր, մի՞ թե ես եմ:

²³ Հիսուսը պատասխանեց.

- Ով ձեռքն ինձ հետ դեպի պնակը երկարեց, նա՛ է մատնիչը: ²⁴ Մարդու Որդին պիտի մեռնի, ինչպես որ նրա մասին գրված է Սուրբ գրքերում, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով պիտի մատնվի Մարդու Որդին: Երանի՛ այդ մարդը ծնված չլիներ:

²⁵ Հուդան, որ մատնելու էր նրան, հարցրեց Հիսուսին.

- Վարդապե՛տ, մի՞ թե ես եմ:

Հիսուսը պատասխանեց.

- Ահա դո՛ւ ասացիր:

²⁶ Եվ մինչ նրանք ուտում էին, Հիսուսը հաց վերցրեց, օրհնեց, կտրեց և բաժանեց աշակերտներին՝ ասելով.

- Առե՛ք, կերե՛ք, սա իմ մարմինն է:

²⁷ Ապա վերցրեց բաժակը, գոհություն հայտնեց Աստծուն և տվեց իր աշակերտներին՝ ասելով

²⁸ - Բոլորդ էլ խմե՛ք սրանից. սա իմ արյունն է, որով նոր ուխտ է կնքվում Աստծու հետ և որը շատերի համար թափվում է իրենց մեղքերի թողության համար: ²⁹ Բայց նաև ասում եմ ձեզ՝ ես այլևս այս գինուց չեմ խմի մինչև այն օրը, երբ ձեզ հետ կխամեմ նոր գինին իմ Հոր արքայության մեջ:

³⁰ Ապա գոհաբանական սաղմոսներ երգելուց հետո ելան Ձիթենյաց լեռը:՝

Հիսուսը գուշակում է Պետրոսի ուրացումը

(Մր 14.27-31, Ղկ 22.31-34, Հհ 13.36-38)

³¹ Այնտեղ Հիսուսն ասաց նրանց.

- Այս գիշեր դուք բոլորդ էլ լքելու եք ինձ, որովհետև Սուրբ գրքերում գրված է.

«Հովվին պիտի սպանեմ, և հոտի ոչխարները պիտի ցրվեն»: ³² Բայց իմ հարություն

՝26.23 «Ձեռքն ինձ հետ դեպի պնակը երկարեց». զատկական ընթրիքի մասնակիցներն իրենց պատառը վերցնում էին մանրացված մրգերով պատրաստված ինչ-որ խառնուրդից, որը դրված էր լինում ընդհանուր պնակի մեջ: Երբեմն տանտերը, պատվելու համար հատուկ մի հյուրի, անձամբ նրան հրամցնում էր այդ խառնուրդի մեջ թաթախված մի պատառ (հմմտ Հհ 13.26):

՝26.28 ա Ելք 24.8: բ Եր 31.31-34:

՝26.30 «Գոհաբանական սաղմոսներ». զատկական ընթրիքից առաջ և հետո հրեաները երգում էին 113-118 սաղմոսները: Ընթրիքն ավարտելուց հետո 115-118 սաղմոսները երգվում էին ոտքի կանգնած:

՝26.31 Զք 13.7:

առնելուց հետո ձեզնից առաջ պիտի գնամ Գալիլեա:՝

³³ Պետրոսը պատասխանեց.

- Եթե նույնիսկ բոլորը լքեն քեզ, ես չեմ լքի:

³⁴ Հիսուսն ասաց նրան.

- Ասում եմ քեզ, որ այս գիշեր, աքաղաղը դեռ չկանչած, դու երեք անգամ կուրանաս ինձ:

³⁵ Պետրոսն ասաց.

- Եթե քեզ համար մեռնելու իսկ հարկ լինի, քեզ չեմ ուրանա:

Նույնն ասում էին նաև բոլոր աշակերտները:

Հիսուսը Գեթսեմանիում

(Մր 14.32-42, Ղկ 22.39-46)

³⁶ Ապա Հիսուսն իր աշակերտների հետ եկավ մի տեղ, որի անունը Գեթսեմանի էր, և ասաց նրանց.

- Նստե՛ք այստեղ, մինչև որ գնամ աղոթեմ:՝

³⁷ Եվ նա իր հետ վերցրեց Պետրոսին և Ջեբեդեոսի երկու որդիներին: Նա տրտմում էր և տագնապում:

³⁸ Այն ժամանակ ասաց նրանց.

- Հոգիս մեռնելու աստիճան տխուր է. այստե՛ղ մնացեք և ինձ հետ արթուն հսկեցե՛ք:

³⁹ Ապա մի փոքր առաջ գնալով՝ երեսի վրա գետին ընկավ և սկսեց աղոթել՝ ասելով.

- Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը հեռացրո՛ւ ինձնից, բայց ոչ թե ինչպես ես եմ ուզում, այլ ինչպես դո՛ւ ես ուզում:

⁴⁰ Հետո վերադարձավ երեք աշակերտների մոտ և նրանց քնած գտավ: Ասաց Պետրոսին.

- Չկարողացա՞ ք մեկ ժամ արթուն մնալ ինձ հետ: ⁴¹ Արթո՛ւն մնացեք և աղոթեցե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք: Հոգին կարող է հոժար լինել, բայց մարմինը տկար է:

⁴² Նորից, երկրորդ անգամ, Հիսուսը գնաց աղոթելու և ասաց.

- Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող հեռանա ինձանից, իսկ եթե ոչ, կիմեմ այն. քո կա՛ մքը թող լինի:

⁴³ Նա վերադարձավ և դարձյալ իր աշակերտներին քնած գտավ. նրանց աչքերը չէին բացվում: ⁴⁴ Հիսուսը դարձյալ թողեց նրանց ու գնաց երրորդ անգամ աղոթեց՝ նույն խոսքերն ասելով: ⁴⁵ Ապա վերադարձավ իր աշակերտների մոտ և ասաց.

- Այսուհետև ննջեցե՛ք և հանգստացե՛ք. բայց ահա ժամը հասել է, և Մարդու Որդին հանձնվելու է մեղավոր մարդկանց ձեռքը:՝ ⁴⁶ Վե՛ր կացեք գնանք այստեղից, որովհետև ահա հասավ ինձ մատնողը:

Հիսուսի ձերբակալությունը

^{26.32} Մտ 28.16:

^{26.36} «Գեթսեմանի». արամեերեն նշ է «Ձիթահան»:

^{26.45} «Այսուհետև ննջեցե՛ք և հանգստացե՛ք» կամ «Ուրեմն այդպես քնում և հանգստանո՞ւմ եք»:

(Մր 14.43-50, Ղկ 22.47-53, Հհ 18.2-11)

⁴⁷ Մինչ նա խոսում էր, ահա եկավ Հուդան՝ տասներկու աշակերտներից մեկը: Նրա հետ էր սրերով և մահակներով զինված մի մեծ ամբոխ՝ ուղարկված ավագ քահանաների և ժողովրդի երեցների կողմից:

⁴⁸ Հիսուսին մատնողը նրանց նշան էր տվել՝ ասելով.

- Ում որ համբուրեմ, նա՛ է Հիսուսը, ձերբակալե՛ք նրան:

⁴⁹ Հուդան շուտով մոտեցավ Հիսուսին և ասաց.

- Ողջո՛ւյն, Վարդապե՛տ,- և համբուրեց նրան:

⁵⁰ Հիսուսը նրան ասաց.

- Բարեկա՛մ, դրա համա՛ր եկար:

Ապա մոտեցան, բռնեցին Հիսուսին և ձերբակալեցին: ⁵¹ Հիսուսի հետ եղողներից մեկը ձեռքը երկարեց և իր սուրը քաշելով՝ հարվածեց քահանայապետի ծառային ու նրա ականջը կտրեց: ⁵² Հիսուսն ասաց նրան.

- Սուրդ տե՛ղը դիր, որովհետև ով սուր է վերցնում, սրով էլ պիտի մեռնի: ⁵³ Կարծում ես, թե չե՛մ կարող իմ Հորն աղաչել, որ հիմա հրեշտակների ավելի քան տասներկու գնդեր ուղարկի ինձ մոտ: ⁵⁴ Սակայն ինչպե՛ս պիտի իրականանան Սուրբ գրքերում գրվածները, թե՛ այսպես պետք է լինի:

⁵⁵ Ապա ամբոխին դառնալով՝ Հիսուսն ասաց.

- Ի՞նչ է, ավագա՞կ եմ, որ այդպես սրերով և մահակներով եք հարձակվում ինձ վրա՝ ձերբակալելու ինձ: Ամեն օր ձեզ հետ տաճարում նստում էի և ուսուցանում, ու չձերբակալեցիք ինձ: ⁵⁶ Բայց այս բոլորը լինում է, որպեսզի Սուրբ գրքերում մարգարեների ասածներն իրականանան:

Այն ժամանակ աշակերտները բոլորն էլ թողեցին նրան ու փախան:

Հիսուսը հրեաների ատյանի առաջ

(Մր 14.53-65, Ղկ 22.54-55, 63-71, Հհ 18.12-14, 19-24)

⁵⁷ Նրանք ձերբակալեցին Հիսուսին և տարան Կայիափա քահանայապետի տուն, որտեղ հավաքվել էին Օրենքի ուսուցիչներն ու երեցները: ⁵⁸ Պետրոսը հեռվից հետևում էր Հիսուսին մինչև քահանայապետի տան գավիթը, ուր մտնելով՝ նստեց սպասավորների հետ՝ տեսնելու համար, թե ի՛նչ է լինելու: ⁵⁹ Մինչ այդ ավագ քահանաներն ու ամբողջ ատյանը աշխատում էին Հիսուսի դեմ սուտ վկայություն գտնել, որպեսզի սպանեն նրան, ⁶⁰ բայց չգտան, հակառակ նրան, որ բազում սուտ վկաներ ներկայացան: ⁶¹ Ի վերջո, երկու սուտ վկաներ եկան և ասացին.

- Այս մարդն ասում էր. «Ես կարող եմ Աստծու տաճարը քանդել և երեք օրում շինել այն»:

^{26.48} «Ում որ համբուրեմ», աշակերտների համար հարգանքի սովորական մի արտահայտություն էր իրենց ուսուցչին համբուրով ողջագուրելը, և հենց այս համբույրն էլ ծառայելու էր որպես նշան մատնանշելու Հուդայի ուսուցչին՝ Հիսուսին:

^{26.55} Ղկ 19.47, 21.37:

^{26.61} Հհ 2.19:

⁶² Քահանայապետը վեր կացավ և հարցրեց Հիսուսին.

- Քո դեմ եղած այս ամբաստանություններին պատասխան չե՞ս տալու:

⁶³ Բայց Հիսուսը լուռ էր մնում: Քահանայապետը դարձյալ հարցրեց Հիսուսին.

- Հանուն կենդանի Աստծու՝ ասա՛ մեզ, դո՞ւ ես Քրիստոսը՝ Աստծու Որդին:

⁶⁴ Հիսուսը պատասխանեց.

- Դո՛ւ ես ասում: Բայց ասում եմ ձեզ. այսուհետև Մարդու Որդուն պիտի տեսնեք ամենագոր Աստծու աջ կողմում նստած, և կտեսնեք, որ նա գալիս է երկնքի ամպերի միջից՝

⁶⁵ Այն ժամանակ քահանայապետը պատռեց իր վերարկուն և ասաց.

- Հայիոյեց. էլ ի՞նչ պետք ունենք վկաների. ահա հիմա լսեցինք նրա արած հայիոյությունը:՝ ⁶⁶ Ի՞նչ էք մտածում:

Նրանք պատասխանեցին.

- Մահապարտ է:

⁶⁷ Ապա սկսեցին թքել նրա երեսին և ծեծեցին. ոմանք էլ ապտակում էին նրան և հարցնում.՝

⁶⁸ - Քրիստո՛ս, իմացի՛ր, ո՞վ է քեզ խփողը:

Պետրոսն ուրանում է Հիսուսին

(Մր 14.66-72, Ղկ 22.56-62, Հհ 18.15-18, 25-27)

⁶⁹ Մինչ Պետրոսը նստած էր դուրսը, գավթում, մի աղախին մոտեցավ նրան և ասաց.

- Դո՛ւ էլ գալիլեացի Հիսուսի հետ էիր:

⁷⁰ Պետրոսը բոլորի առաջ ուրացավ և ասաց.

- Չգիտեմ, թե ի՛նչ բանի մասին ես խոսում:

⁷¹ Երբ նա գավթից դուրս էր ելնում, դռան առաջ մի ուրիշ կին տեսավ նրան և այնտեղ գտնվողներին ասաց.

- Մա էլ Նազովրեցի Հիսուսի հետ էր:

⁷² Պետրոսը դարձյալ ուրացավ և ասաց.

- Երդվում եմ, որ չեմ ճանաչում այդ մարդուն:

⁷³ Մի քիչ հետո այնտեղ գտնվողները մոտեցան և ասացին Պետրոսին.

- Իրոք որ դու էլ նրանցից ես, քանի որ քո խոսվածքն էլ մատնում է քեզ:

⁷⁴ Պետրոսը, ինքն իրեն անիծելով, սկսեց երդվել և ասել.

- Այդ մարդուն չեմ ճանաչում:

Եվ նույն պահին աքաղաղը կանչեց: ⁷⁵ Պետրոսը հիշեց Հիսուսի խոսքը, թե՛
«Աքաղաղը դեռ չկանչած՝ դու երեք անգամ կուրանաս ինձ»: Եվ դուրս ելնելով՝

^{26.64} Դն 7.13:

^{26.65} «Պատռեց իր վերարկուն». հազուստ կամ վերարկու պատռելը խոր ցավի կամ սգի արտահայտություն էր, կամ էլ խոր ընդվզումի՝ անընդունելի մի երևույթի դիմաց: Քահանայապետն այս արարքով Հիսուսի հայտարարությունը իր համար անընդունելի հայիոյություն է համարում Աստծու դեմ, որից ինքն իրեն ջքեղած է լինում հազուստները պատռելով:

^{26.65-66} Ղկ 24.16:

^{26.67} Ես 50.6:

դառնորեն լաց եղավ:

27

Հիսուսը տարվում է Պիղատոսի առաջ

(Մր 15.1, Ղկ 22.66, 23.1, Հհ 18.28)

¹ Առավոտյան վաղ բոլոր ավագ քահանաները և ժողովրդի երեցները որոշում կայացրին սպանելու Հիսուսին: ² Կապեցին նրան և տարան հանձնեցին կառավարիչ Պոնտացի Պիղատոսին:

Հուդայի մահը

(Գրծ 1.18-19)

³ Այն ժամանակ Հուդան, որը մատնել էր Հիսուսին, երբ տեսավ, որ Հիսուսը դատապարտվեց, զոջաց և իր ստացած երեսուն արծաթ դրամը վերադարձնելով ավագ քահանաներին և ժողովրդի երեցներին՝ ասաց՝

⁴ - Մեղք գործեցի, որովհետև արդար մեկին մատնեցի:

Նրանք ասացին.

- Մեզ ի՞նչ, դո՛ւ գիտես:

⁵ Հուդան դրամը նետեց տաճարի մեջ և հեռացավ:

Ապա գնաց և կախեց իրեն:

⁶ Ավագ քահանաները վերցրին դրամը և ասացին.

- Մեր Օրենքը թույլ չի տալիս, որ այս դրամը զցենք տաճարի գանձանակի մեջ, որովհետև արյան գին է:

⁷ Եվ խորհրդակցելուց հետո այդ դրամով գնեցին Բրուտի արտը՝ այն որպես օտարների գերեզման օգտագործելու համար: ⁸ Այս պատճառով այդ արտը մինչև այսօր կոչվում է Արյան արտ: ⁹ Այսպիսով ահա իրականացավ Տիրոջ խոսքը՝ ասված Երեմիա մարգարեի բերանով. «Առան երեսուն արծաթ դահեկանը՝ վաճառվածի գինը, որ նշանակեցին Իսրայելի ժողովրդից ոմանք,» ¹⁰ և այն տվեցին Բրուտի արտի համար, ինչպես որ Տերը հրամայեց ինձ»:

Պիղատոսը հարցաքննում է Հիսուսին

(Մր 15.2-5, Ղկ 23.2-5, Հհ 18.29-38)

¹¹ Երբ Հիսուսը կանգնեց կառավարիչի առաջ, կառավարիչը հարցրեց նրան.

- Դո՛ւ ես հրեաների թագավորը:

Հիսուսը պատասխանեց.

- Դո՛ւ ես ասում:

¹² Եվ երբ ավագ քահանաներն ու երեցները ամբաստանում էին նրան, նա

՝27.3-8 Գրծ 1.18-19:

՝27.9-10 Հիշված մեջբերումը միախառնումն է երկու մարգարեությունների՝ Զաքարիայից և Երեմիայից (տե՛ս ներքևի հղումները):

՝27.9-10 Զք 11.12-13, Եր 18.2-3, 19.1-2, 32.6-15:

պատասխան չէր տալիս: ¹³ Ուստի Պիղատոսն ասաց.

- Չե՞ս լսում սրանց արած ամբաստանությունները քո դեմ:

¹⁴ Սակայն Հիսուսը պատասխան չտվեց. ոչ իսկ մի բառ, որը մեծ զարմանք պատճառեց կառավարչին:

Հիսուսը դատապարտվում է մահվան

(Մր 15.6-15, Ղկ 23.13-25, Հհ 18.39-19.16)

¹⁵ Կառավարիչը սովորություն ուներ ամեն Զատկի տոնին ազատ արձակել մի կալանավորի՝ նայած թե ժողովուրդն ո՞ւմ էր ուզում: ¹⁶ Այդ ժամանակ կար նշանավոր մի կալանավոր, որի անունը Հեսու Բարաբբա էր: ¹⁷ Երբ ամբոխը հավաքվեց, Պիղատոսը հարցրեց.

- Այս երկուսից ո՞ր մեկին եք ուզում, որ արձակեմ. Հեսու Բարաբբայի՞ն, թե՞ Քրիստոս կոչված Հիսուսին:

¹⁸ Պիղատոսը գիտեր, որ նախանձի պատճառով էին մատնել նրան: ¹⁹ Եվ մինչ Պիղատոսը ասոյան էր նստել, իր կինը լուր ուղարկեց նրան՝ ասելով.

- Այդ արդար մարդու հետ գործ մի՛ ունեցիր, որովհետև գիշերը երազումս նրա պատճառով գլխովս շատ բաներ անցան:

²⁰ Սակայն ավագ քահանաներն ու երեցները ժողովրդին համոզեցին, որ խնդրեն ազատ արձակել Բարաբբային, իսկ Հիսուսին դատապարտել մահվան: ²¹ Եվ երբ կառավարիչը հարցրեց նրանց՝ «Այս երկուսից ո՞ր մեկին եք ուզում, որ ազատ արձակեմ», նրանք պատասխանեցին.

- Բարաբբային:

²² Պիղատոսը հարցրեց.

- Իսկ ի՞նչ անեմ Հիսուսին՝ Քրիստոս կոչվածին:

²³ - Թող խաչվի՛, - պատասխանեցին բոլորը:

Նա ասաց.

- Ի՞նչ չարիք է գործել:

Բայց նրանք ավելի բարձր էին աղաղակում և ասում.

- Թող խաչվի՛ :

²⁴ Պիղատոսը երբ տեսավ, որ օգուտ չունի շարունակելը և, ընդհակառակը, ամբոխի մեջ ավելի մեծ խռովություն է առաջանում, ջուր վերցնելով՝ ձեռքերը լվաց ժողովրդի առաջ և ասաց.

- Անպարտ եմ այս արդար մարդու արյունից. դո՛ւք գիտեք:

²⁵ Ամբողջ ամբոխը պատասխանեց.

- Նրա արյունը թող մեր և մեր զավակների վրա լինի:

²⁶ Այն ժամանակ Պիղատոսն ազատ արձակեց Բարաբբային, իսկ Հիսուսին խարազանել տալուց հետո հանձնեց զինվորներին, որ խաչեն:

՝27.16 «Հեսու Բարաբբա». շատ ձեռ. չունեն Հեսու անունը, որ իրականում նույնն է Հիսուս անվան հետ և միայն հայ. է տարբերվում իր ձևով:

՝27.24 Բ Օր 21.6-9:

Զինվորները ծաղրում են Հիսուսին

(Մր 15.16-20, Ղկ 23.11, Հհ 19.2-3)

²⁷ Զինվորները Հիսուսին տարան կառավարչի պալատը, որտեղ նրա շուրջը հավաքվեց զինվորների ամբողջ գունդը: ²⁸ Ապա մերկացրին Հիսուսին և նրա ուսերին զցեցին կարմիր քղամիդ: ²⁹ Փշե պսակ հյուսելով՝ դրեցին նրա գլխին և մի եղեգ էլ տվեցին աջ ձեռքը: Զինվորները ծնկի էին գալիս նրա առջև և ծաղրելով ասում. «Ողջո՛ւյն, հրեաների՛ թագավոր»: ³⁰ Թքում էին նրա երեսին, եղեգը ձեռքից վերցնում և խփում էին գլխին: ³¹ Եվ նրան ծաղր ու ծանակի ենթարկելուց հետո վրայից հանեցին քղամիդը, հագցրին իր զգեստները և ապա տարան խաչելու:

Հիսուսի խաչելությունը

(Մր 15.21-32, Ղկ 23.26-43, Հհ 19.17-27)

³² Երբ դուրս էին ելնում, գտան Սիմոն անունով կյուրենացի մի մարդու և ստիպեցին նրան, որ Հիսուսի խաչը շալակի: ³³ Եվ երբ հասան Գողգոթա կոչված վայրը, որ նշանակում է «Գանգի վայր», ³⁴ այնտեղ լեղի խառնած գինի տվեցին Հիսուսին, որ խմի. երբ նա համտեսեց, չուզեց խմել: ³⁵ Ապա խաչը հանեցին նրան և վիճակ զցելով՝ նրա զգեստները բաժանեցին իրենց միջև: Ահա այսպես իրականացավ Տիրոջ խոսքը, որ ասվել էր մարգարեի բերանով. «Իմ զգեստները բաժանեցին իրենց միջև և իմ վերարկուի վրա վիճակ զցեցին»: ³⁶ Զինվորները, այնտեղ նստած, պահակություն էին անում նրա վրա: ³⁷ Նրա գլխի վերևը դրեցին նաև նրա հանցապարտության գիրը՝ գրված այսպես. «Մա՛ է Հիսուսը՝ հրեաների թագավորը»: ³⁸ Այն ժամանակ նրա հետ խաչ հանվեցին նաև երկու ավազակներ, մեկը նրա աջ կողմը, իսկ մյուսը՝ ձախ:

³⁹ Ովքեր անցնում էին խաչի առջևից, նախատում էին նրան և իրենց գլուխները շարժելով՝ ⁴⁰ ասում.

- Դու տաճարը քանդելու և երեք օրից շինելու էիր, հա՞. եթե Աստծու Որդի ես, ապա փրկի՛ր ինքդ քեզ և ցա՛ծ իջիր խաչից:

⁴¹ Նույնպես և ավագ քահանաները, Օրենքի ուսուցիչների և երեցների հետ միասին, ծաղրում էին նրան և ասում.

⁴² - Ուրիշներին ազատեց, բայց ինքն իրեն չի կարողանում ազատել: Եթե Իսրայելի թագավորն է, թող հիմա խաչից ցած իջնի, որպեսզի հավատանք նրան: ⁴³ Աստծու վրա էր դրել հույսը, չէ՞, և ասում էր, թե՛ Աստծու Որդին եմ: Դե հիմա Աստված թող նրան ազատի, եթե սիրում է նրան:

^{27.28} «Կարմիր քղամիդ». սա արքայական պատմուճանի իմաստ չունի, այլ նշում է հռոմեացի զինվորների վերարկուն:

^{27.34} Մր 69.21:

^{27.35} Ձեռ. մեծ մասը չունի «Ահա այսպես իրականացավ... վիճակ զցեցին» նախադասությունները: Հմմտ Հհ 19.24:

^{27.35} Մր 22.18:

^{27.39} Մր 22.7, 109.25, Մր 12.17-18, 13.7:

^{27.40} Մտ 26.61, Հհ 2.19:

^{27.43} Մր 22.8, Իմս 2.18 20:

⁴⁴Նրա հետ խաչված ավագակներն էլ էին նույն ձևով նախատում նրան:

Հիսուսի մահը

(Մր 15.33-41, Ղկ 23.44-49, Հհ 19.28-30)

⁴⁵Կեսօրին խավարը պատեց ամբողջ երկիրը մինչև ժամը երեքը: ⁴⁶Ժամը երեքի մոտ Հիսուսը բարձրաձայն աղաղակեց՝ ասելով.

- «Էլի՛, էլի՛, լա՛ մա սաբաքթանի», որ նշանակում է. «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ»:

⁴⁷Այնտեղ գտնվողներից ոմանք, երբ լսեցին, ասացին.

- Եղիային է կանչում:

⁴⁸Նրանցից մեկն իսկույն գնաց և սպունգը քացախի մեջ թաթախելով՝ անցկացրեց մի եղեգի ծայրին և տվեց Հիսուսին, որ խմի: ⁴⁹Ուրիշներն էլ ասում էին.

- Թողե՛ք տեսնենք, Եղիան կգա՞ նրան ազատելու:

⁵⁰Իսկ Հիսուսը դարձյալ բարձրաձայն աղաղակեց և հոգին ավանդեց: ⁵¹Եվ ահա տաճարի վարագույրը պատռվեց և վերից վար երկու մասի բաժանվեց, երկիրը շարժվեց, և ժայռերը ճեղքվեցին, ⁵²գերեզմանները բացվեցին, և բազում սուրբ ննջեցյալներ հարություն առան: ⁵³Նրանք գերեզմաններից ելան և Հիսուսի հարությունից հետո մտան Մուրբ քաղաքը, որտեղ շատերին երևացին:

⁵⁴Երբ հարյուրապետը և նրա հետ եղող զինվորները, որոնք պահակություն էին անում, տեսան երկրաշարժը և պատահաճճները, սաստիկ վախեցան և ասացին.

- Իսկապես որ սա Աստծու Որդին էր:

⁵⁵Այնտեղ կային նաև բազմաթիվ կանայք, որոնք, հեռվում կանգնած, դիտում էին.

նրանք Գալիլեայից հետևել էին Հիսուսին՝ նրան ծառայելու համար: ⁵⁶Նրանց մեջ էին Մարիամ Մագդաղենացին, Հակոբի և Հովսեփի մայրը՝ Մարիամը, ինչպես նաև Ջեբեդեոսի որդիների մայրը:

Հիսուսի թաղումը

(Մր 15.42-47, Ղկ 23.50-56, Հհ 19.38-42)

⁵⁷Երբ երեկո եղավ, Հովսեփ անունով հարուստ մի մարդ, որ Արիմաթեայից էր, և որ ինքն էլ աշակերտել էր Հիսուսին, ⁵⁸գնաց Պիղատոսի մոտ և խնդրեց, որ Հիսուսի մարմինը տրվի իրեն: Պիղատոսը հրամայեց, որ տան մարմինը: ⁵⁹Հովսեփը, մարմինն առնելով, պատանեց մաքուր կտավով և դրեց նոր բացված ժայռափոր մի գերեզմանի մեջ: ⁶⁰Ապա գերեզմանի մուտքին մի մեծ քար գլորեց որպես կափարիչ և գնաց:

⁶¹Այնտեղ էին Մարիամ Մագդաղենացին և մյուս Մարիամը, որոնք նստած էին գերեզմանի դիմաց:

^{27.46} Մր 22.1:

^{27.48} Մր 69.21:

^{27.51} Ելք 26.31-33:

^{27.55-56} Ղկ 8.2-3:

^{27.57} «Արիմաթեա»-ն Երուսաղեմից շուրջ 30 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող մի փոքրիկ քաղաք էր Հրեաստանի նահանգում (հմմտ Ղկ 23.51):

Հիսուսի գերեզմանի պահպանումը

⁶² Հաջորդ օրը, առավոտյան, այսինքն՝ ուրբաթին հաջորդող օրը, ավագ քահանաներն ու փարիսեցիները հավաքվեցին Պիղատոսի մոտ՝ ⁶³ և ասացին.

- Տե՛ր, հիշեցինք, որ այդ մոլորեցնողը իր կենդանության ժամանակ ասում էր. «Երեք օրից հարություն պիտի առնեմ»:⁶⁴ Արդ, հրամայի՛ր, որ գերեզմանը մինչև երրորդ օրը զգուշությամբ պահպանեն, որպեսզի չլինի թե աշակերտները գիշերով գան և գողանան նրան ու ժողովրդին ասեն, թե մեռելներից հարություն առավ: Այս վերջին մոլորությունն ավելի վատ կլինի, քան առաջինը:

⁶⁵ Պիղատոսն ասաց նրանց.

- Չինվորներ ունե՞ք, գնացե՛ք և զգուշությամբ պահպանե՛ք, ինչպես որ գիտեք:

⁶⁶ Եվ նրանք գնացին ու գերեզմանը հսկողության տակ առան, քարը կնքեցին և զինվորներ նշանակեցին որպես պահակ:

28

Հիսուսի հարությունը

(Մր 16.1-10, Ղկ 24.1-12, Հհ 20.1-18)

¹ Շաբաթ օրը, երեկոյից հետո, երբ կիրակին էր սկսվում, Մարիամ Մագդաղենացին և մյուս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: ² Հանկարծ մի ուժեղ երկրաշարժ եղավ, և Աստծու հրեշտակը, երկնքից իջնելով, գլորեց գերեզմանի մուտքին դրված քարը և նստեց նրա վրա: ³ Նրա տեսքը փայլակի նման էր, և հագուստները ձյունի պես սպիտակ էին: ⁴ Պահապանները, երբ այս տեսան, սարսափեցին և մեռելի պես եղան: ⁵ Հրեշտակը կանանց ասաց.

- Դուք մի՛ վախեցեք, գիտեմ, որ խաչված Հիսուսին եք փնտրում: ⁶ Այստեղ չէ, որովհետև հարություն առավ, ինչպես ինքն էր ասել: Եկե՛ք և տեսե՛ք այն տեղը, որտեղ դրված էր: ⁷ Իսկույն գնացե՛ք և ասացե՛ք նրա աշակերտներին, որ հարություն առավ: Նա ձեզնից առաջ Գալիլեա կհասնի, և այնտեղ կտեսնեք նրան: Ահա ասացի ձեզ:

⁸ Կանայք վախով, բայց միևնույն ժամանակ մեծ ուրախությամբ իսկույն դուրս եկան գերեզմանից և վազեցին պատմելու աշակերտներին:

⁹ Հանկարծ Հիսուսը նրանց դիմացը ելավ և ասաց.

- Ողջո՞ւյն ձեզ:

Կանայք մոտենալով փարվեցին նրա ոտքերին և երկրպագեցին նրան: ¹⁰ Հիսուսն ասաց.

- Մի՛ վախեցեք, գնացե՛ք և ասացե՛ք իմ եղբայրներին, որ գնան Գալիլեա. այնտե՛ղ պիտի տեսնեն ինձ:

^{27.62} «Ուրբաթ» նշ է «պատրաստության օր», որովհետև հրեաներն ամեն շաբաթ օր կամ այլ տոնական օրերին որևէ գործ չէին անում և ամեն բան պատրաստում էին նախորդ օրվանից:

^{27.63} Մտ 16.21, 17.23, 20.19, Մր 8.31, 9.31, 10.33-34, Ղկ 9.22, 18.31-33:

^{28.6} «Որտեղ դրված էր». շատ ձեռ. ավելացնում են «Տերը»:

^{28.7} «Հարություն առավ». շատ ձեռ. ավելացնում են «մեռելներից»:

¹¹ Երբ կանայք գնացին, պահապան զինվորներից ոմանք քաղաք եկան և ինչ որ պատահել էր, պատմեցին ավագ քահանաներին: ¹² Ավագ քահանաներն ու երեցները հավաքվելով խորհրդակցեցին, առատ դրամ տվեցին պահապաններին ¹³ և ասացին.

- Կասեք, թե՝ «Նրա աշակերտները գիշերով եկան և գողացան մարմինը, երբ մենք քնած էինք»: ¹⁴ Եվ եթե կառավարչի ականջին հասնի այս լուրը, մենք նրան կգոհացնենք. դուք անհոգ եղեք:

¹⁵ Պահապան զինվորները դրամն առան և արեցին այնպես, ինչպես որ պատվիրվել էր իրենց: Եվ այսպիսով այս լուրը տարածվեց հրեաների մեջ մինչև այսօր:

Հիսուսը երևում է տասնմեկ աշակերտներին

(Մր 16.14-18, Ղկ 24.36-49, Հհ 20.19-23, Գրծ 1.6-8)

¹⁶ Իսկ տասնմեկ աշակերտները գնացին Գալիլեա, այն լեռը, որտեղ Հիսուսը ժամադրվել էր իրենց հետ: ¹⁷ Երբ նրան տեսան, երկրպագեցին նրան, բայց ոմանք տարակուսեցին: ¹⁸ Հիսուսը մոտենալով խոսեց նրանց հետ: Ապա ասաց.

- Ամեն իշխանություն տրվեց ինձ երկնքում և երկրի վրա: Ինչպես որ Հայրն ինձ ուղարկեց, այնպես էլ ես ձեզ եմ ուղարկում: ¹⁹ Գնացե՛ք, ուրեմն, և բոլոր ժողովուրդներին իմ աշակերտները դարձրեք: Մկրտեցե՛ք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: ²⁰ Սովորեցրե՛ք նրանց այն բոլոր պատվիրանները, որ տվեցի ձեզ: Եվ ահա ես ձեզ հետ կլինեմ միշտ՝ մինչև աշխարհի վախճանը:

MRK

ՄԱՐԿՈՍ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ

ՄԱՐԿՈՍԻ

Մարկոսի Ավետարանը չորս Ավետարաններից ամենակարճն է և գրվել է մյուսներից առաջ: Հեղինակը, ըստ առաջին եկեղեցու վկայության, Հովհաննես Մարկոսն է, որի մասին ծանոթություններ ունենք «Առաքյալների գործերը» գրքից և առաքելական նամակներից (Կղ 4.10, Փլմ 24, Բ Տմ 4.11, Ա Պտ 5.13): Դեպի Երուսաղեմ, Կիպրոս և Պամփիլիա կատարած ճանապարհորդության ընթացքում Մարկոսն ուղեկցել է Պողոսին և Բառնաբասին: Որոշ ժամանակ նա աշակերտել է նաև Պետրոս առաքյալին:

Մարկոսի Ավետարանն սկսվում է այն հաստատումով, որ Հիսուս Քրիստոսը Աստծու Որդին է: Այս Ավետարանը Հիսուսին ներկայացնում է որպես մեծ հեղինակության տեր մի անձի, որի իշխանությունը երևում է նրա ուսուցումներից, չար ոգիների վրա ունեցած ազդեցությունից և մարդկանց մեղքերը ներելուց: Աստիճանաբար Հիսուսն ինքն իրեն հայտնի է դարձնում իր աշակերտներին, և որքան

^{28.16} Մտ 26.32, Մր 14.28:

^{28.18} Հուն. ձեռ. մեծ մասը չունի «Ինչպես որ Հայրն ինձ ուղարկեց, այնպես էլ ես ձեզ եմ ուղարկում» նախադասությունը:

^{28.19} Գրծ 1.8:

հայտնի է դարձնում իր Մեսիա լինելը, այնքան ավելի է խոսում իր չարչարանքների, մահվան և հարության մասին, որոնք պիտի տեղի ունենային Երուսաղեմում: Հիսուսն ինքն իրեն կոչում է Մարդու Որդի, որն աշխարհ է եկել իր կյանքը տալու՝ մարդկությունը մեղքի կապանքներից ազատագրելու համար:

Մարկոսն իր Ավետարանում Հիսուսի պատմությունը մեզ ներկայացնում է առավելապես նրա կատարած գործերով, քան նրա խոսքերով և ուսուցումներով: Հովհաննես Մկրտչի մասին կարճ ներածականից և Հիսուսի մկրտության և փորձության դրվագի համառոտ նկարագրությունից հետո Մարկոսն անմիջապես անցնում է Հիսուսի առաքելությանն ու նրա կատարած բժշկումներին: Ժամանակի ընթացքում Հիսուսի հետևորդները հետզհետե ավելի լավ են հասկանում նրան, մինչդեռ, մյուս կողմից, նրա հակառակորդներն ավելի թշնամական դիրք են բռնում նրա հանդեպ: Վերջին գլուխներում նկարագրված են Հիսուսի վերջին շաբաթը, հատկապես նրա խաչելությունը և հարությունը:

Մարկոսի Ավետարանը գործնական, պարզ ու արագ ոճով, բայց տպավորիչ կերպով է ներկայացնում Հիսուսին, այնպես որ յուրաքանչյուր ընթերցող, հոռմեացի հարյուրապետի նման, կարողանա գոչել. «Իսկապես որ այս մարդն Աստծու Որդին էր» (15.39):

ՄԱՐԿՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Ավետարանի սկիզբը (1.1-13):
- Հիսուսի առաքելությունը Գալիլեայում (1.14-9.50):
- Հիսուսի երթը Գալիլեայից Երուսաղեմ (10.1-52):
- Վերջին շաբաթը Երուսաղեմում և նրա շրջակայքում (11.1-15.47):
- Հիսուսի հարությունը (16.1-8):
- Հարությունից հետո Հիսուսի երևալը երեք անգամ և համբարձումը (16.9-20):

1

Հովհաննես Մկրտչի քարոզությունը

(Մտ 3.1-12, Ղկ 3.1-18, Հհ 1.19-28)

¹ Այսպես է սկսվում Աստծու Որդու՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը: ² Եսայի մարգարեի գրքում գրված է.

«Ահավասիկ քո առջևից ուղարկում եմ իմ պատգամաբերին, որ ճանապարհ պատրաստի քեզ համար»: ³ Անապատում աղաղակողի ձայնն ասում է.

«Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը, հարթեցե՛ք նրա շավիղները»:

⁴ Եվ ահա Հովհաննեսը մկրտում էր անապատում: Նա քարոզում էր ապաշխարել և մկրտվել, որպեսզի Աստված մեղքերի թողություն տա: ⁵ Ամբողջ Հրեաստանի և

^{1.1} Մի շաբթ ձեռ. չունեն «Աստծու Որդու» բառերը:

^{1.2} Մղ 3.1:

^{1.3} Ես 40.3 [LXX]:

^{1.4} «Անապատում», տե՛ս Մտ 3.1-ի ծնթ:

Երուսաղեմի բնակիչներից շատերը գնում էին նրա մոտ և խոստովանելով իրենց մեղքերը՝ Հորդանան գետում մկրտվում նրանից:

⁶ Հովհաննեսը հազել էր ուղտի մազից պատրաստված հագուստ և մեջքին կապել կաշվե գոտի: Նրա կերակուրը մորելի էր և վայրի մեղր:⁷ Նա քարոզում էր՝ ասելով.

-Ով ինձնից հետո է գալու, ինձնից ավելի հզոր է, որի առաջ կռանալով՝ նրա կոշիկների կապերն անգամ արձակելու արժանի չեմ:⁸ Ես ձեզ մկրտեցի ջրով, բայց նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով:

Հիսուսի մկրտությունն ու փորձությունը

(Մտ 3.13-4.11, Ղկ 3.21-22, 4.1-13)

⁹ Այդ օրերին Հիսուսը եկավ Գալիլեայի Նազարեթ քաղաքից և Հովհաննեսից մկրտվեց Հորդանան գետում:¹⁰ Նույն պահին, երբ Հիսուսը ջրից դուրս էր գալիս, տեսավ երկինքը բացված, և Աստծու Հոգին, որ աղավնու նման իջնում էր իր վրա:¹¹ Երկնքից լավեց մի ձայն, որ ասում էր.

-Դու ես իմ սիրելի Որդին, որն ունի իմ բարեհաճությունը:

-Դու ես իմ սիրելի Որդին, որն ունի իմ բարեհաճությունը:

¹² Մկրտվելուց անմիջապես հետո Հոգին նրան տարավ անապատ, ¹³ որտեղ նա մնաց քառասուն օր՝ փորձվելով Սատանայից: Այնտեղ նա զազանների հետ էր, և հրեշտակները ծառայում էին նրան:

Հիսուսը կանչում է չորս ձկնորսների

(Մտ 4.12-22, Ղկ 4.14-15, 5.1-11, Հհ 1.35-42)

¹⁴ Հովհաննեսի բանտարկությունից հետո Հիսուսը եկավ Գալիլեա: Նա քարոզում էր Աստծու Ավետարանը՝ ¹⁵ ասելով.

-Հասել է փրկության ժամանակը, և եկել է Աստծու արքայությունը, ապաշխարեցե՛ք և հավատացե՛ք Ավետարանին:

¹⁶ Երբ Հիսուսն անցնում էր Գալիլեայի լճի եզերքով, տեսավ երկու ձկնորսների՝ Սիմոնին և նրա եղբորը՝ Անդրեասին, որոնք ուռկանը ջուրը զցած՝ ձուկ էին որսում:

¹⁷ Հիսուսն ասաց նրանց.

-Հետևեցե՛ք ինձ, և ես ձեզ մարդու որսորդ կդարձնեմ:

¹⁸ Նրանք իսկույն թողեցին ուռկանները և հետևեցին Հիսուսին:¹⁹ Մի քիչ առաջ գնալով այդտեղից՝ Հիսուսը տեսավ Ջեբեդեոսի որդիներին՝ Հակոբոսին և նրա եղբայր Հովհաննեսին, որոնք նավակի մեջ էին և իրենց ուռկաններն էին կարգի բերում:

²⁰ Իսկույն նրանց էլ կանչեց: Նրանք իրենց հորը՝ Ջեբեդեոսին, վարձկան ձկնորսների հետ թողեցին նավակի մեջ և հետևեցին Հիսուսին:

Պիղծ ոգով մարդու բժշկումը

^{1.6} Դ Թգ 1.8:

^{1.9} «Այդ օրերին». Հիսուսն իր հրապարակային գործունեությունը սկսեց շուրջ 27թ.: Տե՛ս Ղկ 3.1 և ծնթ:

^{1.10} «Աստծու Հոգին». հուն. շատ ձեռ. չունեն «Աստծու» բառը:

^{1.11} Ծն 22.2, Մղ 2.7, Ես 42.1, Մտ 3.17, 12.18, Մր 9.7, Ղկ 3.22:

^{1.15} Մտ 3.2:

(Ղկ 4.31-37)

²¹ Մտան Կափառնայում: Շաբաթ օրը Հիսուսը ժողովարան գնաց և սկսեց ուսուցանել: ²² Բոլորն էլ զարմանում էին նրա ուսուցման կերպի վրա, որովհետև նա հեղինակությամբ էր ուսուցանում և ոչ թե Օրենքի ուսուցիչների նման:

²³ Ժողովարանում մի մարդ կար՝ պիղծ ոգուց բռնված, որն աղաղակեց.

²⁴ -Հիսուս, Ես Եսազուրեցի, թո՛ղ, ի՞նչ ես ուզում մեզանից. մեզ ոչնչացնելո՞ւ եկար. գիտենք, թե ո՞վ ես դու. դու Աստծու Սուրբն ես:

²⁵ Հիսուսը սաստեց ոգուն և ասաց.

-Լռի՛ր և դո՛ւրս ել այդ մարդուց:

²⁶ Պիղծ ոգին գետին զարկեց մարդուն, բարձրաձայն աղաղակեց և դուրս ելավ նրանից: ²⁷ Բոլորն էլ ապշահար ասում էին միմյանց.

-Այս ինչ նոր ուսուցում է, որ հեղինակությամբ սաստում է նույնիսկ պիղծ ոգիներին, և նրանք դուրս են ելնում:

²⁸ Եվ շուտով Հիսուսի համբավը տարածվեց Գալիլեա նահանգի բոլոր կողմերում:

Հիսուսը բժշկում է

(Մտ 8.14-17, Ղկ 4.38-42)

²⁹ Ժողովարանից դուրս գալուց անմիջապես հետո Հիսուսը Հակոբոսի և Հովհաննեսի հետ գնաց Սիմոնի և Անդրեասի տուն: ³⁰ Սիմոնի գորբանչը ջերմության մեջ պառկած էր, և այդ մասին ասացին Հիսուսին: ³¹ Հիսուսը մոտեցավ նրան և ձեռքից բռնելով՝ ոտքի կանգնեցրեց: Ջերմությունն անցավ, և նա սկսեց ծառայել նրանց:

³² Երբ երեկո եղավ, արևամուտին, Հիսուսի մոտ բերեցին բոլոր հիվանդներին և դիվահարներին: ³³ Քաղաքի ամբողջ ժողովուրդը հավաքվել էր տան դռան առջև:

³⁴ Հիսուսը զանազան ցավերով տառապող բազում հիվանդների բժշկեց և բազում չար ոգիներ դուրս հանեց: Եվ չէր թողնում, որ ոգիները խոսեն, որովհետև նրանք գիտեին, որ նա Քրիստոսն է:

Հիսուսը քարոզում է Գալիլեայում

(Մտ 4.23, Ղկ 4.42-44)

³⁵ Հաջորդ օրը, վաղ առավոտյան, Հիսուսը վեր կացավ գնաց ամալի մի տեղ և սկսեց աղոթել այնտեղ: ³⁶ Սիմոնը և նրա հետ եղողները ելան նրան փնտրելու: ³⁷ Երբ գտան, ասացին նրան.

-Ամեն մարդ քեզ է փնտրում:

³⁸ Հիսուսն ասաց.

-Եկեք մոտակա ուրիշ գյուղաքաղաքներ էլ գնանք, որպեսզի այնտեղ ևս քարոզեմ,

^{1.22} Մտ 7.28-29:

^{1.32} «Երբ երեկո եղավ, արևամուտին...» հաշվելու հին ձևով՝ օրն սկսվում և ավարտվում էր արևամուտին, երբ աստղերն սկսում էին երևալ: Այստեղ ավետարանիչն ուզում է ասել, որ հազիվ շաբաթ օրվա արգելքը վերջ էր գտել: Տե՛ս նաև Մտ 27.62-ի ծնթ:

^{1.34} «Գիտեին, որ նա Քրիստոսն [Օծյալն] է» մի շարք ձեռ. ունեն միայն «գիտեին նրան»:

որովհետև Աստված հենց դրա համար ուղարկեց ինձ:

³⁹ Եվ նա Գալիլեայի բոլոր շրջանների ժողովարաններում քարոզում և դևեր էր դուրս հանում:

Հիսուսը բժշկում է մի բորոտի

(Մտ 8.1-4, Ղկ 5.12-16)

⁴⁰ Հիսուսի մոտ եկավ մի բորոտ: Նա ծնկի իջած աղաչում էր՝ ասելով.

-Տե՛ր, եթե ուզես, կարող ես ինձ մաքրել:

⁴¹ Հիսուսը գթաց և ձեռքը երկարելով՝ դիպավ նրան և ասաց.

-Ուզում եմ, մաքրվի՛ր:

⁴² Հազիվ էր այս խոսքն ասել՝ բորոտությունն իսկույն գնաց նրանից, և նա մաքրվեց:

⁴³ Հիսուսը նրան անմիջապես դուրս հանեց և խստիվ պատվիրեց՝ ասելով.

⁴⁴ -Նայի՛ր, ոչ ոքի քան չասես, այլ գնա՛ և քեզ ցո՛ւյց տուր քահանային. ապա, որպես վկայություն ժողովրդին, թե մաքրվել ես քո բորոտությունից, մատուցի՛ր քո գոհը, ինչպես հրամայել է Մովսեսը:

⁴⁵ Բայց նա գնաց և սկսեց ամեն տեղ պատմել ու տարածել պատահածը: Դրա համար Հիսուսն այլևս չէր կարող բացեիքաց որևէ քաղաք մտնել, այլ դուրսը, ամայի տեղերում էր մնում: Եվ ժողովուրդն ամեն կողմից գալիս էր նրա մոտ:

2

Հիսուսը բժշկում է մի անդամալուծի

(Մտ 9.1-8, Ղկ 5.17-26)

¹ Մի քանի օր հետո Հիսուսը վերադարձավ Կափառնայում: Հենց որ լուրը տարածվեց, թե նա տանն է գտնվում,² շատերը հավաքվեցին այնտեղ, այնքան, որ տեղ չէր մնացել նույնիսկ դռան առջև: Եվ Հիսուսը նրանց քարոզում էր Աստծու խոսքը:

³ Այդ միջոցին Հիսուսի մոտ էին բերում մի անդամալուծի, որին շալակել էին չորս հոգով: ⁴ Երբ բազմության պատճառով չկարողացան մոտենալ Հիսուսին, քանդեցին տան կտուրը և բացելով առաստաղը՝ անդամալուծին մահիճով ցած իջեցրին:

⁵ Հիսուսը, տեսնելով նրանց հավատը, ասաց անդամալուծին.

-Որո՞յա՛կ, թող քո մեղքերը ներված լինեն քեզ:

⁶ Օրենքի ուսուցիչներից ոմանք, որոնք նստած էին այնտեղ, սկսեցին իրենց մտքում քննադատել նրան. ⁷ «Սա ինչպես է համարձակվում այսպիսի բան ասել. արածը

^{1.39} Մտ 4.23, 9.35

^{1.44} Ղկ 14.1-32:

^{2.1} «Տանն է գտնվում». ակնարկված տունը հավանաբար Միմոն Պետրոսի և Անդրեասի բնակարանն է, ինչպես այդ կարելի է ենթադրել 1.29-ից: Տե՛ս նաև Մտ 4.13-ի ծնթ:

^{2.4} Արևելքում տների կտուրները սովորաբար պատրաստում էին գերաններով և տախտակներով, որոնց վրա հող էին լցնում, քարե գլանով հարթեցնում ու ամրացնում:

հայիոյություն է: Աստծուց բացի ո՞վ կարող է մեղքերը ներել»:

⁸ Հիսուսն իսկույն իմացավ նրանց մտածումը և ասաց.

-Ինչո՞ւ եք այդպես մտածում: ⁹ Ո՞րն է ավելի դյուրին. անդամալուծին «Մեղքերդ քեզ ներված են» ասելը, թե՞ «Վե՛ր կաց, ա՛ն մահիճդ և գնա՛ քո տուն»: ¹⁰ Բայց պետք է գիտենաք, որ Մարդու Որդին երկրի վրա իշխանություն ունի ներելու մեղքերը:

¹¹ Եվ դառնալով անդամալուծին՝ ասաց.

-Քե՛զ եմ ասում, վե՛ր կաց, ա՛ն մահիճդ և գնա՛ քո տուն»:

¹² Անդամալուծը իսկույն բոլորի առաջ վեր կացավ, վերցրեց իր մահիճը և դուրս ելավ: Բոլորն էլ զարմացան: Փառավորում էին Աստծուն և ասում.

-Այսպիսի բան բնավ չէինք տեսել:

Հիսուսը կանչում է Ղևիին

(Մտ 9.9-13, Ղկ 5.27-32)

¹³ Հիսուսը դարձյալ գնաց Գալիլեայի լճի եզերքը: Ամբողջ ժողովուրդը նրա մոտ էր գալիս, իսկ նա ուսուցանում էր նրանց: ¹⁴ Մինչ նա գնում էր, տեսավ Ալփեոսի որդի Ղևիին, որը նստած մաքս էր գանձում, և ասաց նրան.

-Հետևի՛ր ինձ:

Ղևին ելավ և հետևեց նրան: ¹⁵ Ապա Հիսուսը ճաշի նստեց նրա տանը, որտեղ կային նաև բազում մաքսավորներ և մեղավորներ, որոնք Հիսուսի և նրա աշակերտների հետ սեղան էին նստել, որովհետև շատերն էին հետևում նրան»:

¹⁶ Օրենքի ուսուցիչներն ու փարիսեցիները երբ տեսան, որ Հիսուսը մաքսավորների և մեղավորների հետ է ճաշում, նրա աշակերտներին ասացին.

-Ինչո՞ւ է նա մեղավորների և մաքսավորների հետ ուտում ու խմում»:

¹⁷ Հիսուսը երբ լսեց այս, ասաց նրանց.

-Առողջնե՛րը չեն, որ բժշկի կարիք ունեն, այլ հիվանդները: Ես չեկա արդարներիս կանչելու, այլ մեղավորներին»:

Ծոմապահության հարցը

(Մտ 9.14-17, Ղկ 5.33-39)

¹⁸ Հովհաննեսի աշակերտները և փարիսեցիներն ինչ-որ առիթով ծոմ էին պահում. ոմանք եկան և Հիսուսին հարցրին.

-Ինչո՞ւ Հովհաննեսի աշակերտները և փարիսեցիները ծոմ են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում:

¹⁹ Հիսուսը նրանց պատասխանեց.

-Կարո՞ղ եք հարսանիք հրավիրվածներին ասել, որ ծոմ պահեն, երբ փեսան

^{2.7} Մեղքերը կարող է ներել միայն Աստված (տե՛ս Ես 43.25: Հմմտ Սղ 103.3): Քրիստոսը մեղքերի ներումով ցույց է տալիս իր աստվածային իշխանությունը:

^{2.11} Ծատ ձեռ. չունեն «քո տուն» բառերը:

^{2.15} «Նրա տանը». տե՛ս Մտ 9.10-ի ծնթ:

^{2.16} Ծատ ձեռ. չունեն «ու խմում» բառերը:

^{2.17} «Ես չեկա արդարներին կանչելու». տե՛ս Մտ 9.13-ի ծնթ:

տակավին իրենց հետ է: Այնքան ժամանակ, քանի դեռ փեսան իրենց հետ է, մի՞թե կարելի է ծոմ պահել: ²⁰ Կգա ժամանակ, երբ փեսան կվերցվի իրենցից, և ապա իրենք էլ ծոմ կպահեն:

²¹ Ոչ ոք չլվացված նոր կտորը չի գործածի հին զգեստի համար կարկատան անելու, այլապես նոր կտորը, քաշվելով, զգեստը կպատռի, և պատռվածքն ավելի մեծ կլինի:

²² Նմանապես, ոչ ոք նոր գինին հին տիկերի մեջ չի լցնի, այլապես նոր գինին կպայթեցնի հին տիկերը և պատճառ կդառնա, որ թե՛ գինին թափվի և թե՛ տիկերը փչանան: Ընդհակառակը, նոր գինին նոր տիկերի մեջ պետք է լցվի:

Շաբաթ օրը հարգելու հարցը

(Մտ 12.1-8, Ղկ 6.1-5)

²³ Մի շաբաթ օր Հիսուսն անցնում էր ցորենի արտերի միջով: Աշակերտները գնալու ժամանակ սկսեցին հասկեր պոկել և ուտել: ²⁴ Փարիսեցիներն ասացին Հիսուսին.

-Տե՛ս, քո աշակերտներն ի՞նչ են անում շաբաթ օրով, մի բան, որ մեր Օրենքով արգելված է:

²⁵ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Դուք չե՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ պետք էր ուտել, այսինքն՝ երբ ինքը և իր հետ եղողները քաղցած էին: ²⁶ Աստծու տունը չմտա՞վ, երբ Աբիաթարը քահանայապետ էր, չկերա՞վ առաջավորության հացերը և չտվե՞ց նաև իր հետ եղողներին, մի բան, որ ըստ Օրենքի միայն քահանաներին էր թույլատրված:

²⁷ Ապա ավելացրեց.

-Շաբաթ օրը մարդու համար է եղել, և ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար: ²⁸ Ուրեմն՝ Մարդու Որդին նաև շաբաթ օրվա տերն է:

3

Չորացած ձեռքով մարդու բժշկումը

(Մտ 12.9-14, Ղկ 6.6-11)

¹ Հիսուսը դարձյալ ժողովարան մտավ: Այնտեղ մի մարդ կար, որի ձեռքը չորացած էր: ² Շատերն սպասում էին՝ տեսնելու, թե Հիսուսը շաբաթ օրով կբժշկի՞ մարդուն, որպեսզի ամբաստանեն նրան: ³ Հիսուսը չորացած ձեռքով մարդուն ասաց.

-Վե՛ր կաց և մեջտե՛ղ արի:

⁴ Ապա ասաց մյուսներին.

-Մեր Օրենքը շաբաթ օրով ի՞նչ է թույլատրում անել՝ բարի՞ք գործել, թե՞ չարիք, մի կյանք փրկել է, թե՞ կորցնել:

Եվ նրանք լուռ մնացին: ⁵ Ապա Հիսուսը վրդովված մի հայացք զգեց իր շուրջը գտնվողների վրա՝ ցավելով նրանց մտքի կուրության համար և ասաց մարդուն.

2.23 Բ Օր 23.25:

2.25-26 Ա Թգ 21.1-6:

2.26 Ղկ 24.9:

-Երկարի՛ր ձեռքդ:

Նա ձեռքը երկարեց, և ահա չորացած ձեռքն առողջացավ: ⁶ Այն ժամանակ փարիսեցիներն ու Հերովդեսի կողմնակիցները իսկույն դուրս ելան և խորհրդակցում էին, թե ինչպես սպանեն Հիսուսին:*

Բազմությունը լճի մոտ

(Մտ 4.25, 12.15-16, Ղկ 6.17-19)

⁷ Հիսուսն իր աշակերտների հետ գնաց Գալիլեայի լճի եզերքը: Գալիլեայից, Հրեաստանից, ⁸ Երուսաղեմից, Եդոմից, Անդրհորդանանից, Տյուրոսից և Սիդոնից բազում ժողովուրդ, լսելով Հիսուսի արածների մասին, գալիս էր նրա մոտ:*

⁹ Ժողովուրդն այնքան շատ էր, որ Հիսուսն իր աշակերտներին ասաց, որ մի նավակ պատրաստեն, որպեսզի ժողովուրդը չհրմշտի իրեն: ¹⁰ որովհետև շատերին բժշկած լինելով՝ բոլոր հիվանդները խոնվում էին նրա շուրջը, որպեսզի դիպչեն նրան: ¹¹ Իսկ չար ոգիները, երբ տեսնում էին նրան, ընկնում էին նրա առաջ և աղաղակում. «Դու Աստծու Որդին ես»: ¹² Հիսուսը խստիվ սաստում էր նրանց, որ իր ինքնությունը չհայտնեն:

Հիսուսն ընտրում է տասներկու առաքյալներին

(Մտ 10.1-4, Ղկ 6.12-16, Գրծ 1.13)

¹³ Հիսուսը բարձրացավ լեռը և իր մոտ կանչեց իր հետևորդներից նրանց, ում ինքը կամեցավ: Նրանք գնացին նրա մոտ, ¹⁴ և Հիսուսը նրանցից ընտրեց տասներկու հոգու, որ իր հետ միասին լինեն, քարոզելու ուղարկվեն,* ¹⁵ ինչպես նաև իշխանություն ունենան հիվանդներին բժշկելու և չար ոգիներ հանելու:

¹⁶ Տասներկու աշակերտներն էին՝ Սիմոնը, որին Պետրոս անվանեց, ¹⁷ Ջեբեդեոսի որդիները՝ Հակոբոսն ու նրա եղբայրը՝ Հովհաննեսը, որոնց Բաներեզես, այսինքն՝ Որոտացող մարդիկ կոչեց, ¹⁸ Անդրեասը, Փիլիպպոսը, Բարթոլոմեոսը, մաքսավոր Մատթեոսը, Թովմասը, Ալփեոսի որդի Հակոբոսը, Թադեոսը, Նախանձահույզ Սիմոնը և Իսկարիովտացի Հուդան, որը մատնեց նրան:

Հիսուսը և Բեեղզեբուղը

(Մտ 12.22-32, Ղկ 11.14-23, 12.10)

²⁰ Հետո Հիսուսը և աշակերտները տուն վերադարձան: Ժողովուրդը դարձյալ հավաքվեց նրանց շուրջը, այնպես որ նրանք նույնիսկ ուտելու ժամանակ չունեցան:

²¹ Երբ Հիսուսի ընտանիքի անդամները լսեցին, ելան եկան, որ բռնեն նրան, որովհետև ասում էին, թե ինչպես կարվել է:

***3.6** «Հերովդեսի կողմնակիցները». տե՛ս Մտ 22.16-ի ծնթ:

***3.8** Մի շարք ձեռ. չունեն «Եդոմ» բառը: Եդոմը Հրեաստան նահանգի հարավում գտնվող երկրամաս էր, որի գլխավոր քաղաքներից էր Հեբրոնը:

***3.9-10** Մր 4.1, Ղկ 5.1-3:

***3.14** Մի շարք ձեռ. ավելացնում են «որոնց նաև առաքյալ անվանեց»:

²² Օրենքի ուսուցիչները, որոնք եկել էին Երուսաղեմից, ասում էին, թե դևերի իշխան Բենեդեբուդը նրա մեջ է մտել, և նրա գործությամբ է նա դուրս հանում դևերին:

²³ Հիսուսն իր խոսքը նրանց ուղղեց և առականերով խոսելով՝ ասաց.

-Ինչպե՞ս Սատանան կարող է իր գործակալին դուրս հանել: ²⁴ Եթե մի թագավորություն ինքն իր մեջ բաժան-բաժան լինի, այդ թագավորությունը չի կարող կանգուն մնալ: ²⁵ Նույնպես էլ, եթե մի ընտանիք ինքն իր մեջ բաժանված լինի, այդ ընտանիքը չի կարող կանգուն մնալ: ²⁶ Ուրեմն՝ եթե Սատանան ինքն իր դեմ է դուրս եկել և բաժանվել, չի կարող դիմանալ, այլ հասել է նրա իշխանության վախճանը:

²⁷ Ոչ ոք չի կարող մի ուժեղ մարդու տուն մտնել և կողոպտել նրա ունեցվածքը, եթե նախապես չկապի այդ ուժեղ մարդուն: Դրանից հետո միայն կկողոպտի նրա տունը:

²⁸ Լա՛վ իմացեք, մարդիկ ինչքան էլ մեղք գործեն կամ հայհոյություն անեն, Աստված կների նրանց այդ բոլորը, ²⁹ բայց հավիտյան չի ների նրան, ով հայհոյում է Սուրբ Հոգուն, այսինքն՝ նախատում է նրան, որովհետև նրա արածը հավիտենական մեղք է:

³⁰ Հիսուսն այս ասաց, որովհետև ասում էին՝ «Նրա մեջ չար ոգի կա»:

Հիսուսի մայրն ու եղբայրները

(Մտ 12.46-50, Ղկ 8.19-21)

³¹ Հիսուսի մայրն ու եղբայրները եկան և դրսում կանգնած՝ մարդ ուղարկեցին, որ կանչեն նրան: ³² Այնտեղ ժողովուրդը նստել էր նրա շուրջը: Երբ հայտնեցին նրան. թե՛ «Ահա մայրդ ու եղբայրներդ դրսում կանգնած են և քեզ են ուզում», ³³ Հիսուսը պատասխանեց.

-Ո՞վ է իմ մայրը, կամ ովքե՞ր են իմ եղբայրները:

³⁴ Ապա իր շուրջը նստածներին նայելով՝ ասաց.

-Ահավասիկ իմ մայրը և իմ եղբայրները. ³⁵ որովհետև ով կատարում է Աստծու կամքը, նա՛ է իմ եղբայրը, իմ քույրը և իմ մայրը:

4

Սերմնացանի առակը

(Մտ 13.1-9, Ղկ 8.4-8)

¹ Հիսուսը դարձյալ սկսեց ուսուցանել Գալիլեայի լճի եզերքին: Ժողովուրդն այնքան խոնվեց նրա շուրջը, որ նա նավակ մտավ և նստեց այնտեղ, իսկ ժողովուրդը ցամաքի վրա էր, լճի եզերքին: ² Նա առականերով շատ բան էր սովորեցնում նրանց: Իր քարոզության ընթացքում նա ասաց.

³ -Լսեցե՛ք: Ահա մի սերմանող ելավ սերմ ցանելու: ⁴ Սերմանելու ժամանակ սերմերից մի քանիսն ընկան ճանապարհի եզրին, և երկնքի թռչունները եկան ու

^{3.22} Մտ 9.34, 10.25:

^{3.29} «Հայհոյում է Սուրբ Հոգուն». տե՛ս Մտ 12.31-ի ծնթ:

^{3.29} Ղկ 12.10:

^{4.1} Ղկ 5.1-3:

կերան դրանք: ⁵ Ուրիշները ընկան ժայռոտ մի տեղ, որտեղ առատ հող չկար, ⁶ և իսկույն բուսան, քանի որ հողը խորունկ չէր, և երբ արևը ելավ, այրվեցին, և որովհետև արմատ չունեին, չորացան: ⁷ Մի քանիսն ընկան փշերի մեջ. փշերը ելան ու խեղդեցին նրանց, և նրանք պտուղ չտվին: ⁸ Իսկ ուրիշներն էլ ընկան լավ հողի մեջ և աճելով պտուղ տվին. մի մասը՝ մեկի տեղ երեսուն, ուրիշները՝ մեկի տեղ վաթսուն և կամ մեկի տեղ՝ հարյուր:

⁹ Եվ նա ասաց.

-Ով լսելու ականջ ունի, թող լսի:

Առակաների նպատակը

(Մտ 13.10-17, Ղկ 8.9-10)

¹⁰ Երբ Հիսուսն առանձին մնաց, նրան լսողներից ոմանք տասներկու աշակերտների հետ եկան և ուզեցին, որ իրենց բացատրի առակը: ¹¹ Հիսուսն ասաց.

-Դուք պետք է գիտենաք Աստծու արքայության գաղտնիքները, բայց նրանց, ովքեր դրսից են, ամեն ինչ առականերով կհայտնվի, ¹² այնպես որ՝

«Անդադար կնայեն, բայց չեն տեսնի,
չարունակ կլսեն, բայց չեն հասկանա,
որպեսզի չլինի թե Աստծուն դառնան,
և Աստված էլ ների իրենց»:

¹³ Ապա հարցրեց նրանց.

-Չհասկացա՞ք այս առակի իմաստը: Հապա ինչպե՞ս պիտի հասկանաք մյուս բոլոր առակները:

Հիսուսը մեկնաբանում է սերմնացանի առակը

(Մտ 13.18-23, Ղկ 8.11-15)

¹⁴ -Սերմնադրը Աստծու խոսքն է, որ սերմնում է: ¹⁵ Ճանապարհի եզրին գտնվող հողը պատկերն է այն մարդկանց, որոնք լսում են Աստծու խոսքը, բայց հագիվ լսած ահա գալիս է Մատանան և նրանց սրտից դուրս հանում Աստծու խոսքը: ¹⁶ Ժայռոտ հողը նման է այն մարդկանց, որոնք երբ լսում են Աստծու խոսքը, ուրախությամբ իսկույն ընդունում են այն. ¹⁷ սակայն սրանք արմատ չունեն իրենց մեջ, այսինքն՝ հավատում են մի որոշ ժամանակի համար, և երբ նեղության պատճառով կամ Աստծու խոսքի համար հալածանքի են ենթարկվում, իսկույն կորցնում են իրենց հավատը: ¹⁸ Փշերով ծածկված հողը նման է այն մարդկանց, որոնք լսում են Աստծու խոսքը, ¹⁹ բայց երկրային կյանքի հոգսերը, հարստության հրապույրը և այլ տեսակի ցանկությունները գրավում են նրանց ու խեղդում նրանց մեջ ընկած սերմերը, և անպտուղ են դառնում: ²⁰ Իսկ լավ հողը նման է այն մարդկանց, որոնք լսում են Աստծու խոսքը, ընդունում են այն և պտուղ տալիս, մեկի տեղ՝ երեսուն, մեկի տեղ՝ վաթսուն և մեկի տեղ՝ հարյուր:

Ճրագի օրինակը

(Մտ 5.15, 10.26, Ղկ 6.38, 8.16-18, 11.33)

²¹ Ապա ավելացրեց.

-Մի թե որևէ մարդ ճրագը ներս կբերի կաթսայի կամ անկողնու տակ դնելու համար: Աշտանակի վրա չի դնի այն.* ²² որովհետև չկա ծածուկ բան, որ չհայտնվի, ոչ էլ գաղտնի բան, որ երևան չգա: ²³ Ով լսելու ականջ ունի, թող լսի:

²⁴ Հետո ասաց.

-Ուշադիր եղեք ձեր լսած խոսքերին, որովհետև լսողներդ ավելիով պիտի ունենաք: Ինչ չափով որ չափեք ուրիշներին, նույն չափով Աստված ձեզ պիտի չափի,* ²⁵ որովհետև ով ունի, նրան պիտի տրվի ավելիով, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցած փոքր բաժինն էլ:

Աճող սերմի առակը

²⁶ Հետո Հիսուսը շարունակեց.

-Աստծու արքայությունը նման է հետևյալին.-

Մի մարդ արտի մեջ սերմ է ցանում: ²⁷ Օրեր ու գիշերներ են անցնում, նա քնում է ու արթնանում, մինչ այդ սերմերը բուսնում են և աճում, և ինքը չի իմանում, թե ինչպե՛ս են մեծանում. ²⁸ այսինքն՝ հողը ինքնաբերաբար աճեցնում է սերմը. նախ՝ ցողունը, ապա՝ հասկը և ապա՝ հասկի մեջ լեցուն ցորենը: ²⁹ Եվ երբ ցորենը հասունանում է, հնձվորներին անմիջապես արտ է ուղարկում, որովհետև հասել է հնձի ժամանակը:

Մանանեխի հատիկի առակը

(Մտ 13.31-35, Ղկ 13.18-19)

³⁰ Եվ նա հարցրեց.

-Ի՞նչ բանի կարող ենք նմանեցնել Աստծու արքայությունը և կամ ի՞նչ օրինակով կարող ենք բացատրել: ³¹ Այն նման է մանանեխի հատիկին, որը հողի մեջ սերմանվելու ժամանակ երկրի վրա եղած բոլոր սերմերից ամենամանրն է: ³² Բայց երբ սերմանվի, բուսնում և ավելի մեծ է լինում, քան բոլոր տունկերը. այնքան մեծ ճյուղեր է արձակում, որ երկնքի թռչունները գալիս և նրա հովանու տակ բույն են շինում: ³³ Եվ այսպիսի առակներով Հիսուսն իր ուսուցումները ներկայացնում էր ժողովրդին, այնպես որ կարողանային հասկանալ իրեն: ³⁴ Առանց առակի ոչինչ չէր խոսում, բայց իր աշակերտների հետ առանձին եղած ժամանակ ամեն ինչ բացատրում էր նրանց:

*4.21 «Կաթսա», «աշտանակ». տե՛ս Մտ 5.15-ի ծնթ:

*4.21 Մտ 5.15, Ղկ 11.33:

*4.22 Մտ 10.26, Ղկ 12.2:

*4.24 Այս հմր հուն. ունի «Ուշադիր եղեք ձեր լսածին. ինչ չափով որ չափեք ուրիշներին, նույն չափով Աստված ձեզ պիտի չափի և նույնիսկ ավելի խստությամբ»:

*4.24 Մտ 7.2, Ղկ 6.38:

*4.25 Մտ 13.12, 25.29, Ղկ 19.26:

*4.29 Հվլ 3.13:

Հիսուսը խաղաղեցնում է փոթորիկը

(Մտ 8.18, 23.27, Ղկ 8.22-25)

³⁵ Նույն օրը, երեկոյան, Հիսուսն իր աշակերտներին ասաց.

-Եկե՛ք լճի մյուս կողմն անցնենք:

³⁶ Աշակերտները թողեցին ժողովրդին և բարձրացան այն նավակը, որի մեջ գտնվում էր Հիսուսը: Այնտեղ ուրիշ նավակներ էլ կային: ³⁷ Հանկարծ մի ուժեղ քամի փոթորկեց լիճը: Ալիքները, նավակին խփվելով, ներս էին թափվում այն աստիճան, որ նավակը գրեթե լցվում էր: ³⁸ Մինչդեռ Հիսուսը նավակի հետևի կողմում բարձի վրա ննջում էր: Աշակերտները արթնացրին նրան և ասացին.

-Վարդապե՛տ, քո հոգը չէ՞, որ մենք կորչում ենք:

³⁹ Ոտքի կանգնելով՝ Հիսուսը սաստեց քամուն և ասաց.

-Դադարի՛ր: Իսկ լճին ասաց.- Հանդարտվի՛ր:

Քամին դադարեց, և կատարյալ հանդարտություն տիրեց: ⁴⁰ Ապա Հիսուսն ասաց իր աշակերտներին.

-Ինչո՞ւ եք այդպես վախկոտ. դեռևս հավատ չունե՞ք:

⁴¹ Նրանք սաստիկ վախեցան և ասում էին միմյանց.

-Ո՞վ է արդյոք այս մարդը, որ նույնիսկ հողմն ու ծովը հնազանդվում են իրեն:

5

Գերգեսացի դիվահարի բժշկումը

(Մտ 8.28-34, Ղկ 8.26-39)

¹ Հետո նրանք եկան լճի դիմացը, գերգեսացիների երկիրը: ² Հիսուսը հազիվ էր դուրս եկել նավակից, երբ նրա դեմ ելավ մի մարդ, որ ժայռափոր գերեզմաններից էր գալիս: Այս մարդը չար ոգի ուներ իր մեջ ³ և բնակվում էր գերեզմաններում: Նույնիսկ շղթաներով չէին կարողանում կապել նրան: ⁴ Նրա ոտքերն ու ձեռքերը շատ անգամ էին կապել շղթաներով, բայց նա խորտակել էր շղթաները և ջարդել ոտնակապերը: ⁵ Ոչ ոք չէր կարողանում զսպել նրան: Միշտ՝ գիշեր ու ցերեկ, թափառում էր գերեզմաններում և լեռների վրա, աղաղակում էր և քարերով վիրավորում իրեն: ⁶ Երբ նա հեռվից տեսավ Հիսուսին, վազեց, ծնկի եկավ նրա առջև ⁷ և բարձր ձայնով աղաղակեց.

-Ի՞նչ ես ուզում ինձնից, Հիսու՛ս, Բարձրյա՛լ Աստծու Որդի, Աստծու սիրուն, մի՛ տանջիր ինձ:

⁸ (Նա այս ասում էր, որովհետև Հիսուսը հրամայել էր չար ոգուն՝ ասելով. «Չա՛ր ոգի, դո՛ւրս ելիր այս մարդու միջից»:) ⁹ Հիսուսը հարցրեց նրան.

-Ի՞նչ է անունդ:

-Անունս Լեզեոն է,- պատասխանեց նա,- որովհետև մենք շատ ենք:

¹⁰ Չար ոգիները շատ էին աղաչում Հիսուսին, որ աշխարհից դուրս չուղարկի նրանց:

^{5.1} «Գերգեսացիներ». մի շարք ձեռ. ունեն «գաղարացիների» (տե՛ս Մտ 8.28-ի ծնթ):

^{5.9} «Լեզեոն» նշ է «զորագունդ»: Հռոմեական մեկ լեզեոնը բաղկացած էր 6.000 մարդուց:

¹¹ Այնտեղ, լեռան մոտ, խոզերի մի մեծ երամակ էր արածում: ¹² Չար ոզինները բոլորն էլ աղաչեցին Հիսուսին և ասացին.

-Մեզ խոզերի մոտ ուղարկիր, որ մտնենք նրանց մեջ:

¹³ Եվ Հիսուսը թույլատրեց: Չար ոզինները մարդու միջից դուրս ելան և մտան խոզերի մեջ, և խոզերի երամակը, որ թվով շուրջ երկու հազար էր, խուժեց գառիթափից ցած, դեպի լիճը և այնտեղ խեղդվեց: ¹⁴ Խոզարածները փախան և քաղաքում ու ագարակներում պատմեցին պատահածի մասին: Ժողովուրդը գնաց տեսնելու, թե ի՞նչ էր պատահել: ¹⁵ Եկան Հիսուսի մոտ և սարսափեցին, երբ տեսան դիվահարին, որը նախապես բազմաթիվ չար ոզիններ ուներ իր մեջ, իսկ այժմ հազնված էր և զգաստացած: ¹⁶ Ականատեսները պատմեցին նրանց, ինչ որ պատահել էր դիվահարի և խոզերի հետ: ¹⁷ Այն ժամանակ ժողովուրդն սկսեց աղաչել Հիսուսին, որ հեռանա իրենց սահմաններից:

¹⁸ Երբ Հիսուսը նավակ մտավ, դիվահարը նրան աղաչեց, որ միասին գնան: ¹⁹ Բայց Հիսուսը թույլ չտվեց, այլ ասաց նրան.

-Գնա՛ք ոտն, քո ընտանիքի մոտ և պատմի՛ր նրանց, ինչ որ Տերը քեզ արեց և թե ինչպե՛ս ողորմեց քեզ:

²⁰ Նա գնաց, և ինչ որ Հիսուսն արել էր, պատմեց Դեկապոլիսում: Լսողները բոլորն էլ զարմանում էին:

Հայրոսի աղջիկը և հիվանդ կինը

(Մտ 9.18-26, Ղկ 8.40-56)

²¹ Երբ Հիսուսը կրկին լճի մյուս կողմն անցավ, մի մեծ բազմություն հավաքվեց նրա շուրջը, լճի եզերքին: ²² Եվ ահա տեղի ժողովրդապետներից մեկը, որի անունը Հայրոս էր, եկավ Հիսուսի մոտ: Հազիվ տեսած նրան, ընկավ նրա ոտքերի առջև ²³ և շատ աղաչելով ասում էր.

-Աղջիկս մահամերձ է, արի՛ և ձեռքդ դի՛ր նրա վրա, որպեսզի առողջանա և ապրի:

²⁴ Հիսուսը գնաց Հայրոսի հետ: Նրա հետ գնում էր նաև մի խումբ բազմություն և նեղում էր նրան: ²⁵ Մի կին կար, որ տասներկու տարուց ի վեր տառապում էր արյունահոսությունից: ²⁶ Նա շատ նեղություն էր քաշել բժիշկների ձեռքից, վատնել էր իր ամբողջ ունեցածը, բայց օգուտ չէր տեսել. ընդհակառակը, հիվանդությունը ավելի էր վատթարացել: ²⁷ Լսելով Հիսուսի մասին՝ նա ամբոխի միջից եկավ և Հիսուսի հետևից դիպավ նրա զգեստին, ²⁸ որովհետև ինքն իրեն խորհում էր և ասում. «Եթե

՝5.10 «Մշխարհից» կամ «շրջանից». չար ոզինները խնդրում են, որ իրենց համար սահմանված ժամանակից առաջ հավիտենական տանջարանը կամ «անդունդը» չուղարկի իրենց (հմմտ Մտ 25.41 և Ղկ 8.31):

՝5.11 «Խոզերի մի մեծ երամակ էր արածում». հրեաների համար խոզն «անմաքուր» կենդանի էր, որին չէր կարելի դիպչել, ոչ էլ միսը ուտել (հմմտ Ղկ 11.7, Բ Օր 14.8): Այստեղ պարզապես շեշտվում է, որ Հիսուսը հեթանոսների մի շրջանում է գտնվում:

՝5.20 «Դեկապոլիս». տե՛ս Մտ 4.25-ի ծնթ:

՝5.21 «Կրկին». շատ ձեռ. ավելացնում են «նավակով»:

՝5.26 Տր 2.10:

միայն դիպչեմ նրա զգեստին, կբժշկվեմ»։²⁹ Իսկույն նրա արյունահոսությունը դադարեց, և նա իր մարմնի մեջ զգաց, որ իր հիվանդությունից բժշկվեց։³⁰ Այդ նույն պահին Հիսուսը զգաց, որ մի գորություն դուրս ելավ իրենից, ամբոխի մեջ հետ շրջվեց և ասաց.

-Ո՞վ դիպավ իմ զգեստին:

³¹ Աշակերտներն ասացին նրան.

-Տեսնում ես, որ ամբոխը հրմշտում է քեզ, և դու ասում ես՝ «Ո՞վ դիպավ իմ զգեստին»:³² Հիսուսը չորս կողմն էր նայում՝ տեսնելու համար, թե ո՞վ արեց այդ: ³³ Կինը, քանի որ գաղտնի էր դիպել Հիսուսին, և գիտենալով, թե ինչ է կատարվել իր հետ, վախից դողալով եկավ ընկավ նրա ոտքերի առջև և նրան ասաց ճշմարտությունը: ³⁴ Հիսուսն ասաց կնոջը.

-Աղջի՛կս, քո հավատը փրկեց քեզ. գնա՛ խաղաղությամբ և բժշկվա՛ճ եղիր քո ցավերից:

³⁵ Մինչ Հիսուսն այս բանն էր ասում, ժողովրդապետի տնից ոմանք եկան և ասացին Հայրոսին.

-Աղջիկդ մեռավ, էլ ինչո՞ւ ես հոգնեցնում Վարդապետին:

³⁶ Հիսուսը երբ լսեց այս խոսքերը, ասաց ժողովրդապետին.

-Մի՛ վախենա, միայն հավատա՛:

³⁷ Հետո ոչ ոքի թույլ չտվեց, որ գնա իր հետ, բացի Պետրոսից, Հակոբոսից և նրա եղբայր Հովհաննեսից: ³⁸ Երբ հասավ ժողովրդապետի տուն, տեսավ մի ամբոխ, որ լաց էր լինում և ողբում էր: ³⁹ Հիսուսը ներս մտավ և ասաց նրանց.

-Ի՞նչ եք իրար անցել ու լաց լինում. փոքրիկը մեռած չէ, այլ ննջում է:

⁴⁰ Սակայն նրանք սկսեցին ծաղրել նրան: Հիսուսը բռնորին էլ դուրս հանեց և իր հետ վերցնելով փոքրիկի հորն ու մորը, ինչպես նաև երեք աշակերտներին, մտավ այն սենյակը, որտեղ պառկած էր փոքրիկը: ⁴¹ Հիսուսը բռնեց փոքրիկի ձեռքից և ասաց.

-Տալի՛ թա, կո՛ւմի, որ նշանակում է «Աղջի՛կ, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց»:

⁴² Աղջիկը, որ շուրջ տասներկու տարեկան էր, իսկույն վեր կացավ և սկսեց քայլել: Այս տեսնելով՝ ամենքն էլ զարմացան: ⁴³ Իսկ Հիսուսը խստիվ պատվիրեց նրանց, որ ոչ ոքի բան չասեն, և ասաց, որ ուտելիք տան նրան:

6

Հիսուսը մերժվում է Նազարեթում

(Մտ 13.53-58, Ղկ 4.16-30)

¹ Հիսուսն այնտեղից ելավ և գնաց իր հայրենի քաղաքը. նրա աշակերտները հետևում էին նրան: ² Երբ շաբաթ օր եղավ, նա ժողովարանում սկսեց ուսուցանել: Շատերը, երբ

^{5.33} Շատ ձեռ. չունեն «քանի որ գաղտնի էր դիպել [Հիսուսին]» նախադասությունը:

^{5.36} «Հիսուսը երբ լսեց այս խոսքերը» կամ «Հիսուսն անտեսելով այս խոսքերը»:

^{5.41} «Տալի՛ թա, կո՛ւմի» բառերն արամեերեն են, ասորերենի մեկ տարբերակը, որ Հիսուսի ժամանակ շրջանում խոսվում էր Պաղեստինում:

^{6.1} «Իր հայրենի քաղաքը». այսինքն՝ Նազարեթը, որտեղ մեծացել էր Հիսուսը:

լսում էին նրան, զարմանում էին նրա ուսուցումների վրա և ասում.

-Սա որտեղի՞ց այսքան բան գիտի: Այս ի՞նչ իմաստություն է տրված սրան, և ինչպե՞ս է այդպիսի հրաշքներ կատարում:՝³ Սա աստաղծագործի և Մարիամի որդին չէ՞, Հակոբի, Հովսեփի, Հուդայի և Սիմոնի եղբայրը: Սրա քույրերը այստեղ մեզ մոտ չե՞ն բնակվում:

Եվ այս պատճառով դժվարանում էին հավատալ նրան:՝

⁴ Հիսուսն ասաց նրանց.

-Մարգարեն իր հայրենի քաղաքում, իր գերդաստանում և ընտանիքում պատիվ չունի:՝

⁵ Եվ չկարողացավ այնտեղ որևէ հրաշք գործել, այլ միայն սակավաթիվ հիվանդների բժշկեց՝ նրանց վրա դնելով իր ձեռքերը: ⁶ Նա զարմանում էր իր համաքաղաքացիների անհավատության վրա:

Հիսուսն առաքում է տասներկու աշակերտներին

(Մտ 10.1, 5-15, Ղկ 9.1-6)

Հիսուսը, շրջակա գյուղերը շրջելով, ուսուցանում էր: ⁷ Նա, իր մոտ կանչելով տասներկու աշակերտներին, սկսեց զույգ-զույգ ուղարկել նրանց՝ չար ոգիների վրա իշխանություն տալով, ⁸ ու պատվիրեց.

-Ճանապարհի համար, բացի զավազանից, ձեզ հետ ոչ մի բան չվերցնեք. ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ էլ դրամ ձեր գոտիների մեջ,՝ ⁹ այլ հագեք հողաթափեր և ավելորդ հագուստ մի՛ վերցրեք:

¹⁰ Ապա ավելացրեց.

-Ո՛ր տունը որ մտնեք, և ձեզ ընդունեն, այնտե՛ղ իջևանեցեք, մինչև որ մեկնեք այնտեղից: ¹¹ Իսկ երբ դուրս ելնեք որևէ տեղից, որի բնակիչները ձեզ չեն լսի ու չեն ընդունի, թա՛փ տվեք ձեր ոտքերի փոշին՝ իբրև վկայություն նրանց դեմ:՝

¹² Աշակերտները գնացին և սկսեցին քարոզել ժողովրդին, որ ապաշխարեն: ¹³ Նրանք բազում չար ոգիներ էին հանում, շատ հիվանդների օծում էին յուղով և նրանց բժշկում:՝

¹⁴ Հերովդես թագավորը լսեց այս բոլորը, որովհետև Հիսուսի հռչակը տարածվում էր ամեն տեղ: Ունանք ասում էին.

-Նա Հովհաննես Մկրտիչն է, որ հարություն է առել մեռելներից, և դրա համար

^{6.2} Շատ ձեռ. չունեն *«նրա ուսուցումների վրա»*:

^{6.3} *«Սա աստաղծագործի և Մարիամի որդին չէ՞»*. շատ ձեռ. ունեն *«Սա աստաղծագործը չէ՞, Մարիամի որդին»*: Սա միակ ակնարկությունն է, որ Հիսուսն ինքն էլ մի ժամանակ աստաղծագործությամբ է զբաղվել:

^{6.4} Հհ 4.44:

^{6.8-11} Ղկ 10.4-11:

^{6.11} *«Թա՛փ տվեք ձեր ոտքերի փոշին»*. տե՛ս Մտ 10.14-ի ծնթ:

^{6.11} Գրծ 13.51:

^{6.13} Հկ 5.14:

հրաշքներ են գործվում նրա ձեռքով:”

¹⁵ Ուրիշներն ասում էին.

-Եղիան է:

Իսկ ոմանք էլ.

-Մի մարգարե է՝ նախկին մարգարեներից մեկի նման:

¹⁶ Երբ Հերովդեսը այս լսեց, ասաց.

-Սա Հովհաննես Մկրտիչն է, որի գլուխը ես կտրել տվի, և հիմա հարություն է առել մեռելներից:

Հովհաննես Մկրտչի մահը

(Մտ 14.1-12, Ղկ 3.19-20, 9.7-9)

¹⁷ Հերովդեսը ինքն էր, որ Հովհաննեսին ձերբակալել էր տվել, շղթայել և բանտ էր նետել տվել՝ իր Փիլիպպոս եղբոր կնոջ՝ Հերովդիայի պատճառով, որի հետ ինքն ամուսնացավ: ¹⁸ Քանի որ Հովհաննեսը Հերովդեսին ասում էր.

-Մեր Օրենքը թույլ չի տալիս, որ դու քո եղբոր կնոջը քեզ կին առնես:

¹⁹ Այս պատճառով Հերովդիան ոխ էր պահել Հովհաննեսի դեմ և ուզում էր նրան սպանել տալ, բայց չէր կարողանում, ²⁰ որովհետև Հերովդեսն ակնաձուլ էր Հովհաննեսից, քանի որ գիտեր, թե Հովհաննեսն արդար և սուրբ մարդ է, պաշտպանում էր նրան, հաճույքով էր լսում նրա խոսքերը և շատ բան գործադրում:՝

²¹ Եվ Հերովդիայի համար հարմար առիթը ներկայացավ. Հերովդեսն իր ծննդյան տարեդարձի առթիվ մի խնջույք տվեց իր նախարարների, հազարապետների և Գալիլեայի մեծամեծների համար: ²² Հերովդիայի դուստրը ներս մտավ և սկսեց պարել: Սա հաճելի թվաց Հերովդեսին և նրա հյուրերին: Ուստի թագավորն ասաց աղջկան.

-Ինչ որ ուզես ինձնից, կտամ:

²³ Նա շատ անգամ էր երդվում՝ ասելով.

-Ինչ էլ որ խնդրես ինձնից, կտամ քեզ, մինչև իսկ իմ թագավորության կեսը:՝

²⁴ Աղջիկը դուրս ելավ և հարցրեց իր մորը.

-Ի՞նչ ուզեմ:

Մայրն ասաց.

-Հովհաննես Մկրտչի գլուխը:

²⁵ Աղջիկը շտապելով կրկին մտավ թագավորի մոտ և ասաց նրան.

^{16.14} Այստեղ հիշված «Հերովդես թագավորը» Հերովդես Անտիպասն է, որն իշխում էր Գալիլեայի և Պերեայի վրա (տե՛ս նաև Մտ 14.1-ի ծնթ): «Ոմանք ասում էին». մի շարք ձեռ. ունեն «նա ասաց»:

^{16.14-15} Մտ 16.14, Մր 8.28, Ղկ 9.19:

^{16.17} «Հերովդիա». սա Հերովդես Անտիպասի Արիստոբուլոս եղբոր աղջիկն էր, որ նախապես ամուսնացել էր իր հորեղբայրներից մեկի՝ Փիլիպպոսի հետ: Այս Փիլիպպոսը, որ նաև Հերովդես էր կոչվում, ապրում էր Հռոմում: Մրան չպետք է շփոթել Անտիպասի մյուս Փիլիպպոս եղբոր հետ, որն իշխում էր Դրակոնիայում և կառուցել էր տվել իր անունը կրող Կեսարիա քաղաքը:

^{16.17-18} Ղկ 3.19-20:

^{16.20} «Շատ բան գործադրում». մի շարք ձեռ. ունեն «հակառակ նրան, որ խոսվում էր»:

^{16.23} Շատ ձեռ. չունեն «շատ անգամ»:

-Ուզում եմ, որ հիմա, անմիջապես, մի ավսեի վրա ինձ տաս Հովհաննես Մկրտչի գլուխը:

²⁶ Թագավորը շատ տխրեց, բայց չկարողացավ մերժել նրան իր արած երդումների և հրավիրվածների պատճառով: ²⁷ Ուստի թագավորն իսկույն ուղարկեց դահճին՝ հրամայելով բերել Հովհաննեսի գլուխը: Դահիճը գնաց, Հովհաննեսին գլխատեց բանտում ²⁸ և նրա գլուխը մի ավսեի վրա բերեց ու տվեց աղջկան, իսկ աղջիկն էլ տարավ տվեց իր մորը:

²⁹ Երբ Հովհաննեսի աշակերտները լսեցին այս, եկան վերցրին նրա մարմինը և դրեցին մի գերեզմանի մեջ:

Հինգ հազարի կերակրումը

(Մտ 14.13-21, Ղկ 9.10-17, Հհ 6.1-14)

³⁰ Առաքյալները վերադարձան Հիսուսի մոտ և պատմեցին նրան, ինչ որ կատարել էին և սովորեցրել: ³¹ Հիսուսն ասաց նրանց.

-Եկե՛ք գնանք ամայի մի տեղ, որտեղ կարող ենք առանձին լինել և մի քիչ հանգստանալ:

Որովհետև ժողովրդից շատերի գնալ-գալու պատճառով ուտելու ժամանակ էլ չէին ունեցել: ³² Ուստի նրանք առանձին նավակ նստեցին ու գնացին ամայի մի վայր: ³³ Երբ ժողովուրդը տեսավ նրանց գնալը և իմացավ, որ Հիսուսը նրանց հետ է, շրջակա քաղաքների բնակիչներից շատերը, վազելով լճի եզերքով, նրանցից առաջ հասան նրանց գնալու տեղը: ³⁴ Երբ Հիսուսը նավակից դուրս ելավ և տեսավ ամբոխին, զթաց նրանց, որովհետև նման էին հովիվ չունեցող ոչխարների: Ապա սկսեց շատ բաներ ուսուցանել նրանց:

³⁵ Երբ բավական ժամանակ անցավ, աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին.

-Ամայի տեղում ենք գտնվում, և ժամանակն էլ ուշ է. ³⁶ արձակի՛ր ժողովրդին, որպեսզի գնան շրջակա քաղաքներն ու գյուղերը և իրենց համար ուտելիք գնեն, որովհետև ուտելիք չունեն:

³⁷ Հիսուսն ասաց նրանց.

-Դո՛ւք տվեք նրանց ուտելիքը:

Նրանք հարցրին.

-Ուզո՞ւմ ես, որ գնանք և երկու հարյուր արծաթ դահեկանի հաց գնենք նրանց կերակրելու համար:

³⁸ Հիսուսն ասաց.

-Քանի՞ հաց ունեք, գնացեք ստուգե՛ք:

Աշակերտները ստուգեցին և ասացին.

^{6.33} «Նրանցից առաջ հասան». մի շարք ձեռ. ունեն «հասան նրանց»:

^{6.34} Թվ 27.17, Գ Թգ 22.17, Բ Մն 18.16, Եզկ 34.5, Մտ 9.36:

^{6.36} Հուն. չունի «որովհետև ուտելիք չունեն»:

^{6.37} «Երկու հարյուր [արծաթ] դահեկանի». պետք է նկատի ունենալ, որ մեկ արծաթ դահեկանը մի բանվորի օրավարձն էր (հմմտ Մտ 20.2): 200 դահեկանը նշ էր մի մարդու ութ ամսվա աշխատավարձ:

-Հինգ հաց և երկու ձուկ:

³⁹ Հիսուսը հրամայեց աշակերտներին, որ ժողովրդին խումբ-խումբ նստեցնեն դալար խոտի վրա, ⁴⁰ և նրանք նստեցին. տեղ-տեղ՝ հարյուր, տեղ-տեղ՝ հիսուն հոգուց բաղկացած խմբերով: ⁴¹ Ապա Հիսուսը վերցրեց հինգ հացն ու երկու ձկները, աչքերը բարձրացրեց դեպի երկինք, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին, որ բաշխեն, իսկ երկու ձկներն էլ բաժանեց ժողովրդին: ⁴² Բոլորն էլ կերան կշտացան ⁴³ և ավելացած հացի և ձկան կտորտանքները հավաքելով՝ տասներկու սակառ լցրին: ⁴⁴ Իսկ ուտողների թիվը, միայն տղամարդկանց հաշված, շուրջ հինգ հազար էր:

Հիսուսը քայլում է ջրերի վրայով

(Մտ 14.22-23, Հհ 6.15-21)

⁴⁵ Ապա Հիսուսն իսկույն ստիպեց իր աշակերտներին, որ նավակ մտնեն և իրենից առաջ գնան Բեթսայիդա, լճի հանդիպակաց կողմը, մինչև որ ինքն արձակի ժողովրդին: ⁴⁶ Ժողովրդին հրաժեշտ տալուց հետո Հիսուսը լեռը բարձրացավ՝ աղոթելու: ⁴⁷ Երբ երեկո եղավ, նավակը լճի մեջտեղում էր, իսկ Հիսուսն առանձին՝ ցամաքի վրա: ⁴⁸ Նա տեսավ, որ աշակերտները նավակը վարելու մեծ դժվարություն էին կրում, որովհետև քամին նրանց դիմացից էր փչում: Առավոտյան ժամը չորսի մոտ էր, երբ նա, քայլելով ջրի վրայով, եկավ նրանց մոտ և ուզում էր նրանցից առաջ անցնել: ⁴⁹ Աշակերտները երբ տեսան, որ նա քայլում է ջրի վրայով, կարծեցին, թե մի ուրվական է, և սկսեցին գոռալ: ⁵⁰ Արդարև, բոլորն էլ նրան տեսան և շատ վախեցան: Հիսուսն իսկույն խոսեց նրանց հետ և ասաց.

-Քա՛ջ եղեք, ես եմ, մի՛ վախեցեք:

⁵¹ Ապա նա նավակ բարձրացավ՝ նրանց մոտ, և քամին դադարեց: Աշակերտները առավել ևս ապշեցին և շատ զարմացան: ⁵² Նրանք արդեն իսկ չէին հասկացել հացի հրաշքի իմաստը, իսկ այժմ էլ նրանց միտքը փակված էր:

Հիսուսը բժշկում է հիվանդներին

(Մտ 14.34-36)

⁵³ Ապա լճի դիմացի կողմն անցնելով՝ եկան Գեննեսարեթ, որտեղ ցամաք էլան: ⁵⁴ Դեռ նոր էին նավակից դուրս եկել, երբ տեղի ժողովուրդն իսկույն ճանաչեց Հիսուսին: ⁵⁵ Հիսուսն ամբողջ զավառում ուր որ գնում էր, մարդիկ նրա հետևից այս ու այն կողմ էին վազում ու նրա մոտ բերում հիվանդներին՝ իրենց մահիճների մեջ: ⁵⁶ Եվ ուր որ մտնում էր՝ գյուղ, քաղաք թե ագարակ, տեղի մարդիկ իրենց հիվանդներին դնում էին հրապարակներում և աղաչում նրան, որ գոնե հիվանդներին թույլ տա, որ իր զգեստի քղանցքներին դիպչեն: Եվ նրանք, որ դիպան, բժշկվեցին:

7

Նախնիների ուսուցումները

^{6.53} «Գեննեսարեթ». տե՛ս Մտ 14.34-ի ծնթ:

(Մտ 15.1-9)

¹ Փարիսեցիները և Օրենքի ուսուցիչներից ոմանք, որոնք Երուսաղեմից էին եկել, հավաքվեցին Հիսուսի շուրջը: ² Երբ նրանք տեսան, որ Հիսուսի աշակերտներից ոմանք պիղծ ձեռքերով, այսինքն՝ առանց լվացվելու են հաց ուտում, սկսեցին բամբասել, ³ որովհետև փարիսեցիները և բոլոր հրեաները հաց չէին ուտում, եթե նախապես իրենց ձեռքերը լավ չլվանային՝ իրենց նախնիներից եկած ավանդույթը պահելու համար: ⁴ Նույնպես, երբ շուկայից տուն են գալիս, նախ լվացվում են և ապա ուտում: Նրանք հնից եկած ուրիշ ավանդույթներ էլ են պահում, ինչպես՝ բաժակների, սափորների, պղնձյա կաթսաների և մահճակալների լվացումները: ⁵ Ահա ինչու փարիսեցիներն ու Օրենքի ուսուցիչները հարցրին Հիսուսին.

-Քո աշակերտները նախնիների ավանդույթն ինչո՞ւ չեն պահում և անվա՞ ձեռքերով են հաց ուտում: ⁶ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Եսայի մարգարեն ճիշտ է մարգարեացել ձեր՝ կեղծավորներիդ մասին՝ ասելով.

«Այս ժողովուրդն ինձ մեծարում է

լուկ շրթունքներով,

մինչ նրանց սիրտը շատ հեռու է ինձանից.»

⁷ Նրանք զուր են պաշտում ինձ,

քանզի իրենց ուսուցումները

մարդկանց կողմից տրված պատվիրաններ են»:

⁸ Արդարև, դուք թողել եք աստծու պատվիրանը և մարդկանց ավանդույթն եք պահում:

⁹ Եվ ավելացրեց.

-Ձեր ավանդույթը պահելու համար լավ եք գտել Աստծու պատվիրանն անարգելու ձևը: ¹⁰ Օրինակ՝ Մովսեսը պատվիրեց ձեզ՝ ասելով. «Պատվիրք հորն ու մորը». մի ուրիշ տեղ էլ ասում է. «Ով իր հորը կամ մորն անիծի, մահվան կդատապարտվի»:

¹¹ Մինչդեռ դուք սովորեցնում եք, թե՛ «Ով իր հորը կամ մորն ասի. "Այն օգնությունը, որ դու ստանալու էիր ինձանից, կորբան է, այսինքն՝ Աստծուն նվիրված ընծա",» ¹² էլ չի կարող օգնել իր հորն ու մորը: ¹³ Ահա այսպիսով դուք անարգում եք Աստծու պատվիրանը ձեր սովորեցրած ավանդույթով: Եվ սրա նման շատ բաներ էլ կան, որ դուք անում եք:

Ի՞նչն է մարդուն ապականում

^{7.4} «Նույնպես, երբ շուկայից տուն են գալիս, նախ լվացվում են և ապա ուտում» կամ «նույնպես, շուկայից բերած որևէ բան չեն ուտում, մինչև նախապես այն չլվանան»: Մի շարք ձեռ. չունեն «և մահճակալների»:

^{7.6-7} Ես 29.13 (LXX):

^{7.8} «Մարդկանց ավանդույթն եք պահում». մի շարք ձեռ. ավելացնում են «կժերն ու բաժակները լվանում եք և սրանց նման ուրիշ բաներ եք անում»:

^{7.10} ա Ելք 20.12, Բ Օր 5.16: բ Ելք 21.17, Ղև 20.9:

^{7.11} «Կորբան». տե՛ս Մտ 15.6-ի ծնթ:

^{8.11} Մտ 12.38, Ղկ 11.16:

^{8.12} Մտ 12.39, Ղկ 11.29:

(Մտ 15.10-20)

¹⁴ Հետո Հիսուսն իր մոտ կանչեց ամբողջ ժողովրդին և ասաց նրանց.

-Բոլորդ էլ լսեցէ՛ք ինձ և լա՛վ իմացեք. ¹⁵ որևէ բան, որ դրսից մտնում է մարդու մեջ՝ չի կարող պղծել նրան, այլ ինչ որ դուրս է ելնում մարդուց, ա՛յն է պղծում է մարդուն:՝
¹⁶ Ով որ ականջ ունի լսելու, թող լսի:՝

¹⁷ Երբ նա ժողովրդից բաժանվեց և տուն մտավ, աշակերտները նրան հարցրին, թե ի՛նչ էր ուզում ասել իր այդ հանելուկային խոսքով: ¹⁸ Հիսուսն ասաց նրանց.

-Դո՛ւք էլ այդպես անմիտ եք: Չե՛ք իմանում, թե ինչ որ դրսից մարդու մեջ է մտնում, չի կարող նրան պղծել,՝ ¹⁹ որովհետև ոչ թե նրա սիրտն է մտնում, այլ նրա ստամոքսը և ապա դուրս ելնում՝ մաքրելով բոլոր կերածները:՝

²⁰ Եվ նա շարունակեց.

-Ընդհակառակը, ինչ որ մարդուց դուրս է ելնում, ա՛յն է պղծում մարդուն, ²¹ որովհետև մարդու ներսից, այսինքն՝ սրտից են ելնում չար մտածումները՝ շնություն, պոռնկություն, ²² գողություն, սպանություն, ագահություն, չարություն, նենգություն, զիջություն, չար նախանձ, հայհոյություն, ամբարտավանություն, անզգամություն:

²³ Այս բոլոր չար բաներն են, որ մարդու ներսից ելնելով՝ պղծում են նրան:

Փյունիկեցի կնոջ հավատը

(Մտ 15.21-28)

²⁴ Ապա ելնելով այնտեղից՝ եկավ Տյուրոսի և Սիդոնի սահմանները: Մի տուն մտավ և չուզեց, որ որևէ մեկն իմանա իր այնտեղ լինելը, բայց չկարողացավ ծածուկ պահել:

²⁵ Մի կին, որի աղջիկը տառապում էր չար ոգուց, լսելով նրա մասին, եկավ ընկավ Հիսուսի ոտքերը: ²⁶ Այս կինը, որ մի հեթանոս էր, Սիրիական Փյունիկեից, աղաչում էր Հիսուսին, որ չար ոգին դուրս հանի իր աղջկա միջից:

²⁷ Բայց Հիսուսն ասաց նրան.

-Թո՛ւյլ տուր, որ նախ մանուկները կշտանան, որովհետև ճիշտ չէ մանուկների ձեռքից հացն առնել և շների առաջ գցել:

²⁸ Իսկ կինը պատասխանեց.

-Տե՛ր, շները նույնիսկ սեղանի տակ մանուկների թափած փշրանքներից են կերակրվում:՝

²⁹ Հիսուսն ասաց նրան.

-Այդ խոսքիդ համար գնա՛, չար ոգին դուրս ելած է քո աղջկա միջից:՝ ³⁰ Կինը տուն գնաց և աղջկան գտավ անկողնում պառկած՝ չար ոգին նրանից դուրս ելած:

Հիսուսը բժշկում է մի խուլ ու համր մարդու

8.15 Ղկ 12.1:

7.16 Շատ ձեռ. չունեն այս հմր:

8.18 Եր 5.21, Եզկ 12.2, Մր 4.12:

7.19 «Մաքրելով բոլոր կերածները». մի շարք ձեռ. ունեն «ուստի բոլոր կերակուրներն էլ մաքուր են»:

8.28 Մր 6.14-15, Ղկ 9.7-8:

8.29 Հհ 6.68-69:

³¹ Հիսուսը, Տյուրոսի սահմաններից մեկնելով, Սիդոնի վրայով անցավ Դեկապոլիսի սահմաններից և եկավ Գալիլեայի լճի եզերքը: ³² Եվ ահա նրա մոտ բերեցին խուլ ու համր մի մարդու՝ խնդրելով, որ իր ձեռքը դնի նրա վրա: ³³ Հիսուսն ամբոխից հեռու՝ մի կողմ տարավ նրան, մատները դրեց նրա ականջների մեջ, հետո թքեց և դիպավ նրա լեզվին: ³⁴ Ապա երկինք նայեց, հառաչեց և ասաց.

-Եփփաթա՛, որ նշանակում է՝ «Բացվի՛ր»:

³⁵ Նույն պահին բացվեցին նրա ականջները. լեզուն էլ բացվելով՝ նա սկսեց կանոնավոր կերպով խոսել: ³⁶ Հետո Հիսուսը պատվիրեց ժողովրդին, որ ոչ ոքի չասեն: Սակայն ինչքան էլ նա պատվիրում էր, որ չտարածեն, նրանք առավել ևս պատմում էին այս մասին: ³⁷ Մարդիկ ծայրաստիճան զարմանում էին և ասում.

-Այս մարդն ամեն ինչ լավ է անում, նույնիսկ խուլերին լսել է տալիս և համրերին՝ խոսել:

8

Չորս հազարի կերակրումը

(Մտ 15.32-39)

¹ Այդ օրերին դարձյալ մեծ բազմություն հավաքվեց, և ուտելու ոչինչ չունեին: Հիսուսը կանչեց իր աշակերտներին և ասաց նրանց.

² -Խղճում եմ այս ժողովրդին, որովհետև ահա երեք օր է, որ ինձ մոտ են և ոչինչ չունեն ուտելու: ³ Եթե նրանց քաղցած ուղարկեմ իրենց տները, ճանապարհին կարող են ուշագնաց լինել, որովհետև նրանցից ոմանք հեռու տեղերից են եկել:

⁴ Աշակերտները պատասխանեցին.

-Այս ամառի վայրում որտեղի՞ց կարող ես գտնել այնչափ հաց, որ կշտացնես նրանց:

⁵ Հիսուսը հարցրեց.

-Քանի՞ հաց ունեք:

-Յոթ,- պատասխանեցին նրանք: ⁶ Հիսուսը հրամայեց ժողովրդին, որ նստեն գետնին:

Ապա վերցրեց յոթ հացը, շնորհակալություն հայտնեց Աստծուն, կտրեց և տվեց իր աշակերտներին, որ բաժանեն ժողովրդին: Մրանք էլ դրեցին ժողովրդի առաջ: ⁷ Մի քանի մանր ձկներ էլ ունեին: Հիսուսը դրանք ևս օրհնեց և հրամայեց, որ տան նրանց:

⁸ Բոլորն էլ կերան ու կշտացան, և աշակերտները, ավելացած կտորտանքները հավաքելով, յոթ զամբյուղ լցրեցին: ⁹ Իսկ ուտողները շուրջ չորս հազար հոգի էին:

Ապա Հիսուսն արձակեց ժողովրդին, ¹⁰ իսկ ինքն աշակերտների հետ իսկույն նավակ մտավ և եկավ Դալմանունայի կողմերը:

Փարիսեցիները նշան են ուզում

(Մտ 12.38-39, 16.1-4, Ղկ 11.29-32)

¹¹ Փարիսեցիները եկան և սկսեցին վիճել Հիսուսի հետ: Հիսուսին փորձելու համար

^{7.31} «Դեկապոլիս». տե՛ս Մտ 4.25-ի ծնթ:

^{8.10} «Դալմանունա». հուն. «Դալմանություն», որի տեղն անհայտ է:

նրանք մի նշան էին ուզում նրանից՝ հաստատելու համար Աստծուց նրա վկայված լինելը: ¹² Հիսուսը խորը հառաչեց և ասաց.

-Այս սերնդի մարդիկ ինչո՞ւ են նշան ուզում. լա՛վ իմացեք, որ ձեզ նշան չի տրվելու:

¹³ Ապա թողեց նրանց և նորից նավակ նստելով՝ գնաց լճի դիմացի կողմը:

Փարիսեցիների և Հերովդեսի կողմնակիցների խմորը

(Մտ 16.5-12, Ղկ 12.1)

¹⁴ Աշակերտները, սակայն, մոռացել էին հաց վերցնել և նավակում միայն մեկ հաց ունեին իրենց հետ: ¹⁵ Հիսուսը պատվիրեց նրանց.

-Զգուշացե՛ք փարիսեցիների և Հերովդեսի կողմնակիցների խմորից:՝

¹⁶ Աշակերտներն իրենց մեջ խորհում էին և ասում. «Նա այսպես է ասում, որովհետև հաց չունենք»: ¹⁷ Հիսուսն իմացավ նրանց միտքն ու ասաց.

-Թերահավատներ՝, դուք ինչո՞ւ եք ձեր մեջ խորհում, թե հաց չունեք: Դեռ չե՞ք հասկանում և չե՞ք ըմբռնում: Ի՞նչ է, ապշույթո՞ւն է բռնել ձեր մտքերը: ¹⁸ Աչք ունեք և չե՞ք տեսնում, ականջ ունեք և չե՞ք լսում ու դեռ չե՞ք հասկանում: Չե՞ք հիշում,՝ ¹⁹ թե ինչպե՛ս հինգ հացով հինգ հազար հոգի կերակրվեցին, իսկ կտորտանքները քանի՞ սակառի մեջ հավաքեցիք:

Նրանք պատասխանեցին.

-Տասներկու:

²⁰ Եվ երբ յոթ հացով չորս հազար հոգի կերակրվեցին, քանի՞ զամբյուղի մեջ հավաքեցիք կտորտանքները:

-Յոթ,- պատասխանեցին:

²¹ Եվ Հիսուսն ասաց.

-Ու դեռ չե՞ք հասկանում:

Հիսուսը բժշկում է մի կույրի

²² Ապա եկան Բեթսայիդա: Այնտեղ Հիսուսի մոտ բերեցին մի կույրի և աղաչում էին, որ դիպչի նրան: ²³ Հիսուսը, կույրի ձեռքը բռնելով, գյուղից դուրս հանեց նրան, թքով թրջեց նրա աչքերը, ապա ձեռքով դիպավ նրա աչքերին և հարցրեց.

-Մի բան տեսնո՞ւմ ես:

²⁴ Նա բացեց աչքերը և ասաց.

-Տեսնում եմ մարդկանց, որոնք կարծես ծառեր լինեն, բայց քայլում են:

²⁵ Հիսուսը դարձյալ ձեռքերը դրեց նրա աչքերի վրա: Կույրը աչքերը բացեց, նայեց և տեսողությունը վերագտնելով՝ ամեն ինչ հստակ տեսնում էր: ²⁶ Հիսուսը նրան տուն ուղարկեց և ասաց.

-Գյուղ մի՛ մտիր, այլ գնա՛ քո տուն: Իսկ երբ գյուղ գնաս, այնտեղ ոչ ոքի բան չասես:՝

՝8.15 «Հերովդեսի կողմնակիցների». շատ ձեռ. ունեն «Հերովդեսի»:

՝8.17 «Թերահավատներ՝, դուք ինչո՞ւ եք ձեր մեջ խորհում». շատ ձեռ. ունեն «Ինչո՞ւ եք խորհում»:

՝8.18 Հուն. չունի «Դեռ չե՞ք հասկանում» (տե՛ս Մտ 16.9):

՝8.26 «Իսկ երբ գյուղ գնաս, այնտեղ ոչ ոքի բան չասես». հուն. ունի «Գյուղ մի՛ մտիր և այնտեղ ոչ ոքի բան մի՛ ասա»:

Պետրոսի հայտարարությունը Հիսուսի մասին

(Մտ 16.13-20, Ղկ 9.18-21)

²⁷ Ապա Հիսուսն իր աշակերտների հետ գնաց Փիլիպպոսի կառուցած Կեսարիայի գյուղերը: Ճանապարհին հարցրեց նրանց.

-Մարդիկ ի՞նչ են ասում իմ մասին, ո՞վ եմ ես:

²⁸ Նրանք պատասխանեցին.

-Ոմանք ասում են, թե Հովհաննես Մկրտիչն ես, ոմանք՝ Եղիա մարգարեն, իսկ ուրիշները՝ մարգարեներից մեկը:

²⁹ Հիսուսը հարցրեց նրանց.

-Իսկ դո՞ւք ինչ եք ասում իմ մասին, ո՞վ եմ ես:

Պետրոսը պատասխանեց.

-Դու Քրիստոսն ես, Օծյալը:

³⁰ Հիսուսը խստիվ պատվիրեց նրանց, որ ոչ ոքի բան չասեն այդ մասին:

Հիսուսը խոսում է իր չարչարանքների, մահվան և հարության մասին

(Մտ 16.21-23, Ղկ 9.22)

³¹ Ապա Հիսուսն սկսեց ուսուցանել իր աշակերտներին և ասաց.

-Մարդու Որդին շատ պիտի չարչարվի և մերժվի երեցներից, ավագ քահանաներից և Օրենքի ուսուցիչներից, պիտի սպանվի, բայց երրորդ օրը հարություն պիտի առնի:

³² Հիսուսն այս բաները բացահայտ կերպով հայտնեց իր աշակերտներին: Այդ ժամանակ Պետրոսը մի կողմ տարավ նրան և սկսեց հանդիմանել: ³³ Իսկ Հիսուսը դարձավ և աշակերտներին տեսնելով՝ հանդիմանեց Պետրոսին ու ասաց.

-Հետևե՛ր գնա, Սատանա՛, որովհետև դու Աստծու ծրագրի համաձայն չես մտածում, այլ մարդկանց մտահոգությունն ես արտահայտում:

Հիսուսին հետևելու պայմանները

(Մտ 16.24-28, Ղկ 9.23-27)

³⁴ Ապա իր մոտ կանչեց ժողովրդին, իր աշակերտների հետ միասին, և ասաց նրանց.

-Եթե մեկն ուզում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ հետևից, ³⁵ որովհետև ով որ ուզենա փրկել իր կյանքը, պիտի կորցնի այն, և ով որ կորցնի իր կյանքն ինձ համար և Ավետարանի համար՝ պիտի փրկվի այն: ³⁶ Ի՞նչ օգուտ, եթե մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կյանքը կորցնի. ³⁷ որովհետև իր կյանքի փոխարեն նա ի՞նչ փրկագին կարող է տալ: ³⁸ Ով որ ինձ կամ իմ խոսքերն ընդունելը ամոթ համարի, Աստծուն անհավատարիմ և մեղավոր այս սերնդի մեջ, Մարդու Որդին էլ ամոթ պիտի համարի նրան ընդունելը, երբ գա իր Հոր փառքով՝ սուրբ հրեշտակների հետ:

՝8.27 «Փիլիպպոսի կառուցած Կեսարիա» քաղաքը գտնվում է Պաղեստինի հյուսիսային սահմանների մոտակայքում, Հորդանան գետի ակունքների մոտ: Այն կառուցվել է Մեծն Հերովդեսի որդի Փիլիպպոս-Հերովդեսի կողմից: Այժմ կոչվում է Պանիաս:

¹ Եվ Հիսուսն ավելացրեց.

-Վստա՛հ եղեք, որ այստեղ գտնվողներից ոմանք չպիտի մեռնեն, մինչև որ չտեսնեն Աստծու թագավորությունը, որ գալու է զորությամբ՝

Այլակերպություն

(Մտ 17.1-13, Ղկ 9.28-36)

² Վեց օր հետո Հիսուսն իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին և նրանց հանեց մի բարձր լեռ, որտեղ նրանք առանձին էին: Այնտեղ նա այլակերպվեց նրանց առջև: ³ Նրա զգեստները դարձան փայլուն, ձյան պես սպիտակ, այնքան, որ աշխարհի վրա ոչ մի լվացարար չէր կարող այդպես սպիտակ դարձնել: ⁴ Եվ նրանց երևաց Եղիան՝ Մովսեսի հետ միասին, ու նրանք խոսում էին Հիսուսի հետ: ⁵ Պետրոսն ասաց Հիսուսին.

-Վարդապե՛տ, լավ է, որ մենք այստեղ մնանք, երեք վրաններ շինենք, մեկը՝ քեզ, մեկը՝ Մովսեսի և մյուսը՝ Եղիայի համար:

⁶ Նրանք այնքան էին վախեցել, որ Պետրոսը չզիտեր, թե ի՛նչ է ասում: ⁷ Մի ամպ ծածկեց նրանց, և ամպի միջից լավեց մի ձայն, որ ասում էր.

-Սա՛ է իմ սիրելի Որդին, նրա՛ն լսեցեք՝

⁸ Նրանք հանկարծ իրենց չորս կողմը նայեցին, բայց Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան իրենց հետ: ⁹ Եվ մինչ լեռից ցած էին իջնում, Հիսուսը պատվիրեց նրանց, որ իրենց տեսածի մասին ոչ ոքի բան չասեն, մինչև որ Մարդու Որդին մեռելներից հարություն չառնի: ¹⁰ Նրանք Հիսուսի այս պատվերը պահեցին իրենց մտքում, բայց միմյանց հարց էին տալիս, թե ի՛նչ է նշանակում «մեռելներից հարություն առնել»: ¹¹ Եվ հարցրին Հիսուսին.

-Ինչո՞ւ են Օրենքի ուսուցիչներն ասում, թե նախ Եղիան պիտի գա՝

¹² Նա պատասխանեց.

-Ճիշտ է, որ նախ Եղիան կգա, ամեն ինչ կարգի կդնի: Բայց և այնպես՝ Սուրբ գրքերն ինչո՞ւ են ասում, թե Մարդու Որդին պիտի շատ չարչարվի և անարգվի: ¹³ Իսկ ես ասում եմ ձեզ, որ Եղիան արդեն իսկ եկել է, և մարդիկ նրա հետ վարվեցին իրենց ուզածի պես, ինչպես որ Սուրբ գրքերում գրված է նրա մասին:

Հիսուսը բժշկում է չար ոգի ունեցող մի տղայի

(Մտ 17.14-21, Ղկ 9.37-43)

Պ.1 «Եվ Հիսուսն ավելացրեց». գրք. և աշխարհաբար թարգմանությունների մեջ այս հմր 8-րդ գլխի 39-րդ հմր է, հետևաբար այս գլխի բոլոր համարները մեկական թվով հետ են մնում հուն. բնագրից: Մենք հետևում ենք հուն. թվագրումին: «Չպիտի մեռնեն, մինչև որ չտեսնեն...». տե՛ս Մտ 16.28-ի ծնթ:

Պ.2-7 Բ Պտ 1.17-18:

Պ.3 Հուն. չունի «ձյան պես սպիտակ» բառերը:

Պ.7 Մտ 3.17, Սր 1.11, Ղկ 3.22:

Պ.11 Մղ 4.5, Մտ 11.14:

Պ.12 Սր 48.10:

¹⁴ Երբ նրանք մյուս աշակերտների մոտ եկան, տեսան, որ մի մեծ բազմություն է հավաքվել նրանց շուրջը, և Օրենքի ուսուցիչները վիճում են նրանց հետ: ¹⁵ Ամբողջ ժողովուրդը, հազիվ նրան տեսած, զարմացավ և վազեց նրա մոտ՝ ողջունելու նրան:

¹⁶ Հիսուսը հարցրեց իր աշակերտներին.

- Ինչի՞ մասին էիք վիճում նրանց հետ:

¹⁷ Ժողովրդի միջից մեկն ասաց Հիսուսին.

- Վարդապետ, քեզ մոտ եմ բերել որդուս, որը մի չար ոգու պատճառով համր է դարձել: ¹⁸ Չար ոգին, ուր որ պատահի, գետին է զարկում նրան, որդուս բերանը փրփրում է, նա կրճտացնում է ատամները և ապա պրկվում: Աշակերտներիդ ասացի, որ հանեն չար ոգին, բայց չկարողացան:

¹⁹ Հիսուսը նրանց պատասխանեց.

- Ո՞վ անհավատ սերունդ, մինչև ե՞րբ պիտի լինեմ ձեզ հետ, մինչև ե՞րբ պիտի հանդուրժեմ ձեզ. այստե՞ղ բերեք նրան.

²⁰ Եվ նրան բերեցին: Չար ոգին, հազիվ Հիսուսին տեսած, ցնցեց տղային, որը գետին ընկավ և սկսեց թավալվել՝ բերանը փրփուրով լցված: ²¹ Հիսուսը հարցրեց նրա հորը.

- Երբվանի՞ց է այս բանը պատահում նրան:

- Մանկությունից,- պատասխանեց հայրը: ²² Չար ոգին շատ անգամ նրան կրակի և ջրի մեջ է նետում, որ սպանի: Արդ, եթե կարող ես մի բան անել, Տե՛ր, խղճա՛ և օգնի՛ր մեզ:

²³ Հիսուսն ասաց.

- Դու ասացիր՝ «Եթե կարող ես»: Ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է:

²⁴ Տղայի հայրն անմիջապես գոչեց.

- Հավատում եմ. օգնի՛ր, որ հավատս զորանա:

²⁵ Եվ Հիսուսը տեսավ, որ ժողովուրդը չորս կողմից իրար վրա է հավաքվում, աստեղ չար ոգուն՝ ասելով.

- Հա՛մր և խո՛ւլ ոգի, հրամայում եմ, որ դուրս ելնես տղայի միջից և մեկ էլ չմտնես նրա մեջ:

²⁶ Չար ոգին աղաղակելով գետին զարկեց տղային և դուրս ելավ նրանից: Տղան մեռելի պես եղավ, այնպես որ շատերն ասացին, թե մեռավ: ²⁷ Հիսուսը բռնեց նրա ձեռքից, վեր բարձրացրեց նրան, և տղան ոտքի կանգնեց:

²⁸ Երբ Հիսուսը տուն մտավ, աշակերտներն առանձին հարցրին նրան.

- Մենք ինչո՞ւ չկարողացանք հանել չար ոգին: ²⁹ Հիսուսը պատասխանեց.

- Այդ տեսակ չար ոգին միայն աղոթքով և ծոմապահությամբ կարելի է դուրս հանել:

Հիսուսը դարձյալ խոսում է իր մահվան և հարության մասին

(Մտ 17.22-23, Ղկ 9.43-45)

³⁰ Նրանք այդտեղից մեկնեցին և անցան Գալիլեայի միջով: Հիսուսը չէր ուզում, որ որևէ մեկն իմանա, ³¹ որովհետև իր աշակերտներին սովորեցնում էր՝ ասելով.

-Մարդու Որդին մարդկանց ձեռքն է մատնվելու, նրանք պիտի սպանեն նրան, բայց սպանությունից երեք օր հետո նա հարություն պիտի առնի:

³²Նրանք չէին հասկանում այս խոսքի իմաստը և վախենում էին նրան հարցնելուց:

Ո՞վ է մեծը

(Մտ 18.1-5, Ղկ 9.46-48)

³³Եկան Կափառնայում: Երբ տուն մտան, Հիսուսը հարցրեց իր աշակերտներին.

-Ինչի՞ մասին էիք վիճում ճանապարհին:

³⁴Նրանք լուռ մնացին, որովհետև ճանապարհին իրար հետ վիճում էին, թե ո՞վ է մեծը: ³⁵Երբ նստեց, կանչեց տասներկու աշակերտներին և ասաց նրանց.

-Եթե մեկն ուզում է առաջինը լինել, թող բոլորի վերջինը լինի և բոլորի սպասավորը:

³⁶Ապա վերցրեց մի փոքրիկ երեխայի, կանգնեցրեց նրանց մեջտեղը և նրան գիրկն առնելով՝ ասաց.

³⁷-Ով որ այսպիսի մի երեխա ընդունի իմ անունով, ի՛նչ ընդունած կլինի, և ով որ ինձ ընդունի, ընդունած կլինի ոչ թե ինձ, այլ ինձ ուղարկողին:

Ով մեզ հակառակ չէ, մեր կողմն է

(Ղկ 9.49-50)

³⁸Հովհաննեսն ասաց նրան.

-Վարդապե՛տ, տեսանք մեկին, որը քո անունով չար ոգիներ էր հանում, արգելեցինք նրան, որովհետև նա մեզ հետ չի շրջում:

³⁹Հիսուսն ասաց.

-Արգելք մի՛ եղեք նրան, որովհետև որևէ մեկը չի կարող իմ անունով հրաշք գործել և անմիջապես հետո իմ դեմ խոսել.՝ ⁴⁰քանզի ով մեզ հակառակ չէ, նշանակում է՝ նա մեր կողմն է:՝ ⁴¹Ով որ ձեզ մի բաժակ ջուր տա նրա համար, որ դուք Քրիստոսին եք պատկանում, վստա՛հ եղեք, նա իր վարձը չի կորցնի:

Գայթակղության հարց

(Մտ 18.6-9, Ղկ 17.1-2)

⁴²-Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, ավելի լավ կլիներ, որ գայթակղեցնողի վզից մի մեծ երկանաքար կախվեր, և նա ծովը գցվեր:

⁴³Եթե քեզ գայթակղեցնում է քո ձեռքը, կտրի՛ր այն, որովհետև ավելի լավ է խեղանդամ մտնել հավիտենական կյանք, քան թե երկու ձեռք ունենալ և ընկնել

^{9.33} «Կափառնայում», «տուն մտան». տե՛ս Մտ 4.13-ի ծնթ:

^{9.34} Ղկ 22.24:

^{9.35} Մտ 20.26-27, 23.11, Մր 10.43-44, Ղկ 22.26:

^{9.37} Մտ 10.40, Ղկ 10.16, Հհ 13.20:

^{9.39} Մի շարք ձեռ. չունեն «անմիջապես հետո» բառերը:

^{9.40} Մտ 12.30, Ղկ 11.23:

^{9.41} Մտ 10.42:

^{9.42} «Մեծ երկանաքար». բոց՝ «էջի երկանաքար», այսինքն՝ մի էջի պտտեցրած մեծ երկանաքարը:

դժոխքի անշեջ կրակի մեջ։⁴⁵ Եթե քո ոտքն է գայթակղեցնում քեզ, կտրի՛ր այն, ավելի լավ է կադ ոտքով մտնել հավիտենական կյանք, քան թե երկու ոտք ունենալ և ընկնել դժոխք։⁴⁷ Եթե քո աչքն է գայթակղեցնում քեզ, հանի՛ր այն, ավելի լավ է միակնանի մտնել Աստծու արքայությունը, քան թե երկու աչք ունենալ և ընկնել դժոխք։⁴⁸ որտեղ «դրանք կրծող որդը չի մեռնում, և կրակը չի հանգչում»։⁴⁹ որովհետև ամեն մարդ կրակով պիտի մաքրվի, ինչպես ամեն զոհ՝ աղով։⁵⁰ Աղը լավ բան է, բայց եթե իր համը կորցնի, ինչո՞վ պիտի աղեն այն։ Արդ, ա՛ղ ունեցեք ձեր մեջ և իրար հետ խաղաղությա՛յն մը ապրեցեք։

10

Հիսուսը խոսում է ամուսնալուծության դեմ

(Մտ 5.31-32, 19.1-9, Ղկ 16.18)

¹ Հիսուսը, այնտեղից ելնելով, եկավ Հրեաստանի սահմանները, Հորդանան գետի հանդիպակաց կողմը. ժողովուրդը դարձյալ խոնավեց նրա շուրջը, և նա իր սովորության համաձայն, նորից ուսուցանում էր նրանց։

² Փարիսեցիները Հիսուսին փորձելու մտադրությամբ մոտեցան նրան և հարցրին.

-Մեր Օրենքի համաձայն՝ մեկն իրավունք ունի՞ արձակելու իր կնոջը:

³ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Մովսեսն ի՞նչ օրենք սահմանեց ձեզ համար:

⁴ Նրանք պատասխանեցին.

-Մովսեսը մեզ թույլատրեց բաժանման թուղթ տալ կնոջը և արձակել նրան։

⁵ Հիսուսն ասաց նրանց.

-Մովսեսը ձեր խստասրտության պատճառով սահմանեց այդ օրենքը։⁶ Մակայն սկզբից, արարածների արարչագործության ժամանակ, Աստված «արու և էգ ստեղծեց մարդկանց» և նրանց ասաց.⁷ «Դրա համար տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և միանա իր կնոջը.⁸ և երկուսը մեկ մարմին պիտի լինեն»: Հետևաբար, այլևս երկու

^{9.43} «Դժոխքի անշեջ կրակի մեջ». մի շարք ձեռ. ավելացնում են 44-րդ մի հմր. «Որտեղ դրանք կրծող որդը չի մեռնում, և կրակը չի հանգչում»:

^{9.43} Մտ 3.30:

^{9.45} «Ընկնել դժոխք». մի շարք ձեռ. ավելացնում են «անշեջ կրակի մեջ (46), որտեղ դրանք կրծող որդը չի մեռնում, և կրակը չի հանգչում»:

^{9.47} Մտ 5.29:

^{9.48} Ես 66.24:

^{9.49} «Կրակով պիտի մաքրվի». բոց՝ «կրակով պիտի աղվի»: Շատ ձեռ. չունեն «Ինչպես ամեն զոհ՝ աղով»: Այս կյանքում քրիստոնյայի կրած նեղություններն ու հալածանքներն այն կրակն են, որ նրան մաքրում են կամ «աղում»՝ Աստծուն ընծայված զոհի նման:

^{9.50} Մտ 5.13, Ղկ 14.34-35:

^{10.1} «Հորդանան գետի հանդիպակաց կողմը». ակնարկվում է Պերեա նահանգը, որ ենթակա էր Հերովդես Անտիպասի իշխանությանը:

^{10.4} Բ Օր 24.1-4, Մտ 5.31:

^{10.6} Ծն 1.27, 5.2:

^{10.7} Հուն. շատ ձեռ. չունեն «և միանա իր կնոջը»:

չեն, այլ մեկ մարմին: ⁹ Արդ, որևէ մեկը թող չբաժանի նրանց, որոնց Աստված միացրեց:
¹⁰ Աշակերտները տան մեջ նույն նյութի շուրջ դարձյալ հարց տվեցին Հիսուսին: ¹¹ Նա պատասխանեց.

-Ով որ իր կնոջն արձակի և մեկ ուրիշին առնի, շնություն արած կլինի առաջինի դեմ: ¹² Կինն էլ, եթե իր ամուսնուց արձակվելուց հետո մեկ ուրիշի հետ ամուսնանա, կշնանա:

Հիսուսն օրհնում է մանուկներին

(Մտ 19.13-15, Ղկ 18.15-17)

¹³ Ժողովրդից ոմանք մանուկներ բերեցին Հիսուսի մոտ, որպեսզի ձեռքը դնի նրանց վրա, բայց աշակերտները սաստեցին բերողներին: ¹⁴ Երբ Հիսուսն այս տեսավ, բարկացավ և սաստեց աշակերտներին՝ ասելով.

-Թողե՛ք, որ մանուկներն ինձ մոտ գան, արգելք մի՛ եղեք նրանց, որովհետև այդպիսիներինն է Աստծու արքայությունը: ¹⁵ Լա՛վ իմացեք, ով Աստծու արքայությունը չընդունի մանկան պես, չի մտնի այնտեղ:՝

¹⁶ Ապա իր գիրկն առավ նրանց և ձեռքը նրանց վրա դնելով՝ օրհնեց նրանց:

Մեծահարուստ մարդը

(Մտ 19.16-30, 20.16, Ղկ 13.30, 18.18-30)

¹⁷ Հիսուսը հազիվ էր այնտեղից ճանապարհ ընկել, երբ ահա մի մեծահարուստ մարդ վազելով եկավ նրա մոտ, ծնկի իջավ և հարցրեց.

-Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ հավիտենական կյանքը ժառանգելու համար:

¹⁸ Հիսուսն ասաց նրան.

-Ինչո՞ւ ինձ բարի ես կոչում: Միայն Աստվա՛ծ է բարի:

¹⁹ Պատվիրանները գիտես. «Մի՛ շնանա, մի՛ սպանի՛ր, մի՛ գողանա, սուտ վկայություն մի՛ տուր, ուրիշի իրավունքը մի՛ հափշտակիր, պատվի՛ր քո հորն ու մորը»:՝

²⁰ Նա պատասխանեց.

-Վարդապե՛տ, այդ բոլորը ես պահել եմ իմ պատանեկությունից ի վեր, հետևաբար էլ ի՞նչ է պակասում ինձ:՝

^{10.7-8} Ծն 2.24:

^{10.11} Գրք. չունի «առաջինի դեմ»:

^{10.11-12} Մտ 5.32, Ա Կր 7.10-11:

^{10.15} Մտ 18.3:

^{10.19} «Մուտ վկայություն մի՛ տուր». շատ ձեռ. ավելացնում են «մի՛ գրկիր» կամ «ուրիշի իրավունքը մի՛ հափշտակիր»: Այս պատվիրանը չկա տասը պատվիրանների մեջ, սակայն տե՛ս Ղկ 19.13, որը տասը պատվիրանների ընդարձակումն է:

^{10.19} ա Ելք 20.13, Բ Օր 5.17: բ Ելք 20.14, Բ Օր 5.18: գ Ելք 20.15, Բ Օր 5.19: դ Ելք 20.16, Բ Օր 5.20: ե Ելք 20.12, Բ Օր 5.16:

^{10.20} Շատ ձեռ. չունեն «հետևաբար էլ ի՞նչ է պակասում ինձ»:

²¹ Հիսուսն իր աչքերը սիրով հառեց նրան և ասաց.

-Մեկ բան էլ տակավին պետք է անես: Եթե ուզում ես կատարյալ լինել, գնա՛, վաճառի՛ր, ինչ որ ունես և տո՛ւր աղքատներին. այդպիսով երկնքում պիտի գանձ ունենաս. ապա վերցրո՛ւ խաչդ և հետևի՛ր ինձ:՝

²² Երիտասարդը երբ այդ լսեց, խոժոռովեց և տխուր-տրտում գնաց, որովհետև շատ հարուստ էր: ²³ Հիսուսը, չորս կողմը նայելով, ասաց աշակերտներին.

-Որքա՛ն դժվար է հարստություն ունեցողների համար Աստծու արքայությունը մտնել:

²⁴ Այս խոսքերի վրա աշակերտները զարմացան, բայց Հիսուսը շարունակեց և ասաց.

-Որդյակնե՛ր, որքա՛ն դժվար է հարստության վրա հույս դնողների համար Աստծու արքայությունը մտնել:՝ ²⁵ Շատ ավելի հեշտ է, որ պարանն ասեղի ծակից մտնի, քան հարուստը՝ Աստծու արքայությունը:՝

²⁶ Աշակերտները էլ ավելի զարմացան և միմյանց ասացին.

-Ուրեմն ո՞վ կարող է փրկվել:

²⁷ Հիսուսը նայեց նրանց և ասաց.

-Մարդկանց համար դա անկարելի է, բայց ո՛չ Աստծու համար, որովհետև Աստծու համար ամեն ինչ կարելի է:՝

²⁸ Այն ժամանակ Պետրոսն ասաց Հիսուսին.

-Ահա մեր ամբողջ ունեցվածքը թողեցինք և հետևեցինք քեզ:

²⁹ Հիսուսն ասաց.

-Վստա՛հ եղեք, ով որ թողնի տուն, եղբայրներ, քույրեր, հայր, մայր, զավակներ և ազարակներ՝ ինձ համար կամ Ավետարանի համար, ³⁰ ներկա կյանքում պիտի ունենա հարյուրապատիկ տներ, եղբայրներ, քույրեր, մայրեր, զավակներ և ազարակներ՝ կրելով նաև հալածանքներ և գալիք աշխարհում հավիտենական կյանքը պիտի ժառանգի:՝ ³¹ Շատերը, որ հիմա առաջինն են, պիտի լինեն վերջինը, և շատ վերջիններ՝ առաջինը:՝

Հիսուսը երրորդ անգամ խոսում է իր մահվան և հարության մասին

(Մտ 20.17-19, Ղկ 18.31-34)

³² Հիսուսը և իր աշակերտները ճանապարհ էին ընկել Երուսաղեմ գնալու համար: Հիսուսը գնում էր առաջ անցած. աշակերտները զարմացած էին, իսկ նրանց հետևողներն էլ վախենում էին: Հիսուսը, տասներկու աշակերտներին մի կողմ տանելով, սկսեց նրանց ասել, ինչ որ պատահելու էր իրեն:

³³ -Ահա գնում ենք,- ասաց,- Երուսաղեմ, որտեղ Մարդու Որդին պիտի մատնվի

^{10.21} Շատ ձեռ. չունեն «Եթե ուզում ես կատարյալ լինել»: «Երկնքում պիտի գանձ ունենաս»-ը հավիտենական կյանքն է (հմմտ հմր 30):

^{10.24} Մի շարք ձեռ. չունեն «հարստության վրա հույս դնողների համար»:

^{10.25} «Պարանը» բառի փոխարեն հուն. ունի «ուղտը»:

^{10.27} Գրբ. չունի «որովհետև Աստծու համար ամեն ինչ կարելի է» նախադասությունը:

^{10.30} «Զավակներ». մի շարք ձեռ. ունեն «կին կամ զավակներ»:

^{10.31} Մտ 20.16, Ղկ 13.30:

ավագ քահանաների և Օրենքի ուսուցիչների ձեռքը, որոնք մահվան պիտի դատապարտեն նրան և ապա հանձնեն հեթանոսներին: ³⁴ Սրանք պիտի ծաղրեն նրան, ծեծեն, թքեն նրա վրա և սպանեն, բայց երեք օր հետո նա հարություն պիտի առնի:

Հակոբոսի և Հովհաննեսի խնդրանքը

(Մտ 20.20-28, Ղկ 22.25-27)

³⁵ Ձերեղեռուի որդիները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, մոտենալով Հիսուսին, սկսեցին միասին քայլել և ասացին նրան.

-Վարդապետ, ուզում ենք, որ մեր խնդրանքը կատարես:

³⁶ Հիսուսը հարցրեց.

-Ի՞նչ էք ուզում, որ անեմ ձեզ համար:

³⁷ Նրանք պատասխանեցին.

-Երբ քո թագավորության փառքի գահին նստես, շնորհ արա մեզ, որ մենք նստենք քո աջ և ձախ կողմը:

³⁸ Հիսուսն ասաց նրանց.

-Ձեք իմանում, թե ի՞նչ էք ուզում: Կարո՞ղ էք խմել տառապանքի այն բաժակից, որից ես եմ խմելու, կամ կարո՞ղ էք հանձն առնել այն մկրտությունը, որով ես եմ մկրտվելու:՝

³⁹ -Կարող ենք,- պատասխանեցին նրանք:

Հիսուսն ասաց նրանց.

-Արդարև, դուք կխմեք այն բաժակից, որից ես եմ խմելու, և կմկրտվեք այն մկրտությամբ, որով ես եմ մկրտվելու, ⁴⁰ բայց իմ աջ և ձախ կողմերում նստելու իրավունքը ե՛ս չեմ տալիս, այլ այդ տեղերը տրվելու են նրանց, որոնց համար պատրաստված են:

⁴¹ Երբ մյուս տասը աշակերտները լսեցին այս, սկսեցին բարկանալ Հակոբոսի և Հովհաննեսի վրա: ⁴² Հիսուսն իր մոտ կանչեց նրանց և ասաց.

-Գիտեք, որ ազգերի մեջ իշխանավորներ համարվածները տիրում են իրենց հպատակներին, և ղեկավարներն իշխում են իրենց ժողովուրդների վրա:՝ ⁴³ Բայց ձեր մեջ այդպես չպետք է լինի: Եթե ձեզնից մեկն ուզենա մեծ լինել, ձեր բոլորի սպասավորը պիտի լինի,՝ ⁴⁴ և եթե ձեզնից մեկն ուզենա առաջինը լինել, բոլորի ծառան պետք է լինի, ⁴⁵ որովհետև Մարդու Որդին ինքն էլ չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իր կյանքը տալու որպես փրկագին շատերի համար:

Կույր Բարսիմեոսի բժշկությունը

(Մտ 20.29-34, Ղկ 18.35-43)

^{10.38} «Մկրտություն» բառով Հիսուսը փոխաբերաբար ակնարկում էր իր կրելիք չարչարանքների մասին (հմմտ Ղկ 12.50 և ծնթ):

^{10.38} Ղկ 12.50:

^{10.42-43} Ղկ 22.25-26:

^{10.43-44} Մտ 23.11, Սր 9.35, Ղկ 22.26:

⁴⁶ Եկան Երիքով: Երբ Հիսուսն իր աշակերտների և մի մեծ բազմության հետ դուրս էր գալիս Երիքովից, Տիմեի որդին՝ Բարտիմեոսը, որը մի կույր մուրացկան էր, նստած էր ճանապարհի եզրին:⁴⁷ Երբ լսեց, որ անցնողը Հիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել.

-Դավթի՛ Որդի, Հիսու՛ս, ողորմի՛ր ինձ:

⁴⁸ Շատերը նրան սաստեցին, որ լռի, իսկ նա առավել բարձր ձայնով աղաղակում էր.

-Դավթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ:

⁴⁹ Հիսուսը կանգ առավ և հրամայեց, որ կույրին իր մոտ բերեն: Նրանք կանչեցին կույրին և ասացին.

-Քաջալերվի՛ր, վե՛ր կաց, կանչում է քեզ:

⁵⁰ Նա դեն գցեց իր վերարկուն, ոտքի ցատկեց և եկավ Հիսուսի մոտ:⁵¹ Հիսուսը հարցրեց նրան.

-Ի՞նչ ես ուզում, որ քեզ համար անեմ:

Կույրը պատասխանեց.

-Վարդապե՛տ, ուզում եմ, որ աչքերս բացվեն:

⁵² Հիսուսն ասաց.

-Գնա՛, քո հավատը քեզ բժշկեց:

Իսկույն նրա աչքերը բացվեցին, և ճանապարհին նա գնում էր Հիսուսի հետևից:

11

Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ

(Մտ 21.1-11, Ղկ 19.28-40, Հհ 12.12-19)

¹ Երբ մոտեցան Երուսաղեմին, Բեթփագեին և Բեթանիային, Ձիթենյաց լեռան մոտ, Հիսուսն իր աշակերտներից երկու հոգու ուղարկեց՝² պատվիրելով նրանց.

-Գնացե՛ք այդ դիմացի գյուղը. հենց որ ներս մտնեք, այնտեղ կգտնեք կապված մի ավանակ, որի վրա դեռ ոչ ոք չի նստել: Արձակեցե՛ք այն և բերե՛ք:³ Եթե որևէ մեկը ձեզ հարցնի՝ «Ինչո՞ւ եք արձակում ավանակը», նրան ասացեք. «Տիրոջը պետք է», և նա իսկույն այստեղ կուղարկի այն:

⁴ Երկու աշակերտները գնացին և գտան ավանակը դրսում, փողոցի մեջ, կապված մի տան դռան մոտ, և արձակեցին այն:⁵ Այնտեղ կանգնածներից ոմանք ասացին.

-Այդ ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք արձակում ավանակը:

⁶ Աշակերտները պատասխանեցին այնպես, ինչպես պատվիրել էր Հիսուսը: Ուստի թույլ տվեցին նրանց:⁷ Աշակերտները ավանակը բերեցին Հիսուսի մոտ և դրա վրա գցեցին իրենց վերարկուները: Ապա Հիսուսը նստեց ավանակի վրա:⁸ Շատերն իրենց վերարկուները փռում էին ճանապարհի վրա, իսկ ուրիշները ծառերից ճյուղեր էին կտրում և սփռում ճանապարհին:⁹ Նրանք, որ Հիսուսի առջևից էին գնում կամ հետևում էին նրան, աղաղակում էին.

^{10.46} «Երիքով». տե՛ս Մտ 20.29-ի ծնթ:

^{11.1} «Ձիթենյաց լեռ», «Բեթփագե», «Բեթանիա». տե՛ս Մտ 21.1-ի և 21.17-ի ծնթ:

«Օվսաննա՛ Բարձրյալին,
օրհնյա՛լ լինես դու, որ գալիս ես Տիրոջ անունով.»՝

¹⁰ օրհնյա լ լինի քո թագավորությունը,
մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է
խաղաղությո՜ւն երկնքում և փա՛ռք Բարձրյալին»:

¹¹ Հիսուսը Երուսաղեմ մտավ և գնաց տաճար, որտեղ իր շուրջն ամեն ինչ աչքի անցկացրեց: Եվ որովհետև արդեն երեկո էր, տասներկու աշակերտների հետ գնաց Բեթանիա:

Հիսուսն անիծում է թզենուն

(Մտ 21.18-19)

¹² Հաջորդ օրը, երբ Բեթանիայից դուրս էին գալիս, Հիսուսը քաղց զգաց: ¹³ Հեռվում տերևներով լեցուն մի թզենի տեսնելով՝ գնաց դեպի ծառը՝ հուսալով, որ նրա վրա թուզ կգտնի: Բայց երբ մոտեցավ, տերևներից բացի ոչինչ չգտավ, որովհետև տակավին թզի ժամանակը չէր: ¹⁴ Հիսուսը թզենուն ասաց.

-Այլևս ոչ ոք քեզանից թող բնավ պտուղ չուտի:

Եվ նրա աշակերտները լսեցին այս:

Հիսուսը մաքրագործում է տաճարը

(Մտ 21.12-17, Ղկ 19.45-48, Հհ 2.13-17)

¹⁵ Եկան Երուսաղեմ: Հիսուսը տաճար մտավ և սկսեց դուրս հանել նրանց, որոնք տաճարում առուծախով էին զբաղված: Նա շուռ տվեց լուսայափոխների սեղաններն ու աղավնեվաճառների աթոռները՝ ¹⁶ և թույլ չտվեց, որ որևէ մեկը որևէ բան անցկացնի տաճարի շրջափակի միջով: ¹⁷ Ապա սկսեց ժողովրդին ուսուցանել՝ ասելով.

-Սուրբ գրքերում գրված է. «Իմ տունը բոլոր ժողովուրդների համար աղոթքի տուն պիտի կոչվի», մինչդեռ դուք ավազակների որջի եք վերածել այն»:

¹⁸ Ավագ քահանաներն ու Օրենքի ուսուցիչները լսեցին այս և սկսեցին մի հնար փնտրել, թե ինչպես սպանեն նրան: Նրանք վախենում էին Հիսուսից, որովհետև ամբողջ ժողովուրդը հիանում էր նրա ուսուցումներով:

¹⁹ Երբ երեկո եղավ, Հիսուսը և իր աշակերտները դուրս եկան քաղաքից:

Չորացած թզենու դասը

(Մտ 21.20-22)

²⁰ Առավոտ կանուխ, երբ նույն ճանապարհով էին անցնում, տեսան, որ թզենին արմատից չորացել է: ²¹ Պետրոսը հիշեց պատահածը և ասաց.

^{11.9} «Օվսաննա՛», տե՛ս Մտ 21.9-ի ծնթ: Շատ ձեռ. չունեն «Բարձրյալին» բառը:

^{11.9-10} Մղ 118.25-26:

^{11.10} «Խաղաղությո՜ւն երկնքում և փա՛ռք Բարձրյալին». շատ ձեռ. ունեն «Օվսաննա՛ բարձունքներում»:

^{11.15} «Տաճարում», «լուսայափոխներ», «աղավնեվաճառներ». տե՛ս Մտ 21.12-ի ծնթ:

^{11.17} ա Ես 56.7: բ Եր 7.11:

-Վարդապետ, ահավասիկ թզենին, որին անիծեցիր, չորացել է:

²² Հիսուսն ասաց նրան.

-Հավատ ունեցեք Աստծու հանդեպ: ²³ Վստահ եղեք, ով որ այս լեռանն ասի. «Ե՛լ և ծո՛վն ընկիր», և իր մտքում չտարակուսի, այլ հավատա, թե իր ասածը կլինի, նա ինչ որ ասի, կկատարվի: ²⁴ Դրա համար ասում եմ ձեզ, ինչ որ աղոթք անելո՞ւ վ խնդրեք, հավատացե՛ք, որ կատանաք, և ձեր խնդրածը կտրվի ձեզ: ²⁵ Եվ երբ աղոթեք, եթե մի բան ունեք մեկի հանդեպ, ներեցե՛ք, որպեսզի ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ ների ձեր հանցանքները: ²⁶ որովհետև եթե դուք ուրիշին չներեք, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները:

Հիսուսի իշխանության հարցը

(Մտ 21.23-27, Ղկ 20.1-8, Հհ 2.18-22)

²⁷ Հիսուսը և իր աշակերտները դարձյալ Երուսաղեմ եկան: Մինչ Հիսուսը տաճարում շրջում էր, ավագ քահանաները, Օրենքի ուսուցիչներն ու երեցները մոտեցան նրան ²⁸ և հարցրին.

-Ի՞նչ իշխանությամբ ես անում այս բաները: Ո՞վ տվեց քեզ այդ իշխանությունը:

²⁹ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Լավ, ես ձեզ կասեմ, թե ինչ իշխանությամբ եմ անում այս բաները, եթե դուք էլ պատասխանեք իմ այս հարցին. ³⁰ Հովհաննեսի մկրտելու իշխանությունը Աստծո՞ւց էր տրված նրան, թե՞ մարդկանցից: Պատասխանեցե՛ք տեսնեմ:

³¹ Նրանք սկսեցին իրենք իրենց մեջ խորհել և ասել.

-Եթե ասենք՝ «Աստծուց էր տրված», մեզ կասի՝ հապա ինչո՞ւ չհավատացիք նրան, ³² իսկ «մարդկանցից էր» չենք կարող ասել՝ վախենալով ժողովրդից, որովհետև ամեն մարդ գիտի, որ Հովհաննեսը ճշմարտապես մարգարե է:

³³ Ուստի պատասխանեցին Հիսուսին.

-Չգիտենք:

Հիսուսն էլ, նրանց հարցին պատասխանելով, ասաց.

-Ուրեմն ես էլ ձե՛զ չեմ ասի, թե ի՛նչ իշխանությամբ եմ անում այս բաները:

12

Չար մշակների առակը

(Մտ 21.33-46, Ղկ 20.9-19)

¹ Հիսուսն սկսեց առակներով խոսել ժողովրդի հետ և ասաց.

-Մի մարդ այգի տնկեց, չորս կողմից ցանկապատեց այն, հնձանի համար փոս փորեց, մի աշտարակ էլ շինեց և այն վարձու տվեց մշակների, իսկ ինքը գնաց ուրիշ

^{11.22} «Հավատ ունեցեք Աստծու հանդեպ». շատ ձեռ. ունեն «Եթե Աստծու հանդեպ հավատ ունենաք»:

^{11.23} Մտ 17.20, Ա Կր 13.2:

^{11.25-26} Մտ 6.14-15:

^{11.26} Շատ ձեռ. չունեն այս հմբ:

երկիր:՝ ² Այգեկուրթի ժամանակ մշակների մոտ մի ծառայի ուղարկեց, որպեսզի այգու բերքից իր բաժինն առնի մշակներից: ³ Մշակները ծառային բռնեցին, ծեծեցին և ձեռնունայն հետ ուղարկեցին: ⁴ Ապա նա մի ուրիշ ծառայի ուղարկեց: Բայց մշակները նրա գլուխը վիրավորեցին և անպատվելով հետ ուղարկեցին: ⁵ Նա մեկ ուրիշին էլ ուղարկեց, և այս անգամ մշակները սպանեցին նրան: Այգու տերն ուրիշ ծառաների էլ ուղարկեց, սակայն մշակները նրանցից ոմանց ծեծեցին և ոմանց էլ սպանեցին:

⁶ Այգու տիրոջ համար միակ անձը, որ մնում էր, իր սիրելի որդին էր: Վերջում նրան ուղարկեց մշակների մոտ՝ մտածելով. «Թերևս իմ որդուն հարգեն»: ⁷ Բայց մշակները երբ տեսան, որ որդին է գալիս, ասացին միմյանց. «Սա է ժառանգը, եկեք սպանենք սրան, որպեսզի ժառանգությունը մեզ մնա»: ⁸ Ապա բռնեցին նրան, սպանեցին և դիակը այգուց դուրս նետեցին: ⁹ Հիմա այգու տերը ի՞նչ կանի մշակներին: Անշուշտ, պիտի գա, սպանի նրանց և այգին տա ուրիշներին: ¹⁰ Արդարև, Սուրբ գրքերում դուք չե՞ք կարդացել.

«Այն քարը, որ շինարարները մերժեցին գործածել,
հետո անկյունաքար եղավ:՝

¹¹ Տերն է, որ կատարեց այս,
և մեր աչքին սքանչելի է»:

¹² Հրեա ղեկավարները, հասկանալով, որ Հիսուսն իրենց համար ասաց առակը, ուզեցին ձեռքակալել նրան, բայց ժողովրդից վախենալով՝ թողեցին գնացին:

Տուրք վճարելու հարցը

(Մտ 22.15-22, Ղկ 20.20-26)

¹³ Ապա նրանք Հիսուսի մոտ ուղարկեցին մի քանի փարիսեցիների և Հերովդեսի կողմնակիցների, որպեսզի իրենց հարցումներով նրան ծուղակը գցեն: ¹⁴ Նրանք նենգամտորեն հարցրին Հիսուսին.

-Վարդապե՛տ, զիտենք, որ դու ճշմարտախոս մարդ ես և բնավ հոգ չես անում, թե ուրիշներն ի՞նչ կասեն, որովհետև աչառություն չես անում, այլ ճշմարտությամբ Աստծու կամքն ես ուսուցանում: Արդ, ասա՛ մեզ, մեր Օրենքի համաձայն՝ պե՞տք է կայսրին տուրք տանք, թե՛ ոչ: Տա՞նք, թե՛ չտանք»:

¹⁵ Հիսուսը հասկացավ նրանց կեղծավորությունը և ասաց.

-Կեղծավորնե՛ր, ինչո՞ւ եք ինձ փորձում: Ինձ մի արծաթ դրամ բերեք, որ տեսնեմ:

¹⁶ Եվ նրանք բերեցին: Ապա հարցրեց.

-Սա ո՞ւմ պատկերն ու արձանագրությունն է:

Նրանք պատասխանեցին.

-Կայսրի՛:

¹⁷ Հիսուսն ասաց նրանց.

^{12.1} Ես 5.1-2:

^{12.10-11} Մղ 118.22-23:

^{12.14} «Նենգամտորեն հարցրին». շատ ձեռ. պարզապես ունեն «ասացին»:

^{12.16} «Պատկերն ու արձանագրությունը». տե՛ս Մտ 22.20-ի ծնթ:

-Գնացե՛ք, ինչ որ կայսրին է պատկանում, կայսրի՛ն տվեք, և ինչ որ Աստծուն է պատկանում, Աստծո՛ւն տվեք:

Եվ բոլորն էլ հիացան նրա վրա:

Հարության հարցը

(Մտ 22.23-33, Ղկ 20.27-40)

¹⁸ Սաղուկեցիներից ոմանք եկան Հիսուսի մոտ: Սաղուկեցիներն ասում են, թե մեռելների հարություն չկա: Նրանք Հիսուսին ասացին.*

¹⁹ -Վարդապե՛տ, Մովսեսը հետևյալ օրենքը գրեց մեզ համար. «Եթե ամուսնացած մեկը մեռնի առանց զավակ թողնելու, թող նրա եղբայրն ամուսնանա նրա այրիացած կնոջ հետ, որպեսզի իր եղբորը զավակ տա»:²⁰ Մի ժամանակ մեզ մոտ յոթ եղբայրներ կային: Առաջինն ամուսնացավ և մեռավ առանց զավակ թողնելու: ²¹ Երկրորդ եղբայրն ամուսնացավ նրա կնոջ հետ, և նա էլ մեռավ առանց զավակ թողնելու: Երրորդն էլ, ²² ու մինչև յոթերորդ եղբայրը նույնպես ամուսնացավ այդ կնոջ հետ և մեռան առանց զավակ թողնելու: ²³ Արդ, մեռելների հարության օրը, երբ նրանք հարություն առնեն, կինը նրանցից ո՞ր մեկին պիտի պատկանի, քանի որ յոթն էլ ամուսնացան նրա հետ:

²⁴ Հիսուսը պատասխանեց.

-Գիտե՞ք, թե դուք ինչո՞ւ եք մոլորված: Մոլորված եք, որովհետև չեք հասկանում ո՛չ Սուրբ գրքերը և ո՛չ էլ Աստծու զորությունը: ²⁵ Երբ մեռելները հարություն առնեն, տղամարդիկ և կանայք չեն ամուսնանա, այլ կլինեն երկնքի հրեշտակներինման: ²⁶ Իսկ մեռելների հարություն առնելու մասին Մովսեսի գրքում չե՞ք կարդացել այրվող մորենու դրվագը: Այնտեղ Աստված ասաց Մովսեսին. «Ես եմ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը»:²⁷ Նշանակում է՝ Աստված մեռելների Աստված չէ, այլ ողջերի: Ուստի դուք չափազանց մոլորված եք:

Կարևորագույն պատվիրանը

(Մտ 22.34-40, Ղկ 10.25-28)

²⁸ Օրենքի ուսուցիչներից մեկը, լսելով նրանց վեճը, մոտեցավ և տեսնելով, թե ինչպե՛ս Հիսուսը լավ պատասխանեց նրանց, հարցրեց Հիսուսին.

-Ո՞րն է կարևորագույն պատվիրանը:*

²⁹ Հիսուսը պատասխանեց.

-Կարևորագույն պատվիրանը հետևյալն է. «Լսի՛ր, Իսրայել՛, մեր Տեր Աստվածը միակ Տերն է»:³⁰ Եվ «Մի՛րի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ»:³¹ Երկրորդը, որ նման է սրան, այս է.

*12.18 Գրծ 23.8:

*12.19 Բ Օր 25.5:

*12.26 Ելք 3.6:

*12.28-34 Ղկ 10.25-28:

*12.29 «Մեր Տեր Աստվածը միակ Տերն է» կամ «Տե՛րն է մեր Աստվածը, միակ Տերը»:

*12.29-30 Բ Օր 6.4-5:

*12.30 «Եվ քո ամբողջ զորությամբ». մի շարք ձեռ. ավելացնում են «ա՛յս է կարևորագույն պատվիրանը»:

«Սիրի՛ր ընկերոջդ քո անձի պես»: Այս երկուսից ավելի մեծ պատվիրան չկա:՝

³² Օրենքի ուսուցիչն ասաց.

-Ճի՛շտ է, Վարդապե՛տ, ուղիղ ասացիր, թե Աստված միակ Տերն է և նրանից բացի ուրիշ Աստված չկա,՝ ³³ և նրան պետք է սիրել ամբողջ սրտով, ամբողջ գործությամբ և ամբողջ մտքով, ինչպես նաև սիրել ընկերոջն իր անձի պես, որովհետև սա շատ ավելին արժե, քան բոլոր ողջակեզներն ու զոհերը:՝

³⁴ Հիսուսը, տեսնելով նրա տված խելացի պատասխանը, ասաց.

-Հեռու չես Աստծու արքայությունից:

Եվ այլևս ոչ ոք չէր համարձակվում հարց ուղղել Հիսուսին:

Ո՞ւմ որդին է Քրիստոսը

(Մտ 22.41-46, Ղկ 20.41-44)

³⁵ Հիսուսը տաճարում ուսուցանելիս հարց տվեց ժողովրդին.

-Օրենքի ուսուցիչներն ինչպե՛ս են ասում, թե Քրիստոսը Դավթի Որդին է, ³⁶ երբ Դավիթն ինքը, Սուրբ Հոգուց ներշնչված, ասում է.

«Տերն իմ Տիրոջն ասաց.

-Նստի՛ր իմ աջ կողմում,

մինչև որ քո թշնամիներին դնեմ ոտքերիդ տակ

իբրև պատվանդան»:

³⁷ Եթե Դավիթն ինքը նրան Տեր է կոչում, ուրեմն ինչպե՛ս Քրիստոսը նրա որդին կլինի:

Զգուշացե՛ք Օրենքի ուսուցիչներից

(Մտ 23.1-12, Ղկ 11.43, 20.45-47)

Ժողովուրդը հաճույքով էր լսում Հիսուսին, ³⁸ որն իր ուսուցումները շարունակելով՝ ասում էր.

-Զգո՛ւյշ եղեք Օրենքի ուսուցիչներից, որոնք սիրում են փառավոր զգեստներով շրջել, հրապարակներում մարդկանցից հարգալից ողջույններ ընդունել,՝

³⁹ ժողովարաններում առաջին աթոռները գրավել և ընթրիքների ժամանակ՝ պատվավոր տեղերը: ⁴⁰ Մի կողմից այրի կանանց տներն են հափշտակում նրանց ձեռքից, իսկ մյուս կողմից՝ կեղծավորությամբ երկարացնում են իրենց աղոթքը: Դրա համար նրանք ավելի՛ խիստ դատապարտության պիտի արժանանան:

Այրի կնոջ լուման

(Ղկ 21.1-4)

^{12.31} Ղկ 19.18:

^{12.32} Բ Օր 4.35:

^{12.33} «Ամբողջ սրտով». մի շարք ձեռ. ավելացնում են «և ամբողջ հոգով»:

^{12.33} Օս 6.6:

^{12.36} Սղ 110.1:

^{12.38} «Որն իր ուսուցումները շարունակելով՝ ասում էր». շատ ձեռ. ունեն «որն ասում էր նրանց»:

⁴¹ Հիսուսը կանգնած էր տաճարի գանձանակի մոտ և դիտում էր ժողովրդին, որ դրամ էր գցում գանձանակի մեջ: Շատ հարուստներ մեծ գումարներ գցեցին: ⁴² Մի աղքատ այրի կին եկավ և երկու լումա գցեց, որ մի քանի դահեկան է անում: ⁴³ Հիսուսն իր մոտ կանչեց իր աշակերտներին և ասաց նրանց.

-Հաստա՛տ իմացեք, որ այս թշվառ այրին բոլորից շատ դրամ գցեց գանձանակի մեջ, ⁴⁴ որովհետև մյուսներն իրենց ավելորդ գումարներից գցեցին, մինչդեռ նա, չնայած իր չքավորությանը, գցեց ինչ որ ուներ՝ իր ամբողջ ապրուստը:

13

Տաճարի կործանման մասին

(Մտ 24.1-2, Ղկ 21.5-6)

¹ Մինչ Հիսուսը դուրս էր գալիս տաճարից, աշակերտներից մեկն ասաց.

-Վարդապե՛տ, տե՛ս, ի՛նչ գեղեցիկ քարեր են, և ի՛նչ հոյակապ շինություն:

² Հիսուսը պատասխանեց.

-Տեսնո՞ւմ ես այս բոլոր շինությունները. ասում եմ ձեզ, որ դրանք բոլորն էլ պիտի քանդվեն, քարը քարի վրա չպիտի մնա:՝

Խռովություններ, հալածանքներ և ավերումներ

(Մտ 10.17-22, 24.3-14, Ղկ 12.11-12, 21.7-24)

³ Եվ մինչ Հիսուսը նստած էր Ձիթենյաց լեռան վրա, տաճարի դիմաց, Պետրոսը, Հակոբոսը, Հովհաննեսը և Անդրեասը, առանձին հարցրին Հիսուսին.

⁴ -Ասա՛ մեզ, ե՞րբ պիտի պատահի այդ. ի՛նչ նշանով կիմանանք, թե ե՞րբ պիտի պատահի այդ բոլորը:՝

⁵ Հիսուսը պատասխանեց.

-Զգո՛ւյշ եղեք, չլինի թե որևէ մեկը ձեզ խաբի, ⁶ որովհետև շատերը պիտի գան իմ անունով և ասեն՝ «Ես եմ Քրիստոսը» և պիտի մոլորեցնեն շատերին: ⁷ Երբ լսեք պատերազմների ձայներ կամ պատերազմների լուրեր, չխռովվեք, որովհետև դրանք պետք է պատահեն: Բայց դա չի նշանակում, որ աշխարհի վախճանն է: ⁸ Ազգերն ազգերի դեմ պիտի կռվեն, և թագավորությունները՝ թագավորությունների դեմ: Տարբեր տեղերում երկրաշարժեր պիտի լինեն, սով, համաճարակ և խռովություններ: Բայց այս բոլորը դեռ երկունքի սկիզբն է:՝ ⁹ Պատրա՛ստ եղեք, որովհետև դեռ ձեզ էլ դատարան պիտի տանեն և ժողովարաններում ծեծեն ձեզ: Իմ պատճառով կառավարիչների և թագավորների առջև պիտի կանգնեք՝ նրանց իմ մասին վկայություն տալու համար:՝ ¹⁰ Բայց նախ պետք է, որ Ավետարանը քարոզվի բոլոր

^{12.42} «Լումա». Հիսուսի ժամանակներում գործածված ամենափոքր արժեքով պղնձադրամ:

^{13.2} «Բոլոր շինությունները», հուն.՝ «մեծամեծ շինությունները»:

^{13.4} Բ Եզր 4.51-5.19:

^{13.8} Հուն. չունի «համաճարակ» բառը, իսկ շատ ձեռ. չունեն «և խռովություններ» բառերը:

^{13.9} Շատ ձեռ. չունեն «Պատրա՛ստ եղեք, որովհետև»:

^{13.9-11} Մտ 10.17-20, Ղկ 12.11-12:

ազգերին:

¹¹ Սակայն երբ ձերբակալեն ձեզ և հանձնեն դատարան, առաջուց մի՛ մտահոգվեք և մի՛ մտածեք, թե ի՛նչ պիտի ասեք, այլ ինչ որ այդ ժամին ձեզ տրվի, ա՛յլ ասացեք, որովհետև խոսողը դո՛ւք չպիտի լինեք, այլ Սուրբ Հոգին: ¹² Եղբայրն իր եղբորը պիտի սպանի, հայրը՝ իր որդուն: Զավակները իրենց ծնողների դեմ պիտի ելնեն ու սպանեն նրանց: ¹³ Ամեն մարդ ձեզ պիտի ստի իմ պատճառով: Բայց ով որ մինչև վերջ դիմանա, նա կփրկվի:՝

Մեծ նեղությունը

(Մտ 24.15-28, Ղկ 17.23-24, 21.20-24)

¹⁴ -Երբ տեսնեք «Ավերվածի սրբապղծությունը»՝ կանգնած այնտեղ, որտեղ չպետք է կանգնեք (կարդացողը թող հասկանա), այն ժամանակ ովքեր Հրեաստանում են, թող լեռները փախչեն,՝ ¹⁵ ով տանիքի վրա է, ցած իջնելուց հետո թող ստուն չմտնի մի բան վերցնելու համար,՝ ¹⁶ և ով արտի մեջ է, թող հետ չդառնա իր վերարկուն վերցնելու համար: ¹⁷ Այդ օրերին վա՛յ հղիներին և ստնտու կանանց: ¹⁸ Աղոթեցե՛ք, որ ձեր փախուստը ձմեռ օրով չպատահի: ¹⁹ Այդ օրերը պիտի լինեն այնպիսի նեղության օրեր, որոնց նման աշխարհի ստեղծագործության սկզբից մինչև այսօր չի պատահել և ոչ էլ կպատահի:՝ ²⁰ Եվ եթե Աստված իր ընտրյալների համար այդ օրերի թիվը պակասեցրած չլինեք, ոչ մեկը չէր փրկվի: Բայց իր ընտրյալների համար Աստված այդ օրերը պակասեցրեց:՝

²¹ Այն ժամանակ երբ մեկը ձեզ ասի՝ «Ահավասիկ այստեղ է Քրիստոսը», կամ ասի՝ «Ահա այնտեղ է», չհավատաք, ²² որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ պիտի հայտնվեն և նշաններ ու հրաշքներ կատարելով՝ պիտի մոլորեցնեն, եթե կարողանան, նույնիսկ Աստծու ընտրյալներին: ²³ Բայց դուք զգո՛ւյ՜ջ եղեք: Ահա ամեն ինչ սկզբից ասացի ձեզ:

Մարդու Որդու գալուստը

(Մտ 24.29-35, Ղկ 21.25-36)

²⁴ -Այդ օրերին, այդ նեղություններից հետո, արեգակը խավարելու է, և լուսինն այլևս չի փայլելու,՝ ²⁵ աստղերն ընկնելու են երկնքից, և երկնային մարմինները սասանվելու են:՝ ²⁶ Այն ժամանակ կտեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է ամպերի վրայով՝ մեծ

՝13.13 Մտ 10.22:

՝13.14 «"Ավերվածի սրբապղծությունը"». մի շարք հայ. ձեռ. ունեն «Դանիել մարգարեի ասածը "Ավերվածի պղծությունը"»: Տե՛ս Մտ 24.15-ի ծնթ:

՝13.14 Դն 9.27, 11.31, 12.11, Ա Մկ 1.54, 6.7:

՝13.15-16 Ղկ 17.31:

՝13.19 Դն 12.1, Հտ 7.14:

՝13.20 «Սաստված». շատ ձեռ. ունեն «Տեղը»:

՝13.24 ա Ես 13.10, Հվլ 2.10, 31, 3.15, Հտ 6.12: բ Ես 13.10, Եզկ 32.7:

՝13.25 ա Ես 34.4, Հտ 6.13: բ Հվլ 2.10:

գործությամբ և փառքով:՝ ²⁷ Այն ժամանակ նա կուղարկի իր հրեշտակներին, որպեսզի աշխարհի չորս կողմերից հավաքեն իր ընտրյալներին՝ աշխարհի մեկ ծայրից մինչև մյուս ծայրը:

²⁸ Թզենին թող օրինակ լինի ձեզ: Երբ նրա ճյուղերը հետզհետե փափկեն և տերև արձակեն, կիմանաք, որ ամառը մոտ է: ²⁹ Նույնպես և դուք, երբ տեսնեք, որ իմ ասածները կատարվում են, իմացե՛ք, որ Մարդու Որդու գալուստը մոտ է և արդեն հասնելու վրա է: ³⁰ Վստահ եղեք, որ այս սերունդը դեռ չանցած՝ այս ամենը պիտի պատահի: ³¹ Նույնիսկ եթե երկինքն ու երկիրը անհետանան, իմ խոսքերը չեն անհետանա:

Ոչ ոք չգիտի օրը կամ ժամը

(Մտ 24.36-44, Ղկ 12.36-38)

³² -Սակայն ոչ ոք չգիտի, թե երբ է գալու այդ օրը կամ ժամը. ո՛չ երկնքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, այլ միայն Հայրը:՝ ³³ Զգո՛ւյշ եղեք, արթո՛ւն մնացեք և աղոթեցե՛ք, որովհետև չգիտեք, թե երբ է ժամանակը: ³⁴ Դա նման է այն մարդուն, որը թողնում է իր տունը և գնում ուրիշ երկիր: Զգնացած իր ծառաներից յուրաքանչյուրին պարտականություն է տալիս և դռնապանին էլ պատվիրում, որ արթուն մնա:՝

³⁵ Ուրեմն դո՛ւք էլ արթուն կացեք, որովհետև չգիտեք, թե տանտերը գիշերվա ո՛ր պահին կգա, երեկոյա՞ն, կեսգիշերի՞ն, աքլորականչի՞ն, թե՞ առավոտյան:՝ ³⁶ որպեսզի չլինի թե հանկարծ գա և ձեզ քնի մեջ գտնի: ³⁷ Արդ, ինչ որ ձեզ եմ ասում, բոլորին եմ ասում. արթո՛ւն կացեք:

14

Դավ Հիսուսի դեմ

(Մտ 26.1-5, Ղկ 22.1-2, Հհ 11.47-53)

¹ Երկու օր հետո Զատիկ էր, և սկսվելու էր Բաղարջակերաց տոնը: Ավագ քահանաներն ու Օրենքի ուսուցիչները հնար էին փնտրում, թե ինչպես կկարողանան նենգությամբ ձերբակալել Հիսուսին և սպանել:՝ ² Բայց ասում էին.

-Այս տոնի ժամանակ թող չլինի, որպեսզի ժողովրդի մեջ խռովություն չծագի:

Հիսուսի օծումը Բեթանիայում

(Մտ 26.6-13, Հհ 12.1-8)

³ Մինչ Հիսուսը Բեթանիայում բորոտ Միմոնի տանը սեղան էր նստած, եկավ մի կին, որն իր հետ ուներ մի շիշ ազնիվ և թանկարժեք նարդոսի յուղ: Կոտրելով շիշը՝ նա

^{13.26} Դն 7.13, Հտ 1.7:

^{13.32} Մտ 24.36:

^{13.34} Ղկ 12.36-38:

^{13.35} «Որ պահին», տե՛ս Բառարանի Օր բառահոդվածը:

^{14.1} «Զատիկ». բոց՝ «Պատեք». տե՛ս Մտ 26.2-ի ծնթ:

^{14.1} Ելք 12.1-27:

յուրը թափեց Հիսուսի գլխին: ⁴ Աշակերտներից ոմանք ընդվզեցին և ասացին.

- Ինչո՞ւ այդպես վատնել այդ անուշահոտ յուրը. ⁵ կարելի էր այն վաճառել ավելի քան երեք հարյուր արծաթ դահեկանի և տալ աղքատներին:

Եվ հանդիմանում էին կնոջը: ⁶ Հիսուսն ասաց նրանց.

- Թողե՛ք, ինչո՞ւ եք անհանգստացնում նրան, քանի որ նա ինձ մի լավ բան արեց: ⁷ Աղքատներին միշտ ձեզ հետ ունեք և երբ ուզենաք, կարող եք բարիք անել նրանց, բայց ինձ միշտ ձեզ հետ չեք ունենա: ⁸ Այս կինը ինչ որ կարող էր, արեց. սկզբում օծեց իմ մարմինը՝ ի նշան իմ թաղումի: ⁹ Լա՛վ իմացեք, աշխարհում ո՞ւր էլ որ Ավետարանը քարոզվի, մարդիկ պիտի խոսեն նրա արածի մասին և հիշեն նրան:

Հուդան համաձայնում է մատնել Հիսուսին

(Մտ 26.14-16, Ղկ 22.3-6)

¹⁰ Ապա տասներկու աշակերտներից Հուդա Իսկարիովտացին գնաց ավագ քահանաների մոտ, որպեսզի Հիսուսին մատնի նրանց: ¹¹ Նրանք, լսելով այս, շատ ուրախացան և խոստացան դրամ տալ նրան: Եվ Հուդան հարմար առիթի էր սպասում Հիսուսին մատնելու համար:

Վերջին ընթրիքը

(Մտ 26.17-30, Ղկ 22.7-20, Հհ 13.21-30, Ա Կր 11.23-25)

¹² Բաղարջակերաց տոնի առաջին օրը, երբ Զատկի համար գառն էին մորթում, աշակերտները հարցրին Հիսուսին.

- Ո՞ւր ես ուզում, որ գնանք պատրաստենք գատկական ընթրիքը:

¹³ Հիսուսն իր աշակերտներից երկուսին ուղարկեց՝ նրանց պատվիրելով.

- Կգնաք քաղաք և հազիվ մտած՝ կհանդիպեք մի մարդու՝ ուսին ջրի մի սավոր: Գնացե՛ք նրա հետևից ¹⁴ և մտե՛ք նրա գնացած տունը ու տանտիրոջն ասացե՛ք. «Վարդապետը հարցնում է՝ որտե՞ղ է այն սենյակը, որտեղ իմ աշակերտների հետ գատկական ընթրիքը պիտի ուտեմ»: ¹⁵ Նա ձեզ ցույց կտա կահավորված մի մեծ սենյակ վերնատանը, մեզ համար ընթրիքն այնտե՛ղ պատրաստեցեք:

¹⁶ Աշակերտները գնացին, մտան քաղաքը և ամեն ինչ գտան այնպես, ինչպես Հիսուսն էր ասել, և պատրաստեցին գատկական ընթրիքը:

¹⁷ Երեկոյան Հիսուսը եկավ տասներկու աշակերտների հետ միասին: ¹⁸ Մինչ սեղան էին նստել և դեռ ուտում էին, Հիսուսն ասաց.

- Ասում եմ ձեզ, որ ձեզանից մեկը, որ հիմա ինձ հետ ուտում է, մատնելու է ինձ:՝

¹⁹ Նրանք տրտմեցին և սկսեցին մեկ առ մեկ հարցնել նրան.

- Մի՞ թե ես եմ, մի՞ թե ես եմ: ²⁰ Հիսուսն ասաց նրանց.

^{14.3} Ղկ 7.37-38:

^{14.4} «Աշակերտներից ոմանք ընդվզեցին և ասացին». մի շարք ձեռ. ունեն «[Մյնտեղ գտնվողներից] ոմանք ընդվզեցին և ասացին միմյանց»:

^{14.7} Բ Օր 15.11:

^{14.8} «Ի նշան իմ թաղումի» կամ «որպես պատրաստություն իմ թաղումի». տե՛ս Մտ 26.12-ի ծնթ:

^{14.18} Սդ 41.9:

-Տասներկուսիցդ մեկն է, նա, որ պատառը ինձ հետ դեպի պնակը երկարեց:²¹ Մարդու Որդին պիտի մեռնի, ինչպես որ այդ գրված է մարգարեական գրքերում. բայց վա՛յ այն մարդուն, որ կմատնի նրան: Երանի՛ այդ մարդը ծնված չլիներ:

²² Մինչ նրանք ուտում էին, Հիսուսը հացը վերցրեց, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին՝ ասելով.

-Առե՛ք, սա իմ մարմինն է:

²³ Ապա վերցրեց գինու բաժակը, գոհություն հայտնեց Աստծուն, և տվեց աշակերտներին, և բոլորն էլ խմեցին բաժակից: ²⁴ Հիսուսն ասաց նրանց.

-Սա նոր ուխտի իմ արյունն է, որ հոսելու է շատերի համար:²⁵ Ասում եմ ձեզ, որ սրանից հետո գինի չեմ խմելու մինչև այն օրը, երբ խմեմ նոր գինին Աստծու արքայության մեջ:

²⁶ Ապա, գոհաբանական սաղմոսներ երգելուց հետո, ելան Ձիթենյաց լեռը:

Հիսուսը գուշակում է Պետրոսի ուրացումը

(Մտ 26.31-35, Ղկ 22.31-34, Հհ 13.36-38)

²⁷ Այնտեղ Հիսուսն ասաց նրանց.

-Այս գիշեր դուք բոլորդ էլ լքելու եք ինձ, որովհետև Սուրբ գիրքն է ասում. «Պիտի սպանեմ հովվին, և ոչխարները պիտի ցրվեն»:²⁸ Բայց հարություն առնելուց հետո ես ձեզանից առաջ պիտի գնամ Գալիլեա:

²⁹ Պետրոսը պատասխանեց.

-Եթե նույնիսկ բոլորը լքեն քեզ, ես չեմ լքի:

³⁰ Հիսուսն ասաց նրան.

-Ասում եմ քեզ, որ այս գիշեր, արքադաղը երկու անգամ չկանչած, դու երեք անգամ կուրանաս ինձ:

³¹ Բայց Պետրոսն ավելի ու ավելի էր պնդում ու ասում.

-Եթե քեզ հետ մեռնելու իսկ հարկ լինի, քեզ չեմ ուրանա:

Եվ բոլորն էլ նույն էին ասում:

Հիսուսը Գեթսեմանիում

(Մտ 26.36-46, Ղկ 22.39-46)

³² Եկան մի տեղ, որ Գեթսեմանի էր կոչվում: Հիսուսն իր աշակերտներին ասաց.

- Այստե՛ղ նստեցեք, մինչև որ ես աղոթեմ:

³³ Եվ նա իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին: Խռովված էր և

^{14.20} «Պատառը ինձ հետ դեպի պնակը երկարեց», տե՛ս Մտ 26.23-ի ծնթ:

^{14.22} «Առե՛ք», մի շարք ձեռ. ավելացնում են «կերե՛ք»:

^{14.24} ա Ելք 24.8: բ Եր 31.31-34:

^{14.26} «Գոհաբանական սաղմոսներ», զատկական ընթրիքից հետո հրեաները հոտնկայա երգում էին 115-118 սաղմոսները:

^{14.27} Ջք 13.7:

^{14.28} Մտ 28.16:

^{14.30} Մի շարք ձեռ. չունեն «երկու անգամ»:

տագնապում էր: ³⁴ Այն ժամանակ ասաց նրանց.

- Հոգիս մեռնելու աստիճան տրտմած է. այստե՛ղ մնացե՛ք և արթո՛ւն կացե՛ք:

³⁵ Ապա փոքր-ինչ առաջ գնաց և երեսի վրա գետնին ընկնելով՝ աղոթում էր, որ էթե կարելի է, հեռանա իրենից տառապանքի այս ժամը: ³⁶ Նա ասաց.

- Հա՛յր, Հա՛յր, քեզ համար ամեն ինչ կարելի է: Այս բաժակը հեռացրո՛ւ ինձնից, բայց ոչ թե ինչպես ես եմ ուզում, այլ ինչպես դո՛ւ ես ուզում:՝

³⁷ Հետո եկավ և տեսավ, որ երեք աշակերտները քնած են: Պետրոսին ասաց.

- Միմո՛ն, ննջո՛ւմ ես, չկարողացա՞ր մեկ ժամ արթուն մնալ: ³⁸ Արթո՛ւն կացե՛ք և աղոթեցե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնե՛ք: Հոգին կարող է հոժար լինել, բայց մարմինը տկար է:

³⁹ Կրկին գնաց աղոթելու և նույն խոսքերն ասաց: ⁴⁰ Եվ երբ վերադարձավ, նրանց քնած գտավ: Նրանց աչքերը չէին բացվում, չէին իմանում, թե ի՛նչ պատասխան տան նրան:

⁴¹ Երրորդ անգամ, երբ Հիսուսը վերադարձավ, ասաց նրանց.

- Այսուհետև ննջեցե՛ք և հանգստացե՛ք: Բայց բավակա՛ն է, ժամը հասավ, և ահա Մարդու Որդին հանձնվելու է մեղավոր մարդկանց ձեռքը: ⁴² Օ՛ն, վե՛ր կացե՛ք գնանք, որովհետև մոտեցավ ինձ մատնողը:

Հիսուսի ձերբակալությունը

(Մտ 26.47-56, Ղկ 22.47-53, Հհ 18.1-11)

⁴³ Նա դեռ խոսում էր, երբ եկավ տասներկու աշակերտներից Հուդա Իսկարիովտացին: Նրա հետ էր սրերով և մահակներով զինված մի ամբոխ՝ ուղարկված ավագ քահանաների, Օրենքի ուսուցիչների և երեցների կողմից:

⁴⁴ Մատնիչը նրանց նշան էր տվել՝ ասելով.

- Ում որ համբուրեմ, նա՛ է Հիսուսը, ձերբակալեցե՛ք նրան և տարե՛ք զգուշությամբ:՝

⁴⁵ Հուդան անմիջապես մոտեցավ Հիսուսին և ասաց.

- Վարդապե՛տ, վարդապե՛տ:

Եվ համբուրեց նրան:

⁴⁶ Ապա բռնեցին Հիսուսին և ձերբակալեցին: ⁴⁷ Նրա շուրջը գտնվողներից մեկը սուրը քաշեց և զարկեց քահանայապետի ծառային ու կտրեց նրա ականջը:

⁴⁸ Հիսուսն ասաց նրանց.

- Ավագա՞կ եմ, որ այդպես սրերով և մահակներով եք եկել ձերբակալելու ինձ: ⁴⁹ Ամեն օր ձեզ հետ էի և ուսուցանում էի տաճարում, և ինձ չձերբակալեցիք: Բայց այս բոլորը պատահում է, որպեսզի իրականանան Սուրբ գրքերում ասածները:՝

⁵⁰ Այն ժամանակ աշակերտները բոլորն էլ թողեցին նրան ու փախան: ⁵¹ Սակայն մի

^{14.36} «Հա՛յր, Հա՛յր». բոց՝ «Ա՛բբա, հա՛յր»: «Աբբա»-ն հայր բառի արամեերենն է:

^{14.41} «Այսուհետև ննջեցե՛ք և հանգստացե՛ք: Բայց բավակա՛ն է». հուն. ունի «Ուրեմն ննջո՛ւմ եք և հանգստանում: Բավական է»:

^{14.44} «Ում որ համբուրեմ». տե՛ս Մտ 26.48-ի ծնթ:

^{14.49} Ղկ 19.47, 21.37:

երիտասարդ, որն իր մերկությունը ծածկել էր միայն կտավով, հետևում էր նրան:⁵² Չինված մարդիկ նրան էլ բռնեցին, բայց նա, թողնելով հագի կտավը, մերկ փախավ նրանցից:

Հիսուսը հրեաների ատյանի առաջ

(Մտ 26.57-68, Ղկ 22.54-55, 63-71, Հհ 18.13-14, 19-24)

⁵³ Հետո Հիսուսին տարան Կայիափա քահանայապետի տունը, որտեղ սկսել էին հավաքվել բոլոր ավագ քահանաները, Օրենքի ուսուցիչները և երեցները: ⁵⁴ Պետրոսը հեռվից հետևում էր Հիսուսին մինչև քահանայապետի տան գավիթը, որտեղ սպասավորների հետ կրակի մոտ նստած՝ տաքանում էր: ⁵⁵ Ավագ քահանաները և ամբողջ ատյանը աշխատում էին Հիսուսի դեմ վկայություն գտնել, որպեսզի սպանեն նրան, բայց չէին գտնում: ⁵⁶ Շատ վկաներ սուտ վկայություն էին տալիս, սակայն վկայություններն իրար չէին համապատասխանում: ⁵⁷ Ուրիշները վեր կացան և սուտ վկայություն տալով՝ ասացին.

⁵⁸ -Մենք նրա բերանից լսեցինք, երբ ասում էր. «Ես պիտի քանդեմ մարդկանց ձեռքով կառուցված այս տաճարը և երեք օրում շինեմ մեկ ուրիշը, որ կառուցված չի լինի մարդկանց կողմից»:

⁵⁹ Սակայն նրանց վկայություններն էլ միմյանց չէին համապատասխանում: ⁶⁰ Հետո քահանայապետը վեր կացավ և մեջտեղ գալով՝ հարցրեց Հիսուսին.

-Քո դեմ եղած այս ամբաստանություններին որևէ պատասխան չե՞ս տալու:

⁶¹ Բայց Հիսուսը լուռ էր մնում և պատասխան չէր տալիս: Քահանայապետը դարձյալ հարցրեց Հիսուսին.

-Դո՞ւ ես Քրիստոսը՝ օրհնյալ Աստծու Որդին:

⁶² Հիսուսը պատասխանեց նրան.

-Ես եմ: Եվ դուք պիտի տեսնեք Մարդու Որդուն՝ ամենագոր Աստծու աջ կողմում նստած, պիտի տեսնեք նրան, որ գալիս է երկնքի ամպերի միջից: ⁶³ Քահանայապետն իսկույն պատռեց իր վերարկուն և ասաց.

-Յ/4 ի՞նչ պետք ունենք վկաների, ⁶⁴ բոլորդ էլ հենց նրա բերանից լսեցիք նրա արած հայհոյությունը: Ի՞նչ եք մտածում:

Բոլորն էլ, դատապարտելով Հիսուսին, վճռեցին և ասացին.

-Մահապարտ է:՝

⁶⁵ Ոմանք սկսեցին թքել Հիսուսի երեսին, ծածկում էին նրա դեմքը, խփում էին և

^{14.51} «Մի երիտասարդ», առհասարակ ենթադրվում է, որ առանց անունի հիշված այս երիտասարդը սույն Ավետարանը գրող Հովհաննես Մարկոսն է:

^{14.58} Հհ 2.19:

^{14.61} «Օրհնյալ Աստծու Որդին», հուն. ունի «Օրհնյալի Որդին»:

^{14.62} Դն 7.13:

^{14.63} «Պատռեց իր վերարկուն». տե՛ս Մտ 26.65-ի ծնթ:

^{14.64} «Բոլորդ էլ հենց նրա բերանից լսեցիք նրա արած հայհոյությունը». շատ ձեռ. ունեն «Բոլորդ լսեցիք հայհոյությունը»:

^{14.64} Ղկ 24.16:

հարցնում.

-Քրիստո՛ս, իմացի՛ր, ո՞վ խփեց քեզ:

Եվ սպասավորներն ապտակում էին նրան:

Պետրոսն ուրանում է Հիսուսին

(Մտ 26.69-75, Ղկ 22.56-62, Հհ 18.15-18, 25-27)

⁶⁶ Մինչ Պետրոսը դեռ ներքևում էր՝ գավթում, քահանայապետի աղախիններից մեկը գալով ⁶⁷ տեսավ, որ նա տաքանում է, նայեց նրան և ասաց.

-Դո՛ւ էլ Նազովրեցի Հիսուսի հետ էիր:

⁶⁸ Պետրոսն ուրացավ և ասաց.

-Չեմ ճանաչում նրան և չգիտեմ՝ ի՛նչ ես ասում:

Պետրոսը հագիվ էր գավթից նախագավիթ եկել, երբ աքաղաղը կանչեց:⁶⁹ Աղախինը կրկին տեսավ նրան և սկսեց իր շուրջը գտնվողներին ասել.

-Սա էլ է նրանցից:

Բայց Պետրոսը դարձյալ ուրացավ:⁷⁰ Մի քիչ հետո շուրջը գտնվողները կրկին ասացին Պետրոսին.

-Իրոք որ դու նրանցից ես, քանի որ գալիլեացի ես և նրանց նման էլ խոսում ես:

⁷¹ Պետրոսն ինքն իրեն անիծելով սկսեց երդվել և ասել.

-Ձեր ասած մարդուն ես չեմ ճանաչում:

⁷² Նույն պահին աքաղաղը երկրորդ անգամ կանչեց: Պետրոսը հիշեց այն խոսքը, որ Հիսուսն ասել էր իրեն, թե՛ «Աքաղաղը երկու անգամ չկանչած՝ դու երեք անգամ կուրանաս ինձ»: Եվ սկսեց լաց լինել:⁷³

15

Հիսուսը Պիղատոսի առաջ

(Մտ 27.1-2, 11-14, Ղկ 23.1-5, Հհ 18.28-38)

¹ Վաղ առավոտյան ավագ քահանաները երեցների, Օրենքի ուսուցիչների և աստանի բոլոր անդամների հետ խորհրդակցեցին և Հիսուսին շրթայակապ տարան հանձնեցին Պիղատոսին:² Պիղատոսը հարցրեց Հիսուսին.

-Դո՛ւ ես հրեաների թագավորը:

Հիսուսը պատասխանեց.

-Ահա՛, դո՛ւ ես ասում:

³ Ավագ քահանաները շատ ամբաստանություններ էին անում, բայց Հիսուսը պատասխան չէր տալիս:⁴ Պիղատոսը կրկին հարցրեց Հիսուսին.

-Պատասխան չե՞ս տալիս. տե՛ս, ինչքա՛ն ամբաստանություններ են անում քո դեմ:

⁵ Հիսուսը դարձյալ պատասխան չտվեց, այնպես որ Պիղատոսը շատ զարմացավ:

^{14.68} Մի շարք ձեռ. չունեն «երբ աքաղաղը կանչեց»:

^{14.72} «Եվ սկսեց լաց լինել». շատ ձեռ. ունեն «և դուրս գալով՝ սկսեց լաց լինել» կամ «և գլուխը ծածկելով՝ սկսեց լաց լինել»:

^{15.3} Շատ ձեռ. չունեն «բայց Հիսուսը պատասխան չէր տալիս»:

Հիսուսը դատապարտվում է մահվան

(Մտ 27.15-26, Ղկ 23.13-25, Հհ 18.39-19.16)

⁶ Պիղատոսն ամեն Չատկի տոնին ազատ էր արձակում մի կալանավորի՝ նայած թե ժողովուրդն ո՞ւմ էր ուզում: ⁷ Բանտում կար Բարաբբա անունով մեկը, որը բանտարկվել էր այն խռովարարների հետ, որոնք խռովության ժամանակ մարդ էին սպանել: ⁸ Ամբոխն սկսեց աղաղակել և խնդրել, որ Պիղատոսն իր սովորության համաձայն մեկին ազատ արձակի: ⁹ Պիղատոսն ասաց նրանց.

-Ուզո՞ւմ եք, որ հրեաների թագավորին ազատ արձակեմ:

¹⁰ Որովհետև նա գիտեր, որ ավագ քահանաները նախանձի՛ պատճառով էին Հիսուսին հանձնել իրեն: ¹¹ Սակայն ավագ քահանաները ժողովրդին գրգռեցին, որպեսզի Պիղատոսից պահանջեն, որ ազատ արձակի Բարաբբային:

¹² Պիղատոսը դարձյալ հարցրեց նրանց.

-Իսկ ի՞նչ եք ուզում, որ անեմ սրան, որին դուք հրեաների թագավոր եք կոչում:

¹³ Նրանք, ավագ քահանաներից դրդվելով, կրկին աղաղակեցին.

-Խա՛չը հանիր դրան:

¹⁴ Պիղատոսը հարցրեց.

-Բայց ի՞նչ չարիք է գործել:

Սակայն նրանք ավելի բարձր աղաղակելով ասում էին.

-Խա՛չը հանիր դրան:

¹⁵ Այն ժամանակ Պիղատոսն ուզեց գոհացնել ամբոխին, ազատ արձակեց Բարաբբային, իսկ Հիսուսին մտրակով ծեծել տալուց հետո հանձնեց զինվորներին, որպեսզի խաչեն:

Զինվորները ծաղրում են Հիսուսին

(Մտ 27.27-31, Ղկ 23.11, Հհ 19.2-3)

¹⁶ Զինվորները Հիսուսին տարան ներս, կառավարչի պալատի բակը և կանչեցին գնդի մնացած զինվորներին: ¹⁷ Հիսուսին ծիրանի հագցրին և նրա գլխին փշե պսակ դրեցին: ¹⁸ Հետո սկսեցին նրան ողջույն տալ և ասել.

-Ողջո՞ւյն քեզ, հրեաների թագավոր:

¹⁹ Եղեգով հարվածում էին նրա գլխին, թքում էին երեսին և ծնկի գալով՝ երկրպագում էին նրան: ²⁰ Այսպես ծաղրուծանակի ենթարկելուց հետո Հիսուսի վրայից հանեցին ծիրանի հագուստը, նրան իր զգեստները հագցրին և դուրս հանեցին, որ խաչեն նրան:

Հիսուսի խաչելությունը

(Մտ 27.32-44, Ղկ 23.26-43, Հհ 19.17-27)

^{15.8} «Մեկին ազատ արձակի». հայ. ձեռ. ունեն «Բարաբբային ազատ արձակի»:

^{15.13} Հուն. և մի շարք հայ. ձեռ. չունեն «ավագ քահանաներից դրդվելով»:

^{15.17} «Ծիրանի հագցրին». մի շարք ձեռ. ունեն «կարմիր քղամիդ և ծիրանի հագցրին»: Կարմիր քղամիդը հռոմեացի զինվորների վերարկուն էր, մինչդեռ ծիրանի պատմուճանը արքայական զգեստ էր:

²¹ Միմոն անունով կյուրենացի մի մարդ՝ Ալեքսանդրի և Ռուփոսի հայրը, արտից վերադառնալիս անցնում էր այդ տեղով: Ջինվորները կանգնեցրին նրան և ստիպեցին, որ Հիսուսի խաչափայտը կրի: ²² Նրանք Հիսուսին տարան Գողգոթա, որ նշանակում է «Գանգի վայր»: ²³ Այնտեղ զմուռս խառնած զինի տվեցին նրան, բայց նա չիմեց: ²⁴ Ապա խաչը հանեցին նրան և հագուստները բաժանելու համար վիճակ գցեցին՝ տեսնելու, թե ով ի՛նչ բաժին պիտի վերցնի:՝

²⁵ Առավոտյան ժամը ինն էր, երբ խաչեցին նրան: ²⁶ Նրա հանցապարտության մասին կար մի գրություն՝ գրված այսպես. «Հրեաների թագավորն է»: ²⁷ Նրա հետ խաչ հանեցին նաև երկու ավազակների. մեկին՝ նրա աջ կողմում, իսկ մյուսին՝ ձախ կողմում: ²⁸ Այսպիսով իրականացավ Մուրբ գրքերում գրվածը, թե՛ «Չարագործների շարքը դասվեց»:՝

²⁹ Ովքեր անցնում էին խաչի առջևից, նախատում էին նրան և գլուխները շարժելով՝ ասում.

-Դու տաճարը քանդում և երեք օրում շինում էիր, հա՞.՝ ³⁰ դե, ազատի՛ր ինքդ քեզ և ցա՛ծ իջիր խաչից:

³¹ Ավագ քահանաները, Օրենքի ուսուցիչների հետ միասին, նույնպես ծաղրում էին նրան և ասում.

-Ուրիշներին ազատեց, բայց ինքն իրեն չի կարողանում ազատել: ³² Այդ Քրիստոսը՝ Իսրայելի թագավորը, թող հիմա խաչից ցած իջնի, որպեսզի տեսնենք և հավատանք նրան:

Նրա հետ խաչված երկու ավազակներն էլ էին նախատում նրան:

Հիսուսի մահը

(Մտ 27.45-56, Ղկ 23.44-49, Հհ 19.28-30)

³³ Գրեթե կեսօր էր, երբ խավարը պատեց ամբողջ երկիրը, մինչև ժամը երեքը:

³⁴ Ժամը երեքին Հիսուսը բարձրաձայն աղաղակեց՝ ասելով.

-« $3/4$ ի՛, $3/4$ ի, լա՛ մա սաբաքթանի», որ նշանակում է՝ «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ»:՝

³⁵ Նրա շուրջը գտնվողներից ոմանք, որոնք լսեցին այս, ասացին.

-Եղիային է կանչում:

³⁶ Նրանցից մեկը վազեց և սպունգը քացախի մեջ թաթախելով՝ անցկացրեց եղեգի ծայրին և տվեց Հիսուսին, որ խմի: Նա ասում էր.

-Թողե՛ք տեսնենք, Եղիան կգա՞ նրան խաչից իջեցնելու:՝

³⁷ Հիսուսը բարձր մի աղաղակ արձակեց և հոգին ավանդեց: ³⁸ Տաճարի վարագույրը

^{15.21} Հո 16.13:

^{15.24} Մդ 22.18:

^{15.28} Հնագույն ձեռ. չունեն այս հմբ (տե՛ս Ղկ 22.37):

^{15.28} Ես 53.12:

^{15.29} ա Մդ 22.7, 109.25: ք Մր 14.58, Հհ 2.19:

^{15.34} Մդ 22.1:

^{15.36} Մդ 69.21:

վերից վար պատովեց և երկու մասի բաժանվեց:՝³⁹ Հարյուրապետը, որ այնտեղ, նրա դիմաց կանգնած էր, երբ տեսավ, թե ինչպես Հիսուսն աղաղակեց և հոգին ավանդեց, ասաց.

-Իսկապես որ այս մարդն Աստծու Որդին էր:

⁴⁰ Այնտեղ կային նաև կանայք, որոնք դիտում էին հեռվից: Նրանց մեջ էին Մարիամ Մագդաղենացին, կրտսեր Հակոբոսի և Հովսեփի մայրը՝ Մարիամը, ինչպես և Սողոմեն,⁴¹ որոնք Հիսուսի՝ Գալիլեայում գտնված ժամանակ գնում էին նրա հետևից և սպասարկում նրան: Ուրիշ շատ կանայք էլ կային, որոնք Երուսաղեմից եկել էին նրանց հետ:

Հիսուսի թաղումը

(Մտ 27.57-61, Ղկ 23.50-56, Հհ 19.38-42)

⁴²⁻⁴³ Գրեթե երեկո էր, երբ եկավ Արիմաթեացի Հովսեփը, որ մի պարկեշտ մարդ էր, հրեաների ատյանի անդամ և ինքն էլ սպասում էր Աստծու թագավորությանը: Եվ որովհետև ուրբաթ երեկո էր, և դեռ շաբաթը չէր սկսվել, նա համարձակություն ունեցավ Պիղատոսի մոտ գնալու և Հիսուսի մարմինը խնդրելու:՝⁴⁴ Պիղատոսը զարմացավ, որ Հիսուսն այդքան շուտ էր մեռել: Իր մոտ կանչեց հարյուրապետին և հարցրեց.

-Իսկապե՞ս այդքան շուտ մեռավ:

⁴⁵ Եվ հարյուրապետից այդ ստուգելուց հետո թույլ տվեց, որ Հովսեփը վերցնի Հիսուսի մարմինը: ⁴⁶ Հովսեփը պատանքի կտավ գնեց, խաչից իջեցրեց Հիսուսին և նրա մարմինը փաթաթելով՝ դրեց մի ժայռափոր գերեզմանի մեջ: Ապա մի քար գլորեց գերեզմանի մուտքին: ⁴⁷ Մարիամ Մագդաղենացին և Հակոբոսի ու Հովսեփի մայրը՝ Մարիամը, այնտեղ էին և տեսան այն գերեզմանը, ուր դրվեց մարմինը:՝

16

Հիսուսի հարությունը

(Մտ 28.1-8, Ղկ 24.1-12, Հհ 20.1-10)

¹ Երբ շաբաթ օրն անցավ, Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի մայրը՝ Մարիամը և Սողոմեն, գնացին խունկ գնեցին և պատրաստեցին, որպեսզի գնան և օծեն Հիսուսի մարմինը: ² Կիրակի օրը վաղ առավոտյան, արևածագին, եկան գերեզման:

³ -Ո՞վ պիտի գլորի գերեզմանի մուտքին դրված քարը,- հարցնում էին միմյանց, ⁴ որովհետև քարը շատ մեծ էր:

Սակայն երբ նայեցին, տեսան, որ քարն արդեն գլորված էր: ⁵ Գերեզմանից ներս մտնելով՝ տեսան սպիտակ զգեստ հագած մի երիտասարդի, որ նստած էր աջ կողմը, և սարսափեցին: ⁶ Երիտասարդն ասաց նրանց.

^{15.38} Ելք 26.31-33:

^{15.40-41} Ղկ 8.2-3:

^{15.43} «Արիմաթեա». տե՛ս Մտ 27.57-ի ծնթ:

^{15.47} Ձեռ. մեծ մասը չունի «Հակոբոսի ու...»:

-Մի՛ վախեցեք, գիտեմ, որ դուք խաչված Նազովրեցի Հիսուսին եք փնտրում, բայց նա այստեղ չէ. հարություն առավ: Տեսե՛ք, ահա այստեղ էին նրան դրել: ⁷ Այժմ գնացե՛ք, ասացե՛ք նրա աշակերտներին և Պետրոսին, որ ահա ինքը ձեզնից առաջ գնում է Գալիլեա. այնտեղ կտեսնեք նրան, ինչպես որ ասել էր ձեզ:

⁸ Երբ այդ լսեցին, դուրս փախան գերեզմանից զարհուրած և ապշահար և ոչ ոքի բան չասացին, որովհետև վախենում էին:

Հիսուսը երևում է Մարիամ Մագդաղենացուն

(Մտ 28.9-10, Հհ 20.11-18)

⁹ Հիսուսը հարություն առնելուց հետո, կիրակի օրը վաղ առավոտյան, նախ երևաց Մարիամ Մագդաղենացուն, որից յոթ չար ոգիներ էր դուրս հանել: ¹⁰ Մարիամը գնաց և այս պատմեց իր ընկերակիցներին, մինչ նրանք սգում և լաց էին լինում: ¹¹ Սակայն նրանք չհավատացին, երբ լսեցին, թե նա ողջ է, և Մարիամը տեսել է նրան:

Հիսուսը երևում է երկու աշակերտներին

(Ղկ 24.13-35)

¹² Հետո Հիսուսն ուրիշ կերպարանքով երևաց նրանցից երկուսին, երբ նրանք գյուղ էին գնում: ¹³ Սրանք ևս վերադարձան և պատմեցին մյուսներին, բայց սրանց էլ չհավատացին:

Հիսուսը երևում է տասնմեկ աշակերտներին

(Մտ 28.16-20, Ղկ 24.36-49, Հհ 20.19-23, Գրծ 1.6-8)

¹⁴ Ամենից հետո Հիսուսը երևաց տասնմեկ աշակերտներին, երբ նրանք սեղան էին նստել: Նա հանդիմանեց նրանց իրենց անհավատության և համառության համար, քանի որ չէին հավատացել նրանց, որոնց ինքը երևացել էր մեռելներից հարություն առնելուց հետո: ¹⁵ Եվ ասաց նրանց.

-Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և բոլոր մարդկանց քարոզեցե՛ք Ավետարանը:

¹⁶ Ով որ հավատա և մկրտվի, կփրկվի, իսկ ով որ չհավատա, կդատապարտվի:

¹⁷ Նրանք, ովքեր հավատում են, հայտնի կլինեն հետևյալ նշաններով. իմ անունով չար ոգիներ պիտի հանեն, նոր լեզուներով պիտի խոսեն, ¹⁸ ձեռքով օձ պիտի բռնեն առանց խայթվելու, և եթե մահացու որևէ թոյն էլ խմեն, չպիտի վնասվեն, հիվանդների վրա ձեռք պիտի դնեն և բժշկեն նրանց:

Հիսուսի համբարձումը

(Ղկ 24.50-53, Գրծ 1.9-11)

¹⁹ Տեր Հիսուսն աշակերտների հետ խոսելուց հետո երկինք համբարձվեց և նստեց Հոր աջ կողմում: ²⁰ Իսկ նրանք, աշխարհի բոլոր կողմերը գնալով, քարոզում էին

^{16.9} «Կիրակի օրը վաղ առավոտյան». բոց՝ «շաբաթվա առաջին [օրվա] առավոտյան»:

^{16.9-20} Մի շաբթ ձեռ. չունեն այս 9-20 հմբ:

^{16.15} Գրծ 1.8:

Ավետարանը Տիրոջ գործակցությամբ, և նրանց քարոզչությունը հաստատվում էր իրենց տրված բոլոր նշաններով:

LUK

ՂՈՒԿԱՍ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ

ՂՈՒԿԱՍԻ

Ղուկասը հույն բժիշկ էր, աշակերտել է Պողոս առաքյալին, դարձել նրա հավատարիմ գործակիցը և շատ անգամ ճանապարհորդել նրա հետ:

Ղուկասի Ավետարանը Հիսուսին ներկայացնում է որպես Իսրայելի և մանավանդ ամբողջ մարդկության Փրկչի: Ավետարանի սկզբում կա մի երկար մուտք, որտեղ նկարագրված են Հովհաննես Մկրտչի ու Հիսուսի ծնունդների ավետումն ու ծննդյան հանգամանքները՝ Չաքարիայի օրհներգով, Մարիամի փառաբանական երգով, հրեշտակների օրհներգությամբ և Սիմեոն ծերունու օրհնաբանությամբ հանդերձ, որոնք հենց սկզբից մեզ են փոխանցում Ղուկասի Ավետարանի հիմնական պատգամը՝ Քրիստոսի աստվածային ծագման և փրկության համաշխարհային նշանակության մասին:

Ղուկասի Ավետարանում նաև հատուկ ձևով արտացոլված է Աստծու սերը, մանավանդ խոնարհ դասի մարդկանց նկատմամբ: Այս Ավետարանը հաճախ կոչում են «Մեղավորի Ավետարան»: Դա խոնարհների, աղքատների, զրկվածների, այրիների և օտարականների Ավետարանն է: Այս Ավետարանը առավել ամբողջական կերպով տալիս է Հիսուսի կյանքի պատմությունը՝ սկսած Հովհաննես Մկրտչի ծնունդից մինչև Հիսուսի հարությունը: Հեղինակի նպատակն է եղել Հիսուսի կյանքի դեպքերը պատմել կանոնավոր դասավորումով: Իսկ Հիսուսի հարությունից հետո քրիստոնեության տարածման և զորացման պատմությունը նույն հեղինակը պատմում է «Առաքյալների գործերը» գրքում:

Հատկանշականն այն է, որ մի շարք դրվագներ և առակներ գտնում ենք միայն Ղուկասի Ավետարանում: Այսպես, օրինակ, Հիսուսի ծննդյան ժամանակ հրեշտակների երգը, հովիվների այցը, պատանի Հիսուսը տաճարում, փարիսեցու և մաքսավորի, բարի սամարացու, անառակ որդու և այլ առակներ, Չակքեոսի և խաչված ավագակի դարձը և այլն:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-4):
- Հովհաննես Մկրտչի և Հիսուսի ծնունդն ու մանկությունը (1.5-2.52):
- Հովհաննես Մկրտչի առաքելությունը (3.1-20):
- Հիսուսի մկրտությունն ու փորձությունը (3.21-4.13):
- Հիսուսի առաքելությունը Գալիլեայում (4.14-9.50):
- Հիսուսի երթը Գալիլեայից Երուսաղեմ (9.51-19.27):
- Վերջին շաբաթը Երուսաղեմում և նրա շրջակայքում (19.28-23.56):

- Հիսուսի հարությունը, հարությունից հետո երևալը և համբարձումը (24.1-53):

1

Նախաբան

(Գրծ 1.1)

¹ Ո՛վ պատվական Թեոֆիլոս,

շատերը ձեռնարկեցին պատմել և դասավորել այն դեպքերը, որ տեղի ունեցան մեր մեջ, ² և որ մեզ ավանդեցին նրանք, որոնք սկզբից նեթ դրանց ականատեսներն ու Աստծու խոսքի քարոզիչները եղան: ³ Նույնպես և ես, սկզբից բժախնդրությամբ հետազոտած լինելով այս դեպքերը, գրում եմ քեզ՝ դասավորելով դրանք, ⁴ որպեսզի գիտենաս, թե ճշմարիտ է, ինչ որ դու սովորեցիր:

Հովհաննես Մկրտչի ծնունդի ավետումը

⁵ Հրեաստանի Հերովդես թագավորի օրերին Չաքարիա անունով մի քահանա կար, որ Աբիայի քահանայական ընտանիքին էր պատկանում, իսկ նրա կինը՝ Եղիսաբեթը, Ահարոնի սերնդից էր: ⁶ Նրանք երկուսն էլ Աստծու աչքին արդար էին և իրենց անբասիր կյանքով հնազանդվում էին Տիրոջ պատվիրաններին և օրենքներին: ⁷ Նրանք զավակ չունեին, որովհետև Եղիսաբեթը ամուլ էր, և արդեն երկուսն էլ ծերացել էին:

⁸ Մի օր, երբ Չաքարիան, իր քահանայական դասակարգի հերթը հասած լինելով, իր պաշտոնն էր կատարում Աստծու առջև, ⁹ քահանայական սովորության համաձայն՝ իրեն վիճակվեց մտնել Տիրոջ սրբարանը՝ խնկարկելու համար: ¹⁰ Խնկարկության ժամանակ մի խուռն բազմություն դրսում կանգնած աղոթում էր: ¹¹ Եվ ահա Չաքարիային երևաց Տիրոջ հրեշտակը, որ կանգնած էր խնկի սեղանի աջ կողմը: ¹² Երբ Չաքարիան տեսավ հրեշտակին, շփոթվեց և սարսափի մատնվեց: ¹³ Տիրոջ հրեշտակը ասաց նրան.

-Մի՛ վախեցիր, Չաքա՛րիա, Աստված լսեց քո աղոթքը: Կինդ՝ Եղիսաբեթը, մի արու զավակ կձնի քեզ, և նրա անունը Հովհաննես կդնես: ¹⁴ Նա ուրախության և ցնծության պատճառ կլինի քեզ համար, և շատերը կուրախանան նրա ծնունդով: ¹⁵ Նա մեծ կլինի Տիրոջ աչքին, զինի և օղի չի խմի: Նա, դեռ չծնված, Սուրբ Հոգով կլցվի՝ ¹⁶ և Իսրայելի ժողովրդից շատերին կդարձնի դեպի իրենց Տեր Աստվածը: ¹⁷ Եղիայի հոգով և զորությամբ լցված՝ նա կքայլի Տիրոջ առջևից, որպեսզի հայրերին հաշտեցնի իրենց որդիների հետ, անհնազանդներին առաջնորդի դեպի արդարների իմաստությունը և

^{1.5} «Հերովդես թագավոր». տե՛ս Մտ 2.1-ի ծնթ: «Հրեաստան». հունական սովորության համաձայն, Ղուկաս ավետարանիչն այսպես է կոչում հրեաներով բնակեցված այդ ամբողջ երկրամասը՝ այժմյան Պաղեստինը:

^{1.5} Ա Մն 24.10:

^{1.13} Հուն. ձեռ. մեծ մասը չունի «Տիրոջ» բառը:

^{1.15} Թվ 6.3:

այդպիսով Տիրոջ գալստյանը նախապատրաստված մի ժողովուրդ պատրաստի:՝

¹⁸ Չաքարիան ասաց հրեշտակին.

-Ինչպե՞ս հավատամ քո ասածին, որովհետև ես ծեր եմ, և իմ կինն էլ առաջացած տարիքում է:

¹⁹ Հրեշտակը պատասխանեց.

-Ես Գաբրիելն եմ, որ կանգնում եմ Տիրոջ առաջ: Տե՛րն ուղարկեց ինձ, որ քեզ հետ խոսեմ և այս լուրն ավետեմ քեզ:՝ ²⁰ Եվ քանի որ չհավատացիր իմ խոսքերին, որոնք կիրականանան իրենց ժամանակին, դու համր կլինես և չես կարողանա խոսել մինչև այն օրը, երբ ասածս կատարվի:

²¹ Մինչ այդ ժողովուրդն սպասում էր Չաքարիային և զարմանում էր, որ նա ուշանում է սրբարանից դուրս գալ:՝ ²² Երբ նա դուրս եկավ, չէր կարողանում խոսել. նրանք իմացան, որ նա սրբարանում տեսիլք է տեսել: Չաքարիան պապանձվել էր և միայն շարժումներով էր խոսում նրանց հետ:

²³ Երբ Չաքարիայի պաշտոնավարության օրերը լրացան, նա գնաց իր տուն: ²⁴ Այդ օրերին նրա կինը՝ Եղիսաբեթը, հղիացավ: Հինգ ամիս տնից դուրս չեկավ: Ասում էր.

²⁵ -Իմ այս օրերին ահա Տերն այսպես օգնեց ինձ՝ վերացնելով մարդկանցից կրած իմ նախատինքը:

Հիսուսի ծննդյան ավետումը

²⁶ Եղիսաբեթի հղիության վեցերորդ ամսին Աստված Գաբրիել հրեշտակին ուղարկեց Գալիլեայի Նազարեթ քաղաքը, ²⁷ մի կույսի մոտ, որ նշանված էր Դավթի սերնդից Հովսեփ անունով մի մարդու հետ: Կույսի անունը Մարիամ էր:՝ ²⁸ Հրեշտակը, գալով Մարիամի մոտ, ասաց.

-Ուրախացի՛ր, շնորհալի՛ կույս, որովհետև Աստված քեզ հետ է:

²⁹ Այս խոսքի վրա Մարիամը խռովվեց. նա մտածում էր, թե ի՛նչ է նշանակում այս ողջույնը: ³⁰ Սակայն հրեշտակն ասաց նրան.

-Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետև դու արժանացար Աստծու շնորհին: ³¹ Ահա դու կհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես:՝ ³² Նա մեծ կլինի և Բարձրալի Որդի կկոչվի: Տեր Աստված նրան կտա իր հոր՝ Դավթի գահը,՝ ³³ և նա հավիտյան կթագավորի Հակոբի սերունդների վրա: Նրա թագավորությունը վախճան չի ունենա:

³⁴ Մարիամն ասաց հրեշտակին.

-Ինչպե՞ս կարող է պատահել դա, քանի որ ես ամուսնացած չեմ:

³⁵ Հրեշտակը պատասխանեց.

՝1.17 Մդ 4.5-6, Սր 48.10-11:

՝1.19 Դն 8.16, 9.21, Տր 12.15:

՝1.21 «Ժողովուրդն սպասում էր Չաքարիային». քահանան խունկերի սեղանի վրա խունկ ծխեցնելուց հետո պետք է դուրս գար՝ քահանայական օրհնությունը տալու ժողովրդին (հմմտ Թվ 6.24-26):

՝1.27 Մտ 1.18:

՝1.31 Մտ 1.21:

՝1.32-33 Բ Թգ 7.12, 13, 16, Ես 9.7:

-Սուրբ Հոգին վրադ կգա, և Բարձրյալի գորությունը կհանգչի քեզ վրա, որովհետև քեզնից ծնվելիք զավակը սուրբ է և Աստծու Որդի պիտի կոչվի: ³⁶ Ահա քո ազգական Եղիսաբեթն էլ, չնայած որ ծեր և ամուլ էր, այս վեցերորդ ամիսն է, ինչ հղի է:

³⁷ Իմացի՛ր, որ Աստծու համար անկարելի բան չկա:՝

³⁸ Մարիամն ասաց.

-Ես Աստծու աղախինն եմ, թող քո ասածը լինի:

Ապա հրեշտակը գնաց Մարիամի մոտից:

Մարիամն այցելում է Եղիսաբեթին

³⁹ Նույն օրերին Մարիամը ճանապարհ ընկնելով շտապ գնաց Հուդայի լեռնային շրջանի քաղաքներից մեկը: ⁴⁰ Այնտեղ Զաքարիայի տուն մտնելով՝ Եղիսաբեթին ողջույն տվեց: ⁴¹ Երբ Եղիսաբեթը Մարիամի ողջույնը լսեց, երեխան շարժվեց իր որովայնում, և Եղիսաբեթը, Սուրբ Հոգուց ներշնչված, ⁴² բարձրաձայն ասաց.

-Օրհնյա՛լ ես դու կանանց մեջ, և օրհնյա՛լ է այն զավակը, որ կրում ես քո որովայնում:՝ ⁴³ Ինչպիսի՛ երջանկություն, որ իմ Տիրոջ մայրն այցելում է ինձ, ⁴⁴ որովհետև երբ քո ողջույնը լսեցի, երեխաս ուրախությամբ շարժվեց իմ որովայնում: ⁴⁵ Երանի՛ քեզ, որ հավատացիր, որովհետև Աստծու կողմից քեզ ասվածները պիտի կատարվեն:

Մարիամի օրհներգությունը

⁴⁶ Մարիամն ասաց.

«Կգովերգեմ Տիրոջը.՝

⁴⁷ ահա հոգիս ցնծում է

Աստծով՝ իմ փրկիչով,

⁴⁸ որովհետև նա տեսավ

հեգությունն իր աղախինի:

Այսուհետև սերունդները բոլոր

երանի են տալու ինձ,՝

⁴⁹ քանզի հզոր Աստված ինձ համար

մեծամեծ գործեր արեց.

սուրբ է անունը նրա:

⁵⁰ Բոլոր ժամանակներում

ողորմությամբ է նայում նա

աստվածավախ մարդկանց վրա:

⁵¹ Նա ցույց տվեց գորությունն իր հզոր բազկով,

ոչնչացրեց հպարտներին

իրենց բոլոր խորհուրդներով:

՝1.37 Ծն 18.14:

՝1.42 Հղթ 13.18:

՝1.46-55 Ա. Թգ 2.1-10:

՝1.48 Ա. Թգ 1.11:

⁵² Արքաներին գահազրկեց,
խոնարհներին վեր բարձրացրեց:⁵³ Քաղցածներին նա լիացրեց բարիքներով,
հարուստներին դատարկաձեռն արձակեց:
⁵⁴ Պաշտպան եղավ իր ծառային՝ Իսրայելին,
հավատարիմ մնալով իր ողորմությանը,
⁵⁵ ինչպես որ խոստացել էր մեր հայրերին՝
Աբրահամին և նրա զավակներին»:

⁵⁶ Եղիսաբեթի մոտ շուրջ երեք ամիս մնալուց հետո Մարիամը վերադարձավ իր տուն:

Հովհաննես Մկրտչի ծնունդը

⁵⁷ Եղիսաբեթի ծննդաբերության ժամանակը հասավ, և նա մի որդի ծնեց: ⁵⁸ Երբ նրա հարևաններն ու ազգականները լսեցին, թե ինչքան մեծ է եղել Տիրոջ ողորմությունը նրա հանդեպ, ուրախացան Եղիսաբեթի հետ:

⁵⁹ Փոքրիկի ծննդյան ութերորդ օրը եկան նրան թլփատելու, և երբ նրան իր հոր անունով ուզում էին Չաքարիա կոչել,⁶⁰ մայրն ասաց.

-Ո՛չ, Հովհաննես պիտի կոչվի:

⁶¹ Սակայն ներկաներն առարկում էին՝ ասելով.

-Բայց ձեր գերդաստանի մեջ Հովհաննես անունով ոչ մեկը չկա:

⁶² Այս պատճառով նշանացի դիմեցին նրա հորը՝ իմանալու համար, թե ի՛նչ կկամենա, որ կոչվի երեխան: ⁶³ Չաքարիան մի տախտակ ուզեց և վրան գրեց Հովհաննես: Բոլորն էլ զարմացան: ⁶⁴ Նույն պահին Չաքարիայի լեզուն բացվեց, և նա սկսեց խոսել և օրհնել Աստծուն: ⁶⁵ Վախ ընկավ բոլոր ներկաների և հարևանների մեջ, որոնք լսեցին այս, և Հրեաստանի ամբողջ լեռնակողմում ամեն մարդ այս մասին էր խոսում: ⁶⁶ Այս լսելով՝ ամենքն էլ խորհում էին և ասում.

-Արդյոք այս մանուկն ինչպիսի՞ն կլինի:

Եվ Տիրոջ զորությունը նրա հետ էր:

Չաքարիայի օրհներգությունը

⁶⁷ Նրա հայրը՝ Չաքարիան, Սուրբ Հոգով լցված, մարգարեացավ՝ ասելով.

⁶⁸ «Օրհնյալ է Տեր Աստված Իսրայելի,

որ օգնության հասավ

և փրկություն բերեց իր ժողովրդին:

⁶⁹ Իր ծառայի՝ Դավթի սերնդից նա մեզ տվեց հզոր մի Փրկիչ:

⁷⁰ Իր սուրբ մարգարեների միջոցով նա վաղուց խոստացավ

⁷¹ փրկել մեզ մեր թշնամիներից

ու բոլոր մեզ ատողներից,

^{1.52} Հբ 5.11, 12.19, Սբ 10.14:

^{1.55} Ծն 17.7:

^{1.59} Ղև 12.3:

⁷² և մեր հայրերի հանդեպ ողորմությունն իր ցույց տալ՝
 հավատարիմ մնալով իր սուրբ ուխտին,
⁷³ տալու մեզ այն, ինչ երդումով
 խոստացել էր Աբրահամին՝ մեր հորը,
⁷⁴ որպեսզի մենք առանց վախի,
 այլևս փրկված մեր թշնամիներից,
 կարողանանք պաշտել նրան
⁷⁵ մեր կյանքի բոլոր օրերին,
 և ներկայանալ նրան
 որպես արդար և սուրբ մարդիկ:
⁷⁶ Եվ դու, ո՛վ իմ որդյակ,
 դու Բարձրյալի մարգարեն պիտի կոչվես,
 պիտի քայլես Տիրոջ առաջից՝
 նրա ճամփան պատրաստելու համար,^{*}
⁷⁷ իմացնելու համար նրա ժողովրդին,
 թե պիտի փրկվի՝ իր մեղքերին ներում գտնելով:
⁷⁸ քանզի Աստված իր գթառատ ողորմությամբ
 իբրև Արեգակ՝ երկնքից պիտի ծագի մեզ վրա
⁷⁹ և հայտնվի մեզ.
 մենք, որ մնում էինք խավարում և մահվան ստվերի տակ,
 որպեսզի մեր ոտքերն ուղղի
 դեպի ճանապարհը խաղաղության»:^{*}
⁸⁰ Երեխան աճում էր մարմնով ու զորանում հոգով:
 Նա բնակվում էր անապատում մինչև այն օրը, երբ երևաց Իսրայելում:^{*}

2

Հիսուսի ծնունդը

(Մտ 1.18-25)

¹ Այդ օրերին Օգոստոս կայսրը հրապարակեց մի հրամանագիր՝ իր կայսրության սահմաններում գտնվող բնակիչների մարդահամար անցկացնելու:^{*} ² Այս առաջին մարդահամարը տեղի ունեցավ Սիրիայի կառավարիչ Կյուրենիոսի օրերին:^{*} ³ Ամեն մարդ իր հայրենի քաղաքն էր գնում՝ արձանագրել տալու իր անունը:^{*} ⁴ Հովսեփը ևս, Դավթի ցեղից և ազգատոհմից լինելով, Գալիլեայի Նազարեթ քաղաքից ելավ ⁵ և իր

^{1.76} Մդ 3.1:

^{1.79} Ես 9.2:

^{1.80} «Անապատում», տե՛ս Մտ 3.1-ի ծնթ:

^{2.1} «Օգոստոս». Օկտավիանոս Օգոստոսը ՔԱ 29-ՔՀ 14թթ. եղել է Հռոմի կայսրը:

^{2.2} «Առաջին մարդահամարը... Կյուրենիոսի օրերին». Կյուրենիոսը երկու անգամ եղել է Սիրիայի և Պաղեստինի կառավարիչ, նախ՝ ՔԱ 6-4 թթ., իսկ երկրորդ անգամ՝ ՔՀ 6-9թթ., և երկու անգամ էլ մարդահամար է անցկացրել:

անունն արձանագրել տալու համար գնաց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքը՝ Դավիթ թագավորի ծննդավայրը: Նրան ուղեկցում էր իր նշանածը՝ Մարիամը, որը հղի էր:

⁶ Բեթղեհեմում Մարիամի ծննդաբերության ժամանակը հասավ, ⁷ և նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մեջ, որովհետև պանդոկում նրանց համար տեղ չկար:

Հովիվները և հրեշտակները

⁸ Այնտեղ, դաշտերում, հովիվներ կային, որոնք գիշերով իրենց հոտերին պահակություն էին անում: ⁹ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց, և Տիրոջ փառքը լույսի պես ծագեց նրանց վրա: Հովիվները սաստիկ վախեցան: ¹⁰ Հրեշտակն ասաց նրանց.

-Մի՛ վախեցեք, ես մի ավետիս եմ տալու ձեզ, որ մեծ ուրախություն պիտի պատճառի ամբողջ ժողովրդին. ¹¹ այսօր Դավթի քաղաքում ծնվեց ձեր Փրկիչը, որ Օծյալ Տերն է: ¹² Ձեզ համար ապացույց թող լինի հետևյալը. այնտեղ դուք կգտնեք խանձարուրով փաթաթված և մսուրի մեջ դրված մի մանկան:

¹³ Եվ հանկարծ այդ հրեշտակին միացավ երկնային զորքերի մի բազմություն, որ օրհնաբանում էր Աստծուն՝ ասելով.

¹⁴ «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում,
խաղաղությո՛ւն երկրի վրա
և հաճությո՛ւն մարդկանց միջև»:

¹⁵ Հրեշտակները հագիվ երկինք էին բարձրացել, որ հովիվներն ասացին միմյանց.

-Եկե՛ք գնանք Բեթղեհեմ և տեսնենք պատահածը, այն, ինչ Տերը հայտնեց մեզ:

¹⁶ Նրանք շտապ գնացին և այնտեղ գտան Մարիամին ու Հովսեփին, ինչպես նաև մսուրի մեջ դրված մանկանը: ¹⁷ Այս տեսնելով՝ նրանք Մարիամին և Հովսեփին հայտնեցին, ինչ որ հրեշտակն իրենց ասել էր մանկան մասին: ¹⁸ Բոլոր նրանք, ովքեր լսում էին հովիվների պատմածը, զարմանում էին: ¹⁹ Մարիամն այս բոլոր ասվածները պահում էր իր մտքում և խորհում դրանց մասին: ²⁰ Իսկ հովիվները վերադարձան՝ փառաբանելով և օրհնաբանելով Աստծուն այն ամենի համար, ինչ տեսել ու լսել էին, և ճիշտ այնպես էր, ինչպես հրեշտակը պատմել էր իրենց:

²¹ Ուրօ օր հետո, երբ մանկանը թլփատելու ժամանակը հասավ, նրան կոչեցին Հիսուս, այն անունով, որ հրեշտակն էր տվել նրան, երբ դեռ չէր հղացվել իր մոր՝ Մարիամի որովայնում:

Հիսուսի ընծայումը տաճարին

²² Իսկ երբ Մովսեսի հաստատած Օրենքի համաձայն նրանց ծիսական մաքրության ժամանակը լրացավ, Հովսեփն ու Մարիամը մանկանը տարան Երուսաղեմ՝ Տիրոջն

^{2.9} Տբ 5.4:

^{2.14} «Խաղաղությո՛ւն երկրի վրա և հաճությո՛ւն մարդկանց միջև». մի շարք ձեռ. ունեն
«խաղաղությո՛ւն երկրի վրա՝ [աստվածա]հաճո՛ւմ մարդկանց»:

^{2.18} «Չարմանում էին» կամ «հիանում էին»:

^{2.21} ա Ղև 12.3: բ Ղկ 1.31:

ընծայելու,²³ որովհետև Տիրոջ Օրենքում գրված է. «Պետք է Տիրոջը նվիրվի ամեն արուզավակ, որ իր մոր առաջին զավակն է»,²⁴ ինչպես նաև Տիրոջ Օրենքի համաձայն՝ գոհ մատուցելու «մի գույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ»:

²⁵ Այն ժամանակ Երուսաղեմում Միմեոն անունով մի մարդ էր ապրում: Միմեոնն արդար և աստվածավախ էր և Իսրայելի փրկությանն էր սպասում: Սուրբ Հոգին նրա հետ էր՝²⁶ և նրան վստահեցրել էր, որ նա չպիտի մեռներ, մինչև չտեսներ Տիրոջ Օծյալին: ²⁷ Արդ, Սուրբ Հոգուց առաջնորդվելով, նա գնաց տաճար: Երբ ծնողները մանուկ Հիսուսին տաճար բերեցին, որպեսզի կատարեն այն, ինչ Օրենքն էր պահանջում մանկան համար,²⁸ Միմեոնն իր գիրկն առավ փոքրիկին և գոհաբանեց Աստծուն՝ ասելով.

²⁹ -Այժմ, ո՛վ Տեր, համաձայն քո խոստման՝

թող որ քո ծառան մեռնի խաղաղությամբ,

³⁰ քանզի այքերս տեսան Փրկչին,

³¹ որ ուղարկեցիր դու բոլոր ժողովուրդներին,

³² որպես լույս՝ լուսավորելու հեթանոսներին

և լինելու փառքն Իսրայելի՝ քո ժողովրդի:՝

³³ Հիսուսի հայրն ու մայրը զարմանքով էին լսում այս խոսքերը, որ Միմեոնն ասում էր մանկան մասին: ³⁴ Միմեոնն օրհնեց նրանց, ապա ասաց մանկան մորը՝ Մարիամին.

-Այս մանուկը Իսրայելի ժողովրդից շատերի անկման՝³⁵ և շատերի փրկության պատճառ պիտի դառնա: Նա նաև հակառակության նշան պիտի լինի և շատերի սրտերի խորհուրդները հայտնի պիտի դարձնի: Իսկ զավով քեզ՝ քո սրտի միջով էլ սուր պիտի անցնի:

³⁶ Այնտեղ էր նաև Փանվելի աղջիկը՝ Աննա մարգարեուհին, որ Աստծու ցեղից էր: Աննան բավականին առաջացած տարիքում էր. նա միայն յոթ տարի էր ամուսնական կյանք վարել՝³⁷ և այժմ ութսունչորս տարեկան այրի կին էր: Տաճարից չէր հեռանում, այլ ծոմապահությամբ և աղոթքով գիշեր-ցերեկ պաշտամունք էր մատուցում Աստծուն: ³⁸ Արդ, նա ևս նույն ժամին զավով՝ գոհություն հայտնեց Տիրոջը և սկսեց

2.22-24 Ղև 12.6-8:

2.23 Ելք 13.2, 12:

2.25 «Իսրայելի փրկությանը». բոց՝ «Իսրայելի մխիթարությանը»: Աստված Եսայի մարգարեի բերանով խոստացել էր մխիթարել իր ժողովրդին՝ Քրիստոսով մեղքերի թողություն պարգևելով նրան (հմմտ Ես 40.1-2):

2.32 Ես 42.6, 49.6, 52.10:

2.33 «Հիսուսի հայրն ու մայրը». մի շարք ձեռ. ունեն «Հովսեփն ու Հիսուսի մայրը»: «Չարմանքով» կամ «հիացումով»:

2.34-35 «Շատերի անկման և շատերի փրկության պատճառ». Քրիստոսն ինքը չէ, որ պատճառ պիտի դառնա, սակայն նրա ներկայությունը մի դատաստան է, նրան հավատացողները պիտի փրկվեն, իսկ չհավատացողներն ու մերժողները պիտի դատապարտվեն (հմմտ Հհ 3.18):

2.36-37 Հղթ 8.4-5:

2.37 «Եվ այժմ ութսունչորս տարեկան այրի կին էր» կամ «և ութսունչորս տարուց ի վեր այրի էր»:

մանկան մասին խոսել բոլոր նրանց հետ, ովքեր Երուսաղեմում Փրկչին էին սպասում:

Վերադարձ դեպի Նազարեթ

³⁹ Երբ Հովսեփն ու Մարիամը կատարեցին Տիրոջ Օրենքի պահանջները, վերադարձան Գալիլեա, իրենց Նազարեթ քաղաքը: ⁴⁰ Այնտեղ մանուկը մեծացավ, գորացավ և լցվեց իմաստությամբ: Աստծու շնորհը նրա վրա էր:

Մանուկ Հիսուսը տաճարում

⁴¹ Հիսուսի ծնողներն ամեն տարի, Ջատկի տոնին, Երուսաղեմ էին գնում: ⁴² Երբ Հիսուսը տասներկու տարեկան եղավ, նրանք Երուսաղեմ գնացին, ինչպես տոնի առթիվ սովորություն էր գնալ: ⁴³ Տոնակատարության ավարտին, մինչ նրանք վերադառնում էին, մանուկ Հիսուսը մնաց Երուսաղեմում: Նրա ծնողները չանդրադարձան դրան: ⁴⁴ Նրանք կարծում էին, թե նա իրենց ուղեկիցների հետ է: Մի օրվա ճանապարհ անցնելուց հետո սկսեցին նրան փնտրել ազգականների և ծանոթների մեջ:

⁴⁵ Երբ չգտան, հետ դարձան Երուսաղեմ՝ այնտեղ նրան փնտրելու համար: ⁴⁶ Երեք օր հետո նրան գտան տաճարում: Տաճարի ուսուցիչների հետ նստած՝ նա լսում էր նրանց և հարցեր ուղղում: ⁴⁷ Բոլոր նրանք, ովքեր լսում էին նրան, սքանչանում էին նրա իմաստության և տված պատասխանների վրա:

⁴⁸ Ծնողները երբ տեսան Հիսուսին, ապշած մնացին: Նրա մայրն ասաց.

-Այս ի՞նչ արեցիր դու մեզ հետ, տղա՛ս. ահա հայրդ ու ես տազնապած քեզ էինք փնտրում:

⁴⁹ Հիսուսն ասաց նրանց.

-Ինչո՞ւ էիք ինձ ուրիշ տեղ փնտրում. չգիտեի՞ք, որ Հորս տանը պիտի լինեմ:

⁵⁰ Սակայն նրա ծնողներն այս խոսքերի իմաստը չհասկացան:

⁵¹ Հետո Հիսուսն իր ծնողների հետ գնաց Նազարեթ և հնազանդ մնաց նրանց: Նրա մայրն այս բոլորը պահում էր իր սրտում: ⁵² Իսկ Հիսուսը զարգանում էր իմաստությամբ և մարմնով՝ սիրելի դառնալով Աստծուն և մարդկանց:

3

Հովհաննես Մկրտչի քարոզչությունը

՝2.38 «Երուսաղեմում Փրկչին էին սպասում», մի շարք ձեռ. ունեն «Երուսաղեմի փրկությանն էին սպասում»:

՝2.39 Մտ 2.23:

՝2.41 Ելք 12.1-27, Բ Օր 16.1-8:

՝2.42 «Տասներկու տարեկան». հրեաների մեջ պատանին այս տարիքում էր սկսում պատրաստվել հաջորդ տարվան՝ տասներեք տարեկան հասակին, որը համարվում էր կրոնական չափահասության տարիք, երբ նա իրավասու էր դառնում մաս կազմելու հրեական համայնքի կրոնական կյանքի:

՝2.43 «Նրա ծնողները». մի շարք ձեռ. ունեն «Հովսեփն ու նրա մայրը»:

՝2.49 «Հորս տանը պիտի լինեմ». հուն. բնագրում կարելի նաև հասկանալ «Հորս գործերով պիտի զբաղվեմ»:

՝2.52 Ա. Թգ 2.26, Առ 3.4:

(Մտ 3.1-12, Մր 1.1-8, Հհ 1.19-28)

¹ Տիբերիոս կայսեր գահակալության տասնհինգերորդ տարում Պոնտացի Պիղատոսը Հրեաստանի կառավարիչն էր, Հերովդեսը՝ Գալիլեայի չորրորդապետը, Հերովդեսի եղբայր Փիլիպպոսը՝ Իտուրիայի և Տրաքոնիտիսի չորրորդապետը, Լյուսանիասը՝ Աբիլենի չորրորդապետը,² իսկ Հաննան և Կայիափան այդ ժամանակվա քահանայապետներն էին:

Այդ օրերին Աստված անապատում իր խոսքն ուղղեց Ջաքարիայի որդի Հովհաննեսին:³ Հովհաննեսը, Հորդանան գետի եզերքին գտնվող բոլոր շրջանները գնալով, քարոզում էր ապաշխարել և մկրտվել, որպեսզի Աստված թողություն տա մեղքերին:⁴ Այս մասին Եսայի մարգարեի գրքում գրված է.

«Անապատում աղաղակողի ձայնն ասում է.

«Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը,
հարթեցե՛ք ը նրա շավիղները:»

⁵ Բոլոր ձորերը պիտի լցվեն,
բոլոր լեռներն ու բլուրները պիտի հավասարվեն գետնին,
բոլոր ճանապարհները ուղիղ պիտի դառնան,
խորդուբորդ արահետները՝ հարթ-հավասար,

⁶ և ամբողջ մարդկությունը պիտի տեսնի
Աստծու ուղարկած Փրկչին»:

⁷ Բազմաթիվ մարդիկ գնում էին Հովհաննեսի մոտ՝ մկրտվելու նրանից: Հովհաննեսն ասում էր նրանց.

-Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ասաց ձեզ, թե կարող եք փախչել Աստծու տալիք պատժից:

⁸ Այսուհետև գործո՞վ ցույց տվեք, որ ապաշխարել եք: Դուք ձեզ մի՛ կրկնեք՝ ասելով.

«Մենք Աբրահամի որդիներ ենք»: Ասում եմ ձեզ, որ Աստված այս քարերից էլ կարող է Աբրահամի որդիներ հանել:⁹ Ահավասիկ, կացինը պատրաստ է ծառերը կտրելու իրենց արմատներից: Այն ծառը, որ լավ պտուղ չի տալիս, պիտի կտրվի և կրակը գցվի:¹⁰

¹⁰ -Ուրեմն ի՞նչ անենք,- հարցրեց նրան ժողովուրդը:

¹¹ Հովհաննեսը պատասխանեց.

Յ.1 «Տիբերիոս կայսր». սա Օգոստոս կայսեր հաջորդը եղավ Հռոմի կայսերական գահի վրա և իշխեց ՔԱ 14-37թթ., բայց կայսրության շատ նահանգներում նրա իշխանությունը գործնականում սկիզբ էր առել 11թ.: Ուստի նրա 15-րդ տարին կլինի շուրջ 25/26թ.: «Պոնտացի Պիղատոսը» Հրեաստանի, Սամարիայի և Եդոմի հռոմեացի կուսակալը, այսինքն՝ կառավարիչն էր ՔՀ 26-36թթ.: «Հերովդես չորրորդապետ». տե՛ս Մտ 14.1-ի և Մր 6.14-ի ծնթ:

Յ.2 «Հաննան և Կայիափա քահանայապետներ». ըստ հրեական Օրենքի՝ միաժամանակ երկու քահանայապետներ չէին կարող լինել: Հաննա քահանայապետը գահընկեց է եղել ՔՀ 15թ., և նրան հաջորդել է իր փեսան՝ Կայիափան (հմմտ Հհ 18.13), որը պաշտոնավարեց մինչև 36թ.: Սակայն Հաննան դեռևս մեծ ազդեցություն ուներ, նա հաճախ հիշատակվում է Ավետարաններում և «Առաքյալների գործերը» գրքում:

Յ.4-6 Ես 40.3-5 [LXX]:

Յ.7 Մտ 12.34, 23.33:

Յ.8 Հհ 8.33:

Յ.9 Մտ 7.19:

-Ով երկու հագուստ ունի, թող մեկը տա չունեցողին, իսկ ով ուտելիք ունի, նույն ձևով թող ուրիշի հետ կիսի:

¹² Մկրտվելու եկան նաև մաքսավորները և հարցրին նրան.

-Վարդապե՛տ, մենք ի՞նչ անենք:

¹³ Հովհաննեսը պատասխանեց.

-Դուք ձեզ հրամայվածից ավելի մի՛ գանձեք:

¹⁴ Զինվորներն էլ եկան և հարցրին նրան.

-Իսկ մե՞նք ինչ անենք:

Նա պատասխանեց.

-Ոչ մեկից բռնությամբ կամ զրպարտություն անելով դրամ մի՛ վերցրեք:

Բավարարվեցե՛ք ձեզ տրված ռոճիկով:

¹⁵ Ժողովուրդն սկսում էր Հովհաննեսի մեջ տեսնել իր սպասած Փրկչին. բոլորն էլ իրենք իրենց մեջ մտածում էին, թե արդյոք Հովհաննե՛սն է Քրիստոսը: ¹⁶ Հովհաննեսը նրանց պատասխանեց.

-Ես ձեզ ջրով եմ մկրտում, բայց գալու է ինձնից ավելի հզորը, որը ձեզ պիտի մկրտի Սուրբ Հոգով և կրակով: Ես նրա կոշիկների կապերն իսկ արձակելու արժանի չեմ:

¹⁷ Քամհարն իր ձեռքին է, նա կմաքրի իր կալը, ցորենը կհավաքի իր շտեմարանում, իսկ հարդը կայրի անշեջ կրակով:

¹⁸ Նա տակավին ուրիշ շատ ուսուցումներով քաջալերում էր ժողովրդին՝ փրկության ավետիս տալով նրանց:

¹⁹ Հովհաննեսը հանդիմանեց Հերովդես չորրորդապետին իր եղբոր կնոջը՝ Հերովդիային խլելու և նրա հետ ամուսնանալու համար, նաև նրա արած բոլոր չար գործերի համար: ²⁰ Այս պատճառով Հերովդեսը բանտարկել տվեց Հովհաննեսին՝ այսպիսով մի չար գործ ևս ավելացնելով մյուսների վրա:

Հիսուսի մկրտությունը

(Մտ 3.13-17, Մր 1.9-11)

²¹ Ներկա ամբողջ ժողովրդի մկրտվելուց հետո Հիսուսը ևս մկրտվեց: Երբ Հիսուսն աղոթում էր, երկինքը բացվեց, ²² և Սուրբ Հոգին տեսանելի կերպարանքով աղավնու նման իջավ նրա վրա: Երկնքից մի ձայն լսվեց, որ ասում էր.

-Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ բարեհաճությունը:

Հիսուսի ազգատոհմը

(Մտ 1.1-17)

²³ Հիսուսը շուրջ երեսուն տարեկան էր, երբ սկսեց իր գործունեությունը: Ինչպես

^{3.12} Ղկ 7.29:

^{3.17} «Քամհար». տե՛ս Մտ 3.12-ի ծնթ:

^{3.19} «Իր եղբոր կնոջը». շատ ձեռ. ունեն «իր Փիլիպպոս եղբոր կնոջը»:

^{3.19-20} Մտ 14.3-4, Մր 6.17-18:

^{3.22} Ծն 22.2, Սղ 2.7, Ես 42.1, Մտ 3.17, Մր 1.11, Ղկ 9.35:

մարդիկ կարծում էին, նա որդին էր Հովսեփի, որի նախահայրերն էին հորից սկսած՝
Հակոբը, Հեղին,²⁴ Մատթատը, Ղևին, Մելքին, Հաննեն, Հովսեփը,²⁵ Մատաթիան,
Ամոսը, Նավումը, Եսլին, Նակկեն,²⁶ Մահաթը, Մատաթիան, Մեմեին, Յոսեքը, Յոդան,
²⁷ Յոհաննան, Ռեսան, Ջորոբաբելը, Սաղաթիելը, Ներին,²⁸ Մելքին, Ադդին, Կոսամը,
Ելմադամը, 3/4րդը,²⁹ Հեսուն, Եղիազարը, Յորիմը, Մատթատը, Ղևին,³⁰ Սիմեոնը,
Հուդան, Հովսեփը, Հովնամը, Եղիակիմը,³¹ Մելեան, Մեննան, Մատտաթան, Նաթանը,
Դավիթը,³² Հեսսեն, Օբեդը, Բոազը, Սալմոնը, Նաասոնը,³³ Ամինադաբը, Արամը,
Ադմինը, Աոնին, Հեսրոնը, Փերեզը, Հուդան,³⁴ Հակոբը, Իսահակը, Աբրահամը,
Թարան, Նաքորը,³⁵ Սերուքը, Ռազավը, Փալեկը, Եբերը, Սելան,³⁶ Կայնանը,
Արփաքսադը, Սեմը, Նոյը, Լամեքը,³⁷ Մաթուսաղան, Ենոքը, Յարեդը, Մադադիելը,
Կայնանը,³⁸ Ենոսը, Մեթը, և Ադամը, որ ստեղծվեց Աստծուց:

4

Հիսուսի փորձությունը

(Մտ 4.1-11, Մր 1.12-13)

¹ Հիսուսը, Սուրբ Հոգով լցված, վերադարձավ Հորդանանից: Ապա Սուրբ Հոգով առաջնորդված՝ գնաց անապատ,² որտեղ քառասուն օր փորձվեց Սատանայից: Այդ օրերին նա ո՛չ կերավ և ո՛չ էլ խմեց: Երբ քառասուն օրը լրացավ, Հիսուսը քաղց զգաց:

³ Սատանան ասաց նրան.

-Եթե Աստծու Որդին ես, հրամայի՛ր, որ այս քարը հաց դառնա:

⁴ Հիսուսը պատասխանեց.

-Օրենքի գրքում գրված է. «Մարդ միայն հացով չի ապրի, այլ Աստծու բոլոր խոսքերով»:^{*}

⁵ Ապա Սատանան նրան հանեց մի բարձր լեռան վրա և մի վայրկյանում նրան ցույց տալով աշխարհի բոլոր թագավորությունները՝ ⁶ ասաց.

-Այս բոլորի վրա իշխանություն և սրանց ամբողջ փառքը քեզ կտամ, սրանք ինձ են տրված, և ում ուզենամ՝ կտամ: ⁷ Արդ, եթե դու իմ առջև ընկած երկրպագես ինձ, այս բոլորը քոնր կլինեն:

⁸ Հիսուսն ասաց.

-Օրենքի գրքում գրված է. «Քո Տեր Աստծո՛ւն պիտի երկրպագես և նրան միայն պաշտես»:^{*}

⁹ Հետո Սատանան նրան տարավ Երուսաղեմ և կանգնեցրեց տաճարի

^{3.23} «Շուրջ երեսուն տարեկան էր». Հիսուսը մկրտվեց և իր հրապարակային գործունեությունն սկսեց շուրջ 26թ. աշնանը (տե՛ս 3.1-ի ծնթ): Նրա ծնունդը տեղի է ունեցել ՔԱ շուրջ 6/5թ.: «Ինչպես մարդիկ կարծում էին», այս բառերով Ղուկասը մի անգամ ևս շեշտում է Հիսուսի կուսական ծնունդը՝ նշելով, որ Հովսեփը նրա իսկական հայրը չէր: Հուն. ձեռ. մեծ մասը չունի «Հակոբ» անունը:

^{3.33} Հուն. շատ ձեռ. չունեն «Արամ» անունը:

^{4.4} Բ Օր 8.3:

^{4.8} «Օրենքի գրքում» բառերից առաջ մի շարք ձեռ. ունեն «Հետևի՛ր զնա, Սատանա՛»:

^{4.8} Բ Օր 6.13:

աշտարակներից մեկի վրա և ասաց նրան.

-Եթե Աստծու Որդին ես, դու քեզ այստեղից ցած գցիր, ¹⁰ որովհետև Սաղմոսում գրված է, թե «Աստված իր հրեշտակներին կպատվիրի, որ քեզ պահպանեն», ¹¹ և թե՛ «Հրեշտակներն իրենց ձեռքերի վրա պիտի վերցնեն քեզ, այնպես, որ ոտքդ քարի չխփվի»:

¹² Հիսուսը պատասխանեց.

-Օրենքի գրքում գրված է. «Քո Տեր Աստծուն չփորձե՛ս»:

¹³ Սատանան, ամեն տեսակի փորձություն կատարած լինելով, որոշ ժամանակ հեռացավ Հիսուսից:

Հիսուսն սկսում է իր առաքելությունը Գալիլեայում

(Մտ 4.12-17, Մր 1.14-15)

¹⁴ Հիսուսը Սուրբ Հոգու գործությամբ վերադարձավ Գալիլեա, և նրա համբավը տարածվեց ամբողջ գավառում: ¹⁵ Նա ուսուցանում էր նրանց ժողովարաններում՝ արժանանալով բոլորի հիացմունքին ու գովասանքին:

Հիսուսը մերժվում է Նազարեթում

(Մտ 13.53-58, Մր 6.1-6)

¹⁶ Եկավ Նազարեթ քաղաքը, որտեղ սնվել մեծացել էր, և ըստ իր սովորության՝ շաբաթ օրը գնաց ժողովարան: Երբ նա վեր կացավ կարդալու օրվա ընթերցվածը, ¹⁷ նրան տվեցին Եսայի մարգարեի գիրքը: Նա բաց արեց և գտավ այն տեղը, որտեղ ասվում էր.

¹⁸ «Տիրոջ Հոգին իմ վրա է,
քանզի նա ինձ օծեց և ուղարկեց՝
փրկության ավետիս տալու աղքատներին,
մխիթարելու սրտաբեկներին,՝

¹⁹ ազատություն բերելու գերիներին,
տեսողություն տալու կույրերին, ազատելու կեղեքվածներին
և հայտարարելու, թե հասել է ժամանակը,
երբ Տերը կփրկի իր ժողովրդին»:

²⁰ Ապա փակեց գիրքը, տվեց պաշտոնյային և նստեց: Ժողովարանում բոլոր մարդկանց աչքերը նրա վրա էին սևեռված, ²¹ երբ նա ասաց.

-Այս մարգարեությունը, որ դուք լսեցիք, այսօր ահա իրականացավ:

²² Բոլորն էլ տպավորվել էին նրանից և նրա շնորհալի խոսքերով հիացած՝ ասում էին.

-Այս մարդը Հովսեփի որդին չէ՞:

¹⁰4.10-11 Մտ 91.11-12:

¹¹4.12 Բ Օր 6.16:

¹²4.13 «Որոշ ժամանակ» կամ «մինչև որոշված ժամանակը»:

¹³4.18-19 Ես 61 1-2 [LXX]:

²³ Հիսուսն ասաց.

-Անտարակույս, ինձ հետևյալ առածը պիտի ասեք. «Բժի՛շկ, բժշկի՛ր ինքդ քեզ»: Այն ամենը, ինչ որ լսեցինք, թե արել ես Կափառնայում, այստեղ՝ քո հայրենի գավառում էլ արա:

²⁴ Եվ ավելացրեց.

-Բայց դուք ինքներդ էլ գիտեք, որ մարգարեն իր ծննդավայրում պատիվ չունի:

²⁵ Օրինակներով ձեզ ասեմ. Եղիայի օրերին Իսրայելում բազմաթիվ այրի կանայք կային, երբ երեքուկես տարի երկնքից անձրև չտեղաց, և սաստիկ սով տիրեց ամբողջ երկրում:²⁶ Բայց Եղիան նրանցից ոչ մեկի մոտ չուղարկվեց, այլ ուղարկվեց միայն Սիդոնի մոտիկ Սարեփթա գյուղում բնակվող մի այրի կնոջ մոտ:²⁷ Նույնպես, Եղիսե մարգարեի օրերին Իսրայելում բազմաթիվ բորոտներ կային, բայց նրանցից ոչ մեկը չբժշկվեց, այլ միայն Նեեման անունով մի ասորի:

²⁸ Այս ակնարկությունները լսելով՝ ժողովարանում գտնվողները բարկությամբ լցվեցին:²⁹ Վեր կացան, Հիսուսին քաղաքից դուրս հանեցին և գահավեժ անելու նպատակով նրան տարան մինչև կատարն այն լեռան, որի վրա կառուցված էր իրենց քաղաքը:³⁰ Բայց Հիսուսն անցավ գնաց նրանց միջով:

Պիղծ ոգով մարդու բժշկումը

(Մր 1.21-28)

³¹ Ապա նա գնաց Գալիլեայի Կափառնայում քաղաքը, որտեղ շաբաթ օրով սկսեց ուսուցանել ժողովրդին:³² Բոլորն էլ զարմանում էին նրա ուսուցման կերպի վրա, որովհետև նա հեղինակությամբ էր խոսում:

³³ Ժողովարանում մի մարդ կար, որ բռնվել էր պիղծ ոգուց. ոգին բարձրաձայն գոչեց.

³⁴ -Հիսու՛ս Նազովրեցի, թո՛ղ, ի՞նչ ես ուզում մեզանից. մեզ ոչնչացնելու եկար. գիտե՛նք, թե ով ես, դու Աստծու Մուրբն ես:

³⁵ Հիսուսը սաստեց ոգուն և ասաց.

-Լռի՛ր և դո՛ւրս եկ այդ մարդուց:

Ոգին բոլորի առաջ գետին զարկեց մարդուն և դուրս ելավ՝ առանց վնասելու նրան:

³⁶ Բոլորն էլ ապշած ասում էին միմյանց.

-Ի՛նչ ուժեղ խոսք. հեղինակությամբ և զորությամբ է սաստում չար ոգիներին, և դրանք դուրս են ելնում:

³⁷ Եվ Հիսուսի համբավը տարածվում էր գավառի բոլոր կողմերում:

Հիսուսը բժշկում է

(Մտ 8.14-17, Մր 1.29-34)

*4.24 Հհ 4.44:

*4.25 Դ Թգ 17.1:

*4.26 Գ Թգ 17.8-16:

*4.27 Դ Թգ 5.1-14:

*4.31 «Կափառնայում». տե՛ս Մտ 4.13-ի ծնթ:

*4.32 Մտ 7.28-29:

³⁸ Ժողովարանից դուրս գալով՝ Հիսուսը գնաց Սիմոնի տուն: Սիմոնի զոքանչը բարձր ջերմություն ուներ և սաստիկ տանջվում էր դրանից: Հիսուսին աղաչեցին, որ բժշկի նրան: ³⁹ Հիսուսը գնաց նրա մոտ և սաստեց ջերմին: Ջերմն անցավ, և հիվանդը, իսկույն ոտքի կանգնելով, սկսեց սպասարկել նրանց:

⁴⁰ Մայրամուտին բոլոր նրանք, որոնք զանազան ցավերից բռնված հիվանդներ ունեին, բերեցին Հիսուսի մոտ: Նրանցից յուրաքանչյուրի վրա իր ձեռքերը դնելով՝ Հիսուսը բժշկում էր նրանց: ⁴¹ Շատերի միջից դներ էլ էին ելնում, որոնք բարձրաձայն ասում էին.

-Դու Աստծու Որդին ես:

Մակայն Հիսուսը սաստում էր դրանց ու թույլ չէր տալիս, որ խոսեն, որովհետև դները գիտեին, որ նա Քրիստոսն է:

Հիսուսը քարոզում է Գալիլեայում

(Մր 1.35-39)

⁴² Առավոտյան Հիսուսը ելավ գնաց ամայի մի վայր: Ժողովուրդն սկսեց փնտրել նրան: Երբ եկան նրա մոտ, չէին թողնում, որ նա հեռանա իրենցից: ⁴³ Հիսուսն ասաց նրանց.

-Աստծու արքայությունը ես ուրիշ քաղաքներում էլ պետք է ավետեմ, որովհետև Աստված հենց դրա համար ուղարկեց ինձ:

⁴⁴ Եվ Հիսուսը քարոզում էր Գալիլեայի ժողովարաններում:*

5

Հրաշալի ձկնորսություն և առաջին աշակերտներ

(Մտ 4.18-22, Մր 1.16-20, Հհ 1.35-42)

¹ Հիսուսը կանգնած էր Գեննեսարեթի լճի եզերքին, երբ ժողովուրդն սկսեց խոնվել նրա շուրջը՝ Աստծու խոսքը լսելու համար: ² Նա երկու նավակ տեսավ լճի ափին. ձկնորսները, նավակից դուրս եկած, իրենց ուռկաններն էին վանում: ³ Հիսուսը մտավ նավակներից մեկի մեջ, որ Սիմոնին էր պատկանում, և խնդրեց նրան, որ նավակը ցամաքից մի քիչ հեռացնի: Եվ նավակի մեջ նստած՝ սկսեց ուսուցանել ժողովրդին:

⁴ Երբ նա իր խոսքը վերջացրեց, ասաց Սիմոնին.

-Մի քիչ ավելի խորե՛րը տար նավակը, և զցցե՛ք ձեր ուռկանները ձուկ որսալու համար:

⁵ Սիմոնը պատասխանեց.

-Վարդապե՛տ, ամբողջ գիշեր հոգնեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց քո խոսքի համար ուռկանները կզցենք:*

***4.40** «Մայրամուտին», տե՛ս Մր 1.32-ի ծնթ:

***4.44** «Գալիլեայի», մի շարք ձեռ. ունեն «Հրեաստանի»:

***5.1** «Գեննեսարեթի լիճ». Գալիլեայի լճի մեկ ուրիշ անունն է: Տե՛ս նաև Մտ 14.34-ի ծնթ:

***5.1-3** Մտ 13.1-2, Մր 3.9-10, 4.1:

***5.5** Հհ 21.3:

⁶ Ուռկանները գցեցին և մեծ քանակությամբ ձուկ բռնեցին դրանց մեջ, այնքան, որ նրանց ուռկանները պատռվում էին: ⁷ Այն ժամանակ նրանք նշան արեցին իրենց գործընկերներին, որոնք մյուս նավակի մեջ էին, որ գան և օգնեն իրենց: Նրանք եկան, և երկու նավակներն էլ լցվեցին ընկղմվելու աստիճան: ⁸ Երբ Սիմոն Պետրոսը տեսավ այս, ընկավ Հիսուսի ծնկների առաջ և ասաց.

-Հեռացի՛ր ինձնից, Տե՛ր, որովհետև ես մեղավոր մարդ եմ:

⁹ Քանի որ ինքը և իր հետ եղողները շատ էին վախեցել՝ տեսնելով իրենց բռնած մեծ քանակությամբ ձկները: ¹⁰ Նույն վիճակին էին մատնվել Զեբեդեոսի որդիները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, որոնք Սիմոնի գործընկերներն էին:

Հիսուսն ասաց Սիմոնին.

-Մի՛ վախեցիր, այսուհետև դու մարդկանց պիտի որսաս՝ կյանքի համար:

¹¹ Նրանք նավակները ցամաք հանեցին և ամեն ինչ թողնելով՝ հետևեցին Հիսուսին:

Հիսուսը բժշկում է մի բորոտի

(Մտ 8.1-4, Մր 1.40-45)

¹² Մի օր, երբ Հիսուսը մի քաղաք հասավ, ահա բորոտությամբ պատված մի մարդ տեսավ նրան և երեսի վրա գետին ընկնելով՝ աղաչեց և ասաց.

-Տե՛ր, եթե ուզենաս, կարո՞ղ ես ինձ մաքրել:

¹³ Հիսուսն իր ձեռքը երկարեց, դիպավ նրան և ասաց.

-Ուզում եմ, մաքրվի՛ր:

Իսկույն բորոտությունը գնաց նրանից: ¹⁴ Ապա Հիսուսը պատվիրեց նրան.

-Ոչ ոքի բան մի՛ ասա, այլ գնա՛ և դու քեզ ցո՛ւյց տուր քահանային. ապա, որպես վկայություն ժողովրդին, թե մաքրվել ես քո բորոտությունից, մատուցի՛ր քո զոհը, ինչպես որ հրամայել է Մովսեսը:

¹⁵ Եվ Հիսուսի համբավը հետզհետե ավելի էր տարածվում. խուռն բազմություններ էին հավաքվում՝ լսելու նրան և բժշկվելու իրենց հիվանդություններից: ¹⁶ Իսկ նա խույս էր տալիս ամայի վայրեր և աղոթում էր:

Հիսուսը բժշկում է մի անդամալույծի

(Մտ 9.1-8, Մր 2.1-12)

¹⁷ Մի օր, երբ Հիսուսն ուսուցանում էր, Գալիլեայի և Հրեաստանի շրջաններից և Երուսաղեմից եկած փարիսեցիներ և Օրենքի ուսուցիչներ էլ էին նստած այնտեղ: Հիսուսը Տիրոջ գործությամբ բժշկումներ էր կատարում: ¹⁸ Եվ ահա մի քանի հոգի բերեցին մի անդամալույծի՝ մահճի վրա դրած: Նրանք ուզում էին ներս մտցնել նրան և դնել Հիսուսի առաջ: ¹⁹ Երբ խճողումի պատճառով ներս մտնելու ճանապարհ չգտան, բարձրացան կտուրը և առաստաղից կախելով՝ մահիճով հանդերձ նրան իջեցրին բազմության մեջտեղը, Հիսուսի առաջ: ²⁰ Հիսուսը, տեսնելով նրանց հավատը, ասաց անդամալույծին.

Մ.6 Հհ 21.6:

Մ.14 Ղև 14.1-32:

-Ո՛վ մարդ, քո մեղքերը ներված են քեզ:

²¹ Օրենքի ուսուցիչներն ու փարիսեցիները սկսեցին խորհել և ասել միմյանց.

-Ո՛վ է այս մարդը, որ համարձակվում է այսպիսի հայհոյանքներ անել. Աստծուց բացի ո՞վ կարող է ներել մեղքերը:

²² Հիսուսը, գիտենալով նրանց մտածումը, ասաց.

-Ի՞նչ է ձեր այդ մտածումը. ²³ ո՞րն է ավելի հեշտ՝ «Քո մեղքերը ներված են քեզ» ասելը, թե՞ «Վե՛ր կաց, քայլի՛ր» ասելը: ²⁴ Բայց պետք է իմանաք, որ Մարդու Որդին երկրի վրա մեղքերը ներելու իշխանություն ունի:

Ապա դառնալով անդամալուծին՝ ասաց.

-Քե՛զ եմ ասում, վե՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ և գնա՛ քո տուն:

²⁵ Անդամալուծը բոլորի առաջ իսկույն ոտքի կանգնեց, վերցրեց մահիճը, որի վրա ինքը պատկել էր, և գնաց իր տուն՝ փառավորելով Աստծուն: ²⁶ Բոլորն էլ ապշեցին, լցվեցին վախով և փառավորում էին Աստծուն՝ ասելով.

-Այսօր հրաշալի բաներ տեսանք:

Հիսուսը կանչում է Ղևիին

(Մտ 9.9-13, Մր 2.13-17)

²⁷ Այս հրաշքից հետո, երբ Հիսուսը դուրս ելավ այնտեղից, տեսավ Ղևի անունով մի մաքսավորի, որ նստած էր մաքս գանձելու, և ասաց նրան.

-Հետևի՛ր ինձ:

²⁸ Ղևին թողեց ամեն ինչ, վեր կացավ և հետևեց նրան:

²⁹ Ապա Ղևին իր տան մեջ Հիսուսի համար մեծ ճաշկերույթ սովեց: Հրավիրվածների մեջ շատ մաքսավորներ էլ կային, որոնք միասին սեղան էին նստել: ³⁰ Փարիսեցիներն ու Օրենքի ուսուցիչները սկսեցին Հիսուսի դեմ տրտնջալ իր աշակերտներին՝ ասելով.

-Ինչո՞ւ եք մաքսավորների և մեղավորների հետ ուտում ու խմում:

³¹ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Առողջնե՛րը չեն, որ բժշկի կարիք ունեն, այլ հիվանդները: ³² Ես չեկա արդարներին ասպաշխարության հրավիրելու, այլ մեղավորներին:

Ծոմապահության մասին

(Մտ 9.14-17, Մր 2.18-22)

³³ Նրանցից ոմանք հարցրին Հիսուսին.

-Հովհաննեսի աշակերտներն ինչո՞ւ են հաճախ ծոմ պահում և աղոթում. նույնը անում են նաև փարիսեցիների աշակերտները, մինչդեռ քո աշակերտներն ուտում են և խմում:

³⁴ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Կարո՞ղ եք հարսանիքի հրավիրվածներին ասել, որ ծոմ պահեն, երբ փեսան

^{5.21} «Աստծուց բացի ո՞վ կարող է ներել մեղքերը». հմմտ Մղ 103.3 և Ես 43.25:

^{5.30} Ղկ 15.1-2:

^{5.32} «Չեկա արդարներին կանչելու». տե՛ս Մտ 9.13-ի ծնթ:

տակավին իրենց հետ է: ³⁵ Կգան օրեր, երբ փեսան կվերցվի իրենցից, և այն ժամանակ իրենք էլ ծոմ կպահեն:

³⁶ Ապա մի օրինակ էլ տվեց նրանց.

-Ոչ ոք նոր զգեստից մի կտոր վերցնելով՝ հին զգեստի համար կարկատան չի անի. այդպիսով թե՛ նոր զգեստը կփչանա, և թե՛ կարկատանը չի հարմարվի հնի հետ:

³⁷ Նմանապես, ոչ ոք նոր գինին հին տիկերի մեջ չի լցնի, այլապես նոր գինին կպայթեցնի հին տիկերը և պատճառ կդառնա, որ թե՛ գինին թափվի և թե՛ տիկերը փչանան: ³⁸ Ընդհակառակը, նոր գինին նոր տիկերի մեջ պետք է լցվի, որպեսզի երկուսն էլ չփչանան: ³⁹ Ոչ ոք հին գինին խմելուց հետո իսկույն նոր գինի չի ուզի, քանի որ կասի. «Հին գինին ավելի քաղցրահամ է»:

6

Շաբաթ օրը հարգելու հարցը

(Մտ 12.1-8, Մր 2.23-28)

¹ Հիսուսն առաջին ամսվա երկրորդ շաբաթ օրն անցնում էր ցորենի արտերի միջով: Նրա աշակերտները, հասկեր պոկելով, շփում էին իրենց ավերի մեջ և հատիկներն ուտում: ² Փարիսեցիներից ոմանք ասացին նրանց.

-Այդ ի՞նչ եք անում, չե՞ որ Օրենքն արգելում է դա անել շաբաթ օրով:

³ Հիսուսը նրանց պատասխանեց.

-Դուք չե՞ք կարդացել, թե ի՞նչ արեց Դավիթը, երբ ինքը և իր հետ եղողները քաղց զգացին: ⁴ Աստծու տուն չմտա՞վ, չկերա՞վ առաջավորության հացը և չտվե՞ց նաև իր հետ եղողներին, մինչդեռ Օրենքի համաձայն, քահանաներից բացի ոչ ոք չէր կարող ուտել այդ հացից:

⁵ Ապա ավելացրեց.

-Մարդու Որդին Տերն է և շաբաթ օրվա:

Չորացած ձեռքով մարդու բժշկումը

(Մտ 12.9-14, Մր 3.1-6)

⁶ Մի ուրիշ շաբաթ օր Հիսուսը մտավ ժողովարան և սկսեց ուսուցանել: Այնտեղ մի մարդ կար, որի աջ ձեռքը չորացած էր: ⁷ Օրենքի ուսուցիչներն ու փարիսեցիները սպասում էին՝ տեսնելու համար, թե Հիսուսը շաբաթ օրով կբժշկի՞ մարդուն, որպեսզի ամբաստանեն նրան: ⁸ Հիսուսն իմացավ նրանց մտածումը և չորացած ձեռքով

՝5.39 Շատ ձեռ. չունեն *«իսկույն»* բառը:

՝6.1 Մի շաբթ ձեռ. չունեն *«առաջին ամսվա երկրորդ»* բառերը: Հրեաների կրոնական օրացույցի առաջին ամիսը Նիսան, այսինքն՝ մարտ-ապրիլ ամիսն էր (տե՛ս Բառարանը): Ապրիլի սկզբին հնձի ժամանակը մոտեցած էր լինում, բայց Օրենքն արգելում էր նոր ցորենից ճաշակել՝ նախքան երախայրիքի ընծայումը Աստծուն (տե՛ս Ղև 23.5-14):

՝6.1 Բ Օր 23.25:

՝6.3-4 Ա Թգ 21.1-6:

՝6.4 Ղև 24.9:

մարդուն դառնալով՝ ասաց.

-Վե՛ր կաց և մեջտե՛ղ արի:

Նա վեր կացավ և կանգնեց մեջտեղում: ⁹ Հետո Հիսուսն ասաց նրանց.

-Մի բան հարցնեմ ձեզ. մեր Օրենքը շարքա օրով ի՞նչ է թույլատրում անել՝ բարի՞ք գործել, թե՞ չարիք, մի կյանք փրկե՞լ, թե՞ կորցնել:

¹⁰ Ապա մի հայացք գցեց իր շուրջը գտնվողների վրա և վրդովված ասաց մարդուն.

-Երկարի՛ր ձեռքդ:

Նա ձեռքը երկարեց, և ահա չորացած ձեռքը առողջացավ մյուս ձեռքի նման:՝

¹¹ Օրենքի ուսուցիչներն ու փարիսեցիները կատաղությամբ լցվեցին և իրար հետ խորհրդակցում էին, թե ի՛նչ անեն Հիսուսին:

Հիսուսն ընտրում է տասներկու առաքյալներին

(Մտ 10.1-4, Մր 3.13-19, Գրծ 1-3)

¹² Մի օր Հիսուսը լեռ բարձրացավ աղոթելու և ամբողջ գիշերն անցկացրեց Աստծուն աղոթելով: ¹³ Առավոտյան իր մոտ կանչեց իր աշակերտներին և նրանցից ընտրեց տասներկու հոգի, որոնց նաև առաքյալ կոչեց: ¹⁴ Այդ առաքյալներն էին՝ Սիմոնը, որին և Պետրոս անվանեց, Անդրեասը՝ նրա եղբայրը, Հակոբոսը, Հովհաննեսը, Փիլիպպոսը, Բարթոլոմեոսը, ¹⁵ Մատթեոսը, Թովմասը, Ալփեոսի որդին՝ Հակոբոսը, Նախանձահույզ կոչված Սիմոնը, ¹⁶ Հակոբի որդի Հուդան և Հուդա Իսկարիովտացին, որը մատնիչ եղավ:՝

Հիսուսն ուսուցանում է և բժշկում

(Մտ 4.23-25, Մր 3.7-11)

¹⁷ Ապա նրանց հետ միասին իջավ մի տափարակ տեղ: Այնտեղ էին բոլոր աշակերտները, ինչպես նաև ժողովրդի մի մեծ բազմություն, որ հավաքվել էր Հրեաստանի բոլոր կողմերից, Երուսաղեմից և շրջակայքից և Տյուրոսի ու Սիդոնի ծովեզրյա շրջաններից: ¹⁸ Բոլորն էլ եկել էին լսելու Հիսուսի խոսքերը և բժշկվելու իրենց հիվանդություններից: Նրանք, ովքեր չար ոգիներից էին տառապում, բժշկվում էին: ¹⁹ Ամբողջ ժողովուրդն ուզում էր դիպչել նրան, որովհետև նրանից մի զորություն էր դուրս գալիս և բոլորին էլ բժշկում:

Երանիներ և վայեր

(Մտ 5.3-12)

²⁰ Հիսուսը, իր աչքերը հառելով աշակերտներին, ասաց.

-Երանի՛ աղքատներիդ, որովհետև ձերն է Աստծու արքայությունը:՝

^{6.10} Շատ ձեռ. չունեն *«և վրդովված»* բառը:

^{6.16} *«Հակոբի որդին՝ Հուդան»*. սա Թադեոս առաքյալն է, որը ծանոթ է նաև մի երրորդ անունով՝ Ղեբեոս (տե՛ս Մտ 10.3):

^{6.17} *«Հրեաստան»*. ինչպես Ղկ 1.5-ում, այստեղ ևս այս անունով է հասկացվում ամբողջ Պաղեստինը և ոչ միայն նույնանուն նահանգը: Շատ ձեռ. չունեն *«և շրջակայքից»* բառերը:

^{6.20} *«Աղքատներիդ»*. մի քանի ձեռ. ունեն *«հոգով աղքատներիդ»*:

²¹ Երանի՛ ձեզ, որ այժմ քաղցած եք, որովհետև կհագնաք:

Երանի՛ ձեզ, որ այժմ լաց եք լինում, որովհետև կծիծաղեք:

²² Երանի՛ ձեզ, երբ մարդիկ ձեզ ասեն, մերժեն ձեզ ընդունել, նախատեն և վարկաբեկեն ձեզ՝ Մարդու Որդուն հետևելու պատճառով: ²³ Ուրախացե՛ք և ցնծացե՛ք այդ օրը, որովհետև մեծ պիտի լինի ձեր վարձատրությունը երկնքում: Նրանց նախահայրերը նույն վերաբերմունքն ունեցան մարգարեների հանդեպ:

²⁴ Բայց վա՛յ ձեզ՝ հարուստներիդ, որովհետև դուք ձեր հանգիստն ու վարձն արդեն իսկ ստացել եք:

²⁵ Վա՛յ ձեզ, որ այժմ հագեցած եք, որովհետև քաղցելու եք:

Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում եք, որովհետև պիտի սգաք ու լաց լինեք:

²⁶ Վա՛յ ձեզ, երբ որ մարդիկ գովաբանեն ձեզ, որովհետև նրանց հայրերը նույն վերաբերմունքն ունեցան սուտ մարգարեների հանդեպ:

Մեր թշնամու հանդեպ

(Մտ 5.38-48, 7.12)

²⁷ - Բայց դուք, որ լսում եք ինձ, ասում եմ ձեզ. «Միրեցե՛ք ձեր թշնամիներին, բարություն՝ ն արեք ձեզ ատողներին. ²⁸ օրհնեցե՛ք ձեզ անիծողներին և աղոթեցե՛ք նրանց համար, որոնք նեղություն են պատճառում ձեզ: ²⁹ Ով որ երեսիդ մի ապտակ խփի, մյուսն էլ դարձրո՛ւ նրան. ով որ բաճկոնդ վրայիցդ հանի, թո՛ւյլ տուր, որ նա շապիկդ էլ վերցնի: ³⁰ Ով որ քեզնից մի բան խնդրի, տո՛ւր, և ով որ քեզնից մի բան վերցնի, հետ մի՛ պահանջիր: ³¹ Ինչ որ ուզում եք, որ մարդիկ անեն ձեզ, դուք էլ նո՛ւյնը արեք նրանց: ³² Ի՞նչ արժանիք կունենաք, եթե սիրեք ձեզ սիրողներին միայն. մեղավորներն էլ են սիրում իրենց սիրողներին: ³³ Ի՞նչ արժանիք կունենաք, եթե բարիք անեք միայն նրանց, որոնք բարիք են անում ձեզ. մեղավորներն էլ են նույնն անում: ³⁴ Դարձյալ, ի՞նչ արժանիք կունենաք, եթե փոխ տաք միայն նրանց, որոնցից ձեր տվածը հետ վերցնելու ակնկալություն ունեք. չէ՞ որ մեղավորներն էլ են փոխ տալիս մեղավորներին և իրենց տվածը ամբողջությամբ հետ են վերցնում:

³⁵ Ընդհակառակը, սիրեցե՛ք ձեր թշնամիներին և բարություն՝ ն արեք նրանց. փոխ տվեք նրանց, որոնցից հույս չունեք ձեր տվածը հետ վերցնելու: Եվ այն ժամանակ առատ կլինի ձեր վարձատրությունը, այն ժամանակ դուք Բարձրյալ Աստծու որդիներ կլինեք, որովհետև նա գթասիրտ է չարերի և ապերախստների հանդեպ: ³⁶ Գթասի՛րտ եղեք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն էլ գթասիրտ է»:

Չդատել ուրիշներին

(Մտ 7.1-5, 10.24-25, 15.14)

*6.22 Ա Պտ 4.14:

*6.23 Բ Մն 36.16, Գրժ 7.52:

*6.31 Տբ 4.15, Մտ 7.12:

*6.35 «Բարություն՝ ն արեք». գրք. ավելացնում է «ձեզ ատողներին» բառերը:

*6.35 Սբ 4.10-11:

³⁷ -Մի՛ դատեք, որպեսզի Աստված էլ ձեզ չդատի. մի՛ դատապարտեք, որպեսզի Աստված էլ ձեզ չդատապարտի: Ներեցե՛ք ուրիշներին, և Աստված էլ ձեզ կների:
³⁸ Տվե՛ք, և Աստված կտա ձեզ. կտա լավ չափով, բերնեբերան, զեղուն առատությամբ: Ինչ չափով որ չափեք ուրիշներին, նույն չափով Աստված ձեզ կչափի:

³⁹ Մի՛ օրինակ էլ տվեց նրանց.

-Մի՛ թե կույրը կարող է մի ուրիշ կույրի առաջնորդել. չե՞ որ երկուսն էլ փուրը կրնկնեն:⁴⁰ Աշակերտը ուսուցչից բարձր չէ, բայց կատարյալ պատրաստություն ունեցող աշակերտն իր ուսուցչի պես կլինի:⁴¹

⁴¹ Ինչո՞ւ քո եղբոր աչքի միջի շյուղը տեսնում ես, բայց քո աչքի միջի գերանը չես նշմարում: ⁴² Կամ ինչպե՞ս կարող ես եղբորդ ասել. «Եղբա՛յր, թո՛ղ, որ քո աչքի միջից շյուղը հանեն», մինչդեռ դու քո աչքի միջի գերանը չես տեսնում: Կեղծավո՛ր, նախ քո աչքի միջից գերա՛նը հանիր, որպեսզի հստակ տեսնելով՝ կարողանաս քո եղբոր աչքից շյուղը հանել:

Ծառը և նրա պտուղը

(Մտ 7.16-20, 12.33-35)

⁴³ -Լավ ծառը վատ պտուղ չի տա, ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ: ⁴⁴ Յուրաքանչյուր ծառ իր պտուղից է ճանաչվում: Ոչ ոք փշից թուզ չի քաղում և ոչ էլ մորենուց՝ խաղող:⁴⁵

⁴⁵ Բարի մարդն իր սրտի բարի գանձերից բարիք է բխեցնում, իսկ չար մարդը՝ չարիք, քանի որ բերանը սրտի մեջ եղածից է խոսում:

Ժայռի վրա կառուցել տունը

(Մտ 7.24-27)

⁴⁶ -Ինչո՞ւ ինձ «Տե՛ր, Տե՛ր» եք կոչում, բայց իմ ասածները չեք կատարում: ⁴⁷ Ով որ ինձ մոտ է գալիս և իմ խոսքերը լսելով՝ գործադրում է դրանք, ձեզ ասեմ, թե նա ում է նման: ⁴⁸ Նման է այն մարդուն, որ տուն կառուցելու համար հողը խորն է փորում և հիմքը հաստատում ժայռի վրա: Երբ գետը, հեղեղներից հորդելով, զարկի այդ տանը, չի կարողանա խախտել այն. որովհետև տան հիմքը ժայռի վրա է հաստատված: ⁴⁹ Իսկ ով լսում է իմ խոսքերը, բայց չի գործադրում դրանք, նման է այն մարդուն, որ հողի վրա առանց հիմքի տուն է կառուցում. երբ գետը զարկում է դրան, այն իսկույն քանդվում է: Եվ ի՛նչ ահավոր է լինում այդ տան կործանումը:

7

Հարյուրապետի ծառայի բժշկումը

(Մտ 8.5-13, Հհ 4.46-54)

¹ Հիսուսը ժողովրդին իր բոլոր ասելիքները վերջացնելուց հետո գնաց

^{6.39} Մտ 15.14:

^{6.40} Մտ 10.24-25, Հհ 13.16, 15.20:

^{6.44} Մտ 12.33:

Կափառնայում: ² Այնտեղ հռոմեացի մի հարյուրապետ կար, որի ծառան, որ շատ սիրելի էր նրան, մահամերձ հիվանդ էր: ³ Հարյուրապետը երբ լսեց Հիսուսի մասին, մի քանի հրեա երեցների ուղարկեց նրա մոտ՝ խնդրելով, որ գա և փրկի իր ծառային: ⁴ Երեցները եկան Հիսուսի մոտ և թախանձագին խնդրելով՝ ասացին.

-Արժանավոր մեկին է, որ բարիք պիտի անես. ⁵ նա սիրում է մեր ազգը և ինքն է, որ ժողովարան կառուցեց մեզ համար:

⁶ Հիսուսը գնաց նրանց հետ: Երբ մոտեցել էր տանը, հարյուրապետն իր բարեկամներին ուղարկեց, որ նրան ասեն.

-Տե՛ր, նեղություն մի՛ կրիր, ես արժանի չեմ քեզ իմ հարկի տակ ընդունելու. ⁷ դրա համար էլ ինձ արժանի չհամարեցի գալու քեզ մոտ: ⁸ Հրահանգի՛ր միայն, և իմ ծառան կառողջանա, որովհետև ես ինքս էլ, որպես իշխանության ենթակա մարդ, իմ ձեռքի տակ զինվորներ ունեմ. մեկին ասում եմ՝ գնա՛, և գնում է, մեկ ուրիշին, թե՛՝ արի՛, և գալիս է, և իմ ծառային, թե՛՝ արա՛ այս բանը, և կատարում է:

⁹ Հիսուսը երբ այս լսեց, հիացավ նրա վրա և դառնալով իրեն հետևող բազմությանը՝ ասաց.

-Իսկապես ասում եմ ձեզ, որ Իսրայելի մեջ անգամ այսչափ հավատ չգտա:

¹⁰ Պատգամավորները տուն վերադարձան և հիվանդ ծառային գտան բժշկված:

Այրի կնոջ որդու հարությունը

¹¹ Հետևյալ օրը Հիսուսը ճանապարհ ընկավ՝ Նային կոչված քաղաքը գնալու համար: Նրա հետ էին գնում իր աշակերտները և բազում ժողովուրդ: ¹² Հազիվ էր նա մոտեցել քաղաքի դարպասին, որ ահա դարպասից դուրս էին բերում մի մեռել, որ այրի մի մոր միակ որդին էր: Քաղաքի ժողովրդից շատերը հետևում էին նրան:

¹³ Երբ Տերը կնոջը տեսավ, գրեց նրան և ասաց.

-Մի՛ լար:

¹⁴ Ապա մոտեցավ և դիպավ դագաղին: Դագաղը տանողները կանգ առան: Հիսուսն ասաց.

-Պատանի՛, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց:

¹⁵ Մեռած պատանին վեր կացավ նստեց և սկսեց խոսել: Հիսուսը նրան հանձնեց մորը:

¹⁶ Բոլորն էլ վախեցան և փառավորեցին Աստծուն՝ ասելով.

-Մի մեծ մարգարե է հայտնվել մեր մեջ, Աստված եկել է փրկելու իր ժողովրդին:

¹⁷ Եվ Հիսուսի մասին այս լուրերը տարածվեցին Հրեաստանում և նրա շրջակայքում:

Հովհաննես Մկրտչի պատգամավորները

(Մտ 11.2-6)

¹⁸ Երբ Հովհաննեսին այս բոլորի մասին պատմեցին իր աշակերտները,

¹⁹ Հովհաննեսը, իր աշակերտներից երկուսին իր մոտ կանչելով, նրանց ուղարկեց

^{7.11} «Հետևյալ օրը». մի շարք ձեռ. ունեն «այնուհետև»: «Նային». Գալիլեայի հարավարևելյան կողմում գտնվող մի փոքրիկ քաղաք:

Հիսուսի մոտ՝ հարցնելու.

-Դո՞ւ ես նա, որ գալու էր, թե՞ մեկ ուրիշին սպասենք՝

²⁰ Աշակերտները եկան և ասացին Հիսուսին.

-Հովհաննես Մկրտիչը մեզ ուղարկեց քեզ մոտ՝ հարցնելու, թե՞ «Դո՞ւ ես նա, որ գալու էր, թե՞ մեկ ուրիշին սպասենք»:

²¹ Այդ նույն ժամին Հիսուսը շատերին բժշկեց իրենց հիվանդություններից, ցավերից և չար ոգիներից, ինչպես նաև բազմաթիվ կույրերի տեսողություն շնորհեց: ²² Ապա Հովհաննեսի ուղարկած երկու աշակերտներին ասաց.

-Գնացե՛ք և Հովհաննեսին պատմեցե՛ք, ինչ որ տեսաք և լսեցիք. ահա կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրվում, խուլերը՝ լսում, մեռելները հարություն են առնում, և Ավետարանը քարոզվում է աղքատներին:՝ ²³ Երանի՛ նրան, ով իմ պատճառով իր հավատը չի կորցնում:

Հիսուսի կարծիքը Հովհաննեսի մասին

(Մտ 11.7-19)

²⁴ Երբ Հովհաննեսի պատգամավորները մեկնեցին, Հիսուսն սկսեց խոսել Հովհաննեսի մասին՝ ժողովրդին ասելով.

-Ի՞նչ տեսնելու գնացիք անապատ. քամուց շարժվող եղե՞գ: ²⁵ Հապա ի՞նչ տեսնելու գնացիք. փափուկ զգեստներ հագած մի մա՛րդ: Բայց նրանք, որ փառավոր զգեստներ են հագնում և ճոխության մեջ են ապրում, նրանք արքունի պալատներում են: ²⁶ Հապա ի՞նչ տեսնելու գնացիք. մի մարգարե՞: Այո՛, ասում եմ ձեզ, առավել, քան մի մարգարե. ²⁷ որովհետև Հովհաննեսի մասին է որ Տերն ասում է մարգարեության մեջ. «Ահա իմ պատգամավորին ուղարկում եմ քո առաջից, որ քեզ համար ճանապարհ պատրաստի»:

²⁸ Վստա՛հ եղեք, մարդկանց մեջ Հովհաննեսից մեծ մարգարե չի ծնվել, և սակայն Աստծու արքայության մեջ հետինը Հովհաննեսից ավելի մեծ է:

²⁹ Ամբողջ ժողովուրդը, ինչպես նաև մաքսավորները, որոնք Հովհաննեսից էին մկրտվել, երբ լսեցին այս խոսքերը, ճանաչեցին Աստծու արդար ծրագիրը:՝ ³⁰ Իսկ փարիսեցիներն ու Օրենքի ուսուցիչները, որոնք Հովհաննեսից չէին մկրտվել, մերժեցին ինչ որ Աստված ծրագրել էր իրենց համար:

³¹ Ապա Հիսուսը շարունակեց.

-Ու՞մ նմանեցնեմ այս սերնդի մարդկանց, ո՞ւմ են նման: ³² Նման են այն փոքրիկներին, որոնք նստում են հրապարակներում, ձայն են տալիս միմյանց և ասում. «Մենք նվազեցինք ձեզ համար, բայց դուք չպարեցիք. ողբի երգեր երգեցինք,

^{7.19} «Ուղարկեց Հիսուսի մոտ». շատ ձեռ. ունեն «Տիրոջ մոտ ուղարկեց»: «Դո՞ւ ես նա, որ գալու էր». խոսքը ՀԿ-ի մարգարեական խոստումների համաձայն, վերաբերում է սպասված Մեսիային կամ Օծյալին:

^{7.22} ա Ես 35.5-6: բ Ես 61.1:

^{7.23} «Իմ պատճառով» կամ «իմ հանդեպ»:

^{7.27} Մղ 3.1:

^{7.29-30} Մտ 21.32, Ղկ 3.12:

բայց դուք լաց չեղաք»:

³³ Եկավ Հովհաննես Մկրտիչը. ո՛չ հաց էր ուտում, ո՛չ էլ գինի խմում, և դուք ասում եք. «Դիվահար էր»:³⁴ Եկավ Մարդու Որդին. ուտում է և խմում, և դուք ասում եք. «Ահա ուտող-խմող մի մարդ՝ մաքսավորների և մեղավորների բարեկամ»:³⁵ Բայց արդարության հետևորդները կարող են հասկանալ Աստծու իմաստությունը:

Հիսուսը փարիսեցի Միմոնի տանը

³⁶ Փարիսեցիներից մեկը խնդրում էր Հիսուսին, որ միասին ճաշեն: Հիսուսը գնաց նրա տուն և նստեց ճաշելու:³⁷ Քաղաքում մի պոռնիկ կին կար, որ երբ լսեց, թե Հիսուսը փարիսեցու տանն է, մի շիշ անուշահոտ ազնիվ յուղ վերցնելով՝ եկավ փարիսեցու տուն:³⁸ Նա, հետևի կողմից Հիսուսի ոտքերի մոտ կանգնած, լաց էր լինում, արցունքներով թրջում էր նրա ոտքերը և մազերով սրբում, համբուրում էր ոտքերը և յուղով օծում:³⁹ Փարիսեցին, որ հրավիրել էր Հիսուսին, տեսնելով այս ասում էր ինքն իրեն.

-Եթե այս մարդը մարգարե լիներ, ապա կիմանար, թե ո՛վ է իրեն մոտեցող այս կինը, և թե ինչպիսի՛ մեղավոր կյանքով է ապրում նա:

⁴⁰ Հիսուսն ասաց փարիսեցուն.

-Միմոն՛ն, քեզ ասելու բան ունեմ:

-Ասա՛, Վարդապե՛տ,- ասաց նա:

⁴¹ Հիսուսն ասաց.

-Մի փոխատու երկու պարտապաններ ուներ. մեկը հինգ հարյուր արծաթ դրամ պարտք ուներ, մյուսը՝ հիսուն:⁴² Երբ նրանք չկարողացան դրամը վերադարձնել, պարտատերը երկուսին էլ պարտքը զիջեց: Հիմա դո՛ւ ասա, այս երկու պարտապաններից ո՞ր մեկն ավելի կսիրի նրան:

⁴³ Միմոնը պատասխանեց.

-Ինձ այնպես է թվում, թե նա, ում ավելի շատ շնորհեց:

-Ճի՛շտ դատեցիր,- ասաց Հիսուսը:

⁴⁴ Ապա դառնալով կնոջ կողմը՝ շարունակեց.

-Միմոն՛ն, տեսնո՞ւմ ես այս կնոջը: Ես տունդ մտա, բայց դու ոտքերս լվանալու համար ջուր չտվեցիր, մինչ սա իր արցունքներով թրջեց ոտքերս և իր մազերով սրբեց:⁴⁵ Դու բարի գալուստի մի համբույր չտվեցիր ինձ, մինչ սա տունդ մտնելուցս ի

^{7.33} Մի շարք ձեռ. չունեն «հաց» և «գինի» բառերը:

^{7.35} «Բայց արդարության հետևորդները կարող են հասկանալ Աստծու իմաստությունը». բոց՝ «Աստծու իմաստությունն արդարացվեց իր որդիներից»: Մի շարք ձեռ. ունեն «իր բոլոր որդիներից»: Տե՛ս Մտ 11.19-ի ծնթ:

^{7.37-38} Մտ 26.7, Սր 14.3, Հհ 12.3:

^{7.38} «Ոտքերի մոտ կանգնած» բացատրությունը հասկանալու համար պետք է հիշել, որ անցյալում ճաշի կամ ընթրիքի հրավիրվածները սեղանի շուրջը ընկողմանած բազմում էին՝ գլուխները սեղանի կողմը, իսկ ոտքերը դեպի հետ:

^{7.44-46} Արևելյան հյուրասիրությանը հասուկ սովորություն էր հյուրերի ոտքերը լվանալ, իսկ պատվավոր հյուրերի գլուխը անուշահոտ յուղով օծել, սիրո համբույր տալ և ապա սեղան նստեցնել (հմմտ Սղ 23.5):

վեր չդադարեց ոտքերս համբուրելուց: ⁴⁶ Դու յուղով իմ գլուխը չօծեցիր, մինչ սա անուշահոտ յուղով ոտքերս օծեց: ⁴⁷ Ուստի ասում եմ քեզ, քանի որ նա շատ սիրեց ինձ, իր բազմաթիվ մեղքերը ներված են իրեն: Քանզի ում ավելի են ներում, նա ավելի սեր է ցույց տալիս. իսկ ում քիչ են ներում, նա ավելի քիչ է սիրում:

⁴⁸ Ապա ասաց կնոջը.

-Քո մեղքերը ներված են քեզ:

⁴⁹ Նրանք, որ միասին սեղան էին նստել, սկսեցին ասել իրենց մտքում.

-Ո՞վ է այս մարդը, որ նույնիսկ մեղքերն է ներում:

⁵⁰ Իսկ Հիսուսն ասաց կնոջը.

-Քո հավատը քեզ փրկեց. գնա՛ խաղաղությամբ:

8

Հիսուսին ընկերացող կանայք

¹ Դրանից հետո Հիսուսը տասներկու աշակերտների հետ շրջում էր քաղաքներում և գյուղերում՝ քարոզելով և Աստծու արքայությունն ավետելով: ² Նրա հետ էին նաև մի շարք կանայք, որոնք բժշկվել էին չար ոգիներից և հիվանդություններից, ինչպես Մարիամը, որը կոչվում էր Մագդաղենացի, և որից նա յոթ չար ոգիներ էր դուրս հանել: ³ Հովհաննան՝ Հերովդեսի պալատի վերակացու Քուզայի կինը, Շուշանը, ինչպես նաև շատ ուրիշներ, որոնք իրենց միջոցներով հոգում էին Հիսուսի կարիքները:

Սերմնացանի առակը

(Մտ 13.1-9, Մր 4.1-9)

⁴ Երբ բազմաթիվ քաղաքներից մարդիկ սկսեցին հավաքվել նրա շուրջը, և խուռն մի բազմություն հավաքվեց, Հիսուսը հետևյալ առակը պատմեց նրանց.

⁵ -Մի սերմնացան ելավ սերմ ցանելու: Սերմանելու ժամանակ սերմերից մի քանիսն ընկան ճանապարհի եզրին ու ոտնակոխ եղան, և երկնքի թռչունները եկան ու կերան դրանք: ⁶ Ուրիշ սերմեր ընկան ժայռոտ տեղի վրա, և երբ բուսան, իսկույն չորացան, քանի որ հողը խոնավ չէր: ⁷ Մի քանիսն ընկան փշերի մեջ, և փշերը, նրանց հետ միասին բուսնելով, խեղդեցին դրանց: ⁸ Իսկ ուրիշ սերմեր էլ ընկան լավ և պարարտ հողի մեջ և բուսնելով՝ հարյուրապատիկ պտուղ տվեցին:

Այս առակը պատմելուց հետո նա ասաց.

-Ով լսելու ականջ ունի, թող լսի:

Հիսուսը մեկնում է սերմնացանի առակը

(Մտ 13.10-23, Մր 4.10-20)

⁹ Աշակերտները հարցրին Հիսուսին, թե ի՛նչ է առակի իմաստը: ¹⁰ Հիսուսը

8.2-3 Մտ 27.55-56, Մր 15.40-41, Ղկ 23.49:

8.3 «Հիսուսի» բառի փոխարեն մի շարք ձեռ. ունեն «նրանց»:

8.8 Շատ ձեռ. չունեն «և պարարտ» բառերը:

պատասխանեց.

-Դուք պետք է գիտենաք Աստծու արքայության գաղտնիքները, բայց ուրիշներին առականերով կհայտնվի, այնպես որ՝ «նայեն, բայց չտեսնեն, լսեն, բայց չհասկանան»:¹¹ Իսկ առակի իմաստը հետևյալն է. սերմը Աստծու խոսքն է:¹² Ճանապարհի եզրին գտնվող հողը պատկերն է այն մարդկանց, որոնք լսում են, բայց Սատանան գալիս ու նրանց սրտից հանում է Աստծու խոսքը, որպեսզի չհավատան և չփրկվեն:¹³ Ժայռոտ հողը նման է նրանց, որոնք երբ լսում են Աստծու խոսքը, ուրախությամբ ընդունում են այն. սակայն սրանք արմատ չունեն, այսինքն՝ հավատում են մի որոշ ժամանակի համար, իսկ փորձության ժամանակ՝ հեռանում:¹⁴ Փշերով ծածկված հողը նման է այն մարդկանց, որոնք լսում են Աստծու խոսքը, սակայն երկրային կյանքի հոգսերը, հարստությունը և հաճույքները, որոնցով ապրում են, խեղդում են նրանց մեջ ընկած սերմերը, և անպտուղ են դառնում:¹⁵ Իսկ պարարտ հողը նման է այն մարդկանց, որոնք բարի և ուրախ սրտով լսում են Աստծու խոսքը, ընդունում են այն և հարատևելով՝ պտուղ են տալիս:

Ճրագի օրինակը

(Մտ 5.15, 10.26, Մր 4.21-25, Ղկ 6.38, 11.33)

¹⁶-Ոչ ոք ճրագը չի վառի և կաթսայի տակ չի թաքցնի կամ մահճի տակ չի դնի, ընդհակառակը, այն կդնի աշտանակի վրա, որպեսզի ներս մտնողները լույսը տեսնեն:^{*}

¹⁷Չկա ծածուկ բան, որ չհայտնվի և կամ գաղտնի բան, որ չիմացվի և երևան չգա:^{*}

¹⁸Ուրեմն ուշադի՛ր եղեք, թե ինչպե՛ս էք ընդունում այս խոսքերը, որովհետև ունեցողին պիտի տրվի, իսկ չունեցողից պիտի վերցվի նույնիսկ այն, ինչ որ նա կարծում է, թե ունի:^{*}

Հիսուսի մայրն ու եղբայրները

(Մտ 12.46-50, Մր 3.31-35)

¹⁹Հիսուսի մոտ եկան իր մայրն ու եղբայրները, բայց խուռն բազմության պատճառով չկարողացան մոտենալ նրան:²⁰ Լուր տվեցին նրան՝ ասելով.

-Քո մայրն ու քո եղբայրները դրսում են և ուզում են քեզ տեսնել:

²¹Հիսուսն ասաց.

-Իմ մայրն ու եղբայրները սրա՛նք են, որոնք լսում են և գործադրում Աստծու խոսքը:

Հիսուսը խաղաղեցնում է փոթորիկը

(Մտ 8.18, 23-27, Մր 4.35-41)

^{8.10} Ես 6.9 [LXX]:

^{8.16} «Կաթսա», «աշտանակ», «ներս մտնողները». տե՛ս Մտ 5.15-ի ծնթ:

^{8.16} Մտ 5.15, Ղկ 11.33:

^{8.17} Մտ 10.26, Ղկ 12.2:

^{8.18} «Ունեցողին պիտի տրվի, իսկ չունեցողից ...». տե՛ս Մտ 13.12-ի ծնթ:

^{8.18} Մտ 25.29, Ղկ 19.26:

²² Մի օր Հիսուսն իր աշակերտների հետ նավակ նստեց և ասաց նրանց.

-Եկե՛ք լճի մյուս կողմն անցնենք:

Եվ ճանապարհ ընկան: ²³ Մինչ աշակերտները նավարկում էին, Հիսուսը քնեց: Հանկարծ մի ուժեղ փոթորիկ սկսվեց լճի վրա. ալիքները թափվում էին նավակի մեջ. բոլորն էլ վտանգի տակ էին: ²⁴ Աշակերտները մոտեցան Հիսուսին և արթնացրին նրան՝ ասելով.

-Վարդապե՛տ, Վարդապե՛տ, ահա կորչում ենք:

Հիսուսը վեր կացավ, սաստեց քամուն և մրրկահույզ կոհակներին, որոնք հանդարտվեցին, և խաղաղություն տիրեց:

²⁵ Ապա աշակերտներին ասաց.

-Ո՞ւր է ձեր հավատը:

Նրանք սարսափած, հիացմունքով ասում էին միմյանց.

-Ո՞վ է արդյոք այս մարդը, որ հրամայում է հողմերին և ալիքներին, և դրանք հնազանդվում են նրան:

Գերգեսացի դիվահարի բժշկումը

(Մտ 8.28-34, Մր 5.1-20)

²⁶ Ապա նավարկեցին և հասան գերգեսացիների երկիրը, լճի մյուս կողմը, Գալիլեայի դիմաց: ²⁷ Հիսուսը հազիվ էր ցամաք ելել, երբ նրան հանդիպեց քաղաքից մի մարդ, որի մեջ չար ոգիներ կային: Այս մարդը երկար ժամանակից ի վեր հագուստ չէր հագնում և տան մեջ չէր բնակվում, այլ ժայռափոր գերեզմաններում: ²⁸ Սա, երբ Հիսուսին տեսավ, աղաղակելով ընկավ նրա ոտքերի առաջ և բարձրաձայն ասաց.

-Ի՞նչ ես ուզում ինձնից, Հիսու՛ս, Բարձրյա՛լ Աստծու Որդի, աղաչում եմ քեզ, մի՛ տանջիր ինձ:

²⁹ Որովհետև Հիսուսը չար ոգուն հրամայել էր, որ դուրս գա այդ մարդու միջից: Երկար ժամանակից ի վեր չար ոգին տիրացել էր նրան, և այդ պատճառով շղթայով կապել էին նրա ոտքերն ու ձեռքերը: Սակայն դիվահարը փշրում էր շղթաները, և չար ոգին նրան տանում էր դեպի անբնակ վայրեր:

³⁰ Հիսուսը նրան հարցրեց.

-Անունդ ի՞նչ է:

-Լեգեոն, - ասաց նա:

Որովհետև նրա մեջ շատ չար ոգիներ էին մտել՝ ³¹ և աղաչում էին Հիսուսին, որ իրենց չհրամայի դների համար սահմանված անդունդը գնալ:

³² Այնտեղ խոզերի մի մեծ երամակ կար, որ արածում էր լեռան վրա: Չար ոգիներն աղաչեցին Հիսուսին, որ թույլ տա իրենց՝ գնալ մտնել խոզերի մեջ: Հիսուսը հրաման

՝8.22 «*Լճի մյուս կողմը*». ակնարկվում է Գալիլեայի լիճը, իսկ մյուսը կողմը՝ Դեկապոլիս կոչված նահանգն էր, գլխավորապես խառն ու հեթանոս ազգերով բնակեցված:

՝8.26 «*Գերգեսացիների*». մի շարք ձեռ. ունեն «*գաղարացիների*», իսկ մի շարք այլ ձեռ.՝ «*գերասացիների*»:

՝8.30 «*Լեգեոն*». տե՛ս Մր 5.9-ի ծնթ:

՝8.31 «*Անդունդ*». տե՛ս Հտ 9.1 և ծնթ:

տվեց:՝³³ Չար ոգիները, մարդու միջից դուրս գալով, մտան խոզերի մեջ, և երամակը գահավեժ խուժեց դեպի լիճն ու խեղդվեց:

³⁴ Խոզարածները երբ տեսան պատահածը, փախան և պատմեցին քաղաքում և ագարակներում: ³⁵ Ժողովուրդը գնաց տեսնելու, թե ի՛նչ էր պատահել: Եկան Հիսուսի մոտ և վախեցան, երբ տեսան, որ այդ մարդը, որից չար ոգիները դուրս էին եկել, նստած է Հիսուսի ոտքերի մոտ, հագուստները հագած և զգաստացած:

³⁶ Ականատեսները պատմեցին նրանց, թե ինչպե՛ս էր դիվահարը բժշկվել:

³⁷ Գերգեսացիների շրջանի բոլոր բնակիչները աղաչում էին Հիսուսին, որ հեռանա իրենց սահմաններից, որովհետև սաստիկ վախեցել և տագնապի էին մատնվել: Ուստի Հիսուսը նավակ մտավ, և երբ վերադառնալու վրա էր, ³⁸ այն մարդը, որից չար ոգիներ էին դուրս եկել, աղաչեց Հիսուսին, որ նրա հետ գնա: Բայց Հիսուսը հետ ուղարկեց նրան՝ ասելով.

³⁹ -Վերադարձի՛ր քո տուն և պատմի՛ր, ինչ որ Աստված արեց քեզ:

Սա էլ գնաց և քաղաքով մեկ տարածեց այն, ինչ Հիսուսն արել էր իրեն:

Հայրոսի աղջիկը և հիվանդ կինը

(Մտ 9.18-26, Մր 5.21-43)

⁴⁰ Երբ Հիսուսը վերադարձավ Գալիլեա, ժողովուրդը դիմավորեց նրան, քանի որ բոլորն էլ նրան էին սպասում: ⁴¹ Եվ ահա Հայրոս անունով մի մարդ, որ ժողովրդապետ էր, ընկավ Հիսուսի ոտքերի առաջ և աղաչում էր նրան, որ իր տուն գա, ⁴² որովհետև իր միակ աղջիկը, որ տասներկու տարեկան էր, մահամերձ էր:

Եվ մինչ Հիսուսը գնում էր այնտեղ, ժողովուրդը չորս կողմից նեղում էր նրան: ⁴³ Մի կին, որ տասներկու տարուց ի վեր տառապում էր արյունահոսությունից և չնայած որ իր ամբողջ ունեցածը բժիշկների վրա էր ծախսել, ու ոչ մեկը չէր կարողացել բժշկել նրան,՝ ⁴⁴ հետևից մոտեցավ և դիպավ Հիսուսի զգեստի քղանցքին: Նույն վայրկյանին արյունահոսությունը դադարեց: ⁴⁵ Հիսուսը հարցրեց.

-Ո՞վ դիպավ ինձ:

Բոլորն էլ ուրանում էին: Պետրոսն ու նրա հետ եղողներն ասացին.

-Վարդապե՛տ, ժողովուրդը չորս կողմից հրում-հրմշտում է քեզ, իսկ դու ասում ես՝ «Ո՞վ դիպավ ինձ»:

⁴⁶ Հիսուսն ասաց.

-Մեկը դիպավ ինձ, որովհետև զգացի, որ ինձնից մի գորություն դուրս եկավ:

⁴⁷ Երբ կինը տեսավ, որ չի կարող եղածը Հիսուսից պահել, դողալով եկավ ընկավ նրա ոտքերի առաջ և ամբողջ ժողովրդի առջև ասաց, թե ինչի՛ համար է դիպել նրան և թե ինչպե՛ս է իսկույն բժշկվել: ⁴⁸ Հիսուսն ասաց նրան.

^{8.32} «Խոզերի մի մեծ երամակ կար, որ արածում էր». տե՛ս Մր 5.11-ի ծնթ:

^{8.43} Մի շարք ձեռ. չունեն «ոչ մեկը չէր կարողացել բժշկել նրան» նախադասությունը, իսկ մի շարք ձեռ. դրա փոխարեն ունեն «իր ամբողջ ունեցածը բժիշկների վրա էր ծախսել առանց որևէ մեկից բժշկվելու»:

^{8.45} Շատ ձեռ. չունեն «իսկ դու ասում ես՝ "Ո՞վ դիպավ ինձ"»:

^{8.47} Հուն. չունի «Հիսուսից» բառը:

-Աղջի՛կս, քաջալերվի՛ր, քո հավատը քեզ փրկեց. գնա՛ խաղաղությամբ:
⁴⁹ Մինչ Հիսուսը խոսում էր, ժողովրդապետի տնից մեկը եկավ և Հայրոսին ասաց.
 -Աղջիկդ մեռավ, էլ մի՛ հոգնեցրու Վարդապետին:
⁵⁰ Հիսուսը, այս լսելով, ժողովրդապետին ասաց.
 -Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, և քո աղջիկը կապրի:
⁵¹ Երբ Հիսուսը ժողովրդապետի տուն հասավ, չթողեց, որ որևէ մեկը ներս մտնի, բացի Պետրոսից, Հակոբոսից, Հովհաննեսից և աղջկա հորից ու մորից: ⁵² Ներսում գտնվողները բոլորն էլ լաց էին լինում ու ողբում: Հիսուսն ասաց նրանց.
 -Լաց մի՛ եղեք, աղջիկը մեռած չէ, այլ ննջում է:
⁵³ Նրանք ծաղրում էին նրան, որովհետև գիտեին, որ աղջիկը մեռած է: ⁵⁴ Հիսուսը բոլորին էլ դուրս հանեց, ապա բռնեց աղջկա ձեռքից և բարձրաձայն ասաց.
 -Վե՛ր կաց, աղջի՛կս:
⁵⁵ Նրա հոգին անմիջապես վերադարձավ, և նա ոտքի կանգնեց: Ապա Հիսուսը հրամայեց, որ ուտելիք տան աղջկան, ⁵⁶ մինչդեռ նրա ծնողները մնացել էին ապշահար: Հիսուսը նրանց պատվիրեց, որ կատարվածի մասին ոչ ոքի բան չասեն:

9

Հիսուսն առաքում է տասներկու աշակերտներին

(Մտ 10.1, 5-15, Մր 6.7-13)

¹ Հիսուսը կանչեց տասներկու աշակերտներին և նրանց գորություն ու իշխանություն տվեց բոլոր չար ոգիները հանելու և հիվանդությունները բժշկելու: ² Ապա ուղարկեց նրանց, որ քարոզեն Աստծու արքայությունն ու բժշկեն հիվանդներին: ³ Եվ նրանց ասաց.

-Ճանապարհի համար ձեզ հետ ոչ մի բան մի՛ վերցրեք. ո՛չ գավազան, ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ դրամ. ավելորդ հագուստ մի՛ ունեցեք: ⁴ Ո՛ր տունը որ մտնեք, այնտե՛ղ իջևանեցեք, մինչև որ մեկնեք այնտեղից: ⁵ Իսկ երբ դուրս ելնեք այն քաղաքից, որի բնակիչները ձեզ չեն ընդունել, թա՛փ տվեք ձեր ոտքերի փոշին՝ որպես վկայություն նրանց դեմ:՝

⁶ Աշակերտները մեկնելով սկսեցին շրջել քաղաքներում ու գյուղերում՝ ամեն տեղ քարոզելով Ավետարանը և բժշկելով հիվանդներին:՝

Հերովդեսի շփոթությունը

(Մտ 14.1-12, Մր 6.14-29)

⁷ Երբ Հերովդես չորրորդապետը լսեց բոլոր պատահածները, զարմացավ, որովհետև ոմանք ասում էին, թե Հովհաննես Մկրտիչը մեռելներից հարություն է առել:՝

^{9.3-5} Ղկ 10.4-11:

^{9.5} «Թա՛փ տվեք ձեր ոտքերի փոշին». տե՛ս Մտ 10.14-ի ծնթ:

^{9.5} Գրծ 13.51:

^{9.6} Շատ ձեռ. չունեն «քաղաքներում ու» բառերը:

^{9.7-8} Մտ 16.14, Մր 8.28, Ղկ 9.19:

⁸ ուրիշները, թե Եղիան է հայտնվել, իսկ ոմանք էլ, թե նախկին մարգարեներից մեկն է հարություն առել:

⁹ Հերովդեսն ասաց.

-Հովհաննեսին ես գլխատել տվեցի, իսկ սա ո՞վ է, որի մասին այսպիսի բաներ եմ լսում:

Եվ ուզում էր Հիսուսին տեսնել:

Հինգ հազարի կերակրումը

(Մտ 14.13-21, Մր 6.30-44, Հհ 6.1-14)

¹⁰ Առաքյալները վերադարձան և ինչ որ արել էին, պատմեցին Հիսուսին: Հիսուսը նրանց վերցրեց իր հետ և քաշվեց Բեթսայիդա քաղաքի մոտ, մի ամայի վայր: ¹¹ Երբ ժողովուրդն իմացավ, հետևեց նրան: Հիսուսն ընդունեց նրանց և սկսեց քարոզել Աստծու արքայության մասին: Իսկ ովքեր բժշկվելու կարիք ունեին, բժշկեց:

¹² Երբ օրն սկսեց տարածամել, տասներկու աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին.

-Արձակի՛ր ժողովրդին, որպեսզի գնան շրջակա գյուղերն ու ագարակները, հանգստանան և ուտելիք գտնեն, որովհետև այստեղ ամայի վայրում ենք:

¹³ Հիսուսն ասաց նրանց.

-Դո՛ւք տվեք նրանց ուտելիքը:

Նրանք ասացին.

-Մեր ունեցածն ընդամենը հինգ հաց և երկու ձուկ է, բայց եթե ուզում ես, կգնանք, ժողովրդի համար բավականաչափ ուտելիք կգնենք:

¹⁴ Որովհետև շուրջ հինգ հազար մարդ կար: Հիսուսն աշակերտներին ասաց.

-Նստեցրե՛ք նրանց հիսնական հոգուց բաղկացած խմբերով:

¹⁵ Նրանք կատարեցին Հիսուսի հրահանգը և ամենքին էլ նստեցրին: ¹⁶ Ապա Հիսուսը վերցրեց հինգ հացն ու երկու ձուկը, աչքերը բարձրացրեց դեպի երկինք, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին, որ բաժանեն ժողովրդին: ¹⁷ Բոլորն էլ կերան ու կշտացան, և աշակերտները, ավելացած կտորտանքները հավաքելով, տասներկու սակառ լցրին:

Պետրոսի հայտարարությունը Հիսուսի մասին

(Մտ 16.13-21, Մր 8.27-31)

¹⁸ Մի օր Հիսուսն առանձին աղոթում էր: Նրա հետ էին նաև իր աշակերտները: Նրանց հարցրեց.

-Ժողովուրդն իմ մասին ի՞նչ է ասում, ո՞վ եմ ես:

¹⁹ Նրանք պատասխանեցին.

-Ոմանք ասում են, թե Հովհաննես Մկրտիչն ես, ոմանք, թե Եղիա մարգարեն, իսկ ուրիշները ասում են, թե նախկին մարգարեներից մեկն ես, որ հարություն է առել:

²⁰ Հիսուսը հարցրեց նրանց.

-Իսկ դո՛ւք ինչ եք ասում իմ մասին:

Պետրոսը պատասխանեց.

-Դու Աստծու Օծյալն ես՝ Քրիստոսը:՝

²¹ Հիսուսը խստիվ պատվիրեց նրանց, որ ոչ ոքի չասեն այդ: ²² Ապա ավելացրեց.

-Մարդու Որդին պետք է շատ չարչարվի և մերժվի ավագ քահանաներից, երեցներից և Օրենքի ուսուցիչներից. նրան կսպանեն, բայց նա երրորդ օրը հարություն կառնի:

Հիսուսին հետևելու պայմանները

(Մտ 16.24-28, Մր 8.34-9.1)

²³ Եվ բոլորին ասաց.

-Եթե մեկն ուզում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, ամեն օր վերցնի իր խաչը և գա իմ հետևից.՝ ²⁴ որովհետև ով որ ուզենա փրկել իր կյանքը, կկորցնի այն, և ով որ կորցնի իր կյանքն ինձ համար, կփրկվի այն:՝ ²⁵ Ի՞նչ օգուտ, եթե մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կյանքը կորցնի կամ ինքն իրեն վնասի: ²⁶ Ով որ ինձ կամ իմ խոսքերն ընդունելը ամոթ համարի, Մարդու Որդին էլ նրան ընդունելը պիտի ամոթ համարի, երբ գա իր փառքով, ինչպես նաև իր Հոր և սուրբ հրեշտակների փառքով:

²⁷ Հաստատապես ասում եմ ձեզ, որ այստեղ գտնվողներից ոմանք չեն մեռնելու, մինչև չտեսնեն Աստծու թագավորությունը:՝

Հիսուսի այլակերպությունը

(Մտ 17.1-8, Մր 9.2-13)

²⁸ Այս խոսքերն ասելուց շուրջ ութ օր հետո Հիսուսը, իր հետ վերցնելով Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, լեռ բարձրացավ աղոթելու:՝ ²⁹ Եվ մինչ աղոթում էր, նրա դեմքը այլակերպվեց, և նրա հագուստը փայլուն-սպիտակ գույն ստացավ: ³⁰⁻³¹ Եվ ահա երկու հոգի՝ Մովսեսն ու Եղիան, երևացին իրենց փառքով. նրանք Հիսուսի հետ խոսում էին նրա մահվան մասին, որ տեղի պիտի ունենար Երուսաղեմում:՝

³² Պետրոսի և նրա հետ եղողների աչքերը քնից ծանրացել էին, բայց նրանք սթափվեցին ու տեսան Հիսուսի փառքը և երկու մարդկանց, որոնք նրա հետ էին:

³³ Երբ Մովսեսն ու Եղիան մեկնում էին, Պետրոսն ասաց Հիսուսին.

-Վարդապե՛տ, լավ է, որ մենք այստեղ մնանք. երեք վրաններ շինենք, մեկը՝ քեզ, մեկը՝ Մովսեսի և մյուսը՝ Եղիայի համար:

Մակայն նա չգիտեր, թե ի՞նչ էր ասում: ³⁴ Նա դեռ խոսում էր, երբ մի ամպ եկավ և իր

9.20 Հհ 6.68-69:

9.23 Մտ 10.38, Ղկ 14.27:

9.24 Մտ 10.39, Ղկ 17.33, Հհ 12.25:

9.27 «Չեն մեռնելու, մինչև չտեսնեն Աստծու թագավորությունը». տե՛ս Մտ 16.28-ի ծնթ:

9.28-35 Բ Պտ 1.17-18:

9.31 «Մահվան մասին». բոց՝ «ելքի մասին», որ նշ է թե՛ այս կյանքից ելքը, այսինքն՝ մահը, և թե՛ այս ելքը ավետարանիչը կապում է Աստծու ժողովրդի՝ Եգիպտոսից ելքի հետ, որը նախապատկերացումն է Քրիստոսի (=որ մարմնավորում է Աստծու նոր ժողովրդին) մահվամբ և հարությանբ իրագործվելիք իսկական ազատագրության և փրկության:

ստվերի տակ ծածկեց նրանց: Աշակերտները վախեցան, երբ ամպը ծածկեց իրենց:

³⁵ Ամպի միջից լսվեց մի ձայն, որ ասում էր՝

-Մա՛ է իմ ընտրյալ Որդին, նրա՛ն լսեցեք:՝*

³⁶ Մինչ այս ձայնը գալիս էր, Հիսուսն առանձին էր: Աշակերտներն այդ օրերին լուսմնացին և ոչ ոքի ոչ մի բան չպատմեցին իրենց տեսածների մասին:

Հիսուսը բժշկում է չար ոգի ունեցող տղային

(Մտ 17.14-17, Մր 9.14-29)

³⁷ Հաջորդ օրը, երբ Հիսուսն իր երեք աշակերտների հետ իջնում էր լեռից, նրա դեմն ելավ մի խումբ բազմություն: ³⁸ Ժողովրդի միջից մեկը բարձր աղաղակելով ասաց.

-Վարդապե՛տ, աղաչում եմ, նայի՛ր իմ որդուն, միա՛կ գավակս է: ³⁹ Չար ոգին բռնում է նրան և հանկարծ գոռալ է տալիս, գետին է խփում, թավալեցնում, բերանը փրփրեցնում և նրան խորտակելուց հետո դժվարությամբ է հեռանում նրանից: ⁴⁰ Ես քո աշակերտներին խնդրեցի, որ հանեն չար ոգին, բայց նրանք չկարողացան:

⁴¹ Հիսուսը պատասխանեց.

-Ո՛վ անհավատ և մոլորված սերունդ, մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ, մինչև ե՞րբ պիտի հանդուրժեմ ձեզ: Այստե՛ղ բեր քո որդուն:

⁴² Մինչ տղան մոտենում էր, չար ոգին գետին խփեց նրան և ուժգին ցնցեց: ⁴³ Հիսուսը սաստեց չար ոգուն և բժշկելով տղային՝ հանձնեց հորը: Բոլորն էլ հիացել էին Աստծու մեծ գործության վրա:

Հիսուսը դարձյալ խոսում է իր մահվան և հարության մասին

(Մտ 17.22-23, Մր 9.30-32)

Մինչ ժողովուրդը զարմանում էր Հիսուսի կատարած գործերի վրա, նա, դառնալով իր աշակերտներին, ասաց.

⁴⁴ -Լա՛վ լսեցեք այս և մի՛ մոռացեք. Մարդու Որդին մարդկանց ձեռքն է մատնվելու:

⁴⁵ Սակայն աշակերտները չհասկացան այս խոսքի իմաստը, որովհետև Աստված այն ծածկել էր նրանցից, որպեսզի չհասկանան: Մյուս կողմից էլ նրանք վախենում էին այդ մասին հարցնել նրան:

Ո՛վ է մեծը

(Մտ 18.1-5, Մր 9.33-37)

⁴⁶ Աշակերտներն սկսեցին վիճել իրար հետ, թե իրենցից ո՛վ է մեծը: ⁴⁷ Հիսուսը, իմանալով նրանց մտածումը, վերցրեց մի մանուկ և իր մոտ կանգնեցնելով՝ ⁴⁸ ասաց.

-Ով որ ընդունի այս մանկանը իմ անունով, ի՛նձ ընդունած կլինի, և ով որ ինձ ընդունի, ընդունած կլինի ինձ ուղարկողին, որովհետև ով որ ձեր բոլորի մեջ

^{9.35} «Ընտրյալ» բառի փոխարեն շատ ձեռ. ունեն «սիրելի»:

^{9.35} Ես 42.1, Մտ 3.17, 12.18, Մր 1.11, Ղկ 3.22:

^{9.46} Ղկ 22.24:

փոքրագույնն է, նա՛ է մեծը:

Ով մեզ հակառակ չէ, նա մեր կողմն է

(Մր 9.38-40)

⁴⁹ Հովհաննեսն ասաց.

-Վարդապե՛տ, տեսանք մեկին, որ քո անունով չար ոգիներ էր հանում և արգելեցինք նրան, որովհետև մեզ հետ չի շրջում:

⁵⁰ Հիսուսն ասաց.

-Արգելք մի՛ եղեք նրան, որովհետև ով ձեզ հակառակ չէ, նշանակում է՝ ձեր կողմն է:

Սամարիայի մի գյուղ մերժում է Հիսուսի մուտքը

⁵¹ Եվ երբ աշխարհից վերանալու ժամանակը հասավ, Հիսուսը որոշեց գնալ Երուսաղեմ: ⁵² Իրենից առաջ պատգամավորներ ուղարկեց, որոնք գնացին և մտան Սամարիայի գյուղերից մեկը՝ նրա համար պատրաստություն տեսնելու: ⁵³ Սակայն ժողովուրդը չընդունեց նրան, քանի որ Հիսուսը ուղևորվում էր Երուսաղեմ: ⁵⁴ Երբ նրա աշակերտներից Հակոբոսը և Հովհաննեսը տեսան այս, ասացին.

-Տե՛ր, ուզո՞ւմ ես ասենք, որ երկնքից կրակ տեղա և սպանի նրանց:՝

⁵⁵ Հիսուսը դարձավ, հանդիմանեց նրանց՝ ասելով.

-Չե՛ք իմանում՝ ինչ տեսակ հոգու էք պատկանում. որովհետև Մարդու Որդին չեկավ մարդկանց կորստյան մատնելու, այլ նրանց փրկելու:՝

⁵⁶ Եվ գնացին մի ուրիշ գյուղ:

Ամեն ինչ թողնել՝ Հիսուսին հետևելու համար

(Մտ 8.19-22)

⁵⁷ Մինչ նրանք ուղևորվում էին, ճանապարհին մեկն ասաց Հիսուսին.

-Ուր էլ գնաս, կգամ քո հետևից:

⁵⁸ Հիսուսը պատասխանեց.

-Աղվեսները որջ ունեն, երկնքի թռչունները՝ բույն, սակայն Մարդու Որդին տեղ չունի գլուխը հանգիստ դնելու համար:

⁵⁹ Մի ուրիշի էլ ասաց.

-Հետևի՛ր ինձ:

Մա ասաց.

-Տե՛ր, թո՛ւյլ տուր, որ նախ գնամ և թաղեմ իմ հորը:

⁶⁰ Հիսուսը պատասխանեց.

-Թող որ մեռելնե՛րը թաղեն իրենց մեռելներին, իսկ դու գնա՛ և քարոզի՛ր Աստծու թագավորությունը:՝

^{9.48} Մտ 10.40, Ղկ 10.16, Հհ 13.20:

^{9.54} «Եվ սպանի նրանց». շատ ձեռ. ավելացնում են «ինչպես Եղիան արեց»:

^{9.54} Դ Թգ 1.9-16:

^{9.55} Շատ ձեռ. չունեն «ասելով. "Չեք իմանում... նրանց փրկելու"»:

^{9.60} «Թող որ մեռելնե՛րը թաղեն իրենց մեռելներին». տե՛ս Մտ 8.22-ի ծնթ:

⁶¹ Մեկ ուրիշն էլ ասաց.

-Տե՛ր, կհետևենք քեզ, բայց թո՛ւյլ տուր, որ նախ գնամ և հրաժեշտ տամ իմ ընտանիքին:՝

⁶² Հիսուսը պատասխանեց.

-Ով իր ձեռքը մաճին է դնում և ապա հետ է նայում, նա հարմար չէ Աստծու թագավորությանը:

10

Հիսուսն առաքում է յոթանասուներկու աշակերտներին

(Մտ 9.37-38, 10.7-16, Մր 6.8-11, Ղկ 9.3-5)

¹ Այս դեպքից հետո Հիսուսը յոթանասուներկու աշակերտներ ևս նշանակեց և նրանց իրենից առաջ զույգ-զույգ ուղարկեց այն բոլոր քաղաքներն ու շրջանները, ուր ինքը գնալու էր: ² Նա ասաց նրանց.

-Հունձն առատ է, բայց մշակները՝ քիչ: Ուստի խնդրեցե՛ք հնձի տիրոջը, որ իր հնձի համար մշակներ պատրաստի և ուղարկի:՝ ³ Գնացե՛ք, ահա ուղարկում եմ ձեզ իբրև գառներ՝ գայլերի մեջ: ⁴ Ո՛չ քսակ վերցրե՛ք ձեզ հետ, ո՛չ ճանապարհի պարկ, ո՛չ կոշիկ: Ճանապարհին կանգնելով՝ ոչ ոքի բարև մի՛ տվե՛ք: ⁵ Ո՛ր տունը որ մտնե՛ք, նախ ասացե՛ք՝ «Խաղաղություն ևն այս տանը»:՝ ⁶ Եթե այդ տան մեջ խաղաղասեր մարդ լինի, ձեր ողջույնի խաղաղությունը նրա վրա կհանգչի, ապա թե ոչ՝ ձեր ողջույնը կվերադառնա ձեզ: ⁷ Ձեր իջևանած տա՛նը մնացե՛ք, և այնտեղ ինչ որ տան ձեզ, կերե՛ք և խմեցե՛ք, որովհետև մշակն արժանի է իր վարձին: Տնից տուն մի՛ տեղափոխվե՛ք: ⁸ Ո՛ր քաղաքը որ մտնե՛ք, և ձեզ ընդունեն, կերե՛ք, ինչ որ տան ձեզ: ⁹ Եթե այնտեղ հիվանդներ կան, բժշկեցե՛ք նրանց և ասացե՛ք ժողովրդին. «Աստծու թագավորությունը մոտեցել է ձեզ»: ¹⁰ Իսկ այն քաղաքը, ուր մտնե՛ք, և նրա բնակիչները չընդունեն ձեզ, դուրս եկե՛ք այդ քաղաքի հրապարակները և ասացե՛ք:՝ ¹¹ «Ձեր քաղաքից մեր ոտքերին կպած փոշին անգամ թափ ենք տալիս ձեզ վրա: Բայց իմացե՛ք, որ մոտեցել է Աստծու թագավորությունը:՝ ¹² Ասում եմ ձեզ, որ դատաստանի օրը Սոդոմի բնակիչների պատիժն ավելի թեթև պիտի լինի, քան այդ քաղաքինը:՝

Անհավատ քաղաքները

(Մտ 11.20-24)

^{9.61} Գ Թզ 19.20:

^{10.1} «Յոթանասուներկու». շատ ձեռ. ունեն «յոթանասուն»:

^{10.2} Մտ 9.37-38:

^{10.3} Մտ 10.16:

^{10.4-11} Մտ 10.7-14, Մր 6.8-11, Ղկ 9.3-5:

^{10.7} Ա Կր 9.14, Ա Տմ 5.18:

^{10.10-11} Գրծ 13.51:

^{10.11} «Մոտեցել է». մի շարք ձեռ. ավելացնում են «ձեզ», բոց՝ «ձեզ վրա»:

^{10.12} ա Ծն 19.24-28, Մտ 11.24: ք Մտ 10.15:

¹³ -Վա՛յ քեզ, Քորազի՛ն, վա՛յ քեզ, Բեթսայիդա՛, եթե այն հրաշքները, որ գործվեցին ձեր մեջ, կատարված լինեին Տյուրոսում և Սիդոնում, նրանց բնակիչները, վաղուց քուրձ հագնելով և մոխրի վրա նստելով, ապաշխարած կլինեին։* ¹⁴ Սակայն դատաստանի օրը Տյուրոսի և Սիդոնի բնակիչների պատիժն ավելի թեթև պիտի լինի, քան ձերը։ ¹⁵ Իսկ դու, Կափառնայո՛ւմ, որ մինչև երկինք ես բարձրացել, իմացի՛ր, որ մինչև դժոխք պիտի իջնես։*

¹⁶ Ապա ասաց իր աշակերտներին.

-Ով որ ձեզ լսի, ի՛նձ լսած կլինի, և ով որ ձեզ մերժի, ի՛նձ մերժած կլինի, իսկ ով որ ինձ մերժի, մերժած կլինի նաև ինձ ուղարկողին։*

Յոթանասուներկու աշակերտների վերադարձը

¹⁷ Յոթանասուներկու աշակերտները վերադարձան ուրախությամբ և ասացին Հիսուսին.

-Տե՛ր, չար ոգիներն իսկ հնազանդվում են մեզ, երբ հրամայում ենք քո անունով։*

¹⁸ Հիսուսն ասաց նրանց.

-Տեսա Սատանային՝ կայծակի նման երկնքից ցած ընկնելիս։ ¹⁹ Ահա ձեզ իշխանություն տվեցի կոխտելու օձերն ու կարիճները, ինչպես նաև հաղթահարելու թշնամու զորությունը, և որևէ բան չի վնասելու ձեզ։* ²⁰ Սակայն մի՛ ուրախացեք նրանով, որ չար ոգիները հնազանդվում են ձեզ, այլ ուրախացե՛ք, որ ձեր անունները գրված են երկնքում։

Հիսուսի ուրախությունը

(Մտ 11.25-27, 13.16-17)

²¹ Նույն ժամին Հիսուսը Սուրբ Հոգու պարզևած ուրախությամբ ասաց.

-Հա՛յր, Տե՛ր երկնքի և երկրի, շնորհակալ եմ, որ այս բաները ծածկեցիր իմ աստուններից ու գիտուններից և հայտնեցիր պարզ ու համեստ մարդկանց։ Այո՛, Հա՛յր, այդպե՛ս ուզեցիր դու։* ²² Իմ Հայրն ամեն ինչ տվել է ինձ։ Ոչ ոք չի ճանաչում Որդուն, բացի Հորից, և ոչ ոք չի ճանաչում Հորը՝ բացի Որդուց, կամ նրանից, ում կկամենա Որդին հայտնել։*

²³ Հետո դառնալով իր աշակերտներին՝ առանձին ասաց.

-Երանի՛ այն աչքերին, որ տեսնում են այն, ինչ դուք եք տեսնում։ ²⁴ Ասում եմ ձեզ, որ շատ մարգարեներ և թագավորներ ցանկացան տեսնել ձեր տեսածները, բայց չտեսան,

***10.13** «Քորազին», «Բեթսայիդա», «Տյուրոս» և «Սիդոն». տե՛ս Մտ 11.21-ի ծնթ։

***10.13** Ես 23.1-18, Եզկ 26.1-28.26, Հվլ 3.4-8, Ամս 1.9-10, Զք. 9.2-4։

***10.15** Ես 14.13-15։

***10.16** «Ինձ ուղարկողին». մի շարք ձեռ. ավելացնում են «և ով որ ինձ լսի, լսած կլինի ինձ ուղարկողին»։

***10.16** Մտ 10.40, Մր 9.37, Ղկ 9.48, Հհ 13.20։

***10.17** «Յոթանասուներկու». շատ ձեռ. ունեն «յոթանասուն»։

***10.19** Սղ 91.13։

***10.21** «Սուրբ Հոգու պարզևած». մի շարք ձեռ. չունեն «Սուրբ» բառը, իսկ մի քանի ձեռ. ունեն «Հոգու ուրախացավ»։

***10.22 ա** Հհ 3.35։ **բ** Հհ 10.15։

և լսել ձեր լսածները, բայց չլսեցին:

Բարի սամարացու առակը

²⁵ Օրենքի ուսուցիչներից մեկը վեր կացավ և Հիսուսին փորձելու համար ասաց.
-Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ:

²⁶ Հիսուսն ասաց.

-Օրենքի գրքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես հասկանում:

²⁷ Նա պատասխանեց. «Միրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ գործությամբ և քո ամբողջ մտքով» և «Միրի՛ր քո ընկերոջը քո անձի պես»:

²⁸ Հիսուսն ասաց.

-Ճիշտ պատասխան տվեցիր: Արա՛ս ասածդ և կապրես:

²⁹ Բայց նա, ինքն իրեն արդարացնել ուզենալով, ասաց Հիսուսին.

-Բայց ո՞վ է իմ ընկերը:

³⁰ Այս հարցի վրա Հիսուսն ասաց.

-Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում: Ճանապարհին ընկավ ավազակների ձեռքը, որոնք կողոպտելով մերկացրին նրան, վիրավորեցին և կիսամեռ վիճակում թողեցին ու գնացին: ³¹ Այնպես պատահեց, որ մի քահանա էր անցնում նույն ճանապարհով: Սա տեսավ վիրավորին, բայց ճանապարհը շեղելով՝ անցավ գնաց:

³² Նույնպես և մի ղևտացի, նույն տեղով անցնելիս, տեսավ վիրավորին և ինքն էլ շրջանցեց, գնաց: ³³ Բայց մի սամարացի, որ այդ տեղով էր անցնում, տեսավ

վիրավորին ու գթաց: ³⁴ Մոտեցավ նրան և փաթաթեց վերքերը՝ դրանց վրա ձեթ ու գինի լցնելով: Ապա դրեց իր գրաստի վրա, տարավ մի պանդոկ ու խնամեց նրան:

³⁵ Հաջորդ օրը, երբ մեկնելու էր պանդոկից, երկու արծաթ դահեկան տվեց պանդոկի տիրոջը և ասաց. «Խնամի՛ր նրան և ինչ ծախս որ անես նրա վրա, մյուս անգամ գալուս կվճարեմ»:

³⁶ Հետո Հիսուսը հարցրեց.

-Արդ, քո կարծիքով, այդ երեքից ո՞ր մեկը եղավ ավազակների ձեռքն ընկնողի ընկերը:

³⁷ Օրենքի ուսուցիչն ասաց.

-Նա, ով հոգատար եղավ նրա հանդեպ:

Հիսուսն ասաց.

-Գնա՛ և դո՛ւ էլ նույնն արա:

Հիսուսն այցելում է Մարիամին և Մարթային

^{10.25-28} Մտ 22.35-40, Մր 12.28-34:

^{10.27} ա Բ Օր 6.5: Բ Ղև 19.18:

^{10.28} Ղև 18.5:

^{10.33-34} Բ Մն 28.15:

^{10.34} «Ձեթ ու գինի». սրանք հնում գործածվում էին վերքերը դարմանելու համար. ձեթը ցավերն էր մեղմացնում, իսկ գինին մաքրում էր վերքերը և մանրէները չեզոքացնում:

³⁸ Մինչ նրանք շարունակում էին իրենց ճանապարհը, Հիսուսը մտավ մի գյուղ: Այնտեղ Մարթա անունով մի կին նրան ընդունեց իր տան մեջ: ³⁹ Մա մի քույր ուներ, որի անունը Մարիամ էր: Մարիամը եկավ և Տիրոջ ոտքերի մոտ նստելով՝ սկսեց լսել նրա խոսքերը, ⁴⁰ մինչ Մարթան շատ զբաղված էր սեղանի պատրաստությամբ: Ուստի Մարթան եկավ Հիսուսի մոտ և ասաց.

-Տե՛ր, քո հոգը չէ՞, որ քույրս ինձ մենակ է թողել իմ գործի մեջ. ասա՛ նրան, որ օգնի ինձ:

⁴¹ Հիսուսը պատասխանեց.

-Մարթա՛, Մարթա՛, դու մտահոգվում և նեղվում ես շատ բաների համար: ⁴² Սակայն մեկ բան է պետք. Մարիամն ընտրեց լավ բաժինը, մի բան, որ չի վերցվի նրանից:

11

Հիսուսը սովորեցնում է աղոթել

(Մտ 6.9-13, 7.7-11)

¹ Պատահեց, որ Հիսուսը մի տեղ աղոթում էր: Երբ վերջացրեց աղոթելը, իր աշակերտներից մեկն ասաց.

-Տե՛ր, աղոթե՛լ սովորեցրու մեզ, ինչպես Հովհաննես Մկրտիչը սովորեցրեց իր աշակերտներին:

² Հիսուսն ասաց.

-Երբ աղոթում եք, ասացե՛ք.

«Հա՛յր մեր, թող սրբաբանվի՛ քո անունը,
թող գա՛ քո արքայությունը:»

³ Մեր ամենօրյա հացը
շնորհի՛ր մեզ օրեցօր:»

⁴ Եվ ների՛ր մեզ մեր մեղքերը,
քանզի մենք էլ ներում ենք նրանց,
ովքեր նույնպես հանցանք են գործել մեր դեմ:
Եվ թույլ մի՛ տուր,
որ փորձության մեջ ընկնենք:»

⁵ Եվ ապա շարունակեց.

-Ենթադրենք, որ ձեզնից մեկը մի բարեկամ ունի, որին դիմում է գիշերվա ուշ ժամին

^{10.38-39} «Մարթա» և «Մարիամ». սրանք քույրերն էին Բեթանիայում բնակվող Ղազարոսի, որին Հիսուսը հարություն տվեց մեռելներից (տե՛ս Հհ 11.12):

^{10.42} «Մեկ բան է պետք». մի շարք ձեռ. ունեն «քիչ բան է պետք այստեղ»:

^{11.2} «Հա՛յր մեր». մի շարք ձեռ. ավելացնում են «երկնավոր» բառը: «Թող գա՛ քո արքայությունը». մի շարք ձեռ. ավելացնում են «թող կատարվի քո կամքը ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա» (հմմտ Մտ 6.10):

^{11.3} «Մեր ամենօրյա հացը» կամ «մեզ անհրաժեշտ հացը»:

^{11.4} «Փորձության մեջ ընկնենք». մի շարք ձեռ. ավելացնում են «այլ ազատի՛ր մեզ չարից» (հմմտ Մտ 6.13):

և ասում. «Բարեկամ, ինձ երեք հաց փոխ տուր, ⁶ որովհետև մի ճանապարհորդ բարեկամ է իջևանել իմ տանը, և ես նրա առաջ դնելու բան չունեմ»: ⁷ Իսկ նա ներսից պատասխանում է՝ ասելով. «Նեղություն մի՛ պատճառիր ինձ, դռներն արդեն փակել եմ, և երեխաներս մոտս, անկողնում են. չեմ կարող վեր կենալ և քեզ հաց տալ»:

⁸ Վստահ եղեք, որ եթե նույնիսկ ի սեր բարեկամության նա վեր չկենա և չտա նրա ուզածը, սակայն թախանձանքներին տեղի տալով՝ կկատարի նրա խնդրանքը: ⁹ Ես էլ ասում եմ ձեզ. խնդրեցե՛ք Աստծուց, և նա կտա ձեզ, փնտրեցե՛ք, և կգտնեք, բախեցե՛ք, և կբացվի ձեր առաջ. ¹⁰ որովհետև ով խնդրում է՝ ստանում է, ով փնտրում է՝ գտնում է, ով բախում է՝ դուռը բացվում է նրա առաջ:

¹¹ Ձեր մեջ կա՞ մի հայր, որի որդին երբ ձուկ ուզի, ձկան փոխարեն օձ տա նրան,՝ ¹² և կամ երբ որդին ձու խնդրի, կարիճ տա նրան:՝ ¹³ Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք ձեր որդիներին լավ պարգևներ տալ, ձեր երկնավոր Հայրը որքա՞ն ավելի լավ մի պարգև Սուրբ Հոգին կտա նրանց, որոնք դիմում են իրեն:՝

Հիսուսը և Բեեղզերուղը

(Մտ 9.32-34, 12.22-30, Մր 3.20-27)

¹⁴ Մի օր Հիսուսը բժշկում էր մի դիվահարի, որ համր էր: Երբ չար ոգին դուրս ելավ, մարդն սկսեց խոսել, և ժողովուրդը զարմացավ: ¹⁵ Բայց նրանցից ոմանք ասացին.

–Նա դևերի իշխանի՝ Բեեղզերուղի զորությամբ է դուրս հանում չար ոգիներին:՝

¹⁶ Ուրիշներն էլ, նրան ծուղակը գցելու մտադրությամբ, ուզում էին, որ նա մի հրաշք գործի՝ երկնքից իր վկայված լինելը ցույց տալու համար:՝

¹⁷ Հիսուսը, իմանալով նրանց մտածումը, ասաց.

–Ամեն թագավորություն, որ ինքն իր մեջ բաժան–բաժան է լինում, կործանվում է. նույնպես էլ՝ մի ընտանիք, որ ինքն իր մեջ բաժանված է, քանդվում է: ¹⁸ Հետևաբար, եթե Սատանան ինքն իր մեջ բաժան–բաժան է եղած, նրա թագավորությունը ինչպե՞ս կարող է կանգուն մնալ: Դուք ասում եք, թե ես Բեեղզերուղի զորությամբ եմ դուրս հանում չար ոգիներին: ¹⁹ Լավ, եթե այդպես է, ձեր հետևորդները ինչո՞վ դուրս կհանեն դրանք: Ուրեմն հենց ձեր հետևորդները կդատապարտեն ձեզ: ²⁰ Իսկ եթե ես Աստծու զորությամբ եմ հանում չար ոգիներին, նշանակում է՝ Աստծու թագավորությունն արդեն հասել է ձեզ վրա:

²¹ Երբ լավ զինված ուժեղ մի մարդ հսկում է իր տունը, նրա ունեցվածքը մնում է ապահով: ²² Սակայն եթե նրանից ուժեղ մեկը հարձակվի և պարտության մատնի նրան, կգրավի նրա բոլոր զենքերը, որոնց վրա նա հույս էր դրել, և ավարն էլ կբաշխի:

²³ Ով որ ինձ հետ չէ, հակառակ է ինձ, և ով որ ինձ հետ չի հավաքում, ցրում է:՝

^{11.11} «Որի որդին երբ ձուկ ուզի». հուն. մի շարք ձեռ. ունեն «որի որդին երբ հաց ուզի, նա քար տա նրան, կամ ձուկ ուզի...» (հմմտ Մտ 7.9):

^{11.12} Կարիճն ինքն իր վրա ամփոփվելիս ձվի ձև է ստանում:

^{11.13} «Սուրբ Հոգին». մի շարք ձեռ. ունեն «բարիքներ»:

^{11.15} Մտ 9.34, 10.25:

^{11.16} Մտ 12.38, 16.1, Մր 8.11:

^{11.23} Մր 9.40:

Չար ոգու վերադարձը

(Մտ 12.43-45)

²⁴ -Երբ մի չար ոգի դուրս է գալիս մարդու միջից, գնում շրջում է անջրդի վայրերում՝ հանգիստ մի տեղ գտնելու համար: Երբ չի գտնում, ինքն իրեն ասում է. «Վեր կենամ գնամ իմ տուն, որտեղից ելա»: ²⁵ Ուստի վերադառնում է իր նախկին տունը և այն գտնում է մաքուր և հարդարված: ²⁶ Ապա գնում և բերում է իրենից ավելի չար յոթ այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ բնակվում է այնտեղ, որով այդ մարդու վերջն ավելի վատ է լինում, քան նախկին վիճակը:

Ճշմարիտ երանություն

²⁷ Եվ մինչ Հիսուսը խոսում էր, բազմության միջից մի կին բարձրաձայն ասաց.

-Երանի՛ այն կնոջը, որ քեզ հղացավ և կրծքով սնեց:

²⁸ Հիսուսը պատասխանեց.

-Մանավանդ երանի՛ նրանց, որոնք լսում են Աստծու խոսքը և գործադրում այն:

Հրաշքի խնդրանքը

(Մտ 12.38-42, Մր 8.11-12)

²⁹ Երբ ժողովուրդն սկսեց խոնվել Հիսուսի շուրջը, նա ասաց.

-Այս սերունդը չար սերունդ է. նշան է խնդրում, բայց նրան ուրիշ նշան չի տրվելու, բացի Հովնան մարգարեի նշանից:՝ ³⁰ Եվ ինչպես Հովնանը նշան եղավ նինվեացիների համար, նույնպես էլ Մարդու Որդին նշան կլինի այս սերնդի համար:՝

³¹ Դատաստանի օրը Հարավի թագուհին պիտի կանգնի այս սերնդի մարդկանց դիմաց և դատապարտի նրանց, որովհետև նա իր հեռավոր երկրից եկավ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու: Եվ ահա Սողոմոնից ավելի մեծը կա այստեղ:՝

³² Դատաստանի օրը նինվեացիները պիտի կանգնեն այս սերնդի մարդկանց դիմաց և դատապարտեն նրանց, որովհետև իրենք Հովնանի քարոզչությամբ գղջացին իրենց մեղքերի համար: Եվ ահա Հովնանից ավելի մեծը կա այստեղ:՝

Հավատի լույսը

(Մտ 5.15,6.22-23, Մր 4.21, Ղկ 8.16)

³³ -Ոչ ոք ճրագը վառելուց հետո այն չի թաքցնի, կամ կաթսայի տակ չի դնի, այլ կոնի աշտանակի վրա, որպեսզի ներս մտնողները լույսը տեսնեն:՝ ³⁴ Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը

^{11.29} Մտ 16.4, Մր 8.12:

^{11.30} «Նինվե». հին Ասորեստանի մայրաքաղաքն էր, Տիգրիս գետի արևելյան ափին:

^{11.30} Հն 3.4:

^{11.31} «Հարավի թագուհին». տե՛ս Մտ 12.42-ի ծնթ:

^{11.31} Գ Թգ 10.1-10, Բ Մն 9.1-12:

^{11.32} Հն 3.5:

^{11.33} Մի շարք ձեռ. չունեն «կամ կաթսայի տակ չի դնի» (հմմտ Մտ 5.15):

^{11.33} Մտ 5.15, Մր 4.21, Ղկ 8.16:

հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: ³⁵ Ուրեմն զգո՛ւյշ եղիր, որ չլինի թե քո մեջ եղած լույսը խավարի: ³⁶ Եթե քո ամբողջ մարմինը լուսավոր է, առանց խավարի մի մասնիկ ունենալու իր մեջ, այն ժամանակ ամեն ինչ այնպես լուսավոր կլինի, ինչպես երբ ճրագն իր շողերով լուսավորի քեզ:

Հիսուսը դատապարտում է փարիսեցիներին և Օրենքի ուսուցիչներին

(Մտ 23.1-36, Մր 12.38-40)

³⁷ Հիսուսը դեռ խոսում էր, երբ մի փարիսեցի խնդրեց նրան, որ ճաշի գա իր տուն: Հիսուսը ներս մտավ և սեղան նստեց: ³⁸ Երբ փարիսեցին այս տեսավ, զարմացավ, որովհետև ճաշելուց առաջ Հիսուսը չլվացվեց: ³⁹ Տերն ասաց նրան.

-Հիմա դուք՝ փարիսեցիներդ, մտահոգված եք բաժակի և պնակի արտաքինը մաքրելով, մինչդեռ ձեր ներքը լի է հափշտակությամբ և չարությամբ: ⁴⁰ Անմիտնե՛ր, նա, ով արտաքինը ստեղծեց, ներքինն էլ չստեղծե՞ց: ⁴¹ Բայց դուք ինչ կարող եք, տվե՛ք իբրև ողորմություն, և ահա ամեն ինչ մաքուր կլինի ձեզ համար:՝

⁴² Վա՛յ ձեզ, փարիսեցինե՛ր, որ անանուխի, փեզենայի և ամեն տեսակ բանջարեղենի տասանորդը տալիս եք, բայց անտեսում եք Աստծու արդարությունն ու սերը: Մրանք պետք էր գործադրել՝ առանց մյուսներն անտեսելու:՝

⁴³ Վա՛յ ձեզ, փարիսեցինե՛ր, որ սիրում եք ժողովարաններում պատվավոր աթոռների վրա նստել, ինչպես նաև հրապարակներում հարգալից ողջույններ ընդունել:

⁴⁴ Վա՛յ ձեզ, որ նման եք այն գերեզմաններին, որոնք չեն նշմարվում, և որոնց վրայով մարդիկ անցնում են առանց գիտենալու, որ դրանք գերեզմաններ են:

⁴⁵ Այս խոսքերի վրա Օրենքի ուսուցիչներից մեկն ասաց Հիսուսին.

-Վարդապե՛տ, այս բաներն ասելով՝ դու մեզ էլ ես անարգում:

⁴⁶ Հիսուսը պատասխանեց.

-Վա՛յ ձեզ ևս, Օրենքի՛ ուսուցիչներ, որ դժվարակիր բեռներ եք դնում մարդկանց ուսերին, և դուք ինքներդ ձեր մատի ծայրով իսկ չեք օգնում այդ բեռները կրելու:

⁴⁷ Վա՛յ ձեզ, որովհետև մարգարեների դամբարաններ եք շինում, մինչդեռ ձեր հայրերն էին, որ սպանեցին նրանց: ⁴⁸ Դրանով իսկ դուք վկայում եք, թե համաձայն եք ձեր հայրերի գործերին. նրանք սպանեցին մարգարեներին, իսկ դուք նրանց համար դամբարաններ եք շինում: ⁴⁹ Դրա համար Աստծու իմաստությունն ասում է. «Նրանց մոտ մարգարեներ և պատգամավորներ պիտի ուղարկեմ, և նրանցից ոմանց նրանք պիտի սպանեն և մյուսներին հալածեն»: ⁵⁰ Հետևաբար, Աստված այս սերնդից պիտի առնի աշխարհի սկզբից ի վեր բոլոր մարգարեների թափված արյան վրեժը՝ ⁵¹ Աբելի արյունից մինչև արյունը Ջաֆարիայի, որն սպանվեց տաճարի և զոհարանի միջև: Այո՛, ասում եմ ձեզ, բոլոր ոճիրների պատիժը այս սերունդը պիտի կրի:՝

⁵² Վա՛յ ձեզ, Օրենքի ուսուցիչներ, որ թաքցնում եք գիտության դռան բանալին, դուք

^{11.41} «Ինչ կարող եք», հուն. ունի «ինչ որ ունեք [ձեր] ներսում»:

^{11.42} «Փեզենա». դառն ու կծու բանջարեղեն:

^{11.42} Ղև 27.30:

^{11.51} ա Ծն 4.8: ք Բ Մն 24.20-21:

ինքներդ չեք մտնում և մտնել ուզողներին էլ արգելում եք:

⁵³ Օրենքի ուսուցիչները և փարիսեցիները, երբ լսեցին այս խոսքերը, որ Հիսուսն ասաց բոլոր մարդկանց առաջ, ամոթով մնացին: Նրանք սկսեցին քննադատել նրան և զանազան հարցերի մասին վիճել նրա հետ, որպեսզի հենց իր խոսքերով ծուղակը զգեն նրան և ամբաստանեն:*

12

Ազդարարություն կեղծավորների դեմ

(Մտ 10.26-27)

¹ Մինչ հազարավոր մարդիկ սկսեցին Հիսուսի շուրջը խոնվել իրար կոխտուելու աստիճան, նա իր աշակերտներին ասաց.

-Նախ և առաջ զգուշացե՛ք փարիսեցիների թթխմորից, այսինքն՝ նրանց կեղծավորությունից: ² Չկա ծածուկ բան, որ չհայտնվի, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացվի. ³ որովհետև ինչ որ խավարի մեջ ասեք, պիտի լսվի օրը ցերեկով, և ինչ որ առանձին սենյակում փսփսաք միմյանց ականջին, տանիքներից բարձրաձայն պիտի քարոզվի:

Ումի՞ց վախենալ

(Մտ 10.28-31)

⁴ -Միրելինե՛ր, ասում եմ ձեզ. մի՛ վախեցեք նրանցից, որոնք մարմինն են սպանում և ապա ուրիշ բան անել չեն կարող: ⁵ Ասեմ, թե ումի՞ց պետք է վախենաք: Վախեցե՛ք Աստծուց, որ սպանելուց հետո իշխանություն ունի դժոխք զցելու: Այո՛, ասում եմ ձեզ, վախեցե՛ք նրանից: ⁶ Հինգ ճնճղուկի արժեքը մի՞ թե տասը դահեկան չէ. և սակայն նրանցից ոչ մեկը մոռացված չէ Աստծու կողմից: ⁷ Գալով ձեզ՝ ձեր գլխի յուրաքանչյուր մազն անգամ հաշվված է: Հետևաբար, մի՛ վախեցեք, որովհետև դուք բոլոր ճնճղուկներից ավելի արժեք ունեք Աստծու աչքին:

Հիսուսին դավանել կամ ուրանալ

(Մտ 10.19-20, 32-33, 12.32)

⁸ -Եվ ասում եմ ձեզ. ով որ մարդկանց առաջ դավանի, թե հետևում է ինձ, Մարդու Որդին էլ նրա՛ն պիտի դավանի իբրև իրեն հետևորդի՝ Աստծու հրեշտակների առաջ: ⁹ Իսկ ով որ ինձ ուրանա մարդկանց առաջ, Մարդու Որդին էլ նրա՛ն պիտի ուրանա Աստծու հրեշտակների առաջ: ¹⁰ Ով որ Մարդու Որդու դեմ մի խոսք ասի, Աստված պիտի ների նրան, բայց ով որ Սուրբ Հոգուն նախատի, բնավ չի ների նրան, որովհետև նրա արածը հայհոյություն է:*

*11.53 Այս հմր սկիզբը հուն. լրիվ տարբեր է՝ «Երբ Հիսուսն այնտեղից դուրս ելավ, Օրենքի ուսուցիչներն ու փարիսեցիները սկսեցին...»:

*12.1 Մտ 16.6, Մր 8.15:

*12.2 Մր 4.22, Ղկ 8.17:

*12.10 «Սուրբ Հոգուն նախատի». տե՛ս Մտ 12.31-ի ծնթ:

¹¹ Երբ ժողովարան տանեն ձեզ կամ կառավարիչների և իշխանների առաջ կանգնեցնեն դատելու համար, մի՛ մտահոգվեք, թե ինչպե՛ս պիտի պաշտպանեք ձեզ և կամ ինչ պիտի ասեք,¹² որովհետև Մուրբ Հոգին այդ նույն ժամին կսովորեցնի ձեզ, թե ի՛նչ պետք է ասեք:

Անմիտ հարուստի առակը

¹³ Ժողովրդից մեկն ասաց Հիսուսին.

-Վարդապե՛տ, ասա՛ եղբորս, որ մեր հոր թողած ժառանգությունից իմ բաժինը տա ինձ:

¹⁴ Հիսուսը պատասխանեց.

-Ո՛վ մարդ, ո՞վ ինձ դատավոր կամ իրավունքի բաժանարար կարգեց ձեզ վրա:

¹⁵ Ապա դառնալով ժողովրդին՝ շարունակեց.

-Տեսե՛ք, որ զգույշ լինեք ամեն տեսակ ազահությունից, որովհետև մարդու կյանքը կախված չէ իր կուտակած հարստությունից:

¹⁶ Հիսուսը նրանց մի առակ էլ պատմեց և ասաց.

-Հարուստ մի մարդ կար, որի արտերն առատ բերք տվեցին:¹⁷ Նա մտածում էր և ասում. «Ի՞նչ պետք է անեմ, որովհետև հունձս ամբարելու համար շտեմարաններիս մեջ տեղ չմնաց:¹⁸ Այո՛, գիտեմ, թե ի՛նչ պետք է անեմ. կքանդեմ շտեմարաններս, ավելի ընդարձակները կշինեմ և այնտեղ կհավաքեմ ցորենս և իմ բոլոր բերքերը:

¹⁹ Ապա ինքս ինձ կասեմ. "Ո՛վ մարդ, քանի՞ երկար տարիների համար կուտակած հարստություն ունես, հանգի՛ստ եղիր, կե՛ր, խմի՛ր և վայելի՛ր"»: ²⁰ Բայց Աստված ասաց նրան. «Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ վերցնելու են քեզնից, ո՞ւմ է մնալու քո պատրաստածը»:

²¹ Եվ Հիսուսը եզրակացրեց.

-Նույնն է բոլոր նրանց պարագան, ովքեր միայն իրենց համար են հարստություն դիզում, փոխանակ հարստանալու Աստծու աչքին:

Վստահել Աստծուն

(Մտ 6.25-34)

²² Ապա Հիսուսն իր աշակերտներին ասաց.

-Ահա թե ինչո՛ւ եմ ասում ձեզ. մի՛ մտահոգվեք ձեր կյանքի համար, թե ի՛նչ եք ուտելու, և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ի՛նչ եք հագնելու.²³ որովհետև կյանքն ավելի կարևոր է, քան ուտելիքը, և մարմինը ավելի կարևոր է, քան հագուստը:²⁴ Նայեցե՛ք ագռավներին, որոնք ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում, ո՛չ շտեմարաններ ունեն և ո՛չ էլ ամբարներ, բայց Աստված կերակրում է նրանց: Իսկ մի՞ թե չի կերակրի ձեզ, որ իր աչքին թռչուններից գերազանց եք:²⁵ Մտահոգվելը մեկ կանգունով կերկարացնի՞ ձեր հասակը:²⁶ Եթե անկարող եք նվազագույն բանն անելու, ինչո՞ւ եք ուրեմն այլ բաներով

^{12.10} Մտ 12.32, Մր 3.29:

^{12.11-12} Մտ 10.19-20, Մր 13.11, Ղկ 21.14-15:

^{12.19} Մր 11.19:

մտահոգվում: ²⁷Նայեցե՛ք դաշտի շուշանին և տեսեք, թե ինչպե՛ս է աճում. ո՛չ աշխատում է, ո՛չ հյուսում: Հավատացե՛ք, որ Սողոմոնն իսկ իր ամբողջ փառքի մեջ նրանցից մեկի պես գեղեցիկ չկարողացավ հագնվել: ²⁸Եթե Աստված այդպես լավ է հագնում խոտը, որ այսօր բաց դաշտի մեջ է, իսկ վաղը կրակն է նետվելու, մի՞ թե՛ ձեզ ավելի լավ չի հագնի, թերահավատնե՛ր: ²⁹Հետևաբար, մի՛ մտահոգվեք ո՛չ ձեր ուտելիքով, ո՛չ էլ ձեր խմելիքով, և դուք ձեզ մի՛ մտատանջեք, ³⁰որովհետև դրանք բոլորը հատուկ են հեթանոսներին: Ձեր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք է ձեզ: ³¹Այլ դուք ուզեցեք, որ Աստծու արքայությունը գա, և Աստված այդ բոլորը ավելիով կտա ձեզ:

Երկնային գանձ

(Մտ 6.19-21)

³²-Մի՛ վախեցիր, փոքրի՛կ հոտ, որովհետև ձեր Հայրը բարեհաճեց արքայությունը ձեզ տալ: ³³Վաճառեցե՛ք ձեր ունեցվածքները և փողը ողորմությա՛ն հատկացրեք: Փորձեցե՛ք ձեռք բերել այնպիսի հարստություն, որ չի արժեզրկվում, այնպիսի մի գանձ, որ չի պակասում, և այն դիզեցե՛ք երկնքում, որտեղ ո՛չ գողը կարող է մոտենալ նրան, և ո՛չ էլ ցեցը կարող է փչացնել: ³⁴որովհետև որտեղ ձեր հարստությունն է, այնտեղ է նաև ձեր սիրտը:

Արթուն ծառաներ

(Մտ 24.43-44)

³⁵-Պատրա՛ստ եղեք, թող ձեր գոտիները ձեր մեջքին ամրացած և ձեր ճրագները վառված լինեն,* ³⁶նման եղեք այն ծառաներին, որոնք սպասում են, որ իրենց տերը հարսանիքից վերադառնա, որպեսզի երբ գա և բախի դուռը, նրանք իսկույն բաց անեն: ³⁷Երանի՛ այն ծառաներին, որոնց տերը երբ գա, արթուն կգտնի նրանց: Ասում եմ ձեզ, որ ինքն իր մեջքին գոտի պիտի կապի, սեղան պիտի նստեցնի նրանց և ինքը սպասարկի նրանց: ³⁸Երանելի են այն ծառաները, որոնց տերը արթուն կգտնի նրանց, երբ տուն վերադառնա կեսգիշերին կամ ավելի ուշ: ³⁹Բայց ա՛յս էլ իմացեք, որ եթե տանտերը գիտենար, թե գողը որ ժամին կգար, արթուն կմնար և թույլ չէր տա, որ գողը, պատը քանդելով, իր տունը մտներ: * ⁴⁰Ուրեմն դուք էլ պատրաստ եղեք, որովհետև Մարդու Որդին կարող է գալ ձեր չսպասված ժամին:

Հավատարիմ և անհավատարիմ ծառան

(Մտ 24.45-51)

⁴¹Պետրոսն ասաց.

*12.27 Գ Թգ 10.4-7, Բ Մն 9.3-6:

*12.35 Մտ 25.1-13:

*12.36 Մր 13.34-36:

*12.39 Մի շարք ձեռ. չունեն «արթուն կմնար»:

*12.39-40 Մտ 24.43-44:

-Տե՛ր, այս օրինակը մե՞զ համար ասացիր, թե՞ բոլորի համար:

⁴² Տերն ասաց.

-Ո՞վ է հավատարիմ և իմաստուն տնտեսը: Նա է, որին իր տերը վերակացու է կարգում իր ծառաների վրա, որպեսզի ճիշտ ժամանակին նրանց կերակուրի բաժինը տա: ⁴³ Երանի՛ այն ծառային, որի տերը երբ գա, նրան կգտնի իր պաշտոնը լավ կատարած: ⁴⁴ Հաստատապես ասում եմ ձեզ, տերն այդ ծառային վերակացու պիտի կարգի իր բոլոր ունեցվածքների վրա: ⁴⁵ Սակայն եթե ծառան ինքն իրեն ասի՝ «Իմ տերը ուշանում է գալ» և սկսի ծեծել մյուս ծառաներին և աղախիններին, ուտել, խմել և հարբել, ⁴⁶ հանկարծ նրա չակնկալած ժամանակ և չսպասված ժամին տերը կգա, խստությամբ կպատժի նրան և կդասի անհավատների շարքը:

⁴⁷ Այն ծառան, որ գիտի իր տիրոջ կամքը, բայց չի պատրաստի կամ չի կատարի նրա ուզածը, շատ պատիժ պիտի ստանա: ⁴⁸ Իսկ այն ծառան, որ չգիտի իր տիրոջ պահանջածը և պատժի արժանի բաներ է անում, նվազ պատիժ պիտի ստանա: Նրան, ում շատ է տրված, նրանից շատ պիտի պահանջվի, իսկ ում շատ ավելի է տրված, նրանից պիտի պահանջվի առավել և շատ:

Հիսուսը բաժանումի պատճառ

(Մտ 10.34-36)

⁴⁹ -Ես եկա երկրի վրա կրակ գցելու և որքա՛ն կուզենայի, որ արդեն իսկ այն բռնկված լիներ: ⁵⁰ Ինձ մի մկրտություն է սպասում, և ես որքա՛ն եմ տազնապում, մինչև որ այն կատարվի: ⁵¹ Դուք կարծում եք, թե աշխարհին խաղաղություն է տալու եկա: Ո՛չ: Ասում եմ ձեզ, ոչ թե խաղաղություն, այլ բաժանում: ⁵² Այսպես, եթե մի ընտանիքում հինգ անդամ կա, նրանք պիտի բաժանվեն. երեքը՝ երկուսի դեմ, երկուսը՝ երեքի: ⁵³ Հայրն իր որդու դեմ պիտի լինի, որդին՝ իր հոր, մայրը՝ աղջկա դեմ, և աղջիկը՝ մոր, սկեսուրը՝ հարսի դեմ, և հարսը՝ սկեսուրի:՝

Ճանաչել ժամանակի նշանները

(Մտ 16.2-3)

⁵⁴ Ապա ժողովրդին ասաց.

-Երբ տեսնում եք, որ արևմուտքից ամպ է գալիս, իսկույն ասում եք. «Անձրև է գալու», և այդպես էլ լինում է: ⁵⁵ Երբ քամին փչում է հարավից, ասում եք. «Սաստիկ շոգ է լինելու», և այդպես էլ լինում է: ⁵⁶ Կեղծավորնե՛ր, երկինքն ու երկիրը դիտելով՝ կարողանում եք կանխատեսել գալիք եղանակը. ինչո՞ւ, սակայն, չեք կարողանում հասկանալ ներկա ժամանակի իմաստը:

^{12.49} «Կրակ գցելու». պատկերավոր բացատրություն աստվածային դատաստանի և մարդկանց միջև ստեղծվելիք բաժանումների մասին (հմտտ Մտ 10.34-ի ծնթ): Ինչպես կրակը մետաղները բաժանում է կեղտից, այնպես էլ աստվածային ճշմարտության կրակը չարերին բաժանելու է արդարներից: Այդ «բաժանման» մասին է խոսվում հմր 51-ում:

^{12.50} «Մկրտություն» բառով այստեղ ակնարկվում է խաչի չարչարանքը:

^{12.50} Մր 10.38:

^{12.53} Մք 7.6:

Նախապես համաձայնել հակառակորդի հետ

(Մտ 5.25-26)

⁵⁷ -Ինչո՞ւ դուք անձամբ չեք դատում ճիշտը: ⁵⁸ Այսպես, երբ ինչ-որ խնդրի համար քո թշնամու հետ դատավորի մոտ գնալիս լինես, ճանապարհին, դեռևս դատարան չհասած, ջանա համաձայնե՛լ նրա հետ, այլապես նա քեզ քարշ կտա դատավորի մոտ, դատավորը կհանձնի ոստիկանին և ոստիկանն էլ բանտ կնետի քեզ: ⁵⁹ Իմացի՛ր, բանտից դուրս չես գա, մինչև չվճարես տուգանքիդ վերջին դահեկանը:

13

Ապաշխարության անհրաժեշտությունը

¹ Ոմանք եկան Հիսուսի մոտ և նրան պատմեցին այն գալիլեացիների մասին, որոնք սպանվեցին Պիղատոսի կողմից, երբ գոհ էին մատուցում Աստծուն:

² Հիսուսն ասաց նրանց.

-Կարծում եք, թե սպանվող գալիլեացիները մյուս բոլոր գալիլեացիներից ավելի՞ մեղավոր էին, որ այդպիսի վախճան ունեցան: ³ Ո՛չ: Ասում եմ ձեզ, որ եթե չապաշխարեք, դուք բոլորդ էլ նույնպես պիտի կորչեք: ⁴ Կամ ի՞նչ եք մտածում այն տասնութ մարդկանց մասին, որոնց վրա Սելովամում փուլ եկավ աշտարակը և սպանեց նրանց: Նրանք ավելի՞ հանցավոր էին, քան Երուսաղեմի բնակիչները: ⁵ Ո՛չ: Ասում եմ ձեզ, որ եթե չապաշխարեք, բոլորդ էլ նույնպես պիտի կորչեք:

Անպտուղ թզենու առակը

⁶ Նրանց պատմեց հետևյալ առակը.

-Մի մարդ իր այգում թզենի էր տնկել: Նա գնաց թուզ քաղելու, բայց թզենու վրա պտուղ չգտավ: ⁷ Այգեգործին ասաց. «Այս երրորդ տարին է գալիս եմ թուզ քաղելու, բայց չեմ գտնում: Ուստի կտրի՛ր դա. ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ զբաղեցնի»:

⁸ Այգեգործը պատասխանեց. «Տե՛ր, թող այս տարի էլ մնա. ես նրա շուրջը գտնվող հողը կրկին կփորեմ և պարարտանյութ կտամ: ⁹ Այդպես գուցե պտուղ տա. ապա թե ոչ՝ եկող տարի կտրի՛ր այն»:

Հաշմանդամ կնոջ բժշկումը

¹⁰ Մի շաբաթ օր Հիսուսը ժողովարանում ուսուցանում էր: ¹¹ Այնտեղ մի կին կար, որ տասնութ տարուց ի վեր հիվանդ էր՝ բռնված լինելով չար ոգուց. այդ պատճառով քայլում էր մեջքը ծռած և բնավ չէր կարողանում ուղղվել: ¹² Երբ Հիսուսը տեսավ կնոջը, իր մոտ կանչեց նրան և ասաց.

-Ո՛վ կին, բժշկված ես քո հիվանդությունից:

¹³ Հիսուսն իր ձեռքերը դրեց նրա վրա, և կինն իսկույն բժշկվեց և սկսեց փառավորել Աստծուն:

¹⁴ Ժողովրդապետը բարկացավ, որովհետև Հիսուսը շաբաթ օրով կատարեց այդ

^{13.11} «Բնավ չէր կարողանում ուղղվել» կամ «ամբողջովին չէր կարողանում ուղղվել»:

բժշկությունը, և դառնալով ժողովրդին՝ ասաց.

-Շաբաթվա մեջ վեց օր կա, որ կարելի է աշխատել, ուստի այդ օրերի՛ն եկեք ու բժշկվեցեք և ոչ թե շաբաթ օրը:

¹⁵ Տերը պատասխանեց նրան.

-Կեղծավորնե՛ր, ձեզնից յուրաքանչյուրը շաբաթ օրով իր եզրը կամ էջը ախտո՛ից չի՞ արձակի և տանելով ջուր չի՞ տա նրան: ¹⁶ Իսկ այս կինը, որ Աբրահամի աղջիկ է և տասնութ տարուց ի վեր կապված էր Սատանայի կողմից, արժանի չէ՞ր, որ շաբաթ օրով արձակելի իր կապերից:

¹⁷ Այս խոսքի վրա նրանք, որոնք հակառակում էին Հիսուսին, ամաչեցին, մինչդեռ ամբողջ ժողովուրդը ուրախանում էր Հիսուսի կատարած բոլոր հրաշագործությունների համար:

Մանանելի հատիկի օրինակը

(Մտ 13.31-32, Մր 4.30-32)

¹⁸ Հիսուսը հարցրեց.

-Ի՞նչ բանի է նման Աստծու թագավորությունը, կամ ի՞նչ բանի հետ համեմատեմ այն: ¹⁹ Նման է մանանելի հատիկին, որ մի մարդ վերցրեց և ցանեց իր պարտեզում: Հատիկը մեծացավ, ծառ դարձավ, և երկնքի թռչունները եկան և բույն դրեցին նրա ճյուղերի վրա:

Թթխմորի օրինակը

(Մտ 13.33)

²⁰ Դարձյալ հարցրեց.

-Ի՞նչ բանի նմանեցնեմ Աստծու թագավորությունը: ²¹ Նման է այն թթխմորին, որ մի կին վերցնելով խառնեց մի պարկ այլուրի հետ, մինչև որ ամբողջ խմորի եկը հասավ:

Նեղ դուռը

(Մտ 7.13-14, 21-23, 8.11-12, 19.30, 20.16, 25.10-12, Մր 10.31)

²² Հիսուսը, քաղաքներն ու գյուղերը շրջելով, ուսուցանում էր՝ հետզհետե ուղղվելով դեպի Երուսաղեմ: ²³ Մեկը հարցրեց նրան.

-Տե՛ր, արդյոք քչե՞րն են միայն փրկվելու:

Հիսուսն ասաց նրան.

²⁴ -Չանացե՛ք մտնել նեղ դռնով: Ասում եմ ձեզ, որ շատերը կուզենան մտնել, բայց չեն կարողանա: ²⁵ Երբ տանտերը մտնի և դուռը փակի, դրսում կմնաք. կսկսեք դուռը բախել և ասել. «Տե՛ր, Տե՛ր, բա՛ց դուռը մեզ համար»: Տանտերը կպատասխանի. «Չգիտեմ, թե որտեղի՛ց եք»: ²⁶ Այն ժամանակ կասեք. «Քեզ հետ կերանք և խմեցինք, և դու մեր հրապարակներում ուսուցանեցիր մեզ»: ²⁷ Նա կպատասխանի. «Ասում եմ ձեզ, թե չգիտեմ՝ որտեղի՛ց եք, հեռացե՛ք ինձնից դուք բոլորդ, անիրավնե՛ր»:²⁸ Այն

^{13.14} Ելք 20.9-10, Բ Օր 5.13-14:

^{13.27} Մդ 6.8:

ժամանակ դուք լաց կլինեք և կկրճտեք ձեր ատամները, երբ տեսնեք, որ Աբրահամը, Իսահակը, Հակոբը և բոլոր մարգարեները Աստծու թագավորության մեջ են, մինչդեռ դուք դուրս եք թողնված: ²⁹ Արևելքից և արևմուտքից, հյուսիսից և հարավից կգան մարդիկ և կբազմեն Աստծու թագավորության մեջ: ³⁰ Եվ ահա այսպես շատերը, որ հիմա վերջինն են, կլինեն առաջինը, շատերն էլ, որ առաջինն են, կլինեն վերջինը:

Հիսուսի սերը Երուսաղեմի հանդեպ

(Մտ 23.37-39)

³¹ Նույն ժամին փարիսեցիներից ոմանք մոտեցան Հիսուսին և ասացին.

-Վե՛ր կաց և գնա՛ այստեղից, որովհետև Հերովդեսն ուզում է քեզ սպանել:

³² Հիսուսը պատասխանեց.

-Գնացե՛ք և ասացե՛ք այդ աղվեսին. «Ահա չար ոգիներ եմ հանում, բժշկումներ եմ կատարում այսօր և վաղը, իսկ երրորդ օրն էլ կվերջացնեմ գործս»: ³³ Այսուհանդերձ, պետք է որ այսօր, վաղը և մյուս օրը գործս շարունակեմ, որովհետև կարելի չէ, որ մի մարգարե Երուսաղեմից դուրս սպանվի:

³⁴ Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, դու, որ սպանում էիր մարգարեներին և քարկոծում Աստծու կողմից քեզ մոտ ուղարկված պատգամաբերներին, քանի՛ անգամ ուզեցի հավաքել քո որդիներին, ինչպես հավն է իր ձագերին հավաքում թների տակ, բայց դուք, Երուսաղեմի՛ բնակիչներ, չուզեցիք: ³⁵ Ահա «պիտի լքվի ձեր տունը»: Եվ ասում եմ ձեզ, որ այլևս չեք տեսնի ինձ, մինչև որ չասեք՝ «Օրհնյալ լինի նա, որ գալիս է Տիրոջ անունով»:

14

Ջրգողով հիվանդ մարդու բժշկումը

¹ Մի շաբաթ օր Հիսուսը մտավ փարիսեցիների իշխանավորներից մեկի տուն՝ ճաշելու: Ներկաները դիտում էին նրան՝ տեսնելու համար, թե ի՛նչ է անելու: ² Եվ ահա այնտեղ ջրգողով հիվանդ մի մարդ կար Հիսուսի դիմաց: ³ Հիսուսը հարցրեց Օրենքի ուսուցիչներին և փարիսեցիներին.

-Մեր Օրենքը թույլ տալի՞ս է շաբաթ օրով բժշկել:

⁴ Նրանք լուռ մնացին: Հիսուսը բռնեց մարդուն, բժշկեց և ճանապարհ դրեց: ⁵ Եվ ապա ասաց նրանց.

-Եթե ձեզնից մեկի էջը կամ եզր ջրհորն ընկնի, նա այն չի՞ հանի շաբաթ օրով:

^{13.28} Մտ 22.13, 25.30:

^{13.28-29} Մտ 8.11-12:

^{13.30} Մտ 19.30, 20.16, Մր 10.31:

^{13.34} Բ Եզր 1.30:

^{13.35} «Ահա "պիտի լքվի ձեր տունը"». մի շարք ձեռ. ունեն «Ահա "ավերակ պիտի թողնվի ձեր տունը"»: Ակնարկությունը վերաբերում է Երուսաղեմ քաղաքին և տաճարին: «Մինչև որ չասեք». շատ ձեռ. ունեն «մինչև գա [այն օրը], երբ ասեք»:

^{13.35} Մղ 118.26:

^{14.5} Մտ 12.11:

⁶ Եվ նրանք չկարողացան պատասխան տալ:

Խոնարհություն

⁷ Հիսուսը տեսնելով, թե ինչպես հրավիրվածները պատվավոր տեղերն էին փնտրում, նրանց հետևյալ առակն ասաց.

⁸ -Երբ մեկը քեզ հարսանիքի կամ խնջույքի հրավիրի, սեղանի գլուխը մի՛ նստիր, որովհետև կարող է պատահել, որ քեզնից ավելի հարգարժան մեկն էլ հրավիրված լինի: ⁹ Այն ժամանակ քեզ և նրան հրավիրողը կգա և քեզ կասի. «Տեղդ նրա՛ն տուր»: Եվ դու, խայտառակ լինելով, կնստես ամենավերջին աթոռին: ¹⁰ Ընդհակառակը, երբ հրավիրվես, գնա՛ և նստի՛ր վերջին աթոռին, որպեսզի երբ քեզ հրավիրողը գա, ասի քեզ. «Բարեկա՛մ, ավելի վե՛ր բարձրացիր»: Այն ժամանակ դու հրավիրվածների մոտ պատվի արժանացած կլինես. ¹¹ որովհետև ով իր անձը բարձրացնի, պիտի խոնարհվի, իսկ ով իր անձը խոնարհեցնի, պիտի բարձրանա:՝

Ո՞ւմ հրավիրել

¹² Ապա Հիսուսն ասաց տանտիրոջը.

-Երբ ճաշի կամ ընթրիքի հրավեր տաս, մի՛ կանչիր բարեկամներիդ կամ եղբայրներիդ, ազգականներիդ և հարուստ հարևաններիդ, որպեսզի չլինի թե նրանք էլ քո հրավերի փոխարեն քեզ հրավիրեն և այդ ձևով հատուցում արած լինեն քեզ:՝

¹³ Ընդհակառակը, երբ ճաշկերույթ տաս, կանչի՛ր աղքատներին և խեղանդամներին, կաղերին ու կույրերին ¹⁴ և այն ժամանակ երանելի կլինես, որովհետև նրանք փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն, և իմացի՛ր, որ դու քո հատուցումը կստանաս արդարների հարության ժամանակ:

Մեծ խնջույքի առակը

(Մտ 22.1-10)

¹⁵ Երբ սեղանակիցներից մեկը լսեց այս խոսքերը, ասաց Հիսուսին.

-Երանի՛ նրան, ով ճաշ կուտի Աստծու արքայության մեջ:

¹⁶ Հիսուսը նրան հետևյալ առակը պատմեց.

-Մի մարդ կար, որ մեծ ընթրիք սարքեց և հրավիրեց շատերին: ¹⁷ Ընթրիքի ժամին նա իր ծառային ուղարկեց, որպեսզի հրավիրվածներին ասի. «Եկե՛ք, արդեն ամեն ինչ պատրաստ է»: ¹⁸ Հրավիրվածներն սկսեցին մեկ-մեկ հրաժարվել: Առաջինն ասաց. «Մի արտ գնեցի, պիտի գնամ տեսնեմ, հետևաբար խնդրում եմ, որ ներողամիտ լինի»:՝

¹⁹ Մյուսն ասաց. «Հինգ զույգ եզ գնեցի, պետք է գնամ դրանք փորձելու, հետևաբար խնդրում եմ, որ ներողամիտ լինի»: ²⁰ Մեկ ուրիշն ասաց. «Դեռ նոր եմ ամուսնացել, հետևաբար չեմ կարող գալ»: ²¹ Ծառան վերադարձավ և իր տիրոջը պատմեց նրանց ասածները: Այն ժամանակ տանտերը վրդովված ասաց ծառային. «Իսկույն գնա՛

^{14.8} Հուն. չունի «կամ խնջույքի»:

^{14.8-10} Առ 25.6-7:

^{14.11} Մտ 23.12, Ղկ 18.14:

^{14.12} «Հարուստ հարևաններիդ». գրբ. և հուն. մի քանի ձևեր ունեն «հարևաններիդ և հարուստներին»:

քաղաք և հրապարակների վրա ու փողոցներում որքան աղքատ, խեղանդամ, կաղ և կույր մարդ տեսնես, բոլորին էլ այստեղ դրե՛ր»։²² Քիչ հետո ծառան վերադառնալով իր տիրոջն ասաց. «Տե՛ր, քո հրամանը կատարեցի, բայց տակավին տեղ կա»։²³ Տերը ծառային հրամայեց. «Գնա՛ քաղաքից դուրս և ճանապարհների վրա և դաշտերում ու՛մ որ գտնես, ստիպի՛ր, որ գա այստեղ, որպեսզի տունս լցվի»։²⁴ Ասում են ձեզ, որ առաջին հրավիրվածներից ոչ մեկն իմ ընթրիքից չի ճաշակի»։

Աշակերտ լինելու գինը

(Մտ 10.37-38)

²⁵ Մեծ թվով ժողովուրդ էր գնում Հիսուսի հետ։ Հիսուսը, դառնալով նրանց, ասաց.

²⁶ -Ով որ գալիս է ինձ մոտ և ինձ ավելի չի սիրում, քան իր հորն ու մորը, կնոջն ու զավակներին, եղբայրներին ու քույրերին և նույնիսկ իր անձը, չի կարող ինձ աշակերտ լինել.՝²⁷ որովհետև ով որ իր խաչը չի վերցնում և ինձ չի հետևում, ինձ աշակերտ լինել չի կարող։²⁸ Եթե ձեզնից մեկն ուզենա մի աշտարակ շինել, նախ չի՞ նստի և չի՞ հաշվի ծախսերը՝ տեսնելու համար, թե գործը վերջացնելու համար բավարար դրամ ունի՞։²⁹ Այլապես, երբ հիմքը դնելուց հետո չկարողանա աշտարակն ավարտել, բոլոր տեսնողները կսկսեն ծիծաղել նրա վրա՝³⁰ ասելով. «Այս մարդն սկսեց կառուցել, բայց չկարողացավ ավարտել»։³¹ Կամ եթե մի թագավոր տասը հազար հոգուց բաղկացած բանակով ուզենա պատերազմի դուրս գալ մի ուրիշ թագավորի դեմ, որ իր վրա եկել է քսան հազար հոգուց բաղկացած բանակով, նախ չի՞ նստի և չի՞ մտածի, թե արդյոք կկարողանա՞ հաղթել նրան։³² Այլապես, դեռևս հեռվից նա պատգամավոր կուղարկի՝ հաշտություն խնդրելու նրանից։³³ Այդպես էլ՝ ձեզնից նրանք, ովքեր չեն կարող հրաժարվել իրենց ամբողջ ունեցածից, ինձ աշակերտ լինել չեն կարող։

Անպետք աղը

(Մտ 5.13, Մր 9.50)

³⁴ -Աղը լավ բան է, բայց եթե իր համը կորցնի, ինչո՞վ պիտի աղեն այն։³⁵ Ո՛չ հողին է օգտակար, ո՛չ էլ կարելի է դրանից պարարտանյութ պատրաստել, այլ դուրս են թափում։ Ով լսելու ականջ ունի, թող լսի։

15

Կորած ոչխարի առակը

(Մտ 18.12-14)

^{14.26} «Ինձ ավելի չի սիրում, քան իր հորն ու մորը...», բոց՝ «և չի ասում իր հորն ու մորը...»։ Պետք է գիտենալ, որ եբրայերենում *ասել* բայը գործածվում է նաև պարզապես «չսիրել» կամ «նվազ սիրել» իմաստով, ինչպես այստեղ (հմմտ Մտ 10.37)։

^{14.26} Մտ 10.37։

^{14.27} Մտ 10.38, 16.24, Մր 8.34. Ղկ 9.23։

¹ Շատ մաքսավորներ և մեղավորներ Հիսուսի մոտ էին գալիս, որպեսզի լսեին նրան:
² Փարիսեցիներն ու Օրենքի ուսուցիչները սկսեցին տրտնջալ ասելով.

-Ինչպե՞ս է լինում, որ այս մարդն ընդունում է մեղավորներին և ճաշում նրանց հետ:

³ Հիսուսը հետևյալ առակը ասաց նրանց.

⁴ -Ենթադրենք, որ ձեզնից մեկը հարյուր ոչխար ունի: Երբ նրանցից մեկը կորցնի, իննսունինինն արոտավայրում չի թողնի և չի գնա կորածի հետևից, մինչև որ գտնի այն: ⁵ Եվ երբ գտնի, ուրախությամբ իր ուսերի վրա կդնի ⁶ և կվերադառնա տուն, կկանչի իր բարեկամներին ու հարևաններին և կասի նրանց. «Ուրախացե՛ք ինձ հետ, որովհետև գտա իմ կորած ոչխարը»: ⁷ Ասում եմ ձեզ, որ այդպես էլ երկնքում ուրախություն պիտի լինի մեկ ապաշխարող մեղավորի համար, քան իննսունինը արդարների համար, որոնք ապաշխարության պետք չունեն:

Կորած դրամի առակը

⁸ -Կամ ենթադրենք, որ մի կին տասը արծաթ դահեկան ունի: Երբ դրանցից մեկը կորցնի, ճրագը չի վառի և ուշադրությամբ չի ավլի տունը, մինչև որ գտնի դահեկանը: ⁹ Եվ երբ գտնի, կկանչի իր բարեկամուհիներին ու հարևաններին և կասի նրանց. «Ուրախացե՛ք ինձ հետ, որովհետև գտա իմ կորցրած դահեկանը»: ¹⁰ Ասում եմ ձեզ, Աստծու հրեշտակները նույն ձևով պիտի ուրախանան մեկ մեղավորի համար, որ ապաշխարում է:

Անառակ որդու առակը

¹¹ Ապա շարունակեց.

-Մի մարդ երկու որդի ուներ: ¹² Կրտսերը հորն ասաց. «Հա՛յր, քո ունեցվածքից ինձ ընկնող բաժինը հիմա՛ տուր ինձ»: Եվ հայրն իր որդիների մեջ բաժանեց իր ունեցվածքը: ¹³ Մի քանի օր հետո կրտսեր որդին վերցրեց իր ամբողջ հարստությունը և գնաց հեռու երկիր: Այնտեղ անառակ կյանք վարելով, նա մսխեց հարստությունը ¹⁴ և սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեց, որ այդ երկրում սաստիկ սով տիրեց, երբ ինքն արդեն սկսել էր աղքատանալ: ¹⁵ Ուստի գնաց, այդ երկրի քաղաքացիներից մեկի մոտ ծառա եղավ, և սա ուղարկեց նրան իր ագարակը՝ խոզեր արածեցնելու:

¹⁶ Նա նույնիսկ պատրաստ էր խոզերի կերած եղջերենու պտուղով իր փորը լցնելու, սակայն ոչ ոք այդ նրան չէր տալիս: ¹⁷ Երբ անդրադարձավ իր վիճակին, ինքն իրեն ասաց. «Քանի՛ աշխատավորներ կան իմ հոր տանը, որոնք իրենց պետք եղած կերակուրից ավելին ունեն, մինչ քան այստեղ սովամահ եմ լինում: ¹⁸ Վեր կենամ գնամ հորս մոտ և ասեմ նրան. "Հա՛յր, մեղանչեցի Աստծու և քո դեմ, ¹⁹ այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ համարիր քո աշխատավորներից մեկը": ²⁰ Ապա վեր կացավ և գնաց իր հոր մոտ:

Նա տնից դեռևս բավական հեռու էր, երբ հայրը տեսավ նրան և գթաց. վազելով

^{15.1-2} Ղկ 5.29-30:

^{15.15} «*Խոզեր արածեցնելու*». տե՛ս Մր 5.11-ի ծնթ:

ընդառաջ գնաց նրան, փաթաթվեց վզին և համբուրեց: ²¹ Որդին հորն ասաց. «Հա՛յր, մեղանչեցի Աստծու և քո դեմ, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»: ²² Հայրն իր ծառաներին հրամայեց. «Անմիջապես բերե՛ք լավագույն պատմուճանը և հագցրե՛ք նրան, մատանի՛ անցկացրեք նրա մատին և կոշիկնե՛ր տվեք նրան: ²³ Բերե՛ք պարարտ հորթը, մորթեցե՛ք, ուտենք և ուրախանանք, ²⁴ որովհետև իմ այս որդին մեռած էր կենդանացավ, կորած էր՝ գտնվեց»: Եվ սկսեցին խրախճանքը:

²⁵ Մինչ այդ ավագ որդին ագարակում էր: Վերադարձին, երբ մոտեցավ տանը, երգի և պարի ձայներ լսեց: ²⁶ Կանչեց ծառաներից մեկին և հարցրեց, թե ի՛նչ կա: ²⁷ Ծառան ասաց նրան. «Քո եղբայրն է եկել, և որովհետև նա ողջ-առողջ վերադարձավ, հայրդ մորթեց պարարտ հորթը»: ²⁸ Ավագ եղբայրը զայրացավ և չուզեց ներս մտնել: Իմանալով այդ մասին՝ հայրը դուրս ելավ և աղաչեց նրան, որ ներս մտնի: ²⁹ Իսկ նա պատասխանեց. «Տարիներ ի վեր ծառայում եմ քեզ, քո ոչ մի հրահանգ երբեք չեմ անտեսել, և սակայն դու նույնիսկ մի ուլ չտվեցիր ինձ, որ ուրախանայի բարեկամներիս հետ: ³⁰ Մինչդեռ երբ եկավ քո այդ որդին, որը քո ունեցվածքը մսխեց պռոնիկների հետ, դու պարարտ հորթը մորթեցիր նրա համար»: ³¹ Հայրը նրան ասաց. «Տղա՛ս, դու միշտ ինձ հետ ես, և իմ ամբողջ ունեցածը քոնն է: ³² Հիմա պիտի ուրախանանք և ցնձանք, որովհետև քո այս եղբայրը մեռած էր՝ կենդանացավ, կորած էր՝ գտնվեց»:

16

Ճարպիկ տնտեսի առակը

¹ Հիսուսն իր աշակերտներին այս առակը պատմեց. -Մի մեծահարուստ մարդ կար, որ իր ունեցվածքների վրա մի տնտես ուներ: Երբ այդ տնտեսի մասին մարդիկ ամբաստանություն արեցին՝ ասելով, թե իր տիրոջ հարստությունն է վատնում, ² մեծահարուստը կանչեց նրան և ասաց. «Այդ ինչե՞ր են ասում քո մասին, տո՛ւր քեզ հանձնված իմ բոլոր ունեցվածքների հաշիվը: Դու այլևս իմ տնտեսը չես կարող լինել»: ³ Տնտեսն ինքն իր մեջ խորհեց. «Ի՛նչ պիտի անեմ, ահա իմ տերն ինձ զրկում է տնտեսի պաշտոնից. բանվորություն անել չեմ կարող, մուրալ ամաչում եմ: ⁴ Սակայն գիտեմ, թե ի՛նչ պիտի անեմ, որպեսզի երբ տերս ինձ հեռացնի տնտեսի պաշտոնից, մարդիկ ինձ ընդունեն իրենց տները»: ⁵ Ապա մեկ առ մեկ կանչեց իր տիրոջ պարտապաններին և առաջինին հարցրեց. «Ինչքա՞ն պարտք ունես տիրոջս»: ⁶ Նա պատասխանեց. «Երկու հարյուր չափ ձեթ»: Տնտեսն ասաց. «Ահա քո պարտամուրհակը. նստի՛ր և անմիջապես գրի՛ր՝ հարյուր»: ⁷ Հետո հարցրեց մյուսին. «Դո՛ւ ինչքան պարտք ունես»: Նա պատասխանեց. «Չորս հարյուր հիսուն պարկ ցորեն»: Տնտեսն ասաց. «Ահա քո պարտամուրհակը. նստի՛ր և գրի՛ր՝ երեք հարյուր հիսուն»: ⁸ Տերը, լսելով այս, զովեց անիրավ տնտեսին իր հնարամտության համար, որովհետև այս աշխարհի մարդիկ միմյաց հանդեպ իրենց վարմունքի մեջ ավելի ճարպիկ են, քան լույսի որդիները: ⁹ Եվ ես ասում եմ ձեզ. աշխարհիկ հարստությունը

գործածեք այնպես, որ Աստուծու բարեկամությունը շահեք, որպեսզի երբ այս աշխարհից դուրս ելնեք, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ։⁹

¹⁰ Ով հավատարիմ է փոքր ծառայության մեջ, մեծի մեջ էլ հավատարիմ է, իսկ ով փոքր ծառայության մեջ անհավատարիմ է, մեծի մեջ էլ անհավատարիմ է:

¹¹ Հետևաբար, եթե աշխարհիկ հարստությունը գործածելու մեջ հավատարիմ չեղաք, ճշմարիտ հարստությունը ո՞վ կվստահի ձեզ: ¹² Այսինքն, եթե հավատարիմ չեղաք աշխարհիկ հարստությանը, որը ձերը չէ, ինչպե՞ս եք ուզում, որ Աստված ձեզ տա ձեզ սպասող ճշմարիտ հարստությունը: ¹³ Ոչ մի ծառա երկու տիրոջ ծառայել չի կարող, որովհետև կա՛մ մեկին պիտի աստի և մյուսին սիրի, կա՛մ մեկին պիտի մեծարի և մյուսին արհամարհի: Չեք կարող թե՛ Աստծուն ծառայել և թե՛ դրամին:՝

Օրենքը և Աստծու արքայությունը

(Մտ 11.12-13, 5.18, 31-32, 19.9, Մր 10.11-12)

¹⁴ Փարիսեցիները, որոնք փողասեր էին, երբ լսեցին այս բոլորը, սկսեցին հեզնել նրան: ¹⁵ Հիսուսն ասաց նրանց.

-Դուք ձեզ արդար եք ցույց տալիս ուրիշների առաջ, սակայն Աստված գիտի ձեր սրտերը. ¹⁶ որովհետև մարդկանց աչքին փառավոր երևացողը Աստծու աչքին անարգ է: Մովսեսի Օրենքը և մարգարեների ուսուցումները ի գորու էին մինչև Հովհաննեսը. դրանից հետո ավետարանվում է Աստծու արքայությունը, և ամեն մարդ շտապում է բռնությամբ ներս մտնել:՝ ¹⁷ Ավելի հեշտ է, որ երկինքն ու երկիրը կորչեն, քան Օրենքի ամենափոքր տառը:՝

¹⁸ Ով որ իր կնոջն արձակում է և մի ուրիշին առնում, շնանում է. շնանում է նաև նա, ով ամուսնանում է արձակված կնոջ հետ:՝

Աղքատ Ղազարոսի առակը

¹⁹ -Մի մեծահարուստ մարդ կար, որ բեհեզ և ծիրանի հագուստներ էր հագնում և ամեն օր փառավոր խնջույք էր սարքում: ²⁰ Մի աղքատ մարդ էլ կար՝ Ղազարոս անունով, որ նստում էր նրա դռան առաջ՝ ²¹ հուսալով իր փորը լցնել մեծահարուստի սեղանից ավելացածներով: Ղազարոսը վերքերով էր ծածկված, և շները գալիս էին ու լիզում նրա վերքերը: ²² Աղքատը մեռավ, և հրեշտակները նրան տարան Աբրահամի մոտ: Մեծահարուստն էլ մեռավ և թաղվեց: ²³ Դժոխքում, մինչ մեծահարուստը տանջանքների մեջ էր, բարձրացրեց իր աչքերը և հեռվից տեսավ Աբրահամին և Ղազարոսին էլ՝ նրա մոտ: ²⁴ Մեծահարուստն աղաղակեց. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը ջրի մեջ թաթախի և զովացնի

^{16.9} Տր 4.9-11:

^{16.13} Մտ 6.24:

^{16.16} «Ամեն մարդ շտապում է բռնությամբ ներս մտնել». տե՛ս Մտ 11.12-ի ծնթ:

^{16.16} Մտ 11.12-13:

^{16.17} Մտ 5.18:

^{16.18} Մտ 5.32, Ա Կր 7.10-11:

^{16.23-24} Բ Եզր 7.36 8.59:

լեզուս, որովհետև այս կրակի մեջ տառապում եմ ծարավից»:²⁵ Աբրահամն ասաց նրան. «Որոյա՛կ, հիշի՛ր, թե ինչպես դու քո կյանքի ընթացքում ամեն բարիք վայելեցիր, մինչդեռ Ղազարոսը չարչարվեց: Հիմա նա այստեղ հանգստանում է, իսկ դու այդտեղ տառապում ես: ²⁶ Իմացի՛ր նաև, որ մեր և ձեր միջև կա մի մեծ անդունդ: Եթե ուզենան այստեղից ձեզ մոտ անցնել, չեն կարողանա, ոչ էլ այդտեղից մեկը կարող է մեզ մոտ գալ»:²⁷ Մեծահարուստն ասաց. «Աղաչում եմ, հա՛յր, Ղազարոսին ուղարկի՛ր իմ հոր տուն, ²⁸ որտեղ ես հինգ եղբայրներ ունեմ, թող զգուշացնի նրանց, որպեսզի նրանք էլ այս տանջանքի վայրը չգան»:²⁹ Աբրահամն ասաց նրան. «Նրանք ունեն Մովսեսի Օրենքն ու մարգարեներին, թող նրանց պատվիրանները լսեն և գործադրեն»:³⁰ Մեծահարուստն ասաց. «Դա բավական չէ, հա՛յր Աբրահամ, բայց եթե մեռելներից մեկը հարություն առնի և գնա նրանց մոտ, նրանք կապաշխարեն»:³¹ Աբրահամը պատասխանեց. «Եթե Մովսեսի Օրենքին և մարգարեներին չեն լսում, ապա մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չի կարողանա համոզել նրանց»:

17

Մեղք և ներում

(Մտ 18.6-7, 21-22, Մր 9.40)

¹ Հիսուսն իր աշակերտներին ասաց. -Գայթակղություններ անպայման կպատահեն, բայց վա՛յ այն մարդուն, որի ձեռքով ուրիշները գայթակղության մեջ կընկնեն: ² Ավելի լավ կլիներ, որ նրա վզին մի երկանաքար անցկացնեին ու նրան ծովը գցեին, քան թե նա այս փոքրիկներից մեկին գայթակղեցներ: ³ Հետևաբար զգուշացե՛ք: Եթե քո եղբայրը մեղք գործի, հանդիմանի՛ր նրան և եթե զղջա, ների՛ր նրան: ⁴ Եթե նույնիսկ մեկ օրվա մեջ նա յոթ անգամ մեղանչի քո դեմ և յոթ անգամ էլ քեզ մոտ գալով ասի՝ «Ձղջում եմ», պետք է ներես նրան:

Հավատի ուժը

(Մտ 17.19)

⁵ Առաքյալներն ասացին Տիրոջը.
-Ավելացրո՛ւ մեր հավատը:
⁶ Տերն ասաց.
-Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք և ասեք այս թթենուն՝
«Արմատախի՛լ եղիր և տնկվի՛ր ծովի մեջ», նա կհնազանդվի ձեզ:՝

Ծառայի պարտականությունը

⁷ -Ենթադրենք, թե ձեզնից մեկը մի ծառա ունի, որ հողագործ է կամ հովիվ: Երբ ծառան դաշտից վերադառնա և մտնի տուն, տերը կասի՞. «Շուտ գնա՛, ճաշդ կե՛ր»: Իհարկե, ո՛չ: ⁸ Ընդհակառակը, նրան կասի. «Պատրաստի՛ր ընթրիքս և զոգնոցդ

^{17.3} «Եթե քո եղբայրը մեղք գործի». մի շարք ձեռ. ունեն «Եթե քո եղբայրը քո դեմ մեղք գործի»:

^{17.3} Մտ 18.15:

^{17.6} «Մանանեխի հատիկի չափ». տե՛ս Մտ 17.20-ի ծնթ:

կապելով՝ սպասարկի՛ր ինձ, մինչև ընթրիքս վերջացնեմ, դրանից հետո կարող ես ուտել և խմել»։⁹ Կարծում եք, թե տերը երախտապա՞րտ պիտի լինի իր ծառային, որ իր հրահանգները կատարեց։ Չեմ կարծում։¹⁰ Նույնպես էլ դուք, երբ կատարեք, ինչ որ հրամայված է ձեզ, ասացե՛ք. «Անպիտան ծառաներ ենք, ինչ պարտավոր էինք անել, արեցինք»։

Հիսուսը բժշկում է տասը բորոտների

¹¹ Դեպի Երուսաղեմ իր ճանապարհին Հիսուսն անցնում էր Սամարիայի և Գալիլեայի սահմաններով։¹² Եվ մինչ մի գյուղ էր մտնում, նրան հանդիպեցին տասը բորոտներ, որոնք հեռու կանգնեցին՝¹³ և բարձրաձայն ասացին.

-Հիսու՛ս Վարդապետ, ողորմի՛ր մեզ։

¹⁴ Հիսուսը տեսավ նրանց և ասաց.

-Գնացե՛ք և ձեզ ցույց տվե՛ք քահանաներին։

Եվ մինչդեռ գնում էին, արդեն իսկ մաքրվեցին։

¹⁵ Նրանցից մեկը երբ տեսավ, որ բժշկվեց, վերադարձավ և սկսեց բարձրաձայն փառավորել Աստծուն։¹⁶ Երեսի վրա գետին ընկավ Հիսուսի ոտքերի առաջ և շնորհակալություն էր հայտնում նրան։ Եվ նա սամարացի էր։

¹⁷ Հիսուսը հարցրեց.

-Մաքրվողները տասը հոգի չէի՞ն. ո՞ւր են մնացած ինը։¹⁸ Բացի այս օտարականից ուրիշ մեկը չգտնվե՞ց, որ վերադառնար ու փառք տար Աստծուն։

¹⁹ Ապա սամարացուն դառնալով՝ ասաց.

-Վե՛ր կաց և գնա՛, քո հավատը քեզ փրկեց։

Աստծու թագավորության գալուստը

(Մտ 24.23-28, 37-41)

²⁰ Փարիսեցիները Հիսուսին հարցրին, թե ե՛րբ է գալու Աստծու թագավորությունը։ Նա պատասխանեց.

-Աստծու թագավորությունը դրսից տեսանելի նշաններով չի գալու.²¹ կամ չեն ասի, թե՛ «Ահա այստեղ է կամ այնտեղ», որովհետև ահա Աստծու թագավորությունը ձեր մեջ է գտնվում։

²² Ապա իր աշակերտներին ասաց.

-Կգա ժամանակը, երբ դուք կուզենաք Մարդու Որդու այս օրերից մեկը տեսնել, բայց չեք տեսնի։²³ Եվ եթե ձեզ ասեն՝ «Ահա այստեղ է կամ այնտեղ», մի՛ լսեք և մի՛ հետևեք նրանց.²⁴ որովհետև ինչպես որ կայծակը փայլատակելով լուսավորում է երկնակամարը մի կողմից մինչև մյուսը, այնպես կլինի Մարդու Որդին իր գալստյան օրը։²⁵ Մակայն նախ շատ չարչարանքներ պիտի կրի և մերժվի այս սերնդից։²⁶ Եվ

^{17.9} Շատ ձեռ. չունեն «Չեմ կարծում» նախադասությունը։

^{17.12} «Հեռու կանգնեցին». որովհետև Օրենքը բորոտներին արգելում էր բնակեցված վայրերին կամ մարդկանց մոտենալ (հմմտ Ղև 13.45-46)։

^{17.14} Ղև 14.1-32։

^{17.21} «Չեք մեջ» կամ «ձեր միջև»։

ինչպես որ Նոյի ժամանակ Աստուծու պատիժը հանկարծակի վրա հասավ, այնպես կլինի նաև Մարդու Որդու օրերին:՝²⁷ Նրանք էլ էին ուտում, խմում, կին էին առնում և մարդու գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տապան մտավ, և ջրհեղեղը եկավ ու բնաջնջեց նրանց:՝²⁸ Կամ ինչպես պատահեց նաև Ղովտի օրերին. ուտում էին, խմում, առնում ու վաճառում, տնկում էին, կառուցում:՝²⁹ Բայց այն օրը, երբ Ղովտը թողեց Սոդոմը, երկնքից կրակ ու ծծումբ տեղաց և բնաջնջեց բոլորին:՝³⁰ Նույնը կպատահի և այն օրը, երբ հայտնվի Մարդու Որդին:

³¹ Այդ օրը, ով որ տանիք է բարձրացել, ցած իջնելով թող տուն չմտնի՝ այնտեղ գտնվող իր գույքերը վերցնելու համար: Նույնպես և ով որ դաշտում է գտնվում, թող տուն չվերադառնա՝ ունեցածները վերցնելու համար:՝³² Հիշեցե՛ք Ղովտի կնոջ պարագան:՝³³ Ով որ ջանա փրկել իր կյանքը, պիտի կորցնի այն, և ով որ կորցնի իր կյանքը, պիտի փրկի այն:՝³⁴ Ասում եմ ձեզ, այդ գիշեր, եթե մեկ անկողնում երկու հոգի լինեն, նրանցից մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը՝ թողնվի, կամ եթե երկու կին միասին ցորեն աղալիս լինեն, նրանցից մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը՝ թողնվի,³⁵ կամ եթե հանդում երկու հոգի լինեն, նրանցից մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը՝ թողնվի:

³⁶ Աշակերտները հարցրին Հիսուսին.

-Տե՛ր, որտե՞ղ պիտի պատահի դա:՝

³⁷ Նա պատասխանեց.

-Ուր որ դիակ կա, այնտեղ էլ հավաքվում են անգղները:

18

Այրի կնոջ և դատավորի առակը

¹ Հիսուսը մի առակ պատմեց իր աշակերտներին՝ ցույց տալու համար, թե պետք է միշտ աղոթել առանց վիասովելու:՝² Եվ ասաց.

-Մի քաղաքում մի դատավոր կար, որ ո՛չ Աստուծուց էր վախենում և ո՛չ էլ մարդկանցից ամաչում:՝³ Նույն քաղաքում մի այրի կին էլ կար, որ դիմում էր նրան և խնդրում. «Իրավունքս պաշտպանի՛ր իմ հակառակորդից»:՝⁴ Դատավորը երկար ժամանակ մերժում էր դատը տեսնել, սակայն ի վերջո ինքն իրեն ասաց. «Թեև Աստուծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում,⁵ բայց քանի որ այս այրին

^{17.26} Ծն 6.4-8:

^{17.27} Ծն 7.6-24:

^{17.28-29} Ծն 18.20-19.25:

^{17.31} Մտ 24.17-18, Սր 13.15-16:

^{17.32} «Հիշեցե՛ք Ղովտի կնոջ պարագան». այս ակնարկությունը վերաբերում է Սոդոմ և Գոմոր քաղաքների պատժի ժամանակ Ղովտի և նրա ընտանիքի փախուստին, երբ Ղովտի կինը, հակառակ իրենց տրված հրահանգին, հետ շրջվեց և տեղնուտեղը աղի արձանի վերածվեց: Այսպիսով, Ղովտի կինը մի օրինակ է դեպի անցյալի կյանքը, այսինքն՝ դեպի աշխարհային ցանկությունները վերադառնալու, որից զգուշացնում էր Քրիստոսը:

^{17.32} Ծն 19.26:

^{17.33} Մտ 10.39, 16.25, Սր 8.35, Ղկ 9.24, Հհ 12.25:

^{17.36} Հնագույն ձեռ. չկա այս հմր (հմմտ Մտ 24.40):

նեղություն է տալիս ինձ, նրա դատը տեսնեմ, որպեսզի անվերջ մոտս գալով՝ չանհանգստացնի ինձ»:

⁶ Ապա Տերը շարունակեց.

-Լսեցե՛ք, թե ի՛նչ է ասում այդ անիրավ դատավորը: ⁷ Իսկ Աստված ինչքա՞ն կհամբերի իր ընտրյալների կրած անիրավությանը. չի՞ պաշտպանի նրանց, որոնք գիշեր ու ցերեկ դիմում են իրեն: * ⁸ Այո՛, ասում եմ ձեզ, նրանց իրավունքն իսկույն կպաշտպանի: Բայց Մարդու Որդին երբ գա, արդյոք հավատ կգտնի՞՞ երկրի վրա:

Փարիսեցու և մաքսավորի առակը

⁹ Այս առակն էլ պատմեց նրանց, որոնք իրենք իրենց մասին այն համարումն ունեին, թե արդար են և արհամարհում են ուրիշներին:

¹⁰ -Երկու հոգի տաճար գնացին աղոթելու, մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր:

¹¹ Փարիսեցին, մի կողմ կանգնած, ինքն իրեն աղոթում էր՝ ասելով. «Աստվա՛ծ իմ, շնորհակալ եմ քեզնից, որ ես ուրիշ մարդկանց նման հափշտակող, անիրավ, շնացող չեմ, կամ նման չեմ նաև այս մաքսավորին.* ¹² այլ շաբաթը երկու անգամ ծում եմ պահում և իմ ամբողջ եկամուտի տասանորդը տալիս եմ տաճարին»: ¹³ Իսկ մաքսավորը, մի քիչ հեռու կանգնած, աչքերն առանց վեր բարձրացնելու կուրծքն էր ծեծում և ասում. «Աստվա՛ծ, ների՛ր մեղավորիս մեղքերը»:

¹⁴ -Ասում եմ ձեզ,- եզրակացրեց Հիսուսը,- մաքսավո՛րն է, որ արդարացած տուն գնաց և ոչ թե փարիսեցին, որովհետև ով որ բարձրացնում է իր անձը, պիտի խոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, պիտի բարձրանա:

Հիսուսն օրհնում է մանուկներին

(Մտ 19.13-15, Մր 10.13-16)

¹⁵ Ժողովրդից ոմանք մանուկների բերեցին Հիսուսի մոտ, որպեսզի ձեռքը դնի նրանց վրա: Երբ աշակերտներն այս տեսան, սաստեցին բերողներին: ¹⁶ Բայց Հիսուսն իր մոտ կանչեց մանուկներին և ասաց.

-Թո՛ւյլ տվեք մանուկներին, որ ինձ մոտ գան, մի՛ արգելեք նրանց, որովհետև այդպիսիներինն է Աստծու արքայությունը: ¹⁷ Լա՛վ իմացեք, ով որ Աստծու արքայությունը մանկան պես չընդունի, չի մտնի այնտեղ:

Մեծահարուստ մարդը

(Մտ 19.16-30, Մր 10.17-31)

¹⁸ Մի հրեա իշխանավոր հարցրեց Հիսուսին.

-Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պիտի անեմ հավիտենական կյանքը ժառանգելու համար:

¹⁹ Հիսուսն ասաց նրան.

-Ինչո՞ւ ես ինձ բարի կոչում. միայն Աստված է բարի: ²⁰ Պատվիրանները գիտես. «Մի՛

^{18.7} «Ընտրյալների». գրք. «Ճառաների»:

^{18.7} Մր 35.19:

^{18.11} Հուն. չունի «մի կողմ կանգնած»:

շնանա, մի՛ սպանիր, մի՛ գողանա, սուտ վկայություն մի՛ տուր, պատվի՛ր քո հորը և մորը»:

²¹Նա ասաց.

-Այդ բոլորը իմ պատանեկությունից ի վեր պահել եմ:

²²Հիսուսը երբ այս լսեց, ասաց իշխանավորին.

-Մի բան էլ դեռ պետք է անես: Ինչ որ ունես, վաճառի՛ր և տո՛ւր աղքատներին. այդպիսով երկնքում գանձ կունենաս, ապա արի՛ և հետևի՛ր ինձ:

²³Իշխանավորը երբ այս լսեց, տրտմեց, որովհետև շատ հարուստ էր: ²⁴Հիսուսը, նրան տրտմած տեսնելով, ասաց.

-Որքա՛ն դժվար է հարստություն ունեցողների համար Աստծու արքայություն մտնելը: ²⁵Շատ ավելի հեշտ է, որ պարանը մտնի ասեղի ծակից, քան հարուստը՝ Աստծու արքայությունը:

²⁶Նրանք, որ լսեցին, ասացին.

-Ուրեմն ո՞վ կարող է փրկվել:

²⁷Հիսուսը պատասխանեց.

-Ինչ որ անկարելի է մարդկանց համար, կարելի է Աստծու համար:

²⁸Այն ժամանակ Պետրոսն ասաց Հիսուսին.

-Ահա մեր ամբողջ ունեցածը թողեցինք և հետևեցինք քեզ:

²⁹Հիսուսը նրանց ասաց.

-Վստա՛հ եղեք, ով որ Աստծու արքայության համար թողնի տուն, ծնողներ, եղբայրներ, կին կամ զավակներ, ³⁰ներկա կյանքում բազմապատիկ կստանա և գալիք աշխարհում կժառանգի հավիտենական կյանքը:

Հիսուսը երրորդ անգամ է խոսում իր մահվան և հարության մասին

(Մտ 20.17-19, Մր 10.32-34)

³¹Ապա տասներկու աշակերտներին մի կողմ տանելով՝ Հիսուսը նրանց ասաց.

-Ահա գնում ենք Երուսաղեմ, որտեղ Մարդու Որդու մասին մարգարեների բոլոր գրածները պիտի իրականանան: ³²Նա հեթանոսների ձեռքը կմատնվի, որոնք կձաղրեն և կնախատեն նրան, կթքեն նրա վրա,³³ կծեծեն ու կսպանեն, բայց երրորդ օրը նա հարություն կառնի:

³⁴Սակայն աշակերտները նրա ասածներից բան չհասկացան, որովհետև այդ խոսքի իմաստը ծածկված էր նրանցից, և չգիտեին, թե Հիսուսն ի՛նչ էր ուզում ասել:

Կույր մուրացկանի բժշկումը

(Մտ 20.29-34, Մր 10.46-52)

³⁵Հիսուսը մոտենում էր Երիթովին: Այնտեղ ճանապարհի եզրին նստած էր մի կույր

^{18.20} ա Ելք 20.14, Բ Օր 5.18: բ Ելք 20.13, Բ Օր 5.17: գ Ելք 20.15, Բ Օր 5.19: դ Ելք 20.16, Բ Օր 5.20: ե Ելք 20.12, Բ Օր 5.16:

^{18.25} «Պարանը». հուն. այս բառի փոխարեն ունի «ուղտը»:

^{18.32} Մի շարք ձեռ. չունեն «կնախատեն նրան, կթքեն նրա վրա»:

մուրացկան,* ³⁶ որը երբ ժողովրդի անցնելը լսեց, հարցրեց.

-Ի՞նչ է սա:

³⁷Նրանք ասացին.

-Նազովրեցի Հիսուսն է անցնում:

³⁸Կույրը սկսեց աղաղակել.

-Հիսո՛ւս, Դավթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ:

³⁹Առջևից գնացողները սաստեցին նրան, որ լռի, իսկ նա ավելի բարձր ձայնով աղաղակում էր.

-Դավթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ:

⁴⁰Հիսուսը կանգ առավ և հրամայեց, որ իր մոտ բերեն կույրին: Երբ նա մոտեցավ, Հիսուսը հարցրեց.

⁴¹-Ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ համար:

Կույրն ասաց.

-Տե՛ր, թող բացվեն աչքերս, որ տեսնեմ:

⁴²Հիսուսն ասաց նրան.

-Ուրեմն տե՛ս, քո հավատը քեզ բժշկեց:

⁴³Հենց նույն պահին նա սկսեց տեսնել և հետևեց Հիսուսին՝ փառավորելով Աստծուն: Ժողովուրդն էլ, այս տեսնելով, օրհնաբանում էր Աստծուն:

19

Հիսուսը և Չակքեոսը

¹ Հիսուսը Երիքով մտավ և անցնում էր քաղաքի միջով: ² Չակքեոս անունով մի մարդ, որ մաքսապետ էր և հարուստ, ³ ուզում էր տեսնել, թե ո՞վ է Հիսուսը, բայց ամբոխի պատճառով չէր կարողանում, քանի որ կարճահասակ էր: ⁴ Ուստի առաջ վազեց, բարձրացավ մի ժանտաթղթե վրա, որպեսզի տեսնի, որովհետև Հիսուսն այդ տեղով էր անցնելու: ⁵ Հիսուսը երբ հասավ այդ տեղը, վեր նայեց և ասաց.

-Չակքեո՛ւս, շտապի՛ր, ցա՛ծ իջիր, որովհետև այսօր ես պետք է քո տանը գիշերեմ:

⁶ Չակքեոսը շտապ ցած իջավ և ուրախությամբ ընդունեց Հիսուսին: ⁷ Բոլոր նրանք, ովքեր այս տեսան, սկսեցին մրթմրթալ և ասել.

-Այս մարդը գնաց մի մեղավորի տուն և հյուր եղավ:

⁸ Չակքեոսը եկավ կանգնեց և ասաց Տիրոջը.

-Տե՛ր, ահա իմ ունեցածի կեսը կտամ աղքատներին, և եթե որևէ մեկին անիրավել եմ, քառապատիկ կհատուցեմ նրան:

⁹ Հիսուսը նրան ասաց.

-Այսօր փրկություն եկավ այս տան վրա, քանի որ այս մարդն էլ Աբրահամի որդի է,*

¹⁰ որովհետև Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին:՝

*18.35 «Երիքով». տե՛ս Մտ 20.29-ի ծնթ:

*19.9 «Հիսուսը նրան ասաց» կամ «Հիսուսն ասաց նրա մասին»:

*19.10 Մտ 18.11:

Ինչպե՞ս շահեցնել դրամը

(Մտ 25.14-30)

¹¹ Մինչ ժողովուրդը լսում էր նրա ասածները, Հիսուսը շարունակեց իր խոսքը և Երուսաղեմին մոտեցած լինելով ու գիտենալով, որ ժողովուրդը կարծում է, թե Աստծու արքայությունը շուտով հայտնվելու է, հետևյալ առակը պատմեց նրանց՝

¹² -Մի ազնվական մարդ կար, որ գնաց հեռու երկիր, որպեսզի թագավորական իշխանություն ստանա և վերադառնա իր երկիրը: ¹³ Նախքան մեկնելը կանչեց իր ծառաներից տասը հոգու, յուրաքանչյուրին տասը ոսկի դրամ տվեց և ասաց. «Շահեցրե՛ք այս դրամը, մինչև վերադառնամ»: ¹⁴ Բայց նրա համաքաղաքացիներն ասում էին նրան, ուստի և պատգամավոր ուղարկեցին նրա հետևից՝ ասելով. «Չենք ուզում, որ նա թագավոր դառնա մեզ վրա»:

¹⁵ Երբ ազնվականը թագավորական իշխանությունն ստացած վերադարձավ, անմիջապես կանչեց իր ծառաներին, որոնց դրամ էր տվել, իմանալու համար, թե ով ի՞նչ է շահել: ¹⁶ Առաջինը եկավ և ասաց. «Տե՛ր, քո մեկ տվածի դիմաց տասը շահեցի»:
¹⁷ Տերն ասաց. «Ապրե՛ս, բարի՛ ծառա, քանի որ այդ փոքր բանի մեջ հավատարիմ եղար, քեզ տասը քաղաքների վրա կառավարիչ եմ նշանակում»: ¹⁸ Երկրորդ ծառան էլ եկավ և ասաց. «Քո մեկ տվածի դիմաց հինգը շահեցի»:
¹⁹ Տերն ասաց. «Քեզ էլ հինգ քաղաքների վրա եմ կառավարիչ նշանակում»: ²⁰ Եկավ երրորդը և ասաց. «Տե՛ր, ահա քո տված դրամը, այն պահել էի մի թաշկինակի մեջ ծրարած: ²¹ Վախենում էի քեզնից, որովհետև խիստ մարդ ես. վերցնում ես, ինչ որ քոնը չէ, և հնձում ես, ինչ որ չես սերմանել»: ²² Տերը նրան ասաց. «Չա՛ր ծառա, քո խոսքո՛վ եմ դատելու քեզ: Քանի որ գիտեիր, թե ես խիստ մարդ եմ, վերցնում եմ, ինչ որ իմը չէ, և հնձում եմ, ինչ որ չեմ սերմանել,՝ ²³ հապա ինչո՞ւ իմ դրամը շահարկողներին չտվեցիր, քանի որ գիտեիր նաև, թե վերադարձիս այն տոկոսով էի պահանջելու քեզնից»: ²⁴ Ապա սպասավորներին ասաց. «Վերցրե՛ք սրանից դրամը և տարե՛ք, նրա՛ն տվեք, ով տասնապատիկն է շահել»: ²⁵ Նրանք ասացին. «Տե՛ր, նա արդեն տասնապատիկն ունի»: ²⁶ Իմացե՛ք, -ասաց նա,-ունեցողին ավելիով պիտի տրվի, իսկ չունեցողից պիտի վերցվի իր ունեցած ամենափոքր բաժինն էլ:՝ ²⁷ Իսկ իմ թշնամիներին, որոնք չէին ուզում, որ թագավոր լինեմ իրենց վրա, բերե՛ք այստեղ և սպանե՛ք նրանց իմ ներկայությամբ»:

²⁸ Այս խոսքն ասելուց հետո Հիսուսը շարունակեց իր ճանապարհը դեպի Երուսաղեմ:

Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ

՝19.11-27 Մտ 25.14-30:

՝19.13 «Ոսկի դրամ». բոց՝ «մնաս», որը հարյուր արծաթ դահեկան էր անում:

՝19.22 «Չար». գրբ. «անհավատարիմ»:

՝19.23 «Շահարկողներին». տե՛ս Մտ 13.12-ի ծնթ:

՝19.26 «Ունեցողին ավելիով պիտի տրվի». տե՛ս Մտ 25.27-ի ծնթ:

՝19.26 Մտ 13.12, Մր 4.25, Ղկ 8.18:

(Մտ 21.1-11, 15-17, Սր 11.1-11, Հհ 12.12-19)

²⁹ Երբ Հիսուսը մոտեցավ Բեթփագեին և Բեթանիային, այն լեռան մոտ, որ կոչվում էր Ձիթենյաց, իր աշակերտներից երկու հոգու ուղարկեց՝ ³⁰ պատվիրելով նրանց.

-Գնացե՛ք այդ դիմացի գյուղը. հենց որ ներս մտնեք, այնտեղ կգտնեք կապված մի ավանակ, որի վրա դեռ ոչ ոք չի նստել: Արձակեցե՛ք այն և բերեք: ³¹ Եթե որևէ մեկը ձեզ հարցնի, թե ինչո՞ւ եք արձակում, ասացե՛ք նրան. «Տերը դրա կարիքն ունի»:

³² Երկու աշակերտները գնացին և ամեն ինչ գտան այնպես, ինչպես Հիսուսն ասել էր իրենց: Ավանակն այնտեղ էր: ³³ Եվ մինչ արձակում էին, տերերն ասացին նրանց.

-Ինչո՞ւ եք արձակում ավանակը:

³⁴ Նրանք պատասխանեցին.

-Տերը դրա կարիքն ունի:

³⁵ Եվ այն բերեցին Հիսուսի մոտ: Ապա իրենց վերարկուները գցեցին ավանակի վրա և Հիսուսին նստեցրին վրան: ³⁶ Եվ մինչ նա առաջ էր գնում, ժողովուրդը վերարկուները փռում էր ճանապարհի վրա:

³⁷ Երբ նա մոտեցավ Երուսաղեմին, այնտեղ, որտեղ Ձիթենյաց լեռան գառիվայրն էր սկսում, աշակերտները բոլորն էլ սկսեցին ուրախությամբ և բարձրաձայն օրհնաբանել Աստծուն իրենց տեսած բոլոր հրաշագործությունների համար: ³⁸ Նրանք ասում էին.

«Օրհնյա՛լ է թագավորը, որ գալիս է Տիրոջ անունով.

խաղաղությո՛ւն երկնքում

և փա՛ռք Բարձրյալին»:

³⁹ Փարիսեցիներից ոմանք ամբոխի միջից ասացին Հիսուսին.

-Վարդապե՛տ, սաստի՛ր աշակերտներիդ, որ լռեն:

⁴⁰ Հիսուսը պատասխանեց.

-Ասում եմ ձեզ, որ եթե դրանք լռեն, քարերը կաղաղակեն:

Հիսուսը լաց է լինում Երուսաղեմի համար

⁴¹ Երբ Հիսուսն ավելի մոտեցավ Երուսաղեմին և տեսավ այն, լաց եղավ նրա վրա ⁴² և ասաց.

-Գոնե այսօր գիտենայիր, թե ի՛նչ բանի մեջ է քո խաղաղությունը: Բայց այլևս չես կարող տեսնել, ⁴³ որովհետև օրեր պիտի գան, երբ քո թշնամիները շուրջդ պատնեշ պիտի կանգնեցնեն, պաշարեն և ամեն կողմից նեղեն քեզ: ⁴⁴ Հիմնահատակ պիտի անեն քեզ և սպանեն քո բնակիչներին: Քարը քարի վրա չեն թողնելու, որովհետև դու չիմացար այն ժամանակը, երբ Աստված փրկելու եկավ քեզ:

Հիսուսը մաքրագործում է տաճարը

(Մտ 21.12-17, Սր 11.15-19, Հհ 2.13-17)

^{19.29} «Ձիթենյաց լեռ», «Բեթփագե» և «Բեթանիա». տե՛ս Մտ 21.1-ի և 21.17-ի ծնթ:

^{19.32} Ձեռ. մեծ մասը չունի «ավանակն այնտեղ էր»:

^{19.38} Սդ 118.26:

⁴⁵ Ապա տաճար մտավ և սկսեց դուրս հանել աղավնեվաճառներին և գնողներին, շուտ տվեց լուսնայափոխների սեղանները՝ ⁴⁶ և ասաց նրանց.

-Մուրբ գրքերում գրված է. «Իմ տունն աղոթքի տուն պիտի լինի», մինչդեռ դուք ավազակների որջի եք վերածել այն։՝

⁴⁷ Հիսուսն ամեն օր ուսուցանում էր տաճարում: Ավագ քահանաները, Օրենքի ուսուցիչները և ժողովրդի ղեկավարներն ուզում էին սպանել նրան,՝ ⁴⁸ բայց չէին իմանում, թե ինչպե՛ս անեն, մանավանդ որ ամբողջ ժողովուրդը, շունչը պահած, լսում էր նրան:

20

Հիսուսի հեղինակության հարցը

(Մտ 21.23-27, Մր 11.27-33)

¹ Այդ նույն օրերին, մինչ Հիսուսը տաճարում ժողովրդին ուսուցանում էր և Ավետարանը քարոզում, ավագ քահանաներն ու Օրենքի ուսուցիչները երեցների հետ վրա հասան ² և ասացին նրան.

-Ասա՛ մեզ, դու ի՞նչ իշխանությամբ ես անում այս գործերը. ո՞վ տվեց քեզ այդ իշխանությունը:

³ Հիսուսը նրանց պատասխանեց.

-Ես էլ ձեզ մի հարց տամ: Ասացե՛ք ինձ, ⁴ Հովհաննեսի մկրտելու իշխանությունը Աստծո՞ւց էր տրված նրան, թե՞ մարդկանցից:

⁵ Նրանք իրար հետ սկսեցին խորհել և ասել.

-Եթե ասենք՝ «Աստծուց», կասի՝ «Ուրեմն ինչո՞ւ չհավատացիք նրան», ⁶ իսկ եթե ասենք՝ «Մարդկանցից», այն ժամանակ ամբողջ ժողովուրդը մեզ կքարկոծի, որովհետև բոլորն էլ համոզված են, որ Հովհաննեսը մարգարե է:

⁷ Ապա պատասխանեցին.

-Չգիտենք, թե որտեղի՞ց էր այդ իշխանությունը:

⁸ Հիսուսն ասաց նրանց.

-Այն ժամանակ ես էլ ձեզ չեմ ասի, թե ի՞նչ իշխանությամբ եմ անում այս գործերը:

Չար մշակների առակը

(Մտ 21.33-46, Մր 12.1-12)

⁹ Հետո Հիսուսը հետևյալ առակը պատմեց ժողովրդին.

-Մի մարդ այգի տնկեց և այն վարձու տվեց մշակներին, իսկ ինքը երկար ժամանակով մեկնեց: ¹⁰ Այգեկուրթի ժամանակ մի ծառայի ուղարկեց մշակների մոտ, որպեսզի այգու բերքից իր բաժինը տան իրեն: Մշակները ծեծեցին նրան և ձեռնունայն

^{19.45} Հուն. չունի «շուտ տվեց լուսնայափոխների սեղանները», իսկ «աղավնեվաճառներին» բառի փոխարեն շատ ձեռ. ունեն «վաճառողներին»: Տե՛ս Մտ 21.12-ի ծնթ:

^{19.46} Ես 56.7, Եր 7.11:

^{19.47} Ղկ 21.37:

^{20.9} Ես 5.1:

հետ ուղարկեցին: ¹¹ Տերը մի ուրիշ ծառայի էլ ուղարկեց, բայց մշակները նրան էլ ծեծեցին, անարգեցին և ձեռնունայն հետ ուղարկեցին: ¹² Ապա ուղարկեց մի երրորդի: Մշակները նրան էլ վիրավորեցին և այգուց դուրս գցեցին:

¹³ Այգու տերն ասաց. «Ի՞նչ անեմ, ուղարկեմ իմ սիրելի որդուն, թերևս նրան հարգեն»: ¹⁴ Բայց մշակները երբ տեսան նրան, ասացին միմյանց. «Մա՛ է ժառանգը, եկեք սպանենք, որպեսզի ժառանգությունը մեզ մնա»: ¹⁵ Ապա այգուց դուրս հանեցին նրան և սպանեցին: Հիմա այգու տերը ի՞նչ կանի մշակներին: ¹⁶ Բնականաբար կգա, կսպանի այդ մշակներին և այգին կտա ուրիշներին: Ժողովուրդը երբ այս լսեց, ասաց.

-Աստված ո՛չ անի:

¹⁷ Իսկ Հիսուսը նայեց ժողովրդին և ասաց.

-Հապա ի՞նչ է նշանակում այն, որ գրված է Սուրբ գրքերում.

«Այն քարը, որ շինարարները մերժեցին գործածել, հետո անկյունաքար եղավ»:

¹⁸ Ով բախվի այդ քարին, պիտի խորտակվի, և ում վրա որ ընկնի այն, պիտի ճզմի նրան:

¹⁹ Օրենքի ուսուցիչները և ավագ քահանաները, հասկանալով, որ իրենց համար ասաց այդ առակը, ուզեցին հենց նույն ժամին ձերբակալել Հիսուսին, սակայն վախեցան ժողովրդից: ²⁰ Եվ սպասեցին հարմար առիթի:

Տուրք վճարելու հարցը

(Մտ 22.15-22, Մր 12.13-17)

Ապա Հիսուսի մոտ ուղարկեցին կաշառված մի քանի անձանց, որպեսզի կեղծավորությամբ իրենք իրենց արդար ձևացնելով՝ իրենց հարցերով ծուղակը գցեն նրան և հանձնեն պետության դատական իշխանությանը:

²¹ Սրանք հարցրին Հիսուսին.

-Վարդապե՛տ, գիտենք, որ ճիշտն էս խոսում և սովորեցնում. գիտենք, որ անաչառ էս և ճշմարտությամբ Աստծու կամքն էս ուսուցանում: ²² Ասա՛ մեզ, մեր Օրենքի համաձայն՝ պե՛տք է կայսրին տուրք տանք, թե՛ ոչ:

²³ Հիսուսը հասկացավ նրանց խորամանկությունը և ասաց.

²⁴ -Ինձ մի արծաթ դրամ ցույց տվեք:

Եվ նրանք ցույց տվեցին: Ապա հարցրեց.

-Ո՞ւմ նկարը և արձանագրությունը կա վրան:

-Նրանք պատասխանեցին.

-Կայսրի՛:

²⁵ Հիսուսն ասաց նրանց.

-Գնացե՛ք. ինչ որ կայսրին է պատկանում, կայսրի՛ն տվեք, և ինչ որ Աստծուն է պատկանում, Աստծո՛ւն տվեք:

²⁶ Եվ այսպես չկարողացան ժողովրդի առաջ ծուղակը գցել նրան և զարմանալով նրա

20.17 Մր 118.22:

20.24 «Ինձ մի արծաթ դրամ ցույց տվեք». շատ ձեռ. այս նախադասությունից առաջ ունեն «Ինչո՞ւ էք ինձ փորձում»: «Նկարը և արձանագրությունը». տե՛ս Մտ 22.20-ի ծնթ:

տված պատասխանի վրա՝ լռեցին:

Հարության հարցը

(Մտ 22.23-33, Մր 12.18-27)

²⁷ Սաղուկեցիներից ոմանք եկան Հիսուսի մոտ: Սաղուկեցիներն ասում են, թե մեռելների հարություն չկա:՝ ²⁸ Նրանք ասացին Հիսուսին.

-Վարդապե՛տ, Մովսեսը հետևյալ օրենքը գրեց մեզ համար. «Եթե ամուսնացած մեկը մեռնի առանց զավակ թողնելու, թող նրա եղբայրը ամուսնանա նրա այրիացած կնոջ հետ, որպեսզի իր եղբորը զավակ տա»:՝ ²⁹ Մի ժամանակ յոթ եղբայրներ կային:

Առաջինն ամուսնացավ և մեռավ առանց զավակ ունենալու: ³⁰ Երկրորդ եղբայրն ամուսնացավ նրա կնոջ հետ, և նա էլ մեռավ առանց զավակ ունենալու: ³¹ Երրորդն էլ, և մինչև յոթերորդ եղբայրը նույնպես ամուսնացան նրա հետ և մեռան առանց զավակ ունենալու: ³² Բոլորից հետո կինն էլ մեռավ:՝ ³³ Արդ, մեռելների հարության օրը կինը նրանցից ո՞ր մեկին կպատկանի, քանի որ յոթն էլ ամուսնացան նրա հետ:

³⁴ Հիսուսը պատասխանեց.

-Այս աշխարհի տղամարդիկ և կանայք ամուսնանում են. ³⁵ սակայն նրանք, որոնք արժանի պիտի լինեն գալիք աշխարհին և մեռելների հարությանը, չեն ամուսնանա:

³⁶ Նրանք այլևս չեն կարող մեռնել, քանի որ հրեշտակների նման պիտի լինեն: Նրանք Աստծու որդիներն են, որովհետև մեռելներից հարություն են առել: ³⁷ Իսկ թե մեռելները հարություն են առնում, Մովսեսն այդ հասկացրեց այրվող մորենու դրվագով, որտեղ նա Տիրոջ մասին ասում է. «Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը»:՝ ³⁸ Սա նշանակում է, որ Աստված մեռելների Աստվածը չէ, այլ ողջերի, որովհետև նրա համար բոլորն էլ կենդանի են:

³⁹ Օրենքի ուսուցիչներից ոմանք ասացին.

-Վարդապե՛տ, լավ ասացիր:

⁴⁰ Եվ այլևս ոչ ոք չէր համարձակվում Հիսուսին որևէ բան հարցնել:

Ո՞ւմ որդին է Քրիստոսը

(Մտ 22.41-46, Մր 12.35-37)

⁴¹ Ապա Հիսուսը հարցրեց նրանց.

-Ինչպե՛ս են ասում, թե Քրիստոսը Դավթի որդին է, ⁴² երբ Դավիթն ինքը Սաղմոսների գրքում ասում է.

«Տերն իմ Տիրոջն ասաց.

նստի՛ր իմ աջ կողմում,՝

⁴³ մինչև քո թշնամիներին դնեմ ոտքերիդ տակ

^{20.27} Գրծ 23.8:

^{20.28} Բ Օր 25.5:

^{20.32} Մի շարք ձեռ. չունեն «բոլորից հետո» բառերը:

^{20.37} Ելք 3.6:

^{20.42-43} Մղ 110.1:

իբրև պատվանդան»:

⁴⁴ Եթե Դավիթը նրան Տեր է կոչում, ինչպե՞ս ուրեմն նրա որդին կլինի:

Զգուշացում Օրենքի ուսուցիչներից

(Մտ 23.1-36, Մր 12.38-40)

⁴⁵ Մինչ ամբողջ ժողովուրդը լսում էր նրան, Հիսուսն իր աշակերտներին ասաց.

⁴⁶ -Զգուշացե՛ք Օրենքի ուսուցիչներից, որոնք սիրում են փառավոր պատմուճաններով շրջել, հրապարակներում մարդկանցից ողջույններ ընդունել, ժողովարաններում առաջին աթոռներն զբաղեցնել և ընթրիքի ժամանակ՝ պատվավոր տեղերը: ⁴⁷ Նրանք մի կողմից այրի կանանց տներն են հափշտակում նրանց ձեռքից, իսկ մյուս կողմից՝ կեղծավորությամբ երկարացնում են իրենց աղոթքը: Նրանց դատապարտությունն ավելի խիստ պիտի լինի:

21

Այրի կնոջ լուման

(Մր 12.41-44)

¹ Մինչ Հիսուսն իր շուրջն էր դիտում, տեսավ մեծահարուստ մարդկանց, որոնք տաճարի գանձանակի մեջ իրենց նվերներն էին գցում: ² Տեսավ նաև մի աղքատ այրի կնոջ, որ երկու լումա գցեց գանձանակի մեջ: ³ Հիսուսն ասաց իր աշակերտներին.

-Հաստա՛տ իմացեք, որ այդ աղքատ այրին բոլորից ավելի գցեց գանձանակի մեջ:

⁴ Մյուսներն ամենքն էլ իրենց ավելորդ գումարներից նվիրեցին Աստծուն, մինչ նա, չնայած իր աղքատությանը, իր ամբողջ ապրուստը գցեց:

Տաճարի կործանման մասին

(Մտ 24.1-2, Մր 13.1-2)

⁵ Ոմանք, տաճարի մասին խոսելով, ասում էին, թե գեղեցիկ քարերով և աշտարակներով է զարդարված: ⁶ Հիսուսն ասաց.

-Այս բոլորը, որ դուք տեսնում եք, պիտի քանդվեն. օր պիտի գա, երբ քարը քարի վրա չպիտի մնա:

Նեղություններ և հալածանքներ

(Մտ 10.17-22, 24.3-14, Մր 13.3-13)

⁷ Նրանք հարցրին.

-Վարդապե՛տ, ե՛րբ կլինի այդ: Ի՞նչ նշանով կիմանանք, թե ե՛րբ կպատահի այդ:՝

⁸ Հիսուսն ասաց.

-Զգու՛յշ եղեք, չխաբվեք: Շատերը կգան իմ անունով և կասեն. «Ես եմ Քրիստոսը»,

^{21.2} «Լումա». տե՛ս Մր 12.42-ի ծնթ:

^{21.5} «Աշտարակներով». հուն. ունի «ընծաներով», այսինքն՝ տաճարին նվիրված ոսկեղենով:

^{21.7} Բ Եզր 4.51-5.19:

կամ՝ «Ժամանակը հասել է»: Բայց մի՛ հետևեք նրանց:՝⁹ Երբ լսեք պատերազմների ձայներ և խռովությունների մասին, չսարսափեք, որովհետև նախ պետք է որ դրանք պատահեն: Սակայն դա չի նշանակում, որ աշխարհի վախճանն է:

¹⁰ Եվ շարունակեց.

-Ազգերն ազգերի դեմ պիտի կռվեն, և թագավորությունները՝ թագավորությունների դեմ: ¹¹ Ուժեղ երկրաշարժեր պիտի տեղի ունենան և տարբեր տեղերում՝ սով և համաճարակ: Սարսափազդու և մեծամեծ նշաններ պիտի երևան երկնքից: ¹² Բայց այս բոլորից առաջ ձեզ պիտի ձերբակալեն և հալածեն, ձեզ պիտի դատեն ժողովարաններում և բանտ նետեն. իմ պատճառով ձեզ թագավորների և կառավարիչների առաջ պիտի տանեն: ¹³ Դա առիթ պիտի լինի ձեզ համար՝ վկայություն տալու իմ մասին: ¹⁴ Հենց այժմվանից ձեր մտքում թող լինի սա. սկզբից մի՛ մտածեք, թե ի՛նչ պատասխան պիտի տաք,՝ ¹⁵ որովհետև ես ձեզ կտամ պետք եղած խոսքը և իմաստությունը, որին չեն կարողանա հակառակվել կամ պատասխան տալ ձեր բոլոր հակառակորդները: ¹⁶ Նույնիսկ ձեր ծնողները, եղբայրները, ազգականներն ու բարեկամները պիտի մատնեն ձեզ, սպանեն ձեզնից ոմանց: ¹⁷ Ամեն մարդ իմ պատճառով պիտի ատի ձեզ: ¹⁸ Բայց ձեր գլխից մի մազ անգամ չի կորչի: ¹⁹ Եվ ձեր համբերությամբ դուք կփրկեք ձեր հոգիները:

Երուսաղեմի ավերման մասին

(Մտ 24.15-21, Մր 13.14-19)

²⁰ -Երբ տեսնեք Երուսաղեմը՝ շրջապատված զորքերով, իմացե՛ք, որ նրա ավերումը մոտ է: ²¹ Այն ժամանակ նրանք, որ Հրեաստանում են, թող փախչեն լեռները, նրանք, որ Երուսաղեմում են, թող դուրս գան քաղաքից, իսկ նրանք, որ շրջակայքում են, թող քաղաք չմտնեն. ²² որովհետև այդ օրերն աստվածային դատաստանի և պատժի օրեր են, որպեսզի իրականանան Սուրբ գրքերում բոլոր գրվածները:՝ ²³ Բայց այդ օրերին վա՛յ է եկել հղիներին և ստնտու կանանց, որովհետև երկիրը մեծ տագնապի պիտի մատնվի, և Աստծու բարկությունը պիտի գա այս ժողովրդի վրա: ²⁴ Նրանք սրախողխող պիտի լինեն կամ գերի տարվեն բոլոր ազգերի մեջ: Երուսաղեմը ոտքի կոխան պիտի լինի ազգերից, մինչև որ լրանա ազգերի ժամանակը:

Մարդու Որդու գալուստը

(Մտ 24.29-35, Մր 13.24-31)

²⁵ -Նշաններ պիտի պատահեն, որ կապ են ունենալու արևի, լուսնի և աստղերի հետ: Աշխարհի բոլոր ժողովուրդները տագնապի և շփոթության մեջ պիտի ընկնեն ահեղ ձայներից, որոնք կարծես ալեկոծ ծովի գոյուն լինեն:՝ ²⁶ Աշխարհի վրա գալիք պատահարների սպասելիքից մարդիկ սարսափից ուշագնաց պիտի լինեն, որովհետև

^{21.8} Բնագրում չկա «Քրիստոսը» բառը:

^{21.14-15} Ղկ 12.11-12:

^{21.22} Օս 9.7:

^{21.25} Ես 13.10, Եզկ 32.7, Հվլ 2.31, Հտ 6.12-13:

երկնային մարմինները պիտի սասանվեն: ²⁷ Եվ այն ժամանակ պիտի տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է ամպերի վրայով՝ գործությամբ և մեծ փառքով: ²⁸ Եվ երբ այս բաները սկսեն պատահել, ուղղվեցե՛ք և բարձրացրե՛ք ձեր գլուխները, որովհետև մոտ է ձեր փրկությունը:

²⁹ Ապա Հիսուսը մի օրինակ էլ տվեց նրանց՝ ասելով.

-Նայեցե՛ք թզենուն և մյուս բոլոր ծառերին: ³⁰ Երբ տեսնեք, որ սկսում են ծիլ արձակել, կիմանաք, որ ամառը մոտ է: ³¹ Նույնպես էլ դուք, երբ տեսնեք, որ ասածներս կատարվում են, իմացե՛ք, որ Աստծու արքայությունը մոտ է: ³² Վստա՛հ եղեք, որ այս սերունդը դեռ չանցած՝ այս ամենը պիտի պատահի: ³³ Նույնիսկ եթե երկինքն ու երկիրը անհետանան, իմ խոսքերը չեն անհետանալու:

Արթուն մնալու անհրաժեշտությունը

³⁴ -Գալով ձեզ՝ ուշադիր եղե՛ք ձեր անձերին: Չլինի թե՛ ձեր սրտերը գրավվեն կերուխումով, հարբեցողությամբ և աշխարհիկ հոգսերով, և այդ օրը հանկարծ գա հասնի ձեզ. ³⁵ որովհետև այդ օրը ծուղակի պես պիտի գա հասնի բոլոր մարդկանց, որ ապրում են ամբողջ աշխարհում: ³⁶ Ուստի արթո՛ւն կացեք և միշտ աղոթեցե՛ք, որպեսզի ազատվեք այն ամենից, ինչ պատահելու է, և արժանի լինեք կանգնելու Մարդու Որդու առաջ:

³⁷ Հիսուսն ամբողջ օրը ուսուցանում էր տաճարում, իսկ երեկոյան գնում էր Ջիթենյաց կոչված լեռը՝ գիշերելու: ³⁸ Եվ առավոտյան վաղ ամբողջ ժողովուրդը տաճար էր գնում նրան լսելու համար:

22

Դավ Հիսուսի դեմ

(Մտ 26.1-5, 14-16, Մր 14.1-2, 10-11, Հհ 11.45-53)

¹ Մոտեցել էր Բաղարջակերաց տոնը, որ Չատիկ է կոչվում: ² Ավագ քահանաներն ու Օրենքի ուսուցիչներն սկսեցին մի հնար փնտրել Հիսուսին ծածուկ սպանելու համար, քանի որ վախենում էին ժողովրդից:

³ Ապա Սատանան մտավ Իսկարիովտացի կոչված Հուդայի մեջ, որը տասներկու աշակերտներից մեկն էր: ⁴ Սա գնաց և խոսեց ավագ քահանաների, Օրենքի ուսուցիչների և տաճարի պահակապետների հետ, որպեսզի Հիսուսին նրանց հանձնի: ⁵ Նրանք շատ ուրախացան և խոստացան փող տալ նրան: ⁶ Հուդան համաձայնեց և հարմար առիթ էր փնտրում, որպեսզի ժողովրդից ծածուկ Հիսուսին մատնի նրանց:

Չատկական ընթրիքի պատրաստություն

(Մտ 26.17-19, Մր 14.12-16)

^{21.27} Դն 7.13, Հտ 1.7:

^{21.37} Դկ 19.47:

^{22.1} «Չատիկ». բոց՝ «Պատեք». տե՛ս Մտ 26.2-ի ծնթ:

^{22.1} Ելք 12.1-27:

⁷ Եկավ Բաղարջակերաց օրը, երբ պետք է Ջատկի համար գառը մորթվեր: ⁸ Հիսուսն ուղարկեց Պետրոսին և Հովհաննեսին՝ պատվիրելով.

-Գնացե՛ք և պատրաստեցե՛ք զատկական ընթրիքը, որ ուտենք:

⁹ Նրանք հարցրին.

-Որտե՞ղ ես ուզում, որ պատրաստենք ընթրիքը:

¹⁰ Հիսուսն ասաց.

-Քաղաք մտնելուն պես կհանդիպեք ջրի սափոր շալակած մի մարդու: Գնացե՛ք նրա հետևից և մտե՛ք այն տունը, ուր կմտնի նա, ¹¹ և տանտիրոջն ասացե՛ք. «Վարդապետն ասում է՝ ո՞ւր է այն սենյակը, որտեղ ես աշակերտներիս հետ պիտի ուտեմ զատկական ընթրիքը»: ¹² Եվ նա վերնահարկում ձեզ ցույց կտա կահավորված մի մեծ սենյակ: Այնտե՛ղ պատրաստեցե՛ք ընթրիքը:

¹³ Նրանք գնացին և ամեն ինչ գտան այնպես, ինչպես Հիսուսն էր ասել, և պատրաստեցին զատկական ընթրիքը:

Վերջին ընթրիքը

(Մտ 26.20-30, Մր 14.17-25, Հհ 13.21-30, Ա Կր 11.23-25)

¹⁴ Երբ ժամը հասավ, Հիսուսը տասներկու առաքյալների հետ սեղան նստեց և ասաց նրանց.

¹⁵ -Շատ ցանկացա իմ չարչարվելուց առաջ զատկական այս ընթրիքը ձեզ հետ անել:

¹⁶ Բայց ասում եմ ձեզ, թե այլևս չեմ ուտելու սրանից, մինչև որ ճշմարիտ Ջատիկը չկատարվի Աստծու արքայության մեջ:

¹⁷ Ապա վերցրեց գինու բաժակը, շնորհակալություն հայտնեց Աստծուն և ասաց.

-Առե՛ք այս և փոխանցե՛ք միմյանց՝ խմելով սրանից: ¹⁸ Ասում եմ ձեզ, թե այսուհետև կհինի չեմ խմելու, մինչև որ չգա Աստծու արքայությունը:

¹⁹ Ապա հաց վերցրեց, շնորհակալություն հայտնեց Աստծուն, կտրեց և տվեց աշակերտներին՝ ասելով.

-Այս է իմ մարմինը, որ ձեզ համար է տրված. կատարեցե՛ք այս իմ հիշատակի համար:՝

²⁰ Նույնպես, ընթրիքից հետո բաժակն էլ վերցրեց և ասաց.

-Այս բաժակը Աստծու նոր ուխտն է՝ կնքված իմ արյունով, որ հոսում է ձեզ համար:՝

^{22.7} «Եկավ Բաղարջակերաց օրը, երբ ...». Ղուկաս ավետարանիչը հավանաբար ժողովրդական ձևով Բաղարջակերաց օր է կոչում գառ մորթելու օրը, որ Ջատկին նախորդող օրն է, մինչդեռ Բաղարջակերաց տոնը սկսվում է Ջատկի հաջորդ օրվանից:

^{22.19} «...որ ձեզ համար է տրված». որոշ ձեռ. պակասում է, իսկ մի շարք ձեռ. ունեն «...որ շատերի համար է տրված»: «Կատարեցե՛ք այս իմ հիշատակի համար». այս բառերով Հիսուսը հաստատում է քրիստոնեական նոր Ջատիկը: Ինչպես հին Ջատիկը՝ Աստծու ձեռքով Բարայելի հրաշալի ազատագրման հիշատակը, "հավիտենական կանոնով" պիտի կատարվեր, այնպես էլ՝ այսպիսով հաստատված նոր Ջատիկը հավիտենական կանոնով պիտի կատարվի՝ միշտ հիշատակելու համար Քրիստոսի արյունով իրագործված փրկությունը:

^{22.20} Այս ամբողջ հմր պակասում է մի շարք ձեռ.:

^{22.20} Եր 31.31-34:

²¹ Բայց ահա իմ մատնիչը ինձ հետ սեղան է նստած: ²² Ճիշտ է, Մարդու Որդին պիտի մեռնի, ինչպես որ Աստված սահմանել է, բայց վա՛յ այն մարդուն, որ կմատնի նրան: ²³ Նրանք սկսեցին իրար հարցնել, թե իրենցից ո՞վ է անելու այդ:

Վեճ մեծության մասին

(Մտ 18.1, 19-28, 20.25-28, Մր 9.34, 10.42-45)

²⁴ Աշակերտների մեջ վեճ ծագեց, թե իրենցից ո՞վ է մեծը: ²⁵ Հիսուսն ասաց նրանց. -Ազգերի թագավորները տիրում են իրենց ժողովուրդներին, և իշխողները բարերար են կոչվում իրենց հպատակների կողմից: ²⁶ Բայց ձեր մեջ այդպես չպետք է լինի: Ընդհակառակը, ձեր միջից ամենամեծը թող լինի ամենափոքրի պես, և առաջնորդը՝ սպասավորի նման: ²⁷ Ո՞վ է մեծը. սեղան բազմո՞ղը, թե՞ սպասավորը: Անշուշտ, սեղան բազմողը: Բայց ես ձեր մեջ սպասավորի պես եմ: ²⁸ Դուք միշտ մոտս մնացիք իմ փորձությունների ընթացքում, ²⁹ և ես ահա խոստանում եմ թագավորություն տալ ձեզ, ինչպես իմ Հայրը խոստացավ ինձ տալ: ³⁰ Իմ թագավորության մեջ դուք պիտի ուտեք ու խմեք իմ սեղանից և բազմեք գահերի վրա՝ Իսրայելի տասներկու ցեղերին դատելու համար:

Հիսուսը գուշակում է Պետրոսի ուրացումը

(Մտ 26.31-35, Մր 14.27-31, Հհ 13.36-38)

³¹ Ապա Տերն ասաց. -Միմո՛ն, Միմո՛ն, ահա Սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղից անցկացնել: ³² Բայց ես աղոթեցի քեզ համար, որպեսզի հավատոյ չտկարանա, և երբ կրկին դառնաս դեպի ինձ, քո եղբայրներին էլ քաջալերես: ³³ Պետրոսն ասաց. -Տե՛ր, պատրաստ եմ քեզ հետ թե՛ բանտ գնալու և թե՛ մեռնելու: ³⁴ Հիսուսն ասաց. -Պետրո՛ս, ասում եմ քեզ, որ այսօր, դեռ քաղաքը չկանչած, դու երեք անգամ կուրանաս ինձ՝ ասելով, թե ինձ չես ճանաչում:

Պատրաստ լինել փորձությունը դիմագրավելու

³⁵ Ապա Հիսուսն ասաց իր աշակերտներին. -Երբ ուղարկեցի ձեզ առանց քսակի, առանց ճանապարհի պարկի և կոշիկների, արդյոք որևէ բանի կարիք ունեցա՞ք: ³⁶ Նրանք պատասխանեցին.

^{22.21} Մր 41.9:

^{22.24} Մտ 18.1, Մր 9.34, Ղկ 9.46:

^{22.25-26} Մտ 20.25-27, Մր 10.42-44:

^{22.26} Մտ 23.11, Մր 9.35:

^{22.27} Հհ 13.12-15:

^{22.30} Մտ 19.28:

^{22.35} Մտ 10.9-10, Մր 6.8-9, Ղկ 9.3, 10.4:

-Ոչ մի բանի:

Եվ ասաց.

-Բայց այժմ, ով որ քսակ կամ ճանապարհի պարկ ունի, թող վերցնի: Իսկ ով որ սուր չունի, թող վաճառի իր վերարկուն և իր համար սուր գնի:³⁷ Ասում եմ ձեզ, որ այն, ինչ իմ մասին գրված է Սուրբ գրքերում, թե՛ «Չարագործների շարքը դասվեց», պիտի իրականանա, որովհետև ինչ որ գրված է իմ մասին, ահա կատարվում է:

³⁸ Աշակերտներն ասացին.

-Տե՛ր, ահավասիկ այստեղ երկու սուր կա:

Հիսուսն ասաց.

-Բավական է:

Հիսուսն աղոթում է Ձիթենյաց լեռան վրա

(Մտ 26.36-46, Մր 14.32-42)

³⁹ Ապա Հիսուսն իր սովորության համաձայն ելավ գնաց Ձիթենյաց լեռ:

Աշակերտներն էլ հետևեցին նրան: ⁴⁰ Երբ հասավ այնտեղ, ասաց նրանց.

-Աղոթեցե՛ք, որ փորձության մեջ չընկնեք:

⁴¹ Իսկ ինքը մի քարընկեցի չափ հեռացավ նրանցից, ծնրադրեց և աղոթեց՝ ⁴² ասելով.

-Հա՛յր, եթե կամենում ես, հեռացրո՛ւ այս բաժակը ինձանից, բայց ոչ թե իմ կամքը, այլ քո կամքը թող լինի:

⁴³ Եվ երկնքից նրան մի հրեշտակ երևաց, որ ուժ էր տալիս նրան: ⁴⁴ Տագնապի մեջ լինելով՝ նա ավելի ջերմեռանդորեն էր աղոթում, և քրտինքը արյան կաթիլների նման շիթ-շիթ գետին էր թափվում:

⁴⁵ Աղոթքից վեր կենալով՝ Հիսուսը եկավ աշակերտների մոտ և նրանց տրտմությունից հոգնած ու քնած գտավ. ⁴⁶ և ասաց նրանց.

-Ինչո՞ւ եք քնել, վե՛ր կացեք և աղոթեցե՛ք, որ փորձության մեջ չընկնեք:

Հիսուսի ձերբակալությունը

(Մտ 26.47-56, Մր 14.43-50, Հհ 18.3-11)

⁴⁷ Նա դեռ խոսում էր, երբ ահա հասավ մի ամբոխ՝ Հուդայի առաջնորդությամբ, որ տասներկու աշակերտներից էր: Երբ Հուդան մոտեցավ Հիսուսին, համբուրեց նրան, որովհետև մատնիչը նշան էր տվել նրանց՝ ասելով.

-Ում որ համբուրեմ, նա՛ է Հիսուսը, նրա՛ն ձերբակալեցեք:

⁴⁸ Հիսուսն ասաց նրան.

-Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում Մարդու Որդուն:

^{22.36} «Սուր գնի». այս խոսքը փոխաբերական իմաստ ունի և նշ է՝ թող պատրաստ լինի հոգևոր պատերազմին, որ ահա սկսվում է: Բայց աշակերտները նյութական իմաստով են հասկանում խոսքը:

^{22.37} Ես 53.12:

^{22.43-44} Մի շարք ձեռ. չունեն այս երկու հմբ:

^{22.44} Հուն. չունի «շիթ-շիթ» բառերը, գրբ. ունի «ոլոռն-ոլոռն»:

^{22.47} «Հուդան...համբուրեց նրան». տե՛ս Մտ 26.48-ի ծնթ: Շատ ձեռ. չունեն «որովհետև մատնիչը...նրա՛ն ձերբակալեցեք» նախադասությունը:

⁴⁹ Աշակերտները, որոնք Հիսուսի շուրջն էին, տեսան պատահաձր և ասացին նրան.

-Տե՛ր, սրով հարվածե՛նք նրանց:

⁵⁰ Աշակերտներից մեկը հարվածեց քահանայապետի ծառային և կտրեց նրա ականջը: ⁵¹ Հիսուսն ասաց.

-Կա՛նգ առեք, բավական է:

Ապա դիպավ ծառայի ականջին և բժշկեց այն: ⁵² Իսկ իրեն ձերբակալելու եկած ավագ քահանաներին, տաճարի սպաներին և երեցներին ասաց.

-Ավագա՛կ եմ, որ սրերով և մահակներով այդպես հարձակվում եք ինձ վրա: ⁵³ Ամեն օր ձեզ հետ էի տաճարում, և չփորձեցիք ինձ ձերբակալել: Բայց սա ահա ձեր ժամն է, խավարի իշխանության ժամը:

Պետրոսն ուրանում է Հիսուսին

(Մտ 26.57-58, 69-75, Մր 14.53-54, 66-72, Հհ 18.12-18, 25-57)

⁵⁴ Նրանք ձերբակալեցին Հիսուսին և բերեցին քահանայապետի տուն: Պետրոսը հեռվից գնում էր նրա հետևից: ⁵⁵ Երբ գավթի մեջտեղում կրակ վառեցին և նստեցին շուրջը, Պետրոսն էլ տեղավորվեց նրանց մեջ: ⁵⁶ Մի աղախին, տեսնելով Պետրոսին, որը նստել էր կրակի մոտ, շեշտակի նայեց նրան և ասաց.

-Սա էլ էր նրա հետ:

⁵⁷ Պետրոսն ուրացավ և ասաց.

-Ո՛վ կին, ես չեմ ճանաչում նրան:

⁵⁸ Քիչ հետո մեկ ուրիշն էլ տեսավ նրան և ասաց.

-Դո՛ւ էլ նրանցից ես:

Պետրոսն ասաց.

-Ո՛վ մարդ, ես նրանցից չեմ:

⁵⁹ Շուրջ մի ժամ հետո մեկ ուրիշն էլ պնդում էր և ասում.

-Ճիշտ է, սա էլ նրա հետ էր, որովհետև գալիլեացի է:

⁶⁰ Պետրոսն ասաց.

-Ո՛վ մարդ, չգիտեմ՝ ի՛նչ ես խոսում:

Եվ իսկույն, մինչ Պետրոսն ասում էր, աքաղաղը կանչեց:

⁶¹ Տերը դարձավ և նայեց Պետրոսին: Իսկ Պետրոսը հիշեց Տիրոջ խոսքը, որ ասել էր իրեն. «Դեռ աքաղաղը չկանչած՝ երեք անգամ կուրանաս ինձ՝ ասելով, թե ինձ չես ճանաչում»:⁶² Նա դուրս ելավ և դառնորեն լաց եղավ:

Հիսուսը ծաղրվում է և ծեծվում

(Մտ 26.67-68, Մր 14.65)

⁶³ Այն մարդիկ, որ Հիսուսի մոտ պահակ էին կանգնած, ծաղրում էին նրան և ծեծում:

⁶⁴ Ծածկում էին նրա դեմքը, խփում էին և հարցնում:

^{22.53} Ղկ 19.47, 21.37:

^{22.61} «Երեք անգամ». մի շարք ձեռ. ունեն «այսօր երեք անգամ»: Շատ ձեռ. չունեն «ասելով, թե ինձ չես ճանաչում»:

-Իմացի՛ր, ո՛վ է քեզ խփողը:

⁶⁵ Եվ ուրիշ շատ հայհոյալից խոսքերով նախատում էին նրան:

Հիսուսն ատյանի առաջ

(Մտ 26.59-66, Մր 14.55-64, Հհ 18.19-24)

⁶⁶ Երբ առավոտ եղավ, հավաքվեցին ժողովրդի երեցները, ավագ քահանաները և Օրենքի ուսուցիչները, Հիսուսին բերել տվեցին իրենց ատյանը ⁶⁷ և ասացին նրան.

-Եթե դու ես Քրիստոսը, ասա՛ մեզ:

Հիսուսը պատասխանեց.

-Եթե ասեմ, չեք հավատալու, ⁶⁸ և եթե հարց տամ ձեզ, պատասխան չեք տալու և ոչ էլ կարձակեք ինձ: ⁶⁹ Բայց սրանից հետո Մարդու Որդին պիտի նստի ամենագոր Աստծու աջ կողմը:

⁷⁰ Բոլորը ասացին.

-Ուրեմն դու Աստծու Որդի՞ն ես:

Հիսուսը պատասխանեց.

-Դո՛ւք եք ասում արդեն, թե ես եմ:

⁷¹ Նրանք ասացին.

-3/4լ վկայության ի՞նչ պետք կա, որովհետև մենք անձամբ լսեցինք հենց ի՛ր բերանից:

23

Հիսուսը Պիղատոսի առաջ

(Մտ 27.1-2, 11-14, Մր 15.1-5, Հհ 18.28-38)

¹ Եվ բոլորը միասին վեր կացան: Հիսուսին տարան Պիղատոսի մոտ ² և սկսեցին ամբաստանել նրան՝ ասելով.

-Մենք տեսանք, որ այս մարդը մոլորեցնում էր մեր ժողովրդին, արգելում էր կայսրին տուրք տալ, ինչպես նաև ինքն իր մասին ասում էր, թե ինքը Քրիստոսն է՝ օձյալ թագավորը:

³ Պիղատոսը հարցրեց Հիսուսին.

-Դո՛ւ ես հրեաների թագավորը:

Հիսուսը պատասխանեց նրան.

-Ահա դո՛ւ ես ասում:

⁴ Այա Պիղատոսը ավագ քահանաներին և ժողովրդին ասաց.

-Այս մարդու մեջ ես որևէ հանցանք չեմ գտնում:

⁵ Սակայն նրանք պնդում էին և ասում.

-Նա իր ուսուցումներով ամբողջ ժողովրդին ըմբոստության է մղում ողջ Հրեաստանում՝ Գալիլեայից սկսած մինչև այստեղ:

Հիսուսը Հերովդեսի առաջ

^{22.64} Շատ ձեռ. չունեն «խփում էին»:

⁶ Պիղատոսը երբ Գալիլեա անունը լսեց, հարցրեց.

-Այս մարդը գալիլեացի⁶ է:

⁷ Եվ երբ իմացավ, որ Հերովդեսի իշխանության հպատակ է, նրան ուղարկել տվեց Հերովդեսի մոտ, որովհետև այդ օրերին նա էլ էր գտնվում Երուսաղեմում:

⁸ Երբ Հերովդեսը տեսավ Հիսուսին, շատ ուրախացավ, շատ հաճախ լսած լինելով նրա մասին՝ երկար ժամանակից ի վեր ցանկանում էր տեսնել նրան և հույս ուներ, որ նա իր ներկայությամբ մի հրաշք կգործի: ⁹ Հերովդեսը շատ հարցեր տվեց Հիսուսին, սակայն նա բնավ չէր պատասխանում: ¹⁰ Ավագ քահանաներն ու Օրենքի ուսուցիչները կանգնած էին այնտեղ և ավելի բուռն ամբաստանություններ էին անում նրա դեմ:

¹¹ Հերովդեսն էլ իր զինվորների հետ նախատեց Հիսուսին և նրան ծաղրելու համար փառավոր մի պատմուճան հագցրեց և հետ ուղարկեց Պիղատոսի մոտ: ¹² Այդ օրը Պիղատոսը և Հերովդեսը, որոնք նախապես թշնամիներ էին, բարեկամներ դարձան:

Հիսուսը դատապարտվում է մահվան

(Մտ 27.15-26, Մր 15.6-15, Հհ 18.39-19.16)

¹³ Պիղատոսն իր մոտ կանչեց ավագ քահանաներին, իշխաններին ու ժողովրդին ¹⁴ և ասաց նրանց.

-Դուք այս մարդուն ինձ մոտ բերեցիք՝ ասելով, որ ժողովրդին ապստամբության է մղում: Ահա ձեր ներկայությամբ ես հարցաքննեցի նրան և նրա մասին արած ձեր ամբաստանություններից ոչ մի բան չգտա նրա վրա: ¹⁵ Նրան ուղարկեցի Հերովդեսի մոտ, և նա էլ հանցանք չգտավ: Այս մարդը, ուրեմն, մահվան արժանի ոչ մի բան չի արել: ¹⁶ Ես կպատժեմ նրան և ազատ կարձակեմ:

¹⁷ Պիղատոսն ամեն Զատիկի տոնին պետք է ազատ արձակեր մի բանտարկյալի:՝

¹⁸ Ամբողջ ամբոխը աղաղակեց.

-Սպանի՛ր նրան: Ուզում ենք, որ Բարաբբայի՛ն ազատ արձակես:

¹⁹ Բարաբբան բանտարկվել էր նրա համար, որ քաղաքում խռովություն էր հարուցել և սպանել մի մարդու:

²⁰ Պիղատոսը դարձյալ դիմեց ժողովրդին, որովհետև ուզում էր ազատ արձակել Հիսուսին: ²¹ Սակայն նրանք նորից էին աղաղակում և ասում.

-Խա՛չը հանիր, խա՛չը հանիր նրան:

²² Պիղատոսը երբորդ անգամ ասաց նրանց.

-Բայց այս մարդը ի՞նչ հանցանք է գործել: Ես նրա վրա մահվան արժանի ոչ մի բան չգտա, ուստի կպատժեմ և ազատ կարձակեմ:

²³ Սակայն նրանք բարձրաձայն պնդում էին և պահանջում, որ խաչվի: Երբ ժողովրդի և ավագ քահանաների աղաղակներն ուժեղացան, ²⁴ Պիղատոսը տեղի տվեց նրանց պահանջներին: ²⁵ Եվ նրանց պահանջի համաձայն՝ ազատ արձակեց Բարաբբային, որը խռովություն հարուցած լինելու և մարդասպանության համար բանտ էր նետված, իսկ Հիսուսին հանձնեց նրանց ձեռքը, որպեսզի իրենց ուզածն անեն:

^{23.17} Հնագույն ձեռ. չունեն այս հմր (հմմտ Մտ 27.15, Մր 15.16):

Դեպի Գողգոթա

(Մտ 27.32, Մր 15.21)

²⁶ Երբ զինվորները Հիսուսին առած տանում էին, ճանապարհին բռնեցին Կյուրենացի Սիմոն անունով մեկին, որը հանդից էր գալիս, և նրա ուսերին դրեցին խաչը, որպեսզի տանի Հիսուսի հետևից:

²⁷ Մի մեծ բազմություն հետևում էր Հիսուսին: Կանայք լաց էին լինում և ողբում նրա վրա: ²⁸ Հիսուսը, դառնալով նրանց, ասաց.

-Երուսաղեմի՛ աղջիկներ, լաց մի՛ եղեք ինձ վրա, այլ լաց եղեք ձեր և ձեր զավակների վրա: ²⁹ որովհետև օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ասեն. «Երանի՛ ամուլ կանանց, այն կանանց, որոնք զավակ չձնեցին և կրծքով չսնեցին»: ³⁰ Այն ժամանակ մարդիկ պիտի ասեն լեռներին՝ «Ընկե՛ք մեզ վրա», և բլուրներին, թե՛ «Ծածկեցե՛ք մեզ»:

³¹ որովհետև եթե այսպես են վարվում դալար փայտի հետ, հապա չորին ի՞նչ կանեն:

Հիսուսի խաչելությունը

(Մտ 27.33-44, Մր 15.22-32, Հհ 19.17-27)

³² Երկու ուրիշ չարագործների էլ բերեցին, որպեսզի սպանվեն Հիսուսի հետ: ³³ Երբ հասան Գանգ կոչված վայրը, այնտեղ խաչեցին Հիսուսին և երկու չարագործներին, մեկին՝ Հիսուսի աջ կողմը, մյուսին՝ ձախ կողմը:

³⁴ Հիսուսն ասաց.

-Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՛նչ են անում:

Ապա վիճակ գցելով՝ զինվորները նրա զգեստները բաժանեցին իրենց մեջ:՝

³⁵ Ժողովուրդը կանգնած դիտում էր, մինչ իշխանները նրանց հետ միասին ծաղրում էին նրան՝ ասելով.

-Ուրիշներին ազատեց, թող ինքն իրեն էլ ազատի, եթե իսկապես ինքն է Քրիստոսը՝ Աստծու ընտրյալ Որդին:՝

³⁶ Զինվորներն էլ ծաղրում էին նրան. գալիս էին նրա դիմաց, քացախ էին տալիս՝ ³⁷ և ասում.

-Եթե հրեաների թագավորն ես, ազատի՛ր ինքդ քեզ:

³⁸ Նրա խաչի վրա մի գրություն էլ կար հունարեն, լատիներեն և եբրայերեն գրերով. «Սա է հրեաների թագավորը»: ³⁹ Խաչից կախված չարագործներից մեկը նախատում էր նրան՝ ասելով.

-Դու չե՞ս Քրիստոսը, ազատի՛ր թե՛ ինքդ քեզ և թե՛ մեզ:

⁴⁰ Բայց մյուս չարագործը սաստեց նրան և ասաց.

-Աստծուց չե՞ս վախենում, դու, որ նույն պատիժն ես կրում: ⁴¹ Մեր պատիժն

^{23.30} Օս 10.8, Հտ 6.16:

^{23.34} Շատ ձեռ. չունեն «Հիսուսն ասաց. "Հա՛յր,...ի՛նչ են անում"»:

^{23.34} Մր 22.18:

^{23.35} «Աստծու ընտրյալ Որդին». շատ ձեռ.՝ «Աստծու ընտրյալը»:

^{23.35} Մր 22.7:

^{23.36} Մր 69.21:

իրավացի է, որովհետև մենք մեր արածի արժանի հատուցումն ենք ստանում, մինչդեռ սա ոչ մի վատ բան չի արել:

⁴² Եվ ապա ասաց Հիսուսին.

-Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս քո թագավորությամբ:

⁴³ Հիսուսն ասաց նրան.

-Վստա՛հ եղիր, այսօր ինձ հետ դրախտում կլինես:

Հիսուսի մահը

(Մտ 27.45-56, Մր 15.33-41, Հհ 19.28-30)

⁴⁴ Գրեթե կեսօր էր, երբ արևը խավարեց, և ամբողջ երկիրը խավարի մեջ մնաց մինչև ժամը երեքը: ⁴⁵ Տաճարի վարագույրը մեջտեղից պատռվեց: ⁴⁶ Այն ժամանակ Հիսուսը բարձրաձայն ասաց.

-Հա՛յր, քո ձեռքերի մեջ եմ ավանդում իմ հոգին:

Այս խոսքն ասաց ու հոգին ավանդեց:՝

⁴⁷ Հարյուրապետը, տեսնելով պատահածը, փառավորեց Աստծուն՝ ասելով.

-Իսկապես որ այս մարդն արդար էր:

⁴⁸ Եվ բոլորն էլ, որոնք եկել էին դիտելու, երբ տեսան պատահածները, իրենց կուրծքը ծեծելով՝ տուն վերադարձան: Այնտեղ, հեռվում, կանգնել էին ⁴⁹ Հիսուսի բոլոր ծանոթները, ինչպես նաև այն կանայք, որոնք Գալիլեայից էին հետևել նրան, և դիտում էին այս բաները:՝

Հիսուսի թաղումը

(Մտ 27.57-61, Մր 15.42-47, Հհ 19.38-42)

⁵⁰⁻⁵¹ Հրեաստանի Արիմաթեա քաղաքից Հովսեփ անունով մի մարդ կար, որ բարեգործ էր ու արդար և սպասում էր Աստծու թագավորությանը: Հակառակ նրան, որ նա հրեաների աստյանի անդամ էր, սակայն համաձայն չէր եղել նրանց որոշումին և կատարածին: ⁵² Սա գնաց Պիղատոսի մոտ և խնդրեց, որ Հիսուսի մարմինն իրեն տրվի: ⁵³ Ապա խաչից իջեցրեց նրան, փաթաթեց պատանքով և դրեց ժայռափոր մի գերեզմանի մեջ, որտեղ նախապես ոչ ոք չէր թաղված: ⁵⁴ Օրն ուրբաթ էր, և սկսվելու էր շաբաթ օրը:

⁵⁵ Այն կանայք, որոնք Գալիլեայից հետևել էին Հիսուսին, գնացին Հովսեփի հետ, տեսան գերեզմանը և թե ինչպե՛ս նրա մարմինը դրվեց այնտեղ: ⁵⁶ Ապա տուն վերադարձան և խունկեր ու յուղեր պատրաստեցին: Եվ շաբաթ օրը, ինչպես որ Օրենքն էր պատվիրում, հանգիստ արեցին:՝

^{23.45} Ելք 26.31-33:

^{23.46} Մր 31.5:

^{23.49} Ղկ 8.2-3:

^{23.50} «Արիմաթեա». տե՛ս Մտ 27.57-ի ծնթ:

^{23.56} «Խունկեր ու յուղեր». տե՛ս Մտ 26.12-ի ծնթ:

^{23.56} Ելք 20.10, Բ Օր 5.14:

Հիսուսի հարությունը

(Մտ 28.1-10, Մր 16.1-8, Հհ 20.1-10)

¹ Կիրակի օրը, առավոտյան շատ վաղ, Մարիամ Մագդաղենացին, Հովհաննան և Հակոբոսի մայրը՝ Մարիամը, ուրիշ կանանց հետ գերեզման եկան՝ իրենց հետ բերելով իրենց պատրաստած խունկերը: ² Գերեզմանի մուտքը փակող քարը գլորված գտնելով՝ նրանք ³ ներս մտան և Տեր Հիսուսի մարմինն այնտեղ չգտան: ⁴ Մինչ պատահածի վրա զարմանքից ապշել էին, ահա լուսազգեստ երկու մարդիկ կանգնեցին նրանց մոտ: ⁵ Կանայք սարսափեցին և վախից իրենց դեմքը գետին խոնարհեցին: Մարդիկ ասացին նրանց.

-Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: ⁶ Նա այստեղ չէ. հարություն առավ: Հիշեցե՛ք, ինչ որ ասաց ձեզ, երբ տակավին ձեզ հետ Գալիլեայում էր գտնվում,⁷ թե Մարդու Որդին պետք է հանձնվեր մեղավոր մարդկանց ձեռքը, խաչվեր և երրորդ օրը հարություն առներ:

⁸ Եվ հիշեցին նրա խոսքերը: ⁹ Ապա վերադարձան գերեզմանից և ինչ որ տեսան, պատմեցին տասնմեկ առաքյալներին և մյուս բոլոր աշակերտներին: ¹⁰ Այս բոլորը առաքյալներին պատմողները իրենք էին՝ Մարիամ Մագդաղենացին, Հովհաննան, Հակոբոսի մայրը՝ Մարիամը, և նրանց ուղեկցող մյուս կանայք: ¹¹ Առաքյալները ցնդաբանություն համարեցին նրանց պատմածները և չհավատացին նրանց: ¹² Բայց Պետրոսը վեր կացավ և վազեց դեպի գերեզման, կռանալով ներս նայեց և գերեզմանի մեջ տեսավ միայն պատանքը: Նա զարմացած վերադարձավ՝ մտածելով, թե ի՞նչ էր պատահել արդյոք:

3/4մմավուսի ճանապարհին

(Մր 16.12-13)

¹³ Նույն օրը աշակերտներից երկուսը գնում էին 3/4մմավուս անունով մի գյուղ, որ Երուսաղեմից հեռու է շուրջ տասնմեկ կիլոմետր: ¹⁴ Նրանք միմյանց հետ խոսում էին պատահած բոլոր անցուդարձերի մասին: ¹⁵ Մինչ իրար հետ խոսում էին ու վիճում, Հիսուսն անձամբ մոտեցավ նրանց և սկսեց նրանց հետ զնալ: ¹⁶ Նրանց աչքերն այնպես էին բռնված, որ չէին ճանաչում նրան:

¹⁷ Հիսուսը հարցրեց նրանց.

-Ի՞նչ բանի մասին եք խոսում ու վիճում քայլելիս. և տրտմած եք:

¹⁸ Նրանցից մեկը, որ Կղեովպաս էր կոչվում, ասաց.

-Երուսաղեմում միայն դո՞ւ կաս, որ չգիտես, թե ինչ պատահեց այս օրերին:

¹⁹ Հիսուսը հարցրեց.

-Ի՞նչ բան:

^{24.6-7} Մտ 16.21, 17.22-23, 20.18-19, Մր 8.31, 9.31, 10.33-34, Ղկ 9.22, 18.31-33:

^{24.12} Մի շարք ձեռ. չունեն այս հմր:

^{24.13} «3/4մմավուս». այս գյուղի ճշգրիտ վայրը ներկայումս հայտնի չէ:

Նրանք ասացին:

-Այն, ինչ պատահեց Հիսուս Նազովրեցուն: Նա իր խոսքերով և գործերով հզոր մի մարգարե էր Աստծու և ամբողջ ժողովրդի համար: ²⁰ Մեր ավագ քահանաներն ու իշխանները նրան իշխանությանն հանձնեցին, որպեսզի մահվան դատապարտվի, և խաչը հանեցին նրան: ²¹ Մենք հույս ունեինք, որ նա կլինի Իսրայելի ազատողը: Այսուհանդերձ, ահա այսօր երրորդ օրն է, որ այդ բաները պատահեցին: ²² Սակայն մեր միջից մի շարք կանայք, որոնք վաղ առավոտյան գերեզման էին գնացել, զարմացրին մեզ՝ ²³ ասելով, որ նրա մարմինը չեն գտել և որ տեսել են հրեշտակների, որոնք իրենց հայտնել են, թե նա ողջ է: ²⁴ Մեզնից ոմանք գնացին գերեզման և ամեն ինչ գտան այնպես, ինչպես կանայք էին ասել: Բայց նրան չտեսան: ²⁵ Հիսուսն ասաց նրանց.

-Ո՛վ անմիտներ, որ դժվարանում եք հավատալ մարգարեների բոլոր ասածներին: ²⁶ Չէ՞ որ Քրիստոսը պետք է չարչարվեր՝ փառավորվելու համար:

²⁷ Ապա սկսեց բացատրել Մուրբ գրքերում իր մասին գրված բոլոր գրությունները՝ սկսած Մովսեսի գրքերից մինչև բոլոր մարգարեությունները:

²⁸ Նրանք մոտեցել էին այն գյուղին, ուր պիտի գնային: Սակայն Հիսուսն այնպես ձևացրեց, թե ինքը գնալու է ավելի հեռու տեղ: ²⁹ Նրանք ստիպեցին նրան՝ ասելով.

-Մեզ մոտ գիշերիր, որովհետև արդեն երեկո է, և ահա մութն ընկնում է:

Հիսուսը նրանց հետ տուն մտավ գիշերելու համար: ³⁰ Երբ նա սեղան նստեց նրանց հետ, վերցրեց հացը, օրհնեց, կտրեց և տվեց նրանց: ³¹ Իսկույն բացվեցին նրանց աչքերը, և ճանաչեցին նրան, բայց ինքն անհայտացավ նրանց աչքերից: ³² Նրանք ասացին միմյանց.

-Մեր սրտերը չէի՞նք ճնշվում, երբ նա ճանապարհին խոսում էր մեզ հետ և բացատրում Մուրբ գրքերը:

³³ Նրանք անմիջապես վեր կացան ու վերադարձան Երուսաղեմ, որտեղ հավաքված գտան տասնմեկ աշակերտներին և ուրիշ հետևորդների, ³⁴ որոնք ասացին.

-Իսկապե՞ս որ Տերը հարություն առավ և երևաց Սիմոնին:

³⁵ Իսկ նրանք պատմեցին, ինչ որ իրենց պատահել էր ճանապարհին, և թե ինչպես հացը կտրելու ժամանակ Հիսուսն իրեն ճանաչել էր տվել իրենց:

Հիսուսը երևում է տասնմեկ աշակերտներին

(Մտ 28.16-20, Մր 16.14-18, Հհ 20.19-23, Գրծ 1.6-8)

³⁶ Մինչ նրանք այս մասին էին խոսում, նույն ինքը՝ Հիսուսը, եկավ կանգնեց նրանց մեջտեղը և ասաց նրանց.

-Խաղաղություն ձեզ, ես եմ, մի՛ վախեցեք:

³⁷ Նրանք, վախեցած և սարսափած, կարծեցին, թե մի ոգի են տեսնում: ³⁸ Բայց նա ասաց նրանց.

-Ի՞նչ եք իրար խառնվել և ինչո՞ւ եք կասկածներ ունենում ձեր մտքում: ³⁹ Նայեցե՛ք իմ

^{24.36} Մի շարք ձեռ. չունեն «և ասաց նրանց. "Խաղաղություն ձեզ"», իսկ շատ ձեռ. չունեն «Ես եմ, մի՛ վախեցեք»:

ձեռքերին և ոտքերին, հենց է՛ս եմ: Շոշափեցե՛ք ինձ և կտեսնեք, որ միս ու ոսկոր ունեմ, մի բան, որ ոգին չի ունենում:

⁴⁰ Այս ասելով՝ նա իր ձեռքերն ու ոտքերը ցույց տվեց նրանց: ⁴¹ Եվ մինչ նրանք ուրախությունից չէին հավատում և դեռևս զարմացած էին, Հիսուսն ասաց նրանց.

-Ուտելու բան ունե՞ք այստեղ:

⁴² Նրանք տվեցին նրան խորոված ձկան մի կտոր և մեղրախորիսիս: ⁴³ Նա կերավ նրանց առաջ և մնացածը տվեց նրանց:

⁴⁴ Ապա ասաց.

-Այս բոլորն արդեն ասել էի ձեզ, երբ ձեզ հետ էի, թե պետք է իրականանան Մովսեսի Օրենքի գրքում, մարգարեների գրքերում և Սաղմոսներում իմ մասին գրվածները:

⁴⁵ Հետո բացեց նրանց մտքերը, որպեսզի հասկանան Սուրբ գրքերը, ⁴⁶ և ասաց նրանց.

-Գրված է, որ այդպես պետք է չարչարվեր Քրիստոսը և երեք օր հետո հարություն առներ. ⁴⁷ նրա անունով պետք է քարոզվեր ապաշխարություն և մեղքերի թողություն բոլոր ժողովուրդներին՝ Երուսաղեմից սկսած: ⁴⁸ Դուք այս բոլորի վկաներն եք: ⁴⁹ Եվ ահա ես ուղարկելու եմ ձեզ իմ Հոր տված խոստումը: Մնացե՛ք Երուսաղեմում, մինչև որ գորություն ստանաք երկնքից:

Հիսուսի համբարձումը

(Մր 16.19-20, Գրծ 1.9-11)

⁵⁰ Ապա տարավ նրանց մինչև Բեթանիա և ձեռքերը վեր բարձրացնելով՝ օրհնեց նրանց: ⁵¹ Եվ մինչ նա օրհնում էր, բաժանվեց նրանցից՝ բարձրանալով դեպի երկինք:

⁵² Նրանք երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ:

⁵³ Եվ ամեն օր տաճարում գովերգում և օրհնաբանում էին Աստծուն:

JHN

ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Հովհաննես առաքյալը Ջերեդեոսի ու Սողոմեի զավակն է և Հակոբոս առաքյալի եղբայրը: Հիսուսը նրան կանչեց, երբ նա ձկնորսություն էր անում (Մտ 4.21, Մր 1.19, Ղկ 5.10): Նա եղել է Հիսուսի մտերիմ առաքյալներից մեկը և բացառիկ առիթներով

^{24.40} Մի շարք ձեռ. չունեն այս հմր:

^{24.42} Մի շարք ձեռ. չունեն «և մեղրախորիսիս»:

^{24.43} Մի շարք ձեռ. չունեն «և մնացածը տվեց նրանց»:

^{24.49} Գրծ 1.4:

^{24.50} «Բեթանիա». տե՛ս Մտ 21.17-ի ծնթ:

^{24.50-51} Գրծ 1.9-11:

^{24.51} Մր 50.20:

Պետրոսի և Հակոբոսի հետ միասին գտնվել է Հիսուսի հետ (Մտ 17.1, Մր 9.2, Ղկ 9.28, Մր 5.37, Ղկ 8.51, Մտ 26.37, Մր 14.33, Հհ 13.23, 19.26-27):

Հովհաննեսի Ավետարանը զգալիորեն տարբերվում է մյուս Ավետարաններից: Այս Ավետարանը Հիսուսին ներկայացնում է որպես Աստծու Խոսքը, որ մարմին եղավ և բնակվեց մեր մեջ: Ինչպես հեղինակն է ասում, այս Ավետարանը գրվեց, որպեսզի ընթերցողները հավատան, որ Հիսուսն է խոստացված Փրկիչը՝ Աստծու Որդին, և հավիտենական կյանք ունենան (20.31):

Նախաբանից հետո, որտեղ Աստծու Խոսքը նույնացվում է Հիսուսի հետ, Ավետարանի առաջին մասում նկարագրված են զանազան հրաշքներ, որոնք ցույց են տալիս, որ Հիսուսն է խոստացված Փրկիչը՝ Աստծու Որդին: Գրքի այս մասում պատմվում է այն մարդկանց մասին, որոնք, հավատալով Հիսուսին, դարձան նրա հետևորդները, մինչ ուրիշներն ընդդիմացան և մերժեցին հավատալ: Այս Ավետարանում մենք գտնում ենք բացառիկ նշանակություն ունեցող բազմաթիվ դրվագներ, ինչպես՝ Կանայի հարսանիքը, Հիսուսի հանդիպումները Նիկողեմոսի, սամարացի կնոջ, Բեթհեզդայի անդամալուծի և ի ծնե կույրի հետ, ինչպես նաև Ղազարոսի հարությունը, իբրև Հիսուսի աստվածության նշաններ (2-11 գլուխներ): 13-17 գլուխներում Հիսուսը մտերմորեն զրուցում է իր առաքյալների հետ՝ ձերբակալությունից և խաչելությունից առաջ նրանց քաջալերելու համար: Վերջին գլուխներում նկարագրված են Հիսուսի ձերբակալությունը, խաչելությունը, հարությունը և հարությունից հետո նրա երևումները:

Հովհաննեսը շեշտում է հավիտենական կյանքի շնորհը, որ մենք ստանալու ենք Հիսուսի միջոցով: Այդ շնորհին արժանանում են նրանք, որոնք Հիսուսին ընդունում են որպես ճանապարհ, ճշմարտություն և կյանք: Հովհաննեսը կարևոր տեղ է հատկացնում Հիսուսի ճառերին և խորհրդածություններին, որոնք ընդարձակ բացատրականներ են՝ Հիսուսի աստվածային էությունն արտահայտելու և խորունկ ճշմարտություններ բացահայտելու համար: Այս հասկացողությամբ ուշագրավ են ավետարանչի օգտագործած խորհրդանշական այն բառերը, որոնք ամենօրյա գործածություն ունեն՝ ջուր, հաց, լույս, հովիվ, ոչխար, այգի և այլն:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ

- Նախաբան (1.1-18):
- Հովհաննես Մկրտիչը և Հիսուսի առաջին աշակերտները (1.19-51):
- Հիսուսի առաքելությունը Հորդանան գետի շուրջը և Գալիլեայում (2.1-12.50):
- Հրաժեշտի և քաջալերական խոսքեր վերջին ընթրիքի ընթացքում (13.1-16.33):
- Քահանայապետական աղոթք (17-րդ գլուխ):
- Չարչարանքների պատում (18.1-19.42):
- Հիսուսի հարությունը. Հիսուսը երևում է Մարիամ Մագդաղենացուն և իր աշակերտներին (20.1-31):
- Վերջաբան. Հիսուսը դարձյալ երևում է Գալիլեայում. (21.1-25):

Որդին՝ կյանքի Խոսքը

¹ Աշխարհի ստեղծագործությունից առաջ գոյություն ուներ Բանը: Բանն Աստծու հետ էր, և Բանն Աստված էր: ² Նա սկզբից Աստծու հետ էր: ³ Նրանով էր, որ Աստված ստեղծեց ամեն ինչ. առանց նրա ոչ մի բան չստեղծեց: ⁴ Կյանքը նրանով սկիզբ առավ: Եվ կյանքը մարդկանց համար Լույսն է, ⁵ որ փայլում է խավարի մեջ. բայց խավարը չկարողացավ հասկանալ նրան:

⁶ Հովհաննեսը, որ Աստծու կողմից ուղարկված մի մարդ էր, ⁷ եկավ վկայություն տալու Լույսի մասին, որպեսզի նրա միջոցով ամեն մարդ հավատա: ⁸ Ինքը Լույսը չէր, այլ մի վկա, որ եկել էր վկայելու Լույսի մասին: ⁹ Բանն էր ճշմարիտ Լույսը, որ աշխարհ գալով լուսավորում է ամբողջ մարդկությունը: ¹⁰ Նա աշխարհի մեջ էր, աշխարհը նրանով ստեղծվեց, սակայն աշխարհը չճանաչեց նրան: ¹¹ Նա եկավ իր իսկ ստեղծած աշխարհը, բայց իր իսկ ստեղծած մարդիկ չընդունեցին նրան: ¹² Իսկ իրեն ընդունողներին և իրեն հավատացողներին նա իշխանություն տվեց Աստծու որդիներ լինելու: ¹³ ո՛չ արյան ճամփով և ո՛չ էլ մարմնի կամ մարդկային կամքով, այլ Աստծուց ծնվելով:

¹⁴ Եվ Բանը մարդ եղավ ու բնակվեց մեր մեջ, և մենք տեսանք նրա փառքը, Միածնի փառքը, որ Հորից եկավ՝ լի շնորհով և ճշմարտությամբ:

¹⁵ Հովհաննեսը վկայեց նրա մասին՝ հայտարարելով.

-Մա՛ է նա, որի մասին ասում էի. «Նա, որ ինձնից հետո է գալու, ինձնից մեծ է, որովհետև ինձնից առաջ գոյություն ուներ»:

¹⁶ Նրա լիառատ շնորհից է, որ մենք բոլորս շնորհի վրա շնորհ ստացանք.

¹⁷ որովհետև Օրենքը Մովսեսի միջոցով տրվեց, մինչ շնորհն ու ճշմարտությունը՝ Հիսուս Բրիստոսի միջոցով:

¹⁸ Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի Միածնից, որ Աստված է և Հորից անբաժան, և Որդին էր, որ մեզ ճանաչեցրեց նրան:

Հովհաննես Մկրտչի վկայությունը

(Մտ 3.1-12, Մր 1.2-8, Ղկ 3.1-18)

¹⁹ Հովհաննեսը հետևյալ վկայությունը տվեց, երբ հրեա ղեկավարները Երուսաղեմից

^{1.1} Հովհաննես ավետարանիչը «Բան», այսինքն՝ «Խոսք» կամ «Միտք» է կոչում Աստծու Որդուն՝ Հիսուս Բրիստոսին, այդ կոչումով շեշտելով նրա աստվածությունը, ինչպես հունական փիլիսոփայության մեջ «Բան» էր կոչվում տիեզերքը ղեկավարող բանական սկզբունքը: Հրեական մտածողության մեջ այդպես էին կոչում Աստծուն:

^{1.5} «Նախկանալ նրան» կամ «ընդունել նրան» կամ «հաղթել նրան»:

^{1.6} Խոսքը Հովհաննես Մկրտչի մասին է:

^{1.6} Մտ 3.1, Մր 1.4, Ղկ 3.1-2:

^{1.14} «Բնակվեց», բոց՝ «տաղավարեց», որտեղ «տաղավար» բառը նույնն է ՀԿ Վկայության խորանի հետ: Ինչպես Աստված իր ներկայությամբ և փառքով լցնում էր Վկայության խորանը, այնպես էլ Քրիստոսը եկավ իր աստվածային ներկայությամբ լցնելու մեզ՝ իր նոր ժողովրդին, և մենք տեսանք նրա փառքը:

^{1.18} «Միածնից, որ Աստված է», բոց՝ «միածին Աստծուց»: Գրբ. և մի շարք հուն. ձեռ. ունեն «միածին Որդուց»:

քահանաներ և ղևտացիներ ուղարկեցին նրա մոտ, որպեսզի հարցնեն նրան.

-Դու ո՞վ ես:

²⁰Նա առանց վարանելու խոստովանեց և հայտարարեց.

-Ես Քրիստոսը չեմ:

²¹-Հապա ո՞վ ես դու,- հարցրին նրան,- Եղիա՞ն ես:

-Ո՛չ, Եղիան չեմ,- պատասխանեց:

-Դու մարգարե՞ն ես,- հարցրին:

-Ո՛չ,- պատասխանեց:*

²²-Ուրեմն ասա՛ մեզ, ո՞վ ես դու, որպեսզի մի պատասխան տանք մեզ ուղարկողներին: Դու ի՞նչ ես ասում քո մասին:

²³Հովհաննեսը պատասխանեց.

-Ես «անապատում կանչողի ձայնն եմ, - ինչպես ասում է Եսայի մարգարեն,- հարթեցե՛ք Տիրոջ ճանապարհը»:

²⁴Ուղարկված պատգամավորները, որոնք փարիսեցիներն էին,* ²⁵հարցրին Հովհաննեսին.

-Հապա ինչո՞ւ ես մկրտում, եթե դու Քրիստոսը չես, ոչ էլ Եղիան կամ մարգարեն:

²⁶Հովհաննեսը պատասխանեց.

-Ես ձեզ մկրտում եմ ջրով, բայց ձեր մեջ կա մեկը, թեև դուք չեք ճանաչում նրան, ²⁷որ ինձնից հետո եկողն է: Ես նրա կոշիկների կապերն անգամ արձակելու արժանի չեմ:

²⁸Այս խոսակցությունը տեղի ունեցավ Բեթաբարայում, Հորդանան գետի մյուս կողմում, որտեղ մնում էր Հովհաննեսը և մկրտում:

Աստծու Գառը

²⁹Հաջորդ օրը Հովհաննեսը տեսավ Հիսուսին, որ գալիս էր դեպի իրեն, և ասաց.

-Ահա Աստծու Գառը, որ վերացնում է աշխարհի մեղքը: ³⁰Սա՛ է նա, որի մասին ասում էի. «Ինձնից հետո գալիս է մեկը, որ ինձնից մեծ է, որովհետև ինձնից առաջ գոյություն ուներ»: ³¹Ես ինքս էլ չեի ճանաչում նրան, բայց ես եկա և մկրտեցի ջրով, որպեսզի նա հայտնվի Իսրայելի ժողովրդին:

³²Հովհաննեսն այս վկայությունն էլ տվեց.

***1.21** «Եղիա՞ն ես». Եղիա մարգարեն իր կենդանության ժամանակ հափշտակվել-տարվել էր երկինք, և Մադաքիա մարգարեն Մեսիայի գալուստից անմիջապես առաջ նրա վերադարձի մասին էր խոսում (4.5): Հրեաները սպասում էին նրա մարմնավոր վերադարձին: Այստեղ նրանք ուզում էին իմանալ, թե ինքը Հովհաննեսն սո՞ւ է Եղիան. բայց Հովհաննեսն իր ժխտական պատասխանով հերքում է մարմնավոր վերադարձի սխալ ըմբռնումը: «Մարգարեն». սա մի ակնարկություն է Բ Օր 18.15 և 18-ի աստվածային խոստումի մասին, որը վերաբերում է Քրիստոսին (տե՛ս հմր 45):

***1.21** ա Մղ 4.5: ք Բ Օր 18.15, 18: Սր 48.10-11:

***1.23** Ես 40.3 [LXX]:

***1.24** «Պատգամավորները» կամ «պատգամավորներից ոմանք»:

***1.27** «Ինձնից հետո եկողն է». մի շարք ձեռ. ավելացնում են «[բայց] որ ինձնից առաջ գոյություն ուներ» (հմմտ հմր 30):

***1.28** «Բեթաբարա». շատ ձեռ. ունեն «Բեթանիա», որը, սակայն, Ձիթենյաց լեռան ծանոթ գյուղը չէր, այլ Հորդանան գետի արևելյան ափի ինչ-որ մի տեղ, այժմ՝ անծանոթ: Հուն. չունի «մնում էր... և» բառերը:

-Տեսա Հոգին, որ աղավնու պես իջնում էր երկնքից և մնում նրա վրա: ³³ Այո՛, ես չեի ճանաչում նրան, բայց նա, ով ուղարկեց մկրտելու ջրով, ասաց ինձ. «Ում վրա, որ տեսնում ես, թե իջնում ու մնում է Հոգին, նա՛ է, որ մկրտելու է Սուրբ Հոգով»: ³⁴ Ես այդ տեսա և վկայում եմ, թե ի՛նքն է Աստծու Որդին:

Հիսուսի առաջին աշակերտները

(Մտ 4.18-22, Մր 1.16-20, Ղկ 5.1-11)

³⁵ Հետևյալ օրը Հովհաննեսն իր երկու աշակերտների հետ դարձյալ կանգնած էր այնտեղ: ³⁶ Տեսնելով, որ Հիսուսն անցնում էր այդտեղից, ասաց.

-Ահա՛ Աստծու Գառը:

³⁷ Երկու աշակերտները, լսելով Հովհաննեսի այս խոսքը, հետևեցին Հիսուսին: ³⁸ Երբ Հիսուսը հետ դարձավ և տեսավ, որ նրանք հետևում են իրեն, ասաց.

-Ի՞նչ եք ուզում:

Նրանք ասացին.

-Ռաբբի՛, որտե՞ղ ես մնում (Ռաբբի նշանակում է «վարդապետ», այսինքն՝ «ուսուցիչ»):

³⁹ Հիսուսը պատասխանեց.

-Եկե՛ք և տեսե՛ք:

Նրանք գնացին և տեսան, թե որտեղ էր մնում, և այդ օրը մնացին նրա մոտ, որովհետև կեսօրից հետո շուրջ ժամը չորսն էր: ⁴⁰ Անդրեասը՝ Սիմոն Պետրոսի եղբայրը, մեկն էր այն երկու աշակերտներից, որոնք լսեցին Հովհաննեսի վկայությունը և հետևեցին Հիսուսին: ⁴¹ Սա իսկույն գտավ իր եղբորը՝ Սիմոնին, և ասաց նրան.

-Գտանք Մեսիային (Մեսիա նշանակում է Քրիստոս, այսինքն՝ «Օծյալ»):

⁴² Հետո նրան տարավ Հիսուսի մոտ: Հիսուսը նայեց նրան և ասաց.

-Դու Սիմոնն ես՝ Հովնանի որդին: Դու պիտի կոչվես Կեփաս (Կեփաս նշանակում է Պետրոս, այսինքն՝ «ժայռ»):

Հիսուսը կանչում է Փիլիպպոսին և Նաթանայելին

⁴³ Հաջորդ օրը Հիսուսը որոշեց գնալ Գալիլեա: Տեսավ Փիլիպպոսին և ասաց նրան.

-Հետևի՛ր ինձ:

⁴⁴ Փիլիպպոսը Բեթսայիդայից էր, Անդրեասի և Պետրոսի քաղաքից: ⁴⁵ Փիլիպպոսը գտավ Նաթանայելին և ասաց նրան.

-Գտանք այն մարդուն, ում մասին գրել են թե՛ Մովսեսն իր Օրենքի գրքում և թե՛ մարգարեները: Նա Հիսուսն է՝ Հովսեփի որդին, Նազարեթ քաղաքից:

⁴⁶ Նաթանայելը հարցրեց.

-Բայց կարելի՞ է, որ Նազարեթից մի որևէ լավ բան դուրս գա:

Փիլիպպոսն ասաց.

^{1.44} «Բեթսայիդա». Գալիլեայի լճի հյուսիսարևմտյան ափին գտնվող մի քաղաք՝ Կափառնայումին մոտիկ:

^{1.45} «Նաթանայելը» մյուս Ավետարաններում Բարթոլոմեոս անունով հիշված առաքյալն է:

-Արի՛ ու տե՛ս:

⁴⁷ Երբ Հիսուսը տեսավ Նաթանայելին, որ գալիս էր իր մոտ, ասաց նրա մասին:

-Ահա ճշմարիտ մի իսրայելացի, որի մեջ նենգություն չկա:

⁴⁸ Նաթանայելը հարցրեց.

-Որտեղի՞ց ես ինձ ճանաչում:

Հիսուսը պատասխանեց.

-Փիլիպպոսը դեռ քեզ չկանչած՝ տեսա քեզ, երբ դու թզենու տակ էիր:՝

⁴⁹ Նաթանայելն ասաց.

-Ռաբբի՛, դու Աստծու Որդին ես, դու Իսրայելի թագավորն ես:

⁵⁰ Հիսուսը պատասխանեց.

-Դու նրա համա՞ր ես հավատում, որ քեզ ասացի, թե՛ «Թզենու տակ տեսա քեզ».

սրանից հետո շատ ավելի մեծ բաների ականատես պիտի լինես:

⁵¹ Եվ իր խոսքը շարունակելով՝ ասաց.

-Վստա՛հ եղեք, պիտի տեսնեք երկինքը բացված և Աստծու հրեշտակներին՝ Մարդու Որդու վերևում բարձրանալիս և իջնելիս:՝

2

Կանայի հարսանիքը

¹ Հիսուսի Գալիլեա հասնելու երրորդ օրը Կանա քաղաքում մի հարսանիք կար, և Հիսուսի մայրն այնտեղ էր: ² Հարսանիքին հրավիրվել էին նաև Հիսուսը և նրա աշակերտները: ³ Երբ գինին պակասեց, մայրը Հիսուսին ասաց.

-Գինի չունեն:

⁴ -Մա՛յր, մե՛զ ինչ,- պատասխանեց Հիսուսը,- իմ ժամանակը դեռ չի հասել:՝

⁵ Սակայն նրա մայրն ասաց սպասավորներին.

-Նա ինչ որ ասի ձեզ, արե՛ք:

⁶ Հրեաների ծիսական մաքրության սովորույթի համաձայն, այնտեղ կային քարե վեց կարասներ, որոնցից յուրաքանչյուրն ութսունից հարյուր լիտր տարողություն ուներ:

⁷ Հիսուսն ասաց սպասավորներին.

-Այդ կարասները ջրո՛վ լցրեք:

Եվ սպասավորները լցրին բերնեբերան: ⁸ Հետո ասաց նրանց.

-Հիմա վերցրե՛ք և սեղանապետի՛ն տվեք:

Եվ նրանք տարան: ⁹ Սեղանապետը համտես արեց գինու փոխված ջուրը, բայց

^{1.48} «Թզենու տակ էիր». Պաղեստինի նման տաք կլիմա ունեցող մի երկրում թզենու ստվերը իդեալական մի վայր էր Աստվածաշունչ կարդալու և նրա մասին խորհրդածելու համար. դրա օրինակները տեսնում ենք ռաբբիական գրականության մեջ:

^{1.51} Ծն 28.12:

^{2.4} «Իմ ժամանակը դեռ չի հասել». Հիսուսի կողմից հաճախ գործածվող այս արտահայտությունն ակնարկություն է երկու հիմնական իրողությունների. ա) ինքն իրեն իբրև Քրիստոս աշխարհին հայտնելու ժամանակը, ինչպիսին է այստեղ (տե՛ս նաև 7.6), և բ) իր գոհագործական մահվան և փառավորման ժամանակը (12.23 և 27,13.1, 17.1: Հմմտ Մտ 26.18: Հհ 7.30):

չիմացավ, թե որտեղից էր. թեև սպասավորները, որոնք լցրել էին ջուրը, գիտեին այդ: Այն ժամանակ սեղանապետը փեսային ¹⁰ ասաց.

- Ամեն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, իսկ երբ մարդիկ հարբում են, այն ժամանակ՝ հասարակը, այնինչ դու մինչև հիմա պահել ես ընտիր գինին:

¹¹ Հիսուսն իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլեայի Կանա քաղաքում: Այնտեղ նա հայտնեց իր փառքը, և աշակերտները հավատացին նրան:

¹² Այս դեպքից հետո Հիսուսն իր մոր, եղբայրների և աշակերտների հետ գնաց Կափառնայում և մի քանի օր մնաց այնտեղ:*

Հիսուսը գնում է տաճար

(Մտ 21.12-13, Մր 11.15-17, Ղկ 19.45-46)

¹³ Հրեաների Չատիկը մոտ էր, և Հիսուսը Երուսաղեմ գնաց: * ¹⁴ Տաճարում տեսավ արջառ, ոչխար և աղավնի վաճառողների, ինչպես նաև լումայափոխների, որոնք նստած էին սեղանների հետևում: * ¹⁵ Պարանից նա մի խարազան շինեց և սկսեց տաճարից դուրս հանել բոլորին՝ իրենց ոչխարներով և արջառներով հանդերձ. լումայափոխների պղնձադրամները ցիրուցան արեց և շուռ տվեց նրանց սեղանները: ¹⁶ Իսկ աղավնեվաճառներին ասաց.

- Վերցրե՛ք դրանք այստեղից և իմ Հոր տունը վաճառատան մի՛ վերածեք:

¹⁷ Այն ժամանակ նրա աշակերտները հիշեցին Սուրբ գրքում գրվածը. «Քո տան նկատմամբ իմ ունեցած նախանձախնդրությունը պիտի այրի ինձ»: * ¹⁸ Սակայն հրեա ղեկավարները հարցրին Հիսուսին.

- Ի՞նչ նշանով կարող ես ցույց տալ մեզ, թե դու իրավունք ունես այդ բաներն անելու:

¹⁹ Հիսուսը պատասխանեց նրանց.

- Քանդեցե՛ք այս տաճարը, և երեք օրից ես կվերաշինեմ այն:*

²⁰ Հրեաներն ասացին.

- Դու երեք օրի՞ց կվերաշինես. քառասունվեց տարի տևեց սրա շինարարությունը:*

²¹ Բայց տաճարը, որի մասին խոսում էր Հիսուսը, իր մարմինն էր: ²² Եվ երբ նա մեռելներից հարություն առավ, աշակերտները հիշեցին, թե ա՛յդ էր նրա ասածը, և հավատացին Սուրբ գրքում գրվածին և Հիսուսի խոսքին:

Հիսուսի առաջին Չատիկը Երուսաղեմում

*2.12 Մի շարք ձեռ. չունեն «և աշակերտների»: «Մնաց» բառի փոխարեն հուն. ունի «մնացին»:

*2.12 Մտ 4.13:

*2.13 «Չատիկ». բռց՝ «Պատեք»: Տե՛ս Մտ 26.2-ի ծնթ:

*2.13 Ելք 12.1-27:

*2.14 «Տաճարում», «վաճառողների», «լումայափոխների». տե՛ս Մտ 21.12-ի ծնթ:

*2.17 Սղ 69.9:

*2.19 Մտ 26.61, 27.40, Մր 14.58, 15.29:

*2.20 «Քառասունվեց տարի տևեց». տաճարի վերակառուցումը Հերովդես Մեծի նախաձեռնությամբ սկսվել էր ՔՄ 20թ., և միայն ՔՀ 64թ. էր, որ այն վերջնականապես ավարտվեց: Այստեղ նրանք ուզում են ասել, որ այդքան տարի է, ինչ տաճարը կառուցվում է: Այս խոսքը միաժամանակ ցույց է տալիս, որ այս դեպքը տեղի է ունենում Հիսուսի առաքելության առաջին տարում՝ 27թ. Չատիկին:

²³ Ձատկի տոնին, մինչ Հիսուսը Երուսաղեմում էր գտնվում, շատերը հավատացին նրան, երբ տեսան նրա հրաշքները: ²⁴ Սակայն Հիսուսը վստահություն չունեի նրանց վրա, որովհետև բոլորին էլ ճանաչում էր ²⁵ և կարիք չունեի որևէ մեկի մասին ուրիշի վկայությանը, քանի որ ինքն արդեն գիտեր, թե ի՞նչ կա մարդկանց սրտի մեջ:

3

Հիսուսը և Նիկողեմոսը

¹ Նիկողեմոս անունով փարիսեցի մի մարդ կար, մի հրեա իշխան, ² որ գիշերով Հիսուսի մոտ եկավ և ասաց նրան.

-Վարդապե՛տ, գիտենք, որ Աստծու կողմից ուղարկված մի ուսուցիչ ես, որովհետև ոչ ոք չի կարող գործել քո կատարած հրաշքները, եթե Աստված նրա հետ չլինի:

³ Հիսուսը պատասխանեց նրան և ասաց.

-Լա՛վ իմացիր, որ եթե մեկը վերստին չծնվի, չի կարող տեսնել Աստծու արքայությունը:

⁴ Նիկողեմոսը հարցրեց նրան.

-Ինչպե՞ս կարող է ծնվել մի մարդ, որ ծեր է: Կարելի՞ քան է, որ նա կրկին մտնի իր մոր որովայնը և ծնվի:

⁵ Հիսուսը պատասխանեց.

-Հաստա՛տ իմացիր, որ եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող մտնել Աստծու արքայությունը, ⁶ որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ հոգուց ծնվածը՝ հոգի: ⁷ Դու մի՛ գարմացիր, որ քեզ ասացի, թե վերստին պիտի ծնվեք: ⁸ Քամին ուր որ ուզում է, այնտեղ էլ փչում է. դու նրա ձայնը լսում ես, բայց չգիտես, թե որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում: Նույնպես և բոլոր նրանք, որոնք Հոգուց են ծնվում:

⁹ Նիկողեմոսը հարցրեց.

-Ինչպե՞ս կարող է պատահել այդ:

¹⁰ Հիսուսը պատասխանեց.

-Դու, որ ուսուցիչ ես նշանակվել Իսրայելի ժողովրդի վրա, չգիտե՞ս այդ: ¹¹ Լա՛վ իմացիր. խոսում ենք, ինչ որ գիտենք, և վկայում ենք նրա մասին, ինչ որ տեսել ենք, բայց դուք մեր վկայությունը չեք ընդունում: ¹² Եթե երկրավոր բաների մասին խոսեցի ձեզ հետ, և չեք հավատում, ինչպե՞ս պիտի հավատաք ինձ, եթե երկնավոր բաների մասին խոսեմ:

Աստծու սերը մարդկանց հանդեպ

¹³ -Ոչ ոք երկինք չի ելել, բացի Մարդու Որդուց, որ իջավ երկնքից, և որ երկնքում է:

՝3.3 «Վերստին» գործածված հուն. բառը նշ է նաև «վերևից», այսինքն՝ Աստծուց, Սուրբ Հոգուց: Հիսուսը հայտնապես բառախաղ է անում նույն բառի գույգ իմաստների վրա (տե՛ս նաև հմր 7):

՝3.8 «Քամին», հուն. նույն բառը նշ է թե՛ «հոգի», թե՛ «քամի»: Այստեղ նույնպես բառախաղ կա նույն բառի գույգ իմաստների վրա:

՝3.12 Իմս 9.16-17:

՝3.13 Մի շարք ձեռ. չունեն «և որ երկնքում է»:

՝3.13 Բրք 3.29:

¹⁴ Եվ ինչպես որ Մովսեսն անապատում բարձրացրեց պղնձե օձը, նույնպես էլ Մարդու Որդին պետք է բարձրանա,* ¹⁵ որպեսզի նա, ով հավատում է նրան, հավիտենական կյանք ունենա. ¹⁶ քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի նա, ով հավատում է նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա. ¹⁷ որովհետև Աստված իր Որդուն աշխարհ ուղարկեց ոչ թե նրա համար, որ դատապարտի աշխարհը, այլ որպեսզի փրկի աշխարհը: ¹⁸ Ով հավատում է նրան, չի դատապարտվի, իսկ ով չի հավատում նրան, արդեն իսկ դատապարտված է՝ Աստծու միածին Որդուն չհավատալու համար:

¹⁹ -Եվ դատապարտությունն այս է. լույսն աշխարհ եկավ, բայց մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը, որովհետև չարություն էին գործում: ²⁰ Ով որ չար գործ է կատարում, ատում է լույսը և չի գալիս դեպի լույսը, որպեսզի իր գործերը հայտնի չդառնան: ²¹ Սակայն ով որ կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դեպի լույսը, որպեսզի հայտնի լինի, թե իր գործերը կատարված են Աստծու կամքի համաձայն:

Հովհաննես Մկրտչի վերջին վկայությունը

²² Այս հանդիպումից հետո Հիսուսն իր աշակերտներով գնաց Հրեաստանի գավառները, որտեղ շրջում էր նրանց հետ և մկրտում: ²³ Նա եկավ Այենոն, Սաղիմի մոտիկ, որտեղ Հովհաննեսն էլ էր մկրտում, որովհետև այնտեղ առատ ջուր կար: Ժողովուրդը գալիս էր Հովհաննեսի մոտ և մկրտվում: ²⁴ Մա տեղի էր ունենում Հովհաննեսի բանտարկությունից առաջ:

²⁵ Հովհաննեսի աշակերտներից ոմանք մի հրեայի հետ սկսեցին վիճել մաքրությանը վերաբերող ծեսերի մասին: ²⁶ Այդ աշակերտները եկան Հովհաննեսի մոտ և ասացին նրան.

-Վարդապետ, նա, որ քեզ հետ էր Հորդանան գետի մյուս կողմում և որի մասին դու վկայություն տվեցիր, ահավասիկ նա՛ էլ է մկրտում, և բոլորն էլ գնում են նրա մոտ:

²⁷ Հովհաննեսը պատասխանեց.

-Մարդ իրենից ոչինչ չի կարող անել, եթե դա նրան վերնից՝ Աստծուց չի տրված:

²⁸ Դուք ներկա էիք, երբ ձեզ ասացի, թե ես Քրիստոսը չեմ, այլ նրանից առաջ ուղարկված մեկը: ²⁹ Ով հարս ունի, նա՛ է փեսան. իսկ փեսայի բարեկամը, որ մոտն է կանգնած, փեսայի ձայնը լսելով՝ մեծապես ուրախանում է: Ես այդ նույն ուրախությունն ունեմ, և իմ ուրախությունը կատարյալ է: ³⁰ Այսուհետև, նրա հեղինակությունը պետք է գորանա, իսկ ես հրապարակից պետք է քաշվեմ:

***3.14 «Պետք է բարձրանա».** այս ակնարկությունն առաջին հերթին խաչ բարձրանալուն է վերաբերում: Բայց բարձանալը նաև նրա փառավորումն է, երբ Մարդու Որդին երկնքում բազմելու է Հոր աջ կողմը (հմմտ 12.32):

***3.14** Թվ 21.9, Բմս 16.5-7:

***3.23 «Այենոն» և «Սաղիմ»** բնակավայրերը գտնվում էին անշուշտ Հորդանան գետի հովտում, սակայն ներկայումս դրանց տեղերն անձանոթ են:

***3.24** Մտ 14.3, Սր 6.17, Ղկ 3.19-20:

***3.25 «Մի հրեայի հետ».** մի շարք ձեռ. ունեն «մի քանի հրեաների հետ»:

***3.27 «Աստծուց».** բոց՝ «երկնքից»:

***3.28** Հհ 1.20:

Նա, որ գալիս է երկնքից

³¹ -Նա, որ Աստծուց է գալիս, բարձր է բոլորից: Նա, որ այս աշխարհից է, այս աշխարհին է պատկանում և երկրավոր բաների մասին է խոսում: Նա, որ երկնքից է գալիս, բարձր է ամենքից.* ³² նա վկայում է իր տեսածների և լսածների մասին, սակայն նրա վկայությունը ոչ ոք չի ընդունում: ³³ Ով որ ընդունում է նրա վկայությունը, հաստատում է, թե Աստված ճշմարիտ է: ³⁴ Նա, որ Աստծու կողմից է ուղարկված, Աստծու խոսքերն է քարոզում, որովհետև Աստված իր Հոգին ամբողջապես նրան է տվել: ³⁵ Հայրը սիրում է Որդուն և ամեն ինչ նրան է հանձնել: ³⁶ Ով որ հավատում է Որդուն, հավիտենական կյանք կունենա, իսկ ով որ չի հնազանդվում Որդուն, կյանք չի ունենա, այլ նրա վրա Աստծու պատիժը կգա:

4

Հիսուսը և սամարացի կինը

¹⁻² Փարիսեցիները լսեցին, որ Հիսուսը շատ ավելի հետևորդներ է շահում և մկրտում, քան Հովհաննեսը (թեև Հիսուսն անձամբ չէր մկրտում, այլ մկրտողները նրա աշակերտներն էին): Երբ Հիսուսն իմացավ այդ մասին,* ³ թողեց Հրեաստանը և կրկին գնաց Գալիլեա: ⁴ Նա ստիպված էր անցնել Սամարիայով: ⁵ Ճանապարհին եկավ Սյուքար, որ Սամարիայի քաղաքներից մեկն էր, մոտիկ այն տեղին, որ Հակոբը տվել էր իր որդուն՝ Հովսեփին: ⁶ Այնտեղ գտնվում էր նաև Հակոբի ջրհորը: Հիսուսը, ճանապարհորդությունից հոգնած, նստեց ջրհորի մոտ: Գրեթե կեսօր էր:

⁷ Սամարացի մի կին եկավ ջուր քաշելու: Հիսուսն ասաց նրան.

- Ինձ խմելու ջուր տուր:

⁸ (Մինչ այդ աշակերտները քաղաք էին գնացել ուտելիք գնելու:)

⁹ Սամարացի կինն ասաց.

- Դու, որ հրեա ես, ինչպե՞ս ես ինձնից՝ սամարացի մի կնոջից խմելու ջուր ուզում: (Քանի որ հրեաները սամարացիների հետ երբեք շփում չեն ունենում:)*

¹⁰ Հիսուսը պատասխանեց.

- Եթե գիտենայիր Աստծու պարզը և թե ո՞վ է, որ քեզ ասում է՝ ինձ խմելու ջուր տուր, հավանաբար դու ինքդ կուզեիր նրանից, և նա քեզ կենսատու ջուր կտար:*

^{3.31} «Նա, որ Աստծուց է գալիս». Հովհաննես Մկրտիչն այստեղ վկայում է Քրիստոսի աստվածային ծագման մասին: Մի շարք ձեռ. չունեն «բարձր է բոլորից»:

^{3.35} Մտ 11.27, Ղկ 10.22:

^{4.1} «Հիսուսը». շատ ձեռ. ունեն «Տերը»:

^{4.5} Ծն 33.19, Հս 24.32:

^{4.9} «Քանի որ հրեաները սամարացիների հետ երբեք շփում չեն ունենում» կամ «Քանի որ հրեաները սամարացիների գործածած անոթները չեն գործածում». ծիսականորեն չպղծվելու համար (տե՛ս Բառարանի Սամարացի բառահոդվածը):

^{4.9} Եզր 4.1-5, Նմ 4.1-2:

^{4.10} «Կենսատու ջուր». բոց՝ «կենդանի ջուր». սա եբր. մի արտահայտություն է հոսուն ջուր նշելու համար, ի տարբերություն լճացած ջրի: Բայց Հիսուսը մի տեսակ բառախաղ է անում այս արտահայտությամբ՝ դրանով նշելու համար իր պարզելիք Ս. Հոգին (հմմտ 7.37-39), որ

¹¹ Կինն ասաց.

-Տե՛ր, դու անգամ դույլ չունես, և ջրհորը խորն է. ուրեմն կենսատու ջուր որտեղի՞ց պիտի ունենաս: ¹² Մի՞ թե դու ավելի մեծ ես, քան մեր նախահայրը՝ Հակոբը, որ մեզ տվեց այս ջրհորը, որտեղից խմեցին ինքը, իր որդիներն ու իր անասունները:

¹³ Հիսուսը պատասխանեց.

-Ով որ խմի այս ջրից, դարձյալ կծարավի, ¹⁴ Բայց ով որ խմի իմ տալիք ջրից, հավիտյան չի ծարավի: Ընդհակառակը, այն ջուրը, որ ես նրան եմ տալու, նրա մեջ կվերածվի մի աղբյուրի, որ ջուր է բխեցնում և հավիտենական կյանք է տալիս:

¹⁵ Կինն ասաց.

-Տե՛ր, տո՛ւր ինձ այդ ջուրը, որպեսզի չծարավեմ և այստեղ չգամ ջուր քաշելու:

¹⁶ Հիսուսն ասաց.

-Գնա՛, կանչի՛ր ամուսնուդ և դարձյալ արի՛ այստեղ:

¹⁷ -Ամուսին չունեմ,- պատասխանեց կինը:

Հիսուսն ասաց.

-Ճիշտ ասացիր, թե ամուսին չունես, ¹⁸ որովհետև հինգ ամուսին ես ունեցել, և նա, ում հետ ապրում ես, քո ամուսինը չէ. այդ ճիշտ ասացիր:

¹⁹ -Կինն ասաց.

-Տե՛ր, ինձ թվում է, թե դու մարգարե ես: ²⁰ Մեր հայրերը այս լեռան վրա պաշտեցին Աստծուն, բայց դուք՝ հրեաներդ, ասում եք, թե Երուսաղեմն է այն վայրը, որտեղ պետք է պաշտել Աստծուն:

²¹ Հիսուսն ասաց.

-Ո՛վ կին, հավատա՛ ինձ, որ կգա ժամանակը, երբ ո՛չ այս լեռան վրա և ո՛չ էլ Երուսաղեմում չեք պաշտի Հորը: ²² Դուք՝ սամարացիներդ, Աստծուն պաշտում եք առանց ճանաչելու նրան, մինչ մենք՝ հրեաներս, Աստծուն պաշտում ենք՝ ճանաչելով նրան, որովհետև փրկությունը հրեաներից է գալու: ²³ Բայց կգա ժամանակ, և արդեն իսկ եկել է, երբ ճշմարիտ երկրպագուները Հորը կպաշտեն հոգով և ճշմարտությամբ, որովհետև Հայրն էլ է ուզում, որ իր երկրպագուները այդպիսին լինեն: ²⁴ Հոգի է Աստված, և նրա երկրպագուները պետք է հոգով և ճշմարտությամբ պաշտեն նրան:

²⁵ Կինն ասաց Հիսուսին.

-Գիտեմ, որ Մեսիան, այսինքն՝ Քրիստոսը, կգա. երբ նա գա, ամեն ինչ կպատմի մեզ:

²⁶ Հիսուսն ասաց.

-Ե՛ս եմ նա, ես, որ խոսում եմ քեզ հետ:

²⁷ Հենց այդ ժամանակ աշակերտները վերադարձան և զարմացան, որ Հիսուսը խոսում էր այդ կնոջ հետ, բայց նրանցից ոչ մեկը չհարցրեց՝ «Ի՞նչ ես ուզում» կամ՝ «Ի՞նչ ես խոսում նրա հետ»:

հավիտենական կյանք է տալիս:

4.20 «Այս լեռան վրա պաշտեցին Աստծուն». ՔԱ 5-րդ դարում սամարացիները հրեությունից արտաքսվեցին գտարյուն հրեաների կողմից, և իրենց համար առանձին տաճար կառուցեցին Գարիզիմ լեռան վրա, հին Մյուքեմ քաղաքի մոտակայքում, որտեղ Աբրահամ և Հակոբ նահապետները Աստծուն նվիրված զոհասեղան էին շինել:

²⁸ Այն ժամանակ կինը թողեց իր սափորը, գնաց քաղաք և ասաց այնտեղի մարդկանց.

²⁹ -Եկե՛ք, տեսե՛ք. մի մարդ կա, որ իմ բոլոր արածներն ասաց ինձ: Արդյոք նա՞ է Քրիստոսը:

³⁰ Նրանք ելան քաղաքից և եկան Հիսուսի մոտ:

Հիսուսի կերակուրը մարդկանց փրկությունն է

³¹ Մինչ այդ աշակերտներն աղաչում էին Հիսուսին՝ ասելով.

-Վարդապե՛տ, հա՛ց կեր:

³² Հիսուսը պատասխանեց.

-Ես ունեմ ուտելու մի կերակուր, որ դուք չգիտեք:

³³ Աշակերտներն սկսեցին հարցնել միմյանց.

-Արդյոք մեկը նրան կերակո՞ւր է բերել:

³⁴ Հիսուսն ասաց.

-Իմ կերակուրն այն է, որ կատարեմ ինձ ուղարկողի կամքը և իր լրումին հասցնեմ նրա գործը: ³⁵ Չե՞ որ դուք ասում եք. «Չորս ամսից կգա հնձի ժամանակը»: Բայց ես ասում եմ ձեզ. բարձրացրե՛ք ձեր աչքերը և դիտե՛ք արտերը, որ դեղնել են և պատրաստ են հնձվելու: ³⁶ Հնձողն ստանում է իր վարձը և հավիտենական կյանքի համար հունձ է հավաքում, որպեսզի սերմանողն ու հնձողը միասին ուրախանան:

³⁷ Շատ ճիշտ է ասված հետևյալ խոսքը. «Մերմանողն՝ ուրիշ, հնձողն՝ ուրիշ»: ³⁸ Ես ձեզ ուղարկեցի հնձելու այն, որի վրա դուք աշխատանք չէիք թափել: Ուրիշներն աշխատեցին, իսկ դուք նրանց աշխատանքից օգտվեցիք:

³⁹ Այդ քաղաքից շատ սամարացիներ հավատացին կնոջ տված այն վկայությանը, թե՛ «Իմ բոլոր արածներն ասաց ինձ»: ⁴⁰ Հետևաբար, երբ սամարացիները եկան Հիսուսի մոտ, աղաչեցին, որ նա իրենց մոտ մնա, և Հիսուսն այնտեղ մնաց երկու օր:

⁴¹ Տակավին ուրիշ շատերն էլ հավատացին նրան՝ իր խոսքերի համար: ⁴² Նրանք ասում էին կնոջը.

-Այսուհետև հավատում ենք ոչ թե քո խոսքերի համար, այլ որովհետև մենք անձամբ լսեցինք նրան և գիտենք, որ ի՛նքն է ճշմարտապես Փրկիչն աշխարհի:՝

Պալատականի որդու բժշկումը

(Մտ 8.5-13, Ղկ 7.1-10)

⁴³ Երկու օր հետո Հիսուսն այնտեղից մեկնեց և գնաց Գալիլեա: ⁴⁴ Հիսուսն ինքն էր ասել, թե մարգարեն իր գավառում պատիվ չունի,⁴⁵ բայց երբ նա Գալիլեա հասավ, գալիլեացիներն ընդունեցին նրան, որովհետև իրենք էլ տոնի առթիվ Երուսաղեմ էին գնացել և տեսել այն բոլոր հրաշքները, որ նա կատարել էր տոնի ժամանակ:՝

***4.42** «Փրկիչն աշխարհի». մի շարք ձեռ. ավելացնում են «Քրիստոսը»: Սամարացիները, որոնց պատկերացմամբ Մեսիան հավանաբար պարզապես ճշմարտության մի ուսուցիչ պետք է լիներ, այժմ Քրիստոսի մեջ ճանաչեցին նրան, որ Աստուծոց էր եկել աշխարհը փրկելու:

***4.44** Մտ 13.57, Սր 6.4, Ղկ 4.24:

***4.45** Հհ 2.23:

⁴⁶ Հիսուսը դարձյալ եկավ Գալիլեայի Կանա քաղաքը, որտեղ ջուրը գինու էր վերածել: Պալատական մի մարդ կար, որի որդին հիվանդ էր Կափառնայում: ⁴⁷ Երբ նա լսեց, թե Հիսուսը Հրեաստանից Գալիլեա է եկել, գնաց նրա մոտ և աղաչեց, որ Կափառնայում գնա և բժշկի իր որդուն, որը մահամերձ էր:

⁴⁸ Հիսուսը նրան ասաց.

-Մինչև որ նշաններ և հրաշքներ չտեսնեք, չեք հավատա:

⁴⁹ Պալատականն ասաց.

-Տե՛ր, գնանք, քանի դեռ որդիս չի մեռել:

⁵⁰ Հիսուսն ասաց նրան.

-Գնա՛, որդիդ ողջ է:

Պալատականը հավատաց Հիսուսի խոսքին ու գնաց: ⁵¹ Եվ մինչ նա գնում էր, նրա ծառաները ընդառաջ ելան նրան և ավետիս տվեցին՝ ասելով.

-Տղադ առողջացավ:

⁵² -Ո՞ր ժամին ապաքինվեց որդիս, -հարցրեց պալատականը ծառաներին:

Նրանք պատասխանեցին.

-Երեկ կեսօրից հետո ժամը մեկն էր, երբ ջերմը թողեց նրան:

⁵³ Այն ժամանակ հայրն անդրադարձավ, որ ճիշտ այդ ժամին էր, երբ Հիսուսն ասել էր իրեն. «Գնա՛, որդիդ ողջ է»: Եվ հավատացին ինքն ու իր ամբողջ ընտանիքը:

⁵⁴ Սա երկրորդ հրաշքն էր, որ Հիսուսը կատարեց Հրեաստանից Գալիլեա գալուց հետո:

5

Բեթհեզդայի անդամալուծի բժշկումը

¹ Դարձյալ հրեական մի տուն էր, և Հիսուսը Երուսաղեմ գնաց: ² Երուսաղեմ քաղաքի «Ոչխարների դռան» մոտ մի ավազան կար, որ եբրայերեն Բեթհեզդա էր կոչվում, և որը հինգ սրահներ ուներ: ³ Այդ սրահներում կային բազմաթիվ հիվանդներ՝ կույրեր, կաղեր, գոսացածներ, որոնք սպասում էին ավազանի ջրերի խառնվելուն: ⁴ Ժամանակ առ ժամանակ Տիրոջ հրեշտակը իջնում էր ավազանը և ջրերը խառնում, և ով որ ջրերը շարժելուն պես առաջինն էր իջնում ավազանը, բժշկվում էր իր հիվանդությունից:

⁵ Այնտեղ մի մարդ կար, որ երեսունութ տարուց ի վեր հիվանդ էր: ⁶ Երբ Հիսուսը նրան տեսավ այնտեղ պառկած, և իմանալով, որ նա երկար ժամանակ հիվանդ պառկած է, ասաց.

-Ուզո՞ւմ ես առողջանալ:

⁷ Հիվանդը պատասխանեց.

^{4.46} «Պալատական մի մարդ». գրք. «Թագավորազն», որ նշ է Հերովդես Անտիպաս թագավորի ծառայության տակ եղող մի ազնվական:

^{4.46} Հհ 2.1-11:

^{5.2} «Ոչխարների դուռ» անվան հուն. ձևն է «Պրոպատիկե»: «Բեթհեզդա» բառի փոխարեն շատ ձեռ. ունեն «Բեթզաթա»:

^{5.3-4} Շատ ձեռ. չունեն «որոնք սպասում էին ավազանի ջրերի խառնվելուն» և հաջորդ՝ 4-րդ հմբ:

-Տե՛ր, ոչ ոք չունենմ, որ ջրերը շարժելու ժամանակ ինձ ավազանն իջեցնի, և մինչ ես դանդաղում եմ, մեկ ուրիշն ինձնից առաջ է իջնում ավազանը:

⁸ Հիսուսն ասաց նրան.

-Վե՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ և քայլի՛ր:

⁹ Եվ մարդն իսկույն առողջացավ, վեր կացավ, վերցրեց իր մահիճը և սկսեց քայլել: Եվ այդ օրը շաբաթ էր: ¹⁰ Հրեա ղեկավարները բժշկված մարդուն ասացին.

-Օրը շաբաթ է, և Օրենքի դեմ է, որ վերցնես մահիճդ:

¹¹ Մարդը պատասխանեց.

-Ով ինձ բժշկեց, նա՛ ասաց ինձ՝ «Վերցրո՛ւ մահիճդ և քայլի՛ր»:

¹² Նրանք հարցրին.

-Ո՞վ է այդ մարդը, որ քեզ ասաց՝ «Վերցրո՛ւ մահիճդ և քայլի՛ր»:

¹³ Բայց բժշկված մարդը չէր իմանում, թե ով է նա, որովհետև Հիսուսը հեռացել էր այդտեղ գտնվող ամբոխի միջից:

¹⁴ Այս դեպքից հետո Հիսուսն այդ մարդուն գտավ տաճարում և ասաց նրան.

-Ահա դու առողջացար. այլևս մի՛ մեղանչիր, որպեսզի ավելի վատ բան չպատահի քեզ:

¹⁵ Մարդը գնաց և հրեա ղեկավարներին պատմեց՝ ասելով, թե Հիսուսն էր իրեն բժշկողը: ¹⁶ Այս պատճառով նրանք սկսեցին հալածել Հիսուսին, որովհետև նա շաբաթ օրով էր կատարում այս բաները: ¹⁷ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Իմ Հայրը մինչև այժմ գործում է, ես նույնպես գործում եմ:

¹⁸ Այս խոսքի համար հրեաները առավել ևս ուզում էին նրան սպանել, որովհետև ոչ միայն չէր պահում շաբաթ օրը, այլ նաև Աստծուն կոչում էր իր Հայրը՝ ինքն իրեն հավասար դասելով Աստծուն:՝

Որդու իշխանությունը

¹⁹ Հիսուսն ասաց նրանց.

-Հաստա՛տ իմացեք, որ Մարդու Որդին ինքն իրենից ոչինչ չի անում, այլ անում է այն, ինչ տեսնում է, թե Հայրն է կատարում, որովհետև ինչ որ Հայրն է գործում, նույնը գործում է և Որդին:՝ ²⁰ Հայրը սիրում է Որդուն և ցույց է տալիս այն ամենը, ինչ ինքն է կատարում: Եվ դեռ ձեր տեսածներից ավելի սքանչելի գործեր էլ ցույց կտա Որդուն, այնպես որ դուք կզարմանաք: ²¹ Ինչպես որ Հայրը հարություն է տալիս մեռելներին և կենդանացնում նրանց, նույնպես և Որդին կյանք է տալիս, ում որ ուզում է: ²² Եվ Հայրը ոչ մեկի չի դատում, այլ դատելու իշխանությունը ամբողջությամբ հանձնել է Որդուն, ²³ որպեսզի բոլորն էլ պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը: Ով չի պատվում Որդուն, չի պատվում և Հորը, որ ուղարկել է նրան:

^{5.16} «Սկսեցին հալածել Հիսուսին». մի շարք ձեռ. ավելացնում են «և ուզում էին սպանել»:

^{5.18} Իմս 2.16:

^{5.19} Ձեռ. մեծ մասը չունի «Մարդու» բառը: «Ոչինչ չի անում», բոց՝ «ոչինչ չի կարող անել»: Մա անկարողություն կամ ստորադասություն արտահայտող խոսք չէ, այլ ընդհակառակը, ցույց է տալիս այն սերտ միասնությունը, որ ունի Որդին Հոր հետ, որով հնարավոր չէ երևակայել, թե Որդին կկատարի մի բան, որ Հոր կամքը չէ, որովհետև երկուսի կամքը և գործը նույնն են:

²⁴ Լա՛վ իմացեք, ով որ լսում է իմ խոսքը և հավատում է նրան, ով ինձ ուղարկեց, հավիտենական կյանք ունի և չի դատապարտվի, որովհետև նա արդեն իսկ մահից անցել է դեպի կյանք: ²⁵ Հաստատ՛ տ իմացեք, կգա ժամանակ, և արդեն իսկ եկել է, երբ մեռելները կլսեն Աստծու Որդու ձայնը, և լսողները կապրեն: ²⁶ որովհետև, ինչպես Հայրը կյանք պարգևելու գործություն ունի իր մեջ, այդ գործությունը տվել է նաև Որդուն: ²⁷ Նույնպես և դատելու իշխանություն է տվել Որդուն, որովհետև նա Մարդու Որդի է: ²⁸ Ուրեմն մի՛ զարմացեք, որ ասացի ձեզ, թե կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն նրա ձայնը ²⁹ և դուրս կգան նրանք, որ բարիք են գործել, հարություն կառնեն և կապրեն, իսկ նրանք, որ չարիք են գործել, հարություն կառնեն և կդատապարտվեն: ³⁰ Ես ինքս ինձնից դատել չեմ կարող, այլ դատում եմ այնպես, ինչպես լսում եմ իմ Հորից, ուստի և իմ դատաստանն արդար է, որովհետև ոչ թե իմ կամքն եմ գործադրում, այլ կամքը նրա, ով ինձ ուղարկեց:՝

Վկայություն Որդու մասին

³¹ -Եթե իմ անձի մասին վկայողը ես լինեի, այդ վկայությունը կարող էիք չընդունել: ³² Մակայն ուրիշն է, որ վկայում է իմ մասին, և գիտեմ, որ նրա վկայությունը ճշմարիտ է: ³³ Դուք մարդ ուղարկեցիք Հովհաննեսի մոտ, և նա վկայություն տվեց ի նպաստ ճշմարտության:՝ * ³⁴ Բայց ես կարիք չունեմ մարդու կողմից տրված վկայության: Այս ասում եմ, որպեսզի դուք փրկվեք: ³⁵ Հովհաննեսը այն առկայծ ճրագն էր, որ շողում էր, և դուք ուզեցիք միառժամանակ ուրախանալ նրա լույսով: ³⁶ Բայց ես ունեմ իմ մասին տրված մի վկայություն, որ ավելի մեծ է, քան Հովհաննեսի տված վկայությունը: Այն գործերը, որ իմ Հայրն ինձ տվեց, որ կատարեմ, իմ կատարած այդ նույն գործերն են, որ վկայում են իմ մասին, թե Հայրն է ուղարկել ինձ: ³⁷ Եվ Հայրը, որ ինձ ուղարկեց, ի՛նքն է վկայում իմ մասին: Դուք բնավ չեք լսել նրա ձայնը, ոչ էլ տեսել եք նրա դեմքը:՝ * ³⁸ ոչ իսկ նրա խոսքն է տեղ գտել ձեր սրտերում, քանի որ դուք չեք հավատում նրան, որ ինձ ուղարկեց: ³⁹ Քննեցե՛ք Սուրբ գրքերը, քանի որ կարծում եք, թե դրանցով հավիտենական կյանք կունենաք. նույն այդ գրքերն են, որ վկայում են իմ մասին:՝ *

5.29 Դն 12.2:

5.30 «Ես ինքս ինձնից դատել չեմ կարող»։ տե՛ս 5.19-ի ծնթ:

5.32 «Գիտեմ, որ...»։ մի շարք ձեռ. ունեն «դուք գիտեք, որ...»:

5.33 «Հովհաննես»։ խոսքը Հովհաննես Մկրտչի մասին է, որի մոտ հրեա կրոնական իշխանությունները պատգամավորներ ուղարկեցին (հմմտ 1.19):

5.33 Հհ 1.19-27, 3.27-30:

5.35 Սբ 48.1:

5.37 «Հայրը...ինքն է վկայում իմ մասին»։ այս ակնարկությունը վերաբերում է ՀԿ գրքերում Հիսուսի մասին տրված վկայություններին (հմմտ հմբ 38-39), ինչպես նաև նրա մկրտության ժամանակ Հոր տված վկայությանը (տե՛ս 1.33):

5.37 Մտ 3.17, Սբ 1.11, Ղկ 3.22:

5.39 «Քննեցե՛ք» կամ «քննում եք»։ հավանաբար ակնարկվում է այն մեսիակական սպասումը, որ ունեին հրեաները, և որի համար անդադար քննում էին Սուրբ գրքերը (հմմտ 1.45): Մի շարք ձեռ. չունեն «քանի որ կարծում եք, թե դրանցով հավիտենական կյանք կունենաք»:

5.39 Բբք 4.1:

⁴⁰ Դուք, սակայն, չեք ուզում դեպի ինձ գալ, որպեսզի կյանք ունենաք:

⁴¹ Ես մարդկանցից փառաբանություն ընդունելու պետք չունեմ: ⁴² Բայց ճանաչում եմ ձեզ և գիտեմ, որ Աստծու հանդեպ սեր չունեք ձեր սրտերում: ⁴³ Ես եկա իմ Հոր անունով, բայց դուք չեք ընդունում ինձ. մինչդեռ եթե մեկը գա ինքն իր անունով, դուք կընդունեք նրան:

⁴⁴ Դուք ինչպե՞ս կարող եք ինձ հավատալ, երբ իրարից եք փառաբանություն ընդունում և չեք փնտրում այն փառաբանությունը, որ գալիս է միակ Աստծուց: ⁴⁵ Մի՛ կարծեք, թե ես պիտի ամբաստանեմ ձեզ իմ Հոր առաջ: Մովսեսը, որի վրա դուք հույս եք դրել, ի՛նքը պիտի ամբաստանի ձեզ. ⁴⁶ որովհետև, եթե դուք հավատալիք Մովսեսին, անշուշտ կհավատալիք նաև ինձ, քանի որ հենց նա՛ է գրել իմ մասին:

⁴⁷ Բայց եթե նրա գրածին չեք հավատում, ինչպե՞ս պիտի հավատաք իմ խոսքերին:

6

Հինգ հազարի կերակրումը

(Մտ 14.13-21, Մր 6.30-44, Ղկ 9.10-17)

¹ Դրանից հետո Հիսուսը Գալիլեայի լճի հանդիպակաց կողմն անցավ: Լիճը կոչվում էր նաև Տիբերիայի լիճ: ² Մի մեծ բազմություն հետևում էր նրան, քանի որ տեսնում էին այն հրաշքները, որ նա կատարում էր հիվանդների վրա: ³ Հիսուսը լեռ բարձրացավ և իր աշակերտների հետ նստեց այնտեղ: ⁴ Մոտ էր հրեաների Զատկի տոնը:

⁵ Աչքերը բարձրացնելով՝ Հիսուսը տեսավ մի մեծ բազմություն, որ գալիս էր իր մոտ: Նա հարցրեց Փիլիպպոսին.

-Որտեղի՞ց գնենք բավականաչափ հաց, որ սրանք ուտեն:

⁶ Այս ասաց՝ փորձելու համար Փիլիպպոսին, քանի որ ինքը գիտեր, թե ի՛նչ էր անելու: ⁷ Փիլիպպոսը պատասխանեց.

-Երկու հարյուր արծաթ դահեկանի հաց էլ չի բավարարի սրանց, թեկուզև յուրաքանչյուրը մի պատառ վերցնի:

⁸ Նրա աշակերտներից մեկ ուրիշը՝ Անդրեասը, որ Սիմոն Պետրոսի եղբայրն էր, ասաց նրան.

⁹ -Այստեղ մի պատանի կա, որ հինգ զարեհաց և երկու ձուկ ունի, բայց այդքանն ի՞նչ է այսքան մարդկանց համար:

¹⁰ -Նստեցրե՛ք ժողովրդին, -ասաց Հիսուսը:

Խոտն առատ էր այնտեղ: Եվ շուրջ հինգ հազար մարդիկ նստեցին գետնին:

¹¹ Հիսուսն առավ հացը, շնորհակալություն հայտնեց Աստծուն և բաշխեց նստածներին: Առնելով ձկները՝ նա նույն բանն արեց, և ժողովուրդը վերցրեց, ով ինչքան կամեցավ: ¹² Երբ կշտացան, Հիսուսն իր աշակերտներին ասաց.

^{6.1} «Տիբերիայի լիճ». Գալիլեայի լիճն է, որ կոչվում էր նաև Գեննեսարեթի լիճ (տե՛ս Ղկ 5.1): Այս անունը գալիս է Տիբերիա քաղաքից, որը գտնվում էր Գալիլեայի լճի արևմտյան ափին (տե՛ս հմր 23):

^{6.7} «Երկու հարյուր արծաթ դահեկանի». տե՛ս Մր 6.37-ի ծնթ:

^{6.11} «Բաշխեց նստածներին». մի շարք ձեռ. ունեն «բաշխեց իր աշակերտներին, և աշակերտներն էլ՝

-Հավաքեցէ՛ք ավելացած կտորտանքները, որպէսզի ոչ մի բան չկորչի:

¹³ Աշակերտները հավաքեցին բազմացած հինգ զարեհացի կտորտանքները, որ ավելացել էին ժողովրդի կերածից, և տասներկու սակառ լցրին: ¹⁴ Իսկ մարդիկ, երբ տեսան Հիսուսի գործած այս հրաշքը, ասացին.

-Իսկապէս սա՛ է մարգարեն, որ աշխարհ էր գալու:՝

¹⁵ Երբ Հիսուսն իմացավ, որ գալու են բռնությամբ իրեն թագավոր դարձնելու, առանձին դարձյալ լեռը բարձրացավ:

Հիսուսը քայլում է ջրերի վրա

(Մտ 14.22-23, Մր 6.45-52)

¹⁶ Երեկոյան Հիսուսի աշակերտները իջան լճի եզերքը ¹⁷ և նավակ մտնելով՝ սկսեցին գնալ լճի մյուս կողմը, դեպի Կափառնայում: Երբ մութն ընկավ, Հիսուսը տակավին իրենց մոտ չէր եկել: ¹⁸ Լիճն ավելոծվում էր ուժեղ քամուց:

¹⁹ Աշակերտները հազիվ հինգ կամ վեց կիլոմետր էին նավարկել, երբ տեսան Հիսուսին, որը, լճի վրա քայլելով, մոտենում էր նավակին: Բոլորն էլ սարսափեցին:

²⁰ Հիսուսն ասաց նրանց.

-Ես եմ, մի՛ վախեցեք:

²¹ Նրանք ուզում էին նավի մեջ առնել նրան, բայց շուտով նավակը հասավ այն տեղը, ուր գնում էին:

Հիսուսը՝ կյանքի հաց

²² Հաջորդ օրը ժողովուրդը, որ մնացել էր լճի մյուս կողմում, նկատեց, որ այնտեղ միայն մեկ նավակ կար, որի մեջ մտել էին Հիսուսի աշակերտները և առանձին գնացել, իսկ Հիսուսն աշակերտների հետ նավակ չէր մտել: ²³ Հետո Տիբերիայից ուրիշ նավակներ էլ եկան այնտեղ, որտեղ Հիսուսը, գոհություն տալով Աստծուն, բազմացրել էր հացը և տվել ժողովրդին, որ ուտեն: ²⁴ Ժողովուրդը տեսնելով, որ Հիսուսն այնտեղ չէ, և ոչ էլ նրա աշակերտները, նավակներն առան և եկան Կափառնայում՝ փնտրելու Հիսուսին: ²⁵ Երբ նրան գտան լճի մյուս կողմում, հարցրին.

-Վարդապէ՛տ, ե՛րբ եկար այստեղ:

²⁶ Հիսուսը նրանց պատասխանեց.

-Ասում եմ ձեզ, վստահաբար դուք ինձ փնտրում եք ոչ թե որովհետև հրաշքներ տեսաք, այլ որովհետև կերաք այդ հացից և կշտացաք: ²⁷ Փոխանակ կորստյան ենթակա ուտելիքը փնտրելու, ջանացե՛ք ապահովել այն կերակուրը, որ մնում է հավիտենական կյանքում: Այդ կերակուրը Մարդու Որդին կտա ձեզ, որովհետև

նստածներին»:

^{6.14} «Մարգարեն, որ աշխարհ էր գալու». այս ակնարկությունը վերաբերում է Բ Օր 18.18-ի աստվածային խոստումին: Այստեղ Քրիստոսը տառացիորեն հանդես է գալիս Մովսեսի նմանությամբ, որն անապատում հաց և ջուր հայթայթեց իր ժողովրդին:

^{6.23} «Տիբերիա». տե՛ս 6.1-ի ծնթ: «Որտեղ Հիսուսը ...որ ուտեն». մի շարք ձեռ. ունեն «որտեղ հացը կերան»:

Հայրը՝ Աստված, իր հավանության կնիքն է դրել նրա վրա։

²⁸Նրանք հարցրին.

-Ի՞նչ անենք, որ Աստծու ուզած գործերը կատարած լինենք:

²⁹Հիսուսը պատասխանեց նրանց.

-Աստծու ուզած գործն այն է, որ դուք հավատաք նրան, ում նա ուղարկեց:

³⁰Նրանք ասացին.

-Ի՞նչ հրաշք կգործես, որպեսզի տեսնենք և հավատանք քեզ. ի՞նչ գործ կկատարես:

³¹Մեր հայրերը մանանան կերան անապատում, ինչպես որ գրված է. «Երկնքից հաց տվեց նրանց ուտելու համար»:

³²Հիսուսն ասաց նրանց.

-Ճշմարտությունն էմ ասում ձեզ, ինչ որ Մովսեսը ձեզ տվեց, երկնքից իջած հացը չէր: Իմ Հայրն է, որ տալիս է ձեզ երկնքից իջած ճշմարիտ հացը. ³³որովհետև Աստծու տված հացը այն է, որ իջնում է երկնքից և կյանք է տալիս աշխարհին:

³⁴Նրանք ասացին.

-Տե՛ր, մի՛ շտ տուր մեզ այդ հացը:

³⁵Հիսուսն ասաց նրանց.

-Ես էմ կյանքի հացը: Ով գալիս է դեպի ինձ, քաղց չի զգա բնավ, և ով հավատում է ինձ, չի ծարավի երբեք: ³⁶Բայց այժմ ասացի ձեզ. դուք ինձ տեսաք և դեռ չեք հավատում: ³⁷Բոլոր նրանք, ում Հայրն ինձ է տալիս, կզան ինձ մոտ, և ով ինձ մոտ կզա, չեմ մերժի նրան. ³⁸որովհետև ես երկնքից իջա ոչ թե իմ կամքը կատարելու համար, այլ նրա կամքը, ով ինձ ուղարկեց: ³⁹Ինձ ուղարկող իմ Հոր կամքն այս է. որ չկորցնեմ նրանցից ոչ մեկին, որ նա տվել է ինձ, այլ վերջին օրը հարություն առնել տամ նրան: ⁴⁰Իմ Հոր կամքն այս է. ով տեսնի Որդուն և հավատա նրան, հավիտենական կյանք կունենա, և ես վերջին օրը հարություն առնել կտամ նրան:

⁴¹Հրեաներն սկսեցին տրտնջալ նրանից, որովհետև ասել էր, թե՛ «Ես էմ երկնքից իջած հացը», ⁴²և հարցնում էին.

-Այս մարդը Հովսեփի որդին՝ Հիսուսը չէ՞, որի հորն ու մորը մենք ճանաչում ենք: Ինչպե՛ս է ուրեմն ասում՝ «Ես երկնքից իջա»:

⁴³Հիսուսը պատասխանեց նրանց.

-Բավական է քրթմնջաք իրար մեջ. ⁴⁴ոչ ոք չի կարող գալ դեպի ինձ, եթե ինձ ուղարկող Հայրը նրան չբերի դեպի ինձ, և ես վերջին օրը հարություն առնել կտամ նրան: ⁴⁵Մարգարեների գրքում գրված է. «Ամեն մարդ Աստծուց սովորած պիտի լինի»: Ով որ լսում է իմ Հորից և նրանից է սովորում, գալիս է դեպի ինձ: ⁴⁶Ոչ ոք Հորը չի տեսել, բացի նրանից, ով Աստծուց է, որովհետև միայն նա՛ է տեսել Հորը. ⁴⁷և ես ասում էմ ձեզ՝ ով որ հավատա ինձ, հավիտենական կյանք ունի: ⁴⁸Ես էմ կյանքի հացը: ⁴⁹Ձեր հայրերը մանանան կերան անապատում, բայց մեռան. ⁵⁰մինչդեռ ով ուտի երկնքից

^{6.27} Սբ 24.19-22:

^{6.31} Ելք 16.4, 15, Սղ 18.24, Բմս 16.20-21:

^{6.45} Ես 54.13:

^{6.47} Շատ ձեռ. չունեն «ինձ» բառը:

իջած հացից, չի մեռնի: ⁵¹ Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. ով ուտի այս հացից, հավիտյան կապրի: Այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է. ես այն տալիս եմ, որպեսզի աշխարհը կյանք ունենա:

⁵² Այս խոսքի վրա հրեաներն սկսեցին բռն կերպով վիճել իրար հետ՝ ասելով.

-Այս մարդն ինչպե՞ս կարող է իր մարմինը մեզ տալ՝ ուտելու համար:

⁵³ Հիսուսն ասաց նրանց.

-Լա՛վ իմացեք, եթե չուտեք Մարդու Որդու մարմնից և չխմեք նրա արյունից, կյանք չեք ունենա ձեր մեջ: ⁵⁴ Ով ուտի իմ մարմնից և խմի իմ արյունից, հավիտենական կյանք կունենա, և ես վերջին օրը հարություն առնել կտամ նրան, ⁵⁵ քանի որ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, իսկ իմ արյունը՝ ճշմարիտ խմելիք: ⁵⁶ Ով ուտի իմ մարմնից և խմի իմ արյունից, կբնակվի իմ մեջ, և ես՝ նրա մեջ: ⁵⁷ Ինչպես Հայրը, որ ինձ ուղարկեց, ապրում է, ես էլ ապրում եմ նրանով: Նմանապես, ով ուտի իմ մարմնից, կապրի ինձանով: ⁵⁸ Այս է երկնքից իջած հացը: Սա նման չէ այն մանանային, որ ձեր հայրերը կերան և ապա մեռան: Ով որ այս հացն ուտի, հավիտյան կապրի:

⁵⁹ Հիսուսն այս խոսքերն ասաց, երբ ուսուցանում էր Կափառնայումի ժողովարանում:

Հավիտենական կյանքի խոսքեր

⁶⁰ Երբ աշակերտներից շատերը լսեցին այս խոսքերը, ասացին.

-Դժվար է ընդունել քո այս խոսքը, ո՞վ կարող է այն լսել:

⁶¹ Հիսուսը երբ իմացավ, որ աշակերտները դրա համար էին տրտնջում, ասաց նրանց.

-Դա ձեզ գայթակղեցնո՞ւմ է: ⁶² Ի՞նչ պիտի անեք հապա, եթե տեսնեք, որ Մարդու Որդին ելնում է այնտեղ, որտեղ նախապես էր: ⁶³ Աստծու Հոգին է, որ կյանք է տալիս. մարդը ոչ մի բան անել չի կարող: Այն խոսքերը, որ ես ասացի ձեզ, գալիս են Աստծու Հոգուց և կյանք են տալիս: ⁶⁴ Բայց ձեզնից ոմանք չեն հավատում:

(Հիսուսն այս ասաց, քանի որ սկզբից գիտեր, թե ովքե՛ր են նրանք, որ չեն հավատում, և ո՞վ է նա, որ մատնելու էր իրեն:)⁶⁵ Եվ ավելացրեց.

-Չենց դրա համար ասացի ձեզ, թե ոչ ոք չի կարող գալ դեպի ինձ, եթե իմ Հայրը այդ շնորհը չտա նրան:

⁶⁶ Այս խոսքերի պատճառով աշակերտներից շատերը հեռացան և այլևս չէին շրջում նրա հետ: ⁶⁷ Հիսուսը հարցրեց տասներկու աշակերտների.

-Մի՞ թե դուք էլ եք ուզում գնալ:

⁶⁸ Միմոն Պետրոսը պատասխանեց.

-Տե՛ր, ո՞ւմ մոտ գնանք. հավիտենական կյանք տվող խոսքերը դո՛ւ ունես: ⁶⁹ Մենք հավատացինք և իմացանք, որ դո՛ւ ես Քրիստոսը՝ Աստծու Սուրբը:

⁷⁰ Հիսուսն ասաց նրանց.

^{6.63} Իմս 9.13-18:

^{6.68-69} Մտ 16.16, Սր 8.29, Ղկ 9.20:

^{6.69} «Աստծու Սուրբը». մի շարք ձեռ. ունեն «Աստծու Որդին» կամ «կենդանի Աստծու Որդին»:

-Չէ՞ որ ես էի, որ ընտրեցի ձեզ՝ տասներկուսիդ. բայց ձեզանից մեկը սատանա է:⁷¹ Հիսուսն ակնարկում էր Սիմոնի որդի Հուդա Իսկարիովտացուն, որը մատնելու էր նրան, և նա տասներկու աշակերտներից մեկն էր:⁷

7

Հիսուսի եղբայրները չեն հավատում

¹ Դրանից հետո Հիսուսը շրջում էր Գալիլեայում, քանի որ չէր ուզում Հրեաստանում շրջել, որովհետև հրեա ղեկավարներն ուզում էին սպանել նրան:

² Երբ հրեաների Տաղավարահարաց տոնը մոտեցավ,³ Հիսուսի եղբայրներն ասացին նրան.

-Ե՛լ այստեղից և գնա՛ Հրեաստան, որպեսզի քո հետևորդներն էլ տեսնեն այն գործերը, որ դու կատարում ես. ⁴ որովհետև ով որ ուզում է մարդկանց մեջ հայտնի լինել, թաքուն չի գործում: Եթե դու այս գործերը կատարում ես, ուրեմն քեզ ճանաչե՛լ տուր աշխարհին:

⁵ Արդարև, նրա եղբայրներն իսկ դեռևս չէին հավատացել նրան: ⁶ Հիսուսն ասաց նրանց.

-Իմ ժամանակը դեռ չի հասել, բայց ձեզ համար ժամանակի հարց չկա: ⁷ Աշխարհը չի կարող ատել ձեզ, բայց ինձ ատում է, որովհետև երբ ես խոսում եմ աշխարհի մասին, վկայում եմ, թե մարդկանց գործերը չար են: ⁸ Դուք գնացե՛ք այդ տոնակատարությանը. ես չեմ գնա, որովհետև իմ ժամանակը դեռ չի հասել:⁹

⁹ Այս ասաց և մնաց Գալիլեայում: ¹⁰ Բայց նրա եղբայրների գնալուց հետո ինքն էլ գնաց տոնակատարությանը, ոչ թե բացահայտ կերպով, այլ ծածուկ:

Հիսուսը Երուսաղեմում Տաղավարահարաց տոնին

¹¹ Տոնակատարության ժամանակ հրեա ղեկավարները Երուսաղեմում փնտրում էին Հիսուսին և հարցնում.

-Ո՞ւր է նա:

¹² Ժողովրդի մեջ նրա մասին շշուկ կար: Ոմանք ասում էին.

-Լավ մարդ է:

Իսկ ուրիշներն ասում էին.

-Ո՞չ, ընդհակառակը, մոլորեցնում է ժողովրդին:

^{6.70} «Սատանա» բառն այստեղ հատուկ անուն չէ, այլ ածական, որ նշ է «փորձիչ»:

^{6.71} «Հուդա Իսկարիովտացուն». մի շարք ձեռ. ունեն «Հուդային, որը Կարիտից էր»:

^{7.2} «Տաղավարահարաց տոնը» տեղի էր ունենում աշնանը և զուգադիպում էր վերջին բերքահավաքի տոնին: Այդ տոնը կատարվում էր Երուսաղեմում ու նրա շրջակայքում և հատուկ առիթ էր ուխտավորության: Այն տարածվում էր ութ օրերի վրա, երբ հրեաները հիշատակում էին իրենց հայրերի բնակությունն անապատում և ըստ այնմ էլ տոնի բոլոր օրերն անցկացնում էին դալար ճյուղերով պատրաստված տաղավարներում կամ հյուղակներում:

^{7.2} Ղև 23.34, Բ Օր 16.13:

^{7.6} «Իմ ժամանակը դեռ չի հասել». տե՛ս 2.4-ի ծնթ:

^{7.8} «Ես չեմ գնա». մի շարք ձեռ. ունեն «ես առայժմ չեմ գնա»:

¹³ Բայց ոչ ոք համարձակ չէր խոսում նրա մասին՝ վախենալով հրեա ղեկավարներին:

¹⁴ Տաղավարահարաց տոնակատարության մոտավորապես կեսին Հիսուսը տաճար էլավ և սկսեց ուսուցանել: ¹⁵ Հրեաները զարմանում էին և ասում.

-Այս մարդը ինչպե՞ս գիտե Սուրբ գրքերը, երբ դրանք բնավ չի սովորել:

¹⁶ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Ինչ որ ուսուցանում եմ ձեզ, իմ վարդապետությունը չէ, այլ նրանը, ով ինձ ուղարկեց: ¹⁷ Ով որ ուզում է Աստծու կամքը կատարել, կհասկանա, թե Աստծո՞ւց է արդյոք այս վարդապետությունը, թե՞ ես իմ հեղինակությամբ եմ խոսում: ¹⁸ Ով որ իր հեղինակությամբ է խոսում, իր անձի համար է փառք փնտրում, իսկ ով որ փնտրում է իրեն ուղարկողի փառքը, նա ճշմարիտ է, և խաբեություն չկա նրա մեջ: ¹⁹ Օրենքը ձեզ Մովսեսը չտվե՞ց. բայց ձեզանից ոչ ոք Օրենքին չի հնազանդվում: ²⁰ Ինչո՞ւ եք ուզում սպանել ինձ:

Ժողովուրդը պատասխանեց.

-Դիվահա՞ր ես, ի՞նչ ես, ո՞վ է ուզում քեզ սպանել:

²¹ Հիսուսը պատասխանեց.

-Մի հրաշք գործեցի, և բոլորդ էլ վրդովվել եք: ²² Մովսեսը հրահանգեց թլփատել ձեր որդիներին (թեև Մովսեսը չէր, որ սկսեց, այլ ձեր նախահայրերը), և դուք նրանց թլփատում եք շաբաթ օրով: ²³ Եթե դուք շաբաթ օրով թլփատում եք մեկին, որպեսզի չբեկանվի Մովսեսի Օրենքը, ինչո՞ւ եք իմ դեմ զայրացած այն բանի համար, որ մի մարդու ամբողջապես բժշկեցի շաբաթ օրով: ²⁴ Երևույթներից մի՛ դատեք, այլ արդար դատաստան արեք:

Վեճ Քրիստոսի անձի շուրջ

²⁵ Երուսաղեմի բնակիչներից ոմանք ասացին.

-Սա չէ՞ այն մարդը, որին մեր ղեկավարներն ուզում են սպանել: ²⁶ Տեսե՛ք, նա բացեփրաց խոսում է, և նրա դեմ ոչ մի բան չեն ասում: Կարո՞ղ է պատահել, որ նրանք էլ իմացան, թե իսկապես սա է Քրիստոսը: ²⁷ Բայց երբ Քրիստոսը գա, ոչ ոք չի գիտենա, թե նա որտեղի՞ց է, մինչդեռ մենք գիտենք սրա որտեղից լինելը:

²⁸ Հիսուսը տաճարում ուսուցանելիս բարձրաձայն ասաց.

-Դուք ասում եք, թե ճանաչում եք ինձ և գիտեք իմ որտեղից լինելը: Բայց ես չեմ եկել իմ հեղինակությամբ. սակայն նա, ով ինձ ուղարկեց, վստահելի է, թեպետև դուք չեք ճանաչում նրան: ²⁹ Ես ճանաչում եմ նրան, որովհետև նրա կողմից եմ գալիս, և նա՛ ուղարկեց ինձ:

³⁰ Այս խոսքի համար ուզում էին նրան բռնել, բայց ոչ ոք ձեռք չդիպեց, որովհետև նրա ժամանակը դեռ չէր հասել: ³¹ Սակայն ժողովրդից շատերը հավատացին նրան և ասում էին.

7.22 ա Ղև 12.3: ք Ծն 17.10:

7.23 Հհ 5.9:

7.26 Շատ ձեռ. չունեն «իսկապես» բառը:

-Երբ Քրիստոսը գա, մի՞ թե ավելի հրաշքներ պիտի կատարի, քան այս մարդը:

Փարիսեցիներն ուզում են ձերբակալել Հիսուսին

³² Փարիսեցիները, երբ լսեցին Հիսուսի մասին ժողովրդի մեջ եղած շուրջները, իրենք և ավագ քահանաները սպասավորներ ուղարկեցին՝ ձերբակալելու նրան: ³³ Հիսուսն ասաց իր շուրջը գտնվող մարդկանց.

-Մի փոքր ժամանակ ևս ձեզ հետ եմ և ապա պիտի գնամ նրա մոտ, ով ինձ ուղարկեց: ³⁴ Կփնտրեք ինձ, բայց չեք գտնի, որովհետև չեք կարող գալ այնտեղ, ուր ես եմ գնում:

³⁵ Հրեա ղեկավարներն ասացին միմյանց.

-Նա ո՞ւր պիտի գնա, որ մենք նրան չգտնենք: Արդյոք հեթանոսների մեջ ցրված հրեաների՞ մոտ պիտի գնա, կամ արդյոք հեթանոսների՞ն պիտի ուսուցանի: ³⁶ Ի՞նչ է նշանակում նրա ասած խոսքը, թե՛ «Կփնտրեք ինձ, բայց չեք գտնի, որովհետև չեք կարող գալ այնտեղ, ուր ես եմ գնում»:

Կյանքի ջրի աղբյուրը

³⁷ Տոնի վերջին և հանդիսավոր օրը Հիսուսը ոտքի կանգնած, բարձրաձայն ասում էր.

-Ով ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի: ³⁸ Ով հավատում է ինձ, ինչպես Սուրբ գիրքն է ասում՝ «Նրա սրտից կենսատու ջրի գետեր պիտի բխեն»:

³⁹ Նա այս ասում էր Հոգու մասին, որին ընդունելու էին իրեն հավատացողները, իսկ Հոգին տակավին չէր տրված, քանի դեռ Հիսուսը փառավորված չէր:

Կրկին վեճ Հիսուսի անձի շուրջ

⁴⁰ Ժողովրդից ոմանք, երբ լսեցին այս խոսքերը, ասացին.

-Սա՛ է ճշմարիտ մարգարեն:

⁴¹ Ուրիշներն ասում էին.

-Քրիստոսն է:

Իսկ ոմանք ասում էին.

-Մի՞ թե Գալիլեայից է գալու Քրիստոսը: ⁴² Սուրբ գիրքը չի՞ ասում, թե Քրիստոսը Դավիթ թագավորի սերնդից է լինելու և Դավթի քաղաքում Բեթղեհեմում է ծնվելու:

⁴³ Եվ Հիսուսի պատճառով տարակարծություններ առաջ եկան ժողովրդի մեջ:

⁴⁴ Ոմանք ուզեցին ձերբակալել նրան, բայց ոչ ոք չհամարձակվեց ձեռք դիպցնել:

⁴⁵ Երբ տաճարի պահակները վերադարձան, ավագ քահանաներն ու փարիսեցիները հարցրին նրանց.

^{7.34} «Ուր ես եմ գնում». հուն. ունի «ուր ես եմ»: Նույնը՝ հմր 36-ում:

^{7.35} «Հեթանոսների». հուն. ունի «հույների»: Աստվածաշնչում այս բառը հաճախ գործածվում է բոլոր ոչ հրեաներին նշելու համար:

^{7.37} Դև 23.36:

^{7.38} Եզկ 47.1, Չք 14.8:

^{7.39} «Իսկ Հոգին». մի շարք ձեռ. ունեն «իսկ Սուրբ Հոգին»:

^{7.40} «Ոմանք». մի շարք ձեռ. այս բառի փոխարեն ունեն «շատերը»:

^{7.42} Բ Թգ 7.12, Սք 5.2:

-Ինչո՞ւ այստեղ չբերեցիք նրան:

⁴⁶ Պահակները պատասխանեցին.

-Այդ մարդու նման խոսող մարդ երբեք չենք տեսել:

⁴⁷ Փարիսեցիներն ասացին.

-Ի՞նչ է, դո՞ւք էլ եք խաբվել: ⁴⁸ Իշխանավորներից կամ փարիսեցիներից որևէ մեկը հավատա՞ց նրան: ⁴⁹ Մեր Օրենքը չիմացող տգետ ամբոխը միայն հավատաց: Նրանք արդեն իսկ նգովված են:

⁵⁰ Նիկողեմոսը, որ փարիսեցիներից մեկն էր, և որ նախապես գիշերով եկել էր Հիսուսի մոտ, ասաց նրանց.

⁵¹ -Արդյոք մեր Օրենքը դատո՞ւմ է մի մարդու՝ առանց նախապես լսելու և իմանալու, թե ի՞նչ է արել նա:

⁵² Նրանք պատասխանեցին Նիկողեմոսին.

-Մի՞ թե դու էլ ես Գալիլեայից. քննի՛ր Սուրբ գրքերը և կտեսնես, որ Գալիլեայից մարգարե դուրս չի գա:

⁵³ Ապա ամեն մարդ գնաց իր տուն:

8

Շնացող կինը

¹ Իսկ Հիսուսը գնաց Ձիթենյաց լեռը: ² Առավոտյան վաղ դարձյալ տաճար ելավ: Ամբողջ ժողովուրդը գալիս էր նրա մոտ, և ինքը նստած ուսուցանում էր նրանց:

³ Օրենքի ուսուցիչները և փարիսեցիները Հիսուսի մոտ բերեցին շնության մեջ բռնված մի կնոջ և նրան կանգնեցնելով բոլորի առաջ՝ ⁴ ասացին Հիսուսին.

-Վարդապե՛տ, այս կինը շնություն անելիս տեղնուտեղը բռնվեց: ⁵ Մովսեսն իր տված Օրենքում մեզ պատվիրել է այսպիսիներին քարկոծել: Արդ, դու ի՞նչ ես ասում այս մասին:

⁶ Նրանք այս ասում էին՝ փորձելու համար Հիսուսին, որպեսզի նրան ամբաստանելու պատճառ ունենան: Իսկ Հիսուսը, գեսնին նայելով, մատով հողի վրա գրում էր:

⁷ Երբ նրանք շարունակեցին հարցնել, Հիսուսը վեր նայեց և ասաց նրանց.

-Ձեր միջից անմեղն ի՞նքը թող առաջին քարը գցի նրա վրա:

7.50 Հհ 3.1-2:

7.52 «Գալիլեայից մարգարե դուրս չի գա». անշուշտ, սա տառացիորեն ճիշտ չէ, ապացույց՝ Հովնանը (տե՛ս Դ Թզ 14.25: Հմմտ Հս 19.10-13):

7.53 Այս հմր և այս գլխի առաջին 11 հմր պակասում են թե՛ հուն. հնագույն ձեռ. և թե՛ հայ. շատ ձեռագրերում: Մի շարք ձեռ. այս հատվածը դնում են ուրիշ տեղ, ընդհանրապես՝ Ավետարանի վերջում:

8.1 «Ձիթենյաց լեռ». տե՛ս Մտ 21.1-ի ծնթ:

8.3 «Օրենքի ուսուցիչները և փարիսեցիները». մի շարք ձեռ. այս երկուսի միջև ավելացնում են «*ավագ քահանաները*»:

8.5 Ղև 20.10, Բ Օր 22.22-24:

8.7 Դն 34 [Շուշան]:

⁸ Եվ դարձյալ, գլուխը խոնարհեցնելով, հողի վրա գրում էր: ⁹ Այս խոսքը լսելով՝ բոլորն էլ, մեծից մինչև փոքր, մեկ առ մեկ հեռացան: Հիսուսը մենակ մնաց ու կինը՝ նրա առաջ կանգնած: ¹⁰ Ապա ուղղվեց և հարցրեց կնոջը.

-Ո՛վ կին, որտե՞ղ են քեզ ամբաստանողները, քեզ ոչ ոք չդատապարտե՞ց:

¹¹ Նա պատասխանեց.

-Ոչ ոք, Տե՛ր:

Հիսուսն ասաց.

-Ես էլ քեզ չեմ դատապարտում, գնա՛ և այսուհետև մի՛ մեղանչիր:

Հիսուսը՝ աշխարհի լույսը

¹² Հիսուսը դարձյալ իր խոսքն ուղղեց ժողովրդին՝ ասելով.

-Ես եմ աշխարհի լույսը: Ով որ ինձ հետևի, խավարի մեջ չի քայլի, այլ կունենա այն լույսը, որ առաջնորդում է դեպի կյանք:

¹³ Փարիսեցիներն ասացին.

-Դու ինքդ ես վկայություն տալիս քո անձի մասին, հետևաբար քո վկայությունն ընդունելի չէ:

¹⁴ Հիսուսը պատասխանեց.

-Հակառակ նրան, որ ես եմ վկայություն տալիս իմ մասին, այսուհանդերձ այդ վկայությունը ճշմարիտ է, որովհետև գիտեմ, թե որտեղի՞ց եկա և ո՛ր եմ գնում: Բայց դուք չգիտեք, թե ես որտեղից եմ գալիս և ուր եմ գնում: ¹⁵ Դուք արտաքին երևութներից եք դատում. ես ոչ ոքի չեմ դատում: ¹⁶ Իսկ եթե դատելու լինեմ, իմ դատաստանը ճշմարիտ է, որովհետև ես առանձին չեմ, այլ ինձ հետ է նաև իմ Հայրը, որ ինձ ուղարկեց: ¹⁷ Ձեր Օրենքում իսկ գրված է, որ երբ երկու հոգու վկայությունները համաձայն են լինում միմյանց, ուրեմն այդ վկայությունը ճշմարիտ է: ¹⁸ Ես եմ վկայում իմ մասին, և Հայրը, որ ինձ ուղարկեց, նա էլ է վկայում իմ մասին:

¹⁹ Նրանք հարցրին նրան.

-Որտե՞ղ է քո Հայրը:

Հիսուսը պատասխանեց.

-Դուք ո՛չ ինձ եք ճանաչում և ո՛չ էլ իմ Հորը, որովհետև եթե ինձ ճանաչեիք, ճանաչած կլինեիք նաև իմ Հորը:

²⁰ Հիսուսն այս խոսքերն ասաց տաճարի գանձատանը, երբ ուսուցանում էր: Ոչ ոք չձերբակալեց նրան, որովհետև նրա ժամանակը դեռ չէր հասել:

Ես այս աշխարհից չեմ

^{8.9} «Այս խոսքը լսելով». մի շարք ձեռ. ավելացնում են «և իրենց խղճմտանքում հանդիմանված [զգայով]»:

^{8.10} «Ապա ուղղվեց և». մի շարք ձեռ. ավելացնում են «կնոջից բացի ոչ ոքի չտեսնելով»: Մի շարք ձեռ. չունեն «որտե՞ղ են քեզ ամբաստանողները»:

^{8.12} Իմս 7.26, Մտ 5.14, Հհ 9.5:

^{8.13} Հհ 5.31:

^{8.17} Բ Օր 19.15:

²¹ Հիսուսը դարձյալ ասաց նրանց.

-Ահա ես գնում եմ, դուք պիտի փնտրեք ինձ, բայց մեռնեք ձեր մեղքի մեջ, որովհետև դուք չեք կարող գալ այնտեղ, ուր ես եմ գնում:

²² Հրեաները հարցնում էին միմյանց.

-Ասում է, թե դուք չեք կարող գալ այնտեղ, ուր ես եմ գնում, արդյոք անձնասպա՞ն է լինելու:

²³ Հիսուսը պատասխանեց.

-Դուք այս աշխարհին եք պատկանում, բայց ես վերնից եմ գալիս. դուք այս աշխարհից եք, բայց ես այս աշխարհից չեմ: ²⁴ Ահա սրա համար ասացի ձեզ, պիտի մեռնեք ձեր մեղքերի մեջ: Այո՛, եթե չհավատաք, որ Ես եմ, պիտի մեռնեք ձեր մեղքերի մեջ:

²⁵ Նրանք հարցրին.

-Ո՞վ ես դու:

-Նա, որ սկզբից նեթ խոսում է ձեզ հետ,-պատասխանեց Հիսուսը,-²⁶ ձեր մասին շատ ասելիքներ ունեմ և շատ բաներ՝ ձեզ դատապարտելու համար: Բայց նա, ով ուղարկեց ինձ, ճշմարիտ է, և ես հիմա այս աշխարհին ասում եմ այն, ինչ որ լսել եմ նրանից:

²⁷ Սակայն նրանք չհասկացան, որ Հիսուսը Հոր մասին էր խոսում: ²⁸ Ուստի ասաց նրանց.

-Երբ Մարդու Որդուն բարձրացնեք, այն ժամանակ կիմանաք, որ Ես եմ, և թե ես ինքս ինձնից ոչինչ չեմ անում, այլ խոսում եմ այն, ինչ իմ Հայրը սովորեցրեց ինձ: ²⁹ Եվ նա, ով ինձ ուղարկեց, ինձ հետ է: Նա ինձ մենակ չթողեց, որովհետև միշտ կատարում եմ այն, ինչ հաճելի է նրան:

³⁰ Այս խոսքերի վրա շատերը հավատացին Հիսուսին:

Ճշմարտությունը՝ ազատարար

³¹ Հիսուսը, իր խոսքն ուղղելով իրեն հավատացող հրեաներին, ասաց.

-Եթե հավատարիմ մնաք իմ ուսուցումներին, ճշմարտապես իմ աշակերտները կլինեք. ³² կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը կազատի ձեզ:

³³ Նրանք պատասխանեցին.

-Մենք Աբրահամի որդիներն ենք և ոչ ոքի երբեք ծառա չենք եղել, ինչպե՞ս ես ասում, թե՛ «Ազատ պիտի լինեք»:

³⁴ Հիսուսն ասաց նրանց.

-Լա՛վ իմացեք, ով մեղք է գործում, ծառա է մեղքին: ³⁵ Ծառան տան մեջ մնայուն մեկը չէ, մինչդեռ որդին մնայուն է: ³⁶ Արդ, եթե Որդին ազատի ձեզ, այն ժամանակ իսկապես

՝8.24 «Ես եմ» կամ «Ես եմ նա». Հիսուսն ինքն իրեն ներկայացնում է ճիշտ այն բացատրությամբ, որով Աստված անկեղ մորենու միջից ինքն իրեն ներկայացրեց Մովսեսին (Ելք 3.14), ինչը ցույց է տալիս Հիսուսի աստվածությունը (տե՛ս նաև հմբ 28 և 58):

՝8.25 «Նա, որ սկզբից նեթ խոսում էր ձեզ հետ» կամ «Նա, որ սկզբից ի վեր ասում եմ, թե ես եմ»:

՝8.28 «Երբ... բարձրացնեք». Հիսուսն ակնարկում է իր խաչելությունը:

՝8.32 Ա Եզր 4.38:

՝8.33 Մտ 3.9, Ղկ 3.8:

ազատ կլինեք: ³⁷ Գիտեմ, որ Աբրահամի որդիներն եք, բայց դուք ուզում եք ինձ սպանել, որովհետև իմ խոսքը տեղ չունի ձեր մեջ: ³⁸ Ես խոսում եմ այն, ինչ տեսա իմ Հոր մոտ, իսկ դուք կատարում եք այն, ինչ լսել եք ձեր հորից:

³⁹ Նրանք պատասխանեցին.

-Մեր հայրը Աբրահամն է:

-Եթե Աբրահամի որդիները լինեիք,-ասաց Հիսուսը,-ապա կկատարեիք Աբրահամի արած գործերը: ⁴⁰ Բայց դուք հիմա ուզում եք ինձ սպանել, պարզապես որովհետև ձեզ ասացի ճշմարտությունը, որ լսել եմ իմ Հորից: Աբրահամն այդպիսի բան չարեց:

⁴¹ Ահա դուք ձեր հոր գործն է, որ անում եք:

Նրանք պատասխանեցին.

-Մենք ապօրինի զավակներ չենք. մենք մե՛կ հայր ունենք՝ Աստված:

⁴² Հիսուսն ասաց նրանց.

-Եթե Աստված ձեր Հայրը լիներ, բնականաբար, պիտի սիրեիք ինձ, որովհետև ես Աստծուց ելա և եկա. ես ինքս ինձ չեկա, այլ նա՛ ուղարկեց ինձ: ⁴³ Ինչո՞ւ դուք իմ խոսքը չեք հասկանում. նրա համար, որ չեք կարող լսել: ⁴⁴ Դուք ձեր հոր՝ Սատանայի զավակներն եք և նրա ցանկություններն եք ուզում կատարել: Նա հենց սկզբից էր մարդասպան: Նա ճշմարտության կողմնակից չի եղել բնավ, որովհետև նրա մեջ ճշմարտություն չկա: Երբ նա սուտ խոսի, իր նկարագիրն է ցույց տալիս, քանի որ նա ստախոս է և ստի հայր: ⁴⁵ Իսկ որովհետև ես ճշմարտությունն եմ ասում, ինձ չեք հավատում: ⁴⁶ Ձեզնից ո՞վ կարող է ամբաստանել ինձ որևէ մեղքով: Իսկ եթե ճշմարտությունն եմ ասում, ինչո՞ւ չեք հավատում ինձ: ⁴⁷ Ով Աստծուց է, Աստծու խոսքերն է լսում, իսկ դուք, որովհետև Աստծուց չեք, նրա խոսքերը չեք լսում:

Հիսուսը և Աբրահամը

⁴⁸ Հրեաները պատասխանեցին Հիսուսին.

-Իրավունք չունենք ասելու, որ դու սամարացի ես, և դև կա քո մեջ:

⁴⁹ -Իմ մեջ դև չկա,-ասաց Հիսուսը,- ես իմ Հորն եմ պատվում, բայց դուք անարգում եք ինձ: ⁵⁰ Ես ինձ համար փառք չեմ փնտրում: Կա մեկը, որ ուզում է ինձ փառավորել, և նա՛ է Դատավորը: ⁵¹ Լա՛վ իմացեք, ով որ իմ խոսքերը գործադրի, նա հավիտյան չի մեռնի:

⁵² Նրանք ասացին.

-Այժմ իմացանք, որ դև կա քո մեջ: Աբրահամը մեռավ, մեռան նաև մարգարեները, բայց դու դեռ ասում ես, թե՛ ով իմ խոսքերը գործադրի, նա հավիտյան մահ չի ճաշակի: ⁵³ Արդյոք դու ավելի մե՞ծ ես, քան մեր հայրը՝ Աբրահամը, որ մեռավ: Նմանապես մեռան և մարգարեները. դու քեզ ո՞ւմ տեղ ես դնում:

⁵⁴ Հիսուսը պատասխանեց.

-Եթե ես ինձ փառավորեմ, իմ փառքը ոչինչ չարժի: Նա, ով ինձ փառավորում է, իմ

^{8.39} «Եթե Աբրահամի որդիները լինեիք...ապա կկատարեիք...». մի շարք ձեռ. ունեն «որդիներ...կկատարեք»:

^{8.40} «Իմ Հորից». հուն. «Աստծուց»:

^{8.44} Իսն 1.13, 2.24:

Հայրն է, որի մասին դուք ասում եք՝ «Մեր Աստվածն է»:⁵⁵ Բայց դուք չեք ճանաչում նրան, մինչդեռ ես ճանաչում եմ նրան: Եթե ասեմ, թե չեմ ճանաչում նրան, ձեզ նման ստախոս կլինեմ: Բայց ես ճանաչում եմ նրան և գործադրում նրա խոսքերը:

⁵⁶ Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ իմ աշխարհ գալը տեսնել. տեսավ և ուրախացավ:

⁵⁷ Նրանք ասացին.

-Դեռ հիսուն տարեկան էլ չկաս, և դու տեսել ես Աբրահամի⁵⁶:

⁵⁸ Հիսուսը պատասխանեց.

-Լավ լիմացեք, Աբրահամի ծնունդից առաջ եմ ես:

⁵⁹ Այս խոսքի վրա նրանք քարեր վերցրին, որ քարկոծեն նրան, բայց Հիսուսը խույս տվեց և տաճարից ելավ գնաց:

9

Ի ծնե կույրի բժշկումը

¹ Երբ Հիսուսն անցնում էր, տեսավ ի ծնե կույր մի մարդու: ² Աշակերտները հարցրին նրան.

-Վարդապե՛տ, մեղքն ո՞ւմն է, որ այս մարդը կույր է ծնվել. նրա՞նն է, թե՞ նրա հորն ու մորը:

³ Հիսուսը պատասխանեց.

-Մեղքը ո՛չ նրանն է, ո՛չ էլ հորն ու մորը: Նա կույր է ծնվել, որպեսզի Աստծու գործությունը նրանով հայտնի լինի: ⁴ Քանի դեռ ցերեկ է, ես պետք է կատարեմ ինձ ուղարկողի գործերը: ⁵ Կգա գիշերը, երբ ոչ ոք չի կարող աշխատել: Քանի դեռ աշխարհի մեջ եմ, աշխարհի լույսն եմ:

⁶ Այս ասելուց հետո թքեց գետնին, թքով ցեխ շինեց ու ձեփեց կույրի աչքերը: ⁷ և ասաց նրան.

-Գնա՛ և լվա՛ աչքերդ Սիլովամի ավազանում (Սիլովամ նշանակում է «ուղարկված»):

Կույրը գնաց, աչքերը լվաց և երբ վերադարձավ, արդեն տեսնում էր: ⁸ Հարևանները և նրանք, որոնք նախապես տեսել էին կույրին, որ մուրում էր, ասացին.

-Սա այն մարդը չէ՞, որ նստում էր և մուրում:

⁹ Ոմանք ասում էին.

-Նա է:

Ուրիշներն ասում էին.

-Ո՛չ, նա չէ, այլ նրան նման մեկը:

^{8.56} «Իմ աշխարհ գալը». բոց՝ «իմ օրը»: Աբրահամն իր որդու՝ Իսահակի հրաշալի ծնունդից և գոհագործումից հետո նրա հրաշալի «հարության» (հմմտ Եբր. 11.19) օրինակով «տեսավ» Աստծու ծրագիրը, որը վերաբերում էր Որդուն՝ Քրիստոսին:

^{8.57} «Տեսել ես Աբրահամի⁵⁶». մի շարք ձեռ. «Աբրահամը քե՞զ է տեսել»:

^{9.5} Մտ 5.14, Հհ 8.12:

^{9.7} «Սիլովամի ավազանը» Երուսաղեմի պարիսպներից ներս գտնվող ավազան էր, որի ջուրը Եզեկիա թագավորի օրոք (ՔԱ 715-686) բացված մի ջրանցքի միջոցով հասնում էր քաղաք:

Իսկ ինքն ասում էր.

-Ես այդ կույրն եմ:

¹⁰ -Բայց ինչպե՞ս եղավ, որ բացվեցին աչքերդ,-հարցրին նրանք:

¹¹ Նա պատասխանեց.

-Հիսուս անունով մի մարդ ցեխ շինեց, ծեփեց աչքերս և ասաց ինձ. «Գնա՛ Սիլովամ և լվա՛ աչքերդ»: Գնացի, լվացի աչքերս և ահա տեսնում եմ:

¹² -Որտե՞ղ է նա,- հարցրին նրանք:

Նա պատասխանեց.

-Չգիտեմ:

Փարիսեցիները հարցնում են բժշկված կույրին

¹³ Հետո նրանք նախկին կույր մարդուն տարան փարիսեցիների մոտ: ¹⁴ Օրը շաբաթ էր, երբ Հիսուսը ցեխ էր շինել և բացել կույրի աչքերը: ¹⁵ Փարիսեցիներն էլ հարցրին նրան, թե ինչպե՞ս է լինում, որ տեսնում է: Նա պատասխանեց.

-Ցեխ դրեց աչքերիս վրա, հետո աչքերս լվացի և հիմա տեսնում եմ:

¹⁶ Փարիսեցիներից ոմանք ասացին.

-Այդ մարդը չի կարող Աստծուց լինել, քանի որ շաբաթ օրը չի պահում:

Ուրիշները, սակայն, ասում էին.

-Իսկ մեղավոր մի մարդ ինչպե՞ս կարող է այսպիսի հրաշքներ կատարել:

Եվ պատակտում ընկավ նրանց մեջ: ¹⁷ Ուստի փարիսեցիները մի անգամ ևս հարցրին մարդուն.

-Դո՛ւ ինչ ես ասում այդ մարդու մասին, որ քո աչքերը բացեց:

-Մի մարգարե է,- պատասխանեց մարդը:

¹⁸ Բայց հրեա ղեկավարները չէին ուզում հավատալ, թե նա կույր էր և հիմա տեսնում է: Ուստի կանչեցին նրա ծնողներին ¹⁹ և հարցրին նրանց.

-Սա՞ է ձեր որդին, որի մասին ասում էիք, թե կույր է ծնվել, իսկ ինչպե՞ս է, որ հիմա տեսնում է:

²⁰ Ծնողները պատասխանեցին.

-Գիտենք, որ սա է մեր որդին, և գիտենք, որ կույր ծնվեց. ²¹ բայց թե այժմ ինչպե՞ս է, որ տեսնում է, չգիտենք, կամ թե ո՞վ բացեց նրա աչքերը, այդ էլ չգիտենք: Իրե՛ն հարցրեք, նա արդեն չափահաս է: Թող ի՛նքը խոսի իր մասին:

²² Ծնողներն այսպես ասացին, որովհետև վախենում էին հրեա ղեկավարներից, քանի որ նրանք համաձայնել էին ժողովարանից դուրս հանել նրան, ով կհավատա, թե Հիսուսն է Քրիստոսը՝ Օծյալը:

²³ Սրա համար էր, որ նրա ծնողներն ասացին. «Նա արդեն չափահաս է, իրե՛ն հարցրեք»:

²⁴ Կրկին կանչեցին մարդուն, որ կույր էր, և ասացին նրան.

՝9.22 «Ժողովարանից դուրս հանել». սա չի նշ պարզապես պաշտամունքից արձակել, այլ համայնքի հետ նրա կապերը խզել, կղզիացնել նրան, ինչը լուրջ և դժվար կացության կարող էր մատնել որևէ մեկին:

-Փա՛ռք տուր Աստծուն. մենք գիտենք, որ այդ մարդը մեղավոր է՝

²⁵Նա պատասխանեց.

-Զգիտեմ, թե այդ մարդը մեղավո՞ր է, թե ոչ. Բայց մե՛կ Բան գիտեմ. այն, որ կույր էի և հիմա տեսնում եմ:

²⁶-Ի՞նչ արեց քեզ,- հարցրին նրանք,- ինչպե՞ս Բացեց քո աչքերը:

²⁷Մարդը պատասխանեց.

-Նոր ասացի ձեզ, Բայց դուք չեք ուզում լսել: Ինչո՞ւ եք ուզում նորից իմանալ. արդյոք դո՞ւք էլ եք կամենում աշակերտ դառնալ նրան:

²⁸Նրանք սկսեցին նախատել նրան և ասացին.

-Դո՛ւ ես նրա աշակերտը. մենք Մովսեսի աշակերտներն ենք: ²⁹Մենք գիտենք, որ Աստված Մովսեսի հետ խոսեց, Բայց այս մեկը չգիտենք, թե որտեղի՛ց է:

³⁰Մարդը պատասխանեց.

-Զարմանալին էլ այդ է, որ դուք չգիտեք, թե նա որտեղից է, և սակայն նա իմ աչքերը Բացեց: ³¹Գիտենք, որ Աստված մեղավորներին չի լսում, Բայց լսում է նրանց, ովքեր աստվածապաշտ են և կատարում են նրա կամքը: ³²Աշխարհի սկզբից ի վեր լսված Բան չէ, որ մեկն ի ծնե կույր մարդու աչքերը Բացած լինի: ³³Եթե այդ մարդը Աստծուց եկած չլիներ, ոչ մի Բան անել չէր կարող:

³⁴Նրանք պատասխանեցին.

-Դու ինքդ ամբողջովին մեղքի մեջ ես ծնված և մեր գլխին ուսուցի՞չ ես ուզում լինել: Եվ ժողովարանից դուրս արին նրան:

Հոգու կուրությունը

³⁵Հիսուսը լսեց, թե նրանք դուրս են արել մարդուն, և երբ գտավ նրան, ասաց.

-Դու հավատո՞ւմ ես Աստծու Որդուն:

³⁶Նա պատասխանեց.

-Տե՛ր, ո՞վ է նա, որպեսզի հավատամ նրան:

³⁷Հիսուսն ասաց նրան.

-Դու արդեն տեսար նրան. քեզ հետ խոսողն է:

³⁸-Հավատում եմ, Տե՛ր,-ասաց նա և երկրպագեց նրան:

³⁹Հիսուսն ասաց.

-Դատաստան անելու համար եկա այս աշխարհը, որպեսզի ովքեր չեն տեսնում, տեսնեն, և ովքեր տեսնում են, կուրանան:

⁴⁰Փարիսեցիներից ոմանք, որ Հիսուսի շուրջն էին, լսեցին այս և հարցրին.

-Արդյոք մե՞նք էլ կույր ենք:

⁴¹Հիսուսը նրանց պատասխանեց.

^{9.24} «Փա՛ռք տուր Աստծուն». սա երբում տալու մի ձև է, որ կարելի է հասկանալ՝ «Աստված ծ վկա, ճի՛շտը խոստովանիր» (տե՛ս Հս 7.19):

^{9.35} «Աստծու Որդուն». հուն. շատ ձեռ. ունեն «Մարդու Որդուն»:

^{9.39} «Դատաստան անելու համար եկա այս աշխարհը». Հիսուսը չեկավ դատելու (Հհ 3.17, 12.47), սակայն նրա ներկայությունը պատճառ դարձավ, որ մարդիկ հայտնեն իրենց բուն ինքնությունը և որևէ ձևով դատաստանի գան:

-Եթե կույր լինեիք, մեղք չէիք ունենա, բայց քանի որ ասում եք, թե տեսնում եք, նշանակում է հաստատում եք ձեր մեղավոր լինելը:

10

Բարի և քաջ հովիվը

¹ -Հաստա՛տ իմացեք, ով ոչխարների փարախը դռնով չի մտնում, այլ ուրիշ տեղով է մագցում, նա գող է և ավագակ.* ² Իսկ ով դռնով է մտնում, նա ոչխարների հովիվն է: ³ Դոնապանը դուռը բացում է նրա առաջ, և ոչխարները հետևում են նրա ձայնին: Նա իր ոչխարներին կանչում է իրենց անունով և դուրս է տանում նրանց: ⁴ Եվ երբ իր ոչխարներին դուրս է հանում, ի՛նքն է առաջնորդում նրանց, և ոչխարները հետևում են նրան, որովհետև ճանաչում են նրա ձայնը: ⁵ Օտարի չեն հետևում, ընդհակառակը, փախչում են նրանից, որովհետև չեն ճանաչում օտարների ձայնը:

⁶ Հիսուսն այս առակն ասաց նրանց, սակայն նրանք չհասկացան, թե նա ինչ է ուզում ասել իրենց: ⁷ Ուստի Հիսուսը կրկին ասաց նրանց.

-Հաստա՛տ իմացեք, որ ես եմ ոչխարների դուռը:՝ ⁸ Բոլոր նրանք, որ ինձնից առաջ եկան, գող էին և ավագակ, բայց ոչխարները նրանց չհետևեցին:՝ ⁹ Ե՛ս եմ դուռը. ով որ իմ միջով անցնելով ներս մտնի, կփրկվի. կմտնի ու կելնի և ճարակելու բան կգտնի: ¹⁰ Գողը գալիս է միայն գողանալու, սպանելու և փչացնելու համար: Ես եկա, որպեսզի կյանք ունենան, և կյանքը լինի առավել լեցուն:

¹¹ Ե՛ս եմ իսկական հովիվը: Իսկական հովիվն իր կյանքն է տալիս ոչխարների համար.* ¹² մինչ վարձկանը, որ հովիվ չէ, և որին չեն պատկանում ոչխարները, երբ տեսնում է, որ գայլը գալիս է, լքում է ոչխարներին և փախչում՝ թողնելով, որ գայլը հափշտակի և ցրի ոչխարներին, ¹³ որովհետև վարձկանը չի մտահոգվում ոչխարների վիճակով: ¹⁴ Ե՛ս եմ իսկական հովիվը: Ճանաչում եմ իմ ոչխարներին, և նրանք էլ ինձ են ճանաչում, ¹⁵ ինչպես որ Հայրն է ճանաչում ինձ, և ես՝ Հորը: Ես իմ կյանքն եմ տալիս իմ ոչխարների համար:՝ ¹⁶ Տակավին ուրիշ ոչխարներ էլ ունեմ, որոնք այս փարախից դուրս են. նրանց ևս պարտավոր եմ ներս բերել: Նրանք էլ պիտի լսեն ինձ և լինեն մեկ հոտ և մեկ հովիվ: ¹⁷ Հայրը սիրում է ինձ, որովհետև ես իմ կյանքն եմ տալիս, որպեսզի վերստին առնեմ այն: ¹⁸ Ոչ ոք չի կարող իմ կյանքը խլել ինձանից: Ես իմ կամքով եմ տալիս իմ կյանքը: Իրավունք ունեմ այն տալու, ինչպես նաև իրավունք ունեմ վերստին այն առնելու: Ահա այսպես պատվիրեց ինձ իմ Հայրը:

¹⁹ Այս խոսքերի պատճառով դարձյալ պառակտում ընկավ հրեաների մեջ: ²⁰ Նրանցից

*10.1 «Փարախը» ընդհանրապես քարաշեն պատերով շրջափակված այն բաց տարածությունն է, ուր ամեն երեկո հանգստանալու են բերվում ոչխարները՝ հովվի կամ պահակի հսկողության ներքո:

*10.7 «Ես եմ...դուռը», այսինքն՝ միակ փրկության հնարավորությունը, որից ներս մտնողը ապահովություն է գտնում (հմմտ հմր 9):

*10.8 «Բոլոր նրանք, որ ինձնից առաջ եկան». խոսքն ավագ քահանաների և Օրենքի ուսուցիչների մասին է:

*10.11 Սր 18.13:

*10.15 Մտ 11.27, Ղկ 10.22:

շատերն ասում էին.

-Դև կա նրա մեջ, և խելագարված է. ինչո՞ւ եք լսում նրան:

²¹ Բայց ուրիշներն էլ ասում էին.

-Նրա ասած խոսքերը դիվահարի խոսքեր չեն. մի՞ թե դևը կարող է կույրի աչքերը բանալ:

Հիսուսը՝ Աստծու Որդի

²² Ձմեռ էր: Երուսաղեմում տեղի էր ունենում տաճարի նավակատիքի տոնակատարությունը: ²³ Հիսուսը երթնելուց էր տաճարի Սողոմոնի սյունազավթում, ²⁴ երբ նրա շուրջը հավաքվեցին հրեաները և հարցրին.

-Մինչև ե՞րբ ես մեր հոգին հանելու. եթե դու ես Քրիստոսը, հստակ ասա՛ մեզ:

²⁵ Հիսուսը պատասխանեց.

-Ես արդեն ասել եմ ձեզ, բայց դուք չեք հավատում: Այս գործերը, որ ես կատարում եմ իմ Հոր անունով, դրանք իսկ վկայում են, թե ով եմ ես: ²⁶ Բայց դուք չեք հավատում, որովհետև իմ ոչխարներից չեք: ²⁷ Ես ճանաչում եմ իմ ոչխարներին. նրանք լսում են իմ ձայնը և հետևում են ինձ, ²⁸ և ես հավիտենական կյանք եմ տալիս նրանց. նրանք բնավ չեն կորչի: Ոչ ոք չի կարող նրանց հափշտակել իմ ձեռքից: ²⁹ Հայրս սովեց ինձ այդ ոչխարները, և ոչ ոք չի կարող նրանց հափշտակել իմ Հոր ձեռքից, որովհետև իմ Հայրը բոլորից ավելի մեծ է: ³⁰ Ես և իմ Հայրը մեկ ենք:

³¹ Հրեաները քարեր վերցրին՝ քարկոծելու համար նրան: ³² Հիսուսն ասաց նրանց.

-Իմ Հոր կողմից բազում բարի գործեր կատարեցի ձեր ներկայությամբ. դրանցից ո՞ր մեկի համար եք ուզում քարկոծել ինձ:

³³ Հրեաները պատասխանեցին.

-Քո բարի գործերի համար չէ, որ ուզում ենք քարկոծել քեզ, այլ քո արած հայիդության համար, որովհետև դու մարդ ես, բայց ինքդ քեզ Աստծու տեղ ես դնում:

³⁴ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Չէ՞ որ ձեր Օրենքում գրված է. «Ես ասացի, որ աստվածներ եք»: ³⁵ Ահավասիկ Աստված ինքը «աստվածներ» է անվանում այն մարդկանց, որոնց ուղղում է իր խոսքը: Եվ Սուրբ գրքի խոսքը հնարավոր չէ ջնջել: ³⁶ Արդ, Հայրն ինքը ընտրեց ինձ և աշխարհ

^{10.22} «Տաճարի նավակատիքի տոնակատարությունը» դեկտեմբերի վերջին կատարվող մի տոն էր՝ ի հիշատակ ՔԱ 165 կամ 164թ. Հուդա Մակաբեի ձեռքով տաճարի կրկին սրբազորման և վերաբացման:

^{10.22} Ա Մկ 4.36, 52-59, Բ Մկ 1.18, 10.5:

^{10.23} «Սողոմոնի սյունազավթի» էր կոչվում տաճարի շրջափակի արևելյան պատի երկայնքին երկշարք սյուների վրա բարձրացող «գավիթ» կամ «սրահ» անվանված ծածկը, որը կրում էր Սողոմոնի անունը: Հիսուսը հաճախ այստեղ էր անում իր ուսուցումները:

^{10.26} «Իմ ոչխարներից չեք». մի շարք ձեռ. ավելացնում են «ինչպես ասացի ձեզ»:

^{10.29} «Իմ Հայրը բոլորից ավելի մեծ է». շատ ձեռ. ունեն «Ինչ որ Հայրս սովեց ինձ, ամեն բանից ավելի մեծ է, և ոչ ոք չի կարող այն հափշտակել Հորս ձեռքից»:

^{10.29} Իմս 3.1:

^{10.30} «Իմ Հայրը». մի շարք ձեռ. ունեն «Հայրը»:

^{10.33} Դև 24.16:

^{10.34} Ադ 82.6:

ուղարկեց. և որովհետև ասացի, թե Աստծու Որդի եմ, դրա՞ համար եք ասում՝ հայհոյում ես: ³⁷ Եթե ես իմ Հոր ուզած գործերը չանեմ, ինձ մի՛ հավատացեք. ³⁸ իսկ եթե անում եմ, նույնիսկ եթե ինձ էլ չեք հավատում, իմ գործերի՛ն հավատացեք, որպեսզի իմանաք և ճանաչեք, որ Հայրը իմ մեջ է, և ես՝ իմ Հոր մեջ:

³⁹ Նրանք դարձյալ ուզեցին բռնել Հիսուսին, բայց նա խույս տվեց նրանց ձեռքից: ⁴⁰ Ապա կրկին գնաց Հորդանան գետի դիմացի կողմը, այնտեղ, որտեղ Հովհաննեսն էր նախապես գտնվում ու մկրտում: Եվ այնտեղ մնաց: ⁴¹ Շատերը եկան նրա մոտ և ասում էին.

-Հովհաննեսը որևէ հրաշք չգործեց,⁴² բայց ինչ որ ասաց այս մարդու մասին, ճիշտ էր:

Եվ այնտեղ շատերը հավատացին Հիսուսին:

11

Ղազարոսի մահը

¹ Մի հիվանդ կար՝ Ղազարոս անունով, որ Բեթանիայից էր՝ Մարիամի և նրա քույր Մարթայի գյուղից:² Սա այն Մարիամն էր, որ յուղով օծեց Տիրոջ ոտքերը և սրբեց իր մազերով, և որի եղբայրն էր Ղազարոսը, որ հիվանդ էր:³ Ղազարոսի քույրերը մարդ ուղարկեցին Հիսուսի մոտ, որպեսզի ասեն նրան.

-Տե՛ր, քո սիրելի բարեկամը հիվանդ է:

⁴ Երբ Հիսուսը լսեց, ասաց.

-Այս հիվանդությունը մահաբեր չէ, այլ ծառայելու է Աստծու փառքին և պատճառ է լինելու, որ Աստծու Որդին փառավորվի:

⁵ Հիսուսը սիրում էր նրանց՝ Մարթային, նրա քրոջը՝ Մարիամին, և Ղազարոսին:

⁶ Սակայն հակառակ նրան, որ լսել էր Ղազարոսի հիվանդության մասին, նա երկու օր ևս մնաց այնտեղ, որտեղ գտնվում էր:⁷ Հետո իր աշակերտներին ասաց.

-Եկե՛ք կրկին գնանք Հրեաստան:

⁸ Աշակերտները նրան ասացին.

-Վարդապե՛տ, հրեաները դեռ նոր էին ուզում քեզ քարկոծել, հիմա նորի՞ց ես գնում այնտեղ:

⁹ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Ցերեկը տասներկու ժամ չունի՞: Ով որ ցերեկն է քայլում, չի սայթաքում, որովհետև այս աշխարհի լույսով տեսնում է իր շուրջը: ¹⁰ Բայց ով որ գիշերն է քայլում,

^{10.38} «Ճանաչեք». մի շարք ձեռ. ունեն «հավատար»:

^{10.40} Հհ 1.28:

^{10.41} «Հովհաննեսը». շատ ձեռ. ունեն «Արդարև, Հովհաննեսը»:

^{11.1} «Բեթանիա». տե՛ս Մտ 21.17-ի ծնթ:

^{11.1} Ղկ 10.38-39:

^{11.2} «Ղազարոս» կամ «Ղազար» անունը Քրիստոսի ժամանակ ընդհանրացած կրճատ ձևն է Եղիազար անվան, որ նշ է «Աստված օգնում է նրան»:

^{11.2} Հհ 12.3:

ասյթաբում է, որովհետև լույս չունի:

¹¹ Հիսուսն այս խոսքերն ասելուց հետո ավելացրեց.

-Մեր բարեկամ Ղազարոսը քնել է, գնամ արթնացնեմ նրան:

¹² Աշակերտները նրան ասացին.

-Տե՛ր, եթե քնել է, ուրեմն կառողջանա:

¹³ Հիսուսը Ղազարոսի մահվանն էր ակնարկում, մինչդեռ աշակերտներին այնպես թվաց, թե նա ակնարկում է նրա քնելը: ¹⁴ Այն ժամանակ նա բացահայտ կերպով ասաց.

-Ղազարոսը մեռավ. ¹⁵ բայց ուրախ եմ ձեզ համար, որ այնտեղ չէի, որովհետև դուք կհավատաք ինձ: Ուրեմն, եկե՛ք գնանք նրա մոտ:

¹⁶ Թովմասը, որ Երկվորյակ էր կոչվում, ընկերներին ասաց.

-Դե՛, եկե՛ք մենք էլ գնանք նրա հետ մեռնելու:

Հիսուսը՝ հարություն և կյանք

¹⁷ Երբ Հիսուսը Բեթանիա հասավ, Ղազարոսն արդեն չորս օրից ի վեր թաղված էր:

¹⁸ Բեթանիան մոտ էր Երուսաղեմին, միայն երեք կիլոմետր հեռու: ¹⁹ Հրեաներից շատերն այնտեղից եկել էին Մարթայի և Մարիամի մոտ՝ նրանց մխիթարելու իրենց եղբոր մահվան առթիվ: ²⁰ Երբ Մարթան լսեց, որ Հիսուսը գալիս է, գնաց նրան դիմավորելու, մինչդեռ Մարիամը մնաց տանը: ²¹ Մարթան ասաց Հիսուսին.

-Տե՛ր, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի: ²² Բայց հիմա էլ գիտեմ, թե ինչ էլ որ Աստծուց խնդրես, Աստված կտա քեզ:

²³ Հիսուսն ասաց նրան.

-Քո եղբայրը հարություն կառնի:

²⁴ Մարթան պատասխանեց.

-Գիտեմ, որ հարություն կառնի վերջին օրը, հարության ժամանակ:

²⁵ Հիսուսն ասաց.

-Ե՛ս եմ հարությունը և կյանքը: Ով որ հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի:

²⁶ Իսկ ով որ ողջ է և հավատում է ինձ, երբեք չի մեռնի: Հավատո՞ւմ ես իմ ասածին:

²⁷ -Այո՛, Տե՛ր,- պատասխանեց Մարթան,- հավատում եմ, որ դո՛ւ ես Քրիստոսը՝ Աստծու Որդին, որ աշխարհ էիր գալու:

Ղազարոսի հարությունը

²⁸ Մարթան այս խոսքերն ասելուց հետո գնաց, կանչեց իր քրոջը՝ Մարիամին, և փսփսալով ասաց.

-Վարդապետը եկել է և քեզ է կանչում:

²⁹ Մարիամն այս լսելուն պես վեր կացավ և գնաց Հիսուսի մոտ: ³⁰ Հիսուսը տակավին գյուղ չէր մտել, այլ կանգնած էր այն տեղում, որտեղ Մարթան դիմավորել էր նրան:

³¹ Տանը գտնվող հրեաները, որոնք մխիթարում էին Մարիամին, երբ տեսան, որ նա շտապ վեր կենալով գնաց, հետևեցին նրան, որովհետև կարծեցին, թե գերեզման է

^{11.15} Հուն. չունի «ինձ» բառը:

^{11.24} Բ Մկ 7.22-23, 12.44:

գնում՝ այնտեղ լաց լինելու համար: ³² Մարիամը հասավ այնտեղ, որտեղ կանգնած էր Հիսուսը: Հազիվ նրան տեսած՝ ընկավ նրա ոտքերն ու ասաց.

-Տե՛ր, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի:

³³ Երբ Հիսուսը տեսավ, որ Մարիամը լալիս է, և նրա հետ եկող հրեաներն էլ են լալիս, հոգեպես խռովվեց և հուզված ³⁴ ասաց.

-Որտե՞ղ թաղեցիք նրան:

Նրանք ասացին.

-Տե՛ր, արի՛ և տե՛ս:

³⁵ Հիսուսն արտասովեց: ³⁶ Հրեաներն ասում էին միմյանց.

-Տեսե՛ք, ինչքան էր սիրում նրան:

³⁷ Ոմանք ասում էին.

-Այս մարդը, որ կույրի աչքերը բացեց, չէ՞ր կարող նաև այնպես անել, որ Ղազարոսը չմեռներ:

³⁸ Հիսուսը դարձյալ ներքնապես հուզվեց և մոտեցավ գերեզմանին, որը մի քարայր էր, և որի մուտքին մի քար էր դրված: ³⁹ Հիսուսն ասաց.

-Վերցրե՛ք քարը:

Մարթան՝ մեռածի քույրը, ասաց նրան.

-Տե՛ր, հիմա արդեն նեխած կլինի, որովհետև չորս օր է, ինչ թաղված է:

⁴⁰ Հիսուսն ասաց Մարթային.

-Քեզ չասացի՞, որ եթե հավատաս, կտեսնես Աստծու փառքը:

⁴¹ Երբ նրանք վերցրին քարը, Հիսուսն աչքերը վեր բարձրացրեց և ասաց.

-Հա՛յր, շնորհակալություն քեզ, որ ինձ լսեցիր: ⁴² Գիտեմ, որ միշտ լսում ես ինձ, բայց ինչ որ այժմ ասում եմ, շուրջս գտնվող ժողովրդի համար եմ ասում, որպեսզի նրանք հավատան, որ դո՛ւ ուղարկեցիր ինձ:

⁴³ Այս ասելուց հետո բարձր ձայնով աղաղակեց.

-Ղազարո՛ւ, դո՛ւրս եկ:

⁴⁴ Եվ Ղազարոսը ելավ՝ ոտքերն ու ձեռքերը պատանքով փաթաթված և երեսը վարշամակով ծածկված: Հիսուսն ասաց նրանց.

-Քանդեցե՛ք պատանքը և թողե՛ք, որ գնա:

⁴⁵ Հրեաներից շատերը, որոնք Մարիամենց տուն էին եկել, երբ տեսան Հիսուսի կատարած հրաշքը, հավատացին նրան: ⁴⁶ Մակայն ուրիշները գնացին փարիսեցիների մոտ և պատմեցին նրանց, ինչ որ Հիսուսը կատարել էր:

Դավադրություն Հիսուսին սպանելու համար

(Մտ 26.1-5, Մր 14.1-2, Ղկ 22.1-2)

⁴⁷ Ավագ քահանաներն ու փարիսեցիները կանչեցին ատյանի անդամներին և ասացին.

-Ի՞նչ պետք է անենք, քանի որ այս մարդը բազում հրաշքներ է գործում: ⁴⁸ Եթե նրան այսպես թողնենք, ամենքն էլ կհավատան նրան, և հռոմեացիները կգան ու կկործանեն

մեր տաճարն ու մեր ազգը։⁴⁹

⁴⁹Նրանցից մեկը, որի անունը Կայիափա էր, և որը այդ տարի քահանայապետն էր, ասաց նրանց.

–Դուք ոչինչ չգիտեք։⁵⁰ չե՞ք մտածում, թե մեզ համար ավելի լավ է, որ մեկ հոգի մեռնի ժողովրդի համար, քան թե ամբողջ ազգը կորչի:

⁵¹Այս խոսքերը նա ինքն իրենից չասաց, այլ քանի որ այդ տարի քահանայապետն էր, մարգարեացավ, որ Հիսուսը մեռնելու էր իր ժողովրդի համար: ⁵²Եվ ոչ միայն հրեա ժողովրդի համար, այլ որպեսզի Աստծու ցրված որդիներին էլ ի մի հավաքի:

⁵³Եվ այսպես, այդ օրվանից սկսած, հրեա ղեկավարները որոշեցին սպանել Հիսուսին: ⁵⁴Դրանից հետո Հիսուսը համարձակ չէր շրջում Հրեաստանում. ուստի այդտեղից ելնելով՝ գնաց անապատին մոտիկ շրջանում գտնվող մի քաղաք, որ Եփրայիմ էր կոչվում, և իր աշակերտների հետ մնաց այնտեղ:

⁵⁵Մոտ էր հրեաների Ջատիկը: Այդ գավառից շատերը գնացին Երուսաղեմ, որպեսզի իրենց ծիսական սովորության համաձայն, Ջատկից առաջ մաքրվեն: ⁵⁶Նրանք փնտրում էին Հիսուսին և մինչ հավաքված էին տաճարում, հարցնում էին միմյանց.

–Ի՞նչ եք կարծում, արդյոք տոնի առթիվ այստեղ չի՞ գա:

⁵⁷Ավագ քահանաներն ու փարիսեցիները պատվիրել էին, որ եթե մեկնումեկն իմանա, թե նա որտեղ է, հայտնի, որպեսզի ձերբակալեն նրան:

12

Հիսուսի ոտքերի օծումը Բեթանիայում

(Մտ 26.6-13, Մր 14.3-9)

¹ Ջատկից վեց օր առաջ Հիսուսը եկավ Բեթանիա, որտեղ ապրում էր Ղազարոսը, այն մարդը, որը մեռած էր, և որին Հիսուսը հարություն էր տվել մեռելներից: ² Այդտեղ նրա համար ընթրիք պատրաստեցին: Մարթան սպասարկում էր, և Ղազարոսն էլ սեղանակիցներից մեկն էր: ³ Ընթրիքի ժամանակ մի շիշ ազնիվ և թանկարժեք նարդոսի յուղ վերցնելով՝ Մարիամն օձեց Հիսուսի ոտքերը և իր մազերով սրբեց դրանք: Տունը լցվեց յուղի բուրմունքով: ⁴ Աշակերտներից մեկը՝ Հուդա Իսկարիովտացին, որ մատնելու էր նրան, ասաց.

⁵ –Ինչո՞ւ այդ յուղը չվաճառվեր երեք հարյուր արծաթ դահեկանի և չտրվեր աղքատներին:

⁶ Նա այս ասաց ոչ թե նրա համար, որ իբր աղքատները մտահոգում էին իրեն, այլ

^{11.48} «Տաճարը». բոց՝ «տեղը» կամ «վայրը», որ «սրբավայր» իմաստով է գործածվում և կարող է նշել տաճարը կամ Երուսաղեմ քաղաքը:

^{11.49} «Այդ տարի». նշ է «այդ ժամանակ», որովհետև քահանայապետության պաշտոնը ցմահ էր:

^{11.54} «Եփրայիմ» (Եֆրայիմ). Երուսաղեմից շուրջ 20 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող մի փոքրիկ քաղաք:

^{12.1} «Բեթանիա». տե՛ս Մտ 21.17-ի ծնթ:

^{12.3} Ղկ 7.37-38:

^{12.5} «Երեք հարյուր արծաթ դահեկանի». տե՛ս Մր 6.37-ի ծնթ:

որովհետև գող էր. իր մոտ էր գտնվում գանձանակը, և ինչ որ դրվում էր այնտեղ, օգտվում էր դրանից: ⁷ Հիսուսը պատասխանեց.

-Ազա՛տ թող նրան, որովհետև նա հիմա անում է այն, ինչ լինելու է իմ թաղման օրը:՝
⁸ Աղքատներին ամեն ժամանակ ունենալու էք ձեզ հետ, բայց ինձ միշտ ձեզ հետ չէք ունենալու:՝

Դավ Ղազարոսի դեմ

⁹ Հրեաների մի մեծ բազմություն էր իմացավ, որ Հիսուսը Բեթանիայում է, եկավ, ոչ միայն Հիսուսի համար, այլ նաև տեսնելու Ղազարոսին, որին Հիսուսը հարություն էր տվել մեռելներից: ¹⁰ Ուստի ավագ քահանաները որոշեցին Ղազարոսին էլ սպանել, ¹¹ որովհետև հրեաներից շատերը գնում էին Ղազարոսին տեսնելու և հավատում էին Հիսուսին:՝

Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ

(Մտ 21.1-11, Մր 11.1-11, Ղկ 19.28-40)

¹² Հաջորդ օրը ժողովրդի մի մեծ բազմություն, որ Ջատկի տոնի առթիվ Երուսաղեմ էր եկել, երբ լսեց, թե Հիսուսը Երուսաղեմ է գալիս, ¹³ արմավենու ճյուղեր վերցրեց և ընդառաջ ելավ Հիսուսին դիմավորելու՝ բարձրաձայն աղաղակելով.

«Օվսաննա՛ ,

օրհնյա՛ լ լինի նա, որ գալիս է Տիրոջ անունով,

Իսրայելի թագավորը:՝՝

¹⁴ Հիսուսը, մի էջ գտնելով նստեց նրա վրա, ինչպես որ գրված է Սուրբ գրքերում.

¹⁵ «Մի՛ վախեցիր, ո՛վ Երուսաղեմ, դո՛ւստր Միոնի.

ահա քո թագավորը գալիս է քեզ մոտ՝

նստած մի էջի քուռակի վրա:՝

¹⁶ Հիսուսի աշակերտներն այս բոլորը չհասկացան ժամանակին, բայց երբ Հիսուսը փառավորվեց, այն ժամանակ հիշեցին, թե այս կատարվածները Հիսուսի մասին էին գրված, և իրենք այդ գրվածն էին կատարել: ¹⁷ Բոլոր նրանք, որ Հիսուսի հետ էին, երբ նա գերեզմանից կանչել էր Ղազարոսին և նրան հարություն էր տվել մեռելներից, վկայություն էին տալիս այդ մասին: ¹⁸ Այդ իսկ պատճառով Երուսաղեմում գտնվողները բոլորն էլ դիմավորելու ելան նրան, որովհետև լսել էին, թե նա ինչպե՛ս էր հարության հրաշքը կատարել: ¹⁹ Իսկ փարիսեցիներն ասում էին միմյանց.

-Տեսնո՞ւմ եք, որ ոչ մի բան չենք կարող անել, ահա ամբողջ աշխարհը նրա՛ն է հետևում:

^{12.7} «Նա հիմա անում է այն, ինչ լինելու է իմ թաղման օրը». տե՛ս Մտ 26.12-ի ծնթ:

^{12.8} Բ Օր 15.11:

^{12.11} «Շատերը գնում էին Ղազարոսին տեսնելու» կամ «շատերը նրա պատճառով հեռանում էին իրենցից»:

^{12.13} «Օվսաննա՛ ». տե՛ս Մտ 21.9-ի ծնթ:

^{12.13} Մղ 118.25-26, Ա Մկ 13.51:

^{12.15} Ձք 9.9:

Հասել է փառավորման ժամը

²⁰ Տոնի առթիվ մի շարք հույներ էլ էին եկել Երուսաղեմ՝ երկրպագելու Աստծուն:^{*}
²¹ Նրանք մոտեցան Փիլիպպոսին, որ Գալիլեայի Բեթսայիդա քաղաքից էր, և աղաչելով ասացին նրան.

-Տե՛ր, ուզում ենք Հիսուսին տեսնել:

²² Փիլիպպոսը եկավ և Անդրեասին ասաց, և երկուսը միասին Հիսուսին ներկայացրին նրանց խնդրանքը:²³ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Ահա հասավ Մարդու Որդու փառավորվելու ժամը:²⁴ Հաստա՛տ իմացեք, որ եթե ցորենի հատիկը հողի մեջ չընկնի և չմեռնի, ինքը կմնա որպես առանձին հատիկ, իսկ երբ մեռնի, բազմաթիվ հատիկներ կտա:²⁵ Ով սիրում է իր անձը, կորցնում է այն, իսկ ով անտեսում է իր անձն այս աշխարհում, այն պահած է լինում հավիտենական կյանքի համար:²⁶ Ով ուզում է ինձ ծառայել, պետք է հետևի ինձ, և որտեղ ես եմ գտնվում, այնտեղ կլինի և ինձ ծառայողը: Եվ իմ Հայրը կպատվի ինձ ծառայողին:

²⁷ Բայց այժմ հոգիս խռովված է, և ի՞նչ ասեմ: Ասե՛մ՝ «Հա՛յր, ազատի՛ր ինձ այս ժամից»: Բայց ես եկել եմ հենց տառապանքի այս ժամի համար:²⁸ Հա՛յր, փառավորի՛ր քո անունը:

Մի ձայն եկավ երկնքից, որ ասում էր.

-Փառավորեցի և դարձյա՛լ պիտի փառավորեմ:

²⁹ Ժողովուրդը, որ այնտեղ էր գտնվում, լսեց ձայնը: Ոմանք ասացին.

-Որոտում եղավ:

Իսկ ուրիշներն ասացին.

-Մի հրեշտակ խոսեց նրա հետ:

³⁰ Բայց Հիսուսը պատասխանեց.

-Այս ձայնը ինձ համար չէ, որ եկավ, այլ ձեզ համար:³¹ Հիմա է սկսվում այս աշխարհի դատաստանը: Հիմա այս աշխարհի իշխանը դուրս կնետվի:³² Եվ երբ ես բարձրանամ երկրից, ամենքին էլ դեպի ինձ պիտի ձգեմ:^{*}

³³ Այս ասելով՝ նա հասկացնում էր, թե ինչպիսի՛ մահով էր մեռնելու:³⁴ Ժողովուրդը պատասխանեց.

-Մեր Օրենքը մեզ ասում է, թե Քրիստոսը հավիտյան պիտի մնա, իսկ դու ինչպե՞ս ես ասում, թե Մարդու Որդին պետք է բարձրանա: Ո՞վ է այդ Մարդու Որդին:^{*}

³⁵ Հիսուսը պատասխանեց.

-Լույսը մի փոքր ժամանակ էլ ձեզ հետ է. քայլեցե՛ք, քանի դեռ լույսը ունեք, որպեսզի խավարը ձեզ չտիրի. որովհետև ով քայլում է խավարի մեջ, չի իմանում, թե ո՛ւր է

^{*}12.20 «Հույներ». Ջատկի տոնի առթիվ ուխտավորների խմբի մեջ գտնվող այս հույները հրեական կրոնի համակիրներ էին և կամ նորադարձներ, այսինքն՝ հրեական կրոնն ընդունած անձինք:

^{*}12.23 «Հասավ... փառավորվելու ժամը». տե՛ս 2.4-ի ծնթ:

^{*}12.25 Մտ 10.39, 16.25, Մր 8.35, Ղկ 9.24, 17.33:

^{*}12.32 «Երբ ես բարձրանամ երկրից». այս արտահայտությունն ունի երկու նշանակություն.

միաժամանակ ակնարկում է թե՛ Հիսուսի խաչ բարձրանալը և թե՛ փառավորվելը խաչի միջոցով (հմմտ հմր 33, 3.14-15, 8.28):

^{*}12.34 Սղ 110.4, Ես 9.7, Եզկ 37.25, Դն 7.14:

գնում: ³⁶ Հավատացե՛ք լույսին, քանի դեռ լույսն ունեք, որպեսզի լույսի որդիներ լինեք: Հիսուսն այս խոսքերն ասելուց հետո գնաց և նրանցից թաքնվեց:

Հրեաների անհավատությունը

³⁷ Թեև Հիսուսը բազմաթիվ հրաշքներ էր գործել նրանց առաջ, սակայն նրանք չէին հավատում նրան, ³⁸ որպեսզի իրականանա այն, ինչ Աստված ասել էր Եսայի մարգարեի բերանով.

«Տե՛ր, ո՞վ հավատաց մեր տված լուրին.

Տիրոջ գործությունն ո՞ւմ հայտնվեց?»՝

³⁹ Նրանք չէին կարողանում հավատալ, որովհետև Տերը դարձյալ ասում է Եսայու բերանով.

⁴⁰ «Աստված նրանց աչքերը կուրացրեց

և նրանց մտքերը կարծրացրեց,

որպեսզի չլինի թե աչքերով տեսնեն

և մտքով հասկանան ու դարձի գան,

և ես բժշկեմ նրանց»՝

⁴¹ Եսային այս խոսքերն ասաց, որովհետև տեսավ Հիսուսի փառքը և խոսեց նրա մասին: ⁴² Ամեն դեպքում, նույնիսկ հրեա իշխանավորներից շատերը հավատացին Հիսուսին, բայց փարիսեցիների պատճառով այդ չէին հայտնում, որպեսզի ժողովարաններից դուրս չհանվեն, ⁴³ քանի որ նրանք նախընտրեցին ավելի մարդկանցից փառավորվել, քան Աստծուց:

Աշխարհի լույսը

⁴⁴ Եվ Հիսուսը բարձրաձայն ասաց.

-Ով հավատում է ինձ, նա ոչ թե ինձ է հավատացած լինում, այլ նրան, ով ինձ ուղարկեց: ⁴⁵ Նույնպես, ով տեսնում է ինձ, տեսած է լինում նրան, ով ինձ ուղարկեց:

⁴⁶ Ես աշխարհ եկա որպես լույս, որպեսզի ով որ ինձ հավատա, խավարում չմնա: ⁴⁷ Ես չեմ դատապարտում նրան, ով լսում է իմ խոսքերը, բայց չի գործադրում դրանք, որովհետև ես չեմ եկել, որ աշխարհը դատապարտեմ, այլ որպեսզի փրկեմ աշխարհը:

⁴⁸ Սակայն կա մեկը, որ պիտի դատապարտի նրան, ով անարգում է ինձ և չի ընդունում իմ խոսքերը: Աստծու խոսքը, որ ես ասացի ձեզ,- դա՛ պիտի դատապարտի նրան վերջին օրը. ⁴⁹ որովհետև ես ինքս ինձնից չխոսեցի, այլ Հայրը, որ ինձ ուղարկեց, նա՛ պատվիրեց ինձ, ինչ որ պիտի ասեմ և ինչ որ պիտի խոսեմ: ⁵⁰ Եվ ես գիտեմ, որ այդ պատվերը հավիտենական կյանք է տալիս: Հետևաբար, ինչ որ ես խոսում եմ, խոսում եմ այն, ինչ որ Հա՛յրն ինձ ասաց:

^{12.38} Ես 53.1 [LXX]:

^{12.40} Ես 6.10 [LXX]:

^{12.41} «Եսային... տեսավ Հիսուսի փառքը». իրականում Եսային տեսավ Եհովա Աստծու փառքը (Ես 6.1-5): Ավետարանիչն այստեղ ցույց է տալիս, որ Հիսուսը նույն «Զորությունների Տերն» է՝ Եհովա Աստվածը:

Հիսուսը լվանում է իր աշակերտների ոտքերը

¹ Ձատկի տոնի նախօրյակին Հիսուսն իմանալով, որ հասել է ժամը, երբ ինքն այս աշխարհից պիտի գնա իր Հոր մոտ, սիրեց նրանց, ովքեր իր հետևորդներն էին այս աշխարհում, և ծայրաստիճան սիրեց նրանց:

² Երբ Հիսուսը և իր աշակերտներն ընթրում էին, Սատանան արդեն իսկ Իսկարիովտացի Սիմոնի որդու՝ Հուդայի մտքում դրել էր Հիսուսին մատնելու խորհուրդը: ³ Հիսուսը, իմանալով հանդերձ, որ Հայրն ամեն իշխանություն տվել է իրեն, և որ ինքն Աստծուց է եկել և Աստծու մոտ է գնում, ⁴ վեր կացավ սեղանից, մի կողմ դրեց իր վրայի հագուստը և մի սրբիչ վերցնելով՝ կապեց մեջքին: ⁵ Ապա ջուր վերցնելով՝ լցրեց կոնքի մեջ և սկսեց իր աշակերտների ոտքերը լվանալ և սրբել մեջքին կապած սրբիչով: ⁶ Երբ մոտեցավ Սիմոն Պետրոսին, սա ասաց նրան.

-Տե՛ր, դո՛ւ ես լվանալու իմ ոտքերը:

⁷ Հիսուսը պատասխանեց.

-Ինչ որ ես անում եմ, դու հիմա չես հասկանում, բայց հետո կհասկանաս:

⁸ Պետրոսն ասաց.

-Երբե՛ք դու իմ ոտքերը չես լվանա:

Հիսուսը պատասխանեց.

-Եթե՛ քո ոտքերը չլվանամ, ինձ հետ բաժին չես ունենա:

⁹ -Տե՛ր,- ասաց Սիմոն Պետրոսը,- ուրեմն ոչ միայն իմ ոտքերը, այլև իմ ձեռքերն ու գլուխն էլ լվա՛ :

¹⁰ Հիսուսը պատասխանեց.

-Նա, ով լվացված է, մաքուր է լինում, հետևաբար պետք է միայն ոտքերը լվանալ: Դուք մաքուր եք, բայց ո՛չ բոլորդ:

¹¹ Քանի որ Հիսուսը գիտեր, թե ով է մատնելու իրեն, դրա համար ասաց. «Դուք մաքուր եք, բայց ո՛չ բոլորդ»:

¹² Հիսուսն իր աշակերտների ոտքերը լվանալուց հետո հագավ իր հագուստները և կրկին սեղան նստեց: Ապա հարցրեց.

-Գիտե՞ք, թե ինչ արեցի ձեզ: ¹³ Դուք ինձ «Վարդապետ» և «Տեր» եք կոչում, և ճիշտ եք ասում, որովհետև իսկապես դա՛ եմ: ¹⁴ Արդ, եթե ես Տեր և Վարդապետ եմ, լվացի ձեր ոտքերը, դուք պարտավոր եք միմյանց ոտքեր լվանալ: ¹⁵ Ես ձեզ մի օրինակ տվեցի, որպեսզի դուք էլ միմյանց անեք այն, ինչ ես արեցի ձեզ: ¹⁶ Լա՛վ իմացեք. ծառան իր տիրոջից մեծ չէ, և ոչ էլ ուղարկվածն է ավելի մեծ, քան նրան ուղարկողը: ¹⁷ Եթե այս բանը գիտեք, երանելի կլինեք, եթե գործադրեք այն: ¹⁸ Իմ խոսքը ձեր բոլորի համար չէ,

^{13.1} «Ձատիկ». բոց՝ «Պատեք». տե՛ս Մտ 26.2-ի ծնթ:

^{13.10} Շատ ձեռ. չունեն «հետևաբար պետք է միայն ոտքերը լվանալ»: «Մաքուր». գրբ. և հուն. «սուրբ», որ նշ է թե՛ «մաքուր» և թե՛ «սուրբ»:

^{13.12-15} Ղկ 22.27:

^{13.16} Մտ 10.24, Ղկ 6.40, Հհ 15.20:

որովհետև ես ճանաչում եմ իմ ընտրածներին, այլ որպեսզի իրականանա Սուրբ գրքի խոսքը, որ ասում է. «Նա, ով ինձ հետ հաց էր ուտում, դավաճանեց ինձ»:¹⁹ Հենց այժմվանից ասում եմ ձեզ, քանի դեռ այս չի պատահել, որպեսզի երբ պատահի, հավատաք, որ ես եմ:²⁰ Լա՛վ իմացեք, ով ընդունում է նրան, ում ես եմ ուղարկելու, ընդունած է լինում ինձ, և ով ինձ է ընդունում, ընդունած է լինում նրան, ով ինձ ուղարկեց:

Հիսուսը գուշակում է իր մատնությունը

(Մտ 26.20-25, Մր 14.17-21, Ղկ 22.21-23)

²¹ Այս խոսքերն ասելուց հետո Հիսուսը հոգեպես խոռովվեց և բացահայտորեն ասաց. -Լա՛վ իմացեք, որ ձեզնից մեկը մատնելու ինձ:

²² Աշակերտներն իրար էին նայում շփոթված, թե ո՛ւմ մասին է ասում:

²³ Աշակերտներից մեկը, որին Հիսուսը սիրում էր, նստել էր Հիսուսի կողքին:²⁴ Սիմոն Պետրոսը նշան արեց նրան՝ հարցնելու, թե այդ ո՛ւմ մասին է ասում:

²⁵ Այդ աշակերտը, Հիսուսի կողմը դառնալով, հարցրեց.

-Տե՛ր, ո՛վ է:

²⁶ Հիսուսը պատասխանեց.

-Այս պատառը թաթախելով ում որ տամ, նա է:

Եվ պատառը թաթախելով՝ տվեց Իսկարիոփտացի Հուդային:²⁷ Հուդան պատառը հագիվ վերցրած՝ Սատանան մտավ նրա մեջ: Հիսուսն ասաց նրան.

-Ինչ որ անելու ես, շո՛ւտ արա:

²⁸ Սեղանի շուրջը նստածներից ոչ ոք չհասկացավ, թե այս խոսքն ինչո՞ւ ասաց նրան:

²⁹ Եվ որովհետև Հուդայի մոտ էր գտնվում գանձանակը, աշակերտներից ոմանք կարծեցին, թե Հիսուսը նրան ասաց. «Գնա՛ և տոնի առթիվ ինչ որ պետք է մեզ, գնի՛ր» և կամ՝ «Մի բա՛ն տուր աղքատներին»:

³⁰ Հուդան պատառը վերցնելուց հետո անմիջապես դուրս ելավ: Եվ գիշեր էր...

Նոր պատվիրան

³¹ Հուդայի մեկնելուց հետո Հիսուսն ասաց.

-Այժմ փառավորվեց Մարդու Որդին, և Աստված փառավորվեց նրանով:³² Եվ եթե Աստված փառավորվեց նրանով, Աստված էլ նրան կփառավորի իրենով, և շուտով կփառավորվի նրանով:³³ Որոյակնե՛ր, մի փոքր ժամանակ էլ ձեզ հետ եմ. պիտի փնտրեք ինձ: Եվ ինչպես որ ասացի հրեա ղեկավարներին, այժմ ձեզ էլ եմ ասում. «Այնտեղ, ուր ես եմ գնում, դուք չեք կարող գալ»:³⁴ Մի նոր պատվիրան եմ տալիս ձեզ՝

^{13.18} Մղ 41.9:

^{13.20} Մտ 10.40, Մր 9.37, Ղկ 9.48, 10.16:

^{13.23} «Նստել էր». անցյալում ճաշի կամ ընթրիքի հրավիրվածները սեղան էին նստում ընկողմանած՝ գլուխները դեպի սեղանը և ոտքերը դեպի հետ:

^{13.26} «Պատառը թաթախելով». տե՛ս Մտ 26.23-ի ծնթ: «Իսկարիոփտացի Հուդային». շատ ձեռ. ունեն «Իսկարիոփտացի Սիմոնի [որդի] Հուդային»:

^{13.33} Հհ 7.34:

սիրեցե՛ք միմյանց: Ինչպես ես ձե՛զ սիրեցի, դուք էլ միմյա՛նց սիրեցեք:՝³⁵ Եթե դուք միմյանց սիրեք, դրանով մարդիկ կիմանան, որ դուք իմ աշակերտներն եք:

Հիսուսը գուշակում է Պետրոսի ուրացումը

(Մտ 26.31-35, Մր 14.27-31, Ղկ 22.31-34)

³⁶-Տե՛ր, ո՞ւր ես գնում,-հարցրեց Սիմոն Պետրոսը:

Հիսուսը պատասխանեց.

-Այնտեղ, ուր ես եմ գնում, դու այժմ չես կարող գալ, բայց հետո կգաս իմ հետևից:

³⁷Պետրոսն ասաց.

-Տե՛ր, ինչո՞ւ հիմա չեմ կարող գալ քո հետևից: Ես իմ կյանքն անգամ կգոհեմ քեզ համար:

³⁸Հիսուսը պատասխանեց.

-Դու կյա՞նքդ կգոհես ինձ համար: Լա՛վ իմացիր, աքաղաղը դեռ չկանչած՝ դու երեք անգամ ուրացած կլինես ինձ:

14

Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը

¹Ապա Հիսուսն ասաց իր աշակերտներին.

-Թող չխոռովվեն ձեր սրտերը: Հավատացե՛ք Աստծուն, հավատացե՛ք նաև ինձ: ²Իմ Հոր տան մեջ շատ տեղ կա, եթե այդպես չլիներ, չէի ասի ձեզ, թե գնում եմ և ձեզ համար տեղ կպատրաստեմ: ³Եվ երբ գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի, որտեղ ես եմ գտնվում, դուք ևս լինեք այնտեղ: ⁴Եվ դուք գիտեք, թե ուր եմ գնում, գիտեք նաև դրա ճանապարհը:

⁵Թովմասն ասաց.

-Տե՛ր, չգիտենք՝ ուր ես գնում. արդ, ինչպե՞ս կարող ենք գիտենալ ճանապարհը:

⁶Հիսուսը պատասխանեց նրան.

-Ե՛ս եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Ինձնով միայն կարելի է գնալ իմ Հոր մոտ:՝⁷ Եթե ինձ ճանաչեիք, կճանաչեիք նաև իմ Հորը. այժմվանից իսկ դուք գիտեք նրան և տեսել եք նրան:

⁸Փիլիպպոսն ասաց.

-Տե՛ր, ցո՛ւյց տուր մեզ Հորը, և դա բավական է մեզ:

⁹Հիսուսը պատասխանեց.

-Այսքան ժամանակ ձեզ հետ եմ և դեռ չճանաչեցի՞ր ինձ, Փիլիպպո՛ւ: Ով ինձ տեսավ, տեսած եղավ Հորը. էլ ինչպե՞ս ես ասում՝ «Ցո՛ւյց տուր մեզ Հորը»: ¹⁰Չե՞ս հավատում, որ ես իմ Հոր մեջ եմ, և Հայրս՝ իմ մեջ: Այս խոսքերը, որ ես ասում եմ ձեզ, ինքս ինձնից չեմ ասում, այլ Հայրը, որ բնակվում է իմ մեջ, իմ միջոցով է կատարում իր գործերը: ¹¹Հավատացե՛ք ինձ, որ ես իմ Հոր մեջ եմ, և Հայրը՝ իմ մեջ. եթե ոչ իմ

^{13.34} Հհ 15.12,17, Ա Հհ 3.23, Բ Հհ 5:

^{14.6} Բրք 3.13-14:

խոսքերի, գոնե իմ կատարած գործերի համար հավատացե՛ք ինձ:՝¹² Լա՛վ իմացեք, ով որ հավատում է ինձ, ինքն էլ կկատարի այն գործերը, որ ես եմ անում, և դրանից ավելին էլ կկատարի, որովհետև ես գնում եմ իմ Հոր մոտ:՝¹³ Եվ ինչ որ խնդրեք իմ անունով, կկատարեմ այն, որպեսզի Հայրը փառավորվի Որդու միջոցով:՝¹⁴ Այո՛, եթե որևէ բան խնդրեք իմ անունով, կկատարեմ:՝

Սուրբ Հոգուն ուղարկելու խոստումը

¹⁵ -Եթե սիրում եք ինձ, պիտի գործադրեք իմ պատվիրանները:՝¹⁶ Եվ ես պիտի աղաչեմ իմ Հորը, որ մի ուրիշ Մխիթարիչ տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ լինի:՝¹⁷ Դե՛ս Սուրբ Հոգին է, որ ճշմարտությունն է հայտնում: Աշխարհը չի կարող նրան ընդունել, որովհետև ո՛չ տեսնում է նրան և ո՛չ էլ ճանաչում: Բայց դուք ճանաչում եք նրան, որովհետև ձեր մեջ պիտի մնա և ձեզ հետ պիտի լինի:՝

¹⁸ Որք չեմ թողնի ձեզ. կրկին կգամ ձեզ մոտ:՝¹⁹ Շուտով աշխարհն այլևս ինձ չի տեսնի, բայց դուք կտեսնեք ինձ, որովհետև ես ապրում եմ, և դուք էլ կապրեք:՝²⁰ Այն օրը դուք կիմանաք, որ ես իմ Հոր մեջ եմ, դուք՝ իմ մեջ, և ես՝ ձեր մեջ:՝²¹ Ով ընդունում է իմ պատվիրաններն ու գործադրում դրանք, նա՛ է, որ սիրում է ինձ: Ով սիրում է ինձ, նրան կսիրի և իմ Հայրը: Ես էլ նրան պիտի սիրեմ և ինձ հայտնի դարձնեմ նրան:՝

²² Հուդան, ոչ Իսկարիովտացին, ասաց նրան.

-Տե՛ր, ինչպե՞ս կլինի, որ քեզ հայտնես մեզ և ոչ թե աշխարհին:

²³ Հիսուսը պատասխանեց նրան.

-Ով սիրում է ինձ, կգործադրի իմ խոսքերը. իմ Հայրն էլ կսիրի նրան, և ես ու իմ Հայրը կգանք նրա մոտ և կբնակվենք նրա հետ:՝²⁴ Իսկ ով չի սիրում ինձ, չի գործադրի իմ խոսքերը: Իմ այս ասածները, որ լսեցիք, իմ խոսքերը չեն, այլ խոսքերն են իմ Հոր, որ ինձ ուղարկեց:՝²⁵ Այս բոլորն ասացի ձեզ, քանի որ տակավին ձեզ հետ եմ:՝²⁶ Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին իմ Հայրը կուղարկի ձեզ մոտ իմ անունով, նա ձեզ ամեն ինչ կսովորեցնի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ:

Քրիստոսի խաղաղությունը

²⁷ -Խաղաղություն եմ թողնում ձեզ. իմ խաղաղությունն էմ տալիս ձեզ, որ տարբեր է այս աշխարհի տված խաղաղությունից: Մի՛ խռովվեք և մի՛ վախեցեք:՝²⁸ Լսեցիք, ինչ որ ասացի ձեզ, թե՛ «Ահա գնում եմ, բայց կրկին կգամ ձեզ մոտ»: Եթե ինձ սիրեիք, ապա ուրախ պիտի լինեիք, որ ես գնում եմ իմ Հոր մոտ, որովհետև իմ Հայրն ինձնից մեծ է:՝²⁹ Այս բոլորն ասացի ձեզ նախքան պատահելը, որպեսզի երբ որ պատահի, այն

^{14.11} «Հավատացե՛ք». գրք. ունի «Հավատո՞ւմ եք»:

^{14.14} Այս հմր չկա մի շարք ձեռագրերում: «Խնդրեք» շատ ձեռ. ունեն «խնդրեք ինձնից»:

^{14.15} Իմն 6.18:

^{14.16} «Մի ուրիշ Մխիթարիչ». առաջին Մխիթարիչը Քրիստոսն ինքն էր (հմմտ Ա. Հե 2.1 հուն.): Մխիթարիչ նշ է ոչ միայն «մխիթարող», այլ նաև «քաջալերող, խորհրդատու, օգնական, միջնորդ և բարեխոս», և Սուրբ Հոգին այս բոլոր դերերով մշտապես հանդես է գալիս հավատացյալների կյանքում:

^{14.17} «Ձեր մեջ պիտի մնա». մի շարք ձեռ. ունեն «ձեր մեջ է մնում»:

^{14.21} Իմն 6.12, 18, Սր 4.14:

ժամանակ հավատաք: ³⁰ Այլևս երկար չեմ խոսի ձեզ հետ, որովհետև ահա գալիս է այս աշխարհի իշխանը, որն ինձ վրա ոչ մի իշխանություն չունի: ³¹ Բայց աշխարհը պետք է գիտենա, որ ես սիրում եմ Հորը, և այդ է պատճառը, որ ես կատարում եմ այն ամենը, ինչ նա պատվիրեց ինձ. վե՛ր կացեք, գնանք այստեղից:

15

Հիսուսը՝ ճշմարիտ որթատունկ

¹ - Ես եմ ճշմարիտ որթատունկը, և իմ Հայրը մշակն է: ² Նա կտրում է ինձ վրա հաստատված բոլոր այն ճյուղերը, որոնք պտուղ չեն տալիս, իսկ այն բոլոր ճյուղերը, որոնք պտուղ են տալիս, էտելով մաքրում է, որպեսզի ավելի պտղաբեր լինեն: ³ Դուք արդեն մաքրված եք այն խոսքի համար, որ ձեզ ասացի: ⁴ Մնացե՛ք ինձ միացած, և ես միացած կմնամ ձեզ: Ինչպես որ ճյուղը ինքն առանձին պտուղ չի տա, եթե միացած չլինի որթատունկին, նույնպես և դուք չեք կարող պտուղ տալ, եթե միացած չլինեք ինձ:

⁵ Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը: Ով միացած է ինձ, և ես՝ նրան, նա առատ պտուղ կտա, որովհետև առանց ինձ դուք ոչինչ անել չեք կարող: ⁶ Ով որ ինձ միացած չի մնա, նա կտրվելով դուրս կնետվի և կչորանա այն ճյուղերի նման, որ հավաքում և կրակը նետելով այրում են: ⁷ Եթե ինձ միացած մնաք, և իմ խոսքերն էլ ձեր մեջ մնան, Աստծուց խնդրեցե՛ք, ինչ որ ուզենաք, և նա կտա ձեզ: ⁸ Իմ Հայրը փառավորված կլինի, երբ դուք առատ պտուղ տաք և այդպիսով իմ աշակերտները լինեք:

⁹ Ինչպես որ իմ Հայրն ինձ սիրեց, նույնպես էլ ես ձեզ սիրեցի: Մնացե՛ք իմ սիրո մեջ: ¹⁰ Եթե իմ պատվիրանները գործադրեք, մնացած կլինեք իմ սիրո մեջ, ինչպես ես, իմ Հոր պատվիրանները գործադրելով, մնում եմ նրա սիրո մեջ: ¹¹ Այս բաներն ասացի ձեզ, որպեսզի իմ ուրախությունը ձեր մեջ լինի, և ձեր ուրախությունը կատարյալ լինի: ¹² Իմ պատվերն այս է, որ սիրեք միմյանց, ինչպես ես սիրեցի ձեզ: ¹³ Մեծագույն սերն այն սերն է, որով մարդ ինքն իրեն գոհում է իր բարեկամների համար: ¹⁴ Դուք իմ բարեկամներն եք, եթե գործադրեք այն, ինչ պատվիրում եմ ձեզ: ¹⁵ Այլևս ձեզ ծառա չեմ կոչում, որովհետև ծառան չգիտի, թե ի՛նչ է անում տերը, այլ ձեզ բարեկամ կոչեցի, որովհետև ինչ որ լսեցի իմ Հորից, հայտնեցի ձեզ: ¹⁶ Դուք չեք, որ ընտրեցիք ինձ, այլ ես ձեզ ընտրեցի և ձեզ նշանակեցի, որ գնաք ու պտղաբեր լինեք, և ձեր պտուղը լինի մնայուն, որպեսզի ինչ էլ որ խնդրեք իմ անունով, Հայրս տա ձեզ: ¹⁷ Դարձյալ պատվիրում եմ ձեզ, սիրեցե՛ք միմյանց:

Աշխարհի ատելությունը

¹⁸ - Եթե աշխարհը ձեզ ատում է, իմացե՛ք, որ նախ ինձ է ատել: ¹⁹ Եթե այս աշխարհին

^{15.1} «Որթատունկը» Հին Կտակարանում մի խորհրդանիշ է, որ նշում է Աստծու ժողովրդին (տե՛ս Սղ 80.8-15: Ես 5.1-7, Եր 2.21): Քրիստոսը ցույց է տալիս, որ ինքն է ճշմարիտ որթատունկը, այսինքն՝ իրենով է սկիզբ առնում Աստծու իսկական ժողովուրդը:

^{15.3} «Այն խոսքի համար». կարելի է հասկանալ նաև «այն խոսքի շնորհիվ»:

^{15.12} Հհ 13.34, 15.17, Ա Հհ 3.23, Բ Հհ 5:

պատկանած լինէիք, աշխարհը սիրած կլինէր ձեզ, որպէս իրենից եղող մեկին: Բայց աշխարհը ձեզ ատում է, որովհետև ես ձեզ գատեցի այս աշխարհից, և դուք այլևս այս աշխարհին չէք պատկանում: ²⁰ Հիշեցե՛ք այն խոսքը, որ ասացի ձեզ, թե՛ «Օտաան իր տիրոջից ավելի մեծ չէ»: Եթե ինձ հալածեցին, ապա ձեզ էլ կհալածեն. եթե իմ խոսքերը գործադրեցին, ապա ձերն էլ կգործադրեն: ²¹ Բայց այս բոլորը ձեզ պիտի անեն իմ անվան պատճառով, որովհետև չեն ճանաչում նրան, ով ինձ ուղարկեց: ²² Եթե ես աշխարհ եկած և նրանց հետ խոսած չլինէի, նրանք մեղք չէին ունենա, բայց հիմա իրենց մեղքի համար որևէ արդարացում չունեն: ²³ Ով որ ատում է ինձ, ատած կլինի իմ Հորը: ²⁴ Եթե ես նրանց մեջ կատարած չլինէի այնպիսի գործեր, որ ուրիշ ոչ ոք չի արել, նրանք մեղք չէին ունենա: Սակայն ահա նրանք տեսան իմ գործերը և ատեցին թե՛ ինձ, թե՛ իմ Հորը: ²⁵ Եվ այդ նրա համար, որ կատարվի նրանց Օրենքում գրվածը, որ ասում է. «Ինձ ատեցին առանց որևէ պատճառի»: ²⁶ Բայց երբ գա Միսիթարիչը, այսինքն՝ Սուրբ Հոգին, որին ես ձեզ կուղարկեմ Հորից, որովհետև նա Հորից է ելնում, նա՛ կպատմի ճշմարտությունը և կվկայի իմ մասին: ²⁷ Դուք էլ կվկայեք իմ մասին, որովհետև սկզբից ինձ հետ եղաք:

16

¹ -Այս բաներն ասացի ձեզ, որպեսզի ձեր հավատը չկորցնեք: ² Իրենց ժողովարաններից դուրս կհանեն ձեզ, և կգա ժամանակ, երբ ով որ ձեզ սպանի, պիտի կարծի, թե Աստծուն ծառայություն է մատուցում: ³ Մարդիկ այս բաները կանեն ձեզ, որովհետև չճանաչեցին ո՛չ Հորը և ո՛չ էլ ինձ: ⁴ Սակայն ձեզ այս բանն ասացի, որպեսզի երբ դրանց ժամանակը գա, հիշեք, որ արդեն ասել էի ձեզ:

Սուրբ Հոգու դերը

-Այս բաները սկզբից չասացի, որովհետև ձեզ հետ էի: ⁵ Բայց հիմա գնում եմ ինձ ուղարկողի մոտ, և ձեզնից ոչ մեկն ինձ չի հարցնում, թե՛ ո՞ւր ես գնում: ⁶ Սակայն որովհետև այս բոլորն ասացի ձեզ, ձեր սրտերը տրտմությամբ լցվեցին: ⁷ Բայց ես ճշմարտությունն եմ ասում ձեզ. լավ է ձեզ համար, որ ես գնամ, որովհետև եթե չգնամ, Միսիթարիչը չի գա ձեզ մոտ, իսկ եթե գնամ, նրան կուղարկեմ ձեզ մոտ: ⁸ Երբ նա գա, ցույց կտա աշխարհի մեղքը, իմ արդարությունը և չարի դատաստանը: ⁹ Աշխարհի մեղքը, որովհետև ինձ չեն հավատում, ¹⁰ իմ արդարությունը, որովհետև ես գնում եմ իմ Հոր մոտ, և ինձ այլևս չէք տեսնի, ¹¹ չարի դատաստանը, որովհետև Սատանան՝ այս աշխարհի իշխանը, արդեն իսկ դատապարտված է:

¹² Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, սակայն այժմ չեք կարող տանել: ¹³ Բայց երբ գա ինքը՝ Սուրբ Հոգին, որ ճշմարտությունն է հայտնում, նա՛ կառաջնորդի ձեզ դեպի

^{15.20} Մտ 10.24, Ղկ 6.40, Հհ 13.16:

^{15.25} Սղ 35.19, 69.4:

^{16.8-11} Բնագրում բառացիորեն ասված է. «Երբ նա գա, պիտի ամբաստանի աշխարհը մեղքի համար, արդարության համար և դատաստանի համար: (9) Մեղքի համար, որովհետև ինձ չեն հավատում, (10) արդարության համար, որովհետև ես գնում եմ իմ Հոր մոտ, և այլևս ինձ չէք տեսնի. (11) դատաստանի համար, որովհետև այս աշխարհի իշխանն արդեն իսկ դատապարտված է»:

ամբողջական ճշմարտություն, որովհետև նա ինքն իրենից չի խոսի, այլ ինչ որ լսի, այն կասի և ձեզ կպատմի գալիք քաների մասին: ¹⁴ Եւ կփառավորի ինձ, որովհետև ինչ որ առնի ինձնից, կհայտնի ձեզ: ¹⁵ Ինչ որ ունի Հայրս, իմն է. դրա համար ասացի ձեզ, թե ինչ որ առնի ինձնից, կհայտնի ձեզ:

Տրտմություն և ուրախություն

¹⁶ -Ես գնում եմ իմ Հոր մոտ: Մի քիչ ժամանակ էլ, և այլևս ինձ չեք տեսնի, բայց մի կարճ ժամանակ հետո նորից կտեսնեք ինձ:

¹⁷ Աշակերտներից ոմանք հարցրին միմյանց.

-Ի՞նչ է ուզում մեզ ասել իր այս խոսքերով, թե՛ «Մի քիչ ժամանակ, և ինձ այլևս չեք տեսնի, բայց մի փոքր ժամանակ հետո նորից կտեսնեք ինձ», ինչպես նաև ասում է, թե՛ «Ես գնում եմ իմ Հոր մոտ»: ¹⁸ Ի՞նչ է նշանակում այս «մի քիչ ժամանակ»-ը: Չենք իմանում՝ ի՞նչ է խոսում:

¹⁹ Հիսուսն իմացավ, որ նրանք ուզում էին հարց տալ իրեն, ուստի ասաց նրանց.

-Ի՞նչ է, դրա՞ համար էիք միմյանց հարցնում, որ ասացի ձեզ, թե՛ «Մի քիչ ժամանակ, և ինձ այլևս չեք տեսնի, բայց մի կարճ ժամանակ հետո նորից կտեսնեք ինձ»: ²⁰ Լա՛վ իմացեք, դուք պիտի լաք և ողբաք, բայց աշխարհը պիտի ուրախանա. դուք պիտի տրտմեք, բայց ձեր տրտմությունը ուրախության պիտի փոխվի: ²¹ Երբ մի կին ծննդաբերում է, ցավ է քաշում, քանի որ նրա ծննդաբերության ժամանակը հասած է, բայց երեխայի ծնունդից հետո այլևս չի հիշում իր նեղություններն այն ուրախության պատճառով, որ մի մարդ աշխարհ եկավ: ²² Նույնն էլ ձեզ հետ է հիմա. դուք էլ այժմ տրտմած եք, բայց ես դարձյալ կտեսնեմ ձեզ, և ձեր սրտերը կլցվեն ուրախությամբ. մի ուրախություն, որ ոչ ոք չի կարողանա խլել ձեզնից: ²³ Այդ օրն ինձ այլևս ոչ մի բան չեք հարցնի: Լա՛վ իմացեք, ինչ որ իմ անունով խնդրեք իմ Հորից, կտա ձեզ: ²⁴ Մինչև հիմա իմ անունով ոչ մի բան չխնդրեցիք: Խնդրեցե՛ք և կատանաք, որպեսզի ձեր ուրախությունը կատարյալ լինի:

Ես հաղթեցի աշխարհին

²⁵ -Այս բաները պատկերավոր բացատրություններով ասացի ձեզ: Բայց կգա ժամանակ, երբ այլևս պատկերավոր ձևով չեմ խոսի, այլ իմ Հոր մասին բացահայտորեն կխոսեմ ձեզ հետ: ²⁶ Այդ օրը իմ անունով դո՛ւք կխնդրեք նրանից. ես պետք չեմ ունենա ձեզ համար աղաչելու իմ Հորը, ²⁷ որովհետև իմ Հայրն ինքը սիրում է ձեզ, քանի որ դուք սիրեցիք ինձ և հավատացիք, որ ես Աստծուց ելա: ²⁸ Ես Հորից ելա և եկա աշխարհ և այժմ թողնում եմ աշխարհը և գնում իմ Հոր մոտ:

²⁹ Աշակերտներն ասացին նրան.

-Ահա հիմա բացահայտ ես խոսում՝ առանց պատկերավոր բացատրություններ գործածելու: ³⁰ Այժմ գիտենք, որ ամեն ինչ գիտես և պետք չունես, որ որևէ մեկը քեզ բան հարցնի, որպեսզի պատասխան տաս: Դրա համար էլ հավատում ենք, որ

^{16.13} Իմն 9.11:

^{16.16} Շատ ձեռ. չունեն «Ես գնում եմ իմ Հոր մոտ»:

Աստծուց ելար:

³¹ Հիսուսը պատասխանեց նրանց.

-Հավատո՞ւմ եք այժմ: ³² Ահա գալիս է ժամանակը և արդեն իսկ եկել է, երբ պիտի ցրվեք յուրաքանչյուրն իր տուն, և ինձ մենակ պիտի թողնեք: Բայց ես մենակ չեմ, որովհետև իմ Հայրն ինձ հետ է: ³³ Այս բաներն ասացի ձեզ, որպեսզի ինձնով խաղաղություն ունենաք: Աշխարհում դուք նեղություն կունենաք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետև ես հաղթեցի աշխարհին:

17

Հիսուսն աղոթում է Եկեղեցու համար

¹ Հիսուսն այս խոսքերը վերջացնելուց հետո աչքերը բարձրացրեց դեպի երկինք և ասաց.

-Հա՛յր, հասել է ժամանակը, փառավորի՛ր քո Որդուն, որպեսզի քո Որդին էլ քեզ փառավորի: ² Դու նրան իշխանություն տվեցիր ամբողջ մարդկության վրա, որպեսզի հավիտենական կյանք տա բոլոր նրանց, որ տվեցիր իրեն: ³ Եվ հավիտենական կյանքը քեզ ճանաչելն է՝ որպես միակ ճշմարիտ Աստված, ճանաչել նաև Հիսուս Քրիստոսին, որին դու ուղարկեցիր:՝ ⁴ Ես քեզ փառավորեցի երկրի վրա՝ ամբողջացնելով այն գործը, որն ինձ տվեցիր, որ կատարեմ: ⁵ Եվ այժմ, ո՛վ Հայր, փառավորի՛ր ինձ այն փառքով, որ ունեի քեզ հետ՝ աշխարհի ստեղծագործությունից առաջ: ⁶ Քեզ հայտնեցի բոլոր նրանց, որոնց ինձ տվեցիր այս աշխարհից: Նրանք քոնն էին, և ինձ տվեցիր նրանց: Նրանք գործադրեցին քո խոսքերը՝ ⁷ և այժմ իմացան, որ այն ամենը, ինչ տվեցիր ինձ, քեզնից է գալիս, ⁸ որովհետև այն խոսքերը, որ ինձ տվեցիր, ես նրանց տվեցի, և նրանք ընդունեցին ու ճշմարտապես ճանաչեցին, որ ես քեզանից ելա, և հավատացին, որ դո՛ւ ուղարկեցիր ինձ:

⁹ Արդ, ես աղոթում եմ նրանց համար: Չեմ աղոթում աշխարհի համար, այլ նրանց համար, որոնց դու տվեցիր ինձ, որովհետև նրանք քեզ են պատկանում: ¹⁰ Ինչ որ իմն է, այդ բոլորը քոնն է, և ինչ որ քոնն է, այն իմն է, ու նրանք փառավորեցին ինձ: ¹¹ Ահա արդեն գալիս եմ դեպի քեզ և այլևս աշխարհի մեջ չեմ, բայց նրանք աշխարհի մեջ են: Սո՛ւրբ Հայր, անվտա՛նգ պահիր նրանց քո անվան գործությամբ, որովհետև քո անունո՛վ ինձ տվեցիր նրանց, որպեսզի լինեն մի, ինչպես ես ու դու մի ենք:՝

¹² Աշխարհում, երբ նրանց հետ էի, ես պահում էի նրանց քո անվան գործությամբ, որովհետև քո անունո՛վ ինձ տվեցիր նրանց: Ես պահպանեցի նրանց, և նրանցից ոչ մեկը չկորավ, բացի այն մարդուց, որը կորստյան ճանապարհի մեջ է, որպեսզի

^{17.3} «Ճանաչել նաև Հիսուս Քրիստոսին, որին դու ուղարկեցիր» կամ «որպես Քրիստոս ճանաչել Հիսուսին, որին դու ուղարկեցիր»:

^{17.3} Իմս 15.3:

^{17.6} «Քեզ». բոց՝ «քո անունը» (տե՛ս Բառարանի Անուն բառահոդվածը):

^{17.11} «Անվտա՛նգ պահիր նրանց...ինձ տվեցիր». մի շարք ձեռ. ունեն «անվտանգ պահիր նրանց քո անվան գործությամբ, որ ինձ տվեցիր»:

իրականանա Մուրբ գրքում ասվածը: * * ¹³ Բայց հիմա գալիս եմ դեպի քեզ և այս խոսքերն ասում եմ աշխարհում, որպեսզի նրանց սրտերը լցվեն իմ կատարյալ ուրախությամբ: ¹⁴ Ես քո պատգամը փոխանցեցի նրանց, և աշխարհը նրանց ատեց, որովհետև նրանք այս աշխարհին չեն պատկանում, ինչպես ես էլ չեմ պատկանում այս աշխարհին: ¹⁵ Ես չեմ խնդրում, որ նրանց վերցնես աշխարհից, այլ Չարից պահես նրանց: ¹⁶ Ինչպես ես չեմ այս աշխարհին պատկանում, այնպես էլ նրանք չեն պատկանում այս աշխարհին: ¹⁷ Սրբագործի՛ր նրանց քո ճշմարտությամբ, որովհետև քո խոսքը ճշմարտություն է: ¹⁸ Ինչպես դու ինձ ուղարկեցիր աշխարհ, ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ: ¹⁹ Ես ինձ քեզ եմ նվիրաբերում նրանց համար, որպեսզի նրանք էլ ճշմարտապես սրբագործվեն:

²⁰ Չեմ աղոթում միայն նրանց համար, այլ նաև նրանց համար, որոնք քարոզչությամբ հավատալու են ինձ: ²¹ Աղոթում եմ, որ նրանք բոլորն էլ մի լինեն, ինչպես որ դու, ո՛վ Հայր, իմ մեջ ես, և ես՝ քո մեջ, այնպես էլ նրանք լինեն մեր մեջ, որպեսզի աշխարհը հավատա, որ դո՛ւ ուղարկեցիր ինձ: ²² Այն փառքը, որ դու ինձ տվեցիր, ես տվեցի նրանց, որպեսզի մի լինեն, ինչպես որ ես և դու մի ենք: ²³ Ես լինեմ նրանց մեջ, և դու՝ իմ մեջ, այնպես որ նրանք կատարելապես մի լինեն, որպեսզի աշխարհը գիտենա, որ դո՛ւ ուղարկեցիր ինձ, և ես սիրեցի նրանց, ինչպես որ դու ինձ սիրեցիր:

²⁴ Հա՛յր, ում որ ինձ տվեցիր, ուզում եմ, որ ինձ հետ լինեն, ուր որ ես լինեմ, որպեսզի տեսնեն իմ փառքը, այն փառքը, որ դու ինձ տվեցիր, որովհետև ինձ սիրեցիր աշխարհի ստեղծագործությունից առաջ: ²⁵ Արդա՛ր Հայր, թեև աշխարհը քեզ չճանաչեց, բայց ես քեզ ճանաչեցի, և սրանք էլ իմացան, որ դու ես ինձ ուղարկել: ²⁶ Ես քեզ ճանաչեցրի նրանց և պիտի շարունակեմ ճանաչեցնել, որպեսզի այն սերը, որով ինձ սիրեցիր, նրանց մեջ լինի, և ես լինեմ նրանց մեջ:

18

Հիսուսի ձերբակալությունը

(Մտ 26.47-56, Մր 14.43-50, Ղկ 22.47-53)

¹ Հիսուսն այս աղոթքն անելուց հետո իր աշակերտների հետ ելավ գնաց Կեդրոն կոչված ձորի մյուս կողմը: Այնտեղ մի պարտեզ կար, ուր Հիսուսը մտավ իր աշակերտների հետ: ² Հուդան՝ նրա մատնիչը, գիտեր պարտեզի տեղը, որովհետև շատ անգամ Հիսուսը և իր աշակերտներն այնտեղ էին հավաքվում: ³ Ուստի Հուդան, իր հետ վերցնելով զինվորների մի գունդ և ավագ քահանանների ու փարիսեցիների

^{17.12} Շատ ձեռ. չունեն «աշխարհում»:

^{17.12} Սղ 41.9, Բ Եզր 2.26, Հհ 13.18:

^{17.17} «Սրբագործի՛ր նրանց». այսինքն՝ «Քո սեփականությունը նր դարձրու», որովհետև աստվածաշնչական լեզվով «սրբել» նշ է «Աստծուն հատկացնել»:

^{17.19} «Նվիրաբերում եմ քեզ». բոց «սրբում եմ», որ ՀԿ-ում գործածվում է քահանանների և զոհերի համար՝ Աստծուն ընծայելու ժամանակ (Ելք 28.41, 38):

^{18.1} «Կեդրոնի ձորը» կամ «Կեդրոնի հեղեղատ». Երուսաղեմի արևելյան կողմը գտնվող մի ձորակ, որ քաղաքը բաժանում է Ձիթենյաց լեռից:

կողմից ուղարկված սպասավորներ, եկավ այնտեղ: Նրանք զինված էին և ջահեր ու լապտերներ ունեին: ⁴ Հիսուսը, տեսնելով այդ բոլոր մարդկանց, որոնք գալիս էին իր վրա, առաջ անցնելով՝ ասաց.

-Ո՞ւմ եք փնտրում:

⁵ -Նազովրեցի Հիսուսին, -պատասխանեցին նրանք:

Հիսուսն ասաց.

-Ես եմ:

Հուդան՝ մատնիչը, այնտեղ կանգնած էր նրանց հետ: ⁶ Երբ Հիսուսն ասաց՝ ես եմ, նրանք հետ-հետ քաշվեցին և գետին ընկան: ⁷ Հիսուսը դարձյալ հարցրեց նրանց.

-Ո՞ւմ եք փնտրում:

-Նազովրեցի Հիսուսին, -պատասխանեցին նրանք:

⁸ Հիսուսն ասաց.

-Ձեզ ասացի, որ ես եմ, արդ, եթե ինձ եք փնտրում, թո՛ւ ւյլ տվեք, որ սրանք գնան:

⁹ Այս ձևով իրականանում էր այն խոսքը, որ Հիսուսը նախապես ասել էր. «Չեմ կորցնելու նրանցից ոչ իսկ մեկին, որ տվեցիր ինձ»:

¹⁰ Այն ժամանակ Սիմոն Պետրոսը, որը սուր ուներ, քաշեց և զարկեց քահանայապետի ծառային՝ կտրելով նրա աջ ականջը: Ծառայի անունը Մաղքոս էր:

¹¹ Հիսուսն ասաց Պետրոսին.

-Սուրդ իր պատյանի մե՛ջ դիր, տառապանքի այն բաժակը, որ իմ Հայրը տվեց ինձ, կարծում ես չե՞մ խմելու:՝

Հիսուսը Հաննա քահանայապետի առաջ

¹² Ապա զինվորները, հազարապետը և հրեա ղեկավարների սպասավորները բռնեցին Հիսուսին և կապեցին: ¹³ Եվ նախ տարան Հաննայի մոտ, որը այդ տարվա քահանայապետի՝ Կայիափայի աներն էր: ¹⁴ Սա այն Կայիափան էր, որ հրեա ղեկավարներին խորհուրդ էր տվել՝ ասելով, թե ավելի լավ է, որ մեկ հոգի մեռնի ժողովրդի համար:՝

Պետրոսն ուրանում է Հիսուսին

(Մտ 26.69-70, Մր 14.66-68, Ղկ 22.55-57)

¹⁵ Հիսուսի հետևից գնում էին Սիմոն Պետրոսը և մի ուրիշ աշակերտ: Այս աշակերտը, ծանոթ լինելով քահանայապետին, Հիսուսի հետ մտավ քահանայապետի տան գավիթը,՝ ¹⁶ մինչ Պետրոսը կանգնել էր դուրսը, դռան մոտ: Մյուս աշակերտը, որ ծանոթ էր քահանայապետին, դուրս ելավ և խոսելուց հետո դռնապանի հետ, որ մի

^{18.4} «Հիսուսը տեսնելով [այդ բոլոր մարդկանց], որոնք գալիս էին իր վրա...». հուն. ունի «Հիսուսն իմանալով իրեն պատահելիք բոլոր բաները...»:

^{18.11} Մտ 26.39, Մր 14.36, Ղկ 22.42:

^{18.13} «Հաննա» և «Կայիափա». տե՛ս Ղկ 3.2-ի ծնթ:

^{18.14} Հհ 11.49-50:

^{18.15} «Մի ուրիշ աշակերտ». ակնարկված աշակերտը ամենայն հավանականությամբ նույն ինքը ավետարանիչն է:

կին էր, ներս մտցրեց Պետրոսին: ¹⁷ Դռնապան աղախինը հարցրեց Պետրոսին.

-Արդյոք դու էլ այդ մարդու աշակերտներից չե՞ս:

-Ո՛չ,- պատասխանեց Պետրոսը:

¹⁸ Ծառաներն ու սպասավորները կրակ էին վառել այնտեղ և տաքանում էին, որովհետև եղանակը ցուրտ էր: Պետրոսն էլ, նրանց մոտ կանգնած, տաքանում էր:

Քահանայապետը հարցաքննում է Հիսուսին

(Մտ 26.59-66, Մր 14.55-64, Ղկ 22.66-71)

¹⁹ Քահանայապետը հարցեր ուղղեց Հիսուսին՝ նրա աշակերտների և ուսուցումների մասին: ²⁰ Հիսուսը պատասխանեց.

-Ես հրապարակորեն խոսել եմ բոլորի առաջ, միշտ ուսուցանել եմ ժողովարաններում և տաճարում, որտեղ հավաքվում էին բոլոր հրեաները. ես բնավ գաղտնի բան չեմ խոսել: ²¹ Ինչո՞ւ ես հարցնում ինձ, հարցրո՞ւ նրանց, ովքեր լսել են, թե ի՞նչ եմ ասել իրենց, ահա նրանք գիտեն, թե ի՞նչ եմ խոսել:

²² Հիսուսը հազիվ էր այս խոսքերն ասել, երբ սպասավորներից մեկը, որ այնտեղ կանգնած էր, մի ապտակ խփեց Հիսուսին՝ ասելով.

-Այդպե՞ս ես պատասխանում քահանայապետին:

²³ Հիսուսն ասաց նրան.

-Եթե մի սխալ բան ասացի, ցո՛ւյց տուր սխալը, իսկ եթե ուղիղ է ասածս, ինչո՞ւ ես խփում ինձ:

²⁴ Հետո Հաննան Հիսուսին կապված էլ ուղարկեց Կայիափա քահանայապետի մոտ:

Պետրոսը դարձյալ ուրանում է Հիսուսին

(Մտ 26.71-75, Մր 14.69-72, Ղկ 22.58-62)

²⁵ Մինչ Միմոն Պետրոսը այնտեղ կանգնած տաքանում էր, հարցրին.

-Արդյոք դու էլ նրա աշակերտներից չե՞ս:

Նա ուրացավ և պատասխանեց.

-Ո՛չ:

²⁶ Քահանայապետի ծառաներից մեկը՝ նրա ազգականը, որի ականջը Պետրոսը կտրել էր, ասաց.

-Ես քեզ չտեսա՞՞ այնտեղ, պարտեզում, նրա հետ:

²⁷ Պետրոսը դարձյալ ուրացավ, և աքաղաղն իսկույն կանչեց:

Հիսուսը Պիղատոսի առաջ

(Մտ 27.1-2, 11-14, Մր 15.1-5, Ղկ 23.1-5)

²⁸ Կայիափայի տնից Հիսուսին տարան կառավարչի պալատը: Վաղ առավոտ էր: Հրեաները պալատ չմտան, որպեսզի իրենց Օրենքի համաձայն չպղծվեն և կարողանան ուտել զատկական ընթրիքը: ²⁹ Ուստի Պիղատոսը դուրս ելավ և հարցրեց.

-Ինչի՞ համար եք ամբաստանում այս մարդուն:

³⁰ Նրանք պատասխանեցին.

-Եթե այս մարդը չարագործ չլիներ, ապա նրան քեզ չէինք հանձնի:

³¹ Պիղատոսն ասաց.

-Ուրեմն վերցրե՛ք նրան և ձեր Օրենքի համաձայն դատեցե՛ք:

Նրանք պատասխանեցին.

-Մենք իրավունք չունենք որևէ մեկին մահվան դատապարտելու:

³² Այսպիսով իրականանում էր Հիսուսի այն խոսքը, որով նա ակնարկում էր, թե ինչպիսի մահով էր ինքը մեռնելու:*

³³ Պիղատոսը կրկին պալատ մտավ, կանչեց Հիսուսին և հարցրեց.

-Դո՞ւ ես հրեաների թագավորը:

³⁴ Հիսուսը պատասխանեց.

-Դու քեզնի՞ց ես տալիս այդ հարցը, թե՞ ուրիշներն ասացին քեզ իմ մասին:

³⁵ Պիղատոսն ասաց.

-Մի՞ թե ես էլ հրեա եմ: Քո ժողովուրդը և ավագ քահանաները քեզ հանձնեցին իմ ձեռքը: Դու ի՞նչ ես արել:

³⁶ Հիսուսը պատասխանեց.

-Իմ թագավորությունն այս աշխարհից չէ: Եթե իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, իմ հետևորդները, անշուշտ, պիտի կռվեին, որպեսզի հրեաների ձեռքը չընկնեմ: Բայց ո՞չ, իմ թագավորությունն այստեղից չէ:

³⁷ Պիղատոսն ասաց.

-Այդպես, ուրեմն դու թագավո՞ր ես:

Հիսուսը պատասխանեց.

-Ահա դո՞ւ ես ասում, որ թագավոր եմ: Ես ծնվել եմ և աշխարհ եկել մեկ բանի համար, որ վկայեմ ճշմարտության մասին: Ով որ կողմնակից է ճշմարտությանը, նա լսում է իմ խոսքը:

³⁸ Պիղատոսը հարցրեց.

-Ի՞նչ է ճշմարտությունը:

Հիսուսը դատապարտվում է մահվան

(Մտ 27.15-31, Մր 15.6-20, Ղկ 23.13-25)

Այս ասելուց հետո Պիղատոսը կրկին դուրս ելավ, գնաց հրեաների մոտ և ասաց նրանց.

-Այս մարդու մեջ ես որևէ հանցանք չեմ գտնում:

³⁹ Բայց ձեր սովորության համաձայն, ամեն Ձատկի տոնին մի բանտարկյալ եմ արձակում ձեզ համար: Արդ, ուզո՞ւմ եք, որ ձեզ համար ազատ արձակեմ հրեաների թագավորին:

***18.32** «Իրականանում էր Հիսուսի այն խոսքը...թե ինչպիսի մահով էր ինքը մեռնելու». հրեաների մահապատիժը քարկոծումով էր լինում, մինչդեռ Հիսուսն ասել էր, որ ինքը խաչ «պիտի բարձրանա» (3.14,12.32-34):

***18.32** Հհ 3.14, 12.32:

⁴⁰ Բոլորը միասին աղաղակեցին.

-Ո՛չ նրան, այլ Բարաբբային:

Իսկ այդ Բարաբբան մի ավագակ էր:

19

¹ Այն ժամանակ Պիղատոսն առավ Հիսուսին և մտրակով ծեծել տվեց նրան:

² Չինվորները, մի փշե պսակ շինելով, դրեցին նրա գլխին և ապա ծիրանի զգեստ հագցրին նրան:

³ Նրանք գալիս էին նրա մոտ և ասում.

-Ողջո՛ւյն, հրեաների՛ թագավոր:

Եվ ապտակում էին նրան:

⁴ Պիղատոսը դարձյալ դուրս ելավ և ասաց ամբոխին.

-Ահա նրան բերում եմ դուրս, ձեզ մոտ, որպեսզի գիտենաք, թե ես նրա մեջ որևէ հանցանք չեմ գտնում:

⁵ Եվ Հիսուսը դուրս ելավ՝ փշե պսակը գլխին և ծիրանի զգեստն իր վրա: Պիղատոսն ասաց նրանց.

-Ահա ձեր մարդը՝ ձեզ:

⁶ Երբ ավագ քահանաներն ու սպասավորները տեսան նրան, բարձրաձայն աղաղակեցին.

-Խա՛չը հանիր, խա՛չը հանիր նրան:

Պիղատոսն ասաց.

-Դո՛ւք առեք նրան և ինքնե՛րդ խաչը հանեցեք նրան, որովհետև ես նրա մեջ որևէ հանցանք չեմ գտնում:

⁷ -Մենք Օրենք ունենք, -պատասխանեցին հրեա ղեկավարները, -և մեր Օրենքի համաձայն նա պետք է մեռնի, որովհետև ինքն իրեն Աստծու Որդի դարձրեց:

⁸ Երբ Պիղատոսն այս լսեց, է՛լ ավելի վախեցավ:

⁹ Դարձյալ մտավ պալատ և հարցրեց Հիսուսին.

-Դու որտեղի՞ց ես:

Բայց Հիսուսը պատասխան չտվեց:

¹⁰ Պիղատոսն ասաց նրան.

-Չե՞ս խոսում ինձ հետ. չգիտե՞ս, որ ես իշխանություն ունեմ քեզ խաչը հանելու, ինչպես նաև՝ քեզ ազատ արձակելու:

¹¹ Հիսուսը պատասխանեց.

-Դու ինձ վրա ոչ մի իշխանություն չէիր ունենա, եթե այդ քեզ ի վերուստ Աստծուց տրված չլիներ: Հետևաբար, մեծ մեղքը նրանն է, ով ինձ հանձնեց քո ձեռքը:՝

¹² Այս խոսքի վրա Պիղատոսը մի միջոց էր փնտրում, որ ազատ արձակի Հիսուսին,

^{19.2} «Ծիրանի զգեստ հագցրին նրան». տե՛ս Մր 15.17-ի ծնթ:

^{19.5} Հուն. չունի «ձեզ» բառը:

^{19.11} «Մեծ մեղքը նրանն է, ով ինձ հանձնեց քո ձեռքը». այս խոսքը Կայիափա քահանայապետի մասին է և ոչ թե Հուդայի:

^{19.11} Իմս 6.3:

բայց հրեա ղեկավարներն աղաղակում էին.

-Եթե նրան ազատ արձակես, կայսրին բարեկամ չես: Ով որ ինքն իրեն թագավոր է կոչում, հակառակ է կայսրին:

¹³ Երբ Պիղատոսն այս խոսքերը լսեց, դուրս հանեց Հիսուսին և նստեց ատյան, այն տեղը, որ կոչվում էր Քարահատակ, եբրայերեն՝ Կապպաթա: ¹⁴ Զատկի նախորդ օրն էր, կեսօրվա մոտ: Պիղատոսն ասաց ամբոխին.

-Ահա ձեր թագավորը՝ ձեզ:

¹⁵ Բայց նրանք կրկին աղաղակեցին.

-Սպանի՛ր նրան, սպանի՛ր նրան, իսա՛ չը հանիր նրան:

Պիղատոսը հարցրեց.

-Ես ձեր թագավորին իսա՞ չը հանեմ:

Ավագ քահանաները պատասխանեցին.

-Մենք կայսրից բացի ուրիշ թագավոր չունենք:

¹⁶ Այն ժամանակ Պիղատոսը Հիսուսին հանձնեց նրանց ձեռքը, որպեսզի խաչվի:

Հիսուսի խաչելությունը

(Մտ 27.32-44, Մր 15.21-32, Ղկ 23.26-43)

Նրանք առան Հիսուսին և տարան: ¹⁷ Հիսուսը խաչը շալակած ելավ այն տեղը, որ կոչվում էր Գանգի տեղ, եբրայերեն՝ Գողգոթա: ¹⁸ Այնտեղ խաչեցին նրան և նրա հետ՝ երկու հոգու ևս՝ երկու կողմերից, իսկ Հիսուսին՝ նրանց մեջտեղում: ¹⁹ Պիղատոսը խաչի վրա դնել տվեց մի ցուցատախտակ, որի վրա գրված էր. «Հիսուս Նազովրեցի՝ հրեաների թագավոր»:²⁰ Հրեաներից շատերը կարդացին այդ գրությունը, որովհետև այն տեղը, որտեղ Հիսուսը խաչվեց, քաղաքին մոտ էր: Արձանագրությունը գրված էր եբրայերեն, լատիներեն և հունարեն:

²¹ Հրեաների ավագ քահանաներն ասացին Պիղատոսին.

-Մի՛ գրիր՝ «Հրեաների թագավոր», այլ գրի՛ր. «Այս մարդն ասաց՝ ես հրեաների թագավորն եմ»:

²² Պիղատոսը պատասխանեց.

-Ինչ որ գրեցի՝ գրեցի:

²³ Զինվորները Հիսուսին խաչելուց հետո վերցրին նրա հագուստները և չորս մասի բաժանեցին, յուրաքանչյուրին՝ մեկ մաս: Իսկ քանի որ պատմուճանը առանց կարի էր, վերևից ներքև միակտոր հյուսված,²⁴ ուստի ասացին միմյանց.

^{19.13} «Կապպաթա» արամեերեն բառ, որ նշ է «քարաշեն բեմ» կամ «հարթակ»:

^{19.14} «Նախորդ». գրբ. «ուրբաթ», որ նշ է «պատրաստության օր»: Այսպես էր կոչվում շաբաթ օրվան կամ որևէ մեծ տոնի նախորդող օրը (հմմտ Մտ 27.62-ի ծնթ): «Կեսօրվա մոտ». Զատկի նախորդ օրը կեսօրվանից էր սկսվում գատկական գառների մորթելը տաճարում: Ավետարանիչն ընդգծում է, որ Քրիստոսն ինքը, որպես ճշմարիտ գատկական գառ, զոհվեց կեսօր ժամանակ: Հուն. չունի «Ձեզ»:

^{19.17} «Գողգոթա». ինչպես բացատրված է, արամեերեն նշ է «Գանգ»: Սա Երուսաղեմ քաղաքի մոտակայքում գտնվող մի փոքրիկ բարձունք էր, գանգի ձև ունեցող, որի պատճառով էլ ստացել էր այդ անունը:

^{19.23} «Վերցրին նրա հագուստները». հռոմեական օրենքով մահապարտների անձնական իրերը

-Չպատռենք դա, այլ եկե՛ք վիճակ գցենք և տեսնենք, թե ո՞ւմ կընկնի:
Այս բանը պատահեց, որպեսզի իրականանա Սուրբ գրքում գրվածը.

«Հագուստներս բաժանեցին իրար միջև
և պատմուճանիս վրա վիճակ գցեցին»:

Արդ, զինվորները գրվա՛ծն էր, որ կատարեցին:

²⁵ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա մայրը, մորաքույրը, Կղեոպասի կինը՝ Մարիամը, և Մարիամ Մագդաղենացին: ²⁶ Երբ Հիսուսը տեսավ իր մորը և իր սիրած աշակերտին, որ կանգնած էր նրա մոտ, ասաց մորը.

-Մա՛յր, ահա՛ քո որդին:

²⁷ Հետո ասաց իր աշակերտին.

-Ահա՛ քո մայրը:

Եվ այդ օրվանից աշակերտն իր մոտ առավ նրան:

Հիսուսի մահը

(Մտ 27.45-56, Մր 15.33-41, Ղկ 23.44-49)

²⁸ Դրանից հետո Հիսուսն իմացավ, որ ամեն ինչ վերջացած է, և որպեսզի Սուրբ գրքում գրվածն ամբողջապես կատարված լինի, ասաց.

-Ծարավ եմ:

²⁹ Այնտեղ քացախով լի մի աման կար: Զինվորները, սպունգը լեղախառն քացախի մեջ թաթախելով, անցկացրին զոպայի մի ճյուղի ծայրին և մոտեցրին նրա բերանին:

³⁰ Երբ Հիսուսը լեղախառն քացախը բերանն առավ, ասաց.

-Ամեն ինչ վերջացած է:

Ապա գլուխը կախեց և հոգին ավանդեց:

Զինվորները խոցում են Հիսուսի կողը՝

³¹ Ձատկի նախորդ օրն էր: Հրեա ղեկավարները չուզեցին, որ մարմինները խաչերի վրա մնան շաբաթ օրով, քանի որ այդ շաբաթը տոնական մեծ օր էր: Ուստի խնդրեցին Պիղատոսին, որ խաչվածների սրունքները կոտրեն և մարմինները վերցնեն:

³² Զինվորները եկան և առաջինի սրունքները կոտրեցին, նույնպես և մյուսինը, որ Հիսուսի հետ խաչված էր: ³³ Բայց երբ եկան Հիսուսի մոտ, տեսան, որ նա արդեն մեռած էր, ուստի չկոտրեցին նրա սրունքները: ³⁴ Սակայն զինվորներից մեկը նիզակով ծակեց նրա կողը, և իսկույն արյուն ու ջուր հոսեց: ³⁵ Նա, որ տեսավ այս բանը, ի՛նքը

դահիճների սեփականությունն էին դառնում:

^{19.24} Մղ 22.18:

^{19.28} Մղ 69.21, 22.15:

^{19.29} Շատ ձեռ. չունեն «լեղախառն» բառը, իսկ հուն. ունի «*զինու քացախ*»: «*Ձոպա*». խնկաբեր տունկ, որի ճյուղերն արարողությունների ժամանակ գործածվում էին ջուր կամ արյուն շաղ տալու հավատացյալների վրա՝ նրանց ծիսականորեն մաքրելու համար (տե՛ս Ղև 14.4-7, Եբր 9.19):

^{19.30} Հուն. չունի «*ամեն ինչ*» բառերը:

^{19.31} «*Խաչվածների սրունքները կոտրեն*». խաչ հանվողներն ընդհանրապես թներից էին կախվում և դանդաղորեն մահանում՝ շնչահեղձ լինելով: Սրունքները կոտրելը երկու նպատակ ուներ. նախ՝ որպեսզի խաչվողներն իրենց ոտքերին չհենվեն, և ապա՝ մահն արագ վրա հասնի:

վկայեց այս մասին և նրա տված վկայությունը վավերական է: Նա գիտի, թե իր ասածը ճշմարիտ է, որպեսզի դուք էլ հավատաք: ³⁶ Այս բանը պատահեց, որպեսզի իրականանա Մուրբ գրքերում ասվածը. «Նրա ոչ մի ոսկոր չպիտի փշրվի», ³⁷ ինչպես նաև մյուս գրվածը, որ ասում է. «Պիտի նայեն նրան, ում խոցեցին»:

Հիսուսի թաղումը.

(Մտ 27.57-61, Մր 15.42-47, Ղկ 23.50-56)

³⁸ Դրանից հետո Հովսեփը, որ Արիմաթեա քաղաքից էր, Պիղատոսին խնդրեց, որ Հիսուսի մարմինն իրեն հանձնեն: Հովսեփը Հիսուսի հետևորդներից էր, բայց ծածուկ կերպով, վախենալով հրեա ղեկավարներից: Պիղատոսը թույլատրեց, ուստի Հովսեփը եկավ և վերցրեց Հիսուսի մարմինը: ³⁹ Հովսեփին միացավ նաև Նիկողեմոսը, նա, որ առաջին անգամ Հիսուսի մոտ եկել էր գիշերով, բերեց շուրջ երեսուն կիլոգրամ հալվեով խառնված գմուռ: ⁴⁰ Նրանք վերցրին Հիսուսի մարմինը և փաթաթեցին կտավներով՝ գմուռի և հալվեի հետ միասին, ինչպես հրեաների սովորությունն էր պատանքել: ⁴¹ Հիսուսի խաչված տեղում կար մի պարտեզ, և այդ պարտեզում՝ ժայռափոր մի գերեզման, որի մեջ երբեք որևէ մեկը չէր թաղված: ⁴² Որովհետև հրեաների Չատկի նախօրյակն էր, և այդ գերեզմանն էլ մոտ էր, այնտե՛ղ դրին Հիսուսի մարմինը:

20

Թափուր գերեզմանը

(Մտ 28.1-8, Մր 16.1-8, Ղկ 24.1-12)

¹ Կիրակի օրն արշալույսին, երբ տակավին մութ էր, Մարիամ Մագդաղենացին գնաց գերեզման և տեսավ, որ գերեզմանի մուտքին դրված քարը վերցված է: ² Ուստի վազելով գնաց Սիմոն Պետրոսի և մյուս աշակերտի մոտ, որին Հիսուսը սիրում էր, և ասաց նրանց.

-Տիրոջը վերցրել են գերեզմանից, և չգիտենք, թե որտե՛ղ են դրել նրան:

³ Այս խոսքի վրա Պետրոսը և մյուս աշակերտը ելան և ճանապարհ ընկան դեպի գերեզման: ⁴ Երկուսով միասին վազում էին, բայց մյուս աշակերտը, ավելի արագ վազելով, Պետրոսից առաջ հասավ գերեզման ⁵ և կռանալով տեսավ, որ միայն կտավներ էին այնտեղ, սակայն ներս չմտավ: ⁶ Հասավ նաև Սիմոն Պետրոսը, որ նրա հետևից էր գալիս, ներս մտավ և տեսավ, որ կտավներն այնտեղ էին, ⁷ իսկ վարշամակը, որ նրա գլխին էր, մյուս կտավների հետ չէր, այլ ծավված և առանձին մի

^{19.36} Ելք 12.46, Թվ 9.12, Սղ 34.20:

^{19.37} **Ձք 12.10, Հտ 1.7:**

^{19.38} «Արիմաթեա». տե՛ս Մտ 27.57-ի ծնթ: «Հովսեփը եկավ և վերցրեց Հիսուսի մարմինը». մի շարք ձեռ. ունեն «եկան և վերցրին Հիսուսի մարմինը»:

^{19.39} «Հալվե». հնդկական մի բարձր ծառի անուշահոտ յուղ, որ գմուռի հետ խառնելով՝ եգիպտացիները և հրեաներն օգտագործում էին դիակները պատելու համար:

^{19.39} Հհ 3.1-2:

կողմ էր դրված: ⁸ Այն ժամանակ մյուս աշակերտն էլ, որ ավելի առաջ էր հասել գերեզման, ներս մտավ, տեսավ և հավատաց. ⁹ քանի որ դեռ չէին հասկացել Մուրբ գրքի այն խոսքը, որի համաձայն նա պետք է մեռելներից հարություն առներ:

¹⁰ Ապա աշակերտները վերադառնալով հավաքվեցին միմյանց մոտ:

Հիսուսը երևում է Մարիամ Մագդաղենացուն

(Մտ 28.9-10, Մր 16.9-11)

¹¹ Իսկ Մարիամը դուրսը, գերեզմանի մոտ կանգնած, լաց էր լինում: Մինչ նա լալիս էր, կռացավ, նայեց գերեզմանից ներս ¹² և տեսավ սպիտակ զգեստներ հագած երկու հրեշտակների, որոնք նստել էին այնտեղ, որտեղ նախապես Հիսուսի մարմինն էր դրված, մեկը՝ գլխի կողմը, մյուսը՝ ոտքերի: ¹³ Նրանք ասացին նրան.

-Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս:

Նա պատասխանեց.

-Որովհետև իմ Տիրոջը վերցրել են գերեզմանից, և չգիտեմ, թե ո՞ւր են դրել նրան:՝

¹⁴ Այս ասելուց հետո շրջվեց դեպի հետ և տեսավ Հիսուսին, որ կանգնած էր, բայց նա չգիտեր, թե Հիսուսն է:

¹⁵ -Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտրում,-հարցրեց Հիսուսը:

Մարիամը կարծեց, թե պարտիզպանն է, ուստի ասաց.

-Տե՛ր, եթե դու ես վերցրել նրան, ասա՛ ինձ՝ որտե՞ղ ես դրել, որպեսզի գնամ նրան վերցնեմ:

¹⁶ Հիսուսն ասաց նրան.

-Մարիա՛մ:

Նա դարձավ և երբայերեն նրան ասաց.

-Ռաբբունի՛, - որ նշանակում է «Վարդապետ»:

¹⁷ -Մի՛ դիպչիր ինձ,- ասաց Հիսուսը նրան,-որովհետև դեռ Հոքս մոտ չեմ բարձրացել: Բայց դու գնա՛ իմ եղբայրների մոտ և ասա՛ նրանց, որ ես բարձրանում եմ իմ Հոր և ձեր Հոր մոտ, իմ Աստծու և ձեր Աստծու մոտ:՝

¹⁸ Մարիամ Մագդաղենացին գնաց և աշակերտներին պատմեց, որ ինքը տեսել է Տիրոջը և հայտնեց այն, ինչ նա ասել էր իրեն:

՝20.13 Հուն. չունի «գերեզմանից» բառը:

՝20.16 «Ռաբբունի», ինչպես Հովհաննես ավետարանիչն է թարգմանում, նշ է «վարդապետ իմ» այսինքն՝ «ուսուցիչ իմ»: Կարևոր է իմանալ, որ հրեաներն այս կոչումը գործածում էին միայն Աստծուն ուղղված իրենց աղոթքների մեջ:

՝20.17 «Իմ եղբայրների». Հիսուսն ակնարկում է իր հետևորդներին: «Իմ Հոր և ձեր Հոր, իմ Աստծու և ձեր Աստծու». Հիսուսն այս բառերը գործածում է տարբեր իմաստներով. Նա Աստծու Որդին է՝ բնությանմբ և ոչ թե որդեգրությամբ, ինչպես մարդկանց պարագայում է (հմմտ 1.12, 14 և 18), ուստի և Հայր Աստված իր «Հայրն» է՝ բնությամբ: Մյուս կողմից՝ նույն Հայրը, որ մեր Աստվածն է, իբրև մեր ստեղծիչը և Տերը, Քրիստոսի «Աստվածն է»՝ միայն մարդեղության մեջ, որովհետև Որդին մեր փրկության համար Հոր կամքով հանձն առավ ժամանակավորապես իրեն «ունայնացնել» իր աստվածային փառքից (հմմտ Փպ 2.7) և աշխարհում իրեն ցույց տալ իբրև մարդ՝ իր անձը Աստծու հնազանդության կատարյալ օրինակ դարձնելով բոլոր մարդկանց համար:

Հիսուսը երևում է իր աշակերտներին

(Մտ 28.16-20, Մր 16.14-18, Ղկ 24.36-49)

¹⁹ Այդ կիրակի օրը երեկոյան, երբ աշակերտները միասին հավաքվել էին և դռներն էլ փակել՝ վախենալով հրեա ղեկավարներից, Հիսուսը եկավ, կանգնեց նրանց մեջտեղը և ասաց նրանց.

-Ողջո՛ւյն ձեզ:

²⁰ Եվ ողջունելուց հետո նրանց ցույց տվեց իր ձեռքերն ու կողը: Աշակերտներն ուրախացան՝ տեսնելով իրենց Տիրոջը: ²¹ Հիսուսը դարձյալ ասաց նրանց.

-Ողջո՛ւյն ձեզ: Ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ:

²² Ապա փչեց նրանց վրա և ասաց.

-Առե՛ք Սուրբ Հոգին. ²³ եթե մեկին ներեք իր մեղքերը, թող ներված լինեն, և եթե չներեք մեկի մեղքերը, թող ներված չլինեն:՝

Հիսուսը և Թովմասը

²⁴ Տասներկու աշակերտներից մեկը՝ Թովմասը, որ Երկվորյակ էր կոչվում, Հիսուսի եկած ժամանակ նրանց հետ չէր: ²⁵ Մյուս աշակերտները նրան ասացին.

-Մենք տեսա՛նք Տիրոջը:

Թովմասը նրանց ասաց.

-Մինչև մեխերի հետքերը չտեսնեմ նրա ձեռքերի մեջ և մատներս չդնեմ մեխերի տեղերն ու ձեռքս չդիպցնեմ նրա կողին, չեմ հավատա:

²⁶ Ութ օր հետո աշակերտները դարձյալ հավաքվել էին ներսում, և Թովմասն էլ նրանց հետ էր: Թեև դռները փակ էին, Հիսուսը եկավ և կանգնեց նրանց մեջտեղը և ասաց.

-Ողջո՛ւյն ձեզ:

²⁷ Ապա ասաց Թովմասին.

-Բե՛րքո մատը, դի՛ր այստեղ և տե՛ս իմ ձեռքերը. բե՛րքո ձեռքը և դիպցրո՛ւ իմ կողին. անհավատ մի՛ եղիր, այլ հավատացյալ:

²⁸ Թովմասը բացականչեց.

-Տե՛ր իմ և Աստված ծ՛իմ:

²⁹ Հիսուսն ասաց նրան.

-Դու հավատացիր, որովհետև ինձ տեսար, չէ՞. երանի՛ նրանց, որոնք հավատում են առանց ինձ տեսնելու:

Այս Ավետարանի գրության նպատակը

³⁰ Հիսուսն իր աշակերտների ներկայությամբ ուրիշ բազմաթիվ հրաշքներ էլ

^{20.19} «Ողջույն». ինչպես հայ., այնպես էլ եբր. և հուն. այս բառը նշ է նաև «խաղաղություն»:

^{20.20} «Նրանց ցույց տվեց իր ձեռքերն ու կողը», որպեսզի տեսնեն մեխերի և նիզակի պատճառած վերքերի սպիները և ճանաչեն նրան:

^{20.21} «Իմ Հայրը». հուն. «Հայրը»:

^{20.23} «Ներեք» և «չներեք». տե՛ս Մտ 16.19-ի ծնթ:

^{20.23} Մտ 16.19, 18.18:

կատարեց, որոնք գրված չեն այս գրքում: ³¹ Իսկ այսքանը գրվեց, որպեսզի հավատաք, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստուծու Որդին, և որպեսզի նրա հանդեպ ձեր ունեցած հավատի միջոցով հավիտենական կյանք ունենաք:

21

Հիսուսը Գալիլեայում երևում է իր յոթ աշակերտներին

¹ Դրանից հետո Հիսուսը դարձյալ երևաց իր աշակերտներին՝ Տիբերիայի լճի ափին: Ահա թե նա ինչպես երևաց. ² միասին էին Սիմոն Պետրոսը, Թովմասը՝ Երկվորյակ կոչվածը, Նաթանայելը, որ Գալիլեայի Կանա քաղաքից էր, Ջեբեդեոսի որդիները և Հիսուսի աշակերտներից ուրիշ երկու հոգի: ³ Սիմոն Պետրոսը նրանց ասաց.

-Գնում եմ ձուկ որսալու:

-Մենք էլ ենք գալիս քեզ հետ, -ասացին մյուսները:

Նրանք գնացին և նավակ մտան, բայց այդ գիշեր ոչինչ չբռնեցին: ⁴ Առավոտյան վաղ Հիսուսը կանգնած էր լճի եզերքին, սակայն աշակերտները չիմացան, որ Հիսուսն է:

⁵ Հիսուսն ասաց նրանց.

-Տղանե՛ր, ուտելու բան չունե՞ք:

-Ո՛չ, - պատասխանեցին նրանք:

⁶ Հիսուսն ասաց նրանց.

-Ուռկանը զցեք նավակի աջ կողմը և կգտնեք:

Նրանք զցեցին ուռկանը, և երբ ուզեցին դուրս քաշել, ձկների շատությունից չէին կարողանում:՝

⁷ Այն աշակերտը, որին Հիսուսը սիրում էր, ասաց Պետրոսին.

-Տե՛րն է:

Սիմոն Պետրոսը երբ լսեց, թե Տերն է, հագուստը վրան զցեց, քանի որ մերկ էր, և նետվեց ջրի մեջ: ⁸ Մյուս աշակերտները, որոնք ցամաքից շատ հեռու չէին, մոտավորապես հարյուր մետր, նավակով եկան դեպի եզերք՝ իրենց հետ քաշելով ձկներով լի ուռկանը: ⁹ Երբ ցամաք ելան, տեսան վառված կրակ ու նրա վրա դրված ձուկ ու հաց: ¹⁰ Հիսուսն ասաց նրանց.

-Բերե՛ք այդ ձկներից, որ հիմա բռնեցիք:

¹¹ Սիմոն Պետրոսը նավակ մտավ և ցամաք քաշեց ուռկանը, որ լիքն էր հարյուր հիսուներեք մեծ-մեծ ձկներով: Չնայած այդքան ձկներին, ուռկանը չպատռվեց:

¹² Հիսուսն ասաց նրանց.

-Եկեք կերե՛ք:

Աշակերտներից ոչ ոք չէր համարձակվում հարցնել նրան, թե դու ո՛վ ես, որովհետև գիտեին, որ Տերն է: ¹³ Հիսուսը մոտեցավ, վերցրեց հացը և տվեց նրանց. նույնպես և ձուկը:

¹⁴ Այս երրորդ անգամ էր, որ Հիսուսը երևաց աշակերտներին՝ մեռելներից

^{21.1} «Տիբերիայի լիճ». տե՛ս 6.1-ի ծնթ:

^{21.6} Ղկ 5.6:

հարություն առնելուց հետո:

Պետրոսը վերականգնվում է իր պաշտոնում

¹⁵ Երբ նրանք կերան, Հիսուսը Միմոն Պետրոսին ասաց.

-Միմոն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ սրանցից ավելի:

-Այո՛, Տե՛ր,- պատասխանեց նա,- դու գիտես, որ սիրում եմ քեզ:

-Արածեցրո՛ւ իմ գառներին,- ասաց Հիսուսը նրան:

¹⁶ Նա դարձյալ հարցրեց.

-Միմոն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ:

-Այո՛, Տե՛ր,- պատասխանեց նա,- դու գիտես, որ սիրում եմ քեզ:

-Արածեցրո՛ւ իմ ոչխարներին,- ասաց Հիսուսը նրան:՝

¹⁷ Երրորդ անգամ նրան հարցրեց.

-Միմոն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ:

Պետրոսը տխրեց, որ նա երեք անգամ հարցրեց իրեն, թե՛ «Միրո՞ւմ ես ինձ»: Եվ ասաց նրան.

-Տե՛ր, դու ամեն ինչ գիտես և գիտես, որ սիրում եմ քեզ:

¹⁸ Հիսուսը նրան ասաց.

-Արածեցրո՛ւ իմ ոչխարներին:

Եվ ավելացրեց.

-Լա՛վ իմացիր, երբ դու երիտասարդ էիր, ինքդ էիր կապում գոտիդ և գնում, ուր որ ուզում էիր: Բայց երբ ծերանաս, ձեռքերդ պիտի վեր բարձրացնես, և ուրիշները պիտի կապեն գոտիդ ու քեզ տանեն այնտեղ, ուր դու չես ուզում գնալ:՝

¹⁹ Հիսուսն այս ասաց՝ ցույց տալու համար, թե Պետրոսն ինչպիսի մահով պիտի փառավորի Աստծուն: Ապա Հիսուսն ասաց նրան.

-Հետևի՛ր ինձ:

Հիսուսը և իր սիրելի աշակերտը

²⁰ Պետրոսը հետ դարձավ և տեսավ, որ այն աշակերտը, ում Հիսուսը սիրում էր, հետևում է իրեն. նա, որ ընթրիքի ժամանակ Հիսուսի կողմը դառնալով՝ հարցրել էր. «Տե՛ր, ո՞վ է, որ մատնելու է քեզ»:՝ ²¹ Պետրոսը, տեսնելով նրան, հարցրեց Հիսուսին.

-Տե՛ր, իսկ սա ի՞նչ պիտի լինի:

²² Հիսուսը պատասխանեց.

-Եթե ես ուզում եմ, որ սա ապրի, մինչև որ ես գամ, քեզ ի՞նչ փույթ. դու հետևի՛ր ինձ:

²³ Այս խոսքից Հիսուսի հետևորդների մեջ այն կարծիքը տարածվեց, թե այդ աշակերտը չպիտի մեռնի: Բայց Հիսուսը Պետրոսին չասաց, թե՛ «Չպիտի մեռնի», այլ՝

^{21.16} «Արածեցրո՛ւ», հուն. ունի «հովվի՛ր»:

^{21.18} «Երբ ծերանաս...ուր դու չես ուզում գնալ». ինչպես հաջորդ հմր է ցույց տալիս, այս խոսքով Հիսուսն ակնարկում է, թե ի՛նչ ձևով պիտի մահանա Պետրոսը: Եվ ինչպես ավանդույթն է ասում, Պետրոսը նահատակվեց՝ գլխիվայր խաչվելով Հռոմում:

^{21.20} Հհ 13.25:

«Եթե ես ուզում եմ, որ սա ապրի, մինչև որ ես գամ, քեզ ի՞նչ փույթ»:

Վերջաբան

²⁴ Սա այն նույն աշակերտն է, որ վկայում է այս բաների մասին, որ և գրի առավ սրանք, և գիտենք, որ նրա վկայությունը վավերական է: ²⁵ Բայց Հիսուսը տակավին ուրիշ շատ բաներ էլ կատարեց, որոնք եթե մեկ առ մեկ գրվեին, կարծում եմ, թե ամբողջ աշխարհին էլ բավական չէր լինի պարփակելու այդ գրված գրքերը:

ACT

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ

«Առաքյալների գործերը» գիրքը Ղուկասի Ավետարանի շարունակությունն է՝ գրված նույն Ղուկասի կողմից: Գլխավոր նպատակն է պատմել, թե ինչպես Քրիստոսի հետևորդները Սուրբ Հոգու առաջնորդությամբ Ավետարանը տարածեցին Երուսաղեմի, Հուդայի, Սամարիայի և ամբողջ աշխարհի տարածքում: Միաժամանակ ցույց է տալիս դեռ նոր հիմնադրված եկեղեցիների ապրած դժվարությունները և այդ դժվարությունների լուծումները Սուրբ Հոգու օգնությամբ: Գիրքն ընդգրկում է քրիստոնեության տարածման պատմությունը, որ սկիզբ առավ Պաղեստինում և ապա տարածվեց աշխարհի չորս կողմերում:

«Առաքյալների գործերը» կարելի է բաժանել երեք մասի.

1. Քրիստոնեության տարածումը Երուսաղեմում Հիսուսի համբարձումից հետո (1.1-8.3):
2. Քրիստոնեության տարածումը Երուսաղեմի շրջակայքում և ամբողջ Պաղեստինում (8.4-12.25):
3. Քրիստոնեության տարածումը Միջերկրականյան երկրներում, մինչև Հռոմ (13.1-28.31):

Գրքի կարևոր երևույթներից մեկը այն դերն է, որ ունեցավ Սուրբ Հոգին, երբ Հոգեգալստի օրը Երուսաղեմում իջավ հավատացյալների վրա որպես զորություն և առաջնորդեց ու զորացրեց եկեղեցին և նրա առաջնորդներին՝ իրենց աշխատանքների մեջ: Քրիստոնեության ուսուցումներն ամփոփված են մի շարք ճառերում, ինչպես Պետրոս առաքյալի քարոզը Հոգեգալստից հետո (2.14-36) և տաճարում՝ կաղին բժշկելուց հետո (3.11-26), Ստեփանոսի խոսքը (7.1-53), Պողոս առաքյալի ճառերը (13.16-41, 17.22-31, 20.18-35, 22.1-21, 24.10-21, 26.2-23): Գրքում հիշատակված դեպքերը ցույց են տալիս, թե ինչպես առաքյալների քարոզչությունների և ուսուցումների մոլիչ ուժը, այսինքն՝ Սուրբ Հոգին, իր արտահայտությունն է գտնում հավատացյալների կյանքում, և թե ինչպես եկեղեցու մշտական առաքելությունն է եղել Հիսուս Քրիստոսի Ավետարանը քարոզել աշխարհի բոլոր ծագերում:

ԳՐՔԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Առաքելական վկայության պատրաստություն (1.1-26):
 - Հիսուսի վերջին պատգամը և խոստումը (1.1-14):
 - Հուդային փոխարինող առաքյալի ընտրությունը (1.15-26):
- Վկայություն Երուսաղեմում (2.1-8.3):
- Վկայություն Հրեաստանի նահանգում և Սամարիայում (8.4-12.25):
- Պողոսի առաքելությունը (13.1-28.31):
 - Պողոսի առաքելական առաջին ճանապարհորդությունը (13.1-14.28):
 - Երուսաղեմի ժողովը (15.1-35):
 - Պողոսի առաքելական երկրորդ ճանապարհորդությունը (15.36-18.22):
 - Պողոսի առաքելական երրորդ ճանապարհորդությունը (18.23-21.16):
 - Պողոսի բանտարկությունը Երուսաղեմում, Կեսարիայում և Հռոմում (21.17-28.31):

1

Սպասում Հոր խոստումին

¹ Իմ առաջին գրքում, ո՛վ Թեոֆիլոս, գրեցի այն ամենի մասին, ինչ Հիսուսը կատարեց և սովորեցրեց սկզբից՝ ² մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգու զորությամբ իր պատվերներն իր ընտրած առաքյալներին տալուց հետո երկինք վերացավ: ³ Իր չարչարանքներին հաջորդող քառասուն օրերի ընթացքում նա քանիցս երևաց նրանց՝ շատ կերպերով ցույց տալով, թե ինքն այլևս ողջ է, և խոսեց Աստծու արքայության մասին: ⁴ Եվ մի առիթով, երբ նրանց հետ հաց էր ուտում, պատվիրեց նրանց՝ ասելով.

- Երուսաղեմից մի՛ հեռացեք, սպասեցե՛ք, մինչև որ ստանաք Հոր խոստումը, որի մասին խոսեցի ձեզ հետ: ⁵ Հովհաննեսը ջրով մկրտեց, բայց դուք մոտ օրերս պիտի մկրտվեք Սուրբ Հոգով:

Հիսուսի համբարձումը

⁶ Մի ուրիշ անգամ, երբ դարձյալ հավաքվել էին, առաքյալները հարցրին նրան.

- Տե՛ր, արդյոք հիմա՞ է ժամանակը, երբ վերականգնելու ես Իսրայելի թագավորությունը:

⁷ Հիսուսը պատասխանեց.

- Դուք չեք կարող իմանալ այն ժամերն ու ժամանակները, որ Հայրը որոշել է իր իշխանությամբ: ⁸ Բայց երբ Սուրբ Հոգին իջնի ձեզ վրա, զորությամբ կլցվեք և իմ վկաները կլինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև

^{1.1} Ակնարկված առաջին գիրքը Ղուկասի Ավետարանն է, որի շարունակությունն է այս գիրքը: Երկու գրքերն էլ ուղղված են նույն անձին՝ Թեոֆիլոսին, որ հուն. նշ է «աստվածասեր»:

^{1.1} Ղկ 1.1-4:

^{1.4} Ղկ 24.49:

^{1.5} Մտ 3.11, Սր 1.8, Ղկ 3.16, Հհ 1.33:

աշխարհի ծայրամասերը:

⁹ Այս խոսքերից հետո, երբ նրանք դեռ նայում էին նրան, Հիսուսը երկինք համբարձվեց, և մի ամպ նրան ծածկեց նրանց տեսողությունից: ¹⁰ Եվ երբ առաքյալները, իրենց աչքերը հառած, նրա երկինք գնալն էին դիտում, ահա երկու սպիտակագգեստ մարդիկ երևացին նրանց ¹¹ և ասացին.

-Ո՛վ գալիլեացիներ, ինչո՞ւ եք կանգնել նայում երկնքին: Այս Հիսուսը, որ երկինք վերացավ, մի օր դարձյալ կգա այնպես, ինչպես տեսաք նրա երկինք գնալը:

Խմբված առաքյալները

¹² Ապա առաքյալները Ձիթենյաց լեռից վերադարձան Երուսաղեմ, որն այդ լեռից հեռու է գտնվում հազիվ մեկ կիլոմետր: ¹³ Եկան քաղաք և գնացին այն վերնատունը, որտեղ և մնում էին: Սրանք էին՝ Պետրոսն ու Հակոբոսը, Հովհաննեսն ու Անդրեասը, Փիլիպպոսն ու Թովմասը, Բարթոլոմեոսն ու Մատթեոսը, Ալփեոսի որդի Հակոբոսն ու Նախանձահույզ Շմավոնը և Հակոբոսի որդի Հուդան: ¹⁴ Սրանք բոլորը միասնաբար, հարատև աղոթքով էին անցկացնում օրերը շատ կանանց հետ, Հիսուսի մոր՝ Մարիամի և Հիսուսի եղբայրների հետ:

Մատթեոսի փոխարինում է Հուդային

¹⁵ Համբարձումից մի քանի օր հետո, երբ շուրջ հարյուր քսան հավատացյալներ մեկտեղված էին, Պետրոսը ոտքի կանգնելով ասաց.

¹⁶ -Եղբայրներ ք, պետք է կատարվեր Սուրբ գրքում գրվածը, այն, ինչ որ նախօրոք Սուրբ Հոգին ասել էր Դավթի բերանով Հուդայի մասին, որը Հիսուսին ձերբակալողների առաջնորդը եղավ: ¹⁷ Հուդան մեր խմբից էր, մեզ նման առաքելական ծառայության ընտրված: ¹⁸ Բայց իր անիրավ մատնությունից հետո, որի վարձով մի ազարակ գնեց, նա գլխիվայր ընկավ այնտեղ, և փորը ճեղքվելով՝ փորոտիքը դուրս թափվեց: ¹⁹ Բոլոր երուսաղեմցիներն իմացան այս մասին, և դրա համար էլ այդ ազարակը նրանց բարբառով կոչվեց Ակեղդամա, այսինքն՝ Արյան ազարակ: ²⁰ Արդ, Սաղմոսների գրքում գրված է. «Թող նրա տունը ավերակ մնա, և մարդ չբնակվի այնտեղ», իսկ մի ուրիշ տեղ ասված է. «Նրա պաշտոնը թող ուրիշն առնի»: ²¹ Այստեղ

^{1.8} Մտ 28.19, Սր 16.15, Ղկ 24.47-48:

^{1.9} Սր 16.19, Ղկ 24.50-51:

^{1.12} «Մեկ կիլոմետր». բոց՝ «շաբաթ օրվա ճանապարհ», որովհետև թույլատրված էր շաբաթ օրով միայն այդքան տեղ ճանապարհորդել: Տե՛ս Սր 11.1-ի ծնթ:

^{1.13} «Վերնատուն» էին կոչվում Պաղեստինում այն սենյակները, որոնք կառուցված էին լինում տան կտուրի մեկ մասի վրա: «Հակոբոսի որդի Հուդան» Թաղեոս առաքյալն է, որը ծանոթ է նաև մի երրորդ անունով՝ Ղեբեոս (տե՛ս Մտ 10.3):

^{1.13} Մտ 10.2-4, Սր 3.16-19, Ղկ 6.14-16:

^{1.18} «Մի ազարակ գնեց». խոսքը բառացի չպետք է հասկանալ, որովհետև Հուդան իր ստացած փողը վերադարձրեց քահանաներին (Մտ 27.3): Հրեական ատյանի անդամներն էին, որոնք այդ փողով գնեցին ակնարկված արտը (տե՛ս Մտ 27.7):

^{1.18-19} Մտ 27.3-8:

^{1.20} ա Սղ 69.25: ք Սղ 109.8:

կան մարդիկ, որոնք միշտ մեզ հետ են եղել Տեր Հիսուսի երկրավոր առաքելության ամբողջ տևողության ընթացքում՝²² Հովհաննեսի ձեռքով նրա մկրտությունից մինչև երկինք համբարձվելու օրը: Նրանցից մեկը պետք է որ տասնմեկիս միանա՝ Քրիստոսի հարությանը մեզ հետ վկա լինելու համար:՝

²³ Այն ժամանակ հավատացյալները ներկայացրին երկու հոգու՝ Բարսաբա կոչված Հովսեփին, որն Արդար մականվանվեց, և Մատաթիային:՝²⁴ Ապա հետևյալ աղոթքն արեցին.

-Տե՛ր, դու, որ ճանաչում ես բոլոր մարդկանց սրտերը, ցո՛ւյց տուր մեզ, թե այս երկուսից ո՛ր մեկին ես ընտրում ²⁵ առաքելական այս պաշտոնի համար, որից Հուդան ընկավ՝ իրեն սահմանված տեղը գնալու համար:

²⁶ Ապա երկու անունների վրա վիճակ գցեցին: Վիճակն ընկավ Մատաթիային, և նա դասվեց տասնմեկ առաքյալների շարքը:

2

Սուրբ Հոգու գալուստը

¹ Երբ Պենտեկոստի օրը հասավ, բոլոր հավատացյալները միասնաբար մեկտեղված էին:՝² Հանկարծ սաստիկ հողմի սուլոցի նման մի ձայն հնչեց երկնքից և լցրեց ամբողջ տունը, որտեղ նստած էին նրանք:՝³ Հետո նրանք տեսան հրեղեն լեզուներ, որոնք տարածվելով նստեցին յուրաքանչյուրի վրա:՝⁴ Բոլոր ներկաները լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել տարբեր լեզուներով, ինչպես որ Հոգին խոսել էր տալիս նրանց:՝

⁵ Այդ օրը Երուսաղեմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ հրեաներով, որոնք եկել էին աշխարհի բոլոր երկրներից:՝⁶ Երբ այս ձայնը լսվեց, մի մեծ բազմություն հավաքվեց և խոնվեց, և բոլորը անակնկալի եկան, որովհետև լսում էին, թե ինչպես նրանցից յուրաքանչյուրը խոսում է իրենց սեփական լեզվով:՝⁷ Ամենքն էլ հիացմունքով և զարմանքով ասում էին միմյանց.

-Այս խոսողները բոլորն էլ գալիլեացիներ չե՞ն. ⁸ ինչպե՞ս է լինում, որ նրանք մեր ծննդավայր երկրների լեզուներով են խոսում, ինչպես որ ահավասիկ լսում ենք:՝⁹ Զե՞ որ ահա մեր մեջ կան պարթևներ, մարեր, իլամացիներ, միջագետացիներ, հրեաստանցիներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ,՝

¹⁰ փոյուզիացիներ և պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կյուրենիայի շրջանից լիբիացիներ, ¹¹ Հռոմից եկած հրեաներ և հրեության դարձած նորահավատներ, կրեացիներ և արաբիացիներ: Եվ ահա բոլորս էլ մեր խոսած լեզուներով իրենցից

^{1.22} ա Մտ 3.16, Սր 1.9, Ղկ 3.21: ք Սր 16.19, Ղկ 24.51:

^{1.23} «Արդար». բնագրում՝ «Հուսոոս», որ լատ. է և նշ է «արդար»:

^{2.1} Ղկ 23.15-21, Բ Օր 16.9-11:

^{2.4} «Տարբեր լեզուներով խոսել». շարունակությունից հստակ է, որ այստեղ ակնարկված լեզուները տարբեր ազգերի ծանոթ լեզուներն են: Սակայն ՆԿ հետագա ակնարկությունները (Գրծ 10.46, 19.6 և Ա Կր 12-14 գլուխներ) հավանաբար վերաբերում են Ս. Հոգու ներշնչումով և հափշտակության վիճակի մեջ գերերկրային անձանոթ մի լեզվով խոսելու երևույթին, իբրև Ս. Հոգու հատուկ պարզևր:

^{2.9} Եկեղեցական հայրերից ոմանք, ինչպես՝ Տերտուղիանոսը և Օգոստինոսը, «հրեաստանցիներ» բառի փոխարեն ունեն «հայաստանցիներ»:

ենք լսում Աստծու մեծամեծ գործերի մասին:՝

¹² Ապշահար և շփոթի մատնված՝ նրանք հարցնում էին միմյանց.

-Ինչպե՞ս կարելի է բացատրել սա:

¹³ Իսկ ոմանք ծաղրանքով ասում էին.

-Նոր գինուց հարբած են:

Պետրոսի պատգամը

¹⁴ Այն ժամանակ Պետրոսը տասնմեկ առաքյալների հետ կանգնեց և բարձրաձայն դիմեց նրանց.

-Ո՛վ հրեաստանցիներ և դուք բոլորդ, որ հիմա Երուսաղեմում եք գտնվում.

իրականությունն իմանալու համար լսեցե՛ք, ինչ որ պիտի ասեմ: ¹⁵ Դուք կարծում եք, որ սրանք հարբած են. բայց այդպես չէ, որովհետև դեռ առավոտյան ժամը ինն է: ¹⁶ Այլ սա հենց կատարումն է Հովելի մարգարեության, որ ասում է.

¹⁷ «Այնուհետև, երբ վերջին օրերը գան,-

ասում է Աստված,-

իմ Հոգին պիտի թափեմ բոլոր մարդկանց վրա.

ձեր որդիներն ու ձեր դուստրերը

իմ պատգամները պիտի փոխանցեն ձեզ, ձեր երիտասարդները տեսիլներ

և ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:՝

¹⁸ Այն օրերին իմ Հոգին պիտի թափեմ նաև

իմ ծառաների և աղախիհնների վրա,

և նրանք ևս

իմ պատգամները պիտի փոխանցեն ձեզ:

¹⁹ Վերը՝ երկնքում, հրաշքներ պիտի ցույց տամ,

իսկ ներքևում՝ երկրի վրա՝ նշաններ.

աշխարհը արյունով, կրակով և թանձր ծխով

պիտի լցվի,

²⁰ արեգակը պիտի խավարի,

և լուսինը արյան գույն պիտի ստանա,

նախքան Տիրոջ մեծ և փառահեղ օրվա գալուստը:

²¹ Այն ժամանակ ով որ Տիրոջն օգնության կանչի,

պիտի փրկվի»:

²² Ո՛վ իսրայելացիներ, լսեցե՛ք, ինչ որ ասում եմ. Աստված ինքը ցույց տվեց ձեզ, որ իր ընտրյալը՝ Նազովրեցի Հիսուսն էր, որի ձեռքով Աստված ձեր մեջ կատարեց իր սքանչելի գործերը, հրաշքներն ու նշանները, ինչպես դուք էլ գիտեք այդ: ²³ Նա Աստծու սահմանած ծրագրի և կանխագիտության համաձայն, ձեր ձեռքը հանձնվեց, և դուք,

^{2.11} «Մրաբխացիներ». այստեղ հիշված Մրաբխան կապ չունի այսօրվա Սաուդյան Արաբիայի հետ, այլ Նաբատիայի արաբական թագավորությունն էր՝ տարածված Կարմիր ծովից մինչև Եփրատ գետը, և որն ընդգրկում էր Մինայի անապատը, Եդոմն ու Մովաբը և Հորդանան գետի արևելյան ափը՝ մինչև Սիրիական անապատ, և որի մայրաքաղաքն էր Պետրան:

^{2.17-21} Հվլ 2.28-32 [LXX]:

անօրենների ձեռքով խաչափայտի վրա գամելով նրան, սպանեցիք:՝²⁴ Սակայն Աստված նրան հարություն տվեց՝ փշրելով մահվան կապանքները, որով ցույց տվեց, թե մահը չէր կարող իշխել նրա վրա:՝²⁵ Արդ, Դավիթը նույն Հիսուսի մասին է ասում.

«Սկզբից իսկ Տիրոջը միշտ տեսնում էի իմ առաջ,
նա իմ կողքին է, որպեսզի չսասանվեմ:՝

²⁶ Ահա թե ինչու ուրախ է իմ սիրտը,
լեզուս ցնծությամբ է արտահայտվում,
և իմ մարմինը կյանքի հույսով պիտի հանգչի.

²⁷ քանզի գիտեմ, որ իմ անձը չես թողնելու մեռելների աշխարհում,
թույլ չես տալու, որ քո սրբի մարմինը
փտություն տեսնի:

²⁸ Ինձ ցույց տվիր կյանքի ճամփան,
և քո քաղցր ներկայության
ուրախությամբ պիտի լցնես ինձ:՝

²⁹ Եղբայրներ՝ ր, Դավիթ նահապետի մասին վստահորեն կարող ենք ասել, որ մեռավ ու թաղվեց, և նրա գերեզմանն այստեղ է մինչև այսօր:՝³⁰ Բայց նա, լինելով մարգարե, գիտեր, թե Աստված նրան երդումով խոստացավ, որ նրա շառավիղից պիտի ծնվի Քրիստոսը, և Աստված նրան թագավոր պիտի անի իր աթոռի վրա:՝³¹ Ուստի կանխագիտությամբ խոսեց Քրիստոսի հարության մասին՝ ասելով, թե՝ «Նրա անձը մեռելների աշխարհում չմնաց, և նրա մարմինը փտություն չտեսավ»:՝³² Այս նույն Հիսուսն էր, որին Աստված հարություն տվեց, և մենք ամենքս վկա ենք դրան:

³³ Աստված իր աջ կողմը բարձրացրեց նրան, և Հիսուսը, իր Հորից ընդունելով Սուրբ Հոգին, որը նա խոստացել էր տալ, այն սփռեց մեզ վրա, ինչ որ դուք անձամբ ահա տեսնում եք ու լսում, ³⁴ որովհետև Դավիթն ինքը երկինք չելավ, բայց ինքն էր ասողը.

«Տերն ասաց իմ Տիրոջը.
նստի՛ր իմ աջ կողմը,՝

³⁵ մինչև որ քո թշնամիներին դնեմ ոտքերիդ տակ
իբրև պատվանդան:»:

³⁶ Հետևաբար, վստահ եղեք բոլորդ, ո՛վ իսրայելացիներ, Աստված Տեր և Օծյալ կարգեց այն Հիսուսին, որին դուք խաչեցիք:

Առաջին նորադարձները

³⁷ Այս խոսքերը լսելով՝ ներկաները խորապես ցնցվեցին և հարցրին Պետրոսին ու

^{2.23} Մտ 27.35, Մր 15.24, Ղկ 23.33, Հհ 19.18:

^{2.24} Մտ 28.5-6, Մր 16.6, Ղկ 24.5:

^{2.25-28} Մղ 16.8-11 [LXX]:

^{2.28} Հուն. չունի «քաղցր» բառը:

^{2.30} «Նրա շառավիղից...թագավոր պիտի անի». շատ ձեռ. ունեն «նրա շառավիղից մեկին պիտի նստեցնի»:

^{2.30} Մղ 132.11, Բ Թգ 7.12-13:

^{2.34-35} Մղ 110.1:

մյուս առաքյալներին.

-Ի՞նչ պետք է անենք, եղբայրներ՝ ր:

³⁸ Պետրոսը պատասխանեց.

-Փոխեցե՛ք ձեր ընթացքը, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով, որպեսզի ներվեն ձեր մեղքերը: Եվ երբ մկրտվեք, պիտի ընդունեք խոստացված պարգևը՝ Սուրբ Հոգին,³⁹ որովհետև Աստված իր խոստումը տվեց թե՛ ձեզ և ձեր զավակներին և թե՛ բոլոր նրանց, ովքեր հեռու են իրենից. մեր Տեր Աստվածն իր մոտ պիտի կանչի նրանց:

⁴⁰ Եվ Պետրոսը, շարունակելով իր խոսքը, բազմաթիվ վկայություններ էր բերում և հորդորում նրանց՝ ասելով.

-Դուք ձեզ փրկեցե՛ք այս մոլորված սերնդի վրա գալիք դատապարտությունից:

⁴¹ Ոմանք համոզվեցին Պետրոսի ասածներին և մկրտվեցին: Այդ օրը հավատացյալների թիվը շուրջ երեք հազար հոգով ավելացավ:⁴² Նրանք առաքյալներից հարատևորեն սովորում էին Քրիստոսի վարդապետությունը և մասնակցում հավաքական ճաշերին, հացը կտրելու արարողությանը և աղոթքներին:⁴³

Առաջին հավատացյալների կյանքը

⁴³ Երուսաղեմում ամեն մարդ վախով էր լցված, որովհետև առաքյալների ձեռքով բազմաթիվ հրաշքներ ու նշաններ էին կատարվում:⁴⁴ Իսկ հավատացյալներն ամենքը միասին էին միշտ և ինչ որ ունեին, ընդհանուր էր իրենց միջև:⁴⁵ Նրանք վաճառում էին իրենց կալվածքներն ու ինչքերը և եկամուտը բաշխում էին բոլորին՝ նայած թե ով ի՞նչ բանի կարիք ուներ:⁴⁶ Ամեն օր կանոնավոր կերպով միասնաբար տաճար էին գնում, իսկ իրենց տներում կատարում էին հացի կտրումը, որից հետո ուրախությամբ ու մաքուր սրտով իրենց կերակուրն էին ուտում⁴⁷ և օրհնում Աստծուն: Իրենց այս կենցաղով նրանք արժանացել էին ամբողջ ժողովրդի համակրանքին: Իսկ Տերն օրեցօր ավելացնում էր եկեղեցում փրկվածների թիվը:

3

Ի ծնե կաղի բժշկումը

¹ Մի օր Պետրոսը և Հովհաննեսը կեսօրից հետո տաճար էին մտնում ժամը երեքի աղոթքի համար:² Ի ծնե կաղ մի մարդ, որին ամեն օր շալակած բերում և դնում էին տաճարի Գեղեցիկ կոչված դարպասի մոտ, որպեսզի տաճար մտնողներից ողորմություն խնդրի,³ երբ տեսավ Պետրոսին և Հովհաննեսին, որոնք տաճար էին մտնում, աղաչեց, որ ողորմություն տան:⁴ Պետրոսն ու Հովհաննեսը նայեցին նրան:

^{2.38} «Փոխեցե՛ք ձեր ընթացքը». բոց՝ «ապաշխարեցե՛ք»: Շատ ձեռ. չունեն «Տեր» բառը:

^{2.42} «Հացը կտրելու [արարողությանը]». բնագրում միայն՝ «հաց կտրելուն». գրբ. «բեկանելոյ հացին»: Այս բացատրությամբ պետք է հասկանալ Սուրբ Հաղորդության խորհուրդը:

^{2.44} Գրծ 4.32-35:

^{3.1} «Ժամը երեքի աղոթքի համար». առաքելական դարում և նաև հետագայում հրեա ժողովուրդն աղոթքի երեք պաշտոնական ժամեր ուներ. առավոտյան ժամը իննին, կեսօրից հետո ժամը երեքին, որ երեկոյան զոհի ընծայման ժամն էր, և արևամուտին:

Պետրոսը նրան ասաց.

-Նայի՛ր մեզ:

⁵ Նա դարձավ առաքյալների կողմը՝ նրանցից մի բան ստանալու ակնկալությամբ:

⁶ Պետրոսն ասաց.

-Արձաթ կամ ոսկի չունեմ, բայց ինչ որ ունեմ, կտամ քեզ: Հանուն Նազովրեցի Հիսուս Քրիստոսի վե՛ր կաց և քայլի՛ր:

⁷ Եվ բռնելով նրա աջ ձեռքից՝ վեր կացրեց նրան: Եվ ահա կաղի սրունքների և ոտքերի վրա ուժ եկավ. ⁸ նա տեղից վեր ցատկեց, սկսեց քայլել և նրանց հետ մտավ տաճար: Քայլում էր, վազվզում, օրհնում Աստծուն: ⁹ Ամբողջ ժողովուրդը տեսավ նրան քայլելիս և Աստծուն օրհնելիս: ¹⁰ Բոլորը գիտեին, որ նա այն նույն մուրացկանն էր, որ նստում էր տաճարի Գեղեցիկ կոչված դարպասի մոտ, ուստի զարմանքով և ապշությամբ լցվեցին կատարված հրաշքի պատճառով:

Պետրոսի պատգամը Սողոմոնի բակում

¹¹ Մինչ բժշկված կաղը հետևում էր Պետրոսին և Հովհաննեսին, ներկա ամբողջ ժողովուրդը զարմացած վազեց նրանց մոտ, դեպի այն սյունագավիթը, որ Սողոմոնի անունով էր կոչվում: ¹² Տեսնելով այս բանը՝ Պետրոսն ասաց ժողովրդին.

-Ո՛վ իսրայելացիներ, ինչո՞ւ եք զարմացել եղածի վրա կամ ինչո՞ւ եք այդպես ապշած նայում մեզ: Կարծում եք, թե մենք մեր սեփական զորությամբ կամ բարեպաշտությամբ քայլել տվեցինք այս մարդուն: Ո՛չ: ¹³ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածն էր, մեր հայրերի Աստվածը, որ այս հրաշքը կատարելով՝ փառավորեց իր Որդուն՝ Հիսուսին, այն Հիսուսին, որին դուք Պիղատոսի ձեռքը հանձնեցիք և, երբ նույնիսկ Պիղատոսը մտածում էր նրան անպարտ արձակել, մերժեցիք: ¹⁴ Մերժեցիք Սրբին ու Արդարին և խնդրեցիք, որ նա ձեզ շնորհի մեկին, որ մարդասպան էր: ¹⁵ Դուք սպանեցիք ձեզ դեպի կյանք առաջնորդողին: Բայց Աստված նրան մեռելներից հարություն տվեց, և մենք վկա ենք դրան: ¹⁶ Հիսուսն ինքը բժշկեց այս մարդուն, որին տեսնում եք և ճանաչում, որովհետև նա հավատաց նրա անվանը: Եվ այդ հավատն էր, որ Հիսուսի ձեռքով ձեր բոլորի աչքի առջև առողջություն տվեց այս մարդուն: ¹⁷ Արդ, եղբայրներ ք, գիտեմ, որ թե՛ դուք և թե՛ ձեր իշխանները չանդրադարձաք ձեր արածին, ¹⁸ բայց Աստված այդպիսով կատարեց այն, ինչ նախօրոք հայտնել էր բոլոր մարգարեների բերանով, որ իր Օծյալը պիտի չարչարվի: ¹⁹ Հետևաբար, ապաշխարեցե՛ք և դարձե՛ք դեպի Աստված, որպեսզի նա ջնջի ձեր մեղքերը, ²⁰ առիթ տա ձեզ, որ վերանորոգվեք, և ձեզ մոտ ուղարկի Հիսուսին՝ նախապես ձեզ համար սահմանված Քրիստոսին, ²¹ որը մնալու է երկնքում, մինչև որ գա ժամանակը, երբ ամեն ինչ կվերանորոգվի այնպես, ինչպես Աստված սկզբից հայտնել է իր սուրբ մարգարեների բերանով: ²² Արդարև, Մովսեսը մեր հայրերին ասաց. «Աստված, ձեր Տերը, ձեր ազգակիցների միջից ինձ նման մի մարգարե պիտի

^{3.11} «Սողոմոնի սյունագավիթը». տե՛ս Հհ 10.23-ի ծնթ:

^{3.13} Ելք 3.15:

^{3.14} Մտ 27.15-23, Սր 15.6-14, Ղկ 23.13-23, Հհ 19.12-15:

^{3.21} Գրք. և հուն. մի քանի ձեռ. չունեն «սկզբից» բառը:

ուղարկի ձեզ մոտ: Լսեցե՛ք նրան ամեն ինչում, ինչ որ նա ասի ձեզ,՝²³ որովհետև ով որ այդ մարգարեին չհնազանդվի, Աստուծո ժողովրդից դուրս կթողնվի և կմոռացվի»:՝²⁴ Մամվելից սկսած՝ բոլոր մարգարեները նույնպես խոսեցին և պատմեցին այս օրերին պատահելիքների մասին: ²⁵ Արդարև, դուք եք որդիները մարգարեների և ժառանգորդներն այն ուխտի, որ Աստված կնքեց մեր հայրերի հետ, երբ ասաց Աբրահամին. «Քո սերնդով պիտի օրհնեմ աշխարհի բոլոր ժողովուրդներին»:՝²⁶ Աստված իր Որդուն հարություն տալուց հետո նախ ուղարկեց ձեզ մոտ, որպեսզի նրանով օրհնի ձեզ, երբ ձեզնից յուրաքանչյուրը հետ դառնա իր գործած չարիքներից:

4

Պետրոսն ու Հովհաննեսը հրեաների ատյանի առջև

¹ Մինչ նրանք խոսքն ուղղում էին ժողովրդին, նրանց վրա հասան քահանաները, տաճարի գորապետը և սաղուկեցիները: ² Նրանք գայրացած էին, որ առաքյալները քարոզում են ժողովրդին՝ հայտարարելով, որ Հիսուսի օրինակով մեռելները հարություն են առնելու: ³ Ուստի ձերբակալեցին նրանց և բանտարկեցին՝ հաջորդ օրը դատելու համար, որովհետև արդեն երեկո էր: ⁴ Բայց առաքյալների քարոզչությունը լսողներից շատերը հավատացին, և հավատացյալների թիվը հասավ շուրջ հինգ հազարի:

⁵ Հաջորդ օրը հրեաների իշխանները, երեցներն ու Օրենքի ուսուցիչները հավաքվեցին Երուսաղեմում: ⁶ Եկան նաև Հաննա և Կայիափա քահանայապետները, Հովհաննեսն ու Ալեքսանդրոսն ու քահանայապետական ընտանիքի մյուս անդամները: ⁷ Ապա առաքյալներին ատյանի առջև կանգնեցրին և սկսեցին հարցնել.

-Ի՞նչ գորությամբ և ո՞ւմ անունով արեցիք այս բժշկությունը:

⁸ Այն ժամանակ Պետրոսը, Մուրբ Հոգով լցված, պատասխանեց նրանց.

-Դուք, որ այս ժողովրդի իշխաններն եք և Իսրայելի երեցները, ասացե՛ք, թե ինչո՞ւ եք այսօր դատում մեզ: ⁹ Նրա՛ համար, որ մի հիվանդ մարդու բարիք արեցինք և բժշկեցինք նրան: ¹⁰ Ահա հայտարարում ենք ձեզ բոլորիդ և Իսրայելի ամբողջ ժողովրդին, որ այս մարդը, որն ահավասիկ կանգնած է ձեր բոլորի առջև, առողջացավ Նազովրեցի Հիսուս Քրիստոսի անունով, որին դուք խաչեցիք, բայց Աստված մեռելներից հարություն տվեց նրան: ¹¹ Նա՛ է սաղմոսում ակնարկված այն քարը, որ դուք շինարարներդ, արհամարհելով անտեսեցիք, բայց նա անկյունաքար եղավ:՝

¹² Նրանով միայն դուք կարող եք փրկվել: Աշխարհում նա միակն է, որին Աստված տվեց մարդկանց, որպեսզի նրա անունով մենք կարողանանք փրկվել:

^{3.22} Շատ ձեռ. չունեն *«մեր հայրերին»* բառերը:

^{3.22} Բ Օր 18.15, 18 [LXX]:

^{3.23} Բ Օր 18.19:

^{3.25} Ծն 22.18:

^{4.1} *«Քահանաները»*. գրբ. և հուն. մի շարք ձեռ. ունեն *«քահանայապետներ»*, այսինքն՝ քահանաների գլխավորներ կամ ավագ քահանաներ:

^{4.11} Սղ 118.22:

¹³ Ատյանի անդամները, տեսնելով Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունը և հասկանալով, որ նրանք պարզ և անուս մարդիկ են, զարմանում էին: Նրանք համոզվեցին, որ այդ մարդիկ Հիսուսի ընկերակիցներն էին: ¹⁴ Միաժամանակ տեսնում էին բժշկված մարդուն, որ կանգնած էր նրանց կողքին, և չէին կարողանում որևէ բան ասել: ¹⁵ Ուստի հրամայեցին, որ առաքյալներն ու բժշկված մարդը դուրս ելնեն ատյանից, իսկ իրենք խորհրդակցեցին միմյանց հետ՝ ¹⁶ ասելով.

-Ի՞նչ անենք այս մարդկանց. բացահայտ մի հրաշք է, որ կատարվեց նրանց ձեռքով, և Երուսաղեմի բոլոր բնակիչներն արդեն գիտեն այդ մասին, և մենք չենք կարող ուրանալ: ¹⁷ Բայց որպեսզի այս բանը առավել չտարածվի ժողովրդի մեջ, սպառնանք նրանց, որ այլևս ոչ մի մարդու հետ չխոսեն Հիսուսի մասին:

¹⁸ Ապա ներս կանչեցին նրանց և ազդարարեցին, որ Հիսուսի մասին երբեք չխոսեն և չքարոզեն: ¹⁹ Իսկ Պետրոսն ու Հովհաննեսը պատասխանեցին.

-Դո՛ւք դատեցեք, թե Աստծու աչքին ո՞րն է ուղիղը. ձե՞զ հնազանդվել, թե՞ Աստծուն, ²⁰ որովհետև մենք չենք կարող մեր տեսածի և լսածի մասին չխոսել:

²¹ Ժողովականները սպառնալով արձակեցին նրանց՝ թե՛ նրա համար, որ պատժելու պատրվակ չգտան և թե՛ զգուշանալով ժողովրդից, որովհետև ամեն մարդ կատարվածի համար փառավորում էր Աստծուն, ²² քանի որ այն մարդը, որի վրա բժշկության այս հրաշքը կատարվեց, ավելի քան քառասուն տարեկան էր:

Եկեղեցին աղոթում է զորանալու համար

²³ Ազատ արձակվելուց հետո Պետրոսն ու Հովհաննեսը եկան միացան հավատացյալների խմբին և պատմեցին այն, ինչ քահանայապետներն ու երեցները ասել էին իրենց: ²⁴ Իսկ նրանք բոլորը միասին աղոթեցին Աստծուն՝ ասելով.

-Տե՛ր Աստված, դու, որ ստեղծեցիր երկինքը, երկիրն ու ծովը և սրանց մեջ բնակվող բոլոր արարածներին,՝ ²⁵ դու ի՛նքդ Սուրբ Հոգու միջոցով և մեր հոր՝ Դավթի՝ քո ծառայի բերանով ասացիր.

«Ինչո՞ւ հեթանոսները զայրացան,

ինչո՞ւ ժողովուրդները զուր տեղը նենգություն խորհեցին:՝

²⁶ Աշխարհի թագավորներն ու իշխանները

պատրաստվեցին և միաբանվեցին՝

Տիրոջ և նրա Օծյալի դեմ պայքարելու համար»:

²⁷ Արդարև, այս քաղաքում էր, որ Հերովդեսն ու Պոնտացի Պիղատոսը, հեթանոսները և Իսրայելի ժողովուրդը միասին միաբանվեցին քո սուրբ Որդու՝ Հիսուսի դեմ, որին դու օձեցիր՝ ²⁸ կատարելու համար այն, ինչ դու սկզբից նեթ սահմանել էիր քո զորությամբ և կամքով: ²⁹ Արդ, Տե՛ր, նայի՛ր նրանց սպառնալիքներին և քաջությո՛ւն տուր քո ծառաներին, որպեսզի ամենայն համարձակությամբ քարոզեն քո խոսքը: ³⁰ Զորությո՛ւն տուր մեզ, որպեսզի

^{4.24} Ելք 20.11, Նմ 9.6, Սղ 146.6:

^{4.25-26} Սղ 2.1-2 [LXX]:

^{4.27} ա Ղկ 23.7-11: բ Մտ 27.1-2, Սր 15.1, Ղկ 23.1, Հհ 18.28-29:

բժշկություններ, նշաններ ու հրաշքներ կատարվեն քո սուրբ Որդու՝ Հիսուսի անունով:

³¹ Երբ նրանք աղոթեցին, շարժվեց այն տեղը, որտեղ հավաքվել էին նրանք: Բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին համարձակ կերպով քարոզել Աստծու խոսքը:

Համայնական կյանք

³² Հավատացյալների ամբողջ բազմությունը մեկ սիրտ ու մեկ հոգի էր: Որևէ մեկն իր ինչքերի համար չէր ասում, թե իրենն են, այլ ամեն ինչ ընդհանուր էր նրանց միջև:

³³ Առաքյալները մեծ զորությամբ վկայում էին Տեր Հիսուսի հարության մասին, իսկ հավատացյալները բոլորն էլ Աստծուց մեծ շնորհ էին վայելում: ³⁴ Նրանց մեջ ոչ մեկը մի բանի կարոտ չէր, որովհետև արտ կամ տուն ունեցողները վաճառում էին դրանք ³⁵ և ծախվածի դրամը հանձնում էին առաքյալներին, որոնք բաշխումը կատարում էին՝ նայած թե ով ի՞նչ բանի կարիք ուներ: ³⁶ Այդպիսիներից մեկն էր, օրինակ, այն Հովսեփը, որը առաքյալների կողմից կոչվեց Բառնաբաս, որ նշանակում է քաջալերող մարդ: Սա Կիպրոսում ծնված մի դևտացի էր, որ իր ունեցած արտը վաճառեց և դրամը բերեց հանձնեց առաքյալներին:

5

Անանիայի և Սափիրայի խաբեբայությունը

¹ Բայց Անանիա անունով մեկը, որի կինն էր Սափիրան, իր կալվածքը վաճառեց ² և իր կնոջ գիտությամբ դրամի մի մասը միջոց վերցնելով՝ մնացած մասը բերեց հանձնեց առաքյալներին: ³ Պետրոսը հարցրեց.

-Անանիա, ինչո՞ւ տեղի տվեցիր Սատանայի փորձությանը և հանդգնեցիր Սուրբ Հոգուն խաբել՝ արտի դրամի միջոց մի մասը վերցնելով: ⁴ Ինչքան ժամանակ որ արտը չէիր վաճառել, այն քոնը չէ՞ր: Վաճառելուց հետո էլ կարող էիր գումարը քեզ պահել: Ի՞նչ կարիք ունեիր դիմել այս խաբեբայությանը: Դու փորձեցիր խաբել ոչ թե մարդկանց, այլ Աստծուն:

⁵ Անանիան, այս խոսքերը լսելով, գետին ընկավ և շունչը փչեց: Մեծ վախ ընկավ բոլոր նրանց վրա, ովքեր ներկա էին և լսեցին այս բանը: ⁶ Մի քանի երիտասարդներ էլան, պատանքի մեջ փաթաթեցին նրա մարմինը և տարան թաղեցին:

⁷ Մոտ երեք ժամ հետո Անանիայի կինը, որ անտեղյակ էր պատահածին, ներս մտավ:

⁸ Պետրոսը նրան հարցրեց.

-Ասա՛ ինձ, ա՞յս գնով վաճառեցիք ձեր արտը:

Սափիրան պատասխանեց.

-Այո՛, այդ գնով:

⁹ Այն ժամանակ Պետրոսն ասաց նրան.

-Ինչո՞ւ ամուսինդ և դու որոշեցիք փորձել Տիրոջ Հոգին: Ահա այն մարդիկ, որ տարան թաղեցին քո ամուսնուն, դրան մոտ կանգնած են. քեզ էլ են տանելու:

^{4.32} Գրծ 2.44-45:

^{5.5} Դն 13.55 [Շուշան]:

¹⁰Նույն վայրկյանին Սափիրան ընկավ նրա ոտքերի առաջ և շունչը փչեց: Երբ երիտասարդները ներս մտան, նրան մեռած գտնելով՝ տարան և թաղեցին իր ամուսնու մոտ: ¹¹Մի մեծ վախ ընկավ ամբողջ եկեղեցու և բոլոր նրանց վրա, որոնք լսեցին այս բանը:

Բազում հրաշքներ և նոր հավատացողներ

¹²⁻¹⁴ Երբ հավատացյալները բոլորը միասին հավաքվում էին Սողոմոնի այունագավթում, ուրիշ որևէ մեկը չէր համարձակվում մոտենալ նրանց: Բայց և այնպես ժողովուրդը նրանց հարգում էր, և հետզհետե ավելանում էր նրանց թիվը, որովհետև բազմաթիվ տղամարդիկ և կանայք հավատում էին Տիրոջը: Առաքյալների ձեռքով բազում նշաններ և հրաշքներ էին կատարվում ժողովրդի մեջ, ¹⁵ այնպես որ մարդիկ պատգարակներով ու մահիճներով հիվանդներ էին բերում և դնում հրապարակներում, որպեսզի Պետրոսի անցնելու ժամանակ գոնե նրա ստվերն ընկնի նրանցից մեկի վրա: ¹⁶ Շրջակա գյուղերից բազմաթիվ մարդիկ հավաքվում գալիս էին Երուսաղեմ՝ իրենց հետ բերելով հիվանդներ և պիղծ ոգիներից տանջվողներ, որոնք բոլորն էլ բժշկվում էին:

Պետրոսն ու Հովհաննեսը դարձյալ ատյանի առջև

¹⁷ Քահանայապետը և նրա մարդիկ, որոնք սաղուկեցիների կրոնական կուսակցության անդամներ էին, նախանձով լցվեցին առաքյալների դեմ: ¹⁸ Ուստի ձեռքակալեցին նրանց և տարան հասարակական բանտը: ¹⁹ Բայց Տիրոջ հրեշտակը գիշեր ժամանակ բացեց բանտի դռները և դուրս հանելով նրանց՝ ասաց.

²⁰ -Գնացե՛ք տաճար և ժողովրդին տվե՛ք այս նոր կյանքի պատգամը:

²¹ Առաքյալները, հնազանդվելով հրեշտակի խոսքին, առավոտյան վաղ մտան տաճար և սկսեցին ուսուցանել: Մյուս կողմից՝ քահանայապետն ու նրա մարդիկ, միմյանց մոտ գալով, ժողովի հրավիրեցին ատյանին և Իսրայելի ժողովրդի ամբողջ ծերակույտին: Ապա մարդ ուղարկեցին բանտ, որպեսզի առաքյալներին ատյան բերեն:

²² Երբ սպասավորները եկան և նրանց բանտում չգտան, վերադարձան և ժողովականներին պատմեցին՝ ²³ ասելով.

-Երբ գնացինք, բանտը կողպեքով ամուր փակված գտանք, իսկ պահակներն էլ կանգնած էին դռան առջև: Բայց երբ բացեցինք դուռը, ներսում ոչ ոքի չգտանք:

²⁴ Տաճարի պահակապետն ու ավագ քահանաները, այս զեկուցումը լսելով, ապշած մնացին, որովհետև չգիտեին, թե ինչպե՛ս բացատրեն առաքյալների անհետացումը:

²⁵ Հենց այդ պահին վրա հասավ մեկը և նրանց պատմեց.

-Այն մարդիկ, որոնց դուք բանտ էիք դրել, ահա տաճարում կանգնած՝ քարոզում են ժողովրդին:

²⁶ Այն ժամանակ պահակապետը և նրա մարդիկ գնացին և նրանց բերեցին առանց բռնության, որովհետև վախենում էին, որ ժողովրդի կողմից կքարկոծվեն: ²⁷ Բերեցին նրանց և կանգնեցրին ատյանի առաջ: Քահանայապետը հարցրեց.

²⁸ -Ձեզ խստիվ չպատվիրեցի՞նք, որ չքարոզեք այդ մարդու անունով, իսկ դուք ահա ամբողջ Երուսաղեմը ողողեցիք ձեր ուսմունքով և ուզում եք նրա մահվան

պատասխանատվությունը մեզ վրա գցել՝

²⁹ Պետրոսը և մյուս առաքյալները պատասխանեցին՝ ասելով.

-Պետք է Աստծո՛ւն հնազանդվել, քան մարդկանց: ³⁰ Մեր հայրերի Աստվածը հարություն տվեց Հիսուսին, որին դուք սպանեցիք՝ խաչափայտից կախելով:

³¹ Աստված իր աջ կողմը բարձրացրեց նրան, որպեսզի նա լինի մեր Առաջնորդն ու Փրկիչը և Իսրայելին տա ապաշխարության առիթ և մեղքերի թողություն: ³² Այս եղելությունների վկաներն ենք մենք, ինչպես և Սուրբ Հոգին, որ Աստված տվեց իրեն հնազանդվողներին:

³³ Երբ նրանք լսեցին այս խոսքերը, կատաղությամբ լցվեցին և ուզում էին սպանել նրանց:

³⁴ Այն ժամանակ ատյանի մեջ ոտքի ելավ Գամաղիել անունով մի մարդ, որ փարիսեցիներից էր և ամբողջ ժողովրդի կողմից հարգված Օրենքի մի ուսուցիչ, և հրամայեց, որ առաքյալներին մի փոքր ժամանակ դուրս տանեն: ³⁵ ապա ժողովականներին ասաց.

-Ո՛վ իսրայելացիներ, լա՛վ մտածեցեք և ապա որոշում կայացրեք այս մարդկանց մասին: ³⁶ Հիշում եք, որ այս օրերից ոչ շատ առաջ մեջտեղ ելավ Թևդաս անունով մեկը, որը հայտարարում էր, թե ինքը երևելի մեկն է. նրան միացան շուրջ չորս հարյուր մարդիկ: Բայց նա սպանվեց, և բոլոր նրանք, որ միացել էին նրան, ցրվեցին, և նրա շարժումը վերացավ: ³⁷ Նրանից հետո, մարդահամարի օրերին, մեջտեղ ելավ Գալիլեացի Հուդա անունով մի մարդ և բազմաթիվ ժողովրդի ապստամբության մղեց իր հետ: Բայց նա ևս կորստյան մատնվեց, և բոլոր նրանք, որ հարել էին նրան, ցիրուցան եղան: ³⁸ Գալով սրանց՝ ասում եմ ձեզ, ձե՛նք քաշեցեք այդ մարդկանցից և թողե՛ք նրանց, որովհետև եթե նրանց խորհուրդը և նրանց գործը մարդկանցից է, կխափանվի: ³⁹ Իսկ եթե Աստծուց է, չեք կարող խափանել և միգուցե այդ ձևով Աստծու դեմ պայքարած կլինեք:

⁴⁰ Ժողովականները հավանություն տվեցին Գամաղիելի խոսքերին և կանչել տալով առաքյալներին՝ ձեծել տվեցին, ապա նրանց պատվիրելով, որ այլևս չխոսեն Հիսուսի անունով, արձակեցին նրանց: ⁴¹ Իսկ առաքյալները ատյանից հեռացան՝ ուրախանալով, որ Տիրոջ անվան համար են անարգանքի արժանացել: ⁴² Եվ ամեն օր թե՛ տաճարում և թե՛ իրենց տներում ուսուցանում էին՝ քարոզելով Հիսուս Քրիստոսի մասին:

6

Յոթ օգնականները

5.28 Մտ 27.25:

5.34 «Գամաղիել», հրեա նշանավոր ուսուցիչ, ատյանի [=սինեդրիոն] անդամ: Պողոս առաքյալը Գամաղիելի աշակերտն է եղել (Գրծ 22.3):

5.37 «Մարդահամարի օրերին». ակնարկությունը վերաբերում է հռոմեացի Կյուրենիոս կառավարչի օրոք տեղի ունեցած երկրորդ մարդահամարին (տե՛ս Ղկ 2.2-ի ծնթ):

5.39 Բ Մկ 7.19:

5.41 Ձեռ. մեծ մասը չունի «Տիրոջ» բառը:

¹ Որոշ ժամանակ անց, երբ Հիսուսի հետևորդները շատացան, հունախոս հրեաները սկսեցին տրտնջալ երբայախոս հրեաների դեմ, որովհետև ամենօրյա նպաստի բաշխման ժամանակ անտեսվում էին իրենց այրիները: ² Այն ժամանակ տասներկու առաքյալները կանչեցին բոլոր հավատացյալներին և ասացին.

-Մենք չենք ուզում թողնել Աստծու խոսքի քարոզչությունը և զբաղվել ուտելիք մատակարարելով: ³ Հետևաբար, եղբայրներ՝ ընտրեցե՛ք ձեր կողմից վկայված յոթ մարդու՝ լցված Սուրբ Հոգով և իմաստությամբ: Նրանց նշանակենք այդ անհրաժեշտ գործի համար, ⁴ իսկ մենք նվիրվենք աղոթքի և Աստծու խոսքի քարոզչությանը:

⁵ Հավատացյալներն ուղիղ գտան այս առաջարկը և ընտրեցին հետևյալ մարդկանց՝ Ստեփանոսին, որ հավատով և Սուրբ Հոգով լցված մի մարդ էր, Փիլիպպոսին, Պրոքորոսին, Նիկանորին, Տիմոնին, Պարմենասին և Նիկողայոսին, որ հրեության դարձած մի անտիրոջի էր: ⁶ Ապա նրանց բերեցին առաքյալների առջև, որոնք աղոթելով իրենց ձեռքը դրեցին նրանց վրա:

⁷ Ահա այսպես տարածվում էր Աստծու խոսքը, և հավատացյալների թիվը մեծապես շատանում էր Երուսաղեմում: Նույնիսկ քահանաներից շատ-շատերն ընդունում էին հավատը:

Ստեփանոսի ձերբակալությունը

⁸ Ստեփանոսը Աստծու շնորհով և զորությամբ լցված մի մարդ էր, որ ժողովրդի մեջ մեծամեծ հրաշքներ և նշաններ էր կատարում: ⁹ Այդ իսկ պատճառով լիբիացիների, կյուրենացիների, ալեքսանդրիացիների, կիլիկեցիների և ասիացիների ժողովարանից մի շարք հրեաներ եկան Ստեփանոսի հետ վիճելու: ¹⁰ Սակայն նրանք չէին կարողանում դեմ կանգնել Սուրբ Հոգուց ներշնչված նրա իմաստուն խոսքերին: ¹¹ Այն ժամանակ կաշառեցին մի քանի հոգու, որպեսզի նրանք վկայություն տան՝ ասելով.

-Անձամբ լսեցինք, որ այս մարդը հայհոյալից խոսքեր էր ասում Մովսեսի և Աստծու դեմ:

¹² Այս ձևով նրանք զրգոեցին ժողովրդին, երեցներին և Օրենքի ուսուցիչներին և հարձակվելով Ստեփանոսի վրա՝ բռնեցին նրան ու բերեցին աստյան: ¹³ Ապա մեջտեղ հանեցին սուտ վկաների, որոնք ասում էին.

-Այս մարդն անդադար հայհոյալից խոսքեր է ասում այս սրբավայրի և Աստծու Օրենքի դեմ: ¹⁴ Անձամբ լսեցինք նրանից, որ ասում էր, թե Նազովրեցի Հիսուսը պիտի քանդի այս տաճարը և փոխի այն ավանդությունները, որ Մովսեսը տվեց մեզ:

^{6.7} Երուսաղեմում քահանաների զանազան դասերում հաշվվում էին շուրջ 8000 հոգի:

^{6.8} «Աստծու շնորհով». մի շարք ձեռ. ունեն «հավատով»:

^{6.9} «Լիբիացիների, կյուրենացիների, ալեքսանդրիացիների, կիլիկեցիների և ասիացիների ժողովարանից մի շարք հրեաներ». հուն. «Ազատագրվածների» [=հիբերտինացիների], այսինքն՝ կյուրենացի և ալեքսանդրիացի հրեաների ժողովարանից, ինչպես նաև կիլիկեցի և ասիացի մի շարք հրեաներ»: "Ազատագրվածների" բացատրությունը վերաբերում է նշված շրջաններից եկած հրեաներին, որոնց հայրերը ՔՄ 63թ. գերի էին տարվել հռոմեացի Պոմպեոս զորավարի ձեռքով և հետագայում վերագտել իրենց զատությունը: Ակնարկված ժողովարանը հունախոսների ժողովարան էր, որի անդամներից մեկն էլ, անկասկած, Սողոսն էր:

¹⁵ Բոլոր նրանք, որ նստած էին ատյանում, իրենց հայացքը դարձրին Ստեփանոսի կողմը և տեսան նրա դեմքը, որ նման էր հրեշտակի դեմքի:

7

Ստեփանոսի խոսքը

¹ Քահանայապետը հարցրեց Ստեփանոսին.

-Ճիշտ են ասվածները:

² Եվ նա պատասխանեց.

-Եղբայրներ՝ ր և հայրե՛ր, լսեցե՛ք ինձ: Երբ Աբրահամը՝ մեր հայրը, նախքան Խառանում բնակվելը տակավին ապրում էր Միջագետքում, Աստված, որին պատկանում է փառքը, երևաց նրան և ասաց.՝ ³ «Դո՛ւրս ել քո երկրից, թո՛ղ քո ազգականներին և արի՛ր բնակություն հաստատելու այնտեղ, ուր ցույց կտամ քեզ»:

⁴ Այն ժամանակ Աբրահամը դուրս ելավ քաղղեացիների երկրից և եկավ բնակվեց Խառանում, իսկ Աբրահամի հոր մահվանից հետո Աստված նրան այնտեղից էլ հանեց և փոխադրեց այս երկիրը, որտեղ այժմ դուք եք բնակվում:՝ ⁵ Այս երկրում նա մի թիզ հող անգամ չտվեց Աբրահամին որպես ժառանգություն, սակայն խոստացավ իբրև բնակավայր այս երկիրը տալ նրան և իրենից հետո՝ նրա սերնդին, երբ Աբրահամը դեռ զավակ չուներ:՝ ⁶ Աստված այսպես ասաց. «Քո սերունդը պանդուխտ պիտի լինի օտար երկրում, պիտի ստրկացնեն և չարչարեն նրան չորս հարյուր տարի:՝ ⁷ Բայց ես ինքս պիտի դատեմ այն ազգին, որին նրանք ստրուկ պիտի լինեն, -ասում է Աստված, -որից հետո պիտի ելնեն այնտեղից և գան այստեղ՝ պաշտելու ինձ»:՝ ⁸ Աստված, որպես ուխտի նշան, թլփատության պատվերը տվեց Աբրահամին: Այնուհետև Աբրահամը ծնեց Իսահակին և ութերորդ օրը թլփատեց նրան: Իսահակը ծնեց Հակոբին ու թլփատեց, Հակոբն էլ՝ տասներկու նահապետներին:՝

⁹ Հովսեփի եղբայրները, նախանձելով Հովսեփին, նրան վաճառեցին Եգիպտոս գնացող կարավանին: Սակայն Աստված նրա հետ էր՝ ¹⁰ և նրան փրկեց բոլոր նեղություններից: Եգիպտոսի թագավորի՝ փարավոնի աչքին նրան բարձրացրեց իր իմաստությամբ և իշխան կարգեց Եգիպտոսի և փարավոնի տան վրա:՝ ¹¹ Ապա երաշտ եղավ ամբողջ Եգիպտոսում և Քանանում: Սաստիկ սով տիրեց, և մեր հայրերը ուտելիք չէին գտնում:՝ ¹² Երբ Հակոբը լսեց, թե Եգիպտոսում կարելի է ուտելիք գտնել, այնտեղ ուղարկեց իր զավակներին: Սա մեր հայրերի առաջին այցելությունն էր Եգիպտոս: ¹³ Երկրորդ անգամ Հովսեփն իրեն ճանաչել տվեց իր եղբայրներին, և

^{7.2-3} Ծն 12.1:

^{7.4 ա} Ծն 11.31: ^բ Ծն 12.4:

^{7.5} Ծն 12.7, 13.15, 15.18, 17.8:

^{7.6-7} Ծն 15.13-14:

^{7.7} Ելք 3.12:

^{7.8 ա} Ծն 17.10-14: ^բ Ծն 21.2-4: ^գ Ծն 25.26: ^դ Ծն 29.31-35.18:

^{7.9 ա} Ծն 37.11: ^բ Ծն 37.28: ^գ Ծն 39.2,21:

^{7.10} Ծն 41.39-41:

^{7.11} Ծն 42.1-2:

փարավոնին հայտնի դարձավ նրա ազգատոհմը: ¹⁴ Հովսեփը մարդ ուղարկեց և բերել տվեց իր հորը՝ Հակոբին, և ամբողջ գերդաստանին՝ ընդամենը յոթանասունհինգ հոգի: ¹⁵ Հակոբը Եգիպտոս իջավ և այնտեղ էլ վախճանվեցին թե՛ ինքը և թե՛ մեր հայրերը: ¹⁶ Բոլորի մարմիններն էլ փոխադրվեցին Սյուքեմ և դրվեցին այն քարայրի մեջ, որն Աբրահամը Սյուքեմում դրամով գնել էր Համորի որդիներից:

¹⁷ Մեր ժողովուրդը Եգիպտոսում աճեց և բազմացավ, մինչև որ մոտեցավ այն ժամանակը, երբ Աստված պետք է կատարեր Աբրահամին տված իր խոստումը:

¹⁸ Ապա Եգիպտոսի վրա իշխեց մի ուրիշ արքայական տուն, որ չճանաչեց Հովսեփի տան վայելած իրավունքները: ¹⁹ Նոր փարավոնը մեր ազգի դեմ չարացավ և չարչարեց մեր հայրերին՝ նրանց մանուկներին նետել տալով գետը, որպեսզի մեռնեն: ²⁰ Այդ ժամանակ էր, որ ծնվեց Մովսեսը, Աստծու աչքին շնորհալի մի մանուկ, որ նախ երեք ամիս մեծացավ իր հոր տանը, ²¹ իսկ երբ նրան նետեցին գետը, փարավոնի դուստրը գտավ նրան, որդեգրեց և մեծացրեց: ²² Մովսեսը կրթվեց եգիպտացիների ամբողջ իմաստությամբ և եղավ ազդեցիկ թե՛ խոսքով և թե՛ գործով: ²³ Երբ նրա քառասուն տարին լրացավ, նա որոշեց իր ազգակից իսրայելացիների վիճակով հետաքրքրվել:

²⁴ Եվ տեսնելով, որ նրանցից մեկն անիրավված է, զայրացավ և անիրավվածի վրեժը լուծեց՝ սպանելով եգիպտացուն: ²⁵ Նա մտածում էր, թե իր ազգակիցները, լսելով այս, կհասկանան, որ իր ձեռքով Աստված փրկություն է տալու իրենց, սակայն նրանք չհասկացան: ²⁶ Հաջորդ օրը հանդիպեց երկու ազգակիցների, որոնք կովում էին իրար հետ, և փորձեց հաշտեցնել նրանց՝ ասելով. «Ո՛վ մարդիկ, դուք իրար եղբայրներ եք, ինչո՞ւ եք միմյանց անիրավում»: ²⁷ Իսկ նա, ով անիրավում էր իր ընկերոջը, մի կողմ հրեց նրան՝ պատասխանելով. «Ո՛վ քեզ իշխան և դատավոր կարգեց մեզ վրա:

²⁸ Ուզում ես ի՞նչ էլ սպանել, ինչպես երեկ սպանեցիր եգիպտացուն»: ²⁹ Այս պատասխանի վրա Մովսեսը փախավ և որպես պանդուխտ ապրեց Մադիամ կոչված երկրում: Այստեղ նա երկու որդի ունեցավ:

³⁰ Քառասուն տարի հետո Տիրոջ հրեշտակն ասեց նրան անապատում, Սինա լեռան մոտիկ, մի բոցավառ մորենու միջից: ³¹ Մովսեսը նախ զարմացավ իր տեսածի վրա, ապա երբ մոտեցավ ավելի լավ տեսնելու համար, Տիրոջ ձայնն ասաց. ³² «Ես քո հայրերի Աստվածն եմ՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը»: Մովսեսը, զարհուրած, չէր համարձակվում նայել: ³³ Տերը նրան հրամայեց. «Կոշիկներդ հանի՛ր

^{7.13} ա Ծն 45.1: ք Ծն 45.16:

^{7.14} ա Ծն 45.9-10,17-18: ք Ծն 46.27 [LXX]:

^{7.15} ա Ծն 46.1-7: ք Ծն 49.33:

^{7.16} Ծն 23.3-16, 33.19, 50.7-13, Ես 24.32:

^{7.17-18} Ելք 1.7-8:

^{7.19} ա Ելք 1.10-11: ք Ելք 1.22:

^{7.20} Ելք 2.2:

^{7.21} Ելք 2.3-10:

^{7.23-29} Ելք 2.11-15:

^{7.29} Ելք 18.3-4:

^{7.30-34} Ելք 3.1-10:

քո ոտքերից, որովհետև այն հողը, որի վրա դու կանգնած ես, սուրբ է: ³⁴ Ես տեսա Եգիպտոսում իմ ժողովրդի չարչարանքները, լսեցի նրանց հեծության ձայնը և ահա իջա, որ փրկեմ նրանց: Այժմ արի՛, քեզ պիտի ուղարկեմ Եգիպտոս»:

³⁵ Այսպես այն Մովսեսին, որին մերժեցին՝ ասելով. «Ո՞վ քեզ իշխան և դատավոր կարգեց մեզ վրա», Աստված նրան որպես իշխան ու փրկիչ ուղարկեց այն հրեշտակի միջոցով, որ երևաց Մովսեսին մորենու միջից: ³⁶ Մովսեսն էր, որ Եգիպտոսից դուրս հանեց մեր ժողովրդին՝ նշաններ և հրաշքներ կատարելով թե՛ Եգիպտոսում, թե՛ Կարմիր ծովից անցնելիս և թե՛ անապատում՝ քառասուն տարի: ³⁷ Նույն Մովսեսն էր, որ իսրայելացիներին ասաց. «Աստված ձեր միջից ինձ նման մի մարգարե պիտի հանի, նրա՛ն լսեցեք»: ³⁸ Մովսեսն էր, որ անապատում հավաքված մեր ժողովրդի համար միջնորդություն էր անում հայրերի և այն հրեշտակի միջև, որը Սինա լեռան վրա խոսեց նրա հետ: Նա էր, որ Աստծու կենարար պատգամները տվեց մեզ:

³⁹ Սակայն մեր հայրերը չուզեցին հնազանդվել Մովսեսին, այլ անտեսեցին նրան և իրենց սրտերով դեպի Եգիպտոս դարձան: ⁴⁰ Ասացին Ահարոնին. «Մեզ համար աստվածնե՛ր կերտիր, որպեսզի առաջնորդեն մեզ, որովհետև չգիտենք, թե ի՛նչ եղավ այդ Մովսեսը, որ մեզ դուրս հանեց Եգիպտոսից»: ⁴¹ Այդ նույն օրերին հորթի կերպարանքով մի կուռք շինեցին, զոհ մատուցեցին նրան և ուրախանում էին իրենց ձեռքով շինված այդ կուռքով: ⁴² Աստված էլ երես դարձրեց նրանցից և թողեց, որ երկնային մարմիններ պաշտեն: Այդ է պատճառը, որ մարգարեական գիրքն ասում է.

«Ո՞վ իսրայելացիներ,
մի թե անապատում քառասուն տարի
ձեր զոհերն ու նվերներն ինձ մատուցեցիք:»

⁴³ Դուք Մոդոքի վրանն ու Ռեմֆայի՝
աստղ-աստծու պատկերները շինեցիք
և երկրպագեցիք նրանց:
Ահա թե ինչու ես ձեզ պիտի արքայեմ
Բաբելոնից էլ այն կողմ:»

⁴⁴ Գալով Վկայության խորանին՝ մեր հայրերն անապատում այն շինեցին այնպես, ինչպես Մովսեսի հետ խոսող հրեշտակն էր պատվիրել, և ըստ այն օրինակի, որ ցույց էր տվել Մովսեսին: ⁴⁵ Մեր հայրերն էլ իրենց հերթին այն ստացան իրենց հայրերից և

^{7.35} Ելք 2.14:

^{7.36} ա Ելք 7.3: ք Ելք 14.21: գ Թվ 14.33:

^{7.37} Բ Օր 18.15, 18:

^{7.38} Ելք 19.1-20.17, Բ Օր 5.1-33:

^{7.40} Ելք 32.1:

^{7.41} Ելք 32.2-6:

^{7.42-43} Ամս 5.25-27 [LXX]:

^{7.43} «Մոդոքը» Քանանի հին բնակիչների կողմից պաշտված աստվածներից մեկն էր, որի պաշտամունքի մաս էր կազմում երեխաներ զոհելը (հմտո Ղև 18.21): «Ռեմֆան» նույնպես մի աստված էր, չար ոգին մարմնավորող մի կուռք, որ համարվում էր Երևակ (Մատուրն) մոլորակի տերը և կոչվում էր նաև Քիոն կամ Քիուն, որին իսրայելացիները պաշտում էին Սինայի անապատում (տե՛ս Ամս 5.26):

^{7.44} Ելք 25.9, 40:

Հեսուի օրով իրենց հետ բերեցին այս երկիրը, որը գրավեցին այն ազգերից, որոնք Աստծու օգնությամբ դուրս քշվեցին մեր հայրերի առջևից: Այսպես Վկայության խորանը հասավ մինչև Դավթի օրերը: ⁴⁶ Դավիթը շնորհ գտավ Աստծու առաջ և ուզեց հարմար մի վայր գտնել՝ Հակոբի Աստծու համար մի տուն կառուցելու: ⁴⁷ Եվ Սողոմոնն այս տաճարը շինեց Աստծու համար: ⁴⁸ Սակայն Բարձրյալն Աստված բնակվում է ոչ թե ձեռակերտ տաճարի մեջ, այլ, ինչպես մարգարեն էլ ասում է.

⁴⁹ «Երկինքն է իմ աթոռը,

իսկ երկիրը՝ պատվանդանն իմ ոտքերի:

Ինչպիսի տուն պիտի շինեք ինձ համար,-

ասում է Տերը,-

կամ որտեղ պիտի լինի վայրն իմ հանգստյան.»

⁵⁰ Չէ՞ որ այս բոլորն իմ ստեղծածներն են»:

⁵¹ Ինչքան համառ եք դուք, որ բնավ չեք զոջում և Աստծու կոչը չեք լսում և այսպես միշտ հակառակվում եք Սուրբ Հոգուն, ինչպես ձեր հայրերն էին անում անցյալում: ⁵² Գտնվե՞ց մի մարգարե, որին ձեր հայրերը չհալածեցին: Նրանք սպանեցին բոլոր այն մարգարեներին, որոնք նախօրոք հայտնեցին Արդարի գալստյան մասին, այն Արդարի, որին դուք ձեր ձեռքով մահվան դատապարտեցիք և սպանեցիք: ⁵³ Դուք պարծենում եք, որ հրեշտակների ձեռքով ստացաք Օրենքը, և սակայն բնավ չգործադրեցիք այն: ⁵⁴

Ստեփանոսի քարկոծումը

⁵⁴ Այս խոսքերը լսելով՝ ներկաները ներքնապես գայրացան և սկսեցին իրենց ատամները կրճատացնել նրա դեմ: ⁵⁵ Բայց Ստեփանոսը, Սուրբ Հոգով լցված, աչքերը բարձրացրեց դեպի երկինք և տեսավ Աստծուն՝ իր ամբողջ փառքով, ինչպես նաև Հիսուսին, որ կանգնած էր Աստծու աջ կողմը: ⁵⁶ Նա ասաց.

-Ահա տեսնում եմ երկինքը բացված և Մարդու Որդուն, որ կանգնած է Աստծու աջ կողմը:

⁵⁷ Ատյանում գտնվողները մեծ աղաղակ բարձրացրին, փակեցին իրենց ականջները, և բոլորը միասին հարձակվեցին նրա վրա: ⁵⁸ Հետո քաղաքից դուրս հանելով նրան՝ սկսեցին քարկոծել: Վկաներն իրենց թիկնոցները հանձնում էին մի երիտասարդի, որ Սողոմոն էր կոչվում: ⁵⁹ Մինչ նրանք քարկոծում էին Ստեփանոսին, նա այսպես էր

^{7.45} Հս 3.14-17:

^{7.46} «Հակոբի Աստծու համար մի տուն», մի շարք հուն. ձեռ. ունեն «Հակոբի սերնդի համար [պաշտամունքի] մի տուն»:

^{7.46} Բ Թգ 7.1-16, Ա Մն 17.1-14:

^{7.47} Գ Թգ 6.1-38, Բ Մն 3.1-17:

^{7.49-50} Ես 66.1-2:

^{7.51} Ես 63.10:

^{7.53} Ըստ ռաբբիական ավանդության, Աստված Մինա լեռան բարձունքից իր Օրենքը Մովսեսին տվեց հրեշտակների ձեռքով (հմմտ. Գղ 3.19, Եբ 2.2):

^{7.55} «Կանգնած էր Աստծու աջ կողմը». աջ կողմը կանգնելը կամ նստելը պատվավոր դիրքի նշան է:

^{7.58} «Սողոմոն» ապագա Պողոս առաքյալն է: Նրա բերայական անունը Սողոմոն կամ Սավուղ էր, իսկ

աղոթում.

-Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին:

⁶⁰ Հետո ծնկի եկավ և բարձրաձայն աղաղակեց.

-Տե՛ր, ների՛ր նրանց այս մեղքը:

Եվ հազիվ այս խոսքերն ասած՝ մահվամբ փակեց իր աչքերը:

8

¹ Ստեփանոսի քարկոծումը պահանջողներից մեկն էլ Սողոսն էր:

Հալածանք և հավատի տարածումը Սամարիայում

Նույն օրը Երուսաղեմի եկեղեցու դեմ մեծ հալածանք սկսվեց, որի հետևանքով առաքյալներից բացի, բոլոր մյուսները ցրվեցին Հրեաստանի և Սամարիայի գյուղերը:

² Իսկ մի քանի բարեպաշտ մարդիկ էլ Ստեփանոսի մարմինը տարան թաղեցին՝ մեծ ողբ անելով նրա վրա:

³ Սողոսն աշխատում էր ոչնչացնել եկեղեցին: Ստնում էր տնից տուն և հավատացյալ տղամարդկանց ու կանանց դուրս քաշելով՝ բանտ դնել էր տալիս: ⁴ Այս պատճառով հավատացյալները ցրվեցին և երկրի զանազան կողմերը շրջելով քարոզում էին Ավետարանի պատգամը:

⁵ Այսպես, Փիլիպպոսը գնաց Սամարիա քաղաքը և քարոզեց խոստացված Փրկչին:՝

⁶ Մեծ բազմություններ ուշադիր ունկնդրում էին նրա քարոզչությանը, որովհետև նրանք թե՛ լսում և թե՛ տեսնում էին նրա կատարած հրաշքները: ⁷ Արդարև, բազմաթիվ մարդկանցից պիղծ ոգիներ էին դուրս գալիս՝ բարձրաձայն աղաղակելով, և մեծ թվով անդամալույծներ և կաղեր էին բժշկվում: ⁸ Այնպես որ ուրախությունը մեծ էր այդ քաղաքում:

⁹ Նույն քաղաքում Սիմոն անունով մի մարդ կար, որ երկար ժամանակից ի վեր այնտեղ էր և կախարդություն անելով ապշեցնում էր սամարացիներին: ¹⁰ Փոքրից մինչև մեծը, բոլորն էլ նրանով հիացած, ասում էին.

-Այս մարդն ինքն Աստծու զորությունն է, որ մեծ զորություն է կոչվում:

¹¹ Եվ իսկապես հիացած էին նրանով, որովհետև երկար ժամանակ իր կախարդություններով ապշեցրել էր նրանց՝ ինքն իրեն ներկայացնելով որպես կարևոր մեկը: ¹² Բայց երբ հավատացին Փիլիպպոսին, որն Աստծու արքայության և Հիսուս Քրիստոսի մասին էր քարոզում, տղամարդ թե կին, բոլորն էլ մկրտվեցին:

¹³ Սիմոնն ինքն էլ հավատաց և մկրտվելուց հետո Փիլիպպոսի մոտից չէր հեռանում. և տեսնելով այն նշաններն ու մեծամեծ հրաշքները, որ կատարում էր Փիլիպպոսը, զարմանում էր:

¹⁴ Առաքյալները, որոնք Երուսաղեմում էին մնում, երբ լսեցին, թե սամարացիներն ընդունեցին Աստծու խոսքը, նրանց մոտ ուղարկեցին Պետրոսին ու Հովհաննեսին,

հռոմեական անունը՝ Պողոս:

Ջ.3 Գրծ 22.4-5, 26.9-11:

Ջ.5 «Փիլիպպոս». սա Փիլիպպոս առաքյալը չէ, այլ նույնանուն մի սարկավազ, որ Ավետարանի նշանավոր քարոզիչներից մեկը եղավ (հմմտ 21.8):

¹⁵ որոնք երբ հասան, աղոթեցին նրանց համար, որպեսզի ստանան Սուրբ Հոգին,
¹⁶ որովհետև մինչ այդ Սուրբ Հոգին դեռ չէր իջել նրանցից որևէ մեկի վրա, այլ միայն մկրտվել էին Տեր Հիսուսի անունով: ¹⁷ Այն ժամանակ Պետրոսն ու Հովհաննեսն իրենց ձեռքերը դրեցին նրանց գլխին, և նրանք ստացան Սուրբ Հոգին:

¹⁸ Երբ Սիմոնը տեսավ, որ առաքյալների ձեռք դնելով Սուրբ Հոգին տրվում է, փող խոստանալով նրանց՝ ասաց.

¹⁹ -Ի՛նձ էլ տվեք այդ կարողությունը, որպեսզի ում վրա որ ձեռք դնեմ, Սուրբ Հոգին ստանա:

²⁰ Այն ժամանակ Պետրոսը նրան ասաց.

-Կորի՛ր, դու էլ, քո փողն էլ. կարծեցիր, թե Աստծու պարգևը կարո՞ղ ես փողով գնել:

²¹ Այս ամենի մեջ մաս և բաժին չպիտի ունենաս, քանի որ ուղիղ չես խորհում Աստծու մասին: ²² Հետևաբար, դարձի՛ր քո այդ չար խորհրդից և աղաչի՛ր, որ Տերը ների քո մտքի այդ նենգ խորհուրդը. ²³ որովհետև տեսնում եմ, որ լցված ես դառն նախանձով և բռնված մեղքի կապանքների մեջ:

²⁴ Սիմոնն ասաց.

-Ինձ համար դուք ինքնե՛րդ աղաչեցեք Տիրոջը, որպեսզի ձեր ասածներից որևէ մեկը չպատահի ինձ:

²⁵ Իսկ առաքյալներն իրենց վկայությունը տալուց և Տիրոջ խոսքը քարոզելուց հետո վերադարձան Երուսաղեմ՝ ճանապարհին Սամարիայի բազմաթիվ գյուղերում քարոզելով Ավետարանը:՝

Եթովպացի ներքինու դարձը Փիլիպպոսի ձեռքով

²⁶ Տիրոջ հրեշտակը խոսեց Փիլիպպոսի հետ՝ ասելով.

-Վե՛ր կաց և գնա՛ դեպի հարավ այն ճանապարհով, որն իջնում է Երուսաղեմից Գազա և ամալի է:

²⁷ Փիլիպպոսը վեր կացավ և գնաց: Եվ ահա եթովպացի մի ներքինի, որ եթովպացիների Կանդակի, այսինքն՝ թագուհու բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն էր, նրա գանձերի ընդհանուր վերակացուն և Երուսաղեմ էր եկել Աստծուն երկրպագելու,՝ ²⁸ այնտեղից վերադառնալիս, իր կառքի մեջ նստած, Եսայի մարգարեի գիրքն էր կարդում: ²⁹ Սուրբ Հոգին ասաց Փիլիպպոսին.

-Մոտեցի՛ր և այդ կառքի կողքի՛ց քայլիր:

³⁰ Երբ Փիլիպպոսը վազելով հասավ կառքին, լսեց, որ նա բարձրաձայն Եսայի մարգարե էր ընթերցում: Փիլիպպոսը հարցրեց.

-Հասկանո՞ւմ ես, ինչ որ կարդում ես:

³¹ Իսկ նա պատասխանեց.

-Ինչպե՞ս կարող եմ հասկանալ, եթե մեկն ինձ չբացատրի:

Ապա խնդրեց, որ Փիլիպպոսը բարձրանա և իր մոտ նստի: ³² Նրա կարդացած

՝8.25 «Տիրոջ». մի շարք ձեռ ունեն «Աստծու»:

՝8.27 «Կանդակ». Եթովպիայի թագուհիներին տրված կոչում, ճիշտ ինչպես Եգիպտոսի թագավորներին տալիս էին «փարավոն» կոչումը:

հատվածը հետևյալն էր.

«Մորթվելու տարվեց նա ինչպես մի ոչխար.

և ինչպես անմոռունչ գառն է կանգնում

իր բուրդը խուզողի առաջ,

այնպես նա չբացեց իր բերանը:»

³³Նա նվաստացավ,

և չգտնվեց մեկը, որ պաշտպաներ նրան.

ո՞վ պիտի պատմի նրա սերնդի մասին,

քանզի նրա կյանքն ահա վերացվում է այս աշխարհից»:

³⁴Ներքինին հարցրեց Փիլիպպոսին.

-Աղաչում եմ, ասա՛, մարգարեն ո՞ւմ մասին է ասում այս բաները. ի՞նչ մասին, թե՞ մեկ ուրիշի:

³⁵Այն ժամանակ Փիլիպպոսը, Սուրբ գրքի այդ հատվածից մեկնելով, սկսեց նրան ավետարանել Հիսուսի մասին: ³⁶Եվ մինչ նրանք գնում էին, ճանապարհին հասան մի տեղ, ուր ջուր կար: Ներքինին ասաց.

-Ահա այստեղ ջուր կա. որն է արգելք կա՞, որ ես մկրտվեմ:

³⁷Փիլիպպոսը պատասխանեց.

-Եթե քո ամբողջ սրտով հավատում ես, կարող ես մկրտվել:

-Հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսը Աստծու Որդին է,- պատասխանեց ներքինին՝

³⁸և կառապանին հրամայեց, որ կառքը կանգնեցնի:

Փիլիպպոսն ու ներքինին, երկուսը միասին, մտան ջրի մեջ, և Փիլիպպոսը մկրտեց նրան: ³⁹Երբ ջրից դուրս ելան, Սուրբ Հոգին իջավ ներքինու վրա, և Տիրոջ հրեշտակը հափշտակեց տարավ Փիլիպպոսին. այնպես որ ներքինին այլևս չտեսավ նրան և ուրախությամբ շարունակեց իր ճանապարհը:»

⁴⁰Իսկ Փիլիպպոսը իրեն գտավ Ագոտոսում: Նա շրջում և ավետարանում էր բոլոր քաղաքներում, մինչև որ եկավ Կեսարիա:»

9

Սողոսի դարձը

(Գրծ 22.6-16, 26.12-18)

¹ Մինչ այդ Սողոսը շարունակում էր սպառնալիք ու մահ տեղալ Տիրոջ

8.32-33 Ես 53.7-8 [LXX]:

8.37 Այս հմր պակասում է շատ ձեռագրերում: Մկրտության արարողության և դրա համար անհրաժեշտ հավատի խոստովանության հնագույն արձագանքն ենք գտնում այստեղ:

8.39 «Սուրբ Հոգին իջավ ներքինու վրա, և Տիրոջ հրեշտակը հափշտակեց...». ձեռ. մեծ մասն ունի «Տիրոջ Հոգին հափշտակեց»:

8.40 «Ագոտոսը» մի հին քաղաք էր Պաղեստինի հարավում, Միջերկրական ծովին մոտիկ: Այստեղ հիշված «Կեսարիան» Պաղեստինի ծովեզրյա այն քաղաքն է, որտեղ նստում էին հռոմեացի կառավարիչները: Ըստ երևույթին, Փիլիպպոսն այնուհետև այնտեղ էլ մնաց, ինչպես այդ տեսնում ենք քսան տարի անց (հմմտ 21.8):

աշակերտների վրա: Նա, քահանայապետի մոտ գնալով, ² խնդրեց նրանից, որ Դամասկոսի ժողովարաններին ուղղված նամակներ տա իրեն, որպեսզի եթե այնտեղ գտնի Տիրոջ ճանապարհին հետևողների, տղամարդ թե կին, ձերբակալի և Երուսաղեմ բերի:

³ Գնալու ժամանակ, մինչ մոտենում էր Դամասկոսին, հանկարծ երկնքից մի լույս փայլատակեց նրա շուրջը: ⁴ Սողոսը գետին ընկավ և լսեց մի ձայն, որ ասում էր իրեն.

-Սողո՛ւ, Սողո՛ւ, ինչո՞ւ ես հալածում ինձ:

⁵ -Ո՞վ ես, Տե՛ր,-հարցրեց նա:

Ձայնը պատասխանեց.

-Ես Հիսուսն եմ, որին դու հալածում ես: ⁶ Այժմ ոտքի՛ կանգնիր և քաղա՛ք մտիր. այնտեղ քեզ կասվի, թե ի՛նչ պետք է անես:

⁷ Սողոսին ուղեկցող մարդիկ անշշունջ կանգնած էին. նրանք միայն ձայն էին լսում, բայց ոչ ոքի չէին տեսնում: ⁸ Սողոսը երբ գետնից վեր կացավ, փորձեց նայել իր շուրջը, բայց ոչինչ չէր տեսնում: Ուստի նրա ձեռքից բռնած՝ մտցրին Դամասկոս, ⁹ որտեղ երեք օր կույր վիճակում սպասեց. և այդ օրերին ո՛չ կերավ և ո՛չ էլ խմեց:

¹⁰ Դամասկոսում Տիրոջը հետևող մի մարդ կար, որ Անանիա էր կոչվում: Սա մի տեսիլք ունեցավ, և տեսիլքի մեջ Տերը նրան ասաց.

-Անա՛նիա:

-Այո՛, Տե՛ր,-պատասխանեց նա:

¹¹ Եվ Տերն ասաց նրան.

-Վե՛ր կաց ու գնա՛ Ուղիղ կոչվող փողոցը, Հուդայի տունը, և հարցրո՛ւ Սողոս անունով մի տարսնացու մասին, որ այս րոպեին աղոթքի է կանգնած: ¹² Նա տեսիլքի մեջ տեսավ Անանիա անունով մի մարդու, որ ներս մտնելով՝ ձեռքերը դրեց իր գլխին, որպեսզի ինքը վերստին տեսնի:

¹³ -Տե՛ր,-պատասխանեց Անանիան,-շատերից լսեցի այդ մարդու մասին, ինչպես նաև քո հավատացյալ ժողովրդի դեմ նրա գործած բազմաթիվ չարիքների մասին: ¹⁴ Նա, ավագ քահանաների կողմից լիազորված, եկել է այստեղ՝ ձերբակալելու բոլոր նրանց, որ պաշտում են քեզ:

¹⁵ Տերը նրան ասաց.

-Դու գնա՛, որովհետև ես նրան ընտրել եմ իբրև գործիք, որպեսզի իմ անունը ճանաչել տա հեթանոսներին, թագավորներին և Իսրայելի ժողովրդին: ¹⁶ Ես ինքս եմ ցույց տալու նրան, թե ինչքան չարչարանք պիտի կրի իմ անվան համար:

¹⁷ Անանիան գնաց, մտավ այն տունը և ձեռքերը դնելով Սողոսի գլխին՝ ասաց.

-Սողո՛ւ եղբայր, Տերն ինձ ուղարկեց՝ Հիսուսը, որ քեզ երևաց այն ճանապարհի վրա, որով դու գալիս էիր: Ինձ ուղարկեց, որպեսզի տեսնես և լցվես Սուրբ Հոգով:

¹⁸ Իսկույն Սողոսի աչքերից թեփերի նման ինչ-որ բաներ ցած ընկան, և նա սկսեց

9.2 «[Տիրոջ] ճանապարհին». բնագիրը չունի «Տիրոջ» բառը, և հետաքրքրական է, որ քրիստոնեական հավատը կոչվում է «ճանապարհ» (տե՛ս նաև 16.17, 18.25-26, 19.9 և 23, 22.4, 24.14 և 22: Հմմտ Բ Պտ 2.2):

9.4 «Ինչո՞ւ ես հալածում ինձ». մի շարք ձեռ. ավելացնում են «Չես կարող խթանին քացով խփել»:

տեսնել: Ոտքի ելավ ու մկրտվեց.¹⁹ ապա կերակուր ուտելով՝ զորացավ:

Քարոզչություն Դամասկոսում և փախուստ

Սողոսը մի քանի օր մնաց Դամասկոսի հավատացյալների հետ: ²⁰Նա, անմիջապես գնալով ժողովարանները, սկսեց քարոզել Հիսուսի մասին և ասել.

-Նա Աստծու Որդին է:

²¹ Բոլոր նրանք, որ լսում էին, զարմացած ասում էին.

-Սա այն մարդը չէ՞ր, որ Երուսաղեմում կատաղորեն հալածում էր նրանց, ովքեր պաշտում էին Հիսուսին: Եվ նույն նպատակով չէ՞ր, որ եկավ այստեղ, որպեսզի ձեռքակալելով նրանց՝ տանի ավագ քահանաներին:

²² Իսկ Սողոսը հետզհետե ավելի ուժեղ ապացույցներով շփոթեցնում ու լռեցնում էր Դամասկոսում բնակվող հրեաներին՝ համոզելով նրանց, թե Հիսուսն է Օծյալ Փրկիչը:

²³ Որոշ ժամանակ անց Դամասկոսի հրեաները որոշեցին սպանել Սողոսին: ²⁴ Բայց Սողոսն իմացավ նրանց նենգությունը, քանի որ գիշեր-ցերեկ հսկում էին քաղաքի դռները, որպեսզի սպանեին նրան: ²⁵ Ուստի մի գիշեր հավատացյալները, զամբյուղի մեջ դնելով նրան, իջեցրին պարսպից ցած:

Սողոսը Երուսաղեմում

²⁶ Սողոսը, Երուսաղեմ գալով, աշխատում էր շփման մեջ մտնել հավատացյալների հետ, բայց բոլորն էլ վախենում էին նրանից՝ չհավատալով, թե նա Քրիստոսի աշակերտ է դարձել: ²⁷ Սակայն Բառնաբասը վեցրեց Սողոսին և տարավ առաքյալների մոտ ու նրանց պատմեց, թե ինչպես նա ճանապարհին տեսել էր Տիրոջը, ու Տերը խոսել էր նրա հետ, և թե ինչպես Հիսուսի անունով համարձակ քարոզել է Դամասկոսում: ²⁸ Դրանից հետո Սողոսը առաքյալների հետ էր մնում և շրջում Երուսաղեմում ու համարձակ քարոզում էր Տեր Հիսուսի անունով: ²⁹ Խոսում ու վիճում էր հասկապես հունախոս հրեաների հետ, որոնք մտածում էին նրան սպանելու մի միջոց գտնել: ³⁰ Երբ հավատացյալ եղբայրներն իմացան այս բանը, Սողոսին փախցրին Կեսարիա և այնտեղից էլ ուղարկեցին Տարսոն:

³¹ Եկեղեցին ամբողջ Հրեաստանում, Գալիլեայում և Սամարիայում խաղաղություն էր վայելում և զորանում: Հավատացյալները Սուրբ Հոգու օգնությամբ բազմանում և ապրում էին Տիրոջ երկյուղով:

Պետրոսը Լիդոսում բժշկում է Ենեասին

³² Պետրոսը բոլոր կողմերում կատարած իր շրջագայության ընթացքում իջավ նաև Լիդոսում բնակվող հավատացյալների մոտ: ³³ Այնտեղ նա հանդիպեց Ենեաս անունով մի մարդու, որ ութ տարուց ի վեր անդամալույծ վիճակում մնում էր անկողնուն գամված: ³⁴ Պետրոսը նրան ասաց.

-Ենեա՛ս, Տերը՝ Հիսուս Քրիստոսը, բժշկում է քեզ. վե՛ր կաց և դու ի՛նքդ հարդարիք քո անկողնիսը:

^{9.18} Տբ 11.13-15:

^{9.23-25} Բ Կր 11.32-33:

Եվ Ենեասն իսկույն վեր կացավ: ³⁵ Լիդդայի և Սարոնի բոլոր բնակիչները տեսան նրան և հավատացին Տիրոջը:

Այծեմնիկի հարությունը

³⁶ Հոպպեում Հիսուսին հետևող մի կին կար՝ Տաբիթա անունով, որի թարգմանությունն Այծեմնիկ է: Նա իր կյանքը լցնում էր բարի գործերով և աղքատներին օգնելով: ³⁷ Այնպես պատահեց, որ այդ օրերին Այծեմնիկը հիվանդացավ ու մեռավ: Նրա մարմինը լվացին և դրեցին տան վերնահարկում:

³⁸ Լիդդան Հոպպեին մոտիկ էր: Երբ Հոպպեի հավատացյալները լսեցին, թե Պետրոսը Լիդդայում է գտնվում, երկու մարդ ուղարկեցին նրա մոտ՝ աղաչելու, որ նա առանց դանդաղելու իրենց մոտ գա: ³⁹ Պետրոսը վեր կացավ և եկավ նրանց հետ: Հազիվ հասած՝ նրան բարձրացրին վերնատուն: Բոլոր այրի կանայք հավաքվեցին Պետրոսի շուրջը. լաց էին լինում և ցույց տալիս այն շապիկներն ու հագուստները, որ Այծեմնիկը իր ողջ եղած ժամանակ կարել էր իրենց համար: ⁴⁰ Պետրոսը դուրս հանեց բոլորին, ծնկի եկավ, աղոթեց, ապա դառնալով դեպի մարմինը՝ ասաց.

-Տաբիթա՛, Տեր Հիսուս Քրիստոսի անունով եմ ասում, վե՛ր կաց:

Տաբիթան բացեց աչքերը և տեսնելով Պետրոսին՝ ուղղվեց նստեց: ⁴¹ Պետրոսը օգնեց նրան, որ ոտքի կանգնի: Ապա կանչեց հավատացյալներին և այրի կանանց ու նրանց ցույց տվեց կենդանացած Այծեմնիկին: ⁴² Ամբողջ Հոպպեն լսեց այս մասին, և շատերը հավատացին Տիրոջը: ⁴³ Իսկ Պետրոսը որոշ ժամանակ մնաց Հոպպեում՝ Միմոն անունով մի կաշեգործի մոտ:

10

Պետրոսը և Կոռնելիոսը

¹ Կեսարիայում Կոռնելիոս անունով մի մարդ կար, որ հարյուրապետ էր, հռոմեական բանակի «Իտալական» կոչված գնդից: ² Սա իր ամբողջ ընտանիքով բարեպաշտ էր և աստվածավախ. մեծապես օգնում էր հրեա ժողովրդի աղքատներին և անդադար աղոթում էր Աստծուն:

³ Մի օր, կեսօրից հետո ժամը երեքի մոտ, Կոռնելիոսը մի տեսիլքի մեջ հստակորեն տեսավ Աստծու հրեշտակին, որը ներս մտավ և ասաց.

-Կոռնելիո՛ւ:

⁴ Կոռնելիոսը սարսափած նայեց նրան և հարցրեց.

-Ի՞նչ կա, Տե՛ր:

Եվ հրեշտակն ասաց նրան.

^{9.36} «Հոպպե». Պաղեստինի ծովեզրյա փոքր քաղաքներից մեկը, որը Հրեաստան նահանգի գլխավոր նավահանգիստն էր: Այժմ կոչվում է Յաֆա:

^{9.38} Հեռավորությունը շուրջ 20 կմ է:

^{9.39} «Վերնատուն». տե՛ս 1.13-ի ծնթ:

^{9.40} Հուն. չունի «Տեր Հիսուս Քրիստոսի անունով եմ ասում»:

^{10.1} «Կեսարիա». տե՛ս 8.40-ի ծնթ:

^{10.3} «Կեսօրից հետո ժամը երեքի մոտ». տե՛ս 3.1-ի ծնթ:

-Աստված ընդունեց քո աղոթքներն ու քո կատարած ողորմությունները: ⁵ Ե՛լ, մա՛րդ ուղարկիր Հոպպե և կանչե՛լ տուր Սիմոն անունով մեկին, որ նաև Պետրոս է կոչվում: ⁶ Նա, որպես հյուր, մնում է Սիմոն անունով մի կաշեգործի մոտ, որի տունը ծովին մոտ է:

⁷ Երբ նրա հետ խոսող հրեշտակը մեկնեց, Կոռնելիոսը կանչեց իր ծառաներից երկու հոգու, ինչպես նաև իրեն սպասավորող զինվորներից մեկին, որը բարեպաշտ մի մարդ էր, ⁸ և նրանց ամեն ինչ պատմելուց հետո ուղարկեց Հոպպե:

⁹ Հետևյալ օրը, մինչ նրանք ճամփա ընկած մոտենում էին Հոպպեին, Պետրոսը կեսօրին տանիք բարձրացավ աղոթելու: ¹⁰ Նա քաղց զգաց և ուտել էր ուզում: Եվ մինչ տնեցիները ճաշ էին պատրաստում, նա մտքի հափշտակության մեջ ընկավ: ¹¹ Տեսավ երկինքը բացված, որտեղից ինչ-որ մի բան, չորս ծայրերից կապված սփռոցի ձևով, իջնում, նստում էր գետնին: ¹² Դրա մեջ կային ամեն տեսակ չորքոտանիներ, գազաններ, սողուններ և թռչուններ: ¹³ Պետրոսը լսեց մի ձայն, որն ասում էր իրեն.

-Վե՛ր կաց, Պետրո՛ս, մորթի՛ր և կե՛ր:

¹⁴ -Քա՛վ լիցի, Տե՛ր, -պատասխանեց Պետրոսը, -մինչև հիմա չի պատահել, որ ես պիղծ կամ անմաքուր բան ուտեմ:

¹⁵ Չայնը կրկին ասաց նրան.

-Ինչ որ Աստված ընծայում է իբրև մաքուր բան, դու պիղծ մի՛ համարիր այն:

¹⁶ Այս կրկնվեց երեք անգամ, և ապա սփռոցը երկինք վերցվեց:

¹⁷ Մինչ Պետրոսը զարմացած մտածում էր, թե արդյոք ի՛նչ է նշանակում իր տեսած այս տեսիլքը, ահա Կոռնելիոսի կողմից ուղարկված մարդիկ, հարցնելով Սիմոնի տեղը, եկան կանգնեցին դռան առջև, ¹⁸ ձայն տվեցին և հարցրին.

-Սիմոն Պետրոս կոչված մարդն այստե՞ղ է մնում:

¹⁹ Մինչ Պետրոսը դեռ մտածում էր տեսիլքի մասին, Սուրբ Հոգին ասաց նրան.

-Երեք հոգի եկել ու քեզ են փնտրում: ²⁰ Վե՛ր կաց, իջի՛ր և առանց վարանելու գնա՛ նրանց հետ, որովհետև ես եմ ուղարկել նրանց:

²¹ Պետրոսն իջավ նրանց մոտ և հարցրեց.

-Ձեր փնտրած մարդը ես եմ. ի՞նչ բանի համար եք եկել:

²² Նրանք պատասխանեցին.

-Մեզ ուղարկողը Կոռնելիոս հարյուրապետն է, արդար և աստվածավախ մի մարդ, որի մասին ամբողջ հրեա ժողովուրդն է վկայում: Նա սուրբ հրեշտակից հրաման առավ քեզ կանչելու իր տունը և քեզնից լսելու, ինչ որ ասելու ես:

²³ Պետրոսը ներս կանչեց նրանց և գիշերն իր մոտ պահեց:

Հաջորդ օրը Պետրոսը վեր կացավ գնաց նրանց հետ: Նրան ընկերացան նաև Հոպպեի հավատացյալ եղբայրներից ոմանք: ²⁴ Մյուս օրը մտան Կեսարիա, որտեղ

^{10.5} «Հոպպե». տե՛ս 9.36-ի ծնթ:

^{10.6} «Ծովին մոտ է». մի շարք ձեռ. ավելացնում են «Նա քեզ կասի, թե ինչ պետք է անես»:

^{10.9} Հղթ 8.5:

^{10.12} Մի շարք ձեռ. չունեն «գազաններ» բառը:

^{10.19} «Երեք հոգի». մի շարք ձեռ. ունեն «մի քանի հոգի»:

Կոռնելիոսը, իր բոլոր ազգականներին ու մտերիմ բարեկամներին հավաքած, սպասում էր նրանց գալուն: ²⁵ Երբ Պետրոսը ներս էր մտնում, Կոռնելիոսը նրան ընդառաջ եկավ և խոնարհվելով նրա առջև՝ երկրպագություն արեց: ²⁶ Պետրոսը վեր կացրեց նրան՝ ասելով.

-Ուտքի՛ ելիր, ես ինքս էլ մարդ եմ:

²⁷ Եվ խոսելով նրա հետ՝ ներս մտավ ու տեսնելով հավաքված բազմությունը՝ ²⁸ ասաց նրանց.

-Դուք շատ լավ գիտեք, որ հրեա մարդու համար թույլատրված չէ շփում կամ հարաբերություն ունենալ օտարազգի մեկի հետ, բայց Աստված ինձ ցույց տվեց, որ ոչ մեկին պիղծ կամ անմաքուր չպետք է համարեմ: ²⁹ Ուստի երբ իմ հետևից մարդ ուղարկեցիք, վեր կացա եկա առանց առարկության: Բայց հիմա հարցնում եմ ձեզ՝ ի՞նչ բանի համար կանչեցիք ինձ:

³⁰ Կոռնելիոսը պատասխանեց.

-Չորս օր առաջ, մոտավորապես այս ժամին, մինչ ժամը երեքի աղոթքն էի անում իմ տանը, ահա փայլուն զգեստներով մի մարդ կանգնեց իմ առաջ՝ ³¹ և ասաց.

«Կոռնելիո՛ւ, Աստված լսեց քո աղոթքները և տեսավ քո կատարած ողորմությունները:

³² Ե՛լ, մա՛րդ ուղարկիր Հոպպե և կանչե՛լ տուր Սիմոնին, որ նաև Պետրոս է կոչվում:

Նա, որպես հյուր, մնում է Սիմոն անունով մի կաշեգործի տանը, ծովին մոտիկ: Թող գա ու խոսի քեզ հետ»:³³ Ես էլ իսկույն մարդ ուղարկեցի քեզ մոտ. շնորհակալ եմ, որ եկար: Այժմ մենք բոլորս, Աստծու ներկայությամբ կանգնած, պատրաստ ենք լսելու, ինչ որ Տերը հրամայել է քեզ:

³⁴ Պետրոսն սկսեց ասել.

-Հիմա ճշմարտապես հասկանում եմ, որ Աստված խտրություն չի դնում մարդկանց միջև,³⁵ այլ բոլոր ազգերից էլ ընդունում է որևէ մեկին, որ երկնչում է իրենից և արդար գործեր է կատարում:³⁶ Նա իր պատգամն ուղարկեց իսրայելացիներին՝ ավետելով այն խաղաղությունը, որը գալու էր Հիսուս Քրիստոսի ձեռքով, որ Տերն է բոլորի:³⁷ Դուք արդեն գիտեք այն, ինչ տեղի ունեցավ Գալիլեայից սկսած ամբողջ Հրեաստանում՝ Հովհաննեսի կողմից քարոզված մկրտությունից հետո:³⁸ Ակնարկում եմ Հիսուսին, որ Նազարեթից էր. Աստված նրան օժեց Սուրբ Հոգով և զորությամբ, և նա շրջեց բարիք անելով ու Սատանայի կողմից տանջվածներին բժշկելով, որովհետև Աստված նրա հետ էր:³⁹ Մենք վկա ենք այն ամենին, որ նա կատարեց Հրեաստան երկրում և Երուսաղեմում: Նրան սպանեցին՝ խաչափայտից կախելով:⁴⁰ Բայց Աստված երրորդ օրը հարություն տվեց նրան և ուզեց, որ նա երևա ⁴¹ ոչ թե ամբողջ ժողովրդին, այլ մեզ՝ վկաներիս, որ առաջուց ընտրված էինք Աստծուց, և կերանք ու խմեցինք Հիսուսի հետ՝

^{10.30} «Մինչ ժամը երեքի աղոթքն էի անում». մի շարք ձեռ. ունեն «մինչ ծով պահած՝ ժամը երեքի աղոթքն էի անում»:

^{10.32} Մի շարք ձեռ. չունեն «թող գա ու խոսի քեզ հետ»:

^{10.34} Բ Օր 10.17:

^{10.36} «Խաղաղությունը». այստեղ խոսքն Աստծու հետ հաշտության մասին է՝ մարդկանց մեղքերի ջնջումով:

մեռելներից նրա հարություն առնելուց հետո:՝ ⁴² Եվ Հիսուսը մեզ պատվիրեց քարոզել ժողովրդին և վկայություն տալ, թե ի՛նքն է Աստծուց սահմանված Դատավորը, որ դատելու է ողջերին և մեռածներին: ⁴³ Բոլոր մարգարեները նրա մասին վկայում են, որ նրան հավատացողներն իրենց մեղքերին թողություն պիտի ստանան նրա անունով:

Հեթանոսներն ընդունում են Սուրբ Հոգին և մկրտվում

⁴⁴ Մինչ Պետրոսը խոսում էր, Սուրբ Հոգին իջավ բոլոր նրանց վրա, ովքեր լսում էին Աստծու խոսքը: ⁴⁵ Հրեությունից դարձած հավատացյալները, որոնք Պետրոսի հետ Հոպպեից էին եկել, զարմացան, որ Սուրբ Հոգու պարզևր տրվում է նաև հեթանոսներին, ⁴⁶ որովհետև լսում էին, թե ինչպես նրանք անձանոթ լեզուներով էին խոսում և փառաբանում Աստծուն: Այն ժամանակ Պետրոսն ասաց.

⁴⁷ -Ո՞վ կարող է արգելել, որ ջրով մկրտվեն սրանք, որոնք Սուրբ Հոգին ընդունեցին մեզ նման:

⁴⁸ Եվ հրամայեց նրանց, որ մկրտվեն Հիսուս Քրիստոսի անունով: Իսկ նրանք աղաչեցին նրան, որ մի քանի օր մնա այնտեղ:

11

Պետրոսը զեկուցում է Երուսաղեմի եկեղեցուն

¹ Հրեաստանում մնացող առաքյալներն ու հավատացյալները լսեցին, որ հեթանոսներն էլ են ընդունել Աստծու խոսքը: ² Երբ Պետրոսը Երուսաղեմ գնաց, հրեությունից դարձած հավատացյալներն սկսեցին մեղադրել նրան՝ ³ ասելով.

-Ինչո՞ւ անթլփատ մարդկանց տունը մտար և նրանց հետ հաց կերար:

⁴ Եվ Պետրոսը սկսեց պատմել նրանց՝ ասելով.

⁵ -Ես Հոպպե քաղաքում էի գտնվում և աղոթք էի անում, երբ մտքի հափշտակության մեջ ընկա և մի տեսիլք ունեցա. տեսա մեծ սփռոցի նմանվող մի բան, չորս ծայրերից երկնքից կախված, որ իջավ ու հասավ ինձ: ⁶ Մինչ ապշած նայում էի դրան, տեսա դրա մեջ չորքոտանիներ, գազաններ, սողուններ և թռչուններ: ⁷ Լսեցի մի ձայն, որ ինձ ասում էր. «Պետրո՞ւս, վե՛ր կաց, մորթի՛ր և կե՛ր»: ⁸ Ես ասացի. «Քա՛վ լիցի, Տե՛ր, մինչև հիմա չի պատահել, որ պիղծ կամ անմաքուր մի բան մտնի իմ բերանը»: ⁹ Երկնքից ձայնը կրկին հնչեց և ասաց ինձ. «Ինչ որ Աստված ընծայում է իբրև մաքուր բան, դու պիղծ մի՛ համարիր այն»: ¹⁰ Այս կրկնվեց երեք անգամ և ապա սփռոցն ու կենդանիները միասին քաշվեցին դեպի երկինք: ¹¹ Եվ ահա նույն պահին երեք մարդ, որ Կեսարիայից ինձ մոտ էին ուղարկված, եկան կանգնեցին այն տան առջև, որտեղ գտնվում էի: ¹² Սուրբ Հոգին ինձ ասաց, որ գնամ նրանց հետ առանց վարանելու: Այս վեց եղբայրներն էլ եկան ինձ հետ, և մենք գնացինք մտանք Կոռնելիոսի տունը: ¹³ Նա մեզ պատմեց, թե ինչպես իր տանը մի հրեշտակ է տեսել, որ իր առջև կանգնելով՝ ասել

^{10.41} «Կերանք ու խմեցինք». այս արտահայտությամբ Պետրոսի նպատակն է եղել ընդգծել Հիսուսի մարմնավոր հարության վավերականությունը:

^{11.1} «Հավատացյալները». բոց՝ «եղբայրները», որ առհասարակ քրիստոնյաներին մատնանշելու մի ձև է:

Է. «Մա՛րդ ուղարկիր Հոպպե և կանչե՛լ տուր Սիմոնին, որ նաև Պետրոս է կոչվում.
14 նա Աստծու կողմից քեզ մի պատգամ պիտի բերի, որով դու և քո ամբողջ տունը
պիտի փրկվեք»։ 15 Հազիվ էի սկսել խոսել, երբ Սուրբ Հոգին իջավ նրանց վրա, ինչպես
որ նախապես իջել էր մեզ վրա։ 16 Այն ժամանակ հիշեցի Տիրոջ այս խոսքը, թե՛
«Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց Աստված ձեզ կմկրտի Սուրբ Հոգով»։ 17 Արդ, եթե
Աստված միևնույն պարզևր, որ տվել էր մեզ, նրանց ևս տվեց, երբ Տեր Հիսուս
Քրիստոսին հավատացին, ես ինչպե՞ս կարող էի արգելք լինել Աստծուն։

18 Այս բացատրությունը լսելով՝ նրանք դադարեցին նրան մեղադրել և փառավորեցին
Աստծուն՝ ասելով.

-Ուրեմն Աստված հեթանոսներին ևս առիթ տվեց, որ ապաշխարեն և կյանք
ունենան։

Անտիոքի եկեղեցին

19 Այն հավատացյալները, որոնք Ստեփանոսի սպանությանը հաջորդած հալածանքի
պատճառով ցրվել էին զանազան կողմեր, հասան մինչև Փյունիկե, Կիպրոս և
Անտիոք։ Նրանք հրեաներից բացի ուրիշ ոչ ոքի չէին քարոզում Քրիստոսի մասին։*

20 Սակայն նրանցից ոմանք, որոնք կիպրացի և կյուրենացի էին, երբ հասան Անտիոք,
սկսեցին դիմել նաև հեթանոսներին՝ ավետարանելով Տեր Հիսուսին։ 21 Եվ Տերն օգնում
էր նրանց։ Բազմաթիվ մարդիկ հավատացին և դարձան դեպի Տերը։

22 Այս մասին լուրը հասավ Երուսաղեմի եկեղեցուն, և Բառնաբասին ուղարկեցին
Անտիոք։ 23 Սա երբ եկավ և տեսավ Աստծու տված շնորհը, ուրախացավ և հորդորում
էր բոլորին, որ ամբողջանվեր սրտով կապված մնան Տիրոջը։ 24 Եվ որովհետև նա
բարի, Սուրբ Հոգով ու հավատով լցված մարդ էր, մի մեծ բազմություն հավատաց
Տիրոջը։ 25 Ապա Բառնաբասը գնաց Տարսոն՝ փնտրելու Մոդոսին, և գտնելով նրան՝
բերեց Անտիոք, 26 որտեղ երկուսով մի ամբողջ տարի եղան տեղի եկեղեցում՝
ուսուցանելով մեծ թվով մարդկանց։ Եվ առաջին անգամ այստեղ՝ Անտիոքում էր, որ
Քրիստոսի հետևորդները կոչվեցին «քրիստոնյա»։

27 Այն օրերին Երուսաղեմից մի քանի մարգարեներ եկան Անտիոք։ 28 Նրանցից մեկը,
որ Ազաբոս էր կոչվում, Սուրբ Հոգուց թելադրված՝ ելավ հայտնեց, որ աշխարհում մեծ
սով է լինելու, որը և տեղի ունեցավ Կլավդիոս կայսրի օրով։* 29 Անտիոքի
հավատացյալները որոշեցին օգնություն ուղարկել Հրեաստանում բնակվող
եղբայրներին՝ յուրաքանչյուրն իր կարողության չափով, 30 և արդարև այդ օգնությունը

*11.16 Գրծ 1.5:

*11.19 «Անտիոք». Հյուսիսային Սիրիայի նշանավոր մի քաղաք՝ Միջերկրականի հյուսիսարևելյան
կողմում։ Սա իր մեծությամբ երրորդն էր Հռոմեական կայսրության մեջ։ Այստեղի քրիստոնեական
համայնքը մեծամասնությամբ բաղկացած էր հեթանոսությունից դարձած մարդկանցից։ Այստեղից էր,
որ Պողոսը ձեռնարկեց առաքելական իր երեք ճանապարհորդությունները։

*11.19 Գրծ 8.1-4:

*11.20 «Հեթանոսներին». գրբ. «հույներին»: Շատ ձեռ. ունեն «հունախոսներին»։

*11.28 «Կլավդիոս». սա Հռոմի 5-րդ կայսրն է, որ գահակալել է ՔՀ 41-54թթ.: Ըստ տվյալ ժամանակի
արձանագրությունների՝ կայսրության զանազան շրջաններում սով է պատահել 46-48թթ.:

*11.28 Գրծ 21.10:

կատարեցին՝ Բառնաբասի ու Սողոսի ձեռքով այն ուղարկելով եկեղեցու երեցներին:

12

Հալածանքները սաստկանում են

¹ Այն օրերին Հերովդես թագավորն սկսեց հալածել եկեղեցու անդամներից ոմանց:² Նախ սրով սպանել տվեց Հակոբոսին՝ Հովհաննեսի եղբորը:³ Ապա տեսնելով, որ դա հաճելի է հրեաներին, Պետրոսին էլ ձերբակալել տվեց Բաղարջակերաց տոնի օրերին:⁴ Նրան բռնելուց հետո բանտ նետել տվեց՝ չորս հերթով չորսական զինվորների հանձնելով նրա պահպանությունը: Ուզում էր Ջատկից հետո հրապարակորեն դատել նրան:⁵ Մինչ Պետրոսը մնում էր բանտում՝ հսկողության ներքո, եկեղեցին նրա համար անդադար աղոթում էր Աստծուն:

Պետրոսի ազատումը բանտից

⁶ Հասավ ժամանակը, երբ Հերովդեսն ուզում էր նրան դուրս բերել դատաստանի: Նախորդ գիշեր Պետրոսը, կրկնակի շղթաներով կապված, քնել էր երկու զինվորների մեջտեղում, իսկ պահակները դռան առջև պահպանում էին բանտը:⁷ Եվ ահա Տիրոջը հրեշտակը եկավ կանգնեց նրա մոտ: Բանտի խցիկը լուսավորվեց: Պետրոսի կողը բոթելով՝ հրեշտակն արթնացրեց նրան և ասաց.

-Շուտ վե՛ր կաց:

Շղթաներն ընկան նրա ձեռքերից:⁸ Հրեշտակը նրան ասաց.

-Գոտիդ կապի՛ր և հագի՛ր հողաթափերդ:

Պետրոսը կատարեց նրա ասածը: Եվ հրեշտակն ասաց.

-Վերարկուդ վրա՛դ գցիր և արի՛ իմ հետևից:

⁹ Պետրոսը վեր կացավ և հետևեց նրան, սակայն նա չէր իմանում, թե հրեշտակի արածն արդյոք իրական է, թե՞ ոչ, որովհետև կարծում էր, թե երազ է տեսնում:

¹⁰ Նրանք անցան առաջին պահակակետը, հետո՝ երկրորդը և եկան երկաթե դարպասի մոտ, որը տանում էր դեպի քաղաք: Դարպասը իրեն-իրեն բացվեց նրանց առջև: Դուրս գալով՝ նրանք մտան փողոց, և հրեշտակն իսկույն հեռացավ նրանցից:¹¹ Պետրոսն ուշքի գալով ասաց.

-Այժմ վստահ եմ, որ Տերն ուղարկեց իր հրեշտակին և ինձ ազատեց Հերովդեսի ձեռքից և այն ամենից, որ ակնկալում էր հրեա ժողովուրդը:

¹² Սթափվելով՝ նա ուղղվեց դեպի Մարիամի տուն: Այս Մարիամը մայրն էր Հովհաննեսի, որը Մարկոս վերանվանվեց: Այնտեղ շատերն էին հավաքվել ու աղոթք էին անում:¹³ Երբ դարպասի դռնակը թակեց, Ռոդե անունով մի աղախին եկավ իմանալու, թե ո՞վ է:¹⁴ Եվ ճանաչելով Պետրոսի ձայնը՝ փոխանակ դուռը բանալու,

^{12.1} «Հերովդես թագավոր». սա Հերովդես Ագրիպաս Ա-ն է, որ թագավորեց 41-44թթ. (տե՛ս Ղկ 23.8-12):

^{12.4} Ելք 12.1-27:

^{12.13} «Ռոդե» նշ է «վարդ»:

ուրախությունից ներս վազեց՝ հայտնելու, թե Պետրոսը դռան մոտ կանգնած է:

¹⁵Նրանք ասացին նրան.

-Գժվե՞լ էս:

Իսկ աղախինը առավել ևս պնդում էր, թե իր ասածը ճիշտ է: Այն ժամանակ նրանք ասացին.

-Ուրեմն նրա հրեշտակն է:

¹⁶Մինչ այդ Պետրոսը շարունակում էր բախել դուռը: Երբ բացեցին, տեսան նրան և զարմացան:

¹⁷Պետրոսը ձեռքով նշան արեց նրանց, որ լռեն, և պատմեց, թե ինչպես էր Տերն իրեն հանել բանտից: Ապա ասաց.

-Այս բանը պատմեցե՛ք Հակոբոսին և մյուս հավատացյալ եղբայրներին:

Եվ ինքը ելավ գնաց ուրիշ տեղ:

¹⁸Երբ առավոտ եղավ, զինվորների մեջ մեծ խռովություն ընկավ, թե արդյոք Պետրոսն ի՛նչ եղավ: ¹⁹Հերովդեսը փնտրել տվեց նրան, և երբ չգտան, հարցաքննությունից հետո հրամայեց սպանել պահակներին: Իսկ Պետրոսը Հրեաստանից գնաց Կեսարիա և մնաց այնտեղ:

Հերովդես Ագրիպասի մահը

²⁰Հերովդեսը թշնամությամբ էր լցված Տյուրոսի և Սիդոնի բնակիչների դեմ, որոնց պատգամավորները միաբանված եկան և համոզելով արքունի սենեկապետ Բղաստոսին՝ խաղաղություն խնդրեցին, որովհետև իրենց երկրի ուտեստեղենի պարենավորումը կախված էր արքունիքից: ²¹Որոշված օրը Հերովդեսը, իր թագավորական զգեստը հագած, ատյան էր նստել և հրապարակորեն խոսում էր նրանց հետ: ²²Ամբոխն աղաղակում էր՝ ասելով.

-Մարդ չէ խոսողը, այլ Աստված:

²³Տեղնուտեղը Տիրոջ հրեշտակը հարվածեց նրան, քանի որ նա փառքը չվերագրեց Աստծուն: Նա որդնալից եղավ և այդպես շունչը փչեց:

²⁴Իսկ Աստծու խոսքը տարածվում էր, և հավատացյալների թիվը բազմանում էր:

²⁵Երբ Բառնաբասն ու Սողոսը իրենց հանձնված պաշտոնն ավարտեցին, Երուսաղեմից վերադարձան Անտիոք՝ իրենց հետ վերցնելով նաև Հովհաննեսին, որ Մարկոս էր վերանվանվել:

13

Բառնաբասն ու Սողոսը առաքելության են ուղարկվում

^{12.17} «Հակոբոսին». սա Հիսուսի եղբայր Հակոբոսն է և դրա համար էլ կոչվել է «Տյառնեղբայր»: Նրա վրա էր ընկած Երուսաղեմի եկեղեցու պատասխանատվությունը (հմմտ Գղ 1.19):

^{12.19} «Կեսարիա». տե՛ս 8.40-ի ծնթ:

^{12.20-23} Բ Մկ 9.5-28:

^{12.23} Ժամանակի հրեա պատմիչ Հովսեփոսը ևս վկայում է հիշյալ իրադարձությունների և Հերովդես Ագրիպասի անակնկալ և տարօրինակ մահվան մասին՝ ԲՀ 44թ.:

^{12.25} «Երուսաղեմից վերադարձան [Անտիոք]», հուն. մի շարք ձեռ. ունեն «Երուսաղեմ վերադարձան»:

¹ Անտիոքի եկեղեցում կային մարգարեններ և ուսուցիչներ, ինչպես՝ Բառնաբասը և Շամավոնը, որ կոչվում էր Նյուգեր, Կյուրենացի Ղուկիոսը և Մանայենը, որ Հերովդես չորրորդապետի սննդակիցն էր, և Սողոսը: ² Մի օր, երբ սրանք պաշտամունք էին մատուցում Տիրոջը և ծոմապահության մեջ էին, Սուրբ Հոգին ասաց.

-Տրամադրեցե՛ք Բառնաբասին և Սողոսին այն գործի համար, որին ես կոչել եմ նրանց:

³ Այն ժամանակ նրանք ծոմապահությամբ և աղոթքով ձեռք դրեցին նրանց վրա և ուղարկեցին:

Քարոզչություն Կիպրոսում

⁴ Ուստի Բառնաբասն ու Սողոսը, Սուրբ Հոգուց ուղարկված, իջան Սելևկիա և այնտեղից նավով գնացին դեպի Կիպրոս: ⁵ Սալամինա հասնելով՝ նրանք սկսեցին Աստծու խոսքը քարոզել հրեաների ժողովարաններում: Որպես օգնական ունեին Հովհաննես Մարկոսին:

⁶ Շրջելով ամբողջ կղզին՝ հասան Պափոս: Այնտեղ գտան կախարդությամբ զբաղվող հրեա մի սուտ մարգարեի, որի անունն էր Բարեհեսու: ⁷ Մա հաճախ լինում էր փոխբղեշխի՝ Սերգիոս Պողոսի հետ, որը մի իմաստուն մարդ էր: Սերգիոսը կանչել տվեց Բառնաբասին ու Սողոսին և ուզում էր լսել Աստծու խոսքը: ⁸ Բայց կախարդը, որին Եղիմաս անունն էին տալիս հունարենով, հակառակվեց նրանց և ուզում էր տարհամոզել փոխբղեշխին, որ չհավատա: ⁹ Այն ժամանակ Սողոսը, որ Պողոս էլ էր կոչվում, Սուրբ Հոգով լցված, աչքերը հառեց նրան ¹⁰ և ասաց.

-Ո՛վ դու նենգ, խորամա՛նկ մարդ, Սատանայի՛ որդի, արդարությա՛ն թշնամի, չե՞ս դադարելու Տիրոջ ուղիղ ճանապարհները խեղաթյուրելուց: ¹¹ Ահա Տերը հիմա կհարվածի քեզ. դու կույր կլինես և միառժամանակ արևի երես չես տեսնի:

Նույն վայրկյանին Եղիմասի աչքերը մշուշապատվեցին ու խավարեցին: Նա խարխափում էր և փնտրում մեկին, որ իր ձեռքից բռնելով՝ առաջնորդեր իրեն:

¹² Փոխբղեշխը, երբ տեսավ պատահածը, հավատաց՝ խորապես տպավորված Տիրոջ ուսուցումից:

Պողոսն ու Բառնաբասը Պիսիդիայի Անտիոքի քաղաքում

¹³ Պողոսը և նրան ուղեկցողները Պափոսից նավով եկան Պամփիլիայի Պերգե քաղաքը: Իսկ Հովհաննես Մարկոսը, բաժանվելով նրանցից, վերադարձավ Երուսաղեմ: ¹⁴ Ապա Պերգեից ելնելով հասան Պիսիդիայի Անտիոք քաղաքը և շաբաթ օրը ժողովարան գնալով՝ նստեցին: ¹⁵ Օրենքի և մարգարենների գրքերի ընթերցումից հետո ժողովրդապետները հրավեր ուղարկեցին նրանց՝ ասելով.

^{13.1} «Նյուգեր». լատ. նշ է «սև, սևամորթ»: «Հերովդես չորրորդապետ»-ին չպետք է շփոթել վերևում հիշված Հերովդես Ագրիպասի հետ. սա Հերովդես Անտիպասն է (տե՛ս Մտ 14.1-ի և Մր 6.14-ի ձևը):

^{13.4} «Սելևկիան» Անտիոքի նավահանգիստն էր՝ ուղիղ Կիպրոսի դիմաց:

^{13.14} «Անտիոք». սա Հյուսիսային Սիրիայի նշանավոր քաղաքը չէ, որտեղից նրանք ճանապարհ ընկան (հմր 1), այլ Փոքր Ասիայի Պիսիդիայի նահանգի մի քաղաք, որ հռոմեական գաղթավայր էր և միաժամանակ առևտրական կարևոր կենտրոն, որտեղ բավական մեծ հրեական գաղութ կար:

-Եղբայրներ՝ ր, եթե մեր ժողովրդին հաղորդելիք քաջալերական մի պատգամ ունեք, ասացե՛ք:

¹⁶ Պողոսը ոտքի կանգնեց, ձեռքով նշան արեց, որ լռեն, ապա ասաց.

-Ո՛վ իսրայելացիներ և աստվածավախ մարդիկ, լսեցե՛ք: ¹⁷ Իսրայելի՝ այս ժողովրդի Աստվածը, ընտրեց մեր հայրերին, բարձրացրեց մեր ժողովրդին, որ Եգիպտոսում ապրում էր պանդխտության մեջ, և իր մեծ գործությամբ նրանց հանեց այնտեղից՝

¹⁸ Շուրջ քառասուն տարի անապատում կերակրեց նրանց: ¹⁹ Ապա Քանան երկրում բնակվող յոթ ազգերին պարտության մատնելով՝ նրանց երկիրը որպես ժառանգություն տվեց մեր ժողովրդին: ²⁰ Այս բոլորը կատարվեց մոտավորապես չորս հարյուր հիսուն տարիների ընթացքում: Այնուհետև դատավորներ տվեց նրանց՝ մինչև Սամվել մարգարեի ժամանակը,՝ ²¹ երբ մեր ժողովուրդը թագավոր ուզեց, և Աստված քառասուն տարվա համար թագավոր կարգեց Սավուդին՝ Կիսի որդուն, որը Բենիամինի ցեղից էր: ²² Սավուդից հետո նրանց վրա թագավոր կարգեց Դավթին, որի մասին նաև վկայեց՝ ասելով.

«Դավիթը՝ Հեսսեի որդին,

իմ սրտի ուզած անձն է,

որ պիտի կատարի իմ ամբողջ կամքը»:

²³ Նրա սերնդից էր, որ Աստված Իսրայելին տվեց իր խոստացած Փրկչին՝ Հիսուսին:

²⁴ Բայց նախքան նրա հրապարակ գալը Հովհաննեսն Իսրայելի ամբողջ ժողովրդին քարոզում էր, որ ապաշխարեն ու մկրտվեն: ²⁵ Եվ Հովհաննեսը իր պաշտոնն ավարտելու ժամանակ ասաց. «Ի՞նչ եք կարծում իմ մասին, ո՞վ եմ ես: Ես ձեր սպասած անձը չեմ: Ահա ինձնից հետո գալիս է նա, որի կոշիկները հանելու իսկ արժանի չեմ ես»:

²⁶ Եղբայրներ՝ ր, Աբրահամի տոհմի զավակներ՝ ր և ձեր մեջ գտնվող աստվածավա՛խ մարդիկ, փրկության այս պատգամն Աստված ձե՛զ ուղարկեց, ²⁷ որովհետև Երուսաղեմի բնակիչներն ու նրանց իշխանները չճանաչեցին Հիսուսին և նրան դատապարտելով՝ կատարեցին մարգարեների խոսքը, որ ընթերցում էին ամեն շաբաթ օր: ²⁸ Ու թեև մահվան արժանի ոչ մի հանցանք չգտան նրա վրա, սակայն Պիղատոսից պահանջեցին, որ սպանվի: ²⁹ Երբ կատարեցին նրա մասին բոլոր

^{13.17} ա Ելք 1.7: բ Ելք 12.51:

^{13.18} Թվ 14.34, Բ Օր 1.31:

^{13.19} ա Բ Օր 7.1: բ Հս 14.1:

^{13.20} «Այս բոլորը կատարվեց մոտավորապես չորս հարյուր հիսուն տարիների ընթացքում: Այնուհետև դատավորներ...»։ մի շարք ձեռ. ունեն «Այնուհետև մոտ չորս հարյուր հիսուն տարիների ընթացքում դատավորներ...»:

^{13.20} ա Դտ 2.16: բ Ա Թգ 3.20:

^{13.21} ա Ա Թգ 8.5: բ Ա Թգ 10.21:

^{13.22} ա Ա Թգ 13.14: բ Ա Թգ 16.12, Սղ 89.20:

^{13.24} Սր 1.4, Ղկ 3.3:

^{13.25} ա Հհ 1.20: բ Ստ 3.11, Սր 1.7, Ղկ 3.16, Հհ 1.27:

^{13.28} Ստ 27.22-23, Սր 15.13-14, Ղկ 23.21-23, Հհ 19.15:

գրվածները, խաչափայտից իջեցրին նրան և գերեզման դրեցին: ³⁰ Բայց Աստված մեռելներից հարություն տվեց նրան, ³¹ և Հիսուսը բազում օրեր երևաց նրանց, որոնք նրա հետ Գալիլեայից Երուսաղեմ էին եկել և որոնք այժմ նրա վկաներն են ժողովրդի առջև: ³² Մենք էլ ահա ավետում ենք ձեզ, որ Աստված մեր հայրերին տված իր խոստումը ³³ կատարեց մեր օրերին, մեզ համար, որ նրանց որդիներն ենք: Այդ խոստումը կատարեց՝ հարություն տալով Հիսուսին, ինչպես երկրորդ սաղմոսում էլ գրված է. «Դու իմ որդին ես, և ես այսօր ծնեցի քեզ»: ³⁴ Այն նույն իրողությունը, որ Աստված մեռելներից հարություն տվեց նրան, և նա այլևս բնավ մահ չի տեսնելու, մի խոստում է՝ մե՛զ ուղղված, որովհետև Աստված այսպես է ասում. «Ձե՛զ պիտի տամ այն իսկական և սուրբ օրհնությունը, որ խոստացա Դավթին», ³⁵ և ինչպես մի ուրիշ սաղմոսում սաղմոսագիրն ասում է՝ «Չպիտի թողնես, որ քո ծառայի մարմինը փտություն տեսնի»: ³⁶ Արդ, Դավիթն իր սերնդի մեջ Աստծուն ծառայելուց հետո մեռավ և թաղվեց իր հայրերի կողքին, և նրա մարմինը փտություն տեսավ: ³⁷ Բայց Աստված հարություն տվեց Հիսուսին, որի մարմինը փտություն չտեսավ: ³⁸ Ուստի իմացե՛ք, եղբայրնե՛ր, Հիսուսի միջոցով է, որ մեղքերի թողություն է քարոզվում ձեզ: ³⁹ Ով որ հավատում է նրան, պիտի արդարանա իր բոլոր մեղքերից, որոնցից դուք չկարողացաք արդարանալ Մովսեսի Օրենքի միջոցով: ⁴⁰ Զգո՛ւյշ եղեք ուրեմն, որ ձեր վրա չգա այն, ինչ ասում են մարգարեները.

⁴¹ «Տեսե՛ք ք, ո՛վ արհամարհողներ,
զարմացե՛ք և չքվեցե՛ք,
որովհետև ես ձեր օրերում
կկատարեմ այնպիսի մի գործ, որին դուք չեք հավատա,
եթե մեկը ձեզ պատմի այն»:

⁴² Երբ Բառնաբասն ու Պողոսը ժողովարանից դուրս եկան, մարդիկ աղաչում էին նրանց, որ մյուս շաբաթ օրն էլ խոսեն նույն նյութի մասին: ⁴³ Եվ երբ ժողովուրդը ցրվեց, բազմաթիվ հրեաներ և դեպի հրեություն դարձած բարեպաշտ օտարազգիներ հետևեցին Պողոսին և Բառնաբասին, որոնք խոսեցին նրանց հետ և համոզեցին նրանց, որ շարունակեն մնալ Աստծու շնորհի մեջ:

Պողոսն ու Բառնաբասը սկսում են քարոզել հեթանոսներին

⁴⁴ Հաջորդ շաբաթ օրը գրեթե ամբողջ քաղաքը հավաքվեց՝ լսելու Աստծու խոսքը: ⁴⁵ Երբ հրեաները տեսան այդ բազմությունը, նախանձով լցվեցին և հայիոյալից արտահայտություններով ընդդիմախոսում էին Պողոսի ասածներին: ⁴⁶ Այն ժամանակ Պողոսն ու Բառնաբասը համարձակ կերպով հայտարարեցին.

-Նախ ձեզ պետք է քարոզեինք Աստծու խոսքը. բայց քանի որ դուք այն մերժում եք և

^{13.29} Մտ 27.57-61, Սր 15.42-47, Ղկ 23.50-56, Հհ 19.38-42:

^{13.31} Գրծ 1.3:

^{13.33} Սղ 2.7:

^{13.34} Ես 55.3 [LXX]:

^{13.35} Սղ 16.10:

^{13.41} Ամբ 1.5 [LXX]:

ձեզ արժանի չեք համարում հավիտենական կյանքին, մենք էլ ահա դառնում ենք դեպի հեթանոսները.⁴⁷ որովհետև Տերն ինքը այսպես պատվիրեց մեզ՝ ասելով.

«Ուղարկեցի քեզ, որ լույս լինես հեթանոսներին, փրկության պատճառ լինես աշխարհի բոլոր կողմերում»:⁴⁸

⁴⁸ Այս լսելով՝ հեթանոսներն ուրախանում էին և փառավորում Տիրոջ խոսքը: Եվ ովքեր սահմանված էին հավիտենական կյանքի, ընդունում էին հավատը:

⁴⁹ Այսպիսով, Տիրոջ խոսքը տարածվում էր բոլոր գավառներում: ⁵⁰ Բայց հրեաները գրգռեցին մի շարք ազնվատոհմ բարեպաշտ կանանց, ինչպես նաև քաղաքի մեծամեծներին, և Պողոսի ու Բառնաբասի դեմ հալածանք հարուցելով՝ նրանց դուրս հանեցին իրենց սահմաններից: ⁵¹ Սրանք էլ, իրենց ոտքի փոշին թափ տալով նրանց վրա, եկան Իկոնիոն: ⁵² Իսկ Տիրոջ աշակերտները լցվում էին ուրախությամբ և Սուրբ Հոգով:

14

Պողոսն ու Բառնաբասը Իկոնիոնում

¹ Իկոնիոնում նույնպես Պողոսն ու Բառնաբասը միասին գնացին հրեաների ժողովարանը և խոսեցին այնպես, որ բազմաթիվ հրեաներ և հույներ ընդունեցին հավատը: ² Բայց նրանց քարոզչությունը չընդունող հրեաները պղտորեցին հեթանոսների միտքը և նրանց գրգռեցին հավատացող եղբայրների դեմ:

³ Այսուհանդերձ առաքյալները բավականին ժամանակ մնացին այնտեղ: Նրանք համարձակ քարոզում էին՝ վստահելով Տիրոջը, որ վկայություն էր տալիս իր շնորհի քարոզչության մասին՝ նշաններ ու հրաշքներ կատարելով նրանց ձեռքով:

⁴ Քաղաքի բնակիչների մեջ երկպառակություն ընկավ. ոմանք հրեաների հետ էին, իսկ ուրիշները՝ առաքյալների: ⁵ Երբ հեթանոսներն ու հրեաները իրենց իշխանների հետ ոտքի ելան՝ առաքյալներին խոշտանգելու և քարկոծելու, ⁶ նրանք հասկացան, թե ինչ է սպասում իրենց, և փախան լիկայոնացիների Լյուստրա, Դերբե քաղաքներն ու շրջակա գավառները ⁷ և այնտեղ էին ավետարանում:

Պողոսն ու Բառնաբասը Լյուստրայում և Դերբեում

⁸ Լյուստրայում ոտքերից տկար մի մարդ կար, որ նստած էր մնում, քանի որ ի ծնե կաղ էր և երբեք չէր քայլել: ⁹ Սա ունկնդրում էր, ինչ որ Պողոսն ասում էր: Պողոսն իր աչքերը սևեռեց նրա վրա և տեսնելով, որ նա փրկվելու հավատ ունի, ¹⁰ ուժեղ ձայնով ասաց նրան.

-Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի անունով քե՛զ եմ ասում. վե՛ր կաց և ուղիղ կանգնի՛ր ոտքերիդ վրա:

^{13.47} Ես 42.6, 49.6:

^{13.51} «Իրենց ոտքի փոշին թափ տալով». տե՛ս Մտ 10.14-ի ծնթ:

^{13.51} Մտ 10.14, Մր 6.11, Ղկ 9.5, 10.11:

Մարդը վեր ցատկեց և քայլում էր: ¹¹ Մարդիկ էրբ տեսան Պողոսի գործած հրաշքը, սկսեցին լիկայուներեն բարձրաձայն աղաղակել՝ ասելով.

-Աստվածները մարդկանց կերպարանքով իջել են մեզ մոտ:

¹² Բառնաբասին Ջևս էին կոչում, իսկ Պողոսին՝ Հերմես, քանի որ նա էր գլխավոր խոսողը: ¹³ Քաղաքի մուտքի մոտ գտնվող Ջևսի տաճարի քուրմը բազմության հետ ցուլեր և ծաղկեպսակներ բերեց քաղաքի դռան մոտ՝ դրանք առաքյալների առջև զոհելու համար: ¹⁴ Առաքյալները՝ Բառնաբասն ու Պողոսը, էրբ լսեցին այս, պատռեցին իրենց հագուստները և ամբոխի միջից դուրս վազեցին՝ բարձրաձայն աղաղակելով:

¹⁵ -Ո՛վ մարդիկ, այդ ի՞նչ էք անում: Մենք էլ ձեզ նման տկար մարդիկ ենք և ձեզ քարոզում ենք, որ այդպիսի դատարկ բաները թողնելով՝ դառնաք դեպի կենդանի Աստվածը, «որն ստեղծեց երկինքը, երկիրն ու ծովը և ամեն ինչ, որ կա նրանց մեջ»:

¹⁶ Անցյալ ժամանակներում նա թույլ տվեց, որ յուրաքանչյուր ազգ գնա իր ճանապարհով: ¹⁷ Եվ սակայն միշտ ինքն իր մասին վկայություն տվեց բարերարություններով. երկնքից անձրև տվեց ձեզ, պտղաբերության եղանակներ դրեց, ուտելիքներով լիացրեց ձեզ և ձեր սրտերը լցրեց ուրախությամբ:

¹⁸ Այս խոսքերով նրանք հազիվ կարողացան ժողովրդի բազմությանը հետ կանգնեցնել իրենց առջև զոհ մատուցելու մտադրությունից և համոզեցին, որ յուրաքանչյուրը գնա իր գործին:

¹⁹ Մինչ նրանք շրջում և ուսուցանում էին, Անտիոքից և Իկոնիոնից հրեաներ եկան: Երբ առաքյալներն սկսեցին համարձակ վիճել, հրեաները խաբեությամբ համոզեցին ժողովրդին, որ հեռու մնան նրանցից՝ ասելով.

-Այս մարդկանց ասածները բնավ ճշմարիտ չեն, այլ ամբողջությամբ սուտ են: Եվ Պողոսին քարկոծելով՝ քարշ տվեցին քաղաքից դուրս՝ մեռած համարելով նրան:

²⁰ Բայց էրբ Տիրոջն աշակերտածները խմբվեցին նրա շուրջը, Պողոսը վեր կացավ և քաղաք մտավ: Իսկ հաջորդ օրը Բառնաբասի հետ գնաց Դերբե:

Վերադարձ դեպի Սիրիա

²¹ Դերբեում Ավետարանը քարոզելուց և շատերին Հիսուսի աշակերտ դարձնելուց հետո Պողոսն ու Բառնաբասը վերադարձան Լյուստրա, Իկոնիոն և Անտիոք: ²² Տիրոջ աշակերտներին զորացնելու և նրանց հորդորելու, որ հաստատ մնան հավատի մեջ: Ասում էին նրանց.

-Բազում նեղություններ պետք է կրենք Աստծու արքայությունը մտնելու համար:

^{14.10} Ձեռ. մեծ մասը չունի «Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի անունով քե՛զ եմ ասում»:

^{14.12} «Ջևսը» հուն. դիցաբանության մեջ գերագույն աստվածն էր և աստվածների հայրը և համապատասխանում էր հայկական Արամազդին, իսկ «Հերմեսը» աստվածների պատգամաբերը կամ խոսնակն էր (հուն. Հերմես նշ է «թարգմանիչ»):

^{14.14} «Պատռեցին իրենց հագուստները». տե՛ս Մտ 26.65-ի ծնթ:

^{14.15} Ելք 20.11: Սղ 146.6:

^{14.18} Շատ ձեռ. չունեն «և համոզեցին, որ յուրաքանչյուրը գնա իր գործին»:

^{14.19} Շատ ձեռ. չունեն «Երբ առաքյալներն սկսեցին համարձակ վիճել» և «որ հեռու մնան նրանցից՝ ասելով. "Այս մարդկանց ասածները բնավ ճշմարիտ չեն, այլ ամբողջությամբ սուտ են"»:

²³Նրանք նաև յուրաքանչյուր եկեղեցու համար երեցներ ձեռնադրեցին՝ ծոմապահությամբ աղոթք անելով, և հավատացյալներին հանձնեցին Տիրոջը, որին նրանք հավատացել էին: ²⁴Ապա շրջելով Պիսիդիա նահանգում՝ եկան Պամփիլիա ²⁵և Պերգեում և Տիրոջ խոսքը քարոզելուց հետո իջան Ատտալիա քաղաքը: ²⁶Այնտեղից էլ նավով գնացին Անտիոք, որտեղից հանձնված էին Աստծու շնորհին ա՛յն գործի համար, որ ավարտեցին: ²⁷Եկան և եկեղեցին հավաքելով՝ պատմեցին այն ամենի մասին, որ Աստված կատարեց իրենց գործակցությամբ և թե ինչպես հեթանոսների առջև բացեց հավատի դուռը ²⁸Նրանք Տիրոջն աշակերտածների հետ բավական երկար ժամանակ մնացին այնտեղ:

15

Երուսաղեմի ժողովը

¹ Որոշ մարդիկ, որոնք Հրեաստանից Անտիոք էին եկել, հավատացյալ եղբայրներին ուսուցանում էին՝ ասելով.

-Եթե Մովսեսի Օրենքի համաձայն չթլփատվեք, չեք կարող փրկվել:՝

² Բայց երբ բավականին հակառակություն և խնդիր ծագեց Պողոսի ու Բառնաբասի և նրանց միջև, որոշվեց, որ Պողոսն ու Բառնաբասը և նրանցից ոմանք այդ խնդրի համար գնան Երուսաղեմ, առաքյալների և երեցների մոտ: ³ Ուստի եկեղեցու կողմից ուղարկվելուց հետո նրանք անցան Փյունիկեից ու Մամարիայից՝ տեղի բոլոր հավատացյալ եղբայրներին պատմելով հեթանոսների դարձի մասին և մեծապես ուրախացնելով նրանց: ⁴ Երբ հասան Երուսաղեմ, ընդունվեցին եկեղեցու առաքյալների և երեցների կողմից և նրանց պատմեցին, ինչ որ Աստված կատարեց իրենց գործակցությամբ: ⁵ Փարիսեցիների աղանդից եկած հավատացյալներից ոմանք վեր կացան և ասացին.

-Պետք է թլփատել դրանց և պատվիրել, որ գործադրեն Մովսեսի Օրենքը:

⁶ Առաքյալներն ու երեցները հավաքվեցին այս հարցը քննելու համար: ⁷ Երբ բավական վեճ եղավ, Պետրոսը ոտքի կանգնեց և ասաց նրանց.

-Եղբայրներ՝ յո, դուք բոլորդ գիտեք, որ առաջին օրվանից այստեղ Աստված ձեր միջից ինձ ընտրեց, որպեսզի հեթանոսներն իմ բերանով լսեն Ավետարանի պատգամը և հավատան: ⁸ Աստված, որ գիտե մեր մտածումները, նրանց մասին իր հավանությունը տվեց՝ Մուրբ Հոգին տալով նրանց, ինչպես որ տվել էր մեզ: ⁹ Նա ոչ մի խտրություն չդրեց նրանց և մեր միջև, այլ որովհետև հավատացին, սրբեց նրանց մեղքերը:՝

¹⁰ Հետևաբար ինչո՞ւ եք փորձում Աստծուն՝ Տիրոջն աշակերտածների վզին դնելով մի լուծ, որը ո՛չ մեր հայրերը և ո՛չ էլ մենք չկարողացանք տանել: ¹¹ Ընդհակառակը, հավատում ենք, որ Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով կփրկվենք մենք, ինչպես և նրանք:

¹² Ամբողջ բազմությունը լռեց: Ապա սկսեցին լսել Բառնաբասին և Պողոսին, որոնք պատմում էին, թե Աստված ի՛նչ նշաններ ու հրաշքներ կատարեց իրենց ձեռքով:

^{15.1} Ղև 12.3:

^{15.9} «Սրբեց նրանց մեղքերը». բոց՝ «նրանց սրտերը»:

¹³ Երբ նրանք լռեցին, Հակոբոսը խոսք առնելով ասաց.

-Եղբայրներ ր, լսեցե՛ք ինձ:՝ ¹⁴ Շմավոնը բացատրեց, թե ինչպես Աստված սկզբից բարեհաճեց բոլոր ազգերից իր համար պատրաստել մի ժողովուրդ, որ փառավորի իր անունը:՝ ¹⁵ Այս կետի շուրջ մարգարեների արտահայտությունները համընկնում են իրար, ինչպես օրինակ, գրված է.

¹⁶ «Այն օրը պիտի վերադառնամ,
և վերաշինեմ Դավթի փուլ եկած տունը.
վերաշինեմ նրա ավերակները
և վերականգնեմ այն,՝

¹⁷ որպեսզի մնացած մարդիկ և բոլոր ազգերը,
որոնց իմ անունն էմ տվել, փնտրեն ինձ,-
ասում է Տերը, որ իրականացնում է այս բոլորը:

¹⁸ Արդարև, հայտնի են Աստծու բոլոր գործերն
աշխարհի սկզբից ի վեր»:

¹⁹ Հետևաբար, ես հարմար եմ դատում չնեղել նրանց, ովքեր հեթանոսությունից դառնում են Աստծուն, ²⁰ այլ միայն գրել նրանց, որ ամբողջապես հեռու մնան կուռքերին ընծայված պիղծ կերակուրներից, պոռնկությունից, խեղդամահ արված կենդանիների մսից և արյունից.՝ ²¹ որովհետև հին ժամանակներից ի վեր յուրաքանչյուր քաղաքում Մովսեսի Օրենքն իր քարոզիչներն ունի, և ամեն շաբաթ օր ժողովարաններում ընթերցվում է այն:

²² Այն ժամանակ առաքյալներն ու երեցները ամբողջ եկեղեցու հետ միասին հարմար դատեցին Պողոսի և Բառնաբասի հետ Անտիոք ուղարկել իրենց միջից ընտրված մի քանի հոգու և ընտրեցին Բարսաբա կոչված Հուդային և Շիդային, որոնք հավատացյալների մեջ հեղինակություն վայելող անձեր էին: ²³ Սրանց ձեռքով նաև հետևյալ նամակն ուղարկեցին Անտիոքի եղբայրներին.

«Առաքյալներից, երեցներից և եղբայրներից ողջույն ձեզ՝ հեթանոսությունից դարձի եկած եղբայրներիդ, որ գտնվում եք Անտիոքում, Սիրիայում և Կիլիկիայում:

²⁴ Լսեցինք, որ ոմանք, իբրև թե մեր կողմից եկած, իրենց արտահայտություններով խռովեցրել են ձեզ և շփոթության մատնել՝ ասելով, թե պետք է թլփատվեք և Օրենքը գործադրեք. մինչդեռ մենք այդպիսի բան չենք պատվիրել նրանց: ²⁵ Ուստի ժողովի հավաքվածներս միասնաբար հարմար դատեցինք ձեզ մոտ ուղարկել մեկ-երկու ընտրված մարդկանց՝ մեր սիրելիների՝ Պողոսի և Բառնաբասի հետ միասին, ²⁶ որոնք իրենց կյանքն են վտանգել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անվան համար: ²⁷ Արդ, ուղարկեցինք

^{15.13} «Հակոբոս». Տյառնեղբայր կոչվածն է, որը ղեկավարն էր Երուսաղեմի եկեղեցու (հմմտ 21.18) և հեղինակն իր անունը կրող նամակի: Սա թեև առաքյալ է կոչվում, բայց տասներկուսից չէր:

^{15.14} «Շմավոն». նույնն է՝ Միմոն, որ Պետրոս առաքյալի առաջին անունն էր:

^{15.16-18} Ամս 9.11-12 [LXX]:

^{15.20} ա Ելք 34.15-17: բ Ղև 18.6-23: գ Ղև 17.10-16:

Հուդային ու Շիդային, որպեսզի նրանք էլ բանավոր կերպով նույնը հաղորդեն ձեզ, ²⁸ որովհետև Մուրբ Հոգին և մենք հարմար գտանք չծանրաբեռնել ձեզ ուրիշ որևէ պահանջով, բացի հետևյալ կարևոր բաներից. ²⁹ որ հեռու մնաք կուռքերին զոհված կերակուրներից, արյունից, խեղդամահ արված կենդանիների մսից և պոռնկությունից: Եթե սրանք պահեք, լավ կանեք: Ո՛ր ղջ եղեք»:

Դարձյալ Անտիոքում

³⁰ Այնտեղից մեկնելով՝ նրանք գնացին Անտիոք և ի մի հավաքելով հավատացյալներին՝ նամակը տվեցին: ³¹ Անտիոքցիները, նամակն ընթերցելով, ուրախացան տրված քաջալերանքի համար: ³² Հուդան ու Շիդան, քանի որ իրենք էլ մարգարեներ էին, երկար խոսելով՝ քաջալերեցին և զորացրին եղբայրներին:

³³ Երուսաղեմից եկածները միառժամանակ այնտեղ մնալուց հետո խաղաղությամբ հրաժեշտ տվեցին եղբայրներին և վերադարձան իրենց ուղարկողների մոտ: ³⁴ Բայց Շիդան հարմար դատեց մնալ այնտեղ: ³⁵ Իսկ Պողոսն ու Բառնաբասը մնում էին Անտիոքում, որտեղ ուրիշ շատերի հետ միասին ուսուցանում և քարոզում էին Տիրոջ խոսքը:

Պողոսն ու Բառնաբասը բաժանվում են իրարից

³⁶ Կարճ ժամանակ անց Պողոսը Բառնաբասին ասաց.

-Վերադառնանք և մեր հավատացյալ եղբայրներին այցելենք այն բոլոր քաղաքներում, որտեղ քարոզեցինք Տիրոջ խոսքը՝ տեսնելու, թե ի՛նչ վիճակում են:

³⁷ Բառնաբասն ուզում էր Մարկոս կոչված Հովհաննեսին էլ հետը վերցնել, ³⁸ բայց Պողոսը ճիշտ չէր համարում, որ իրենց հետ տանեն մեկին, որը Պամփիլիայից բաժանվել էր իրենցից և իրենց հետ գործելու չէր եկել: ³⁹ Այս պատճառով անհամաձայնություն ծագեց նրանց միջև, և նրանք բաժանվեցին իրարից: Բառնաբասը Մարկոսին վերցրեց իր հետ և նավով գնաց դեպի Կիպրոս, ⁴⁰ իսկ Պողոսը Շիդային ընտրեց և ճանապարհ ընկավ՝ Անտիոքի եղբայրների աղոթքով Աստծու շնորհին հանձնվելուց հետո: ⁴¹ Նա շրջում էր Սիրիայի և Կիլիկիայի կողմերում և զորացնում էր եկեղեցիները:

16

Տիմոթեոսը միանում է Պողոսին և Շիդային

¹ Պողոսը շրջելով հասավ Դերբե և այնտեղից եկավ Լյուստրա: Այնտեղ կար Տիրոջն աշակերտած մեկը՝ Տիմոթեոս անունով, որը դարձի եկած հրեա մի կնոջ որդին էր՝ հեթանոս հորից, ² և շատ հարգված էր Լյուստրայի և Իկոնիոնի եղբայրների կողմից:

³ Պողոսն ուզեց նրան իր հետ տանել, ուստի վերցրեց, թիփատեց նրան այդ շրջանների հրեաների պատճառով, որոնք գիտեին, թե նրա հայրը հեթանոս էր:

⁴ Ամեն անգամ, երբ անցնում էին մի քաղաքով, փոխանցում էին Երուսաղեմում

^{15.34} Այս հմր պակասում է շատ ձեռագրերում:

^{15.38} Գրծ 13.13:

գտնվող առաքյալների և երեցների կողմից պատվիրված հրահանգները, որպեսզի գործադրեն դրանք: ⁵ Իսկ եկեղեցիները գորանում էին հավատի մեջ, և հավատացյալների թիվն օրեցօր ավելանում էր:

Պողոսի տեսիլքը Տրովադայում

⁶ Պողոսը, Շիդան և Տիմոթեոսը շրջեցին Փոյուզիայի և Գաղատիայի կողմերում, բայց Սուրբ Հոգին թույլ չտվեց, որ նրանք Ասիայի նահանգում քարոզեն Տիրոջ խոսքը: ⁷ Նույնպես, երբ դեպի Սյուսիա եկան և փորձում էին գնալ Բյութանիա, Հիսուսի Հոգին թույլ չտվեց նրանց: ⁸ Ուստի Սյուսիայից անցնելով՝ իջան Տրովադա: ⁹ Այստեղ գիշերը Պողոսը մի տեսիլք ունեցավ: Մակեդոնացի մի մարդ կանգնել աղաչում էր նրան ասելով. «Մակեդոնիա արի և օգնի՛ր մեզ»: ¹⁰ Այս տեսիլքի պատճառով ուզեցինք շուտով մեկնել Մակեդոնիա՝ հետևություն անելով, որ Տերը մեզ հրավիրել է, որ Ավետարանը քարոզենք մակեդոնացիներին:

Լիդիայի դարձը

¹¹ Տրովադայից նավով ուղիղ գնացինք Սամոթրակե, այնտեղից՝ դեպի Նեապոլիս, ¹² իսկ այնտեղից էլ՝ դեպի Փիլիպպե, որ Մակեդոնիայի նահանգի առաջին գավառի մի քաղաքն է և հռոմեական գաղթավայրը: Միառժամանակ մնացինք այդ քաղաքում: ¹³ Շաբաթ օրը քաղաքից դուրս ելանք դեպի գետափ, որտեղ հրեաները հավաքվում էին աղոթելու: Նստեցինք և խոսում էինք հավաքված կանանց հետ: ¹⁴ Նրանցից մեկը՝ Լիդիա անունով աստվածավախ մի կին, որ Թիատիր քաղաքից էր և ծիրանի զգեստներ վաճառող, լսում էր մեզ: Տերն ինքը բացեց նրա միտքը, որ անսա Պողոսի խոսքերին: ¹⁵ Եվ երբ մկրտվեցին ինքն ու իր ընտանիքը, նա աղաչեց մեզ՝ ասելով. - Եթե ինձ Տիրոջը հավատացող եք համարում, եկեք մնացե՛ք իմ տանը: Եվ ստիպեց, տարավ մեզ:

Բանտարկություն Փիլիպպեում

¹⁶ Պատահեց, որ երբ կրկին գնում էինք ադոթքի վայրը, մեր դեմն ելավ մի ստրուկ աղախին, որ մի հարցուկ ոգի ուներ իր մեջ և իր արած գուշակություններով ահագին շահ էր բերում իր տերերին: ¹⁷ Այս կինը Պողոսի և մեր հետևից էր գալիս՝ աղաղակելով.

- Այս մարդիկ Բարձրյալ Աստծու ծառայողներն են, որոնք փրկության ճանապարհն են քարոզում ձեզ:

¹⁸ Երբ օրեր շարունակ այս բանը կրկնվեց, Պողոսի համբերությունը սպառվեց, և նա, դառնալով չար ոգուն, ասաց.

- Հիսուս Քրիստոսի անունով հրամայում եմ քեզ, դո՛ւրս ել դրա միջից:

^{16.10} «Ուզեցինք». այստեղից սկսած՝ Ղուկասը գրում է իբրև դեպքերին ականատես ու մասնակից:

^{16.12} «Հռոմեական գաղթավայր». այսինքն՝ գլխավորապես հռոմեացիների կողմից հիմնված կամ բնակեցված մի քաղաք, որ ունենում էր սեփական կառավարիչ, զերծ էր մնում տուրքերից, և քաղաքացիները վայելում էին նույն իրավունքները, որ ունենում էին Բուալիայի որևէ քաղաքի քաղաքացիները:

Նույն վայրկյանին ոգին դուրս ելավ: ¹⁹ Երբ աղախնի տերերը տեսան, որ իրենց շահի աղբյուրը կտրվեց, բռնեցին Պողոսին ու Շիդային ու քաշեցին տարան հրապարակ՝ իշխանությանը հանձնելու: ²⁰ Եվ նրանց բերելով դատավորների մոտ՝ ասացին.

-Այս մարդիկ հրեա են և մեր քաղաքը տակնուվրա են անում: ²¹ Նրանք մեզ քարոզում են այնպիսի սովորություններ, որ մենք, իբրև հռոմեացի, ո՛չ կարող ենք ընդունել և ո՛չ էլ գործադրել:

²² Ամբոխը թափվեց նրանց վրա: Դատավորները պատռել տվեցին նրանց հագուստները և հրամայեցին գանահարել: ²³ Ապա նրանց մարմինը բավական խոշտանգելուց հետո բանտ նետել տվեցին՝ բանտապետին պատվիրելով, որ զգուշությամբ պահի նրանց: ²⁴ Այս պատվերն ստանալով՝ բանտապետը նրանց բանտարկեց ներքին խցերից մեկում և նրանց ոտքերն էլ ամրացրեց կռճղի մեջ:

Բանտապետի դարձը և առաքյալների ազատումը

²⁵ Կեսգիշերին մոտ, մինչ Պողոսն ու Շիդան աղոթում և օրհներգում էին Աստծուն, իսկ մյուս կալանավորներն ականջ էին դնում նրանց, ²⁶ հանկարծ տեղի ունեցավ այնպիսի ուժեղ մի երկրաշարժ, որ բանտի հիմքերը սասանվեցին: Նույն վայրկյանին բոլոր դռները բացվեցին, և բոլորի կապանքները քանդվեցին: ²⁷ Երբ բանտապետն արթնացավ և տեսավ, որ բանտի դռները բաց են, սուրը քաշեց ինքն իրեն սպանելու՝ կարծելով, թե բանտարկյալները փախել են: ²⁸ Պողոսը բարձր ձայնով կանչեց.

-Մի՛ արա, կանգնի՛ր, բոլորս էլ այստեղ ենք:

²⁹ Բանտապետը լույս ուզեց և ներս խուժելով՝ դողալով ընկավ Պողոսի ու Շիդայի առջև: ³⁰ Ապա նրանց դուրս բերելով՝ ասաց.

-Պարոնա՛յք, ի՞նչ պետք է անեմ, որ փրկվեմ:

³¹ Նրանք ասացին.

-Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին և կփրկվես քո ամբողջ ընտանիքով:

³² Եվ Տիրոջ խոսքը քարոզեցին նրան և նրա ընտանիքի բոլոր անդամներին: ³³ Իսկ բանտապետը գիշերվա այդ նույն ժամին նրանց վերցրեց և լվաց նրանց վերքերը: Անմիջապես հետո ինքն ու բոլոր յուրայինները մկրտվեցին: ³⁴ Ապա նրանց տարավ իր տուն, սեղան բացեց նրանց առջև, և ամբողջ ընտանիքով ուրախացան՝ Աստծուն հավատացած լինելու համար:

³⁵ Առավոտյան դատավորներն ուղարկեցին իրենց պատվիրակներին՝ բանտապետին ասելու.

-Ազա՛տ արձակիր այդ մարդկանց:

³⁶ Բանտապետը եկավ, Պողոսին հաղորդեց այս լուրը՝ ասելով.

-Դատավորները մարդ են ուղարկել, որ ազատ արձակեմ ձեզ: Ուստի ելե՛ք և գնացե՛ք խաղաղությամբ:

³⁷ Իսկ Պողոսը բանտապետին և պատվիրակներին ասաց.

-Հրապարակորեն գանահարել տվեցին և մեզ բանտ նետեցին, մենք, որ անմեղ ենք և մանավանդ հռոմեացի, և հիմա թաքուն-թաքո՞ւն են դուրս հանում մեզ: Ո՞չ, դուրս չենք

գա: Թող իրենք գան և դուրս հանեն մեզ:

³⁸ Պատվիրակները եկան և այս խոսքերը հաղորդեցին դատավորներին, որոնք երբ լսեցին, թե հռոմեացի են, վախեցան. եկան, ներողություն խնդրեցին ³⁹ և դուրս հանելով նրանց՝ աղաչում էին, որ գնան իրենց քաղաքից: ⁴⁰ Իսկ նրանք, բանտից դուրս գալով, գնացին Լիդիայի տուն, որտեղ հավատացյալ եղբայրներին տեսնելով՝ քաջալերեցին նրանց և մեկնեցին:

17

Քարոզչություն և հալածանք Թեսաղոնիկեում

¹ Ամփիպոլիս և Ապոլոնիա քաղաքները շրջելուց հետո Պողոսն ու Շիղան եկան Թեսաղոնիկե, որտեղ հրեաների մի ժողովարան կար: ² Պողոսն ըստ իր սովորության ժողովարան գնաց և երեք շաբաթ օրեր նրանց հետ խոսեց: ³ Նա բաց էր անում և բացատրում Սուրբ գրքերը, ապացուցում դրանցով, թե ինչպես Քրիստոսը պետք է չարչարվեր և հարություն առներ մեռելներից: Նա ասում էր.

-Այն Հիսուսը, որին ես քարոզում եմ ձեզ, նա՛ է Քրիստոսը, խոստացված Փրկիչը:

⁴ Թեսաղոնիկեցի հրեաներից ոմանք հավատացին և հարեցին Պողոսին ու Շիղային: Նրանց հարեցին նաև աստվածապաշտ շատ հույներ և ոչ սակավ թվով երևելի կանայք:

⁵ Հրեա ղեկավարները նախանձեցին և փողոցներից հավաքելով մի քանի դատարկապորտ անօրեն մարդկանց՝ ամբոխ կազմեցին, ամբողջ քաղաքը խռովեցին և խուժեցին Յասոնի տունը՝ Պողոսին ու Շիղային բռնելու և ժողովրդի առաջ կանգնեցնելու համար: ⁶ Բայց երբ նրանց չգտան, Յասոնին և մի քանի ուրիշ հավատացյալների քաշեցին տարան քաղաքի իշխանների առջև՝ գոռալով.

-Այս մարդիկ, որոնք ամբողջ աշխարհն իրար խառնեցին, հիմա էլ մեր քաղաքն են եկել, ⁷ և Յասոնը նրանց ընդունել է իր տանը: Սրանք բոլորը կայսրի հրահանգների հակառակ են գործում, որովհետև ուրիշ մի թագավորի են ճանաչում՝ Հիսուս անունով:

⁸ Այս խոսքերով նրանք խռովեցրին ամբոխին և քաղաքի իշխաններին: ⁹ Սակայն իշխանները, Յասոնից և մյուս քրիստոնյաներից երաշխիք ստանալով, ազատ արձակեցին նրանց:

Առաքյալները Բերիայում

¹⁰ Հազիվ գիշերը վրա հասած՝ հավատացյալ եղբայրները Բերիա ուղարկեցին Պողոսին ու Շիղային, որոնք երբ հասան այնտեղ, գնացին հրեաների ժողովարանը:

¹¹ Բերիայի հրեաներն ավելի ազատամիտ էին, քան թեսաղոնիկեցիները, ուստի ամենայն հոժարությամբ ընդունեցին Աստծու խոսքը և ամեն օր քննում էին Սուրբ գրքերը՝ տեսնելու, թե ճշմարի՞տ են Պողոսի քարոզածները: ¹² Նրանցից շատերը հավատացին: Հավատացին նաև բազմաթիվ ազնվական հույն կանայք և տղամարդիկ:

¹³ Բայց երբ Թեսաղոնիկեցի հրեաներն իմացան, թե Պողոսը Բերիայում ևս քարոզում է

^{16.37} Հռոմեական օրենքն արգելում էր հռոմեական քաղաքացիներին ծեծի կամ գանահարության ենթարկել և կամ նույնիսկ առանց դատ ու դատաստանի շղթայել (հմմտ հմբ 38-39 և 22.25-29):

Աստծու խոսքը, այնտեղ էլ եկան՝ ժողովրդին գրգռելու և խռովություն ստեղծելու:

¹⁴ Այն ժամանակ հավատացյալները Պողոսին իսկույն ուղարկեցին մինչև ծովեզերք, իսկ Շիդան ու Տիմոթեոսը մնացին այնտեղ: ¹⁵ Պողոսին ուղեկցողները նրան հասցրին մինչև Աթենք և ապա վերադարձան Բերիա՝ Շիդայի և Տիմոթեոսի համար պատվեր ստանալով, որ շուտով գան նրա մոտ:

Պողոսը Աթենքում

¹⁶ Մինչ Պողոսը Աթենքում նրանց էր սպասում, նրա հոգին լցվում էր զայրույթով, երբ տեսնում էր, որ քաղաքը թաղված էր կռապաշտության մեջ: ¹⁷ Ուստի նա ոչ միայն ժողովարանում էր խոսում հրեաների և աստվածապաշտ հույների հետ, այլ նաև հրապարակում, ամեն օր, ո՛ւմ որ հանդիպեր: ¹⁸ Էպիկուրյան և ստոիկյան իմաստասերներից ոմանք հակաճառում էին նրան: Ոմանք էլ ասում էին.

-Այս իմաստական ի՞նչ է ուզում ասել:

-Թվում է, թե ինչ-որ օտար աստվածների քարոզիչ է, -ասում էին ուրիշները, որովհետև նա Հիսուսի մասին էր խոսում և հարության ավետիսն էր տալիս նրանց:՝

¹⁹ Ուստի նրան տարան Արիսպագոս և ասում էին.

-Կարո՞ղ ենք իմանալ, թե ի՞նչ է այդ նոր վարդապետությունը, որի մասին խոսում ես:՝ ²⁰ Օտարոտի բաներ ասացիր մեզ. ուզում ենք իմանալ, թե ի՞նչ են դրանք

²¹ (ընդհանրապես բոլոր աթենացիներն ու այնտեղ բնակվող օտարականները ուրիշ զբաղմունք չունեին, բացի վերջին նորություններն ասելուց կամ լսելուց):

²² Պողոսը կանգնեց Արիսպագոսի մեջտեղում և ասաց.

-Ո՛վ աթենացիներ, տեսնում եմ, որ դուք ծայրաստիճան կրոնասեր եք ամեն ինչով. ²³ որովհետև երբ շրջում էի և աչքի անցկացնում ձեր պաշտամունքի վայրերը, տեսա մի բազին, որի վրա գրված էր. «Անճանոթ Աստծուն»: Ահա ում որ դուք առանց ճանաչելու եք պաշտում, ես նո՛ւյնն եմ քարոզում ձեզ:՝ ²⁴ Այն Աստվածը, որ ստեղծեց աշխարհը և ամեն ինչ, որ կա նրա մեջ, նա, որ Տերն է երկնքի և երկրի, որ ո՛չ ձեռակերտ տաճարներում է բնակվում՝ ²⁵ և ո՛չ էլ մարդկանց կողմից ծառայության է կարոտում մարդկանց նման, նա՛ է, որ բոլորին կյանք, շունչ և ամեն ինչ է տալիս:՝

՝17.18 «Էպիկուրյան իմաստասեր». հույն իմաստասեր Էպիկուրոսի (մահացել է ՔԱ 270թ.) հետևորդ: Էպիկուրոսի գլխավոր ուսուցումն այն էր, որ կյանքում տիրապետողը պատահականությունն է, և մեծագույն բարիքը ցավից ու տառապանքից փախչելն է և դրանք հաճույքների մեջ խեղդելը:

«Ստոիկյան իմաստասեր». կիպրացի հույն իմաստասեր Ջենոնի (մահացել է ՔԱ 265թ.) հետևորդ: Ջենոնն ուսուցանում էր, որ իսկական երջանկությունը հեռու լինելն է թե՛ ցավից և թե՛ հաճույքից, և անտարբեր լինելը թե՛ հաջողությունների և թե՛ ձախտողությունների նկատմամբ: «Հիսուսի մասին... և հարության». աթենացիները «հարություն» բառը հասկանում էին որպես հատուկ անուն, և որովհետև հուն. այդ բառը իգական սեռին է պատկանում, ենթադրում էին, թե Պողոսը մի նոր աստվածուհու մասին է խոսում:

՝17.19 «Արիսպագոս» (հուն. Արիոպագա) նշ է «Արեսի բլուր»: Արեսը հույների պատերազմի աստվածն էր: Այս բլուրը այն վայրն էր, որտեղ գումարվում էր աթենացիների գերագույն ժողովը:

՝17.23 Իմա 13.1:

՝17.24-25 Գ Թզ 8.27, Ես 42.5, Գրծ 7.48:

՝17.25 Բ Մկ 14.35:

²⁶Նա՛ է, որ մեկ մարդուց առաջացրեց ամբողջ մարդկությունը,²⁷ որպեսզի բնակվեն աշխարհի բոլոր կողմերում: Հատուկ ժամանակաշրջաններ սահմանեց և ճշտեց նրանց բնակության սահմանները, որպեսզի փնտրեն Աստծուն և խարխափելով թերևս գտնեն նրան: Արդարև, նա հեռու էլ չէ մեզնից յուրաքանչյուրիցս.²⁸ որովհետև «Նրանով է, որ ապրում ենք, շարժվում ենք և կանք», ինչպես ձեր բանաստեղծներից մեկն էլ ասել է. «Մենք նրա զավակներն ենք»:²⁹ Եվ քանի որ Աստծու զավակներն ենք, ինչպե՞ս կարող ենք մտածել, թե աստվածությունը նման է ոսկով, արծաթով կամ քարով շինված և մարդկային ճարտարության ու մտքի ծնունդ եղող քանդակների:³⁰ Բայց Աստված, հաշվի չառնելով այն ժամանակները, երբ մարդիկ չէին ճանաչում նրան, այժմ ամենուրեք բոլոր մարդկանց պատվիրում է ապաշխարել.³¹ որովհետև նա սահմանել է մի օր, երբ արդարությամբ պիտի դատի ամբողջ աշխարհը մի մարդու ձեռքով, որի միջոցով ուզեց հավատ ներշնչել բոլորին՝ նրան հարություն տալով մեռելներից:

³² Երբ լսեցին մեռելների հարության մասին, ոմանք սկսեցին ծաղրել նրան, իսկ ուրիշներն ասացին.

–Մի ուրիշ անգամ այս մասին նորից ուզում ենք լսել քեզնից:³³ Այսպիսով, Պողոսը թողեց նրանց և գնաց:³⁴ Մի քանի մարդիկ, սակայն, հարեցին նրան և հավատացին: Դրանց թվում էին Դիոնիսիոս Արիսպագացին, Դամարիս անունով մի կին և սրանց հետ ուրիշներ:

18

Պողոսը Կորնթոսում

¹ Դրանից հետո Աթենքից մեկնելով՝ Պողոսը եկավ Կորնթոս:² Այնտեղ գտավ ծագումով պոնտացի մի հրեայի՝ Ակյուղաս անունով, որն իր կնոջ՝ Պրիսկիլայի հետ նոր էր եկել Իտալիայից, որովհետև Կլավդիոս կայսրը հրամայել էր, որ բոլոր հրեաները հեռացվեն Հռոմից: Պողոսը մնաց նրանց մոտ,³ և քանի որ արհեստակից էր, նրանց մոտ էր մնում և աշխատում, որովհետև նրանք արհեստով վրանագործ էին:⁴ Ամեն շաբաթ օր նա խոսում էր ժողովարանում՝ ջանալով համոզել հրեաներին և հույներին:

⁵ Երբ Շիդան և Տիմոթեոսը Մակեդոնիայից եկան, Պողոսն ամբողջ հոգով ճիգ էր թափում՝ վկայությամբ ապացուցելու հրեաներին, որ Հիսուսն է սպասված Փրկիչը՝ Քրիստոսը:⁶ Եվ երբ նրանք հակառակվեցին ու հայհոյեցին իրեն, Պողոսը, իր

^{17.26} Բ Մկ 7.23:

^{17.27} Իմս 13.6-9:

^{17.28} Առաջին մեջբերումն ազատ կերպով կատարված է կրետացի հույն բանաստեղծ Եպիմենիտեսի (ՔԱ 6-րդ դար) «Կրետականք» գործից, իսկ երկրորդը՝ կիլիկիացի հույն բանաստեղծ Արատոսի (ՔԱ 315-240) «Երևույթներ» գործից կամ Քլեանթես բանաստեղծի (ՔԱ 331-233) «Օրհներգ Ջևսին» գործից:

^{17.32} «*Լսեցին մեռելների հարության մասին*». հույները հավատում էին հոգու անմահությանը, բայց մարմնական հարությունը մի նոր գաղափար էր նրանց համար:

^{18.2} Կլավդիոս կայսրի այս հրամանագիրը հրապարակվել է 49 կամ 50թ.:

զգեստները թափ տալով, ասաց.

-Ձեր արյունը՝ ձեր գլուխը, ես այլևս հանցավոր չեմ. այսուհետև կգնամ հեթանոսների մոտ:

⁷ Եվ այնտեղից ելնելով՝ մտավ Տիտոս Հուստոս անունով աստվածապաշտ մի մարդու տուն, որ ժողովարանին կից էր: ⁸ Ժողովրդապետը՝ Կրիսպոսը, իր ամբողջ ընտանիքով հավատաց Տիրոջը: Կորնթացիներից շատերը, լսելով Պողոսին, հավատացին և մկրտվեցին: ⁹ Գիշերը Տերը մի տեսիլքի մեջ ասաց Պողոսին.

-Խոսի՛ր առանց վախենալու, լուռ մի՛ մնա, ¹⁰ որովհետև ես քեզ հետ եմ: Ոչ մեկը քո դեմ չի ելնի և քեզ վնաս չի հասցնի, քանի որ այս քաղաքում ես մեծ թվով ժողովուրդ ունեմ:

¹¹ Եվ Պողոսը մեկ տարի և վեց ամիս մնաց այնտեղ՝ նրանց ուսուցանելով Աստծու խոսքը:

Պողոսին վտարելու փորձ

¹² Աքայիայի փոխբղեշխի՝ Գաղիոնի օրերին հրեաները միաբանվելով Պողոսի դեմ ելան և նրան աստյան բերեցին՝ ¹³ ասելով.

-Սա մարդկանց դրդում է, որ մեր Օրենքին հակառակ ձևով պաշտեն Աստծուն:

¹⁴ Պողոսը պատրաստվում էր խոսել, երբ Գաղիոնը հրեաներին ասաց.

-Ո՛վ հրեաներ, եթե նա որևէ չար բան՝ անիրավություն կամ խարդախություն արած լիներ, ապա ճիշտ կլիներ, որ ես ձեր բողոքը լսեի: ¹⁵ Բայց քանի որ խնդիրը որևէ խոսքի բացատրության, անունների կամ ձեր Օրենքին է վերաբերում, դուք ինքնե՛րդ կարգադրեցեք ձեր միջև: Ես այդպիսի բաների դատավոր լինել չեմ ուզում:

¹⁶ Եվ նրանց դուրս արեց աստանից: ¹⁷ Այն ժամանակ բոլոր հույները բռնեցին Սոսթենես ժողովրդապետին և աստանի առաջ ձեռեցին: Բայց դա բոլորովին չնտահոզեց Գաղիոնին:

Վերադարձ դեպի Անտիոք

¹⁸ Պողոսը Կորնթոսում մի որոշ ժամանակ ևս մնալուց հետո հրաժեշտ տվեց հավատացյալ եղբայրներին՝ նավով Սիրիա գնալու համար: Պրիսկիդան և Ակյուղասը ուղեկցում էին նրան: Նա Կենքրայից ճանապարհ ընկնելուց առաջ խուզել տվեց իր գլխի մազերը, որովհետև ուխտ էր արել:՝

¹⁹ Երբ Եփեսոս հասան, նրանց թողնելով քաղաքում՝ ինքը գնաց տեղի ժողովարանը և խոսքն ուղղեց հրեաներին: ²⁰ Աղաչեցին, որ երկար ժամանակ մնա այնտեղ, բայց նա հանձն չառավ, ²¹ այլ հրաժեշտ տվեց նրանց՝ ասելով.

-Առաջիկա տոնը պետք է անպայման Երուսաղեմում կատարեմ, բայց եթե Աստված

^{18.6} «Ձգեստները թափ տալով». հմմտ Մտ 10.14-ի ծնթ:

^{18.7} Մի շարք ձեռ չունեն «Տիտոս», իսկ մի քանի ձեռ ունեն «Տիտիոս»:

^{18.12} Ըստ այդ ժամանակի փաստաթղթերի՝ Գաղիոնի պաշտոնավարությունը Կորնթոսում տեղի է ունեցել 51-52 կամ 52-53թթ.:

^{18.18} «Կենքրան» Կորնթոսի արևելյան նավահանգիստն էր:

^{18.18} Թվ 6.18:

կամենա, դարձյալ կգամ ձեզ մոտ:

²²Նավ նստելով՝ Եփեսոսից եկավ Կեսարիա և այնտեղից բարձրանալով Երուսաղեմ՝ ողջույն տվեց եկեղեցուն: Ապա գնաց Անտիոք: ²³Միառժամանակ այնտեղ մնալուց հետո ելավ և սկսեց շրջել նախ գաղատացիների երկրում և ապա Փոյուզիայում՝ զորացնելով Տիրոջը բոլոր աշակերտածներին:

Ապողոսը՝ եռանդուն քարոզիչ

²⁴Ապողոս անունով մի հրեա, ծագումով ալեքսանդրիացի, որ ճարտարախոս էր և քաջածանոթ Սուրբ գրքերին, եկավ հասավ Եփեսոս: ²⁵Սա դաստիարակված էր Տիրոջ վարդապետությամբ, հոգով եռում էր, քարոզում և ճշգրտությամբ ուսուցանում էր Հիսուսի մասին: Սակայն ծանոթ էր միայն Հովհաննեսի քարոզած մկրտությանը: ²⁶Սա սկսեց համարձակ կերպով խոսել ժողովարանում: Երբ Ակյուղասն ու Պրիսկիդան լսեցին նրա քարոզությունը, նրան իրենց մոտ առան և նրան ավելի ճիշտ ձևով բացատրեցին Աստծու ճանապարհը: ²⁷Երբ Ապողոսն ուզեց Աքայիա գնալ, հավատացյալ եղբայրները համաձայնվեցին և գրեցին այնտեղի հավատացյալներին, որ ընդունեն նրան: Իսկ երբ Ապողոսը հասավ այնտեղ, Աստծու շնորհով մեծապես օգտակար եղավ հավատացյալներին, ²⁸որովհետև հրապարակորեն ուժեղ հերքում էր հրեաների առարկությունները՝ Սուրբ գրքերի միջոցով ապացուցելով, որ Հիսուսն է խոստացված Քրիստոսը:

19

Պողոսը Եփեսոսում

¹Մինչ Ապողոսը Կորնթոսում էր գտնվում, Պողոսը Գաղատիայի և Փոյուզիայի կողմերում շրջելուց հետո իջավ Եփեսոս: Այստեղ նա Տիրոջն աշակերտած մի քանի մարդկանց գտնելով՝ ²հարցրեց նրանց.

-Սուրբ Հոգին ընդունեցի՞ք, երբ հավատացիք:

Նրանք պատասխանեցին.

-Մենք չենք էլ լսել, թե Սուրբ Հոգի կա:

³Պողոսը հարցրեց.

-Հապա ինչո՞վ մկրտվեցիք:

Նրանք պատասխանեցին.

-Հովհաննեսի մկրտությամբ:

⁴Եվ Պողոսն ասաց.

-Հովհաննեսը ժողովրդին մկրտեց այնպիսի մկրտությամբ, որ մարդկանց ապաշխարության էր հրավիրում, բայց նա ասում էր, որ հավատան նրան, ով գալու էր իրենից հետո, այսինքն՝ Հիսուս Քրիստոսին:

⁵Եփեսացիները, այս լսելով, մկրտվեցին Տեր Հիսուսի անունով: ⁶Իսկ երբ Պողոսը ձեռքը դրեց նրանց գլխին, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա. խոսում էին անձանոթ

^{18.21} Մի շարք ձեռ. չունեն «առաջիկա տոնը պետք է անպայման Երուսաղեմում կատարեն»:

^{19.4} Մտ 3.11, Մր 1.4, 7-8, Ղկ 3.4, 16, Հհ 1.26-27:

լեզուներով և մարգարեանում: ⁷Նրանք ընդամենը շուրջ տասներկու հոգի էին:

⁸Պողոսը, ժողովարան մտնելով, երեք ամիս համարձակ խոսում էր Աստծու արքայության մասին և փորձում համոզել նրանց: ⁹Սակայն երբ նրանցից ոմանք սկսեցին համառորեն հակաճառել և բազմության առաջ վարկաբեկել Տիրոջ վարդապետությունը, Պողոսը քաշվեց ժողովարանից և Տիրոջն աշակերտածներին էլ հետը տարավ ու ամեն օր քարոզում էր Տյուրան անունով մի մարդու դպրոցում: ¹⁰Այսպես շարունակվեց երկու տարի, այնպես որ Ասիա նահանգի բոլոր բնակիչները, հրեա թե հույն, լսեցին Տիրոջ խոսքը:

Սկսա քահանայի որդիները

¹¹Աստված արտասովոր հրաշքներ էր գործում Պողոսի ձեռքով: ¹²Մարդիկ մինչև իսկ նրա քրտնքոտ թաշկինակն ու աշխատանքի հագուստն էին տանում հիվանդների մոտ, և նրանք բժշկվում էին իրենց ցավերից, կամ չար ոգիները դուրս էին ելնում:

¹³Մի քանի հրեաներ, որոնք շրջիկ երդվեցնողներ էին, մարդկանցից չար ոգիները հանելու համար հանդգնեցին Տեր Հիսուսի անունը գործածել՝ ասելով.

-Երդումով հրամայում եմ ձեզ այն Հիսուսի անունով, որին քարոզում է Պողոսը:

¹⁴Այս բանն անողները Սկսա անունով մի հրեա ավագերեցի յոթ որդիներն էին:

¹⁵Չար ոգին պատասխանեց՝ ասելով.

-Հիսուսին գիտեմ, Պողոսին էլ ճանաչում եմ, բայց դուք ո՞վ եք:

¹⁶Եվ այն մարդը, որի մեջ էր չար ոգին, հարձակվեց նրանց վրա և մեկ առ մեկ բռնելով՝ խոշտանգեց նրանց, այնպես որ նրանք կիսամերկ ու վիրավոր փախան այդ տնից: ¹⁷Եփեսոսում բնակվող բոլոր հրեաներն ու հույներն իմացան այս մասին, և նրանց բոլորի մեջ ահ ընկավ: Եվ Տեր Հիսուսի անունը փառավորվում էր:

¹⁸Հավատացողներից շատերը գալիս խոստովանում էին՝ պատմելով իրենց գործած մեղքերը: ¹⁹Իսկ կախարդություն անողներից շատերը բերեցին իրենց գրքերը և բոլորի առջև այրեցին: Դրանց գինը հաշվեցին և գտան, որ հիսուն հազար արծաթ դրամ էր:

²⁰Եվ այսպես մեծ գորությամբ տարածվում էր Տիրոջ խոսքը, և եկեղեցին զորանում էր:

²¹Իր աշխատանքներն ավարտելուց հետո Պողոսը մտադրվեց շրջել Մակեդոնիայում և Աքայիայում և ապա գնալ Երուսաղեմ: Ասում էր.

-Այնտեղ գնալուց հետո պետք է Հռոմ էլ գնամ:

²²Իր օգնականներից երկուսին՝ Տիմոթեոսին և Երաստոսին, ուղարկեց Մակեդոնիա, իսկ ինքը դեռ մի որոշ ժամանակ մնաց Ասիայում:

Խռովություն Եփեսոսում

²³Այդ օրերին էր, որ Եփեսոսում մի մեծ խռովություն առաջացավ Տիրոջ վարդապետության համար: ²⁴Դեմետրիոս անունով մի արծաթագործ կար, որ Արտեմիս դիցուհու տաճարի արծաթե մանրակերտներն էր շինում և ահագին շահ

^{19.13} «Երդվեցնող» կոչվում էին նրանք, ովքեր մարդկանցից կամ որոշ վայրերից չար ոգիներ էին հանում կամ հալածում Աստծու անունը պարունակող հատուկ երդումի մի բանաձևով, որից և առաջացել է այս բառը:

բերում արհեստավորներին: ²⁵ Այս մարդը, հավաքելով նույն արհեստով զբաղվող վարպետներին, ասաց նրանց.

-Ո՛վ մարդիկ, դուք շատ լավ գիտեք, որ այս գործից ենք վաստակում մեր ապրուստը, ²⁶ և տեսնում եք ու լսում, որ Պողոսը ոչ միայն Եփեսոսում, այլև գրեթե ամբողջ Ասիայի նահանգում մի մեծ բազմության համոզելով մոլորեցրել է՝ ասելով, թե՛ «Ձեռքով շինված աստվածները աստված չեն»: ²⁷ Մա սպառնում է վնաս հասցնել ոչ միայն մեր գործի վարկին, այլ նաև Արտեմիս մեծ աստվածուհու մեհյանին, որը ոչնչի պիտի վերածվի և նսեմացնի մեծափառությունն Արտեմիսի, որին պաշտում են թե՛ Ասիան և թե՛ ամբողջ աշխարհը:

²⁸ Այս լսելով՝ նրանք լցվեցին բարկությամբ և սկսեցին աղաղակել.

-Մե՛ծ է եփեսացիների Արտեմիսը:

²⁹ Ամբողջ քաղաքն իրար խառնվեց: Բոլորը միասին խուժեցին դեպի թատրոն՝ իրենց հետ քարշ տալով Պողոսի ուղեկիցներին՝ Գայիոս և Արիստարքոս

Մակեդոնացիներին: ³⁰ Երբ Պողոսն ուզեց գնալ հավաքավայրը, Տիրոջն

աշակերտածները չթողեցին նրան: ³¹ Ասիապետներից ոմանք էլ, որոնք նրա

բարեկամներն էին, մարդ ուղարկեցին նրա մոտ՝ աղաչելով, որ թատրոն չգնա: ³² Իսկ թատրոնում ամեն մեկը մի բան էր աղաղակում, որովհետև հավաքույթը շփոթության էր մատնված, շատերը նույնիսկ չգիտեին, թե ինչի՛ համար են հավաքվել:

³³ Բազմության միջից ոմանք դուրս քաշեցին Ալեքսանդրոսին, որին հրեաներն առաջ էին հրում: Ալեքսանդրոսը ձեռքի շարժումով լռեցրեց ամբոխին և ուզում էր բացատրություն տալ հավաքված ժողովրդին: ³⁴ Բայց երբ իմացան, որ նա հրեա է, բոլորը միաբերան շուրջ երկու ժամ անդադար աղաղակում էին.

-Մե՛ծ է եփեսացիների Արտեմիսը:

³⁵ Քաղաքի քարտուղարը լռեցրեց ամբոխին և ասաց.

-Ո՛վ եփեսացիներ, կա՛ մեկը, որ չգիտե, թե Եփեսոսը պահապանն է մեծ Արտեմիսի մեհյանի և երկնքից ընկած նրա պատկերի: ³⁶ Այս բանը ոչ ոք չի կարող ուրանալ:

Հետևաբար լավ կլինի, որ հանդարտվեք և անխոհեմ բան չանեք: ³⁷ Դուք այդ

մարդկանց բերել եք այստեղ, բայց նրանք ո՛չ մեհյանն են կողոպտել, ո՛չ էլ մեր

դիցուհուն հայեցել: ³⁸ Եթե Դեմետրիոսը և նրա հետ եղող արհեստավորները մեկի դեմ

բողոք ունեն, թող գնան դատարան. այնտեղ դատավորներ կան, թող նրանց առաջ

ամբաստանեն միմյանց: ³⁹ Իսկ եթե ձեր պահանջածն ուրիշ բան է, դա պետք է

կարգադրվի օրինավոր ժողովում, ⁴⁰ որովհետև մենք էլ իբրև խոռվարար կարող ենք

ամբաստանվել այսօրվա այս պատահածի պատճառով, քանի որ որևէ արդարացում

չունենք այս հավաքույթի համար:

Այս խոսքերով նա արձակեց բազմությունը:

^{19.29} «Թատրոնը» հույների համար միայն բեմադրությունների վայր չէր. քաղաքացիներն այնտեղ ունենում էին նաև իրենց հավաքույթները:

^{19.31} «Սսիապետները» հռոմեական պաշտոնյաներ էին, որոնք ընտրվում էին տարին մեկ անգամ, հասարակական պաշտամունք էին կատարում և նախագահում նահանգային հավաքույթները: Մրանք իրենց պաշտոնավարության շրջանն ավարտելուց հետո էլ պահում էին իրենց տիտղոսը:

Պողոսը գնում է Մակեդոնիա և Հունաստան

¹ Խոովությունը հանդարտվելուց հետո Պողոսը կանչեց Տիրոջն աշակերտածներին, հորդորեց նրանց և հրաժեշտ տալով՝ ելավ գնաց Մակեդոնիա: ² Իսկ այդ կողմերում շրջելուց և բազմաթիվ հանդիպումներով նրանց հորդորելուց հետո եկավ Հունաստան:

³ Երեք ամիս այնտեղ մնալուց հետո, երբ ուզում էր նավով Սիրիա գնալ, հրեաները դավ նյութեցին նրա դեմ: Ուստի որոշեց վերադառնալ Մակեդոնիայով: ⁴ Նրան ուղեկցում էին պերեացի Պյուռոսի որդի Մոպատրոսը, թեսաղոնիկեցի Արիստարքոսն ու Սեկունդոսը, դերբեցի Գայիոսը, Տիմոթեոսը և ասիացի Տյուքիկոսն ու Տրոֆիմոսը: ⁵ Սրանք մեզնից առաջ էին գնացել և Տրովադայում մեզ էին սպասում: ⁶ Իսկ մենք Բաղարջակերաց տոնի օրերն անցկացրինք Փիլիպպեում և ապա այնտեղ նավ նստելով՝ հինգ օրից նրանց միացանք Տրովադայում, որտեղ մնացինք յոթ օր:

Հրաժեշտի երեկո Տրովադայում

⁷ Շաբաթ երեկո, մինչ հավաքվել էինք հացը կտրելու, Պողոսը, որ հաջորդ օրը մեկնելու էր, խոսում էր նրանց հետ: Նա իր խոսքը երկարեց մինչև կեսգիշեր: ⁸ Այն վերնատունը, որտեղ հավաքվել էինք, լուսավորված էր բազմաթիվ լապտերներով: ⁹ Եվտիքոս անունով մի երիտասարդ նստել էր պատուհանի եզրին: Երբ Պողոսի խոսքը երկարեց, Եվտիքոսը հետզհետե խոր քնի մեջ ընկավ, քնից թուլացած՝ երրորդ հարկից ցած ընկավ. նրան վերցրին մեռած: ¹⁰ Պողոսը, ցած իջնելով, կռացավ նրա վրա, իր գիրկն առավ նրան և ասաց.

-Ողբ ու կոծ մի՛ արեք, հոգին վրան է:

¹¹ Այնուհետև վեր բարձրացավ և հացը կտրելուց ու ճաշակելուց հետո դեռ երկար խոսեց նրանց հետ, մինչև լուսաբաց, և ապա ելավ գնաց: ¹² Իսկ պատանուն կենդանի տուն տարան և անչափ մխիթարվեցին:

Տրովադայից դեպի Միլետոս

¹³ Իսկ մենք, նավ մտնելով, ճանապարհ ընկանք դեպի Ասսոս, որտեղ մեզ հետ դարձյալ պիտի վերցնեինք Պողոսին, որովհետև նա այնպես էր կարգադրել, որ ինքը ցամաքով գնա: ¹⁴ Երբ մեզ գտավ Ասսոսում, նրան նավ վերցրինք մեզ հետ և եկանք Միտիլինե, ¹⁵ որտեղից նավով շարունակելով ճանապարհը՝ հաջորդ օրն անցանք Քիոսի մոտից, իսկ մյուս օրը Սամոսն անցնելով՝ գիշերը մնացինք Տրոգիլիոնում և հետևյալ օրը հասանք Միլետոս: ¹⁶ Արդարև, Պողոսը որոշել էր Եփեսոս չմտնել, որպեսզի Ասիայի նահանգում ժամանակ չկորցնի, որովհետև շտապում էր Պենտեկոստի օրը Երուսաղեմում լինել, եթե հաջողվեր:

Հրաժեշտի խոսքը Եփեսոսի երեցներին

^{20.7} «Շաբաթ երեկո». բնագիրն ունի «շաբաթվա առաջին օրը», այսինքն՝ կիրակի: Չպետք է մոռանալ, որ անցյալում օրը հաշվում էին երեկոյան՝ արևամուտից սկսած:

^{20.15} Մի շարք ձեռ. չունեն «գիշերը մնացինք Տրոգիլիոնում»:

¹⁷ Միլետոսից լուր ուղարկեց Եփեսոս և իր մոտ կանչեց եկեղեցու երեցներին: ¹⁸ Երբ նրանք եկան, ասաց նրանց.

-Դուք ինքներդ գիտեք, թե Ասիա գալու իմ առաջին օրվանից ինչպե՛ս վարվեցի ձեզ հետ այս ամբողջ ժամանակամիջոցում: ¹⁹ Ամենայն խոնարհությամբ և հաճախ արցունքով ծառայեցի Տիրոջը՝ հրեաների նյութած բոլոր փորձությունները կրելով:

²⁰ Գիտեք, որ բնավ չքաշվեցի ձեզանից, խոսեցի օգտակար բաների մասին և ուսուցանեցի ձեզ՝ լինի հրապարակորեն թե տներում: ²¹ Նույն վկայությունն ու պատգամը տվեցի թե՛ հրեաներին և թե՛ հեթանոսներին՝ ապաշխարությամբ դառնալու Աստծուն և հավատալու մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին:

²² Այժմ ահա Սուրբ Հոգու մղումով գնում եմ Երուսաղեմ: Զգիտեմ, թե այնտեղ ի՛նչ կպատահի ինձ: ²³ Գիտեմ միայն, որ ամեն մի քաղաքում Սուրբ Հոգին ազդարարում է ինձ՝ ասելով, որ ինձ սպասում են բանտարկություն ու նեղություն: ²⁴ Բայց իմ հոգը չէ, ինձ համար կարևորն իմ կյանքը չէ, այլ այն, որ ուրախությամբ իր վախճանին հասցնեմ իմ գործը, այն պաշտոնը, որ ինձ տվեց Տեր Հիսուսը՝ ավետարանելու Աստծու շնորհը:

²⁵ Հիմա գիտեմ, որ այսուհետև այլևս չեք տեսնելու ինձ: Եկա ձեր բոլորի մոտ, շրջեցի ու քարոզեցի Աստծու արքայությունը՝ ²⁶ և ահա հայտարարում եմ այսօր, որ իմ խիղճը հանգիստ է, ²⁷ որովհետև առանց քաշվելու հայտնեցի ձեզ Աստծու կամքը: ²⁸ Ուշադի՛ր եղեք ձեր անձերին և ձեր ամբողջ հոտին, որի վրա Սուրբ Հոգին տեսուչ կարգեց ձեզ: Հովվեցե՛ք Տիրոջ եկեղեցին, որ նա իր արյունով գնեց:՝ ²⁹ որովհետև ես գիտեմ, որ իմ մեկնումից հետո ձեր մեջ կմտնեն հափշտակիչ գայլեր, որոնք չեն խնայի հոտին: ³⁰ Ձեր միջից էլ դուրս կգան մարդիկ, որոնք սխալ բաներ կուսուցանեն՝ հավատացյալներին իրենց հետևից տանելու համար: ³¹ Հետևաբար, արթո՛ւն կացեք. հիշեցե՛ք, թե ինչպես երեք տարի անդադար, զիշեր-ցերեկ, յուրաքանչյուրիդ մեկ-մեկ արցունքով խրատեցի:՝ ³² Եվ հիմա հանձնում եմ Աստծուն և նրա շնորհի Ավետարանին, որ կարող է հոգեպես աճեցնել և ժառանգակից դարձնել ձեզ իր բոլոր սրբերին:՝ ³³ Ձեզնից որևէ մեկի արծաթը, ոսկին կամ հագուստը չցանկացա: ³⁴ Դուք ինքներդ գիտեք, որ իմ այս ձեռքերով շահեցի և հոգացի թե՛ իմ և թե՛ իմ ընկերակիցների կարիքները: ³⁵ Ես իմ կյանքի օրինակով ցույց տվեցի ձեզ, թե այդպես պետք է աշխատել և օգնել տկարներին՝ հիշելով այն խոսքը, որ Տեր Հիսուսն ինքն իսկ ասաց, թե՛ «Ավելի երջանկաբեր է տալը, քան առնելը»:

³⁶ Իր խոսքը վերջացնելուց հետո Պողոսը բոլորի հետ ծնկի եկավ և աղոթեց: ³⁷ Բոլորն էլ սկսեցին լաց լինել և Պողոսի վզին փաթաթվելով՝ համբուրում էին նրան:

³⁸ Մորմոքվում էին մանավանդ նրա համար, որ ասում էր, թե իրեն այլևս չեն տեսնելու: Ապա նրան ուղեկցեցին մինչև նավը:

^{20.28} «Տիրոջ եկեղեցին» կամ «Տիրոջ ժողովրդին». մի շարք ձեռ. ունեն «Աստծու եկեղեցին»:

^{20.31} «Երեք տարի». մի շարք ձեռ. ունեն «երկու տարի»:

^{20.32} «Սրբերին». այսինքն՝ բոլոր քրիստոնյա հավատացյալներին, որոնք Աստծուն միանալով՝ սրբագործված են (հմմտ Հհ 17.17-19):

^{20.35} Հիսուսի այս խոսքը չի պահպանվել Ավետարաններում:

Պողոսի ճանապարհորդությունը դեպի Երուսաղեմ

¹ Երբ նրանցից բաժանվեցինք, նավ ելանք և ուղիղ գծով հասանք Կոս: Հաջորդ օրը եկանք Ռոդոս, իսկ այնտեղից էլ՝ Պատարա: ² Այստեղ գտնելով մի նավ, որ Փյունիկե էր գնում, բարձրացանք ու ճանապարհ ընկանք: ³ Երբ Կիպրոսը երևաց, այն թողնելով մեր ձախ կողմում՝ նավարկեցինք դեպի Սիրիա և իջանք Տյուրոս, որովհետև նավն իր բեռներն այնտեղ էր դատարկելու: ⁴ Այնտեղ Քրիստոսի հետևորդներ գտանք և մնացինք յոթ օր: Նրանք, Սուրբ Հոգուց ներշնչված, Պողոսին ասում էին, որ Երուսաղեմ չգնա: ⁵ Բայց երբ մեր օրերը լրացան, և պատրաստվեցինք մեկնելու, բոլորն էլ իրենց կանանց և զավակների հետ միասին մեզ ուղեկցեցին մինչև քաղաքից դուրս, և ծովեզրին ծնկի գալով աղոթեցինք: ⁶ Ապա միմյանց հրաժեշտ տալով՝ մենք նավ բարձրացանք, իսկ նրանք վերադարձան իրենց տները:

⁷ Տյուրոսից էլնելով՝ մեր նավային ճանապարհորդությունն ավարտեցինք՝ հասնելով Պտողեմայիս, որտեղ հավատացյալ եղբայրներին ողջունելուց հետո մեկ օր մնացինք նրանց մոտ: ⁸ Իսկ հաջորդ օրը դուրս գալով այնտեղից՝ եկանք Կեսարիա և մտանք Փիլիպպոս ավետարանչի՝ յոթ սարկավագներից մեկի տուն և օթևանեցինք նրա մոտ: ⁹ Փիլիպպոսն ուներ չորս աղջիկ, որոնք ամուսնացած չէին և մարգարեություն էին անում: ¹⁰ Երբ արդեն բավական ժամանակ մնացել էինք այնտեղ, Հրեաստանից Ագաբոս անունով մի մարգարե եկավ: ¹¹ Սա, մեզ մոտ գալով, վերցրեց Պողոսի գոտին և դրանով կապելով ինքն իր ձեռքերն ու ոտքերը՝ ասաց.

-Սուրբ Հոգին այսպես է ասում. «Երուսաղեմում հրեաներն այսպես պիտի կապեն և հեթանոսների ձեռքը հանձնեն այն մարդուն, որին պատկանում է այս գոտին»:

¹² Երբ այս լսեցինք, թե՛ մենք, թե՛ տեղացիները աղաչում էինք, որ Պողոսը Երուսաղեմ չգնա:

¹³ Այն ժամանակ Պողոսն ասաց.

-Ինչո՞ւ եք այդպես լաց լինում և իմ սիրտն էլ ճմլում. ես Տեր Հիսուսի սիրո համար ոչ միայն կապվելու, այլև մեռնելու իսկ պատրաստ եմ Երուսաղեմում:

¹⁴ Երբ նա չուզեց համոզվել, լռեցինք. ասացինք.

-Տիրոջ կամքը թող լինի:

¹⁵ Մի քանի օր անց պատրաստվեցինք և ճանապարհ ընկանք դեպի Երուսաղեմ:

¹⁶ Կեսարիայից մեզ հետ եկան նաև մի քանի հավատացյալներ, որոնք մեզ տարան Մնասոն անունով մի կիպրացու մոտ, որ Քրիստոսի առաջին հետևորդներից էր, և որի հյուրն էինք լինելու:

Այցելություն Երուսաղեմի եկեղեցուն

¹⁷ Երբ Երուսաղեմ մտանք, հավատացյալ եղբայրներն ուրախությամբ ընդունեցին

^{21.8} «Կեսարիա». տե՛ս 8.40-ի ծնթ: «Փիլիպպոս ավետարանիչը» նույնանուն սարկավագն է (տե՛ս 8.52բ):

^{21.8} Գրծ 6.5, 8.5:

^{21.10} Գրծ 11.28:

մեզ: ¹⁸ Հաջորդ օրը Պողոսը մեզ հետ Հակոբոսի մոտ գնաց: Եկան նաև բոլոր երեցները: ¹⁹ Պողոսը նրանց ողջունելուց հետո սկսեց մի առ մի պատմել այն ամենը, ինչ Աստված նրա գործակցությամբ իրականացրեց հեթանոսների մեջ: ²⁰ Իսկ նրանք լսելով փառք էին տալիս Աստծուն:

Ապա նրան ասացին.

-Տեսնո՞ւմ ես, եղբա՛յր, տասնյակ հազարավոր հրեա հավատացյալներ կան, և բոլորն էլ նախանձախնդիր են Օրենքը պահելու: ²¹ Բայց քո մասին իմացել են, թե հեթանոսների մեջ ապրող բոլոր հրեաներին սովորեցնում ես, որ թողնեն Մովսեսի Օրենքը, այսինքն՝ ասում ես, որ նրանք իրենց որդիներին չթլփատեն և իրենց սովորությունները չպահեն: ²² Արդ, ի՞նչ պետք է անել: Ամեն դեպքում նրանք կլսեն, որ եկել ես, և բոլորն էլ գլխիդ կթափվեն:՝ ²³ Հետևաբար արի՛ և արա՛ այն, ինչ քեզ ասում ենք: Մեզ մոտ չորս մարդ կա, որոնք ուխտ են արել:՝ ²⁴ Վերցրո՛ւ նրանց քեզ հետ և նրանց հետ միասին սրբվի՛ր ծիսական արարողությամբ, նրանց գլուխներն ածիլելու ծախսերն էլ ի՛նքդ հանձն առ, որպեսզի մարդիկ իմանան, որ քո մասին ինչ որ լսել են, սխալ է. այլ ընդհակառակը, որ դու էլ համաձայն ես Օրենքը պահելու:՝ ²⁵ Իսկ ինչ վերաբերում է հեթանոսությունից դարձած հավատացյալներին, մենք նամակով նրանց փոխանցեցինք մեր որոշումը, որ հեռու մնան կուռքերին զոհված կերակուրներից, արյունից, խեղդամահ արված կենդանիների մսից և պոռնկությունից:՝

²⁶ Այն ժամանակ Պողոսը, վերցնելով ուխտադիր մարդկանց և հաջորդ օրը՝ նրանց հետ սրբվելուց հետո, մտավ տաճար՝ հայտնելու, թե ե՛րբ են ավարտվելու իրենց մաքրվելու օրերը, որպեսզի յուրաքանչյուրի համար որոշված զոհը մատուցվի:

Պողոսը ձեռքակալվում է տաճարում

²⁷ Ուխտի յոթ օրերը լրանալու մոտ էին, երբ Ասիայի նահանգից եկած հրեաները Պողոսին տաճարում տեսնելով՝ ամբողջ Բազմությունը հավաքեցին նրա շուրջը և բռնելով նրան՝ ²⁸ աղաղակում էին.

-Ո՛վ վ իսրայելացիներ, օգնեցե՛ք. սա է այն մարդը, որ մեր ժողովրդի, Օրենքի և այս սրբավայրի դեմ է խոսում ամեն տեղ և բոլորի հետ: Ավելին, նա հեթանոսներ մտցրեց այս տաճարը և պղծեց այս սուրբ վայրը:

²⁹ Այս բանն էին ասում, որովհետև նախապես նրա հետ քաղաքում տեսել էին եփեսացի Տրոֆիմոսին և կարծում էին, թե Պողոսը նրան տաճար է մտցրել:՝ ³⁰ Ամբողջ քաղաքը ոտքի ելավ: Ահագին ժողովուրդ խոնվեց: Պողոսին բռնեցին, քարշ տվեցին տաճարից դուրս, և տաճարի դռներն իսկույն փակվեցին: ³¹ Երբ ուզում էին սպանել նրան, գնդի հազարապետին լուր հասավ, թե ամբողջ Երուսաղեմը խառնվել է իրար:

^{21.22} Մի շարք ձեռ. չունեն «և բոլորն էլ գլխիդ կթափվեն»:

^{21.23-24} Թվ 6.13-21:

^{21.24} «Սրբվի՛ր [ծիսական արարողությամբ]». ուխտավորությանը հատուկ այս արարողություններն ու զոհերը նկարագրվում են Թվեր գրքում (6.13-21):

^{21.25} Գրծ 15.29:

^{21.29} Գրծ 20.4:

³² Իսկույն զինվորներ ու հարյուրապետներ վերցնելով՝ շարժվեց նրանց վրա: Նրանք, տեսնելով հազարապետին և զինվորներին, դադարեցին Պողոսին ծեծելուց: ³³ Այն ժամանակ հազարապետը մոտեցավ, բռնեց նրան և հրամայեց, որ կապեն զույգ շղթաներով: Ապա սկսեց հարցնել, թե ո՞վ է և ի՞նչ է արել: ³⁴ Բազմության միջից ամեն մեկը մի բան էր գոռում: Աղմուկի պատճառով չկարողանալով ստույգ բան իմանալ՝ հրամայեց, որ զորանոց տանեն նրան: ³⁵ Երբ Պողոսը հասավ զորանոցի աստիճաններին, զինվորներն ամբոխի վայրագության պատճառով նրան վեր բարձրացրած տարան, ³⁶ որովհետև ժողովրդի բազմությունը նրա հետևից էր գնում՝ գոռալով.

-Մեջտեղից վերացրո՛ւ դրան:

Պողոսի պաշտպանողականը

³⁷ Չորանոց մտնելու վրա էին, երբ Պողոսը հազարապետին ասաց.

-Կարո՞ղ եմ մի բան ասել քեզ:

Իսկ նա հարցրեց.

-Ուրեմն հունարեն գիտե՞ս: ³⁸ Դու այն եգիպտացին չե՞ս, որ սրանից կարճ ժամանակ առաջ ապստամբելով՝ քո հետևից անապատ տարար չորս հազար զինված մարդասպանների:

³⁹ Պողոսը պատասխանեց.

-Ես հրեա մարդ եմ, տարսոնցի, Կիլիկիայից, ոչ աննշան քաղաքի քաղաքացի. խնդրում եմ, թո՛ւյլ տուր, որ իմ խոսքն ուղղեմ ժողովրդին:

⁴⁰ Երբ հազարապետը թույլ տվեց, Պողոսը կանգնեց աստիճանների վրա, ձեռքով նշան արեց ժողովրդին, որ լուռ մնան, և երբ լռություն տիրեց, սկսեց երբայերեն խոսել՝ ասելով՝

22

¹ -Մարդի՛կ, եղբայրնե՛ր և հայրե՛ր, լսեցե՛ք, ինչ որ ասելու եմ ձեզ՝ իբրև պատասխան ձեր ամբաստանությունների:

² Երբ լսեցին, որ նա եբրայերեն է դիմում իրենց, առավել լուռ մնացին: Եվ Պողոսը շարունակեց:

³ -Ես հրեա մարդ եմ՝ ծնված Կիլիկիայի Տարսոն քաղաքում, բայց սնված այստեղ, այս քաղաքում, Գամաղիելի ձեռքի տակ և դաստիարակված մեր հայրենի ճշգրիտ Օրենքով: Ես նույնքան նախանձախնդրությամբ նվիրված էի Աստծուն, որքան դուք բոլորդ՝ այսօր: ⁴ Այնքա՛ն նախանձախնդիր էի, որ այս վարդապետությանը հետևողներին հալածեցի մինչև մահ՝ ձերբակալելով և բանտ նետել տալով

՝21.34 «Չորանոց». բոց՝ «բանակատեղի»: Սա Երուսաղեմի տաճարի շրջափակի հյուսիսարևմտյան անկյունում գտնվող մի փոքրիկ միջնաբերդ-ամրոց էր՝ Անտոնիա անունով: Կառուցել էր շերտվդես Մեծը, և Երուսաղեմը պահպանող հռոմեական զորագնդի կողմից օգտագործվում էր որպես զորանոց:

՝21.40 «Եբրայերեն». հավանաբար նկատի ունի արամեերենը, որով այն ժամանակ խոսում էին Պաղեստինում:

՝22.3 Գրծ 5.34-39:

տղամարդկանց և կանանց,⁵ ինչպես կարող են վկայել քահանայապետն ու ամբողջ ծերակույտը, որովհետև նրանցից նամակներ էի առել՝ ուղղված Դամասկոսի մեր եղբայրներին, և գնում էի այնտեղ՝ Դամասկոսում գտնվողներին էլ ձերբակալելու և Երուսաղեմ բերելու, որպեսզի պատժվեն: ⁶ Բայց գնալու ժամանակ, մինչ մոտենում էի Դամասկոսին, կեսօրվա մոտ հանկարծ երկնքից սաստիկ մի լույս փայլատակեց իմ շուրջը: ⁷ Գետին ընկա և լսեցի մի ձայն, որ ասում էր ինձ. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում ինձ»: ⁸ Ես հարցրի. «Ո՞վ ես, Տե՛ր»: Չայնն ասաց. «Ես Նազովրեցի Հիսուսն եմ, որին դու հալածում ես»: ⁹ Ինձ հետ եղողները լույսը տեսնում էին, բայց ինձ հետ խոսող ձայնը չէին լսում: ¹⁰ Ես ասացի նրան. «Ի՞նչ անեմ, Տե՛ր»: Եվ Տերն ինձ ասաց. «Վե՛ր կաց, գնա՛ Դամասկոս, և այնտեղ քեզ պիտի ասվի, ինչ որ սահմանել եմ, որ անես»: ¹¹ Լույսի փայլատակումից այլևս չէի տեսնում, ուստի ինձ հետ եղողները, ձեռքիցս բռնելով, տարան ինձ, և մտա Դամասկոս:

¹² Այնտեղ Օրենքը պահող մի բարեպաշտ մարդ կար՝ Անանիա անունով, որի մասին Դամասկոսում բնակվող բոլոր հրեաներն էլ լավ վկայություն էին տալիս: ¹³ Այս մարդը եկավ ինձ մոտ և կողքիս կանգնելով՝ ասաց. «Սավո՛ւղ եղբայր, վերև՝ նայիր, տե՛ս»: Նույն վայրկյանին տեսողությունս վերագտա և նայեցի նրան: ¹⁴ Այն ժամանակ ասաց. «Մեր հայրերի Աստվածը նախ ընտրեց քեզ, որ ճանաչես նրա կամքը, տեսնես Արդարին և լսես նրա ձայնը իր իսկ բերանից, ¹⁵ որպեսզի բոլոր մարդկանց մոտ նրա վկան դառնաս՝ պատմելով, ինչ որ տեսար և լսեցիր: ¹⁶ Իսկ հիմա ինչո՞ւ ես ուշանում. վե՛ր կաց, մկրտվի՛ր և լվա՛ք քո մեղքերը՝ աղոթելով նրան»:

¹⁷ Երբ Երուսաղեմ վերադարձա և աղոթում էի տաճարում, մտքի հափշտակության մեջ ընկա ¹⁸ և տեսա Տիրոջը, որ ասում էր ինձ. «Շտապի՛ր, շուտով դո՛ւ րս էլ Երուսաղեմից, որովհետև նրա բնակիչները չեն ընդունելու այն վկայությունը, որ դու տալիս ես իմ մասին»: ¹⁹ Եվ ես ասացի. «Տե՛ր, իրենք լավ գիտեն սակայն, թե ես էի, որ բանտարկել և ժողովարաններում գանակոծել էի տալիս քեզ հավատացողներին: ²⁰ Եվ երբ թափում էին քո վկայի՝ Ստեփանոսի արյունը, ես էլ նրանց կողքին էի, նրա մահը պահանջողներից մեկն էի և նրան սպանողների վերարկուները ե՛ս էի բռնել»: ²¹ Բայց Տերն ինձ ասաց. «Գնա՛, որովհետև ես քեզ պետք է ուղարկեմ հեռավոր ազգերի մոտ»:

Պողոսը և հռոմեացի հազարապետը

²² Մինչև այս ասելը ունկնդրում էին նրան, բայց այս խոսքի վրա բարձրացրին իրենց ձայնը՝ գոռալով.

-Աշխարհից վերացրո՛ւ այս մարդուն, որովհետև այսպիսի մեկը չպետք է ողջ մնա:

²³ Երբ սկսեցին գոռգոռալ, իրենց վերարկուները թափ տալով շարժել և փոշի հանելով օդ նետել, ²⁴ հազարապետը հրամայեց, որ նրան զորանոց մտցնեն՝ պատվիրելով, որ ձեռնելով հարցաքննեն նրան, որպեսզի իմանան, թե ի՞նչ հանցանքի համար էին այդպես աղաղակում նրա դեմ: ²⁵ Երբ նրան կաշվե փոկերով պինդ

^{22.4-5} Գրծ 8.3, 26.9-11:

^{22.9} «Տեսնում էին». մի շարք ձեռ. ավելացնում են «և սաստիկ վախեցան»: «Չայնը չէին լսում». իրականում լսում էին, բայց չէին հասկանում:

^{22.20} Գրծ 7.58:

կապեցին, Պողոսը վերակացու հարյուրապետին ասաց.

- Հռոմեացի և անմեղ մի մարդու գանահարելու իրավունք ունե՞ք:

²⁶ Երբ հարյուրապետն այս լսեց, հազարապետին հայտնեց՝ ասելով.

- Ի՞նչ ես ուզում, որ անենք, քանի որ այս մարդը հռոմեացի է:

²⁷ Հազարապետը մոտեցավ Պողոսին և հարցրեց.

- Ասա՛ ինձ, դու հռոմեացի՞ ես:

Եվ երբ Պողոսը «Այո» պատասխանեց, ²⁸ հազարապետն ասաց.

- Ես մեծ գումարով եմ ձեռք բերել այս քաղաքացիությունը:

Պողոսը պատասխանեց.

- Իսկ ես ծնունդով եմ հռոմեացի:

²⁹ Այս խոսքի վրա նրանք, որ ծեծելով պիտի հարցաքննեին նրան, իսկույն հեռացան նրանից: Իսկ հազարապետը, իմանալով նրա հռոմեացի լինելը, վախեցավ, որովհետև կապանքի տակ էր առել նրան:

Պողոսը հրեաների ատյանի առաջ

³⁰ Հաջորդ օրը հազարապետը, ուզելով ստույգ կերպով իմանալ, թե հրեաներն ինչի՞ համար են ամբաստանում Պողոսին, արձակել տվեց նրա կապերը և հրամայեց կանչել ավագ քահանաներին և ամբողջ ատյանը: Ապա Պողոսին ցած իջեցնելով գորանոցից՝ կանգնեցրեց նրանց առաջ:

23

¹ Պողոսը, աչքերն ուղղելով ատյանին, ասաց.

- Եղբայրնե՛ր, մինչև այսօր ես կատարելապես հանգիստ խղճով եմ ապրել Աստծու առաջ:

² Անանիա քահանայապետը սպասավորներին հրամայեց, որ խփեն նրա բերանին:՝

³ Այն ժամանակ Պողոսը նրան ասաց.

- Թող Աստված քեզ խփի, կրով ծեփա՛ծ պատ, և դու նստել ես, որ ինձ դատես Օրենքով, և ապօրինի հրաման ես տալիս, որ խփե՛ն ինձ:՝

⁴ Սպասավորներն ասացին.

- Աստծու քահանայապետի՞ն ես նախատում:

⁵ Եվ Պողոսն ասաց.

- Եղբայրնե՛ր, չգիտեի, որ քահանայապետն է, որովհետև Սուրբ գիրքն ասում է. «Քո ժողովրդի առաջնորդի դեմ չարախոսություն մի՛ արա»:

⁶ Երբ Պողոսն իմացավ, որ ատյանի մի կողմում սաղուկեցիներն են, իսկ մյուս կողմում՝ փարիսեցիները, սկսեց բացականչել.

- Եղբայրնե՛ր, ես փարիսեցի եմ և փարիսեցու զավակ. և եթե ես հիմա դատվում եմ, ապա նաև նրա համար, որ մեռելների հարության հույսն ունեմ:՝

^{23.2} «Անանիան» քահանայապետական իր պաշտոնը վարել է 47-59թ.:

^{23.3} Մտ 23.27-28:

^{23.5} Ելք 22.28:

^{23.6} Գրծ 26.5, Փպ 3.5:

⁷ Զենց որ այս ասաց, փարիսեցիների և սադուկեցիների միջև երկպառակություն առաջացավ, և բազմությունը երկուսի բաժանվեց. ⁸ որովհետև սադուկեցիներն ասում են, թե չկա ո՛չ հարություն, ո՛չ հրեշտակ, ո՛չ հոգի, և փարիսեցիներն ընդունում են այս բոլորը: ⁹ Եվ մեծ աղմուկ բարձրացավ:

Փարիսեցիների կողմից ոտքի ելան Օրենքի մի շարք ուսուցիչներ և ընդդիմախոսելով՝ ասում էին.

-Մենք այս մարդու մեջ ոչ մի հանցանք չենք գտնում: Գուցե նրա հետ մի հոգի կամ մի հրեշտակ է խոսել...:

¹⁰ Երբ իրարանցումը մեծացավ, հազարապետը վախենալով, որ Պողոսին կտորկտոր կանեն, հրամայեց իր զինվորներին, որ իջնեն և Պողոսին նրանց միջից իլեն ու տանեն գորանոց:

¹¹ Հաջորդ գիշերը Տերը Պողոսի մոտ եկավ և ասաց.

-Պողո՛ս, քա՛ջ եղիր, որովհետև, ինչպես որ այստեղ՝ Երուսաղեմում վկայեցիր ինձ համար, այնպես էլ պետք է վկայես Հռոմում:

Դավադրություն Պողոսի կյանքի դեմ

¹² Հաջորդ առավոտյան մի շարք հրեաներ իրար մոտ եկան և իրենք իրենց նզովելով՝ երդվեցին, որ մինչև Պողոսին չսպանեն, ո՛չ կուտեն, ո՛չ էլ կխամեն: ¹³ Քառասուն հոգուց ավելի էին այս երդում անողները: ¹⁴ Սրանք մոտեցան ավագ քահանաներին ու երեցներին և ասացին.

-Մենք մեզ նզովելով երդում արեցինք, որ ոչ մի բան չճաշակենք, մինչև Պողոսին չսպանենք: ¹⁵ Դուք աստյանի անունով լուր ուղարկեցեք հազարապետին, որ ձեզ մոտ ուղարկի նրան՝ պատճառաբանելով, թե ուզում եք ավելի ստույգ տեղեկություն ունենալ նրա մասին: Իսկ մինչ այդ մենք պատրաստ կլինենք և դեռ այստեղ չհասած՝ կսպանենք նրան:

¹⁶ Պողոսի քրոջ որդին, իմանալով այս դավադրության մասին, եկավ գորանոց և հայտնեց Պողոսին: ¹⁷ Պողոսը, իր մոտ կանչելով հարյուրապետներից մեկին, ասաց.

-Այս պատանուն տար հազարապետի մոտ, որովհետև նրան ասելիք ունի:

¹⁸ Հարյուրապետը նրան տարավ հազարապետի մոտ և ասաց.

-Բանտարկված Պողոսն ինձ կանչեց և խնդրեց, որ այս պատանուն քեզ մոտ բերեմ, որովհետև քեզ ասելու բան ունի:

¹⁹ Հազարապետը, պատանու ձեռքը բռնելով, մի կողմ տարավ նրան և հարցրեց.

-Ի՞նչ ունես ինձ ասելու:

²⁰ Պատանին ասաց.

-Հրեաները համաձայնեցին խնդրելու քեզ, որ վաղը Պողոսին աստյան ուղարկես՝ իբր թե նրան մանրակրկիտ հարցուփորձ անելու համար: ²¹ Բայց դու նրանց չլսես, որովհետև նրանց միջից ավելի քան քառասուն հոգի, իրենք իրենց նզովելով, երդվել են, որ ո՛չ կուտեն ո՛չ էլ կխամեն, մինչև չսպանեն նրան: Այժմ, դարան մտած,

Չ3.8 Մտ 22.23, Մր 12.18, Ղկ 20.27:

Չ3.9 «... է խոսել»։ մի շարք ձեռ. ավելացնում են «յիսի թե Աստծու դեմ կովենք»:

պատրաստ են և սպասում են քո հրամանին:

²² Հազարապետը պատանուն ճանապարհ դրեց՝ պատվիրելով.

-Ոչ ոքի մի՛ ասա, ինչ որ ինձ հայտնեցիր:

Պողոսը տարվում է Ֆելիքս կառավարչի մոտ

²³ Ապա հազարապետը հարյուրապետներից երկու հոգու կանչեց և ասաց.

-Երկու հարյուր հետևակ, յոթանասուն հեծյալ և երկու հարյուր տեղավոր զինվորներ թող պատրաստ լինեն գիշերվա ժամը իննին ճանապարհ ընկնելու դեպի Կեսարիա:

²⁴ Պողոսի համար էլ գրաստ պատրաստեցեք և նրան ապահով հասցրե՛ք Ֆելիքս կառավարչի մոտ:

²⁵ Նա մի նամակ էլ գրեց հետևյալ բովանդակությամբ.

²⁶ «Կլավդիոս Լիսիասի կողմից՝ նորին գերագանցություն Ֆելիքս կառավարչին ողջո՛ւյն:

²⁷ Հրեաները բռնել էին այս մարդուն և պատրաստ էին նրան սպանելու: Իմանալով, որ նա հռոմեացի է, վրա հասա և ազատեցի նրան: ²⁸ Ուզեցի գիտենալ, թե ի՛նչ հանցանքի համար էին ամբաստանում նրան, ուստի նրան տարա իրենց ատյանը ²⁹ և հասկացա, որ իրենց Օրենքին վերաբերող խնդիրների համար են ամբաստանում. այսինքն՝ նա մահվան կամ բանտարկության արժանի որևէ հանցանք չունի: ³⁰ Բայց երբ ինձ տեղեկացրին, որ հրեաները դավ են նյութել նրա կյանքի դեմ, իսկույն քեզ մոտ ուղարկեցի նրան՝ հրամայելով, որ ամբաստանողները քե՛զ ներկայացնեն իրենց ասելիքները: Ո՛ղջ եղիր»:

³¹ Հազարապետի հրամանի համաձայն, հետևակ զինվորները Պողոսին վերցրին և գիշերով փոխադրեցին Անտիպատրիս, ³² իսկ հաջորդ օրը նրան հանձնելով իրենց ուղեկցող հեծյալներին՝ իրենք վերադարձան գորանոց: ³³ Հեծյալները հասան Կեսարիա և նամակը կառավարչին տալով՝ Պողոսին էլ ներկայացրին նրան: ³⁴ Կառավարիչը կարդաց նամակը և Պողոսին հարցրեց, թե կայսրության ո՞ր նահանգից է, և իմանալուց հետո, որ Կիլիկիայից է, ³⁵ ասաց.

-Երբ որ քեզ ամբաստանողներն էլ գան, կլսեմ քեզ:

Եվ հրամայեց, որ նրան պահեն Հերովդեսի ապարանքում:

24

Հրեաները ամբաստանում են Պողոսին

¹ Հինգ օր հետո Անանիա քահանայապետը մի քանի երեցների և Տերտուղոս անունով մի փաստաբանի հետ եկավ Կեսարիա: Սրանք Պողոսի դեմ իրենց ամբաստանությունը ներկայացրին կառավարչին: ² Երբ Պողոսը կանչվեց, Տերտուղոսն սկսեց իր ամբաստանությունն անել՝ ասելով.

-Ձե՛րդ գերագանցություն Ֆելիքս, այս ազգը քո ձեռքով երկարատև խաղաղություն է

^{23.24} «Անտոնիոս Ֆելիքսը» Պաղեստինի կառավարիչ է նշանակվել 52-59/60թթ.:

^{23.35} «Հերովդեսի ապարանքում». սա Հերովդես Մեծի կողմից Կեսարիայում կառուցած պալատն էր, որ հռոմեացի կառավարիչները գործածում էին իբրև բնակավայր:

վայելել և քո խնամքներով հասել բարեկարգ վիճակի: ³Դրա համար ամեն ձևով և ամեն տեղ քեզ երախտապարտ ենք և խորապես շնորհակալ: ⁴Բայց որպեսզի շատ չձանձրացնենք քեզ, խնդրում են, որ քո ազնվությամբ լսես, ինչ որ ասելու ենք համառոտ կերպով: ⁵Մեզ համար այս մարդն աղետ է: Մա ապստամբություն է հրահրում ամբողջ աշխարհի բոլոր հրեաների մեջ և նազովրեցիների աղանդի պարագլուխն է: ⁶Մա փորձեց նաև պղծել տաճարը: Ուստի բռնեցինք նրան և ուզեցինք դատել ըստ մեր Օրենքի, ⁷ բայց Լիսիաս հազարապետը վրա հասնելով՝ նրան մեծ բռնությամբ խլեց մեր ձեռքից ⁸ և հրամայեց, որ նրան ամբաստանողները գան քեզ մոտ: Այս բոլորի մասին կարող ես նրան էլ հարցաքննել և վերահասու լինել այն ամենին, ինչի համար մենք ամբաստանում ենք նրան:

⁹ Հրեաները միաբերան հաստատեցին՝ ասելով.

-Ասածները բոլորն էլ ճիշտ են:

Պողոսի պաշտպանողականը Ֆելիքսի առաջ

¹⁰ Երբ կառավարիչը գլխով նշան արեց, որ խոսի, Պողոսը հետևյալ ձևով պատասխանեց.

-Գիտեմ, որ երկար տարիներից ի վեր դատավորն ես եղել այս ազգի, դրա համար էլ հոժարությամբ եմ պատասխանում իմ դեմ եղած ամբաստանություններին:

¹¹ Կարող ես ստուգել, որ հազիվ տասներկու օր է, ինչ եկել եմ Երուսաղեմ՝ Աստծուն երկրպագելու համար: ¹² Եվ ոչ ոք չի տեսել որևէ մեկի հետ իմ վիճելը կամ ամբոխավարություն անելը ո՛չ տաճարում, ո՛չ ժողովարաններում և ո՛չ էլ քաղաքում. ¹³ ո՛չ էլ կարող են որևէ ապացույց բերել այն ամբաստանությունների մասին, որ հիմա անում են իմ դեմ: ¹⁴ Վստահեցնում եմ քեզ, որ ես էլ եմ պաշտում իմ հայրենի Աստծուն, բայց մի նոր ուղղությամբ, որ նրանք «աղանդ» են կոչում: Հավատում եմ այն ամենին, որ գրված է Օրենքում և մարգարեությունների մեջ, ¹⁵ և Աստծով այն հույսն ունեմ, ինչպես սրանք իրենք էլ են ընդունում, որ բոլոր մեռելները, թե՛ արդարները և թե՛ մեղավորները, հարություն են առնելու: ¹⁶ Դրա համար էլ աշխատում եմ, որ թե՛ Աստծու և թե՛ մարդկանց առաջ խիղճս միշտ մաքուր լինի: ¹⁷ Երկար տարիներ Երուսաղեմից հեռու մնալուց հետո եկա՝ դրամական օգնություն բերելու իմ ազգին և զոհեր մատուցելու: ¹⁸ Եվ ինձ տեսան տաճարում, երբ ծիսական արարողությամբ սրբվելուց հետո իմ զոհերն էի մատուցում: Ո՛չ ամբոխ կար ինձ մոտ, ո՛չ էլ իրարանցում, ¹⁹ բացի Ասիայի նահանգից եկած մի քանի հրեաներից, որոնք իրե՛նք պետք է գային, ներկայանային քեզ և ամբաստանեին ինձ, եթե մի բան ունեին իմ դեմ: ²⁰ Կամ հենց սրանք թող ասեն, թե ի՛նչ հանցանք գտան իմ մեջ, երբ կանգնած էի իրենց ատյանի առաջ, ²¹ բացի այն միակ հայտարարությունից, որ բարձրագույն արեցի նրանց առաջ՝ ասելով. «Այսօր ձեզնից դատվում եմ նրա համար, որ մեռելների հարության

^{24.6-8} Հին շատ ձեռ. չունեն «և ուզեցինք դատել ըստ մեր Օրենքի ... ամբաստանողները գան քեզ մոտ»:

^{24.17} «Դրամական օգնություն բերելու». ակնարկվում է այն հանգանակությունը, որ Երուսաղեմի քրիստոնյա համայնքի համար Պողոսը կատարեց Մակեդոնիայում, Աքայիայում, Գաղատիայում և Ասիայում: Այս մասին տե՛ս Հո 15.25-27, Ա Կր 16.1-4, Բ Կր 8.1-4:

^{24.17-18} Գրծ 21.17-28:

հույսն ունեմ»:

²² Ֆելիքսը, որ քրիստոնեական վարդապետության մասին ստույգ տեղեկություններ ուներ, հետաձգեց ունկնդրությունը՝ ասելով.

-Երբ Լիսիաս հազարապետը գա, կվճռեմ ձեր հարցը:

²³ Իսկ հարյուրապետին հրամայեց, որ Պողոսին որոշ ազատություն տալով՝ պահի հսկողության տակ և արգելք չլինի, որ բարեկամներն ու ծանոթները հոգան նրա կարիքները:

Երկու տարի քանտում

²⁴ Մի քանի օր անց Ֆելիքսը եկավ իր կնոջ՝ Դրուսիդայի հետ, որը հրեա էր, և կանչել տալով Պողոսին՝ նրանից ուզեց լսել Հիսուս Քրիստոսի հանդեպ եղած հավատի մասին: ²⁵ Բայց երբ Պողոսն սկսեց խոսել արդարության, ժուժկալության և գալիք դատաստանի մասին, Ֆելիքսը, վախից բռնված, ասաց.

-Դու առայժմ գնա՛, ուրիշ առիթով դարձյալ կկանչեմ քեզ:

²⁶ Միաժամանակ նա հույս ուներ, որ Պողոսը դրամ կտա իրեն: Դրա համար էլ հաճախ կանչել էր տալիս նրան և խոսում նրա հետ:

²⁷ Երկու տարին լրանալուց հետո Ֆելիքսին հաջորդեց Պորկիոս Ֆեստոսը: Ֆելիքսը հրեաներին մի վերջին շնորհ անելու համար Պողոսին քանտարկված թողեց:

25

Պողոսը Ֆեստոսի առաջ

¹ Կուսակալության իր պաշտոնին անցնելուց երեք օր հետո Ֆեստոսը Կեսարիայից գնաց Երուսաղեմ: ² Ավագ քահանաներն ու հրեա մեծամեծները նրան ներկայացրին իրենց ամբաստանությունները Պողոսի դեմ ³ և, իբրև շնորհ, նրան խնդրեցին, որ Պողոսին ուղարկի Երուսաղեմ. մյուս կողմից՝ իրենք դարան էին լարել, որ ճանապարհին նրան սպանեն: ⁴ Բայց Ֆեստոսը պատասխանեց, թե Պողոսը Կեսարիայում կպահվի, և թե ինքն էլ արդեն անմիջապես այնտեղ է վերադառնալու:

⁵ -Ուստի,- ասաց,- ձեզնից ովքեր կկարողանան, թող ինձ հետ Կեսարիա գան, և եթե այդ մարդը որևէ հանցանք ունի, թող այնտեղ՝ դ ամբաստանեն նրան:

⁶ Եվ հազիվ ութ կամ տասն օր այնտեղ մնալուց հետո դարձյալ իջավ Կեսարիա:

Հաջորդ օրը Ֆեստոսը, ատյան նստելով, հրամայեց, որ Պողոսին բերեն: ⁷ Երբ Պողոսը հասավ, Երուսաղեմից եկած հրեաները կանգնեցին նրա շուրջը և ամբաստանում էին նրան բազմաթիվ ծանր հանցանքներով, սակայն դրանք չէին կարողանում ապացուցել, ⁸ որովհետև Պողոսը պատասխանում էր՝ ասելով.

-Ես ոչ մի հանցանք չեմ գործել ո՛չ հրեական Օրենքի, ո՛չ տաճարի և ո՛չ էլ կայսրի

^{24.21} Գրծ 23.6:

^{24.24} «Դրուսիդա». Հերովդես Ագրիպպասի դուստրն էր, որ նախապես ամուսնացել էր Եմեսայի Ազիզոս թագավորի հետ և նրանից հափշտակվել Ֆելիքսի կողմից:

^{24.27} «Պորկիոս Ֆեստոսը» Պաղեստինի կառավարիչ է եղել 59-60թթ. և այդ պաշտոնում էլ մահացել է երկու տարի հետո:

դեմ:

⁹ Իսկ Ֆեստոսը, ուզելով հրեաներին շնորհ անել, Պողոսին հետևյալը առաջարկեց.
-Ուզո՞ւմ ես Երուսաղեմ գնալ և այդ հարցերի համար այնտեղ դատվել իմ ներկայությամբ:

¹⁰ Պողոսը պատասխանեց.

-Կայսրի աստանի առաջ եմ կանգնած և այնտեղ պետք է դատվեմ: Հրեաների դեմ ոչ մի հանցանք չեմ գործել, ինչպես ինքդ էլ լավ գիտես: ¹¹ Հետևաբար, եթե հանցավոր եմ և մահվան արժանի մի բան եմ արել, մեռնելուց չեմ վախենում: Բայց եթե անհիմն են իմ մասին նրանց արած ամբաստանությունները, որևէ մեկը չի կարող ինձ հանձնել սրանց: Կայսրի՞ն եմ բողոքում:

¹² Այն ժամանակ իր խորհրդականի հետ խորհրդակցելուց հետո Ֆեստոսն ասաց.

-Կայսրին բողոքեցիր, ուրեմն կայսրի մոտ պետք է գնաս:

Պողոսը Ագրիպպասի և Բերնիկեի առաջ

¹³ Որոշ ժամանակ հետո հրեաների Ագրիպպաս թագավորն ու նրա քույրը՝ Բերնիկեն, Կեսարիա եկան՝ Ֆեստոսին բարի գալուստ մաղթելու: ¹⁴ Մինչ նրանք երկար ժամանակ այնտեղ էին մնում, մի առիթով Ֆեստոսը թագավորի հետ խոսեց Պողոսի մասին՝ ասելով.

-Ֆելիքսի օրերից մնացած մի բանտարկյալ կա այստեղ: ¹⁵ Երբ Երուսաղեմում էի գտնվում, հրեաների ավագ քահանաներն ու երեցները նրա դեմ ամբաստանություն արեցին՝ խնդրելով, որ մահվան դատապարտվի: ¹⁶ Նրանց պատասխանեցի, որ հռոմեացիները սովորություն չունեն որևէ մեկին մահվան դատապարտելու, մինչև որ ամբաստանյալը իր դիմաց չունենա ամբաստանողներին, և պատեհություն չտրվի նրան՝ ամբաստանության դեմ պաշտպանելու ինքն իրեն:

¹⁷ Ուստի երբ ինձ հետ այստեղ եկան, առանց ժամանակ կորցնելու, հաջորդ օրն իսկ աստյան նստեցի և հրամայեցի, որ Պողոսին բերեն: ¹⁸ Ամբաստանողները եկան, բայց իմ մտքով անցած ծանր ամբաստանություններից ոչ մեկը չասացին նրա մասին, ¹⁹ այլ ինչ-ինչ խնդիրներ ունեին նրա հետ իրենց կրոնին վերաբերող, ինչպես նաև Հիսուս անունով մի մեռած մարդու վերաբերյալ, որի մասին Պողոսն ասում էր, թե ողջ է: ²⁰ Երբ տեսա, որ այդ խնդիրների քննությունն իմ գործը չէ, հարցրի, թե կկամենա՞ր Երուսաղեմ գնալ և այնտեղ դատվել այդ բաների համար: ²¹ Բայց երբ Պողոսը օգոստափառ կայսրի վճռին դիմելու կոչ ուղղեց բողոքելով, հրամայեցի, որ նրան պահեն, մինչև որ կայսրի մոտ ուղարկեմ նրան:

²² Ագրիպպասը Ֆեստոսին ասաց.

-Ես էլ կցանկանայի լսել այդ մարդուն:

-Վաղը ևեթ կլսես նրան,-պատասխանեց Ֆեստոսը:

²³ Հաջորդ օրը, երբ Ագրիպպասն ու Բերնիկեն մեծ շուքով եկան և հազարապետների

^{25.11} «Կայսրին եմ բողոքում», սա հռոմեական քաղաքացիություն ունեցողների հատուկ իրավասությունն արտահայտող բանաձև էր, որ նշ էր «Պահանջում եմ, որ կայսրն ինձ դատի Հռոմում»:

^{25.13} «Ագրիպպաս թագավորը» Ագրիպպաս Երկրորդն է՝ Հերովդես Ագրիպպասի որդին և Բերնիկեի ու Դրուսիդայի եղբայրը:

ու քաղաքի երևելիների հետ մտան ունկնդրության սրահը, Ֆեստոսի հրամանով բերեցին Պողոսին: ²⁴ Ֆեստոսն ասաց.

-Ագրիպպա՛ս արքա և դուք բոլորդ, որ այստեղ ներկա եք մեզ հետ. տեսնում եք այս մարդուն, որի համար հրեաները մեծ բազմությամբ դիմեցին ինձ թե՛ Երուսաղեմում և թե՛ այստեղ՝ աղաղակելով, որ այս մարդն այլևս չպետք է ողջ մնա: ²⁵ Վերահասու եղա, որ նա մահվան արժանի ոչինչ չի արել: Բայց երբ ինքն օգոստափառ կայսրի վճռին դիմելու կոչ ուղղեց, որոշեցի, որ ուղարկեմ նրան: ²⁶ Միայն թե տակավին հստակ չգիտեմ, թե այս մասին ի՛նչ գրեմ օգոստափառ տիրոջս: Ահա թե ինչու նրան բերեցի ձեր առաջ և հատկապես քո՛ առաջ, Ագրիպպա՛ս արքա, որպեսզի վերստին հարցաքննելով՝ գրելու ինչ-որ բան ունենամ, ²⁷ որովհետև ինձ անպատեհ է թվում ուղարկել մի բանտարկյալի՝ առանց նրա մասին որևէ հանցանք նշելու:

26

Պողոսի պաշտպանողականը Ագրիպպասի առաջ

¹ Ագրիպպասն ասաց Պողոսին.

-Թույլ է տրվում քեզ խոսել քո մասին:

Այն ժամանակ Պողոսը, ձեռքը պարզելով, սկսեց ասել իր պաշտպանողական խոսքը.

-Ես ինձ բախտավոր եմ համարում, Ագրիպպա՛ս արքա, որ այսօր քո առաջ եմ պաշտպանում իմ անձը՝ իմ մասին հրեաների արած բոլոր ամբաստանությունների դեմ, ³ մանավանդ նրա համար, որ քաջատեղյակ ես հրեաների բոլոր կրոնական սովորություններին և խնդիրներին: Հետևաբար աղաչում եմ, որ համբերությամբ լսես ինձ:

⁴ Բոլոր հրեաները գիտեն իմ կենսագրությունը իմ մանկությունից ի վեր: Գիտեն, որ հենց սկզբից ինչպես եմ ապրել թե՛ իմ ծննդավայրում և թե՛ Երուսաղեմում: ⁵ Նրանք դարձյալ գիտեն, եթե ուզենան այդ մասին վկայել, որ ես, որպես փարիսեցի, պատկանել եմ մեր կրոնի խստագույն գործադրությունը պահանջող մի խմբակցության: ⁶ Եվ հիմա, կանգնած ատյանի առաջ, դատվում եմ այն հույսի համար, որ Աստված խոստացավ տալ մեր հայրերին, ⁷ և որին հասնելու համար մեր տասներկու ցեղերը գիշեր-ցերեկ անդադար աղոթում են հույսով: Այդ հույսի համար է, ո՛վ արքա, որ ամբաստանվում եմ հրեաների կողմից: ⁸ Ինչո՞ւ է անհավատալի թվում ձեզ, որ Աստված հարություն է տալիս մեռելներին: ⁹ Ես ինքս էլ, օրինակ, խորհում էի ինքս ինձ, որ ամեն ձևով պետք է պայքարեմ Հիսուս Նազովրեցու անվան դեմ: ¹⁰ Եվ այդպես էլ արեցի Երուսաղեմում: Ավագ քահանաներից իշխանություն ստացած լինելով՝ սրբերից շատերին արգելափակել էի տալիս բանտերում և նրանց սպանությանը իմ հավանությունն էի տալիս: ¹¹ Բոլոր ժողովարաններում շատ անգամ

^{26.5} Գրծ 23.6, Փպ 3.5:

^{26.8} Բ Մկ 7.9:

^{26.9-11} Գրծ 8.3, 22.4-5:

^{26.10} «Մրբեր». ՆԿ Քրիստոսի հետևորդները սուրբ են կոչվում՝ իբրև Աստծուն ընծայվածներ, իբրև

նրանց պատժել տալով՝ ստիպում էի, որ ուրանան Հիսուսին, և նրանց դեմ անսահման մոլուցքով տարված՝ մինչև անգամ մեր երկրից դուրս գտնվող քաղաքներում էլ էի հալածում նրանց:

Պողոսը պատմում է իր դարձի մասին

(Գրծ 9.1-19, 22.6-16)

¹² -Հենց այդ նպատակով էլ, երբ ավագ քահանաների տված իշխանությամբ և նրանց հանձնարարությամբ Դամասկոս էի գնում, ¹³ ճանապարհին, կեսօրվա մոտ, ո՛վ արքա, տեսա, որ երկնքից արեգակի լույսից ավելի ուժեղ մի լույս փայլատակեց իմ և ինձ ուղեկցողների շուրջը: ¹⁴ Երբ բոլորս էլ գետին ընկանք, լսեցի մի ձայն, որ եբրայերեն ասում էր ինձ. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում ինձ: Չես կարող խթանին քացի տալ»: ¹⁵ Ես հարցրի. «Ո՞վ ես, Տե՛ր»: Եվ Տերը պատասխանեց. «Ես այն Հիսուսն եմ, որին դու հալածում ես: ¹⁶ Հիմա վե՛ր կաց, ոտքի՛ կանգնիր, որովհետև քեզ երևացի, որպեսզի քեզ դարձնեմ ինձ օգնական և վկա քո տեսածներին և դեռ տեսնելիքներին, որոնցով պիտի երևամ քեզ: ¹⁷ Քեզ պիտի ազատեմ այս ժողովրդի ձեռքից, ինչպես նաև հեթանոսներից, որոնց մեջ պիտի ուղարկեմ քեզ, ¹⁸ որպեսզի բանաս նրանց այքերը, նրանց խավարից դեպի լույս դարձնես և Սատանայի իշխանությունից՝ դեպի Աստված, որպեսզի թողություն ստանան իրենց մեղքերին և հավատալով ինձ՝ Աստծու ժողովրդի հետ բաժին ունենան:

Պողոսը տալիս է իր ձերբակալության պատճառը

¹⁹ -Ուստի, ո՛վ Ագրիպայա արքա, չուզեցի անհնազանդ գտնվել երկնային տեսիլքին ²⁰ և նախ Դամասկոսում և Երուսաղեմում բնակվողներին, ապա ամբողջ Հրեաստանի գավառներում գտնվողներին և հեթանոսներին քարոզեցի, որ ապաշխարեն և դառնան դեպի Աստված ու իրենց գործերով ցույց տան, թե ապաշխարել են: ²¹ Այս պատճառով է, որ հրեաները ձերբակալեցին ինձ, երբ տաճարում էի գտնվում, և փորձեցին սպանել: ²² Մակայն մինչև այսօր Աստված օգնեց ինձ, և ահա կանգնած եմ այստեղ՝ մեծին ու փոքրին վկայելու համար: Իմ ասածների մեջ չկա մի բան, որ ասած չլինեն մարգարեներն ու Մովսեսը՝ իբրև ապագայում կատարվելիք պատգամներ, ²³ թե Քրիստոսը չարչարվելու էր, թե առաջինն ի՛նքն էր հարություն առնելու մեռելներից՝ փրկության լույսը տալու այս ժողովրդին և բոլոր ազգերին:

Պողոսը կոչ է ուղղում Ագրիպայասին՝ հավատալու Քրիստոսին

²⁴ Պողոսի պաշտպանական վերջին խոսքերի վրա Ֆեստոսը գոռաց.

-Խելքդ կորցրել ես, Պողո՛ս, շատ կարդալը խելքդ թոցրել տարել է:

²⁵ Պողոսը պատասխանեց.

-Խելքս չեմ կորցրել, ո՛վ գերագանցող Ֆեստոս, ընդհակառակը, ճշմարտության և տրամաբանության լեզվով եմ խոսում: ²⁶ Այս իրողություններին տեղյակ է Ագրիպայաս

Աստծու ընտրյալ ժողովուրդ (տե՛ս նաև 20.32-ի ծնթ):

՝26.20 Գրծ 9.20, 28-29:

՝26.23 ա Ա Կր 15.20: ք Ես 42.6, 49.6:

արքան, դրա համար էլ համարձակ խոսում եմ նրա առաջ: Չեմ կարծում, որ այս բաներից որևէ մեկը վրիպած լինի նրա ուշադրությունից, քանի որ մի որևէ խուլ անկյունում չէ, որ պատահեցին այս բաները: ²⁷ Դու հավատո՞ւմ ես մարգարեներին, Ագրիպպա՛ս արքա. գիտե՛մ, որ հավատում ես:

²⁸ Ագրիպպասը Պողոսին ասաց.

-Քիչ է մնում, որ ինձ էլ համոզես և քրիստոնյա դարձնես:

²⁹ Եվ Պողոսն ասաց.

-Քիչ է մնում, թե շատ, չգիտեմ, բայց Աստծուն կիսնդրեի, որ ոչ միայն դու, այլ բոլոր նրանք, որ այսօր լսում են ինձ, լինեն ճիշտ ինձ նման, սակայն առանց այս շղթաների:

³⁰ Թագավորը ոտքի կանգնեց: Նրան հետևեցին կառավարիչը, Բերնիկեն և բոլոր նրանք, որ նստել էին նրանց հետ: ³¹ Եվ մինչ դուրս էին ելնում սրահից, իրար հետ խոսելով ասում էին.

-Այս մարդը ոչինչ չի արել, որ արժանի լիներ մահվան կամ բանտարկության:

³² Իսկ Ագրիպպասը Ֆեստոսին ասաց.

-Կարելի էր ազատ արձակել նրան, եթե կայսրին բողոքած չլիներ:

27

Պողոսը նավով ճանապարհ է ընկնում դեպի Հռոմ

¹ Երբ որոշվեց, որ նավով մեկնենք դեպի Իտալիա, Պողոսին և մի քանի այլ բանտարկյալների հանձնեցին կայսերական գնդից Հուլիոս անունով մի հարյուրապետի: ² Բարձրանալով ադրամիտական մի նավ, որ Ասիայի նահանգի կողմերից էր անցնելու, ճանապարհ ընկանք: Մեզ հետ էր նաև Մակեդոնացի Արիստարքոսը՝ Թեսաղոնիկեից:

³ Հաջորդ օրը, երբ հասանք Սիդոն, Հուլիոսը, մարդասիրություն ցուցաբերելով, Պողոսին թույլատրեց, որ գնա բարեկամների մոտ, որպեսզի հոգան նրա կարիքները:

⁴ Այնտեղից ճանապարհ ընկնելով՝ Կիպրոսի ներքևի կողմից բարձրացանք վեր, քանի որ քամին փչում էր մեր դեմից: ⁵ Ապա Կիլիկիայի և Պամփիլիայի մոտով կտրել անցնելով ծովը՝ հասանք Լիկիայի նահանգի Միռա քաղաքը: ⁶ Այնտեղ հարյուրապետը ալեքսանդրիական մի նավ գտավ, որ Իտալիա էր գնում, և մեզ բարձրացրեց այդ նավը: ⁷ Բազում օրեր նավարկեցինք շատ դանդաղ և դժվարությամբ հասանք Կնիդոսի մոտերքը: Բայց քամին թույլ չտվեց մեզ, որ ուղիղ շարունակենք, ուստի Մաղմոնիա հրվանդանի կողմով նավարկեցինք դեպի հարավ՝ դեպի Կրետե:

⁸ Մեծ դժվարությամբ եզերելով կղզին՝ հասանք մի տեղ, որ կոչվում է Գեղեցիկ նավահանգիստ, և որի մոտ էր գտնվում Լասեա քաղաքը:

Փոթորիկը ծովում

⁹ Բավականին ժամանակ էինք կորցրել, և նավարկությունն էլ դարձել էր վտանգավոր, որովհետև աշնան սկզբին հանդիպող ծոմապահության օրն էլ արդեն անցել էր: Պողոսը հորդորում էր նրանց՝ ¹⁰ ասելով.

^{27.9} «Ծոմապահության օրը». սա մի ակնարկություն է եբրայական տոներից Քավության օրվան, որը

-Ո՛վ մարդիկ, տեսնում եմ, որ այժմ նավարկելը մեծ վնաս է հասցնելու ոչ միայն նավին և բեռներին, այլ վտանգի է ենթարկվելու նաև մեր կյանքը:

¹¹ Սակայն հարյուրապետը նավապետին և նավատիրոջն ավելի էր վստահում, քան Պողոսի խոսքերին: ¹² Եվ քանի որ նավահանգիստն էլ շատ հարմար չէր ձմեռելու համար, ճանապարհորդների մեծ մասը համաձայն էր, որ այնտեղից ճանապարհ ընկնեն ու փորձեն հասնել Փյունիկե ու ձմեռեն Կրետեի այդ նավահանգստում, որը նայում էր դեպի հարավ-արևմուտք և հյուսիս-արևմուտք:

¹³ Երբ հարավային մեղմ քամին սկսեց փչել, ենթադրելով, թե կկարողանան հասնել որոշված տեղը, վեր քաշեցին խարիսխները և սկսեցին նավարկել՝ առանց հեռանալու Կրետեի ծովափից: ¹⁴ Բայց շատ չանցած՝ կղզու կողմից բարձրացավ մի փոթորկալից քամի, որ ծանոթ է «հյուսիսարևելյան քամի» անունով: ¹⁵ Նավը փոթորկի բռնվեց, և քանի որ հնարավոր չէր քամու դեմ գնալ. թողեցինք, որ նավը քամուց քշվի: ¹⁶ Մինչ անցնում էինք Կլավդա կոչված մի փոքրիկ կղզու հարավային կողմով, հազիվ կարողացանք փրկել մակույկը, ¹⁷ որը նավաստիները քաշեցին վեր: Հետո ապահովության համար պարաններով կապեցին նավի մեջքը: Եվ վախենալով, որ կարող են գնալ և խրվել Սիրտիսի ծանծաղուտի մեջ, իջեցրին առագաստը և այնպես հանձնվեցին քամուն:

¹⁸ Փոթորիկը շարունակում էր հողմածեծ անել մեզ, ուստի հաջորդ օրը բեռները ծովը թափեցին, ¹⁹ իսկ երրորդ օրը իրենք իրենց ձեռքով ծովը նետեցին նավի գործիքների մի մասը: ²⁰ Մի քանի օր ոչ արևի երեսը տեսանք և ոչ էլ աստղերի, իսկ փոթորիկը շարունակվում էր նույն թափով, այնպես որ կորցրինք փրկության ամեն մի հույս:

²¹ Երկար ժամանակից ի վեր ոչ ոք բան չէր կերել: Ուստի Պողոսը, կանգնելով նրանց մեջտեղում, ասաց նրանց.

-Ո՛վ մարդիկ, պետք է լսեիք ինձ, և Կրետեից չելնեինք: Այն ժամանակ այս նեղությունն ու վնասը չէինք կրի: ²² Իսկ հիմա թելադրում եմ ձեզ, որ քաջալերվեք: Ձեզնից որևէ մեկի կյանքին վնաս չպիտի հասնի, միայն նա՛վը պիտի խորտակվի. ²³ որովհետև գիշերը Աստծու հրեշտակը, այն Աստծու, որին պատկանում եմ ես ու ծառայում, երևաց ինձ ²⁴ և ասաց. «Մի՛ վախեցիր, Պողո՛ս, դու դեռ կայսրի առաջ էլ պետք է վկայություն տաս: Եվ ահա Աստված էլ քեզ շնորհ արեց, որ քեզ հետ նավարկողները բոլորն էլ ողջ մնան»: ²⁵ Հետևաբար, քաջալերվե՛ք մարդիկ, որովհետև հավատում եմ Աստծուն. կլինի ճիշտ այնպես, ինչպես նա ինձ ասաց: ²⁶ Մենք պետք է ընկնենք մի կղզու ափ:

Ազատում նավարկությունից

²⁷ Տասնչորսերորդ գիշերը, մինչ օրորվում էինք Ադրիական ծովի ջրերի վրա, գիշերվա կեսին նավաստիներին թվաց, թե մոտենում ենք ցամաքի: ²⁸ Խորաչափ գործիքը ցած գցելով՝ տեսան, որ խորությունը շուրջ քառասուն մետր է: Մի քիչ էլ

ծումապահության միակ պարտադիր օրն էր և կատարվում էր եբրայական օրացույցի 7-րդ (Թիշրի) ամսի 10-րդ օրը, այսինքն՝ սեպտեմբերի վերջերին և հոկտեմբերի առաջին օրերին:

ՉԲ.17 «Միրտիսի ծանծաղուտի մեջ». Միրտիս էր կոչվում ներկայիս Լիբիայի և Թունիսի միջև ընկած ծոցը, որի ափերը վտանգավոր ծանծաղուտ էին նավերի համար:

առաջանալուց հետո կրկին գցեցին, և գործիքը երեսուն մետր ցույց տվեց:

²⁹ Մարսափած, որ չլինի թե հանկարծ ժայռերի խփվենք, նավի հետևի կողմից չորս խարիսխներ ցած գցեցին և անձկությամբ սպասում էին, որ օրը լուսանա: ³⁰ Քիչ հետո նավաստիները մտածեցին փախչել նավից և մակույկը ծով իջեցրին՝ պատճառաբանելով, որ առջևի կողմից էլ են խարիսխներ գցելու: ³¹ Պողոսը հարյուրապետին և զինվորներին ասաց.

- Եթե այս մարդիկ նավի մեջ չմնան, դուք չեք կարող փրկվել:

³² Այն ժամանակ զինվորները մակույկի պարանները կտրեցին և թողեցին, որ գնա:

³³ Երբ օրն սկսեց լուսանալ, Պողոսը բոլորին խնդրեց, որ մի բան ուտեն՝ ասելով.

- Այսօր տասնչորսերորդ օրն է, որ դուք սպասողական վիճակում քաղցած եք մնում և ոչինչ չեք կերել: ³⁴ Աղաչում եմ ձեզ, որ մի բան ուտեք, որովհետև փրկվելու համար կարիք ունեք սննդի: Ձեզնից ոչ ոքի զլխից մի մագ անգամ չի կորչելու:

³⁵ Այս ասելուց հետո հաց վերցրեց, բոլորի ներկայությամբ շնորհակալություն հայտնեց Աստծուն, կտրեց այն և սկսեց ուտել: ³⁶ Այն ժամանակ բոլորն էլ քաջալերվեցին, և իրենք էլ սկսեցին ուտել: ³⁷ Նավի մեջ բոլորս միասին երկու հարյուր յոթանասունվեց հոգի էինք: ³⁸ Ուտել-կշտանալուց հետո, ցորենը ծովը թափելով, թեթևացրին նավը:

³⁹ Երբ լույսը բացվեց, նավաստիները չիմացան, թե երևացողն ի՞նչ ցամաք է: Բայց նկատեցին ծովափ ունեցող մի ծոց, և ուզում էին այնտեղ հասցնել նավը, եթե հնարավոր լիներ: ⁴⁰ Խարիսխները կտրեցին և դրանք բաց թողեցին ծովի մեջ: Ապա քանդեցին ղեկերի պարանները և առաջամասի առագաստը բացեցին քամու դիմաց, որ փչում էր դեպի ծովափ: ⁴¹ Մակայն նավը, հանդիպելով երկու հոսանքների միջև գտնվող մի ծանծաղուտի, նստեց կողի վրա: Առաջամասը, ավազի մեջ խրված, անշարժ մնաց, մինչ հետևի մասն սկսվեց քայքայվել ալիքների սաստկությունից: ⁴² Զինվորները մտածեցին սպանել բանտարկյալներին, որպեսզի չլինի թե որևէ մեկը լողալով փախչի: ⁴³ Բայց որովհետև հարյուրապետն ուզում էր Պողոսին ազատել, արգելք եղավ նրանց ծրագրերին. հրամայեց, որ նախ լողալ իմացողները նետվեն ջուրը և ցամաք դուրս գան, ⁴⁴ իսկ մյուսները հետևեն նրանց՝ ոմանք տախտակներից, ոմանք էլ նավի այլ բեկորներից կառչելով: Եվ այդպես բոլորն էլ փրկվեցին ու ցամաք ելան:

28

Պողոսը Մելիտե կղզում

¹ Փրկվելուց հետո իմացանք, որ կղզու անունը Մելիտե է: Տեղացիները բացառիկ մարդասիրություն ցուցաբերեցին մեր նկատմամբ: ² Նրանք խարույկ վառեցին և մեզ բոլորիս ընդունեցին նրա շուրջը, որովհետև անձրևն սկսվել էր, և ցուրտ էր անում: ³ Պողոսը չոր ճյուղերի մի խուրձ հավաքեց և խարույկի մեջ նետելու վրա էր, երբ կրակի տաքության պատճառով խրձի միջից մի իժ դուրս եկավ ու փաթաթվեց նրա

ձեռքին: ⁴Տեղացիները երբ տեսան Պողոսի ձեռքից կախված իժը, սկսեցին միմյանց ասել:

-Հաստատապես մարդասպան է այս մարդը, որը թեպետ ծովից փրկվեց, բայց աստվածային արդարությունը թույլ չի տալիս, որ ողջ մնա:

⁵Պողոսը, ձեռքը թափ տալով, իժին գցեց կրակի մեջ՝ առանց վնասվելու, ⁶մինչդեռ տեղացիներն սպասում էին, որ նա կուռչի կամ հանկարծ կընկնի ու կմեռնի: Բայց բավական ժամանակ սպասելուց հետո, երբ տեսան, որ անսովոր որևէ բան չպատահեց նրան, փոխեցին իրենց կարծիքը և սկսեցին ասել, թե մի աստված է:

⁷Այդ տեղի շրջակայքում կային ագարակներ, որոնք պատկանում էին Պոպլիոս անունով մի մարդու, որը կղզու գլխավորն էր: Այս մարդը, երաշխիք տալով, մեզ ընդունեց իր տանը և երեք օր սիրով հյուրասիրեց: ⁸Պոպլիոսի հայրը հիվանդ պատկած էր ջերմով և թունավոր լուծով: Պողոսը մտավ նրա սենյակը, ձեռքերը նրա գլխին դնելով՝ աղոթեց և բժշկեց նրան: ⁹Դրանից հետո կղզու մյուս հիվանդները ևս սկսեցին գալ և բժշկվեցին: ¹⁰Այս պատճառով էլ ամեն տեսակ պատիվներով պատվեցին մեզ, և երբ պատրաստվում էինք մեկնելու, մեզ տվեցին, ինչ որ պետք էր:

Մելիտեից դեպի Հռոմ

¹¹Երեք ամիս հետո բարձրացանք ալեքսանդրիական մի նավ, որը ձմեռել էր կղզում և կրում էր Երկվորյակ չաստվածների նշանը: ¹²Իջանք Սիրակուսա և երեք օր մնացինք այնտեղ: ¹³Ապա մեկնեցինք այնտեղից և մի պտույտ կատարելով՝ հասանք Ռեգիոն: Մի օր հետո, երբ սկսեց փչել հարավային քամին, երկու օրում եկանք Պատիոդոս, ¹⁴որտեղ գտանք քրիստոնյա եղբայրների և նրանց խնդրանքի վրա մեկ շաբաթ մնացինք այնտեղ: Այսպես, ի վերջո, ուղղվեցինք դեպի Հռոմ: ¹⁵Հռոմի քրիստոնյաները, լսած լինելով մեր մասին, մեզ դիմավորելու եկան մինչև Ապփիոսի շուկան և Երեք պանդոկները: Պողոսը, տեսնելով նրանց, շնորհակալություն հայտնեց Աստծուն և քաջալերվեց:

¹⁶Երբ Հռոմ մտանք, հարյուրապետը զորապետին հանձնեց բանտարկյալներին, իսկ Պողոսին թույլ տվեց, որ առանձին բնակվի իր պահապան զինվորի հսկողության տակ:

Պողոսը քարոզում է Հռոմում

¹⁷Երեք օր հետո Պողոսը կանչել տվեց հրեաների գլխավորներին: Եվ երբ նրանք եկան, ասաց նրանց.

-Եղբայրներ, ես մեր ժողովրդի կամ մեր հայրենի սովորությունների դեմ առանց մի բան գործած լինելու՝ ձերբակալվեցի Երուսաղեմում և հանձնվեցի հռոմեացիների

^{28.11} «Երկվորյակ չաստվածներ». հունական դիցաբանության մեջ այս անունով ծանոթ էին Կաստոր և Պոլլուքս չաստվածները, որոնք երկվորյակ եղբայրներ էին, և նավաստիները նրանց համարում էին իրենց պաշտպանները:

^{28.15} «Ապփիոսի շուկան» և «Երեք պանդոկները». սրանք երկու փոքրիկ քաղաքներ էին. առաջինը Հռոմից հեռու էր շուրջ 65կմ, իսկ երկրորդը՝ 50կմ:

^{28.16} Հնագույն ձեռ. չունեն «Հարյուրապետը զորապետին հանձնեց բանտարկյալներին»:

ձեռքը, ¹⁸ որոնք ինձ հարցաքննելուց հետո ուզեցին ազատ արձակել, քանի որ իմ մեջ մահվան արժանի ոչ մի հանցանք չգտան: ¹⁹ Սակայն երբ հրեաները հակառակվեցին դրան, ստիպված եղա բողոքել կայսրին՝ առանց մեր ազգի դեմ որևէ ամբաստանություն ունենալու: ²⁰ Հենց այս պատճառով էլ խնդրեցի տեսնել ձեզ և խոսել ձեզ հետ, որովհետև այս շղթաները կրում եմ ա՛յն անձի համար, որը Իսրայելի հույսն էր:

²¹Նրանք ասացին Պողոսին.

-Մենք քո մասին Հրեաստանից ոչ մի նամակ չենք ստացել, և մեր եղբայրներից էլ ոչ մեկը չի եկել ու վատ բան չի պատմել կամ ասել քո մասին: ²² Բայց ուզում ենք իմանալ քո կարծիքը, որովհետև այդ աղանդի մասին մեզ այնքանն է հայտնի, որ դրա դեմ ամեն տեղ հակառակություն կա:

²³ Հետո նրանք ժամադրվեցին Պողոսի հետ, և որոշված օրը ավելի մեծ թվով մարդիկ եկան նրա զբաղեցրած բնակարանը: Նա առավոտից մինչև երեկո նրանց հետ խոսում էր Աստծու արքայության մասին և Մովսեսի Օրենքից ու մարգարեներից վկայություններ բերելով՝ փորձում էր համոզել նրանց, որ հավատան Հիսուսին: ²⁴ Նրա խոսքերը համոզեցին ոմանց, իսկ ուրիշները չհավատացին: ²⁵ Եվ մինչ նրանք այդպես հեռանում էին առանց իրար հետ համաձայն լինելու, Պողոսն այս մի խոսքն էլ ավելացրեց.

-Շատ ճիշտ են այն խոսքերը, որ Սուրբ Հոգին Եսայի մարգարեի բերանով ուղղեց մեր հայրերին՝ ²⁶ ասելով.

«Գնա՛ և ասա՛ այս ժողովրդին.-

անդադար լսելու եք, բայց չեք հասկանալու,

շարունակ նայելու եք, բայց չեք տեսնելու,՝

²⁷ որովհետև այս ժողովրդի միտքը թանձրացել է.

նրանք իրենց ականջները խցել են

և իրենց աչքերը փակել,

որպեսզի չլինի թե իրենց աչքերը տեսնեն,

կամ ականջները լսեն,

իրենց միտքը հասկանա, ու դարձի գան,

և ես բժշկեմ նրանց»:

²⁸ -Հետևաբար,- եզրակացրեց Պողոսը,- ուզում եմ, որ գիտենաք, որ Աստված այժմ փրկության այս պատգամն ուղարկում է հեթանոսներին, և նրանք պիտի լսեն:

²⁹ Այս խոսքի վրա հրեաները հեռացան նրանից՝ բուռն կերպով վիճելով միմյանց հետ:

³⁰ Ամբողջ երկու տարի Պողոսը մնաց իր վարձած բնակարանում, որտեղ ընդունում էր բոլոր նրանց, ովքեր գալիս էին իր մոտ: ³¹ Առանց որևէ արգելքի, ամենայն համարձակությամբ նա քարոզում էր Աստծու արքայությունը և ուսուցանում Տեր

28.19 Գրծ 25.11:

28.26-27 Ես 6.9-10 [LXX]:

28.29 Հուն. շատ ձեռ., ինչպես և հայ. մի շարք ձեռ. այս համարը չունեն:

Հիսուս Քրիստոսի մասին:
ROM
ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻՆ

Քրիստոսի հարությունից մի քանի տարի անց քրիստոնեությունն արդեն սկսել էր արմատավորվել Հռոմում: Պողոսը, որ Աստծուց էր ստացել հեթանոսների մեջ քարոզելու առաքելությունը, ուզում էր գնալ նաև Հռոմ և մինչև Իսպանիա: Այս ճանապարհորդությունը նախապատրաստելու համար էլ նա գրում է այս նամակը Հռոմի քրիստոնյաներին (15.24,28): Նամակի հիմնական նպատակն է՝ բացահայտել հավատի և շնորհի դերը քրիստոնյա մարդու կյանքում:

Հռոմի եկեղեցուն ուղղած ողջունի խոսքից և հավատացյալների համար աղոթելուց հետո Պողոսն իր նպատակը հստակորեն հայտնում է նամակի սկզբում՝ ասելով. «Աստված մարդկանց արդար է համարում իրենց հավատով, որպեսզի հավատան, ինչպես որ գրված է. "Արդարն իր հավատով է փրկվելու"» (1.17):

Ամբողջ մարդկությունը, հրեա թե հեթանոս, պետք է արդարանա Աստծու առաջ, որովհետև բոլորն էլ գտնվում են մեղքի իշխանության տակ: Աստծու համար արդար ենք համարվում Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր ունեցած հավատով: Պողոսն այնուհետև նկարագրում է նոր կյանքը, որ մարդը ձեռք է բերում Քրիստոսին միանալով: Հավատացյալը Աստծու հետ խաղաղություն է ունենում և մեղքի ու մահվան իշխանությունից ազատագրվում է Աստծու Հոգու շնորհիվ: 5-8-րդ գլուխներում Պողոսը բացատրում է Աստծու Օրենքի նպատակը և Աստծու Հոգու զորությունը հավատացյալի կյանքում: Ապա առաքյալը քննում է այն հարցը, թե հրեաներն ու հեթանոսները ի՞նչ տեղ են գրավում Աստծու ծրագրի մեջ: Նա եզրակացնում է, որ հրեաների կողմից Քրիստոսի մերժվելն Աստծու ծրագրի մի մասն էր կազմում, որպեսզի Հիսուս Քրիստոսի միջոցով ամբողջ մարդկությունն արժանի լիներ Աստծու շնորհին: Պողոսը հավատում է, որ հրեաները մշտապես չեն մերժելու Հիսուսին, և կգա մի ժամանակ, երբ կընդունեն նրան: Վերջապես, Պողոսը գրում է, թե ինչպիսին պիտի լինի քրիստոնյայի կյանքը՝ հիմնված սիրո սկզբունքի վրա: Առաքյալը քննում է զանազան հարցեր, ինչպես՝ Աստծու պաշտամունքը և ծառայությունը, քրիստոնյաների պարտավորությունները պետության և իրար նկատմամբ, ինչպես նաև խղճի վերաբերյալ այլ հարցեր: Նամակն ավարտվում է անձնական պատգամներով և զոհաբանական խոսքերով:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան և հիմնական մտածում (1.1-17):
- Մարդու փրկության կարիքը (1.18-3.20):
- Աստծու փրկության ծրագիրը (3.21-4.25):
- Նոր կյանք Քրիստոսով (5.1-8.39):
- Իսրայելի ժողովուրդն Աստծու ծրագրի մեջ (9.1-11.36):

- Քրիստոնեական կենցաղ (12.1-15.13):
- Եզրակացություն և բարևներ (15.14-16.27):

1

Ողջույն

¹ Ես՝ Պողոսս, ծառան եմ Հիսուս Քրիստոսի, որը կանչեց ինձ՝ դառնալու իր առաքյալը և պաշտոն տվեց ինձ՝ քարոզելու Աստծու Ավետարանը: ² Սուրբ գրքերում արձանագրված է, որ Աստված նախապես իր մարգարեների միջոցով խոստացավ տալ այս ավետիսը, ³ որ վերաբերում է իր Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որը, իբրև մարդ, ծնվեց Դավթի սերնդից, ⁴ բայց հայտնվեց իբրև Աստծու Որդի, երբ իր Սուրբ Հոգու զորությամբ հարություն առավ մեռելներից: ⁵ Նրա միջոցով Աստված տվեց ինձ առաքյալ լինելու շնորհը, որպեսզի Քրիստոսի անվանը հավատալու և հնազանդվելու առաջնորդեմ բոլոր ազգերին, ⁶ որոնց թվում դուք էլ կանչվեցիք՝ Հիսուս Քրիստոսին պատկանելու համար:

⁷ Ողջոյն բոլորիդ, որ բնակվում եք Հռոմում, ձեզ, որոնց Աստված սիրեց և կանչեց՝ լինելու իր սուրբ ժողովուրդը: Թող Աստված՝ մեր Հայրը, և Տեր Հիսուս Քրիստոսը ձեզ պարգևեն շնորհ և խաղաղություն:

Պողոսի աղոթքն ու ցանկությունը

⁸ Նախ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով շնորհակալություն եմ հայտնում իմ Աստծուն ձեր բոլորի համար, որովհետև ձեր հավատի մասին խոսվում է ամբողջ աշխարհում:

⁹ Վկա է Աստված, որին ես ծառայում եմ իմ հոգով՝ քարոզելով իր Որդու Ավետարանը, թե ինչպես անդադար հիշում եմ ձեզ ¹⁰ և միշտ իմ աղոթքների մեջ խնդրում, որ Աստծու կամքով ինձ հաջողվի գալ ձեզ մոտ, ¹¹ որովհետև շատ եմ ցանկանում տեսնել ձեզ, որպեսզի ձեզ փոխանցեմ որևէ հոգևոր պարգև՝ ձեզ ամրապնդելու համար:

¹² Այսինքն՝ լինելով ձեր մեջ՝ քաջալերենք միմյանց այն հավատով, որ ունենք դուք և ես: ¹³ Բայց ուզում եմ, որ գիտենաք, եղբայրներ ր, որ բազմիցս մտադրվեցի գալ ձեզ մոտ, սակայն մինչև այժմ արգելքներ եղան, որովհետև ուզում եմ ձեր մեջ վաստակ ունենալ, ինչպես ունեմ ուրիշ ազգերի մեջ: ¹⁴ որովհետև ինչպես պարտական զգացի ինձ թե՛ հույնի և թե՛ ոչ հույնի, թե՛ իմաստունի և թե՛ անմիտի հանդեպ, ¹⁵ այնպես էլ պարտական եմ զգում հոժարությամբ ավետարանելու նաև ձեզ, որ Հռոմում եք:

Ավետարանի զորությունը

¹⁶ Այս ասում եմ, որովհետև ամոթ չեմ համարում Ավետարանը: Ընդհակառակը, այն Աստծու զորությունն է, որ փրկում է ամեն հավատացողի, նախ՝ հրեայի, ապա՝ նաև ոչ

^{1.13} Գրծ 19.21:

^{1.14} «Ոչ հույնի», բոց՝ «բարբարոսի»: Նոր Կտակարանը, ժամանակի դրությունից ելնելով, հույն է կոչում հունարենն ու հունական մշակույթը որդեգրած ժողովուրդներին: Իսկ Հռոմեական կայսրության սահմաններից դուրս մնացած մյուս բոլոր ժողովուրդները կոչվում էին բարբարոս՝ անկախ իրենց քաղաքակրթական զարգացման մակարդակից:

հրեայի,*¹⁷ որովհետև Ավետարանը հայտնում է, թե Աստված մարդկանց ինչպես է արդար համարում իրենց հավատով, որպեսզի հավատան, ինչպես որ գրված է. «Արդարն իր հավատով է փրկվելու»:

Մարդկանց հանցանքը

¹⁸ Բայց Աստծու բարկությունը երկնքից է հայտնվելու մարդկանց անհավատության և անիրավության համար, որոնց անիրավությունը թույլ չի տալիս, որ ճշմարտությունը երևան գա,*¹⁹ որովհետև ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին, նրանք գիտեն արդեն, քանի որ Աստված ի նքր նրանց հայտնեց այն:

²⁰ Արդարև, աշխարհի ստեղծումից ի վեր Աստծու աներևույթ հատկանիշները, այսինքն՝ նրա մշտնջենավոր գործությունն ու աստվածությունը իմացվում և տեսնվում են ստեղծագործության միջոցով, և սա նրա համար, որպեսզի մարդիկ որևէ արդարացում չունենան,*²¹ քանի որ նրանք, Աստծուն ճանաչելով, իբրև Աստված չփառավորեցին և շնորհակալ չեղան նրան, այլ անհեթեթ խորհուրդներ ունեցան, ուստի և նրանց միտքը անմտությամբ խավարեց:*²² Իրենք իրենց իմաստուն համարելով՝ հիմարացան²³ և անմահ Աստծու փառքը հատկացրին մահկանացու մարդկանց, թռչունների, չորքոտանիների և սողունների նմանությունը ունեցող պատկերների:*²⁴ Դրա համար էլ Աստված թույլ տվեց, որ իրենց սրտի ցանկություններով հանձնվեն պղծության և իրենք իրենց մարմինն անպատվեն,²⁵ քանի որ Աստծու վերաբերմամբ ճշմարտության փոխարեն նրանք նախընտրեցին ստությունը, արարածներին հարգանք ընծայեցին և նրա՝ նց պաշտեցին, փոխանակ պաշտելու Արարչին, որ օրհնյալ է հավիտյան. ամեն:

²⁶ Ահա թե ինչու Աստված թույլ տվեց, որ նրանք անձնատուր լինեն անարգ կրքերի, որովհետև նրանց էզերը իրենց բնական հարաբերությունները փոխանակեցին հակաբնական հարաբերություններով:²⁷ Նույնպես և արուները, կանանց հետ բնական հարաբերությունը թողած, հակաբնական ախորժակներով իրար ցանկացան. արուները արուների հետ խայտառակություն էին գործում և իրենց մոլորության արժանի հատուցումն ստանում Աստծուց:²⁸ Եվ քանի որ նրանք չուզեցին ճանաչել Աստծուն, Աստված էլ թույլ տվեց, որ նրանք իրենց անարգ մտքերին անձնատուր եղած՝ անեն այն, ինչ չպետք է անել.²⁹ այսինքն՝ լցվեն ամեն տեսակ անիրավությամբ, պոռնկությամբ, անզգամությամբ, ազահությամբ, չարությամբ և լինեն նախանձոտ,

*1.16-17 Պողոսի նամակի հիմնական մտածմունքի խտացումը գտնում ենք այս գույգ համարներում:

*1.16 Մր 8.38:

*1.17 Ամբ 2.4:

*1.18 «Աստծու բարկությունը» զգացական մի գայրույթի արտահայտություն չէ, այլ ամբողջական մի ընդդիմություն չարիքի, մեղքի և անարդարության դեմ, որոնք անհաշտելի են Աստծու բարության, սրբության և արդարության հետ: Այս բարկությունը Աստված հայտնում է այժմվանից՝ թույլ տալով, որ չզոջացող մեղավորը հանձնվի իր անարգ կրքերին (տե՛ս 24-32), բայց այն ամբողջական կերպով հայտնվելու է դատաստանի օրը (տե՛ս 2.5-9: Հմմտ Եփ 5.6: Կղ 3.6: Հտ 19.15, 20.11-15):

*1.20 Իմս 13.1-9, Մր 17.8:

*1.21 Եփ 4.17-18:

*1.23 Բ Օր 4.16-18, Իմս 11.15, 12.24, 13.10-19:

սպանող, հակառակասեր, նենգ, չարաբարո, բամբասող,³⁰ չարախոս, աստվածատյաց, անամոթ, ամբարտավան, ինքնահավան, չարիք հնարող, ծնող անարգող,³¹ անմիտ, խոստմնադրուժ, անգույթ, անհաշտ և անողորմ:՝³² Եվ գիտենալով Աստծու դատաստանը, թե այսպիսի բաներ անողները մահվան են արժանի, ոչ միայն իրենք են անում այդ բաները, այլ նաև հավանություն են տալիս անողներին:

2

Աստծու արդար դատաստանը

¹ Ուստի դու, ո՛վ մարդ, որ դատում ես ուրիշներին, արդարացում չունես, որովհետև ինչ բանով որ դատում ես ընկերոջդ, ինքդ քեզ ես դատապարտում, քանի որ նույն բաները դու էլ ես գործում, դու, որ դատում ես նրան:՝² Գիտենք, որ Աստված ճշմարիտ դատաստանով է դատելու նրանց, ովքեր այսպիսի բաներ են անում:՝³ Արդ, ո՛վ մարդ, դու, որ դատում ես այսպիսի բաներ անողներին, բայց դու ինքդ նույն բաներն ես անում, կարծում ես զե՛րժ ես մնալու Աստծու դատաստանից:՝⁴ Կամ արհամարհո՞ւմ ես նրա անչափ քաղցրությունը, ներողամտությունն ու համբերատարությունը, երբ գիտես, որ Աստծու քաղցրությունն է, որ քեզ ապաշխարության է տանում:՝⁵ Քո կարծրությամբ և չզղջացող սրտով դու միայն բարկություն ես դիզում քեզ համար, երբ Աստծու բարկության օրը գա, և հայտնվի նրա արդար դատաստանը,⁶ որովհետև Աստված հատուցելու է յուրաքանչյուրին ըստ իր գործերի:՝⁷ Նա հավիտենական կյանք է տալու նրանց, որոնք բարի գործերի մեջ հարատևելով՝ փառք ու պատիվ և անմահություն են փնտրում,⁸ իսկ բարկություն և զայրույթ է վերապահելու նրանց, որոնք, հակառակությունից տարված, չեն հավանում ճշմարտությունը, այլ մնում են անիրավության մեջ:՝⁹ Նեղություն ու տառապանք է սպասում բոլոր նրանց, որոնք չարիք են գործում. նախ՝ հրեային և ապա՝ ոչ հրեային,¹⁰ իսկ փառք ու պատիվ և խաղաղություն բոլոր նրանց, որոնք բարիք են գործում, նախ՝ հրեային և ապա՝ ոչ հրեային,¹¹ որովհետև Աստված խտրություն չի դնում մարդկանց միջև:՝

¹² Նրանք, որ մեղանչեցին առանց Աստծու Օրենքը ճանաչելու, առանց այդ Օրենքի էլ պիտի պատժվեն, իսկ նրանք, որ Օրենքը գիտենալով մեղանչեցին, Օրենքի համաձայն էլ պիտի դատապարտվեն,¹³ որովհետև Օրենքն իմացողները չեն, որ արդարանում են Աստծու առաջ, այլ Օրենքը գործադրողները պիտի արդարանան:՝¹⁴ Օրինակ՝ հեթանոսները Աստծու Օրենքը չունեն, բայց երբ Օրենքը չունենալով՝ բնականորեն Օրենքի պահանջներն են գործադրում, ուրեմն՝ իրենք են իրենց իսկ Օրենքը:

¹⁵ Այդպիսով, նրանք ցույց են տալիս, որ Աստծու Օրենքի պահանջները գրված ունեն իրենց սրտերում, այդ մասին է նաև վկայում իրենց խիղճը, երբ իրենց դատողությունները հանդիմանում կամ արդարացնում են իրենց:՝¹⁶ Այդ՝

^{1.31} Շատ ձեռ. չունեն «անհաշտ» բառը:

^{2.1} Մտ 7.1, Ղկ 6.37:

^{2.4} Իմս 11.23:

^{2.6} Մդ 62.12, Առ 24.12:

^{2.11} Բ Օր 10.17:

յուրաքանչյուր որ իր ունեցած օրենքով պիտի դատվի այն օրը, երբ Աստված մարդկանց ծածուկ գործերը կդատի Հիսուս Քրիստոսի ձեռքով, ինչպես որ ավետարանեցի ձեզ:

Հրեան և Օրենքը

¹⁷ Արդ, դու, որ ինքդ քեզ հրեա ես կոչում և, Օրենքին ապավինած, պարծենում ես Աստծով, ¹⁸ դու, որ գիտես նրա կամքը և, Օրենքից սովորած լինելով, կարող ես զանազանել լավն ու վատը, ¹⁹ դու, որ համոզված ես, թե առաջնորդ ես կույրերին, լույս՝ խավարի մեջ եղողներին, ²⁰ խրատող՝ անմիտներին, ուսուցիչ՝ մանուկներին, և վստահ ես, թե Օրենքն իր մեջ ունի իսկական գիտությունն ու ճշմարտությունը, ²¹ ի վերջո, դու, որ ուսուցանում ես ուրիշին, ինքդ քեզ չե՞ս ուսուցանում: Դու, որ քարոզում ես չգողանալ, գողանո՞ւմ ես: ²² Դու, որ ասում ես՝ «Մի՛ շնացիր», շնանո՞ւմ ես: Դու, որ գարշում ես կուռքերից, նրանց տաճարներում կողոպո՞ւտ ես անում: ²³ Դու, որ Օրենքով ես պարծենում, Աստծուն անարգած չե՞ս լինում Օրենքը խախտելով:

²⁴ Արդարև, «Ձեր պատճառով հեթանոսներն անարգում են Աստծու անունը», ինչպես գրված է:

²⁵ Թլփատությունն օգուտ կունենա միայն այն դեպքում, եթե Օրենքը գործադրես, իսկ եթե խախտես Օրենքը, թլփատված լինելով հանդերձ՝ անթլփատ հեթանոսի պես կլինես: ²⁶ Իսկ եթե անթլփատ հեթանոսը Օրենքի պահանջած իրավունքը գործադրի, նրա անթլփատությունը թլփատություն չի՞ համարվի: ²⁷ Եվ մարմնով անթլփատ մարդը, Օրենքը գործադրելով, դատապարտած չի՞ լինի քեզ, դու, որ հանցավոր ես աստվածային գրքերով ու թլփատությամբ քեզ տրված Օրենքի հանդեպ, ²⁸ որովհետև արտաքնապես հրեա եղողը չէ իսկական հրեան, ոչ էլ մարմնական թլփատությունն է իսկական թլփատությունը, ²⁹ այլ ներքնապես հրեա եղողն է հրեան, և իսկական թլփատությունը սրտի՛ թլփատությունն է, այսինքն՝ Սուրբ Հոգու համաձայն ապրելն է և ոչ թե գրավոր Օրենքի համաձայն ապրելը: Այդպիսի մեկը գովաբանվում է ոչ թե մարդկանցից, այլ Աստծուց:՝

3

¹ Ի՞նչ է ուրեմն հրեայի առավելությունը, և ի՞նչ է թլփատության օգուտը:

² Առավելությունները շատ են և ամեն տեսակի: Առաջին հերթին այն, որ Աստծու պատգամները նրա՛նց վստահվեցին: ³ Իսկ եթե նրանցից ոմանք հավատարիմ չմնացին, մի՞ թե նրանց անհավատարմությունը արգելք պիտի լիներ, որ Աստված ինքը հավատարիմ մնա: ⁴ Բնա՛վ: Աստված պիտի ճշմարիտ դուրս գա և բոլոր մարդիկ՝

^{2.22} «Նրանց տաճարներում կողոպո՞ւտ ես անում»: այստեղ խոսքը նյութական իմաստով գողության մասին չէ, այլ հավանաբար ակնարկությունը վերաբերում է հրեա վաճառականների չարաշահություններին հեթանոսական տաճարների մոտ, հեթանոսական տոների առիթով:

^{2.24} Ես 52.5 [LXX]:

^{2.29} «Մրտի թլփատություն» նշ է միտքը և զգայարանները հեռու պահել ամեն տեսակ չար խորհրդից (հմմտ Կղ 2.11: Բ Օր 30.6: Եր 4.4):

^{2.29} Բ Օր 30.6:

սուտ, ինչպէս որ գրված է.

«Ուստի արդար ես, ինչ վճիռ էլ արձակես,
իրավունք ունես, ինչ պատիժ էլ սահմանես, որպէսզի արդար ճանաչվես քո
վճիռներում

և հաղթական դուրս գաս քո դատաստաններում»։

⁵ Իսկ եթէ մեր անիրավ լինելն է ի ցույց բերում Աստծու արդարությունը, ի՞նչ ասենք.
հարցնում եմ իբրև մարդ. մի՞թէ անարդար է Աստված, որ բարկություն է ցուցաբերում
մեր հանդէպ: ⁶ Բնա՛վ: Ապա թէ ոչ Աստված ինչպէ՛ս պիտի դատի աշխարհը: ⁷ Բայց
եթէ իմ ստոյթամբ Աստծու ճշմարիտ լինելն է շեշտվում նրա փառքի համար, էլ ինչի՞
համար եմ դատապարտվում իբրև մեղավոր: ⁸ Եվ արդո՞ք ասենք, ինչպէս ոմանք
գրպարտությամբ ինչ-որ խոսքեր են վերագրում մեզ, իբր թէ ասած լինենք՝ «Չարիք
գործենք, որպէսզի բարիք դուրս գաս»: Այդպիսի մարդիկ արդարև պիտի
դատապարտվեն:

Արդար մարդ չկա

⁹ Ի՞նչ ասենք ուրեմն. մենք՝ հրեաներս, մի բանով ավելի լա՛վ ենք, քան հեթանոսները:
Ո՛չ, ոչ մի բանով: Ահա թէ ինչու հենց սկզբից մեղադրեցի բոլոր մարդկանց, լինեն
հրեա թէ հեթանոս՝ ասելով, որ բոլորն էլ մեղքի տակ են: ¹⁰ Ինչպէս որ Սուրբ գիրքն է
ասում.

«Չկա արդար մարդ, ոչ իսկ մեկ հոգի.»

¹¹ չկա իմաստուն մեկը,

որ Աստծուն փնտրի:

¹² Բոլորն էլ խոտորեցին և անպետք դարձան.

չկա մեկը, որ ուղիղ գործի, ոչ ոք, ոչ իսկ մեկ հոգի:

¹³ Նրանց կոկորդը բաց գերեզման է,

նրանց լեզուն դարձել է նենգության գործիք:

Իժի թույն կա պահված նրանց խոսքերի տակ:՝

¹⁴ Նրանց բերանը լեցուն է անեծքով ու դառնությամբ:՝

¹⁵ Չեն վարանում անմեղ արյուն թափելու՝

¹⁶ Իրենց ընթացքով պատճառ են դառնում

սոսկ կործանումի ու դժբախտության:

¹⁷ Նրանք չիմացան ճանապարհը խաղաղության.

¹⁸ նրանց աչքերի առաջ չկա երկյուղն Աստծու:՝

¹⁹ Գիտենք, որ ինչ որ Օրենքն է ասում, ասում է բոլոր նրանց համար, որ ենթակա են
Օրենքին, որպէսզի ամեն բերան փակվի, և ամբողջ աշխարհն իմանա, որ հանցավոր է

^{3.4} Սղ 51.4 [LXX]:

^{3.10-12} Սղ 14.1-3 [LXX], 53.1-3[LXX]:

^{3.13 ա} Սղ 5.9 [LXX]: ^բ Սղ 140.3:

^{3.14} Սղ 10.7 [LXX]:

^{3.15-17} Ես 59.7-8:

^{3.18} Սղ 36.1:

Աստծու հանդեպ: ²⁰ Ահա թե ինչու՝ «Աստծու առջև ոչ ոք չի արդարանալու» Օրենքի գործադրությամբ, որովհետև Օրենքով է որ իմանում ենք, թե ի՛նչ է մեղքը:

Միայն հավատով ենք արդարանում

²¹ Բայց հիմա Աստված ցույց տվեց, որ մարդկանց արդարացնելու իր միջոցը կապ չունի Օրենքի հետ, թեպետև նույն ինքն Օրենքն ու մարգարեներն են վկայում այդ մասին: ²² Բոլոր նրանք, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին, Աստծու առջև արդարանում են առանց խտրության: ²³ Արդարև, թեպետև բոլոր մարդիկ մեղանչեցին և զրկված են մնում Աստծու փառքից, ²⁴ սակայն Աստված արդարացնում է նրանց ձրիաբար իր պարգևած շնորհով, Քրիստոս Հիսուսի փրկագործության միջոցով, ²⁵ որովհետև Աստված նախասահմանեց, որ Քրիստոսն իր թափած արյունով քավության միջոց դառնա նրանց համար, ովքեր հավատում են իրեն: Անցյալում Աստված իր արդարությունը ցույց էր տալիս՝ անհիշաչար գտնվելով մարդկանց գործած մեղքերի հանդեպ, ²⁶ իսկ ներկայումս նա իր նույն արդարությունը հայտնում է թողություն շնորհելով մեղքերին, ցույց տալով, որ ինքն արդար է և արդարացնում է ամեն մեկին, ով հավատում է Քրիստոսին:

²⁷ Պարծենալու բան մնո՞ւմ է. բացարձակապես ոչ: Կարո՞ղ ենք պարծենալ, թե Օրենքի միջոցով կամ մեր գործերով ենք արդարանում. ո՛չ, հավատով: ²⁸ Հետևաբար, եզրակացնում ենք, որ մարդ իր հավատով է արդարանում, առանց Օրենքի գործերի: ²⁹ Արդարև, Աստված միայն հրեաների՞ Աստվածն է, հեթանոսներինն էլ չէ՞: Այո՛, նաև հեթանոսներինն է, ³⁰ որովհետև մե՛կ է Աստված, որ արդարացնում է թե՛ թլփատությունից եկող հրեային՝ իր հավատով և թե՛ անթլփատությունից եկող հեթանոսին՝ նույն հավատով: ³¹ Արդ, մի՞ թե Օրենքը շնջում ենք մեր հավատով: Բնա՛վ: Ընդհակառակը, հաստատում ենք Օրենքը:

4

Աբրահամը՝ որպես օրինակ հավատով արդարանալու

¹ Արդ, ի՛նչ ասենք Աբրահամի՝ մեր ազգի նախահոր մասին. ինչպե՞ս արդարացավ նա: ² Եթե Աբրահամն արդարացած լիներ իր գործերով, կարող էր պարծենալ, բայց ո՛չ Աստծու առաջ: ³ Ի՛նչ է ասում Ծննդոց գիրքը. «Աբրահամը հավատաց Աստծուն, և այդ հավատի համար էլ Աստված արդար համարեց նրան»: ⁴ Չէ՞ որ որևէ գործ կատարած մարդու համար նրա վարձը շնորհ չի համարվում, այլ իրավունք, ⁵ իսկ նա, ով որևէ գործ չի կատարել և սակայն հավատում է Աստծուն, որ արդարացնում է մեղավորին, նրա հավատալն այդ դեպքում արդարություն է համարվում: ⁶ Դավիթն ինքն էլ երանի

^{3.20} Սղ 143.2, Գղ 2.16:

^{3.22} Գղ 2.16:

^{3.25} «Քրիստոսն իր թափած արյունով քավության միջոց դառնա». այս բացատրությամբ Քրիստոսը նմանեցվում է Ղևտացիների գրքում (16-րդ գլուխ) ներկայացված քավության հատուկ զոհերին, որոնց արյունը շաղ էր տրվում Տապանակի կափարիչի վրա՝ ամբողջ ժողովրդի մեղքերի քավության համար:

^{3.30} Բ Օր 6.4, Գղ 3.20:

^{4.3} Ծն 15.6, Գղ 3.6:

է տալիս այն մարդուն, որին Աստված արդար է համարում առանց գործերի.

⁷ «Երանի՛ նրանց, որոնք թողություն ստացան

իրենց հանցանքներին,

և որոնց մեղքերը Տերը ներեց:՝

⁸ Երանի՛ այն մարդուն,

որի մեղքը Տերը հաշվի չի առնում»:

⁹ Արդ, Դավթի տված այս երանությունը միայն թլփատվածների՞ն է ուղղված. ո՛չ, այլև նրանց, որոնք թլփատված չեն, որովհետև հիշեցինք, որ «Աբրահամը հավատաց, և Աստված արդար համարեց նրան»: ¹⁰ Ե՛րբ տեղի ունեցավ այս. թլփատությունն ընդունելուց հետո՞. թե՞ նա տակավին անթլփատ վիճակում էր: Պարզ է, որ թլփատությունից հետո չէր, այլ անթլփատ վիճակում: ¹¹ Եվ նա թլփատությունն ստացավ Աստծուց՝ որպես նշան և կնիք այն բանի, որ Աստված արդար էր համարել նրան անթլփատ վիճակում նրա ցուցաբերած հավատով արդարացած լինելու համար: Որպեսզի դրանով նա լինի հայրը բոլոր նրանց, որոնք հավատում են առանց թլփատված լինելու, որպեսզի նրանք ևս արդար համարվեն,՝ ¹² և լինի նաև հայրը թլփատվածների ոչ թե պարզապես այն բանի համար, որ նրանք թլփատված են, այլ նրանց, որ ընթանում են այն նույն հավատի հետքերով, որ մեր հայր Աբրահամը ցուցաբերեց իր անթլփատ վիճակում:

Աստված հավատացողին է տալիս իր խոստումը

¹³ Արդ, Աբրահամին և նրա սերնդին տված այն խոստումը, թե աշխարհը պիտի ժառանգեն, Օրենքի միջոցով չէ որ տրվեց, այլ հավատի, որով նա արդար համարվեց,՝ ¹⁴ որովհետև եթե Օրենքի հետևորդներն են խոստումի ժառանգորդները, ապա զուր է հավատը և անօգուտ՝ խոստումը,՝ ¹⁵ որովհետև Օրենքը միայն Աստծու բարկությունն է շարժում այն չգործադրողի դեմ, իսկ որտեղ օրենք չկա, չկա և օրինազանցություն: ¹⁶ Այս պատճառով էլ մարդն իր հավատով է դառնում Աստծու ժառանգորդ, որպեսզի դա լինի շնորհի արդյունք, և խոստումն ի գորու լինի Աբրահամի ամբողջ սերնդի համար. այսինքն՝ ոչ միայն նրանց համար, որոնք Օրենքի միջոցով են եկել Աստծուն, այլ նաև նրանց համար, որոնք գալիս են հավատի ճանապարհով՝ Աբրահամի նման, որ մեր բոլորի հայրն է.՝ ¹⁷ ինչպես որ գրված էլ է. «Բազում ազգերի հայր արեցի քեզ», քանի որ Աբրահամը հավատաց Աստծուն, որ կենդանացնում է մեռելներին և ինչպես գոյություն ունեցողի՝ կանչում նրանց, որ գոյություն չունեն տակավին:՝ ¹⁸ Արդարև, չնայած ոչ մի հույս չկար, Աբրահամը հավատաց և հուսաց, որ ինքը պիտի լինի

^{4.7-8} Սղ 32.1-2:

^{4.11} «Որպես նշան». թլփատությունը Աստծուն ընծայված լինելու և Աստծուն պատկանելու նշան էր, որը միաժամանակ դարձավ Աբրահամի արդարության նշանը:

^{4.11} Ծն 17.10:

^{4.13} Ծն 17.4-6, 22.17-18, Գղ 3.29:

^{4.14} Գղ 3.18:

^{4.16} Գղ 3.7:

^{4.17} Ծն 17.5:

«բազում ազգերի հայր», ինչպես որ Աստված ասել էր նրան, թե՛ «Այսպես պիտի բազմացնենք քո սերունդը»:¹⁹ Եվ Աբրահամը չթուլացավ իր հավատի մեջ ու թեև շուրջ հարյուր տարեկան էր, չնայեց իր մարմնին, որն արդեն մեռած մարմնի նման էր, ոչ էլ նայեց Սառայի արգանդի ամլությանը:²⁰ Անհավատությամբ բնավ չտարակուսեց Աստծու խոստման վրա, այլ գորացավ հավատով և փառք տվեց Աստծուն²¹ այն հաստատ համոզումով, թե Աստված, որ խոստացավ, կարող է նաև կատարել:²² Ահա թե ինչու «Աստված արդար համարեց նրան»:²³ Բայց միայն Աբրահամի համար չէր գրված այդ խոսքը, թե «Աստված արդար համարեց նրան»,²⁴ այլ նաև մեզ համար: Աստված մե՛զ էլ է արդար համարելու մեր հավատի համար, որովհետև հավատում ենք նրան, որ մեռելներից հարություն տվեց Հիսուսին՝ մեր Տիրոջը:²⁵ Նա իր կյանքը տվեց մեր հանցանքները ջնջելու համար և հարություն առավ, որ արդարացնի մեզ:

5

Արդարացած ենք և հաշտված Աստծու հետ

¹ Հիմա, որ հավատով արդարացած ենք, այլևս հաշտված ենք Աստծու հետ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:² Քրիստոսն ինքը կարելի դարձրեց մեզ համար հավատով հասնել այն շնորհին, որի մեջ ապրում ենք այժմ և պարծենում Աստծու փառքին արժանանալու հույսով:³ Եվ ոչ միայն այսքանը, այլև պարծենում ենք մեր նեղությունների մեջ ևս՝ գիտենալով, որ նեղությունները մեզ տալիս են համբերություն, ⁴ համբերությունը՝ տոկունություն, տոկունությունը՝ հույս, ⁵ իսկ հույսը երբեք ամոթով չի թողնում, որովհետև մեզ տրված Սուրբ Հոգու միջոցով Աստծու սերը տեղ է գտել մեր սրտերում:⁶ Որովհետև մինչ անկարող էինք փրկության հասնելու, Քրիստոսը որոշված ժամանակին մեռավ մեզ՝ մեղավորներիս համար:⁷ Արդարև, հազիվ թե գտնվի մեկը, որ հանձն առնի մեռնել մի արդար մարդու համար. թերևս գտնվի մեկը, որ մի բարի մարդու համար համարձակվի հանձն առնել մահը:⁸ Բայց Աստված մեր հանդեպ ունեցած իր սերը հայտնեց դրանով, որ երբ տակավին մեր մեղքերի մեջ էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ:⁹ Իսկ այժմ, որ արդարացած ենք նրա արյամբ, որչա՛ փ ավելի վստահությամբ կարող ենք ասել, որ Քրիստոսով ենք փրկվելու Աստծու բարկությունից,¹⁰ որովհետև եթե Աստված իր Որդու մահով մեզ իր հետ հաշտեցրեց դեռևս այն ժամանակ, երբ թշնամի էինք իրեն, որչա՛ փ ավելի վստահությամբ կարող ենք ասել, որ փրկվելու ենք Քրիստոսի կյանքով:¹¹ Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև դեռ պարծենում էլ ենք Աստծով, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհիվ, որի միջոցով հիմա հաշտվեցինք Աստծու հետ:

Ադամը և Քրիստոսը

^{4.18} Ծն 15.5:

^{4.19} Ծն 17.17:

^{4.25} Ես 53.4-5:

^{5.1} «Հաշտված ենք». գրք. և հուն. հնագույն ձեռ. ունեն «հաշտվենք»:

^{5.2} Մի շարք ձեռ. չունեն «հավատով»:

¹² Մեկ մարդու պատճառով էր, որ մեղքն աշխարհի մտավ, և մեղքի պատճառով էլ աշխարհի մտավ մահը: Եվ այսպիսով, մահը տիրեց բոլոր մարդկանց, որովհետև բոլորն էլ մեղք գործեցին: * ¹³ Դեռ Օրենքը չեկած՝ մեղքն աշխարհում էր, բայց մեղքը նկատի չէր առնվում, քանի որ Օրենք չկար: ¹⁴ Եվ սակայն Ադամից սկսած մինչև Մովսեսը մահը թագավորեց նույնիսկ նրանց վրա, որոնք Ադամի գործած անհնազանդության մեղքը չգործեցին: Իսկ Ադամը նախօրինակն էր նրա, որ գալու էր:

¹⁵ Բայց նախ՝ հստակ մի տարբերություն կա մեղքի և շնորհի միջև, որովհետև եթե ճշմարիտ է, որ մեկի հանցանքով բոլորը մեռան, առավել ևս ճշմարիտ է, որ Աստված մեկ մարդու՝ Հիսուս Քրիստոսի շնորհիվ իր շնորհն ու ձրի պարգևը առատացրեց բոլորի վրա: ¹⁶ Ապա դարձյալ տարբերություն կա մեկի մեղանչումով առաջ եկած արդյունքի և ձրի պարգևի միջև, որովհետև եթե մեկի մեղանչումով աստվածային դատաստանը դատապարտության տակ էր առնում բոլորին, շնորհը, հակառակ բոլորի մեղանչումին, արդարացնում է նրանց: ¹⁷ Արդարև, եթե ճշմարիտ է, որ մեկ մարդու պատճառով, մեկ հոգու հանցանքով թագավորեց մահը, որչա՞ փ ավելի ճշմարիտ է, որ Աստծու առատ շնորհն ու արդարության պարգևն ստացողները պիտի թագավորեն կյանքի մեջ մե՛կ անձի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: ¹⁸ Ապա ուրեմն, ինչպես որ մեկ հոգու հանցանքով բոլոր մարդիկ ենթակա եղան դատապարտության, այնպես էլ մեկ հոգու արդար գործով բոլոր մարդիկ արդարանում և կյանք են ունենում,՝ ¹⁹ որովհետև ինչպես մեկ մարդու անհնազանդությամբ բոլորը մեղավոր եղան, այնպես էլ մեկ հոգու հնազանդությամբ բոլորը պիտի արդարանան: ²⁰ Մինչ այդ, Օրենքի գալով, հանցանքը շատացավ: Մյուս կողմից՝ ուր որ մեղքը շատացավ, այնտեղ Աստծու շնորհն ավելի առատացավ: ²¹ Որպեսզի, ինչպես որ մեղքը թագավորեց՝ մահ պատճառելով, այնպես էլ թագավորի շնորհը՝ մարդկանց արդարությամբ հավիտենական կյանքի կոչելու համար, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

6

Մեռած՝ մեղքի և կենդանի՝ Քրիստոսի համար

¹ Ի՞նչ ասենք, ուրեմն շարունակե՞նք մնալ մեղքի մեջ, որպեսզի բազմանա Աստծու շնորհը: ² Քա՛վ լիցի: Մենք, որ մեռանք մեղքի համար, ինչպե՞ս կարող ենք տակավին ապրել մեղքի մեջ: ³ Չգիտե՞ք, թե մենք, որ մկրտվեցինք՝ միանալով Հիսուս Քրիստոսին, մկրտությամբ հաղորդակից դարձանք նրա մահվան: ⁴ Այսինքն՝ մկրտությամբ թաղվեցինք նրա հետ միասին և հաղորդ եղանք մահվանը, որպեսզի ինչպես որ Քրիստոսը մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես և մենք ապրենք մի նոր կյանքով: ⁵ Եթե Քրիստոսին կցորդ եղանք՝ նրա նման մեռնելով, նույնպես նրան կցորդ ենք լինելու՝ նրա հետ հարություն առնելով: ⁶ Գիտենք, որ մեր

^{5.12} «Որովհետև» կամ «որի համար»:

^{5.12} Ծն 3.6, Իմա 2.24:

^{5.18} Բ Եզր 7.11:

^{6.4} Կղ 2.12:

մեջ եղող հին մարդը խաչակից եղավ նրան, որպեսզի մեռնի մեղանշական մարդը, որպեսզի մենք այլևս չծառայենք մեղքին: ⁷ Որովհետև երբ մեկը մեռնում է, ազատվում է մեղքից: ⁸ Քանի որ մենք մեռանք Քրիստոսի հետ, հավատում ենք, որ նրա հետ էլ պիտի ապրենք: ⁹ Գիտենք, որ Քրիստոսը հարություն առավ մեռելներից և այսուհետև չի մեռնի, ու մահն այլևս չի կարող տիրել նրան: ¹⁰ Երբ նա մեռավ, մեղքի համար մեռավ, մեկընդմիջտ, և հիմա, որ կենդանի է, կենդանի է Աստծու համար: ¹¹ Նույնպես և դուք ձեզ մեռած համարեք մեղքի համար և կենդանի՝ Աստծու համար, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

¹² Այսուհետև մեղքը թող չթագավորի ձեր մահկանացու մարմինների մեջ՝ դրանք հնազանդեցնելով իր ցանկություններին: ¹³ Մեղքին անձնատուր մի՛ եղեք՝ ձեր անդամները դարձնելով անիրավության գործիք, այլ որպես մահվանից դեպի կյանք եկած մարդիկ, դուք ձեզ Աստծո՛ւն հանձնեցեք և ձեր մարմինները արդարության գործի՛ք դարձրեք Աստծու ձեռքում: ¹⁴ Մեղքը չպետք է իշխի ձեզ վրա, քանի որ դուք ենթակա չեք Օրենքին, այլ՝ շնորհին:

Արդարության ծառաներ

¹⁵ Ուրեմն ի՞նչ, քանի որ ենթակա չենք Օրենքին, այլ Աստծու շնորհին, մե՞ դք գործենք: Բնա՛վ: ¹⁶ Լա՛վ իմացեք, ում ծառայությանը որ նվիրվեք ու հնազանդվեք, նրա ծառան էլ կլինեք: Ծառայելով մեղքին՝ ենթարկվում եք մահվան, մինչդեռ հնազանդվելով Աստծուն՝ արդարանում եք: ¹⁷ Գոհություն Աստծուն, որ թեև մի ժամանակ ծառա էիք դարձել մեղքին, բայց որովհետև ի սրտե հնազանդվեցիք ձեզ ավանդված վարդապետության ճշմարտությանը, ¹⁸ մեղքի տիրապետությունից ազատվեցիք և արդարության ծառա դարձաք: ¹⁹ Ծառայի օրինակով եմ խոսում, որովհետև այդպես ավելի հասկանալի է ձեզ: Ինչպես մի ժամանակ ձեր մարմինները անօրենության տված՝ ծառայում էիք պղծությանն ու անօրենությանը, այնպես էլ հիմա ձեր մարմինները սրբության՝ նր տվեք և ծառայե՛ք արդարությանը: ²⁰ Երբ մեղքի ծառա էիք, դուք հեռու էիք արդարությունից: ²¹ Ի՞նչ շահեցիք այն ժամանակվա ձեր գործերից, որոնց համար ամաչում եք հիմա, որովհետև դրանց հետևանքը մահ է: ²² Բայց այժմ ազատ եք մեղքի տիրապետությունից և դարձել եք Աստծու ծառաները: Ձեր շահը սրբությանը նվիրված մի կյանք է, որի արդյունքը կլինի հավիտենական կյանքը, ²³ որովհետև մեղքի վարձը մահն է, մինչդեռ Աստված, որպես ձրի պարգև հավիտենական կյանքն է տալիս մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

7

Քրիստոնյան՝ ազատագրված Օրենքից

6.6 «Հին մարդը» կամ «մեղանշական մարդը» (բոց՝ «մեղքի մարմինը») արտահայտություններով ակնարկվում է մեղքով տիրապետված այն կենցաղի մասին, որ մարդ ունենում է Աստծուն միանալուց առաջ: Երբ միանում ենք Քրիստոսին, այս հին ինքնությունը «մեռնում է», և դա նշանակում է, որ հին նկարագիրն իրեն հատուկ բոլոր հետաքրքրություններով ու գործունեությամբ այլևս դադարում է գոյություն ունենալուց՝ տեղի տալով՝ «նոր մարդուն»՝ մի նոր նկարագրի:

¹ Դուք, իբրև Օրենքին քաջածանոթ մարդիկ, չգիտե՞ք, եղբայրներ՝ ր, որ Օրենքը մարդուն տիրում է այնքան ժամանակ, քանի դեռ նա ապրում է: ² Այսպես, օրինակ, ամուսնացած կինը Օրենքով կապված է իր ամուսնուն, քանի դեռ ամուսինը ողջ է, իսկ երբ ամուսինը մեռնի, նա արձակված կլինի ամուսնական կապից: ³ Այլ խոսքով՝ իր ամուսնու կենդանության ժամանակ, եթե նա ամուսնանա ուրիշ մարդու հետ, շնացող կհամարվի, մինչդեռ երբ ամուսինը մեռնի, այլևս ազատ է այդ Օրենքի կապից և շնացող չի համարվի, եթե ուրիշ մարդու հետ ամուսնանա: ⁴ Ճիշտ նույն ձևով դուք էլ, եղբայրներ՝ ր, Քրիստոսի մարմնով մեռաք Օրենքի համար, որպեսզի պատկանեք ուրիշին, նրան, որ հարություն է առել մեռելներից, որպեսզի արդար վաստակով ներկայանաք Աստծուն, ⁵ քանզի այնքան ժամանակ, քանի դեռ մեղանչական բնության համաձայն էինք ապրում, մեղքերի ցանկությունները Օրենքի միջոցով ներգործում էին մեր մարմնի անդամների մեջ. իբրև հետևանք՝ մահ պատճառելով: ⁶ Բայց հիմա, Քրիստոսի հետ մեռած լինելով, այլևս գերծ ենք Օրենքի կապից, որի գերին էինք մի ժամանակ, այնպես որ այժմ ծառայում ենք Աստծուն Մուրբ Հոգու բերած նորոգությամբ և ոչ թե գրավոր Օրենքի թելադրած հին ձևով:

Օրենք և մեղք

⁷ Արդ, ի՞նչ ասենք. Օրենքը մե՞ղք է: Բնա՛վ: Բայց ես չեի իմանա, թե ի՞նչ է մեղքը, եթե Օրենքը չհայտնեք դա: Օրինակ՝ չեի իմանա, թե ի՞նչ է ցանկությունը, եթե Օրենքը չասեր՝ «Մի՛ ցանկացիր»:՝ ⁸ Մեղքը, առիթից օգտվելով, պատվիրանի միջոցով ամեն տեսակ ցանկություն առաջացրեց իմ մեջ, եթե Օրենքը չլիներ, մեղքը մեռած կմնար: ⁹ Կար ժամանակ, որ ես էլ կենդանի էի, երբ Օրենքը չկար, բայց երբ պատվիրանը եկավ, մեղքը կյանք առավ, ¹⁰ իսկ ես մեղքով մեռա: Այսպես, ուրեմն, այն պատվիրանը, որ ինձ կյանք պետք է տար, մահվան պատճառ եղավ ինձ համար, ¹¹ որովհետև մեղքը, պարզապես առիթից օգտվելով, պատվիրանի միջոցով խաբեց ինձ և դրանով էլ սպանեց:՝ ¹² Հետևաբար, Օրենքն ինքը սուրբ է, պատվիրանն էլ սուրբ է, արդար է ու բարի: ¹³ Ուրեմն բարի պատվիրանը մահ պատճառեց ինձ: Բնա՛վ, մեղքն էր, որ բարի պատվիրանի միջոցով մահ պատճառեց ինձ, որպեսզի նախ՝ մեղքի ինչ լինելը հայտնվի, և ապա՝ պատվիրանի միջոցով հայտնվի մեղքի առավել ծանր լինելը:

Մարդու ներքին պայքարը

¹⁴ Գիտենք անշուշտ, որ Օրենքը հոգևոր է, բայց ես մարմնավոր եմ՝ մեղքին ստորուկ դարձած: ¹⁵ Ինչ որ անում եմ, չեմ հասկանում, թե ինչո՞ւ եմ անում, որովհետև իմ ուզածը չէ, որ անում եմ, այլ հակառակը, այն, ինչը ատում եմ:՝ ¹⁶ Իսկ եթե իմ չուզածն է, որ անում եմ, դրանով արդեն վկայած եմ լինում, որ Օրենքը բարի է: ¹⁷ Մյուս կողմից՝ ե՛ս չէ, որ անում եմ այն, այլ իմ մեջ բույն դրած մեղքը: ¹⁸ Գիտեմ, որ իմ մեջ, այսինքն՝ իմ մարմնի մեջ որևէ բարի բան չկա: Բարին կամենալը ինձնից է կախված, բայց չի հաջողվում այն կատարել: ¹⁹ Եվ այսպես, բարին, որ կամենում եմ անել, չեմ անում, այլ

^{7.7} Ելք 20.17, Բ Օր 5.21:

^{7.11} Ծն 3.13:

^{7.15} Գղ 5.17:

անում եմ չարը, որ չեմ կամենում անել: ²⁰ Ուրեմն, եթե իմ չուզածն է, որ անում եմ, այլևս ես չեմ, որ անում եմ այն, այլ իմ մեջ բույն դրած մեղքը: ²¹ Արդ, ես գտնում եմ հետևյալ օրինաչափությունը. երբ ուզում եմ բարին անել, տեսնում եմ, որ ընդունակ եմ միայն չարը անելու: ²² Ես իմ ներքին էությանմբ հաճույքով եմ ընդունում Աստծու Օրենքը, ²³ բայց իմ մարմնի անդամների մեջ տեսնում եմ մի ուրիշ օրենք, որ պայքարում է իմ մտքի ընդունած Օրենքի դեմ և ինձ գերի է դարձնում մեղքի օրենքին, որն իմ մարմնի անդամների մեջ է: ²⁴ Ի՛նչ խղճալի մարդ եմ ես: Ո՞վ կփրկի ինձ մահվան դատապարտված այս մարմնից: ²⁵ Բայց շնորհակալություն եմ հայտնում Աստծուն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Ապա, ուրեմն, ես ինքս մտքով ծառայում եմ Աստծու Օրենքին, իսկ մարմնով՝ մեղքի օրենքին:

8

Հոգով ապրած կյանքը

¹ Եթե այդպես է, նշանակում է, թե նրանք, ովքեր միացած են Քրիստոս Հիսուսին, ենթակա չեն դատապարտության, քանի որ մարմնապես չեն ապրում, այլ հոգեպես, ² որովհետև Հոգու Օրենքը, ինձ Հիսուս Քրիստոսին միացնելով, կենդանացրեց և ազատեց ինձ մեղքի և մահվան ենթակայությունից: ³ Արդարև, ինչ որ Օրենքը չի կարող անել մարդկային բնության տկարության պատճառով, Աստված իրագործեց՝ աշխարհ ուղարկելով իր Որդուն, որը մեղքը հաղթահարելու համար իր վրա վերցրեց մեր մեղանշական բնությունը և իր մարմնի մեջ դատապարտեց մեղքը, ⁴ որպեսզի մենք, որ հոգեպես ենք ապրում և ոչ մարմնապես, կարողանանք լրիվ գործադրել Օրենքի բոլոր պահանջները: ⁵ Նրանք, որ ղեկավարվում են միայն իրենց մարմնական պահանջներով, նրանց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ նրանք, որ ապրում են Հոգու թելադրած ձևով, նրանց մտածելակերպը հոգևոր է: ⁶ Մարմնականի մասին մտածելը մահ է պատճառում, մինչդեռ հոգեկանի մասին խորհելը՝ կյանք և խաղաղություն: ⁷ Մարմնականին կառչած միտքը թշնամի է Աստծուն, որովհետև չի հնազանդվում Աստծու օրենքներին և ոչ էլ կարող է հնազանդվել: ⁸ Ահա թե ինչու նրանք, որ մարմնականին են հետևում, չեն կարող հաճելի լինել Աստծուն:

⁹ Եթե Աստծու Հոգին իսկապես բնակվում է ձեր մեջ, նշանակում է, որ դուք այլևս մարմնական ցանկությունների համաձայն չեք ապրում, այլ Սուրբ Հոգու կամեցած ձևով: Իսկ նա, ով չունի Քրիստոսի Հոգին, չի պատկանում նրան: ¹⁰ Եթե Քրիստոսը ձեր մեջ է ապրում, թեկուզև ձեր մարմինները կմեռնեն, որովհետև մեղանշեցիք, բայց Սուրբ Հոգին դարձյալ կյանք կտա ձեզ, որովհետև արդարացած եք: ¹¹ Այսինքն, եթե Աստծու Հոգին բնակվում է ձեր մեջ, Աստված, որ Հիսուս Քրիստոսին հարություն տվեց մեռելներից, իր Հոգու միջոցով, որը բնակվում է ձեր մեջ, կկենդանացնի նաև ձեր

՝8.1 Մի շարք ձեռ. չունեն *«քանի որ մարմնապես չեն ապրում, այլ հոգեպես»:*

՝8.2 Շատ ձեռ. *«ինձ»* բառի փոխարեն ունեն *«քեզ»*, իսկ ուրիշներ՝ *«մեզ»:*

՝8.10 *«Թեկուզև ձեր մարմինները...կյանք կտա ձեզ»*. բոց՝ *«թեպետև ձեր մարմինները մեռած են մեղքի համար, սակայն ձեր հոգիները կենդանի են արդարության համար»:*

մահկանացու մարմինները։¹²

¹² Հետևաբար, եղբայրներ՝ ք, չպետք է մեր մարմնի համար և մարմնապես ապրենք, ¹³ որովհետև եթե մարմնապես ապրենք, կմեռնենք, իսկ եթե Հոգու օգնությամբ սպանեք ձեր մեղքերը, կապրեք: ¹⁴ Աստծու որդիները նրանք են, որոնք առաջնորդվում են Աստծու Հոգով: ¹⁵ Արդ, դուք Հոգին ստացաք ոչ թե ծառա դառնալու և դարձյալ վախով ապրելու համար, այլ Հոգին ստացաք Աստծու որդիներ լինելու համար: Այդ Հոգով է, որ Աստծուն «Աբբա», այսինքն՝ Հայր ենք կոչում, * * * ¹⁶ և նույն Հոգին ինքն է վկայում մեր հոգուն, թե Աստծու որդիներ ենք: ¹⁷ Իսկ եթե որդիներ ենք, նշանակում է, որ նաև ժառանգորդներ ենք: Այո՛, մենք Աստծու ժառանգորդներն ենք և Քրիստոսի ժառանգակից. մասնակից ենք լինում նրա չարչարանքներին, որպեսզի մասնակից լինենք նաև նրա փառքին:

Գալիք փառքը

¹⁸ Ես այնպես եմ կարծում, որ ներկա ժամանակի չարչարանքները ոչինչ են գալիք փառքի համեմատ, որ հայտնվելու է մեզ: ¹⁹ Եվ ամբողջ ստեղծագործությունն ակնդետ սպասում է, որ Աստված հայտնի իր որդիներին: ²⁰ Արդարև, ստեղծագործությունն ինքը ևս մարդու հետ ակամա դատապարտության ենթարկվեց Աստծու հրամանով, որը, սակայն, այն հույսն էլ տվեց, ²¹ որ ստեղծագործությունն ինքը ևս ազատագրվելու է փչացումի դատապարտությունից՝ Աստծու որդիների ազատությանն ու փառքին մասնակից դառնալու համար: ²² Եվ գիտենք, որ մինչև օրս ամբողջ ստեղծագործությունը հեծում է երկունքի ցավով՝ այդ ազատագրությանը հասնելու համար: ²³ Բայց ոչ միայն ստեղծագործությունը, այլ մենք ևս, որ ստացել ենք Սուրբ Հոգին՝ որպես Աստծու պարգևների երախայրիք, մենք ևս ներքնապես հեծում ենք ակնդետ սպասելով որդեգրության, այսինքն՝ մեր մարմնի փրկությանը: ²⁴ Այս հույսով է, որ փրկվեցինք: Արդ, երբ հուսացվածը տեսնում է, դա այլևս հույս չէ, որովհետև մի բան, որ մարդ արդեն տեսնում է, էլ ինչո՞ւ հուսա: ²⁵ Ընդհակառակը, եթե հույս ունենք մի բանի, որը չենք տեսնում, համբերությամբ սպասում ենք դրան:

²⁶ Ճիշտ նույն ձևով էլ Սուրբ Հոգին օգնության է հասնում մեր տկարությանը, որովհետև մենք, որ աղոթում ենք, չգիտենք, թե ինչպե՛ս պետք է աղոթել, բայց Հոգին ինքը բարեխոսում է մեզ համար անմոռնչ հառաչանքներով, ²⁷ և Աստված, որ քննում է սրտերը, գիտե, թե ի՛նչ է խորհում Սուրբ Հոգին, որովհետև նա Աստծու կամքի համաձայն է բարեխոսում հավատացյալների համար:

²⁸ Գիտենք, որ Աստված բարու համար գործակից է լինում նրանց, ովքեր սիրում են

Ց.11 Ա Կր 3.16:

Ց.15 «Աբբա». արամեերեն նշ է «Հայր»:

Ց.15 Մր 14.36, Գղ 4.6:

Ց.15-17 Գղ 4.5-7:

Ց.18 Իմս 3.5-6:

Ց.20 Ծն 3.17-19:

Ց.23 Բ Կր 5.2-4:

իրեն և կանչվել են ըստ նրա ծրագրի,* ²⁹ որովհետև Աստված սկզբից էր ճանաչում նրանց և սկզբից էլ սահմանեց, որ նրանք լինեն իր Որդու հարազատ պատկերը, որպեսզի Հիսուսը լինի անդրանիկը Բագում եղբայրների մեջ: ³⁰ Ում որ սկզբից սահմանել էր, նրանց նաև կանչեց, կանչվածներին նաև արդարացրեց և արդարացվածներին էլ փառավորեց:

Աստծու սերը

³¹ Ի՞նչ կարող ենք ասել այս բոլորից հետո: Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կարող է մեզ հակառակ լինել: ³² Եթե Աստված իր Որդուն իսկ չինայեց, այլ նրան մինչև անգամ մահվան մատնեց մեզ համար, նրա հետ նաև ամեն բան չի՞ շնորհելու մեզ: ³³ Ո՞վ է, որ մեղադրելու է Աստծու ընտրյալներին: Ոչ ոք, քանի որ Աստված է, որ արդարացնում է: ³⁴ Կամ ո՞վ է դատապարտելու: Հիսուս Քրիստո՞սը, որ մեռավ մեզ համար, բայց մանավանդ հարություն առավ և այժմ Աստծու աջ կողմում է ու բարեխոսում է մեզ համար: Իհարկե, ո՞չ: ³⁵ Ուրեմն ո՞վ կարող է բաժանել մեզ Քրիստոսի սիրուց՝ նեղություն՞ւնը, անձկություն՞ւնը, հալածա՞նքը, սո՞վը, մերկություն՞ւնը, վտա՞նգը կամ սո՞ւրը: ³⁶ Ինչպես գրված է սաղմոսներում.

«Քեզ համար են մարդիկ մեզ սպանում ամեն օր,
ոչխարի պես սպանդանոց են տանում»:

³⁷ Բայց այս բոլորից շա՛տ ավելի հաղթական ենք դուրս գալիս նրա շնորհիվ, ով սիրեց մեզ, ³⁸ որովհետև վստահ եմ, որ ո՛չ մահը և ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիների իշխանությունները, ո՛չ ներկան և ո՛չ գալիքը, ո՛չ էլ որևէ զորություն,* ³⁹ ո՛չ վերին և ո՛չ ներքին աշխարհները, ո՛չ էլ ուրիշ ստեղծագործություն, ոչինչ չի կարող մեզ բաժանել Աստծու սիրուց, որը մենք ճանաչեցինք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

9

Աստված և նրա ընտրած ժողովուրդը

¹ Քրիստոսով ճշմարիտն եմ ասում, առանց ստելու, և խիղճս էլ Սուրբ Հոգով վկայում է, ² որ մի մեծ տրտմություն և անհատնում ցավ ունեմ իմ սրտում: ³ Կուզեի, որ ես ինքս էլ նգովված լինեի Քրիստոսից՝ իմ արյունակից և ազգակից եղբայրների համար, ⁴ որ իսրայելացիներն են. նրանցն են թե՛ Աստծու որդիներ լինելու փառքը, թե՛ Ուխտի գրքերը, թե՛ օրենսդրությունը, թե՛ պաշտամունքը և թե՛ խոստումները: ⁵ Նրանցն են

՝8.28 «Աստված բարու համար գործակից է լինում նրանց, ովքեր սիրում են իրեն». մի շարք ձեռ. ունեն «Ամեն ինչ բարու համար գործակից է լինում նրանց, ովքեր սիրում են Աստծուն»:

՝8.36 Սղ 44.22:

՝8.38 «[Չար ոգիների] իշխանությունները» երկնային ոլորտում գործող, ոգեղեն աշխարհին պատկանող դիվական ուժեր են, որոնց մասին հստակ պատկերացում չունենք: Նրանց տրված բազմաթիվ անվանումների համար տե՛ս Ա. Կր 15.24, Եփ 1.21, 3.10 և 6.12, Կղ 1.21: Քրիստոսը խաչի վրա իր մահվամբ և ապա իր հարությանբ դատապարտեց նրանց և ցույց տվեց նրանց իշխանության շուտափույթ և վերջնական խափանումը (Ա. Կր 2.6 և 15.24):

՝9.4 Ելք 4.22:

նան նահապետները, և նրանցից է, որ մարմնապես ծնվեց Քրիստոսը, որը բոլորից վեր եղող հավետ օրհնյալ Աստվածն է: Ամեն:՝

⁶ Եվ սակայն Աստծու խոստումը երբեք չի կարող վրիպած լինել: Արդարև, Իսրայելի ցեղից եղող ամեն մարդ իսրայելացի չէ, ⁷ և Աբրահամից սերած ամեն զավակ Աստծու որդի չէ, այլ, ինչպես խոստումն էլ էր ասում. «Իսահակից ծնվածներն են, որ պիտի կոչվեն քո սերունդը»: ⁸ Այսինքն՝ ուզում է ասել, թե մարմնավոր ծնունդները Աստծու որդիները չեն, այլ խոստումով ծնվածներն են, որ Աստծու սերունդ պիտի համարվեն, ⁹ որովհետև Աստված Աբրահամին խոստում տվեց, երբ ասաց. «Եկող տարի այս ժամանակ պիտի գամ, և Մառան մի որդի պիտի ունենա»: ¹⁰ Բայց ոչ միայն այսքանը: Ռեբեկան մեկ հղությանը երկու որդի ունեցավ մեր հորից՝ Իսահակից: ¹¹⁻¹² Եվ մինչ նրանք չէին ծնվել և հետևաբար բարի կամ չար բան չէին գործել, Աստված Ռեբեկային ասաց. «Ավագ որդիդ կրտսերին ծառա պիտի լինի»: Այս բանն ասաց, որպեսզի ցույց տա, թե իր ծրագիրը հիմնվում է ազատ ընտրության վրա, որ կախում չունի մարդկանց գործերից, այլ միայն Աստծուց, որ կանչում է նրանց, ¹³ ինչպես որ գրված է. «Հակոբին սիրեցի, իսկ Եսավին մերժեցի»:՝

¹⁴ Արդ, ի՞նչ ասենք. մի՞ թե անարդարություն կա Աստծու մոտ: Բնա՛վ: ¹⁵ Արդարև, Մովսեսին ասում է. «Ում ուզում եմ ողորմել, կողորմեմ և ում ուզում եմ գթալ, կգթամ»: ¹⁶ Պարզ է, որ դա կախում չունի ո՛չ մարդու կամեցողությունից և ո՛չ էլ նրա թափած ճիգից, այլ միայն Աստծու ողորմությունից: ¹⁷ Ինչպես որ Մուրբ գրքում Աստված ասում է փարավոնին. «Բարձրացրի քեզ, որպեսզի քեզնով ցույց տամ իմ զորությունը, և իմ անունը տարածվի ամբողջ աշխարհում»:՝ ¹⁸ Սա նշանակում է, որ Աստված ում ուզում է, ողորմում է, և ում սիրտը որ ուզում է կարծրացնել, կարծրացնում է:

Աստծու բարկությունը և ողորմությունը

¹⁹ Անշուշտ, մեկը կարող է հարցնել. «Եթե այդպես է, էլ ինչո՞ւ է մեղադրում: Ո՞վ է կարողացել հակառակվել նրա կամքին»: ²⁰ Բայց դու ո՛վ ես, ո՛վ մարդ, որ Աստծու դեմ ես խոսում: «Մի՞ թե ստեղծվածը կարող է իր ստեղծողին ասել՝ ինչո՞ւ այդպես ստեղծեցիր ինձ»:՝ ²¹ Կամ կավագործ բրուտը իրավունք չունի՞ նույն զանգվածից տարբեր անոթներ շինելու, մեկը՝ պատվական, մյուսը՝ հասարակ:՝ ²² Արդ, Աստված ուզենալով ցույց տալ իր բարկությունը և հայտնի դարձնել իր զորությունը՝ մեծ

Պ.5 «...որը բոլորից վեր եղող հավետ օրհնյալ Աստվածն է». սա մեկն է այն համարներից, որոնք հատուկ կերպով հաստատում են Քրիստոսի աստվածությունը: Նոր Կտակարանի այդ համարներից են՝ Մտ 1.23, 28.19: Ղկ 5.20-21: Հհ 1.1,14 և 18,10.30 և 33: Հո 1.4: Փպ 2.6: Կդ 1.15-19, 2.9: Տո 2.13: Եբր 1.2-8: Բ Պտ 1.1: Հտ 1.7-8 և 13.18:

Պ.7 Ծն 21.12:

Պ.9 Ծն 18.10:

Պ.12 Ծն 25.23:

Պ.13 Մդ 1.2-3:

Պ.15 Ելք 33.19:

Պ.17 Ելք 9.16 [LXX]:

Պ.20 Ես 29.16, 45.9, Իմս 12.12:

Պ.21 Իմս 15.7, Սբ 33.13:

համբերատարությամբ հանդուրժեց իր բարկությանն արժանի մարդկանց, որոնք դատապարտված են կորստյան,²³ որպեսզի, մյուս կողմից, իր մեծ փառքը հայտնի դարձնի նրանց, որոնք արժանի են իր ողորմությանը, և որոնց նա սկզբից պատրաստեց իր փառքին մասնակից դարձնելու համար:²⁴ Այս վերջինները մենք ենք, որոնց Աստված կանչեց ոչ միայն հրեաներից, այլ նաև բոլոր ազգերի միջից,²⁵ ինչպես որ ասում է Օսիա մարգարեի բերանով.

«Այն ժողովրդին, որ իմ ժողովուրդը չէր,
իմ ժողովուրդ եմ կոչելու,
նրան, որ սիրելի չէր ինձ, սիրելի եմ կոչելու:»

²⁶ Եվ հենց այնտեղ, ուր նրանց ասացի
"Դուք իմ ժողովուրդը չեք", -
այնտեղ նրանք

կենդանի Աստծու որդիներ պիտի կոչվեն:»

²⁷ Իսկ Եսայի մարգարեն Իսրայելի համար այսպես է գոչում. «Եթե նույնիսկ Իսրայելի որդիների թիվը ծովի ավազի չափ լինի, մի փոքր մնացորդ է միայն փրկվելու,»

²⁸ որովհետև Տերն արդարությամբ ու ամբողջապես կատարում է իր խոստումը և անհապաղ կատարելու է իր խոստումը երկրի վրա:»²⁹ Եվ ինչպես կանխապես մի ուրիշ տեղ էլ ասում է Եսային.

«Եթե Ամենակալ Տերը
մի մնացորդ պահած չլիներ մեզնից,
Սողոմոնի և Գոմորի նման կորած կլինեինք:»

Իսրայելացիները և փրկությունը

³⁰ Ուրեմն ի՞նչ ենք եզրակացնում: Հեթանոսները, որոնք չէին հետևում Աստծու արդարությանը, արդարացան, որովհետև հավատացին Քրիստոսին,³¹ մինչդեռ Իսրայելի ժողովուրդը չարդարացավ Մովսեսի Օրենքի միջոցով, որ տրված էր մարդկանց արդարացնելու համար:³² Ինչո՞ւ, որովհետև չհավատաց Քրիստոսին և կարծում էր, թե Օրենքի գործադրությամբ կարդարանա: Հենց դա էլ պատճառ դարձավ, որ նրանք գլորվեն «գայթակղության առիթ հանդիսացող քարի» վրա, այսինքն՝ Քրիստոսի,³³ որի մասին մարգարեության մեջ գրված է.

«Ահա ես Սիոնի մեջ դնում եմ մի քար,
որ առիթ պիտի դառնա գլորման,
մի ժայռ, որ առիթ պիտի դառնա գայթակղության.
բայց ով հավատա նրան, հուսախաբ չի լինի:»

^{9.22} Իսն 12.20-21:

^{9.23} «Սկզբից պատրաստեց» կամ «նախապատրաստեց»:

^{9.25} Օս 2.23:

^{9.26} Օս 1.10:

^{9.27-28} Ես 10.22-23 [LXX]:

^{9.29} «Ամենակալ Տերը». բոց՝ «Չորությունների Տերը»:

^{9.29} Ես 1.9 [LXX]:

¹ Եղբայրներ՝ ը, ի սրտե մաղթում եմ և աղոթում, որ Աստված փրկի իսրայելացիներին, ² որովհետև կարող եմ նրանց մասին վկայել, թե նախանձախնդիր են Աստծու հանդեպ, միայն թե այս նախանձախնդրությունը հիմնված չէ Աստծու ճշմարիտ գիտության վրա: ³ Նրանք չհասկացան, թե Աստված ի՛նչ ձևով էր ուզում արդարացնել մարդկանց: Արդարանալու իրենց հասկացած ձևին կառչելով՝ նրանք չընդունեցին Աստծու արդարության ուղին: ⁴ Մինչդեռ Օրենքը Քրիստոսով է հասել իր վախճանին, և Քրիստոսին հավատացողն է միայն արդարանում:՝

Փրկություն բոլորին

⁵ Օրենքից եկող արդարության մասին Մովսեսը գրում է. «Ով որ կատարի այն, դրանով պիտի փրկվի»:՝ ⁶ Իսկ հավատից եկող արդարության մասին այսպես է ասում. «Դու ինքդ քեզ մի՛ ասա՝ ո՞վ է ելնելու երկինք». ուզում է ասել՝ Քրիստոսին այնտեղից իջեցնելու համար:՝ ⁷ «Կամ մի՛ ասա՝ ո՞վ է իջնելու անդունդ». այսինքն՝ Քրիստոսին մեռելներից վեր հանելու համար:՝ ⁸ Նայի՛ ը, թե ի՛նչ է ասում Սուրբ գիրքը. «Աստծու պատգամը մոտ է քեզ, քո բերանում և քո սրտում». ուզում է ասել՝ հավատի պատգամը, որը քարոզում ենք. ⁹ որովհետև եթե քո բերանով խոստովանես, թե Հիսուսը Տեր է, և քո սրտում հավատաս, թե Աստված նրան հարություն տվեց մեռելներից, կփրկվես: ¹⁰ Այսինքն՝ որևէ մեկը, որ հավատում է իր սրտում, արդարանում է, և երբ խոստովանում է բերանով, փրկվում է:

¹¹ Սուրբ գիրքն ասում է. «Ով որ հավատա նրան, ամոթով չի մնալու»:՝ ¹² Հավատի մեջ խտրություն չկա հրեայի ու հեթանոսի միջև. բոլորի Տերը նույն Տերն է՝ գթառաստ բոլոր նրանց հանդեպ, որոնք կանչում են նրան, ¹³ ինչպես մարգարեն է ասում. «Ով որ Տիրոջը օգնության կանչի, կփրկվի»:՝

¹⁴ Բայց մարդիկ ինչպե՞ս օգնության կանչեին Քրիստոսին՝ առանց հավատալու նրան. կամ ինչպե՞ս հավատային՝ առանց լսած լինելու նրա մասին. կամ ինչպե՞ս լսեին, եթե քարոզող չկար. ¹⁵ և կամ ինչպե՞ս քարոզեին՝ առանց Աստծուց առաքված լինելու: Այդ քարոզչությունն է ակնարկում մարգարեն, երբ գրում է. «Ի՛նչ գեղեցիկ է տեսնել ավետիս բերողներին, որոնք գալիս են խաղաղության լուրը տալու և գալիք բարությունն ավետելու»:՝ ¹⁶ Բայց բոլորը չընդունեցին այդ ավետիսը: Արդարև, Եսայի մարգարեն գոչում է. «Տե՛ ը, ո՞վ հավատաց մեր տված լուրին»:՝ ¹⁷ Նշանակում է, ուրեմն, որ հավատը ծնունդ է առնում քարոզչությունը լսելիս, իսկ քարոզչությունը հավատ է

՝9.33 Ես 28.16 [LXX]:

՝10.4 «Վախճան» բառն այստեղ միաժամանակ նշ է թե՛ նպատակակետ, թե՛ կատարում և թե՛ ավարտ:

՝10.5 Ղև 18.5:

՝10.6-8 Բ Օր 30.12-14:

՝10.11 Ես 28.16 [LXX]:

՝10.13 Հվլ 2.32:

՝10.15 Ես 52.7:

՝10.16 Ես 53.1[LXX]:

արթնացնում, երբ Քրիստոսի խոսքերն են քարոզվում:՝¹⁸ Բայց հարց եմ տալիս. չլսեցի՞ն արդյոք. ընդհակառակը՝

«Նրանց ձայնը ամբողջ երկիրն իմացավ,
նրանց պատգամն աշխարհի ծայրերը հասավ»:

¹⁹ Բայց կրկին հարց եմ տալիս. արդյոք ք Իսրայելը չիմացավ: Անշուշտ, իմացավ: Դրա համար է, որ Աստված նախ Մովսեսի միջոցով ասում է. «Ես գրգռելու եմ ձեր նախանձը մի ժողովրդով, որ դեռ ժողովուրդ չէ, կսկծացնելու եմ ձեր սիրտն անմիտ մի ժողովրդով»:²⁰ Աստված շատ ավելին է ասում Եսայի մարգարեի բերանով.

«Ինձ գտան նրանք, ովքեր չէին փնտրում ինձ.
հայտնվեցի նրանց, ովքեր ինձնով չէին հետաքրքրվում»:

²¹ Իսկ Իսրայելի մասին ասում է.

«Ամբողջ օրը փորձեցի հետ՝ դեպի ինձ դարձնել
անհնազանդ և ինձնից ապստամբած ժողովրդին»:

11

Աստված չմերժեց իր ժողովրդին

¹ Արդ, հարց եմ տալիս. -Արդյոք Աստված մերժե՞ց իր ժողովրդին: Բնա՛վ, որովհետև ես ինքս ել իսրայելացի եմ, Աբրահամի սերնդից, Բենիամինի ցեղից:՝² «Աստված չմերժեց իր ժողովրդին», որին սկզբից ընտրել էր: Կամ չգիտե՞ք՝ Եղիայի մասին ի՛նչ է ասում Սուրբ գիրքը, թե ինչպես Եղիան Աստծու առաջ ամբաստանում էր Իսրայելին՝ ասելով.՝³ «Տե՛ր, կոտորեցին քո մարգարեներին, կործանեցին քո զոհասեղանները, ե՛ս մնացի միայն, և ինձ էլ են ուզում սպանել»:⁴ Բայց ի՞նչ է պատասխանում նրան Աստված. «Ես պահեցի ինձ համար յոթ հազար մարդ,-ասում է,- որոնք երկրպագություն չարեցին Բահադին»:⁵ Նույնպես և ներկա ժամանակում Աստված, որպես իր շնորհի արտահայտություն, իր ընտրությամբ փոքրաթիվ մի մնացորդ պահեց:՝⁶ Արդ, եթե ընտրությունը շնորհի արտահայտություն է, ապա ուրեմն այն կախում չունի մարդկանց գործերից, այլապես շնորհն այլևս շնորհ չի լինի:՝⁷ Ուրե՞մն: Իսրայելը չկարողացավ ձեռք բերել այն, ինչ ուզում էր. ընտրյալ այդ մնացորդն էր միայն, որ տիրացավ դրան, իսկ մյուսները Աստծու շնորհի դեմ փակեցին իրենց սրտերը,⁸ ինչպես որ Սուրբ գիրքն ասում է.

«Աստված ապշության մատնեց նրանց,

^{10.17} «Քրիստոսի». շատ ձեռ. ունեն «Աստծու»:

^{10.18} Սղ 19.4 [LXX]:

^{10.19} Բ Օր 32.21:

^{10.20} Ես 65.1 [LXX]:

^{10.21} Ես 65.2 [LXX]:

^{11.1} Փպ 3.5:

^{11.3} Գ Թգ 19.10, 14:

^{11.4} Գ Թգ 19.18:

^{11.6} «...չի լինի». մի շարք ձեռ. ավելացնում են «Իսկ եթե [ընտրությունը] գործերի արդյունքն էր, նշանակում է՝ շնորհ չէր, այլապես գործը ևս պիտի դադարեր գործ լինելուց (համարվելուց)»:

որպեսզի աչք ունենալով հանդերձ՝ չտեսնեն,
ականջ ունենալով հանդերձ՝ չլսեն
դեռ մինչև այսօր»:

⁹ Իսկ Դավիթն ասում է.

«Թող նրանց սեղանը
որոգայթ ու ծուղակ լինի նրանց համար,
գայթակղություն ու հատուցում նրանց համար»:

¹⁰ Թող խավարեն նրանց աչքերը, որ չտեսնեն.

հավիտյան գլխիկո՛ր դարձրու նրանց»:

¹¹ Արդ, հարց եմ տալիս. - Մի՞ թե դիտմամբ մոլորվեցին, որ կորստի մատնվեն: Բնա՛վ: Այլ նրանց հանցանքը պատճառ դարձավ, որ Աստված փրկությունը հեթանոսներին ուղարկի, որպեսզի գրգռի նրանց նախանձը: ¹² Բայց եթե նրանց հանցանքը պատճառ դարձավ, որ Աստծու շնորհով հարստանա աշխարհը, այսինքն՝ նրանց նվաստացումը պատճառ դարձավ, որ հեթանոսները հարստանան Աստծու շնորհով, որչա՛փ ավելի մեծ պիտի լինի բարիքը, երբ նրանք բոլորն էլ հասնեն փրկության:

Հեթանոսների փրկությունը

¹³ Բայց ձեզ՝ հեթանոսներիդ, ասում եմ. - Ես պարծենում եմ հեթանոսների առաքյալ լինելու իմ պաշտոնով՝ ¹⁴ մտածելով, որ թերևս այս ձևով իմ ազգակիցների նախանձը գրգռեմ և ինձ հաջողվի փրկել նրանցից ոմանց, ¹⁵ որովհետև եթե Աստված մերժեց նրանց, որպեսզի հեթանոս աշխարհը հաշտեցնի իր հետ, նշանակում է, որ երբ վերստին ընդունի նրանց, մեռելների հարություն տեղի կունենա:

¹⁶ Որ Աստված վերստին կընդունի նրանց, դա պարզ է, որովհետև եթե բերքի երախայրիքն Աստծուն է ընծայված, նշանակում է՝ ամբողջն ընծայված է Աստծուն, նույնպես, եթե ծառի արմատները Աստծուն են նվիրված, նշանակում է՝ ճյուղերն էլ են նվիրված Աստծուն: ¹⁷ Ճիշտ է, որ այդ ճյուղերից մի քանիսը կտրվեցին, և դու, որ մի վայրի ձիթենի էիր, պատվաստվեցիր նրանց փոխարեն և ըմպեցիր այդ ձիթենու արմատներից եկող հարուստ ավիշը: ¹⁸ Բայց մի՛ պարծեցիր և մի՛ արհամարհիր կտրված ճյուղերը. մի՛ մոռացիր, որ դո՛ւ ես արմատների վրա հաստատված և ոչ թե արմատները՝ քեզ վրա: ¹⁹ Հիմա կասես. «Աստված այդ ճյուղերը կտրեց, որ ի՛նձ պատվաստի»: ²⁰ Ճիշտ է, նրանք՝ հրեաները, կտրվեցին, որովհետև չհավատացին, իսկ դու՝ հեթանոսդ, հաստատվեցիր արմատի վրա, որովհետև հավատացիր: Բայց մի՛ հպարտացիր, այլ վախեցի՛ր. ²¹ որովհետև եթե Աստված բուն ճյուղերին չխնայեց, գուցե քեզ էլ երբեք չխնայի: ²² Տե՛ս, թե Աստված որքա՛ն բարի է և միաժամանակ խիստ: Խիստ է հավատի մեջ կործանվածների հանդեպ և բարի՝ քո հանդեպ, պայմանով, որ շարունակես արժանի մնալ նրա բարությանը, այլապես դու էլ կկտրվես: ²³ Այդպես էլ եթե հրեաները թողեն իրենց անհավատությունը, կրկին պիտի պատվաստվեն արմատի վրա, որովհետև Աստված կարող է վերստին պատվաստել

^{11.8} Բ Օր 29.4, Ես 29.10:

^{11.9-10} Մղ 69.22-23 [LXX]:

նրանց: ²⁴ Եթե դու, որ մի վայրի ձիթենի էիր, որ կտրվեցիր ու պատվաստվեցիր ընտանի ձիթենու վրա, որ քո բունը չէր, որքա՞ն ավելի հեշտությամբ պիտի պատվաստվեն նրանք, որ այդ նույն ձիթենու բնական ճյուղերն են:

Աստծու ողորմությունը բոլոր մարդկանց

²⁵ Եղբայրներ՝ ը, որպեսզի դուք ձեզ իմաստուն չհամարեք, ուզում եմ, որ Աստծու ծրագրի վերաբերյալ հետևյալ ծածուկ խորհուրդն իմանաք, որ Իսրայելի մեկ մասի ցուցաբերած համառ մերժումը կտևի այնքան ժամանակ, մինչև բոլոր հեթանոսները դառնան դեպի Աստված, ²⁶ որից հետո ամբողջ Իսրայելը կփրկվի, ինչպես որ գրված է.

«Միտնից կգա Փրկիչը

և Հակոբի սերնդի ամբարշտությունը մի կողմ կդնի:»

²⁷ Եվ սա կլինի այն ուխտը,

որ կկնքեմ նրանց հետ,

երբ ջնջեմ նրանց մեղքերը:»

²⁸ Թեև Ավետարանի հանդեպ ունեցած իրենց վերաբերմունքով նրանք թշնամի եղան Աստծուն, ինչ որ նպաստավոր եղավ ձեզ համար, բայց նկատի ունենալով Աստծու ընտրությունը՝ նրանք սիրելի են Աստծուն՝ իրենց հայրերի սիրուն. ²⁹ որովհետև Աստծու պարզկենտրոն ու կոչումը անդառնալի են: ³⁰ Ինչպես որ դուք մի ժամանակ անհնազանդ էիք Աստծուն, իսկ հիմա Աստծու ողորմությանն արժանացաք նրանց անհնազանդությամբ, ³¹ այնպես էլ այժմ նրանք մերժեցին հնազանդվել Աստծուն՝ ձեր գտած ողորմության պատճառով, որպեսզի իրենք էլ արժանանան ողորմության:

³² Արդարև, Աստված էր, որ բոլոր մարդկանց անհնազանդության մեջ պահեց, որպեսզի բոլորին էլ ողորմի:

Փառաբանություն Աստծուն

³³ Օ՛, ի՛նչ խորն են Աստծու առատ ողորմությունը, իմաստությունն ու զիտությունը: Որքա՞ն անքննելի են նրա վճիռները, և անզննելի՝ նրա ճանապարհները: ³⁴ Եվ իսկապես.

«Ո՞վ կարողացավ երբևէ կարդալ Տիրոջ միտքը,

կամ ո՞վ երբևէ խորհրդատու եղավ նրան.»

³⁵ կամ ո՞վ ինչ տվեց նրան երբևէ,

որ փոխարենը առնի նրանից:»

³⁶ Որովհետև ամեն բան նրանից է, ամեն բան գոյություն ունի նրանով ու նրա համար: Նրան փա՛ռք հավիտյանս: Ամեն:»

12

^{11.26} Ես 59.20-21 [LXX]:

^{11.27} Ես 27.9 [LXX]:

^{11.33} Ես 55.8, Իմս 17.1:

^{11.34} Ես 40.13 [LXX]:

^{11.35} Հք 41.11:

^{11.36} Ա Կր 8.6:

Ապրել Աստուծու ծառայության մեջ

¹ Ուստի, եղբայրներ՝ ը, քանի որ Աստված այնքա՛ն ողորմած եղավ մեր հանդեպ, աղաչում եմ, որ դուք ձեզ Աստծուն ընծայեք որպես նրան վերապահված կենդանի մի գոհ, որովհետև դա՛ է Աստծու ուզած հոգևոր պաշտամունքը: ² Մի՛ ընդօրինակեք այս աշխարհի մարդկանց վարմունքը, այլ նոր մարդ եղեք նորոգված մտքերով, որպեսզի իմանալով Աստծու կամքը, ձեր փորձառությամբ ընտրեք լավը, այսինքն՝ ինչ որ բարի է, ինչ որ ընդունելի է նրան և կատարյալ:

³ Ինձ տրված Աստծու շնորհով այս պատվերն եմ տալիս յուրաքանչյուրիդ. մեծամիտ մի՛ եղեք, ընդհակառակը, միշտ համե՛ստ եղեք և մեր Աստծուց ձեզ տրված հավատի չափով գնահատեցեք ինքներդ ձեզ: ⁴ Ինչպես մեր մարմինը բազում անդամներ ունի, որոնց պաշտոնը, սակայն, նույնը չէ,⁵ այնպես էլ, միացած լինելով Քրիստոսին, մենք բոլորս մեկ մարմին ենք: Թեպետ որպես անդամներ կապված ենք միմյանց, ⁶ բայց Աստծու շնորհը յուրաքանչյուրիս տվել է տարբեր պարզև, որ պետք է գործածենք: Եթե մարգարեության պարզևն ունենք, պետք է պատգամենք մեր հավատի համեմատ:

⁷ Եթե ծառայելու շնորհն է տրված, պետք է ծառայենք: Եթե ուսուցանելու ձիրք ունենք, պետք է ուսուցանենք: ⁸ Եթե հորդորելու կարողություն ունենք, պետք է հորդորենք: Իր ունեցածն ուրիշներին բաժանողը առատորեն թող բաշխի: Վերակացուն եռանդագին թող աշխատի: Ողորմություն անողը խնդությամբ թող անի:

⁹ Ձեր սերը թող անկեղծ լինի: Ատեցե՛ք, ինչ որ չար է, և կառչա՛ձ մնացեք բարուն:

¹⁰ Եղբոր նման գորովանքով սիրեցեք միմյանց: Հարգելու մեջ գերազանցե՛ք միմյանց:

¹¹ Եռանդագի՛ն աշխատեցեք, առանց ծուլանալու: Ձերմեռանդ հոգով ծառայեցե՛ք Տիրոջը: ¹² Հույսով ուրախացե՛ք, նեղության մեջ եղե՛ք համբերող, հարատև աղոթեցե՛ք:

¹³ Կարիքի մեջ գտնվող եղբայրներին օգնեցե՛ք և միշտ հյուրասե՛ր եղեք: ¹⁴ Օրհնեցե՛ք ձեզ հալածողներին. մի՛ անիծեցեք, այլ օրհնեցե՛ք: ¹⁵ Ուրախացողների հետ ուրախացե՛ք, իսկ լացողների հետ լա՛ց եղեք: ¹⁶ Նույն վերաբերմո՛ւնքն ունեցեք բոլորի հանդեպ. մեծամիտ մի՛ եղեք, խոնարհ մարդկանց հետ ընկերություն ւն արեք և ձեզ իմաստուն մի՛ համարեք:

¹⁷ Որևէ մեկի չարիքին չարիքով մի՛ հատուցեք: Ձանացե՛ք անել այն, ինչ բարի է բոլոր մարդկանց աչքին: ¹⁸ Ինչքան կարող եք, բոլորի հետ խաղա՛ղ ապրեցեք:

¹⁹ Միրելիներ՝ ը, վրեժ լուծելու մասին երբեք մի՛ մտածեք, այլ թողե՛ք, որ Աստծու բարկությունը կատարի այն, որովհետև Սուրբ գրքում Տերն ասում է.

«Ի՛մն է դատելու և պատժելու իրավունքը. ե՛ս եմ հատուցելու»,²⁰ իսկ մի ուրիշ տեղ ասում է.

«Եթե քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան,

^{12.2} «Ընտրեք լավը». շատ ձեռ. չունեն այս բառերը:

^{12.4-5} Ա Կր 12.12:

^{12.6-8} Ա Կր 12.4-11:

^{12.14} Մտ 5.44, Ղկ 6.28:

^{12.15} Սր 7.34:

^{12.16} Առ 3.7:

^{12.19} Բ Օր 32.35:

եթե ծարավ է, ջո՛ւր տուր նրան:

Երբ այդպես վարվես, ամոթն արդեն կայրի նրան»:

²¹ Մի՛ պարտվիր չարից, այլ բարին վ հաղթիր չարին:

13

Հնազանդվել իշխանությանը

¹ Ամեն մարդ պետք է հնազանդվի պետական իշխանություններին, որովհետև առանց Աստծու թույլտվության իշխանություն չի կարող լինել, և գոյություն ունեցող իշխանություններն Աստծուց են կարգված: ² Ով հակառակում է իշխանությանը, Աստծու հրամանին է հակառակում, և հակառակողներն իրենք իրենց դնում են դատապարտության տակ: ³ Իշխողները վախ չեն պատճառում բարիք գործողներին, այլ չարագործներին: Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանություններից՝ բարի՛ք գործիր և գովասանք կլսես նրանից, ⁴ որովհետև նա Աստծու պաշտոնյան է՝ քո բարիքի համար կարգված: Իսկ եթե չար գործ անես, վախեցի՛ր նրանից, որովհետև գուր տեղը չէ որ սուր է կրում. որպես Աստծու պաշտոնյա՝ նա բարկությամբ է դատում և պատժում չարագործներին: ⁵ Ահա թե ինչու պետք է հնազանդվել իշխանություններին ոչ միայն պատժից գերծ մնալու, այլ հատկապես խղճով հանգիստ լինելու համար: ⁶ Դրա համար է նաև, որ հարկեր եք վճարում իշխանություններին, որպեսզի նրանք, իբրև Աստծու պաշտոնյաներ, շարունակեն կատարել իրենց այդ գործը: ⁷ Հետևաբար, նրանցից յուրաքանչյուրի հանդեպ կատարեցե՛ք ձեր պարտավորությունը՝ հարկը տալով նրան, ում հարկ պետք է տաք, մաքսը տալով նրան, ում մաքս պետք է տաք, հնազանդվելով նրան, ում պարտավոր եք հնազանդվել, և հարգելով նրան, ում պարտավոր եք հարգել:

Մեր միմյանց հանդեպ

⁸ Ոչ ոքի ոչ մի բանով պարտական մի՛ մնացեք, բացի միմյանց սիրելու պարտավորությունից, քանի որ ընկերոջը սիրողը կատարած է լինում Աստծու Օրենքը, ⁹ որովհետև Աստծու պատվիրանները՝ «Մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, սուտ վկայություն մի՛ տուր, մի՛ ցանկացիր», և բոլոր մյուսները խտացված են այս միակ պատվիրանի մեջ. «Միրի՛ր քո ընկերոջը քո անձի պես»: ¹⁰ Ով սիրում է իր ընկերոջը, չարիք չի անի նրան: Ուրեմն սիրել՝ նշանակում է Աստծու Օրենքը լրիվ գործադրել:

¹¹ Միրո այս սկզբունքո՛վ ընթացեք՝ գիտենալով, թե ի՛նչ ժամանակում ենք ապրում: Ժամանակն է, որ թոթափենք քունը և արթնանանք, որովհետև փրկությունն այժմ

^{12.20} Առ 25.21-22 [LXX]:

^{13.1} Իմս 6.3:

^{13.6-7} Մտ 22.21, Մր 12.17, Ղկ 20.25:

^{13.9} ա Ելք 20.14, Բ Օր 5.18: բ Ելք 20.13, Բ Օր 5.17: գ Ելք 20.15, Բ Օր 5.19: դ Ելք 20.17, Բ Օր 5.21: ե Ղև 19.18:

ավելի մոտ է մեզ, քան այն ժամանակ, երբ հավատացինք:՝¹² Գիշերն ահա անցնում է, և մոտ է ցերեկը: Ուստի հեռանանք խավարի գործերից և մեզ վրա վերցնենք լույսի զենքերը՝¹³ ապրելու համար այնպես, ինչպես վայել է լույսի մեջ քայլողներին, փոխանակ ապրելու անառակությամբ և հարբեցողությամբ, խառնակությամբ և պղծությամբ կամ նախանձով և հակառակությամբ:՝¹⁴ Ձեզ վրա վերցրեք Տեր Հիսուս Քրիստոսի նկարագիրը և հետամուտ մի՛ եղեք մարմնի ցանկությունները կատարելու:

14

Մի՛ դատիր եղբորդ

¹ Հավատի մեջ տկարացած մեկին ընդունեցե՛ք՝ առանց քննադատելու նրա խիղճը տանջող կասկածները:՝² Օրինակ՝ մեկը հավատում է, թե ամեն բան կարելի է ուտել: Մեկ ուրիշը, որ կասկած ունի այդ մասին, միայն բանջարեղեն է ուտում:՝³ Ամեն բան ուտողը թող չարհամարհի չուտողին, իսկ չուտողը թող չքննադատի ուտողին, որովհետև Աստված ընդունել է նրան:՝⁴ Ո՛վ էս դու, որ դատում ես Աստծու ծառային: Տերն ի՛նքը գիտի միայն, կանգո՞ւն է նա իր հավատի մեջ, թե՞ ընկած: Բայց վստահ եղեք, որ նա կանգուն պիտի մնա, որովհետև Տերը կարո՞ղ է նրան կանգուն պահել:՝

⁵ Այդպես ոմանք մտածում են, որ Աստծուն պաշտելու համար այսինչ օրն ավելի կարևոր է, քան մյուս օրը, մինչդեռ ուրիշների համար բոլոր օրերը նույնն են: Յուրաքանչյուր ոք թող պահի իր համոզումը:՝⁶ Բավական է, որ թե՛ հատուկ օր փնտրողը և թե՛ օրերի մեջ խտրություն չդնողը՝ երկուսն էլ մտածում են պատվել Տիրոջը: Այնպես էլ թե՛ ամեն բան ուտողն է պատվում Տիրոջը և թե՛ չուտողը, երբ երկուսն էլ գոհություն են հայտնում Աստծուն:

⁷ Մեզնից ոչ ոք ինքն իր անձի համար չի ապրում և ինքն իր համար չի մեռնում:՝⁸ Եթե ապրում ենք, Տիրոջ համար ենք ապրում, և եթե մեռնում ենք, Տիրոջ համար ենք մեռնում, ինչը նշանակում է, որ կյանքի մեջ լինի, թե մահվան մեջ, պատկանում ենք Տիրոջը:՝⁹ Դրա համար էլ Քրիստոսը մեռավ և վերակենդանացավ, որպեսզի բոլորի Տերը լինի հավասարապես, թե՛ ապրողների և թե՛ մեռածների:՝¹⁰ Ուրեմն ինչո՞ւ ես դատում քո եղբորը կամ ինչո՞ւ ես արհամարհում նրան: Բոլորս էլ կանգնելու ենք Քրիստոսի ատյանի առաջ,՝¹¹ որովհետև մարգարեության մեջ գրված է.

«Երդվում եմ ես ինձնով,-ասում է Տերը,-
որ ամեն ծունկ պիտի խոնարհվի իմ առաջ,
և ամեն լեզու պիտի փառաբանի,
որ ես եմ Աստվածը:»՝

Մի՛ գայթակղեցրու եղբորդ

^{13.11} «Արթնանանք». շատ ձեռ. ունեն «արթնանաք»:

^{14.1-6} Գղ 4.10, Կղ 2.16:

^{14.4} «Տերը». շատ ձեռ. ունեն «Աստված»:

^{14.10} Բ Կր 5.10:

^{14.11} Ես 45.23 [LXX]:

¹² Ուրեմն, քանի որ մեզնից յուրաքանչյուրն իր անձի համար հաշիվ է տալու Աստծուն, ¹³ դադարենք այսուհետև միմյանց քննադատելուց և փոխարենը ջանանք պատճառ չդառնալ մեր եղբայրների գայթակղությանն ու մեղանչումին:

¹⁴ Հիսուս Քրիստոսով վստահորեն այս գիտեմ, որ ինքնին պիղծ բան չկա: Մի բան պիղծ է լինում այն մարդու համար, որ պիղծ է համարում այն: ¹⁵ Եթե գիտես, թե քո ուտելով վիրավորում ես եղբորդ խղճմտանքը, սիրով վարված չես լինի, երբ ուտես: Քո ուտելիքով պատճառ մի՛ եղիր քո եղբոր կորստյան, որի համար Քրիստոսն իր կյանքը տվեց: ¹⁶ Առիթ մի՛ տուր, որ այն բանը, որ դու բարի և ուղիղ ես համարում, պատճառ դառնա հայեցողության, ¹⁷ որովհետև Աստծու արքայությունն ուտելիք կամ ըմպելիք չէ, այլ արդարություն, խաղաղություն և խնդություն՝ Սուրբ Հոգուց տրված: ¹⁸ Եվ ով սրանցով է ծառայում Քրիստոսին, նա հաճելի կլինի Աստծուն և գովելի՝ մարդկանց կողմից:

¹⁹ Արդ, այսուհետև հետամուտ լինենք խաղաղության և աշխատենք միմյանց հավատն ամրապնդել: ²⁰ Չլինի թե ուտելիքի պատճառով քանդես Աստծու գործը: Ամեն բան ինքնին մաքուր է, բայց սխալ է մի բան ուտել, երբ դա գայթակղեցնում է ուրիշին: ²¹ Ավելի լավ է ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ էլ ուրիշ որևէ բան անել, որով քո եղբայրը սայթաքում է կամ գայթակղվում, կամ տկարանում: ²² Այս մասին քո համոզումը թող մնա քո և Աստծու միջև: Երանի՛ նրան, ով ինքն իրեն դատապարտության չի ենթարկում այնպիսի բաներով, որոնցով պատճառ է դառնում իր ընկերոջ փորձությանը: ²³ Մյուս կողմից, եթե մեկը կասկած ունի իր կերածի անմաքրության մասին, ենթակա է Աստծու դատապարտությանը, եթե ուտի, որովհետև նրա արարքը հավատի արդյունք չէ: Եվ ամեն ինչ, որ հավատից չի գալիս, մեղք է:

15

Օգնեցե՛ք և ընդունեցե՛ք միմյանց

¹ Մենք՝ հավատի մեջ ուժեղ եղողներս, պետք է համբերությամբ տանենք թույլերի տկարությունները և միայն մեր մասին չմտածենք: ² Մեզնից յուրաքանչյուրը պետք է հետաքրքրվի իր շուրջը եղողներով՝ մտածելով նրանց բարիքի մասին՝ նրանց հավատն ամրապնդելու համար: ³ Արդարև, Քրիստոսն էլ ինքն իր մասին չմտածեց, այլ ինչպես Սուրբ գիրքն է ասում՝ «Քեզ նախատողների նախատինքներն ինձ վրա ընկան»: ⁴ Բայց ինչ որ սկզբից գրվեց Սուրբ գրքում, գրվեց մեր դաստիարակության համար, որպեսզի համբերությամբ և Սուրբ գրքերի՝ մեզ պարզևած քաջալերանքով հույս ունենանք: ⁵ Թող համբերություն և ամեն տեսակ քաջալերանք պարզևողը՝ Աստված, շնորհ տա ձեզ, որ Հիսուս Քրիստոսի օրինակով նույն բանը խորհեք միմյանց մասին, ⁶ որպեսզի միասիրտ և միաբերան փառավորեք Աստծուն, մեր Տիրոջ՝

^{14.21} Մի շարք ձեռ. չունեն «կամ գայթակղվում, կամ տկարանում»:

^{14.23} Մի շարք հուն. և գրք. ձեռագրերում այստեղ կրկնված ենք գտնում 16-րդ գլխի 24-26 համարները:

^{15.3} Սղ 69.9:

^{15.4} Ա Սղ 12.9, Բ Սղ 15.9:

Հիսուս Քրիստոսի Հորը: ⁷ Հետևաբար, ընդունեցե՛ք միմյանց, ինչպես որ Քրիստոսն էլ ձեզ ընդունեց Աստծու փառքի համար:

Ավետարանը սահմանված է բոլոր ազգերի համար

⁸ Ասում եմ ձեզ, որ Քրիստոսը ծառայեց հրեաներին, որպեսզի ցույց տա Աստծու հավատարմությունն ու հաստատի նախահայրերին տրված խոստումները, ⁹ և որպեսզի բոլոր ազգերը փառավորեն Աստծուն նրա ողորմության համար, ինչպես Սուրբ գրքում է գրված.

«Դրա համար բոլոր ազգերի մեջ
պիտի փառաբանեմ քեզ,
և սաղմոսներով քո անունը օրհներգեմ»:

¹⁰ Ուրիշ տեղ ասում է.

«Ուրախացե՛ք, ո՛վ ազգեր, նրա ժողովրդի հետ»:

¹¹ Իսկ մի ուրիշ տեղ ասում է.

«Օրհնեցե՛ք Տիրոջը, դուք՝ ազգե՛ր բոլոր,
Գովեցե՛ք նրան, դո՛ւք՝ ժողովուրդներ բոլոր»:

¹² Իսկ Եսային ասում է.

«Պիտի ծլի Հեսսեի արմատը,
պիտի ելնի՝ ազգերին իշխելու համար,
և ազգերն իրենց հույսը նրա վրա պիտի դնեն»:

¹³ Արդ, հույս պարզևող Աստվածը թող ձեզ լցնի ամբողջական ուրախությամբ և խաղաղությամբ՝ իր հանդեպ ձեր ունեցած հավատով, որպեսզի Սուրբ Հոգու գործությամբ հույսով առատանաք:

Պողոսի ծառայությունը հեթանոսներին

¹⁴ Ինչ վերաբերում է ձեզ, եղբայրնե՛ր, ես ինքս համոզված եմ, որ դուք ինքնին լեցուն եք բարությանը ու լցված կատարյալ գիտությամբ և, հետևաբար, կարող եք նաև խրատել միմյանց: ¹⁵ Բայց իմ նամակում որոշ տեղեր շատ խիստ եղա ձեր նկատմամբ՝ ձեզ մի շարք բաներ հիշեցնելու համար: Աստված ինձ տվեց իր շնորհը, ¹⁶ որպեսզի Քրիստոս Հիսուսի սպասավորը լինեմ հեթանոսների մոտ և նվիրվեմ Աստծու Ավետարանի մատակարարմանը, որպեսզի հեթանոսներն ընծայվեն Աստծուն՝ իբրև Սուրբ Հոգով սրբված ընդունելի պատարագ: ¹⁷ Թեև իրավունք ունեմ պարծենալու Հիսուս Քրիստոսով այն վաստակի համար, որ ունեմ Աստծու մոտ, ¹⁸ բայց չեմ համարձակվում հիշել ուրիշ բան, քան միայն այն, ինչ Քրիստոսը կատարեց իմ միջոցով՝ հեթանոսներին Աստծուն հնազանդեցնելու համար, խոսքով թե գործով, ¹⁹ գորավոր նշաններով ու հրաշքներով, Սուրբ Հոգու գործությամբ, այնպես որ Երուսաղեմից սկսած մինչև Իլլիրիկում՝ ամեն կողմ տարածեցի Քրիստոսի

^{15.9} Բ Թգ 22.50, Սդ 18.49:

^{15.10} Բ Օր 32.43:

^{15.11} Սդ 117.1:

^{15.12} Ես 11.10 [LXX]:

Ավետարանը:՝²⁰ Եվ ինձ պատիվ համարեցի ավետարանել միայն այնտեղ, որտեղ Քրիստոսի անունը չէր լսվել, որպեսզի ուրիշի դրած հիմքի վրա չկառուցեմ, այլ, ինչպես Սուրբ գիրքն է ասում.

²¹ «Նրանք, որոնց չէր պատմվել նրա մասին, կտեսնեն, Նրանք, որոնք չէին լսել նրա մասին, կիմանան»:

Հոռմ այցելելու Պողոսի ծրագիրը

²² Այս մտահոգությունն էր, որ բազմիցս արգելք եղավ ինձ՝ գալու ձեզ մոտ:՝²³ Բայց հիմա, երբ այլևս անելիք չունեմ այս կողմերում և երկար տարիներ ի վեր անձկությամբ փափագում եմ ձեզ մոտ գալ, ուզում եմ առիթից օգտվել:՝²⁴ Երբ անցնեմ Իսպանիա, հույս ունեմ, որ իմ ճանապարհին կտեսնեմ ձեզ և ձեր օգնությամբ էլ ճանապարհ կընկնեմ այնտեղ, անշուշտ, նախ մի քիչ ձեր ներկայությունը վայելելուց հետո:

²⁵ Բայց հիմա գնում եմ Երուսաղեմ՝ օգնություն տանելու այնտեղի հավատացյալներին,՝²⁶ որովհետև Մակեդոնիայի և Աքայիայի եղբայրները հոժարակամ ուզեցին իրենց նվերներով մասնակից դառնալ Երուսաղեմի աղքատ հավատացյալների կարիքներին:՝²⁷ Այդպես ցանկացան, որովհետև իրենց նաև պարտական են զգում նրանց հանդեպ: Արդարև, քանի որ հեթանոսները հաղորդակից եղան նրանց հոգևոր բարիքներին, իրենք ևս պարտավոր են մասնակից լինել նրանց նյութական կարիքներին:՝²⁸ Արդ, այս պարտականությունը կատարելուց և հիշյալ նվերները Երուսաղեմի եկեղեցուն հանձնելուց հետո ձեր մոտով կանցնեմ Իսպանիա:՝²⁹ Եվ գիտեմ, որ երբ ձեզ մոտ գամ, պիտի գամ Քրիստոսի Ավետարանի լիակատար օրհնությամբ:

³⁰ Եղբայրներ՝ ը, աղաչում եմ ձեզ մեր Տիրոջով՝ Հիսուս Քրիստոսով և Սուրբ Հոգու պարզևած սիրով, որ դուք մարտակից լինեք ինձ՝ Աստծուն աղոթելով ինձ համար,՝³¹ որպեսզի Աստված ազատի ինձ իր կամքին անհնազանդ մարդկանց ձեռքից, որոնք Հրեաստանում են, և Երուսաղեմ տանելիք իմ օգնությունն ընդունելի լինի այնտեղի հավատացյալներին,՝³² որպեսզի նաև Աստծու կամքով ուրախությամբ գամ ձեզ մոտ և մի քիչ հանգստանամ ձեզ հետ:՝³³ Թող խաղաղություն պարզևող Աստված ձեր բոլորի հետ լինի: Ամեն:

16

Անձնական բարևներ

^{15.19} «Սուրբ Հոգու». շատ ձեռ. ունեն «Աստծու Հոգու»:

^{15.21} Ես 52.15 [LXX]:

^{15.22} Հո 1.13:

^{15.25-26} Ա Կր 16.1-4:

^{15.27} Ա Կր 9.11:

^{15.29} Շատ ձեռ. չունեն «Ավետարանի» բառը:

¹ Հանձնարարում եմ ձեզ Կենքրայի եկեղեցում ծառայող մեր քրոջը՝ Ֆիբեին,
² որպեսզի Տիրոջ անունով ընդունեք նրան, ինչպես վայել է հավատացյալներին, և օգնեք նրան, երբ որևէ բանի կարիք ունենալով՝ դիմի ձեզ, որովհետև ինքը ևս օգնական եղավ շատերին և ամենից ավելի՝ ինձ:

³ Բարևե՛ք Պրիսկային և Ակյուղասին՝ Հիսուս Քրիստոսով իմ գործակիցներին,^{*}
⁴ որոնք իմ կյանքը փրկելու համար վտանգի ենթարկեցին իրենց սեփական կյանքը: Ոչ միայն ես եմ երախտապարտ նրանց, այլև հեթանոսությունից դարձած բոլոր եկեղեցիները: ⁵ Բարևե՛ք նաև նրանց տանը հավաքվող եկեղեցուն: Բարևե՛ք իմ սիրելի Եպենտոսին, որն Ասիայի նահանգից Քրիստոսի առաջին հավատացողը եղավ:
⁶ Բարևե՛ք Մարիամին, որը շատ աշխատեց ձեզ համար: ⁷ Բարևե՛ք Անդրոնիկոսին և Հունիասին՝ իմ ազգակիցներին և բանտակիցներին, որոնք քաջ հայտնի են իրենց առաքելական գործով, և ինձնից առաջ էլ քրիստոնյա են դարձել: ⁸ Բարևե՛ք Ամադոխատոսին՝ իմ սիրելիին ի Տեր: ⁹ Բարևե՛ք Ուրբանոսին՝ իմ գործակցին ի Տեր, և իմ սիրելի Ստաքիին: ¹⁰ Բարևե՛ք Ապեղեսին, որը հավատարիմ մնաց Քրիստոսին:
¹¹ Բարևե՛ք Արիստոբուլոսի ընտանիքին: Բարևե՛ք Հերոդիոնին՝ իմ ազգակցին: Բարևե՛ք Նարկիսոսի ընտանիքին, որը հավատում է Տիրոջը: ¹² Բարևե՛ք Տրիֆոնին և Տրիֆոսին, որոնք աշխատեցին Տիրոջ համար: Բարևե՛ք սիրելի Պերսիսին, որը մեծ վաստակ ունեցավ Տիրոջ համար: ¹³ Բարևե՛ք Ռուֆոսին՝ Տիրոջ հավատարիմին, և նրա մորը, որին իմ մայրն եմ համարում:^{*} ¹⁴ Բարևե՛ք Ասինկրիտոսին, Ֆլեգոնին, Հերմեսին, Պատրոբասին, Հերմասին և նրանց հետ եղող հավատացյալ եղբայրներին: ¹⁵ Բարևե՛ք Ֆիլոլոգոսին ու Յուլիային, Ներեոսին և նրա քրոջը, նաև Օլիմպասին և նրանց հետ եղող բոլոր հավատացյալներին: ¹⁶ Սուրբ համբույրո՛վ բարևեք միմյանց: Քրիստոսի բոլոր եկեղեցիները ողջունում են ձեզ:

¹⁷ Խնդրում եմ, եղբայրնե՛ր, որ զգուշանաք այն մարդկանցից, որոնք երկպառակությունների և գայթակղությունների պատճառ են դառնում՝ շեղվելով այն վարդապետությունից, որը դուք սովորեցիք: Հեռո՛ւ մնացեք նրանցից, ¹⁸ որովհետև այդպիսիները մեր Տիրոջը՝ Քրիստոսին չեն ծառայում, այլ իրենց որովայնին քաղցր խոսքերով ու կեղծ գովասանքներով խաբելով պարզամիտներին: ¹⁹ Ձեր հնազանդության համբավը հասել է ամեն տեղ, և ես ուրախ եմ ձեզ համար: Բայց ուզում եմ, որ դուք իմաստուն լինեք՝ բարի գործեր կատարելով և անմեղադրելի լինեք՝ չար գործերից հեռու մնալով: ²⁰ Եվ խաղաղություն պարզևողը՝ Աստված, շուտով ձեր ոտքերի տակ կխորտակի Սատանային:

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը ձեր բոլորի հետ թող լինի՝

²¹ Բարևում է ձեզ Տիմոթեոսը՝ իմ գործակիցը, բարևում են նաև Ղուկիոսը, Յասոնը և Սոպատրոսը՝ իմ ազգակիցները: ²² (Ես էլ՝ Տերտիոսս, որ այս նամակը գրեցի, բարևում եմ ձեզ ի Տեր:)²³ Բարևում է ձեզ Գայիոսը՝ իմ հյուրընկալը, որն իր տանը

*16.3 Գրծ 18.2:

*16.13 Մր 15.21:

*16.20 Մի շարք ձեռ. չունեն «Մեր Տիրոջ ...հետ թող լինի»:

*16.21 Գրծ 16.1:

հյուրընկալում է նաև ամբողջ եկեղեցուն: Ձեզ բարևում են նաև Երաստոսը՝ քաղաքիս գանձապետը, և Կվարտոս եղբայրը:

²⁴ Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը ձեր բոլորի հետ թող լինի:

Փառաբանություն

²⁵ Փա՛ռք տանք Աստծուն, որ կարող է ձեզ հաստատուն պահել ձեր հավատի մեջ այն Ավետարանով, որ բերեցի ձեզ՝ քարոզելով Հիսուս Քրիստոսի մասին: Այդ Ավետարանը Աստծու փրկության ծրագրի հայտնությունն է, որ ծածուկ էր մնացել անցած բոլոր ժամանակներում: ²⁶ Այժմ այդ խորհուրդը, որ հայտնված է մարգարեական գրություններով, մշտնջենավոր Աստծու հրամանով ծանուցվեց բոլոր ազգերին, որպեսզի ամեն ոք հավատա և հնազանդվի Քրիստոսին: ²⁷ Ուստի Հիսուս Քրիստոսի միջոցով հավիտենական փա՛ռք Աստծուն, որ միակ իմաստունն է: Ամեն: 1CO

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

Կորնթոսը Աքայիա նահանգի մայրաքաղաքն էր՝ Հունաստանի կարևոր քաղաքներից մեկը: Քրիստոնեական եկեղեցու հիմքը Պողոսի կողմից այնտեղ դրվեց, երբ առաքյալն այստեղ մնաց տասնութ ամիս՝ առաքելական իր երկրորդ ճանապարհորդության ընթացքում:

Կորնթոս քաղաքը ծաղկուն և հռչակավոր էր ոչ միայն վաճառականությամբ, այլ նաև մշակութային եռուն կյանքով, իմաստասիրական և կրոնական շարժումներով, որովհետև այստեղ ապրում էին ամեն ազգի պատկանող քաղաքացիներ: Մյուս կողմից, սակայն, անբարոյությունն էլ սանձարձակ էր: Այս բոլոր հոսանքներն իրենց ազդեցություններն էին ունենում նորահաստատ եկեղեցու վրա՝ պատճառ դառնալով զանազան դժվարությունների:

Կորնթացիներին ուղղված առաջին նամակը Պողոսը գրել է Եփեսոսից (16.8)՝ իր առաքելական երրորդ ճանապարհորդության ընթացքում: Այս նամակով առաքյալն զբաղվում է այն բոլոր հարցերով, որոնք խոռվում էին Կորնթոսում հաստատված եկեղեցու կյանքը և որոնք կապ ունեին քրիստոնեական կյանքի և հավատի հետ:

Պողոս առաքյալի գլխավոր մտահոգությունն այն անբարոյությունն ու պառակտումներն էին, որ գոյություն ունեին եկեղեցու կյանքում: Նա քննում է ամուսնության և խղճի հետ կապված հարցեր, եկեղեցու հեղինակությունն ու կարգուկանոնը, Սուրբ Հոգու պարզները և հարության գաղափարը: Խոր քննարկումներով նա ցույց է տալիս, թե Ավետարանն ինչպես է դիտում այս հարցերը, և տալիս է դրանց պատասխանները:

13-րդ գլխում խոսում է սիրո՝ որպես Աստծու կողմից մարդուն տրված լավագույն նվերի մասին: Այս գլուխն ըստ երևույթին առավել հայտնի հատվածն է:

^{16.23} ա Գրծ 19.29, Ա Կր 1.14: ք Բ Տմ 4.20:

^{16.24} Շատ ձեռ. չունեն այս համարը:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆՆԵՐԻ ԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-9):
- Բաժանումներ եկեղեցում (1.10-4.2):
- Սեռային բարոյական հասկացողություն և ամուսնական կյանք (5.1-7.40):
- Քրիստոնեական դիրքորոշում հեթանոսական սովորությունների նկատմամբ (8.1-11.1):
- Եկեղեցու կյանքը և պաշտամունքը (11.2-14.40):
- Քրիստոսի հարությունը և հավատացյալների հարությունը (15.1-58):
- Քրիստոնյաների նվերը Հրեաստանի հավատացյալներին (16.1-4):
- Անձնական հարցեր և եզրակացություն (16.5-24):

1

Ողջուն և գոհություն

¹ Ես՝ Պողոսս, որ Աստծու կամքով կոչված եմ Հիսուս Քրիստոսի առաքյալը լինելու, և Սուրբենեար՝ մեր եղբայրը, ² գրում ենք ձեզ՝ Կորնթոսում հաստատված Աստծու եկեղեցուն, որ Քրիստոս Հիսուսով ընծայված եք Աստծուն և կոչված նրա սուրբ ժողովուրդը լինելու, բոլոր նրանց հետ, որոնք ամեն տեղ պաշտում են մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ իբրև իրենց և մեր Տիրոջ: ³ Թող Աստված՝ մեր Հայրը, և մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, շնորհ և խաղաղություն պարգևեն ձեզ:

⁴ Միշտ ձեզ համար շնորհակալություն եմ հայտնում իմ Աստծուն՝ այն հոգևոր պարգևի համար, որ տվեց ձեզ Հիսուս Քրիստոսի միջոցով, ⁵ որովհետև ամեն բանի մեջ դուք հարստացաք նրանով՝ լինի խոսքի առատությամբ, թե գիտությամբ: ⁶ Այդպես էլ Քրիստոսի մասին մեր վկայությունն ամբողջն հաստատվեց ձեր մեջ, ⁷ և ոչ մի հոգևոր պարգև չի պակասում ձեզ, մինչ սպասում եք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հայտնվելուն: ⁸ Եվ Աստված մինչև վերջ հաստատուն կպահի ձեզ, որպեսզի անմեղադրելի լինեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի դատաստանի օրը: ⁹ Վստահեցե՛ք Աստծուն, որը ձեզ կանչեց հաղորդակից դառնալու իր Որդուն, մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին:

Պատակաբաններ եկեղեցու մեջ

¹⁰ Եղբայրներ՝ ը, մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով կոչ եմ ուղղում ձեզ, որ բոլորդ միաբանվեք, և պատակաբաններ չլինեն ձեր մեջ, այլ միանաք նույն մտքի և նույն խորհրդի մեջ, ¹¹ քանզի, եղբայրներ՝ ը, Քղվեի ընտանիքից ոմանք ձեր մասին խոսելիս տեղեկացրին ինձ, թե հակառակություններ կան ձեր մեջ: ¹² Ասեմ, ինչ որ լսեցի. թե ձեզնից յուրաքանչյուրը տարբեր բան է ասում: Մեկն ասում է՝ «Ես Պողոսին եմ հետևում», մյուսը՝ «Ես Ապողոսին եմ հետևում», մի երրորդն ասում է՝ «Ես Կեփասին եմ հետևում», իսկ մի ուրիշը, թե՛ «Ես հետևում եմ Քրիստոսին»: ¹³ Մի՞ թե Քրիստոսը

^{1.2} Գրծ 18.1:

^{1.6} «Քրիստոսի». գրք. ունի «Աստծու»:

^{1.12} Գրծ 18.24:

կողմերի է բաժանված: Մի թե՛ Պողոսը խաչվեց ձեզ համար, կամ Պողոսի անունով մկրտվեցիք: ¹⁴ Փառք Աստծու, որ ձեզնից միայն Կրիստոսին և Գայիոսին եմ մկրտել: ¹⁵ այնպես որ մեկը չի կարող ասել, թե իմ անունով մկրտվեցիք: ¹⁶ Ստեփանոսի ընտանիքին էլ եմ մկրտել: Չեմ կարծում, որ ուրիշ մեկին մկրտած լինեմ: ¹⁷ քանզի Քրիստոսն ինձ մկրտելու չուղարկեց, այլ ավետարանելու և ավետարանելու՝ առանց խոսքի ճարտարության դիմելու, որպեսզի Քրիստոսի խաչելության մասին քարոզչությունը չկորցնի իր ուժը:

Քրիստոսը՝ Աստծու զորությունը և իմաստությունը

¹⁸ Խաչի մասին քարոզչությունը հիմարություն է թվում կորստյան ճամփին գտնվողների համար, մինչ մեզ՝ փրկության ճամփին գտնվողներին համար դա Աստծու զորությունն է: ¹⁹ Արդարև, մարգարեության մեջ գրված է.

«Պիտի խափանեմ իմաստունների իմաստությունը,
կորստի պիտի մատնեմ խելացիների խելքը»:

²⁰ Այն ժամանակ ո՞ւր պիտի մնան իմաստունները կամ ուսյալ մարդիկ և կամ այս աշխարհի հարցերը քննողները: Չէ՞ որ Աստված ցույց տվեց, թե այս աշխարհի իմաստությունը հիմարություն է,²¹ քանզի աշխարհն իր իմաստությամբ չկարողացավ ճանաչել Աստծուն և նրա իմաստությունը, ուստի Աստված ուզեց հիմարություն համարված խաչի քարոզչությամբ փրկել նրանց, ովքեր հավատում են: ²² Եվ թեպետ հրեաները հրաշք են ուզում, իսկ հույները իմաստություն են փնտրում,²³ մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին, որ գայթակղություն է հրեաների համար և հիմարություն՝ հեթանոսների համար,²⁴ թեպետ նույն այդ հրեաների և հույների միջից կանչվածների և դարձի եկածների համար նա Քրիստոսն է՝ Աստծու զորությունը և Աստծու իմաստությունը: ²⁵ Արդարև, Աստծու տնօրինությունը, որ հույները հիմարություն են համարում, իմաստնագույն է, քան մարդկային որևէ իմաստություն, և Աստծու խաչը, որ հրեաները տկարություն են համարում, ավելի զորեղ է, քան մարդկային ամեն զորություն:

²⁶ Եղբայրներ՝ ք, դուք ինքներդ դատեցեք. ի՞նչ էիք, երբ Աստված կանչեց ձեզ: Ձեզնից քանի՞ սն էին իմաստուն, հզոր կամ ազնվատոհմ մարդկային չափանիշներով: ²⁷ Բայց Աստված ընտրեց այն, ինչ որ այս աշխարհը հիմար է համարում՝ նրանով իմաստուններին ամոթով թողնելու համար. ընտրեց այն, ինչ որ այս աշխարհը տկար է համարում՝ նրանով հզորներին ամաչեցնելու համար. ²⁸ և ընտրեց այն, ինչ որ այս աշխարհը անարժեք, արհամարհելի և ոչնչություն է համարում՝ նրանով այս աշխարհի մեծություններին ոչնչացնելու համար: ²⁹ Եվ սա նրա համար, որպեսզի ոչ մի մարդ չպարծենա Աստծու առաջ, ³⁰ որովհետև Աստված ի՛նքն է, որ ձեզ բերեց միացրեց Քրիստոսին, և մենք Քրիստոսով ձանաչեցինք Աստծու իմաստությունը և գտանք մեր

^{1.14} ա Գրծ 18.8: ք Գրծ 19.29, Հո 16.23:

^{1.16} Ա Կր 16.15:

^{1.19} Ես 29.14 [LXX]:

^{1.20} ա Հք 12.17, Ես 19.12, 33.18: ք Ես 44.25:

^{1.21} Իմս 13.1-9:

արդարությունը, սրբությունն ու փրկությունը, ³¹ որպեսզի, ինչպես գրված է մարգարեության մեջ. «Ով պարծենում է, թող Տիրոջն՝ վ պարծենա»:

2

Պողոսի քարոզությունը Կորնթոսում

¹ Ես էլ, եղբայրներ՝ ք, երբ եկա ձեզ մոտ, իմաստասիրական մեծ-մեծ խոսքերով չէ, որ պատմեցի ձեզ Աստծու փրկության ծրագրի մասին,² որովհետև իմ մտքում դրել էի միայն մի նպատակ. ձեզ ճանաչեցնել Հիսուսին՝ Քրիստոսին, այսինքն՝ նույն ինքը խաչված Փրկչին:³ Ես ձեզ մոտ գալու ժամանակ էլ տկար էի, սաստիկ վախի ու դողի մեջ՝ ⁴ և իմաստության ճարտար խոսքերով չխոսեցի կամ քարոզեցի, այլ Սուրբ Հոգու զորությամբ և ներգործությամբ,⁵ որպեսզի ձեր հավատը հիմնվի Աստծու զորության վրա և ոչ թե մարդկային իմաստության:

Աստծու իմաստությունը

⁶ Սակայն հոգևոր կատարելության հասածներին իմաստություն էլ ենք քարոզում: Բայց մեր քարոզածը ո՛չ այս աշխարհի իմաստությունն է և ո՛չ էլ այս աշխարհը կառավարող ուժերինը, որոնց իշխանությունը շուտով պիտի խորտակվի:⁷ Մեր քարոզածը Աստծու իմաստությունն է, որը թաքուն էր և մինչև հիմա մնում էր մեզնից ծածկված, բայց որն Աստված հենց սկզբից, նախքան հավիտյանները, սահմանել էր մեզ համար, որպեսզի դրանով մենք փառավորվենք:⁸ Այս աշխարհի իշխաններից ոչ մեկը չհասկացավ այդ իմաստությունը, որովհետև, եթե հասկացած լինեին, չէին խաչի Տիրոջը, որն այդ փառքը պարգևողն է:⁹ Սակայն, ինչպես գրված է.

«Աստված իրեն սիրողների համար
պատրաստեց այնպիսի մի փառք,
որ ոչ մի աչք չի տեսել,
ոչ մի ականջ չի լսել,
և ոչ մեկի մտքով իսկ չի անցել»:

¹⁰ Բայց Աստված մեզ հայտնեց այդ խորհուրդը իր Հոգու միջոցով, որովհետև Հոգին, որ ամեն ինչ քննում է, գիտի Աստծու նույնիսկ ամենաձածուկ ծրագրերը:

¹¹ Մարդկանցից ո՞վ կարող է ճանաչել մարդու խորհուրդները, եթե ոչ նույն ինքը՝ մարդու հոգին, որ նրա մեջ է: Նույնպես և ոչ ոք չի կարող իմանալ Աստծու խորհուրդները, եթե ոչ Աստծու Հոգին:¹² Արդ, մենք ոչ թե աշխարհի հոգին առանք, այլ Աստծուց ուղարկված Հոգին, որպեսզի ճանաչենք Աստծուց մեզ շնորհված հոգևոր պարգևները:¹³ Եվ ինչ որ խոսում ենք, դրանք մարդկային իմաստությամբ

^{1.31} Եր 9.24:

^{2.1} «Պատմեցի ձեզ Աստծու փրկության ծրագրի մասին». մի շարք ձեռ. ունեն «Աստծու վկայությունը տվեցի ձեզ»:

^{2.3} Գրծ 18.9:

^{2.4} «Իմաստության». մի շարք ձեռ. ունեն «մարդկային իմաստության»:

^{2.8} Բրք 3.14-17:

^{2.9} Ես 64.4, Սր 1.9-10:

արտասանված խոսքեր չեն, այլ Սուրբ Հոգու կողմից իմաստությամբ ուսուցանված հոգևոր ճշմարտություններ ենք բացատրում հոգևոր մարդկանց: ¹⁴ Աստծու Հոգին չունեցող մարդը չի ընդունում Աստծու Հոգու բերած ճշմարտությունները, որովհետև դրանք հիմարություն են թվում նրան, և չի կարող ճանաչել, որովհետև դրանք միայն Հոգով են քննվում: ¹⁵ Իսկ Աստծու Հոգին ունեցող մարդը քննում է ամեն ինչ, բայց ինքը ոչ մեկից չի քննվում: ¹⁶ Ահա թե ինչու Սուրբ գիրքն ասում է.

«Ո՞վ կարողացավ երբևէ կարդալ Տիրոջ միտքը,

որ կարողանա խորհուրդ տալ նրան»:

Բայց մենք գիտենք, թե Քրիստոսն ինչ է մտածում:

3

Աստծու գործակիցները

¹ Ես էլ, եղբայրներ՝ ր, սկզբից չէի կարող ձեզ հետ խոսել այնպես, ինչպես պիտի խոսեի Աստծու Հոգին ունեցող մարդկանց հետ. այլ խոսեցի այնպես, ինչպես պետք էր խոսել աշխարհին պատկանող մարդկանց հետ: Քրիստոնեական հավատի մեջ դուք դեռ երեխաներ էիք, ² ուստի կաթ տվեցի ձեզ և ոչ թե կերակուր, որովհետև չէիք կարող ուտել: Բայց նույնիսկ հիմա էլ չեք կարող, ³ որովհետև դեռ աշխարհին պատկանող մարդկանց պես եք ապրում: Նախանձն ու հակառակությունը, որ տակավին ձեր մեջ են, մի թե ցույց չեն տալիս, որ դեռ մարմնավոր եք և աշխարհի չափանիշներով մտածող մարդկանց պես եք վարվում: ⁴ Երբ ձեզնից մեկն ասում է՝ «Ես Պողոսին եմ հետևում», իսկ մեկ ուրիշը, թե՛ «Ես Ապողոսին եմ հետևում», պարզ չէ՞, որ աշխարհիկ մարդկանց պես եք մտածում: ⁵ Վերջին հաշվով՝ ո՞վ է Պողոսը, կամ ո՞վ է Ապողոսը. պաշտոնյաներ, որոնց միջոցով հավատացիք, և որոնցից յուրաքանչյուրը պարզապես կատարեց այն պաշտոնը, որ Տերը տվեց նրան: ⁶ Ես տնկեցի, Ապողոսը ջրեց, բայց Աստված էր, որ աճեցրեց: ⁷ Այնպես որ ո՛չ տնկողն է կարևոր, ո՛չ էլ ջրողը, այլ աճեցնողը՝ Աստված: ⁸ Տնկողն ու ջրողը տարբերություն չունեն, յուրաքանչյուրն իր վարձը կստանա ըստ իր աշխատանքի, ⁹ որովհետև մենք պարզապես Աստծու գործակիցներ ենք. դուք Աստծո՛ւ անդաստանն եք, Աստծո՛ւ շինությունը և ոչ թե մեր: ¹⁰ Աստծու՝ ինձ տված շնորհի համաձայն՝ ես, որպես փորձառու ճարտարապետ, հավատի հիմքը դրեցի. բայց ուրի՛շն է կառուցելու դրա վրա: Մակայն ամեն ոք զգույշ պիտի լինի, թե ինչպե՛ս է կառուցում, ¹¹ որովհետև ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան Աստծու դրած միակ հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է:

¹² Այդ հիմքի վրա կառուցվածը կարող է ոսկի, արծաթ կամ թանկարժեք քար լինել, և կամ կարող է փայտ, խոտ կամ եղեգ լինել: ¹³ Յուրաքանչյուրի գործը հայտնի պիտի

^{2.14} «Աստծու Հոգին չունեցող». բոց՝ «շնչավոր»:

^{2.16} Ես 40.13 [LXX]:

^{3.2} Եբր 5.12-13:

^{3.3} «Հակառակությունը». մի շարք ձեռ. ավելացնում են «և երկպառակությունները»:

^{3.4} Ա Կր 1.12:

^{3.6} ա Գրծ 18.4-11: բ Գրծ 18.24-28:

լինի դատաստանի օրը, և դա կրակով պիտի հայտնի դառնա, որովհետև կրակով պիտի փորձվի յուրաքանչյուրի գործի որակը: ¹⁴ Եթե մեկի կառուցածը դիմանա կրակին, նա կվարձատրվի, ¹⁵ իսկ եթե այրվի, նա կտուժի, այսինքն՝ թեև նրա անձը կփրկվի, սակայն իր գործերի համար վարձ չի ստանա:

¹⁶ Չգիտե՞ք, որ Աստծու տաճար եք դուք, և Աստծու Հոգին է բնակվում ձեր մեջ:

¹⁷ Հետևաբար, եթե մեկն Աստծու տաճարը քանդի, Աստված էլ կորստի պիտի մատնի նրան, որովհետև Աստծու տաճարը սուրբ է, և դո՛ւք եք այդ տաճարը:

¹⁸ Թող ոչ ոք ինքն իրեն չխաբի: Ձեզնից ով որ այս աշխարհի չափանիշով ինքն իրեն իմաստուն է կարծում, թող հիմար լինի, որպեսզի իրապես իմաստուն դառնա,

¹⁹ որովհետև այս աշխարհի իմաստությունը Աստծու աչքին հիմարություն է, ինչպես Սուրբ գրքում է գրված. «Աստված իմաստուններին իրենց ճարպկության մեջ է բռնում»: ²⁰ Իսկ մի ուրիշ տեղ գրված է. «Տերը գիտի իմաստունների խորհուրդները, որոնք անարժեք են»: ²¹ Հետևաբար, թող ոչ ոք չպարծենա մարդկանցով, ²² որովհետև ձեզ համար է ամեն ինչ. Պողո՛սն էլ է ձեզ համար, Ապոլո՛սն էլ, Կեփա՛սն էլ: Նույնպես և այս աշխարհը, թե՛ կյանքը, թե՛ մահը, թե՛ ներկան և թե՛ ապագան, ամեն ինչ ձեզ համար է: ²³ Իսկ դուք Քրիստոսին եք պատկանում, և Քրիստոսն էլ՝ Աստծուն:

4

Քրիստոսի սպասավորներն ենք

¹ Ուրեմն՝ դուք պետք է մեզ Քրիստոսի սպասավորներ համարեք, մարդիկ, որոնց հանձնված է Աստծու ծածուկ ծրագրի վերակացությունը: ² Արդ, վերակացություն անող մարդուց պահանջվում է հավատարիմ լինել: ³ Ուստի ինձ համար բնավ նշանակություն չունի, թե դուք ինչպե՛ս եք դատում ինձ, կամ մարդիկ ինչպե՛ս են դատում ինձ: Ես ինքս ինձ էլ չեմ դատում: ⁴ Խիղճս հանգիստ է, բայց դրանով, անշուշտ, չեմ արդարանում, որովհետև Տերն է ինձ դատում: ⁵ Ուստի դուք էլ ոչ ոքի մի՛ դատեք ժամանակից առաջ, մինչև չգա Տերը, որն ի լույս է հանելու մարդկանց մութ գաղտնիքները և հայտնի է դարձնելու մտքերի մեջ թաքնված խորհուրդները: Ահա այն ժամանակ յուրաքանչյուր ոք Աստծուց պիտի ստանա իրեն արժանի գովասանքը:

⁶ Եղբայրնե՛ր, ձեզ համար ես ինձ և Ապոլոսին ասածներիս օրինակ դարձրի, որպեսզի մեզնից սովորեք չհպարտանալ, կամ ինչպես առաձն է ասում՝ «Ոչինչ՝ գրածից այն կողմ», և որպեսզի այնքան չպարծենաք մեկով, որ արհամարհեք մեկ ուրիշին: ⁷ Դու ոչ ոքից տարբեր մի բան չես. ի՞նչ ունես, որ Աստծուց ստացած չլինես, և եթե Աստծուց ես ստացել, ինչո՞ւ ես պարծենում իբրև մեկը, որ կարծում է, թե Աստծուց բան չի ստացել:

^{3.15} «Սակայն իր գործերի համար վարձ չի ստանա». բոց՝ «սակայն կրակից փախած մեկի նման»:

^{3.16} Ա Կր 6.19, Բ Կր 6.16:

^{3.19} Հբ 5.13:

^{3.20} Սղ 94.11:

^{4.4} Իմս 17.11:

^{4.7} «Դու ոչ ոքից տարբեր մի բան չես». բոց՝ «Ո՛վ է, որ քեզ տարբերում է [ուրիշներից]»:

⁸ Կարծում եք, թե արդեն ամեն ինչ ունե՞ք. կարծում եք, թե արդեն հարստացե՞լ եք և առանց մեզ արդեն թագավո՞ր դարձաք: Երանի թե թագավորության հասած լինե՞իք, որպեսզի մենք էլ թագավորե՞ինք ձեզ հետ: ⁹ Ինձ այնպես է թվում, թե Աստված մեզ առաքյալներին, մարդկանց մեջ վերջինների շարքը դասեց մահապարտների պես, և մենք տեսարան դարձանք ամբողջ աշխարհի՝ թե՛ հրեշտակների և թե՛ մարդկանց համար: ¹⁰ Մենք ի սեր Քրիստոսի «հիմար» եղանք, իսկ դուք, հազիվ Քրիստոսին միացած, իմաստ ունե՞լ դարձաք. մենք՝ տկար, իսկ դուք՝ հզո՞ր. մենք՝ անարգ, իսկ դուք՝ փառավո՞ր: ¹¹ Մինչև օրս հաճախ քաղցած էլ ենք մնում, ծարավ էլ, կիսամերկ էլ. հաճախ ծեծի ենք ենթարկվում, մնայուն կայք չունենք բնավ ¹² և մեր հացն էլ սեփական աշխատանքով ենք ճարում: Մարդիկ հայիոյ՞ւմ են մեզ, մենք օրհնում ենք նրանց: Հալածո՞ւմ են մեզ, մենք համբերում ենք: ¹³ Վարկաբեկո՞ւմ են մեզ, մենք ազնվությամբ ենք պատասխանում: Մինչև այսօր ամբողջ աշխարհի նախատինքի թիրախ դարձանք և բոլորի անարգանքի առարկան:

Պողոսի հայրական հոգատարությունը

¹⁴ Այս բաները գրում եմ ոչ թե ձեզ ամոթով թողնելու, այլ ձեզ խրատելու համար՝ իբրև իմ սիրելի որդիների, ¹⁵ որովհետև եթե նույնիսկ բյուրավոր դաստիարակներ էլ ունենաք՝ ձեզ Քրիստոսին առաջնորդելու համար, միևնույն է, ինձնից բացի հայր չեք կարող ունենալ, որովհետև ե՛ս էի, որ Ավետարանի քարոզչությամբ ձեզ հայր եղա, որպեսզի դուք Հիսուս Քրիստոսին պատկանեք: ¹⁶ Հետևաբար, խնդրում եմ ձեզ, ի՛նձ նմանվեցեք: ¹⁷ Դրա համար էլ ձեզ մոտ ուղարկեցի Տիմոթեոսին՝ իմ սիրելի և հավատարիմ որդուն ի Տեր, որպեսզի հիշեցնի ձեզ իմ սովորեցրած սկզբունքները, որոնք Քրիստոս Հիսուսին պատկանողներինը պիտի լինեն, ինչպես ամենուրեք սովորեցնում եմ բոլոր եկեղեցիներին: ¹⁸ Ձեզնից ոմանք սկսել են գոռոզանալ՝ մտածելով, որ ես այլևս չեմ գա ձեզ մոտ: ¹⁹ Բայց գալու եմ շուտով, եթե Տերը կամենա, ոչ թե այդ գոռոզացած մարդկանց խոսքերը լսելու, այլ նրանց գործությունը տեսնելու համար, ²⁰ որովհետև Աստծու թագավորությունը խոսքով չէ, որ հայտնում է իրեն մարդկանց կյանքում, այլ գործով: ²¹ Արդ, ինչպե՞ս եք ուզում, գավազանո՞վ գամ ձեզ մոտ, թե՛ սիրով և ազնվությամբ:

5

Բարոյական անկարգության դատապարտում

¹ Լսեցի ձեր մեջ տեղի ունեցած անբարոյության մասին, և այնպիսի մի անբարոյություն, որ հեթանոսների մեջ անգամ դատապարտված է: Լսեցի, արդարև,

*4.12 Գրծ 18.3:

*4.16 «Նմանվեցեք». մի շարք հայ. ձեռ. ավելացնում են «ինչպես ես էլ Քրիստոսին [եմ փորձում նմանվել]»:

*4.16 Ա Կր 11.1, Փպ 3.17:

*4.21 «Ազնվությամբ». գրբ. ավելացնում է «արդարությամբ և խոնարհությամբ»:

որ ձեզնից մեկն իր հոր կնոջ հետ է կենակցում: ² Եվ դուք դեռ հպարտանում եք. ընդհակառակը, պետք չէ՞ր, որ սգայիք և այդ անբարոյությունը կատարողին դուրս անեիք ձեր միջից: ³ Ես, թեպետ մարմնով հեռու, բայց հոգով ձեզ հետ եմ, և իբրև ձեր մեջ ներկա եղող մեկը՝ արդեն կայացրել եմ վճիռս: ⁴ Ուզում եմ, որ երբ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով իրար մոտ գաք, և ես էլ հոգով ձեզ հետ լինեմ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի տված իշխանությամբ ⁵ այդ անբարոյությունը կատարողին իր մարմնով Սատանայի կամքին թողնեք, որպեսզի մարմինը կորստյան մատնվի, և այդպիսով թերևս հոգին փրկվի մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի դատաստանի օրը:

⁶ Ճիշտ չի լինի, որ պարծենաք: Չգիտե՞ք, թե ինչ է ասում առածը. «Մի քիչ թթխմորն էլ խմորում է ամբողջ զանգվածը»: ⁷ Չարության հին խմորը դե՛ն նետեք ձեզնից, որպեսզի ամբողջովին նոր և անխմոր մի զանգված լինեք, ինչպիսին եք արդեն, քանի որ Քրիստոսը՝ մեր Զատկի գառը, մորթվեց: ⁸ Ուրեմն, Զատիկը տոնենք ոչ թե հին խմորով, այսինքն՝ ոչ թե չարության և անզգամության խմորը պահելով մեր մեջ, այլ առանց թթխմորի, այսինքն՝ անկեղծությամբ և ճշմարտախոսությամբ:

⁹ Իմ նամակում գրել էի ձեզ, որ անբարո մարդկանց հետ չհարաբերեք: ¹⁰ Բայց պարզ է, որ խոսքս հեթանոս աշխարհի անբարո մարդկանց կամ ազահների կամ հափշտակողների կամ կռապաշտների մասին չէր, այլապես ստիպված պիտի լինեիք այս աշխարհից հեռանալ: ¹¹ Մինչդեռ իմ այդ տողերով ուզում էի ասել, որ չհարաբերեք նրանց հետ, որոնք թեև քրիստոնյա եղբայրներ են կոչվում, բայց կա՛մ պոռնկություն են անում, կա՛մ կռապաշտ են, կա՛մ ազահ, կա՛մ բամբասող, կա՛մ գինեմոլ և կա՛մ հափշտակող: Այդպիսիների հետ նույնիսկ սեղան չստեք: ¹²⁻¹³ Իմ ի՞նչ գործն է դատել նրանց, որոնք եկեղեցու անդամ չեն. թող Աստված դատի նրանց: Բայց չէ՞ որ եկեղեցու անդամներին դատելը ձեր գործն է: Ուստի, ինչպես Մուրբ գիրքն է ասում. «Չարիքը վերացրե՛ք ձեր միջից»:

6

Դատաստան եղբայրների միջև

¹ Այդ ինչպե՞ս է լինում, որ երբ ձեզնից մեկը մի խնդիր ունենա իր ընկերոջ հետ, համարձակվում է անհավատ հեթանոսների դատաստանին դիմել, փոխանակ Աստծու եկեղեցուն դիմելու: ² Մի՞թե չգիտեք, որ Աստծու ժողովուրդն է դատելու աշխարհը: Եվ եթե դուք եք դատելու աշխարհը, ապա ինչպե՞ս է լինում, որ մի չնչին դատ անգամ չեք կարող տեսնել: ³ Չգիտե՞ք, թե հրեշտակներին իսկ մենք ենք դատելու,

^{5.1} «*Իր հոր կնոջ*». խոսքը, անկասկած, հոր երկրորդ կնոջ, այսինքն՝ խորթ մոր մասին է: Այդպիսի հարաբերություն արգելված էր թե՛ եբրայական օրենքով (Ղև 18.8, Բ Օր 23.1), թե՛ հռոմեական:

^{5.1} Բ Օր 22.30:

^{5.5} «*Սատանայի կամքին թողնեք*». բոց՝ «*հանձնվի*»: Այս խիստ բացատրությունը (հմմտ Ա Տմ 1.20) նշ է Քրիստոսի եկեղեցուց ժամանակավորապես արտաքսել հանցագործին:

^{5.6} Գղ 5.9:

^{5.7} Ելք 12.5:

^{5.8} Ելք 13.7, Բ Օր 16.3:

^{5.13} Բ Օր 13.5, 17.7 [LXX]:

էլ ո՛ր մնաց՝ այս աշխարհի խնդիրները: ⁴ Արդ, ձեր հասարակ խնդիրների համար ինչպե՞ս կարող եք դատավոր կարգել նրանց, ում մերժում է եկեղեցին: ⁵ Ամոթ չէ՞ ձեզ համար: Իմաստուն մի մարդ չկա՞ ձեր մեջ, որ կարողանա ձեր միջև ծագած խնդիրները վճռել, ⁶ որ քրիստոնյա մի եղբայր ստիպված է լինում իր հավատակից եղբորը դատի քաջել, այն էլ՝ անհավատների առջև:

⁷ Բայց ձեզ համար արդէն իսկ հանցանք է միմյանց դեմ դատ ունենալը: Ավելի լավ կլինէր, որ հանձն առնէիք անիրավվել կամ զրկանք կրել: ⁸ Մինչդեռ դուք եք անիրավում և զրկում, և դա անում եք հենց ձեր հավատակից եղբայրներին: ⁹ Մի՞ թե չգիտեք, որ անիրավություն անողներն Աստծու արքայությունը չեն ժառանգելու: Դուք ձեզ չխաբեք: Նրանք, որ պոռնկություն են անում կամ կռապաշտ են կամ շնացող, իգացող, արվամոլ, ¹⁰ գող, ագահ, զինեմոլ, բամբասող կամ հափշտակող, Աստծու արքայությունը չեն ժառանգելու: ¹¹ Եվ ձեզնից ոմանք այդպիսին չէի՞ն: Բայց ձեր մեղքերից լվացվեցիք, սրբվեցիք, արդարացաք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծու Հոգու միջոցով:

Ձեր մարմինները թող ծառայեն Աստծու փառքին

¹² Ամեն ինչ թույլատրված է ինձ, բայց ամեն բան օգտակար չէ: Ամեն ինչ թույլատրված է ինձ, բայց պետք չէ, որ որևէ բանի գերին դառնամ: ¹³ Կերակուրն ստամոքսի և ստամոքսը կերակուրի համար է, սակայն Աստված թե՛ մեկը և թե՛ մյուսը պիտի խափանի: Բայց նույնը չէ մարմնի դեպքում: Մարմինը պոռնկության համար չէ, այլ Տիրոջ համար է, և Տերը՝ մարմնի: ¹⁴ որովհետև Աստված, ինչպես Տեր Հիսուսին հարություն տվեց, այնպես էլ մեզ հարություն պիտի տա իր գործությամբ: ¹⁵ Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Ի՞նչ է, Քրիստոսի անդամներն առնելով՝ պոռնիկի անդամներ՞ դարձնենք: Բնա՛վ: ¹⁶ Չգիտե՞ք, որ ով միանում է պոռնիկին, նրա հետ մեկ մարմին է կազմում, որովհետև գրված է. «Երկուսը մեկ մարմին պիտի լինեն»: ¹⁷ Այդպես էլ, ով միանում է Տիրոջը, նրա հետ մեկ հոգի է դառնում: ¹⁸ Հետևաբար, հեռո՛ւ փախեք պոռնկությունից: Մյուս բոլոր մեղքերը, որ մարդ գործում է, կապ չունեն նրա մարմնի հետ. բայց ով պոռնկություն է անում, իր մարմնի դեմ է մեղանշում: ¹⁹ Չգիտե՞ք, որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգու, որը դուք Աստծուց եք առել, և այն բնակվում է ձեր մեջ: Իմացե՛ք, որ դո՛ւք չեք ձեր անձի տերը, ²⁰ այլ Աստված, որ փրկագնով գնեց ձեզ համար: Ուստի այնպե՛ս ապրեցեք, որ Աստված փառավորվի ձեր մարմիններով:

7

Ամուսնությանը վերաբերող հարցեր

¹ Ձեր նամակում ինձ գրել էիք նաև այն մասին, թե լավ է, որ տղամարդը բնավ

^{6.12} Ա Կր 10.23:

^{6.16} Ծն 2.24:

^{6.19} Ա Կր 3.16, Բ Կր 6.16:

^{6.20} «Մարմիններով». մի շարք ձեռ. ավելացնում են «և հոգիներով, որոնք Աստծուն են պատկանում»:

չամուսնանա: ² Բայց որպեսզի պոռնկության մեջ չընկնեք, ամեն մարդ թող իր կինն ունենա, և ամեն կին՝ իր ամուսինը, ³ որպեսզի կնոջ կարիքները ամուսինը գոհացնի, և ամուսնու կարիքները՝ կինը. ⁴ որովհետև կինը չէ իր մարմնի տերը, այլ ամուսինը. ոչ էլ ամուսինն է իր մարմնի տերը, այլ կինը: ⁵ Երկար ժամանակ իրարից հեռու մի՛ մնացեք: Եթե ուզում եք աղոթքի նվիրվել, կարող եք փոխադարձ համաձայնությամբ միառժամանակ հեռու մնալ իրարից, բայց հետո վերադարձե՛ք ձեր կենսակցությանը, որպեսզի չլինի թե Սատանան ձեզ փորձության մղի՝ ձեր անժուժկալությունից օգտվելով: ⁶ Իմ այս ասածը հրահանգ չէ, այլ պարզապես ներողամիտ կեցվածք. ⁷ որովհետև ես կցանկանայի, որ ամեն մարդ ապրեր ինձ նման, բայց Աստված յուրաքանչյուրին տվել է իրեն հատուկ մի պարզև, մեկին՝ այսպես ապրելու պարզև, մյուսին՝ այնպես:

⁸ Սակայն ամուսիններին և այրիներին ասում եմ. լավ է, որ մնան ինձ նման: ⁹ Բայց եթե չեն կարող տոկլալ, թող ամուսնանան, որովհետև նախընտրելի է ամուսնանալը, քան ցանկությամբ եռալը: ¹⁰ Իսկ ամուսնացած զույգերին հետևյալ պատվերն եմ տալիս, ոչ թե ես, այլ Տերը. ոչ մի կին իր ամուսնուց թող չբաժանվի. ¹¹ իսկ եթե բաժանվի, կա՛մ առանց ամուսնության թող ապրի և կա՛մ դարձյալ հաշտվի իր ամուսնու հետ: Նույնպես՝ ոչ մի տղամարդ իր կնոջը թող չթողնի: ¹² Մյուսներին ես եմ պատվիրում, ոչ թե Տերը. եթե որևէ հավատացյալ եղբայր ունի անհավատ կին, որն ուզում է իր հետ ամուսնացած մնալ, թող չբաժանվի իր կնոջից: ¹³ Նույնպես՝ եթե որևէ հավատացյալ կին ունի անհավատ ամուսին, որն ուզում է իր հետ ամուսնացած մնալ, թող չբաժանվի իր ամուսնուց: ¹⁴ Անհավատ ամուսինն իր կնոջ միջոցով կապված է մնում Աստծու ժողովրդին, և անհավատ կինն էլ իր ամուսնու միջոցով կապված է մնում Աստծու ժողովրդին. այլապես ձեր որդիները հեթանոս կհամարվեին, մինչդեռ հիմա Աստծու ժողովրդի մասն են կազմում: ¹⁵ Սակայն եթե անհավատ ամուսինը կամ կինն ուզում է բաժանվել, թող բաժանվի: Նման դեպքում որևէ պարտադրանք չկա հավատացյալ ամուսնու կամ կնոջ վրա: Աստված մեզ կանչեց խաղաղությամբ ապրելու համար: ¹⁶ Բայց ո՛վ գիտե, գուցե այդ ձևով քո ամուսնու փրկության պատճառ կլինես, ո՛վ կին. կամ դու, ո՛վ մարդ, գուցե այդ ձևով քո կնոջ փրկության պատճառ կլինես:

Մնացե՛ք այնպես, ինչպես Աստված կանչեց ձեզ

¹⁷ Այլապես յուրաքանչյուր ոք թող ապրի Աստծուց իրեն տրված պարզևի համաձայն, ինչպես որ էր, երբ Աստված կանչեց նրան: Այսպես եմ պատվիրում բոլոր եկեղեցիներին: ¹⁸ Հրեա՞՞ է կանչվածը. թող չծածկի իր թլփատված լինելը: Հեթանոսներից եկա՞՞ծ մեկն է. թող չթլփատվի, ¹⁹ որովհետև կարևորը թլփատված կամ անթլփատ լինելը չէ. կարևորը Աստծու պատվիրանը պահելն է: ²⁰ Բայց յուրաքանչյուր ոք, ինչ վիճակի մեջ որ էր, երբ Աստված կանչեց նրան, թող նույն վիճակի մեջ էլ մնա:

^{7.5} «Աղոթքի». մի շարք ձեռ. ունեն «ճոմապահության և աղոթքի»:

^{7.10-11} Մտ 5.32, 19.9, Մր 10.11-12, Ղկ 16.18:

^{7.18} Ա Մկ 1.15:

²¹ Ստորոջ և էիր, երբ կանչվեցիր, հոգ մի՛ արա: Իսկ եթե կարողանաս ազատ լինել, ավելի՛ լավ: ²² որովհետև այս մարդը, որն ստրուկ վիճակում Տիրոջը պատկանելու կոչվեց, Տիրոջով ազատագրված մեկն է: Նույնպես և այն մարդը, որն ազատ վիճակում կոչվեց, Քրիստոսի ծառան է: ²³ Աստված փրկագնով գնեց ձեզ. մարդկանց ծառա մի՛ եղեք: ²⁴ Եղբայրներ՝ ք, յուրաքանչյուրդ, ինչ վիճակի մեջ որ էիք, երբ Աստված կանչեց ձեզ, նույն վիճակի մեջ էլ մնացե՛ք Աստծու առաջ:

Ամուրիների և այրիների մասին

²⁵ Ամուրիներին վերաբերող ձեր տված հարցի առնչությամբ Տիրոջից որևէ հրաման չունեմ: Բայց ես, որպես Տիրոջից ողորմություն գտած մեկը, որին կարելի է վստահել, հետևյալ խրատն եմ տալիս.

²⁶ -Կարծում եմ, որ նրանց վիճակը լավագույնն է: Նկատի ունենալով վերահաս նեղությունը՝ ավելի լավ է, որ մարդ, ինչպես որ է, այնպես էլ մնա: ²⁷ Ամուսնությամբ կապված էս մի կնոջ հետ, մի՛ փորձիր բաժանվել: Ամուսնությամբ կապված չե՛ս մեկի հետ, կին մի՛ փնտրիր: ²⁸ Եթե ամուսնանաս, մեղք գործած չես լինի, կամ ամուրի մի կին եթե ամուսնանա, մեղք գործած չի լինի: Բայց անշուշտ այդպիսիները ամուսնական կյանքին հատուկ նեղություններ են ունենալու, որոնցից կցանկանայի զերծ տեսնել ձեզ: ²⁹ Բայց հետևյալն եմ ասում, եղբայրներ՝ ք, թե ժամանակն այլևս կարճացել է. ուստի կին ունեցողներն էլ չամուսնացածների պես թող ապրեն.

³⁰ սգացողները թող ապրեն սուգ չունեցողների պես, ուրախացողները՝ չուրախացողների պես, հարուստները՝ աղքատների պես, ³¹ աշխարհը վայելողները՝ չվայելողների պես, որովհետև մեզ ծանոթ այս աշխարհն անցնելու վրա է:

³² Հետևաբար, ուզում եմ, որ դուք հոգսերից զերծ լինեք, որովհետև կին չունեցողը միայն Տիրոջ գործերի մասին է հոգում՝ ջանալով Տիրոջ կամքը կատարել: ³³ Մինչդեռ ամուսնացած մարդը երկրային հոգսեր է ունենում՝ ջանալով իր կնոջ կամքը կատարել. ³⁴ Եվ ահա բաժանված է լինում երկուսի: Նույնպես էլ չամուսնացած կինը կամ կույսը հոգում է Տիրոջ գործերի մասին և ջանում է մարմնով ու հոգով նվիրվել Աստծուն, մինչդեռ ամուսնացած կինը երկրային հոգսեր է ունենում՝ ջանալով իր ամուսնու կամքը կատարել: ³⁵ Այս ասում եմ ձեր օգտի համար: Ոչ թե արգելքներ եմ դնում ձեզ վրա, այլ ուզում եմ, որ պարկեշտությամբ և անզբաղ մտքով նվիրվեք Տիրոջը ծառայելուն:

³⁶ Ինչ վերաբերում է նշանվածներին, եթե որևէ նշանված մարդ կարծում է, թե իր նշանածի մոտ պիտի ամոթով մնա, եթե չամուսնանա, և ցանկությունն էլ այնքան ուժեղ է լինում իր մեջ, որ պետք է ամուսնանա, թող անի, ինչպես որ կամենում է. մեղք գործած չի լինի, թող ամուսնանա: ³⁷ Իսկ ով իր մտքում հաստատ որոշում է ընդունել,

^{7.21} «Իսկ եթե կարողանաս ազատ լինել, ավելի՛ լավ». այլ թրգմ ունեն «բայց եթե նույնիսկ կարող ես ազատ լինել, ավելի լավ է այդպես [=ստրուկ] մնալով»:

^{7.36-38} Այս համարների մեկնությունը ենթադրական է. բնագիրը «նշանված մարդ» և «նշանած» բառերի փոխարեն ունի «մի մարդ և իր կույսը», որ ոմանք հասկանում են, թե խոսքը հոր և իր կույս աղջկա մասին է և ըստ այնմ էլ թարգմանում են: Այդ դեպքում թրգմ կլինի հետևյալը. «Եթե մեկն իր աղջկա կապակցությամբ կարծում է, թե ամոթով կմնա, եթե չամուսնացնի նրան, և եթե աղջիկը

առանց որևէ հարկադրանքի, և կարող է իշխել իր կամքին, որոշել է պահել իր նշանածին առանց մարմնական հարաբերության, լավ է անում: ³⁸ Այնպես որ, ով ամուսնանում է, լավ է անում, իսկ ով չի ամուսնանում, առավել ևս լավ է անում:

³⁹ Որևէ ամուսնացած կին ազատ չէ այնքան ժամանակ, քանի դեռ իր ամուսինը ողջ է, իսկ ամուսնու մահից հետո ազատ է ամուսնանալու, ում հետ որ ուզենա, միայն թե քրիստոնյայի հետ: ⁴⁰ Բայց առավել երանելի կլինի, եթե իմ խրատին հետևի և մնա այնպես, ինչպես որ է: Ես կարծում եմ, որ Աստծու Հոգին է, որ այսպես է ասել տալիս ինձ:

8

Կուռքերին զոհված կերակուրների մասին

¹ Գալով կուռքերին զոհված կերակուրներին՝ գիտեմ, որ ասողներ կան, թե՛ «Բոլորս էլ պետք եղածը գիտենք»: Իմացե՛ք սակայն, որ գիտությունը հպարտացնում է, բայց սերն է ամրապնդում հավատը: ² Ով կարծում է, թե մի բան գիտի, պարզ է, որ դեռ չգիտի այնպես, ինչպես պետք է գիտենա: ³ Իսկ ով սիրում է Աստծուն, հենց նա էլ ճանաչվում է Աստծուց: ⁴ Արդ, ինչ վերաբերում է կուռքերին զոհված կերակուրներ ուտելուն, գիտենք, որ կուռքերն աշխարհում ոչ մի բան չեն ներկայացնում, և որ միայն մե՛կ Աստված կա, ⁵ որովհետև թեև անվանապես կան երկնային և երկրային աստվածներ, ինչպես որ մեր շուրջը տեսնում ենք, թե կան բազմաթիվ «աստվածներ» և բազմաթիվ «տերեր», ⁶ բայց մեզ համար կա միայն մե՛կ Աստված. Հայրը, որից սկիզբ է առել ամեն բան, և մենք կանք նրա համար. և կա միայն մե՛կ Տեր՝ Հիսուս Քրիստոսը, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ, և մենք կանք նրա միջոցով:

⁷ Բայց բոլորի մեջ այս գիտակցությունը չկա: Ոմանք դեռ մինչև հիմա խղճի հարց են ունենում, երբ ուտում են կուռքերին զոհված կերակուրներից, և որովհետև նրանց խղճմտանքը տկար է, իրենք իրենց պղծված են զգում: ⁸ Բայց կերակուրը չէ, որ Աստծու առաջ է բերելու մեզ: Ո՛չ ուտելով ենք մի բան շահում, ո՛չ էլ չուտելով մի բան կորցնում: ⁹ Բայց զգո՛ւյշ եղեք. չլինի թե՛ ձեր ազատությունը գայթակղության պատճառ դառնա տկարների համար: ¹⁰ Եթե մեկը քեզ՝ այդ գիտակցությունն ունեցողիդ, տեսնի մեհյանում սեղան նստած, ինքը, որի խղճմտանքը տկար է, չի՞ քաջալերվի կուռքերին զոհաբերված կերակուրներից ուտելու: ¹¹ Եվ անհա քո «գիտությունը» պատճառ կլինի, որ կորստյան մատնվի հավատով տկար մի եղբայր, որի համար մեռավ Քրիստոսը: ¹² Եվ երբ այսպես ձեր եղբայրների հանդեպ մեղք եք գործում՝ նրանց տկար

[չափահասության] տարիքն արդեն անցկացրել է, թող անի, ինչպես որ կամենում է. մեղք գործած չի լինի. թող [աղջիկը] ամուսնանա: Իսկ ով իր մտքում հաստատ որոշում է ընդունել, առանց որևէ հարկադրանքի և իր կամքի ամբողջ իշխանությամբ [՞], և որոշել է [առանց ամուսնության] պահել իր աղջկան, լավ է անում: Այնպես որ, ով ամուսնացնում է, լավ է անում, իսկ ով չի ամուսնացնում, առավել ևս լավ է անում»:

7.39 «Ազատ չէ». մի քանի ձեռ. ունեն «օրենքով ազատ չէ»:

8.5 Խոսքը հուն. աստվածների մասին է: Տե՛ս նաև 10.20-21 հմր, որտեղ նրանց նույնացնում է չար ոգիների հետ:

խղճմտանքը վիրավորելով, մեղանշած եք լինում Քրիստոսի դեմ: ¹³ Ահա թե ինչու, եթե իմ ուտելը գայթակղեցնում է իմ հավատակից եղբորը, երբեք միս չեմ ուտի, որպեսզի իմ եղբորը չգայթակղեցնեմ:

9

Առաքելական իրավասություններ և պարտավորություններ

¹ Մի՞ թե ազատ չեմ. մի՞ թե առաքյալ չեմ. մի՞ թե մեր Տեր Հիսուս Քրիստոսին ես իմ աչքերով չտեսա. մի՞ թե իմ աշխատանքով չէ, որ դուք Տիրոջը պատկանեցիք:

² Նույնիսկ եթե ուրիշների համար առաքյալ չեմ, համենայն դեպս ձեզ համար՝ եմ, և իմ առաքելության կնիքը դո՛ւք եք, որ պատկանում եք Տիրոջը:

³ Ինձ քննադատողներին իմ պատասխանն այս է. ⁴ մի՞ թե մենք իրավունք չունենք մեր աշխատանքի փոխարեն ուտելիք կամ խմելիք ստանալու: ⁵ Մի՞ թե իրավունք չունենք մեզ հետ ման ածելու մեր հավատակից կանանց, ինչպես այդ անում են մյուս առաքյալները, Տիրոջ եղբայրները և Կեփասը: ⁶ Միայն ես և Բառնաբա՝ սր իրավունք չունենք Ավետարանի քարոզչությամբ ապրուստ հոգալու: ⁷ Ո՞ր զինվորն է իր սեփական ծախսով զինվորություն անում: Կա՞ մեկը, որ այգի տնկի և նրա պտղից չուտի: Կա՞ մի հովիվ, որ ոչխարների կաթից չճաշակի: ⁸ Մի՞ թե պարզապես մարդկային փորձառությամբ եմ ասում այս բաները. Աստծու Օրենքն էլ նույն բանը չի՞ ասում: ⁹ Արդարև, Օրենքում գրված է. «Կալում աշխատող եզան դունչը մի՛ կապիր»: Աստված մի՞ թե եզներով էր մտահոգված: ¹⁰ Չէ՞ որ մեզ համար է ասում դա. ինչպես դարձյալ մեզ համար է գրված հետևյալը. «Հերկ անողը հույս պետք է ունենա, որ հերկի, և կալտողը վայելելու հույս պետք է ունենա, որ կալսի»: ¹¹ Եթե մենք հոգևոր սերմեր ցանեցինք ձեր մեջ, մե՞ծ բան է, եթե նյութական բարիք հնձենք ձեզնից: ¹² Եվ եթե ուրիշները իրավունք են համարում այդ բարիքները վայելել ձեզնից, մենք առավել ևս իրավունք չունենք: Բայց մեր այս իրավունքը երբեք չօգտագործեցինք, այլ ամեն բանի համբերում ենք, որպեսզի որևէ բանով արգելք չլինենք Քրիստոսի Ավետարանի տարածմանը: ¹³ Չգիտե՞ք, թե տաճարում ծառայողները տաճարից էլ կերակրվում են, և զոհարանի վրա զոհ մատուցող քահանաներն իրենց բաժինն են ունենում դրանից:

¹⁴ Նույնպես և Տերը Ավետարանը քարոզողներին հրաման տվեց, որ Ավետարանի քարոզչությամբ էլ ապրեն: ¹⁵ Բայց ես այդ իրավունքներից և ոչ մեկը չօգտագործեցի: Ոչ էլ այս բաներն եմ գրում, որ այդպիսի իրավունքներ ստանամ: Նախընտրում եմ ավելի շուտ մեռնել, քան թույլ տալ, որ որևէ մեկն իմ այս պարծանքը վերցնի ինձնից:

¹⁶ Անշուշտ, պարծենալու բան չունեմ, երբ Ավետարանն եմ քարոզում, որովհետև պարտավոր եմ այդ անել, և վա՛յ ինձ, եթե չքարոզեմ: ¹⁷ Եթե իմ ազատ կամքով անեի

^{9.1} «Ես իմ աչքերով» բառերը հուն. չունի:

^{9.5} «Հավատակից». բոց՝ «քույր»:

^{9.9} Բ Օր 25.4, Ա Տմ 5.18:

^{9.11} Հն 15.27:

^{9.13} Բ Օր 18.1:

^{9.14} Մտ 10.10, Ղկ 10.7:

այս քարոզչությունը, իրավունք կունենայի վարձ ակնկալելու: Բայց իմ կամքով չէ, որ անում եմ, քանի որ դա Աստծուց ինձ հանձնված մի պարտականություն է: ¹⁸ Իսկ իմ վաճառքը: Իմ վարձը կլինի այն, որ ձեր քարոզումն Ավետարանը՝ չօգտագործելով այն իրավունքները, որ ունեմ իբրև Ավետարանի քարոզիչ:

¹⁹ Արդարև, թեև ազատ էի, ենթակա չէի ոչ ոքի, բայց ես ինձ բոլորին ծառայող դարձրի, որպեսզի սիրաշահեմ շատերին: ²⁰ Հրեաների հետ եղա ինչպես հրեա, որպեսզի սիրաշահեմ հրեաներին, այսինքն՝ Մովսիսական Օրենքին ենթակա մարդկանց հետ ապրեցի Օրենքին ենթակա մարդու նման, չնայած որ այլևս ենթակա չէի այդ Օրենքին, որպեսզի սիրաշահեմ Օրենքին ենթակա եղողներին: ²¹ Մովսիսական Օրենքը չճանաչող հեթանոսների հետ եղա ինչպես հեթանոս, որպեսզի սիրաշահեմ նաև նրանց: Ոչ թե դուրս ելա Աստծու Օրենքից, այլ ենթարկվեցի Քրիստոսի օրենքին: ²² Հավատով տկարների հետ եղա հավատով տկարի պես, որպեսզի նրանց ևս սիրաշահեմ: Մի խոսքով՝ ամենքի հետ ամեն ինչ եղա, որպեսզի ամեն գնով կարողանամ փրկել ոմանց: ²³ Եվ այս բոլորն անում եմ ի սեր Ավետարանի, որպեսզի մասնակից լինեմ նրա տարածմանը:

²⁴ Գիտեք, չէ՞, մրցասպարեզում վազքի մասնակցողների օրինակը: Վազելը բոլորն էլ վազում են, բայց մրցանակը մեկն է շահում: Դուք էլ այնպես վազեք, որ հասնեք մրցանակի: ²⁵ Մարզիկներն իրենք իրենց խիստ կանոնների են ենթարկում, որպեսզի վաղանցուկ մի դափնեպսակ ստանան, իսկ մենք նույնն ենք անում հավերժական դափնեպսակի համար: ²⁶ Ես ահա այսպես եմ վազում և ոչ թե անորոշ ուղղությամբ. մրցում եմ այն բռնցքամարտիկի նման, որ օղբ չի ձեռնում: ²⁷ Բայց ես ինքս ինձ ճնշումների եմ ենթարկում ու զսպում, որպեսզի չլինի թե ինքս զրկվեմ մրցանակից, ես, որ ուրիշներին եմ քարոզում:

10

Հեռու կռապաշտությունից

¹ Եղբայրներ՝, մի՛ մոռացեք, որ Եզիպտոսից դուրս եկող մեր հայրերը բոլորն էլ ամպի առաջնորդության և պահպանության տակ էին, և բոլորն էլ Կարմիր ծովով անցան՝ ² ու հետևելով Մովսեսին՝ բոլորն էլ մկրտվեցին ամպի և ծովի մեջ: ³ Բոլորն էլ նույն հոգևոր ուտելիքը կերան՝ ⁴ և բոլորն էլ նույն հոգևոր ըմպելիքը խմեցին, որովհետև խմեցին հոգևոր մի ժայռից, որ գնում էր իրենց հետ, և այդ ժայռն ինքը՝ Քրիստոսն էր:՝

^{9.20} Մի շարք ձեռ. չունեն «չնայած որ այլևս ենթակա չէի այդ Օրենքին»:

^{9.25} Իմս 4.2, 5.16:

^{10.1} ա Ելք 13.21-22: բ Ելք 14.22-29:

^{10.2} «Ամպի». ակնարկությունը վերաբերում է անապատում Իսրայելի ժողովրդին առաջնորդող ամպի և կրակի սյունին (Ելք 13.21-22):

^{10.3} Ելք 16.35:

^{10.4} «Խմեցին հոգևոր մի ժայռից, որ գնում էր իրենց հետ». թվում է, թե Պողոսը հետևում է ռաբբիական մի մեկնության, որի համաձայն Թվ 20.8-11-ում հիշված ժայռը անապատում Իսրայելի ժողովրդի թափառումների ժամանակ տեղափոխվում էր նրանց հետ:

^{10.4} Ելք 17.6, Թվ 20.11:

⁵ Բայց նրանց մեծագույն մասը հաճելի չեղավ Աստծուն, ուստի նրանց դիակները անապատում ցիրուցան եղան:

⁶ Այս բաները պատահեցին որպես օրինակ մեզ համար, որպեսզի չցանկանանք չար բաներ, ինչպես որ նրանք ցանկացան: ⁷ և ոչ էլ կուռքեր պաշտենք, ինչպես պաշտեցին նրանցից ոմանք՝ Սուրբ գրքի վկայության համաձայն, որ ասում է. «Ժողովուրդը նստեց, կերավ ու խմեց, ապա ելավ ու պարեց կուռքի առջև»: ⁸ Չլինի նաև, որ պռոնկություն անենք, ինչպես պռոնկացան նրանցից ոմանք, որի պատճառով էլ մեկ օրում քսանչորս հազար հոգի ընկան մեռան: ⁹ Եվ չլինի, որ փորձենք Տիրոջը, ինչպես փորձեցին նրանցից ոմանք և դրա համար էլ օձերից խայթվելով՝ սպանվեցին, ¹⁰ կամ չլինի, թե տրտնջանք, ինչպես տրտնջացին նրանցից ոմանք և կոտորվեցին մահվան հրեշտակի ձեռքով: ¹¹ Այս բոլորը պատահեցին նրանց իբրև օրինակ գալիքի, Բայց մեզ համար գրվեց իբրև ազդարարություն, մեզ, որ մոտեցել ենք ժամանակների վախճանին: ¹² Ահա թե ինչու, ով կարծում է, թե հաստատ կանգնած է, թող զգույշ լինի, որ չընկնի: ¹³ Այն փորձությունները, որ դուք կրեցիք, մարդկային սահմաններից դուրս փորձություններ չէին: Բայց վստահեցե՛ք Աստծուն. նա թույլ չի տա, որ ձեր կարողությունից ավելի փորձության ենթարկվեք, այլ փորձության մեջ անգամ ցույց կտա ձեզ այն հաղթահարելու միջոցը, որպեսզի կարողանաք տոկալ:՝

¹⁴ Ուստի, իմ սիրելիներ, հեռո՛ւ փախեք կռապաշտությունից: ¹⁵ Ասում եմ ձեզ իբրև գիտակից մարդկանց: Ինքնե՛րդ դատեցեք, թե ինչ եմ ասում: ¹⁶ Երբ խմում ենք այն բաժակից, որն օրհնում ենք ի հիշատակ Տիրոջ ընթրիքի, մի՞ թե հաղորդված չենք լինում Քրիստոսի արյանը: Եվ երբ ճաշակում ենք այն հացից, որը կտրում ենք, մի՞ թե հաղորդված չենք լինում Քրիստոսի մարմնին: ¹⁷ Մենք բոլորս մեկ հաց, մեկ մարմին ենք, որովհետև նույն և միակ հացից ենք ճաշակում: ¹⁸ Նայեցե՛ք Իսրայելի ժողովրդին, երբ նրանք ճաշակում են իրենց մատուցած զոհից, հաղորդակից չե՛ն լինում Աստծուն: ¹⁹ Արդ, այս օրինակը վերցրի հետևյալն ասելու համար. ո՛չ կուռքերին զոհված կերակուրը կարևորություն ունի, ո՛չ էլ կուռքը մի նշանակություն ունի: ²⁰ Բայց որովհետև հեթանոսներն ինչ զոհում են, դներին են զոհում և ոչ Աստծուն, չեմ ուզում, որ դուք դներին հաղորդակից լինեք, ²¹ որովհետև չի կարելի խմել Տիրոջ բաժակից և միաժամանակ խմել դների բաժակից: Նույնպես էլ չի կարելի ճաշել Տիրոջ սեղանից և միաժամանակ ուտել դների սեղանից: ²² Ի՛նչ է, ուզում ենք Տիրոջ արդար գայրո՞ւյթը

^{10.5} Թվ 14.29-30:

^{10.6} Թվ 11.4:

^{10.7} Ելք 32.6:

^{10.8} «Քսանչորս հազար». ձեռ. մեծ մասն ունի «քսաներեք հազար»:

^{10.8} Թվ 25.1-18:

^{10.9} «Տիրոջը». մի շարք ձեռ. ունեն «Քրիստոսին»:

^{10.9} Թվ 21.5-6:

^{10.10} Թվ 16.41-49:

^{10.13} Հոգ 8.25-27, Սր 15.11-20:

^{10.16} Ստ 26.26-28, Սր 14.22-24, Ղկ 22.19-20:

^{10.18} Ղև 7.6:

^{10.20} Բ Օր 32.17 [LXX]:

շարժել մի թե մենք ավելի ուժեղ ենք, քան նա։

Ամեն ինչ Աստծու փառքի համար

²³ Ամեն ինչ թույլատրված է ինձ, բայց ամեն ինչ չէ, որ օգտակար է: Ամեն ինչ թույլատրված է ինձ, բայց ամեն ինչ չէ, որ օգնում է ուրիշների հավաստի ամրապնդելու: ²⁴ Ոչ ոք թող չմտածի միայն իր մասին, այլ նաև իր ընկերոջ մասին:

²⁵ Որևէ միս, որ վաճառվում է շուկայում, կերե՛ք առանց խղճմտանքի, ²⁶ որովհետև «Աշխարհն իր ամբողջությամբ Տիրոջն է պատկանում»:

²⁷ Եթե մի հեթանոս ճաշի հրավիրի ձեզ, և դուք ուզենաք գնալ, ինչ որ դրվում է ձեր առաջ, կերե՛ք առանց խղճմտանքի: ²⁸ Իսկ եթե պատահի, որ մեկը ձեզ ասի՝ «Դա կուռքերին զոհված միս է», այդ դեպքում մի՛ կերեք այն մարդու պատճառով, ով հայտնեց ձեզ, որպեսզի խղճմտանքի հարց չծագի: ²⁹ Խղճմտանք ասելով ոչ թե ձեր սեփական խիղճն էմ ակնարկում, այլ ձեր ընկերոջ: Բայց ուրիշ որևէ դեպքում ուրիշի խղճմտանքն ինչո՞ւ պիտի իմ ազատությունը կաշկանդի: ³⁰ Եթե ես Աստծուն շնորհակալություն հայտնելով եմ ուտում, ինչո՞ւ պիտի մեղադրվեմ այն ուտելիքի պատճառով, որի համար շնորհակալություն եմ հայտնում Աստծուն: ³¹ Հետևաբար, թե՛ կերած-խմած ժամանակ և թե՛ ուրիշ որևէ դեպքում, ինչ էլ որ անեք, ամեն ինչ արեք Աստծու փառքի համար: ³² Գայթակղության պատճառ մի՛ եղեք ո՛չ հրեաներին, ո՛չ հեթանոսներին և ո՛չ էլ Աստծու եկեղեցուն, ³³ ճիշտ այնպես, ինչպես ես եմ փորձում ամեն ինչում սիրաշահել բոլորին: Ոչ թե իմ անձի օգուտն եմ փնտրում, այլ բոլորինը, որպեսզի փրկվեն:

11

¹ Հետևաբար, նմանվեցե՛ք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին:

Տղամարդը և կինը պաշտամունքի ժամանակ

² Գովում եմ ձեզ, որ հիշում եք այն ամենը, ինչ սովորեցրի ձեզ, և դրանք պահում եք այնպես, ինչպես որ ձեզ ավանդեցի: ³ Բայց ուզում եմ, որ գիտենաք նաև, թե ամեն տղամարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ նրա մարդը, իսկ Քրիստոսի գլուխը՝ Աստված: ⁴ Որևէ տղամարդ աղոթելիս կամ մարգարեական պատգամախոսություն անելիս, երբ իր գլուխը ծածկած պահի, անպատված կլինի իր գլուխը, այսինքն՝ Քրիստոսին: ⁵ Մինչդեռ որևէ կին, երբ աղոթի կամ մարգարեական պատգամախոսություն անի գլխաբաց, անպատված կլինի իր գլուխը, այսինքն՝ իր ամուսնուն, որովհետև նա ոչ մի տարբերություն չի ունենա անպատիվ կնոջից, որի

^{10.22} Բ Օր. 32.21:

^{10.23} Ա Կր. 6.12:

^{10.26} Սդ 24.1:

^{10.28} «Չճագի». ձեռ. մի քանիսն ավելացնում են «որովհետև "Աշխարհն իր ամբողջությամբ Տիրոջն է պատկանում"» (հմմտ հմբ 26):

^{11.1} Ա Կր 4.16, Փպ 3.17:

^{11.3} «Գլուխը». հունարենում, ինչպես նաև հայերենում, այս բառը նշ է նաև «պետ», «առաջնորդ»: Ամբողջ հաստվածում Պողոսը բառախաղ է անում այդ գույգ նշանակությունների վրա:

մազերը կտրում են: ⁶ Եթե մի կին քողով չի ծածկում իր գլուխը, թող կտրի իր մազերը ի նշան անպատվության, իսկ եթե նախատինք է կնոջ համար մազերը կտրելը կամ ածիլելը, թող քողով ծածկի: ⁷ Տղամարդը չպետք է ծածկի իր գլուխը, որովհետև նա պատիվն ու փառքն է Աստծու, իսկ կինն իր ամուսնու փառքն է: ⁸ Քանզի ոչ թե մարդն է սկիզբ առել կնոջից, այլ կինը՝ մարդուց: ⁹ Նույնպես էլ մարդը չէ, որ ստեղծվեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար: ¹⁰ Ահա թե ինչու աղոթելիս կինը պետք է քողով ծածկի իր գլուխը, ինչպես որ հրեշտակներն են ծածկում իրենց դեմքը Աստծու ներկայությամբ:

¹¹ Բայց և այնպես, քրիստոնեական հասկացողությամբ չկա կին առանց մարդու, ոչ էլ մարդ առանց կնոջ, ¹² որովհետև եթե կինը սկիզբ է առել տղամարդուց, մարդն էլ ծնվում է կնոջից, և բոլորի արարիչն էլ Աստված է: ¹³ Դուք ինքնե՛րդ դատեցե՛ք, թե արդյոք վայել է կնոջը, որ գլխաբաց աղոթքի կանգնի Աստծու առաջ: ¹⁴ Բնությունն ինքը չի սովորեցնում ձեզ, որ տղամարդու համար երկար մազ ունենալն անարգանք է, ¹⁵ մինչդեռ կնոջ համար երկար մազերը փառք են, քանի որ Աստված դրանք տվել է ծածկոցի փոխարեն: ¹⁶ Այս բոլորից հետո, եթե մեկը դարձյալ ուզենա առարկություն անել այս մասին, մենք միայն կասենք. ո՛չ մենք և ո՛չ էլ Աստծու եկեղեցիները ուրիշ սովորություն չենք ճանաչում:

Տիրոջ ընթրիքը

¹⁷ Հետևյալ պատվերն էլ ունեմ տալու ձեզ, և այս կետում ձեզ չեմ գովում, որովհետև լսում եմ, թե ձեր պաշտամունքի հավաքություններն ավելի վնաս են տալիս ձեզ, քան օգուտ: ¹⁸ Նախ, որովհետև երբ ամբողջ եկեղեցիով պաշտամունքի եք հավաքվում, ըստ իմ լսածի, բաժանվում եք հակառակ խմբերի: Եվ մասամբ հավատում եմ դրան: ¹⁹ Իհարկե, պառակտումներ պետք է լինեն ձեր մեջ, որպեսզի դրանով հայտնի լինի, թե ձեզնից ովքե՛ր են իսկական ընտրյալները: ²⁰⁻²¹ Երկրորդ, իմացել եմ, թե Տիրոջ ընթրիքի համար ձեր հավաքությունների ընթացքում ձեզնից յուրաքանչյուրն առաջ է ընկնում ընթրիքն ուտելու, այնպես որ ոմանք քաղցած են մնում, իսկ ուրիշներն արդեն հարբած են լինում: Դա Տիրոջ ընթրի՛ք էղավ: ²² Ուտելու-խմելու համար դուք տուն չունե՛ք, որ արհամարհում եք Աստծու եկեղեցին և չքավորներին ամոթով թողնում: Ի՞նչ եք ուզում, որ ասեմ ձեզ: Գովե՛մ: Ո՛չ, չեմ գովում:

²³ Ես Տիրոջից եմ առել այն, ինչը ավանդեցի ձեզ. Տեր Հիսուսն այն գիշեր, երբ մատնվեց, հաց վերցրեց, ²⁴ գոհություն հայտնեց Աստծուն, կտրեց այն և ասաց. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար է բաշխվում, այս կատարեցե՛ք ինձ հիշելու համար»: ²⁵ Ընթրիքից հետո նույն ձևով վերցրեց բաժակը և ասաց. «Այս բաժակը Աստծու նոր ուխտն է, որը կնքվում է իմ արյունով. այս կատարեցե՛ք միշտ, և ամեն անգամ, երբ

^{11.7} Ծն 1.26-27:

^{11.8-9} Ծն 2.18-23:

^{11.10} «Ինչպես որ հրեշտակներն են [ծածկում իրենց դեմքը Աստծու ներկայությամբ]», բոց՝ «հրեշտակների համար» կամ «հրեշտակների պատճառով», որի իմաստն անորոշ է և տրված մեկնություններն էլ ենթադրական:

^{11.24} «Այս է...». ոմանք ունեն «Առե՛ք, կերե՛ք, այս է...»:

խմեք դրանից, հիշեցե՛ք ինձ»։²⁶ Հետևաբար, ամեն անգամ, երբ ուտում եք այս հացը և խմում այս բաժակից, Տիրոջ մահն եք պատմում, մինչև նրա երկրորդ գալուստը։²⁷ Այսուհետև, ով անարժանորեն ուտի այս հացը կամ խմի Տիրոջ բաժակից, մեղանշած կլինի Տիրոջ մարմնի և արյան դեմ։²⁸ Ուստի ամեն մարդ նախ ինքն իրեն թող քննի և ապա միայն ուտի այս հացից ու խմի այս բաժակից,²⁹ որովհետև ով անարժանորեն է ուտում և խմում, այդ ուտելով ու խմելով դատապարտության է ենթարկում ինքն իրեն, քանի որ զանազանություն չի դնում սովորական հացի և Տիրոջ մարմնի միջև։³⁰ Այս է ահա պատճառը, որ ձեր մեջ կան բազում հիվանդներ ու ցավագարներ, և շատ են նաև նրանք, որ մեռան նույն պատճառով։³¹ Եթե երբևէ մենք մեզ քննեինք, ապա չէինք պատժվի։³² Իսկ եթե պատժվում ենք, այդպիսով Տերը խրատում է մեզ, որպեսզի չլինի թե՛ դատապարտվենք աշխարհի հետ միասին։
³³ Ուրեմն, եղբայրներ՝ ր, երբ Տիրոջ ընթրիքից ճաշակելու համար իրար մոտ եք հավաքվում, նախ սպասեցե՛ք միմյանց։³⁴ Իսկ եթե մեկը քաղցած է, թող իր տանն ուտի, որպեսզի ձեր հավաքույթը դատապարտության առիթ չլինի։ Գալով մնացած հարցերին՝ երբ գամ, անհրաժեշտը կկարգադրեմ։

12

Սուրբ Հոգու պարզները

¹ Ինչ վերաբերում է հոգևոր պարզների մասին ձեր տված հարցին, ուզում եմ, որ իմանաք ճշմարտությունը, եղբայրներ՝ ր։² Գիտե՛ք անշուշտ, որ մինչ հեթանոս էիք, ինչպե՛ս էիք քարշ գալիս անշունչ կուռքերից մեկից դեպի մյուսը։³ Ուստի ուզում եմ, որ հասկանաք, թե ոչ ոք, ով Աստծու Հոգուց մղված է խոսում, չի կարող ասել. «Նզովյալ լինի Հիսուսը»։ Նույնպես էլ ոչ ոք չի կարող խոստովանել, թե՛ «Հիսուսը Տեր է», եթե չունենա Սուրբ Հոգին։

⁴ Թեև պարզները զանազան են լինում, բայց նույն Հոգին է պարզնողը։⁵ Չանազան հոգևոր պաշտոններ կան, այո՛, բայց նույն Տերն է դրանք բաշխողը։⁶ Նույնպես և ծառայելու զանազան կարողություններ կան, բայց նույն Աստվածն է, որ դրանք տալիս է յուրաքանչյուրին։⁷ Սուրբ Հոգին ամեն մեկի մեջ տարբեր ձևով է հայտնվում ընդհանուրի օգուտի համար։⁸ Այսպես՝ Սուրբ Հոգին մեկին տալիս է իմաստությամբ հորդորելու կարողություն, մյուսին նույն Հոգին տալիս է հոգևոր գիտության հասնելու և ուսուցանելու կարողություն։⁹ Նույն Հոգին մի երրորդի տալիս է հավատ, մեկ ուրիշին՝ բժշկելու գործություն, ¹⁰ մեկ ուրիշին՝ հրաշագործության կարողություն, մեկ ուրիշին՝ մարգարեական պատգամախոսություն, ուրիշ մեկին՝ Հոգուց տրված պարզները ճանաչելու կարողություն, ուրիշ մեկին՝ հափշտակության մեջ տեսակ-տեսակ լեզուներով խոսելու շնորհ, իսկ մեկ ուրիշին էլ՝ այդ լեզուներով խոսվածը մեկնաբանելու կարողություն։¹¹ Միևնույն Հոգին է, որ կատարում է այս բոլորը՝ յուրաքանչյուրին տալով մի պարզ, ինչպես ինքն է կամենում։

^{11.25} ա Ելք 24.8, Եր 31.31-34: ք Ելք 24.6-8:

^{12.4-11} Հո 12.6-8:

Մեկ մարմին՝ բազում անդամներով

¹² Ինչպես որ մարմինն իր զանազան անդամներով մեկ ամբողջություն է, այսինքն՝ բոլոր անդամները միասին մեկ մարմին են կազմում, այդպես է նաև Քրիստոսը,¹³ որովհետև մենք ամենքս, հրեա թե հեթանոս, ծառա թե ազատ, նույն Հոգով մկրտվեցինք մե՛կ մարմին կազմելու համար, և ամենքս էլ նույն Հոգուց խմեցինք:¹⁴ Մարմին ասելով՝ անդամներից միայն մեկը չենք հասկանում, այլ անդամների ամբողջությունը: ¹⁵ Եթե ոտքն ասի՝ «Ես ձեռք չեմ, ուրեմն մարմնի մաս չեմ կազմում», դրանով չի դադարում մարմնի մեկ անդամ լինելուց: ¹⁶ Եթե ականջն ասի՝ «Քանի որ աչք չեմ, մարմնի մաս չեմ կազմում», դարձյալ չի դադարում մարմնի մեկ անդամ լինելուց: ¹⁷ Եթե ամբողջ մարմինը աչք լիներ, ինչո՞վ պետք է լսեր: Երբ ամբողջ մարմինը ականջ լիներ, ինչո՞վ պետք է հոտոտեր: ¹⁸ Բայց Աստված անդամներից ամեն մեկը դրեց մարմնի մեջ այնպես, ինչպես ինքը կամեցավ: ¹⁹ Մարմինը մարմին կլինե՞ր, եթե միայն մեկ տեսակ անդամ ունենար: ²⁰ Պարզ է, ուրեմն, որ անդամները բազում են, բայց մարմինը մեկ է: ²¹ Աչքը չի կարող ձեռքին ասել, թե՛ «Ինձ պետք չես»․ ոչ էլ գլուխը՝ ոտքերին, թե՛ «Ինձ պետք չեք»: ²² Ընդհակառակը, մարմնի ամենից ավելի տկար թվացող անդամները ամենակարևորներն են: ²³ Այն անդամները, որ ամենից անարգն ենք համարում, դրանց ավելի շատ պատիվ ենք տալիս, և ամոթույթ համարված մեր անդամներն ավելի պարկեշտությամբ ենք ծածկում, ²⁴ քանի որ մեր պարկեշտ անդամները դրա կարիքը չունեն: Աստված ինքն է այդպես կազմել մարմինը՝ նվազ պատվավորին առավել պատիվ տալով, ²⁵ որպեսզի մարմնի մեջ պառակտումներ չլինեն, այլ որպեսզի անդամները նույն հոգածությունն ունենան միմյանց նկատմամբ: ²⁶ Եթե մարմնի մեկ անդամ ցավ զգա, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները, իսկ եթե մեկ անդամը պատվվում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները:

Դուք Քրիստոսի մարմինն եք

²⁷ Արդ, դուք թեև առանձին-առանձին անդամներ եք, բայց միասնաբար կազմում եք Քրիստոսի մարմինը: ²⁸ Այդ մարմնի, այսինքն՝ եկեղեցու մեջ Աստված կարգեց բազում անդամներ՝ զանազան ծառայությունների համար: Նախ՝ առաքյալներին, երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ ուսուցանողներին, ապա՝ հրաշագործ գործություն ունեցողներին, և դեռ բժշկելու շնորհ ունեցողներին, ուրիշներին օգնելու ընդունակներին, վարչական կարողությամբ օժտվածներին, հափշտակության մեջ զանազան լեզուներով խոսողներին և այդ լեզուներով խոսվածը մեկնաբանելու ընդունակ մարդկանց: ²⁹ Արդ, մի թե բոլորը առաքյալներ են, բոլորը մարգարենե՞ր են, բոլորը ուսուցանողնե՞ր են, բոլորը հրաշագործ գործություն ունե՞ն: ³⁰ մի թե բոլորը

^{12.12} Հո 12.4-5:

^{12.28} «Ուսուցանողներ», գրք. «Վարդապետ». սրանք եկեղեցում հավատի ուսուցման պարտականությունն ունեին: Հուն. չունի «և այդ լեզուներով խոսվածը մեկնաբանելու ընդունակ մարդկանց» (բայց հիմտ հմր 30):

^{12.28} Եփ 4.11:

օժտված են բժշկելու գորությամբ, բոլորը լեզուներով խոսելու շնորհ ունե՞ն, կամ բոլորը կարո՞ղ են այդ լեզուներով ասվածը մեկնաբանել: ³¹ Հետևաբար, ձգտեցե՛ք հասնել այն պարզկներին, որոնք լավագույնն են:

Բայց հիմա ես ցույց կտամ լավագույն ճանապարհը:

13

Մեր

¹ Եթե խոսեմ մարդկանց և հրեշտակների լեզուներով, բայց սեր չունենամ, ինչո՞վ պիտի տարբերվեմ պղնձե շեփորից, որ հնչում է, կամ ծնծղաներից, որ դողանջում են:

² Եթե մարգարեության պարզև ունենամ, կարողանամ բոլոր խորհուրդների խորքը թափանցել ու հասնեմ ամբողջական գիտության, և եթե նույնիսկ լեռները տեղափոխելու չափ ուժեղ հավատ ունենամ, բայց սեր չունենամ, ես ոչինչ չարժեմ:՝

³ Ի՞նչ օգուտ, եթե իմ ամբողջ ունեցվածքն աղքատներին տամ և նույնիսկ իմ մարմինը կրակի մատնեմ. եթե սեր չունենամ, ոչնչից չեմ օգտվում:՝

⁴ Մեր ունեցողը համբերատար է լինում, քաղցրաբար: Մեր ունեցողը չի նախանձում, չի գոռոզանում, չի հպարտանում, ⁵ անպատշաճ վարմունք չի ունենում, միայն ինքն իր մասին չի մտածում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, ⁶ անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախակից է լինում ճշմարտությանը:

⁷ Մեր ունեցողը միշտ զիջում է, միշտ հավատում, միշտ հույս է տածում, միշտ համբերում:

⁸ Մերն անվախճան է, մինչդեռ մարգարեական պատգամներն այս կյանքի հետ վերջ պիտի գտնեն, հրեշտակների լեզուներով խոսելը կդադարի, գիտությունն էլ վերջ կգտնի: ⁹ Այժմ մեր իմացածն անկատար է, և մեր մարգարեություններն էլ՝ մասնակի:

¹⁰ Բայց երբ գա կատարյալը, այս անկատարությունը վերջ պիտի գտնի:

¹¹ Երբ երեխա էի, երեխայի պես էի խոսում, երեխայի պես խորհում և երեխայի պես տրամաբանում, իսկ երբ տղամարդ դարձա, երեխայական բոլոր բաները մի կողմ դրեցի: ¹² Նույնպես էլ մենք այժմ Աստծուն տեսնում ենք աղոտ կերպով, կարծես հայելու միջից, բայց երբ ամեն բանի կատարումը գա, նրան կտեսնենք դեմառդեմ: Այժմ միայն մասնակիորեն եմ ճանաչում Աստծուն, բայց այն ժամանակ պիտի ճանաչեմ ամբողջապես, ճիշտ ինչպես ինքն է ճանաչում ինձ:՝

¹³ Այժմ, ուրեմն, կարևոր միակ բաներն են՝ հավատը, հույսը և սերը, իսկ այս երեքից մեծագույնը սերն է:

14

Լեզուներով խոսելու և մարգարեություններ անելու շնորհները

^{13.2} Մտ 17.20, 21.21, Մր 11.23:

^{13.3} «Կրակի մատնեմ». մի շարք ձեռ. ունեն «պարծանքի առարկա դարձնեմ»:

^{13.12} «Կարծես հայելու միջից». հնում հայելիները պատրաստվում էին փայլեցրած մետաղից և պատկերը համեմատաբար աղոտ էին արտացոլում:

¹ Ուրեմն, սիրո՛ւ հետամուտ եղէք: Միաժամանակ փափագո՛ւղ եղէք հոգևոր պարգևներին, մանավանդ մարգարեության. ² որովհետև, օրինակ, անձանոթ լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ Աստծու հետ. քանզի ոչ ոք չի հասկանա նրան, թեև նա Հոգու զորությամբ խորհուրդներ է հայտնում: ³ Մինչդեռ մարգարեություն անողը մարդկանց հետ է խոսում՝ նրանց հավատն ամրապնդելու, նրանց մխիթարելու և քաջալերելու համար: ⁴ Ով լեզուներով է խոսում, միայն ինքն է օգտվում, մինչդեռ ով հոչակում է Աստծու պատգամները, նա շենացնում է ամբողջ եկեղեցին: ⁵ Ես կցանկանայի, որ ամենքդ էլ լեզուներով խոսեիք, բայց նախընտրում եմ, որ մարգարեություն անեք, որովհետև մարգարեություն անողն ավելի օգտակար է լինում, քան լեզուներով խոսողը, բացի այն դեպքերից, երբ մի թարգմանող գտնվի, որպեսզի ամբողջ եկեղեցին օգտվի:

⁶ Այժմ, եղբայրնե՛ր, եթե գամ ձեզ մոտ և խոսեմ անձանոթ լեզուներով, ի՞նչ օգուտ կտամ ձեզ, թե ասածս չլինի Աստծու մի հայտնություն կամ մի գիտություն, մարգարեական պատգամ կամ ուսուցում: ⁷ Որպես օրինակ վերցրե՛ք երաժշտական անշունչ գործիքները, սրինգը կամ քնարը. եթե սրանք որոշակի հնչյուններ չարտաբերեն, ինչպե՛ս կիմացվի, նվագվածը սրինգո՞ւմ է, թե՛ քնարով: ⁸ Կամ եթե փողը պատերազմական կոչի փոխարեն անորոշ ձայներ արձակի, ո՞վ կպատրաստվի պատերազմի: ⁹ Ճիշտ այդպես էլ, եթե դուք լեզվով հասկանալի չդարձնեք խոսքը, ինչպե՛ս կհասկացվի ասվածը: Այլապես օդի մեջ խոսած կլինեք: ¹⁰ Ով գիտի քանի՛ տեսակ լեզուներ կան աշխարհում, բայց դրանցից ոչ մեկն էլ անհասկանալի չէ: ¹¹ Եվ սակայն եթե ես չհասկանամ խոսված լեզուն, անհաղորդ կմնամ թե՛ խոսվածին և թե՛ խոսողին, ինչպես ինքն էլ՝ ինձ: ¹² Հետևաբար, դուք էլ, քանի որ փափագում եք հոգևոր պարգևների, ջանացե՛ք տիրանալ այն պարգևներին, որոնք եկեղեցու շինությանն են նպաստում:

¹³ Նա, ով անձանոթ լեզուներով է խոսում, թող աղոթի, որ Աստված դրանք թարգմանելու շնորհն էլ տա իրեն, ¹⁴ որովհետև եթե անձանոթ լեզուներով եմ աղոթում, իմ հոգին է աղոթում, բայց իմ միտքը չի օգտվում դրանից: ¹⁵ Ուրեմն ի՞նչ պետք է անել: Անշուշտ պետք է աղոթեմ հոգով, բայց պետք է աղոթեմ նաև մտքով: Սաղմոս պետք է երգեմ հոգով, բայց սաղմոս պետք է երգեմ նաև մտքով: ¹⁶ Այլապես, եթե միայն հոգով գոհաբանեմ Աստծուն, անտեղյակ մի հավատացյալ քո գոհաբանությանն ինչպե՞ս կպատասխանի «Ամեն», քանի որ նա չի հասկանա, ինչ որ ասում ես: ¹⁷ Քո գոհաբանությունը կարող է շատ լավը լինել, բայց ուրիշը չի օգտվի դրանից: ¹⁸ Փա՛ռք Աստծու, ես ավելի շատ անձանոթ լեզուներով եմ խոսում, քան դուք բոլորդ, ¹⁹ բայց եկեղեցու մեջ նախընտրում եմ միայն հինգ բառ ասել, բայց ասել հասկանալի լեզվով, որպեսզի ուրիշներն էլ մի բան սովորեն, քան թե ասել տասնյակ հազար բառ՝ անձանոթ լեզուներով:

²⁰ Եղբայրնե՛ր, երեխայի պես մի՛ մտածեք. երեխաների պես եղէք միայն չարություն խորհելու մեջ, իսկ դրանից դուրս՝ խորհեցե՛ք հասուն մարդու պես: ²¹ Օրենքի գրքում գրված է.

«Օտար լեզուներով խոսող մարդկանցով,
օտարների շուրթերով եմ խոսելու այս ժողովրդի հետ,

և դարձյալ չեն լսելու ինձ»,- ասում է Տերը:

²² Նշանակում է՝ անձանոթ լեզուներով խոսելը մի նշան է ոչ թե հավատացյալների, այլ անհավատների համար, մինչդեռ մարգարեական պատգամախոսությունը անհավատների համար չէ, այլ հավատացյալների: ²³ Պատկերացրե՛ք մի պահ, որ ամբողջ եկեղեցին մեկտեղ հավաքվի, և բոլորն էլ սկսեն խոսել լեզուներով. եթե պատահի, որ անհավատներ կամ անտեղյակ հավատացյալներ ներս մտնեն, չե՞ն ասի՝ «Գժվե՞լ եք»: ²⁴ Մինչդեռ եթե պատահի, որ մի անհավատ կամ մի անտեղյակ հավատացյալ ներս մտնի այն ժամանակ, երբ բոլորն էլ Աստծու պատգամներն են հռչակում, նա այնպես կզգա, թե այդ պատգամներով իր հանցանքներն են հանդիմանում և քննում, ²⁵ իր սրտի գաղտնիքներն են երևան գալիս, ուստի և նա գետին կխոնարհվի ու երկրպագություն կանի Աստծուն՝ խոստովանելով, թե՝ «Արդարև Աստված ներկա է ձեր մեջ»:

Կարգ ու կանոն եկեղեցու ներսում

²⁶ Ուրեմն, եղբայրներ՝ ը, ի՞նչ անել: Երբ մեկտեղ հավաքվեք, ձեզնից յուրաքանչյուրն ինչ շնորհ որ ունենա՝ սաղմոս երգելու, ուսուցանելու, Աստծու մեկ հայտնությունը բերելու, անձանոթ լեզուներով խոսելու թե այդ լեզուներով խոսվածը բացատրելու, թող այդ բոլորը ծառայեցնի եկեղեցու շինությանը: ²⁷ Լեզուներով խոսելու ցանկացողն է՛ր կան. թող երկու կամ ամենաշատը երեք հոգի խոսեն, այն էլ՝ մեկ-մեկ, իսկ մեկ ուրիշն էլ թող նրանց ասածները բացատրի: ²⁸ Իսկ եթե չկա մեկը, որ բացատրի, այդպիսիները թող լուռ մնան եկեղեցում, թող իրենց մտքում խոսեն Աստծու հետ: ²⁹ Բայց եթե Աստծու պատգամները քարոզողներ կան, թող երկու կամ երեք հոգի խոսեն, իսկ մյուսները թող քննարկեն ասվածները: ³⁰ Եթե պատահի, որ մեկի խոսելու ժամանակ նստածներից մեկն Աստծուց մի հայտնություն ունենա անելու, թող առաջին խոսողը լռի: ³¹ Բոլորդ էլ կարող եք մեկատմեկ Աստծու պատգամախոսը լինել, որպեսզի բոլորն էլ սովորեն և բոլորն էլ քաջալերվեն: ³² Արդարև, մարգարեության հոգին ենթարկվում է մարգարեին, ³³ որովհետև Աստված անկարգություն չի կամենում, այլ խաղաղություն, ինչպես որ նույնն է Աստծու ժողովրդի պարագան բոլոր եկեղեցիներում:

³⁴ Բոլոր եկեղեցիներում կանայք պետք է լուռ մնան, որովհետև նրանց թույլատրված չէ խոսել, այլ միայն լսել հնազանդությամբ, ինչպես Աստծու Օրենքն է ասում: ³⁵ Իսկ եթե ուզենան որևէ խնդրի մասին ավելի բան գիտենալ, թող տանը իրենց ամուսիններին հարցնեն, որովհետև պատշաճ չէ, որ կին արարածը եկեղեցում խոսի: ³⁶ Այս մասին դուք ինքնուրույնաբար որոշումներ մի՛ ընդունեք: Մի թե Աստծու խոսքը ձեզնից ելավ կամ միայն ձե՞զ հասավ: ³⁷ Ով կարծում է, թե ինքը Աստծու պատգամախոսն է կամ հոգևոր մի պարզ ունի, թող իմանա, թե ինչ որ գրեցի ձեզ, Տիրոջ պատվիրածներն են: ³⁸ Իսկ ով պատվերներն անտեսի, դուք էլ նրա՛ն

^{14.21} Ես 28.11-12:

^{14.34} Հուն. չունի «բոլոր» բառը:

անտեսեցեք:

³⁹ Հետևաբար, եղբայրներ՝ ը, ջանացե՛ք առավելապես Աստծու պատգամները քարոզել, բայց անձանոթ լեզուներով խոսելն էլ մի՛ արգելեք: ⁴⁰ Եվ ինչ որ անում եք, թող վայելուչ և կարգ ու կանոնով լինի:

15

Քրիստոսի հարությունը

¹ Եղբայրներ՝ ը, ուզում եմ հիշեցնել ձեզ այն Ավետարանը, որը դուք ընդունեցիք իմ քարոզչությամբ և որին հավատարիմ եք մնում: ² Այդ Ավետարանով էլ կփրկվեք, եթե այն պահեք այնպես, ինչպես որ ես քարոզեցի ձեզ, այլապես իզուր հավատացած կլինեք:

³ Ես ձեզ փոխանցեցի այն հավատը, որը նախ ես ընդունեցի. այն, որ Քրիստոսը մեռավ մեր մեղքերի համար, ինչպես ասում էին Մուրբ գրքերը,⁴ թաղվեց և երրորդ օրը հարություն առավ՝ դարձյալ Մուրբ գրքերի համաձայն,⁵ ու երևաց Պետրոսին և ապա՝ տասնմեկ առաքյալներին:⁶ Հետո երևաց միատեղ խմբված ավելի քան հինգ հարյուր հետևորդների, թեև նրանցից ոմանք մեռան, բայց շատերը ողջ են տակավին: ⁷ Այնուհետև երևաց Հակոբոսին և ապա՝ բոլոր առաքյալներին: ⁸ Ի վերջո, բոլորից հետո երևաց ինձ՝ վիժվածիս:⁹ Արդարև, առաքյալների մեջ ես հետինն եմ և արժանի իսկ չեմ առաքյալ կոչվելու, քանի որ հալածեցի Աստծու եկեղեցին:¹⁰ Բայց հիմա ինչ որ եմ, պարտական եմ Աստծու շնորհին և կարող եմ ասել, թե Աստծու՝ ինձ տված շնորհն ապարդյուն չանցավ, որովհետև բոլոր առաքյալներից ավելի ե՛ս աշխատեցի, թեև ինչ որ արեցի, ես ի՛նքս չարեցի, այլ իմ մեջ գործող Աստծու պարգևը:

¹¹ Սակայն կարևոր չէ՝ ե՛ս քարոզեցի, թե՛ մյուս առաքյալները, որովհետև բոլորիս քարոզածն էլ նույն Ավետարանն է, որին դուք հավատացիք:

Մեր հարությունը

¹² Արդ, եթե մենք քարոզում ենք, թե Քրիստոսը հարություն է առել մեռելներից, ինչպե՞ս են ձեր միջից ոմանք վեր կենում և ասում, թե՝ «Մեռելների հարություն չկա»:

¹³ Եթե մեռելների հարություն չկա, ապա Քրիստոսն էլ հարություն չի առել: ¹⁴ և եթե Քրիստոսն էլ հարություն չի առել, իզուր է մեր քարոզչությունը, իզուր է նաև ձեր հավատը: ¹⁵ Այդ դեպքում Աստծու մասին մենք սուտ վկայություն տված կլինենք, քանի որ վկայեցինք, թե Աստված հարություն տվեց Քրիստոսին. մինչդեռ եթե ընդունենք, որ մեռելները հարություն չեն առնում, ապա ասած կլինենք նաև, թե Աստված

^{14.38} «Դուք էլ նրա՛ն անտեսեցեք» կամ «Աստված էլ նրան կանտեսի»:

^{15.3} Ես 53.5-12:

^{15.4} Սղ 16.8-10, Մտ 12.40, Գրծ 2.24-32:

^{15.5} «Պետրոս», բոց՝ «Կեփաս», որը նույն անվան արամեերենն է: «[Տասնմեկ] առաքյալներին», բոց՝ «տասներկուսին», որը քարացած մի արտահայտություն էր՝ առաքյալների խումբը նշելու համար:

^{15.5 ա} Ղկ 24.34: Բ Մտ 28.16-17, Սր 16.14, Ղկ 24.36, Հհ 20.19:

^{15.8} Գրծ 9.3-6:

^{15.9} Գրծ 8.3:

հարություն չտվեց Քրիստոսին, ¹⁶ որովհետև երբ ասում ենք՝ «Մեռելները հարություն չեն առնում», մերժած կլինենք նաև Քրիստոսի հարությունը: ¹⁷ Իսկ եթե Քրիստոսը հարություն չի առել, ձեր հավատը ինքնախաբեություն է, ինչը նշանակում է, թե տակավին ձեր մեղքերի մեջ եք: ¹⁸ Ուրեմն ի՞նչ նրանք, ովքեր հավատացին Քրիստոսին ու մեռան, կորած են ընդմիջտ: ¹⁹ Եթե այդպես է, և եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել Քրիստոսի վրա, մարդկանց մեջ ամենից խղճալին ենք:

²⁰ Բայց ո՞չ, Քրիստոսը մեռելներից հարություն է առել որպես առաջին օրինակ մեռելների հարության: ²¹ Ինչպես մի մարդով սկիզբ առավ մահը, այնպես էլ մի մարդով սկիզբ է առնում մեռելների հարությունը: ²² Ինչպես Ադամից ծնվածները բոլորն էլ մեռնում են, այնպես էլ Քրիստոսից ծնվածները բոլորն էլ կենդանանալու են: ²³ Բայց յուրաքանչյուրն իր հերթին. նախ՝ Քրիստոսը, որպես երախայրիք, իսկ նրա երկրորդ գալստյանը՝ բոլոր նրան պատկանողները: ²⁴ ապա գալու է վախճանը, երբ Քրիստոսը թագավորությունը հանձնելու է Հայր Աստծուն՝ ոգեղեն աշխարհի չար իշխանությունները, պետություններն ու գորությունները ոչնչացնելուց հետո:

²⁵ որովհետև Քրիստոսը պիտի թագավորի, մինչև որ Աստված բոլոր թշնամիներին դնի նրա ոտքերի տակ՝ որպես պատվանդան: ²⁶ Վերջին թշնամին, որ պիտի բնաջնջվի, կլինի մահը: ²⁷ Այդպիսով պիտի կատարվի այն մարգարեությունը, թե՛ «Աստված ամեն բան ենթարկեց նրան»: Բայց, անշուշտ, երբ ասում է, թե՛ «Ամեն բան ենթարկվել է նրան», բնականաբար հասկանում ենք՝ «ամեն բան», բացի Աստծուց, որն ամեն բան ենթարկեց նրան: ²⁸ Իսկ երբ ամեն բան ենթարկվի Որդուն, այն ժամանակ Որդին էլ ինքն իրեն պիտի ենթարկի Աստծուն, որն ամեն ինչ ենթարկեց նրան, որպեսզի Աստված լինի ամեն ինչ, ամեն բանի մեջ:

²⁹ Եթե մեռելները բնավ հարություն չեն առնելու, հապա ի՞նչ են անում նրանք, որ մեռելների փոխարեն են մկրտվում. ինչո՞ւ են, ուրեմն, մկրտվում նրանց փոխարեն:՝

³⁰ Իսկ մե՞նք. ինչո՞ւ ենք շարունակում նեղություններ կրել: ³¹ Ամեն օր ես իմ անձը մահվան վտանգին եմ ենթարկում, եղբայրներ ր. վկա եք դուք, որ իմ պարծանքն էք և որ պատկանում եք մեր Տիրոջը՝ Քրիստոս Հիսուսին: ³² Եթե որևէ մարդու պես մտածեի, ի՞նչ կարիք ունեի «գազանների» դեմ կռվելու այստեղ՝ Եփեսոսում: Եթե մեռելների հարություն չկա, ուրեմն՝ «Ուտենք, խմենք, քանի որ վաղը մեռնելու ենք», ինչպես հաճախ ասում են մարդիկ: ³³ Ո՞չ, եղբայրներ ր, չխաբվեք. «Վատ ընկերը խաթարում է լավ նկարագիրը»: ³⁴ Մթափվեցե՛ք և արդար կյանք ապրեցեք. մի՛ մեղանչեք: Ձեզնից շատերն Աստծուն դեռ չեն ճանաչել: Ասում եմ այս, որ ամաչեք:

^{15.24} «[Ոգեղեն աշխարհի չար] իշխանությունները, պետություններն ու գորությունները». տե՛ս Հո 8.38 և ծնթ:

^{15.25} Սդ 110.1:

^{15.27} Սդ 8.6:

^{15.29} Այս համարում ակնարկված սովորությանը և դրա նշանակությանը ծանոթ չենք:

^{15.29} Բ Մկ 12.44:

^{15.32} Ես 22.13:

^{15.33} Մեջբերված խոսքը հույն բանաստեղծ Մենանդրոսի (340-292 ՔԱ) «Թայխ» երգիծական գործից է:

Հարուցյալ մարմինը

³⁵ Բայց մեկը կարող է հարց տալ. «Ինչպե՞ս են հարություն առնում մեռելները. կամ ինչպիսի՞ մարմնով են գալու»: ³⁶ Լսի՛ր, անմի՛տ: Նախ՝ երբ սերմի մի հատիկ սերմանես, այդ հատիկը չի բուսնի, մինչև չմեռնի: ³⁷ Եվ հետո, քո սերմանածը մի պարզ հատիկ է՝ ցորենի կամ ուրիշ սերմերի, և ոչ թե այն հասկը, որ ծլելու է: ³⁸ Աստված այդ հատիկին մի մարմին է տալիս, ինչպես ինքն է կամենում, բայց սերմերից յուրաքանչյուրին իրեն հատուկ մարմին է տալիս: ³⁹ Անշուշտ, ամեն մարմին նույնը չէ: Մարդկանց մարմինն ուրիշ է, կենդանիների մարմինը՝ ուրիշ, թռչունների մարմինը՝ ուրիշ, ձկների մարմինը՝ ուրիշ: ⁴⁰ Կան նաև երկնավոր մարմիններ ու երկրավոր մարմիններ, սակայն ուրիշ է երկնավոր մարմինների շքեղությունը, ուրիշ՝ երկրավոր մարմինների շքեղությունը: ⁴¹ Ուրիշ է արևի շքեղությունը, ուրիշ՝ լուսնի շքեղությունը, և ուրիշ՝ աստղերի շքեղությունը: Եվ նույնիսկ որոշ աստղեր ավելի շքեղ են, քան մյուսները:

⁴² Ճիշտ այդպես էլ լինելու է նաև մեռելների հարությունը: Մարմինը հողի մեջ է դրվում եղծանելի վիճակում և հարություն է առնում անեղծ. ⁴³ հողի մեջ է դրվում անարգ և հարություն է առնում՝ փառավոր, հողի մեջ է դրվում տկար և հարություն առնում՝ զորավոր. ⁴⁴ հողի մեջ է դրվում իբրև շնչավոր մարմին և հարություն է առնում իբրև հոգևոր մարմին: Ինչպես որ կա շնչավոր մարմին, այնպես էլ կա հոգևոր մարմին: ⁴⁵ Մուրբ գրքում այսպես է գրված. «Առաջին մարդը՝ Ադամը, ստեղծվեց իբրև շնչավոր էակ», մինչդեռ երկրորդ Ադամը կենդանարար հոգի է: ⁴⁶ Արդ, շնչավոր մարմինը նվազ կարևոր է, քան հոգևորը. դրա համար էլ նախ գալիս է շնչավորը և ապա՝ հոգևորը: ⁴⁷ Առաջին մարդը երկրից էր և հողեղեն, մինչդեռ երկրորդ մարդը՝ մեր Տերը, երկնքից է: ⁴⁸ Ինչպես հողեղենն էր, նույնպես էլ մենք ենք՝ բոլոր հողեղեններս, և ինչպես երկնավորն է, նույնպես էլ պիտի լինեն երկնավորները: ⁴⁹ Այսինքն՝ ինչպես որ կրում ենք հողեղեն Ադամի պատկերը, այնպես էլ պիտի կրենք նաև երկնավոր Ադամի պատկերը: ⁵⁰ Ուզում եմ ասել, եղբայրնե՛ր, որ մարմինն ու արյունը իրենց ներկա վիճակով չեն կարող ժառանգել Աստծու արքայությունը. եղծանելին չի կարող ժառանգել անեղծությունը:

⁵¹ Այժմ մի ծածուկ խորհուրդ հայտնեմ ձեզ. բոլորս չէ որ պիտի մեռնենք,⁵² բայց երբ վերջին փողը հնչի, բոլորս էլ հանկարծ պիտի նորոգվենք մի ակնթարթում, որովհետև փողը պիտի հնչի, և մեռելները հարություն պիտի առնեն անեղծ մարմիններով, և մենք պիտի նորոգվենք. ⁵³ որովհետև մեր այս եղծանելի բնությունը պետք է անեղծ բնության փոխվի. այս մահկանացու բնությունը պետք է փոխակերպվի անմահ բնության: ⁵⁴ Եվ երբ մեր այս եղծանելի բնությունը փոխվի անեղծ բնության, և այս մահկանացու բնությունը փոխակերպվի անմահ բնության, այն ժամանակ կիրականանա գրված մարգարեությունը, որն ասում է.

^{15.45} Ծն 2.7:

^{15.47} Մի շարք ձեռ. չունեն «մեր Տերը»:

^{15.51-52} Բ Եզր 6.23, Ա Թս 4.15-17:

«Մահը կլանվեց, հաղթանակը նվաճվեց:»

⁵⁵ Ո՞ւր է, Մա՛հ, քո հաղթանակը,

ո՞ւր է, Մա՛հ, քո խայթոցը:»⁵⁶

⁵⁶ Մահվան խայթոցը մեղքն է, իսկ մեղքը իր ուժն ստանում է Օրենքից: ⁵⁷ Բայց, փա՛ռք Աստծու, որ մեզ հաղթանակ պարգևեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

⁵⁸ Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, ամո՛ւր և հաստատո՛ւն մնացեք, միշտ ավելի՛ նարեք Տիրոջ գործի համար՝ իմանալով, որ ձեր հոգնությունն առանց վարձատրության չի մնա Աստծու առաջ:

16

Հանգանակություն ի նպաստ Երուսաղեմի եկեղեցու

¹ Ինչ վերաբերում է Երուսաղեմի հավատացյալների համար կատարվող հանգանակությանը, դուք ևս արեք այնպե՛ս, ինչպես պատվիրեցի Գաղատիայի եկեղեցիներին: ² Ամեն կիրակի ձեզնից յուրաքանչյուրը թող մի կողմ դնի փոքր մի խնայողություն իր կարողության չափով, որպեսզի հանգանակությունն իմ գալուց հետո չլինի, ³ այլ երբ գամ, հանձնարարական նամակներ տամ և Երուսաղեմ ուղարկեմ ձեր ընտրած մարդկանց, որպեսզի ձեր նվերները տանեն: ⁴ Իսկ եթե հարմար լինի, որ ես էլ գնամ, նրանք էլ ինձ հետ թող գան:

Պողոսի ծրագրերը

⁵ Երբ անցնեմ Մակեդոնիա, ձեզ մոտ էլ կգամ: Արդարև, պիտի անցնեմ Մակեդոնիայով: ⁶ Հավանաբար մի քիչ մնամ ձեզ մոտ, գուցե ձմեռն էլ այդտեղ անցկացնեմ, որպեսզի հետո ձեր օգնությամբ գնամ, ուր որ գնալու լինեմ: ⁷ Այս անգամ չեմ ուզում անցողակի տեսնել ձեզ. հույս ունեմ, որ մի որոշ ժամանակ կմնամ ձեզ մոտ, եթե Տերը թույլ տա: ⁸ Առայժմ մնում եմ Եփեսոսում մինչև Պենտեկոստեի տոնը,» ⁹ որովհետև աշխատանքի շատ մեծ և կարևոր պատեհություն է բացված իմ առաջ, թեև հակառակորդները շատ են:

¹⁰ Երբ Տիմոթեոսը գա, այնպես արեք, որ չվախենա ձեզ մոտ մնալուց: Նա էլ է աշխատում Տիրոջ համար, ինչպես որ ես: ¹¹ Հետևաբար, չլինի թե որևէ մեկը արհամարհի նրան: Խաղաղությամբ ուղարկեցե՛ք նրան այստեղ՝ ինձ մոտ, որովհետև այստեղի հավատացյալ եղբայրների հետ նրան եմ սպասում:

¹² Ինչ վերաբերում է Ապողոս եղբորը, շատ խնդրեցի նրան, որ հավատացյալ մի քանի եղբայրների հետ գա ձեզ մոտ, բայց չուզեց հիմա գալ: Մակայն կգա մի հարմար

^{15.54} Ես 25.8:

^{15.55} «*Uuh*». մի շարք ձեռ. այս բառի փոխարեն ունեն «*Ղժոխք*»:

^{15.55} Օս 13.14 [LXX]:

^{16.1} Հո 15.25-26:

^{16.5} Գրծ 19.21:

^{16.8} Ղև 23.15-21, Բ Օր 16.9-11:

^{16.8-9} Գրծ 19.8-10:

^{16.10} Ա Կր 4.17:

առիթով:

Վերջին հորդորներ և ողջույններ

¹³ Արթո՛ւն կացեք, հաստատո՛ւն մնացեք ձեր հավատի մեջ, քա՛ջ եղեք, գորացե՛ք:

¹⁴ Ինչ որ անեք, սի՛րով արեք:

¹⁵ Գիտեք Ստեփանոսին, որը Աքայիա նահանգում առաջին հավատացողն է եղել Քրիստոսին, ինչպես և նրա ընտանիքի անդամներին, որոնք իրենց նվիրեցին Աստծու ժողովրդի ծառայությանը: Աղաչում եմ, եղբայրնե՛ր, * ¹⁶ որ հնազանդ լինեք այդպիսիներին և նրանց բոլոր գործակիցներին ու ծառայակիցներին:

¹⁷ Ուրախացա, երբ Ստեփանոսը, Ֆորտունատոսն ու Աքայիկոսը եկան: Ստացա նրանցից ձեր լուրերը, ¹⁸ և միտքս հանգստացավ, ինչպես հիմա ձեր միտքն էլ հանգստացավ: Հարգեցե՛ք այդպիսիներին: ¹⁹ Ձեզ բարևում են Ասիա նահանգի եկեղեցիները: Շատ բարև ունեն նաև Ակյուղասն ու Պրիսկիդան, որոնք Տիրոջը հավատացողներն են, ինչպես և ամբողջ եկեղեցին, որ նրանց տանն է հավաքվում:՝

²⁰ Բոլոր հավատացյալ եղբայրները բարևում են ձեզ: Դուք էլ բարևե՛ք միմյանց սուրբ համբույրով:

²¹ Ես՝ Պողոսս, այս բարևը գրում եմ իմ ձեռքով:՝ ²² Ով չի սիրում Հիսուսին, թող նգովյալ լինի: Մարան աթա. Տերը շուտով գալիս է:

²³ Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը ձեր բոլորի հետ թող լինի: ²⁴ Իմ սերն էլ թող ձեզ հետ լինի. բոլորիդ, որ պատկանում եք Քրիստոս Հիսուսին: Ամեն:

2CO

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

Կորնթացիներին ուղղված այս երկրորդ նամակը ևս գրվել է Պողոսի առաքելական երրորդ ճանապարհորդության ընթացքում: Այդ ժամանակ Պողոսը շատ նեղ և դժվարին մի պահ էր ապրում Կորնթոսի եկեղեցու հետ իր հարաբերությունների մեջ: Եկեղեցու անդամներից ոմանք դիրքավորվել էին Պողոսի դեմ: Առաքյալը մի կողմից բռնոն կերպով հակազդում է, իսկ մյուս կողմից էլ համբերություն է ցուցաբերում և հայտնում իր սերը՝ հուսալով, որ ի վերջո հակառակությունները վերջ կգտնեն, և համերաշխություն կտիրի:

Նամակի առաջին մասում Պողոսը քննարկում է իր կապերը Կորնթոսի եկեղեցու հետ և բացատրում, թե ինչո՛ւ էր իր նախորդ նամակում խստությամբ հանդիմանում իրեն հակառակողներին: Նա գոհունակություն է հայտնում, որ իր խիստ

^{16.12} «Բայց չուզեց հիմա գալ». այլ թրգմ՝ «բայց [Աստծու] կամքը չէր, որ հիմա գա»:

^{16.15} «Ստեփանոսը». մի շարք ձեռ. ավելացնում են «և Ֆորտունատոսը»:

^{16.15} Ա Կր 1.16:

^{16.19} Գրծ 18.2:

^{16.21} «Մարան աթա» [նշ է «Տերը գալիս է] կամ «Մարանա թա» (նշ է «Ո՛վ մեր Տերը, արի՛») խոսքը արամեերեն մի բացականչություն է, որ մեծ տեղ ունեի Քրիստոսի վերահաս երկրորդ գալուստին սպասող եկեղեցու աղոթական-ծիսական կյանքում (հմմտ Հտ 22.20):

վերաբերմունքը պատճառ է դարձել, որ նրանք գղջան և դարձի գալով՝ ապրեն համերաշխ կյանքով:

Ապա առաքյալը կոչ է անում հավատացյալներին, որ իրենց առատ նվերներով օգնեն Հրեաստանի կարիքավոր քրիստոնյաներին: Նամակի վերջին գլուխներում Պողոսը պաշտպանում է իր առաքելական հեղինակությունն ու կեցվածքը Կորնթոսում գտնվող մի շարք մարդկանց դեմ, որոնք իրենց «ճշմարիտ» առաքյալներ էին համարում, մինչդեռ Պողոսին անվանում էին սուտ առաքյալ:

Սակայն նամակում առաքյալի նպատակը իր անձը կամ անձնական հեղինակությունը և կամ սեփական մի ուսուցում պաշտպանելը չէ բնավ: Իր առաքելական հեղինակությունը պաշտպանելով՝ իրականում Պողոսի ջանքն ու նպատակն է եղել ճշմարիտ Ավետարանն ընդունել տալ բոլորին, որպեսզի բոլորն էլ Քրիստոսին ճանաչեն և ընդունեն որպես Տիրոջ:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆՆԵԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-11):
- Պողոսը և Կորնթոսի եկեղեցին (1.12-7.16):
- Հրեաստանի քրիստոնյաներին տրված նվերներ (8.1-9.15):
- Պողոսի՝ որպես առաքյալի հեղինակության պաշտպանությունը (10.1-13.10):
- Վերջաբան (13.11-14):

1

Ողջույն

¹ Ես՝ Պողոսս, Աստծու կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալս, և Տիմոթեոսը՝ մեր եղբայրը, գրում ենք ձեզ՝ Կորնթոսում հաստատված Աստծու եկեղեցուն և ամբողջ Աքայիայում գտնվող քրիստոնյաներիդ: ² Թող Աստված՝ մեր Հայրը, և Տեր Հիսուս Քրիստոսը շնորհ և խաղաղություն պարգևեն ձեզ:

Նեղություն և մխիթարություն

³ Օրհնյալ լինի Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ հայրաբար գրում և որպես Աստված մխիթարում ⁴ ու զորացնում է մեզ մեր բոլոր նեղությունների մեջ, որպեսզի մենք էլ կարողանանք Աստծուց մեր վայելած օգնությունն ու մխիթարությունը տալ նրանց, որոնք ամեն տեսակ նեղությունների մեջ են, ⁵ որովհետև որքան շատ բաժնեկից լինենք Քրիստոսի չարչարանքներին, այնքան ավելի մեծ կլինի նրա օգնությունն ու մխիթարությունը: ⁶ Մենք նեղությունների ենք ենթարկվում ձեզ օգնելու և Աստծու փրկությունը ձեզ բերելու համար, և եթե Աստված օգնում է մեզ, դարձյալ ձեզ օգնելու համար է, որպեսզի մեր օրինակով սովորեք, թե Աստված ձեզ էլ է զորացնելու, որ համբերությամբ կարողանաք տանել այն

¹1.1 «Աքայիան» ներկա Հունաստանի ամբողջ հարավային մասի հին անվանումն է:

¹1.1 Գրծ 18.1:

չարչարանքները, որ այժմ կրում ենք մենք: ⁷ Ուստի մեր հույսը հաստատուն է ձեր հանդեպ, որովհետև գիտենք, որ մասնակից լինելով մեր չարչարանքներին՝ մասնակից կլինեք նաև մեր ունեցած մխիթարությանը:

⁸ Եղբայրներ, ուզում եմ, որ գիտենաք, թե ինչպիսի նեղություն կրեցինք Ասիա նահանգում: Մեր կարողությունից այնքան վեր էր այդ բեռը, որ գրեթե կորցրինք ապրելու մեր հույսը: ⁹ Զգացինք, որ մահվան վճիռը կախված է մեզ վրա: Բայց այդ պատահեց, որպեսզի սովորենք ինքներս մեզ չապավինել, այլ Աստծուն, որ հարություն է տալիս մեռելներին: ¹⁰ Նա՛ էր, որ այդպիսի անավոր մահվանից փրկեց մեզ, փրկում է, և վստահ ենք, որ առաջիկայում ևս կփրկի՝ ¹¹ մեզ համար ձեր կատարած աղոթքների օգնությամբ: Եվ ձեր աղոթքները, որոնց շնորհիվ Աստված իր հովանին անպակաս պիտի անի մեր վրայից, պատճառ պիտի լինեն, որ շատերը մեզ համար գոհություն տան Աստծուն:

Պողոսը բացատրում է Կորնթոս չգնալու պատճառները

¹² Պարծենալով կարող եմ ասել, և խիղճս էլ վկայում է, որ բոլորի հանդեպ և մանավանդ ձեր հանդեպ եղել եմ պարզ ու անկեղծ, ինչպես կամենում է Աստված. ոչ թե մարդկային իմաստությամբ մղված, այլ Աստծու շնորհով: ¹³⁻¹⁴ Իմ նամակների մեջ էլ ձեր կարդացածից և հասկացածից տարբեր բան չեմ գրում: Ու թեև ներկայումս միայն մասնակիորեն եք հասկանում ինձ, բայց հույս ունեմ, որ հետզհետե ամբողջովին կհասկանաք ինձ. այնպես որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի դատաստանի օրը ես կլինեմ ձեր պարծանքը, ինչպես դուք էլ՝ իմ պարծանքը:

¹⁵ Այս վստահությամբ է, որ ծրագրել էի նախ գալ ձեզ մոտ, որպեսզի կրկին Աստծու շնորհն ընդունեք, ¹⁶ և ձեր մոտից անցնել Մակեդոնիա, ապա Մակեդոնիայից դարձյալ հանդիպել ձեզ և ձեր օգնությամբ մեկնել Հրեաստան: ¹⁷ Բայց եթե չիրականացավ այն, ինչ ծրագրել էի, կարծում եք, թե թեթևամտությամբ շարժվեցի. կամ մտածում եք, թե որոշումներ եմ ընդունում անակզբունք մարդու նման, որի ո՛չ այո-ն է այո և ո՛չ էլ ոչ-ը ոչ: ¹⁸ Վկա է Աստված, որ ձեր մեջ կատարած մեր քարոզչությունը երկդիմի չեղավ բնավ, ¹⁹ որովհետև Աստծու Որդին՝ Հիսուս Քրիստոսը ևս, որին մենք՝ ես, Սիդվանոսը և Տիմոթեոսը, քարոզեցինք ձեր մեջ, աշխարհին տրված այո և ոչ չէր, այլ Աստծու այո-ն եղավ: ²⁰ Արդարև, Քրիստոսն Աստծու բոլոր խոստումների այո-ն է: Ահա թե ինչու մենք, Քրիստոսին ընդունելով, Աստծու այո-ին ասում ենք. «Ամեն»՝ իր փառքի համար: ²¹ Եվ Աստված ինքն է, որ մեզ և ձեզ հաստատուն է պահում Քրիստոսով: Ինքն է, որ

^{1.6} Մի շարք ձեռ. չունեն «և [Աստծու] փրկությունը ձեզ բերելու»:

^{1.8} Այստեղ ակնարկված «Ասիան» աշխարհամասը չէ, այլ Ասիա կոչված հռոմեական նահանգը, որի մայրաքաղաքն էր Եփեսոսը:

^{1.8} Ա Կր 15.32:

^{1.10} «Մահվանից». մի շարք ձեռ. ունեն «մահերից»:

^{1.12} «Պարզ». մի շարք ձեռ. այս բառի փոխարեն ունեն «մաքուր»:

^{1.14} «Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի». մի շարք ձեռ. ունեն «Տեր Հիսուսի», իսկ մի քանի ձեռ.՝ «Տիրոջ»:

^{1.15} «Շնորհն ընդունեք». մի շարք ձեռ. ունեն «ուրախություն ունենաք»:

^{1.16} Գրծ 19.21:

^{1.19} Գրծ 18.5:

օճեց մեզ ²² և իր կնիքը դրեց մեր վրա՝ մեզ տալով Սուրբ Հոգին՝ իբրև գրավական մեր ստանալիք ժառանգության:

²³ Վկա է Աստված իմ ասածին, նա, որ ճանաչում է իմ սիրտը, որ եթե ես Կորնթոս չեկա, ձեզ խնայելու համար էր, որ չեկա: ²⁴ Եվ այս ասում եմ ոչ թե նրա համար, որ փոխեք ձեր համոզմունքները, որովհետև գիտեմ, թե հաստատ եք մնում ձեր համոզմունքների մեջ, այլ ուզում եմ օգնել ձեզ, որ ձեր ուրախությունը գտնեք:

2

¹ Հետևաբար, ես ինքս որոշեցի Կորնթոս չգալ, որպեսզի դարձյալ չտրտմեցնեմ ձեզ, ² որովհետև եթե ես ձեզ տրտմեցնեմ, էլ ո՞վ կուրախացնի ինձ. չէ՞ որ իմ տրտմեցրած նույն անձերն են լինելու ինձ ուրախացնողները: ³ Ես իմ այս նամակը գրեցի հենց նրա համար, որ երբ գամ, միայն ուրախանամ ձեզանով և ոչ թե տրտմեմ՝ վստահ լինելով, որ իմ ուրախությունը ձեր բոլորի ուրախությունն է: ⁴ Եվ իսկապես, սիրտս մեծ վշտով ու նեղությամբ էր լցված, և աղի արտասուքներով գրեցի այն, ոչ թե որպեսզի տրտմեք, այլ որպեսզի իմանաք այն անսահման սերը, որ ունեմ ձեր հանդեպ:

Քրիստոնեական ներողամտություն

⁵ Գալով նրան, որ տրտմության պատճառ եղավ, միայն ինձ չէ, որ տրտմեցրեց, այլ եթե ոչ բոլորիդ, գոնե ձեզնից ոմանց. ասում եմ ոմանց, որպեսզի չափազանցրած չլինեմ: ⁶ Բայց արդեն բավական է այն պատիժը, որ նա կրեց ձեզանից շատերից: ⁷ Այսուհետև, ընդհակառակը, ավելի պետք է ներել և հուսադրել նրան, որպեսզի չլինի թե չափազանց տրտմությունից հուսահատության մասնովի: ⁸ Ուստի աղաչում եմ, որ վերստին սեր ցույց տաք նրա հանդեպ: ⁹ Նամակս գրել էի՝ փորձելու համար ձեզ և տեսնելու, թե իսկապե՞ս հնազանդ եք: ¹⁰ Եթե դուք ներում եք նրան, ես էլ եմ ներում, որովհետև ես էլ, երբ որևէ բան ներում եմ, ձեզ համար եմ ներում, Քրիստոսի փոխարեն, ¹¹ որպեսզի չլինի թե Սատանան օգտագործի մեր աններողամտությունը, որովհետև լավ գիտենք նրա խորհուրդները:

Պողոսի այցելությունը Տրովադա

¹² Երբ ես հասա Տրովադա՝ Քրիստոսի Ավետարանը քարոզելու, Տերն իմ առաջ բացեց հաջողության դուռը: ¹³ Բայց ես չափազանց մտահոգ էի, որովհետև այնտեղ չգտա Տիտոսին՝ մեր եղբորը: Ուստի հրաժեշտ տալով տրովադացիներին՝ գնացի Մակեդոնիա:

Հաղթանակ Հիսուս Քրիստոսով

¹⁴ Արդ, գոհության Աստծու, որ մասնակից է դարձնում մեզ Հիսուս Քրիստոսի

^{1.24} «Եվ այս ասում եմ ոչ թե նրա համար, որ փոխեք ձեր համոզմունքները» կամ «Մենք մեր հավատալիքները չենք պարտադրում ձեզ»:

^{2.3} «Իմ այդ նամակը». Պողոսն ակնարկում է նախապես գրված և հավանաբար մեզ անծանոթ մի նամակ:

^{2.12-13} Գրծ 20.1:

հաղթական երթին և մեր միջոցով իր գիտության բույրն է տարածում ամենուրեք:
¹⁵ Փրկության ճանապարհին գտնվողների մեջ ապրենք, թե կորստի ճանապարհին
գտնվողների մեջ, մեր կյանքը Քրիստոսի ձեռքով Աստծուն ընծայված անուշահոտ
խնկի նման տարածում է իր բույրը: ¹⁶ Կորստի ճանապարհին գտնվողների համար
մահաբույր և մահաբեր է թվում մեր կյանքը, բայց փրկության ճանապարհին
գտնվողների համար կյանքի բուրմունք է, որ տանում է դեպի կյանք: Սակայն ո՞վ
կարող է ապրել այսպիսի մի կյանք: ¹⁷ Անշուշտ ոչ նրանք, ովքեր վաճառքի են հանում
Աստծու խոսքը, այլ մենք, որ անկեղծորեն ենք խոսում Աստծու առաջ՝ որպես
Քրիստոսին միացած Աստծու պատգամավորներ:

3

Նոր Ուխտի պաշտոնյաներս

¹ Բայց այս բանն ասելով՝ արդյո՞ք ուրիշների նման մենք մեզ գովաբանած ենք լինում:
Կարիք ունե՞նք միթե հանձնարարական նամակներ առնելու ձեզանից կամ այդպիսի
նամակներով ներկայանալու ձեզ, ինչպես անում են ոմանք: ² որովհետև
հանձնարարական մեր լավագույն նամակը, որ ձեր սրտերում է գրված, դուք եք ձեր
կյանքերով, որ ամեն մարդ կարող է ճանաչել ու կարդալ, ³ և կարող է հստակորեն
տեսնել, թե դուք եք Քրիստոսի նամակը՝ պարզապես գրված մեր ձեռքով, գրված ոչ թե
թանաքով, այլ կենդանի Աստծու Հոգով, գրված ոչ թե քարեղեն տախտակների, այլ ձեր
սրտերի մարմնեղեն տախտակների վրա:

⁴ Այս բաներն ասում ենք Աստծու նկատմամբ մեր ունեցած վստահությամբ, որ
Քրիստոսն է տալիս մեզ, ⁵ որովհետև բնավ չենք մտածում, թե մենք կարող ենք մեր
ուժերով այդպիսի մի գործ անել. այլ Աստված է, որ տալիս է մեզ այդ կարողությունը:
⁶ Դարձյալ նա է, որ արժանի արեց մեզ լինելու ծառաները նոր Ուխտի, որը կապված է
ոչ թե գրավոր Օրենքին, այլ Սուրբ Հոգուն, որովհետև գրավոր Օրենքը մահվան է
առաջնորդում, մինչդեռ Հոգին կյանք է տալիս:

⁷ Երբ Օրենքը քարեղեն տախտակների վրա դրոշմվում էր գրերով, Աստծու փառքը
հայտնվեց, և Մովսեսի դեմքն սկսեց փայլել այնպիսի փայլով, որ իսրայելացիները
չկարողացան նայել նրա երեսին, թեև այդ փայլը շուտով անցնելու էր: ⁸ Արդ, եթե
Օրենքը, որ մահվան էր առաջնորդում, տրվեց այդպիսի մի փառքով, որքա՞ն ավելի
փառավոր պիտի լիներ Սուրբ Հոգու տրվելը: ⁹ Արդարև, եթե դատապարտություն
բերող Օրենքի մատակարարումը փառավոր էր, առավել փառավոր է Սուրբ Հոգու
մատակարարածը, որ արդարացնում է մարդկանց: ¹⁰ Այս դեպքում կարող ենք ասել,
որ Հոգու Օրենքի գերազանց փառավորության հետ համեմատած՝ գրավոր Օրենքի

^{2.15} «Մեր կյանքը...տարածում է իր բույրը». այլ թրգմ՝ «Աստծուն ընծայված մեր կյանքը Քրիստոսի
անուշ բույրն է տարածում»:

^{3.1} «Կարիք ունե՞նք միթե». գրբ. «թեպետև մենք կարիք չունենք»:

^{3.3} ա Ելք 24.12: բ Եր 31.33, Եզկ 11.19, 36.26:

^{3.6} Եր 31.31:

^{3.7} Ելք 34.29:

փառքը ոչինչ է: ¹¹ Եվ իսկապես, եթե ժամանակավորը տրվեց փառավորությանը, որքա՞ն ավելի փառավոր է մնայունը:

¹² Քանի որ մենք այսպիսի մի հույս ունենք, ձեզ հետ խոսում ենք բա՛ց երեսով ¹³ և ոչ թե Մովսեսի նման, որ իր դեմքը ծածկում էր քողով, որպեսզի իսրայելացիները մինչև վերջ չնայեն այն փառքին, որ շուտով անցնելու էր: ¹⁴ Արդարև, նրանց միտքը փակվեց, և մինչև այսօր էլ, երբ կարդում են Հին Կտակարանը, այդ նույն քողը մնում է նրանց մտքերի վրա, որովհետև այն կվերանա միայն այն ժամանակ, երբ հավատան Քրիստոսին: ¹⁵ Ու մինչև այսօր, երբ Մովսեսի գրքերն են կարդում, նույն քողը վարագույրի պես փակում է նրանց մտքերը: ¹⁶ Բայց երբ դառնան Տիրոջը, ապա քողը կվերցվի, ¹⁷ քանի որ Տիրոջը դառնալ՝ նշանակում է ունենալ Հոգին, և որտեղ ներկա է Տիրոջ Հոգին, այնտեղ ազատություն է: ¹⁸ Եվ մենք բոլորս էլ բաց երեսով Տիրոջ փառքն ենք արտացոլում հայելու նման, այդ նույն պատկերով ենք փոխակերպվում հետզհետե աճող մի փառքով: Եվ այդ փոխակերպումն իրագործում է Տիրոջ Հոգին:

4

Հոգևոր գանձ՝ հողեղեն անոթների մեջ

¹ Հետևաբար, մենք չենք հոգնում այս պաշտոնից, որ Աստված տվեց մեզ իր ողորմությամբ: ² Մենք հրաժարվել ենք վարագույրի հետևում նյութված ամոթալի գործերից, այսինքն՝ խորամանկություն չենք գործադրում և Աստծու խոսքը չենք նենգափոխում, այլ բացեիքաց ճշմարտությունն ենք հայտարարում ու այդպես ներկայանում մարդկանց առաջ, ինչպես կանեինք Աստծու առաջ: ³ Իսկ հակառակ սրան, եթե մեր քարոզչությունը մութ է թվում ոմանց, ապա մութ է թվում միայն նրա՛նց համար, ովքեր կորստի ճանապարհին են գտնվում: ⁴ Այս աշխարհի «աստվածը» համարված Սատանան կուրացրել է այդ անհավատների միտքը, որպեսզի չլինի թե Ավետարանի բերած լույսը ծագի նրանց մեջ, այսինքն՝ տեսնեն փառքը Քրիստոսի, որ պատկերն է անտեսանելի Աստծու: ⁵ Սակայն մենք մեզ չէ, որ քարոզում ենք, այլ քարոզում ենք Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, և մենք ձեր ծառաներն ենք դարձել ի սեր Հիսուսի, ⁶ որովհետև Աստված, որ ասաց, թե՝ «Խավարի մեջ թող լույս ծագի», հենց ինքը ծագեց մեր սրտերում, որպեսզի լուսավորվենք և Աստծու փառքը ճանաչենք Հիսուս Քրիստոսի անձի մեջ:

⁷ Արդ, այս գանձը մենք կրում ենք մեր մեջ կավե անոթների նման, որպեսզի հստակ երևա, թե այս անսահման գորությունն Աստծուց է գալիս և ոչ թե մեզնից: ⁸ Ամեն տեսակ նեղություն ունենք, բայց ընկճված չենք, ⁹ տազնապի ենք մատնված, բայց հուսահատ չենք, հալածանքներն անպակաս են, բայց լքված չենք, հաճախ

^{3.13} Ելք 34.33:

^{3.16} Ելք 34.34:

^{4.4} «*աստվածը*». այս բառն առնված է չակերտների մեջ, որովհետև Պողոսը հայտնապես հեզնանքով է գործածում այն՝ հուշելով, որ Աստծուն մերժող «անհավատները» ինքնաբերաբար ծառա են դառնում չարին՝ Սատանային: Հուն. չունի «*անտեսանելի*»:

^{4.6} Ծն 1.3:

խոշտանգված, բայց խորտակված չենք: ¹⁰ Մեր մարմինների մեջ շարունակ կրում ենք Հիսուսի մահը, որպեսզի Հիսուսի կյանքն էլ հայտնվի մեր մարմինների մեջ: ¹¹ Որքան ժամանակ որ ապրում ենք, միշտ մահվան ենք մատնվում ի սեր Հիսուսի, որպեսզի Հիսուսի կյանքն էլ հայտնվի մեր մահկանացու մարմինների մեջ: ¹² Այսպիսով, մահը ներգործում է մեր մեջ, որպեսզի կյանքը ներգործի ձեր մեջ:

¹³ Սաղմոսում գրված է. «Հավատացի. ահա թե ինչու խոսեցի»: Հավատի նույն ոգին ունենք մենք: Մենք էլ ենք հավատում, դրա համար էլ խոսում ենք: ¹⁴ Գիտենք, թե Աստված, որ հարություն տվեց Տեր Հիսուսին, մեզ ևս հարություն կտա Հիսուսի հետ և ձեզ հետ միասին կկանգնեցնի իր առաջ: ¹⁵ Այս բոլորը լինում է ձեզ համար, որպեսզի փրկության շնորհն ավելի ու ավելի տարածվի մարդկանց վրա, և գոհաբանական աղոթքներն առատանան Աստծու փառքի համար:

Ապրել հավատով

¹⁶ Ուստի չենք թուլանում բնավ: Եթե նույնիսկ մարմնապես հետզհետե քայքայվում ենք, ներքնապես նորոգվում ենք օրեցօր: ¹⁷ Ներկայումս մեր կրած այս թեթև նեղությունը արտակարգ գերազանց և հավիտենական փառք է ապահովում մեզ համար: ¹⁸ Մենք մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք ոչ թե նյութական իրականությունների, այլ հոգևոր իրականության վրա, որովհետև նյութական իրականությունները ժամանակավոր են, մինչդեռ հոգևոր իրականությունները հավիտենական:

5

¹ Արդարև, գիտենք, որ այս հողեղեն տունը, որ մեր մարմինն է, և որի մեջ ենք բնակվում, քայքայվելու է. բայց երկնքում, իբրև տուն, ունենք Աստծու կողմից պատրաստված անձեռագործ և հավիտենական մի մարմին: ² Այնքան ժամանակ, որ այս հողեղեն մարմնի մեջ ենք, հառաչում ենք երկնային մարմինը հագնելու փափագով: ³ Միայն թե չլինի այնպես, որ երբ այս մարմնից մերկանանք, մնանք առանց մարմնի: ⁴ Այո՛, այնքան ժամանակ, քանի դեռ այս հողեղեն մարմնի մեջ ենք, հառաչում ենք՝ ասես ինչ-որ բեռան տակ ճնշված. ոչ թե նրա համար, որ ուզում ենք այս մարմինը հանել մեր վրայից, այլ ուզում ենք երկնայինը հագնել սրա վրա, որպեսզի այս մահկանացու մարմինը սուզվի կյանքի մեջ: ⁵ Աստված ինքն է, որ մեզ պատրաստում է այս փոխակերպումին, նա, որ իր Հոգին է տվել մեզ որպես գրավական:

⁶ Հետևաբար, միշտ վստահությամբ ենք լցված և գիտենք, որ այնքան ժամանակ, քանի դեռ այս մարմնի մեջ ենք բնակվում, դուրս ենք մնում մեր իսկական տնից, հեռու՝ Տիրոջից, ⁷ որովհետև հավատով ենք ապրում՝ առանց տեսնելու նրան: ⁸ Բայց վստահություն ունենք և առավել ևս կուզենայինք դուրս գալ այս մարմնից և լինել

^{4.13} Սղ 116.10 [LXX]:

^{5.1} Իմ 9.15:

^{5.3} «Միայն թե չլինի այնպես, որ ...մնանք առանց մարմնի» կամ «և երբ երկնայինը հագնենք, առանց մարմնի չենք մնա»:

Տիրոջ մոտ: ⁹ Ուստի մնանք այս մարմնի մեջ, թե հեռանանք, մեր միակ ձգտումն է հաճելի լինել Աստծուն, ¹⁰ որովհետև մենք բոլորս էլ պիտի կանգնենք Քրիստոսի ատյանի առաջ, որպեսզի յուրաքանչյուրն իր մարմնով ընդունի երկրի վրա իր կատարած բարի կամ չար գործերի հատուցումը:՝

Հաշտվեցե՛ք Աստծու հետ

¹¹ Ուստի մենք միայն Տիրոջից ենք վախենում: Գալով մարդկանց՝ փորձում ենք համոզել նրանց մեր գործով և խոսքով, որոնք հայտնի են Աստծուն, և կարծում են՝ ձեր խղճմտանքն էլ վկայում է այդ մասին: ¹² Մեր նպատակը ձեր բարեհաճությունը շահելը չէ: Ընդհակառակը, ուզում ենք պարծանքի մի առիթ տալ ձեզ, որ դուք մեզնով պարծենաք նրանց դիմաց, որոնք, ի հեճուկս մեզ, արտաքին առավելություններով են պարծենում, փոխանակ նկարագրի առավելություններով պարծենալու: ¹³ Կա՛մ այն է, որ մեր ասածները զառանցանք են. թող Աստված՝ դատի այդ, և կա՛մ այն, որ դրանք խելամտության են. դո՛ւք դատեցեք այդ: ¹⁴ Ա՛յս միայն գիտենք, որ Քրիստոսի սերն է ստիպում մեզ այսպես վարվելու: Գիտենք, որ Քրիստոսը մեռավ բոլոր մարդկանց փոխարեն, և հետևաբար, բոլորն էլ միասին մեռան: ¹⁵ Եվ Քրիստոսը մեռավ բոլորի համար, որպեսզի հավատով կենդանացողներն այլևս չապրեն իրենք իրենց համար, այլ նրա համար, ով մեռավ և հարություն առավ իրենց համար: ¹⁶ Այնպես որ մենք այսուհետև որևէ հավատացյալի չենք նայում զուտ մարդկային չափանիշով: Կար ժամանակ, երբ մենք էլ այդպես էինք նայում Քրիստոսին, բայց հիմա բոլորովին տարբեր ենք մտածում: ¹⁷ Որևէ մեկը, որ միացած է Քրիստոսին, նոր արարած է. նա այլևս այն չէ, ինչ որ նախապես էր, որովհետև նա ամբողջությամբ նորոգվեց:՝ ¹⁸ Եվ այս նորոգումը գալիս է Աստծուց, որ Քրիստոսի միջոցով մեզ հաշտեցրեց իր հետ ու նաև պաշտոն տվեց մեզ՝ ուրիշներին էլ հաշտության բերելու: ¹⁹ Այսինքն՝ Աստված ինքն էր, որ Քրիստոսի միջոցով աշխարհը հաշտեցրեց իր հետ՝ անհիշաչար գտնվելով մարդկանց մեղքերի հանդեպ և պաշտոն տվեց մեզ, որ այդ հաշտությունը պատգամենք բոլոր մարդկանց:՝ ²⁰ Ահա թե ինչու մենք Քրիստոսի պատգամավորներ ենք, այնպես որ մեր միջոցով կարծես Աստված ինքն է խոսում ձեզ հետ, և աղաչում ենք ձեզ հանուն Քրիստոսի. հաշտվեցե՛ք Աստծու հետ, ²¹ որովհետև Աստված մեզ համար մեղքի պատարագ արեց Քրիստոսին, նրան, ով բնա՛վ մեղք չէր գործել, որպեսզի մենք, միանալով նրան, արդարանանք Աստծու համար:

6

¹ Արդ, քանի որ Աստծու գործակիցներն ենք, աղաչում ենք ձեզ. մի՛ վատնեք Աստծուց ստացած ձեր շնորհը, ² որովհետև Աստված ասում է.

՝5.10 «Որպեսզի յուրաքանչյուրն իր մարմնով ընդունի երկրի վրա իր կատարած բարի կամ չար գործերի հատուցումը». հուն. ասում է՝ «որպեսզի յուրաքանչյուրն ընդունի հատուցումը բարի կամ չար այն գործերի, որ ինքը գործեց իր մարմնավոր [օրերին]»:

՝5.10 Հն 14.10:

՝5.17 Մի շարք ձեռ. չունեն «ամբողջությամբ»:

՝5.19 «Աստված ինքն էր, որ Քրիստոսի միջոցով» կամ «Աստված Քրիստոսի մեջ»:

«Երբ հարմար ժամանակը եկավ, լսեցի քեզ,
երբ փրկության օրը հասավ, օգնեցի քեզ»:

Ահա հիմա՛ է այդ հարմար ժամանակը. հիմա՛ է փրկության օրը:

³ Ոչ մի բանով պատճառ մի՛ եղեք, որ Աստծու գործը խափանվի կամ վարկաբեկվի.

⁴ այլ բոլոր դեպքերում էլ դուք ձեզ ցույց տվեք որպես Աստծու պաշտոնյաներ՝ մեծ համբերությամբ հանձն առնելով նեղությունը, վիշտը, չարչարանքը, ⁵ ծեծը, բանտը, խռովարարների վայրագությունները, հոգնությունը, անքնությունը, անոթությունը:

⁶ Այս բոլորը տարեք մաքո՛ւր սրտով, զիտակցորեն, համբերությամբ, քաղցրությամբ, Սուրբ Հոգով, անկեղծ սիրով, ⁷ ճշմարտությունը քարոզելով, Աստծու գործությամբ և արդարությամբ զինված՝ չարի դեմ հարձակվելու և ձեզ պաշտպանելու համար: ⁸ Մի՛ այլայլվեք ո՛չ փառքից և ո՛չ անարգանքից, ո՛չ գովասանքից և ո՛չ մեղադրանքից:

Մարդիկ թող մեզ ասեն մոլորվածներ. մենք գիտենք, որ չենք շեղվել

ճշմարտությունից: ⁹ Թող չուզենան մեզ ճանաչել. մենք գիտենք, որ լավ են ճանաչելու

մեզ: Թող համարեն մեզ մեռած. բայց մենք ահա կենդանի ենք: Թող համարեն մեզ

պատժապարտ. մենք գիտենք, որ ազատված ենք մահվան դատապարտությունից:

¹⁰ Թող կարծեն, թե տխուր է մեր կյանքը. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող համարեն

մեզ. մենք շատերի կյանքն ենք ճոխացնում: Այո՛, թվում է, թե ոչինչ չունենք, մինչդեռ

ունենք ամեն ինչ:

¹¹ Ահա, սիրելի կորնթացիներ, ամեն ինչ ասացինք ձեզ բաց և անկեղծ սրտով:

¹² Ինչո՞ւ եք դժվարանում արտահայտվել: Իհարկե, ո՛չ իմ պատճառով, այլ պարզապես քաշվում եք արտահայտելու ձեր սերը: ¹³ Բայց ուզում եմ, որ ինձ նման դուք էլ բանաք ձեր սրտերը և ազատորեն խոսեք. չե՞՞ որ իմ որդիներն եք դուք:

Կենդանի Աստծու տաճարն ենք

¹⁴ Անհավատներին լծակից մի՛ եղեք բնավ: Ի՞նչ կապ կարող է ունենալ արդարն անօրենի հետ, կամ ի՞նչ նույնության եզր կարող է լինել լույսի ու խավարի միջև: ¹⁵ Ի՞նչ համաձայնություն կարող է լինել Քրիստոսի և Սատանայի միջև, կամ ի՞նչ գործ ունի հավատացյալն անհավատի հետ: ¹⁶ Ի՞նչ նմանություն կա Աստծու տաճարի և մեհյանների միջև:

Արդարև, մե՛նք ենք կենդանի Աստծու տաճարը, ինչպես Աստված ինքն ասաց.

«Պիտի բնակվեմ նրանց մեջ

և պիտի ապրեմ նրանց հետ:

Ես նրանց Աստվածը պիտի լինեմ,

և նրանք՝ իմ ժողովուրդը»:^{*}

¹⁷ Ահա թե ինչու Աստված հրահանգում է մեզ.

^{6.2} Ես 49.8:

^{6.5} Գրծ 16.23:

^{6.15} «Սատանայի». բոց՝ «Բեղիարի»: Բեղիար նշ է «չար» կամ «անօրեն» և որպես հատուկ անուն տրվում է Սատանային:

^{6.16} «Մենք ենք». շատ ձեռ. ունեն «դուք եք»:

^{6.16} ա Ա Կր 3.16, 6.19: ք Ղև 26.12, Եզկ 37.27:

«Անջատ և հեռո՛ւ կացեք հեթանոսներից,
մի՛ դիպչեք պիղծ բաներին,
և ես կընդունեմ ձեզ:՝
¹⁸ Ես հայր կլինեմ ձեզ համար,
և դուք կլինեք իմ որդիներն ու դուստրերը,-
ասում է ամենակալ Տերը»:

7

¹ Միրելինե՛ր, այս խոստումները եղել են մեզ համար: Ուստի հեռո՛ւ մնանք մարմնական և հոգեկան ամեն պղծությունից, մաքրենք մեզ կատարելապես՝ ապրելով Աստծու երկյուղով:

Պողոսի ուրախությունը

² Հասկացե՛ք մեզ: Ոչ ոքի վնաս չհասցրինք, ոչ ոքի արժանապատվությունը չվիրավորեցինք, ոչ մեկին չգրկեցինք: ³ Ձեզ դատապարտելու համար չեմ ասում այս, որովհետև դեռ քիչ առաջ ասացի, թե դուք մեր սրտերում եք, և ոչ մի բան մեզ չի կարող բաժանել ձեզանից, ո՛չ այս կյանքում և ո՛չ էլ մահվան մեջ:

⁴ Մեծ վստահություն ունեմ ձեր հանդեպ. մեծապես հպարտ եմ ձեզնով: Մեր կրած բոլոր նեղությունների մեջ ես ինձ մեծապես մխիթարված և անսահմանորեն ուրախ եմ զգում. ⁵ որովհետև Մակեդոնիա հասնելուց ի վեր երբեք հանգիստ չունեցանք, այլ ամեն կողմից նեղություն կրեցինք: Դրսից թշնամիներն էին նեղում մեզ, իսկ ներսից՝ մեր վախը: ⁶ Բայց Աստված, որ մխիթարում է սրտաբեկներին, մխիթարեց մեզ Տիտոսի գալով:

⁷ Միայն Տիտոսի գալը չէր, որ ուրախացրեց մեզ: Ուրախացանք, մանավանդ երբ լսեցինք, թե նա ինչքան գոհ է մնացել ձեզնից: Նա մեզ պատմեց, որ անձկությամբ եք սպասում ինձ, որ մեծ ցավ եք զգացել պատահածի համար և որ ինձ շատ եք կապված: Չեք կարող երևակայել, թե որքա՛ն ուրախ եմ: ⁸ Ճիշտ է, որ իմ նամակով մի քիչ վշտացրի ձեզ, բայց հիմա չեմ զոջում արածիս համար, թեև գրելուց հետո զոջացել էի, որովհետև տեսնում եմ, որ այդ նամակը միայն մի կարճ ժամանակ է վշտացրել ձեզ: ⁹ Ուրախ եմ հիմա, ոչ թե նրա համար, որ տրտմեցրել եմ ձեզ, այլ որովհետև այդ տրտմությունը պատճառ դարձավ, որ փոխեք ձեր վարմունքը: Եվ որովհետև ձեր տրտմությունը Աստծու գործին ծառայեց, ես այլևս կարիք չունեմ խստությամբ գալու ձեզ մոտ: ¹⁰ Աստված երբեմն ցավ է պատճառում մեզ՝ ապաշխարության միջոցով փրկության առաջնորդելու նպատակով, որի համար չենք զոջում բնավ: Մինչդեռ աշխարհի ցավը մահվան է առաջնորդում: ¹¹ Արդ, տեսեք, թե Աստծու պատճառած ցավն անտարբերությունից ինչպե՛ս դուրս բերեց ձեզ և մղեց, որ ձեզ արդարացնեք: Զայրացաք, տազնապեցիք, լցվեցիք անձկությամբ, բայց հետո նախանձախնդրություն

^{6.17} Ես 52.11:

^{6.18} Բ Թգ 7.14, Ա Մն 17.13, Ես 43.6, Եր 31.9:

^{7.5} Բ Կր 2.13:

^{7.9} «Փոխեք ձեր վարմունքը». բոց՝ «ապաշխարեք»:

ցուցաբերելով՝ սխալը վերացրիք մեջտեղից և ամեն կերպ ցույց տվեցիք, թե դուք հանցանք չունեք այդ հարցում: ¹² Հիմա ասեմ ձեզ, որ նախորդ նամակս գրելու պատճառը միայն այդ հանցավոր մարդը չէր, ոչ էլ նրա հայրը, որի դեմ գործվեց հանցանքը, այլ որպեսզի հայտնի լինի այն հոգածությունը, որ փոխադարձաբար ունենք միմյանց նկատմամբ Աստծու առաջ: ¹³ Ուստի մենք մեզ մխիթարված ենք զգում:

Մեր զգացած մխիթարության վրա Տիտոսն առավել ևս ուրախացրեց մեզ՝ ուրախությամբ պատմելով, թե ինչպես բոլորդ էլ գոհ եք թողել իրեն: ¹⁴ Ձեր հանդեպ իմ պարծանքը հայտնել էի նրան և ամոթով չմնացի, և ինչպես ձեզ ասածներս բոլորն էլ ճշմարիտ էին, նույնպես և Տիտոսի առաջ իմ հայտնած պարծանքը ճշմարտվեց: ¹⁵ Գիտե՞ք, թե Տիտոսը որքա՞ն մեծ սիրով էր խոսում ձեր մասին. հիշում էր, թե ինչպիսի՞ երկյուղած հարգանքով էիք ընդունել իրեն: ¹⁶ Արդ, ուրախ եմ, որ կատարյալ վստահություն ունեմ ձեր վրա:

8

Առատաձեռնորեն օգնել կարիքավորներին

¹ Եղբայրներ՝ ր, ուզում եմ, որ գիտենաք, թե Աստծու շնորհն ինչպե՛ս է հայտնի դառնում Մակեդոնիայի եկեղեցիներում: ² Հակառակ իրենց կրած նեղությանն ու ծանր փորձությանը, մեծ եղավ նրանց ուրախությունը, և չնայած նրանց ծայրաստիճան աղքատությանը, նրանք չափազանց առատաձեռն եղան: ³ Ես վկայում եմ, որ նրանք հոժար կամքով տվեցին իրենց կարողության չափով և նույնիսկ իրենց կարողությունից էլ ավելի: ⁴ Թախանձագին աղաչում էին, որ շնորհ անենք և ընդունենք Երուսաղեմի եղբայրներին ուղարկվելիք օգնության իրենց բաժինը: ⁵ Նրանք մեր ակնկալածից շատ ավելին արեցին. նախ՝ իրենց նվիրեցին Տիրոջը և ապա՝ Աստծու կամքով՝ նաև մեզ: ⁶ Ահա թե ինչու աղաչեցինք Տիտոսին, որ ձեր մեջ ևս շարունակի և ամբողջացնի սկսված այս աստվածահաճո գործը: ⁷ Դուք ամեն ինչում գերազանց եք ուրիշներից՝ հավատով, Աստծու խոսքի քարոզչությամբ, գիտությամբ, փութաջանությամբ և մեր հանդեպ ձեր ցուցաբերած սիրով: Ուզում ենք, որ այս աստվածահաճո գործի մեջ ևս գերազանց լինեք: ⁸ Այս բանն իբրև հրահանգ չեմ տալիս, այլ ուրիշների ցուցաբերած փութաջանությունն եմ հիշեցնում ձեզ՝ ձեր սիրո հարազատությունը փորձելու համար: ⁹ Արդարև, գիտեք, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, ինչպիսի՞ շնորհ արեց մեզ. նա, որ հարուստ էր, աղքատացավ ձեզ համար, որպեսզի իր աղքատանալով դուք հարստանաք:

¹⁰ Այս ուղղությամբ ձեր բարիքի համար իմ թելադրանքը հետևյալն է. դուք, որ ոչ միայն այդ գործի առաջին ձեռնարկողը, այլ նաև առաջին կամեցողը եղաք դեռևս անցյալ տարվանից, ¹¹ հիմա լավ կլինի, որ ձեր սկսածն ամբողջացնեք: Եվ ինչպիսի՞ հոժար կամքով նախաձեռնեցիք, այդպես էլ ամբողջացրեք՝ տալով ձեր ունեցածի չափով: ¹² Բավական է, որ նվիրելու հոժարություն ունենաք, և Աստված կընդունի ձեր

նվերը, եթե այն համապատասխան է ձեր ունեցածին, որովհետև նա ձեր չունեցածը չի սպասում ձեզնից:

¹³ Երբեք չեմ ուզում ձեզ նեղության մատնել ուրիշների բեռը թեթևացնելու համար, այլ ուզում եմ, որ հավասարություն լինի: ¹⁴ Ուզում եմ, որ ներկայումս ձեր վայելած առատությունը ծառայի նրանց կարիքներին, որպեսզի նրանց առատությունն էլ ձե՛ր կարիքներին ծառայի, և այդ ձևով հավասարություն լինի: ¹⁵ Ճիշտ այնպես, ինչպես Սուրբ գրքում է ասված.

«Շատ հավաքողի մոտ չավելացավ,
և քիչ հավաքողի մոտ չպակասեց»:

Հանձնարարական Տիտոսի և ընկերների մասին

¹⁶ Գոհություն ենք հայտնում Աստծուն, որ ձեզ համար մեր ունեցած նախանձախնդրությունը դրեց նաև Տիտոսի սրտում: ¹⁷ Տիտոսը ոչ միայն չմերժեց մեր խնդրանքը, այլև մեծ պատրաստակամությամբ շտապեց գալ ձեզ մոտ: ¹⁸ Նրա հետ ուղարկեցինք նաև այն եղբորը, որի ունեցած համբավը Ավետարանի քարոզչության գործում ծանոթ է բոլոր եկեղեցիներին: ¹⁹ Անշուշտ գիտեք նաև, որ նա ընտրվեց եկեղեցիների կողմից՝ մեզ ուղեկցելու այս աստվածահաճո գործում, որ մենք կատարում ենք Տիրոջ փառքի համար, ինչպես նաև իբրև արտահայտություն ուրիշներին օգնելու մեր պատրաստակամության: ²⁰ Զգուշանում ենք միշտ, որ չլինի թե՛ մեկն արատավորի մեզ՝ մեզ հանձնված այս մեծ գումարի մատակարարման կապակցությամբ, ²¹ որովհետև մեր մտահոգությունն է ուղղամիտ լինել ոչ միայն Տիրոջ առաջ, այլև մարդկանց: ²² Նրանց հետ ուղարկեցինք նաև մեր մեկ ուրիշ եղբոր: Մենք նրան փորձել ենք շատ անգամ և միշտ էլ օգնելու պատրաստակամ գտել, իսկ հիմա, որ մեծ համարում ունի ձեր հանդեպ, առավել ևս պատրաստ է օգնելու: ²³ Արդ, եթե հարցնեք Տիտոսի մասին, նա իմ մտերիմն է, իմ գործակիցը ձեզ օգնելու համար: Գալով մյուս եղբայրներին՝ նրանք եկեղեցիների կողմից ուղարկված ներկայացուցիչներ են, Քրիստոսի փառքի համար աշխատողներ: ²⁴ Ուստի բոլոր եկեղեցիների առաջ ցույց տվեք նրանց նկատմամբ ձեր սիրո և ձեր մասին մեր արտահայտած պարծանքի իրավացի լինելու ապացույցը:

9

Օգնություն Երուսաղեմի քրիստոնյաներին

¹ Իսկապես որ ավելորդ եմ համարում գրել ձեզ Երուսաղեմի քրիստոնյա եղբայրներին ուղարկվելիք օգնության մասին, ² որովհետև գիտեմ ձեր հոժարակամությունը և ձեր մասին միշտ պարծանքով եմ խոսել մակեդոնացիների հետ՝ ասելով. «Աքայացիները դեռևս անցյալ տարվանից պատրաստ են եղել

8.15 Ելք 16.18:

8.21 Առ 3.4 [LXX]:

8.22 Բնագիրը չունի «մեկ ուրիշ», բայց հայտնապես (տե՛ս հմր 23) տարբերվում է հմր18-ի մեջ հիշված անձից:

օգնություն անելու»: Ձեր նախանձախնդրությունը խթան եղավ շատ-շատերի համար: ³ Եվ ահա վերոհիշյալ եղբայրներին ուղարկեցի, որպեսզի այս գործի մեջ ձեր հանդեպ մեր ունեցած պարծանքն ի դերն չելնի, այլ, ինչպես ասում էի նրանց, ուզում եմ, որ իսկապես պատրաստ լինեք: ⁴ Չէի ցանկանա, որ մակեդոնացիներն ինձ հետ գային և անպատրաստ գտնեին ձեզ, որովհետև այդ դեպքում ամոթով կմնայինք մեր վստահության համար: Անշուշտ դուք էլ ամոթով կմնայիք: ⁵ Դրա համար էլ անհրաժեշտ համարեցի խնդրել եղբայրներին, որ ինձնից առաջ գան ձեզ մոտ և նախապատրաստեն ձեզ, որպեսզի սկզբից իսկ ձեր խոստացած առատ նվերները պատրաստ լինեն, այնպես որ ձեր նվերներն իսկապես առատաձեռնության արտահայտություն լինեն և ոչ թե ժլատության:

Զվարթառատ նվիրատվություն

⁶ Հիշեցե՛ք՝ ով քիչ է սերմանում, քիչ էլ կհնձի, իսկ ով առատորեն է սերմանում, առատորեն էլ կհնձի: ⁷ Յուրաքանչյուրը թող տա ըստ իր սրտի հոժարության և ոչ թե չկամությամբ կամ պարտավորված զգալով, որովհետև Աստված սիրում է նրան, ով նվիրում է զվարթառատ կերպով: ⁸ Եվ Աստված կարո՛ղ է ամեն պարզև առատորեն տալ ձեզ, որպեսզի միշտ էլ ունենաք այնքան, որքան բավարար կլինեն ձեր բոլոր կարիքներին և կավելանար՝ ամեն տեսակ բարի գործերի հատկացվելու համար: ⁹ Ինչպես գրված է սաղմոսում.

«Առատորեն բաշխեց և տվեց աղքատներին.

նրա արդարությունը մնում է հավիտյան»:

¹⁰ Եվ Աստված, որ սերմ է պարզև սերմնացանին և ուտելու հաց, ձեզ ևս սերմ կպարզևի և կաճեցնի այն ու կբազմացնի նաև ձեր արդարության պտուղները: ¹¹ Ամեն ձևով կհարստացնի ձեզ, որպեսզի միշտ առատաձեռն լինեք, և մեր միջոցով փոխանցված ձեր նվերներն Աստծուն գոհաբանելու պատճառ լինեն: ¹² Եվ այս հանգանակության կազմակերպումն արդեն միայն Երուսաղեմի քրիստոնյաների կարիքները բավարարելու համար չէ, այլ ձգտում է նաև ավելացնել Աստծուն գոհություն մատուցողների թիվը: ¹³ Այո՛, ձեր այս օժանդակությամբ դուք ապացույցը տված կլինեք ձեր քրիստոնեական հավատի, և Երուսաղեմի ձեր եղբայրները, տեսնելով, թե ինչպե՛ս եք հնազանդվում Քրիստոսի Ավետարանին և ինչպիսի՛ առատաձեռնությամբ եք ձեր ունեցածը բաժանում իրենց և բոլորի հետ, կփառավորեն Աստծուն ¹⁴ ու երախտագիտությամբ կաղոթեն ձեզ համար և այն բացառիկ շնորհի համար, որ Աստված տվել է ձեզ: ¹⁵ Գոհություն Աստծուն՝ իր աննկարագրելի պարզևի համար:

10

Պողոսի առաքելական իշխանությունը

^{9.7} Սբ 20.10-15:

^{9.9} Սղ 112.9:

^{9.10} Ես 55.10:

¹ Ես՝ Պողոսս, Քրիստոսի հեզությամբ և քաղցրությամբ եմ խնդրում ձեզ կան մարդիկ, որոնք ասում են, թե երբ ձեր դիմաց և ձեր մեջ եմ գտնվում, խեղճանում եմ, մինչդեռ երբ հեռու եմ ձեզնից, խիստ եմ ձեր հանդեպ: ² Աղաչում եմ, մի՛ ստիպեք, որ երբ գամ, խստությամբ վարվեմ: Եվ խստորեն կվարվեմ նրանց հետ, ովքեր կարծում են, թե աշխարհային նկատառումներով ենք առաջնորդվում: ³ Ճիշտ է, ապրում ենք աշխարհի մեջ, բայց աշխարհային նկատառումներից մղված չէ, որ պատերազմում ենք: ⁴ Պատերազմի մեր զենքերը աշխարհային չեն, այլ Աստծու զորավոր զենքերն են՝ ամրոցները խորտակելու համար: ⁵ Եվ մենք խորտակում ենք Աստծու գիտության դեմ բարձրացած առարկությունների բոլոր գոռոզ պատնեշները և գերելով բոլոր մտքերը՝ բերում ենք Քրիստոսի հնազանդությանը: ⁶ Նաև պատրաստ ենք պատժելու որևէ անհնազանդություն, երբ ձեր հնազանդությունն ամբողջական լինի:

⁷ Դուք յուրաքանչյուրին դիտում եք ըստ իր արտաքին երևույթի: Ով որ ներքնապես համոզված է, թե ինքը Քրիստոսին է պատկանում, թող հետևյալն էլ խորհի իր մտքում. ինչպես ինքը Քրիստոսին է պատկանում, մենք նույնպես պատկանում ենք Քրիստոսին: ⁸ Եթե նույնիսկ ուրիշներից մի քիչ ավելի պարծենամ մեզ տրված իշխանության համար, ամաչելու բան չունեն: Այդ իշխանությունը Տերն ինքը սովեց՝ ամրապնդելու ձեր հավատը և ոչ թե խորտակելու: ⁹ Այս ասում եմ, որովհետև չեմ ուզում, որ այն տպավորությունն ունենաք, թե իմ նամակներով սարսափեցնում եմ ձեզ, ¹⁰ ինչպես ոմանք ասել են, թե՝ «Նամակների մեջ նա շատ խիստ է և ազդեցիկ, մինչդեռ եթե նայես նրան, խեղճուկրակ է, և խոսքերն էլ տպավորիչ չեն»: ¹¹ Այսպես ասողը թող լավ իմանա, թե ինչ որ հեռվից ասում ենք մեր նամակներով, նույնը նաև գործի կվերածենք, երբ գանք ձեզ մոտ:

¹² Իհարկե, մենք չենք համարձակվում մեզ համեմատել կամ դասել նրանց հետ, ովքեր ձեր առաջ գովաբանում են իրենք իրենց: Նրանք այնքան անմիտ են, որ իրենք իրենցով են չափում և իրենցով են համեմատում իրենց անձերը: ¹³ Գալով մեզ՝ մեր պարծանքը մի որոշ սահմանից այն կողմ չի անցնում, այլ սահմանափակվում է այն գործունեությամբ, որ Աստված որոշել է մեզ համար, և այդ սահմանի մեջ մտնում է նաև մեր քարոզչությունը ձեզ մոտ: ¹⁴ Արդ, քանի որ դուք Աստծու կողմից մեզ համար որոշված սահմանի մեջ եք գտնվում, մենք մեր սահմանից այն կողմ չեինք անցել, երբ ձեզ հասանք, որովհետև մենք էինք, որ ձեզ քարոզեցինք Քրիստոսի Ավետարանը: ¹⁵ Այնպես որ մենք սահմանված չափից դուրս չենք պարծենում, մանավանդ ուրիշի աշխատանքով, բայց հույս ունենք, որ ձեր հավատը կաճի, և մեր աշխատանքն ավելի կմեծանա ձեզ մոտ ու տարածում կգտնի՝ միշտ Աստծու որոշած սահմանի մեջ: ¹⁶ Այսպիսով կարող ենք Ավետարանը քարոզել նաև ձեր սահմանից դուրս գտնվող վայրերում՝ առանց պարծենալու ուրիշի սահմաններում կատարված քարոզչությամբ, ¹⁷ քանզի մարգարեն ասում է. «Ով պարծենում է, թող Տիրոջով պարծենա»: ¹⁸ Արդարև, ընտրյալը նա չէ, ով գովաբանում է իրեն, այլ նա, ում Տերն է գովում:

^{10.7} «Քրիստոսին է պատկանում». հայ. մի շարք ձեռ. ունեն «ծառա է Քրիստոսին»:

^{10.17} Եր 9.24:

Պողոսը և կեղծ առաքյալները

¹ Մակայն հույս ունեմ՝ մի քիչ ներողամիտ կլինեք, եթե անմտորեն ես էլ պարծենամ՝ արածներս հիշեցնելով ձեզ: Իսկ դուք լսեցե՛ք համբերությամբ:

² Ձեր հանդեպ Աստծու նախանձախնդրությամբ լցված՝ ուզում եմ, որ միայն Քրիստոսին սիրեք, ինչպես մաքուր մի կույս, որն իր սերը վերապահում է նրան, ով իր ամուսինն է լինելու: ³ Բայց վախենում եմ, որ ձեր միտքն ապականվի, և հեռանաք Քրիստոսի հանդեպ ամբողջական և մաքուր նվիրումից, ճիշտ այնպես, ինչպես Եվան խաբվեց օձի խորամանկ ստերից: ⁴ Վախենում եմ, որ նույնքան հեշտությամբ ընդունեք որևէ մեկին, եթե նա գա ու ձեզ քարոզի մեր քարոզածից տարբեր մի փրկչի, ձեր ստացած Հոգուց տարբեր մի հոգի կամ ձեր ընդունած Ավետարանից տարբեր մի ավետարան:

⁵ Չգիտեմ, թե ես որևէ բանով հե՞տ եմ մնում ձեր այդ նշանավոր «առաքյալներից»:
⁶ Թեև խոսքի մեջ ճարտար մեկը չեմ, բայց գիտեմ իմ ասելիքը: Եվ կարծում եմ՝ դա ամեն ինչում ապացուցեցի ձեզ: ⁷ Արդյո՞ք մեղք գործեցի, որ Աստծու Ավետարանը ձրի քարոզեցի ձեզ և ինքս ինձ խոնարհեցրի՝ ձե՛զ բարձրացնելու համար: ⁸ Ապրուստս ստանալով ուրիշ եկեղեցիներից՝ մի տեսակ կողոպտեցի այդ եկեղեցիները, որպեսզի ձրի ձեզ ծառայեմ: ⁹ Ձեզ մոտ եղածս ժամանակ, նույնիսկ երբ կարիքի մեջ էի, ձեզնից ոչ ոքի համար բեռ չեղա. իմ կարիքները հոգացին Մակեդոնիայից եկած եղբայրները: Եվ ինչպես զգուշացել եմ անցյալում, այսուհետև ևս ամեն կերպ պիտի զգուշանամ ձեզ վրա բեռ լինելուց: ¹⁰ Բայց Քրիստոսի ճշմարտությամբ, որն իմ մեջ է, ասում եմ, որ այս բաներով պիտի պարծենամ ամբողջ Աքայիայում՝ պատմելով բոլորին: ¹¹ Ինչո՞ւ եմ ասում սա: Նրա համար, որ չե՞մ սիրում ձեզ: Ընդհակառակը, Աստված գիտե, թե որքա՞ն եմ սիրում ձեզ: ¹² Մակայն մերժում եմ նյութական օգնություն ստանալ ձեզնից և շարունակելու եմ մերժել, որպեսզի արմատից կտրեմ առարկությունները նրանց, ովքեր պարծենում են, թե իրենք էլ են աշխատում մեզ նման: ¹³ Դրանք սուտ առաքյալներ են, խաբեբա մարդիկ, որոնք ուզում են մարդկանց ներկայանալ որպես Քրիստոսի առաքյալներ: ¹⁴ Եվ դա զարմանալի չէ, որովհետև Մատանան ինքն էլ է ներկայանում լուսավոր հրեշտակի կերպարանքով: ¹⁵ Հետևաբար, տարօրինակ չէ բնավ, որ նրան ծառայողները իրենք էլ ներկայանան արդարության ծառաների կերպարանքով: Ըստ իրենց գործերի էլ կլինի նրանց պատիժը:

Պողոսը պարծենում է իր կրած նեղություններով

¹⁶ Դարձյալ ասում եմ. թող ոչ ոք ինձ անմիտ չհամարի, եթե պարծենամ, բայց եթե նույնիսկ անմիտ համարեք, ես մի փոքր պիտի պարծենամ: ¹⁷ Ինչ որ հիմա՝ պարծենալիս, ասում եմ, հաճելի չէ Տիրոջը, բայց կասեմ այնպես, ինչպես անմիտը

^{11.3} Ծն 3.1-5, 13:

^{11.4} «Փրկիչ». բնագրում՝ «Հիսուս»: Մի շարք հայ. ձեռ. ունեն «Քրիստոս»:

^{11.9} Փպ 4.15-18:

կլիտներ: ¹⁸ Քանի որ ուրիշները պարծենում են մարդկային նկատառումներից առաջնորդված, ես էլ պիտի պարծենամ, ¹⁹ որովհետև տեսնում եմ, որ հաճույքով և համբերությամբ եք լսում անմիտներին, դուք՝ իմաստուններդ: ²⁰ Լսում եք նրանց, ովքեր խաբում են ձեզ և ստորուկի տեղ դնում, շահագործում են ձեզ և կողոպտում, արհամարհում են ձեզ և ապտակում: ²¹ Ամաչելով եմ ընդունում, որ ես շատ խեղճ եմ եղել:

Բայց ահա անստորեն ասում եմ.- Եթե ուրիշները համարձակվում են պարծենալ, ես էլ եմ համարձակվում: ²² Եբրայեցի՞ են՝ ես էլ եմ եբրայեցի: Իսրայելացի՞ են՝ ես էլ: Աբրահամի սերո՞ւնդ են՝ ես էլ: ²³ Քրիստոսի ծառանն եմ և ավելի մեծ հիմարությամբ կարող եմ ասել, թե ես առավել ևս Քրիստոսի ծառան եմ: Իրենցից ավելի եմ աշխատել, իրենցից ավելի բանտարկվել, շատ ավելի ծեծ եմ կերել և շատ անգամ մինչև մահվան դուռը հասել: ²⁴ Ժողովարաններում հինգ անգամ քառասունից մեկով պակաս հարված եմ կերել հրեաներից: ²⁵ Երեք անգամ խարազանվել եմ հռոմեացիներից. մեկ անգամ քարկոծվել, երեք անգամ նավաբեկության ենթարկվել և մի ամբողջ գիշեր ու մի ցերեկ մնացել եմ ծովի բացերում: *

²⁶ Ճանապարհորդությունների ընթացքում ինչ վտանգներից ասես չանցա. հորդացած գետեր, ավազակներ, վտանգներ՝ թե՛ իմ ազգակիցներից, թե՛ հեթանոսներից, վտանգներ՝ քաղաքներում, անբնակ վայրերում թե՛ ծովերի վրա, և վտանգ՝ սուտ քրիստոնյաներից: ²⁷ Բազում անգամ եղա ծանր աշխատանքների և ջանքերի մեջ՝ հաճախ անքուն գիշերներ անցկացնելով, քաղցած ու ծարավ, հաճախ առանց մի պատահ հացի, ցրտահար ու մերկ: ²⁸ Եվ դեռ մի կողմ թողած մյուս բոլոր նեղությունները՝ ինձ վրա էր ծանրանում բոլոր եկեղեցիների ամենօրյա հոգար: ²⁹ Մեկը մի ցավ ունի, ես էլ հետն եմ տառապում, մեկը տկարացավ՝ հավատի մեջ, ես էլ հետն եմ տագնապում:

³⁰ Եթե պարծենալ է պետք, իմ տկարություններով պիտի պարծենամ: ³¹ Աստված՝ մեր Տեր Հիսուսի Հայրը, որ օրհնյալ է հավիտյանս, գիտի, որ չեմ ստում: ³² Դամասկոսում Արետաս թագավորի նշանակած կառավարիչն ինձ ձերբակալելու համար հսկողության տակ էր պահել ամբողջ Դամասկոս քաղաքը, * ³³ բայց պարսպի

^{11.20} Հուն. չունի «խաբում են ձեզ»:

^{11.23} Գրծ 16.23:

^{11.24} «Քառասունից մեկով պակաս». Օրենքով պատիժ էր սահմանված մինչև 40 հարված. բայց դատավորները, նկատի ունենալով ԲՕր 25.3-ի զգուշացումը, վախենում էին, որ հանկարծ սխալմամբ հարվածների թիվը 40-ը չանցնի, և հետևաբար միշտ մեկ հարված պակաս էին խփել տալիս:

^{11.24} ԲՕր 25.3:

^{11.25} «Մնացել եմ ծովի բացերում». գրբ. ունի «ծովի անդունդներում տառապեցի»:

^{11.25} ա Գրծ 16.22: ք Գրծ 14.19:

^{11.26} ա Գրծ 9.23: ք Գրծ 14.5:

^{11.28} «Նեղությունները». գրբ. ավելացնում է «որոնց թվում՝ ամբողջի կողմից շարունակ հարձակման ենթարկվելու»:

^{11.32} Նաբատացիների Արետաս Դ թագավորը գահակալել է ՔԱ 9-ՔՀ 39թթ.: Նաբատիան գտնվում է Պաղեստինի հարավարևելյան կողմում:

^{11.32-33} Գրծ 9.23-25:

պատուհանից ինձ զամբյուղով իջեցրին, և ես փախա նրա ձեռքից:

12

Պողոսի տեսիլքները և ունեցած հայտնությունները

¹ Թեև անօգուտ է պարծենալը, բայց ես պիտի պարծենամ՝ պատմելով ձեզ այն տեսիլքների և հայտնությունների մասին, որ Տերը տվեց ինձ: ² Պիտի պարծենամ իբրև մի քրիստոնյա, որ տասնչորս տարի առաջ հափշտակվեց մինչև երկնքի բարձունքը՝ չգիտեմ մարմնով, թե՞ հոգով. Աստված զգիտի: ³⁻⁴ Հափշտակվեց մինչև դրախտ, կրկնում եմ՝ մարմնով, թե՞ հոգով, չգիտեմ. Աստված զգիտի, և լսեց անպատմելի բաներ, որ մարդկանց թույլատրված չէ խոսել: ⁵ Ահա այդ փորձառությամբ պիտի պարծենամ և ոչ թե ինձնով: Գալով իմ անձին՝ պիտի պարծենամ միայն իմ տկարություններով: ⁶ Եթե տակավին ուզենայի, կարող էի պարծենալ և հիմարի մեկը եղած չէի լինի, որովհետև ճշմարտությունն ասած պիտի լինեի: Բայց հրաժարվում եմ ասելուց, որպեսզի չլինի թե որևէ մեկը ավելի բարձր համարում ունենա իմ մասին, քան կարող է ունենալ տեսնելով գործերս կամ լսելով խոսքերս: ⁷ Մյուս կողմից, որպեսզի իմ ունեցած բացառիկ հայտնություններով չհպարտանամ, Աստված փշի նման ծակող մի ցավ տվեց մարմնիս, որ ասես Սատանայի ներկայացուցիչը լինեի մարմնիս մեջ, որպեսզի դրանով զգաստացնի ինձ, և ես չհպարտանամ: ⁸ Այդ ցավի համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ այն հեռացնի ինձից: ⁹ Բայց նա ինձ ասաց. «Իմ շնորհը բավ է քեզ, որովհետև իմ գործությունն ամբողջապես հայտնվում է մարդու տկարության մեջ»: Ահա թե ինչու մեծ հաճությամբ պարծենում եմ իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ հաստատվի Քրիստոսի գործությունը: ¹⁰ Դրա համար էլ ես գոհ եմ իմ տկարությունների և Քրիստոսի համար իմ կրած նախատիքների, նեղությունների, հալածանքների և դժվարությունների համար, որովհետև երբ ես տկար եմ, այն ժամանակ եմ գորավոր:

Պողոսի մտահոգությունը կորնթացիների համար

¹¹ Իսկապես որ անմիտ եղա պարծենալով, բայց դո՛ւք ստիպեցիք ինձ: Դո՛ւք պետք է վկայեք, որ ես ոչ մի բանով հետ չեմ մնում ձեր այդ նշանավոր «առաքյալներից», թեև ես ոչինչ եմ: ¹² Իմ առաքյալ լինելու նշանները Աստված ցույց տվեց այն գործերով՝ նշաններով, սքանչելիքներով և գորավոր հրաշքներով, որ ես մեծ համբերությամբ կատարեցի ձեր մեջ: ¹³ Դուք ոչ մի բանով պակաս չմնացիք մյուս եկեղեցիներից. այն տարբերությամբ միայն, որ ես նյութապես բեռ չեղա ձեզ վրա: Ներեցե՛ք ինձ իմ այդ «հանցանքը»:

¹⁴ Ահա երրորդ անգամ է, որ պատրաստվում եմ գալ ձեզ մոտ և դարձյալ բեռ չեմ լինի

^{12.2} Առաքյալն ինքն իր մասին է խոսում: «Տասնչորս տարի առաջ», այսինքն՝ մոտ 42 կամ 43թ., երբ Պողոսը գտնվում էր Կիլիկիայում (հմմտ Գրծ 9.30, 11.25, Գղ 1.21) կամ Անտիոքում՝ առաքելական առաջին ճանապարհորդությունից առաջ: «Երկնքի բարձունքը». բոց՝ «երրորդ երկինքը», որն իբրև հատուկ ասելու ձև՝ նշ է «Աստծու անմիջական ներկայությամբ»:

^{12.7} Հստակ չգիտենք, թե ի՛նչ ցավ կամ հիվանդություն ուներ առաքյալը (հմմտ Գղ 4.13-15):

ձեզ համար: Ձեր նյութական օգնությունը չեմ ուզում. ձեզ եմ ուզում: Վերջին հաշվով՝ զավակները պարտավոր չեն հոգալու իրենց ծնողների ծախսերը, մինչդեռ ծնողները պարտավոր են այդ անելու իրենց զավակների համար:՝¹⁵ Ես մեծ հաճույքով իմ ունեցածը կտամ ձեզ, ձեզ համար կտամ նաև իմ անձը, եթե նույնիսկ, հակառակ ձեզ ավելի շատ սիրելուս, նվազ սիրվեմ ձեզնից:

¹⁶ Լավ գիտեք, որ բնավ բեռ չեղա ձեզ վրա, թեև, ըստ ոմանց, խորամանկ լինելով, խաբեբայությամբ կողոպտեցի ձեզ: ¹⁷ Արդյո՞ք ձեզ մոտ ուղարկած իմ մարդկանցով ձեզ շահագործեցի: ¹⁸ Աղաչեցի, որ Տիտոսն ինքը գա ձեզ մոտ, և հետոն էլ ուղարկեցի մեր մյուս եղբորը: Կարո՞ղ եք ասել, թե Տիտոսը շահագործեց ձեզ: Երկուսս էլ նույն ոգով ենք շարժվում և նույն ձևով գործում:

¹⁹ Գուցե խորհում եք, թե մինչև հիմա մենք մե՞զ ենք փորձում արդարացնել: Ո՛չ, սիրելիներ՛ք, իբրև Քրիստոսին հավատացողներ՝ մենք խոսում ենք Աստծու առաջ և ինչ որ անում ենք, անում ենք ձեր օգտի համար: ²⁰ Բայց վախենում եմ, որ երբ գամ, ձեզ չգտնեմ այնպես, ինչպես որ կուզեի, և դուք էլ ինձ գտնեք այնպես, ինչպես չէիք ուզենա: Այսինքն՝ վախենում եմ, որ ձեր մեջ դարձյալ վեճ, նախանձ, գայրույթ, միմյանց դեմ գրգռություն, չարախոսություն, բամբասանք, հպարտություն, ամբարտավանություն, խռովություն լինի: ²¹ Այո՛, վախենում եմ, որ երբ վերստին գամ ձեզ մոտ, իմ Աստվածն ինձ նվաստացնի ձեր առաջ, և ես սուգ անեմ շատերի համար, որոնք մեղքի մեջ են ընկած և մերժվում են հրաժարվել իրենց գործած պղծություններից՝ պոռնկությունից և անբարոյություններից:

13

Վերջին հորդորներ և ողջույններ

¹ Ահա երրորդ անգամ է, որ գալու եմ ձեզ մոտ: Արդարև, ինչպես Սուրբ գիրքն է ասում՝ «Որևէ ամբաստանություն երկու կամ երեք վկաներով պետք է հաստատվի»: ² Ինչ որ իմ երկրորդ այցելության առթիվ անձամբ ասել եմ, այժմ ևս, հեռվից, որպես ազդարարություն, ասում եմ նրանց, որոնք սկզբից մեղանչեցին, ինչպես նաև բոլոր մյուսներին, որ երբ դարձյալ գամ, նրանցից ոչ մեկին չեմ խնայելու: ³ Եթե ձեր ուզածը ապացույցն է, թե ինձնով Քրիստոսն է խոսում, կունենաք: Կտեսնեք, որ Քրիստոսը ոչ թե տկարությամբ է գործում ձեր մեջ, այլ զորությամբ: ⁴ Թեև իբրև մարդ՝ տկարությամբ խաչվեց, բայց կենդանի է Աստծու զորությամբ: Մենք էլ, թեև նրա օրինակով տկարանում ենք, բայց նրա օրինակով մե՛նք էլ պիտի կենդանանանք Աստծու զորությամբ՝ ձեզ ծառայելու համար:՝

⁵ Քննեցե՛ք դուք ձեզ՝ տեսնելու, թե մնո՞ւմ եք նույն հավատի մեջ: Փորձեցե՛ք դուք ձեզ. Քրիստոսի ներկայությունը զգո՞ւմ եք ձեր մեջ, թե՞ պարզապես նրա անունն եք կրում:

^{12.14} Իր առաջին այցելության ժամանակ Պողոսը դրել էր Կորնթոսի եկեղեցու հիմքը (տե՛ս Գրծ 18), իսկ երկրորդ այցը հիշված է Բ Կր 13.2-ում:

^{12.20} Հուն. չունի «դարձյալ» և «հպարտություն» բառերը:

^{13.1} Բ Օր 17.6, 19.15:

^{13.4} Հուն. չունի «իբրև մարդ»:

⁶ Հույս ունեմ, որ գիտեք, թե մենք այդ փորձը կատարել ենք հաջողությամբ: ⁷ Եվ խնդրում ենք Աստծուն, որ չարիք չգործեք: Այս ասելով՝ չենք ուզում մեզ ընտիր ցույց տալ, ընդհակառակը, ուզում ենք, որ դուք բարին գործեք՝ նույնիսկ մեզ ամոթով թողնելու չափ, ⁸ որովհետև Աստծու ճշմարտության դեմ ոչինչ չենք կարող անել, այլ կարող ենք միայն աշխատել դրա համար: ⁹ Ուրախությամբ հանձն ենք առնում տկարանալ, միայն թե դուք գորանաք: Ուստի աղոթում ենք, որ հետզհետե կատարյալ լինեք: ¹⁰ Այս բանը ձեզ գրում եմ հեռովից, որպեսզի երբ գամ, կարիք չունենամ խստությամբ վարվելու ձեզ հետ այն իշխանությամբ, որ Տերն ինձ տվեց ուղղելու և ոչ թե պատժելու համար:

¹¹ Փակում եմ նամակս, եղբայրներ՝ ր. ո՛ղջ եղեք: Աշխատեցեք կատարյալ լինել, քաջալերվեցե՛ք: Համերաշխ և խաղաղությամբ ապրեցեք միմյանց հետ, և այն ժամանակ խաղաղության ու սիրո Աստվածը պիտի լինի ձեզ հետ:

¹² Ողջունեցե՛ք միմյանց սուրբ համբույրով: Այստեղի քրիստոնյաները ողջունում են ձեզ:

¹³ Թող Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը լինեն ձեր բոլորի հետ: Ամեն:

GAL

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ

Գաղատիան հռոմեական մի նահանգ էր Փոքր Ասիայի կենտրոնական մասում: Այս նահանգում շատերը Պողոսի քարոզչությամբ քրիստոնեությունն ընդունեցին նրա երկրորդ և երրորդ առաքելական ճանապարհորդությունների ընթացքում (Գրծ 16.6, 18.23):

Սակայն ինչպես շատ վայրերում, Գաղատիայում նույնպես, Պողոսից հետո ուրիշ քարոզիչներ եկան, որպեսզի շփոթության մատնեն նորաստեղծ եկեղեցիները:

Արդարև, երբ Հիսուսի Ավետարանն սկսվեց քարոզվել և ընդունելություն գտնել ոչ հրեա ժողովուրդների մեջ, հարց առաջացավ, թե նորադարձ քրիստոնյաները պե՞տք է ընդունեն Մովսիսական Օրենքը, և թե անհրաժեշտ էր թլփատվել ճշմարիտ քրիստոնյա լինելու համար: Պողոսը գաղատացիներին ուղղած իր նամակում պաշտպանում է այն տեսակետը, թե անհրաժեշտ չէ, որովհետև Քրիստոսին միանալու հիմնաքարը հավատն է: Սակայն Գաղատիայում հրեությունից դարձած հավատացյալներից ոմանք հակառակվում էին Պողոսին՝ ասելով, որ Աստծու մոտ արդարանալու համար անհրաժեշտ է գործադրել Մովսիսական Օրենքը:

Գաղատացիներին գրած իր նամակով Պողոսն աշխատում է այս մտածողությունն ունեցող անձանց վերադարձնել ճշմարիտ հավատին, քանի որ մոլորեցնող ուսուցումներով տարված՝ նրանք շեղվել էին իրենց հավատից: Պատմելով իր անձնական փորձառությունից՝ նա հիշեցնում է Երուսաղեմի եկեղեցու ղեկավարների վերաբերմունքն ու որոշումն այն մասին, որ Մովսիսական Օրենքներն ու թլփատությունը պարտադիր չպետք է լինեն հեթանոսությունից դարձողների համար:

Պողոսն իր իրավունքն է համարում Հիսուս Քրիստոսի առաքյալ կոչվելը: Նա պաշտպանում է իր կոչումը՝ ասելով, որ ինքն այդ իրավունքը ստացել է Աստծուց և ոչ թե մարդկանցից, և իր առաքելությունը հասկապես ոչ հրեաների համար է: Այս պաշտպանում է այն տեսակետը, թե Օրենքի գործադրությամբ չէ որ մարդ արդար է համարվում Աստծու կողմից, այլ միայն հավատով: Եվ վերջապես, Պողոսը հայտնում է, որ քրիստոնեական կյանքի ընթացքը պետք է լինի Սուրբ Հոգու պարզևած ազատությամբ ապրած մի կյանք և սիրո արտահայտություն, որը գալիս է Քրիստոսի հանդեպ մեր ունեցած հավատից:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-10):
- Պողոսի՝ որպես առաքյալի իշխանությունը (1.11-2.21):
- Ավետարանը Աստծու շնորհն է (3.1-4.31):
- Քրիստոնեական ազատություն և պատասխանատվություն (5.1-6.10):
- Եզրակացություն (6.11-18):

1

Ողջունի խոսք

¹ Ես՝ Պողոսս, առաքյալ եմ ո՛չ մարդկանց կողմից և ո՛չ էլ որևէ մեկի միջոցով, այլ Հիսուս Քրիստոսի կողմից և Հայր Աստծու, որ հարություն տվեց նրան մեռելներից, ² գրում եմ ձեզ՝ Գաղատիայի եկեղեցիներիդ, և ինձ միանում են այն բոլոր եղբայրները, որ ինձ հետ են: ³ Թող ձեզ շնորհ և խաղաղություն պարզևեն Հայր Աստվածն ու մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, ⁴ որ իր անձը տվեց մեր մեղքերի համար, որպեսզի Աստծու՝ մեր Հոր կամքով ազատի մեզ ներկա չար աշխարհից: ⁵ Հավիտյանս հավիտենից փա՛ռք Աստծու: Ամեն:

Չկա ուրիշ Ավետարան

⁶ Շատ եմ զարմանում, որ այդպես շուտ եք լքում Աստծու Ավետարանը, որ ձեզ հրավիրեց Քրիստոսի շնորհին, և ականջ եք դնում մի այլափոխված ավետարանի: ⁷ Իմացե՛ք, որ չկա՛ ուրիշ ավետարան: Սակայն կան մարդիկ, որոնք պղտորում են ձեր մտքերը և ուզում են չարափոխել Քրիստոսի Ավետարանը: ⁸ Բայց ով որ մեր քարոզածից տարբեր մի ավետարան քարոզի ձեզ, ո՛վ էլ լինի նա, նույնիսկ մենք կամ երկնքից իջած մի հրեշտակ, անիծյա՛լ լինի: ⁹ Ահա ասացի և կրկնում եմ, ով ձեզ ավանդվածից տարբեր մի ավետարան քարոզի, անիծյա՛լ լինի: ¹⁰ Մի՞ թե մարդիկ են հավանություն տալու իմ քարոզած Ավետարանի համար, թե՞ Աստված: Մի՞ թե ես

^{1.6} «Լքում եք Աստծու Ավետարանը, որ ձեզ հրավիրեց Քրիստոսի շնորհին». այլ թրգմ՝ «լքում եք Աստծուն, որ ձեզ հրավիրեց Քրիստոսի (մի շարք ձեռ.՝ իր) շնորհին»: «Մի այլափոխված ավետարանի». ըստ այդ ուրիշ ավետարանը քարոզողների բացի Հիսուս Քրիստոսին հավատալուց, փրկվելու համար պետք էր նաև պահել Մովսիսական Օրենքի պահանջները, հատկապես թլփատվելը և հեթանոսներից հեռու մնալը (հմմտ 2.3-5, 12-14):

մարդկանց սիրաշահելու համար եմ աշխատում: Եթե մարդկանց սիրաշահելու հետևից ընկնեի, ապա կդադարեի Քրիստոսի ծառա լինելուց:

Թե ինչպես Պողոսն առաքելական պաշտոն ստացավ

¹¹ Ուզում եմ, որ լավ իմանաք, եղբայրներ՝, թե այն Ավետարանը, որ ես ավետարանեցի ձեզ, մարդկային մտքի ծնունդ չէ, ¹² և ես էլ որևէ մարդուց չառա այն կամ որևէ մեկից չսովորեցի: Հիսուս Քրիստոսն ի՛նքը հայտնեց ինձ:

¹³ Անշուշտ, լսած կլինեք, թե ի՛նչ էի անում, երբ տակավին կապված էի հրեությանը. ինչպիսի՜ սաստկությամբ էի հալածում Աստծու եկեղեցին՝ փորձելով արմատախիլ անել այն: ¹⁴ Ինձ հասակակից շատ ազգակիցներից ավելի տեղյակ էի հրեական կրոնական սովորություններին և շատ ավելի նախանձախնդիր էի մեր հայրենի ավանդույթներին: ¹⁵ Բայց Աստված, որ իմ ծնվելուց առաջ իսկ ինձ ընտրել և իր շնորհով այս պաշտոնին էր կոչել, ¹⁶ երբ կամեցավ հայտնել ինձ՝ իր Որդուն, որպեսզի քարոզեմ նրան բոլոր ազգերին, ես չշտապեցի որևէ մեկի խորհրդին դիմելու, ¹⁷ ոչ էլ իսկույն Երուսաղեմ գնացի, նրանց մոտ, որոնք ինձանից առաջ էին կոչվել առաքյալ լինելու, այլ գնացի Արաբիա և նորից վերադարձա Դամասկոս: ¹⁸ Ապա, երեք տարի հետո, գնացի Երուսաղեմ՝ տեսնելու Պետրոսին, և տասնհինգ օր մնացի նրա մոտ: ¹⁹ Առաքյալներից ուրիշ մեկին չտեսա, բացի Հակոբոսից՝ Տիրոջ եղբորից: ²⁰ Իմ այս գրածների մեջ որևէ սուտ բան չկա, վկա է Աստված: ²¹ Հետո անմիջապես եկա Սիրիայի և Կիլիկիայի կողմերը, ²² այնպես որ անձանոթ մնացի Հրեաստանի քրիստոնյա համայնքի համար: ²³ Բայց որովհետև ուրիշներից հաճախ լսել էին, թե՛ «Նա, որ այն ժամանակ հալածում էր մեզ, այժմ ինքն էլ է քարոզում այն հավատը, որ մի ժամանակ արմատախիլ էր անում», ²⁴ ինձնով փառավորում էին Աստծուն:

2

Մյուս առաքյալները հավանություն են տալիս Պողոսի առաքելությանը

¹ Այնուհետև, տասնչորս տարի հետո Բառնաբասի հետ կրկին Երուսաղեմ գնացի՝ Տիտոսին էլ ինձ հետ վերցնելով: ² Գնացի, որովհետև Աստված հայտնեց, որ գնամ: Այնտեղ Երուսաղեմի եկեղեցուն զեկույց տվեցի հեթանոսների մեջ իմ կատարած քարոզչության մասին: Առանձին մի զեկույց տվեցի նաև եկեղեցու ղեկավարներին, որպեսզի գուր տեղը աշխատած չլինեմ և չաշխատեմ: ³ Նրանք բնավ չստիպեցին, որ թլփատվի ինձ ուղեկցող Տիտոսը, որ հեթանոս հույն էր: ⁴ Թլփատություն պահանջողները մի քանի կեղծ քրիստոնյաներ էին, որոնք սպրդել էին հավատացյալների շարքերը՝ Հիսուս Քրիստոսով մեր ունեցած ազատությունը

^{1.13} Գրծ 8.3, 22.4-5, 26.9-11:

^{1.14} Գրծ 22.3:

^{1.15-16} Գրծ 9.3-6, 22.6-10, 26.13-18:

^{1.18} Գրծ 9.26-30:

^{1.22} «Համայնքի». բոց՝ «եկեղեցիների»:

^{2.1} Գրծ 11.30, 15.2:

լրտեսելու և մեզ Մովսիսական Օրենքների ծառայության մեջ պահելու համար: ⁵ Բայց մենք ոչ մի վայրկյան իսկ տեղի չտվեցինք նրանց, որպեսզի դուք վստահ լինեք, թե ճշմարիտ էր այն, ինչ քարոզեցինք ձեզ:

⁶ Ինչ վերաբերում է նրանց, որոնք եկեղեցու ղեկավարներն էին համարվում, ինձ համար բնավ կարևորություն չունի, թե նրանք անցյալում ի՞նչ են եղել: Աստված խտրություն չի դնում մարդկանց միջև: Արդ, ղեկավար համարված այդ առաքյալներն այս մասին ինձ որևէ նոր բան չասացին: ⁷ Ընդհակառակը, երբ տեսան, որ Աստված ինձ է վստահել Ավետարանի քարոզչությունը հեթանոսների մեջ, ինչպես Պետրոսին էր հանձնել Ավետարանի քարոզչությունը հրեաների մեջ, - ⁸ որովհետև Աստված ինչպես որ Պետրոսի առաքելությունը հաջողեցրեց հրեաների մեջ, նույնպես և իմ առաքելությունը հաջողեցրեց հեթանոսների մեջ, - ⁹ այն ժամանակ Հակոբոսը, Կեփասը և Հովհաննեսը, որոնք եկեղեցու սյուներն էին համարվում, ընդունեցին Աստծուց ինձ տրված շնորհը և իմ ու Բառնաբասի ձեռքը սեղմելով՝ հավանություն տվեցին, որ մենք աշխատենք հեթանոսների մեջ, իսկ իրենք՝ հրեաների: ¹⁰ Միայն խնդրեցին, որ չմոռանանք օգնել Երուսաղեմի աղքատներին, մի բան, որի համար ես սրտանց աշխատեցի:

Պողոսը Անտիոքում հանդիմանում է Պետրոսին

¹¹ Եվ երբ Կեփասն Անտիոք եկավ և մեղադրելի ընթացքի մեջ էր, ես ընդդիմացա նրան, ¹² որովհետև նախքան Հակոբոսի մոտից մի քանի հոգու գալը նա հեթանոսությունից դարձածների հետ սեղան էր նստում առանց խտրություն դնելու: Բայց նրանց գալուց հետո բաժանվեց և ինքն իրեն հեռու էր պահում հեթանոսներից՝ վախենալով թվատության կողմնակիցներից: ¹³ Մյուս հրեա եղբայրները ևս հետևեցին Կեփասի կեղծավոր ընթացքին, մինչև իսկ Բառնաբասը տարվեց ու հետևեց նրանց կեղծավոր ընթացքին: ¹⁴ Երբ տեսա, որ Ավետարանի ճշմարտության ուղիղ ճանապարհով չեն ընթանում, բոլորի առաջ ասացի Կեփասին. «Եթե դու հրեա լինելով հանդերձ քեզ ազատ ես զգում հեթանոսների պես ապրելու, փոխանակ ապրելու հրեայի նման, ինչպե՞ս ես ստիպում հեթանոսներին, որ հրեայի պես ապրեն»:

Հրեա թե հեթանոս՝ միայն հավատով են փրկվում

¹⁵ Մենք, որ ի ծնե հրեա ենք և ոչ թե Աստծու Օրենքը չճանաչող «մեղավոր հեթանոսներ», ինչպես կոչում ենք նրանց, ¹⁶ գիտենք, որ որևէ մարդ Օրենքը գործադրելով չի արդարանում, այլ միայն Հիսուս Քրիստոսին հավատալով: Եվ մենք էլ հավատացինք Քրիստոս Հիսուսին, որպեսզի արդարանանք Քրիստոսին հավատալով և ոչ թե Օրենքը գործադրելով, որովհետև Օրենքի գործադրությամբ ոչ մի մարդ չի արդարանալու: ¹⁷ Իսկ եթե ուզենք Քրիստոսով արդարանալ, ապա հեթանոսների նման մենք էլ «մեղավոր» կլինենք, ինչպես ասում են ոմանք, ուրեմն Քրիստոսը մեզ մեղքի՞ առաջնորդեց: Բնա՛վ: ¹⁸ Ընդհակառակը, եթե վերստին կյանքի կոչեմ Օրենքի

^{2.6} Բ Օր 10.17:

^{2.12} Հուն. չունի «առանց խտրություն դնելու»:

^{2.16} ա Սղ 143.2, Հո 3.20: ք Հո 3.22:

պահանջները, որոնք արդեն մի կողմ եմ դրել, ապա ինքս ինձ հանցավոր դարձրած կլինեմ Օրենքի առաջ: ¹⁹ Բայց ես արդեն մեռած եմ Օրենքի համար, որ ինձ սպանեց, որպեսզի ապրեմ Աստծո՛ւ համար: ²⁰ Այո՛, Քրիստոսի հետ մեռա խաչի վրա և այժմ կենդանի եմ. ես չե՛ որ ապրում եմ, այլ Քրիստոսն է, որ ապրում է իմ մեջ: Այս կյանքը, որ այժմ ապրում եմ մարմնով, ապրում եմ՝ հավատալով Աստծու Որդուն, որ սիրեց ինձ և իր կյանքը զոհեց ինձ համար: ²¹ Ուստի Աստծու շնորհը չեմ մերժում, որովհետև եթե կարելի լիներ Օրենքի միջոցով արդարանալ, ապա Քրիստոսն իզուր մեռավ:

3

Օրե՛նք, թե՛ հավատ

¹ Ո՛վ անմիտ գաղատացիներ, ո՞վ հրապուրեց ձեզ: Մոռացա՞ք խաչի վրա Հիսուս Քրիստոսի մահը, որ ես պատկերեցի ձեր աչքի առաջ: ² Ա՛յս բանն եմ միայն ուզում իմանալ ձեզնից՝ ասացե՛ք. Օրենքի գործադրությա՛մբ ստացաք Սուրբ Հոգին, թե՛ Ավետարանի պատգամին հավատալով: ³ Այդքան անմի՛տ եք. Սուրբ Հոգով նոր կյանք սկսելուց հետո այժմ Օրենքի պահանջների՞ն եք վերադառնում: ⁴ Ձեր ունեցած ամբողջ փորձառությունն իզո՛ւր անցավ: Չեմ կարծում, որ իզուր անցավ: ⁵ Աստված ձեզ Սուրբ Հոգին շնորհեց և ձեր մեջ հրաշքներ գործեց նրա համար, որ Օրե՛նքը գործադրեցիք, թե՛ Ավետարանի պատգամին հավատացիք: ⁶ Հիշեցե՛ք Աբրահամի օրինակը: Սուրբ գիրքն ասում է. «Հավատաց Աստծուն, և այդ հավատի համար էլ Աստված արդար համարեց նրան»: ⁷ Իմացե՛ք ուրեմն, որ հավատին ապավինողներն են Աբրահամի իսկական որդիները: ⁸ Սուրբ գրքում կանխատեսված էր, որ Աստված հավատով է արդարացնելու բոլոր ազգերին, ուստի նախապես խոստում էր տրվել Աբրահամին, թե՛ «Քեզնով են օրհնվելու բոլոր ազգերը»: ⁹ Այնպես որ հավատին ապավինողներն են օրհնվում Աբրահամի հետ, որ ինքը ևս ապավինեց հավատին: ¹⁰ Նրանք, որ Օրենքի գործադրությանն են ապավինում, ենթակա են անեծքի, որովհետև նույն Օրենքի գիրքն ասում է. «Անիծյալ լինի նա, ով այս Օրենքի գրքում գրված բոլոր պատվիրաններին չի հնազանդվում և դրանք չի գործադրում»: ¹¹ Արդ, որ Օրենքի գործադրությամբ ոչ ոք չի կարող արդարանալ Աստծու առաջ, շատ հստակ է, որովհետև մարգարեն ասում է. «Արդարն իր հավատով է փրկվելու»: ¹² Մի՛նչդեռ Օրենքը կախում չունի հավատից, այլ ինչպես Սուրբ գիրքն է ասում՝ «Ով որ կանոնները կատարի, նրանցով կփրկվի»:

¹³ Քրիստոսն Օրենքի այդ անեծքից ազատեց մեզ՝ մեր փոխարեն ի՛նքը դառնալով անեծքի առարկա, որովհետև Օրենքի գրքում գրված է. «Անիծյալ է նա, ով կախվում է

^{3.1} «Ո՛վ հրապուրեց ձեզ». մի շարք ձեռ. ավելացնում են «և հեռացրեց ճշմարտությունից»:

^{3.6} Ծն 15.6, Հո 4.3:

^{3.7} Հո 4.16:

^{3.8} Ծն 12.3:

^{3.10} Բ Օր 27.26 [LXX]:

^{3.11} Ամբ 2.4:

^{3.12} Ղև 18.5:

փայտից»:¹⁴ Քրիստոսը կախվեց խաչափայտի վրա, որպեսզի բոլոր ազգերը Աբրահամին խոստացված օրհնությունն ունենան Քրիստոս Հիսուսով, և մենք, հավատալով նրան, ստանանք խոստացված Սուրբ Հոգին:

Աստծու խոստումը և Օրենքը

¹⁵ Եղբայրներ՝ ը, մարդկային սովորական հասկացողություն է, որ մեկի կատարած կտակը ուրիշ որևէ մեկը չի կարող ջնջել և ոչ էլ փոփոխության ենթարկել: ¹⁶ Արդ, Աստված խոստումներ տվեց Աբրահամին և նրա զավակին: Սուրբ գիրքը չի ասում՝ «Եվ նրա զավակներին», ինչը ակնարկություն կլիներ բազում անձերի, այլ եզակի ձևով է ասում՝ «Եվ քո զավակին»: Իսկ այդ զավակը Քրիստոսն է:¹⁷ Վերադառնալով կտակին՝ ուզում եմ հետևյալն ասել.- Այն կտակը, որ Աստված կատարեց՝ նկատի ունենալով Քրիստոսին, շատ ավելի վաղ է, քան Օրենքը, որ տրվեց չորս հարյուր երեսուն տարի հետո: Ուստի և Օրենքն անվավեր չի դարձնում կտակը և չի ջնջում խոստումը,¹⁸ որովհետև եթե ժառանգվելիք օրհնությունը կապված լիներ Օրենքին, ապա այլևս կախում չէր ունենա խոստումից. մինչդեռ Աստված խոստումով Աբրահամին շնորհեց ժառանգվելիք օրհնությունը:

¹⁹ Հապա ինչո՞ւ տրվեց Օրենքը: Տրվեց, որպեսզի մարդիկ ճանաչեն իրենց հանցանքները մինչև Աբրահամի զավակի, այսինքն՝ Քրիստոսի գալուստը, որին ուղղված էր խոստումը: Եվ Օրենքը տրվեց հրեշտակների ձեռքով և մի մարդու միջնորդությամբ,²⁰ մինչդեռ կտակի դեպքում միջնորդի պետք չկար, որովհետև կտակը կատարվում է մեկ հոգու կողմից, և այդ մեկը Աստված էր:

Օրենքի նպատակը և դերը

²¹ Արդյո՞ք դա նշանակում է, թե Օրենքը հակառակ է Աստծու խոստումներին: Բնա՛վ, որովհետև եթե տրված լիներ այնպիսի մի Օրենք, որ կարող լիներ ճշմարիտ կյանքը տալու, ապա հաստատապես հնարավոր պիտի լիներ Օրենքի գործադրությամբ արդարանալ: ²² Մինչդեռ Սուրբ գիրքը ցույց է տալիս, որ ամբողջ աշխարհը ենթակա է մեղքի, որպեսզի Աստծու օրհնությունը ժառանգելու խոստումը հիմնվի Հիսուս Քրիստոսի հավատի վրա և տրվի նրանց, որոնք հավատում են:

²³ Քանի դեռ հավատի ժամանակը չէր եկել, Օրենքը մեզ բանտարկյալների նման պահում էր իր հսկողության տակ՝ սպասելով գալիք հավատին՝ Քրիստոսին, որ հայտնվելու էր: ²⁴ Ուրեմն, Օրենքը մեր խնամակալ դաստիարակը եղավ՝ մեզ առաջնորդելով դեպի Քրիստոսը, որպեսզի հավատով արդարանանք: ²⁵ Բայց հիմա,

^{3.13} Բ Օր 21.23:

^{3.16} Ծն 12.7:

^{3.17} Մի շարք կարևոր ձեռ. չունեն *«նկատի ունենալով Քրիստոսին»*. բոց՝ *«ի Քրիստոս»*:

^{3.17} Ելք 12.40:

^{3.18} Հն 4.14:

^{3.19} *«Հրեշտակների ձեռքով»*. Պողոսը ևս, ինչպես Ստեփանոսը, ռաբբիական ավանդության հետևորդությամբ է անում այս հաստատումը (տե՛ս Գրծ 7.53 և ծնթ): *«Մի մարդու»* բացատրությամբ ակնարկվում է Մովսես մարգարեն:

որ հավատը եկավ, այլևս դաստիարակի կարիք չունենք,²⁶ որովհետև բոլորդ էլ Աստծու որդիներ եղաք՝ հավատալով Հիսուս Քրիստոսին:²⁷ Մի անգամ որ Քրիստոսին միանալով մկրտվեցիք, այսուհետև Քրիստոսն է, որ ապրում է ձեր մեջ:²⁸ Այլևս խտրություն չկա ո՛չ հրեայի և հեթանոսի, ո՛չ ստրուկի և ազատ մարդու, ո՛չ էլ արուի և էգի, որովհետև Քրիստոսին միանալով՝ բոլորդ էլ մեկ եղաք:²⁹ Արդ, եթե Քրիստոսին եք պատկանում, նշանակում է՝ դուք Աբրահամի զավակներն եք և ժառանգելու եք այն, ինչ որ Աստված խոստացավ նրան:՝

4

¹ Բայց իմացե՛ք նաև, որ ժառանգը թեև ամբողջ ժառանգության իսկական տերն է, սակայն այնքան ժամանակ, քանի դեռ անչափահաս է, չի տարբերվում ծառայից, ² քանի որ խնամակալների և հոգաբարձուների ձեռքի տակ է լինում, մինչև որ հասնի իր հոր որոշած ժամանակը:՝ ³ Նույնն է նաև մեզ համար: Քանի դեռ հոգևորապես անչափահաս էինք, բնության ուժերին էինք ենթարկվում ու ծառայում :՝ ⁴ Բայց հիմա հարմար ժամանակը հասած համարելով՝ Աստված աշխարհ ուղարկեց իր Որդուն, որը ծնվեց մի կնոջից և ապրեց Օրենքի տակ, ⁵ որպեսզի մեզ փրկի Օրենքի գերությունից և դարձնի Աստծու որդիներ:՝ ⁶ Արդ որովհետև նրա որդիներն ենք, Աստված մեր սրտերի մեջ ուղարկեց իր Որդու Հոգին, որով Աստծուն կոչում ենք «Աբբա», այսինքն՝ «Հայր»:՝ ⁷ Ուստի դուք այլևս ծառա չեք, այլ որդի, և քանի որ որդի եք, ապա ժառանգելու եք Աստծու խոստումը:՝

Պողոսը մտահոգված է գաղատացիների հավատով

⁸ Ճիշտ է, որ նախապես, երբ Աստծուն չէիք ճանաչում, ծառայում էիք չաստվածներին:՝ ⁹ Բայց հիմա, երբ ճանաչեցիք Աստծուն, և մանավանդ Աստված էլ ձեզ ճանաչեց, ինչպե՞ս եք նորից վերադառնում բնության տկար ու խեղճ ուժերի պաշտամունքին և ուզում եք վերստին ծառայել դրանց:՝ ¹⁰ Հատուկ կարևորություն եք տալիս որոշ օրերի և ամիսների, որոշ ժամանակների և տարիների:՝ ¹¹ Վախենում եմ, որ ձեզ համար տարած իմ ամբողջ աշխատանքն իզուր անցած լինի:

¹² Խնդրում եմ, եղբայրնե՛ր, եղե՛ք ինձ նման, քանի որ ես էլ մի ժամանակ ձեզ նման էի:

¹³ Ձեր դեմ բնավ գանգատ չունեմ: Ընդհակառակը, գիտեք անշուշտ, որ սկզբում, երբ

^{3.29} Հո 4.13:

^{4.2} Հեղինիստական օրենքի համաձայն հայրն ինքն է ճշտում իր որդու չափահասության տարիքը:

^{4.3} «Բնության ուժերին». այլ թրգմ՝ «աշխարհի տարրերին»: Ճշմարիտ իմաստն անորոշ է: Թվում է, թե Պողոսն ակնարկում է աշխարհը ղեկավարող ոգեղեն ուժերին (հմմտ հմր 9, Կղ 2.8, 20):

^{4.5-7} Հո 8.15-17:

^{4.6} «Նրա որդիներն ենք, Աստված մեր...». մի շարք ձեռ. ունեն «նրա որդիներն եք, Աստված ձեր...»:

«Աբբա» բառը գալիս է արամեերենից, որը Քրիստոսի ժամանակ Պաղեստինի խոսակցական լեզուն էր:

^{4.6} Բ Եգր 10.7:

^{4.7} «Ժառանգելու եք». շատ ձեռ. ավելացնում են «Քրիստոսի ձեռքով»:

^{4.10} Ակնարկությունը վերաբերում է կա՛մ հրեական տոներին և կա՛մ աստղերի ու մոլորակների հետ կապված հեթանոսական պաշտամունքներին:

եկա Ավետարանը ձեզ քարոզելու, տկար էի մարմնով. ¹⁴ և հակառակ նրան, որ իմ հիվանդ վիճակով փորձանք եղա ձեր գլխին, չանարգեցիք ինձ, ոչ էլ արհամարհեցիք, այլ ինձ ընդունեցիք այնպես, ինչպես կընդունեիք Աստծու հրեշտակին կամ Քրիստոս Հիսուսին: ¹⁵ Եվ ուրախությամբ արեցիք այդ: Հիմա ի՞նչ պատահեց: Կարող եմ վկայել ձեզ համար, որ եթե հնար լիներ, ձեր աչքերը կհանեիք ու կտայիք ինձ: ¹⁶ Որ ճշմարիտը խոսեցի, թշնամի՞ դարձա ձեզ: ¹⁷ Մի՛ կարծեք, թե ձեր հանդեպ հատուկ հետաքրքրություն ցուցաբերող այդ մարդիկ ձեր բարիքի մասին են մտածում: Ո՛չ: Նրանք ուզում են ձեզ բաժանել ինձնից, որպեսզի ամբողջությամբ իրենց հետևեք: ¹⁸ Բայց երանի թե բարուն տևապե՛ս նախանձախնդիր լինեիք և ոչ թե միայն այն ժամանակ, երբ ես ներկա եմ ձեր մեջ: ¹⁹ Դուք իմ ձագուկներն եք, բայց ահա դարձյալ մոր նման երկունքի ցավ եմ քաշում ձեզ համար, մինչև որ դառնաք Քրիստոսի հարազատ պատկերը: ²⁰ Կուզենայի հիմա ձեզ մոտ լինել և տարբեր ձևով խոսել, որովհետև շատ եմ մտահոգված ձեզնով:

Հագարի և Սառայի օրինակը

²¹ Ասացե՛ք տեսնեմ, դուք, որ ուզում եք ենթակա մնալ Օրենքին, չե՞ք կարդացել, թե ի՞նչ է ասում Օրենքի գիրքը: ²² Ասում է, թե Աբրահամը երկու որդի ունեցավ, մեկը ստրուկ աղախնից, իսկ մյուսը՝ ազատ կնոջից: ²³ Աղախնից ծնվածը մարդկային մտահոգություններից ծնվեց, մինչդեռ ազատ կնոջից ծնվածը՝ աստվածային խոստումով: ²⁴ Այս բաները պետք է այլաբանորեն հասկանալ: Երկու կանայք երկու Ուխտերն են ներկայացնում: Նրանցից մեկը՝ Հագարը, որ ստրուկ զավակներ ծնեց, Մինա լեռան վրա կնքված Ուխտն է: ²⁵ Այո՛, Հագարը խորհրդանշում է Արաբիայի Մինա լեռը և համապատասխանում է ներկա Երուսաղեմին, որն իր զավակներով հանդերձ ստրկության մեջ է: ²⁶ Իսկ մյուս կինը, որ ազատ է, խորհրդանշում է վերին Երուսաղեմը, որը մեր բոլորի մայրն է: ²⁷ Արդարև, մարգարեության մեջ գրված է.

«Ուրախացի՛ր, ո՛վ ամուլ, որ զավակ չծնեցիր,
երգի՛ր ցնծությամբ և աղաղակի՛ր,
դու, որ երկունքի ցավ չճանաչեցիր,
քանզի դու, որ լքված ես,
ավելի շատ զավակ պիտի ունենաս,
քան նա, ով ամուսին ունի»:՝

²⁸ Արդ, եղբայրնե՛ր, Իսահակի նման մենք էլ խոստումի որդիներ ենք: ²⁹ Եվ ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ մարդկային մտահոգություններից ծնվածը հալածում էր Սուրբ Հոգու խոստումով ծնվածին, այդպես է լինում նաև այժմ:՝ ³⁰ Բայց ի՞նչ է ասում

^{4.21} «Կարդացել». հուն. ունի «լսել»:

^{4.22} ա Ծն 16.15: բ Ծն 21.2:

^{4.25} Երուսաղեմը հրեության անձնավորումն է:

^{4.26} Մի շարք ձեռ. չունեն «բոլորի»:

^{4.26-27} Բ Եզր 2.2:

^{4.27} Ես 54.1:

^{4.29} Ծն 21.9:

Սուրբ գիրքը. «Հեռացրո՛ւ այդ աղախնին և նրա զավակին, որովհետև այդ աղախնի զավակը չպետք է ժառանգության բաժին ստանա ազատ կնոջ զավակի հետ միասին:»³¹ Արդ, եղբայրնե՛ր, մենք աղախնի զավակները չենք, այլ ազատի, ա՛յն ազատությամբ, որով Քրիստոսն ազատ դարձրեց մեզ:՝

5

Պահեցե՛ք ձեր ազատությունը

¹ Ուստի ամո՛ւր պահեցեք այդ ազատությունը և վերստին ստրկության լծի տակ մի՛ մտեք:

² Ահա ես՝ Պողոսս, ասում եմ ձեզ, որ եթե թլփատվեք, Քրիստոսից ձեզ ոչ մի օգուտ չի լինի: ³ Դարձյալ հայտարարում եմ, թե ով որ թլփատվի, պարտավոր է ամբողջ Օրենքը գործադրելու: ⁴ Իսկ եթե փորձեք Օրենքի գործադրությամբ արդարանալ, Քրիստոսի հետ կտրած կլինեք ձեր կապը և կզրկվեք նրա շնորհից: ⁵ Մինչդեռ մենք Սուրբ Հոգու գործությամբ և մեր հավատով արդարանալու հույսով սպասում ենք, ⁶ որովհետև Քրիստոս Հիսուսին միանալուց հետո թլփատված լինելը կամ թլփատված չլինելն արժեք չունի, այլ կարևոր է սիրով գործի դրված հավատը:

⁷ Դուք լավ էիք ընթանում. ո՛վ պատճառ եղավ, որ չհնազանդվեք ճշմարտությանը: ⁸ Այդ համոզումը, անշուշտ, չի գալիս Աստծուց, որը կանչեց ձեզ: ⁹ Չգիտե՞ք առածը. «Մի փոքր թթխմորն ամբողջ զանգվածն է խմորում»:՝ ¹⁰ Բայց ես վստահ եմ Տիրոջով, որ դո՛ւք էլ ուրիշ կերպ չեք խորհում, իսկ ձեր միտքը պղտորողն ով էլ որ լինի, իր պատիժը պիտի ստանա Աստծուց: ¹¹ Գալով ինձ, եղբայրնե՛ր, եթե ես էլ տակավին քարոզում եմ թլփատվել, ինչպես ասում են ոմանք, էլ ինչո՞ւ եմ հալածվում. չե՞՞ որ այդ դեպքում խաչի վրա Քրիստոսի մահը դադարում է գայթակղություն լինելուց: ¹² Երանի թե արմատից կտրվեն ձեր միտքը պղտորող այդ մարդիկ:

¹³ Եղբայրնե՛ր, Աստված կանչեց ձեզ, որ ազատ լինեք. նայեցե՛ք միայն, որ այդ ազատությունը մարդկային ցանկություններ կատարելու պատրվակ չդառնա, այլ սիրով ծառայեցե՛ք միմյանց: ¹⁴ Որովհետև Օրենքը լրիվ գործադրած կլինեք այս մեկ պատվիրանով. «Մի՛րի ր քո ընկերոջը քո անձի պես»:՝ ¹⁵ Իսկ եթե այդպես միմյանց վիրավորեք ու բզկտեք, զգո՛ւյշ, դուք ձեզ կկործանեք:

Մարդկային գործերը և Սուրբ Հոգու արդյունքները

¹⁶ Ձեզ թելադրում եմ հետևյալը. - Առաջնորդվեցե՛ք Սուրբ Հոգով, փոխանակ ձեր մարդկային ցանկությունները կատարելու, ¹⁷ որովհետև մարդկային բնությունը Սուրբ Հոգու ցանկացածի հակառակն է ցանկանում, իսկ Սուրբ Հոգին՝ մարդկային բնության ցանկացածի հակառակը: Մրանք միմյանց հակառակ են, և այդ է պատճառը, որ դուք

^{4.30} Ծն 21.10:

^{4.31} «Այն ազատությամբ, որով Քրիստոսն ազատ դարձրեց մեզ» նախադասությունը մի շարք ձեռ. գտնվում է 5-րդ գլխի 1-ին հմբ սկզբում:

^{5.9} Ա Կր 5.6:

^{5.14} Ղև 19.18:

չէք կարող ձեր ուզածը կատարել: ¹⁸ Արդ, եթէ դուք առաջնորդվէք Սուրբ Հոգով, նշանակում է՝ այլևս ենթակա չէք Օրենքին: ¹⁹ Մարդկային գործերը հայտնի են, ինչպէս՝ շնություն, պոռնկություն, անբարոյություն, ²⁰ կռապաշտություն, կախարդություն, թշնամություն, կռիվ, նախանձ, բարկություն, հակառակություն, երկպառակություն, բաժանումներ, ²¹ չարակամություն, սպանություն, հարբեցողություն, անառակություն ու սրանց նման ուրիշ բաներ: Եվ ես նախազգուշացնում եմ ձեզ, ինչպէս նախապէս էլ արել եմ, որ այսպիսի բաներ անողները չեն ժառանգելու Աստծու արքայությունը: ²² Իսկ Սուրբ Հոգու արդյունքներն են՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, ազնվություն, բարություն, հավատարմություն, ²³ հեզություն, ժուժկալություն: Այսպիսի բաների դեմ որևէ օրենք չկա: ²⁴ Նրանք, ովքեր Քրիստոսին են պատկանում, խաչի վրա մահացրին իրենց մարդկային կրքերն ու ցանկությունները:

²⁵ Արդ, քանի որ այս նոր կյանքը Սուրբ Հոգով ենք ապրում, Սուրբ Հոգով էլ առաջնորդվենք: ²⁶ Չլինենք սնապարծ, չգրգռենք իրար, չնախանձենք միմյանց:

6

Վերցրէ՛ք միմյանց բեռը

¹ Եղբայրներ՝, եթէ պատահի, որ մեկն ինչ-որ հանցանքի մեջ բռնվի, դուք, որ Սուրբ Հոգով եք առաջնորդվում, պետք է նրան հեզությամբ բերեք դեպի ուղիղ ճանապարհ: Նաև զգո՛ւյշ եղէք ինքներդ ձեր նկատմամբ, որպէսզի չլինի թէ դուք էլ փորձության մեջ ընկնէք: ² Վերցրէ՛ք միմյանց բեռը և այդպիսով կատարեցէ՛ք Քրիստոսի սիրո օրենքը,՝ ³ որովհետև ով որ կարծում է, թէ ինքը տարբեր է ուրիշներից, այդպիսի մեկը խաբում է ինքն իրեն, քանզի երբեք էլ տարբեր չէ: ⁴ Թող ամեն մեկն իր գործը կշռի և իր գոհունակությունը միայն իրեն պահի, փոխանակ ինքն իրեն ուրիշների հետ համեմատելու, ⁵ որովհետև յուրաքանչյուր ոք ի՛նքը պետք է կրի իր արարքների պատասխանատվությունը:

⁶ Աստծու խոսքին աշակերտողը թող իր ունեցած բարիքներից բաժին հանի իր ուսուցչին:

⁷ Դուք ձեզ մի՛ խաբեք. Աստծուն չի կարելի ծաղրել: ⁸ Մարդ ինչ որ սերմանում է, այն էլ կհնձի: Ով որ սերմանում է իր մարմնի անդաստանում, մահ կհնձի իր մարմնից, իսկ ով սերմանում է Սուրբ Հոգու անդաստանում, հավիտենական կյանք կքաղի Սուրբ Հոգուց: ⁹ Գալով մեզ՝ չձանձրանանք բարիք գործելուց, որովհետև եթէ հարատենք, արդյունքն անպայման կքաղենք իր ժամանակին: ¹⁰ Հետևաբար, քանի դեռ ժամանակը մեր ձեռքին է, բարիք անենք բոլորին, մանավանդ հավատի ճանապարհի մեր հարազատներին:

^{5.17} Հո 7.15-23:

^{5.19} Շատ ձեռ. չունեն «շնություն»:

^{5.21} Շատ ձեռ. չունեն «սպանություն»:

^{6.2} «Եվ այդպիսով կատարեցէ՛ք». մի շարք ձեռ. ունեն «և այդպիսով կատարած կլինէք»:

Վերջին պատվերներ և ողջույններ

¹¹ Տեսէ՛ք, թե ինչպիսի՛ մեծ գրերով եմ գրում ձեզ. այս տողերն ավելացնում եմ իմ ձեռքով: ¹² Նրանք, որ մարդկային նկատումներով ուզում են լավ մարդ երևալ ուրիշների աչքին, հենց նրա՛նք են ստիպում ձեզ, որ թլփատվեք, պարզապես որպեսզի Քրիստոսի խաչի համար չհալածվեն,¹³ որովհետև այդ թլփատվածներն իրենք էլ Օրենքը չեն պահում, բայց ուզում են, որ դուք թլփատվեք, որպեսզի ձեր թլփատվելով պարծենան:

¹⁴ Գալով ինձ՝ քա՛վ լիցի, որ ես մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչից բացի ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչի միջոցով աշխարհն այլևս մեռած է ինձ համար, ինչպես որ ես էլ մեռած եմ այս աշխարհի համար: ¹⁵ Կարևորը մարդու թլփատված կամ անթլփատ լինելը չէ, այլ նոր արարած լինելը: ¹⁶ Թող Աստծու խաղաղությունն ու ողորմությունը լինեն բոլոր նրանց հետ, որոնք ապրում են այս սկզբունքի համաձայն, բոլոր նրանց հետ, որոնք նրա ընտրյալ ժողովուրդն են կազմում:

¹⁷ Այսուհետև, խնդրում եմ, թող ոչ ոք աշխարհիկ հոգսերով ինձ նեղություն չտա, որովհետև ես պատկանում եմ Հիսուսին, ինչպես այդ վկայում են իմ մարմնի վերքերի սպիները:

¹⁸ Եղբայրնե՛ր, թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը լինի ձեր բոլորի հետ: Ամեն:

EPH

ԵՓԵՍՍԱՅԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԵՓԵՍՍԱՅԻՆԵՐԻՆ

Եփեսոսը Փոքր Ասիայի ամենակարևոր քաղաքներից էր: Հակառակ նրան, որ Պողոսն ինքը չէր հաստատել Եփեսոսի եկեղեցին, սակայն շուրջ երեք տարի մնաց և ուսուցանեց այնտեղ առաքելական իր երրորդ ճանապարհորդության ընթացքում (Գրծ 19.1-20.1): Իսկ նամակը գրվել է նրա բանտարկության ժամանակ:

Նամակում, որպես գլխավոր խորհրդածություն և մտահոգություն, քննության է առնվում Աստծու հավիտենական ծրագիրը, որի վերջնական նպատակն այն է, որ «երբ ժամանակներն իրենց լրումին հասնեն, Քրիստոսն իրենով բովանդակելու է ամեն ինչ, որ կա երկնքում և երկրի վրա» (1.10): Առաքյալը կոչ է անում Աստծու ժողովրդին, որ ապրեն այս ծրագրի համաձայն, որպեսզի իրագործեն մարդկության միությունը՝ Հիսուս Քրիստոսի հետ միանալով:

Նամակի առաջին մասում առաքյալը կանգ է առնում Աստծու հետ միության ծրագրի վրա՝ խոսելով այն միջոցների մասին, թե ինչպես է Հայր Աստվածն ընտրել իր ժողովրդին, թե նրանք ինչպես են իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի շնորհիվ արժանացել ներման ու դարձել ազատ, և թե ինչպես Աստծու խոստումը երաշխավորված է Սուրբ

*6.12 «...խաչի համար չհալածվեն». գրբ. ունի «...խաչի ճանապարհով չգնան»:

*6.16 «...նրա ընտրյալ ժողովուրդը». բոց՝ «Աստծու Իսրայելը»:

*6.17 Պողոսն ակնարկում է Հիսուսի անվան համար իր կրած չարչարանքների թողած հետքերի մասին ու դրանք նմանեցնում խարանով դրոշմված այն նշաններին, որոնք հաճախ դրվում էին կենդանիների կամ ստրուկների մարմինների վրա՝ նրանց պատկանելիությունը որոշելու համար:

Հոգով: Իսկ երկրորդ բաժնում առաքյալն ընթերցողներին թելադրում է, որ ապրեն այնպիսի օրինակելի կյանքով, որ Քրիստոսի հետ իրենց միությունը դառնա իրականություն՝ միմյանց հետ իրենց ունեցած միությամբ, որ թե՛ եկեղեցում և թե՛ ընկերային ու ընտանեկան հարաբերությունների ընթացքում արտահայտվի փոխադարձ հարգանքով, հնազանդությամբ, սիրով և հոգատարությամբ:

Առաքյալը գործածում է երեք պատկերավոր արտահայտություններ՝ Քրիստոսի հետ Աստծու ժողովրդի միությունը ցույց տալու համար: Եկեղեցին մի մարմին է, որի գլուխը Քրիստոսն է, կամ եկեղեցին այն կառույցն է, որի անկյունաքարն ինքը Քրիստոսն է, կամ եկեղեցին նման է մի կնոջ, որի փեսան Քրիստոսն է: Հեղինակն ամեն ինչ տեսնում է Քրիստոսի սիրո, զոհագործումի, ներողամտության, շնորհի ու սրբության լույսի տակ:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-2):
- Քրիստոսն ու եկեղեցին (1.3-3.21):
- Քրիստոսի հետ նոր կյանք (4.1-6.20):
- Վերջաբան (6.21-24):

1

Ողջուն

¹ Ես՝ Պողոսս, Աստծու կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալս, գրում եմ Եփեսոսում բնակվող եղբայրներին, ձեզ՝ Հիսուս Քրիստոսին հավատացողներին: ² Թող Աստված՝ մեր Հայրը, և Տեր Հիսուս Քրիստոսը շնորհ ու խաղաղություն պարգևեն ձեզ:

Քրիստոսով մեր ունեցած հոգևոր օրհնությունը

³ Օրհնյալ է Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով օրհնեց մեզ երկնքում ամեն տեսակ հոգևոր օրհնությամբ: ⁴ Նա աշխարհի գոյությունից էլ առաջ ընտրել էր մեզ՝ Քրիստոսի միջոցով իրեն պատկանելու համար, որպես սուրբ և անարատ ժողովուրդ, ⁵ և իր սիրով մեզ նախասահմանել՝ Հիսուս Քրիստոսի ձեռքով իր որդիները լինելու, որովհետև ա՛յդ էր իր կամքը և ծրագիրը:

⁶ Ուստի, գովենք նրան այն փառքի համար, որ մեզ շնորհեց իր սիրելի Որդու միջոցով: ⁷ Արդարև, նրանով՝ փրկվեցինք և նրա արյունով՝ թողություն գտանք մեր մեղքերի համար: Որքա՛ն մեծ է իր շնորհը, ⁸ որ առատորեն տվեց մեզ ամենայն իմաստությամբ և գիտությամբ, ⁹ որովհետև իր կամքի համաձայն նա մեզ հայտնեց նախապես պատրաստած իր ծրագիրը, որ իրագործվելու է Քրիստոսով: ¹⁰ Եվ այդ

^{1.1} Մի շարք ձեռ. չունեն «Եփեսոսում բնակվող»:

^{1.1} Գրծ 18.19-21, 19.1:

^{1.4-5} «...և անարատ ժողովուրդ, և իր սիրով մեզ...». այլ թրգմ՝ կետադրությունը տարբեր կարդալով՝ «...և անարատ ժողովուրդ և սիրով ապրելու, և մեզ...»:

^{1.7} Կդ 1.14:

ծրագիրն այս է. երբ ժամանակներն իրենց լրումին հասնեն, Քրիստոսն իրենով բովանդակելու է ամեն ինչ, որ կա երկնքում և երկրի վրա:

¹¹ Քրիստոսի միջոցով ժառանգորդ դարձանք փրկության: Աստված, որ ամեն ինչ հաջողեցնում է ըստ իր առաջադրած ծրագրի ու կամքի, ¹² դրանով սկզբից հրավիրեց մեզ՝ գովերգելու իր փառքը. մենք, որ Քրիստոսին հուսացողների առաջիններից եղանք: ¹³ Դուք էլ, երբ լսեցիք ճշմարիտ քարոզչությունը, այսինքն՝ Ավետարանը, որ փրկություն բերեց ձեզ, հավատացիք Քրիստոսին և կնքվեցիք խոստացված Սուրբ Հոգով: ¹⁴ Եվ Սուրբ Հոգին գրավական է, որ ժառանգելու ենք Աստծու խոստումը, երբ Աստված փրկի իր սեփական ժողովրդին, որպեսզի գովերգենք նրա փառքը:

Պողոսի աղոթքը հավատացյալների համար

¹⁵ Ահա թե ինչու Տեր Հիսուսի հանդեպ ձեր հավատի և Աստծու բոլոր ընտրյալների հանդեպ ձեր սիրո մասին լսելուց ի վեր ¹⁶ ես չեմ դադարում Աստծուն շնորհակալություն հայտնել ձեզ համար: Իմ աղոթքների մեջ միշտ հիշում եմ ձեզ, ¹⁷ որպեսզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածը՝ Հայրը, որին պատկանում է փառքը, ձեզ իմաստություն և հայտնություն պարգևող Հոգին տա, որպեսզի կարողանաք ճանաչել իրեն: ¹⁸ Այո՛, աղոթում եմ, որ Աստված լուսավորի ձեր մտքի աչքերը, որպեսզի իմանաք, թե ի՛նչ է այն հույսը, որին նա հրավիրեց ձեզ, թե ինչքա՛ն ճոխ ու փառավոր է այն խոստումը, որը ժառանգելու են նրա ընտրյալները, ¹⁹ և թե ինչքա՛ն գերազանց ու մեծ է այն ուժը, կարողությունն ու զորությունը, որ ներգործում է հավատացյալներին մեջ: ²⁰ Այդ ներգործող զորությունը Աստված ցույց տվեց Քրիստոսի անձով՝ նրան հարություն տալով մեռելներից և նստեցնելով իր աջ կողմում, երկնքի մեջ՝ ²¹ ոգեղեն աշխարհի բոլոր իշխանություններից ու պետություններից, զորություններից և տերություններից բարձր և դեռ ուրիշ անուններով ծանոթ բոլոր իշխանությունների վրա՝ թե՛ ներկա աշխարհում և թե՛ գալիքում: ²² «Աստված ամեն ինչ ենթարկեց նրա իշխանությանը» և նրան կարգեց եկեղեցու գլուխ՝ ամեն բանից վեր: ²³ Հետևաբար, եկեղեցին Քրիստոսի մարմինն է, ամբողջացումն է Քրիստոսի, որ ամբողջացնում է ամեն ինչ և ամեն տեղ:

2

Մահվանից դեպի կյանք

¹ Անցյալում դուք հոգեպես մեռած էիք ձեր հանցանքների և մեղքերի հետևանքով: ² Ապրում էիք այդ մեղքերով, այս աշխարհի սովորության համաձայն՝ հնազանդվելով Սատանային, որը մթնոլորտում գործող ոգեղեն ուժերի իշխանն է և այժմ գործում է

^{1.20} Սղ 110.1:

^{1.21} «*Իշխանություններ, պետություններ, զորություններ և տերություններ*». տե՛ս Հո 8.38 և ծնթ: Տե՛ս նաև 6.12:

^{1.22} Սղ 8.6:

^{1.22-23} Կղ 1.18:

^{2.1-5} Կղ 2.13:

Աստծուն անհնազանդ մարդկանց մեջ: ³ Մենք բոլորս էլ մի ժամանակ նույնպես անհնազանդ էինք և մարդկային բնությանը հատուկ ցանկություններով էինք ապրում՝ կատարելով մեր մարմնի ու մտքի բոլոր փափագները, և մյուսների նման իսկապես արժանի էինք Աստծու պատժին:

⁴⁻⁵ Բայց մինչ մենք հոգեպես մեռած էինք մեր մեղքերի պատճառով, Աստված, որ առատ է իր ողորմությամբ, մեր հանդեպ ունեցած իր մեծ սիրով, որով սիրեց մեզ, վերստին մեզ կյանքի կոչեց Քրիստոսով: Այո՛, շնորհ արեց՝ փրկելով մեզ: ⁶ Քրիստոսի հետ հարություն տվեց և նրա հետ էլ երկնքում նստեցրեց մեզ, որ միացած ենք Հիսուս Քրիստոսին, ⁷ որպեսզի գալիք բոլոր ժամանակներում մարդիկ տեսնեն գերազանցորեն մեծ այն շնորհը, որ Աստված այնքան բարությանբ ցույց տվեց մեզ Հիսուս Քրիստոսի անձի մեջ:

⁸ Այո՛, դուք փրկվեցիք Աստծու շնորհով, քանի որ հավատացիք: Փրկությունը ձեր արժանիքը չէ, այլ պարգևն է Աստծու: ⁹ Ձեր գործերով չէ ձեռք բերված այն, որպեսզի ոչ ոք չպարծենա: ¹⁰ Մենք Աստծու նոր ստեղծագործությունն ենք, քանի որ միացած ենք Հիսուս Քրիստոսին. ստեղծված ենք կատարելու համար այն բարի գործերը, որոնց համար Աստված սկզբից պատրաստեց մեզ, որպեսզի դրանցով լցնենք մեր կյանքը:

Բոլոր հավատացյալները՝ Աստծու մեկ ժողովուրդ

¹¹ Ուստի հիշեցե՛ք, որ դուք էլ մի ժամանակ հեթանոս էիք մարմնով, այսինքն՝ «անթիփատ» էիք, ինչպես ձեզ կոչում էին հրեաները, որոնք մարմնապես թիփատված են: ¹² Ուզում եմ ասել, որ այն ժամանակ դեռևս չէիք ճանաչում Քրիստոսին, մաս չէիք կազմում Աստծու ընտրյալ ժողովրդին և հետևաբար օտար էիք՝ կտրված Աստծու խոստումով կնքված ուխտերից, և այս աշխարհում ապրում էիք առանց հույսի և առանց Աստծու: ¹³ Բայց հիմա, որ միացաք Հիսուս Քրիստոսին, դուք, որ մի ժամանակ խորթ էիք Աստծուն, հարազատ դարձաք Քրիստոսի զոհագործումով: ¹⁴ Նա՛ է մեր հաշտարարը, որ միացրեց հրեային ու հեթանոսին՝ իր մարմնի զոհագործումով քանդելով նրանց բաժանող թշնամության պատը ¹⁵ և խափանելով Մովսիսական Օրենքն իր պատվիրաններով ու հրահանգներով, որպեսզի հրեային ու հեթանոսին միավորելով իր անձի մեջ, ստեղծի նոր և միակ մի ժողովուրդ, այդպիսով հաստատի խաղաղություն՝ ¹⁶ և մեկ մարմին դարձած երկուսին իր խաչով հաշտեցնի Աստծու հետ: Որովհետև իր անձի զոհագործումով էր, որ նա սպանեց նրանց թշնամությունը՝ ¹⁷ և եկավ, խաղաղության ավետիսը տվեց բոլորին, թե՛ ձեզ՝ հեթանոսներիդ, որ հեռացել էիք Աստծուց, և թե՛ հրեաներին, որոնք մոտիկ էին իրեն: ¹⁸ Նրանով է, որ մենք երկուսս էլ, հրեաներ ու հեթանոսներ, նույն հոգին ստացած կարող ենք կանգնել Հայր Աստծու առաջ:

¹⁹ Հետևաբար, դուք այլևս օտար և խորթ չեք Աստծու համար, այլ Աստծու ժողովրդի հետ համաբաղաբացիներ եք և Աստծու ընտանիքի հարազատ անդամները: ²⁰ Դուք

^{2.12} «Աստծու ընտրյալ ժողովրդին». բոց՝ «Բարայելին»:

^{2.15} Կդ 2.14:

^{2.16} Կդ 1.20:

^{2.17} Ես 57.19:

մասերն էք այն մեծ կառույցի, որի հիմքը առաքյալներն ու մարգարեներն են, և որի անկյունաքարն է ինքը՝ Հիսուս Քրիստոսը:՝²¹ Նրանով է, որ ամբողջ կառույցը ներդաշնակ միասնությամբ աճում ու դառնում է Տիրոջ սեփական սուրբ տաճարը:՝²² Նրան միացած՝ դուք էլ բոլորի հետ միասին դառնում էք Աստծու բնակարան՝ Սուրբ Հոգու միջոցով:

3

Պողոսը հեթանոսների առաքյալ

¹ Ահա թե ինչու ես՝ Պողոսս, գտնվում եմ բանտում Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ սիրո և ձեզ՝ հեթանոսներիդ համար: ² Անշուշտ, լսած կլինեք, որ Աստված իր շնորհի մատակարարումն ինձ վստահեց՝ ձեզ օգնելու համար: ³ Եվ մի հայտնությամբ նա ցույց տվեց ինձ իր ծածուկ ծրագիրը, ինչպես վերևում համառոտակի գրեցի: ⁴ Կարդալով այն՝ կարող էք հասկանալ, թե որքանով եմ տեղյակ Քրիստոսի ծածուկ ծրագրին: ⁵ Այդ ծրագիրը Աստված չհայտնեց մարդկության նախորդ սերունդներին այնպես, ինչպես այժմ Սուրբ Հոգու միջոցով հայտնեց իր սուրբ առաքյալներին և մարգարեներին: ⁶ Եվ Աստծու ծրագիրն այս է, որ բոլոր ազգերն էլ Ավետարանի միջոցով ժառանգակից լինեն Աստծու ժողովրդին, դառնան նույն մարմնի անդամ և բաժնեկից այն խոստմանը, որ Աստված իրագործեց Հիսուս Քրիստոսով: ⁷ Եվ ես սպասավոր եղա այդ Ավետարանին Աստծու ձրի շնորհով, որ Աստված տվեց ինձ իր ներգործող զորությամբ:

⁸ Այո՛, ինձ, որ հետիններից հետինն եմ Աստծու ժողովրդի մեջ, Աստված այս շնորհը տվեց, որպեսզի ավետիս տամ բոլոր ազգերին, թե ինչպիսի աներևակայելի գանձ է Քրիստոսը, ⁹ և լուսավորեմ բոլորին, որպեսզի տեսնեն, թե Աստված ինչպե՛ս է իրագործում իր ծրագիրը: Նա՛ ամբողջ տիեզերքի արարիչը, անցած բոլոր ժամանակներում ծածուկ պահեց այս ծրագիրը, ¹⁰ որպեսզի ներկա ժամանակներում եկեղեցու միջոցով Աստծու բազմապատիկ իմաստությունը հայտնվի երկնքում գտնվող իշխանություններին ու պետություններին ¹¹ այնպես, ինչպես Աստված նախասահմանել էր սկզբից, և ինչպես այն իրագործեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ձեռքով: ¹² Եվ մենք՝ Քրիստոսին միացածներս, համարձակ և ամենայն վստահությամբ կանգնում ենք Աստծու առաջ, քանի որ հավատացինք Քրիստոսին: ¹³ Ուստի աղաչում եմ, որ չընկճվեք՝ տեսնելով այն նեղությունները, որ ես հանձն եմ առել ձեզ համար, և որոնք ձեր փառքն են:

Ճանաչել Քրիստոսի սերը

¹⁴ Դրա համար էլ ծնկի եմ գալիս մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հոր առաջ,՝ ¹⁵ որից իր

^{2.20} «...կառույցի, որի հիմքը առաքյալներն ու մարգարեներն են» կամ «...կառույցի, որը շինված է առաքյալների և մարգարեների դրած հիմքի վրա»:

^{2.21} «Ամբողջ կառույցը». մի շարք ձեռ. ունեն «ամեն կառույց» [կամ «ամեն շինություն»]:

^{3.4-6} Կդ 1.26-27:

^{3.14} Լավագույն հուն. ձեռ. չունեն «մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի»:

գոյությունն է ստանում երկնային թե երկրային ամեն ազգաստոհմ, ¹⁶ որպեսզի իր ճոխ փառքի համաձայն, նա զորություն տա ձեզ, այնպես որ ներքնապես ամրապնդվեք նրա Հոգով, ¹⁷ և ձեր հավատի միջոցով Քրիստոսը բնակվի ձեր սրտերում: Աղոթում եմ, որ դուք արմատանաք սիրո մեջ և հաստատուն հիմքեր ունենաք, ¹⁸ որպեսզի Աստծու բոլոր ընտրյալների հետ կարողանաք հասկանալ Քրիստոսի սիրո ամբողջական տարողությունը՝ իր լայնությամբ և երկարությամբ, իր բարձրությամբ և խորությամբ:՝

¹⁹ Այո՛, որպեսզի ճանաչեք Քրիստոսի սերը, որ վեր է ամեն իմացությունից, որպեսզի լցվեք Աստծու ամբողջական լիությամբ:

²⁰ Ուստի, փա՛ռք Աստծու, նրան, որ մեր մեջ իր ներգործող զորությամբ միշտ էլ շատ ավելին է անում, քան այն ամենը, ինչ մենք խնդրում ենք ու մտածում: ²¹ Քրիստոս Հիսուսի միջոցով՝ փա՛ռք նրան եկեղեցում բոլոր ժամանակների սերունդների կողմից, հավիտյանս հավիտենից: Ամեն:

4

Բոլորս մեկ մարմին

¹ Արդ ես, որ բանտում եմ գտնվում Տիրոջ համար, աղաչում եմ ձեզ, ապրեցե՛ք այնպես, ինչպես վայել է ձեր կոչումին, որին հրավիրեց ձեզ Աստված: ² Եղե՛ք միշտ խոնարհ, հեզ ու համբերատար և ցո՛ւյց տվեք ձեր սերը՝ հանդուժելով միմյանց:՝

³ Ջանացե՛ք պահել Սուրբ Հոգու շնորհած միությունը խաղաղության շաղկապով:

⁴ Մեկ է մարմինը և մեկ՝ Սուրբ Հոգին,

ինչպես մեկ է հույսը, որի համար

Աստված կանչեց ձեզ:

⁵ Մեկ է Տերը, մեկ՝ հավատը,

մեկ է և մկրտությունը:

⁶ Մեկ է Աստված՝ Հայրն ամենքի,

որ տիրում է բոլորին,

որ գործում է բոլորի միջոցով

և մնում է բոլորի մեջ:

⁷ Բայց մեզնից յուրաքանչյուրին տրված է մի շնորհ՝ Քրիստոսի պարգևած չափով:

⁸ Ահա թե ինչու Սուրբ գիրքն ասում է.

«Ելավ բարձունքները՝

բազմաթիվ գերիներ տանելով իր հետ,

և պարզներ բաշխեց մարդկանց»:

⁹ Ի՞նչ է ուզում ասել «ելավ» ասելով: Ուզում է ասել, որ նախ իջավ երկրի ստորին կողմը: ¹⁰ Նա, որ իջավ, նույն ինքն է, որ բարձրացավ բոլոր երկինքներից վեր, որպեսզի իրենով լցնի ամբողջ տիեզերքը: ¹¹ Եվ նա Քրիստոսն էր, որ «պարզներ բաշխեց մարդկանց», որպեսզի ոմանք լինեն առաքյալ, ոմանք՝ մարգարե, ոմանք՝

^{3.18} Սր 1.3:

^{4.2} Կղ 3.12-13:

^{4.8} Սղ 68.18:

ավետարանիչ, ոմանք՝ հովիվ և ուսուցանող՝¹² պատրաստելու համար Աստծու ժողովրդին և նրանց դնելու Աստծու ծառայության մեջ, որպեսզի Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին, աճի ու զորանա,¹³ մինչև որ բոլորս հասնենք հավատի ամբողջական միությանն ու Աստծու Որդու ճանաչմանը, այսինքն՝ մինչև որ հասնենք հավատի չափահասությանը, Քրիստոսի կատարյալ նմանությանը:¹⁴ Որպեսզի սրանից հետո չլինենք երեխաների նման, որոնք տարուբերվում են այլքների հետ և զանազան վարդապետությունների հողմերից քշվում խաբեբա մարդկանց կողմից, որոնք խորամանկ հնարներով խաբում ու մոլորեցնում են:¹⁵ Այլ ապրենք ճշմարտության համաձայն, սիրով և հետզհետե աճենք Քրիստոսի հետ մեր միության մեջ, որովհետև նա՛ է գլուխը,¹⁶ որ մարմինն իր բոլոր մասերով ներդաշնակ միասնությամբ կապում է իրար՝ բոլոր հոգերի օգնությամբ: Եվ երբ յուրաքանչյուր մաս գործում է ինչպես որ պետք է, մարմինն աճում և զորանում է սիրո մեջ:

Քրիստոնյայի ապրելակերպը

¹⁷ Արդ, Տիրոջ կողմից ազդարարում եմ ձեզ.- Չլինի թե նորից վերադառնաք այն կենցաղին, որով հեթանոսներն են ապրում անմտորեն:¹⁸ Նրանց միտքը խավարած է իրենց տգիտության ու համառ անտարբերության պատճառով նրանք օտարացած են Աստծու կյանքից,¹⁹ և քանի որ այդ կյանքի հույսը չունեն, իրենք իրենց տվել են անառակության և ամեն պղծություն գործում են անհազ կերպով:²⁰ Բայց ես ձեզ սովորեցրի, որ այդ չէ Քրիստոսի ճանապարհը:²¹ Դուք լսել եք նրա պատգամները և նրան միանալով՝ սովորել, որ Հիսուսի մեջ է ճշմարտությունը:²² Ուստի մոռացե՛ք ձեր հին ինքնությունը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ ապականված էր խաբուսիկ ցանկություններով,²³ վերանորոգվեցե՛ք հոգով՝ փոխելով ձեր մտածելակերպը,²⁴ եղե՛ք նոր մարդ՝ ստեղծված Աստծու պատկերի համաձայն, և ճշմարիտ կյանքն ապրեցե՛ք արդարությամբ ու սրբությամբ:

²⁵ Հետևաբար հրաժարվեցե՛ք ստախոսությունից: «Ամեն մարդ թող ճշմարտությունն ասի իր ընկերոջը», ինչպես ասում է մարգարեն, որովհետև, միացած լինելով Քրիստոսին, միմյանց անդամներ ենք:²⁶ Եվ ինչպես սաղմոսերգուն է ասում՝ «Նույնիսկ երբ բարկանաք, չլինի թե մեղանչեք», և բարկացած չմնաք մինչև երեկո՛:

²⁷ Երբեք առիթ մի՛ տվեք Սատանային:²⁸ Ով գողությամբ էր ապրում, այլևս թող չգողանա, այլ վարժվի արդար վաստակով ոչ միայն հացը շահելու, այլև բարիք գործելու՝ օգնելով նրանց, որոնք կարիքի մեջ են:²⁹ Ոչ մի տգեղ խոսք թող չլինի ձեր բերանից: Խոսեցե՛ք միայն այն, ինչ որ պետք է, ինչ որ բարի է՝ ուրիշների հավատն ամրապնդելու համար, որպեսզի լսողները լցվեն Աստծու շնորհով:³⁰ Մի՛ տրտմեցրեք Աստծու Սուրբ Հոգին, որով կնքվեցիք փրկության օրվան հասնելու համար:

³¹ Արմատախի լ արեք ձեզնից ամեն դառնություն, բարկություն ու զայրույթ, գոռոռոց

*4.16 Կղ 2.19:

*4.22 Կղ 3.9:

*4.24 ա Կղ 3.10: ք Ծն 1.26, Իմս 9.3:

*4.25 Զք 8.16:

*4.26 Սղ 4.4 [LXX]:

և հայիոյություն, և այդպիսով կանխած կլինէք դրանց չար հետևանքները: ³² Միմյանց հանդէպ քաղցր ու գթած եղէ՛ք՝ ներելով միմյանց, ինչպէս և Աստված ներեց մեզ Քրիստոսի միջոցով:՝

5

Ինչպէ՞ս նմանվել Աստծուն

¹ Նմանվեցէ՛ք Աստծուն, որպէս նրա սիրելի որդիներ, ² և շարժվեցէ՛ք սիրով, ինչպէս որ Քրիստոսը սիրեց մեզ և մեզ փրկելու համար ինքն իրեն ընծայեց Աստծուն՝ որպէս անուշահոտ ընծա և զոհ:՝ ³ Պոռնկության, ամեն տեսակ պղծության կամ ազահության խոսքն անգամ թող չլինի ձեր մեջ, որովհետև այդպէ՛ս է վայել Աստծու ժողովրդին:

⁴ Վայել չէ, որ զբաղվէք լկտի և ամբարիշտ խոսակցություններով կամ

խեղկատակությամբ, այլ ձեր խոսակցությունը պետք է միշտ գոհաբանություն լինի:

⁵ Մեկ բան միայն լա՛վ իմացեք. որևէ մեկը, որ պոռնկություն է անում, պղծասեր է կամ ազահ, - որ կռապաշտություն է, - ժառանգություն չի ունենա Քրիստոսի և Աստծու արքայության մեջ: ⁶ Հետևաբար, չլինի թե որևէ մեկը դատարկ խոսքերով խաբի ձեզ, որովհետև այդպիսի բաների համար Աստված իր բարկությունը կթափի անհնազանդ մարդկանց վրա: ⁷ Այսուհետև ոչ մի հարաբերություն մի՛ ունեցէք այդպիսիների հետ,

⁸ որովհետև թեև մի ժամանակ խավար էիք, սակայն հիմա, որ միացած էք Տիրոջը, լույս էք: Հետևաբար, ապրեցէ՛ք լույսի որդիներին վայել ձևով, ⁹ որովհետև լույսի պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը:՝ ¹⁰ Չանացէ՛ք հասկանալ, թե Աստված ինչ է ուզում ձեզնից, ¹¹ և բնավ մասնակից մի՛ եղէք խավարի գործերին, որոնք Աստծու կամեցած պտուղները չեն տալիս: Ընդհակառակը, ձաղկեցէ՛ք դրանք, ¹² որովհետև այդ մարդկանց արածները գործում են մթան մեջ, և այդ մասին խոսելն իսկ ամոթ է: ¹³ Բայց այդ բոլոր ծածուկ արարքները Քրիստոսի լույսով հայտնվում և հանդիմանվում են, ¹⁴ որովհետև լույսը հայտնի է դարձնում ամեն բան: Ահա թե ինչու երգն ասում է.

«Արթնացի՛ր դու, որ քնած ես,
դո՛ւրս արի քո մեռյալ վիճակից,
և Քրիստոսը կլուսավորի քեզ:՝

¹⁵ Ուրեմն ուշադրությո՛ւն դարձրէք ձեր ապրելակերպին: Մի՛ ապրէք անմտորեն, այլ իմաստունների նման: ¹⁶ Օգտագործեցէ՛ք ժամանակը, քանզի այս օրերը չար են:՝

¹⁷ Ուստի անմտություն մի՛ արեք. իմացէ՛ք, թե ի՛նչ է ուզում Տերը ձեզնից: ¹⁸ Գերի մի՛

^{4.32} «Ներեց մեզ». մի շարք ձեռ. ունեն «ներեց ձեզ»:

^{4.32} Կդ 3.13:

^{5.2} Ելք 29.18, Սդ 40.6:

^{5.9} «Լույսի». մի շարք ձեռ. ունեն «Հոգու»:

^{5.14} «Լույսը հայտնի է դարձնում ամեն բան». այլ թրգմ՝ «ամեն ինչ, որ հայտնվում է, լույս է»: «Երգն ասում է». բնագրում չկա «երգ» բառը, բայց հավանական է, որ հիշված տողերը քրիստոնեական հնագույն օրհներգի պատարհիկը լինեն՝ վերամշակմամբ քաղված Եսայի մարգարեից:

^{5.16} Կդ 4.5:

դարձեք գինուն, որը անառակության է տանում, այլ մանավանդ լցվեք Սուրբ Հոգով, ¹⁹ միմյանց հետ սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով խոսեցեք և ձեր սրտերում միշտ երգեցե՛ք ու սաղմո՛ս ասացե՛ք Տիրոջը՝ ²⁰ ամեն բանի համար միշտ շնորհակալություն հայտնելով Հայր Աստծուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով:

Հորդոր տղամարդկանց և կանանց

²¹ Քրիստոսի հանդեպ ձեր պատկառանքն արտահայտեցե՛ք միմյանց հնազանդվելով:

²² Կանա՛յք, հնազա՛նդ եղե՛ք ձեր ամուսիններին, ինչպես պիտի հնազանդվեիք Տիրոջը,՝ ²³ որովհետև ամուսինն է իր կնոջ գլուխը, ինչպես Քրիստոսը գլուխն է եկեղեցու՝ իր մարմնի, որի Փրկիչը ինքն է: ²⁴ Հետևաբար, ինչպես եկեղեցին է հնազանդվում Քրիստոսին, այնպես էլ կանայք թող ամեն ինչում հնազանդվեն ամուսիններին:

²⁵ Տղամարդի՛ կ, սիրեցե՛ք ձեր կանանց այնպես, ինչպես Քրիստոսը սիրեց եկեղեցին և իր կյանքը տվեց նրա համար,՝ ²⁶ որպեսզի ջրի լվացումով մաքրի այն և սրբի իր խոսքով,՝ ²⁷ այնպես որ եկեղեցին իրեն ներկայանա ամբողջ փառքով, առանց որևէ արատի կամ խորշոմի և կամ ուրիշ թերության, այլ լինի սուրբ և անարատ: ²⁸ Ճիշտ նույն ձևով ամուսինները պարտավոր են սիրել իրենց կանանց՝ իբրև իրենց մարմինը, որովհետև ով սիրում է իր կնոջը, սիրած կլինի իր սեփական մարմինը, ²⁹ քանզի չկա մեկը, որ անտեսի իր մարմինը. ամեն մարդ սնում ու խնամում է իր մարմինը, ինչպես Քրիստոսն է սնում ու խնամում եկեղեցին՝ իր մարմինը, ³⁰ որի անդամներն ենք մենք բոլորս՝ նրա մարմնից ու ոսկորներից: ³¹ Սուրբ գրքում գրված է. «Ահա սրա համար տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և միանա իր կնոջը, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն»:

³² Աստծու ծրագրին կապված մի կարևոր ճշմարտություն է սա, որ ըստ իս վերաբերում է Քրիստոսին և եկեղեցուն: ³³ Բայց նույնը վերաբերում է նաև ձեզնից յուրաքանչյուրին, որովհետև յուրաքանչյուր տղամարդ պետք է իր կնոջը սիրի այնպես, ինչպես իր անձը, և ամեն կին պետք է հարգի իր ամուսնուն:

6

Հորդոր զավակներին և ծնողներին

¹ Զավակնե՛ր, իբրև Տիրոջ հետևորդներ, ձեր պարտականությունն է հնազանդվել ձեր ծնողներին, որովհետև ա՛յդ է ճիշտը: ² «Պատվի՛ր քո հորն ու մորը». սա առաջին պատվիրանն է, որ իրեն կապված մի խոստում ունի.՝ ³ «որպեսզի միշտ բարիք գտնես, և կյանքդ երկար լինի երկրի վրա»:

^{5.19-20} Կդ 3.16-17:

^{5.22} Կդ 3.18, Ա Պտ 3.1:

^{5.25} Կդ 3.19, Ա Պտ 3.7:

^{5.26} «Ջրի լվացումով մաքրի այն». ակնարկությունը մկրտության խորհրդին է վերաբերում:

^{5.31} Ծն 2.24:

^{6.1} Կդ 3.20:

^{6.2-3} Ելք 20.12, Բ Օր. 5.16:

⁴ Իսկ դուք, հայրե՛ր, մի՛ գայրացրեք ձեր զավակներին, այլ մեծացրե՛ք նրանց քրիստոնեական դաստիարակությամբ և կրթությամբ:

Հորդոր ծառաներին և տերերին

⁵ Ծառանե՛ր, հնազա՛նդ եղեք ձեր մարմնավոր տերերին պատկառանքով ու երկյուղածությամբ և անկեղծ սիրով, ինչպես պիտի հնազանդվեիք Քրիստոսին: ⁶ Ձեր ծառայությունն արեք ոչ միայն այն ժամանակ, երբ հսկող աչք է լինում ձեզ վրա, ինչպես անում են նրանք, որոնք ուզում են մարդահաճո երևալ, այլ որպես Քրիստոսի ծառաներ, որոնք սրտանց Աստծու կամքն են կատարում: ⁷ Ծառայեցե՛ք հոժարակամ, ինչպես կծառայեիք Տիրոջը և ոչ թե մարդկանց: ⁸ Իմացե՛ք, որ յուրաքանչյուր մարդ, ծառա լինի թե ազատ, իր արած բարիքի փոխարենը Տիրոջից կատանա:

⁹ Դուք էլ, տերե՛ր, նույն վերաբերմո՛ւնքն ունեցեք նրանց հանդեպ՝ մի կողմ թողնելով խստությունը: Հիշեցե՛ք, որ ձեր ծառաներն էլ, դուք էլ պատկանում եք նույն Տիրոջը, որ երկնքում է, և նա խտրություն չի դնում մարդկանց միջև:

Չարի դեմ պայքարելու զենքերը

¹⁰ Եվ ի վերջո, զորացե՛ք Տիրոջով և նրա ամենակարող զորությամբ: ¹¹ Ձեզ վրա՛ առեք Աստծու սպառազինությունը, որպեսզի կարողանաք դեմ կանգնել Սատանայի հնարքներին,¹² որովհետև մեր պատերազմը մարդկանց դեմ չէ, այլ երկնքի տակ գտնվող չար ոգիների, իշխանությունների ու պետությունների և այս խավար աշխարհի տիրակալների: ¹³ Ուստի առե՛ք Աստծու սպառազինությունը, որպեսզի երբ չար օրը գա, կարողանաք հետ մղել Չարի հարվածները և անեք ամեն ինչ՝ կանգուն մնալու համար: ¹⁴ Հետևաբար պատրա՛ստ եղեք, ամրապնդեցե՛ք ձեր մեջքը ճշմարտությամբ, հագե՛ք արդարությունը զրահի պես՝ ¹⁵ և խաղաղության Ավետարանը քարոզելու պատրաստակամությունը՝ կոշիկի նման: ¹⁶ Եվ այս բոլորի վրա՛ առեք հավատի վահանը, որպեսզի կարողանաք հանգցնել Չարի արձակած բոլոր միացող նետերը: ¹⁷ Առե՛ք նաև փրկության սաղավարտը և Սուրբ Հոգու սուրբ, այսինքն՝ Աստծու խոսքը: ¹⁸ Այս բոլորի հետ մեկտեղ աղոթեցե՛ք, թախանձագին աղոթեցե՛ք տևաբար, Սուրբ Հոգու օգնությամբ: Դրա համար էլ արթուն հսկեցե՛ք, կատարյալ հարատևությամբ, և աղոթեցե՛ք բոլոր հավատացյալ եղբայրների համար: ¹⁹ Աղոթեցե՛ք նաև ինձ համար, որպեսզի Աստված օգնի ինձ և տա իր խոսքը, և ես կարողանամ համարձակորեն պարզել Ավետարանի ծածուկ խորհուրդը, ²⁰ որովհետև թեև այժմ բանտում եմ, բայց միշտ մնում եմ Ավետարանի դեսպանը: Ուստի

^{6.4} Կղ 3.21:

^{6.5-8} Կղ 3.22-25:

^{6.9} ա Կղ 4.1: ք Բ Օր 10.17, Կղ 3.25:

^{6.11} Իմս 5.17:

^{6.12} «Իշխանությունների ու պետությունների ...տիրակալների»։ տե՛ս Հո 8.38 և ծնթ:

^{6.14} ա Ես 11.5: ք Ես 59.17:

^{6.14-17} Իմս 5.18-23:

^{6.15} Ես 52.7:

^{6.17} Ես 59.17:

աղոթեցե՛ք, որ ինձ չպակասի համարձակությունը, որ պետք է ունենամ խոսելու համար:

Վերջին ողջույններ

²¹ Որպեսզի դուք էլ գիտենաք, թե ի՛նչ եմ անում, թող ամեն ինչ ձեզ պատմի Տյուքիկոսը, որ Տիրոջը միացած մեր սիրելի եղբայրն է և հավատարիմ օգնականը:*

²² Հենց դրա համար ձեզ մոտ ուղարկեցի նրան, որպեսզի մեր մասին պետք եղածը հաղորդի ձեզ և հանգստացնի ձեր սրտերը:

²³ Թող Հայր Աստված և Տեր Հիսուս Քրիստոսը հավատակից եղբայրներիդ շնորհեն խաղաղություն և սեր՝ հավատով հանդերձ: ²⁴ Թող Աստծու շնորհը լինի բոլոր նրանց հետ, որոնք անմար սիրով սիրում են մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին:

PHP

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻՆ

Պողոս առաքյալի կողմից փիլիպպեցիներին գրված այս նամակն ուղղված է եվրոպական աշխարհամասի վրա առաքյալի հաստատած առաջին եկեղեցուն՝ հռոմեական Մակեդոնիա նահանգում: Նամակը գրվել է այն ժամանակ, երբ Պողոսը գտնվում էր բանտում: Նրան հակառակվող քրիստոնյաները խնդիրներ էին հարուցում, և Պողոսին խորապես մտահոգում էին եկեղեցում ուսուցանած սխալ վարդապետությունները: Մյուս կողմից, սակայն, նամակում զգացվում է ուրախության և վստահության մի շունչ, որը բացատրվում է Հիսուս Քրիստոսի հանդեպ Պողոսի ունեցած խոր հավատով:

Նամակի գրության անմիջական պատճառը այն շնորհակալական խոսքն է, որ Պողոսն ուղղում է Փիլիպպեի քրիստոնյաներին՝ իրեն ուղարկված նյութական օժանդակության համար, երբ ինքը նեղության մեջ էր: Նա այս առիթն օգտագործում է՝ գոտեպնդելու համար հավատացյալներին, որպեսզի նրանք ևս կորով և քաջություն ունենան, հակառակ իր և հավատացյալների կրած բոլոր դժվարություններին: Խնդրում է նրանց, որ համերաշխ լինեն միմյանց հետ և իրենց անձնական օրինակով ցույց տան Քրիստոսի խոնարհությունը, քան թե առաջնորդվեն եսասիրությամբ և հպարտությամբ: Առաքյալը հիշեցնում է, որ իրենց կյանքը արդյունքն է Քրիստոսի միության մեջ Աստծու շնորհի, որն ստացան հավատի միջոցով և ոչ թե Մովսիսական Օրենքի ծեսերին հնազանդվելով և դրանք կատարելով: Նա խոսում է այն ուրախության, հոգեկան այն երջանկության և խաղաղության մասին, որ Աստված տալիս է նրանց, ովքեր ապրում են Քրիստոսին միացած կյանքով, ուստի և հրավիրում է փիլիպպեցիներին, որ իր օրինակով ընթանան դեպի քրիստոնեական կյանքի նպատակակետը, այն է՝ նմանվել Հիսուս Քրիստոսին (3-րդ գլուխ):

*6.21 Գրծ 20.4, Բ Տմ 4.12:

*6.21-22 Կղ 4.7-8:

*6.24 Մի շարք ձեռ. ավելացնում են «Ամեն»:

Այս նամակը հատկանշվում է այն ուրախությամբ, վստահությամբ, միությանբ և հարատևությամբ, որ գոյություն ունի քրիստոնեական հավատի և կյանքի մեջ: Նամակում արտացոլված է նաև այն համակրանքը, որ Պողոս առաքյալը տածում է Փիլիպպեի եկեղեցու հանդեպ:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-11):
- Պողոսի անձնական կացությունը (1.12-26):
- Քրիստոսով կյանք (1.27-2.18):
- Ծրագրեր Տիմոթեոսի և Եպաֆրոդիտոսի համար (2.19-30):
- Զգուշացում թշնամիներից և վտանգներից (3.1-4.9):
- Պողոսը և նրա փիլիպպեցի բարեկամները (4.10-20):
- Վերջաբան (4.21-23):

1

Ողջուն

¹ Պողոսը և Տիմոթեոսը՝ Հիսուս Քրիստոսի ծառաները, գրում են ձեզ՝ Հիսուս Քրիստոսին միացած բոլոր հավատացյալներիդ, որ բնակվում եք Փիլիպպեի կողմերում, ինչպես նաև եպիսկոպոսներին և սարկավագներին: ² Թող Աստված՝ մեր Հայրը, և Տեր Հիսուս Քրիստոսը շնորհ և խաղաղություն պարգևեն ձեզ:

Պողոսի աղոթքը փիլիպպեցիների համար

³ Ամեն անգամ, երբ հիշում եմ ձեզ, գոհություն եմ հայտնում իմ Աստծուն: ⁴ Ամեն անգամ, երբ աղոթում եմ ձեր բոլորի համար, ուրախությամբ եմ աղոթում, ⁵ որովհետև առաջին օրվանից մինչև այժմ դուք ձեր մասնակցությունը բերեցիք Ավետարանի քարոզչության գործին: ⁶ Եվ վստահ եմ, թե Աստված, որ այդ բարի գործն սկսեց ձեր մեջ, այն կհասցնի իր կատարումին, մինչև որ գա Հիսուս Քրիստոսի օրը: ⁷ Երավունք եմ համարում ինձ այսպես խորհել ձեր բոլորի մասին, որովհետև ես ձեզ կրում եմ իմ սրտում, որովհետև բոլորդ էլ մասնակից եղաք ինձ վիճակված շնորհին, լինի իմ բանտարկության ընթացքում, թե այն ժամանակ, երբ ազատ վիճակում պաշտպանում և հաստատում էի Ավետարանը: ⁸ Միայն Աստված գիտի, թե որքա՛ն եմ կարոտել ձեզ բոլորիդ Հիսուս Քրիստոսի գործով:

⁹ Իմ աղոթքն է, որ ձեր սերն ավելի աճի աստվածգիտությամբ և կատարյալ դատողությամբ, ¹⁰ որպեսզի կարողանաք ընտրել լավը, և Քրիստոսն իր գալստյան օրը ձեզ մաքուր և անբասիր գտնի, ¹¹ ու դուք, Հիսուս Քրիստոսի միջոցով արդար գործերով հարստացած, պատճառ լինեք, որ Աստված փառավորվի և գովաբանվի:

Ինձ համար կյանքը Քրիստոսն է

^{1.1} Գրծ 16.12:

^{1.7} Պողոսի բանտարկության վայրը ճշգրիտ չգիտենք:

¹² Ուզում եմ, որ գիտենաք, եղբայրներ՝ ը, թե իմ գլխին եկած բոլոր պատահարները ավելի ու ավելի նպաստեցին Ավետարանի տարածմանը: ¹³ Թե՛ կայսերական պալատում և թե՛ այլ շրջանակներում բոլորն իմացան, որ ես բանտարկված եմ Քրիստոսի համար: ¹⁴ Իմ բանտարկությունը Տիրոջը միացած բազմաթիվ եղբայրների նաև քաջություն ներշնչեց և համարձակություն տվեց, որ ավելի անվախ քարոզեն Աստծու խոսքը:

¹⁵ Կան այնպիսիները, որոնք նախանձի և հակառակության համար են քարոզում Քրիստոսին, բայց ուրիշներն այդ անում են սիրահոժար կերպով: ¹⁶ Նրանք, որ սիրուց մղված են քարոզում, այդպես են անում, որովհետև գիտեն, որ ես բանտարկված եմ Ավետարանի պաշտպանության համար: ¹⁷ Իսկ նրանք, որ Քրիստոսին քարոզում են հակառակասիրությունից մղված, անշուշտ բարի նպատակով չեն անում այդ, այլ կարծում են, թե այդ ձևով իմ բանտարկության մեջ առավել վիշտ են պատճառում ինձ: ¹⁸ Սակայն ի՞նչ նշանակություն ունեն դրանք. շարժառիթն ինչ էլ լինի, պատրվակ թե անկեղծ ցանկություն, բավական է, որ Քրիստոսը քարոզվի, և ես ուրախ եմ դրա համար, ուրախ էլ կմնամ: ¹⁹ որովհետև գիտեմ, որ ի վերջո դա ծառայելու է իմ փրկությանը, ձեր աղոթքների շնորհիվ, եթե Հիսուս Քրիստոսի Հոգին շնորհի: ²⁰ Ակնկալություն և հույս ունեմ, որ ամոթով չեմ մնա, այլ ինչպես միշտ, այս անգամ ևս համարձակությամբ կպաշտպանեմ իմ հավատը, այնպես որ Քրիստոսը փառավորվի ինձնով, լինի դա իմ ապրելով կամ մեռնելով: ²¹ Որովհետև ինձ համար կյանքը Քրիստոսն է, ուստի և մեռնել, նշանակում է՝ շահել կյանքը: ²² Իսկ եթե այս մարմնավոր կյանքը պատճառ լինի, որ իմ գործով նոր արդյունքներ տամ, չգիտեմ, թե ո՞ր մեկն ընտրեմ: ²³ Մնացել եմ երկու սրի արանքում. մի կողմից ցանկանում եմ դուրս գալ այս կյանքից և Քրիստոսի հետ լինել, ինչը որ անհամեմատ ավելի նախընտրելի է, ²⁴ բայց մյուս կողմից՝ ձեր սիրո համար ավելի կարևոր եմ համարում մնալ այս կյանքի մեջ: ²⁵ Եվ համոզված եմ ու գիտեմ, որ պե՛տք է մնամ. պետք է մնամ ձեզ օգնելու համար, որ զարգանաք և առավել ուրախություն գտնեք ձեր հավատի մեջ, ²⁶ որպեսզի երբ նորից գամ ձեզ մոտ, Հիսուս Քրիստոսին միացած լինելու համար ավելի պատճառ ունենաք ինձնով հպարտ լինելու:

Պայքար Ավետարանի հավատի համար

²⁷ Արդ, նայեցե՛ք, որ Քրիստոսի Ավետարանին վայել ձևով ապրեք, որպեսզի եթե կարողանամ գալ, անձամբ տեսնեմ, իսկ եթե չկարողանամ գալ, իմանամ ձեր մասին, թե հաստատուն եք մնում, իբրև մեկ շունչ, մեկ հոգի, և միասնաբար պայքարում եք Ավետարանի հավատի համար: ²⁸ Բնավ չվախենաք հակառակորդներից. այդ հակառակությունը նրանց կորստի և ձեր փրկության ապացույցն է: ²⁹ Եվ դա Աստծուց է, որովհետև Աստված ոչ միայն Քրիստոսին հավատալու շնորհ տվեց ձեզ, այլ նաև նրա համար չարչարվելու շնորհը, ³⁰ որպեսզի մղեք այն նույն պատերազմը, որ ես եմ մղում, ինչպես տեսաք անցյալում և հիմա էլ լսում եք:

^{1.13} Գրծ 28.30:

^{1.30} Գրծ 16.19-40:

Քրիստոսի խոնարհությունը՝ մեզ օրինակ

¹ Արդ, եթե Քրիստոսին միացած լինելու մեջ մխիթարություն կա, եթե նրա սերն սփռվում է, եթե Սուրբ Հոգին մարդկանց հաղորդակից է անում միմյանց՝ իրար նկատմամբ գթասիրտ ու ողորմած դարձնելով նրանց, ² ապա կատարյալ արեք իմ ուրախությունը՝ միաբանվելով, միմյանց հանդեպ նույն սերն ունենալով և համերաշխ ու համախոհ ապրելով: ³ Մի՛ արեք որևէ բան, որ հակառակասիրությունից կամ փառասիրությունից մղված լինի, այլ խոնարհ ոգով ձեր ընկերներին ավելի լա՛վ համարեցեք, քան ինքներդ ձեզ: ⁴ Դուք միայն ձեր մասին մի՛ մտածեք, այլ նաև ձեր ընկերոջ մասին:

⁵ Ձեզնից յուրաքանչյուրն իր և ուրիշների մասին թող խորհի այն, ինչ որ տեսնում է Հիսուս Քրիստոսի մեջ,

⁶ որ թեև Աստված էր բնությամբ,

և Աստծուն հավասար լինել հռչակվելը

նրա համար Աստծու պատիվը հափշտակել չէր նշանակում,*

⁷ բայց կամովին ինքն իրեն մերկացրեց այս պատվից՝

ծառայական մեր բնությունն իր վրա վերցնելով,

և մարդկանց պես եղավ

ու մարդկային կերպարանքով ճանաչվեց:

⁸ Խոնարհեցրեց ինքն իրեն,

հնազանդվեց Աստծուն՝ հանձն առնելով մահը,

և այն էլ՝ մահը խաչի վրա:

⁹ Դրա համար էլ Աստված

է՛լ ավելի բարձրացրեց նրան,

նրան տվեց այն անունը,

որ վեր է բոլոր անուններից.

¹⁰ որպեսզի Հիսուսի անվան առաջ ծնկի գան բոլորը,

Չ.6 «Որ թեև Աստված էր...հափշտակել չէր նշանակում» կամ «որ բնությամբ Աստված լինելով՝ Աստծուն հավասար լինելու պատիվը հափշտակել չխորհեց»: Այս հմր հաստատում է Քրիստոսի աստվածությունը և նրա հավասարությունը Հոր հետ՝ իր բոլոր հատկանիշներով: «Հափշտակել չխորհեց» բացատրությունը ակնարկում է նախ Մատանային, որն ուզեց Աստծու դիրքն ու պատիվը հափշտակել (հմմտ Ես 14.13-14), ապա նաև առաջին մարդուն, որը Մատանայի դրդումով ձգտեց աստվածանալ և ընկավ մեղքի մեջ (հմմտ Ծն 3.5-7):

Չ.6-11 Բանաստեղծական տողատումով տրված այս համարները (6-11) հավանաբար քրիստոնեական հնագույն մի երգի պատառիկ են:

Չ.7 «Ինքն իրեն մերկացրեց». բոց՝ «ունայնացրեց»: Իր մարդեղության մեջ Որդին երբեք չդադարեց Աստված լինելուց, բայց ժամանակավորապես մերկացավ իր աստվածային փառքից (հմմտ Հհ 17.5) և հանձն առավ մարդկային բնությունն ու մարդկային պայմանները և մարդկանց կատարյալ օրինակ դառնալու համար «ծառայի» նման հնազանդվեց Հոր կամքին: «Մարդկային կերպարանքով» կերպարանքը լոկ երևույթ չէ, այլ իրական բնությունն իր բոլոր հատկանիշներով, բացի մեղքից (տե՛ս Բ Կր 5.21: Եբր 4.15, 7.26: Ա Պտ 2.28), որպեսզի վերացնի մեր մեղքերը (Ա Հհ 3.5):

երկնավորներն ու երկրավորները
և սանդարամետականները,¹¹
և ամեն լեզու դավանի,
որ Հիսուս Քրիստոսը «Տեր» է՝
Հայր Աստծուն փառավորելու համար:

Աստղերի նման փայլեցեք աշխարհում

¹² Հետևաբար, իմ սիրելիներ՝ ր, դուք, որ միշտ հնազանդ եք եղել ինձ, երբ ներկա եմ
եղել ձեր մեջ, այժմ, երբ հեռու եմ ձեզնից, առավել լ ևս հնազանդ եղեք և երկյուղած
բարեպաշտությամբ աշխատեցե՛ք ձեր փրկության համար: ¹³ Որովհետև ինչ որ դուք
կամենում եք ու կատարում, Աստված ինքն է ներգործում ձեզ վրա, որպեսզի շարժվեք
իր կամքի համաձայն:

¹⁴ Ինչ որ անում եք, արե՛ք առանց տրտունջի և առարկության, ¹⁵ որպեսզի լինեք
անմեղադրելի և անարատ, Աստծու իսկակա՛ն որդիներ, որոնք անբիծ վարքով
ապրում են ապականված և այլասերված մի հասարակության մեջ: Նրանց մեջ եղեք
աստղերի նման, որ փայլում են երկնակամարում,¹⁶ կյանքի պատգամը ամուր
պահելով, ինչ որ իմ պարծանքը պիտի լինի Քրիստոսի դատաստանի օրը, որ ես իզուր
չեմ վազել և իզուր չեմ աշխատել:

¹⁷ Հիմա, եթե նույնիսկ իմ կյանքը տամ ձեր հավատի համար, որ դուք իբրև գոհ
Աստծուն ընծայեք, գոհ կլինեմ և մասնակից բոլորիդ ուրախությանը: ¹⁸ Դուք էլ
նույնպես գո՛հ եղեք և մասնակից իմ ուրախությանը:

Տիմոթեոսի և Եպաֆրոդիտոսի առաքելությունը

¹⁹ Կուզեի ձեզնից լուր ստանալ, որպեսզի իմ սիրտն էլ հանգիստ լինի: Ահա թե ինչու,
եթե Տեր Հիսուսը կամենա, հույս ունեմ շուտով Տիմոթեոսին ուղարկել ձեզ մոտ,
²⁰ որովհետև նա իմ միակ սրտակիցն է, որ հարազատի նման մտահոգվում է ձեզնով:
²¹ Բոլոր մյուսները մտահոգված են իրենք իրենց գործերով և ոչ թե Հիսուս Քրիստոսի
գործով: ²² Նրա հավատարմությունը դուք էլ գիտեք, որովհետև ինչպես զավակը պիտի
օգնեք իր հորը, նա այդպես աշխատեց ինձ հետ Ավետարանի համար: ²³ Ուստի հենց
որ իմ կացությունը հստականա, մտադիր եմ նրա՛ն ուղարկել: ²⁴ Բայց հույս ունեմ
Տիրոջով, որ շուտով ես էլ անձամբ կգամ ձեզ մոտ:

²⁵ Անհրաժեշտ համարեցի ձեզ մոտ ուղարկել մեր եղբորը՝ Եպաֆրոդիտոսին, որին
դուք ուղարկել էիք իմ կարիքները հոգալու համար: Նա իմ կողքին աշխատեց ու
պայքարեց Քրիստոսի Ավետարանի համար: ²⁶ Նա էլ է շատ կարտուել ձեզ բոլորիդ և

^{2.10} «Սանդարամետ», որ նշանակում է երկրի խորագույն անդունդները կամ ստորերկրյա վիհը. մեկ
այլ անունն է մեռելների աշխարհի (տե՛ս Բառարանի **Դժոխք** բառահոդվածը), ըստ որի
սանդարամետականները բոլոր մեռելներն են:

^{2.10-11} Ես 45.23 [LXX]:

^{2.15} Բ Օր 32.5:

^{2.16} «Կյանքի պատգամը ամուր պահելով» կամ «կյանքի պատգամը տալով նրանց»:

մտահոգված էր, քանի որ լսել էիք իր հիվանդության մասին:՝²⁷ Եվ իսկապես, նա հիվանդացել էր մահամերձ լինելու աստիճան, բայց Աստված ողորմեց նրան. և ոչ միայն նրան, այլ ինձ էլ ողորմեց, որպեսզի իմ տրտմության վրա նոր տրտմություն չունենամ:՝²⁸ Ահա թե ինչու շտապ ուղարկեցի նրան, որպեսզի նրան վերստին տեսնելով՝ ուրախանաք, և իմ տրտմությունն էլ փարատվի:՝²⁹ Ուստի Տիրոջով ընդունեցե՛ք նրան ամենայն ուրախությամբ և պատվեցե՛ք այդպիսիներին,՝³⁰ քանի որ նա Տիրոջ գործի համար կյանքը վտանգի ենթարկեց և մինչև մահվան դուռը հասավ, որպեսզի ձեր փոխարեն ինքը հոգա իմ կարիքները:

3

Փրկության ճշմարիտ ճանապարհը

¹ Ուրեմն, իմ եղբայրնե՛ր, ուրախացե՛ք Տիրոջով: Նույն բաները գրելն ինձ համար ձանձրալի չէ, բայց ձեզ հաստատում է ճշմարտության մեջ:

² Զգուշացե՛ք այն մարդկանցից, այն շներից, որոնք չարիք են սերմանում՝ ստիպելով ձեզ, որ թլփատվեք:՝³ Իսկական թլփատվածները մենք ենք, որովհետև Աստծու Հոգով լցված՝ պաշտամունք ենք կատարում և միայն Հիսուս Քրիստոսին միացած լինելով ենք պարծենում և ոչ թե Օրենքի գործադրությամբ կամ Աբրահամի մարմնավոր զավակը լինելով:՝⁴ Եթե դրանք բավարար լինեին փրկվելու համար, ինձ ոչինչ չէր պակասի: Եվ եթե մեկը կարծում է, թե ինքը մարմնական այդ կապին կարող է վստահել, ես առավել լ ևս կարող եմ,՝⁵ քանի որ ութերորդ օրը թլփատված մի իսրայելացի եմ, Բենիամինի ցեղից, զտարյուն եբրայեցի և օրինապահ փարիսեցի:՝⁶ Այնքան նախանձախնդիր էի, որ հալածում էի Քրիստոսի եկեղեցին. և արդար էի այնքան, որքան Օրենքի անթերի գործադրությունը կարող է տալ:՝⁷ Մակայն այս բոլորը, որ ես մի ժամանակ առավելություն էի համարում, այժմ համարում եմ վնաս՝ Քրիստոսի սիրո համար:՝⁸ Եվ արդարև, ես ամեն բան վնաս եմ համարում՝ համեմատած այն գերազանց շահի հետ, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ճանաչումն է: Այդ գիտությունն ունենալու համար ամեն ինչ թողեցի՝ ոչնչություն համարելով դրանք, որպեսզի շահեմ Քրիստոսին՝⁹ և կատարելապես միանամ նրան: Այնպես որ իմ արդարությունն այլևս չի գալիս Օրենքի գործադրությունից, այլ Քրիստոսի հանդեպ իմ ունեցած հավատից, և այդ արդարությունը Աստծո՛ւց եկած արդարությունն է՝ հիմնված հավատի վրա:՝¹⁰ Այժմ իմ միակ փափագն է ճանաչել Քրիստոսին, նրա հարության գորությունը և մասնակից դառնալ նրա չարչարանքներին՝ ինձ վրա վերցնելով նրա մահվան օրինակը,՝¹¹ որպեսզի ես էլ արժանի լինեմ մեռելներից հարություն առնելուն:

^{2.26} «Շատ կարոտել». մի շարք ձեռ. ավելացնում են «և ուզում է տեսնել»:

^{3.3} «Աստծու հոգով [լցված] պաշտամունք ենք կատարում». մի շարք ձեռ. ունեն «հոգով պաշտում ենք Աստծուն»:

^{3.5} ա Հո 11.1: ք Գրծ 23.6, 26.5:

^{3.6} Գրծ 8.3, 22.4, 26.9-11:

Առաջ դեպի նպատակակետը

¹² Չեմ ասում, թե արդեն հաջողել եմ և կատարելության հասել, բայց ձգտում եմ, որ հասնեմ, որովհետև հենց դրա համար Հիսուս Քրիստոսն ինձ պահեց: ¹³ Եղբայրներ, ես ինձ դեռևս կատարելության հասած չեմ համարում, բայց աշխատում եմ անցյալը մոռանալ ու նայել գալիքին: ¹⁴ ուշադիր վազում եմ դեպի նպատակակետը, որպեսզի իբրև մրցանակ ստանամ հավիտենական կյանքը, որին Աստված հրավիրում է մեզ Հիսուս Քրիստոսով:

¹⁵ Արդ, մենք, որ կատարյալ ենք, նույն ձևով մտածենք: Իսկ եթե դուք որոշ կետերի շուրջ այլ կերպ եք մտածում, Աստված ինքը կլուսաբանի ձեզ: ¹⁶ Ամեն դեպքում միասնաբար քայլենք այն կանոններով, որոնցով ընթացանք մինչև այժմ:

¹⁷ Եղբայրներ, նմանվեցե՛ք ինձ և հետևեցե՛ք նրանց, որոնք ձեզ տված մեր օրինակով են ընթանում,* ¹⁸ որովհետև, ինչպես հաճախ ասում էի և այժմ էլ լալով եմ ասում, մեր մեջ կան շատերը, որոնց կյանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: ¹⁹ Նրանց վախճանը կորուստ է, որովհետև նրանց Աստվածը իրենց փորն է: Նրանք հպարտանում են ամոթալի բաներով և միայն երկրավոր բաների մասին են մտածում: ²⁰ Մենք, սակայն, երկնքի քաղաքացիներ ենք և սպասում ենք, որ այնտեղից գա մեր Փրկիչը՝ Տեր Հիսուս Քրիստոսը, ²¹ որ կերպարանափոխելու է մեր մահկանացու մարմինները և դրանք դարձնելու է իր մարմնի նման փառավոր, իր այն գործությամբ, որով կարո՞ղ է ամեն բան ենթարկել իր իշխանությանը:

4

Ուրախ լինելու հորդոր և թելադրանքներ

¹ Ուստի, սիրելի՛ և կարոտալի՛ եղբայրներ, դուք, որ իմ ուրախությունն եք ու պսակը, այսպես ամբողջով միացա՛ձ մնացեք Տիրոջը, սիրելիներ:՝

² Եվողիային և Սինտիքին աղաչում եմ ու թելադրում, որ հաշտվեն միմյանց հետ, քանի որ միացած են Տիրոջը: ³ Դու էլ, ո՛վ իմ հավատարիմ լծակից, խնդրում եմ, որ օգնես այդ երկու կանանց, որովհետև նրանք պայքարեցին ինձ հետ Ավետարանի տարածման համար Կղեմեսի և մյուս գործակիցների հետ միասին, որոնց անուններն արձանագրված են կյանքի գրքում:՝

⁴ Միշտ ուրա՛խ եղեք Տիրոջով. նորից եմ ասում՝ ուրա՛խ եղեք: ⁵ Բոլորի հանդեպ ազնի՛վ եղեք: Շուտով գալիս է Տերը: ⁶ Թող որևէ բան չմտահոգի ձեզ, այլ ձեր աղոթքների և աղաչանքների մեջ գոհունակ սրտով միշտ Աստծուց խնդրեցեք այն, ինչի կարիքն էք զգում, ⁷ և այն ժամանակ Աստծու խաղաղությունը, որ մտքով

Յ.17 Ա Կր 4.16, 11.1:

Յ.19 «Նրանց Աստվածը իրենց փորն է»: Պողոսը շատակերության մասին չի խոսում, այլ վստահորեն ակնարկում է մաքուր և անմաքուր ուտելիքներին վերաբերող երբայական կանոնները պաշտպանողներին (հմմտ Հռ 16.18, Կղ 2.16, 20-21): «Նրանք հպարտանում են ամոթալի բաներով». ակնարկությունը հավանաբար վերաբերում է թլփատությանը (հմմտ Գղ 6.13, 15):

Յ.43 «Ո՞վ իմ հավատարիմ լծակից». հայտնի չէ, թե Պողոսն ո՞ւմ նկատի ունի: Բայց հնարավոր է նաև, ինչպես ենթադրում են ոմանք, որ «լծակից» բառի հունարենը (Սիզիկոս) հատուկ անուն լինի:

հնարավոր չէ հասկանալ, խաղաղ կպահի ձեր սրտերն ու մտքերը, որոնք միացած են Հիսուս Քրիստոսին:

⁸ Եվ վերջապես, եղբայրներ՝ ը, խորհեցեք ա՛յն բաների մասին, որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբավ, առաքինի և գովելի:

⁹ Գործադրեցե՛ք այն, ինչ որ սովորեցիք, ընդունեցիք ու լսեցիք ինձնից և տեսաք իմ մեջ, և Աստված, որ խաղաղություն է տալիս, ձեզ հետ կլինի:

Շնորհակալություններ նյութական օգնության համար

¹⁰ Մեծապես ուրախ եղա Տիրոջով, որ վերջապես ձեր միտն ընկա, և դուք հետաքրքրվեցիք ինձնով: Գիտեմ, որ առաջ էլ էիք հետաքրքրվում, բայց առիթ չէիք ունենում այն արտահայտելու: ¹¹ Սրանով չեմ ուզում ասել, թե մի բանի կարոտ եմ, որովհետև ես սովոր եմ գոհանալ իմ ունեցածով: ¹² Չքավորություն էլ եմ ճանաչել, առատություն էլ եմ տեսել: Վարժվել եմ ամեն տեսակ կացությունների և պայմանների՝ թե՛ կուշտ լինելու և թե՛ քաղցած մնալու, թե՛ առատության և թե՛ չքավորության: ¹³ Ամեն ինչ կարող եմ տանել Քրիստոսի շնորհիվ, որ գորացրեց ինձ: ¹⁴ Բայց լավ արեցիք, որ իմ նեղության մեջ օգնեցիք ինձ: ¹⁵ Դուք էլ գիտեք, ո՛վ փրկիպպեցիներ, որ սկզբում, երբ ես Մակեդոնիա եկա՝ Ավետարանը քարոզելու, ձեզնից բացի ուրիշ որևէ եկեղեցի չմտածեց իր ստացած հոգևոր բարիքների փոխարեն ինձ նյութապես օգնելու մասին: ¹⁶ մինչդեռ դուք մեկ-երկու անգամ մինչև իսկ Թեսալոնիկե ուղարկեցիք այն, ինչ որ պետք էր ինձ: ¹⁷ Ոչ թե ձեր տվածի մասին եմ մտածում, այլ այն վարձի մասին, որ ավելանալու է ձեր հաշվին, ¹⁸ որովհետև ես ամեն ինչ ունեմ և ավելիով ունեմ: Եպաֆրոդիտոսի ձեռքով ստացա ձեր առատ նվերները, որոնք ամեն խնկից ավելի անուշահոտ են և ամեն գոհից ավելի ընդունելի Աստծուն՝ նրա կամքին համաձայն լինելով: ¹⁹ Թող առատաձեռն Աստված ի՛նքը փառավորապես հոգա ձեր բոլոր կարիքները Հիսուս Քրիստոսի ձեռքով: ²⁰ Փա որ Աստծուն՝ մեր Հորը, հավիտյանս հավիտենից: Ամեն:

Վերջին ողջույններ

²¹ Ողջունե՛ք Հիսուս Քրիստոսին միացած բոլոր հավատացյալներին: ²² Ինձ հետ եղող եղբայրները բարևում են ձեզ: ²³ Ձեզ բարևում են նաև այստեղի բոլոր հավատացյալները, մանավանդ նրանք, որ կայսրի ծառայության մեջ են:՝

²⁴ Տեր Հիսուս Քրիստոսն իր շնորհը թող պարգևի ձեր բոլորին: Ամեն:

COL

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻՆ

^{4.15-16} Բ Կր 11.9:

^{4.16} Գրծ 17.1:

^{4.18} Ելք 29.18:

^{4.23} «Նրանք, որ կայսրի ծառայության մեջ են». բոց՝ «նրանք, որ կայսրի տնից են» (հմմտ 1.13): Թեև այս բացատրությունը կարող է մտածել տալ, թե Պողոսը Հռոմից է գրում, բայց կարող է հասկացվել նաև կայսրի ծառայության մեջ եղողների համար, որոնք բնակվում էին որևէ տեղ, որտեղ հռոմեացի կառավարիչ էր նստում:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻՆ

Այս նամակն ուղղված է Կողոսայի եկեղեցուն: Կողոսա քաղաքը գտնվում էր Փոքր Ասիայում, Եփեսոսից արևելք: Թեև Պողոսն ինքը չէր հաստատել այնտեղի եկեղեցին, բայց այն հաստատվել էր նրա աշակերտի՝ կողոսացի Եպաֆրասի կողմից (1.7, 4.12), ուստի Պողոսն իրեն մի տեսակ պատասխանատու էր զգում այդ եկեղեցու նկատմամբ և Եփեսոսից այնտեղ էր ուղարկում իր գործակիցներին: Նա լսել էր, որ Կողոսայում կային սխալ վարդապետություններ ուսուցանող մարդիկ, որոնք ասում էին, թե Աստծուն ճանաչելու և ամբողջական փրկություն ստանալու համար մարդ պետք է պաշտամունք մատուցի մի շարք «հրեշտակների, իշխանությունների ու պետությունների»: Այս մարդիկ ուսուցանում էին նաև, թե պետք է ենթարկվել հատուկ ծեսերի, ինչպես՝ թլփատության, և խիստ օրենքներ պահել ուտելիքի և այլ հարցերի վերաբերյալ:

Պողոսը կողոսացիներին այս նամակը գրում է այն նպատակով, որ նրանց տա քրիստոնեական ճշմարիտ պատգամը: Նրա մտածումների հիմնական գաղափարն այն է, որ Հիսուս Քրիստոսն ինքն է տալիս ամբողջական փրկությունը, և որ այլ տեսակի հավատալիքներ ու ձևակերպություններ հավատացյալին հեռացնում են նրանից: Աստված Հիսուս Քրիստոսով ստեղծեց աշխարհը և նրանով իրեն է վերադարձնում մարդկությանը: Նա բարձր է երկնային հոգեղեն բոլոր իշխանություններից և միակ գլուխն է եկեղեցու: Մենք Քրիստոսի հետ մեր միությամբ միայն ունենք փրկության հույսը:

Այնուհետև, մի շարք մոլորեցուցիչների սխալներից զգուշացնելուց հետո Պողոսն իր նամակի վերջին բաժնում մատնանշում է այն նոր ապրելակերպն ու նոր հարաբերությունը, որ Քրիստոսին հավատացող մարդիկ պետք է ունենան իրար նկատմամբ:

Կողոսացիներին ուղղված այս նամակը մի տեսակ կոչ է և զգուշացում բոլոր ժամանակների աղանդավորների դեմ, որոնք Քրիստոսի աստվածությունն ուրանալով՝ մարդկանց զգում են իրադրությունների ստրկության տակ, որոնցից մեզ ազատագրել ուզեց Քրիստոսը:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-8):
- Քրիստոսի բնությունը և նրա կատարած գործը (1.9-2.19):
- Քրիստոսով նոր կյանք (2.20-4.6):
- Վերջաբան (4.7-18):

1

Ողջույն

¹ Ես՝ Պողոսս, Աստծու կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալս, և Տիմոթեոսը՝ մեր եղբայրը, ² գրում ենք ձեզ՝ Կողոսայում գտնվող ընտրյալներիդ, Քրիստոսին միացած

հավատացյալ եղբայրներին: Թող Աստված՝ մեր Հայրը, և Տեր Հիսուս Քրիստոսը շնորհ և խաղաղություն պարգևեն ձեզ:

Երախտագիտական աղոթք

³ Միշտ աղոթում ենք ձեզ համար և շնորհակալություն հայտնում Աստծուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հորը, ⁴ որովհետև լսեցինք Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատի և Աստծու բոլոր ընտրյալների հանդեպ ձեր սիրո մասին: ⁵ Այդ հավատն ու սերը դուք ցուցաբերում եք հավիտենական կյանքի հույսով, որ վերապահված է ձեզ երկնքում: Այդ մասին լսեցինք սկզբից իսկ, Ավետարանի ճշմարիտ պատգամից, ⁶ որ ձեզ ևս հասավ, և թե ինչպես այն տարածվում և իր արդյունքներն է տալիս ամբողջ աշխարհում, ինչպես իր արդյունքը տվեց նաև ձեր մեջ՝ սկսած այն օրից, երբ դուք լսեցիք և ճշմարտապես ճանաչեցիք Աստծու շնորհը: ⁷ Դա ձեզ սովորեցնողը Եպաֆրասը եղավ՝ մեր սիրելի ծառայակիցը, որ հավատարմորեն ծառայում է Հիսուսին՝ ձեզ համար: ⁸ Նա էր, որ մեզ պատմեց ձեր սիրո մասին, որը Մուրբ Հոգու պարգևն է ձեզ:

⁹ Ահա թե ինչու այն օրվանից, երբ լսեցինք այդ, անդադար աղոթում ենք ձեզ համար և խնդրում Աստծուն, որ ձեզ տա իր կամքի կատարյալ գիտությունը, և դուք լցվեք ամբողջական իմաստությամբ ու հոգևոր իմացականությամբ, ¹⁰ որպեսզի ապրեք Տիրոջը վայել ձեռքով, ամբողջապես նրա կամքի համաձայն, պտղաբեր դառնաք ամեն տեսակ բարի գործերով և աճեք Աստծու գիտությամբ: ¹¹ Այդպիսով դուք ավելի գորացած կլինեք նրա աստվածային փառքի բովանդակ գործությամբ, որը ձեզ կարող կդարձնի մեծ համբերությամբ և ուրախությամբ տանելու ամեն նեղություն:

¹² Շնորհակալություն հայտնեցեք Հորը՝ Աստծուն, որ մեզ արժանացրեց լույսի թագավորության մեջ բնակվող իր ընտրյալների վիճակին մասնակից դառնալու: ¹³ Նա մեզ ազատեց խավարի իշխանությունից և բերեց իր սիրելի Որդու իշխանության տակ: ¹⁴ Եվ Որդին փրկեց մեզ՝ իր գոհագործական մահվամբ թողություն տալով մեր մեղքերին:

Օրհներգ Քրիստոսին

¹⁵ Քրիստոսն ինքը տեսանելի պատկերն է աներևույթ Աստծու, Հոր Որդին՝ ծնված բոլոր ստեղծվածներից առաջ: ¹⁶ որովհետև Աստված նրանով ստեղծեց ամեն բան երկնքում թե երկրի վրա,

^{1.2} Մի շարք ձեռ. չունեն «և Տեր Հիսուս Քրիստոսը»:

^{1.7} «Հիսուսին» բառի փոխարեն հուն. ունի «Քրիստոսին»:

^{1.7} Կդ 4.12, Փմ 23:

^{1.12} «Հորը՝ Աստծուն». շատ ձեռ. չունեն «Աստծուն» բառը: «Արժանացրեց». սակավաթիվ ձեռ. այս բառի փոխարեն ունեն «կոչեց» կամ «կանչեց»:

^{1.14} Եփ 1.7:

^{1.15} Իմս 7.26:

երևելի թե աներևույթ,
որոնց շարքին են ոգեղեն աշխարհի
գահակալներն ու տերությունները, պետություններն ու իշխանությունները:
Նրա ձեռքով և նրա համար ստեղծվեց ամեն ինչ:^{*}

¹⁷ Նրա գոյությունն ամեն բանից առաջ է,
և ամեն բան նրանով է գոյացել:

¹⁸ Նա է գլուխը մարմնի, որ եկեղեցին է:
Նա է սկիզբը,
որ անդրանիկ ծնունդը եղավ մեռելներից,
որպեսզի ինքն առաջնությունն ունենա
ամեն բանի մեջ.^{*}

¹⁹ քանզի Հայրն ուզեց, որ Քրիստոսն
իր մեջ ունենա լիությունն աստվածային բնության:^{*}

²⁰ Նրա ձեռքով ուզեց իր հետ հաշտեցնել ամեն բան
երկնքում թե երկրի վրա՝
խաղաղություն հաստատելով
խաչի վրա նրա մահվամբ:^{*}

Քրիստոսը հաշտարար

²¹ Դուք էլ մի ժամանակ օտարացել էիք Աստծուց և թշնամացել նրան՝ ձեր
մտածելակերպով ու չար գործերով: ²² Բայց այժմ Քրիստոսն իր մարդեղությամբ և
մահվամբ ձեզ հաշտեցրեց Աստծու հետ, որպեսզի դուք նրան ներկայանաք մաքուր,
անբիծ և անարատ: ²³ Ուստի հարատևեցե՛ք ձեր հավատի մեջ՝ այն հաստատելով
ամուր հիմքերի վրա, անխախտ պահելով այն հույսը, որ ունեցաք Ավետարանի
քարոզչությունը լսելով: Ես՝ Պողոսս, ինքս էլ ծառա եմ այդ Ավետարանին, որը
քարոզվում է երկնքի տակ գտնվող բոլոր արարածներին:

Պողոսի ծառայությունն ի նպաստ եկեղեցու

²⁴ Եվ հիմա ուրախ եմ իմ չարչարանքների մեջ, որ կրում եմ ձեզ համար, որովհետև
Քրիստոսի կրած նեղությունների պակասը լրացնում եմ իմ մարմնի մեջ՝ նրա՝ մարմնի
համար, որ եկեղեցին է: ²⁵ Եվ ես ծառա եղա եկեղեցուն՝ իբրև Աստծու կողմից տրված
պարտականություն, որպեսզի իր ամբողջության մեջ ձեզ քարոզեմ Աստծու խոսքը,^{*}
²⁶ փրկության այն ճրագիրը, որ Աստված անցյալ բոլոր դարերում ծածուկ էր պահել
մարդկության բոլոր սերունդներից, և որ այժմ հայտնեց իր ընտրյալներին: ²⁷ Աստված

^{*1.16} «[Ոգեղեն աշխարհի] գահակալներն ու տերությունները, պետություններն ու իշխանությունները».
տե՛ս Հո 8.38 և ծնթ:

^{*1.18} Եփ 1.22-23:

^{*1.19} Հուն. չունի «աստվածային բնության» բառերը:

^{*1.20} «Մահվամբ». բոց՝ «արյամբ»:

^{*1.20} Եփ 2.16:

^{*1.25} «Եվ ես». հայ. մի շարք ձեռ. ավելացնում են «Պողոսս»:

ուզեց ցույց տալ նրանց, թե որքան հարուստ ու փառավոր է իր ծրագիրը, որը վերաբերում է բոլոր ազգերին: Եվ այդ ծրագիրն այս է. Քրիստոսին ճանաչել տալ ձեզ՝ գալիք փառքի հույսով: ²⁸ Ուստի մենք Քրիստոսին ենք քարոզում՝ հոգևոր իմաստության բոլոր միջոցներով խրատելով բոլոր մարդկանց և ուսուցանելով բոլոր մարդկանց, որպեսզի բոլորին էլ կանգնեցնենք Աստծու առաջ՝ Հիսուս Քրիստոսին միացած և հոգեպես կատարյալ: ²⁹ Դրա համար է որ աշխատում և պայքարում եմ այն ուժով, որ իմ մեջ գործում է զորությամբ:

2

Պողոսի մտահոգությունը կողոսացիների հավատի համար

¹ Ուզում եմ, որ գիտենաք, թե ինչպիսի՛ մեծ նեղությունն էմ կրում ձեզ և լավոդիկիացիների համար, ինչպես նաև բոլոր նրանց համար, որոնք անձամբ ինձ չեն տեսել: ² Այս ասում եմ, որպեսզի նրանց սրտերը մխիթարվեն ու շաղկապվեն սիրով, և նրանք ամբողջական հասկացողությամբ կատարյալ համոզման հասնեն՝ ճանաչելով Հայր Աստծու ծրագիրը՝ հայտնված Քրիստոսով: ³ Քրիստոսի մեջ ծածկված է գտնվում Աստծու իմաստության ու գիտության ամբողջ գանձարանը: ⁴ Այս ասում եմ, որպեսզի ոչ ոք հրապուրիչ խոսքերով չխաբի ձեզ, ⁵ որովհետև թեև մարմնով հեռու, բայց հոգով ձեզ հետ եմ: Ուրախանում եմ, երբ տեսնում եմ, որ համերաշխ եք և ամուր՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատի մեջ:

⁶ Արդ, քանի որ ընդունեցիք Հիսուս Քրիստոսին՝ Տիրոջը, կապված մնացեք նրան: ⁷ Արմատացե՛ք նրա մեջ և աճեցե՛ք նրա վրա՝ ամրապնդվելով այն հավատի մեջ, որ սովորեցիք, և անդադար գոհություն հայտնեցեք նրան:

Քրիստոսով լցված և կենդանացած

⁸ Զգո՛ւյշ եղեք, որ որևէ մեկը ձեր միտքը չգրավի իմաստասիրական տեսություններով և խաբեբայական սին խոսքերով, որոնք հիմնված են մարդկային ավանդությունների և բնության ուժերի և ոչ թե Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետության վրա, ⁹ որովհետև մարդացած Քրիստոսի մեջ է բնակվում աստվածային բնության ամբողջ լիությունը: ¹⁰ Եվ դուք ձեր կյանքի լիությունը գտաք՝ միանալով նրան, որ գլուխն է ոգեղեն աշխարհի բոլոր իշխանությունների ու պետությունների: ¹¹ Հավատի ճանապարհով երբ միացաք Քրիստոսին, դուք ձեր մեղքերը թողափեցիք և Քրիստոսի թլփատությամբ ստացաք սրտի՛ թլփատությունը: ¹² Մկրտվելով՝ թաղվեցիք նրա հետ միասին և նրա հետ էլ հարություն առաք, քանի որ

^{2.2} «Հայր Աստծու ծրագիրը՝ հայտնված Քրիստոսով», հուն. ձեռ. տարբեր ընթերցումներ ունեն «Աստծու՝ Քրիստոսի Հոր ծրագիրը» կամ «Հայր Աստծու և Քրիստոսի ծրագիրը» կամ «Աստծու ծրագիրը, որ է Քրիստոսը»:

^{2.5} «Հիսուս Քրիստոսի», հուն. ունի «Քրիստոսի»:

^{2.8} «Բնության ուժերի», տե՛ս Գղ 4.3 և ծնթ: «Հիսուս Քրիստոսի», հուն. ունի «Քրիստոսի»:

^{2.11} Հուն. չունի «հավատի ճանապարհով»: «Մրտի թլփատությունը», բոց՝ «անձեռագործ թլփատությունը»:

հավատացիք Աստուծու գործությանը, որ մեռելներից հարություն տվեց նրան։¹³

¹³ Քրիստոսի հետ Աստված ձեզ էլ կենդանացրեց, քանի որ դուք հոգեպես մեռած էիք ձեր մեղքերի պատճառով, որովհետև անթլփատ հեթանոսներ էիք: Այո՛, Աստված ներեց մեր բոլոր հանցանքները՝¹⁴ և իր իշխանությամբ ջնջեց մեր օրինազանցության համար մեր դեմ արձակված դատապարտության վճիռը՝ խաչափայտին մեխելով այն:՝

¹⁵ Այդպիսով նա զինաթափ արեց ոգեղեն աշխարհի իշխանություններին ու պետություններին՝ նրանց հայտնապես խայտառակելով ու պարտության մատնելով Քրիստոսի ձեռքով՝ նրա հարության ժամանակ:՝

Զգուշացում սխալ վարդապետություններից

¹⁶ Կարևորություն մի՛ տվեք նրանց, ովքեր ձեզ քննադատում են, թե ինչո՛ւ չեք պահում ուտելու և խմելու, տոնակատարությունների, ամսամուտների և շաբաթ օրերի վերաբերյալ կանոնները:՝¹⁷ դրանք բոլորը գալիք իրականությունների ստվերն են միայն, իսկ բուն իրականությունը Քրիստոսի մեջ է:

¹⁸ Չլինի թե որևէ մեկն իր կեղծ խոնարհությամբ, հրեշտակներին մատուցած պաշտամունքով և զանազան տեսիլքներով մոլորեցնի ձեզ և զրկի մրցանակից, որովհետև այդպիսիները տարված են լինում մարդկային հպարտությամբ և ուզում են իրենք իրենց պարտադրել ձեզ:՝¹⁹ Նրանք կապ չունեն գլխի՝ Քրիստոսի հետ, մինչդեռ մարմինը՝ Քրիստոսի եկեղեցին, իր բոլոր հողերով ու կապերով կապված ու միացած է գլխին, նրանի՛ց է ստանում իր աճը՝ Աստուծու կամքի համաձայն:՝

²⁰ Քանի որ մեռաք Քրիստոսի հետ և բնության ուժերի տիրապետությունից դուրս եկաք, էլ ինչո՛ւ եք շարունակում ապրել այնպես, իբր թե ձեր կյանքը կախում ունի աշխարհից, և հնազանդվում եք՝²¹⁻²² մարդկանց կողմից տրված պատվիրաններին, ինչպես՝ «Մի՛ մոտեցիր, մի՛ կեր, մի՛ դիպչիր»: Սրանք բոլորն էլ բաներ են, որոնք փչանում են գործածելով:՝²³ Այսպիսի բաներ պատվիրողները կարող են իմաստուն թվալ իրենց բարեպաշտական ինքնակամ արտահայտություններով, կեղծ խոնարհությամբ և մարմինն անխնա ճնշելով, բայց այս բաները որևէ արժեք չունեն և ծառայում են միայն մարմինը բավարարելուն:

3

Մեռնել և ապրել Քրիստոսի հետ

^{2.12} Հո 6.4:

^{2.13} Եփ 2.1-5:

^{2.14} Եփ 2.15:

^{2.15} «[Ոգեղեն աշխարհի] իշխանություններին ու պետություններին». տե՛ս Հո 8.38 և ծնթ: Հուն. չունի «նրա հարության ժամանակ»:

^{2.16-18} Ակնարկությունը վերաբերում է հրեական կրոնական սովորույթներին:

^{2.16} Հո 14.1-6:

^{2.18} «Ձանազան տեսիլքներով». շատ ձեռ. ունեն «և իր չտեսած բաներով»:

^{2.19} Եփ 4.16:

^{2.21-22} «Մի՛ կեր». գրք. ունի «մի՛ ճաշակիր»:

¹ Քանի որ հարություն առաք Քրիստոսի հետ, այսուհետև ձեր ուշադրությունը դարձրե՛ք դեպի երկինք, որովհետև այնտեղ է Քրիստոսը՝ նստած Հայր Աստծու աջ կողմում: ² Երկնավոր բաների մասին խորհեցեք և ոչ թե երկրավոր բաների, ³ որովհետև դուք այս աշխարհի համար մեռաք, որպեսզի Քրիստոսի հետ միասին ապրեք այն կյանքով, որ Աստված վերապահել է ձեզ: ⁴ Իսկ երբ Քրիստոսը՝ ձեր կյանքը, հայտնվի, այն ժամանակ դուք էլ փառքով կհայտնվեք նրա հետ:

Հին և նոր կյանք

⁵ Հետևաբար, ձեր մեջ սպանե՛ք երկրավոր ցանկությունները, այսինքն՝ ձեզնից դո՛ւրս վանեցեք պոռնկությունը, պղծությունը, կիրքը, չար ցանկությունը և ագահությունը, որ կռապաշտություն է,՝ ⁶ որովհետև այդ բոլորը Աստծուն անհնազանդ մարդկանց գործերն են, և Աստված պատժելու է նրանց: ⁷ Մի ժամանակ դուք էլ էիք անում այդ բոլորը, երբ դեռևս ապրում էիք այդ ցանկություններով: ⁸ Բայց այժմ դո՛ւրս գցեք ձեզնից այդ բոլորը՝ բարկությունը, զայրույթը և չարությունը: Թող ձեր բերանից չլսվի որևէ հայհոյություն կամ լկտի խոսք: ⁹ Սուտ մի՛ խոսեք միմյանց հետ: Մոռացե՛ք ձեր հին կյանքն ու նախկին գործերը՝ ¹⁰ և եղեք նոր մարդ՝ նորոգվելով ըստ ձեր Արարչի պատկերի, որպեսզի կարողանաք ճանաչել նրան: ¹¹ Մի անգամ որ նորոգվեցիք, էլ չկա հրեա կամ հեթանոս, թլփատված կամ անթլփատ, բարբարոս, վայրենի, ծառա կամ ազատ. կա միայն Քրիստոս, որ ամեն ինչ է և բոլորի մեջ:

¹² Հետևաբար, որպես Աստծու կողմից ընտրված, սրբված և նրա սերը վայելող մարդիկ, եղե՛ք գրասիրտ, ողորմած, քաղցր, խոնարհ, հեզ և համբերատար:

¹³ Միմյանց հանդեպ եղե՛ք հանդուրժող և ներեցե՛ք միմյանց, երբ մեկը մյուսի դեմ մի տրտունջ ունենաք: Ինչպես Աստված Քրիստոսի միջոցով ներեց ձեզ, այնպես էլ դո՛ւք ներեցեք միմյանց: ¹⁴ Եվ այս բոլորի վրա ավելի սեր ունեցեք, որովհետև սերը ամբողջացնող շաղախն է ամեն ինչի: ¹⁵ Ձեր սրտերում թող թագավորի Քրիստոսի խաղաղությունը, քանզի Աստված ձեզ կանչեց այդ խաղաղությանը՝ մեկ մարմնի մեջ, որ Քրիստոսի եկեղեցին է: Ուստի շնորհակա՛լ եղեք Աստծուն:

¹⁶ Թող Քրիստոսի խոսքը ձեր մեջ բնակվի իր ողջ հարստությամբ, որպեսզի կատարյալ իմաստությամբ ուսուցանեք ու խրատեք միմյանց և սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով ձեր սրտերում շնորհակալությամբ օրհներգեք Աստծուն: ¹⁷ Եվ ինչ էլ որ անեք, խոսքով թե գործով, միշտ արե՛ք Տեր Հիսուսի անունով՝ նրա միջոցով գոհություն հայտնելով Հայր Աստծուն: Ընտանեկան և ընկերային

3.1 Սղ 110.1:

3.5 Հուն. չունի «*ձեզնից դո՛ւրս վանեցեք*»:

3.9 Եփ 4.22:

3.10 ա Եփ 4.24: ք Ծն 1.26:

3.11 «*Վայրենի*». բոց՝ «*սկյուր*»: Սկյուրներն ապրում էին Սև ծովի հյուսիսում և հույների կողմից վայրենի մի ցեղախումբ էին համարվում:

3.12-13 Եփ 4.2:

3.13 «*Աստված Քրիստոսի միջոցով*». հուն. ձեռ. մի քանիսն ունեն «*Տերը*», մյուսները՝ «*Քրիստոսը*»:

3.13 Եփ 4.32:

3.16-17 Եփ 5.19-20:

կյանքի հորդորներ

¹⁸ Կանա՛յք, հնազա՛նդ եղեք ձեր ամուսիններին, ինչպես վայել է Տիրոջը միացածներին:՝ ¹⁹ Տղամարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց և մի՛ դառնացրեք նրանց:՝

²⁰ Չավակնե՛ր, ամեն ինչում հնազա՛նդ եղեք ձեր ծնողներին, որովհետև այդպես է ուզում Տերը:՝ ²¹ Հայրե՛ր, մի՛ գայրացրեք ձեր զավակներին, որպեսզի չհուսալքվեն:՝

²² Ծառանե՛ր, ամեն ինչում հնազա՛նդ եղեք ձեր տերերին: Ձեր ծառայությունն արեք ոչ միայն այն ժամանակ, երբ հսկող աչք կա ձեզ վրա, ինչպես անում են նրանք, որ ուզում են մարդկանց բարեհաճությունը շահել, այլ անկեղծ սրտով, Տիրոջ նկատմամբ ձեր ունեցած պատկառանքից մղված:՝ ²³ Ինչ էլ որ անեք, սրտա՛նց արեք, այնպես, ինչպես կանեիք Տիրոջ և ոչ թե մարդկանց համար:՝ ²⁴ Իմացե՛ք, որ Տիրոջից եք ստանալու ձեր հատուցումը, որ նա խոստացավ ձեզ տալ, քանի որ Տիրոջը՝ այսինքն՝ Քրիստոսին եք ծառայում:՝ ²⁵ Իսկ անիրավն իր անիրավության հատուցումն է ստանալու, որովհետև Աստված խտրություն չի դնում մարդկանց միջև:՝

4

¹ Իսկ դուք, տերե՛ր, մի՛ անտեսեք ձեր ծառաների իրավունքը և արդարությունը: Իմացե՛ք, որ դուք էլ Տեր ունեք երկնքում:՝

Աղոթքի և խոհեմության հորդորներ

² Շարունակ աղոթեցե՛ք՝ արթուն հսկելով, միշտ գոհություն հայտնելով Աստծուն:

³ Միաժամանակ աղոթեցե՛ք նաև մեզ համար, որպեսզի Աստված լայն պատեհություն տա մեզ՝ քարոզելու իր խոսքը, և մենք կարողանանք պարզել Քրիստոսի ծածուկ ծրագիրը, որի համար էլ բանտում եմ գտնվում:՝ ⁴ Աղոթեցե՛ք, որ կարողանամ ամենքին հայտնի դարձնել այդ ծրագիրն այնպես, ինչպես որ հարկն է:

⁵ Իմաստությա՛մբ վարվեցեք ոչ հավատացյալների հետ և օգտագործեցե՛ք ժամանակը:՝ ⁶ Ձեր խոսքերը թող լինեն միշտ շնորհալի, աղով համեմված, և իմացե՛ք, թե ինչպե՛ս պետք է պատասխանեք յուրաքանչյուր մարդու:՝

Վերջին լուրերն առաքյալի մասին

⁷ Իմ մասին ինչ որ կա պատմելու, թող ձեզ պատմի Տյուքիկոսը, որ Տիրոջը միացած

^{3.18} Եփ 5.22, Ա Պտ 3.1:

^{3.19} «Մի՛ դառնացրեք նրանց». հուն. ունի «դառնությամբ մի՛ վարվեք նրանց հետ»:

^{3.19} Եփ 5.25, Ա Պտ 3.7:

^{3.20} Եփ 6.1:

^{3.21} Եփ 6.4:

^{3.22-25} Եփ 6.5-8:

^{3.25} «Աստված խտրություն չի դնում». հուն. ունի «խտրություն չկա»:

^{3.25} Բ Օր 10.17, Եփ 6.9:

^{4.1} Եփ 6.9:

^{4.5} Եփ 5.16:

^{4.6} «Շնորհալի». գրբ. ունի «Տիրոջ շնորհով լեցուն»:

^{4.6} Իմս 8.12:

մեր սիրելի եղբայրն է, հավատարիմ օգնականը և ծառայակիցը: * * 8 Դրա համար էլ նրան ուղարկեցի ձեզ մոտ, որպեսզի մեր մասին պետք եղածն իմանաք, և ձեր սրտերը հանգստանան: 9 Նա և Օնեսիմոսը՝ ձեր հայրենակիցը, և մեր հավատարիմ ու սիրելի եղբայրը, թող ձեզ պատմեն այստեղի բոլոր անցուդարձերի մասին:

Վերջին ողջույններ

10 Ձեզ բարևում է Արիստարքոսը՝ իմ բանտակիցը, ինչպես նաև Մարկոսը՝ Բառնաբասի եղբորորդին, որի մասին լուր էի ուղարկել, որ երբ ձեզ մոտ գա, ընդունեք նրան: 11 Ձեզ բարևում է նաև Հիսուսը, որ Հուստոս էլ է կոչվում: Այս երեքը միակ հրեաներն էին, որ այստեղ գործակից եղան ինձ Աստծու արքայությունը քարոզելու գործում և դրանով էլ մխիթարություն եղան ինձ համար:

12 Ձեզ բարևում է ձեր հայրենակից Եպաֆրասը՝ Հիսուս Քրիստոսի ծառան, որն իր աղոթքներով շարունակ տքնում է ձեզ համար, որպեսզի հոգեպես լինեք կատարյալ և քաջատեղյակ Աստծու կամքին: 13 Վկայում եմ նրա մասին, որ մեծ աշխատանք տարավ ձեզ համար, ինչպես նաև լավոդիկիացիների և Երապոլիսի եղբայրների համար:

14 Ձեզ բարևներ ունեն նաև սիրելի բժիշկ Ղուկասը և Դեմասը:

15 Դուք էլ բարևեք Լավոդիկիայում գտնվող եղբայրներին, Նիմֆային և նրա տանը հավաքվող եկեղեցուն:

16 Այս նամակը ձեզ մոտ ընթերցելուց հետո այնպես արեք, որ այն ընթերցվի նաև Լավոդիկիայի եկեղեցում: Ուզում եմ, որ նույնպես ընթերցեք լավոդիկիացիների նամակը: 17 Եվ Արքիպպոսին ասացե՛ք. «Տե՛ս, որ իր կատարմանը հասցնես պաշտոնդ, որ Տերը տվեց քեզ»:

18 Ես՝ Պողոսս, այս ողջույնը գրում եմ իմ ձեռքով: Հիշեցե՛ք կապանքներս: Աստծու շնորհը ձեզ հետ թող լինի:

1ԻԻ

Ա.ԹԵՍՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

ԹԵՍՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ

Թեսաղոնիկեն, որ այժմ կոչվում է Սելանիկ, հռոմեական Մակեդոնիա նահանգի մայրաքաղաքն էր, որտեղ Փիլիպպեն թողնելուց հետո՝ առաքելական իր երկրորդ

*4.7 Գրծ 20.4, Բ Տմ 4.12:

*4.7-8 Եփ 6.21-22:

*4.9 Փմ 10-12:

*4.10 ա Գրծ 19.29, 27.2, Փմ 24: ք Գրծ 12.12, 25, 13.13, 15.37-39:

*4.12 Կղ 1.7, Փմ 23:

*4.14 ա Բ Տմ 4.11, Փմ 24: ք Բ Տմ 4.10, Փմ 24:

*4.16 «Լավոդիկիացիներին [և ուղարկված] նամակը» մեզ չի հասել: Ոմանք ենթադրում են, սակայն, որ դա եփեսացիներին գրված նամակն է:

*4.17 Փմ 2:

*4.18 Հուն. և հայ. շատ ձեռ. ավելացնում են «Ամեն»:

ճանապարհորդության ընթացքում, Պողոսը մի եկեղեցի հաստատեց: Սակայն այստեղ Պողոսն անմիջապես ընդդիմության հանդիպեց հրեաների կողմից, որոնք նախանձով էին դիտում նրա կատարած քարոզչության հաջողությունը: Այս ընդդիմությունների պատճառով Պողոսը թողեց Թեսաղոնիկեն և գնաց Բերիա: Ավելի ուշ, երբ նա Կորնթոս էր անցել, իր գործակից Տիմոթեոսից ստացավ մի գեկուցագիր, որից պարզվում էր Թեսաղոնիկեի եկեղեցու կացությունը: Այս էր պատճառը, որ Պողոսը գրեց Թեսաղոնիկեցիներին ուղղված իր նամակը՝ քաջալերելու ու գոտեպնդելու տեղի քրիստոնյաներին: Այս նամակը, որ Սուրբ գրքի մասնագետները միաձայն ընդունում են որպես Նոր Կտակարանի ամենից վաղ գրված գրություն, գրվել է հենց Կորնթոսում՝ շուրջ ⁵⁰ թվականին:

Նամակում առաքյալը շնորհակալություն է հայտնում Աստծուն՝ Թեսաղոնիկեցիների ունեցած հավատի և սիրո համար: Հիշում է այն օրերը, որ ինքն անցկացրել է նրանց հետ, և պատասխանում է Թեսաղոնիկեցիների մի շարք հարցերին, որոնք վերաբերում են մեռելների հարությանն ու Հիսուսի երկրորդ գալստյանը: Կարո՞ղ էր հավատացյալն արժանանալ հավիտենական կյանքին, եթե պատահեր, որ մեռներ Հիսուսի գալուստից առաջ: Քրիստոսը կրկին ե՞րբ է գալու: Պողոսի թելադրանքն այն է, որ հավատացյալներն ապրեն հանդարտ և խաղաղ մի կյանք՝ հուսալից սպասելով Քրիստոսի գալստյանը:

Այս նամակն այսօր ևս մի պատասխան է բոլոր նրանց, ովքեր մտահոգված են աշխարհի վախճանով: Առաքյալը հիշեցնում է, որ կարևորը Քրիստոսի երկրորդ գալստյան ժամն ու ժամանակը գիտենալը չէ, այլ իբրև լույսի որդիներ՝ այդ գալստյանը միշտ «պատրաստ» լինելը (5.1, 5-10):

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Ողջույն (1.1):
- Երախտագիտություն և գոհություն (1.2-3.13):
- Թելադրանքներ քրիստոնեական պարկեշտ կենցաղի վերաբերյալ (4.1-12):
- Ցուցումներ Քրիստոսի գալստյան մասին (4.13-5.11):
- Վերջին թելադրանքներ (5.12-22):
- Վերջաբան (5.23-28):

1

Ողջույն

¹ Մենք՝ Պողոսը, Սիդվանոսը և Տիմոթեոսը, գրում ենք ձեզ՝ Թեսաղոնիկեցիներին՝ եկեղեցուն, որ պատկանում է Հայր Աստծուն և Տեր Հիսուս Քրիստոսին: Շնորհ և խաղաղություն ձեզ՝:

Թեսաղոնիկեցիների հավատն ու կյանքը

¹1.1 Մի շարք ձեռ. ավելացնում են «Աստուց՝ մեր Հորից, և Տեր Հիսուս Քրիստոսից» (հմմտ Բ Թս 1.1):
¹1.1 Գրծ 17.1:

² Մեր աղոթքներում միշտ հիշում ենք ձեզ և ձեզ համար անդադար գոհություն մատուցում Աստծուն: ³ Հայր Աստծու առաջ միշտ հիշում ենք, թե ինչպես կյանքի եք վերածում ձեր հավատը, սիրուց մղված՝ ծառայում եք ուրիշներին և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին հուսալով՝ համբերում նեղությունների:

⁴ Եղբայրներ՝ ը, գիտեք, որ Աստված ձեզ սիրեց և ընտրեց, ⁵ որովհետև մեր քարոզչությամբ Աստված ձեզ հայտնեց իր Ավետարանը ոչ միայն խոսքով, այլ նաև զորությամբ, այսինքն՝ Սուրբ Հոգու ներգործությամբ՝ կատարյալ վստահություն ներշնչելով ձեզ: Դուք լավ գիտեք, թե մենք ինչպես ապրեցինք ձեր մեջ՝ ձեզ օրինակ լինելու համար: ⁶ Նմանվելով մեզ՝ դուք նմանվեցիք Տիրոջը, քանի որ հակառակ ձեր կրած բոլոր նեղություններին, Սուրբ Հոգու պարզևած ուրախությամբ ընդունեցիք մեր քարոզչությունը՝

2

Պողոսի գործունեությունը Թեսալոնիկեում

¹ Դուք ինքներդ գիտեք, եղբայրներ՝ ը, որ ձեզ տված մեր այցելությունը ապարդյուն չեղավ, ² այլ, ինչպես գիտեք, Փիլիպպեում խոշտանգվելուց և անարգվելուց հետո Աստծով քաջությունն ունեցանք գալու ձեզ մոտ և քարոզելու Աստծու Ավետարանը, հակառակ այն բուռն ընդդիմությանը, որին հանդիպեցինք:

⁹ Անշուշտ հիշում եք, եղբայրներ՝ ը, մեր ծանր աշխատանքն ու հոգնությունը, թե ինչպես մի կողմից զիջեր-ցերեկ աշխատում էինք ձեզնից որևէ մեկի վրա բեռ չլինելու համար, իսկ մյուս կողմից՝ ձեզ քարոզում էինք Աստծու Ավետարանը: ¹⁰ Դուք ինքներդ վկա եք, վկա է նաև Աստված, թե ինչպիսի մաքուր, արդար և ուղիղ վարմունք ունեցանք բոլոր հավատացյալների հանդեպ: ¹¹ Շատ լավ գիտեք, որ ինչպես հայրն է վերաբերում իր զավակներին, այնպես ձեզնից յուրաքանչյուրին ¹² քաջալերեցինք ու մխիթարեցինք՝ թախանձագին խնդրելով, որ ապրեք այնպիսի մի կյանք, որ վայել լինի

^{1.6} Գրծ 17.5-9:⁷ և ձեր այդ ընթացքով օրինակ հանդիսացաք Մակեդոնիայի և Աքայիայի բոլոր հավատացյալներին: ⁸ Արդարև, դուք ձեր օրինակով Տիրոջ խոսքը հռչակեցիք ոչ միայն Մակեդոնիայում և Աքայիայում, այլև ամեն տեղ, ուր տարածվեց Աստծու հանդեպ ձեր ունեցած հավատի համբավը: Այնպես որ այլևս ո՛չ կարիքն ենք զգում որևէ բան ավելացնելու, ո՛չ էլ մեզ ներկայացնելու, ⁹ որովհետև ուր որ գնում ենք, մարդիկ իրենք են պատմում մեր մասին, թե ինչպես եկանք ձեզ մոտ, թե ինչպես դուք, թողնելով կոռքերը, դարձաք Աստծուն՝ ծառայելու համար ճշմարիտ և կենդանի Աստծուն, ¹⁰ և թե ինչպես եք սպասում, որ երկնքից վերստին գա Աստծու Որդին՝ Հիսուսը, որին նա հարություն տվեց մեռելներից, և որը մեզ փրկելու է գալիք բարկությունից:

^{2.2} ա Գրծ 16.19-24: բ Գրծ 17.1-9:³ Արդարև, ձեզ ուղղված մեր հորդորը ո՛չ մոլորության վրա էր հիմնված, ո՛չ էլ կեղտոտ և նենգ միջոցների: ⁴ Այլ խոսեցինք այնպես, ինչպես Աստված է ուզում, որովհետև Աստված փորձեց մեզ և իր Ավետարանը վստահեց մեզ: Խոսում ենք ոչ թե մարդկանց հաճելի լինելու համար, այլ Աստծուն, որ քննում է մեր սրտերի խորհուրդները: ⁵ Ինչպես գիտեք, ո՛չ շողորրոթություն արեցինք և ո՛չ էլ մեր շահը փնտրեցինք: Վկա է Աստված: ⁶ Որևէ մեկից փառք չփնտրեցինք, ո՛չ ձեզնից, ո՛չ էլ ուրիշներից: ⁷ Որպես Քրիստոսի առաքյալներ, կարո՞ղ էինք ծանրանալ ձեզ վրա, բայց հեզությամբ վարվեցինք: Ինչպես մի մայր, որ սնում է իր զավակներին, ⁸ այնպես էլ մենք գորովանքով վերաբերվեցինք ձեզ և պատրաստ էինք ոչ միայն Աստծու Ավետարանը ձեզ փոխանցելու, այլ մեր կյանքն էլ տալու, այնքան, որ սիրելի էիք դարձել մեզ:

Աստծուն, նրան, որ ձեզ հրավիրեց իր արքայությանը և փառքին:

Թեսաղոնիկեցիների հավատի վկայությունը

¹³ Մենք անդադար շնորհակալություն ենք հայտնում Աստծուն նաև նրա համար, որ դուք, Աստծու խոսքի քարոզչությունները մեզնից հազիվ լսելով, ընդունեցիք ոչ թե իբրև մարդկային պատգամ, այլ իբրև Աստծու պատգամ, որովհետև այն ճշմարտապես Աստծու պատգամն է և որպես այդպիսին՝ ներգործում է հավատացյալներիդ մեջ: ¹⁴ Եղբայրներ՝ դուք էլ ունեցաք այն նույն փորձառությունը, որ ունեցան Հրեաստանում գտնվող Աստծու եկեղեցիները, որոնք միացած են Քրիստոս Հիսուսին: Դուք էլ չարչարվեցիք ձեր ազգակիցների կողմից, ինչպես նրանք՝ իրենց ազգակից հրեաների կողմից,»

Պողոսի փափագը՝ վերադառնալու Թեսաղոնիկե

¹⁷ Սակայն մենք, եղբայրներ՝ թեպետև միաժամանակ որք մնացինք ձեզնից, այսինքն՝ աչքից հեռու եղանք, բայց սրտից հեռու չեղանք: Այնքան մեծ էր ձեզ տեսնելու մեր ցանկությունը, որ ամեն ջանք գործադրեցինք այդ ուղղությամբ: ¹⁸ Ես ինքս՝ Պողոսս, մի քանի անգամ ուզեցի գալ ձեզ մոտ, բայց Մատանան արգելք եղավ մեզ: ¹⁹ Արդարև, երբ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը գա, նրա առաջ ո՞վ պիտի լինի մեր հույսը կամ ուրախությունը, կամ մեր հաղթանակի պսակը, որով կարող ենք պարծենալ, եթե ոչ դուք: ²⁰ Այո՛, դուք եք մեր փառքը և ուրախությունը:

3

Տիմոթեոսի առաքելությունը և բերած ավետիսը

¹ Ահա թե ինչու չհամբերեցինք այլևս: Որոշեցինք, որ մենք առանձին մնանք Աթենքում,» ³ և չլինի թե ձեզնից որևէ մեկը ներկա ներդրությունների պատճառով խախտվի իր համոզմունքների մեջ, որովհետև դուք շատ լավ գիտեք, որ մենք կոչված ենք ապրելու հենց այդ ներդրությունների մեջ: ⁴ Երբ տակավին ձեզ մոտ էինք, նախապես չասացի՞նք ձեզ, որ ներդրություններ եք կրելու, ինչպես որ ահա եղավ, և դուք տեսաք: ⁵ Դրա համար էլ, այլևս չկարողանալով համբերել, ես ուղարկեցի Տիմոթեոսին՝ իմանալու համար, թե ի՞նչ վիճակում է ձեր հավատը՝ մտածելով, որ չլինի թե փորձիչը

^{2.14} Գրծ 17.5:¹⁵ որոնք ոչ միայն սպանեցին Տեր Հիսուսին և մարգարեներին, այլ նաև մեզ հալածեցին և այդպիսով Աստծու աչքից ելան ու բոլոր մարդկանց թշնամի եղան:

^{2.15} Գրծ 9.23, 29; 13.45, 50; 14.2, 5, 19; 17.5, 13; 18.12:¹⁶ Եվ ամբողջացնելու համար այն մեղքերը, որ միշտ էլ գործել են, ուզեցին արգելել մեզ, որ հեթանոսներին չքարոզենք փրկության մասին: Բայց Աստծու ամբողջական բարկությունն արդեն հասել է նրանց վրա:

^{2.19} «Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը». հուն. չունի «Քրիստոս» բառը: «Եթե ոչ դուք». գրբ. ավելացնում է «որ միացած եք Տիրոջը»:

^{3.1} Գրծ 17.15:² իսկ Տիմոթեոսին, որը մեր եղբայրն է և միաժամանակ Աստծու պաշտոնյան ու մեր գործակիցը Քրիստոսի Ավետարանի քարոզչության մեջ, ուղարկեցինք ձեզ մոտ, որպեսզի ձեզ ամրապնդի ու քաջալերի ձեր հավատի մեջ,

^{3.2} «Աստծու պաշտոնյան ու մեր գործակիցը...». գրբ. ունի «Աստծու ու Քրիստոսի Հոր Ավետարանի մեր գործակիցը»:

ձեզ փորձության մատնած լինի, և մեր ամբողջ աշխատանքն իզուր անցած լինի:

⁶ Հիմա, սակայն, երբ Տիմոթեոսը ձեր մտոյից վերադարձավ մեզ մոտ և ավետիս տվեց, որ պահում էք ձեր հավատն ու սերը և որ ամեն առիթով քաղցրությամբ եք հիշում մեզ ու փափագում եք մեզ տեսնել, ինչպես մենք էլ փափագում ենք ձեզ տեսնել,⁷

¹¹ Սակայն Աստված ինքը՝ մեր Հայրը, և մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, թող ուղղեն մեր ճանապարհը, որ կարողանանք գալ ձեզ մոտ: ¹² Տերը թող աճեցնի և առատացնի ձեր սերը միմյանց հանդեպ, ինչպես նաև բոլորի հանդեպ, նման այն սիրուն, որ մենք ունենք ձեր հանդեպ, ¹³ որպեսզի ձեր սրտերն ամրապնդվեն, և դուք անբասիր սրբությամբ ներկայանաք Աստծուն՝ մեր Հորը, երբ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, գա իր բոլոր ընտրյալներով:

4

Ապրել այնպես, ինչպես հաճելի է Աստծուն

¹ Վերջապես, եղբայրներ՝ ր, մենք սովորեցրինք ձեզ, թե ինչպես պետք է ապրել Աստծուն հաճելի լինելու համար: Թեպետ արդեն այդպես էք ապրում, սակայն խնդրում ենք և թելադրում Տեր Հիսուս Քրիստոսի անունով, որ շարունակեք առաջ գնալ նույն ձեր ընթացքի մեջ: ² Գիտեք, թե ինչպիսի պատվերներ տվեցինք ձեզ Տեր Հիսուսի անունով, ³ որովհետև Աստծու կամքն է, որ դուք սրբվեք և բոլորովին հեռու մնաք պոռնկությունից: ⁴ Ձեզնից յուրաքանչյուրը թող ամուսնանա սրբությամբ ու պատվով: ⁵ Կրքոտ ցանկությունների անձնատուր մի՛ եղեք հեթանոսների նման, որոնք չեն ճանաչում Աստծուն: ⁶ Կամ չլինի թե ձեզնից մեկը մեղանչի եղբայրներից մեկի դեմ՝ հափշտակելով նրա կնոջը, որովհետև այդ բոլորի համար Տերն անողոր պիտի լինի իր դատաստանի ժամանակ, ինչպես սկզբից ասացինք ձեզ և ազդարարեցինք: ⁷ Մի՞ թե Աստված մեզ կոչ արեց մեր պղծալից կյանքը շարունակելու, թե՞ սրբությամբ ապրելու: ⁸ Հետևաբար, ով արհամարհում է սրբության այս պատվերը, ոչ թե մի մարդու է անարգում, այլ նույն ինքն Աստծուն, որ իր Սուրբ Հոգին է տալիս մեզ:

⁹ Գալով եղբայրասիրությանը՝ կարիք չկա, որ ձեզ գրենք, որովհետև դուք ինքներդ Աստծուց սովորել էք միմյանց սիրել, ¹⁰ ինչպես արդեն այդ սերը գործնականում ցույց էք տալիս ամբողջ Մակեդոնիայի բոլոր եղբայրների նկատմամբ: Բայց դարձյալ, եղբայրներ՝ ր, խնդրում ենք, որ ավելի առատ լինեք ձեր սիրո մեջ, ¹¹ աշխատեք հանդարտ կյանք վարել, զբաղվել միայն ձեր գործով և ապրել ձեր աշխատանքի

^{3.6} Գրծ 18.5:⁷ դրա վրա մեր սրտերը հանգստացան, եղբայրներ՝ ր: Մեր բոլոր վշտերի ու նեղությունների մեջ մխիթարվեցինք ձեր ունեցած հավատով: ⁸ Կենդանություն եկավ մեզ վրա՝ իմանալով, որ հաստատուն էք մնում՝ միացած Տիրոջը: ⁹ Աստծուն ինչպե՞ս պիտի կարողանանք շնորհակալություն հայտնել ձեզ համար, այն ամբողջ ուրախության համար, որ մենք ձեր շնորհիվ ունեցանք մեր Աստծու առաջ: ¹⁰ Գիշեր-ցերեկ թախանձագին աղաչում ենք, որ Աստված թույլ տա մեզ անձա՛մբ ձեզ տեսնելու և ամբողջացնելու այն, ինչ դեռևս պակասում է ձեր հավատի մեջ:

^{4.1} «Տեր Հիսուս Քրիստոսի», հուն. ունի «Տեր Հիսուսի»:

^{4.4} «Թող ամուսնանա», այլ թրգմ՝ «թող պահի իր մարմինը»:

վաստակով, ինչպես որ պատվիրեցինք ձեզ, ¹² որպեսզի ձեր պարկեշտ ընթացքով հարգանք վայելեք ոչ հավատացյալների կողմից և ոչ ոքի կարոտ չմնաք:

Մեռելների հարությունը և Տիրոջ գալուստը

¹³ Եղբայրներ՝ ը, ուզում ենք, որ մեռածների մասին ճշմարտությունն իմանաք, որպեսզի չտխրեք ուրիշների նման, որոնք որևէ հույս չունեն, ¹⁴ որովհետև եթե հավատում ենք, որ Հիսուսը մեռավ և հարություն առավ, նույնպես և հավատում ենք, որ Աստված Հիսուսի միջոցով և նրա հետ վերստին կյանքի կբերի նրանց, որոնք նրան հավատացին և մեռան:

¹⁵ Հետևաբար, ասում ենք ձեզ, ինչպես որ Տերն ինքը սովորեցրեց. մեզնից նրանք, որ ողջ մնացած կլինեն Տիրոջ գալուստի ժամանակ, մեռածներից առաջ չեն անցնի,“

¹⁸ Ուստի այս մտածումներով քաջալերեցեք միմյանց:

5

Արթուն և պատրաստ եղեք Տիրոջ գալուստյանը

¹ Բայց ինչ վերաբերում է այս եղելությունների ժամին ու ժամանակին, կարիք չեմ զգում այդ մասին ձեզ որևէ բան գրելու, ² որովհետև դուք ինքներդ շատ լավ գիտեք, որ ինչպես գողը գալիս է չսպասված ժամին, այնպես էլ Տիրոջ օրը չսպասված ժամին կգա:“

Վերջին թելադրանքներ, մաղթանքներ և բարևներ

¹² Եղբայրներ՝ ը, ուզում ենք, որ գնահատեք և հարգեք նրանց, որոնք ձեզ համար են աշխատում և Տիրոջ կողմից ձեզ վրա առաջնորդ նշանակված լինելով՝ խրատում են

^{4.15} Սր 48.11:

^{4.15-17} Ա Կր 15.51-52:¹⁶ որովհետև երբ հրամանը լսվի, հրեշտակապետն ազդարարի, և Աստծու փողը հնչի, Տերն ինքը կիջնի երկնքից, և նախ հարություն կառնեն նրանք, որ հավատացին Քրիստոսին ու մեռան:

^{4.16} Բ Եզր 6.23:¹⁷ Եվ ապա՝ մեզնից նրանք, որ այն ժամանակ դեռ ողջ մնացած կլինեն, նրանց հետ միասին ամպերի վրա կհափշտակվեն՝ կտարվեն երկինք՝ դիմավորելու Տիրոջը, և այնուհետև հավիտյան Տիրոջ հետ կլինենք:

^{5.2} Մտ 24.43, Ղկ 12.39, Բ Պտ 3.10:³ Երբ մարդիկ ասեն՝ «Հանգիստ ենք և ապահով», ճիշտ այն ժամանակ հանկարծակի վրա կհասնի նրանց կործանումը, ինչպես հանկարծակի է բռնում հողի կնոջ երկունքը, և նրանք ազատում չեն ունենալու: ⁴ Բայց դուք, եղբայրներ՝ ը, խավարի մեջ չեք, որ Տիրոջ օրը գողի նման անակնկալի բերի ձեզ, ⁵ որովհետև դուք բոլորդ լույսի որդիներ եք, ցերեկվա՝ որդիներ: Մենք գիշերվան չենք պատկանում, ոչ էլ խավարին: ⁶ Հետևաբար, քնով չտարվենք ուրիշների նման, այլ արթուն և զգաստ լինենք, ⁷ որովհետև քնողները գիշերն են քնում, հարբեցողներն էլ գիշերն են հարբում: ⁸ Բայց քանի որ մենք ցերեկվան ենք պատկանում, պատրաստ լինենք՝ հավատի ու սիրո զրահը հագած և փրկության հույսի սաղավարտը մեր գլխին դրած,

^{5.8} Ես 59.17, Եփ 6.13-17:⁹ որովհետև Աստված մեզ չի ընտրել, որպեսզի նրա բարկության առարկան դառնանք, այլ որպեսզի ժառանգենք նրա փրկությունը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

¹⁰ Արդարև, Քրիստոսը մեռավ մեզ համար, որպեսզի մենք նրանով կենդանի մնանք նրա գալուստյան ժամանակ, ողջ լինենք թե մեռած: ¹¹ Ուստի քաջալերեցե՛ք միմյանց և ամրապնդեցե՛ք միմյանց հավատը, ինչպես որ արդեն անում եք:

ձեզ:

¹³ Արժանի ամեն հարգա՛նք մատուցեք նրանց և սիրեցե՛ք նրանց՝ իրենց կատարած գործի համար: Խաղաղությա՛ մբ ապրեցեք միմյանց հետ:

¹⁴ Խնդրում ենք, եղբայրնե՛ր, խրատեցե՛ք անկարգությամբ ապրողներին, հուսադրեցե՛ք վիատվածներին, պաշտպա՛ն եղեք տկարներին, համբերատա՛ր եղեք բոլորի հանդեպ:՝ ¹⁵ Ուշադի՛ր եղեք, որ որևէ մեկը չարիք անողին չարիքով չհատուցի, այլ ջանացեք միշտ բարի ք անել, միմյանց լինի, թե բոլորին:

¹⁶ Միշտ ուրա՛խ եղեք, ¹⁷ անդադար աղոթեցեք: ¹⁸ Ամեն բանի համար շնորհակա՛լ է եղեք, որովհետև Աստված այդ է սպասում ձեզնից, որ միացած եք Հիսուս Քրիստոսին:

¹⁹ Սուրբ Հոգու կրակը մի՛ հանգցրեք ձեր մեջ: ²⁰ Մի՛ արհամարհեք մարգարեական պատգամները: ²¹ Քննեցե՛ք ամեն բան, բարո՛ւն կառչեք: ²² Հեռո՛ւ մնացեք ամեն տեսակ չարիքներից:

²³ Եվ Աստված ինքը, որ խաղաղություն է պարգևում, թող կատարելապես սրբի ձեզ, և ձեր ամբողջ էությունը՝ հոգի, շունչ և մարմին, անարատ պահի մինչև մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գալստյան օրը: ²⁴ Վստահեցե՛ք Աստծուն, որ այդ նպատակով հրավիրեց ձեզ և կկատարի իր խոստումը:

²⁵ Եղբայրնե՛ր, աղոթեցե՛ք նաև մեզ համար:

²⁶ Բոլոր եղբայրներին ողջունեցե՛ք սուրբ համբույրով:

²⁷ Խնդրում եմ Տիրոջ անունով, որ այս նամակը կարդաք բոլոր հավատացյալ եղբայրների ներկայությամբ:

²⁸ Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը թող ձեզ հետ լինի:՝

2TH

Բ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ

Քրիստոսի երկրորդ գալուստի շուրջ ստեղծված տարակարծությունները շարունակում էին շփոթություն ստեղծել Թեսաղոնիկեի եկեղեցու հավատացյալների շրջանում: Պողոսը նրանց ուղղված իր երկրորդ նամակով քննարկում է ոմանց այն տարաձայնությունները, թե Քրիստոսի գալուստն արդեն իսկ հասել է: Առաքյալը հստակ կերպով պարզաբանում է, որ նախքան Քրիստոսի երկրորդ գալուստը չարը և անօրենությունը կհասնեն ծայրագույն վիճակի՝ «Անօրենության մարմնացումը» կոչված խորհրդավոր մի անձնավորության առաջնորդության ներքո, որը հակառակվելու է Քրիստոսին:

Առաքյալն անհրաժեշտ է համարում, որ ընթերցողները, հակառակ խռովություններին և չարչարանքներին, իրենց հավատի մեջ մնան ուղիղ և հաստատուն, չդադարեն իրենց աշխատանքից և ծուլություն չանեն, այլ իրենց ճակատի քրտինքով վաստակեն իրենց ապրուստը, ինչպես որ անում է ինքը, նվիրվեն

^{15.14} «Անկարգությամբ». այլ թրգմ՝ «ծուլությամբ»:

^{15.28} Մի շարք ձեռ. ավելացնում են «Ամեն»:

աղոթքի և հարատևեն բարիք գործելու մեջ: Այլ խոսքով՝ հավատը պատրվակ չճառայեցնեն՝ փախչելու համար այն պատասխանատվություններից, որ Աստված տվել է մեզ՝ ամենօրյա մեր կյանքի համար:

ՆԱՄԱԿԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Ողջուն (1.1-2):
- Գոհություն և գովասանք (1.3-12):
- Ցուցումներ Քրիստոսի երկրորդ գալուստի մասին (2.1-17):
- Քրիստոնեավայել կյանքի թելադրանքներ (3.1-15):
- Վերջաբան (3.16-18):

1

Ողջուն

¹ Մենք՝ Պողոսը, Սիդվանոսը և Տիմոթեոսը, գրում ենք ձեզ՝ թեսաղոնիկեցիներիդ եկեղեցուն, որ պատկանում է Հայր Աստծուն և Տեր Հիսուս Քրիստոսին:՝

Քրիստոսի երկրորդ գալուստն ու դատաստանը

³ Եղբայրներ՝ ր, պարտք ենք զգում և արդար ենք համարում ձեզ համար միշտ գոհություն հայտնել Աստծուն, որովհետև հետզհետե ավելի է աճում ձեր հավատը, և ավելի է խորանում ձեզնից յուրաքանչյուրի սերը միմյանց հանդեպ: ⁴ Աստծու եկեղեցիներում մենք ձեզնով ենք պարծենում այն համբերության և հավատի համար, որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքների և նեղությունների մեջ:

⁵ Ձեր համբերությունն ու հավատը ապացույց են լինելու Աստծու արդար դատաստանի, որովհետև դուք արժանի եք լինելու Աստծու արքայությանը, որի համար այդքան տանջվում եք: ⁶ Արդարև, Աստծու համար արդարությունը կլինի ձեզ չարչարողներին տանջանքով պատժել, ⁷ իսկ ձեզ՝ տանջվածներիդ, հանգստություն պարգևել մեզ հետ միասին, երբ մեր Տերը՝ Հիսուսը, հայտնվի երկնքից իր հրեշտակների բանակով: ⁸ Նա բոցավառ կրակով կպատժի նրանց, որոնք մերժում են ճանաչել Աստծուն և հնազանդվել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանին: ⁹ Այն օրը այդպիսիները կպատժվեն հավիտենական մահվամբ՝ զրկվելով Տիրոջ ներկայությունից ու նրա փառավոր գորությունից:՝

Այն օրը դուք էլ կլինեք նրանց մեջ, որովհետև հավատացիք մեր տված վկայությանը:

¹¹ Ահա թե ինչու միշտ աղոթում ենք ձեզ համար, որպեսզի Աստված ձեզ արժանի դարձնի այդ կոչմանը, իր գորությամբ կատարի ձեր բոլոր բարի փափագները և արդյունավորի ձեր հավատը, ¹² այնպես որ ձեզնով փառավորվի մեր Տեր Հիսուս

^{1.1} Գրծ 17.1:² Թող Աստված՝ մեր Հայրը, և Տեր Հիսուս Քրիստոսը շնորհ և խաղաղություն պարգևեն ձեզ:

^{1.9} Ես 2.10:¹⁰ Երբ նա գա իր սրբերի մեջ փառավորվելու և բոլոր իրեն հավատացողների հիացմունքի առարկան դառնալու:

Քրիստոսի անունը, և դուք էլ փառավորվեք նրանով՝ մեր Աստծու և Տեր Հիսուս Քրիստոսի պարգևած շնորհով:

2

Անօրենության մարմնացումի հայտնվելը

¹ Ինչ վերաբերում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գալստյանը և նրա մոտ մեր հավաքվելուն, աղաչում եմ, եղբայրներ՝,⁴ հակառակորդը, որ կընդդիմանա աստված կոչված և մարդկանցից պաշտված ամեն բանի: Նա մինչև իսկ կնստի Աստծու տաճարում և ինքն իր մասին կհայտարարի, թե աստված է:՝

⁵ Չե՞ք հիշում, որ այս բաներն ասացի ձեզ, երբ տակավին ձեզ մոտ էի: ⁶ Դուք լավ գիտեք, թե ի՛նչն է հիմա հետ պահում այդ հակառակորդին, որ հայտնվի, մինչև ժամանակը գա: ⁷ Այժմ անօրենության այդ խորհրդավոր ուժն արդեն իսկ գործի վրա է, բայց այն չի հայտնվի, մինչև որ նրան արգելք եղողը մեջտեղից չվերացվի:՝ ⁸ Այն ժամանակ կհայտնվի Անօրենը, որին Տեր Հիսուսը կսպանի իր բերանի շնչով և կոչնչացնի իր հայտնությամբ՝ իր գալստյան ժամանակ:՝

Աստված ձեզ ընտրեց, որ փրկվեք

¹³ Բայց մենք միշտ Աստծուն գոհություն պետք է հայտնենք ձեզ համար, եղբայրներ՝, որովհետև Տերը սիրեց ձեզ: Աստված ձեզ ընտրեց որպես փրկության առաջին պտուղների, որպեսզի լինեք իր սուրբ ժողովուրդը Սուրբ Հոգու միջոցով և ճշմարտությանը հավատալով:՝ ¹⁴ Աստված այդ փրկությանը հրավիրեց ձեզ իր քարոզած Ավետարանով, որպեսզի մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի փառքն ունենաք:

^{2.1} Ա Թս 4.15-17:² Թող իսկույն չպղտորվեն ձեր մտքերը, և տակնուվրա չլինեք, երբ լսեք, թե հասել է Տիրոջ օրը: Մենք այդպիսի բան չենք ասել ո՛չ Հոգու հայտնությամբ, ո՛չ մեր քարոզությամբ և ո՛չ էլ նամակներով՝ իբր թե մեր կողմից գրված: ³ Չլինի թե մեկը ձեզ խաբի որևէ ձևով, որովհետև Տիրոջ օրը չի գա, մինչև որ նախ չգա Տիրոջ դեմ վերջին ապստամբությունը, և չհայտնվի անօրենության մարմնացումը եղող մարդը՝ կորստի սահմանված

^{2.3} «Անօրենության մարմնացումը եղող մարդը», բոց.՝ «անօրենության մարդը». միշտ ք ձեռ. ունեն «մեղքի մարդը»:

^{2.4} «Գնաստի». մի շարք ձեռ. ավելացնում են «իբրև աստված»:

^{2.4} Դն 11.36, Եզկ 28.2:

^{2.7} «Արգելք եղողը». թեսաղոնիկեցիները վատահաբար գիտեին (տե՛ս հմր 6), թե ո՛վ է կամ ի՛նչ է Քրիստոսի հակառակորդին արգելք եղողը: Դժբախտաբար, մեզ համար անորոշ է նրա ինքնությունը կամ ինչ լինելը:

^{2.8} Ես 11.4:⁹ Մինչ այդ Անօրենը, որ Սատանայի ներգործությամբ կգա, ամենայն գործությամբ կկատարի կեղծ հրաշքներ ու սքանչելիքներ,

^{2.9} Մտ 24.24:¹⁰ ամեն տեսակի չար խաբեբայությամբ կիրապուրի նրանց, որոնք կորստյան ճանապարհին են գտնվում: Քանի որ նրանք չսիրեցին և չընդունեցին ճշմարտությունը, որ փրկելու էր իրենց, ¹¹ Աստված էլ նրանց կենթարկի մոլորության ազդեցությանը, որպեսզի ստին հավատան:

¹² Այսպիսով կղատապարտվեն բոլոր նրանք, որ չհավատացին ճշմարտությանը, այլ իրենց հաճույքը փնտրեցին անիրավություն գործելու մեջ:

^{2.13} «Աստված ձեզ ընտրեց որպես փրկության առաջին պտուղների». այլ թրգմ՝ «Աստված սկզբից ընտրեց ձեզ, որպեսզի հասնեք փրկության»:

¹⁵ Ուստի, եղբայրներ՝ ք, հաստատ մնացեք և ամո՛ւր պահեցեք այն ավանդությունները, որ սովորեցիք մեզնից թե՛ խոսքով, թե՛ նամակով: ¹⁶ Եվ մեր Տերն ինքը՝ Հիսուս Քրիստոսը, և Աստված՝ մեր Հայրը, որ սիրեց մեզ և իր շնորհով մնայուն մխիթարություն և հաստատուն հույս տվեց մեզ, ¹⁷ թող սրտապնդեն և գորացնեն ձեզ, որպեսզի միշտ խոսեք ու գործեք այն, ինչ բարի է:

3

Աղոթեցե՛ք մեզ համար

¹ Վերջապես, եղբայրներ՝ ք, աղոթեցե՛ք մեզ համար, որպեսզի արագ ընթանա Տիրոջ խոսքի տարածման գործը և ամեն տեղ հասնի փառավոր արդյունքի, ինչպես եղավ ձեզ մոտ: ² Աղոթեցե՛ք նաև, որ Աստված մեզ ազատի չար և անպատկառ մարդկանցից, որովհետև բոլորը չե՛ որ հավատում են Ավետարանի պատգամին:

³ Բայց դուք վստահեցե՛ք Տիրոջը, որ կգորացնի ձեզ և հեռու կպահի Չարից: ⁴ Եվ Տերը վստահություն է տալիս մեզ, թե ինչ որ ձեզ պատվիրեցինք, կատարում եք և կշարունակեք կատարել:

⁵ Թող Տերն ուղղի ձեր սրտերը, որպեսզի ճանաչեք Աստծու սերը և Քրիստոսի ցուցաբերած համբերությունը:

Հորդոր աշխատանքի

⁶ Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով պատվիրում եմ ձեզ, եղբայրներ՝ ք, որ հեռու մնաք ամեն մի հավատակից եղբորից, որ ծուլությամբ է ապրում և ոչ թե ըստ այն օրինակի, որ մենք տվեցինք ձեզ,⁷ որովհետև դուք լավ գիտեք, թե ինչպիսի օրինակ տվեցինք ձեզ, որպեսզի հետևեք դրան: Երբեք ծուլությամբ չապրեցինք ձեզ մոտ ⁸ և ոչ մեկի հացը ձրի չկերանք, այլ քրտինքով ու տքնությամբ գիշեր-ցերեկ աշխատում էինք՝ ձեզնից ոչ մեկի վրա բեռ չլինելու համար: ⁹ Ոչ թե նրա համար, որ իրավունք չունեինք մեր սնունդն ու բնակարանը ձեզնից ստանալու, այլ ուզում էինք, որ մեր անձերն օրինակ դառնան ձեզ համար և հետևեիք մեր օրինակին: ¹⁰ Արդարև, ձեզ մոտ եղած ժամանակ էլ շարունակ պատրաստում էինք ձեզ՝ ասելով. «Չաշխատողը թող չուտի»:

¹¹ Մինչդեռ հիմա լսում ենք, թե ձեզնից ոմանք ծուլությամբ են ապրում՝ առանց որևէ գործ անելու, ուրիշների գործին խառնվելը իրենց միակ գործը դարձրած:

¹² Այդպիսիներին Տեր Հիսուս Քրիստոսի անունով պատվիրում ենք և խնդրում, որ վերադառնան սովորական աշխատանքին և իրենց իսկ աշխատանքով վաստակեն իրենց հացը:

¹³ Սակայն դուք, եղբայրներ՝ ք, մի՛ ձանձրացեք բարիք գործելուց: ¹⁴ Իսկ եթե որևէ մեկը չհնազանդվի այս նամակով մեր տված պատվերին, նկատի՛ ունեցեք նրան և բարեկամություն մի՛ արեք նրա հետ, որպեսզի ամաչի: ¹⁵ Բայց և այնպես նրան թշնամու տեղ մի՛ դրեք, այլ խրատեցե՛ք իբրև եղբոր:

Վերջին ողջույն և օրհնություն

^{3.6} «Ծուլությամբ». այլ թրգմ՝ «անկարգությամբ», տե՛ս նույնը՝ հմր 11:

¹⁶ Թող խաղաղություն պարզևող Տերն ինքը խաղաղություն տա ձեզ ամեն ժամանակ և ամեն կերպով: Տերը ձեր բոլորի հետ թող լինի:

¹⁷ Այս ողջույնը ես՝ Պողոսս, իմ ձեռքով եմ գրում: Իմ նամակների մեջ իմ ստորագրությունն ա՛յս է, այսպե՛ս է իմ գիրը:

¹⁸ Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը թող ձեր բոլորի հետ լինի:

1ԴԻ

Ա ՏԻՄՈԹԵՈՍԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

ՏԻՄՈԹԵՈՍԻՆ

Տիմոթեոսը Փոքր Ասիայից էր, մի երիտասարդ քրիստոնյա, հրեա մոր և հույն հոր զավակ: Պողոս առաքյալը Տիմոթեոսին առաջին անգամ հանդիպեց Լյուստրայում՝ առաքելական իր երկրորդ ճանապարհորդության ընթացքում: Այնուհետև Տիմոթեոսը Պողոսի սերտ օգնականը, գործակիցը և գրեթե մնայուն ընկերակիցը դարձավ նրա առաքելական ճանապարհորդությունների ժամանակ: Տիմոթեոսի անունը բազմիցս հիշատակվել է «Առաքյալների գործերը» գրքում և Պողոսի նամակներում: Բազմաթիվ առիթներով Պողոսը նրան էր վստահում նորահաստատ քրիստոնեական համայնքներում ծագած նուրբ ու դժվարին խնդիրների լուծումը:

Տիմոթեոսին ուղղված Պողոսի առաջին նամակն ունի երեք մտահոգություն.

1. Այն ազդարարություն է եկեղեցում սկսված սխալ մի ուսուցման դեմ: Հրեական և հեթանոսական գաղափարների խառնուրդ եղող այդ ուսուցումը հիմնված էր այն հավատալիքի վրա, թե նյութեղեն այս աշխարհը չար է, և որ մարդ կարող է փրկության հասնել միայն հատուկ և գաղտնի գիտությամբ ու կենցաղով, ինչպես նաև հեռու մնալով մի շարք կերակուրներից և ամուսնությունից:
2. Նամակում ցուցումներ են տրվում եկեղեցու կարգ ու կանոնի և պաշտամունքի մասին, որտեղ նկարագրվում է, թե ինչպիսի նկարագիր և վարք պետք է ունենան եկեղեցու առաջնորդները, երեցներն ու սարկավագները:
3. Առաքյալը հորդորում է Տիմոթեոսին, թե նա ինչպես պետք է Քրիստոսի բարի և օրինակելի ծառա լինի, և հիշեցնում է նրա ունենալիք պատասխանատվությունները հավատացյալների զանազան խմբավորումների հանդեպ:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ io1 -Նախաբան (1.1-2):

-Եկեղեցուն և նրա պաշտոնյաներին վերաբերող ցուցումներ (1.3--3.16):

-Տիմոթեոսի առաքելությանը վերաբերող ցուցումներ (4.1--6.21):

1

Ողջույն

¹ Ես՝ Պողոսս, որ Հիսուս Քրիստոսի առաքյալն եմ մեր փրկիչ Աստծու և մեր հույսը եղող Հիսուս Քրիստոսի հրամանով, ² քե՛զ եմ գրում, Տիմոթեո՛ս, հավատի իմ հարազատ որդի: Թող Հայր Աստված և մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, շնորհ,

ողորմություն և խաղաղություն պարգևեն քեզ:

Զգուշացում սխալ վարդապետություններ ուսուցանողներից

³ Երբ Մակեդոնիա էի գնում, խնդրեցի, որ Եփեսոսում մնաս և խոսես մի քանի մարդկանց հետ, որպեսզի դադարեն օտար վարդապետություններ ուսուցանելուց՝ ⁴ և չզբաղվեն սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով և ազգահամարներով, որոնք վեճերի դուռ են բացում՝ փոխանակ օգնելու մարդկանց հավատի և Աստծու ծրագրի իրականացմանը: ⁵ Գերագույն պատվիրանը սերն է, անարատ սրտից, մաքուր խղճմտանքից և անկեղծ հավատից բխած սերը: ⁶ Այս պատվերները մոռացության տված, դատարկ վեճերի մեջ մտնելով՝ շատերը ⁷ վեր են կացել Օրենք սովորեցնելու մեզ, մինչդեռ ո՛չ իրենց ասածն են իմանում, ո՛չ էլ Աստծու Օրենքը, որի մասին ճառում են մեծ վստահությամբ:

⁸ Գիտենք, որ Օրենքը լավ է, եթե այն գործադրվի պետք եղած ձևով: ⁹ Սակայն գիտենք նաև, որ Օրենքը արդարների համար չի հաստատվել, այլ անօրենների և անհնազանդների, ամբարիշտների ու մեղավորների, սրբությունները ոտնակոխ անողների և պիղծերի, հայր ու մայր անարգողների, մարդասպանների:

¹⁰ Կոռնկություն անողների, արվամուլների, մարդ առևանգողների, ստախոսների, սուտ երդում անողների և այն բոլոր արարքների համար, որոնք հակառակ են իմ փոխանցած առողջ ուսուցումներին, պատվերներ, ¹¹ որոնք համապատասխանում են երանելի Աստծու փառքը պատմող Ավետարանին, որը ես քարոզեցի հավատարմորեն:

Երախտագիտություն Աստծու բարության համար

¹² Երախտապարտ եմ մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, որ գորացրեց ինձ և արժանի համարեց իրեն սպասավոր կարգելու, ¹³ ինձ, որ նախապես հայիոյում, հալածում և անարգում էի նրան: Բայց նա ողորմություն ցույց տվեց ինձ, որովհետև այդ բանն անում էի առանց գիտենալու, երբ տակավին չէի հավատացել նրան: ¹⁴ Մեր Տերն ինձ ողողեց իր շնորհով՝ տալով այն հավատն ու սերը, որ ունենք մենք՝ Հիսուս Քրիստոսին միացածներս: ¹⁵ Պարզ է մի բան, և դա ամեն մարդ պետք է իմանա, որ Հիսուս Քրիստոսն աշխարհ եկավ՝ փրկելու մեղավորներին, և առաջին մեղավորը ես եմ: ¹⁶ Բայց Աստված ողորմություն ցույց տվեց ինձ, որպեսզի իմ նկատմամբ Հիսուս Քրիստոսի ցուցաբերած անսահման համբերատարությունը օրինակ ծառայի բոլոր նրանց, ովքեր հավատում են նրան՝ հավիտենական կյանքն ունենալու համար:

^{1.2} Գրծ 16.1:

^{1.3} Սա ուրիշ ճանապարհորդություն է և կատարվել է շատ ավելի ուշ, քան Գրծ 20.1-ում հիշատակվածը:

^{1.4} «Ազգահամարներ». Պողոսը հավանաբար ակնարկում է ՀԿ-ի նահապետների ծննդաբանությանը վերաբերող տեսությունները՝ հիմնված Օճ 4-5, 9-11 և այլ ազգաբանական ցանկերի վրա:

^{1.9} «Անարգողների». հուն. ունի «սպանողների»:

^{1.13} Գրծ 8.3, 9.4-5:

^{1.16} «Իմ նկատմամբ». հուն. ունի «իմ [մեղավորների] գլխավորիս նկատմամբ»:

¹⁷Նրան՝ հավիտենական թագավորին, անմահ և անտեսանելի միակ Աստծուն պատի՛վ և փա՛ռք հավիտյանս հավիտենից. ամե՛ն:

Բարի զինվորության պատվեր

¹⁸ Որոյա՛կ իմ, Տիմոթեո՛ւս, ավանդում եմ քեզ հետևյալ պատվերը. մարգարեական այն պատգամները, որոնք սկզբից եղել են քեզ համար, մտքիցդ չհանես, այլ զինվես դրանցով և բարի զինվորություն անես՝ ¹⁹ մաքուր պահելով հավատդ ու խիղճդ: Շատերը, չանսալով իրենց խղճին, կործանեցին իրենց հավատը: ²⁰ Նրանցից են Հիմենեոսն ու Ալեքսանդրոսը, որոնց Մատանայի կամքին թողեցի, որպեսզի իրենց պատիժը կրելով՝ սովորեն չհայհոյել Աստծուն:՝

2

Հրահանգներ աղոթքի վերաբերյալ

¹ Արդ, ամեն բանից առաջ խնդրում եմ, որ աղոթեք, խնդրանք, պաղատանք և գոհություն մատուցեք բոլոր մարդկանց համար, ² մանավանդ թագավորների և իշխանության գլուխ կանգնած բոլոր մարդկանց համար, որպեսզի խաղաղ ու հանդարտ կյանք վարենք՝ կատարյալ աստվածապաշտությամբ և պարկեշտությամբ,՝ ³ որովհետև ա՛յդ է բարին և ա՛յդ է փափագում Աստված՝ մեր Փրկիչը: ⁴ Նա ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության ճանաչմանը, ⁵ թե մե՛կ Աստված կա միայն, և մե՛կ միջնորդ Աստծու և մարդկանց միջև՝ Հիսուս Քրիստոս մարդը, ⁶ որն ինքն իրեն տվեց որպես փրկագին բոլոր մարդկանց համար: Դրա վկայությունը տվեց Աստված իր ժամանակին, ⁷ և այդ նույն վկայությունը տալու համար է, որ ես կարգվեցի քարոզիչ և առաքյալ՝ քրիստոնեական հավատն ու ճշմարտությունը սովորեցնելու բոլոր հեթանոսներին: Եվ Քրիստոսն ինքը վկա է, որ չեմ ստում, այլ ասում եմ ճշմարտությունը:՝

⁸ Ուզում եմ, որ ամեն տեղ, երբ տղամարդիկ աղոթքի կանգնեն, Աստծուն բարձրացրած իրենց ձեռքերը լեցուն լինեն արդար գործերով և ոչ թե վրեժխնդրությամբ ու անիրավությամբ:՝

⁹ Նաև ուզում եմ, որ կանայք իրենք իրենց զարդարեն խոնարհության զարդերով, ամոթխածությամբ և պարկեշտությամբ, զարդարվեն ոչ թե մազերի հարդարանքով կամ ոսկեղենով, մարգարիտներով կամ թանկ զգեստներով,՝ ¹⁰ այլ բարի գործերով, ինչպես վայել է այն կանանց, որ հանձն են առել ապրել աստվածապաշտությամբ:

¹¹ Եկեղեցական հավաքույթներում կանայք պետք է սովորող լինեն՝ միայն լռությամբ և կատարյալ հնազանդությամբ:՝ ¹² Թույլ չեմ տալիս, որ կին արարածը սովորեցնի

¹1.20 «Մատանայի կամքին թողեցի». տե՛ս Ա Կր 5.5 և ծնթ:

²2.2 Հուն. չունի «մանավանդ» բառը:

²7 Մի շարք ձեռ. չկա «և Քրիստոսն ինքը վկա է»:

²7 Բ Տմ 1.11:

²8 Ձեռքերը բարձրացնելն աղոթքի հատուկ կեցվածք էր (տե՛ս Ելք 9.29, Գ Թգ 8.22):

²9 Ա Պտ 3.3:

²11 «Լռությամբ». գրբ. ունի «համեստությամբ» կամ «մեղմությամբ»:

տղամարդուն կամ հեղինակություն բանեցնի նրա վրա: Ընդհակառակը, նա պետք է լուռ մնա, ¹³ որովհետև նախ Ադամն ստեղծվեց և ապա միայն Եվան: ¹⁴ Եվ հետո՝ Ադամը չէր, որ խաբվեց, այլ կինն էր, որ խաբվելով հանցանքի մեջ ընկավ: ¹⁵ Բայց և այնպես կինն էլ պիտի փրկվի զավակներ ծնելու համար, եթե ապրի պարկեշտությամբ, հավատով, սիրով և սրբությամբ:

3

Եկեղեցու առաջնորդի հատկանիշները

¹ Մեկ բան պարզ է, որ եպիսկոպոսության ձգտողը բարի գործ է ցանկանում: ² Արդ, եպիսկոպոսը պետք է լինի անմեղադրելի, մեկ կնոջ ամուսին, զուսպ, զգաստ, մեղմաբարո, հյուրասեր և ուսուցանելու ընդունակ: ³ Չպետք է հարբեցող լինի, ոչ էլ կոպիտ, այլ ազնիվ. ո՛չ կովազան և ո՛չ էլ դրամասեր: ⁴ Պետք է իր սեփական ընտանիքի համար լավ վերակացու լինի և ունենա զավակներ, որոնք ամենայն ակնածանքով հնազանդ լինեն իրեն: ⁵ Այլապես, եթե իր սեփական ընտանիքին վերակացու լինել չի կարող, ինչպե՞ս պիտի կարողանա հոգ տանել Աստծու եկեղեցուն: ⁶ Հավատի մեջ նորադարձ չպետք է լինի, որպեսզի չլինի թե գոռոզանալով դատապարտության տակ ընկնի Սատանայի նման. ⁷ այլ պետք է լավ անուն ունենա ոչ քրիստոնյա մարդկանց շրջանում, որպեսզի չլինի թե նախատինքի առարկա դառնա և ընկնի Սատանայի լարած թակարդի մեջ:

Սարկավազի արժանիքները

⁸ Նույնպես և սարկավազները պետք է լինեն պարկեշտ և ոչ թե կեղծավոր, գինեւեր կամ շահամոլ: ⁹ Պետք է մաքուր խղճով պահեն հավատի հայտնված ճշմարտությունները: ¹⁰ Նրանք ևս պետք է նախ փորձվեն և ապա միայն, եթե անմեղադրելի լինեն, անցնեն իրենց պաշտոնին: ¹¹ Նրանց կանայք նույնպես պետք է լինեն պարկեշտ, ոչ թե չարախոս, այլ զուսպ և վստահելի ամեն ինչում:

¹² Սարկավազը պետք է լինի մե՛կ կնոջ ամուսին և լավ վերակացու թե՛ իր զավակների և թե՛ իր ընտանիքի համար: ¹³ Որովհետև լավ ծառայություն անող սարկավազները թե՛ վարկ են շահում իրենց համար և թե՛ մեծ համարձակությամբ կարող են խոսել Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց ունեցած հավատի մասին:

^{2.13} ա Ծն 2.7: ք Ծն 2.21-22:

^{2.14} Ծն 3.1-6:

^{3.1} «Եպիսկոպոս». հուն. բառ, որ նշանակում է «վերատեսուչ», այսինքն՝ եկեղեցու առաջնորդ:

^{3.2} «Մեկ կնոջ ամուսին» կամ «մեկ անգամ ամուսնացած». տե՛ս նաև 3.12: «Զուսպ». գրբ. ունի «հեղ». նույնը տե՛ս սուրբ 11:

^{3.2-7} Տտ 1.6-9:

^{3.3} «Հարբեցող». գրբ. «անարգող»:

^{3.8} «Սարկավազ». հայ. բառ, որ նշ է «ծառայող, սպասարկող»:

^{3.11} Հուն. չունի «նրանց»: Առանց այս «նրանց»-ի կարող է ենթադրվել, որ Պողոսը խոսում է սարկավազական պաշտոնին կոչված կանանց մասին:

^{3.12} «Մեկ կնոջ ամուսին» կամ «մեկ անգամ ամուսնացած». հմմտ 3.2:

Եկեղեցին և մեր հավատի մեծ խորհուրդը

¹⁴ Հույս ունեն, որ շուտով քեզ մոտ կլինեն: Բայց այս բաները գրում եմ քեզ, ¹⁵ որպեսզի եթե ուշանամ, իմանաս, թե ինչպե՛ս պետք է շարժվես Աստծու ընտանիքում, այսինքն՝ կենդանի Աստծու եկեղեցում, որ ճշմարտության սյունն ու խարխիսն է: ¹⁶ Եվ անհերքելիորեն մեծ է աստվածապաշտության խորհուրդը, որովհետև

Աստված երևաց մարմնով
և արդարացավ հոգով,
հայտնվեց հրեշտակներին,
քարոզվեց ազգերի մեջ,
աշխարհը հավատաց,
փառքով բարձրացվեց երկինք:՝

4

Վերջին ժամանակներում հայտնվելիք մոլորությունները

¹ Բայց Սուրբ Հոգին հայտնապես ասում է, թե վերջին ժամանակներում շատերը կլքեն հավատը՝ ականջ դնելով մոլորեցուցիչ չար ոգիների և դևերի ուսուցումներին, ² որոնք քարոզվում են կեղծավոր և ստախոս մարդկանց կողմից, որոնց խիղճը խարանված է Սատանայի կնիքով:՝ ³ Այս մարդիկ ամուսնությունն արգելում են և հրահանգում հեռու մնալ մի շարք ուտելիքներից, մինչդեռ Աստված այդ ուտելիքներն ստեղծեց, որպեսզի հավատացյալ և ճշմարտության ճանաչմանը հասած մարդիկ շնորհակալությամբ վայելեն դրանք: ⁴ Արդարև, Աստծու բոլոր ստեղծածները բարի են, և դրանց մեջ խոտելի բան չկա, մանավանդ դրանք շնորհակալությամբ ընդունողի համար, ⁵ որովհետև ամեն ինչ սրբվում է Աստծու խոսքով և աղոթքով:

Քրիստոսի իսկական ծառան

⁶ Դու, սակայն, Հիսուս Քրիստոսի իսկական ծառան կլինես, եթե այս խրատները տաս հավատացյալ եղբայրներիդ և ինքդ քեզ սնես այն հավատով ու ճշմարիտ ուսուցումներով, որոնց հետևող եղար: ⁷ Իսկ պառավներին հատուկ և հավատը պղտորող առասպելներից ամբողջովին հեռու մնա:

Ինքդ քեզ մարզի՛ր աստվածապաշտությամբ ապրելու, ⁸ որովհետև եթե մարմնի մարգումներն օգտակար են որոշ բաների համար, ապա աստվածապաշտությունը ամեն ինչի համար է օգտակար, քանի որ այն խոստանում է կյանք տալ թե՛ այս, թե՛ հանդերձյալ աշխարհում: ⁹ Մեկ բան պարզ է, և ամեն մարդ պետք է գիտենա, ¹⁰ որ տքնում ենք և հանձն ենք առնում նախատիքներ կրել, որովհետև մեր հույսը դրել ենք կենդանի Աստծու վրա, որ փրկիչն է բոլոր մարդկանց և մանավանդ

՝3.16 «Եվ արդարացավ հոգով» կամ «և արդարացավ [Սուրբ] Հոգով»:

՝4.2 Անցյալում մարդիկ փախստական ստրուկների և ոճրագործների ճակատին խարան, այսինքն՝ տաք երկաթով նշան էին դնում: Պողոսն այս արտահայտությունը գործածում է փոխաբերական իմաստով:

հավատացյալների՝

¹¹ Պատվիրի՛ր այս բաները և սովորեցրո՛ւ: ¹² Եվ որպեսզի ոչ ոք քեզ չարհամարհի քո երիտասարդ տարիքի համար, օրինա՛կ եղի՛ր հավատացյալներին քո խոսքով, վարմունքով, սիրով, հավատով և մաքուր կենցաղով: ¹³ Մինչև իմ գալը հոգ տար նրանց մասին՝ ընթերցելով Աստծու խոսքը, հորդորելով և ուսուցանելով: ¹⁴ Անփույթ մի՛ եղի՛ր այն պարզևի նկատմամբ, որ տրվեց քեզ մարգարեական հոգով, երբ երեցները ձեռք դրեցին քեզ վրա: ¹⁵ Մտածի՛ր իմ այս ասածների մասին և աշխատիր գործի՛ վերածել դրանք, որպեսզի ամեն մարդ հայտնապես տեսնի քո առաջադիմությունը: ¹⁶ Ուշադի՛ր եղի՛ր ինքդ քո նկատմամբ և քո ուսուցման նկատմամբ ու միշտ էլ մնա այդպես՝ գիտենալով, որ այդ ձևով դու ոչ միայն քեզ կփրկես, այլ նաև բոլոր նրանց, ովքեր լսում են քեզ:

5

Պարտավորություններ ծերերի և այրիների հանդեպ

¹ Երբեք խստությամբ մի՛ հանդիմանի՛ր ծերին, այլ մեղմությամբ հորդորի՛ր նրան, ինչպես կվարվեիր հորդ հետ: Երիտասարդներին եղբա՛յրդ համարի՛ր, ² պառավներին՝ որպես քո մայրը, իսկ երիտասարդուհիներին քրոջդ տեղը դիր, և մոտեցի՛ր նրանց ամենայն մաքրությամբ: ³ Պատվի՛ր և խնամի՛ր այն այրիներին, որոնք իսկապես որբևայրի են: ⁴ Իսկ եթե մի այրի զավակներ ու թոռներ ունի, նրա՛նք պետք է նայեն նրան, որպեսզի սովորեն բարեպաշտությունը կիրառել նախ իրե՛նց տանը՝ ծնողներից իրենց տրված խնամքի փոխարեն հոգ տանելով նրանց, որովհետև ա՛յդ է ճշմարիտ և ընդունելի բարեպաշտությունն Աստծու համար: ⁵ Իսկական այրին նա է, ով ոչ ոք չունի, իր հույսը դրել է միայն Աստծու վրա և գիշեր-ցերեկ իր ժամանակն անց է կացնում աղոթքով և խնդրանքով: ⁶ Իսկ հանգստություն և վայելք փնտրող այրին կենդանի մեռած է արդեն: ⁷ Այդպիսիներին այս պատվերնե՛րը տուր, որպեսզի անարատ լինեն: ⁸ Իսկ եթե մեկը յուրայիներին և մանավանդ իր ընտանիքի անդամների մասին հոգ չի տանում, նա իր հավատն ուրացած մարդ է, շատ ավելի վատ, քան անհավատը:

⁹ Այրի համարի՛ր միայն այն կանանց, որոնք վաթսուն տարեկանից մեծ են, մեկ անգամ են ամուսնացել ¹⁰ և վկայվել են բարի գործերով, այսինքն՝ զավակներ են մեծացրել, եղել են հյուրասեր, խոնարհաբար ծառայել են ճանապարհորդ հավատացյալներին, օգնել են նեղության մեջ եղողներին և իրենք իրենց ամբողջությամբ տվել են բարեգործության: ¹¹ Բայց երիտասարդ այրի կանանց մերժի՛ր, որովհետև երբ նրանց ցանկություններն արթնանում են, ուզում են ամուսնանալ և Քրիստոսի դեմ են դառնում ¹² ու դատապարտության ենթարկվում, քանի որ արհամարհում են նրան հավատարիմ մնալու իրենց սկզբնական հանձնարությունը: ¹³ Միաժամանակ, ծուլության վարժվելով, սկսում են տնից տուն

¹4.10 «Հանձն ենք առնում նախատիքներ կրելը», հուն. լավագույն ձեռ. ունեն «պայքարում ենք»:

²5.5 Հղթ 8.4-6:

շրջել և ոչ միայն ծույլ, այլ նաև բամբասող ու հետաքրքրասեր են և խոսում են իրենց չվերաբերող բաների մասին: ¹⁴ Հետևաբար, ուզում եմ, որ երիտասարդ այրիներն ամուսնանան, զավակներ ծնեն, տուն պահեն և որևէ առիթ չտան, որ հակառակորդը չարախոսի, ¹⁵ որովհետև նրանցից ոմանք արդեն իսկ խոտորեցին՝ հետևելով Սատանային: ¹⁶ Իսկ եթե հավատացյալ մեկն այրիներ ունի իր ընտանիքում, թող ի՛նքը օգնի նրանց, որպեսզի եկեղեցին չճանրաբեռնվի և կարողանա հոգ տանել իսկական այրիների մասին:

Երեցների մասին

¹⁷ Այն երեցները, որոնք լավ վերակացություն են անում եկեղեցուն, թող կրկնակի վարձի արժանի համարվեն, մանավանդ նրանք, որոնք աշխատում են թե՛ քարոզելով, և թե՛ ուսուցանելով: ¹⁸ որովհետև Օրենքի գիրքն ասում է. «Կալ անող եզան դունչը մի կապիր» և «Մշակն արժանի է իր վարձին»:

¹⁹ Որևէ երեցի մասին ամբաստանություն մի՛ ընդունիր՝ առանց երկրորդ կամ երրորդ անձի վկայությունը լսելու: ²⁰ Իսկ այն երեցները, որոնք մեղանչել են, հանդիմանի՛ր բոլորի ներկայությամբ, որպեսզի մյուսները վախենան: ²¹ Կոչ եմ անում քեզ Աստծու, Հիսուս Քրիստոսի և ընտրյալ հրեշտակների վկայությամբ, որ այս կանոնները պահես առանց կանխակալ կարծիքներով շարժվելու և առանց խտրություն դնելու: ²² Մի՛ շտապիր որևէ մեկի վրա ձեռք դնելու, որպեսզի ուրիշների մեղքերին բաժնեկից չդառնաս: Անարա՛տ պահիր ինքդ քեզ:

²³ Այսուհետև միայն ջուր մի՛ խմիր, այլ մի քիչ գինի՛ խառնիր ստամոքսիդ համար, քանի որ հաճախակի հիվանդանում ես:

²⁴ Ինչպես շատ մարդկանց մեղքերը հայտնի են դառնում նույնիսկ որևէ դատաստանից առաջ, իսկ ուրիշների դեպքում դրանք հետո են հայտնի դառնում, ²⁵ նույնպես և հայտնի են դառնում բարի գործերը, և նույնիսկ այն գործերը, որ անմիջականորեն հայտնի չեն, ծածուկ մնալ չեն կարող:

6

Ծառաների մասին

¹ Նրանք, որ ծառայության լծի տակ են, թող բացարձակ հարգանք ցույց տան իրենց տերերին, որպեսզի Աստծու անունն ու Քրիստոսի ուսուցումները հայեցողության առարկա չդառնան: ² Իսկ նրանք, որ քրիստոնյա տերեր ունեն, թող չարհամարհեն նրանց այն պատճառաբանությամբ, որ Քրիստոսով եղբայրներ են, ընդհակառակը, ավելի լավ թող ծառայեն, քանի որ իրենց ծառայությունից օգտվողները հավատակիցներ են և սիրելի:

Միայլ ուսուցումներ և ճշմարիտ աստվածապաշտություն

^{5.17} «Կրկնակի վարձի» կամ «կրկնակի պատվի»:

^{5.18} ա Բ Օր 25.4: ք Մտ 10.10, Ղկ 10.7:

^{5.19} Բ Օր 17.6, 19.15:

^{6.1} Գրք. չունի «բացարձակ» բառը:

Այս բաները սովորեցրո՛ւ և հանձնարարի՛ր: ³ Իսկ ով ուրիշ բան է սովորեցնում և կարևորություն չի տալիս մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ողջամիտ խոսքերին, ոչ էլ աստվածապաշտության վրա հիմնված ուսուցումներին, ⁴ նա գոռոզությամբ կուրացած մեկն է, որ ոչինչ չգիտի: Նա խնդիրներ և վեճեր ստեղծելու հիվանդությամբ է բռնված, և դրանից են ծնվում նախանձը, հակառակասիրությունը, հայհոյությունը, չար կասկածներն ⁵ ու անվերջանալի բախումները մտքով ապականված և ճշմարտությունից հեռացած մարդկանց միջև, որոնք կարծում են, թե կրոնը շահի աղբյուր է: Այդպիսիներից հեռո՛ւ մնա:

⁶ Կրոնը շահի մեծ աղբյուր է, այո՛, իր ունեցածով գոհանալ իմացող մարդու համար: ⁷ Արդարև, մենք մեզ հետ ոչ մի բան չբերեցինք աշխարհ և ոչ մի բան չպիտի կարողանանք տանել մեզ հետ: ⁸ Եթե ուտելիք և հագնելիք ունենք, բավարարվենք դրանցով: ⁹ Իսկ նրանք, որ հարստանալ են ուզում, ընկնում են փորձության և թակարդի մեջ: Լցվում են շատ անմիտ ու վնասակար ցանկություններով, որոնք մարդկանց գլորում են մահվան և կորստի անդունդը, ¹⁰ որովհետև բոլոր չարիքների արմատը դրամասիրությունն է: Շատերը, ձգտելով դրամ դիզելու, շեղվեցին հավատից և իրենք իրենց տանջեցին բազմաթիվ ցավերով:

Անձնական հորդորներ

¹¹ Սակայն դու, մա՛րդ Աստծու, հեռո՛ւ փախիր այդպիսի բաներից և հետամո՛ւտ եղիր արդարության, աստվածապաշտության, հավատի, սիրո, համբերության և հեզության:

¹² Հավատի բարի պատերա՛զմ մղիր, ամուր կառչի՛ր հավիտենական կյանքից, որի համար Աստված կոչեց քեզ, և որը դու դավանեցիր գեղեցիկ մի դավանությամբ՝ բազում վկաների առաջ: ¹³ Պատվիրում եմ քեզ Աստծու առջև, որ կյանք է տալիս բոլորին, և Հիսուս Քրիստոսի առջև, որ Պոնտացի Պիղատոսի դիմաց իր հավատի վկայությունը տվեց գեղեցիկ մի դավանությամբ,* ¹⁴ որ դու պահես այս պատվիրանները զգուշությամբ և հավատարմորեն, մինչև որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվի երկրորդ անգամ:

¹⁵ Այդ հայտնությունն իր ժամանակին կկատարի Աստված ինքը,

նա, որ Երանելին է և միակ Հզորը,
թագավորների Թագավորը և տերերի Տերը,

¹⁶ միակը, որ անմահ է.

նա, որ բնակվում է անմատչելի լույսի մեջ,

որին մարդկանցից ոչ ոք չի տեսել

և ոչ էլ կարող է տեսնել:

Հավիտյան նրա՛նն են

պատիվն ու զորությունը: Ամեն:

Հորդոր հարուստներին

¹⁷ Այս աշխարհի հարուստներին պատվիրի՛ր, որ շատ չհպարտանան և չվստահեն

անկայուն հարստությանը, այլ վստահեն Աստծուն, որ ամեն ինչ առատորեն տալիս է մեզ, որպեսզի վայելենք: ¹⁸ Պատվիրի՛ր, որ բարիք գործեն, լավ գործերով հարստանան, լինեն առատաձեռն, սիրալիր և պատրաստ՝ իրենց ունեցածով ուրիշներին օգնելու:՝
¹⁹ Այդպիսով նրանք իրենց համար կամբարեն մի գանձ, որով ամուր հիմք կդնեն հանդերձյալում ճշմարիտ կյանքը ձեռք բերելու համար:՝

Վերջին հանձնարարություններ

²⁰ Ո՛վ Տիմոթեոս, պահի՛ր քեզ վստահված ավանդը՝ հեռու մնալով շինծու ու դատարկ տեսություններից և կեղծ գիտության անունով կատարվող բանավեճերից: ²¹ Շատերը, յուրացնելով այդ տեսությունները, շեղվեցին հավատից:

Աստծու շնորհը քեզ հետ թող լինի:՝

2ՏԻ

Բ ՏԻՄՈԹԵՈՍԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

ՏԻՄՈԹԵՈՍԻՆ

Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակը գրված է Հռոմից, որտեղ բանտարկված էր Պողոսը և իրեն լքված էր զգում:

Նամակը բովանդակում է ընդհանրապես խրատներ և ցուցումներ՝ ուղղված Տիմոթեոսին: Այնտեղ տիրող գլխավոր մտածումը Ավետարանը քարոզող մարդու դիմագրաված նեղություններն ու հակառակություններն են, որոնք հաղթահարելու համար նրա հորդորն է՝ քաջությամբ հարատևել և բարի պատերազմ մղել Հիսուս Քրիստոսին հավատարիմ զինվորի նման (1.3-2.13): Առաքյալը քաջալերում է Տիմոթեոսին և թելադրում նրան, որ անսասան հավատով վկայի Հիսուս Քրիստոսի մասին, պահի Ավետարանի և հին Ուխտի ճշմարիտ վարդապետությունը և կատարի իր պարտականությունը որպես ուսուցիչ և քարոզիչ:

Առաքյալն զգուշացնում է Տիմոթեոսին, որ չընկնի «հիմար և տգետ» վիճաբանությունների փորձության մեջ, վիճաբանություններ, որոնք ոչ մի բարիք չեն բերում, այլ միայն մոլորեցնում են ունկնդիրներին:

Վերջապես, առաքյալն իր գործակցին հիշեցնում է իր անձնական օրինակը և առաքելության նպատակը, իր հավատը, համբերությունը, սերը, հարատևությունը և հալածանքների ընթացքում գալիք նեղությունները:

Այս նամակը քաջալերության մնայուն աղբյուր է բոլոր հավատացյալների և մանավանդ նրանց համար, որոնք լծված են Տիրոջ ծառայության գործին, որպեսզի նրանք իրենց հավատի պայքարը մղեն անվախորեն, համբերությամբ և սիրով:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

-Նախաբան (1.1-2):

^{6.18} Հուն. չունի «սիրալիր»:

^{6.19} «Ճշմարիտ» բառի փոխարեն մի շարք ձեռ. ունեն «հավիտենական»:

^{6.21} «Քեզ հետ». ձեռ. մեծ մասն ունի «ձեզ հետ»: Շատ ձեռ. ավելացնում են «Ամեն»:

- Գոհություն և թելադրանքներ (1.3-2.13):
- Հորդորներ և զգուշացում (2.14-4.5):
- Պողոսի անձնական կացությունը (4.6-18):
- Վերջաբան (4.19-22):

1

Ողջուն

¹ Ես՝ Պողոսս, որ Աստծու կամքով եղա Հիսուս Քրիստոսի առաքյալը, որպեսզի քարոզեմ նրա խոստացած կյանքը, որ ունենք մենք՝ Հիսուս Քրիստոսին միացողներս, ² գրում եմ քեզ, ո՛վ Տիմոթեոս, իմ սիրելի՛ որդի: Թող Հայր Աստված և մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, շնորհ, ողորմություն և խաղաղություն պարգևեն քեզ՝

Գոհության աղոթք

³ Երախտապարտ եմ Աստծուն, որին ծառայում եմ մաքուր խղճով, ինչպես ծառայել են իմ նախահայրերը, և իմ աղոթքներում զիջեր-ցերեկ անդադար քեզ եմ հիշում ⁴ ու փափագում տեսնել քեզ, մանավանդ երբ վերհիշում եմ բաժանման պահին քո թափած արցունքները, որպեսզի սիրտս լցվի ուրախությամբ: ⁵ Մտաբերում եմ այն անկեղծ՝ հավատը, որ տեսա քո մեջ, որ նախապես գտել էի քո տատի՝ Լավոդիայի, և քո մոր՝ Եվնիկեի մեջ, և համոզված եմ, որ կա նաև քո մեջ՝

Ավետարանին հավատարիմ մնալու հորդոր

⁶ Այդ պատճառով էլ հիշեցնում եմ քեզ, որ վառ պահես այն պարզը, որ Աստված քեզ տվեց, երբ ես ձեռնադրեցի քեզ, ⁷ որովհետև Աստված մեզ իր Հոգին տվեց, որպեսզի հաղթահարենք մեր վախկոտությունը, զորանանք, լցվենք սիրով և զգաստ մի կյանք վարենք:

⁸ Հետևաբար, մի՛ վախեցիր մեր Տիրոջ համար վկայություն տալուց, մի՛ վախեցիր նաև խոսելուց իմ մասին, որ բանտարկված եմ Տիրոջ համար: Այլ ինձ նման հա՛նձն առ չարչարվել Ավետարանի համար, որքան որ քեզ կարողություն տա Աստված.՝

⁹ նա, որ փրկեց մեզ

և հրավիրեց մեզ իր սուրբ ժողովուրդը լինելու

ոչ թե մեր արժանիքների համար,

այլ համաձայն իր ծրագրի և այն շնորհի,

որ մեզ էր տրվել Հիսուս Քրիստոսի միջոցով՝

հավիտենական ժամանակներից իսկ առաջ:

¹⁰ Այդ շնորհն այժմ հայտնվեց մեզ

^{1.2} Գրծ 16.1:

^{1.4} Պողոսի ակնարկությունը վերաբերում է Եփեսոսից իր մեկնումին, երբ առաքելական գործի համար նա այնտեղ թողեց Տիմոթեոսին (Ա Տմ 1.3):

^{1.5} Գրծ 16.1:

^{1.8} «Մի՛ վախեցիր». բոց՝ «ամոթ մի՛ համարիր»: «Բանտարկված եմ». ըստ 17-րդ համարի՝ Պողոսը բանտարկվել էր Հռոմում:

մեր փրկչի՝ Հիսուս Քրիստոսի երևումով,
որ խափանեց մահվան իշխանությունը
և իր տված ավետիսով
հայտնեց կյանքն անմահական:

¹¹ Աստված ինձ կարգեց առաքյալ և հեթանոսների ուսուցիչ, որպեսզի այդ ավետիսը տամ նրանց,¹² և այդ է պատճառը, որ կրում եմ այս չարչարանքները: Բայց այս չարչարանքներն ինձ բնավ չեն վախեցնում, որովհետև ճանաչում եմ իմ Փրկչին, որին վստահել եմ, և համոզված եմ, որ նա ինձ վստահված այդ ավանդը կպահի մինչև դատաստանի օրը:

¹³ Դու քեզ համար որպես օրինակ ունեցիր այն ողջամիտ ուսուցումները, որոնք լսեցիր ինձնից՝ այն հավատով ու սիրով, որ ունենք մենք՝ Հիսուս Քրիստոսին միացածներս: ¹⁴ Քեզ վստահված բարի ավանդը պահիր Սուրբ Հոգու օգնությամբ, որ բնակվում է մեր մեջ:

Անձնական լուրեր

¹⁵ Ուզում եմ իմանաս, որ ինձ լքեցին Ասիա նահանգի բոլոր եղբայրները, որոնց հետ նաև Ֆիզելոսն ու Հերմոգենեսը: ¹⁶ Ինչ վերաբերում է Օնեսիֆորոսին, թող Աստված ինքը վարձատրի նրա ընտանիքին, որովհետև նա շատ անգամ ուրախացրեց ինձ: Չվախեցավ բանտ գալուց, ¹⁷ այլ հազիվ Հռոմ հասած՝ ջանաց ինձ փնտրել և գտավ: ¹⁸ Թող Աստված վարձատրի նրան դատաստանի օրը: Իսկ թե ինչքա՛ն ծառայություն մատուցեց ինձ Եփեսոսում, այդ դու ինքդ շատ լավ գիտես:

2

Հիսուս Քրիստոսի հավատարիմ զինվորը

¹ Հետևաբար դու, որդյա՛կ իմ, գորացի՛ր Հիսուս Քրիստոսի շնորհով, ² և ինչ որ սովորեցրի քեզ բազում վկաների ներկայությամբ, ավանդի՛ր դրանք այնպիսի վստահելի մարդկանց, որոնք կարող են ուրիշներին էլ սովորեցնել:

³ Որպես Հիսուս Քրիստոսի հավատարիմ մի զինվոր, պատրա՛ստ եղիր նրա նման չարչարվելու: ⁴ Զինվորական ծառայություն անողը քաղաքացիական զբաղմունքներից հեռու է մնում՝ իր գորավարի աչքը մտնելու համար: ⁵ Նույնպես և մարզիկը մրցանակ ստանալ չի կարող, եթե ընդունված կանոնների համաձայն չմրցի: ⁶ Ծանր աշխատանք տանող հողագործը նախ ի՛նքն է արժանի արտի բերքը վայելելու: ⁷ Հասկացի՛ր, թե ինչ եմ ուզում ասել, որովհետև Տերը քեզ իմաստություն կտա, որ հասկանաս ամեն ինչ:

⁸ Հիշի՛ր մեռելներից հարություն առած Հիսուս Քրիստոսին, որ Դավթի սերնդից էր իմ քարոզած Ավետարանի համաձայն: ⁹ Այդ Ավետարանի համար եմ չարչարվում անհա և նույնիսկ բանտարկված եմ, ինչպես մի չարագործ: Սակայն Աստծու խոսքը

^{1.11} Ա Տմ 2.7:

^{1.12} «Ինձ վստահված այդ ավանդը կպահի». այլ թրգմ ունեն «կպահի այն ավանդը, որ ես [վստահել եմ իրեն]»:

^{1.18} «Վարձատրի նրան». բոց՝ «իր [=Տիրոջ] ողորմությանը արժանի անի նրան»:

հնարավոր չէ բանտարկել: ¹⁰ Դրա համար ամեն ինչի համբերում եմ ի սեր Աստծու ընտրյալների, որպեսզի նրանք ևս, Հիսուս Քրիստոսին միանալով, հասնեն փրկության և հավիտենական փառքին: ¹¹ Մի բան հաստատ է.

-Եթե Քրիստոսի հետ մեռանք,

նրա հետ էլ կապրենք:

¹² Եթե համբերենք,

նրա հետ էլ կթագավորենք:

Եթե ուրանանք նրան,

նա էլ մե՛զ կուրանա:՝

¹³ Եթե մենք մինչև իսկ հավատարիմ չմնանք,

նա հավատարիմ է մնում,

քանզի չի կարող ինքն իրեն հակասել:

Ընտիր մշակը

¹⁴ Այս բոլորը հիշեցրո՛ւ բոլորին և Աստծու առաջ պահանջի՛ր նրանցից, որ միմյանց հետ վեճ ու կռիվ չանեն, մի բան, որ օգուտ չունենալուց բացի՝ լսողների հավատն էլ քանդում է:՝

¹⁵ Չանա՛ Աստծու աչքին երևալ որպես ընտիր մի մարդ, այնպիսի մի մշակ, որ իր գործերի համար ամաչելու բան չունի, որպես մեկը, որ ուղիղ է ուսուցանում Աստծու ճշմարիտ պատգամը:

¹⁶ Հեռո՛ւ մնա հավատի ճշմարտությունը խեղաթյուրող դատարկ վեճերից, որոնք մարդկանց Աստծուց հետզհետե հեռացնելուն են ծառայում միայն: ¹⁷ Այդպիսի խոսքերի թողած թույնը քաղցկեղի նման կրծում է մարդուն: Այդպիսի խեղաթյուրող վիճակներն են Հիմենեոսն ու Ֆիլետոսը, ¹⁸ որոնք շեղվեցին ճշմարտությունից և քանդեցին շատերի հավատը՝ ասելով, թե մեռելների հարությունն արդեն իսկ տեղի է ունեցել: ¹⁹ Բայց Աստծու դրած հաստատուն հիմքը կանգուն է մնում: Դրա վրա գրված է. «Տերը ճանաչում է նրանց, որոնք իրենն են», նաև «Ով որ Տիրոջ անունն է կրում, թող հեռո՛ւ մնա անիրավ գործերից»:

²⁰ Մեծ տան մեջ միայն ոսկյա և արծաթյա անոթներ չեն լինում, այլ նաև փայտյա և կավե: Պարզ է, որ առաջինները թանկարժեք են, իսկ մյուսները՝ անարժեք: ²¹ Արդ, ով ինքն իրեն մաքրի նման մեղքերից, Տիրոջ համար կդառնա թանկարժեք մի անոթ՝ ամեն տեսակ բարի ծառայություն մատուցելու մաքուր և պատրաստ:

²² Փախի՛ր երիտասարդական ցանկություններից և հետամո՛ւտ եղիր արդարության, հավատի, սիրո, խաղաղության ու սրբության, նրանց նման, որոնք մաքուր սրտով աղոթում են Աստծուն: ²³ Հրաժարվի՛ր հիմար և անօգուտ վեճերից՝ իմանալով, որ դրանցից կռիվներ են ծագում: ²⁴ Աստծու ծառան չպետք է կովի, այլ պետք է բոլորի հանդեպ հեզ լինի, կարող՝ Ավետարանը ուսուցանելու, ներողամիտ՝ ²⁵ քաղցրությամբ

^{2.10} «Հավիտենական». գրք. «երկնավոր»:

^{2.12} Մտ 10.33, Ղկ 12.9:

^{2.14} «Աստծու». շատ ձեռ. ունեն «Տիրոջ»:

^{2.19} Թվ 16.5:

խրատելու հակառակողներին, որովհետև Աստված միշտ էլ առիթ է տալիս, որ նրանք հետ դառնան իրենց սխալից ու ճանաչեն ճշմարտությունը՝²⁶ և զգաստանալով դուրս գան Սասանայի որոգայթներից, որոնց մեջ բռնված՝ կատարում են նրա կամքը:

3

Վերջին ժամանակների մարդկանց նկարագիրը

¹ Այս բանը և՛ ս իմացիր, որ վերջին օրերին դժվար ժամանակներ կգան, ² որովհետև մարդիկ կդառնան անձնասեր, դրամապաշտ, ամբարտավան, հպարտ, հայհոյող, ծնողներին անհնազանդ, ապերախտ, սրբությունները ոտնակոխ անող, ³ տմարդի, անգութ, չարախոս, անհանդուրժող, դաժան, բարուն թշնամի, ⁴ մատնիչ, անպատկառ, գոռոզ և ավելի հեշտասեր, քան աստվածասեր: ⁵ Արտաքուստ նրանք աստվածապաշտ են, բայց ներքուստ չեն հավատում աստվածապաշտության գործությանը: ⁶ Զգուշացի՛ր նրանցից: ⁶ Նրանց մեջ կան նաև այնպիսիք, որոնք մտնում են տնից տուն և իրենցով հրապուրում մեղքերով ծանրաբեռնված և զանազան ցանկություններով բռնված թեթևաբարո կանանց, ⁷ որոնք միշտ ուզում են գիտենալ, բայց երբեք չեն հասնում ճշմարիտ գիտությանը: ⁸ Ինչպես Յանես և Յամբրես մոզերը հակառակվեցին Մովսեսին, այնպես էլ մտքով ապականված և հավատով սնանկ այս մարդիկ հակառակվում են ճշմարտությանը: ⁹ Բայց նրանց հաջողությունը երկար չի տևի, որովհետև նրանց անմտությունը շուտով հայտնի կդառնա բոլորին, ճիշտ այնպես, ինչպես եղավ այդ երկուսինը:

Առողջ ուսուցումներին և Աստծու խոսքին կառչելու հորդոր

¹⁰ Բայց դու կառչա՛ծ մնա իմ ուսուցմանը, իմ կյանքի օրինակին, իմ հոժարությանը, հավատին, համբերատարությանը, սիրուն և հարատևությանը, որ ցուցաբերեցի նույնիսկ իմ հալածանքների և չարչարանքների մեջ: ¹¹ Գիտես, թե ի՛նչ պատահեց ինձ հետ Անտիոքում, Իկոնիոնում և Լյուստրայում: Ինչպիսի՛ հալածանքների ենթարկվեցի, և այդ բոլորից Տերն ինձ ազատեց: ¹² Նույնպես բոլոր նրանք, որ ուզում են աստվածապաշտությամբ ապրել Հիսուս Քրիստոսին միացած, անպայման կենթարկվեն հալածանքների: ¹³ Իսկ չար և խաբեբա մարդիկ առավել ևս առաջ կգնան չարության մեջ, իրենք մոլորված՝ ուրիշներին էլ կմոլորեցնեն:

¹⁴ Բայց դու հաստա՛տ մնա քո սովորած բաների մեջ, որոնց ճշմարտությանը վստահ ես, որովհետև գիտես, թե ումից ես սովորել: ¹⁵ Եվ արդեն մանկուց գիտես Մուրբ գրքերը, որոնք գորություն ունեն քո միտքը բացելու իմաստությանը, որպեսզի հավատաս Հիսուս Քրիստոսին և փրկվես: ¹⁶ Աստծու ներշնչումով գրված բոլոր Մուրբ

²25 «Հետ դառնան իրենց սխալից» կամ «փոխեն իրենց վարմունքը». բոց՝ «ապաշխարեն»:

³8 Ըստ եբրայական ավանդության՝ սրանք Եգիպտոսի այն մոզերը կամ քրմերն էին, որոնք փարավոնի հրամանով ընդդիմացան Մովսեսի հրաշագործություններին (տե՛ս Ելք 7.11, 22 նն):

³8 Ելք 7.11:

³11 «Անտիոք». սա հյուսիսային Սիրիայի նշանավոր քաղաքը չէ, այլ Փոքր Ասիայի Պիսիդիա նահանգի մի քաղաք (տե՛ս Գրծ 13.14 և ծնթ):

³11 ա Գրծ 13.14-52: բ Գրծ 14.1-7: գ Գրծ 14.8-20:

գրքերը օգտակար են թե՛ ճշմարտությունն ուսուցանելու և թե՛ սխալը հերքելու, մարդուն ճիշտ ճանապարհի վրա դնելու և արդար կյանքի դաստիարակությունը տալու համար,¹⁷ որպեսզի Աստծուն նվիրված մարդը լինի կատարյալ և պատրաստ ամեն տեսակ բարի գործեր կատարելու:

4

Աստծու խոսքն ավետարանողի գործը

¹ Ուստի հետևյալ պատվերն էմ տալիս քեզ Աստծու և Հիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է ողջերին և մեռածներին՝ իր հայտնության օրը, երբ գա իր թագավորությամբ. - ² Քարոզի՛ր Աստծու խոսքը և այն հայտարարի՛ր ամեն առիթով՝ առանց մտածելու պատեհության կամ անպատեհության մասին, ուղղի՛ր սխալները, սաստի՛ր կամ հորդորի՛ր՝ մեծ համբերատարությամբ ուսուցանելով,³ որովհետև կգա ժամանակ, երբ մարդիկ ականջ չեն դնի առողջ վարդապետությանը, այլ իրենց սեփական ցանկություններին համապատասխանող և իրենց հաճոյացնող բաների մասին խոսող ուսուցիչներ կփնտրեն: ⁴ Նրանք չեն ուզենա ճշմարտությունը լսել և կկորչեն՝ ականջ դնելով առասպելներին: ⁵ Բայց դու արթո՛ւն եղիր միշտ, համբերի՛ր նեղություններին, ավետարանչի քո գործն արա և քո ծառայությունը հասցրու իր ավարտին:

Բարի պատերազմի վախճանը

⁶ Գալով ինձ՝ ես արդեն իսկ իմ կյանքն իբրև զոհ նվիրել եմ Աստծուն, և այս աշխարհից իմ մեկնումի ժամանակն էլ մոտեցել է: ⁷ Բարի պատերազմ մղեցի, ավարտեցի կյանքիս ընթացքը, պահեցի հավատը: ⁸ Այսուհետև ինձ մնում է միայն սպասել արդարության պսակին, որ Տերը՝ արդար Դատավորը, իբրև հատուցում, ինձ կտա դատաստանի օրը: Եվ կտա ոչ միայն ինձ, այլ նաև բոլոր նրանց, ովքեր սիրով սպասում են Տիրոջ հայտնվելուն:

Անձնական լուրեր և վերջին ողջույններ

⁹ Ջանա՛ շուտով գալ ինձ մոտ, ¹⁰ որովհետև Դեմասը, այս աշխարհը նախընտրելով, լքեց ինձ և գնաց Թեսաղոնիկե: Կրեակեսը գնաց Գաղատիա, Տիտոսը՝ Դալմատիա: ¹¹ Միայն Ղուկասն է ինձ մոտ: Մարկոսին քեզ հետ բեր, որովհետև նա ինձ օգտակար է Աստծու ծառայության գործում: ¹² Տյուքիկոսին ուղարկեցի Եփեսոս:՝

¹³ Երբ որ գաս, քեզ հետ բեր այն վերարկուն, որը թողեցի Տրովադայում, Կարպոսի

^{3.16} «Աստծու ներշնչումով գրված բոլոր [Մուրբ] գրքերը օգտակար են...». այլ թրգմ՝ «Բոլոր [Մուրբ] գրքերը Աստծու ներշնչումով են գրված և օգտակար են...»:

^{4.7} «Պահեցի հավատը». այլ թրգմ՝ «պահեցի հավատարմությունս» կամ «հավատարիմ մնացի»:

^{4.10} «Գաղատիա». գրբ. «Գալիլեա», իսկ մի քանի ձեռ՝. «Գաղղիա»:

^{4.10} ա Կղ 4.14, Փմ 24: բ Բ Կր 8.23, Գղ 2.3, Տո 1.4:

^{4.11} ա Կղ 4.14, Փմ 24: բ Գրծ 12.12, 25; 13.13, 15.37-39, Կղ 4.10, Փմ 24:

^{4.12} Գրծ 20.4, Եփ 6.21-22, Կղ 4.7-8:

մոտ: Քեզ հետ բե՛ր նաև գրքերս, մանավանդ մագաղաթները:՝

¹⁴Դարբին Ալեքսանդրոսը շատ չարիք հասցրեց ինձ. թող Տերը հատուցի նրան՝ ըստ նրա գործերի:՝ ¹⁵Զգուշացի՛ր նրանից, որովհետև նա սաստիկ հակառակվեց մեր քարոզչությանը:

¹⁶Իմ առաջին դատավարության ժամանակ ոչ ոք ինձ թիկունք չկանգնեց. բոլորն էլ լքեցին ինձ: Թող Աստված դա մեղք չհամարի նրանց: ¹⁷Բայց Տերն ինձ օգնեց և զորացրեց ինձ, որպեսզի ինձնո՛վ կատարվի իր խոսքի քարոզչությունը, և բոլոր հեթանոսները լսեն այն: Աստված ինձ ազատեց ստույգ մահվանից.՝ ¹⁸նա կազատի ու կփրկի ինձ ամեն չարիքից՝ հասցնելով ինձ իր երկնային արքայությանը: Փա՛ռք նրան հավիտյանս հավիտենից: Ամեն:

¹⁹Բարևի՛ր Պրիսկային և Ակյուդասին, ինչպես նաև Օնեսիֆորոսի ընտանիքին:՝

²⁰Երաստոսը մնաց Կորնթոսում, իսկ Տրոֆիմոսին հիվանդ վիճակում թողեցի Միլետոսում:՝ ²¹Աշխատի՛ր գալ ձմեռը վրա չհասած:

Քեզ բարևում են Եվբուլոսը, Պուդեսը, Լինոսը և Կլավդիան, ինչպես նաև բոլոր քրիստոնյա եղբայրները: ²²Տեր Հիսուս Քրիստոսը քեզ հետ թող լինի: Աստծու շնորհը քեզ հետ լինի:՝

TIT

ՏԻՏՈՍԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ՏԻՏՈՍԻՆ

Տիտոսը հեթանոսությունից դարձած քրիստոնյա էր, Պողոսի կարևոր գործակիցներից մեկը նրա առաքելության ժամանակ: Պողոսն այս նամակն ուղղել է իր երիտասարդ օգնականին, որը տվյալ պահին մնացել էր Կրետեում՝ եկեղեցու գործերը տնօրինելու համար:

Նամակն ունի երեք գլխավոր մտահոգություն.

1. Պողոսը հիշեցնում է Տիտոսին, թե ինչպիսի նկարագրի տեր պետք է լինեն եկեղեցու առաջնորդները, հատկապես վատ բարոյականի տեր կրետացիների մեջ:
2. Հորդորներ է տալիս Տիտոսին, որ միշտ ուսուցանի եկեղեցու բոլոր խավերին՝ ծեր մարդկանց և կանանց, երիտասարդներին և ստրուկներին:
3. Քրիստոնեական վարքի և առաքինությունների հորդորներ է տալիս բոլորին, որպեսզի լինեն խաղաղասեր ու ազնիվ և հեռու մնան ատելությունից,

^{4.13} Գրծ 20.6:

^{4.14} Գրք. չունի «դարբին»:

^{4.14} ա Ա Տմ 1.20: բ Սղ 62.12, Հո 2.6:

^{4.17} «Ստույգ մահվանից». բոց՝ «առյուծի բերանից»: Պողոսի այս ակնարկությունը կարող է վերաբերել կրկեսում առյուծների կողմից հոշոտվելուն կամ, իբրև փոխաբերական պատկեր, ակնարկել Սատանային և նրա լարած թակարդներին (հմմտ Ա Պտ 5.8):

^{4.19} ա Գրծ 18.2: բ Բ Տմ 1.16-17:

^{4.20} ա Գրծ 19.22, Հո 16.23: բ Գրծ 20.4, 21.29:

^{4.22} «Քեզ հետ». հուն. «ձեզ հետ»: Մի շարք ձեռ. ավելացնում են «Ամեն»:

բանավեճերից և պառակտումներից: Նույնպիսի հորդորներ է տալիս նաև Տիտոսին:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Ողջույն (1.1-4):
- Եկեղեցու պաշտոնյաները և նրանց պարտավորությունները (1.5-16):
- Չանազան խմբավորումների պարտականությունները եկեղեցում (2.1-15):
- Հորդորներ և ազդարարություն (3.1-11):
- Վերջաբան (3.12-15):

1

Ողջույն

¹ Ես՝ Պողոսս, Աստծու ծառաս և Հիսուս Քրիստոսի առաքյալս, կոչված եմ Աստծու ընտրյալներին բերելու հավատի և ճշմարտության ճանաչմանը, այն ճշմարտության, որը գտնվում է աստվածապաշտությամբ, ² որպեսզի նրանք հավիտենական կյանքի հույսն ունենան: Հավիտենական ժամանակներից առաջ իսկ անսուտն Աստված ինքը խոստացավ այդ կյանքը, ³ իսկ հիմա, հարմար ժամանակը հասած համարելով, այդ խոստումը հայտնեց իր Ավետարանով, որի քարոզչությանը կոչվեցի մեր փրկիչ Աստծու հրամանով:

⁴ Ո՛վ Տիտոս, մեր ընդհանուր հավատի գծով իմ հարազատ որդի, թող Հայր Աստված և մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, շնորհ և խաղաղություն պարգևեն քեզ:

Երեցից ու եպիսկոպոսից պահանջված հատկությունները

⁵ Քեզ թողեցի Կրեետում, որպեսզի հոգաս եկեղեցու կարիքները և կազմակերպես այն՝ յուրաքանչյուր քաղաքում երեցներ կարգելով, ինչպես որ պատվիրեցի քեզ:

⁶ Երեցության թեկնածուն պետք է լինի անմեղադրելի, մե՛կ կնոջ այր լինի և ունենա հավատացյալ զավակներ, որոնք անառակության և անհնազանդության մեջ ամբաստանված չլինեն: ⁷ Արդարև, եպիսկոպոսը, որպես Աստծու տնտես, պետք է անմեղադրելի լինի: Չպետք է լինի հանդուգն, բարկացող, գինեմոլ, կովազան և շահամոլ, ⁸ այլ հյուրասեր, բարին սիրող, զուսպ, արդար, մաքուր և ժուժկալ: ⁹ Պետք է ամուր կապված մնա իր սովորած վստահելի վարդապետությանը, որպեսզի կարողանա ուղիղ ուսուցումով հորդորել ուրիշներին և հանդիմանել հակառակորդներին:

Պայքար սուտ վարդապետությունների դեմ

¹⁰ Արդարև, կան բազում անհնազանդներ, դատարկախոսներ և միտք պղտորողներ, մանավանդ հրեությունից դարձածների մեջ, ¹¹ որոնց բերանը պետք է փակել,

^{1.4} Բ Կր 8.23, Գղ 2.3, Բ Տմ 4.10:

^{1.6} «Մեկ կնոջ այր» կամ «մեկ անգամ ամուսնացած»:

^{1.6-9} Ա Տմ 3.2-7:

որովհետև նրանք ամբողջ ընտանիքներ են քանդում և շահամոլությունից տարված՝ ուսուցանում են այնպիսի բաներ, որ պետք չէ ուսուցանել:

¹²Նրանցից մեկը, որ իրենց կողմից մարգարե էր ճանաչվել, ասել է. «Կրետացիները մշտական ստախոսներ են՝ վայրի գազանների նման անգործ ու պորտաբույծ»:¹³ Եվ շատ ճիշտ է այս վկայությունը: Դրա համար էլ ամենայն խստությամբ հանդիմանի՝ որ նրանց, որպեսզի վերադառնան առողջ հավատին, ¹⁴ փոխանակ հրեական առասպելներին և ճշմարտությունից շեղված մարդկանց պատվերներին ականջ տալու: ¹⁵ Խղճմտանքով մաքուր մարդու համար ամեն բան մաքուր է, մինչդեռ պիղծ և անհավատ մարդկանց համար ոչ մի մաքուր բան չկա, որովհետև նրանց միտքն ու խղճմտանքը ապականված են: ¹⁶ Հայտարարում են, թե ճանաչում են Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են նրան, քանի որ պիղծ են, անհնազանդ և որևէ բարի գործի համար՝ անպիտան:

2

Քրիստոնեական վարքին հատուկ հորդորներ

¹ Սակայն դու պատվիրի՛ր այն, ինչ պահանջում է հավատի առողջ ուսմունքը:

² Ծերերին պատվիրի՛ր, որ լինեն զգաստ, պարկեշտ ու զուսպ և օրինակ լինեն թե՛ հավատի, թե՛ սիրո, թե՛ համբերության և թե՛ ժուժկալության մեջ: ³ Պառավ կանանց նույնպես պատվիրի՛ր, որ լինեն զգաստ և մաքրակենցաղ. չլինեն բանասարկու, ոչ էլ զինեմոլ, այլ բարեխրատ: ⁴ Թող անձնական օրինակով դեռատի կանանց սովորեցնեն սիրել իրենց ամուսիններին և զավակներին, ⁵ լինել համեստ, անբիծ, տնարար, բարի, հնազանդ իրենց ամուսիններին, որպեսզի պատճառ չդառնան, որ անարգվի Աստծու խոսքը:

⁶ Նույնպես հորդորի՛ր երիտասարդներին, որ ամեն ինչում զուսպ լինեն: ⁷ Քո անձով բարի գործերի օրինակ էլիք բոլորին, իսկ քո ուսուցումներով օրինակ տուր՝ անկեղծության, մաքրության և պարկեշտության: ⁸ Մի՛շտ խոսիր ողջամտությամբ՝ տեղիք չտալու համար պարսավանքի, որպեսզի հակառակորդն ամոթով մնա և մեր մասին չարախոսելու բան չունենա:

⁹ Պատվիրի՛ր ծառաներին, որ հնազանդ լինեն իրենց տերերին և ամեն ինչում գոհ թողնեն նրանց: Ո՛չ առարկեն և ¹⁰ ո՛չ էլ գողանան, այլ ցույց տան ճշմարիտ ու կատարյալ հավատարմություն, որպեսզի ամեն ինչում պատիվ բերեն մեր փրկչին՝ Աստծու Ավետարանին:

Փրկչական շնորհի հայտնությունը

¹¹ Քանզի Աստված իր շնորհը հայտնեց, որպեսզի բոլոր մարդիկ փրկվեն: ¹² Այդ

^{1.12} Այս խոսքը վերցված է ՔԱ 6-րդ դարի կրետացի (Կնոսոս քաղաքից) իմաստասեր և բանաստեղծ Եպիմենիտեսի «Մարգարեական պատգամների մասին» գրքից:

^{2.14} ա Սղ 130.8: բ Ելք 19.5, Բ Օր 4.20, 7.6, 14.2, Ա Պտ 2.9:

^{2.2} Հուն. չունի «և թե՛ ժուժկալության»:

^{2.5} «Աստծու խոսքը».գրք. ավելացնում է «և վարդապետությունը»:

շնորհը մղում է մեզ, որ հեռանանք անհավատ կենցաղից և աշխարհիկ ցանկություններից, այս աշխարհում ապրենք զգաստությամբ, արդարությամբ ու բարեպաշտությամբ¹³ և հույսով սպասենք այն երջանիկ օրվան, երբ մեր մեծ Աստվածն ու Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվի իր փառքով,¹⁴ որովհետև Քրիստոսն իր անձը տվեց մեզ համար, որպեսզի մեզ ազատի մեր բոլոր անօրենություններից և մաքրելով մեզ դարձնի իր սեփական ժողովուրդը՝ նախանձախնդիր բարի գործերի:

¹⁵ Այս բաները սովորեցրո՛ւ քո հավատացյալներին: Քաջալերի՛ր նրանց և ըստ հարկի հանդիմանի՛ր՝ գործածելով հեղինակությունդ, այնպես որ ոչ ոք չքեզ չարհամարհի:

3

Քրիստոնեական վարքի թելադրանքներ

¹ Հիշեցրո՛ւ բոլորին, որ հնազանդվեն և հպատակվեն պետական իշխանություններին և պատրաստ լինեն ամեն տեսակ բարի ծառայություն մատուցելու: ² Թելադրի՛ր ոչ ոքի չանարգել, մարդու հետ չկովել, այլ լինել փափկանկատ և կատարյալ ազնվություն ցուցաբերել բոլոր մարդկանց հանդեպ, ³ որովհետև մի ժամանակ մենք էլ էինք անմիտ, Աստծուն անհնազանդ ու մոլորված: Մենք էլ էինք ամեն տեսակ ցանկությունների և անառակ հաճույքների գերին՝ ապրում էինք չարությամբ ու նախանձով, մենք էլ էինք ատելի ուրիշներին և ատում էինք միմյանց:

⁴ Բայց հետո Աստված՝ մեր Փրկիչը, իր քաղցրությունն ու մարդասիրությունը հայտնեց ⁵ և փրկեց մեզ ոչ թե մեր կատարած արդար գործերի համար, այլ պարզապես իր ողորմած լինելու համար: Նոր ծնունդ տվեց մեզ մկրտությամբ և Սուրբ Հոգու միջոցով վերանորոգեց մեզ: ⁶ Աստված մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով Սուրբ Հոգին առատորեն թափեց մեզ վրա, ⁷ որպեսզի Քրիստոսի շնորհով արդարացած՝ ժառանգենք հավիտենական կյանքը, որի հույսն ունենք:

Անձնական հորդորներ Տիտոսին

⁸ Ինչ որ ասում եմ, ստույգ է, և ուզում եմ, որ դու շեշտը դնես այս կետերի վրա, որպեսզի Աստծուն հավատացողները հետամուտ լինեն բարի գործերի, որովհետև ա՛յլ է բարին և օգտակարը մարդկանց համար: ⁹ Մյուս կողմից՝ խուսափի՛ր հիմար վեճերից, ազգաբանական ցանկերով զբաղվելուց, Մովսիսական Օրենքի շուրջ ստեղծված բանավեճերից ու բանակռիվներից, որովհետև դրանք անօգուտ են և անիմաստ: ¹⁰ Ճշմարտությունից հեռացած որևէ անձի մեկ կամ երկու անգամ խրատելուց հետո երբ տեսնես, որ անօգուտ է, կապերդ խզի՛ր նրա հետ՝ ¹¹ իմանալով, որ նա մոլորվածի մեկն է և մեղքի մեջ է մնում՝ ինքն իր դատապարտության պատճառ դառնալով:

¹² **2.13** «Մեր մեծ Աստվածն ու փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը». այլ թրգմ՝ «մեծ Աստվածն ու մեր փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը»:

Վերջին հանձնարարություններ և ողջույններ

¹² Երբ քեզ մոտ ուղարկեմ Արտեմասին կամ Տյուքիկոսին, շտապի՛ր և ինձ մո՛տ արի: Ես գտնվում եմ Նիկոպոլիսում և մտադիր եմ ձմեռն անցկացնել այստեղ: ¹³ Նախքան քո գալն աշխատի՛ր ինձ մոտ ուղարկել օրենսգետ Զենասին և Ապոլլոնին, և այնպե՛ս արա, որ նրանք ոչ մի բանի պակաս չզգան: ¹⁴ Մերոնք էլ թող սովորեն բարի գործերի հետամուտ լինել, որպեսզի անհրաժեշտ կարիքների հասնեն և օգտակար դառնան:

¹⁵ Ինձ հետ եղողները բոլորն էլ բարևում են քեզ: Դու էլ մեր ողջույննե՛րը փոխանցիր նրանց, որոնք սիրում են մեզ՝ իբրև հավատակից եղբայրների:

Աստծու շնորհը թող ձեր բոլորի հետ լինի:

PHM

ՓԻԼԻՄՈՆԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ՓԻԼԻՄՈՆԻՆ

Փիլիմոնը համբավի տեր քրիստոնյա էր, Պողոսի բարեկամը, Կողոսայի եկեղեցու անդամ էր և Օնեսիմոս անունով մի ստրուկի տերը: Այս ստրուկը փախել էր իր տիրոջից, ինչը մահացու հանցանք էր: Օնեսիմոսը գտնում է Պողոսին, երբ նա բանտում էր, և քրիստոնյա է դառնում: Այս նամակով Պողոսը խնդրում է Փիլիմոնին, որ ների Օնեսիմոսին և ընդունի նրան՝ ոչ թե որպես ներողամտության արժանացած ստրուկի, այլ որպես քրիստոնյա եղբոր:

Այս կարճ նամակը մի կարևոր պատգամ ունի. Պողոս առաքյալը ո՛չ հրահանգ է տալիս Փիլիմոնին, ո՛չ իր կամքն է պարտադրում և ո՛չ էլ իր ծառայի վրա ունեցած նրա իրավունքները դարձնում խնդրո առարկա: Այլ ցույց է տալիս, թե Քրիստոսի հավատն ու սերն ինչպես են խորությամբ փոխակերպում մարդկային մեր հայեցակետն ու հարաբերությունները:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1-3):
- Գովասանք Փիլիմոնին (4-7):
- Խնդրանք Օնեսիմոսի համար (8-22):
- Վերջաբան (23-25):

1

Ողջույն

¹ Ես՝ Պողոսս, որ Հիսուս Քրիստոսի համար գտնվում եմ բանտում, և մեր եղբայրը՝ Տիմոթեոսը, գրում ենք քեզ, սիրելի՛ Փիլիմոն, մեր գործակցին, ² նաև Ապփիային՝ մեր քրոջը, և Արքիպպոսին, որ մեր կողքին պայքարեց Ավետարանի համար, և քո տանը

^{3.12} Անցյալում Նիկոպոլիս անունը կրող մի քանի քաղաքներ կային: Թվում է, թե այստեղ խոսքը վերաբերում է Հունաստանի արևմտյան ափին գտնվող համանուն քաղաքին:

^{3.12} Գրծ 20.4, Եփ 6.21-22, Կղ 4.7-8, Բ Տմ 4.12: 3.13 Գրծ 18.24, Ա Կր 16.12:

հավաքվող եկեղեցուն։⁵

Փիլիմոնի սերն ու հավատը

⁴ Աղոթքներիս մեջ միշտ հիշում եմ քեզ և շնորհակալություն հայտնում Աստծուն՝
⁵ լսելով քո հավատի և քո սիրո մասին, որ ունես Տեր Հիսուսի և Աստծու բոլոր
ընտրյալների հանդեպ։⁶ Ուզում եմ նաև, որ գործադրես քո հավատից թելադրված
բարեգործությունը՝ գիտենալով բոլոր այն բարիքները, որ ունենք Քրիստոս Հիսուսով։⁷
Իսկապես շատ ուրախացա և մխիթարվեցի՝ լսելով քո ցուցաբերած սիրո մասին,
եղբա՛յրս, որովհետև լսեցի, որ հավատացյալ եղբայրների շատ սրտեր ես
հանգստացրել։

Պողոսի խնդրանքը Օնեսիմոսի համար

⁸ Դրա համար էլ որպես քրիստոնյա եղբայր, ամենայն վստահությամբ կարող էի
հրամայել քեզ, ինչ որ պետք է, ⁹ բայց սերն ստիպում է, որ աղաչեմ, ես՝ Պողոսս, որ
ծերացած մի մարդ եմ և հիմա Հիսուս Քրիստոսի համար գտնվում եմ բանտում։¹⁰
Աղաչում եմ Քրիստոսով իմ զավակի՝ Օնեսիմոսի համար, որի հոգևոր հայրը եղա
իմ բանտարկված վիճակով։¹² Նրան հետ ուղարկեցի քեզ մոտ և ուզում եմ, որ նրան
ընդունես որպես իմ սրտի մի մասը։¹³ Կուզեի, նրան պահել ինձ մոտ, որպեսզի քո
փոխարեն օգներ ինձ, որքան ժամանակ որ բանտարկված կմնամ ի սեր Ավետարանի,
¹⁴ բայց առանց քո հավանության չուզեցի բան անել, որպեսզի քո անելիք բարիքը
պարտադրված չլինի իմ կողմից, այլ քո կամքով եղած լինի։
¹⁵ Օնեսիմոսը թերևս ժամանակավոր կերպով բաժանվեց քեզնից, որպեսզի
հավիտենապես ունենաս նրան, ¹⁶ ո՛չ իբրև ստրուկի, այլ ստրուկից շատ ավելի վեր՝
իբրև սիրելի եղբոր։ Եթե նա սիրելի է ինձ համար, ապա որքա՛ն ավելի սիրելի պետք է
լինի քեզ համար՝ թե՛ իբրև ստրուկ և թե՛ Տիրոջով՝ իբրև եղբայր։¹⁷ Հետևաբար, եթե ինձ
բարեկամ ես համարում, ընդունի՛ր նրան այնպես, ինչպես ինձ կընդունեիր։¹⁸ Եվ եթե
որևէ ձևով անիրավել է քո դեմ կամ որևէ բան է պարտական քեզ, գրի՛ր իմ հաշվին։
¹⁹ Ահա ես՝ Պողոսս, գրում եմ իմ ձեռքով․ Ես պիտի վճարեմ։ Տակավին չեմ ասում, թե
դու էլ քո անձն ես ինձ պարտական։²⁰ Այո՛, եղբա՛յրս, Տիրոջ սիրույն այս բարիքն արա՛
ինձ համար։ Հանգստացրո՛ւ սիրտս ի սեր Քրիստոսի։
²¹ Քո հնազանդությանը վստահելով գրեցի քեզ, որովհետև գիտեմ, թե ասածս
ավելիով կանես։²² Միևնույն ժամանակ ինձ համար էլ տեղ պատրաստիր, որովհետև

² Կդ 4.17։³ Թող մեր Հայրը՝ Աստված, ու Տերը՝ Հիսուս Քրիստոսը, շնորհ և խաղաղություն պարգևեն
ձեզ։

⁶ «Գործադրես քո հավատից թելադրված բարեգործությունը» կամ «քո մասնակցությունը մեր
հավատին արդյունավետ լինի՝ գիտենալով...»։

⁹ «Որ ծերացած մի մարդ եմ» կամ «որ Հիսուս Քրիստոսի դեսպանն եմ»։

¹⁰ Կդ 4.9։¹¹ Անցյալում նա անօգուտ էր քեզ համար, մինչդեռ հիմա օգտակար է թե՛ քեզ և թե՛ ինձ
համար։

¹¹ «Անօգուտ էր ... օգտակար է». առաքյալը բառախաղ է անում Օնեսիմոս անվան վրա, որ հուն. նշ է
«օգտակար, պիտանի»։

²⁰ «Բարիքը», բոց՝ «օգուտը», որը դարձյալ բառախաղ է Օնեսիմոս անվան վրա (հմմտ հմր 11)։

հույս ունենա, որ Աստված ձեր աղոթքների շնորհիվ ինձ դարձյալ կպարզևի ձեզ:

Վերջին բարևներ

²³ Քեզ բարևում է Եպաֆրասը, որ Քրիստոս Հիսուսի համար բանտարկված է ինձ հետ:”

HEB

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ

Եբրայեցիներին գրված այս նամակն ուղղված է քրիստոնյաների մի խմբակի, որը հետզհետե գորացող հալածանքների պատճառով գտնվում էր քրիստոնեական իր հավատից հեռանալու վտանգի տակ: Պողոսը քաջալերում է նրանց, որ հարատևեն իրենց հավատի մեջ՝ ցույց տալով, որ Հիսուս Քրիստոսն է Աստծու ճշմարիտ և վերջնական հայտնությունը: Այսպիսով՝ նա շեշտում է երեք ճշմարտություններ.

1. Հիսուսը Աստծու հավիտենական Որդին է, որ իր կրած չարչարանքներով ցույց տվեց ճշմարիտ հնազանդություն իր Հոր հանդեպ: Որպես Աստծու Որդի՝ Հիսուսը բարձր է ոչ միայն Հին Կտակարանի մարգարեներից, այլև հրեշտակներից, ինչպես նաև Մովսեսից:
2. Հիսուսը, որ Աստծու կողմից հայտարարված է որպես հավիտենական քահանա, գերակա է Հին Կտակարանի քահանաներից: Նրա անձի պատարագումով մեկընդմիջտ մատուցված կատարյալ զոհն այլևս ավելորդ է դարձնում Հին Կտակարանի բազմաթիվ զոհերը:
3. Հիսուսի միջոցով հավատացյալը փրկվում է մեղքից ու մահից: Հիսուսը, որպես ճշմարիտ Քահանայապետ, տալիս է ճշմարիտ փրկություն, որի ստվերն էին Հին Կտակարանի ծիսակատարություններն ու կենդանական զոհերը:

Իսրայելի պատմությունից բերելով հավատի մի շարք նախամարտիկների օրինակներ (11-րդ գլուխ), հեղինակն ընթերցողին կոչ է անում հավատարիմ մնալ Հիսուսի Ավետարանին: 12-րդ գլխում նա ջերմորեն հորդորում է, որ մինչև վերջ այդպես հավատարիմ մնալ՝ իրենց աչքերը հառած Քրիստոսին, և դիմանալ ամեն տեսակ հալածանքների ու չարչարանքների: Նամակը վերջանում է խրատական խոսքերով և ողջույններով:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան. Քրիստոսը՝ Աստծու հայտնության լրումը (1.1-3):
- Քրիստոսի գերակայությունը հրեշտակներից (1.4-2.18):
- Քրիստոսի գերակայությունը Մովսեսից և Հեսուից (3.1-4.13):

²³ Կդ 1.7, 4.12:²⁴ Քեզ բարևում են նաև իմ մյուս գործակիցները՝ Մարկոսը, Արիստարքոսը, Դեմասը և Դուկասը:

²⁴ **ա** Գրծ 12.12, 25,13.13, 15.37-39, Կդ 4.10: **բ** Գրծ 19.29, 27.2, Կդ 4.10: **գ** Կդ 4.14, Բ Տմ 4.10: **դ** Կդ 4.14, Բ Տմ 4.11:²⁵ Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը լինի ձեզ հետ:

- Քրիստոսի քահանայության գերակայությունը (4.14-7.28):
- Քրիստոսի Ուխտի գերակայությունը (8.1-9.28):
- Քրիստոսի զոհաբերության գերակայությունը (10.1-39):
- Հավատի նախապատվությունը (11.1-12.29):
- Վերջին թելադրանքներ և վերջաբան (13.1-25):

1

Աստված մեզ հետ խոսեց իր Որդու միջոցով

¹ Անցյալում բազում անգամներ և բազում ձևերով Աստված մեր հայրերի հետ խոսեց մարգարեների միջոցով, ² իսկ այս վերջին օրերին մեզ հետ խոսեց իր Որդու միջոցով: Աստված ամեն ինչի ժառանգ կարգեց նրան և նրա միջոցով ստեղծեց տիեզերքը: ³ Որդին, որ Հոր փառքի լույսն է և ճշգրիտ պատկերը նրա էության, որ իր խոսքի զորությամբ պահում է տիեզերքը, իր անձով մեր մտքերը սրբելուց հետո նստեց երկնքում, Աստծու՝ գերագույն զորության աջ կողմում:՝

Որդու մեծության գերազանցությունը

⁴ Նա ավելի բարձր է հրեշտակներից, ինչպես ցույց է տալիս Աստծու կողմից նրան տրված գերազանց անունը. ⁵ որովհետև ո՞ր մի հրեշտակին Աստված երբևիցե ասաց. «Դու իմ որդին ես. այսօր ես ծնեցի քեզ»: Կամ ո՞ր հրեշտակին ասաց. «Ես նրան հայր եմ լինելու, և նա՝ ինձ որդի»: ⁶ Եվ դարձյալ, երբ իր անդրանիկ որդուն աշխարհ էր ուղարկում, ասաց. «Աստծու բոլոր հրեշտակները թող պաշտեն նրան»:՝

⁷ Աստված իր հրեշտակների մասին խոսելիս ասում է.

«Աստված իր հրեշտակներին ստեղծեց
որպես պատգամավոր հոգիներ,
և իրեն ծառայողներին՝ որպես կրակի բոց»:՝

⁸ Մինչդեռ Որդուն ասում է.

«Քո աթոռը, ո՞վ Աստված, հավիտենական է.
արդարությամբ ես իշխում թագավորությանդ վրա:՝

⁹ Դու սիրում ես արդարությունը

և ասում անիրավությունը:

Ահա թե ինչու, ո՞վ Աստված,

քո Աստվածն ուրախության յուղով օծեց քեզ

ավելի, քան քո ընկերներին»:՝

^{1.2} Իմ 7.22:

^{1.3} Մի շարք ձեռ. չունեն *«իր անձով»*: *«Աջ կողմում»* կանգնելը կամ նստելը պատվավոր դիրք է նշանակում: Նույնը՝ 12.2-ում:

^{1.3} Իմ 7.25-26, 8.1:

^{1.5} ա Սղ 2.7: բ Բ Թգ 7.14, Ա Մն 17.13:

^{1.6} Բ Օր 32.43 [LXX]:

^{1.7} Սղ 104.4 [LXX]:

^{1.8-9} Սղ 45.6-7:

¹⁰ Մի ուրիշ տեղ դարձյալ ասում է Որդուն.
«Դու, ո՞վ Տեր, սկզբից ստեղծեցիր երկիրը,
և երկինքը քո ձեռքերի գործն է:»

¹¹ Նրանք կկորչեն,
բայց դու կաս և մնում ես:
Նրանք կմաշվեն հազուստի պես.

¹² վերարկուի պես կծալես դրանք
և հազուստի պես կփոխես:
Բայց դու միշտ նույնն ես,
և քո տարիները վերջ չեն ունենա»:

¹³ Բայց հրեշտակներից ո՞ր մեկին երբևէ ասաց.
«Նստի՛ր իմ աջ կողմում,
մինչև որ քո թշնամիներին դնեմ ոտքերիդ տակ՝
որպես պատվանդան»:

¹⁴ Չէ՞ որ հրեշտակները Աստծուն ծառայող հոգիներ են և իր կողմից ուղարկվում են՝
օգնելու նրանց, որոնք ժառանգելու են փրկությունը:

2

Փրկության պատգամի կարևորությունը

¹ Դրա համար էլ մենք պետք է շատ ավելի ուշադիր լինենք վերևում ասվածներին, որպեսզի չլինի թե փրկության ճանապարհից հեռանանք: ² Որովհետև, եթե հրեշտակների միջոցով տրված պատգամն անխախտելի օրենք համարվեց, և դրա դեմ գործված որևէ հանցանք կամ անհնազանդություն իր արդար պատիժն ստացավ, ³ մենք ինչպե՞ս կարող ենք պատժից զերծ մնալ, եթե կարևորությամբ նկատի չունենանք այն մեծ փրկությունը, որի մասին նախ Տերն ինքը խոսեց, և որի վկայությունը մեզ տվեցին այն իրենից լսողները: ⁴ Աստված ինքն էլ այդ փրկության մասին իր վկայությունը տվեց նշաններով, հրաշքներով, բազմատեսակ սքանչելիքներով և Սուրբ Հոգու պարզաններով, ինչպես որ ինքը կամեցավ:

Մեր Փրկիչը մեր եղբայրն է

⁵ Արդարև, Աստված հրեշտակների իշխանությանը չենթարկեց գալիք աշխարհը, որի մասին խոսում ենք: ⁶ Այդ մասին սաղմոսագիրը մի տեղ ասում է.

«Ի՞նչ է մարդը, որ հիշում ես նրան,
ի՞նչ է մարդ արարածը, որ հոգածություն ես ցույց տալիս նրա հանդեպ:»

⁷ Նրան հրեշտակներից մի քիչ ցածր դասեցիր,
փառքով ու պատվով պսակեցիր նրան,

^{1.10-12} Մղ 102.25-27 [LXX]:

^{1.13} Մղ 110.1:

^{1.14} Տբ 12.14-15:

^{2.6-8} Մղ 8.4-6:

քո բոլոր ստեղծածների վրա վերակացու կարգեցիր նրան՝

⁸ Եվ ամեն ինչ ենթարկեցիր նրա իշխանությանը»:

Արդ, «ամեն ինչ նրա իշխանությանը ենթարկեց» ասելով հասկանում է, թե չմնաց մի բան, որ չենթարկվեր նրան: Բայց այժմ մենք ամեն ինչ դեռևս մարդուն ենթարկված չենք տեսնում: ⁹ Մինչդեռ Հիսուսին տեսնում ենք «փառքով ու պատվով» պսակված, որ «հրեշտակներից մի քիչ ցածր» դասվեց՝ մահվան չարչարանքները հանձն առնելու համար, որպեսզի Աստու շնորհով բոլոր մարդկանց փոխարեն մահը ճաշակի:

¹⁰ Որովհետև Աստված, որ ի՛ր համար ստեղծեց և իրենտ՛վ է պահում ամեն ինչ՝ իր փառքին մասնակից դարձնելու համար իր բազում որդիներին, հարմար գտավ, որ նրանց փրկության առաջնորդող Հիսուսն ի՛նքը օրինակ տա՝ չարչարանքների միջոցով կատարելության հասնելու:

¹¹ Արդ, որովհետև թե՛ Քրիստոսը, որ մարդկանց սրբում է իրենց մեղքերից, և թե՛ սրբվողները նույն Հոր զավակներն են, Քրիստոսը ամոթ չի համարում իր «եղբայրները» կոչել նրանց, ¹² այլ իր խոսքն ուղղելով Աստծուն՝ ասում է.

«Քո մասին պիտի պատմեմ իմ եղբայրներին,

քո ժողովրդի հավաքույթի մեջ պիտի օրհներգեմ քեզ»:

¹³ Իսկ մի ուրիշ տեղ ասում է. «Ես պիտի վստահեմ Աստծուն», և անմիջապես ավելացնում է. «Ահավասիկ ես և այն զավակները, որ Աստված ինձ տվեց»:

¹⁴ Արդ, քանի որ այս զավակները մարդիկ են, մարմնով և արյամբ, Քրիստոսն ինքն էլ նմանվեց նրանց, հաղորդակից եղավ նրանց մարդկային բնությանը, որպեսզի իր մահով ոչնչացնի Սատանային, որ մահվան իշխանությունն ուներ, ¹⁵ և ազատագրի նրանց, որոնք ստրուկների նման իրենց ամբողջ կյանքն անց էին կացնում մահվան երկյուղով: ¹⁶ Շատ պարզ է, որ այս ազատագրությունը հրեշտակներին չի վերաբերում, այլ Աբրահամի զավակներին: ¹⁷ Ահա թե ինչու Քրիստոսն ամեն ինչով պետք է նման լիներ իր եղբայրներին, որպեսզի կարողանար ողորմած և վստահելի մի քահանայապետ լինել Աստծու մոտ՝ Աստծու ժողովրդի մեղքերը քավելու համար:

¹⁸ Եվ որովհետև ինքը չարչարվելով փորձվեց, կարո՞ղ է օգնել փորձության մեջ եղողներին:

3

Քրիստոսը գերազանց է, քան Մովսեսը

¹ Ուստի, Աստծուն նվիրվա՛ծ եղբայրներ, դուք, որ նրանով կոչված եք մաս կազմելու

^{2.7} «Մի քիչ», ոմանք հասկանում են ժամանակի իմաստով (կարճ ժամանակի համար) և ոչ թե մակարդակի կամ աստիճանի իմաստով:

^{2.12} Սղ 22.22:

^{2.13} ա Ես 8.17 [LXX]: բ Ես 8.18:

^{2.16} «Շատ պարզ է, որ... Աբրահամի զավակներին» կամ «Շատ պարզ է, որ հրեշտակների բնությունը չէր, որ առավ, այլ Աբրահամի սերնդին»:

^{2.16} Ես 41.8-9:

^{2.17} Ճիշտ ինչպես Հին Կտակարանի քահանայապետներն էին, որ քավում էին ժողովրդի մեղքերը հատուկ ծեսերով (տե՛ս Ղև 4.20, 26, 35, 16.6, 10-11):

երկնքի թագավորությանը, նայեցե՛ք Հիսուսին, որ Աստծու կողմից ուղարկվեց՝ Քահանայապետ լինելու և մեր հավատի խոստովանությունը մատուցելու Աստծուն: ²Նա հավատարիմ եղավ իրեն այդ պաշտոնին կոչող Աստծուն, ճիշտ այնպես, ինչպես Սուրբ գիրքն է ասում Մովսեսի մասին, թե՛ «Հավատարիմ էր Աստծու ամբողջ տան մեջ»: ³Անշուշտ, յուրաքանչյուր տուն կառուցվում է ինչ-որ մեկի կողմից, իսկ ամեն ինչ կառուցողը Աստված է: ⁴Արդ, ինչպես մի տան դեպքում, տուն կառուցողն ավելի է պատվի արժանի, քան տունն ինքը, այնպես էլ Հիսուսը շատ ավելի է պատվի արժանի, քան Մովսեսը, ⁵որովհետև Մովսեսն ինքը «Հավատարիմ էր Աստծու ամբողջ տան մեջ» որպես վերակացու մի ծառա, որի պաշտոնն էր Աստծու խոսքերը հայտնել ժողովրդին, ⁶մինչդեռ Քրիստոսը, որպես Որդի, հավատարիմ է իր սեփական տան վրա: Իսկ նրա տունը մե՛նք ենք, եթե մինչև վերջ անխախտ պահենք մեր վստահությունն ու մեր հույսը, որով պարծենում ենք:

Աստծու ժողովրդին վերապահված հանգիստը

⁷Ահա թե ինչու, ինչպես որ Սուրբ Հոգին է ասում.-

«Այսօր, երբ լսում եք Աստծու ձայնը,

⁸ձեր սրտերը մի՛ փակեք ձեր հայրերի պես, որոնք նրա դեմ ըմբոստացան

փորձության ժամանակ անապատում:

⁹Այնտեղ ձեր հայրերը փորձեցին ինձ,-
ասում է Աստված,- փորձի ենթարկեցին ինձ՝
տեսնելով հանդերձ իմ գործերը:

¹⁰Քառասուն տարի շարունակ
այդ սերունդը զզվեցրեց ինձ, և ես ասացի.-

Նրանց միտքը միշտ հեռու է ինձնից,
երբեք չուզեցին ճանաչել իմ ճանապարհները:

¹¹Այնպես որ երդվեցի իմ բարկության մեջ՝ ասելով.

"Երբեք չպիտի մտնեն այն երկիրը,
ուր հանգիստ եմ պատրաստել նրանց համար"»:

¹²Չգուշացե՛ք, եղբայրներ՝ ը, չլինի թե ձեզնից որևէ մեկը սրտով չարանա և անհավատությամբ մերժի ճանաչել Աստծուն՝ կյանքի աղբյուրին: ¹³Այլ այնքան ժամանակ, քանի դեռ Սուրբ գրքի ասած «այսօրը» վերաբերում է նաև ձեզ, ամեն օր հորդորեցե՛ք միմյանց, որպեսզի ձեզնից ոչ ոք, մեղքերից տարվելով, իր սիրտը չփակի Աստծու դիմաց, ¹⁴որովհետև մենք այսուհետև մաս ենք կազմում Քրիստոսին, եթե մինչև վերջ անխախտ պահենք սկզբից մեր ձեռք բերած վստահությունը: ¹⁵Ահա թե ինչու է ասում.

«Այսօր, երբ լսում եք Աստծու ձայնը,
ձեր սրտերը մի՛ փակեք,

^{3.2} Թվ 12.7:

^{3.7-11} Սղ 95.7-11[LXX]:

ինչպես անցյալում ըմբոստացաք նրա դեմ»:

¹⁶ Ովքե՞ր էին, որ լսեցին Աստծու ձայնը, բայց ըմբոստացան նրա դեմ. Մովսեսի առաջնորդությամբ Եգիպտոսից դուրս ելած ձեր հայրերը չէի՞ն նրանք:¹⁷ Աստված ո՞ւմից զզվեց քառասուն տարի շարունակ. նրանցից չէ՞ր, որոնք հանցանք էին գործել իր դեմ, և որոնց ոսկորները ցիրուցան եղան անապատում:¹⁸ Ո՞ւմ համար երդվեց, որ չպիտի մտնեն այն երկիրը, ուր հանգիստ էր պատրաստել նրանց համար, եթե ոչ նրանց, որոնք անհնազանդ եղան իրեն: ¹⁹ Եվ տեսնում ենք, որ նրանք իսկապես չկարողացան մտնել իրենց անհավատարմության պատճառով:

4

¹ Հետևաբար, մինչ Աստծու կողմից պատրաստած հանգստի մեջ մտնելու խոստումը ուժի մեջ է մնում, չափազանց զգույշ լինենք, որ ձեզնից որևէ մեկը չզրկվի դրանից,² որովհետև մեզ ևս տրված է այդ ավետիսը, ճիշտ այնպես, ինչպես տրվեց անապատում եղողներին: Բայց ավետիսը լսելն օգուտ չտվեց նրանց, որովհետև հավատով չկապվեցին իրենց լսածին:³ Սակայն մենք՝ հավատացողներս, մտնելու ենք այդ հանգստի մեջ, որի մասին Աստված ասաց.

«Այնպես որ իմ բարկության մեջ երդում արեցի՝ ասելով.

"Երբեք չպիտի մտնեն այն երկիրը,

ուր հանգիստ եմ պատրաստել նրանց համար"»:

Այսպես ասաց՝ հակառակ նրան, որ նա իր գործերն ավարտել էր աշխարհի ստեղծագործության ժամանակից,⁴ որովհետև Մուրբ գրքերում մի տեղ յոթերորդ օրվա մասին ասում է. «Եվ յոթերորդ օրը Աստված իր բոլոր գործերն ավարտելուց հետո հանգստացավ»:⁵ Իսկ այստեղ դարձյալ ասում է. «Երբեք չպիտի մտնեն այն երկիրը, ուր հանգիստ եմ պատրաստել նրանց համար»:

⁶ Արդ, որովհետև այդ ավետիսն առաջին լսողները Աստծու պատրաստած հանգստին չհասան իրենց անհնազանդության պատճառով, և քանի դեռ ուժի մեջ է մնում այդ հանգիստը պարզելու խոստումը,⁷ Աստված մի ուրիշ օր է սահմանում, և երբ Դավթի բերանով «այսօր» ասելով խոսում է այնքան ժամանակ հետո, այդ արտահայտում է այն խոսքի մեջ, որ մեջբերվեց վերևում.

«Այսօր, երբ լսում եք Աստծու ձայնը, ձեր սրտերը մի՛ փակեք»:

⁸ Արդարև, եթե Հեսուն նրանց հասցրած լինեք խոստացված հանգստին, ապա

^{3.15} Սղ 95.7-8 [LXX]:

^{3.16-18} Թվ 14.1-35:

^{4.1} Գրք. ունի «Հետևաբար չափազանց զգույշ լինենք, որպեսզի չլինի թե մեկը խոստումը մոռանալով (=թողնելով)՝ զրկվի դրանից»:

^{4.2} «Չկապվեցին» կամ «չհնազանդվեցին»:

^{4.3} Սղ 95.11:

^{4.4} Ծն 2.2:

^{4.5} Սղ 95.11:

^{4.7} Սղ 95.7-8 [LXX]:

Աստված դրանից հետո այլևս ուրիշ օրվա մասին չէր խոսի:՝⁹ Հետևաբար, դեռ մի ուրիշ «հանգստի օր» կա, որ Աստծու ժողովրդին է սպասում, ¹⁰ որովհետև Աստծու պատրաստած հանգստին հասնողը նրա օրինակով հանգստանալու է իր գործերն ավարտելուց հետո, ինչպես Աստված էլ իր բոլոր գործերն ավարտելուց հետո «հանգստացավ»:

¹¹ Ուստի ջանանք այդ հանգստին հասնելու, որպեսզի որևէ մեկը չգրկվի դրանից, ինչպես պատահեց անհնազանդ այդ սերնդին, ¹² քանզի կենդանի է Աստծու խոսքը, ազդու և ավելի հատու, քան որևէ երկսայրի սուր. այն թափանցում է մարդու շնչի ու հոգու մեջ, մինչև ողնածուծը և քննում է մտածումներն ու սրտի խորհուրդները: ¹³ Եվ չկա մի արարած, որ Աստծու տեսողությունից վրիպի: Նա ամեն բան տեսնում է պարզ ու հստակ՝ իր ամբողջ մերկությամբ: Եվ մենք նրա՛ն ենք հաշիվ տալու:

Քրիստոսը՝ մեր Քահանայապետը

¹⁴ Հետևաբար, ամուր պահենք մեր դավանած հավատը, որովհետև հիմա ունենք երկնքի սրբաբանը մտած մի մեծ Քահանայապետ՝ Հիսուսին՝ Աստծու Որդուն: ¹⁵ Մի Քահանայապետ, որ կարող է հասկանալ մեր տկարությունները և կարեկցել մեզ, քանի որ այն բաներով, որ մենք ենք փորձվում, ինքը ևս փորձվել է, սակայն առանց մեղանչելու: ¹⁶ Ուստի համարձակությամբ մոտենանք Աստծու շնորհի աթոռին՝ ողորմություն գտնելու և շնորհ ստանալու, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք օգնեն մեզ:

5

¹ Արդարև, ամեն մի քահանայապետ, որ ընտրվում է մարդկանց միջից, պաշտոն ունի մարդկանց կողմից Աստծու հետ հարաբերության մեջ մտնելու և նվերներ ու զոհեր մատուցելու նրանց մեղքերի համար: ² Եվ որովհետև ինքն էլ է մարդ, կարող է հասկանալ մարդկանց տգիտությունն ու փորձությունները և կարեկցել նրանց, քանի որ ինքը ևս նույն տկարություններն ունի: ³ Դրա համար պետք է, որ նա զոհեր մատուցի ինչպես ժողովրդի, այնպես էլ իր սեփական մեղքերի համար:

⁴ Գիտեք նաև, թե որևէ մեկն ինքն իրեն չի կարող տալ քահանայապետության պատիվը, այլ Աստված է նրան կոչում այդ պաշտոնին, ճիշտ այնպես, ինչպես Ահարոնը կոչվեց: ⁵ Նույնպես և Քրիստոսն ինքն իրենից չառավ քահանայապետության պատիվը, այլ այն ստացավ Աստծուց, որ նրան ասաց. «Դու իմ Որդին ես. այսօր ես ծնեցի քեզ», ⁶ իսկ ուրիշ տեղ ասում է. «Դու հավիտյան քահանա ես Մելքիսեդեկ քահանայի պես»:

^{4.8} Բ Օր 31.7, Հս 22.4:

^{4.10} Ծն 2.2:

^{4.13} Իմս 1.6:

^{5.3} Ղև 9.7:

^{5.4} Ելք 28.1:

^{5.5} Սղ 2.7:

^{5.6} Սղ 110.4:

⁷ Իր երկրային կյանքի ընթացքում Հիսուսը մեծ աղաղակով և արցունքով աղոթեց ու աղաչեց Աստծուն, որ նրան կարող էր փրկել մահվանից: Եվ Աստված լսեց նրան, որովհետև նա խոնարհ էր և հնազանդ:⁸ Թեպետ Աստվածորդի էր, բայց իր չարչարանքների փորձառությամբ սովորեց, թե ինչ բան է հնազանդությունը:⁹ Եվ այսպես, կատարյալ դառնալուց հետո նա հավիտենական փրկության պատճառ դարձավ բոլոր նրանց համար, ովքեր հնազանդվում են իրեն, ¹⁰ քանի որ Աստված նրան քահանայապետության էր կոչել Մելքիսեդեկ քահանայի պես:

Ձգուշացում քրիստոնեական հավատը լքելու վտանգից

¹¹ Այդ մասին մենք շատ ասելիք ունենք, բայց դժվարանում ենք դրանք բառերով բացատրել, որովհետև ձեր ականջներն ու մտքերը բթացել են: ¹² Արդարև, դուք մինչև հիմա պետք է ուրիշների՝ ուսուցանելիք, մինչդեռ դո՛ւք կրկին կարիք ունեք Աստծու պատգամների ամենատարրական դասերը սովորելու: Այլ խոսքով՝ պինդ կերակուրի փոխարեն դեռևս կաթի կարիք ունեք,¹³ որովհետև ով որ կաթնակեր է, նշանակում է՝ մանուկ է և անձնական փորձով չգիտե ճիշտը սխալից զանազանել: ¹⁴ Մինչդեռ պինդ կերակուրը չափահասների համար է, որոնք վարժության ճանապարհով կրթել են չարն ու բարին զանազանելու իրենց զգայարանները:

6

¹ Ուստի քրիստոնեական հավատի մասին եղած նախագիտելիքները թողնելով՝ զանք չափահասներին հատուկ գիտելիքներին: Չենք ուզում վերստին խոսել այն հիմնական գիտելիքների մասին, որոնք վերաբերում են մեռելական գործերից ապաշխարելուն, Աստծուն հավատալուն, ² քրիստոնեական դաստիարակությամբ մկրտվելուն, ձեռնադրությանը, մեռելների հարությանն ու հավիտենական դատաստանին,³ այլ Աստծու թույլտվությամբ կանցնենք չափահասների հատուկ ուսուցումներին:

⁴ Արդ, նրանք, որ մեկ անգամ լուսավորվելով մկրտվելուց, երկնային պարգևները վայելելուց, Մուրբ Հոգուն հաղորդակից դառնալուց,⁵ Աստծու բարի խոսքը ճաշակելուց և հանդերձյալ աշխարհի սքանչելիքները համտեսելուց հետո ⁶ լքում են իրենց հավատը, այդպիսիներին անհնար է երկրորդ անգամ ապաշխարության բերել: Դա անհնար է, որովհետև նրանք այդ ձևով իրենք իրենց համար վերստին խաչ են հանում Աստծու Որդուն՝ հրապարակորեն խայտառակ անելով նրան:

⁷ Արդարև, այն հողը, որ խմում է իր վրա տեղացած անձրևները և օգտակար բերք է տալիս իրեն մշակողներին, Աստծուց օրհնություն է ստանում: ⁸ Իսկ այն հողը, որ փուշ

^{5.7} Մտ 26.36-46, Մր 14.32-42, Ղկ 22.39-46:

^{5.12-13} Ա Կր 3.2:

^{6.2} «Քրիստոնեական դաստիարակությամբ մկրտվելուն». բոց՝ «մկրտությունների վարդապետության»: Ոմանք հոգևակի թվով գործածված այս «մկրտությունները» հասկանում են որպես ակնարկություն հրեական և հեթանոսական ծիսական լվացումների կամ ակնարկություն Հովհաննեսի և քրիստոնեական մկրտությունների մասին:

^{6.4} «Լուսավորվելով մկրտվելուց». հուն. ունի «լուսավորվելուց հետո», իսկ գրբ. «մկրտվելուց հետո»:

ու տատասկ է բուսցնում, անպետք է, անեծքի ենթակա և սահմանված է այրվելու։

⁹ Մակայն, սիրելինե՛ր, այս բաներն ասելով հանդերձ, ես վստահ եմ, որ դուք լավագույն ուղու վրա եք, որը փրկության է առաջնորդում։ ¹⁰ Աստված անարդար չէ, նա չի մոռանա ձեր գործերը և այն սերը, որ դուք ցուցաբերեցիք իր անունով՝ օգտակար լինելով ձեր քրիստոնյա եղբայրներին, և շարունակում եք ցուցաբերել մինչև այժմ։ ¹¹ Եվ մենք ցանկանում ենք, որ ձեզնից յուրաքանչյուրը մինչև վերջ շարունակի ցուցաբերել նույն փութաջանությունը, որպեսզի հաստատուն մնա ձեր հույսը։ ¹² Չենք ուզում, որ թուլանաք, այլ նմանվեցե՛ք նրանց, որոնք հավատով և համբերությամբ փորձում են ժառանգել Աստծու խոստումը։

Աստծու անդառնալի խոստումը

¹³ Երբ Աստված այդ խոստումն էր տալիս Աբրահամին, քանի որ չկար իրենից բարձր մեկը, որպեսզի նրա վրա երդում աներ, ¹⁴ նա ինքն իր անձի վրա երդում արեց՝ ասելով. «Հիրավի, մեծապես պիտի օրհնեմ քեզ և անսահմանորեն բազմացնեմ քո սերունդը»։

¹⁵ Աբրահամը համբերությամբ սպասեց և այդպես էլ ստացավ Աստծու խոստացածը։

¹⁶ Մարդիկ երդվում են իրենցից բարձր բաներով և երդումը գործածում որպես ապահովություն տալու ձև՝ իրենց վեճերին վերջ դնելու համար։ ¹⁷ Ահա թե ինչու Աստված ինքն էլ երդումն օգտագործեց՝ իր խոստումի ժառանգորդներին հստակորեն ցույց տալու համար իր որոշման անփոփոխ լինելը։ ¹⁸ Աստված տվեց այս երկու բաները՝ խոստումն ու երդումը, որոնք անփոփոխելի են և որոնց կապակցությամբ անկարելի է, որ Աստված ստի, որպեսզի մենք, որ ապավինեցինք նրան, մեծապես քաջալերվենք և կռուչենք մեզ տրված հույսից։ ¹⁹ Այդ հույսը մեր խարիսխն է, ապահով և անշարժ, որ մտնում է երկնային տաճարի վարագույրից ներս, ներքին Սրբարանը, ²⁰ ուր Հիսուսը մտավ մեզնից առաջ ու մեզ համար հավիտենական Քահանայապետ եղավ Մելքիսեդեկի պես։

7

Մելքիսեդեկ քահանան՝ Քրիստոսի նախատիպը

¹ Այս «Մելքիսեդեկը Սաղեմի թագավորն էր և Բարձրյալ Աստծու քահանան, որ Աբրահամին դիմավորելու ելավ, երբ նա վերադառնում էր պատերազմից՝ թագավորներին պարտության մատնելուց հետո, և Մելքիսեդեկը օրհնեց Աբրահամին։» ² Իսկ Աբրահամն իր ամբողջ ավարի մեկ տասներորդը նրան տվեց»։ Նախ, «Մելքիսեդեկ» անունը նշանակում է՝ արդարության թագավոր, երկրորդ թագավոր Սաղեմի, այսինքն՝ թագավոր խաղաղության։ ³ Մելքիսեդեկի ո՛չ հայրն էր հայտնի, ո՛չ մայրը և ո՛չ էլ ծագումը. չգիտենք նրա կյանքի ո՛չ սկիզբը և ո՛չ էլ

^{6.8} Ծն 3.17-18:

^{6.14} Ծն 22.16-17:

^{6.19} Ղև 16.2:

^{6.20} Սղ 110.4:

^{7.1-2} Ծն 14.17-20:

վախճանը: Նա նման է Աստծու Որդուն. նա մշտնջենական քահանա է:

⁴ Արդ, տեսե՛ք, թե ինչպիսի մեծ մեկն էր Մելքիսեդեկը, որին Աբրահամ նահապետը տասանորդ տվեց պատերազմական ավարից: ⁵ Գիտենք, որ Ղևիի որդիներից նրանք, որ քահանայական պաշտոն են ստանում, հրահանգ ունեն ըստ Օրենքի տասանորդ վերցնել ժողովրդից, այսինքն՝ իրենց ազգակիցներից, թեև սրանք էլ են Աբրահամի զավակները: ⁶ Մելքիսեդեկը, Ղևիի սերնդից չլինելով հանդերձ, տասանորդ վերցրեց և օրհնեց Աբրահամին, որ Աստծուց խոստումներ էր ստացել: ⁷ Եվ կասկած չկա, որ օրհնողը շատ ավելի բարձր է, քան օրհնվածը:

⁸ Եվ դեռ ավելին. ղևտացի քահանաները, որոնք տասանորդ են վերցնում, մահկանացու մարդիկ են, մինչդեռ Մելքիսեդեկի համար վկայվում է, թե միշտ կենդանի է: ⁹ Հետևաբար կարելի է ասել, որ Աբրահամի միջոցով Ղևին ևս (որի զավակները տասանորդ էին ստանում), տասանորդ վճարած եղավ Մելքիսեդեկին: ¹⁰ Քանի որ Ղևին դեռևս իր նախահոր սերմի մեջ էր, երբ Մելքիսեդեկը դիմավորեց Աբրահամին:

Ղևտական քահանայության անկատարությունը

¹¹ Գիտենք, որ ղևտացիների քահանայությունն էր սրբության այն օրենքի հիմքը, որ տրվեց Իսրայելի ժողովրդին: Արդ, եթե հնարավոր լիներ այդ քահանայության միջոցով կատարելության հասնել, Աստված ի՞նչ կարիք պիտի ունենար մի նոր քահանայապետ տալու Մելքիսեդեկի օրինակով և ոչ թե Ահարոնի քահանայության շարունակությունից: ¹² Մյուս կողմից՝ քահանայության փոխվելու հետ սրբության օրենքն էլ պիտի փոխվեր, ¹³ որովհետև Քրիստոսը, ում մասին այս բաներն են ասվում, պատկանում էր մի ուրիշ ցեղի, որի անդամներից ոչ մեկը երբևիցե քահանայության պաշտոն չստանձնեց: ¹⁴ Արդ, հայտնի է, որ մեր Տերը Հուդայի ցեղից էր, մինչդեռ այդ ցեղից գալիք քահանայության մասին Մովսեսը ոչինչ չի ասել:

Հավիտենական մի քահանա՝ Մելքիսեդեկի պես

¹⁵ Փոփոխությունն ավելի պարզորոշ է նրանով, որ հայտնվում է մի քահանա, որ նման է Մելքիսեդեկին, ¹⁶ այսինքն՝ նա ըստ մարմնավոր կյանքին հատուկ օրենքների և կարգերի չէ որ քահանա է դարձել, այլ ըստ հավիտենական կյանքի մեջ եղող օրենքի գործության: ¹⁷ Նրա մասին Սուրբ գիրքը վկայել է՝ ասելով. «Դու հավիտյան քահանա ես Մելքիսեդեկի պես»: ¹⁸ Բացահայտ է, որ նախկին պատվիրանը մի կողմ է դրվում՝ անգոր և անօգտակար լինելու պատճառով, ¹⁹ որովհետև Օրենքը ոչ մի բան կատարելության հասցնել չկարողացավ, և այժմ մեզ տրվեց լավագույն մի հույս, որով մոտենում ենք Աստծուն:

²⁰ Ավելին, այս նոր քահանայությունը տրվեց երդումով, մինչդեռ մյուսների քահանայությունը երդումով չի տրվել: ²¹ Քրիստոսը քահանա դարձավ Աստծու երդումով, ինչպես Սուրբ գիրքն է ասում.

«Տերն անդառնալի երդում արեց՝ ասելով.

"Դու հավիտյան քահանա ես"»։¹

²² Եվ այսպես, Հիսուսը երաշխավորը եղավ գերագանց մի ուխտի:

²³ Ի վերջո, մյուս քահանաները թվով շատ էին լինում, որպեսզի մեկի կամ մյուսի մահով քահանայությունը չընդհատվեր:

²⁴ Բայց որովհետև Հիսուսն ապրում է հավիտենապես, նրա քահանայությունն էլ անվախճան է: ²⁵ Ուստի և կարող է վերջնականապես փրկել նրանց, ովքեր իր միջոցով գալիս են դեպի Աստված, որովհետև միշտ կենդանի լինելով՝ նա տևաբար բարեխոսում է նրանց համար: ²⁶ Արդարև, մեզ պետք է այսպիսի մի քահանայապետ՝ սուրբ, անմեղ, անարատ, մեղավորներից զատված և բարձրացած ավելի վեր, քան երկինքները: ²⁷ Մի քահանայապետ, որ պետք չունի ամեն օր զոհեր մատուցելու մյուս քահանայապետների նման, որոնք նախ իրենց և ապա ժողովրդի մեղքերի համար զոհեր են մատուցում, քանզի Քրիստոսը միայն մեկ անգամ ինքն իրեն մատուցեց իբրև հավերժական զոհ: ²⁸ Արդարև, Օրենքը կարգում է քահանայապետներ, որոնք իբրև մարդիկ անկատար են, մինչդեռ աստվածային երդումով տրված խոստումը, որ Օրենքից հետո տրվեց, քահանայապետ է կարգում Որդուն, որ այլևս կատարյալ է հավիտենապես:

8

Նոր և լավագույն ուխտի քահանայապետը

¹ Վերևում իմ ասածների միտքն այն է, որ մենք ունենք այնպիսի մի Քահանայապետ, որ նստած է ամենագոր Աստծու աթոռի աջ կողմում, երկնքում,² իբրև պաշտոնյա երկնային Սրբարանի, այսինքն՝ այն ճշմարիտ խորանի, որ կանգնեցված է Տիրոջ ճ ձեռքով և ոչ թե մարդկանց:

³ Արդարև, ամեն քահանայապետ զոհեր և նվերներ մատուցելու համար է կարգված, ուստի Քրիստոսն ինքն էլ պետք է մատուցելու մի բան ունենար: ⁴ Եթե նա երկրի վրա լիներ, թերևս քահանա իսկ չլիներ, որովհետև արդեն կային քահանաներ, որոնք նվերներ էին մատուցում Աստծու Օրենքի համաձայն: ⁵ Սակայն երկրավոր քահանաները երկնավոր իրականությունների օրինակով և դրանց մոտավոր նմանությամբ էին կատարում պաշտամունքը, ինչպես Աստված հրահանգեց Մովսեսին, երբ նա պիտի կառուցեր վկայության խորանը. «Տե՛ս, -ասաց Աստված,- ամեն ինչ արա ճիշտ այն օրինակով, որ ցույց տվեցի քեզ լեռան վրա»:⁶ Մինչդեռ այժմ Հիսուսն առավել գերագանց մի քահանայության հասավ, քանի որ միջնորդ դարձավ գերագանց մի ուխտի, որ իբրև օրենք, հաստատված է շատ ավելի լավ խոստումներով:

^{7.21} «Քահանա ես». հայ. ձեռ. մի քանիսն ավելացնում են «Մելքիսեդեկի պես»:

^{7.21} Սղ 110.4:

^{7.27} Ղև 9.7:

^{8.1} Սղ 110.1:

^{8.5} Ելք 25.40:

Ուխտի փոփոխության հռչակումը

⁷ Եթե առաջին ուխտն անթերի լիներ, ապա մի երկրորդի կարիքը չէր լինի: ⁸ Բայց Աստված մեղադրում է իր ժողովրդին և ասում.

«Ահավասիկ մոտենում են այն օրերը,- ասում է Տերը,-
երբ մի նոր ուխտ պիտի կնքեմ
Իսրայելի ժողովրդի և Հուդայի ժողովրդի հետ:»

⁹ Դա չի լինելու այն Ուխտի նման,
որ կնքեցի նրանց հայրերի հետ այն օրը,
երբ նրանց ձեռքից բռնած
դուրս հանեցի Եգիպտոսից:
Որովհետև հավատարիմ չմնացին իմ Ուխտին,
ես էլ երեսի վրա թողեցի նրանց,- ասում է Տերը:

¹⁰ Արդ, հետևյալն է այն Ուխտը,
որ պիտի կնքեմ Իսրայելի հետ գալիք օրերին,-
ասում է Տերը.-
իմ օրենքները նրանց մտքերի մեջ եմ դրոշմելու,
նրանց սրտերում եմ գրելու դրանք.

ես նրանց Աստվածն եմ լինելու,
և նրանք՝ իմ ժողովուրդը:

¹¹ Այլևս ոչ ոք կարիք չի ունենա
իբր ընկերոջն ուսուցանելու,
ոչ ոք կարիք չի ունենա
իբր եղբորն ասելու՝ "Ճանաչի՛ր Տիրոջը",
որովհետև փոքրից մինչև մեծը՝
բոլորն էլ կճանաչեն ինձ:

¹² Եվ ես քավություն կտամ
նրանց անիրավություններին
և այլևս չեմ հիշի
նրանց մեղքերն ու անօրենությունները»:

¹³ Արդ, Նոր Ուխտի մասին խոսելով՝ այլևս հնացած է համարում առաջինը, իսկ այն,
ինչ հնացած է ու ժամանակավրեպ, անհետանում է:

9

Երկրային և երկնային սրբարաններ

¹ Արդարև, առաջին Ուխտը ևս ուներ իրեն հատուկ պաշտամունքի կանոններ և
երկրային մի սրբարան՝ բաղկացած երկու մասից: ² Նախ կար վրանի առաջին սրահը՝
Սրբություն կոչվածը, որտեղ գտնվում էին աշտանակը և առաջավորության հացի

^{8.7} Խոսքը Սինայի վրա կնքված Ուխտի մասին է (տե՛ս Ելք 24.3-8):

^{8.8-12} Եր 31.31-34 [LXX]:

սեղանը:՝ ³ Ապա՝ երկրորդ վարագույրի հետևում կար վրանի մյուս սրահը՝ Սրբությունների Սրբություն կոչվածը,՝ ⁴ որտեղ կային ոսկյա սեղանը՝ խունկ ծխելու համար, և Ուխտի տապանակը՝ ներսից և դրսից ոսկեպատ: Այս Տապանակում էին պահվում մանանայով լի ոսկե սափորը, Ահարոնի ծաղկած գավազանը և Ուխտի տասնաբանյա պատվիրանների քարե տախտակները:՝ ⁵ Տապանակի վրա կային Աստծու փառքը պատկերող քերովբեները, որոնք իրենց թևերով հովանի էին անում Քավություն կոչված կափարիչի վրա: Ուրիշ մանրամասնությունների մասին այժմ չեմ ուզում խոսել:՝

⁶ Սրբարանը, ուրեմն, այդպես էր հարդարված: Քահանաները պաշտամունք կատարելու համար միշտ մտնում էին վրանի առաջին սրահը:՝ ⁷ Բայց երկրորդ սրահը միայն քահանայապետն էր մտնում տարին մեկ անգամ, այն էլ իր և ժողովրդի անգիտությամբ գործած մեղքերի փոխարեն գոհի արյունը Աստծուն մատուցելու համար:՝ ⁸ Այդ բոլորով Սուրբ Հոգին ցույց էր տալիս, թե քանի դեռ վրանի առաջին սրահը կանգուն էր մնում, բուն Սրբարանի մուտքը մեր առջև փակ էր, ⁹ ինչը խորհրդանշորեն ցույց է տալիս, թե ներկայումս այդ Սրբարանը բաց է մեր առջև: Այնտեղ մատուցված նվերներն ու գոհերը չէին կարող մաքրել պաշտամունք մատուցողի խղճմտանքը, ¹⁰ որովհետև դրանք կապված էին ուտելիքի, խմելիքի և ծիսական զանազան լվացումների հետ: Եվ այդ մարմնական կարգերն ի գործու էին մինչև ուղղության, այսինքն՝ մինչև նոր կարգերի հաստատման ժամանակը:

¹¹ Բայց երբ Քրիստոսը եկավ որպես գալիք նոր կարգերի Քահանայապետ, մտավ մեծ, կատարյալ խորանը, որ մարդու ձեռքով չի շինված, այսինքն՝ մաս չի կազմում այս նյութեղեն աշխարհին:՝ ¹² Նա մեկընդմիջտ մտավ սրբարանը ոչ թե նոխազների և ցուլերի արյունով, այլ ի՛ր իսկ սեփական արյունով՝ դրանով հավիտենական փրկություն ապահովելով մեզ համար: ¹³ Եթե ցուլերի և նոխազների արյունը ցողելը կամ երինջների մոխիրը ցանելը բավական է ծիսականորեն պիղծ մեկին սրբելու համար մարմնական մաքրությամբ,՝ ¹⁴ ապա մի՞ թե Քրիստոսի արյունը շատ ավելին չի անի: Արդարև, հավիտենական Հոգու միջոցով Քրիստոսն ինքն իրեն որպես անարատ գոհ մատուցեց Աստծուն, որպեսզի իր արյունով մաքրի ձեր խղճմտանքը մեռելական գործերից, և դուք կարողանաք պաշտել կենդանի Աստծուն: ¹⁵ Դրանով իսկ Քրիստոսը՝ Նոր Ուխտի միջնորդ եղավ, քանի որ իր մահով քավեց առաջին Ուխտի ժամանակաշրջանում գործված հանցանքները, որպեսզի Աստծու կողմից կանչված մարդիկ ժառանգեն խոստացված հավիտենական կյանքը:

¹⁶ Որևէ ուխտի, այսինքն՝ որևէ կտակի դեպքում, նախ անհրաժեշտորեն պետք է

Պ.2 ա Ելք 26.1-30: բ Ելք 25.31-40: գ Ելք 25.23-30:

Պ.3 Ելք 26.31-33:

Պ.4 ա Ելք 30.1-6: բ Ելք 25.10-16: գ Ելք 16.33: դ Թվ 17.8-10: ե Ելք 25.16, Բ Օր 10.3-5:

Պ.5 Ելք 25.18-22:

Պ.6 Թվ 18.2-6:

Պ.7 Ղև 16.2-34:

Պ.11 «Գալիք». մի քանի ձեռ. ունեն «ներկա»:

Պ.13 ա Ղև 16.15-16: բ Թվ 19.9, 17-19:

հաստատվի կտակագրի մահը, ¹⁷ որովհետև կտակը կտակագրի մահվանից հետո է միայն ի գորու դառնում. քանի դեռ կտակ գրողը ողջ է, կտակը չի կարող ի գորու լինել: ¹⁸ Ահա թե ինչու առաջին Ուխտը ևս չկնքվեց, մինչև որ արյուն չթափվեց: ¹⁹ Մովսեսը Օրենքի գրքում եղած բոլոր պատվիրանները ժողովրդին կարդալուց հետո վերցրեց զոհ մատուցած ցուլերի և նոխագների արյունն ու մի քիչ ջուր և կարմիր բրդից ու գոպայի ձյուղերից կազմված մի փնջով ցողեց Ուխտի գրքի և ամբողջ ժողովրդի վրա՝ ²⁰ ասելով. «Այս արյունով է կնքվում Ուխտը, որին հնագանդվել պատվիրեց ձեզ Աստված»: ²¹ Ապա նույն արյունից ցողեց նաև վկայության խորանի և պաշտամունքային բոլոր առարկաների վրա: ²² Եվ Օրենքի համաձայն՝ գրեթե ամեն ինչ արյունով է սրբվում. առանց արյուն թափելու մեղքերի թողություն էլ չի լինում:՝

Քրիստոսի մուտքը երկնային Սրբարան

²³ Այսպես, ուրեմն, եթե երկնային Սրբարանի ընդօրինակությունը եղող երկրային սրբարանը հարկ էր, որ այսպիսի ծեսերով սրբվեր, ապա բուն իսկ երկնայինը կարիք ուներ անշուշտ ավելի՝ լավ զոհերի, ²⁴ որովհետև Քրիստոսը չմտավ մարդու ձեռքով շինված սրբարանը, որ նախատիպն էր ճշմարիտ Սրբարանի, այլ մտավ բուն իսկ երկինքը, որտեղ այժմ Աստծու առաջ է գտնվում մեզ համար: ²⁵ Երկրային տաճարի քահանայապետը տարին մեկ անգամ էր մտնում Սրբությունների Սրբություն՝ զոհված կենդանիների արյունով: Սակայն Քրիստոսը բազում անգամ չմտավ երկնային Սրբարան՝ ինքն իրեն ընծայելու համար, ²⁶ այլապես նա պետք է բազում անգամ չարչարվեր աշխարհի սկզբից ի վեր: Մինչդեռ այժմ, ահավասիկ, երբ ժամանակները մոտենում են իրենց լրումին, Քրիստոսը հայտնվեց՝ մեկընդմիջտ ինքն իրեն իբրև զոհ ընծայելով՝ մեղքը բնաջինջ անելու համար: ²⁷ Եվ ինչպես մարդիկ մեկ անգամ են մեռնում և դրանից հետո Աստծու դատաստանին հանձնվում, ²⁸ այնպես էլ Քրիստոսը միայն մեկ անգամ որպես զոհ մատուցվեց՝ մարդկանց մեղքերը վերացնելու համար: Իսկ երկրորդ անգամ նա կհայտնվի ոչ թե մեղքերը վերացնելու, այլ փրկելու համար նրանց, որոնք հավատով սպասում են իրեն:՝

10

Միակ փրկարար զոհը

¹ Մովսիսական Օրենքը պարզապես ներկայացնում է գալիք նոր կարգերի սովերը, այսինքն՝ մոտավոր նմանությունը և ոչ թե նրա հարազատ պատկերը: Այդ պատճառով էլ նույն զոհերը տարեցտարի շարունակ մատուցվում են, որովհետև չեն կարող կատարելության հասցնել այդ զոհերով Աստծուն մոտիկ եկողներին: ² Եթե դրանք արդարև ի վիճակի լինեին պաշտամունք մատուցողների մեղքերը սրբելու, սրբված

^{9.19-20} Ելք 24.6-8:

^{9.21} Ղև 8.15:

^{9.22} Ղև 17.11:

^{9.28} Հուն. և հայ. շատ ձեռ. չունեն *«հավատով»*:

^{9.28} Ես 53.12:

այդ մարդիկ այլևս մեղքերի խղճահարություն չէին ունենա, և զոհերն էլ վերջ կգտնեին: ³ Մինչդեռ տարեցտարի մատուցվող այդ զոհերը պարզապես ծառայում են մարդկանց մեղքերն իրենց հիշեցնելուն, ⁴ որովհետև ցուլերի և նոխազների արյունը բնավ չի կարող մեղքերը ջնջել: ⁵ Ահա թե ինչու Քրիստոսն իր աշխարհ գալու կապակցությամբ ասում է Աստծուն.

«Ձոռի և ընծա չկամեցար,
այլ դու մի մարմին պատրաստեցիր ինձ համար.»

⁶ Ողջակեզներ դու չուզեցիր,
ոչ էլ զոհեր՝ մեղքի համար մատուցված:

⁷ Ուստի ասացի. «Գալիս եմ ահա,
ճիշտ ինչպես որ իմ մասին գրված է Օրենքների գրքում,
որպեսզի քո կամքը կատարեմ, ո՛վ Աստված»:

⁸ Սկզբում ասում է, թե՝ «Ձոռի և ընծա չկամեցար, ողջակեզներ դու չուզեցիր, ոչ էլ զոհեր՝ մեղքի համար մատուցված», հակառակ նրան, որ Օրենքը ինքն է պահանջում մատուցել այդ զոհերը: ⁹ Ապա ավելացնում է. «Գալիս եմ ահա, որպեսզի քո կամքը կատարեմ, ո՛վ Աստված». իսկ սա նշանակում է, թե Աստված նախկին բոլոր զոհերը վերացնում և դրանց փոխարեն հաստատում է Քրիստոսի զոհը: ¹⁰ Եվ որովհետև Հիսուս Քրիստոսն Աստծու կամքը կատարեց, նրա մարմնի անկրկնելի զոհագործումով մենք սրբվեցինք մեր մեղքերից:

¹¹ Դարձյալ, ամեն մի քահանա ամեն օր պաշտամունք է կատարում և շատ անգամ մատուցում նույն զոհերը, որոնք երբեք չեն կարող վերացնել մեղքերը: ¹² Մինչդեռ Քրիստոսը միայն մեկ զոհ մատուցեց մեղքերի համար ու մշտնջենապես «նստեց Աստծու աջ կողմում» ¹³ և այնուհետև սպասում է, մինչև որ «Աստված նրա թշնամիներին դնի նրա ոտքերի տակ՝ որպես պատվանդան»: ¹⁴ Այսպես Քրիստոսը միայն մեկ պատարագով հավիտենապես կատարյալ դարձրեց մեղքերից սրբված մարդկանց:

¹⁵ Սուրբ Հոգին ևս նույն բանն է վկայում մեզ, որովհետև սկզբում ասելուց հետո, թե՝

¹⁶ «Ահա այն Ուխտը, որ պիտի կնքեմ նրանց հետ

գալիք օրերին,-ասում է Տերը.-

իմ օրենքները նրանց մտքերի մեջ եմ դրոշմելու,

նրանց սրտերում եմ գրելու դրանք»,

¹⁷ Ապա շարունակելով՝ ասում է. «Այլևս չեմ հիշի նրանց մեղքերն ու անօրենությունները»:

¹⁸ Արդ, երբ մեղքերն ու անօրենությունները ներված են, այլևս կարիք չկա դրանց համար ընծա մատուցելու:

^{10.5-7} Սղ 40.6-8 [LXX]:

^{10.11} Ելք 29.38:

^{10.12-13} Սղ 110.1:

^{10.16} Եր 31.33:

^{10.17} Եր 31.34:

Հորդոր՝ ավելի մոտենալու Աստծուն

¹⁹ Հետևաբար, եղբայրներ՝ ը, այլևս ազատ ենք Հիսուսի արյամբ մտնելու Սրբաբան, ²⁰ որովհետև Հիսուսն ինքը մեզ համար բացեց Աստծուն հասնելու այդ նոր և կենդանի ճանապարհը՝ վարագույրից այն կողմ անցնելով, այսինքն՝ իր մարմինը որպես զոհ մատուցելով: ²¹ դրանով իսկ նա Աստծու ժողովրդի Քահանայապետը եղավ: ²² Ուստի անկեղծ սրտով և վստահությամբ լի հավատով մոտենանք Աստծուն՝ մեր սրտերը մաքրած խղճմտանքը ծանրացնող հանցանքներից և մեր մարմինները լվացած մաքուր ջրով: ²³ Անխախտ պահենք այն հույսը, որ դավանում ենք՝ վստահ լինելով, որ Աստված հավատարիմ է իր խոստմանը: ²⁴ Հոգատար լինենք միմյանց հանդեպ՝ սիրո և բարի գործերի մղելով միմյանց: ²⁵ Բնավ չդադարենք պաշտամունքի հավաքություններին մասնակցելուց, ինչպես սովոր են անել ոմանք, ընդհակառակը, այդ ուղղությամբ առավել ևս հորդորենք միմյանց, քանի որ տեսնում ենք, թե մոտենում է Տիրոջ օրը:

²⁶ Քանզի ճշմարտությունը ճանաչելուց և ընդունելուց հետո, եթե շարունակում ենք գիտակցաբար հանցանք գործել, ապա այլևս չի մնում որևէ զոհ, որ քավի մեր մեղքերը, ²⁷ այլ մեզ մնում է միայն ահավոր սպասումն Աստծու դատաստանի և այն բոցավառ կրակի, որ լափելու է Աստծու հակառակորդներին: ²⁸ Եթե Մովսիսական Օրենքը խախտողը «երկու կամ երեք հոգու վկայությամբ մահվան է դատապարտվում» առանց գթության, ²⁹ որչա փ ավելի ծանր պատժի արժանի կհամարեք նրան, ով ոտնակոխ է անում Աստծու Որդուն, արհամարհում է Նոր Ուխտի կնքման համար թափված արյունը, որով Քրիստոսը սրբեց իրեն, և անարգում է շնորհներ պարգևող Սուրբ Հոգին: ³⁰ Արդարև, մենք ճանաչում ենք նրան, ով ասում է. «Իմն է դատելու և պատժելու իրավունքը. ե՛ս պիտի հատուցեմ,- ասում է Տերը», և ավելացնում. «Տերն ի՛նքը կդատի իր ժողովրդին»: ³¹ Իսկապես ահավոր բան է ընկնել կենդանի Աստծու ձեռքը:

³² Արդ, հիշեցե՛ք այն առաջին օրերը, երբ դեռ հազիվ լուսավորված՝ բազում ծանր չարչարանքների տոկացիք: ³³ Մերթ նախատինքի և հալածանքների առարկա եղաք հրապարակորեն, մերթ կանգնեցիք նախատինքն ու հալածանքները կրողների կողքին: ³⁴ Բանտարկյալներին չարչարակից եղաք և ձեր ունեցվածքների հափշտակումը ուրախությամբ ընդունեցիք՝ զիտենալով, որ երկնքում ավելի լավ ունեցվածքներ ունեք, որոնք մնայուն են: ³⁵ Հետևաբար, մի՛ կորցրեք ձեր վստահությունը, որովհետև այն մեծապես կվարձատրի ձեզ: ³⁶ Պետք է համբերել իմանաք, որպեսզի Աստծու կամքը կատարելով՝ տիրանաք նրա խոստումին, ³⁷ որովհետև

«Քիչ, շատ քիչ ժամանակ ևս,

^{10.22} Ղև 8.30, Եզկ 36.25:

^{10.27} Ես 26.11 [LXX]:

^{10.28} Բ Օր 17.6, 19.15:

^{10.29} Հուն. չունի «Նոր»:

^{10.29} Ելք 24.8:

^{10.30} «Դատելու և պատժելու իրավունքը». բոց՝ «վրեժխնդրությունը»:

^{10.30} ա Բ Օր 32.35: ք Բ Օր 32.36:

և գալու է նա, ով պիտի գա առանց ուշանալու:՝

³⁸ Այն ժամանակ,- ասում է Տերը,-

իր անձն ինձ վստահած արդար մարդը

կփրկվի իր հավատով.

բայց ինձնից երես դարձնող մարդուն

ես նկատի չեմ առնելու»:

³⁹ Մենք, սակայն, Աստծուց երես դարձնողներից չենք, որոնք սահմանված են կորստի, այլ պահում ենք հավատը՝ մեր հոգին փրկելու համար:

11

Հավատի անցյալ առաջամարտիկները

¹ Ի՞նչ է հավատը: Հավատ՝ նշանակում է վստահ լինել այն բաներին, որոնց հանդեպ հույս ունենք, և համոզված լինել այն բաներին, որոնք չեն երևում: ² Արդ, այսպիսի մի հավատով էր, որ անցյալ ժամանակների մարդիկ ընդունվեցին Աստծու կողմից:՝

³ Հավատով ենք հասկանում տիեզերքի ստեղծումն Աստծու խոսքով, որով տեսանելի այս տիեզերքը գոյացավ անտեսանելիից:՝

⁴ Իր հավատով էր, որ Աբելը Կայենից շա՛տ ավելի լավ զոհ մատուցեց Աստծուն, և այդ հավատի համար էլ Աստված վկայեց նրա արդար լինելու մասին՝ ընդունելով նրա մատուցած նվերները: Եվ թեպետ Աբելը մեռավ, բայց նրա հավատի օրինակը միշտ խոսուն է մնում:՝

⁵ Իր հավատի համար էր, որ Ենոքը փոխադրվեց երկինք՝ առանց մահ տեսնելու, և նրա մարմինը չգտնվեց, քանի որ Աստված արդեն փոխադրել էր այն: Մուրբ գրքերը վկայում են, որ երկինք փոխադրվելուց առաջ Ենոքը շահել էր Աստծու բարեհաճությունը:՝ ⁶ Իսկ առանց հավատի անհնար է Աստծու բարեհաճությունը շահել: Արդարև, ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ նա գոյություն ունի և վարձատրում է նրանց, ովքեր փնտրում են իրեն:

⁷ Իր հավատով էր, որ Նոյը երկյուղածությամբ անսաց Աստծուց իր ստացած հրահանգին՝ գալիք և դեռ անտեսանելի բաների մասին և տապանը շինելով՝ փրկեց իր ընտանիքը: Նոյն իր հավատով դատապարտեց իր ժամանակի մարդկանց և ժառանգեց հավատից եկող արդարությունը:՝

⁸ Իր հավատով էր, որ Աբրահամը հնազանդվեց Աստծու կոչին, որպեսզի վեր կենա ու գնա այն տեղը, որն ստանալու էր իբրև ժառանգություն, և ճանապարհ ընկավ առանց իմանալու, թե ո՛ր է գնում:՝ ⁹ Հավատով էր, որ նա պանդուխտի նման ապրեց

^{10.37-38} Ամբ 2.3-4 [LXX]:

^{11.2} Սբ 44.10-50.21, Ա Մկ 2.51-64:

^{11.3} Ծն 1.1, Սղ 33.6,9, Հհ 1.3:

^{11.4} Ծն 4.3-10:

^{11.5} Ծն 5.21-24 [LXX], Սբ 44.16:

^{11.7} Ծն 6.13-22:

^{11.8} Ծն 12.1-5:

այն օտար երկրում, որն Աստված խոստումով տվել էր իրեն, և վրանների տակ քնակվեց Իսահակի և Հակոբի հետ, որոնք խոստացված նույն երկրի ժառանգներն էին,¹⁰ որովհետև նա սպասում էր այն մյուս՝ մնայուն քաղաքին, որի ճարտարապետն ու կառուցողը Աստված է:

¹¹ Իր հավատով էր, որ Սառան ինքն էլ, որ ամուլ էր, որդեծնության սերմն ընդունելու գործություն ստացավ և զավակ ծնեց իր առաջացած տարիքում, որովհետև վստահություն ունեցավ Աստծու վրա, որ զավակ խոստացավ նրանց:¹² Եվ այսպես, մի մարդուց՝ Աբրահամից, որ այլևս անկարող էր համարվում սերնդագործելու, ծնվեցին ամբողջ սերունդներ՝ երկնքի աստղերի չափ անթիվ և ծովեզերքի ավազահատիկների չափ անհամար:¹³

¹³ Հիշված այս բոլոր մարդիկ հավատով մեռան՝ առանց ստանալու խոստացված բաները, այլ միայն հեռվից տեսան դրանք և ուրախացան՝ խոստովանելով, որ իրենք օտար և պանդուխտ են այս աշխարհում:¹⁴ Արդ, բոլոր նրանք, որ այսպես են արտահայտվում, հստակորեն ցույց են տալիս, թե հայրենիք են փնտրում:¹⁵ Եթե այդ հայրենիքը լիներ այն երկիրը, որտեղից իրենք էին դուրս եկել, այնտեղ վերադառնալու ժամանակ ունեին:¹⁶ Բայց իրականում նրանք ձգտում էին ավելի ազնվական մի հայրենիքի՝ երկնավոր հայրենիքին, որովհետև գիտեին, թե Աստված մի քաղաք է պատրաստել իրենց համար: Ահա թե ինչու Աստված ամոթ չի համարում և նրանց Աստվածը կոչվելու:

¹⁷ Հավատով էր, որ Աբրահամը Իսահակին որպես զոհ մատուցեց, երբ Աստված փորձում էր նրան: Մատուցեց իր մեկ հատիկ զավակին՝ չնայած այն իրողության, որ նրա մասին խոստում էր ստացել,¹⁸ որովհետև Աստված Աբրահամին ասել էր. «Իսահակ կը կլինի քո սերնդի շարունակողը»:¹⁹ Աբրահամը մտածեց, որ Աստված մեռելներից էլ կարող է հարություն տալ Իսահակին, ուստի որպես մեռելների հարության օրինակ՝ նա հետ ստացավ իր որդուն:

²⁰ Գալիք իրականությունների հավատով էր, որ Իսահակն օրհնեց Հակոբին և Եսավին:

²¹ Հավատով էր, որ Հակոբն իր մահվանից առաջ օրհնեց Հովսեփի որդիներից յուրաքանչյուրին և «իր զավագանի ծայրին հենված՝ երկրպագեց Աստծուն»:

²² Հավատով էր, որ Հովսեփն իր վախճանվելու պահին Իսրայելի ժողովրդին

^{11.9} Ծն 35.27:

^{11.11} Մի շարք ձեռ. չունեն «որ ամուլ էր»: «Զորություն ստացավ և զավակ ծնեց իր առաջացած տարիքում». մի շարք ձեռ. ունեն «գործություն ստացավ իր առաջացած տարիքում»:

^{11.11} Ծն 18.11-14, 21.2:

^{11.12} «Որ այլևս անկարող էր համարվում սերնդագործելու». բոց՝ «որ այլևս մեռելի նման էր», իսկ գրբ. «որ տարիքն առել էր»:

^{11.12} Ծն 15.5, 22.17, 32.12:

^{11.13} Ծն 23.4, Ա Մն 29.15, Սղ 39.12:

^{11.17} Ծն 22.1-14:

^{11.18} Ծն 21.12:

^{11.20} Ծն 27.27-29, 39-40:

^{11.21} ա Ծն 48.1-20: բ Ծն 47.31 [LXX]:

հիշեցրեց Եգիպտոսից դուրս գալու խոստումը և կարգադրություն արեց նաև իր աճյունի փոխադրության մասին։

²³ Հավատով էր, որ Մովսեսի ծնողները, տեսնելով ծնված մանկան կայտառ լինելը, մինչև երեք ամիս պահեցին նրան՝ առանց վախենալու թագավորի հրամանից։

²⁴ Հավատով էր, որ Մովսեսը մեծանալով մերժեց, որ փարավոնի աղջկա որդի կոչվեր։ ²⁵ Նախընտրեց Աստծու ժողովրդի հետ չարչարվել, քան կարճ ժամանակի համար մեղքերի հաճույքը վայելել։ ²⁶ Եգիպտոսի գանձերից շատ ավելի մեծ հարստություն համարեց Քրիստոսի կրած նախատինքները կրել, որովհետև աչքերը հառած էր Աստծու վարձատրությանը։ ²⁷ Հավատով էր, որ թողեց Եգիպտոսը՝ առանց վախենալու թագավորի զայրույթից և որպես անտեսանելի Աստծուն տեսած մարդ՝ համբերել իմացավ։ ²⁸ Հավատով էր, որ հաստատեց Չատիկը և հրահանգեց արյուն շաղ տալ դռների վրա, որպեսզի մահվան հրեշտակը չմոտենա Իսրայելի անդրանիկ զավակներին։

²⁹ Հավատով էր, որ Իսրայելի ժողովուրդն անցավ Կարմիր ծովով, կարծես ցամաք երկրի վրայով անցնելիս լինեք, մինչդեռ եգիպտացիները, երբ նույն բանը փորձեցին, ընկղմվեցին։

³⁰ Հավատով էր, որ կործանվեցին Երիքովի պարիսպները, երբ իսրայելացիները յոթ օր պտտվեցին դրանց շուրջը։ ³¹ Եվ հավատով էր, որ պոռնիկ Ռախաբը չսպանվեց Աստծուն անհնազանդ մարդկանց հետ, քանի որ նա խաղաղությամբ հյուրընկալել էր Իսրայելի լրտեսներին։

³² 3/4 ի նչ շարունակեմ. ժամանակս բավական չի լինի, որ պատմեմ Գեդեոնի, Բարակի, Սամսոնի, Հեփթայեի, Դավթի ու Սամվելի և մյուս մարգարեների մասին, ³³ որոնք իրենց հավատով պարտության մատնեցին թագավորներին, արդարություն գործեցին և տիրացան Աստծու խոստումներին։ Նրանք փակեցին առյուծների բերանները, ³⁴ հանգրին կրակի գորությունը և ազատվեցին սրի բերանից։ Իրենց տկարության մեջ գորացան Աստծով, անպարտելի դարձան պատերազմում և ընկճեցին օտարների բանակները։

³⁵ Կանայք հավատով տեսան իրենց մեռելների հարությունը։ Շատերը տանջանքի մեջ մեռան՝ մերժելով ազատությունը, որպեսզի հարություն առնեն լավագույն մի

^{11.22} Ծն 50.24-25, Ելք 13.19:

^{11.23} ա Ելք 2.2: բ Ելք 1.22:

^{11.24} Ելք 2.10-12:

^{11.26} «Շատ ավելի մեծ հարստություն համարեց», գրբ. ունի «շատ ավելի կարևոր համարեց»:

^{11.27} «Անտեսանելի Աստծուն», գրբ. ունի «անտեսանելիներին»:

^{11.28} Ելք 12.21-30:

^{11.29} Ելք 14.21-31:

^{11.30} Հու 6.12-21:

^{11.31} ա Հու 6.21-25: բ Հու 2.1-21:

^{11.32} ա Դտ 6.11-8.32: բ Դտ 4.6-5.31: գ Դտ 13.2-16.31: դ Դտ 11.1-12.7: ե Ա Թզ 16.1- Գ Թզ 2.11: զ Ա Թզ 1.1-25.1:

^{11.33} Դն 6.1-27:

^{11.34} Դն 3.1-30:

կյանքի համար:՝³⁶ Ուրիշները ենթարկվեցին նախատիքների ու ծեծի, շղթաների ու բանտերի համն առան:՝³⁷ Քարկոծվեցին, սղոցվեցին, փորձությունների մատնվեցին, սպանվեցին սրով, շրջեցին ոչխարի կամ այծի մորթիներով՝ զրկանք, հալածանք ու չարչարանք կրելով,՝³⁸ թափառական կյանքով ապրելով անապատում կամ լեռների վրա, քարայրերում կամ խոռոչներում: Արդարև, աշխարհը արժանի չէր այդ մարդկանց:

³⁹ Սրանք ամենքը, իրենց հավատով վկայված լինելով հանդերձ, չստացան Աստծու խոստումը,⁴⁰ որովհետև Աստված, մեզ համար մի ավելի լավ բան նախատեսած լինելով, չուզեց, որ նրանք առանց մեզ հասնեն խոստումի իրականացմանը:՝

12

Փորձությունների մեջ հարատևություն՝ Քրիստոսի օրինակով

¹ Ուրեմն մենք էլ, որ այսքան բազմաթիվ վկաներով ենք շրջապատված, դե՛ն գգենք ամեն խոչընդոտ և մի կողմ թողնենք մեղքը, որ հեշտությամբ է պաշարում մեզ, և համբերությամբ պայքարենք մեզ ներկայացող փորձությունների դեմ:՝² Մեր աչքերն ուղղենք Հիսուսին՝ մեր հավատի հիմնադրին, այն կատարելագործողին, որը իմանալով, թե ինչ ուրախություն է սպասում իրեն, արհամարհեց ամոթը, հանձն առավ խաչի վրա մեռնել և նստեց Աստծու աթոռի աջ կողմում:

³ Եվ որպեսզի երբեք չհուսալքվեք ու չտկարանաք, մտաբերե՛ք, թե Հիսուսն ինչպիսի՛ համբերությամբ կրեց մեղավորների հակառակությունները:՝⁴ Դուք դեռ ձեր արյունը թափելու չափ դիմադրություն ցույց չտվեցիք մեղքի դեմ պայքարում:

Աստծու հայրական խրատը

⁵ Դուք նաև մոռացել եք այն հորդորը, որ ուղղված է ձեզ՝ իբրև որդիների.

«Որդյա՛կ իմ, մի՛ արհամարհիր Տիրոջ խրատը
և մի՛ վհատվիր, երբ նա հանդիմանի քեզ,՝

⁶ որովհետև երբ Տերը խրատում է,
նշանակում է, թե սիրում է քեզ,
և երբ պատժում է,

նշանակում է, թե քեզ ընդունում է իբրև որդու:»

⁷ Ուստի համբերությա՛մբ ընդունեցեք Աստծու խրատը՝ իմանալով, որ նա ձեզ հետ վարվում է հոր նման: Կա՞ մի որդի, որ իր հորից հանդիմանություն ստացած չլինի:

⁸ Ընդհակառակը, եթե Աստված ձեզ չհանդիմանի, ինչպես անում է իր բոլոր

^{11.35} Գ Թզ 17.17-24, Դ Թզ 4.25-37, Բ Մկ 6.18-7.42:

^{11.36} Գ Թզ 22.26-27, Բ Մն 18.25-26, Եր 20.2, 37.15, 38.6:

^{11.37} Բ Մն 24.21:

^{11.40} «Մեզ համար մի ավելի լավ բան նախատեսած լինելով, չուզեց, որ...»։ գրք. ունի «մեզ համար ավելի լավ համարեց, որ...»:

^{12.1} «խոչընդոտ». բոց՝ «ծանրություն»: Գրք. ունի «հպարտություն»: «Մեղքը, որ հեշտությամբ է պաշարում մեզ [կաշկանդում]». գրք. ունի «ծանր մեղքը»:

^{12.5-6} Հք 5.17, Առ 3.11-12 [LXX]:

որդիներին, նշանակում է, թե դուք նրա որդիները չեք և խորթ եք նրան: ⁹ Երբ մեր մարմնավոր հայրերը մեզ հանդիմանում են, մենք դադարում ենք նրանց հարգելուց: Ո՛չ: Ուրեմն որքա՛ն ավելի հնազանդ պետք է լինենք հոգիների Հորը, որպեսզի կյանք ունենանք: ¹⁰ Երկրավոր հայրերը մեզ խրատում են միայն մի փոքր ժամանակ, իրենց ճիշտ դատած ձևով, մինչդեռ Աստված խրատում է մեր բարիքի համար, որպեսզի հաղորդակից դառնանք նրա սրբությանը: ¹¹ Ճիշտ է, որ ամեն մի հանդիմանություն նույն պահին ուրախություն չի պատճառում, այլ տխրեցնում է, բայց հետո նրանով կրթվածներին արդար կյանքի խաղաղություն է պարգևում:

Քրիստոնեական կոչումին հավատարիմ մնալու հորդոր

¹² Ուստի «գորացրե՛ք թուլացած ձեռքերն ու կթոտ ծնկները»: ¹³ և ուղղեցե՛ք ձեր կյանքի ընթացքն, որպեսզի ով տկար է հավատով, չգլորվի, այլ ընդհակառակը բժշկվի:

¹⁴ Ձանացե՛ք բոլորի հետ ապրել խաղաղ և վարել սուրբ կյանք, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը: ¹⁵ Ուշադի՛ր հսկեցեք, որ որևէ մեկը չզրկվի Աստծու շնորհից: Չլինի թե մեկը, դառնության արմատ դառնալով, պատճառ լինի խռովության, և շատերը վարակվեն նրանից: ¹⁶ Չլինի թե մեկն Աստծուն անհավատարիմ լինի կամ արհամարհի նրա պարգևները Եսավի նման, որը մի աման կերակուրի համար իր անդրանիկությունը ծախեց: ¹⁷ Եվ ինչպես գիտեք, երբ հետո ուզեց իր հոր օրհնությունն ստանալ, մերժվեց, և հակառակ իր խնդրանքների ու թափած արցունքների կացությունից ոչ մի բան չկարողացավ փոխել:

¹⁸ Այն լեռը, որին մոտեցել էք այժմ, շոշափելի չէ Սինա լեռան նման, որ կրակով էր այրվում և պատած էր մշուշով, խավարով ու մրրիկով, ¹⁹ ուր փողն էր հնչում և լսվում էր Աստծու պատգամող ձայնը: Ժողովուրդը, որ լսում էր այդ ձայնը, աղաչում էր, որ այն չլսի կրկին, ²⁰ որովհետև սարսափած էր այն հրամանից, որ ասում էր. «Ով որ մոտենա լեռանը, թեկուզ մի անասուն, քարկոծվելով պիտի մեռնի»: ²¹ Այնքան անավոր էր տեսարանը, որ Մովսեսն էլ ասում էր. «Սարսափից դողում եմ»: ²² Դուք, սակայն, մոտեցել էք Սինա լեռանը, կենդանի Աստծու քաղաքին, երկնային Երուսաղեմին, հրեշտակների անհամար բանակներին: ²³ Մոտեցել էք երկնքում արձանագրված Աստծու անդրանիկ զավակների բերկրալի հավաքության, Աստծուն, որ բոլորի դատավորն է, կատարելության հասած արդարների հոգիներին, ²⁴ Նոր Ուխտի միջնորդին՝ Հիսուսին և նրա թափած արյունին, որ ավելի լավ արդարություն է

^{12.12} Ես 35.3 [LXX]:

^{12.13} Առ 4.26 [LXX]:

^{12.15} Բ Օր 29.18 [LXX]:

^{12.16} Ծն 25.29-34:

^{12.17} Ծն 27.30-40:

^{12.18-19} Ելք 19.16-22, 20.18-21, Բ Օր 4.11-12, 5.22-27:

^{12.20} Ելք 19.12-13:

^{12.21} Բ Օր 9.19:

^{12.23} Գրք. չկա «բերկրալի» բառը:

պահանջում, քան Աբելի արյունը։²⁵

²⁵ Զգո՛ւյ՜ շէք, չլինի թէ մերժեք Աստծու խոսքը լսել, որովհետև եթե նրա հրամանները մարդկանց փոխանցող Մովսեսին չհնազանդվողներն ազատում չունեցան, մենք բնա՛վ ազատում չենք ունենա, եթե թիկունք դարձնենք Աստծուն, որ երկնքից է իր խոսքն ուղղում մեզ։²⁶ Նրա ձայնը երկիրը շարժեց այն ժամանակ, իսկ այժմ մնում է նրա խոստումը, որ ասում է.

«Մի անգամ ևս պիտի շարժեմ.

և ոչ միայն երկիրը, այլ երկինքն էլ»։²⁷

²⁷ «Մի անգամ ևս» խոսքը ցույց է տալիս, որ ստեղծագործության մեջ խախտված բաները կփոխվեն, մինչդեռ անշարժ մնացածները անփոփոխ կմնան:

²⁸ Հետևաբար, երախտապարտ լինենք, որ Աստված անսասանելի մի թագավորություն է տալիս մեզ: Եվ այդ երախտագիտությամբ էլ ծառայենք Աստծուն այնպես, ինչպես հաճելի է իրեն՝ հարգանքով և պատկառանքով, ²⁹ որովհետև, ինչպես Սուրբ գիրքն է ասում. «Մեր Աստվածը լափող կրակ է»:

13

Եղբայրական սեր և սուրբ կյանք

¹ Եղբայրասիրությունը թող մնայուն սկզբունք լինի ձեզ համար: ² Մի՛ մոռացեք հյուրասեր լինել, որովհետև այդպիսով ոմանք առանց իմանալու հրեշտակներին հյուրասիրեցին: ³ Հիշեցե՛ք բանտում եղողներին՝ դուք ձեզ բանտակից զգալով նրանց: Հիշեցե՛ք նաև չարչարանքների մեջ եղողներին՝ դուք ձեզ նրանց տեղը դնելով:

⁴ Բոլորդ էլ պատվեցե՛ք ամուսնությունը և սո՛ւրբ պահեցեք ամուսնական կապը, որովհետև Աստված դատապարտում է շնացողներին և պոռնկություն անողներին:

⁵ Փողասիրությունը թող տեղ չունենա ձեր կյանքում. բավարարվեցե՛ք ձեր ունեցածով, որովհետև Աստված ինքն է ասում. «Քեզ երեսի վրա չեմ թողնելու և երբեք չեմ լքելու»:

⁶ Այնպես որ համարձակությամբ ասենք.

«Տե՛րն է իմ օգնականը,
ուստի չեմ վախենում ես.

^{12.24} «Սվելի լավ արդարություն է պահանջում». բոց՝ «սվելի խոսուն է». այսինքն՝ մինչև Աբելի արյունը վրեժխնդրությամբ էր արդարություն պահանջում (տե՛ս Մտ 23.35, հմմտ Հտ 6.10), Քրիստոսի արյունը մեղքերի քավություն է բերում, ուստի և ներման ճանապարհով է արդարություն պահանջում:

^{12.24} Ծն 4.10:

^{12.25} Ելք 20.22:

^{12.26} Անգ 2.6 [LXX]:

^{12.29} Բ Օր 4.24:

^{13.2} Խոսքը վերաբերում է հավատակից եղբայրներին հյուրասիրություն ցույց տալուն, առանց որի քրիստոնեությունը տարածողների համար շատ դժվար կլինե՛ր ճամփորդել Հռոմեական կայսրության զանազան կողմերում:

^{13.2} Ծն 18.1-8, 19.1-3, Տբ 5.4-5:

^{13.4} Իմս 3.13:

^{13.5} Բ Օր 31.6, 8, Հս 1.5:

մարդն ի՞նչ կարող է անել ինձ»:

⁷ Հիշեցե՛ք ձեր առաջնորդներին, որոնք Աստու խոսքը բերեցին ձեզ: Նայեցե՛ք, թե ինչպե՛ս ապրեցին ու ինչպե՛ս մեռան նրանք, և օրինա՛կ վերցրեք նրանց հավատից:

⁸ Հիսուս Քրիստոսը նույնն է միշտ՝ երեկ, այսօր և հավիտյան:

⁹ Մի՛ տարվեք տեսակ-տեսակ օտարոտի ուսուցումներով: Լավ է, որ սիրտն ամրանա Աստու շնորհով, քան ուսելիքներին և չուսելիքներին վերաբերող կանոններով, որոնց հետևողները ոչ մի օգուտ չստացան: ¹⁰ Մենք ունենք մի սեղան, որի վրա մատուցված զոհից ճաշակելու իրավունք չունեն հին սրբարանին ծառայող քահանաները: ¹¹ Արդարև, մարմիններն այն անասունների, որոնց արյունը քահանայապետի ձեռքով սրբարան էր տարվում՝ որպես մեղքի համար մատուցվող զոհ, այրվում էին բնակության վայրից դուրս գտնվող մի տեղում: ¹² Հենց այդ պատճառով Հիսուսն ինքն էլ քաղաքից դուրս տարվելով չարչարվեց, որպեսզի իր արյունով սրբի ժողովրդի մեղքերը: ¹³ Արդ, եկեք մենք էլ դուրս գանք մեր բնակության վայրերից և գնանք դեպի նա՝ վերցնելով նրա կրած նախատիքները, ¹⁴ որովհետև այստեղ, այս աշխարհում, մենք չունենք մնայուն մի քաղաք, այլ գալիք երկնավոր քաղաքն ենք ցանկանում:

¹⁵ Հետևաբար, Քրիստոսի միջոցով տևականորեն օրհներգություն մատուցենք Աստու՛ն՝ իբրև զոհ, այսինքն՝ թող մեր շրթները նրա անունը դավանեն՝ իբրև լավագույն նվեր մեր կողմից: ¹⁶ Եվ մի՛ մոռացեք բարեգործություն անել և օգնել ուրիշներին, որովհետև դրանք են Աստու կամեցած զոհերը:

Հնազանդ լինել հոգևոր առաջնորդներին

¹⁷ Լսեցե՛ք ձեր առաջնորդների խոսքը, որովհետև նրանք անքուն հսկում են ձեր հոգիների համար՝ գիտենալով, որ հաշիվ են տալու ձեր փոխարեն, և հնազա՛նդ եղեք նրանց, որպեսզի նրանք ուրախությամբ կատարեն իրենց պաշտոնը և ոչ թե հառաչելով, որովհետև դա ձեր օգուտի համար չի լինի: ¹⁸ Աղոթեցե՛ք մեզ համար, որովհետև համոզված ենք, որ մեր խիղճը մաքուր է, և ուզում ենք ամեն ինչում ուղիղ գործել: ¹⁹ Աղաչում եմ մանավանդ, որ աղոթեք ինձ համար, որպեսզի կարողանամ ավելի շուտ վերադառնալ ձեզ մոտ:

Մաղթանքներ ու վերջին ողջույններ

²⁰⁻²¹ Թող խաղաղության Աստվածը կարողություն տա ձեզ, որ ամեն տեսակ բարեգործությամբ իր կամքը կատարեք, որովհետև ինքն էր, որ մեռելներից հարություն տվեց մեր Տեր Հիսուսին, նրան, որ իր արյունով կնքված հավիտենական ուխտով Հովվապետ եղավ ամբողջ հոտի համար: Ինչ որ կամենում է Աստված, թող այն էլ ներգործի մեր մեջ Հիսուս Քրիստոսի միջոցով, որին փա՛ռք հավիտյանս: Ամեն:

^{13.6} Սղ 118.6 [LXX]:

^{13.7} «Ինչպե՛ս մեռան». ըստ ոմանց՝ այս ակնարկությունը որոշ առաջնորդների նահատակության մասին է: Հմմտ 10.32-33:

^{13.11} Ղև 16.27:

^{13.17} Հուն. չունի «ձեր փոխարեն»:

²² Եղբայրներ՝ ր, աղաչում եմ, որ լսեք իմ հորդորները, որ տալիս եմ ձեզ այս կարճ նամակով:

²³ Ուզում եմ, որ գիտենաք, թե մեր եղբայրը՝ Տիմոթեոսը, այժմ ազատվել է բանտից: Եթե շուտով մոտս գա, միասին կգանք ձեզ տեսնելու:

²⁴ Իմ ողջույնները հաղորդեցե՛ք ձեր բոլոր առաջնորդներին և բոլոր հավատացյալներին: Իտալիայի եղբայրները ողջունում են ձեզ:՝

²⁵ Աստծու շնորհը թող բոլորիդ հետ լինի: Ամեն:

JAS

ՀԱԿՈԲՈՍ

ՀԱԿՈԲՈՍ ՏՅԱՌՆԵՂԲՈՐ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Հակոբոսի գրած նամակը կարծես ցուցումների մի հավաքածու է՝ ուղղված «Աստծու ժողովրդի անդամներին, որ ցրված են համայն աշխարհում»: Հեղինակը, որ հավանաբար Հակոբոս Տյառնեղբայրն է, կենդանի խոսքով և վառ պատկերներով ցուցումներ է տալիս քրիստոնեական ուղիղ և իմաստուն կեցվածք ունենալու և համապատասխան կյանքով ապրելու համար: Հակոբոսը քրիստոնեական տեսանկյունից դիտում է մի շարք հարցեր, ինչպես՝ հարստություն և աղքատություն, փորձություն, պարկեշտ ընթացք, նախապաշարում, հավատ և գործ, լեզվի չափավորություն, իմաստություն, վեճ, հպարտություն և հեզություն, ուրիշներին դատել, համբերություն և աղոթք:

Նամակը շեշտում է հավատին առընթեր՝ այդ հավատը գործով արտահայտելու կարևորությունը: Հեղինակը ջերմորեն հանձնարարում է համբերող լինել նեղությունների և ցավերի մեջ, ապավինել աղոթքի գործությանը և աշխատել հոգեպես օգնել միմյանց:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1):
- Հավատ և իմաստություն (1.2-8):
- Աղքատություն և հարստություն (1.9-11):
- Փորձություն (1.12-18):
- Լսել և գործադրել (1.19-27):
- Ազդարարություն խտրականության դեմ (2.1-13):
- Հավատ և գործ (2.14-26):
- Քրիստոնյան և իր լեզուն (3.1-18):
- Քրիստոնյան և աշխարհը (4.1-5.6):
- Չանազան ցուցումներ (5.7-20):

^{13.24} «Իտալիայի եղբայրները». բոց՝ «նրանք, որ Իտալիայից են»: Եթե նամակը Իտալիայից է գրված, ինչպես ենթադրվում է, վերևի թարգմանությունը ճիշտ է, այլապես պետք է ենթադրել, որ ակնարկությունը վերաբերում է Հռոմեական կայսրության մեկ ուրիշ նահանգում ապրող իտալացիներին:

Ողջուն

¹ Ես՝ Հակոբոսս, Աստծու և Տեր Հիսուս Քրիստոսի ծառաս, ողջունում եմ ձեզ՝ Աստծու ժողովրդի անդամներին, որ ցրված եք համայն աշխարհում։*

Համբերություն, հավատ և իմաստություն

² Եղբայրներ՝, դուք ձեզ շատ երջանիկ համարեցեք, երբ զանազան փորձությունների մեջ ընկնեք։³ Իմացե՛ք, որ փորձությունը համբերություն է ծնում, եթե ձեր հավատը փորձությանը դիմանա։⁴ Իսկ համբերություն պետք է ունենալ մինչև վերջ, որպեսզի ամբողջական ու կատարյալ լինեք, և ձեզ ոչ մի բան չպակասի։

⁵ Եթե ձեզնից մեկն զգում է, թե անհրաժեշտ իմաստությունը չունի, թող խնդրի Աստծուց, որ բոլորին տալիս է առատորեն և սիրահոժար կերպով, և Աստված կտա նրան։⁶ Բայց թող խնդրի հավատով, առանց երկմտելու, որովհետև երկմիտ մարդը նման է ծովի ալիքներին, որոնք շարժվում ու տարուբերվում են հողմերից։⁷ Այդպիսի մարդը թող չակնկալի, որ Տերը կտա իր խնդրածը,՝⁸ որովհետև երկմիտ մարդն անհաստատ է իր արած բոլոր քայլերում։

Աղքատն ու հարուստը

⁹ Աղքատ եղբայրը թող ուրախ լինի, երբ Աստված բարձրացնում է նրան։¹⁰ Հարուստ եղողն էլ թող ուրախ լինի, երբ Աստված խոնարհեցնում է նրան, որովհետև հարստությունը նման է վաղանցուկ վայրի ծաղկի։¹¹ Ինչպես որ ծագող արևն իր այրող տաքությամբ չորացնում է խոտը, և նրա ծաղիկը թափվում է, ու նրա գեղեցկությունն էլ կորչում է, այնպես էլ մեծահարուստը պիտի թառամի իր գործերի հետ։

Փորձությունները՝ կյանքին տիրանալու միջոց

¹² Երանի՛ այն մարդուն, որ դիմանում է փորձությանը, որովհետև փորձությունից հաղթական դուրս եկողը որպես մրցանակ կստանա այն կյանքը, որ Տերը խոստացավ տալ իրեն սիրողներին։¹³ Բայց փորձության մեջ եղող որևէ մեկը թող չասի, թե Աստված փորձում է իրեն, որովհետև Աստված մասնակից չէ այն փորձություններին,

*1.1 «Աստծու ժողովրդի անդամներին» բոց՝ «տասներկու ցեղերին», որով հասկացվում են այն քրիստոնյաները, որոնք ծագումով հրեա են և ապրում են Պաղեստինից դուրս։ Բայց պատկերավոր լեզվով հասկացվում են բոլոր քրիստոնյաները, որոնք փոխարինում են հին Իսրայելի տասներկու ցեղերին և կազմում Աստծու նոր ժողովուրդը։

*1.1 Մտ 13.55, Սր 6.3, Գրծ 15.13, Գղ 1.19:

*1.2 Իմս 3.5-6:

*1.5 Իմս 8.21, Սր 51.13-14:

*1.7 «Տերը». գրք. ունի «Աստված»:

*1.10-11 Ես 40.6-7 [LXX]:

*1.12 Մի շարք ձեռ. չունեն «Տերը» բառը:

որոնք չարից են գալիս, ոչ էլ ինքն է փորձության ենթարկում մարդկանց:

¹⁴Յուրաքանչյուր ոք փորձվում է՝ տարվելով ու խաբվելով իր իսկ ցանկություններից:

¹⁵Ապա ցանկությունը հղանալով ծնունդ է տալիս մեղքին, իսկ մեղքը, երբ հասնում է իր լրումին, դառնում է մահվան պատճառ:

¹⁶Հետևաբար, դուք ձեզ մի՛ խաբեք, իմ սիրելի՛ եղբայրներ: ¹⁷Ընդհակառակը, միայն բարի ցանկություններն ու կատարյալ պարզներն են գալիս երկնքից, Հայր Աստուծուց, որ արարիչն է լույսի, և որի կամքն անփոփոխ է, անդառնալի ու անստվեր: ¹⁸Աստված կամեցավ վերստին ծնել մեզ, որպեսզի հայտնվի իր ճշմարիտ նպատակը, որովհետև նա ուզում է, որ մենք լինենք իր նոր ստեղծագործության առաջին պտուղները:

Աստուծու խոսքը լսել և կատարել

¹⁹Հիշեցե՛ք, իմ սիրելի՛ եղբայրներ, որ պետք է լինեք ավելի լսող, քան թե խոսող: Հեշտությամբ մի՛ բորբոքվեք: ²⁰Իմացե՛ք, որ մեր բարկանալով չենք կարող Աստուծու արդար ծրագիրն իրականացնել: ²¹Ուստի, թոթափեցե՛ք ձեզնից ամեն կեղտոտ սովորություն ու չար ցանկություն և հեգույթա՛մբ ընդունեցե՛ք ձեր մեջ սերմանված Աստուծու խոսքը, որ կարող է փրկել ձեր հոգիները:

²²Մի՛ գոհացեք այդ պատվիրանները լսելով, այլ կատարեցե՛ք դրանք, այլապես ինքներդ ձեզ խաբած կլինեք, ²³որովհետև ով պարզապես լսում է պատվիրանը, բայց չի կատարում այն, նման է այն մարդուն, որ ուշադրությամբ ինքն իրեն դիտում է հայելու մեջ, ²⁴բայց հազիվ հեռացած հայելուց՝ այլևս չի տեսնում իրեն և մոռանում է, թե ինչպիսի՛ն էր ինքը: ²⁵Մինչդեռ ով իր աչքերը հառում է Աստուծու ազատարար և կատարյալ Օրենքին ու դրա մեջ էլ հարատևում, նա լսելուց հետո չի մոռանում, այլ գործադրում է այն. այդպիսի մեկը երանելի կլինի օրենքը կատարելու համար:

²⁶Ով բարեպաշտ է համարում իրեն, և սակայն սանձ չի դնում իր լեզվին, նա խաբում է ինքն իրեն, որովհետև անօգուտ է նրա բարեպաշտությունը: ²⁷Հայր Աստուծու համար անկեղծ և իսկական բարեպաշտությունը կարոտության մեջ եղող որբերին և այրիներին այցելելն ու նրանց օգնելն է և աշխարհի մեջ ապրելով հանդերձ՝ ինքն իրեն անարատ պահելը:

2

Անաչառ լինել բոլորի հանդեպ

¹Եղբայրներ՝ իմ, մարդկանց միջև երբեք խտրություն մի՛ դրեք, դուք՝ որպես հավատացողներ Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ, որ միայն ի՛նքը գիտի մարդկանց փառավորել: ²Եթե պատահի, օրինակ, որ ոսկի մատանի դրած և փառավոր զգեստներ հագած մի մարդ գա ձեր հավաքույթին, և մյուս կողմից գա նաև աղքատ մի մարդ՝ մաշված զգեստներով, ³և դուք փառավոր հագուստներ ունեցողին մեծ հարգանքով ասեք՝ «Վերևո՛ւմ նստիր, խնդրեմ», մինչ աղքատին ասեք՝ «Դու այստեղ ոտքի՛

^{1.13} Սր 15.11-20:

^{1.18} Գրք. չունի «ամաօփն» բառը:

^{1.19} Սր 5.11:

կանգնիր» և կամ՝ «Ե՛կ այստեղ գետնի՛ն նստիր՝ ոտքերիս մոտ», ⁴ արդյոք դուք ձեր մեջ խտրություն դրած չե՞ք լինի և դատած չե՞ք լինի սխալ սկզբունքով:

⁵ Լսեցե՛ք, իմ սիրելի՛ եղբայրներ, Աստված ինքը չընտրե՛ց այս աշխարհի աղքատներին, որոնք հարուստ են հավատով և ժառանգելու են այն արքայությունը, որ Աստված խոստացավ իրեն սիրողներին: ⁶ Մինչդեռ դուք արհամարհում եք աղքատներին: Իսկ հարուստները չե՛ն, որ հարստահարում են ձեզ. նրանք չե՛ն, որ քարշ են տալիս ձեզ դատարանից դատարան: ⁷ Նրանք չե՛ն, որ վարկաբեկում են Քրիստոսի բարի անունը, որ դուք կրում եք ձեզ վրա:

⁸ Բայց դուք լավ կանեք, եթե իսկապես կատարեք Սուրբ գրքի արքայական օրենքը, որ ասում է. «Միրի՛ր քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ»: ⁹ Իսկ եթե խտրություն եք դնում մարդկանց միջև, մեղք եք գործում և Օրենքի կողմից դատապարտվում եք որպես օրինազանցներ, ¹⁰ որովհետև եթե մարդ նույնիսկ ամբողջ Օրենքը գործադրի, բայց թերանա միայն մեկ պատվիրանի կատարման մեջ, հանցավոր կլինի ամբողջ Օրենքի առաջ, ¹¹ քանի որ «Մի՛ սպանիր» պատվիրանը տվողը նաև պատվիրեց, թե՛ «Մի՛ շնանար»: Եթե դու սպանություն չանես, բայց շնություն անես, հանցավոր ես Օրենքի առաջ:՝

¹² Արդ, խոսեցե՛ք և գործեցե՛ք որպես մարդիկ, որոնք դատվելու են ազատությա՛ն օրենքով, ¹³ որովհետև Աստված իր դատաստանի մեջ անողորմ է լինելու այն մարդու նկատմամբ, որ ողորմած չի եղել ուրիշների հանդեպ: Մինչդեռ ողորմած մարդու դեպքում Աստծու ողորմությունը հաղթանակելու է դատաստանի ժամանակ:

Առանց գործերի հավատը մեռած է

¹⁴ Եղբայրնե՛ր իմ, ի՞նչ օգուտ այն մարդուն, որ ասում է, թե հավատ ունի, երբ հավատն արտահայտող գործեր չունի: Մի՞ թե այդպիսի հավատը կարող է փրկել նրան: ¹⁵ Ենթադրենք, որ կիսամերկ և օրվա հացի կարոտ մի եղբայր կամ քույր դիմեց ձեզ: ¹⁶ Եթե ձեզնից մեկը նրանց ասի՝ «Գնացե՛ք, Աստված ձեզ հետ լինի, տաքացե՛ք և կշտացե՛ք», և նրանց մարմնի համար անհրաժեշտ զգեստը կամ ուտելիքը չտա, ի՞նչ օգուտ ունի: ¹⁷ Նույնպես էլ հավատն առանձին, առանց գործերի, մեռած է:՝

¹⁸ Թերևս մեկն առարկի՝ ասելով. «Մարդ կա, որ հավատ ունի, մարդ էլ կա, որ գործեր ունի»: Այդպիսի մեկին ես կպատասխանեմ. «Եթե կարող ես, ցո՛ւյց տուր ինձ քո հավատն առանց գործերի: Իսկ ես իմ գործերո՛վ կարող եմ քեզ ցույց տալ իմ հավատը»: ¹⁹ Դու հավատում ես, որ մե՛կ Աստված կա, չե՞՞. շատ լավ ես անում: Բայց դևերն էլ են նույն բանին հավատում և սարսափում: ²⁰ Ուրեմն հասկացի՛ր, անմի՛տ մարդ, որ առանց գործերի հավատն անօգուտ է:

²¹ Աբրահամը՝ մեր նախահայրը, իր գործերով չարդարացա՞վ, երբ իր որդուն՝

2.8 Ղև 19.18:

2.11 «Քանի որ ... շնություն անես». շատ ձեռ. ունեն «Քանի որ "Մի՛ շնանար" պատվիրանը տվողն է, որ նաև պատվիրեց, թե՛ "Մի՛ սպանիր": Դու եթե շնություն չանես, բայց սպանություն անես...»:

2.11 ա Ելք 20.14, Բ Օր 5.18: **բ** Ելք 20.13, Բ Օր 5.17:

2.17 «Մեռած է». մի շարք ձեռ. ունեն «օգուտ չունի»:

Իսահակին, զոհասեղան քարձրացրեց զոհ մատուցելու համար:՝²² Տեսնո՞ւմ ես, որ հավատը զուգակցեց նրա գործերին, և գործերով էլ նրա հավատը հասավ իր կատարելությանը:՝²³ Այսպես կատարվեց այն, ինչ Մենդոց գիրքն ասում է. թե՛ «Աբրահամը հավատաց Աստծուն, և այդ հավատի համար էլ Աստված արդար համարեց նրան», և Աբրահամը Աստծուն բարեկամ կոչվեց:՝²⁴ Տեսնո՞ւմ եք, որ մարդ իր գործերով է արդարանում և ոչ թե միայն հավատով:

²⁵Նույնը չէ՞ պոռնիկ Ռախաբի դեպքը. նա էլ իր գործերով արդարացավ, երբ իսրայելացի լրտեսներին հյուրընկալեց իր տանը և օգնեց նրանց, որ փախչեն այլ ճանապարհով:՝

²⁶Հետևաբար, ինչպես որ մարմինն է մեռած առանց հոգու, այնպես էլ հավատն է մեռած առանց գործերի:

3

Մանձել լեզուն

¹Եղբայրներ՝ իմ, ամենքդ էլ հետամուտ մի՛ եղեք ուրիշներին սրբագրելու՝ իմանալով, որ մենք՝ ուսուցանողներս, դատվելու ենք առավել խստությամբ,

²որովհետև բոլորս էլ հանցանքներ ունենք:

Ով որ իր խոսքերը կշռել գիտի, նա կատարյալ մարդ է՝ ինքն իրեն իշխելու կարող:՝³ Տե՛ս, թե ինչպես սանձ ենք դնում ձեր բերանը, որպեսզի ենթարկվեն մեզ, և դրանով կառավարում ենք ձիու բոլոր շարժումները:՝⁴ Կամ նայի՛ր նավերին. ինչքան էլ մեծ լինեն դրանք և ինչպիսի ուժեղ քամիներից էլ քշվեն, փոքրիկ մի դեկ դրանց ուղղում է դեպի այնտեղ, ուր նավավարն է ուզում տանել:՝⁵ Նույնպես և լեզուն. թեև մի փոքր անդամ է, բայց մեծամեծ բաներով է պարծենում: Գիտե՞ք, որ փոքր մի կայծ կարող է հրդեհել հսկա մի անտառ:՝⁶ Լեզուն էլ կրակ է, անիրավության մի աշխարհ: Թեև մարմնի պարզ մեկ անդամն է, բայց ապականում է ամբողջ մարդուն և գեհեների կրակով բորբոքված՝ կրակո՛ւմ է վառում մեր ամբողջ կյանքը:՝

⁷Բոլոր տեսակի գազանները, թռչունները, սողունները և ծովային կենդանիները նվաճված են մարդու կողմից և հնազանդվում են նրան:՝⁸ Բայց ոչ ոք չի կարող հնազանդեցնել մարդկային լեզուն, որ չար է, անգապելի և մահացու թույնով լեցուն:՝⁹ Նրանով ենք օրհնում մեր Տիրոջն ու Հայր Աստծուն և դարձյալ նրանով ենք անիծում մարդկանց, որոնք ստեղծվել են Աստծու նմանությամբ:՝¹⁰ Այսինքն՝ նույն բերանից դուրս են գալիս թե՛ օրհնությունը և թե՛ անեծքը:՝¹¹ Այս ճիշտ չէ սակայն, եղբայրներ՝ իմ: Մի թե՛ մի աղբյուր միևնույն ակից քաղցր և դառը ջուր կբխեցնի:՝¹² Կարելի՞ քան է, եղբայրներ՝ իմ, որ թզենին ձեր թափափուկ տա կամ որթատունկը՝ թուզ: Նմանապես

^{2.21} Ծն 22.1-14, Սր 44.19-21, Ա Մն 2.52:

^{2.23} ա Ծն 15.6: ք Բ Մն 20.7, Ես 41.8:

^{2.25} Հս 2.1-21:

^{3.2} Սր 5.9-15, 14.1, 28.13-26:

^{3.6} Սր 5.13, 28.22:

^{3.9} Ծն 1.26:

հնարավոր չէ, որ աղի աղբյուրից քաղցր ջուր բխի:

Երկրային և երկնային իմաստություն

¹³ Ձեր մեջ իմաստուն և խելացի մարդ կա՞. թող նա իր օրինակելի կյանքով և հեզությունն ու իմաստությունն արտահայտող գործերով ցոլյց տա այդ: ¹⁴ Իսկ եթե ձեր սրտերում դառն նախանձ և հակառակասիրություն կա, մի՛ պարծեցեք և ճշմարտության դեմ մի՛ մեղանչեք: ¹⁵ Այդպիսի իմաստությունը երկնքից չի տրված, հոգևոր չէ, այլ երկրավոր է և դիվական: ¹⁶ որովհետև ուր որ նախանձ և հակառակասիրություն կա, այնտեղ կա նաև անկարգություն և ամեն տեսակ չարիք: ¹⁷ Մինչդեռ երկնային իմաստություն ունեցող մարդը նախ մաքուր է լինում, ապա նաև խաղաղարար, ազնիվ, բարյացակամ, ողորմածությամբ և բարի գործերով արդյունավոր, անկողմնակալ և անկեղծ: ¹⁸ Իսկ ով իր շուրջը խաղաղություն է սերմանում, նա արդարություն է հնձում:

4

Աշխարհին բարեկամ՝ Աստծուն թշնամի

¹ Որտեղի՞ց են առաջանում ձեր հակամարտություններն ու կռիվները. արդյոք ձեր ցանկություններից չէ՞ն, որոնք կռիվ են մղում ձեր մարմնի մեջ: ² Ցանկանում եք շատ բաներ, բայց չեք կարող ունենալ, ուստի և սպանում եք: Նախանձում եք, բայց չեք կարող ձեռք բերել. և ահա կովում եք ու պայքարում: Ձեր ուզածը չեք ունենում, որովհետև չեք խնդրում Աստծուց: ³ կամ խնդրում եք, և Աստված չի տալիս, որովհետև վատ նպատակով եք խնդրում՝ ձեր հաճույքներին ծառայեցնելու համար:

⁴ Անհավատարի՛մ մարդիկ, չգիտե՞ք, որ աշխարհի հետ բարեկամություն անել՝ նշանակում է թշնամություն անել Աստծու դեմ. որովհետև ով ուզում է բարեկամ լինել աշխարհին, ինքն իրեն թշնամի է դարձնում Աստծուն: ⁵ Կարծում եք, թե Սուրբ գիրքն իզո՞ւր է ասում. «Աստված նախանձախնդրությամբ պահանջում է այն հոգին, որ դրել է մեր մեջ»,՝ ⁶ որի համար նա առավել լ մեծ մի շնորհ է տալիս մեզ, ինչպես ասում է Սուրբ գիրքը.-

«Տերն ամբարտավաններին հակառակ է,
մինչդեռ խոնարհներին շնորհ է տալիս»:

⁷ Ուրեմն՝ հնազանդվեցե՛ք Աստծուն և դիմադրե՛ք չարախոսին՝ Մատանային, և նա հեռու կփախչի ձեզնից: ⁸ Մոտեցե՛ք Աստծուն, և Աստված ի՛նքը կմոտենա ձեզ: Մեղավորնե՛ր, լվացե՛ք ձեր ձեռքերից չար գործերի կեղտը. իսկ դուք, երկմի՛տ մարդիկ, հստակեցրե՛ք ձեր մտքերը: ⁹ Տառապեցե՛ք, սգացե՛ք ու լացե՛ք. այո՛, ծիծաղելու տեղ՝ սգացե՛ք, ուրախանալու տեղ՝ տրտմեցե՛ք: ¹⁰ Խոնարհեցրե՛ք ձեզ Տիրոջ

^{3.13} Սբ 19.20-30:

^{4.5} «"Աստված նախանձախնդրությամբ պահանջում է այն հոգին, որ դրել է մեր մեջ"». ՀԿ-ում այսպիսի հմր չկա: Կարելի է նաև թարգմանել այսպես. «Կարծում եք, թե Սուրբ գիրքն իզո՞ւր է ասում, թե մեր մեջ "դրված հոգին հակված է նախանձի"» (հմմտ Առ 21.10):

^{4.6} Առ 3.34 [LXX]:

առաջ, և նա կբարձրացնի ձեզ:

Մի՛ դատեք ձեր եղբայրներին

¹¹ Եղբայրներ՛ր, մի՛ բամբասեք միմյանց: Ով բամբասում է իր եղբորը կամ դատում է նրան, նա բամբասում է Օրենքը կամ դատում է Օրենքը: Իսկ եթե Օրենքն էս դատում, նշանակում է, թե Օրենքը գործադրողը չէս, այլ նրա դատավորը: ¹² Միակ Օրենսդիրն ու Դատավորը, որ իշխանություն ունի փրկելու կամ կորստյան մատնելու, Աստված է: Դու ո՞վ էս, որ դատում էս քո ընկերոջը:

Վաղվա վրա հույս մի՛ դրեք

¹³ Լսեցե՛ք ինձ նաև դուք, որ ասում եք. «Այսօր կամ վաղը կգնանք այսինչ քաղաքը, մեկ տարի կմնանք այնտեղ, առևտուր կանենք և կշահենք»: ¹⁴ Մի՛ թե գիտեք, թե վաղն ի՛նչ էք լինելու: Ձեր կյանքը նման է մշուշի, որ մի պահ երևում է և ապա անհետանում: ¹⁵ Փոխանակ ասելու՝ «Եթե Տերը կամենա, կապրենք և կանենք այսինչ կամ այնինչ բանը», ¹⁶ հոխորտում եք ամբարտավան կերպով: Բայց այդպես հոխորտալը սխալ է: ¹⁷ Հետևաբար, ով որ գիտի ճիշտը և չի անում այն, մեղք է գործում:

5

Զգուշացում հարուստներին

¹ Դո՛ւք էլ լսեցեք ինձ, հարուստներ՛ր: Լացե՛ք ու դառնորեն ողբացե՛ք այն դժբախտությունների համար, որ գալու են ձեր գլխին, ² որովհետև ձեր հարստությունը փտություն է, ձեր հագուստները՝ ցեցերի կեր: ³ Ձեր արծաթն ու ոսկին ժանգոտ են, և նրանց ժանգը ձեր դեմ վկայություն կլինի ու կրակի պես կլափի ձեր մարմինները, քանի որ իր վախճանին մոտեցող այս աշխարհում դուք միայն ա՛յս գանձերը դիզեցիք: ⁴ Ահավասի՛կ, ձեր արտերում աշխատող բանվորների վարձը, որ ձեզ մոտ պահեցիք՝ զրկելով նրանց, բարձրաձայն աղաղակում է, և հնձվորների բողոքը հասավ Ամենակալ Տիրոջ ականջին: ⁵ Ձեր կյանքը՝ հաճույքներով և զվարճությամբ անցկացրիք երկրի վրա ու պարարտացաք՝ մորթվելու օրվան պատրաստվող անասունների նման: ⁶ Այո՛, իրավազրկեցիք և սպանեցիք արդարին, որ չընդդիմացավ ձեզ:

Համբերություն նեղությունների մեջ

⁷ Հետևաբար, եղբայրներ՛ր, համբերո՛ղ եղեք մինչև Տիրոջ գալուստը: Տեսե՛ք, թե մշակն

^{4.13-14} Առ 27.1:

^{4.13} Իմս 2.4, 5.9-13:

^{5.2-3} Մտ 6.19:

^{5.3} Սր 29.11-12:

^{5.4} Հուն. չունի «որ ձեզ մոտ պահեցիք»:

^{5.4} Բ Օր 24.14-15:

^{5.5} «Մորթվելու օրվան». սա դատաստանի օրվա ակնարկություն է (հմտտ Եր 12.3):

^{5.6} Իմս 2.10-20:

ինչպես է համբերությամբ սպասում, մինչև որ աշնան ու գարնան անձրևներն իջնեն, և հողը տա իր թանկագին բերքը: ⁸ Դո՛ւք էլ համբերեցեք և ամո՛ւր պահեցեք ձեր սրտերը, որովհետև մոտ է Տիրոջ գալուստը:

⁹ Մի՛ տրտնջացեք միմյանց դեմ, եղբայրնե՛ր, որպեսզի Աստու դատաստանին չենթարկվեք, որովհետև Դատավորն ահա գալիս է: ¹⁰ Նեղությունների մեջ համբերելու օրինա՛կ վերցրեք մարգարեներից, որոնք խոսեցին Տիրոջ անունով: ¹¹ Չե՞ որ մենք երանի ենք տալիս նրանց, որոնք համբերեցին, ինչպես մարգարեները: Անշուշտ, լսել էք Հորի համբերության մասին և գիտեք, թե Տերը վերջում ինչպե՛ս վարձատրեց նրան, որովհետև Տերը գթառաս է և ողորմած:

¹² Բայց մանավանդ, եղբայրնե՛ր իմ, մի՛ երդվեք բնավ ո՛չ երկնքի, ո՛չ երկրի և ո՛չ էլ ուրիշ որևէ բանի վրա: Պարգապես ձեր այո-ն թող լինի՝ այո, և ոչ-ը՝ ոչ, որպեսզի չլինի թե դատապարտության ենթարկվեք: *

Աղոթքի գորությունը

¹³ Ձեզնից մեկը նեղության մե՞ջ է. թող աղոթի: Ուրախ տրամադրության մե՞ջ է. գոհաբանական երգ թող երգի Աստծուն: ¹⁴ Մեկը հիվանդացա՞վ. թող կանչի եկեղեցու երեցներին, որպեսզի աղոթք անեն իր վրա և յուրով օծեն իրեն Տիրոջ անունով: ¹⁵ Եվ հավատով կատարված աղոթքը կբժշկի հիվանդին: Տերը նրան ոտքի կկանգնեցնի, և եթե նա որևէ մեղք է գործել, կների նրան:

¹⁶ Ուրեմն, խոստովանեցե՛ք ձեր մեղքերը միմյանց և աղո՛թք արեք միմյանց համար, որպեսզի բժշկվեք. որովհետև արդարի աղոթքն ազդեցիկ է և շատ է օգնում: ¹⁷ Եղիան մեզ նման կրքերի ենթակա մարդ էր, բայց երբ աղոթեց, որ անձրև չգա, երեքուկես տարի անձրև չտեղաց երկրի վրա: ¹⁸ Ապա դարձյալ աղոթեց, և երկինքը անձրև տեղաց, ու երկիրը տվեց իր բերքը:

¹⁹ Եղբայրնե՛ր իմ, երբ ձեզնից մեկը մոլորվի ճշմարտության ճանապարհից, և մեկ ուրիշին հաջողվի հետ բերել նրան, ²⁰ իմացե՛ք՝ ով մեղավորին հետ է բերում իր մոլար ճանապարհից, թե՛ նրա հոգին է փրկվում մահվանից և թե՛ թողություն է գտնում իր բազմաթիվ մեղքերից: *

1PE

Ա ՊԵՏՐՈՍ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ

^{5.9} «Մի՛ տրտնջացեք միմյանց դեմ». գրբ. ունի «Մի՛ տրտմեցրեք միմյանց»:

^{5.11} ա Հբ 1.21- 22, 2.10: ք Սղ 103.8:

^{5.12} «Չլինի թե դատապարտության ենթարկվեք». գրբ. «չլինի թե կեղծավորության մեջ ընկնեք»:

^{5.12} Ստ 5.34-37:

^{5.14} Սր 6.13:

^{5.16} Սր 4.26:

^{5.17} Գ Թգ 17.1, 18.1, Սր 48.2- 3:

^{5.18} Գ Թգ 18.42-45:

^{5.20} «Թե՛ նրա հոգին է փրկվում մահվանից և թե՛ ...». այլ թրգմ՝ «իր հոգին կփրկի մահվանից և ...»:

^{5.20} Առ 10.12, Տբ 12.9, Ա Պտ 4.8:

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Պետրոս առաքյալի գրած առաջին նամակն ուղղված է «Աստծու ընտրյալներին», այսինքն՝ քրիստոնյաներին, որոնք ցրված էին Փոքր Ասիայի հյուսիսային և արևելյան կողմերում: Այս շրջանների եկեղեցիները հիմնվել էին Պողոսի կամ նրա գործակիցների ջանքերով: Պետրոսն այս նամակը գրել է Հռոմից, որին խորհրդանշորեն կոչում է «Բաբելոն»:

Նամակի գլխավոր նպատակն է քաջալերել ընթերցողներին, որոնք իրենց քրիստոնեական հավատի համար գտնվում էին հալածանքների և նեղությունների մեջ: Հեղինակն այս մասին խոսելիս նրանց հիշեցնում է օրինակը Հիսուս Քրիստոսի, որի մահը, հարությունը և խոստացված գալուստը հույս պետք է ներշնչեն նրանց: Սրա լույսի տակ էլ ճշմարիտ քրիստոնյաները պետք է ընդունեն նեղությունները և դիմանան դրանց, որովհետև դա իրենց հավատի հարազատության երաշխիքն է: Եվ ովքեր դիմանան, պիտի վարձատրվեն, երբ Հիսուս Քրիստոսը կրկին հայտնվի:

Քաջալերական խոսքերի կողքին հեղինակը պահանջում է, որ ընթերցողներն իրենց հավատի մեջ միշտ արթուն և պատրաստ լինեն, ապրեն սուրբ կյանքով ու անկեղծ եղբայրությամբ և լինեն կենդանի տաճարներ՝ ամբողջով հաստատված Քրիստոսի ժայռի վրա:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-2):
- Հիշեցում Աստծու փրկագործության մասին (1.3-12):
- Մաքուր և սուրբ կյանքով ապրելու հորդորներ(1.13-2.10):
- Քրիստոնյայի պարտավորությունը նեղությունների ժամանակ (2.11-4.19):
- Քրիստոնեական հեզությունը և ծառայությունը (5.1 11):
- Վերջաբան (5.12-14):

1

Ուղերձ և ողջույն

¹ Ես՝ Պետրոսս, Հիսուս Քրիստոսի առաքյալս, գրում եմ ձեզ՝ Աստծու ընտրյալներիդ, որ պանդուխտների նման ապրում եք Պոնտոս, Գաղատիա, Կապադովկիա, Ասիա և Բյութանիա նահանգների տարածքում: ² Հայր Աստված ընտրեց ձեզ իր կանխագիտությամբ, որպեսզի Սուրբ Հոգով սրբված՝ հնազանդվեք Հիսուս Քրիստոսին և մաքրվեք նրա արյունով:

Շնորհ և խաղաղություն ձեզ առատորեն:

Գոհություն փրկության հույսի համար

³ Օրհնյալ է Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմությամբ վերստին ծնեց մեզ, որպեսզի մեռելներից Հիսուս Քրիստոսի հարությամբ ունենանք այն կենդանի հույսը, ⁴ թե ժառանգելու ենք անեղծ, անարատ և անթառամ կյանքը, որ

երկնքում պահված է ձեզ համար:՝ ⁵ Եվ Աստված իր գործությամբ պահում է ձեզ, որպեսզի ձեր հավատով հասնեք նրա պատրաստած փրկությանը, որ հայտնվելու է ժամանակի վախճանին: ⁶ Ուրախացե՛ք այդ փրկությամբ, նույնիսկ եթե այժմ հարկադրաբար փոքր-ինչ տրտմած եք ձեր կրած այլևայլ փորձությունների պատճառով: ⁷ Այդպիսով փորձված ձեր հավատը շա՛տ ավելի թանկագին է, քան կորստյան ենթակա ոսկին, որ կրակով է փորձվում. դրա համար էլ, երբ Հիսուս Քրիստոսը հայտնվի, կգովի ձեզ և կարժանացնի փառքի ու պատվի:՝ ⁸ Որովհետև դուք նրան չտեսաք, բայց սիրեցիք և առանց նրան տեսնելու հավատում եք՝ ուրախանալով այն անպատմելի ու փառավոր խնդությամբ, որ ձերն է լինելու,՝ ⁹ որպես ձեր հավատի արդյունք՝ դուք կստանաք ձեր հոգիների փրկությունը:՝

Մարգարեներին հայտնված փրկությունը՝ Քրիստոսով

¹⁰ Այս փրկությունն էր, որ փնտրեցին և փորձեցին հասկանալ մարգարեները, որոնք ձեզ տրվելիք շնորհի մասին մարգարեանալով՝ ¹¹ փորձում էին հասկանալ, թե ինչպիսի՛ ժամանակի և ինչպիսի՛ հանգամանքների մասին էր ծանուցում իրենց մեզ գործող Քրիստոսի Հոգին, որ կանխապես վկայում էր Քրիստոսի չարչարանքների և դրանց հաջորդելիք փառքի մասին: ¹² Աստված հայտնեց նրանց, որ իրենց փոխանցված այդ պատգամներն իրենց ժամանակների համար չէին, այլ մե՛զ համար ասացին այն, ինչ որ այժմ Ավետարանը քարոզող մարդիկ ձեզ փոխանցեցին երկնքից ուղարկված Սուրբ Հոգու մղումով: Պատգամներ, որոնց կատարումը հրեշտակներն անգամ կցանկանային գեթ մասամբ տեսնել:՝

Մրբությամբ ապրելու կոչ

¹³ Ուստի մտքով պատրաստ և արթո՛ւն եղեք՝ ձեր ամբողջ հույսը կապած փրկության պարզին, որ տրվելու է ձեզ, երբ հայտնվի Հիսուս Քրիստոսը: ¹⁴ Աստծուն հնազանդ զավակնե՛ր եղեք և մի՛ առաջնորդվեք անցյալ ցանկություններով, որոնցով ապրում էիք, երբ դեռ չէիք ճանաչում Քրիստոսին. ¹⁵ այլ ինչպես որ ձեզ կանչողը՝ Աստված, սուրբ է, դուք էլ սուրբ եղեք ձեր ամբողջ կյանքով, ¹⁶ քանի որ գրված է. «Սո՛ւրբ եղեք, որովհետև սուրբ եմ ես»:՝

¹⁷ Եթե «Հայր» եք կոչում նրան, որ յուրաքանչյուրին անաչառ կերպով դատում է ըստ իր գործերի, ապա աստվածավախությա՛մբ ապրեցեք ձեր պանդխտության տարիները՝ ¹⁸ իմանալով, որ կորստյան ենթակա արժաթով կամ ոսկով չէր, որ փրկվեցիք ձեր հայրերից ժառանգած ձեր ունայն կենցաղից, ¹⁹ այլ անբիժ և անարատ Գառան՝ Քրիստոսի թանկագին արյամբ: ²⁰ Նա ընտրված էր աշխարհի ստեղծումից իսկ առաջ, բայց վախճանին երևաց մեզ համար: ²¹ Նրանով է, որ հավատում եք

^{1.4} Բ Եզր 8.52:

^{1.7} Բ Եզր 16.73:

^{1.8} «Չտեսաք». մի շարք ձեռ. ունեն «չճանաչեցիք»: «Միրեցիք». հուն. ունի «սիրում եք»:

^{1.9} «Հոգիների». այլ թրգմ՝ «ձեր անձերի»:

^{1.12} Հուն. չունի «գեթ մասամբ»:

^{1.16} Ղև 11.44-45, 19.2:

Աստծուն, որը մեռելներից հարություն տվեց և փառավորեց նրան, որպեսզի ձեր հավատն ու հույսը կապեք Աստծո՛ւ հետ: ²² Արդ, դուք, որ հնազանդվելով ճշմարտությանը՝ սրբեցիք ձեր անձերը, որպեսզի ապրեք անկեղծ եղբայրասիրությամբ, սիրեցե՛ք միմյանց սրտանց, մաքուր սրտով: ²³ որովհետև Աստծու կենդանի և մշտնջենական խոսքով դուք վերստին ծնվեցիք, իբրև զավակները ոչ թե մահկանացու մի ծնողի, այլ անմահի: ²⁴ Որովհետև

«Բոլոր մարդիկ նման են խոտի,

նրանց ամբողջ փառքն էլ նման է վայրի ծաղկի:

Խոտը չորանում է, ծաղիկն էլ թափվում,՝

²⁵ բայց Տիրոջ խոսքը մնում է հավիտյան»:

Այդ խոսքը այն Ավետարանն է, որ քարոզվեց ձեզ:

2

Կենդանի վեմը և սուրբ ազգը

¹ Հետևաբար, դե՛ն նետեք ամեն տեսակ չար մտածում ու նենգություն, կեղծավորություն ու նախանձ և ամեն տեսակ չարախոսություն: ² Որպես հավատի նորածին մանուկներ՝ փափագո՛ղ եղեք Աստծու խոսքի անխարդախ կաթին, որպեսզի նրանով աճեք ու հասնեք փրկության: ³ «Եթե մի անգամ Տիրոջ խոսքի համն առնեք, կտեսնեք, որ քաղցր է նա»: ⁴ Մոտեցե՛ք նրան՝ Քրիստոսին, որովհետև նա՛ է այն կենդանի վեմը, որը թեև մարդկանցից մերժված, բայց Աստծուց է ընտրված և պատվական վեմն է: ⁵ Այսպիսով՝ դուք էլ, իբրև կենդանի քարեր, Քրիստոսի վեմի վրա կառուցվում եք որպես հոգևոր տաճար. յուրաքանչյուրդ դառնում եք անարատ քահանաներ և Հիսուս Քրիստոսի միջոցով Աստծուն մատուցում ընդունելի հոգևոր պատարագ. ⁶ որովհետև մարգարեության մեջ գրված է.

«Ահա ես Սիոնի մեջ դնում եմ ընտրված մի վեմ,

թանկագին մի անկյունաքար.

ով հավատում է նրան, հուսախաբ չի լինի»:

⁷ Քանի որ հավատացիք Քրիստոսին, նա ձեզ համար թանկագին վեմը եղավ, մինչդեռ չհավատացողների համար նա

«Այն քարն է,

որ թեև շինարարները մերժեցին գործածել,

բայց ի՛նքը եղավ անկյունաքարը»:

⁸ կամ՝ «Այն քարն է, որ գլորման և գայթակղության առիթ» պիտի լինի նրանց համար, ովքեր անհամոզիչ գտնելով Աստծու խոսքը՝ գայթակղվում են, ինչպես որ Աստված

^{1.22} «Սրբեցիք ձեր անձերը». մի շարք ձեռ. ավելացնում են «[Սուրբ] Հոգու միջոցով»:

^{1.24-25} Ես 40.6-8 [LXX]:

^{2.3} Սղ 34.8:

^{2.6} Ես 28.16 [LXX]:

^{2.7} Սղ 118.22:

նախատեսել էր:

⁹ Գալով ձեզ՝ դուք ընտրյալ մի ցեղ եք, թագավորելու կոչված քահանաներ, մի սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդը, և ձեր պարտականությունն է քարոզել նրա՝ գործությունը, ով խավարից ձեզ կանչեց իր սքանչելի լույսին: ¹⁰ Որովհետև դուք այժմ Աստծու ժողովուրդն եք, մինչդեռ նախապես նրանը չէիք. այժմ վայելում եք նրա ողորմությունը, մինչդեռ նախապես զրկված էիք դրանից:

Հեթանոսների մեջ ապրել որպես Աստծու ծառաներ

¹¹ Միբելիներ՝ ք, աղաչում եմ ձեզ, իբրև աշխարհում պանդուխտներ և օտարականներ՝ հեռո՛ւ մնացեք մարմնական ցանկություններից, որոնք հոգու դեմ են պատերազմում:

¹² Չանացեք պարկեշտ կենցաղ ունենալ հեթանոսների մեջ, որպեսզի նրանք, ովքեր ձեզ բամբասում են իբրև չարագործների, տեսնելով ձեր բարի գործերը՝ փառավորեն Աստծուն նրա գալստյան օրը:

Քրիստոնյայի պարտականություններն իշխանությունների հանդեպ

¹³ Ի սեր Տիրոջ հնազա՛նդ եղեք բոլոր մարդկային իշխանություններին. թե՛ թագավորին, որ գերագույնն է, ¹⁴ թե՛ կառավարիչներին, որոնք նշանակված են նրա կողմից՝ չարագործներին պատժելու և բարեգործներին գովելու համար. ¹⁵ որովհետև Աստծու կամքն է, որ դուք բարի գործերով պապանձեցնեք անխելք մարդկանց տգետ լեզուները:

¹⁶ Եղե՛ք ազատ մարդկանց նման, բայց Աստծու ծառաներ: Ձեր ազատությունը թող չարիք գործելու պատրվակ չդառնա: ¹⁷ Հարգեցե՛ք բոլորին, սիրեցե՛ք ձեր հավատակից եղբայրներին, վախեցե՛ք Աստծուց, պատվեցե՛ք թագավորին:

Քրիստոսի չարչարանքները մեզ օրինակ

¹⁸ Ծառանե՛ք, ամենայն երկյուղածությամբ հնազա՛նդ եղեք ձեր տերերին. ոչ միայն նրանց, որոնք ազնիվ են ու բարի, այլ նաև նրանց, որոնք անգութ են. ¹⁹ որովհետև Աստծուց տրված շնորհ է, երբ մարդ, իմանալով Աստծու կամքը, համբերում է հանիրավի կրած իր նեղություններին: ²⁰ Արդարև, ի՞նչ արժանիք կունենաք, եթե ձեր գործած հանցանքների համար տանջվեք և համբերեք. մինչդեռ երբ բարիք գործելով չարչարվեք և համբերեք, շնորհ կգտնեք Աստծու մոտ:

2.8 Ես 8.14-15:

2.9 «*Թագավորելու կոչված քահանաներ*». ՀԿ ցույց է տալիս, որ Աստված ուզում էր իր ժողովրդին դարձնել քահանաների մի թագավորություն (հմմտ Ելք 19.6), որին արժանի չեղավ հին Իսրայելը, ուստի և Աստված այդպիսին լինելու կոչեց մի նոր ժողովուրդ՝ եկեղեցին: Այդ կոչումն իրագործվելու է Քրիստոսի երկրորդ գալստյամբ (տե՛ս Հտ 1.6 և 20.6): «*Եվ ձեր պարտականությունն է քարոզել նրա՝ գործությունը, ով...*». գրք. ունի «*այնպես որ ձեր առաքելությունները պետք է ընծայեք նրան, ով...*»:

2.9 ա Ելք 19.5-6, Ես 43.20 [LXX]: բ Ելք 19.5, Բ Օր 4.20, 7.6, 14.2, Տո 2.14: գ Ես 43.21: դ Ես 9.2:

2.10 Օս 2.23:

2.17 «*Պատվեցե՛ք թագավորին*». խոսքը վերաբերում է Հռոմի կայսրին: Գրք. ունի «*պատվեցե՛ք թագավորներին*»:

2.20 «*Շնորհ կգտնեք Աստծու մոտ*». գրք. ունի «*դա Աստծուց [տրված] շնորհ է*»:

²¹ Դուք կոչված եք հենց այդ համբերությունը ցուցաբերելու, որովհետև Քրիստոսն էլ ձեզ համար չարչարվեց՝ օրինակ տալով ձեզ, որպեսզի ընթանաք իր հետքերով։

²² «Նա ոչ մի մեղք չգործեց, և նրա բերանից ոչ մի նենգություն չլսվեց»։

²³ Նախատվեց, բայց փոխարենը չնախատեց. չարչարվեց, բայց փոխարենը չսպառնաց, այլ իրեն հանձնեց արդար Դատավորին։

²⁴ «Մեր մեղքերն ի՛նքը կրեց» իր մարմնով՝ խաչի վրա, որպեսզի մեղքի տիրապետությունից ազատված՝ արդարության համար ապրենք մենք։ «Նրա վերքերով էր, որ բժշկվեցիք»։

²⁵ Արդարև, «մոլորված ոչխարների պես» էիք, բայց այժմ վերստին դարձաք ձեր հովվին և հոգիների Տեսուչին։

3

Հորդոր կանանց և տղամարդկանց

¹ Դուք էլ, կանա՛յք, հնազա՛նդ եղեք ձեր ամուսիններին, որպեսզի, եթե նույնիսկ ձեր ամուսիններից ոմանք Աստծու խոսքին հավատացողներ չեն, հավատացող դառնան առանց խոսքի՝ ² պարզապես նկատի ունենալով ձեր ընթացքը, պարկեշտ և երկյուղած կենցաղը։ ³ Ձեր զարդարանքը թող արտաքին չլինի. ո՛չ մազերի հարդարանքը, ո՛չ ոսկեղենը և ո՛չ էլ պճնագեղ հագուստները, ⁴ այլ սրտի ներսում ծածկված, հեզ և խաղաղ մի հոգու անկորնչելի գեղեցկությունը, և ա՛յդ է թանկագինը Աստծու համար։ ⁵ Որովհետև անցյալում իրենց այդպես էին զարդարում Աստծուն հուսացող հավատացյալ կանայք՝ հնազանդվելով իրենց ամուսիններին, ⁶ ինչպես Մատան, որ հնազանդվում էր Աբրահամին՝ «տեր» կոչելով նրան։ Դուք Մատայի դուստրերը եղած կլինեք, եթե բարիք անեք ուրիշներին և որևէ բանից չվախենաք ու չխոռովվեք։

⁷ Իսկ դուք, տղամարդի՛կ, իմաստության մբ ապրեք ձեր կանանց հետ՝ պատվելով

^{2.21} «Չարչարվեց». մի շարք ձեռ. ունեն «մեռավ»։

^{2.22} Ես 53.9։

^{2.23} «Այլ իրեն հանձնեց արդար Դատավորին». գրբ. ունի «այլ արդար լինելով՝ իրեն հանձնում էր Դատավորին»։

^{2.23} Ես 53.7։

^{2.24-25} Ես 53.5-6 [LXX]։

^{3.1} Եփ 5.22, Կղ 3.18։

^{3.3} Ա Տմ 2.9։

^{3.5} «Հավատացյալ». բոց՝ «սուրբ», գրբ. չունի։

^{3.6} «Դուք Մատայի դուստրերը... ու չխոռովվեք». գրբ. ունի «դուք նրանց (=Աբրահամի ու Մատայի) զավակները եղեք, [որովհետև նրանք] բարեգործ էին և ոչ մի բանից չէին վախենում ու չէին խոռովվում»։

^{3.6} Ծն 18.12։

նրանց իրենց տկար բնության համար, քանի որ նրանք ևս մեզ հետ ժառանգելու են կյանքի պարգևը, որը Աստված է տալու: Այդպիսով որևէ բան արգելք չի լինի ձեր աղոթքներին:՝

Չարչարվել արդարության համար

⁸ Եվ վերջապես, բոլորդ էլ համախոհ եղեք, ուրախակից և ցավակից միմյանց, եղբայրասեր, բարեգութ, խոնարհամիտ: ⁹ Չարի փոխարեն չար մի՛ հատուցեք, ոչ էլ նախատինքի փոխարեն՝ նախատինք. ընդհակառակը, օրհնեցե՛ք. Աստված հենց դրա համար կանչեց ձեզ, որպեսզի դուք էլ օրհնություն ժառանգեք. ¹⁰ որովհետև Սուրբ գիրքն ասում է.

«Ով ուզում է կյանքը սիրել
և բարի օրեր տեսնել,
թող պահի իր լեզուն և չար բաներ չխոսի,
թող փակի իր շուրթերը և նենգություն չխորհի,՝

¹¹ թող հեռանա չարից և բարիք գործի,
թող խաղաղություն կամենա և հետևի նրան,

¹² որովհետև Տիրոջ աչքերը
հսկում են արդարների վրա,
և նրա ականջները պատրաստ են
նրանց աղոթքները լսելու:

Բայց Տերը հակառակ է չարագործներին»:

¹³ Ո՛վ չարիք կհասցնի ձեզ, եթե դուք նախանձախնդիր լինեք բարին գործելու: ¹⁴ Բայց եթե նույնիսկ արդարության համար չարչարվեք, երանելի եք: Հիշեցե՛ք մարգարեի խոսքը. «Նրանց ահից մի՛ վախեցեք և մի՛ խռովվեք,՝՝ ¹⁵ այլ Տիրոջը՝ նույն ինքը Քրիստոսին, փառավորեցե՛ք»՝ ձեր սրտերում և միշտ պատրա՛ստ եղեք հեղությամբ ու երկյուղածությամբ պատասխան տալու բոլոր նրանց, ովքեր բացատրություն են ուզում ձեր ունեցած հույսի մասին: ¹⁶ Թող ձեր խղճմտանքը մաքուր լինի, որպեսզի ամոթով մնան նրանք, որ չարախոսում են ձեր մասին՝ բամբասելով քրիստոնեական ձեր բարի կենցաղը: ¹⁷ Որովհետև ավելի լավ է չարչարվել բարիք գործելով, եթե այդ է Աստծու կամքը, քան թե չարիք գործելով:

Քրիստոսի էջքը դժոխք և նրա հաղթանակը

¹⁸ Ինքը՝ Քրիստոսն էլ, մեկ անգամ չարչարվեց մեր մեղքերի համար, արդարը՝ մեղավորներիս համար, որպեսզի մեզ մոտեցնի Աստծուն: Նա թեև մեռավ մարմնով,

^{3.7} Եփ 5.25, Կղ 3.19:

^{3.10-12} Սղ 34.12-16 [LXX]:

^{3.14} Մտ 5.10:

^{3.14-15} Ես 8.12-13:

^{3.15} «Նույն ինքը Քրիստոսին». մի շարք ձեռ. ունեն «նույն ինքը Աստծուն»:

^{3.16} «Որ չարախոսում են ձեր մասին». շատ ձեռ. ունեն «որ բամբասում են ձեզ, իբրև չարագործի»:

բայց կենդանի մնաց հոգով: ¹⁹ Եվ հոգով էլ գնաց քարոզեց բանտարկված հոգիներին, ²⁰ որոնք մի ժամանակ մերժել էին հնազանդվել Աստծուն, երբ նա համբերում էր ներողամտությամբ: Նոյի օրն եմ ակնարկում, երբ նա տապանն էր շինում, որով շատ քչերը, միայն ութ հոգի ազատվեցին ջրից: ²¹ Դրա ճշգրիտ պատկերն է այժմ մկրտությունը, որ փրկում է ձեզ ոչ թե մարմնական աղտը սրբելով, այլ մարդուն մաքուր խղճմտանքով Աստծուն ընծայելով, հարությամբ Հիսուս Քրիստոսի, ²² որ երկինք գնալով՝ նստեց Աստծու աջ կողմում՝ իր իշխանությանը հնազանդեցնելով հրեշտակներին և ոգեղեն աշխարհի իշխանություններին ու զորություններին:՝

4

Ապրել Աստծու կամքի համաձայն

¹ Արդ, քանի որ Քրիստոսը մարմնով չարչարվեց մեզ համար, դո՛ւք էլ զինվեցեք նույն մտածումով, որովհետև մարմնով չարչարվողը դադարում է մեղանշելուց ² և իր կյանքի մնացած ժամանակն այլևս չի ապրում մարդկային ցանկություններով, այլ Աստծու կամքի համաձայն: ³ Բավական է ինչքան անցյալում ապրեցիք հեթանոսների կամեցած ձևով՝ անբարոյությամբ, հեշտասիրությամբ, զինեմուլությամբ, անառակությամբ, հարբեցողությամբ և կռապաշտական անօրեն սովորություններով: ⁴ Հեթանոսները տարօրինակ են համարում, որ դուք իրենց նման չեք հետևում նույն սանձարձակ զեխություններին, և հայհոյում են ձեզ: ⁵ Բայց այդ բոլորի համար նրանք պատասխան պիտի տան Աստծուն, որ պատրաստ է դատելու ողջերին և մեռածներին: ⁶ Ահա թե ինչու Քրիստոսը գնաց և Ավետարանը քարոզեց նաև մեռելներին, որպեսզի նրանք բոլոր մարդկանց նման, իբրև մարմին մահվան դատապարտվելով հանդերձ, իբրև հոգի ապրեն, ինչպես ապրում է Աստված:

Աստծու շնորհների բարի տնտեսներ

⁷ Մոտեցել է ամեն ինչի վախճանը. հետևաբար, զգաստ և արթո՛ւն եղեք աղոթքի նվիրվելու համար: ⁸ Ամեն բանից առաջ ջերմ սե՛ր ունեցեք միմյանց հանդեպ, որովհետև «ները պատճառ է լինում, որ ձեր բազում մեղքերը ներվեն»: ⁹ Հյուրասիրությո՛ւն ցույց տվեք միմյանց՝ առանց տրտնջալու: ¹⁰ Ձեզնից յուրաքանչյուրը, որպես Աստծու բազմատեսակ պարգևների իսկական տնտես, թող իր ստացած շնորհը մատակարարի ուրիշներին: ¹¹ Խոսելո՞ւ շնորհ ունի. թող մատակարարի Աստծու պատգամները: Ծառայելո՞ւ շնորհ ունի. թող ծառայի, ինչքան Աստված կարողություն է տալիս, որպեսզի ամեն ինչում Աստված փառավորվի Հիսուս Քրիստոսի միջոցով: Նրա՛նն են փառքը և զորությունը հավիտյանս

^{3.18} «Չարչարվեց». մի շարք ձեռ. ունեն «մեռավ»:

^{3.20} «Ջրից». հուն. ունի «ջրով», այսինքն՝ «ջրհեղեղով»:

^{3.20} Ծն 6.1-7.24:

^{3.22} Տե՛ս Կղ 2.15 և ծնթ:

^{4.2} «Իր կյանքի». հուն. ունի «երկրավոր (=մարմնավոր) կյանքի»:

^{4.8} Առ 10.12, Տբ 12.9:

հավիտենից: Ամեն:

Երանի Քրիստոսի համար չարչարվողներին

¹² Միրելինե՛ր, տարօրինակ մի՛ համարեք որևէ փորձություն, որ կրակի նման այրում է ձեզ: Անբնական մի՛ համարեք այն, ¹³ այլ ընդունեցե՛ք որպես մասնակցություն Քրիստոսի չարչարանքներին և ուրախացե՛ք, որպեսզի երբ Քրիստոսը հայտնվի իր փառքով, նույնպես ուրախանաք ցնծությամբ: ¹⁴ Եթե նախատվեք էլ Քրիստոսի անվան համար, երանելի եք, որովհետև նշանակում է, թե Աստծու փառավորող Հոգին հանգչում է ձեզ վրա: ¹⁵ Իմ խոսքը նրանց մասին չէ, ովքեր չարչարվում են իբրև մարդասպան կամ գող, իբրև չարագործ կամ խառնակիչ: ¹⁶ Բայց ով որ չարչարվում է քրիստոնյա լինելու պատճառով, թող չամաչի, այլ փառավորի Աստծուն իր այդ անվամբ: ¹⁷ որովհետև արդեն ժամանակն է, որ դատաստանն սկսվի, և սկսվի Աստծու տնից: Իսկ եթե առաջինը մենք ենք դատվելու, ապա ի՞նչ կլինի վախճանը նրանց, ովքեր չեն հնազանդվում Աստծու Ավետարանին: ¹⁸ «Եթե արդարը հազիվ է փրկվելու, ապա անհավատն ու մեղավորը ի՞նչ են լինելու»: ¹⁹ Ուստի նրանք, որ չարչարվում են Աստծու կամքի համաձայն, թող շարունակեն բարեգործություն անել և իրենց հոգիները հանձնեն Ստեղծողին, որ հավատարիմ է իր խոստումներին:

5

Հանձնարարություն եկեղեցու երեցներին

¹ Երեցնե՛ր, որպես մի երեց, որ ձեզ նման վկա եմ եղել Քրիստոսի չարչարանքներին և ձեզ հետ էլ մասնակից կլինեմ գալիք փառքին, որ հայտնվելու է, աղաչում եմ: ² Ձեզ վստահված Աստծու հոտն արածեցրե՛ք ոչ թե իբրև պարտադրանք կատարելով վերակացության ձեր պաշտոնը, այլ կամավոր կերպով, ինչպես Աստված է ուզում. ոչ թե շահասիրությամբ, այլ հոժարությամբ: ³ Ոչ թե ձեր անձերը պարտադրելով ձեզ վստահված մարդկանց, այլ օրինակ լինելով ձեր հոտին, ⁴ որպեսզի երբ Հովվապետը հայտնվի, ընդունեք անթառամ փառքի պսակը:

Հորդոր խոնարհության և արթնության

⁵ Նույնպես և դուք, երիտասարդնե՛ր, հնազա՛նդ եղեք ծերերին: Բոլորդ էլ խոնարհությա՛մբ ծառայեցեք միմյանց, որովհետև, ինչպես Սուրբ գիրքն է ասում.-

^{4.11} Հավանաբար խոսքն աղքատներին ընծայված հատուկ ծառայության կամ օժանդակության մասին է (հմմտ Գրծ 6.2-4, Հո 12.7):

^{4.14} «Փառավորող». մի շարք ձեռ. ավելացնում են «և գորացնող» [բոց՝ «փառքի և գորության»]. գրբ. ունի «նշանակում է, թե [նրա] փառավոր ու գորավոր անունը և Աստծու Հոգին հանգչում են ձեր վրա»: Ուրիշ մի շարք ձեռ. «հանգչում է» բառից հետո ավելացնում են «թեպետև նրանցից անարգվում է, բայց ձեզնով փառավորվում»:

^{4.18} Առ 11.31 [LXX]:

^{5.1} «Երեցներ». հուն. ունի «ձեր մեջ եղող երեցներին»:

^{5.2} Մի շարք ձեռ. չունեն «ինչպես Աստված է ուզում»:

^{5.2} Հհ 21.15-17:

«Աստված հակառակ է ամբարտավաններին,
մինչ խոնարհներին շնորհ է տալիս»:

⁶ Հետևաբար, խոնարհվեցե՛ք Աստծու հոգր ձեռքի տակ, որպեսզի երբ հարմար ժամանակը գա, նա ձեզ բարձրացնի: ⁷ Ձեր հոգսերը Աստծո՛ւն թողեք, որովհետև նա հոգում է ձեր մասին:

⁸ Արթուն և պատրա՛ստ եղեք, որովհետև ձեր թշնամին՝ Մատանան, առյուծի նման մոնչալով շրջում և փնտրում է մեկին, որ կուլ տա: ⁹ Հաստատուն հավատով կանգնեցե՛ք նրա դեմ՝ իմանալով, որ աշխարհում ձեր բոլոր եղբայրներն էլ նույն չարչարանքներով են անցնում: ¹⁰ Եվ ամեն շնորհ պարգևող Աստվածը, որ Քրիստոս Հիսուսի միջոցով իր հավիտենական փառքին կանչեց ձեզ՝ նկատի ունենալով, որ ինչ-որ չափով մասնակից եղաք Հիսուսի չարչարանքներին, կկազդուրի, կգորացնի և ամուր հիմքերի վրա կհաստատի ձեզ: ¹¹ Հավիտյան նրա՛նն են իշխանությունն ու փառքը: Ամեն:

Եզրակացություն և վերջին հորդորներ

¹² Այս հակիրճ նամակը գրեցի ձեզ Միդվանոսի ձեռքով, որն ըստ իս՝ մեր հավատարիմ եղբայրներից է, որպեսզի քաջալերեմ ձեզ ու վստահեցնեմ, որ Քրիստոսին չարչարակից լինելը Աստծուց տրված իսկական մի շնորհ է, որը դուք վայելում եք ապահովաբար: ¹³ Այստեղ՝ Բաբելոնում գտնվող եկեղեցին, որ ընտրվել է ձեզ հետ, ողջունում է ձեզ: Նույնպես ողջույններ Մարկոսից՝ իմ որդուց: ¹⁴ Ողջունե՛ք միմյանց սիրո համբույրով: Խաղաղություն ձեզ բոլորիդ, որ միացած եք Քրիստոս Հիսուսին: Ամեն:

ՉՔԵ

Բ ՊԵՏՐՈՍ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Պետրոս առաքյալի գրած երկրորդ նամակն ուղղված է առաջին դարի քրիստոնյաների մի լայն շրջանակի: Հեղինակի գլխավոր նպատակն է պայքարել սուս ուսուցանողների տարած աշխատանքի և նրանց ուսուցումներից բխած անբարոյությունների դեմ: Մոլորեցնող ուսուցումներից և անպարկեշտ կենցաղից

^{5.5} Առ 3.34 [LXX]:

^{5.6} Մտ 23.12, Ղկ 14.11, 18.14:

^{5.7} Սր 2.1-18:

^{5.12} Գրծ 15.22, 40:

^{5.13} «Բաբելոն». խորհրդանշական այս անունով անկասկած հասկացվում է Հռոմեական կայսրության մայրաքաղաք Հռոմը, որ իր խառնակ բնակչությամբ և մանավանդ բարոյականով նմանվում է Բաբելոնին (հմտտ Հտ 17.5): «Եկեղեցին, որ ընտրվել է ձեզ հետ». հուն. և մի շարք հայ. ձեռ. պարզապես ունեն «ձեր ընտրելակիցը»: «Իմ որդուց» խոսքը Հովհաննես Մարկոսի մասին է (տե՛ս Գրծ 12.12, 25: Կղ 4.10), որ որդի է հոգևոր իմաստով:

^{5.13} Գրծ 12.12, 25, 13.13, 15.37-39, Կղ 4.10, Փմ 24:

^{5.14} «Միրո համբույրով». գրբ. ունի «սուրբ համբույրով»:

հեռու պահելու համար առաքյալն «աստվածապաշտ կյանքի» կոչված քրիստոնյաներին կոչ է ուղղում, որ նրանք հավատարիմ մնան Աստծու և Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց ունեցած ճշմարիտ ճանաչումին. ճանաչում, որ իրենց փոխանցվել էր այն մարդկանց կողմից, որոնք անձամբ տեսել էին Հիսուսին և լսել նրա խոսքերը: Ապա առաքյալն զգուշացնում է սխալ ուսուցումներ տարածողներից, որոնք սպրդել էին Քրիստոսի եկեղեցուց ներս՝ բուռն կերպով դատապարտելով նրանց հայհոյություններն ու անբարո կենցաղը: Նա մասնավորապես պատասխանում է սուտ վարդապետների այն հեզնական հավաստումին, թե Քրիստոսը կրկին չի գալու: Առաքյալն ասում է, որ Քրիստոսի վերադարձի ուշացումը միտումնավոր հապաղում է, արդյունք՝ Աստծու համբերատար գթության, որովհետև Աստված «չի ուզում, որ որևէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ բոլորն էլ ապաշխարելու առիթ ունենան» (3.9):

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-2):
- Քրիստոնեական հրավեր (1.3-21):
- Սխալ ուսուցումներ (2.1-22):
- Քրիստոսի երկրորդ գալուստը (3.1-18):

1

Ողջուն

¹ Ես՝ Սիմոն Պետրոսս, Հիսուս Քրիստոսի ծառաս և առաքյալս, գրում եմ ձեզ, որ մեր Աստծու և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի արդար տնօրինությամբ արժանի եղաք մեզ հետ բաժանելու հավատը: ² Թող ձեր վայելած շնորհն ու խաղաղությունը առատանան Աստծու և մեր Տիրոջ՝ Հիսուսի մասին ձեր ունեցած գիտությամբ:

Քրիստոնյայի կոչումը

³ Քրիստոսն իր աստվածային գործությամբ մեզ պարզեց այն ամենը, ինչ անհրաժեշտ է աստվածապաշտ կյանքի համար՝ մեզ ճանաչեցնելով նրան, ով իր փառքով ու գործությամբ մեզ դեպի իրեն կանչեց: ⁴ Նա մեզ տվեց թանկագին և մեծամեծ խոստումներ, որպեսզի դրանցով հաղորդակից լինենք աստվածային բնությանը՝ ձերբազատվելով աշխարհում տիրող կորստաբեր ցանկություններից: ⁵ Դրա համար էլ ամեն ջանք գործադրեք, որ ձեր հավատով ձեռք բերեք առաքինություն, առաքինությամբ՝ գիտություն, ⁶ գիտությամբ՝ ժուժկալություն, ժուժկալությամբ՝ համբերություն, համբերությամբ՝ աստվածապաշտություն, ⁷ աստվածապաշտությամբ՝ եղբայրասիրություն, եղբայրասիրությամբ էլ՝ սեր: ⁸ Եթե այս առաքինություններն ունենաք, և դրանք առատանան ձեր մեջ, վստահ եղեք, որ կլցվեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի գիտությամբ և անգործ ու անպտուղ չեք մնա: ⁹ Իսկ

^{1.3} «Ով իր փառքով ու գործությամբ մեզ դեպի իրեն կանչեց». այլ թրգմ՝ «ով կանչեց մեզ դեպի իր փառքն ու գործությունը»:

նա, ով չունի այս առաքինությունները, մտքով կույր է ու կարճատես, որովհետև մոռացության է տվել իր անցյալի մեղքերից սրբված լինելը:

¹⁰ Հետևաբար, եղբայրներ՝ ը, ջանացե՛ք առավել ևս կառչել այն կոչումին, որին հրավիրեց ձեզ Աստված՝ ընտրելով ձեզ: Եթե այդպես վարվեք, երբեք մեղքի մեջ չեք ընկնի՛, ¹¹ և այդպիսով ձեզ լայնորեն իրավասություն կտրվի մտնելու մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հավիտենական արքայությունը:

¹² Ահա թե ինչու ձեզ միշտ հիշեցնելու եմ այս բաները, թեև դուք գիտեք դրանք և հաստատ եք մնում ձեր ստացած ճշմարտության վրա: ¹³ Եվ կարծում եմ, որ ճիշտ եմ անում՝ ձեզ հիշեցնելով այս բաները, քանի դեռ այս աշխարհում եմ, ¹⁴ որովհետև գիտեմ, որ շուտով հեռանալու եմ այս աշխարհից, ինչպես մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, հայտնեց ինձ: ¹⁵ Ուստի ջանում եմ հորդորել ձեզ, որ այս աշխարհից իմ մեկնելուց հետո էլ միշտ հիշեք այս բաները:՝

Քրիստոսի փառքի վկայությունը

¹⁶ Երբ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գործության և նրա երկրորդ գալստյան մասին խոսեցինք անձամբ, շինծու մի առասպել չէր, որ ներկայացրինք ձեզ, քանի որ ականատես եղանք նրա մեծությանը, ¹⁷ երբ նա փառք ու պատիվ ստացավ Հայր Աստծուց, որն իր մեծավայելույչ և փառավոր ձայնով վկայեց նրա մասին՝ ասելով. «Մա է իմ սիրելի որդին, որն ունի իմ ամբողջ հաճությունը»:՝ ¹⁸ Մենք անձամբ լսեցինք երկնքից եկող այդ ձայնը, որովհետև Հիսուսի հետ միասին էինք սուրբ լեռան վրա:՝

Անսալ մարգարեական վկայություններին

¹⁹ Ահա թե ինչու այժմ ավելի ամուր կապված ենք մարգարեական վկայություններին, և լավ կլինի, որ դուք էլ ձեր ուշադրությունը դարձնեք դրանց վրա, որովհետև դրանք այն ճրագն են, որ լույս են տալիս մութ տեղը, մինչև բացվի այն օրվա արշալույսը, և Առավոտյան աստղը ծագի ձեր սրտերում: ²⁰ Եվ չմոռանաք երբեք, որ որևէ մեկը ինքն իրենից չի կարող բացատրել Սուրբ գրքերի մարգարեությունները, ²¹ որովհետև մարգարեությունները բնավ էլ մարդկանց կամքի ծնունդ չեն, այլ Աստծու մարդիկ Սուրբ Հոգու մղումով խոսեցին դրանք:՝

2

Զուշանալ սուտ ուսուցանողներից

¹ Բայց անցյալում սուտ մարգարեներ էլ էին հայտնվում ժողովրդի մեջ, ինչպես այժմ էլ հայտնվելու են սուտ ուսուցիչներ, որոնք կորստաբեր վարդապետություններ կսպրդեցնեն ձեր մեջ՝ ուրանալով Տիրոջը, որ փրկեց իրենց, և արագահաս կորստի

^{1.10} «Ջանացե՛ք». մի շարք ձեռ. ավելացնում են «բարի գործերով»: Հուն. չունի «մեղքի մեջ»:

^{1.15} Հուն. չունի «հորդորել ձեզ»:

^{1.17-18} Մտ 17.1-5, Մր 9.2-7, Ղկ 9.28-35:

^{1.18} Առաքյալն ակնարկում է Հիսուսի այլակերպությունը:

^{1.21} «Աստծու մարդիկ». մի շարք ձեռ. ունեն «Աստծու սուրբ մարդիկ»:

կմատնեն իրենց: ² Շատերը կհետևեն նրանց անառակություններին, որով պատճառ կդառնան, որ անարգվի ճշմարտության ճանապարհը: ³ Ընչաքաղցությունից մղված՝ նրանք ձեզ կշահագործեն իրենց շինծու խոսքերով, բայց նրանց դատապարտությունը սկզբից իսկ հայտնի է, նրանց կորուստը չի ուշանա:

⁴ Քանզի Աստված մեղանչած հրեշտակներին անգամ չխնայեց, այլ նրանց նետել տվեց տարտարոսը, որտեղ խավարի կապանքներով կապված՝ նրանք պահվում են մինչև դատաստանի օրը: ⁵ Աստված չխնայեց նաև հին աշխարհին, այլ ջրհեղեղ բերեց անհավատ մարդկության վրա՝ փրկելով միայն ութ հոգու, այդ թվում և Նոյին, որ արդար կյանքի քարոզիչն էր: ⁶ Նոյն ձևով սողոմացիների և գոմորացիների քաղաքները կործանումի դատապարտելով՝ մոխրի վերածեց, որպեսզի օրինակ լինեն գալիք ժամանակների ամբարիշտ մարդկանց համար: ⁷ Իսկ Ղովտին, որ արդար էր և զգվել էր նրանց անբարո և անառակ կենցաղից, փրկեց, ⁸ որովհետև նրանց մեջ ապրող այդ արդար մարդը, նրանց անօրեն կենցաղին ականատես և ականջալուր լինելով, իր արդար հոգու մեջ տանջվում էր ամեն օր: ⁹ Եվ այսպես, Տերը գիտի աստվածապաշտներին փրկել իրենց փորձություններից, իսկ անիրավներին պահում է դատաստանի օրվա տանջանքներին մատնելու համար, ¹⁰ մանավանդ նրանց, ովքեր հետևում են մարմնական պղծալի ցանկություններին և արհամարհում են Աստծու տերությունը:

Այս ինքնահավան և հանդուգն սուտ ուսուցիչները չեն վախենում հոգեղեն փառավոր էակներին անարգելուց: ¹¹ Մինչդեռ հրեշտակները, գորությամբ և կարողությամբ իրենցից շատ ավելի մեծ լինելով, նրանց մասին որևէ անարգալից ամբաստանություն չեն անում Տիրոջ առաջ: ¹² Բայց այս մարդիկ իրենց չհասկացած բաներն են անարգում: Եվ ինչպես իրենց բնագոյներին հետևող անբան անասունները, որ սահմանված են որս լինելու և սպանվելու համար, այդպես էլ սրանք պիտի կորչեն անասունների նման: ¹³ և այդ պատիժը ուրիշներին հասցրած նրանց չարիքների հատուցումը կլինի: Սրանք օրը ցերեկով իրենց զեխ ցանկությունները կատարելուց հաճույք են զգում և իրենց ներկայությամբ պղծում ու արատավորում են ձեր հավաքույթի սեղանները՝ զվարճանալով իրենց խաբեբայություններով: ¹⁴ Սրանց աչքերը շնացող կանանց են փնտրում միայն և չեն հագնում մեղք գործելուց: Այս անիծյալները թույլ մարդկանց են փնտրում խաբելու համար, և նրանց խելքն ու միտքը դրամ դիզելու վրա է: ¹⁵ Թողնելով ուղիղ ճանապարհը՝ մոլորվել են՝ հետևելով Բեռի որդի Բադաամի օրինակին, որն ուզեց անիրավությամբ փող շահել, ¹⁶ և իր անօրենության համար էլ հանդիմանվեց անխոս էշից, որը, մարդկային լեզվով խոսելով, արգելք եղավ մարգարեին, որ չգործի այդ անմտությունը:

¹⁷ Այս մարդիկ ցամաքած աղբյուրներ են, հողմերից քշվող մառախուղներ, որոնց

^{2.5} Ծն 6.1-7.24, Իմս 10.4:

^{2.6} Ծն 19.24:

^{2.7} Ծն 19.1-16, Իմս 10.6-8:

^{2.15-16} Թվ 22.4-35:

^{2.16} «Անմտությունը». գրք. ունի «անօրենությունը»:

համար Աստված վերապահել է խավար աշխարհի հավիտենական աղջամուղջը:
¹⁸ Որովհետև իմաստից զուրկ մեծ-մեծ խոսքեր բարբառելով և մարմնական անառակ ցանկություններ գրգռելով՝ մոլորեցնում են նրանց, որոնք հազիվ էին փախել ուրիշ մոլորությունների մեջ ապրող մարդկանցից: ¹⁹ Նրանց ազատություն են խոստանում, մինչդեռ իրենք գերի են կորստի տանող մոլությունների: Արդարև, մարդն ինչ բանի որ ենթարկում է ինքն իրեն, նրա գերին է լինում: ²⁰ Նրանք, ովքեր մեր Տիրոջն ու Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին ճանաչելով՝ աշխարհի պղծություններից մի անգամ հեռանալուց հետո վերստին են ընկնում նույն պղծությունների մեջ, նրանց վիճակը կլինի շատ ավելի վատ, քան նախկին վիճակը: ²¹ Ավելի լավ կլինեք, որ նրանք բնավ ճանաչած չլինեին արդարության ճանապարհը, քան թե ճանաչելուց հետո հեռանային իրենց ավանդված սուրբ պատվիրանից: ²² Որքա՛ն են նրանց պատշաճում Առակաց գրքի՝ հետևյալ ճշմարիտ առածները. «Շունն իր փսխածին է վերադառնում», իսկ մյուսը՝ «Ինչքան էլ լվանաս խոզին, դարձյալ կթավալվի տիղմի մեջ»:

3

Քրիստոսի երկրորդ գալստյան խոստումը

¹ Միրելինե՛ր, սա երկրորդ նամակն է, որ գրում եմ ձեզ: Իմ երկու նամակներով էլ ուզեցի մի շարք հիշեցումներով արթնացնել ձեր մտքերը, որ ուղիղ մտածեք, ² որպեսզի հիշեք այն պատգամները, որ սուրբ մարգարեները նախապես ասացին, ինչպես նաև մեր Տիրոջ և Փրկչի պատվերը, որ ձեր առաքյալները փոխանցեցին ձեզ: ³ Բայց այդ մասին նախ հետևյալն իմացեք, որ վերջին օրերին կգան հեգնողներ ու արհամարհողներ, որոնք իրենց սեփական ցանկություններից առաջնորդված՝ ⁴ կհարցնեն. «Ո՛ր մնաց Քրիստոսի երկրորդ գալստյան խոստումը: Մեր հայրերը մեռան, և ամեն ինչ դեռ մնում է այն նույն ձևով, ինչպես որ էր ստեղծագործությունից ի վեր»:⁵ Այսպես խոսողները կամովին մոռանում են, որ «Աստված սկզբից իր խոսքով ստեղծեց երկիրը», ջրերից դուրս բերեց և ջրերով կազմեց երկիրը,⁶ և նույն ջրերի հեղեղով ավերվեց և կորստյան մատնվեց երբեմնի աշխարհը:⁷ Նույնպես և երկինքը ու երկիրն Աստծու նույն խոսքով պահվում են կրակի համար, այսինքն՝ դատաստանի օրվա համար, երբ ամբարիշտ մարդիկ կորստյան պիտի մատնվեն:

⁸ Այս ևս մի՛ մոռացեք, սիրելիներ՛ր, որ Տիրոջ մոտ մեկ օրը հազար տարվա պես է, և հազար տարին՝ մեկ օրվա պես:⁹ Տերը չի ուշացնում իր խոստումի կատարումը այնպես, ինչպես ոմանք հասկանում են ուշացումը: Տերը պարզապես համբերատարություն է ցույց տալիս ձեր հանդեպ, որովհետև չի ուզում, որ որևէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ բոլորն էլ առիթ ունենան ապաշխարելու:

^{2.22} Առ 26.11:

^{3.3} Հդ 18:

^{3.4} «Մեր հայրերը». ակնարկությունը վստահաբար վերաբերում է առաջին սերնդի քրիստոնյաներին:

^{3.5} Ծն 1.6-9:

^{3.6} Ծն 7.11:

^{3.8} Սղ 90.4:

¹⁰ Բայց Տիրոջ օրն անակնկալ կերպով կգա, գողի նման, երբ երկինքը կչքանա մեծ շառաչյունով, երկնային մարմինները կվառվեն ու կհալվեն, և երկիրը կանհետանա իր ամբողջ բովանդակությամբ:*

Նոր երկինք և նոր երկիր

¹¹ Արդ, քանի որ այս բոլորն այսպես պիտի չքանան, ինչպիսի՛ մարդիկ պետք է լինեք դուք: Պետք է ապրեք մաքուր և աստվածապաշտ կյանքով՝ ¹² սպասելով և ջանալով արագացնել Տիրոջ օրվա գալուստը, երբ երկինքը կրակով կայրվի ու կչքանա, և երկնային մարմինները կվառվեն ու կհալվեն: ¹³ Բայց մենք Աստծու խոստման համաձայն սպասում ենք մի նոր երկնքի ու նոր երկրի, որտեղ արդարությունն է իշխելու:

Զգուշավոր և մաքուր կյանքի հորդոր

¹⁴ Ուստի, սիրելիներ՛ք, դուք, որ սպասում եք այս բաներին, ջանացե՛ք անբիծ և անարատ լինել Աստծու աչքին և ապրել խաղաղությամբ: ¹⁵ Եվ Տիրոջ համբերատարությունը փրկությո՛ւն համարեք ձեզ համար, ինչպես որ մեր սիրելի եղբայր Պողոսն էլ գրեց ձեզ՝ Աստծուց իրեն շնորհված իմաստությամբ: * ¹⁶ Նա իր բոլոր նամակներում էլ խոսել էր այս բաների մասին: Այդ նամակներում կան մի շարք դժվարհասկանալի մասեր, որոնց իմաստը չարափոխում են տգետ և փոփոխամիտ մարդիկ: Նրանք չարափոխում են նաև մյուս Սուրբ գրքերը՝ իրենց սեփական կորուստը պատրաստելով:

¹⁷ Ուստի դուք, սիրելիներ՛ք, սկզբից այս բաներն իմանալով՝ զգո՛ւյշ եղեք, որ չլինի թե անբարո մարդկանց մոլորությանը հետևեք և կորցնեք ձեր վստահությունը: ¹⁸ Այլ աճեցե՛ք մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի շնորհով և գիտությամբ: Նրան փա՛ռք թե՛ այժմ և թե՛ հավիտենական օրը: Ամեն:

I J N

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼԻ

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՅԱՆԸՄԱՆ ՆԱՄԱԿԸ

Հովհաննես առաքյալի գրած առաջին նամակը հետապնդում է երկու նպատակ.

1. Քաջալերել ընթերցողներին, որ Աստծուն և Հիսուս Քրիստոսին միացած կյանք ապրեն:
2. Ազդարարել ընթերցողներին, որ զգուշանան և չհետևեն սխալ վարդապետությունների, որոնք քանդում են Աստծու հետ ունեցած իրենց

***3.10** «Երկիրը կանհետանա իր ամբողջ բովանդակությամբ». բոց՝ «կգտնվի». մի քանի ձեռ. ունեն «չի գտնվի», իսկ մի շարք ձեռ. «կայրվի»:

***3.10** Մտ 24.43, Ղկ 12.39, Ա Թս 5.2, Հտ 16.15:

***3.15** Հուն. չունի «Աստծուց»:

***3.15** Ես 65.17, 66.22, Հտ 21.1:

***3.17** «Ձեր վստահությունը» [«ձեր ամբողջությունը»]. գրք. ունի «կյանքում ձեր հաստատունությունը [ամբողջությունը»:

կապը:

Միայն ուսուցումներից մեկը և ամենավտանգավորը հիմնված էր այն տեսության վրա, որ նյութեղեն այս աշխարհը և ամեն ինչ, որ նյութեղեն է, ինքնին չար է, և հետևաբար, անկարելի է, որ Քրիստոսը՝ Աստծու Որդին, մարդ եղած լինի: Այս ըմբռնումի բնական հետևանքը լինում էր այն, որ կյանքում արհամարհվում էր մարդկային ամեն կապ և մտահոգություն: Նրանք ուսուցանում էին, որ փրկությունը որևէ առնչություն չունի բարոյականության հետ, և ուրիշի հանդեպ ցուցաբերված սերը ևս առանձին նշանակություն չունի, այլ կարևորը միայն Աստծու մտավոր և հոգևոր ճանաչումն է:

Այս ուսուցումներին ընդդիմանալով՝ առաքյալը հստակորեն շեշտում է, որ Աստծու լույսի և գիտության մեջ կարող է լինել միայն նա, ով գործադրում է սիրո պատվիրանը: Սիրո մարմնացումը մարդացած Քրիստոսն է: Ով «չի խոստովանում, թե Հիսուս Քրիստոսն աշխարհ գալով իսկապես մարդացավ, նա խոսում է ոչ թե Աստծու Հոգով, այլ Քրիստոսի հակառակորդի դրդումով» (4.3): Աստծու իսկական զավակներն ապրում են արդարությամբ և միմյանց հանդեպ ցուցաբերած սիրով. «Իսկ ով որ չի սիրում, նա չի ճանաչում Աստծուն, որովհետև Աստված սեր է» (4.8):

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-4):
- Լույս և խավար (1.5-2.29):
- Աստծու որդիներ և Սատանայի որդիներ (3.1-24):
- Ճշմարտություն և կեղծիք (4.1-6):
- Սիրո պարտավորությունը (4.7-21):
- Հաղթական հավատ (5.1-21):

1

Հավիտենական կյանքի վկաները

¹ Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք և մեր ձեռքերով շոշափեցինք Որդուն՝ Բանը, որ սկզբից իսկ կյանքի ստեղծողն էր: ² Նա նույն ինքը կյանքն էր, որ հայտնվեց: Մենք տեսանք և վկայում ենք՝ ձեզ պատմելով նրա մասին, այսինքն՝ հավիտենական կյանքի մասին, որ Հոր հետ էր և այժմ հայտնվեց մեզ: ³ Ինչ որ տեսանք ու լսեցինք, պատմում ենք ձեզ, որպեսզի դու ևք էլ մասնակից դառնանք այն հաղորդությանը, որ մենք ունենք Հոր և նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ, ⁴ և ձեր ուրախությունը կատարյալ լինի: Ահա թե ինչու ենք ձեզ գրում այս նամակը:

Աստված լույս է, քայլենք լույսի մեջ

⁵ Այն պատգամը, որ լսեցինք նրանից և փոխանցում ենք ձեզ, այս է. Աստված լույս է,

^{1.1} Հհ 1.1:

^{1.2} Հհ 1.14:

^{1.4} «Ձեր ուրախությունը». մի շարք ձեռ. ունեն «մեր ուրախությունը»:

բնավ խավար չկա նրա մեջ: ⁶ Արդ, եթե ասենք՝ «Հաղորդակից ենք նրան», և մյուս կողմից շարունակենք ապրել խավարի մեջ, ստում ենք և ճշմարտությունը չենք գործադրում: ⁷ Իսկ եթե քայլենք լույսի մեջ, ինչպես որ ինքն է լույսի մեջ, այն ժամանակ ճշմարտապես հաղորդակից ենք լինում միմյանց, և նրա Որդու՝ Հիսուսի արյունը մեզ սրբում է ամեն մեղքից:

⁸ Եթե ասենք՝ «Մեղք չունենք», ինքներս մեզ ենք խաբում, և ճշմարտություն չկա մեր մեջ: ⁹ Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, վստահ եղեք, թե Աստված, որ արդար է, կների մեր մեղքերը և մեզ կարբի մեր բոլոր անիրավություններից: ¹⁰ Եթե ասենք՝ «Մեղք չգործեցինք», ստախոս ենք հանում Աստծուն, և նրա խոսքը մեր մեջ չէ:

2

Քրիստոսը մեր բարեխոսն է

¹ Որդյակնե՛ր իմ, այս բաները գրում եմ ձեզ, որպեսզի մեղքի մեջ չընկնեք: Իսկ եթե մեկը մեղքի մեջ ընկնի, Հոր մոտ բարեխոս ունենք միակ Արդարին՝ Հիսուս քրիստոսին: ² Նա՛ է մեր մեղքերը քավող Չոհը, որ իր անձը մատուցեց մեր մեղքերը սրբելու համար, և ոչ միայն մեր, այլ նաև ամբողջ աշխարհի մեղքերը սրբելու համար:

Աստծուն ճանաչողը պահում է նրա պատվիրանները

³ Եթե գործադրենք Աստծու պատվիրանները, այն ժամանակ միայն կիմանանք՝ ճանաչո՞ւմ ենք նրան, թե՞ ոչ: ⁴ Ով ասում է՝ «Ես ճանաչում եմ նրան», բայց չի կատարում նրա պատվիրանները, սուտ է խոսում, և նրա մեջ ճշմարտություն չկա: ⁵ Իսկ ով կատարում է նրա խոսքը, դրանով իսկ ցույց է տալիս, որ իր մեջ իսկապես կատարյալ է սերն Աստծու հանդեպ: Ահա այսպե՛ս կարող ենք իմանալ, որ Քրիստոսին միացած ենք մնում: ⁶ Ով ասում է, թե ինքը միացած է մնում Քրիստոսին, պետք է ապրի այնպես, ինչպես Քրիստոսն ինքը ապրեց:

Նոր պատվիրանը

⁷ Միրելինե՛ր իմ, մի նոր պատվիրան չեմ գրում ձեզ, այլ այն հին պատվիրանը, որ ունեցաք հենց սկզբից: Այդ հին պատվիրանը այն պատգամն է, որ լսել եք արդեն:՝

⁸ Սակայն դարձյալ իբրև նոր պատվիրան եմ գրում ձեզ հետևյալը, որի ճշմարիտ լինելը տեսաք Քրիստոսի և ձեր կյանքի մեջ, թե ահա խավարն անցնում է, և արդեն իսկ երևում է ճշմարիտ լույսը:

⁹ Ով ասում է, թե ինքը լույսի մեջ է և ասում է իր եղբորը, նա խավարի մեջ է տակավին: ¹⁰ Մինչդեռ իր եղբորը սիրողը լույսի մեջ է մնում և գայթակղության պատճառ չի դառնում: ¹¹ Իր եղբորն ատողը, ընդհակառակը, խավարի մեջ է, խավարի մեջ է քայլում և չգիտի, թե ո՛ր է գնում, որովհետև խավարը կուրացրել է նրա աչքերը:

^{2.1} «Արդարին». գրք. ունի «Արդարին ու Անարատին»:

^{2.7} Հհ 13.34:

^{2.9} «Խավարի մեջ է տակավին». գրք. ունի «սուտ է և խավարի մեջ է տակավին»:

^{2.10} «Պատճառ չի դառնում» կամ «պատճառ չի ունենում»:

Մի՛ սիրեք չար աշխարհը

¹² Գրում եմ ձեզ, որոյակնե՛ր,
որովհետև ձեր մեղքերը ներված են
ի սեր քրիստոսի:

¹³ Գրում եմ ձեզ, հայրե՛ր,
որովհետև ճանաչեցիք Նրան,
ով գոյություն ունի սկզբից:
Գրում եմ ձեզ, երիտասարդնե՛ր,
որովհետև հաղթեցիք Չարին:

¹⁴ Ա՛յո, գրեցի ձեզ, զավակնե՛րս,
որովհետև դուք ճանաչեցիք Հորը:
Գրեցի ձեզ, հայրե՛ր,
որովհետև ճանաչեցիք Նրան,
ով գոյություն ունի սկզբից:
Գրեցի ձեզ, երիտասարդնե՛ր,
որովհետև գորացաք Աստծով.
Աստծու խոսքը մնում է ձեր մեջ,
Եվ դուք հաղթեցիք Չարին:

¹⁵ Մի՛ սիրեք աշխարհը, ոչ էլ աշխարհին հատուկ որևէ բան: Ով սիրում է աշխարհը, Հայր Աստծու հանդեպ սեր չունի իր մեջ, ¹⁶ որովհետև աշխարհին հատուկ բաներ են մարմնի ցանկությունը, աչքի տեսածն ունենալու ցանկությունը և երկրային հարստությամբ հպարտանալը, որոնք Հորից չեն գալիս, այլ այս աշխարհից:
¹⁷ Իմացե՛ք սակայն, որ այս աշխարհն էլ կանցնի, աշխարհային ցանկություններն էլ, բայց ով կատարում է Աստծու կամքը, մնում է հավիտյան:

Քրիստոսի հակառակորդը

¹⁸ Զավակնե՛րս, վերջին ժամանակը հասել է: Դուք լսել եք, որ Նեոը՝ Քրիստոսի հակառակորդը, գալու է: Արդ, ահա Քրիստոսի բազում հակառակորդներ են երևան եկել, և դրանից էլ իմանում ենք, որ վերջին ժամանակն է: ¹⁹ Մեր միջից ելան նրանք, բայց մեզնից չէին. որովհետև եթե մեզնից լինեին, ապա մեզ հետ էլ կմնային: Բայց մեզնից հեռացան, որպեսզի հայտնի լինի, թե նրանցից որևէ մեկը մեզնից չէր:

²⁰ Սակայն դուք Սուրբ Հոգու պարզևն ունեք, որովհետև դրանով օժեց ձեզ Սուրբը՝ Քրիստոսը, և դուք գիտեք ամեն բան: ²¹ Այս նամակը գրում եմ ձեզ ոչ թե որովհետև ճշմարտությունը չգիտեք, այլ ընդհակառակը, գրում եմ՝ հաստատելու համար, որ գիտեք այն, և ճշմարտությունից ոչ մի ստություն չի ծնվում:

²² Հետևաբար, ո՞վ է ստախոսը, եթե ոչ նա, ով ուրանում է, թե Հիսուսը Քրիստոսն է: Քրիստոսի հակառակորդն է այնպիսին, որ ուրանում է թե՛ Հորը և թե՛ Որդուն.

²³ որովհետև ով որ մերժում է Որդուն, մերժած է լինում նաև Հորը, իսկ ով որ

ընդունում է Որդուն, ընդունած է լինում նաև Հորը՝

²⁴ Հետևաբար, ձեր սրտո՛ւմ պահեցեք Տիրոջ խոսքերը, որ լսեցիք սկզբից: Եթե ձեր մեջ պահեք այն, ինչ որ սկզբից սովորեցիք, դուք ևս միացած կլինեք Հորը և Որդուն: ²⁵ Եվ այս ինքը՝ հավիտենական կյանքն է, որ Քրիստոսը խոստացավ մեզ տալ:

²⁶ Այս բաները գրում եմ ձեզ, որպեսզի չլինի թե՛ մեկը մոլորեցնի ձեզ: ²⁷ Գալով ձեզ՝ այնքան ժամանակ, որ ձեր մեջ մնում է Սուրբ Հոգին, որով Քրիստոսն օժեց ձեզ, դուք կարիք չունեք ուրիշ մեկից բան սովորելու: Հոգին ինքը սովորեցնում է ձեզ ամեն բան, սովորեցնում է ճշմարիտը և ոչ թե սուտը: Ուստի միացա՛՛ծ մնացեք Քրիստոսին, ինչպես Սուրբ Հոգին սովորեցրեց ձեզ՝

²⁸ Այո՛, որդյակնե՛ր իմ, միացա՛՛ծ մնացեք Քրիստոսին, որպեսզի նրա գալստյան օրը, երբ նա հայտնվի, ամոթով չմնանք, այլ համարձակ կանգնենք նրա առաջ: ²⁹ Դուք գիտեք, որ նա արդար է. ուստի ով որ արդարություն է անում, նրա հարազատ զավակն է:

3

Մենք Աստծու որդիներն ենք

¹ Տեսեք, թե ինչպիսի՛ սիրով մեզ սիրեց Հայրը՝ կամենալով, որ մենք կոչվենք Աստծու որդիներ և արդարև, Աստծու որդիներն ենք: Աշխարհը մեզ չի ճանաչում, որովհետև չճանաչեց նրան՝

² Սիրելինե՛ր, այժմ Աստծու որդիներ ենք: Թե ինչպես կլինենք հետագայում, տակավին չգիտենք: Բայց գիտենք, որ երբ Քրիստոսը հայտնվի, կլինենք նրա նման, որովհետև նրան տեսնելու ենք իր իսկության մեջ: ³ Ով որ այս հույսն ունի, մաքրում է ինքն իրեն, ինչպես որ Քրիստոսն ինքը մաքուր է:

⁴ Ով մեղանչում է, խախտում է Աստծու Օրենքը, որովհետև մեղքն ինքնին օրենքի խախտումն է: ⁵ Գիտեք, որ Քրիստոսն աշխարհ եկավ մեր մեղքերը ջնջելու համար, և նրա մեջ մեղք չկա: ⁶ Ով միացած է մնում Քրիստոսին, նա չի մեղանչում, իսկ ով մեղանչում է, նրան երբեք չի տեսել ու չի ճանաչել:

⁷ Որդյակնե՛ր իմ, թող ոչ ոք ձեզ չխաբի: Ով արդարություն է անում, արդար է, ինչպես որ Քրիստոսն ի՛նքը արդար է: ⁸ Իսկ ով մեղք է գործում, Սատանայի հետևորդ է, որովհետև Սատանան հենց սկզբից մեղք է գործում: Եվ Աստծու Որդին աշխարհ եկավ, որպեսզի վերջ դնի Սատանայի գործունեությանը:

⁹ Ով Աստծու զավակ է դարձել, նա մեղք չի գործում, որովհետև հաղորդակից է մնում Աստծու կյանքին: Նա այլևս դադարում է մեղանչելուց, քանի որ Աստծու զավակ է դառնում: ¹⁰ Ահա այսպե՛ս են զանազանվում Աստծու որդիներն ու Սատանայի որդիները: Ով արդարություն չի գործում, Աստծու որդին չէ. ով չի սիրում իր եղբորը,

^{2.23} Մի շարք ձեռ. չունեն *«իսկ ով ընդունում է Որդուն, ընդունած է լինում նաև Հորը»:*

^{2.27} «Հոգին ինքը». բոց՝ *«այդ օծությունը»:*

^{3.1} Հհ 1.12:

^{3.5} Մի շարք ձեռ. չունեն *«մեր»:*

^{3.5} Հհ 1.29:

նույնպէս Աստծու որդին չէ:

Գործո՛վ սիրենք միմյանց և ո՛չ խոսքով

¹¹ Այն պատվիրանը, որ սկզբից իսկ լսեցիք, այս է՝ սիրե՛նք միմյանց: ¹² Հետևաբար, չլինենք Կայենի նման, որ Չարի օրինակին հետևելով՝ սպանեց իր եղբորը: Եվ ինչո՞ւ սպանեց. որովհետև իր գործերը չար էին, մինչդեռ եղբոր գործերը՝ բարի:

¹³ Եղբայրնե՛ր, մի՛ զարմացեք, եթե աշխարհն ատի ձեզ: ¹⁴ Մենք գիտենք, որ մահվանից անցել ենք դեպի կյանք. ապացույց, որ սիրում ենք մեր եղբայրներին: Ով չի սիրում իր եղբորը, ենթակա է մնում մահվան: ¹⁵ Ով ասում է իր եղբորը, մարդասպան է, և գիտեք, որ ամեն մարդասպան հավիտենական կյանք չունի իր մեջ:

¹⁶ Մենք սերը նրանո՛վ ճանաչեցինք, որ Քրիստոսն իր կյա՛նքը զոհեց մեզ համար: Հետևաբար, մենք ևս մեր կյանքը պետք է զոհենք մեր եղբայրների համար: ¹⁷ Այն մարդը, որ նյութական ամեն բարիք ունի և տեսնելով, որ իր եղբայրն օգնության կարոտ է, գութ չի տածում, ինչպե՛ս կարող է ասել, թե Աստծու սերն ունի իր մեջ:

¹⁸ Որոյակնե՛ր, մեր սերը թող չլինի միայն խոսքով ու լեզվով, այլ գործով արտահայտված ճշմարիտ սեր: ¹⁹ Ահա այսպե՛ս կիմանանք, որ հետևող ենք ճշմարտությանը: Այսպէս նաև մեր սրտերը վստահություն կունենան կանգնելու Աստծու առջև: ²⁰ Եթե նույնիսկ մեր խիղճն ինչ-որ հանցանքի համար մեղադրի մեզ, չմոռանանք, որ Աստված ավելի մեծ է, քան մեր խիղճը, և նա գիտի ամեն բան: ²¹ Իսկ եթե մեր խիղճը չի մեղադրում մեզ, սիրելիներ՛ր, կարող ենք համարձակ դիմել Աստծուն, ²² և ինչ էլ որ խնդրենք, նրանից կստանանք, որովհետև գործադրում ենք նրա պատվիրանները և կատարում, ինչ որ հաճելի է նրան: ²³ Եվ նրա պատվիրանն ա՛յս է. որ հավատանք իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և սիրենք միմյանց, ինչպէս որ Հիսուսը պատվիրվեց մեզ: ²⁴ Արդ, ով գործադրում է Աստծու պատվիրանները, միացած է մնում Աստծուն, և Աստված էլ՝ նրան: Իսկ Աստծու՝ մեզ միացած մնալու ապացույցը Սուրբ Հոգին է, որը Աստված տվեց մեզ:

4

Ճշմարտությունը զանազանել խաբէությունից

¹ Սիրելիներ՛ր, մի՛ հավատացեք ամեն մարդու, ով ասում է, թե ինքն ունի Աստծու Հոգին: Փորձեցե՛ք նրանց՝ իմանալու համար, թե իսկապէս Աստծո՞ւ Հոգով են խոսում, որովհետև բազում սուտ մարգարէներ են երևան եկել աշխարհում: ² Աստծու Հոգով խոսողներին կարող էք ճանաչել հետևյալ ձևով. ով որ խոստովանում է, թե Հիսուս Քրիստոսն աշխարհ գալով իսկապէս մարդացավ, նա Աստծու Հոգով է խոսում: ³ Իսկ ով որ չի խոստովանում, թե Հիսուս Քրիստոսն աշխարհ գալով մարդացավ, նա

^{3.11} Հհ 13.34:

^{3.12} Ծն 4.8:

^{3.14} Մի շարք ձեռ. չունեն *«իր եղբորը»*:

^{3.14} Հհ 5.24:

^{3.23} Հհ 13.34, 15.12, 17:

Աստծու Հոգով չի խոսում, այլ Նեոի՝ Քրիստոսի հակառակորդի դրդումով. նրա մասին դուք լսել էիք, թե գալու է, և ահա արդեն իսկ աշխարհում է:

⁴ Որոյակներ՝ ր, դուք Աստծուց եք ծնվել և հաղթեցիք այն սուտ մարգարեներին, որովհետև ձեր մեջ եղող Աստծու Հոգին ավելի մեծ է, քան Քրիստոսի հակառակորդի հոգին, որ գտնվում է աշխարհին պատկանողների մեջ: ⁵ Նրանք աշխարհին են պատկանում և խոսում են աշխարհի ուզած ձևով. դրա համար էլ աշխարհը լսում է նրանց: ⁶ Մինչդեռ մենք Աստծուն ենք պատկանում. ով որ Աստծուն ճանաչում է, լսում է մեզ, իսկ ով որ չի պատկանում Աստծուն, չի լսում մեզ: Ահա այսպե՛ս է, որ զանազանում ենք ճշմարտության հոգին և խաբեության հոգին:

Աստված սեր է

⁷ Միրելիներ՝ ր, սիրենք միմյանց, որովհետև սերն Աստծու պարզևն է. ով սիրում է, նա ծնված է Աստծուց և ճանաչում է Աստծուն:

⁸ Ով չի սիրում, չի ճանաչում Աստծուն, որովհետև Աստված սեր է:

⁹ Աստծու սերն այս ձևով է հայտնվել մեզ. Աստված իր միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որպեսզի կյանք ունենանք նրանով:

¹⁰ Ճշմարիտ սերն այս է ահա. ոչ թե մե՛նք սիրեցինք Աստծուն, այլ Աստված ի՛նքը սիրեց մեզ և ուղարկեց իր Որդուն՝ իբրև մեր մեղքերը քավող զոհի:

¹¹ Միրելիներ՝ ր, եթե Աստված այսպես սիրեց մեզ, ապա ուրեմն մենք ևս պետք է սիրենք միմյանց:

¹² Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել: Եթե մենք սիրենք միմյանց, նշանակում է Աստծու հանդեպ սերը կատարյալ է մեր մեջ, և Աստված միացած է մնում մեզ: ¹³ Ապացույցը, որ մենք միացած ենք մնում Աստծուն, և Աստված էլ՝ մեզ, նույն ինքը նրա Հոգին է, որը Աստված տվեց մեզ: ¹⁴ Եվ մենք տեսանք ու վկայում ենք, որ Հայրն իր Որդուն ուղարկեց, որպեսզի նա աշխարհի Փրկիչը լինի: ¹⁵ Ով դավանում է, թե Հիսուսն Աստծու Որդին է, նա միացած է մնում Աստծուն, և Աստված էլ՝ նրան: ¹⁶ Եվ մենք հավատացինք ու ճանաչեցինք այն սերը, որ Աստված ունի մեր հանդեպ:

Աստված սեր է: Ով մնում է սիրո մեջ, նա միացած է մնում Աստծուն, և Աստված էլ՝ միացած նրան: ¹⁷ Եթե Աստծու հանդեպ սերն այսպես կատարյալ է մեր մեջ, ապա դատաստանի օրը համարձակ կկանգնենք Աստծու դիմաց, որովհետև այս աշխարհում ապրում ենք ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսն ինքը ապրեց: ¹⁸ Սեր ունեցողը վախ չունի, որովհետև կատարյալ սերը հեռու է վանում վախը: Արդարև,

վախը կապ ունի պատժի հետ, և ով վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ:

¹⁹ Հետևաբար, սիրենք Աստծուն, որովհետև նախ ինքը սիրեց մեզ: ²⁰ Այն մարդը, որ ասում է՝ «Ես սիրում եմ Աստծուն», բայց ատում է իր եղբորը, ստախոս է: Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսնում:

²¹ Մինչդեռ Քրիստոսի՝ մեզ տված պատվերն այս է. ով սիրում է Աստծուն, նա պետք է իր եղբորն էլ սիրի:

5

Քրիստոսին հավատացողը հաղթում է աշխարհին

¹ Ով հավատում է, թե Հիսուսն Աստծու Օծյալն է, նա Աստծուց է ծնված, իսկ ով սիրում է ծնունդ տվողին, սիրում է նաև նրանից ծնվածին: ² Ուստի, եթե սիրում ենք Աստծուն և կատարում նրա պատվիրանները, նշանակում է, որ սիրում ենք նաև Աստծու զավակներին: ³ Արդարև, Աստծու հանդեպ մեր սերն արտահայտում ենք նրա պատվիրանները գործադրելով: Իսկ նրա պատվիրանները գործադրելը դժվար չէ,՝ ⁴ որովհետև ով որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Եվ աշխարհի վրա հաղթանակ տանողը մեր հավատն է: ⁵ Արդ, ո՞վ է հաղթում աշխարհին, եթե ոչ նա, ով հավատում է, որ Հիսուսն է Աստծու Որդին:

Վկայություն Քրիստոսի մասին

⁶ Նա՛ էր՝ Հիսուս Քրիստոսը, որ եկավ սրբելու մեզ իր մկրտությամբ և իր արյունով: Ոչ միայն ջրով, այլ ջրով և արյունով: ⁷ Եվ Սուրբ Հոգին ինքն է վկայում այդ ճշմարտության մասին, որովհետև Հոգին ինքը ճշմարտությունն է: ⁸ Եվ այս երեք վկաները՝ Սուրբ Հոգին, մկրտության ջուրը և արյունը, երեք էլ նույն վկայությունն են տալիս:

⁹ Եթե ընդունում ենք մարդկանց վկայությունը, ինչպե՞ս չընդունենք Աստծու վկայությունը, որ ավելի մեծ է. իսկ Աստծու վկայությունն իր Որդու՝ և համար տված վկայությունն է: ¹⁰ Ով հավատում է Աստծու Որդուն, նա իր մեջ ունի այս վկայությունը, իսկ ով չի հավատում, սուտ է հանում Աստծուն, քանի որ չի հավատում այն վկայությանը, որն Աստված տալիս է իր Որդու համար: ¹¹ Իսկ տրված վկայությունն այս է, որ Աստված հավիտենական կյանք տվեց մեզ, և այդ կյանքի աղբյուրը Որդին ինքն է: ¹² Հետևաբար, ով որ Աստծու Որդուն ընդունում է իր մեջ, ունի այդ կյանքը, իսկ ով որ չունի Որդուն, չունի նաև հավիտենական կյանք:

¹³ Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծու Որդուն հավատացողներին, որպեսզի գիտակցեք, որ հավիտենական կյանք ունեք:

^{5.2} «Աստծու զավակներին» [«որդիներին»]. գրք. ունի «Աստծու Որդուն»:

^{5.3} Հհ 14.15:

^{5.6} «Մկրտությամբ». բոց՝ «ջրով», որ կարող է նաև ակնարկություն լինել խաչի վրա Հիսուսի կողից հոսած ջրի մասին (Հհ 19.34), որ ինքնին դարձյալ կապվում է մկրտության ջրին: Շատ ձեռ. «ջրով» բառի կողքին ավելացնում են «և Հոգով»:

^{5.11} Հհ 3.36:

Աստված լսում է մեր խնդրանքները

¹⁴ Ուստի համարձակ դիմենք Աստծուն այն վստահությամբ, որ եթե մի բան խնդրենք ըստ նրա կամքի, նա կլսի մեզ: ¹⁵ Եվ երբ գիտենք, թե նա լսում է մեր խնդրանքները, ապա գիտենք նաև, թե կստանանք այն, ինչ խնդրում ենք նրանից:

¹⁶ Երբ մեկը տեսնի, որ իր հավատացյալ եղբայրներից մեկը գործել է մի մեղք, որ մահացու չէ, թող աղոթի Աստծուն, որ կյանք տա նրան: Այս ասում եմ միայն նրանց համար, ում մեղքերը մահացու չեն, որովհետև մահացու մեղքեր էլ կան, որոնց համար չեմ ասում, որ աղոթի: ¹⁷ Ամեն անիրավություն մեղք է, բայց ամեն մեղք մահացու չէ:

Եզրակացություն

¹⁸ Գիտենք, ով որ Աստծուց է ծնված, չի մեղանչում. Աստծուց ծնվածը՝ Քրիստոսը, նրան պահում է, և Չարը չի մոտենում նրան: ¹⁹ Թեկուզ ամբողջ աշխարհը ենթակա լինի Չարին, մենք գիտենք, որ Աստծուց ենք: ²⁰ Եվ գիտենք, որ Աստծու Որդին եկավ և բացեց մեր մտքերը, որպեսզի ճանաչենք ճշմարիտ Աստծուն: Մենք միացած ենք ճշմարիտ Աստծուն և նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Նա՛ է ճշմարիտ Աստվածը և հավիտենական կյանքը:

²¹ Որոյակներ՝ ը, դուք ձեզ հեռո՛ւ պահեցեք կուռքերից:

2JN

Բ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼԻ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Այս նամակի սկզբում հեղինակը ինքն իրեն կոչում է պարզապես «Երեց»: Նամակն ուղղված է «Աստծուց ընտրված Տիրուհուն» և նրա զավակներին: Նա հավանաբար նկատի ունի տեղական եկեղեցիներից մեկը և նրա հավատացյալներին:

Նամակի սեղմ պատգամն այն է, որ հավատացյալները մնան ճշմարտության մեջ և սիրեն միմյանց: Առաքյալը նրանց զգուշացնում է կեղծ ուսուցիչներից, որոնք տարածում են առաջին նամակում հիշված մոլորեցուցիչ վարդապետությունները:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1-3):
- Սիրո նախապատվությունը (4-6):
- Զգուշացում սխալ վարդապետություններից (7-11):
- Վերջաբան (12-13):

1

Ողջույն

¹ Ես՝ Երեցս, գրում եմ քեզ, ո՛վ Աստծուց ընտրված Տիրուհի, և գրում եմ քո որոյակներին, որոնց սիրում եմ ճշմարտապես: Ոչ միայն ես, այլև բոլոր նրանք, ովքեր

ճանաչում են ճշմարտությունը, սիրում են ձեզ՝² այն ճշմարտության համար, որ հաստատ է մնում մեր մեջ և մեզ հետ էլ մնալու է ընդմիջտ։

³ Թող Հայր Աստված և Հոր Որդին՝ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, շնորհ, ողորմություն և խաղաղություն պարգևեն ձեզ, որպեսզի մնաք ճշմարտության և սիրո մեջ։

Ապրենք ճշմարտությամբ և սիրով

⁴ Չափազանց ուրախ եղա՝ տեսնելով քո որդիներից ոմանց, որոնք ապրում են ճշմարիտ հավատին վայել կյանքով՝ ըստ այն պատվիրանի, որն ստացանք Հայր Աստծուց։⁵ Եվ այժմ աղաչում եմ քեզ, ո՛վ Տիրուհի. մի նոր պատվիրան չեմ գրում քեզ, այլ սկզբից իսկ մեր ունեցած պատվիրանը, որ սիրենք միմյանց։⁶ Այս սերը նշանակում է՝ ապրել Աստծու պատվիրանների համաձայն, իսկ պատվիրանը, ինչպես սկզբից սովորեցիք, այս է. որ պետք է ապրենք սիրով։

⁷ Աշխարհում երևան են եկել բազում մոլորեցնողներ, որոնք մերժում են ընդունել, որ Հիսուս Քրիստոսն աշխարհ գալով իսկապես մարդացավ։ Այդպիսիները մոլորեցնող են և Քրիստոսի հակառակորդ։⁸ Ձգո՛ւյ՜ջ եղեք, որ չկորցնեք, ինչ որ վաստակեցիք ծանր աշխատանքով, այլ լրիվ ստանաք ձեր վարձը։

⁹ Ով որ մեղանչում է Քրիստոսի ուսուցումների դեմ և կապված չի մնում դրանց, նա իր մեջ չունի Աստծուն։ Իսկ ով կապված է մնում նրա ուսուցումներին, նա իր մեջ ունի թե՛ Որդուն և թե՛ Հորը։¹⁰ Եթե ձեզ մոտ գա մեկը, որ այսպես չի ուսուցանում, մի՛ ընդունեք ձեր տներում և նույնիսկ բարև մի՛ տվեք նրան։¹¹ որովհետև ով բարև է տալիս այդպիսի մեկին, մասնակից է դառնում նրա չար գործերին։

Վերջին ողջույններ

¹² Դեռ շատ բան ունեի քեզ ասելու, բայց չուզեցի թողնի նու թանաքին հանձնել, որովհետև հույս ունեմ, որ շուտով անձամբ կգամ ձեզ մոտ և դեմառդեմ կխոսեմ ձեզ հետ, որպեսզի մեր ուրախությունը կատարյալ լինի։

¹³ Քեզ ողջունում են քեզ հետ ընտրված քո քույր եկեղեցու անդամները։

Աստծու շնորհը ձեզ հետ լինի։

ՅՅՆ

Գ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼԻ

¹ «Տիրուհի». գրք. «Կյուրիա», որ հուն. տառադարձումն է և նշ է «տիկին» կամ «տիրուհի»: «Տիրուհի և քո որդյակները» արտահայտությունն ակնարկություն է Փոքր Ասիայի տեղական եկեղեցիներից մեկի և նրա հավատացյալների մասին: Դժբախտաբար նրանց մասին ավելին չգիտենք:

² «Մնալու է ընդմիջտ». գրք. ավելացնում է «և դուք էլ մեզ հետ եք լինելու հավիտյան»:

³ «Պարգևեն ձեզ». հուն. ձեռ. մեծ մասն ունի «մեզ»:

⁵ Հհ 13.34, 15.12, 17:

⁸ «Չկորցնեք, ինչ որ... այլ լրիվ ստանաք ձեր վարձը». մի շարք ձեռ. ունեն «չկորցնեք... այլ լրիվ ստանանք մեր վարձը»: Մի շարք այլ ձեռ. ունեն «ինչ որ վաստակեցիք ձեր ծանր աշխատանքով»:

¹³ «Քեզ հետ ընտրված քո քույր [եկեղեցու]». բոց «քո ընտրելակից քրոջ»: Ակնարկում է այն եկեղեցուն, որին պատկանում է նամակագիրը: Հուն. և հայ. շատ ձեռ. չունեն «Աստծու շնորհը ձեզ հետ լինի»:

ԵՐԵՂԵՂ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Այս երրորդ նամակում ես, ինչպես նախորդի մեջ, հեղինակն իրեն կոչում է «Երեց»:
Նամակն ուղղված է մի եկեղեցու առաջնորդի, որի անունն է Գայոս:

Երեցը գովում է Գայոսին՝ քրիստոնյա եղբայրների հանդեպ նրա ցուցաբերած օգնության համար, և նրան զգուշացնում Դիոտրեֆես անունով մի անձից և նրա չարախոսություններից ու հակառակությունից:

Հեղինակն անուղղակի կերպով ներբողում է քրիստոնեական հյուրասիրության ոգին, որ արտահայտությունն է սիրո և հավատի ճշմարտության:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1-4):
- Գայոսը գովաբանվում է (5-8):
- Դիոտրեֆեսը քննադատվում է (9-10):
- Դեմետրիոսը հանձնարարվում է (11-12):
- Վերջաբան (13-15):

1

Ողջույն

¹ Ես՝ Երեցս, գրում եմ քեզ, սիրելի՛ Գայոս, որին սիրում եմ ճշմարտապես:՝

² Սիրելի՛ս, աղոթում եմ, որ հաջողություն ունենաս քո բոլոր գործերում և առողջ լինես մարմնով, ինչպես որ առողջ ես հոգով:

Գայոսի հավատարմությունը

³ Չափազանց ուրախացա, երբ մեր եղբայրները եկան և վկայեցին, թե ճշմարիտ հավատին վայել ինչպիսի՛ կյանք ես ապրում, ինչպես արդեն գիտեի, որ ապրում ես:

⁴ Ինձ համար չկա ավելի մեծ ուրախություն, քան լսել, որ իմ որդյակներն ապրում են ճշմարիտ հավատի համաձայն:

⁵ Սիրելի՛ս, դու ըստ քո հավատի ես անում, ինչ որ անում ես հավատացյալ եղբայրներին, նույնիսկ անձանոթներին: ⁶ Նրանք են, որ եկեղեցու առաջ վկայեցին քո ցուցաբերած սիրո մասին: Խնդրեմ, տո՛ւր նրանց, ինչ որ պետք է, և նրանց ճանապարհ զգի՛ր այնպես, ինչպես վայել է Աստծու գործին ծառայողներին:՝

⁷ Որովհետև նրանք Քրիստոսի անունը տարածելու ելան՝ առանց հեթանոսներից որևէ օգնություն ակնկալելու: ⁸ Ուրեմն մեր պարտականությունն է ընդունել այդպիսիներին, որպեսզի գործակից եղած լինենք ճշմարտության համար նրանց տարած աշխատանքին:

Դիոտրեֆեսի և Դեմետրիոսի մասին

¹ Գրծ 19.29, Հո 16.23, Ա Կր 1.14:

⁶ Ակնարկությունը վերաբերում է այն տեղական եկեղեցուն, որին պատկանում է նամակագիրը (տե՛ս հմր 3):

⁹ Այս մասին մի նամակ էի գրել ձեր եկեղեցուն, բայց Դիոտրեֆեսը, որ ուզում է միակ դեկավարը լինել, մերժեց մեզնից որևէ հրահանգ ստանալ: ¹⁰ Դրա համար էլ, երբ որ գամ, պիտի հիշեցնեմ նրա արածները, մեր հասցեին արած նրա չարամիտ զրպարտությունները: Եվ դեռ դրանով էլ չբավարարվելով՝ ոչ միայն ինքը չի ընդունում մեր կողմից ուղարկված եղբայրներին, այլև ընդունողներին էլ արգելք է լինում և մինչև իսկ նրանց արտաքսում է եկեղեցուց:

¹¹ Սիրելի՛ս, չարը թող օրինակ չլինի քեզ, այլ բարո՛ւց օրինակ վերցրու, որովհետև ով բարին է գործում, Աստծուց է ծնված, մինչդեռ ով չարիք է գործում, նա Աստծուն երբեք չի տեսել:

¹² Գալով Դեմետրիոսին՝ բոլորն էլ լավ վկայություն են տալիս նրա մասին, թե՛ եկեղեցին և թե՛ ճշմարտությունն ինքը: Մենք էլ ենք վկայում նրա մասին, և դու գիտես, որ մեր վկայությունը ճշմարիտ է:

Վերջին բարևներ

¹³ Շատ բան ունեմ քեզ ասելու, բայց չեմ ուզում թղթին ու թանաքին հանձնել: ¹⁴ Հույս ունեմ, որ շուտով կգամ, կտեսնեմ քեզ, և մենք դեմառդեմ կխոսենք:

¹⁵ Խաղաղությո՜ւն քեզ: Այստեղի քո բարեկամները բարևում են քեզ: Դո՛ւ էլ բարևիր մեր բարեկամներին, յուրաքանչյուրին՝ առանձին:

JUD

ՀՈՒԴԱ

ՀՈՒԴԱ ՏՅԱՌՆԵՂԲՈՐ

ԸՆԴՀԱՆՆՄԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Հուդա Տյառնեղբոր նամակն ուղղված է ոչ թե քրիստոնեական առանձին մի համայնքի, այլ առհասարակ բոլոր քրիստոնյաներին:

Իր այս կարճ նամակով, որի բովանդակությունը հիշեցնում է Պետրոս առաքյալի երկրորդ նամակը, հեղինակը նրա նման պայքարում է Ավետարանը չարափոխող, սխալ և վնասակար ուսուցումներ տարածող մոլորեցուցիչների դեմ, որոնք ապրում են անբարո կյանքով: Բուռն կերպով դատապարտելով նրանց՝ Հուդան քաջալերում է իր ընթերցողներին և կոչ ուղղում, որ պայքարեն «հավատի համար, որ մեկընդմիջտ ավանդվեց ձեզ՝ Աստծու ընտրյալներիդ» (3): Նամակն ավարտվում է հորդորներով և գեղեցիկ մի փառաբանությամբ:

ՆԱՄԱԿԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1-2):
- Կեղծ ուսուցիչների նկարագիրը, նրանց ուսուցումն ու անկումը (3-16):
- Հավատը պահելու զգուշություն (17-23):
- Օրհնություն (24-25):

¹² Հուն. և հայ. շատ ձեռ. չունեն «թե՛ եկեղեցին»:

¹³ «Թղթին ու թանաքին». հուն. ունի «թանաքին ու գրչին» [բոց՝ «եղեգին»]:

¹⁵ «Ըն բարեկամները». գրբ. ունի «քո սիրելիները»:

Ողջուն

¹ Ես՝ Հուդաս, Հիսուս Քրիստոսի ծառաս և Հակոբոսի եղբայրս, գրում եմ ձեզ՝ բոլոր ազգերիդ, որոնց Հայր Աստված սիրեց ու ընտրեց, և Հիսուս Քրիստոսը պահպանեց։*

² Թող Աստված իր ողորմությունը, խաղաղությունն ու սերը առատացնի ձեզ վրա:

Պայքարեցեք ստություն սովորեցնողների դեմ

³ Սիրելիներ, միշտ էլ ցանկանում էի գրել ձեզ մեր ընդհանուր փրկության մասին: Բայց այժմ անհրաժեշտ համարեցի գրել և խնդրել ձեզ, որ պայքարեք հավատի համար, որ մեկընդմիջտ ավանդվեց ձեզ՝ Աստծու ընտրյալներիդ, ⁴ որովհետև մի շարք մարդիկ սողոսկել ու մտել են հավատացյալների շարքերը: Անհավատ այդ մարդիկ, մեր Աստծու շնորհը պատմող Ավետարանը չարափոխելով, հարմարեցրին իրենց անբարո ընթացքին և մերժեցին ճանաչել Հիսուս Քրիստոսին՝ որպես միակ և ամենիշխան Տիրոջ: Այդպիսիների ստանալիք դատապարտությունը վաղուց գրված է Սուրբ գրքերում:

⁵ Արդ, ուզում եմ հիշեցնել ձեզ, թեև դուք այդ բոլորը գիտեք, թե ինչպե՛ս Տերն անցյալում՝ իր ժողովրդին Եգիպտոսից փրկելուց հետո, կորստյան մատնեց անհավատներին: ⁶ Հիշեցե՛ք նույնպես, թե նա ինչպե՛ս վարվեց այն հրեշտակների հետ, որոնք, չգոհանալով իրենց տրված իշխանությամբ, դուրս եկան իրենց սահմաններից, և Աստված մշտնջենական կապանքներով նրանց պահում է խավարի մեջ, մինչև որ գա դատաստանի մեծ օրը: ⁷ Հիշեցե՛ք նաև Սողոմոն ու Գոմորը և շրջակա քաղաքները, որոնց բնակիչները նույնպես անհնազանդ գտնվեցին Աստծուն և անձնատուր եղան անբնական կրքերի ու պոռնկության. այժմ նրանք կրում են հավիտենական կրակի դատապարտությունը՝ իբրև օրինակ բոլորի համար:

⁸ Ճիշտ նույն ձևով այս երազատես մարդիկ ևս իրենց մարմիններն են պղծում՝ Աստծու տերությունն արհամարհելով և անարգելով հոգեղեն փառավոր էակներին: ⁹ Նույնիսկ Միքայել հրեշտակապետը, երբ վիճում էր բանասարկու Սատանայի հետ, թե ո՛վ պիտի առնի Մովսեսի մարմինը, չհանդգնեց անարգական բառերով դատապարտել նրան, այլ պարզապես ասաց. «Թող Տե՛րը պատժի քեզ»: * ¹⁰ Մինչդեռ այս մարդիկ իրենց չիմացած բաներն են անարգում: Սրանց ամբողջ իմացածը իրենց

*1 Հուն. չունի «[բոլոր] ազգերիդ»: «Միրեց». մի շարք ձեռ. ունեն «սրբեց»: «Ընտրեց». հուն. ունի «կանչեց» [=իր մոտ հրավիրեց]:

*1 Ստ 13.55, Մր 6.3:

*4 «Մերժեցին ճանաչել Հիսուս Քրիստոսին, որպես միակ և ամենիշխան Տիրոջ». այլ թրգմ «մերժեցին ճանաչել միակ Ամենիշխանին [=Հորը] և մեր Տեր Հիսուս Քրիստոսին»: «Գրված է [Սուրբ գրքերում]». գրք. ունի «կատարված է» կամ «հասած է իր լրումին»:

*5 ա Ելք 12.51: բ Թվ 14.29-30:

*7 Ծն 19.1-24:

*9 Այս դրվագը քաղված է «Վերափոխումն Մովսեսի» կոչված գրվածքից, որ Աստվածաշնչի մաս չի կազմում:

*9 ա Դն 10.13, 21, 12.1, Հտ 12.7: բ Բ Օր 34.6: գ Զք 3.2:

բնագրական ցանկություններն են, որոնց իրենք հետևում են անբան անասունների պես, և որոնք դառնալու են իրենց կործանման պատճառը:

¹¹ Վա՛յ նրանց, որոնք ընթացան Կայենի գնացած ճանապարհով: Դրամի սիրուց նրանք մոլորության մեջ ընկան Բաղասամի պես և իրենց ապստամբության համար էլ պիտի կորչեն Կորխի նման: ¹² Նրանց ներկայությունը արատավորում է ձեր սիրո հավաքույթի սեղանները, ուր նրանք անպատկառորեն գալիս են խրախճանակից լինելու ձեզ՝ միայն իրենց փորը լցնելու համար: Նրանք նման են հողմերից քշվող այն ամպերին, որոնք անձրև չեն տեղում, կամ նման են այն ծառերին, որոնք պտուղ չեն տալիս նույնիսկ աշնանը. նրանք, արմատախիլ եղած լինելով, մեռած են կրկնակի:

¹³ Այո՛, նրանք նմանվում են ծովի կատաղի ալիքների, որոնց ամոթալի գործերը միշտ մակերես են ելնում փրփուրի պես: Նրանք աստղերի թռչող բեկորներ են, որոնց տեղն իրենց վերապահված հավիտենական թանձր խավարն է:

¹⁴ Հենց սրանց համար է մարգարեացել Ենոքը՝ Ադամից սկսած յոթերորդ նահապետը՝ ասելով. «Ահավասիկ գալիս է Տերն իր բյուրավոր սուրբ հրեշտակներով՝ * * ¹⁵ դատաստանի ենթարկելու նրանց բոլորին, դատապարտելու նրանց իրենց գործած բոլոր ամբարիշտ գործերի և լիրբ արտահայտությունների համար, որ նրանք՝ այդ անհավատ մեղավորները, արեցին նրա դեմ»: ¹⁶ Միշտ տրտնջացող և քննադատող այս մարդիկ վազում են իրենց սեփական ցանկությունների հետևից, պոռոտախոսություն են անում և սրան-նրան գովասանք շոայլում իրենց սեփական շահի համար:

Հորդոր հավատացյալներին

¹⁷ Բայց դուք, սիրելիներ՛ր, հիշեցե՛ք այն խոսքերը, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի բոլոր առաքյալները նախապես հայտնեցին ձեզ՝ ¹⁸ ասելով. «Վերջին ժամանակներում կգան ամեն ինչ արհամարհող մարդիկ, որոնք կառաջնորդվեն իրենց ամբարիշտ ցանկություններով»: ¹⁹ Ահա հենց սրանք են, որ բաժանումներ առաջ կբերեն ձեր մեջ, մարդիկ, որոնք առաջնորդվում են մարմնական ցանկություններով և իրենց մեջ չունեն Սուրբ Հոգին:

²⁰ Սակայն դուք, սիրելիներ՛ր, ձեր սուրբ հավատով օգնեցե՛ք միմյանց հոգևոր աճին: Աղոթեցե՛ք Սուրբ Հոգու օգնությամբ ²¹ և ձեզ պահեցե՛ք Աստծու սիրո մեջ՝ սպասելով, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, իր ողորմությամբ հավիտենական կյանքը տա ձեզ:

²² Ամրապնդեցե՛ք հավատի մեջ կասկածներ ունեցողներին: ²³ Փրկեցե՛ք ուրիշներին՝ խլելով նրանց դատապարտության կրակից: Ողորմությո՛ւն ցուցաբերե՛ք նաև նրանց, որոնք մեղքերի մեջ են: Բայց, զգո՛ւյշ, ասեցե՛ք նրանց մեղսալից կյանքը:

¹¹ 11 ա Մն 4.3-8: բ Թվ 22.1-35: գ Թվ 16.1-35:

¹⁴ «Սուրբ հրեշտակներով». հուն. և հայ. շատ ձեռ. ունեն «իր սրբերով»:

¹⁴⁻¹⁵ «"Ահավասիկ գալիս է Տերը..... արեցին նրա դեմ"». այս մեջբերումը վերցված է Սուրբ գրքի կանոնի մաս չկազմող «Գիրք Ենոքի» կոչված գրվածքից (1.9):

¹⁴ Մն 5.18, 21-24:

¹⁸ Բ Պտ 3.3:

²² «Ամրապնդեցե՛ք [հավատի մեջ] կասկածներ ունեցողներին». մի շարք ձեռ. ունեն «հանդիմանեցե՛ք երկմիտներին [կամ վիճողներին]», գրք. ունի «հանդիմանեցե՛ք դատապարտվածներին»:

Փառաբանություն

²⁴ Արդ, նրան, ով կարո՛ղ է ձեզ փրկել անկումներից, պահել անարատ ու անբիծ և իր փառքի առաջ կանգնեցնել անխառն ուրախությամբ լի,²⁵ միա՛կ Աստծուն, որ մեր Փրկիչն է, փա՛ռք տվեք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Նրա՛նն են փառքը, մեծությունը, գոռությունն ու իշխանությունը թե՛ բոլոր ժամանակներից առաջ, թե՛ այժմ և թե՛ գալիք բոլոր ժամանակներում: Ամեն:

REV

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼԻ

Այս գիրքը գրել է Հովհաննես առաքյալը, որը միաժամանակ իր անունը կրող Ավետարանի հեղինակն է: Սա հայտնությունների մի շարք է, որ Քրիստոսը կատարում է, որպեսզի «իր ծառաներին ցույց տա, թե շուտով ի՛նչ է պատահելու» (1.1): Հովհաննեսն այս գիրքը գրել է Պատմոս կղզում, ուր աքսորվել էր Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեության դեմ սկսված հալածանքների ժամանակ՝ Քրիստոսի Ավետարանը քարոզելու համար: Նրա գիրքն ուղղված է Փոքր Ասիայի արևմտյան ափերին գտնվող յոթ եկեղեցիներին:

Քրիստոնյաները հալածվում էին, որովհետև նրանք միակ Տեր և Աստված էին ճանաչում Հիսուս Քրիստոսին: Արդ, հեղինակի գլխավոր մտահոգությունն է եղել ընթերցողներին հույս և քաջալերանք ներշնչել և հորդորել, որ հավատարիմ մնան հալածանքների և չարչարանքների ընթացքում:

Գրքի մեծագույն բաժինը կազմում են մի շարք հայտնություններ և տեսիլքներ՝ ներկայացված խորհրդանշական լեզվով, որ հասկանալի էր այդ օրերի քրիստոնյաներին, բայց ուրիշների համար մնում էր խորհրդավոր: Ինչպես համանվագում կրկնվող մայր եղանակը, գրվածքի գլխավոր բնաբանը կրկնվում է զանազան ձևերով և զանազան տեսիլքների մեջ: Հակառակ նրան, որ մեկնաբանությունների մեջ կան մանրամասնությունների տարբերություններ, սակայն գլխավոր բնաբանը հստակ է. Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով Աստված վերջնականապես և ամբողջական կերպով պարտության է մատնելու իր թշնամիներին, ներառյալ Սատանային, և իր հավատարիմ ժողովրդին վարձատրելու է նոր երկնքի և նոր երկրի օրհնություններով, երբ հաղթանակն ամբողջական լինի:

Գիրքը բնավ նպատակ չունի վերահաս մի վախճանի սարսափով համակել հավատացյալներին: Ընդհակառակը, հեղինակի նպատակն է նրանց վստահությունն ներշնչել Տիրոջ երկրորդ գալստյան կապակցությամբ, որ ազատագրության և փրկության ցանկալի պահն է լինելու: Այդ իսկ պատճառով գիրքը փակվում է հարություն առած Փրկչի ազդարարող խոստումով, թե՛ «Ահա գալիս եմ շուտով», և այդ պահի սպասումով լեցուն եկեղեցու հետևյալ մաղթանքով. «Ամեն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս Քրիստոս»:

²⁴ Հուն. և հայ. շատ ձեռ. չունեն «ու անբիծ»:

ԳՐՔԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան (1.1-8):
- Առաջին տեսիլքը և յոթ եկեղեցիներին ուղղված նամակներ (1.9-3.22):
- Յոթ կնիքներով կնքված գիրքը (4.1-8.1):
- Յոթ փողերը (8.2-11.19):
- Վիշապը և երկու գազանները (12.1-13.18):
- Այլ տեսիլքներ (14.1-15.8):
- Աստծու բարկության յոթ սկավառակները (16.1-21):
- Բաբելոնի ավերումը և գազանի, սուտ մարգարեի և Սատանայի պարտությունը (17.1-20.10):
- Վերջին դատաստան (20.11-15):
- Նոր երկինք, նոր երկիր և նոր Երուսաղեմ (21.1-22.5):
- Եզրակացություն (22.6-21):

1

Նախաբան

¹ Սա այն հայտնությունն է, որ կատարեց Հիսուս Քրիստոսը: Աստված այս հայտնությունը տվեց Քրիստոսին, որպեսզի նա իր ծառաներին ցույց տա, թե շուտով ի՛նչ է պատահելու: Քրիստոսն իր հրեշտակի միջոցով այն հայտնեց իր ծառային՝ Հովհաննեսին, ² որը վկայեց իր տեսած բոլոր բաների մասին:

Այս վկայությունը ձեզ է բերում Աստծու խոսքը և Հիսուս Քրիստոսի տված վկայությունը: ³ Երանի՛ նրան, ով կարդում է այն, ինչ գրված է այս գրքում, և երանի՛ նրանց, ովքեր լսում ու պահում են այս մարգարեության պատգամները, որովհետև ժամանակը մոտեցել է:

Ողջույն յոթ եկեղեցիներին

⁴ Հովհաննեսից՝ Ասիա նահանգում գտնվող յոթ եկեղեցիներին: Շնո՛րհ և խաղաղություն և ձեզ նրանից, որ է, որ էր և որ գալու է, և այն յոթ հոգիներից, որոնք Աստծու գահի առջև են, ⁵ և Հիսուս Քրիստոսից՝ հավատարիմ վկայից, որը մեռելներից հարություն առնողներից առաջինն է և երկրի թագավորությունների Իշխանը: Նա սիրեց մեզ և իր արյունով փշրեց մեր մեղքերի շղթաները՝ ⁶ ու մեզ

¹1.2 «Իր տեսած բոլոր բաների մասին» խոսքը վերաբերում է Հովհաննեսի ունեցած տեսիլքին և այդ տեսիլքով իրեն հայտնված բոլոր բաներին (տե՛ս հմր 10): «Բոլոր բաների մասին» մի քանի ձեռ. ավելացնում են «ինչ որ պատահում է այժմ և ինչ որ պատահելու է այսուհետև»:

¹1.4 «Ասիա նահանգը» Փոքր Ասիայի հարավարևմտյան մասը կազմող հռոմեական նահանգն էր, որի մայրաքաղաքն էր Եփեսոսը: Ակնարկված յոթ եկեղեցիներն իրենց անուններով հիշատակված են 11-րդ համարում:

¹1.4 ա Ելք 3.14: ք Հտ 4.5:

¹1.5 «Մեռելներից հարություն առնողներից առաջինն է» բոց՝ «անդրանիկն է մեռելների»: «Իր արյունով» արյունն Աստվածաշնչում կյանք է խորհրդանշում (հմմտ Օն 9.4-5 նն), իսկ թափված արյունը՝ մահ կամ զոհաբերում, ինչպես ակնարկվում է այստեղ Հիսուսի զոհաբերական մահը խաչի

դարձրեց քահանաների մի թագավորություն՝ ծառայելու Աստծուն՝ իր Հորը: Նրան փառք և գորություն և հավիտյանս հավիտենից. ամեն:՝

⁷ Ահա նա գալիս է ամպերի վրա: Ամեն մարդ կտեսնի նրան, նաև նրանք, որ խոցեցին նրան: Երկրի բոլոր ժողովուրդները կողբան նրա վրա: Այո՛, թող այդպես լինի:՝ ⁸ «Ես եմ Ալֆան, և ես եմ Օմեգան», այսինքն՝ Սկիզբն ու Վախճանը,- ասում է Տեր Աստվածը,- նա, որ է, որ էր և որ գալու է, ինքը՝ Ամենակալը:՝

Հովհաննեսին հայտնված Հիսուսի տեսիլքը

⁹ Ես՝ Հովհաննեսս, որ ձեր եղբայրն եմ, Հիսուս Քրիստոսին միացած լինելով՝ մասնակից եմ ձեր նեղությանը, արքայությանը, հույսին և համբերությանը: Աստծու խոսքի և Հիսուս Քրիստոսի մասին վկայելու պատճառով աքսորվել էի Պատմոս կոչված կղզին:՝ ¹⁰ Եվ ահա մի կիրակի օր ես, որ լցված էի Սուրբ Հոգով, իմ հետևից լսեցի փողի հնչյունի նման մի ուժեղ ձայն,՝ ¹¹ որ ասում էր ինձ.

- Ինչ որ տեսնում ես, գրի՛ առ մի գրքում և գիրքն ուղարկի՛ր յոթ եկեղեցիներին, որոնք գտնվում են Եփեսոսում, Չմյուռնիայում, Պերգամոնում, Թիատիրում, Սարդիկեում, Ֆիլադելֆիայում և Լավոդիկիայում:

¹² Ես շրջվեցի՝ տեսնելու համար, թե ո՛վ է ինձ հետ խոսողը, և տեսա յոթ ոսկե ճրագարաններ: ¹³ Այդ յոթ ճրագարանների միջև տեսա Մարդու Որդուն նմանվող մեկին՝ երկար պատմուճան հագած և կրծքին ոսկե գոտի կապած:՝ ¹⁴ Նրա գլխի մազերը բրդի պես ճերմակ էին, ձյան նման սպիտակ, աչքերը՝ կրակի բոցի պես.՝ ¹⁵ նրա ոտքերը նման էին բոցավառ հնոցից ելած հրաշեկ անագապղնձի, իսկ ձայնը՝ առատահոս ջրերի շառաչի:՝ ¹⁶ Նա իր աջ ձեռքում բռնել էր յոթ աստղեր, և նրա բերանից ելնում էր սրված երկսայրի մի սուր: Նրա դեմքը փայլում էր կեսօրվա արեգակի նման:՝ ¹⁷ Երբ տեսա նրան, մեռելի նման ընկա նրա ոտքերի առջև: Նա իր աջ ձեռքը դրեց ինձ վրա և ասաց.

վրա (հմմտ Կդ 1.20):

1.5 ա Ես 55.4: **բ** Սդ 89.27:

1.6 «Քահանաների մի թագավորություն». տե՛ս Ա Պտ 2.9- ի ծնթ:

1.6 Ելք 19.6, Հտ 5.10:

1.7 ա Դն 7.13, Մտ 24.30, Սր 13.26, Ղկ 21.27, Ա Թս 4.17: **բ** Ջք 12.10, Հհ 19.34, 37: **գ** Ջք 12.10, Մտ 24.30:

1.8 Հուն. «Ալֆան և Օմեգան» (հայ. "Այբը և Ֆեն"), այբուբենի տառերի «առաջինն ու վերջինը», «սկիզբն ու վախճանը», ինչպես ցույց են տալիս նաև 21.6-ը և 22.13-ը:

1.8 ա Հտ 22.13: **բ** Ելք 3.14:

1.9 «Պատմոսը» Եփեսոսից շուրջ 100 կմ հեռու գտնվող ժայռոտ փոքրիկ կղզի է 3/4գեյան ծովում. անցյալում հայտնի էր որպես աքսորավայր: Եվսեբիոս պատմիչն իր «Եկեղեցական պատմություն» գրքում հիշում է, որ Հովհաննեսն այս կղզու վրա ապրած իր աքսորական կյանքից ազատվեց Ներվա կայսեր օրոք (ՔՀ 96-98թթ.):

1.10 «Մի կիրակի օր». բոց՝ «Տիրոջ օրը»:

1.13 ա Դն 7.13: **բ** Դն 10.5:

1.14 Դն 7.9:

1.14-15 Դն 10.6:

1.15 Եզկ 1.24, 43.2, Բ Եզր 6.17:

1.16 «Երկսայրի մի սուր». սուրն աստվածային դատաստանի խորհրդանիշ է (հմմտ Ես 49.2, Երբ 4.12):

- Մի՛ վախեցիր: Ես եմ Սկիզբը և ես եմ Վախճանը:՝¹⁸ Ես եմ կենդանի եղողը և ես եմ, որ մեռա, և ահավասիկ կենդանի եմ հավիտյանս հավիտենից: Իմ ձեռքում են մահվան ու դժոխքի բանալիները:՝¹⁹ Ուրեմն գրի՛ր, ինչ որ տեսնում ես, ինչ որ պատահում է այժմ, և ինչ որ պատահելու է այսուհետև:՝²⁰ Յոթ աստղերի, որ դու տեսնում ես իմ աջ ձեռքում, և յոթ ոսկե ճրագարանների իմաստը հետևյալն է՝ յոթ աստղերը յոթ եկեղեցիների հրեշտակներն են, իսկ յոթ ճրագարանները՝ յոթ եկեղեցիները:

2

Նամակ Եփեսոսի եկեղեցուն

¹ - Գրի՛ր Եփեսոսի եկեղեցու հրեշտակին.

«Այսպես է ասում նա, որ իր աջ ձեռքում ունի յոթ աստղերը և շրջում է յոթ ոսկե ճրագարանների միջև:

² Գիտեմ քո աշխատանքը, քո վաստակը և քո համբերությունը: Գիտեմ, որ չար մարդկանց չես կարող տանել: Դու փորձեցիր նրանց, որոնք իրենք իրենց առաքյալ են կոչում, սակայն չեն, ու գտար, որ նրանք ստախոս են:՝³ Դու համբերեցիր և տառապեցիր ինձ համար ու տեղի չտվեցիր:՝⁴ Բայց հիմա դժգոհ եմ քեզանից, որովհետև առաջվա նման ինձ չես սիրում:՝⁵ Հիշի՛ր, ուրեմն, թե ի՛նչ վիճակից ընկար այստեղ, ապաշխարի՛ր և վերադարձի՛ր քո նախկին գործերին, ապա թե ոչ, եթե չապաշխարես, շուտով կգամ և կվերցնեմ քո ճրագարանն իր տեղից:՝⁶ Միակ նպաստավոր բանը, որ դու ունես, այն է, որ ասում ես Նիկողայոսի հետևորդների գործերը, որ ես էլ եմ ասում:՝

⁷ Ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ի՛նչ է ասում եկեղեցիներին. "Ով որ հաղթի, ես նրան իրավունք կտամ ճաշակելու կյանքի ծառից, որը գտնվում է Աստծու դրախտում"»:

Նամակ Զմյուռնիայի եկեղեցուն

⁸ - Գրի՛ր Զմյուռնիայի եկեղեցու հրեշտակին.

«Այսպես է ասում Առաջինը և Վերջինը, նա, որ մեռավ և վերակենդանացավ:՝»

⁹ Գիտեմ քո գործերը, քո նեղությունը և աղքատությունը: Աղքատ ես երևում, բայց դու հարուստ ես: Գիտեմ այն անարգական խոսքերը, որ ասում են նրանք, որոնք իրենց հրեա են համարում, սակայն չեն. նրանք Սատանայի հետևորդներ են:՝¹⁰ Մի՛ վախեցիր այն չարչարանքների համար, որ կրելու ես: Բանասարկուն ձեզնից ոմանց ահա բանտ կնետի՝ ձեզ փորձելու համար, և ձեր նեղությունը տասը օր է տևելու: Հավատարի՛մ

^{1.17} Ես 44.6, 48.12, Բ Եզր 10.30, Հտ 2.8, 22.13:

^{2.6} «Նիկողայոսի հետևորդների» աղանդի և նրանց բարոյական ուսուցումների մասին ոչինչ չգիտենք, բացի այս գլխում եղած ակնարկություններից (տե՛ս հմր 2.14-15, 20 և 24), որոնք ցույց են տալիս, թե այդ աղանդը շղթայված է եղել հեթանոսական ըմբռնումներով:

^{2.7} ա Ծն 2.9, Բ Եզր 2.12, Հտ 22.2: ք Եզկ 28.13, 31.8 [LXX]:

^{2.8} «Առաջինը և Վերջինը». գրք. ունի «Անսկիզբը և Անվախճանը»:

^{2.8} Ես 44.6, 48.12, Հտ 1.17, 22.13:

^{2.9} «Սատանայի հետևորդներ». բոց՝ «Սատանայի ժողով»:

եղիր ինձ, եթե նույնիսկ պետք է մեռնել, և ես քեզ կյանքի պսակը կտամ:՝

¹¹ Ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ի՛նչ է ասում եկեղեցիներին. "Ով որ հաղթի, երկրորդ մահից չի վնասվի"»:

Նամակ Պերգամոնի եկեղեցուն

¹² - Գրի՛ր Պերգամոնի եկեղեցու հրեշտակին.

«Այսպես է ասում նա, որ սրված երկսայրի սուրն ունի:

¹³ Գիտեմ քո գործերը և գիտեմ, որ բնակվում ես այնտեղ, որտեղ Սատանան իր աթոռն ունի: Բայց դու պահեցիր իմ անունը և իմ հանդեպ քո ունեցած հավատը չուրացար, նույնիսկ երբ իմ հավատարիմ վկան՝ Անտիպասը, սպանվեց ձեր առաջ այնտեղ, որտեղ Սատանան է բնակվում:՝ ¹⁴ Բայց ես քո նկատմամբ մի շարք դժգոհություններ ունեմ. քո շարքերում դու ունես Բաղասամի վարդապետության հետևորդներ, այն Բաղասամի, որ Բաղակին սովորեցրեց Իսրայելի որդիներին մեղքի մղել, որպեսզի նրանք կուռքերին զոհված միս ուտեն և պոռնկություն անեն:՝

¹⁵ Նույնպես քեզ մոտ էլ կան Նիկողայոսի վարդապետության հետևորդներ:՝ ¹⁶ Արդ, ապաշխարի՛ր, ապա թե ոչ շուտով կգամ և իմ բերանից ելնող սրով կպատերազմեմ նրանց դեմ:

¹⁷ Ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ի՛նչ է ասում եկեղեցիներին. "Ով որ հաղթի, նրան ճաշակել կտամ թաքնված մանանայից, ինչպես նաև կտամ այն մաքուր գիրքը, որտեղ գրված է մի նոր անուն, որ բացի ստացողից, ոչ ոք չգիտի"»:

Նամակ Թիատիրի եկեղեցուն

¹⁸ - Գրի՛ր Թիատիրի եկեղեցու հրեշտակին.

«Այսպես է ասում Աստծու Որդին, որի աչքերը նման են կրակի բոցի, իսկ ոտքերը՝ հրաշեկ անագապղնձի:

¹⁹ Գիտեմ քո գործերը, քո սերը, հավատը և համբերությամբ կատարած քո ծառայությունը. և գիտեմ, որ քո վերջին գործերն ավելի շատ են, քան նախկինները:

²⁰ Բայց ես քո նկատմամբ դժգոհություն ունեմ, քանի որ դու հանդուրժում ես Հեզաբելին, այն կնոջը, որ ինքն իրեն մարգարեուհի է համարում: Նա մոլորեցնում է

Չ.10 «Բանասարկուն», որ նշ է «չարախոսը, զրպարտիչը», Սատանան է: «*Տաք օր*» արտահայտությունն այստեղ նշում է հարաբերաբար շատ կարճ մի տևողություն (հմմտ Ծն 24.55: Դն 1.12): «*Կյանքի պսակը*» ակնարկությունը վերաբերում է հավիտենական կյանքին, որ Քրիստոսին հավատարիմ մարդիկ վաստակում են մրցադաշտում շահած դափնեպսակի նման (հմմտ Ա Կր 9.24: Փպ 3.12 և 14: Տե՛ս նաև 3.11, 4.4 և 10, 6.2 նն):

Չ.11 Հտ 20.14, 21.8:

Չ.13 «*Այնտեղ, որտեղ Սատանան է բնակվում*» ակնարկությունը վերաբերում է նույն Պերգամոն քաղաքին, որը բոլոր հեթանոսական պաշտամունքների, ինչպես նաև կայսեր պաշտամունքի կենտրոնն էր:

Չ.14 ա Թվ 22.5, 7, 31.16, Բ Օր 23.4: ք Թվ 25.1-3:

Չ.15 «*Նիկողայոսի վարդապետության*». մի քանի ձեռ. ավելացնում են «*որ էս ատում եմ*»:

Չ.17 «*Մաքուր գիրքը*». հուն. ունի «*սպիտակ մի խճաքար*»:

Չ.17 ա Ելք 16.14-15, 16.33-34, Հհ 6.48-50: ք Ես 62.2, 65.15:

իմ ծառաներին՝ նրանց սովորեցնելով պոռնկություն անել և կուռքերին զոհված միս ուտել:՝²¹ Ես նրան ժամանակ տվեցի, որ ապաշխարի իր պոռնկության համար, բայց նա չապաշխարեց: ²² Ուստի, ահավասի՛կ, նրան հնոց կնետեմ, իսկ նրա գործակիցներին, որոնց հետ նա շնացավ, մեծամեծ նեղությունների մեջ կզգեմ, եթե չապաշխարեն իրենց կատարած գործերի համար:՝²³ Չարաչար կսպանեմ նրա որդիներին, և բոլոր եկեղեցիները կիմանան, որ ե՛ս եմ, և ճանաչում եմ մարդկանց ցանկություններն ու մտածումները և յուրաքանչյուրին հատուցում ըստ իր գործերի:»՝²⁴

²⁴ «Գալով Թիատիրում գտնվող մնացած հավատացյալներիդ, որ չհետևեցիք այդ վարդապետությանը և չճանաչեցիք, ինչպես ասում են՝ "Մատանայի ծածուկ խորհուրդները, ասում եմ ձեզ, որ ուրիշ բեռ չեմ դնելու ձեզ վրա,"²⁵ սակայն ինչ որ ունեք, հաստատո՛ւն պահեցեք, մինչև որ ես գամ: ²⁶ Ով որ հաղթի ու շարունակի կատարել, ինչ որ ես եմ ուզում, նրան իշխանություն կտամ ազգերի վրա,"²⁷⁻²⁸ այնպես, ինչպես որ ես ինքս էլ իշխանությունն ստացա իմ Հորից: Նա կհովվի երկաթե մականով և կփշրի նրանց կավե ամանների նման: Եվ ես նրան եմ տալու առավոտյան աստղը:

²⁹ Ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ի՛նչ է ասում եկեղեցիներին»:

3

Նամակ Սարդիկեի եկեղեցուն

1- Գրի՛ր Սարդիկեի եկեղեցու հրեշտակին. «Այսպես է ասում նա, ով ունի Աստծու յոթ հոգիները և յոթ աստղերը: Գիտեմ քո գործերը և գիտեմ, որ միայն անունով ես ողջ, բայց իրականում մեռած ես: ² Արթո՛ւն եղիր և գորացրո՛ւ քո մնացած անդամները նախքան նրանց մահանալը, որովհետև տեսնում եմ, որ քո գործերը կատարյալ չեն Աստծու աչքին: ³ Հիշի՛ր, ինչ որ լսեցիր և ընդունեցիր. պահի՛ր դրանք և ապաշխարի՛ր: Եթե արթուն չմնաս, կգամ գողի նման, և դու չես իմանա, թե որ ժամին կլինի իմ գալուստը քեզ մոտ:՝⁴ Բայց Սարդիկեում կան քիչ թվով մարդիկ, որոնք չկեղտոտեցին իրենց հագուստները. նրանք կշրջեն ինձ հետ սպիտակ հագուստներով, որովհետև

^{2.20-23} «*Հեզաբել*» անունը, որ այստեղ վստահաբար խորհրդանշական մի անուն է, վերցված է Թագավորների գրքերից (հմմտ Գ Թգ 16.31, 19.1-2: Դ Թգ 9.22 և 30), որտեղ Հեզաբել թագուհին ներկայանում է որպես հեթանոսական պաշտամունքների և ապականված բարոյականության հովանավոր: Հավանաբար Նիկողայոսի հետևորդների աղանդում հեղինակություն վայելող մի կնոջ մասին է, որի ինքնությունն անձանոթ է մեզ:

^{2.20} Գ Թգ 16.31, Դ Թգ 9.22, 30:

^{2.22} «*Հնոց կնետեմ*». հուն. ունի «*անկողնուն կգամեմ*»:

^{2.23} «*Նրա որդիներին*» ակնարկությունը վերաբերում է Հեզաբելի հետևորդներին կամ նրա օրինակին հետևող ուրիշ մարդկանց:

^{2.23} ա Մղ 7.9, Եր 17.10: բ Մղ 62.12:

^{2.24} «*Մատանայի ծածուկ խորհուրդները*». այս ակնարկությունը վերաբերում է այն գաղտնի ուսուցումներին, որ Նիկողայոսի աղանդի հետևորդներն էին ստանում:

^{2.26-27} Մղ 2.8-9 [LXX]:

^{3.3} Մտ 24.43-44, Ղկ 12.39-40, Հտ 16.15:

արժանի են:՝ ⁵ Ով որ հաղթի, այսպես սպիտակ կհագնի, և նրա անունը չեմ ջնջի կյանքի գրքից, և ես իմ Հոր ու նրա հրեշտակների առաջ ինձ հետևողը կդավանեմ նրան:՝

⁶ Ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ի՛նչ է ասում եկեղեցիներին»:

Նամակ Ֆիլադելֆիայի եկեղեցուն

⁷ - Գրի՛ր Ֆիլադելֆիայի եկեղեցու հրեշտակին.

«Այսպես է ասում Սուրբը, Ճշմարիտը, նա, ով ունի Դավթի բանալին. երբ բացի, չկա մեկը, որ փակի այն, և երբ փակի, չկա մեկը, որ բացի այն:՝»

⁸ Գիտեմ քո գործերը: Ահա քո առաջ բանալ տվեցի դուրը, որը ոչ ոք չի կարողանալու փակել: Գիտեմ, որ մի քիչ զորություն ունես. պահել ես իմ խոսքերը և չես ուրացել ինձ:

⁹ Ահավասիկ քեզ եմ հանձնելու Մատանայի հետևողներից մի շարք մարդկանց, որոնք իրենց հրեա են համարում, բայց իրականում չե՛ն. նրանք ստում են: Այնպես պիտի անեմ, որ նրանք զան ու երկրպագեն քո ոտքերի առաջ և իմանան, որ ես սիրեցի քեզ:՝ ¹⁰ Եվ որովհետև դու պահել ես իմ խոսքը, որով համբերել սովորեցիր, ես էլ քե՛զ կպահեմ այն նեղության ժամին, որ կգա ամբողջ տիեզերքի վրա՝ փորձության ենթարկելու երկրի երեսին գտնվող բոլոր բնակիչներին: ¹¹ Ահա շուտով գալիս եմ.

ամո՛ւր պահիր, ինչ որ ունես, որպեսզի ոչ ոք քո ձեռքից չառնի հաղթանակի պսակը: ¹² Ով որ հաղթի, նրան կդարձնեմ իմ Աստծու տաճարի սյուներից մեկը, և նա այլևս այնտեղից դուրս չի գա: Նրա վրա կգրեմ իմ Աստծու անունը, ինչպես նաև իմ Աստծու քաղաքի անունը, այսինքն՝ Նոր Երուսաղեմի, որ իջնելու է երկնքից՝ իմ Աստծու մոտից: Եվ նրա վրա կգրեմ նաև իմ նոր անունը:՝

¹³ Ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ի՛նչ է ասում եկեղեցիներին»:

Նամակ Լավոդիկիայի եկեղեցուն

¹⁴ - Գրի՛ր Լավոդիկիայի եկեղեցու հրեշտակին.

«Այսպես է ասում Ամենը՝ հավատարիմ և ճշմարիտ Վկան՝ Աստծու ստեղծագործության Սկիզբը:՝»

¹⁵ Գիտեմ քո գործերը, դու ո՛չ սառն ես, ո՛չ էլ տաք: Պետք է կա՛մ սառը լինեիր, կա՛մ տաք: ¹⁶ Սակայն դու գաղջ ես, ո՛չ տաք ես, ո՛չ էլ սառը. ուստի քեզ դուրս պիտի փսխեմ

^{3.4} «Չկեղտոտեցին իրենց հագուստները». հագուստը նկարագիր է խորհրդանշում: Նրանք, ովքեր նկարագրով մաքուր մնացին, կունենան սպիտակ հագուստ, որը նրանց սրբության և փրկված լինելու մասին է վկայում (հմմտ 3.18, 4.4, 6.11, 7.9, 13, 19.14):

^{3.5} ա Ելք 32.32-33, Սղ 69.28, Հտ 20.12: բ Մտ 10.32, Ղկ 12.8:

^{3.7} «Դավթի բանալին» վստահություն վայելելու և ամբողջական լիազորություն ունենալու խորհրդանիշ է: Այս պատկերով Քրիստոսը հիշեցնում է Հորից ստացած իր բացարձակ իշխանության մասին (հմմտ Մտ 28.18):

^{3.7} Ես 22.22, Հբ 12.14:

^{3.9} ա Ես 49.23, 60.14: բ Ես 43.4:

^{3.12} ա Հտ 21.2: բ Ես 62.2, 65.15:

^{3.14} «Սկիզբը» կամ «գլուխը», այսինքն՝ տերը, իշխողը:

^{3.14} Առ 8.22:

իմ բերանից: ¹⁷ Ասում ես, թե՛ "Հարուստ էի և առավել հարստացա ու ոչ մի բանի կարոտ չեմ", սակայն չգիտես, որ ողորմելի ես, խեղճ և աղքատ, մերկ և կույր: ¹⁸ Ուստի հետևյալ խորհուրդն եմ տալիս քեզ. կրակի բռնությունը անցած մաքուր ոսկի՝ գնիր ինձնից, որպեսզի հարստանաս, և սպիտակ զգեստներ՝ ր առ հագնելու համար, որպեսզի ծածկես մերկությանդ ամոթը: Նաև դե՛ղ դիր քո աչքերին, որպեսզի տեսնես: ¹⁹ Ես հանդիմանում ու խրատում եմ նրանց, ում սիրում եմ, ուստի նախանձախնդի՛ր եղիր և ապաշխարի՛ր: ²⁰ Ահավասիկ ես դռան առաջ եմ և բախում եմ: Եթե մեկն իմ ձայնը լսի և բաց անի դուռը, ես ներս կմտնեմ և կընթրեմ նրա հետ, նա էլ՝ ինձ հետ: ²¹ Ով որ հաղթի, նրան իրավունք կտամ նստելու ինձ հետ իմ գահի վրա, ինչպես որ ես հաղթեցի և նստեցի իմ Հոր հետ՝ նրա գահի վրա:

²² Ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ի՛նչ է ասում եկեղեցիներին»:

4

Աստծու գահը և երկնային պաշտամունք

¹ Եվ ահա սրանից հետո տեսա երկնքում բացված մի դուռ, և փողի հնչյունի նմանվող ձայնը, որ նախապես լսել էի, խոսում էր ինձ հետ ու ասում. «Ելի՛ր այստեղ, և ես քեզ ցույց կտամ, թե սրանից հետո ի՛նչ է պատահելու»:

² Եվ իսկույն Հոգին վեր բարձրացրեց ինձ: Այնտեղ՝ երկնքում, մի գահ կար, և գահի վրա նստել էր մեկը,³ որի տեսքը հասպիս և սարդիոն թանկարժեք քարերի փայլն ուներ: Նրա գահի շուրջ կար մի ծիրանի գոտի՝ զմրուխտի փայլով,⁴ և այդ գահի շուրջ կային քսանչորս գահեր, որոնց վրա նստել էին քսանչորս երեցներ՝ սպիտակ զգեստներ հագած և իրենց գլուխների վրա՝ ոսկե պսակներ: ⁵ Այդ գահից ելնում էին փայլատակումներ, ձայներ և որոտներ: Գահի առաջ կային հրաբորբոք յոթ ջահեր, որոնք Աստծու յոթ հոգիներն են: ⁶ Գահի առաջը կար նաև ապակե ծովի նման մի տարածություն՝ բյուրեղի պես վճիտ:

Այնտեղ՝ կենտրոնում, գահի շուրջը, չորս կողմից կային չորս կենդանիներ՝ առջևից ու հետևից աչքերով լի: ⁷ Առաջին կենդանին նման էր առյուծի, երկրորդը՝ եզան, երրորդ կենդանու դեմքը նման էր մարդու դեմքի, իսկ չորրորդ կենդանին նման էր թռչող արծվի: ⁸ Չորս կենդանիներից յուրաքանչյուրն ուներ վեց թև՝ ներսից և դրսից աչքերով լի: Այդ կենդանիները գիշեր-ցերեկ անդադար ասում էին.

«Սուրբ, Սուրբ, Սուրբ,
ամենակալ Տեր Աստված,

^{3.19} Առ 3.12, Եբր 12.6:

^{4.2-3} Եզկ 1.26-28, 10.1:

^{4.3-4} «Հասպիս և սարդիոն..... զմրուխտ». Աստվածաշունչը ցույց է տալիս, որ Աստված «բնակվում է անմատչելի լույսի մեջ», և «մարդկանցից ոչ ոք չի տեսել և ոչ ոք չի կարող տեսնել» նրան (Ս ՏՄ 6.16): Ահա թե ինչու Աստված հաճախ պատկերանում է լույսի փայլատակումով միայն (տե՛ս հաջորդ համարը), ինչպես այստեղ՝ թանկարժեք քարերի ճառագայթումով (հմտո Եզկ 1.26-28):

^{4.5} ա Ելք 19.16, Տբ 12.15, Հտ 8.5, 11.19, 16.18: բ Եզկ 1.13: գ Հտ 1.4, Զք 4.2:

^{4.6} Եզկ 1.22:

^{4.6-7} Եզկ 1.5-10, 10.14:

որ էր, որ է և որ գալու է»:

⁹ Երբ կենդանիները փառք, պատիվ և գոհություն էին տալիս նրան, որ նստած էր գահի վրա, նրան, որ ապրում է հավիտյանս հավիտենից, ¹⁰ քսանչորս երեցներն ընկնում էին գահի վրա նստողի առաջ և երկրպագում նրան, որ ապրում է հավիտյանս հավիտենից: Նրանք իրենց պսակները դնում էին գահի առաջ ու ասում.

¹¹ «Ո՛վ մեր Տերն ու Աստվածը,
դու արժանի ես ընդունելու փառք, պատիվ և գոհություն,
քանզի դո՛ւ ստեղծեցիր ամեն ինչ,
և քո կամքով ստեղծվեցին ու գոյություն ունեն բոլորը»:

5

Կնքված գիրքը և Գառը

¹ Գահի վրա նստողի աջ ձեռքում տեսա մի գիրք՝ գրված ներսից ու դրսից և կնքված յոթ կնիքներով: ² Եվ տեսա մի գորավոր հրեշտակի, որ բարձրաձայն հայտարարում էր.

«Ո՛վ է արժանի քանդելու գրքի կնիքները և բաց անելու այն»: ³ Եվ չկար մեկը ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրա, ո՛չ էլ երկրի ներքևում, որ կարողանար բաց անել գիրքը և նայել նրան: ⁴ Ես դառնորեն լաց էի լինում, քանի որ չգտնվեց մեկը, որ արժանի լիներ բաց անելու գիրքը և նայելու նրա մեջ:

⁵ Երեցներից մեկն ինձ ասաց. «Լաց մի՛ եղիր, ահա հաղթեց Առյուծը, որ Հուդայի ցեղից և Դավթի սերնդից է. նա կարող է քանդել յոթ կնիքները և բաց անել գիրքը»:

⁶ Ապա չորս կենդանիներով շրջապատված գահի և երեցների միջև տեսա մի Գառ, որ կարծես մորթված լիներ: Նա ուներ յոթ եղջյուր և յոթ աչք, որոնք Աստծու յոթ հոգիներն են՝ ուղարկված աշխարհի բոլոր կողմերը: ⁷ Գառը գնաց և գահի վրա նստողի աջ ձեռքից վերցրեց գիրքը: ⁸ Հազիվ էր վերցրել, և չորս կենդանիներն ու քսանչորս երեցներն ընկան Գառան առջև: Նրանցից յուրաքանչյուրն ուներ մի քնար և խնկով լի ոսկե մի խնկաման, որոնք Աստծու ընտրյալների աղոթքներն են: ⁹ Նրանք մի նոր երգ էին երգում և ասում.

«Արժանի ես առնելու այդ գիրքը
և քանդելու նրա կնիքները,

^{4.8 ա} Եզկ 1.18, 10.12: ք Ես 6.2-3:

^{5.1} «Կնքված յոթ կնիքներով». որևէ գրքի, մագաղաթի կամ առարկայի վրա դրված կնիքը մի նշան էր, որ տվյալ առարկան պատկանում է այսինչին, և միայն նա կարող է բացել այն:

^{5.1} Եզկ 2.9-10, Ես 29.11:

^{5.3} «Երկրի ներքև» արտահայտությամբ ակնարկվում է մեռելների աշխարհը (հմմտ Փպ 2.10):

^{5.5 ա} Ծն 49.9: ք Ես 11.1, 10:

^{5.6} «Եղջյուր». Աստվածաշնչում եղջյուրը հաճախ գործության կամ իշխանության խորհրդանիշ է, իսկ Աստծու «աչքերը» խորհրդանշում են նրա ամենատեսությունն ու ամենագիտությունը (հմմտ Ջք 4.10): «Յոթ» թիվն ամբողջականության կամ կատարելության խորհրդանիշ է:

^{5.6 ա} Ես 53.7: ք Ջք 4.10:

^{5.8} Սղ 141.2:

քանզի դու մորթվեցիր
և քո արյունով Աստծու համար գնեցիր
մի նոր ժողովուրդ
բոլոր ցեղերից ու լեզուներից,
բոլոր ազգերից, ժողովուրդներից:*

¹⁰ Եվ նրանց դարձրիր
քահանաների մի թագավորություն՝
ծառայելու մեր Աստծուն:

Նրանք պիտի թագավորեն երկրի վրա»:*

¹¹ Տեսա նաև և լսեցի ձայնը բազում հրեշտակների, որոնք կանգնած էին գահի, չորս կենդանիների և երեցների շուրջը: Նրանք տասնյակ հազարներով և միլիոններով էին:*

¹² Նրանք երգում էին բարձր ձայնով.

«Մորթված Գառն արժանի է ստանալու
կարողություն, հարստություն և իմաստություն,
պատիվ և զորություն, փառք և օրհնություն»:

¹³ Եվ լսեցի, որ երկնքում, երկրի վրա, երկրի ներքևում և ծովում գտնվող բոլոր արարածներն ասում էին.

«Գահի վրա նստողին, ինչպես նաև Գառանը՝
օրհնություն, պատիվ, փառք և զորություն և
հավիտյանս հավիտենից»:

¹⁴ Չորս կենդանիները պատասխանում էին. «Ամեն»: Եվ երեցներն ընկան նրա առջև ու երկրպագեցին:

6

Յոթ կնիքները

¹ Հետո տեսա, որ Գառը բացեց յոթ կնիքներից առաջինը, և լսեցի, որ չորս կենդանիներից մեկը որոտման ձայնով ասում էր. «Արի՛»:² Եվ ահա տեսա մի սպիտակ ձի, որի հեծյալը մի աղեղ ուներ: Նրան տրվեց մի պսակ. նա եկավ որպես հաղթող և հաղթելու համար:*

³ Երբ Գառը բացեց երկրորդ կնիքը, լսեցի, որ երկրորդ կենդանին ասում էր. «Արի՛»:
⁴ Եվ դուրս ելավ մի ուրիշ ձի, որ կարմիր էր: Նրա հեծյալին իրավունք տրվեց

***5.9** «Քո արյունով... գնեցիր». տե՛ս 1.5-ի ծնթ:

***5.9** Սղ 33.3, 98.1, Ես 42.10:

***5.10** «Քահանաների մի թագավորություն». տե՛ս Ա Պտ 2.9-ի ծնթ:

***5.10** Ելք 19.6, Հտ 1.6:

***5.11** Դն 7.10:

***6.1** «Արի՛». գրբ. ունի «Գալիս եմ»: Նույնը՝ 3, 5 և 7 հմբ:

***6.2** «Մի սպիտակ ձի». չորս ձիավորների պատկերը գալիս է Զք 1.8-17 և 6.1-8-ից: Այստեղ յուրաքանչյուր ձիու գույնով տրվում է ձիավորի բնութագիրը: Մայիտակը ցույց է տալիս հաղթանակ, կարմիրը՝ պատերազմ և արյունահեղություն, սևը՝ սով, դեղինը՝ համաճարակ և մահ:

***6.2** Զք 1.8, 6.3, 6:

աշխարհից վերացնելու խաղաղությունը, որպեսզի մարդիկ միմյանց սպանեն: Եվ նրան տրվեց մի մեծ սուր:՝

⁵ Երբ Գառը բացեց երրորդ կնիքը, լսեցի, որ երրորդ կենդանին ասում էր. «Արի՛»: Եվ ահա տեսա մի սև ձի, որի հեծյալն իր ձեռքին ուներ մի կշեռք:՝ ⁶ Ու լսեցի մի ձայն, որ գալիս էր չորս կենդանիների մեջտեղից և ասում էր. «Մի բուռ ցորենը՝ մեկ օրավարձի փոխարեն, երեք բուռ գարին՝ մեկ օրավարձի փոխարեն. բայց ձեռքին ու գինուն վնաս չտաս»:

⁷ Եվ երբ Գառը բացեց չորրորդ կնիքը, չորրորդ կենդանուց լսեցի մի ձայն, որ ասում էր. «Արի՛»: ⁸ Եվ ահա տեսա դեղնավուն մի ձի, որի հեծյալի անունը Մահ էր: Նրա հետևից գնում էր դժոխքը՝ մեռելների աշխարհը: Նրանց իշխանություն էր տրվել աշխարհի մեկ չորրորդ մասի վրա, որպեսզի սպանեն սրով, սովով, համաճարակով և երկրի գազաններով:՝

⁹ Երբ Գառը բացեց հինգերորդ կնիքը, զոհասեղանի տակ տեսա հոգիներն այն բոլոր մարդկանց, որոնք սպանվել էին Աստծու խոսքին իրենց հավատարմության և տված վկայության համար: ¹⁰ Նրանք բարձրաձայն ասում էին. «Մինչև ե՞րբ պիտի սպասես, սուրբ և ճշմարի՛տ Տեր, ե՞րբ պիտի դատես երկրի բնակիչներին և մեր արյան վրեժը լուծես նրանցից»: ¹¹ Եվ նրանցից յուրաքանչյուրին տրվեց մի սպիտակ պարեգոտ և ասվեց, որ մի փոքր ժամանակ ևս հանգստանան, մինչև որ ամբողջանա իրենց ծառայակիցների և եղբայրների թիվը, որոնք պիտի սպանվեն իրենց նման:՝

¹² Եվ տեսա, որ Գառը բացեց վեցերորդ կնիքը: Եվ ահա տեղի ունեցավ մի մեծ երկրաշարժ. արեգակը սև դարձավ, ինչպես այծի մազից հյուսած կարպետը, և լուսինն ամբողջովին արյան գույն ստացավ: ¹³ Երկնքի աստղերն ընկան երկրի վրա, ինչպես թափվում են ուժգին հողմից ցնցվող թզենու խակ պտուղները: ¹⁴ Երկինքը գալարվեց մագաղաթյա գլանի նման, և բոլոր լեռներն ու կղզիները շարժվեցին իրենց տեղերից: ¹⁵ Երկրի թագավորները, իշխանները, հրամանատարները, հարուստները, հզոր մարդիկ, ծառա թե ազատ, բոլորը թաքնվեցին քարայրերում և լեռների ժայռերի ձեռքերում: ¹⁶ Նրանք ասում էին լեռներին և ժայռերին. «Ընկե՛ք մեզ վրա և ծածկեցե՛ք մեզ նրա աչքից, ով նստում է գահի վրա. ազատեցե՛ք մեզ Գառան բարկությունից,՝

^{6.4} Ձք 1.8, 6.2:

^{6.5} Ձք 6.2,6:

^{6.6} «Մեկ օրավարձի». բոց՝ «մեկ դահեկանի»: Բացատրության համար տե՛ս Մր 6.37-ի ծնթ:

^{6.8} Եզկ 14.21:

^{6.10} «Երկրի բնակիչներին» բացատրությունը Հայտնության գրքում գործածվում է Աստծուն ընդդիմացող չար մարդկությունը նշելու համար (տե՛ս նաև 3.10, 8.13, 11.10, 13.8 և 12, 17.2 և 8):

^{6.11} «Մի սպիտակ պարեգոտ». տե՛ս 3.4-ի ծնթ:

^{6.11} Բ Եզր 4.36:

^{6.12} ա Հտ 11.13, 16.18: ք Ես 13.10, Հվլ 2.10, 31, 3.15, Մտ 24.29, Մր 13.24-25, Ղկ 21.25:

^{6.13-14} Ես 34.4:

^{6.14} Հտ 16.20:

^{6.15} Ես 2.19, 21:

^{6.16} «Ընկե՛ք մեզ վրա... Գառան բարկությունից». գրք. ունի «Ընկե՛ք մեզ վրա», և բլուրներին ասում էին. «Ծածկեցե՛ք մեզ»:

¹⁷ որովհետև եկավ նրա բարկության ահավոր օրը, և ո՞վ կարող է դիմանալ նրա առջև»։

7

Աստծու ընտրյալները

¹ Դրանից հետո տեսա չորս հրեշտակների, որոնք կանգնել էին երկրի չորս անկյուններում և պահում էին երկրի չորս հողմերը, որպեսզի դրանք չփչեն ո՛չ երկրի, ո՛չ ծովի և ո՛չ էլ ծառերի վրա։ ² Տեսա մի ուրիշ հրեշտակի ևս, որ ելավ արևելքից և ուներ կենդանի Աստծու կնիքը։ Նա բարձր ձայնով աղաղակեց այն չորս հրեշտակներին, որոնց իշխանություն էր տրվել վնասելու երկրին ու ծովին, ³ և ասաց. «Վնաս մի՛ տվեք երկրին, ո՛չ ծովին և ո՛չ էլ ծառերին, մինչև որ կնիքով դրոշմեմ իմ Աստծու ծառաների ճակատները»։ ⁴ Եվ լսեցի, որ Իսրայելի տասներկու ցեղերից կնքվածների թիվը հարյուր քառասունչորս հազար է.

⁵ Հուդայի ցեղից՝ տասներկու հազար, Ռուբենի ցեղից՝ տասներկու հազար, Գադի ցեղից՝ տասներկու հազար, ⁶ Ասերի ցեղից՝ տասներկու հազար, Նեփթաղիմի ցեղից՝ տասներկու հազար, Մանասեի ցեղից՝ տասներկու հազար, ⁷ Շմավոնի ցեղից՝ տասներկու հազար, Ղևիի ցեղից՝ տասներկու հազար, Իսաքարի ցեղից՝ տասներկու հազար, ⁸ Չաբուդոնի ցեղից՝ տասներկու հազար, Հովսեփի ցեղից՝ տասներկու հազար և Բենիամինի ցեղից՝ տասներկու հազար:

Մեծ բազմություն

⁹ Դրանից հետո ահա տեսա անհամար մի բազմություն բոլոր ազգերից, բոլոր ցեղերից, բոլոր լեզուներից և բոլոր ժողովուրդներից, որոնք կանգնած էին գահի և Գառան դիմաց՝ սպիտակ պարեգոտներ հագած և արմավենու ճյուղեր իրենց ձեռքին։ ¹⁰

¹⁰ Նրանք բարձրաձայն աղաղակում էին՝ ասելով.

«Փրկությունը գալիս է մեր Աստծուց,
որ բազմում է գահի վրա,
գալիս է նաև Գառից»:

¹¹ Բոլոր հրեշտակները, որոնք կանգնած էին գահի, երեցների և չորս կենդանիների շուրջը, երեսի վրա գետին ընկան գահի առջև և երկրպագեցին Աստծուն՝ ¹² ասելով.

^{6.16} Օս 10.8, Ղկ 23.30:

^{6.17} Հվլ 2.11, Մդ 3.2:

^{7.1} Եր 49.36, Դն 7.2, Զք 6.5:

^{7.3} «Մինչև որ կնիքով դրոշմեմ իմ Աստծու ծառաների ճակատները». այս դրոշմի հիմնական նպատակը գալիք դատաստաններից Աստծու ժողովրդին պաշտպանելն է (տե՛ս 9.4): Ըստ Եզկ 9.4-6-ի, այդ նշանը եբրայերեն «Թավ» գիրն է, որն անցյալում նման է եղել քառաթև փոքրիկ խաչի (Ս) կամ հուն. X տառին:

^{7.3} Եզկ 9.4, 6:

^{7.9} «Սպիտակ պարեգոտներ». տե՛ս 3.4-ի ծնթ: «Արմավենու ճյուղեր»-ը տոնական մթնոլորտ են հուշում և փրկություն խորհրդանշում:

^{7.9} Բ Եզր 2.42:

«Ամեն. օրհնությունը, փառքն ու իմաստությունը,
գոհությունն ու պատիվը, կարողությունն ու գորությունը
պատկանում են մեր Տեր Աստծուն
հավիտյանս հավիտենից. ամեն»:

¹³ Երեցներից մեկն ինձ ասաց.

- Ովքե՞ր են սպիտակ պարեգոտ հագած այս մարդիկ և որտեղի՞ց են գալիս:

¹⁴ - Տե՛ր, դո՛ւ գիտես,- պատասխանեցի:

Նա ասաց ինձ.

-Այս մարդիկ նրանք են, որ գալիս են մեծ նեղությունից: Նրանք իրենց
պարեգոտները լվացին և սպիտակեցրին Գառան արյունով: ¹⁵ Ահա թե ինչու նրանք
կանգնած են Աստծու գահի դիմաց և զիշեր-ցերեկ պաշտում են նրան իր տաճարում, և
գահի վրա բազմողը հովանի կլինի նրանց: ¹⁶ Նրանք ո՛չ քաղց են զգալու, ո՛չ էլ
ծարավելու են. նրանց չեն վնասելու ո՛չ արեգակը և ո՛չ էլ այրող տոթը: ¹⁷ Եվ Գառը, որ
գահի մեջտեղում է, հովվի նման կարածեցնի նրանց ու կառաջնորդի դեպի կյանքի
աղբյուրի կենսատու ջուրը, և Աստված նրանց աչքերից կսրբի ամեն արտասուք:

8

Յոթերորդ կնիքը

¹ Երբ Գառը բացեց յոթերորդ կնիքը, երկնքում մոտ կես ժամ լռություն տիրեց: ² Եվ
տեսա յոթ հրեշտակներին, որոնք կանգնած էին Աստծու դիմաց. նրանց տրվեցին յոթ
փողեր: ³ Մի ուրիշ հրեշտակ էլ, որ ձեռքին ոսկե խնկաման ուներ, եկավ ու կանգնեց
գոհասեղանի մոտ: Նրան առատ խունկ տրվեց, որպեսզի Աստծու բոլոր ընտրյալների
աղոթքները մատուցի ոսկեղեն գոհասեղանի վրա, որը գտնվում է գահի դիմաց: ⁴ Եվ
խնկի ծուխը, որ Աստծու ընտրյալների աղոթքն է, հրեշտակի ձեռքից բարձրացավ
Աստծու առջև: ⁵ Ապա հրեշտակը խնկամանը լցրեց գոհասեղանի կրակից և այն զցեց
երկրի վրա: Եվ ահա փայլատակումներով ուժեղ երկրաշարժ եղավ, և լսվեցին
որոտներ ու ձայներ: ⁶ Յոթ հրեշտակները, որոնք յոթ փողեր ունեին, պատրաստվեցին
դրանք հնչեցնելու:

Առաջին չորս փողերը

^{7.12} «Կարողությունն ու գորությունը». գրք. ունի «Չնորհն ու գորությունը»:

^{7.14} Դն 12.1, Մտ 24.21, Մր 13.19:

^{7.15} «Տաճար». Հայտնության գրքում գործածված այս բառը միշտ էլ նշում է տաճարի ներքին՝ բուն
սրբարանը, որտեղ ներկա է Աստված:

^{7.16} Ես 49.10:

^{7.17} ա Սղ 23.1, Եզկ 34.23: բ Սղ 23.2, Ես 49.10: գ Ես 25.8:

^{8.2} «Նրանց տրվեցին յոթ փողեր». Աստվածաշնչում փողը սովորաբար ազդարարության նշան է՝
տարբեր նշանակություններով (տե՛ս Թվ 10.1-10), բայց դա նաև հաճախ Աստծու դատաստանի
ազդարարությունն է (հմմտ Ա Թս 4.16), ինչպես այստեղ:

^{8.3} ա Ամս 9.1: բ Ելք 30.1, 3:

^{8.5} ա Ղև 16.12, Եզկ 10.2: բ Ելք 19.16, Հտ 11.19, 16.18:

^{8.6-7} Իմս 11.5-12.2:

⁷ Առաջին հրեշտակը հնչեցրեց փողը, և արյունով խառնված կարկուտ ու կրակ տեղաց երկրի վրա և այրեց երկրի մեկ երրորդ մասը. այրեց նաև ծառերի մեկ երրորդը և բոլոր դալար խոտերը:*

⁸ Ապա փողհարեց երկրորդ հրեշտակը, և ահա հսկա լեռան նման հրավառ մի գանգված ընկավ ծովը, և ծովի մեկ երրորդ մասն արյուն դարձավ. ⁹ ծովային կենդանիների մեկ երրորդը կոտորվեց, և նավերի մեկ երրորդը ընկղմվեց:

¹⁰ Երրորդ հրեշտակն էլ հնչեցրեց փողը: Մի մեծ աստղ, որ բորբոքվում էր ջահի նման, երկնքից ընկավ գետերի և աղբյուրների մեկ երրորդ մասի վրա: ¹¹ Աստղի անունը Դառնություն էր: Ջրերի մեկ երրորդը լեղի դարձավ, և մարդկանցից շատերը մեռան ջրի դառնությունից:*

¹² Հետո փողհարեց չորրորդ հրեշտակը, և արեգակի մեկ երրորդ մասը զարկվեց, ինչպես նաև լուսնի մեկ երրորդը, և աստղերի մեկ երրորդը և նրանց մեկ երրորդ մասը մթագնելով՝ խավարեց, ցերեկվա, ինչպես նաև գիշերվա մեկ երրորդ մասում լույս չկար:*

¹³ Ապա տեսա և լսեցի երկնքի բարձունքում թռչող մի արծվի կանչը, որ բարձրաձայն ասում էր. «Վա՛յ, վա՛յ, վա՛յ երկրի վրա բնակվողներին, երբ հնչի ձայնը մնացած երեք փողերի, որ հնչեցնելու են հրեշտակները»:

9

Հինգերորդ փողը

¹ Հինգերորդ հրեշտակն էլ հնչեցրեց փողը: Եվ տեսա մի մեծ աստղ, որ երկնքից ընկավ երկիր, և այդ աստղին տրվեց անդունդի գբի բանալին: ² Աստղը բացեց անդունդի գուրը, և ահա ծուխ բարձրացավ այնտեղից՝ նման մի մեծ հնոցի ծխի: Օդը լցվեց այդ ծխով, և արեգակը խավարեց: ³ Ծխի միջից երկրի վրա դուրս եկան մորեխներ, որոնց իշխանություն տրվեց խայթելու այնպես, ինչպես կարիճներն են խայթում, ⁴ և նրանց ասվեց, որ վնաս չհասցնեն ո՛չ երկրի խոտերին, ո՛չ դալար տունկերին և ո՛չ էլ ծառերին, այլ միայն այն մարդկանց, որոնք իրենց ճակատի վրա

8.7 «Արյունով խառնված կարկուտ ու կրակ տեղաց», այստեղ պատկերված հարվածները մասամբ հիշեցնում են Եգիպտոսին հասցված հարվածները: Տե՛ս նաև ծովի արյուն դառնալը (հմբ 8), արեգակի մասնակի խավարումը (հմբ 12), մորեխների հարվածը (9.3): Այս նմանությունները հուշում են, որ Աստծու ժողովրդի վերջնական «ելքը» կամ ազատագրումը մոտ է:

8.7 Ելք 9.23- 25, Եզկ 38.22:

8.10 Ես 14.12:

8.11 Եր 9.15:

8.12 Ես 13.10, Եզկ 32.7, Հվլ 2.10, 31, 3.15:

8.13 «Վա՛յ երկրի վրա բնակվողներին». տե՛ս 6.10-ի ծնթ:

9.1 «Անդունդ» բառը, որ սկզբնապես նշում էր աշխարհի կարգավորումից առաջ ջրերի անսահման և խոր տարածությունը, այստեղ ներկայանում է որպես դևերին հատկացված ստորգետնյա բնակավայր (տե՛ս նաև 20.1: Հմմտ Ղկ 8.31):

9.2 Ծն 19.28, Բ Եզր 7.36:

9.3 Ելք 10.12-15, Իմս 16.9:

չունեն Աստծու կնիքը:՝ ⁵ Մորեխներին հրամայվեց, որ չսպանեն այդ մարդկանց, այլ հինգ ամիս չարչարեն նրանց: Այդ չարչարանքի պատճառած ցավը նման էր այն ցավին, որ մարդ ունենում է, երբ խայթվում է կարիճից: ⁶ Այն օրերին մարդիկ մահ կփնտրեն, բայց չեն գտնի. կուզենան մեռնել, բայց մահը կփախչի նրանցից:՝

⁷ Մորեխները նման էին պատերազմի պատրաստված ձիերի. նրանց գլուխներին կային պսակներ՝ նման ոսկե պսակի, և նրանց դեմքը նման էր մարդու դեմքի:՝ ⁸ Նրանց մազերը նման էին կնոջ մազերի, և նրանց ատամները՝ առյուծի ատամների:՝ ⁹ Նրանք ունեին զրահներ, որոնք կարծես երկաթից էին. նրանց թևերի ձայնը նման էր բազմաթիվ ձիերի և կառքերի ձայնին, որոնք արշավում են դեպի պատերազմ:՝

¹⁰ Նրանց պոչերը նման էին կարիճի պոչերի, որոնց ծայրին խայթոց կար, և որոնց միջոցով նրանք իշխանություն ունեին հինգ ամիս պատուհասելու մարդկանց:

¹¹ Նրանք իրենց վրա որպես թագավոր ունեին անդունդի հրեշտակին, որի անունը եբրայերեն Աբադդոն էր, որ հայերենով նշանակում է «կորուսիչ»:

¹² Առաջին աղետն ահա անցավ. սրան հաջորդում են մյուս երկու աղետները:՝

Վեցերորդ փողը

¹³ Հետո վեցերորդ հրեշտակը հնչեցրեց փողը, և լսեցի մի ձայն, որ գալիս էր Աստծու դիմաց գտնվող ոսկե գոհասեղանի չորս անկյուններից:՝ ¹⁴ Ձայնը փող ունեցող վեցերորդ հրեշտակին ասում էր. «Արձակի՛ր Եփրատ մեծ գետի վրա կապված չորս հրեշտակներին»:¹⁵ Եվ արձակվեցին չորս հրեշտակները, որոնք ճիշտ այդ ժամի, օրվա, ամսվա և տարվա համար պատրաստ կանգնած էին, որպեսզի սպանեն մարդկության մեկ երրորդ մասը: ¹⁶ Եվ իմացա, որ նրանց հեծյալ զորքերի թիվը հարյուր հազարներով ու միլիոններով էր:՝ ¹⁷ Տեսիլքում իմ տեսած ձիերն ու հեծյալները հագել էին կրակի, հակինթի և ծծմբի գույնի զրահներ: Ձիերի գլուխները նման էին առյուծի գլխի, և նրանց բերանից կրակ, ծուխ և ծծումբ էր ելնում:՝ ¹⁸ Նրանց բերանից դուրս ելած այս կրակի, ծխի և ծծմբի հարվածներից բնաջնջվեց մարդկության մեկ երրորդ մասը, ¹⁹ որովհետև ձիերի զորությունն իրենց բերաններում

9.4 Եզկ 9.4:

9.6 Հբ 3.21, Եբ 8.3:

9.7 Հվլ 2.4:

9.8 Հվլ 1.6:

9.9 Հվլ 2.5:

9.11 «Կորուսիչ». գրբ. ունի «կորուստ»:

9.12 «Աղետը». բոց «վայր»:

9.13 Ելք 30.1-3:

9.14 «Եփրատ մեծ գետի վրա». Եփրատ գետը, որ Միջին Արևելքի մեծագույն գետն է, Հռոմեական կայսրության արևելյան սահմանն էր: Թվում է, թե այս գրքում հիշված հարվածները հիմնականում ուղղված են Հռոմեական կայսրության դեմ (հմմտ 16.12), որը անհավատ և չար աշխարհի ներկայացուցիչն է:

9.16 «Հարյուր հազարներով և միլիոններով». հուն. ունի «երկու հարյուր միլիոն», որ հատուկ մի թիվ չէ, այլ պարզապես նշանակում է «անհաշվելի»:

9.17 Իմս 11.17-18:

էր, ինչպէս նաև իրենց պոչերում: Նրանց պոչերը նման էին օձերի, և ունեին գլուխներ, որոնցով պատուհասում էին:

²⁰ Մարդկության մնացած մասը, որ չսպանվեց այս հարվածներից, չապաշխարեց և հետ չկանգնեց իր կատարած գործերից: Նրանք չդադարեցին դներին, ոսկե, արծաթե, անագապղնձե, քարե և փայտե կուռքերին երկրպագելուց, որոնք ո՛չ տեսնել կարող են, ո՛չ լսել և ո՛չ էլ քայլել: ²¹ Նրանք չապաշխարեցին իրենց կատարած մարդասպանության, կախարդության, պոռնկության և գողության համար:

10

Հրեշտակը և գրքույկը

¹ Ապա տեսա մի ուրիշ գորավոր հրեշտակի, որ իջնում էր երկնքից՝ ամպի մեջ փաթաթված և գլխին ծիրանի գոտի: Նրա երեսը նման էր արեգակի, իսկ ոտքերը՝ հրեղեն սյուների: ² Նա իր ձեռքում ուներ բացված մի գրքույկ. նա իր աջ ոտքը դրեց ծովի վրա, իսկ ձախը՝ ցամաքի: ³ և բարձրաձայն աղաղակեց, ինչպէս մոնչում է առյուծը: Երբ աղաղակեց, յոթ որոտները թնդացին իրենց ձայներով, ⁴ և երբ յոթ որոտները ձայնեցին, ուզում էի գրի առնել: Բայց երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր.

- Մի՛ արձանագրիր, ինչ որ ասացին յոթ որոտները. գրի մի՛ առ:

⁵ Հետո հրեշտակը, որ մի ոտքը դրել էր ծովի վրա, իսկ մյուսը՝ ցամաքի, իր աջ ձեռքը երկինք բարձրացրեց՝ ⁶ և երդվեց հավիտյանս հավիտենից կենդանի Աստծու անունով, նրա, որ ստեղծեց երկինքն ու երկիրը և ծովը և ինչ որ կա նրանց մեջ, ու ասաց. «Այլևս ուշացում չի լինի»: ⁷ Երբ յոթերորդ հրեշտակը հնչեցնի իր փողը, այն ժամանակ կկատարվի Աստծու ծրագիրը, ինչպէս ավետեցին նրա ծառաները՝ մարգարեները:

⁸ Ապա այն ձայնը, որ լսել էի երկնքից, դարձյալ խոսեց ինձ հետ և ասաց.

- Գնա՛, ա՛ռ այդ գրքույկը, որ ծովի և ցամաքի վրա կանգնած հրեշտակը բացված ունի իր ձեռքին:

⁹ Ես գնացի հրեշտակի մոտ և խնդրեցի նրան, որ ինձ տա գրքույկը: Նա ինձ ասաց.

- Ա՛ռ սա և կե՛ր. այն քո ստամոքսում դառը լեղի կդառնա, բայց քո բերանում մեղրի նման քաղցր կլինի:

¹⁰ Հրեշտակի ձեռքից վերցրի բացված գրքույկը և կերա: Այն իմ բերանում մեղրի պէս քաղցր էր, բայց երբ կուլ տվեցի, իմ ստամոքսում դարձավ դառը լեղի: ¹¹ Ապա հրեշտակն ինձ ասաց.

- Այս մարգարեությունը ևս պետք է հայտնես բազում ժողովուրդների, ազգերի, լեզուների և թագավորների:

11

Երկու վկաները

^{9.20} Սղ 115.4-7, 135.15-17, Դն 5.23:

^{10.5-7} Ելք 20.11, Բ Օր 32.40, Դն 12.7, Ամս 3.7:

^{10.8-10} Եզկ 2.8-3.3:

¹ Հետո ինձ տրվեց մի եղեգ, որ նման էր չափելու գավազանի: Հրեշտակն ինձ ասաց. - Վե՛ր կաց և չափի՛ր Աստծու տաճարն ու գոհասեղանը և հաշվի՛ր այնտեղ գտնվող երկրպագողներին:՝ ² Իսկ այն գավիթը, որ տաճարից դուրս է գտնվում՝ թո՛ղ, մի՛ չափիր, որովհետև այն տրվել է հեթանոսներին, որոնք քառասուններկու ամիս ոտնակոխ են անելու Սուրբ քաղաքը:՝ ³ Ես կպատվիրեմ իմ երկու վկաներին, որ քուրձ հագած՝ մարգարեանան այդ հազար երկու հարյուր վաթսուն օրերի ընթացքում:՝ ⁴ Սրանք երկու ձիթենիներն ու երկու ճրագներն են, որոնք կանգնում են երկրի Տիրոջ առջև:՝ ⁵ Եթե՛ մեկն ուզենա վնասել նրանց, կրակ կելնի նրանց բերանից և կոչնչացնի իրենց թշնամիներին: Այսպե՛ս կսպանվեն բոլոր նրանք, ովքեր կուզենան վնաս հասցնել նրանց: ⁶ Երկու վկաներն իշխանություն ունեն փակելու երկինքը, որպեսզի իրենց մարգարեության ժամանակամիջոցում անձրև չտեղա: Նրանք իշխանություն ունեն նաև ջրերի վրա՝ դրանք արյուն դարձնելու, ինչպես նաև աղետներով պատուհասելու երկիրը, քանի անգամ որ ուզենան:՝ ⁷ Եվ երբ նրանց վկայության ժամանակաշրջանն ավարտվի, այն ժամանակ անդունդից ելնող գազանը կպատերազմի նրանց դեմ, կհաղթի ու կսպանի նրանց:՝ ⁸ Եվ նրանց մարմինները փոխված կմնան այն մեծ քաղաքի հրապարակում, որտեղ խաչվեց նրանց Տերը, և որը խորհրդանշական անունով կոչվում է Սողոմ և Եգիպտոս:՝ ⁹ Բոլոր ցեղերից, ժողովուրդներից, լեզուներից և ազգերից մարդիկ երեքուկես օր նրանց դիակները կտեսնեն և թույլ չեն տա, որ նրանց դիակները դրվեն գերեզմանների մեջ: ¹⁰ Երկրի վրա բնակվողները կուրախանան և կցնծան նրանց մահվան համար, մինչև իսկ նվերներ կտան միմյանց, որովհետև այս երկու մարգարեները շատ չարչարեցին երկրի բնակիչներին:

^{11.1} Եզկ 40.3, Չք 2.1-2:

^{11.2} «Քառասուններկու ամիս», անում է երեքուկես տարի. նույնքան են անում նաև հաջորդ համարի 1260 օրերը և 12.14-ում հիշված «մի ժամանակ, ժամանակներ և կես ժամանակ» բացատրությունը, որ համազոր է ասելու՝ «մեկ տարի, առավել երկու տարի և կես տարի»:

^{11.2} Ղկ 21.24:

^{11.3} «Իմ երկու վկաներին», այս անձինք, որոնք որոշ չափով նման են Մովսես և Եղիա մարգարեներին (տե՛ս հմր 5-6), կարող են Քրիստոսի գալուստին նախորդող շրջանում ապրած հավատացյալներին խորհրդանշող անձնավորություններ լինել, կարող են նաև լինել իրական անձեր, որոնք պիտի նահատակվեն ճշմարտության քարոզության համար:

^{11.4} «Սրանք երկու ձիթենիներն ու երկու ճրագներն են», այս պատկերը գալիս է Զաքարիայի մարգարեությունից (4.2-6) և շեշտում է, որ նրանք Սուրբ Հոգով լցված են տալիս իրենց վկայությունը:

^{11.4} Չք 4.3, 11-14:

^{11.6} ա Գ Թզ 17.1: բ Ելք 7.17-19: գ Ա Թզ 4.8:

^{11.7} «Անդունդից ելնող գազանը», սա Աստծու ժողովրդի՝ եկեղեցու մեծագույն թշնամին է, որ վերջին ժամանակներում հայտնվելու է «անդունդից», այսինքն՝ Սատանայի զորությամբ (տե՛ս 9.1-ի և 13.1-ի ծնթ):

^{11.7} ա Դն 7.7, Հտ 13.5-7, 17.8: բ Դն 7.21:

^{11.8} «Մեծ քաղաք», հստակ չէ, թե՛ ո՛ր քաղաքին է վերաբերում, բայց ամեն դեպքում խորհրդանշում է Աստծուն ընդդիմացող աշխարհը: «Սողոմը» հոմանիշ է անբարոյության, իսկ «Եգիպտոսը»՝ հոգևոր բռնության և ստրկության, որից մեզ Քրիստոսը փրկեց իր խաչով:

^{11.8} Ես 1.9-10:

¹¹ Երեքուկես օր հետո նրանց մեջ մտավ կենարար Հոգին, որ Աստծուց է գալիս, և երկու վկաները վեր կացան ու ոտքի կանգնեցին: Եվ ահ ու սարսափ ընկավ բոլոր տեսնողների վրա: ¹² Ապա երկու մարգարեները երկնքից լսեցին մի ուժեղ ձայն, որ ասում էր իրենց. «Վե՛ր ելեք, եկե՛ք այստեղ»: Նրանք ամպերի միջով երկինք բարձրացան, մինչ իրենց թշնամիները դիտում էին նրանց: ¹³ Նույն ժամին տեղի ունեցավ մի ուժեղ երկրաշարժ, և քաղաքի մեկ տասներորդ մասը կործանվեց. այս երկրաշարժից մեռավ յոթ հազար մարդ: Մեծ սարսափ առաջացավ մնացածների մեջ, որոնք փառք էին տալիս երկնավոր Աստծուն:»

¹⁴ Ահա երկրորդ աղետն էլ անցավ: Շուտով գալիս է երրորդը:

Յոթերորդ փողը

¹⁵ Երբ յոթերորդ հրեշտակը հնչեցրեց փողը, երկնքում լավեցին ուժգին ձայներ, որոնք ասում էին. «Ամբողջ աշխարհի թագավորությունն այլևս պատկանում է մեր Տիրոջը և նրա Օծյալին, որ թագավորելու է հավիտյանս հավիտենից:» ¹⁶ Քսանչորս երեցները, որոնք նստած էին իրենց գահերին, Աստծու առջև, գետին ընկնելով իրենց երեսների վրա՝ երկրպագեցին Աստծուն ¹⁷ և ասացին.

«Ամենակա լ Տեր Աստված,
Դու, որ 3/4-ն ես և միշտ էիր,
գոհություն ենք մատուցում քեզ,
որ ձեռքդ առար քո մեծ գորությունը և թագավորեցիր:

¹⁸ Ազգերը գայրացան,
բայց հասավ քո բարկությունը
և մեռելներին դատելու ժամանակը.
հասավ ժամանակը՝ վարձատրելու քո ծառաներին՝
մարգարեներին և քո ընտրյալներին,
քեզնից ակնածողներին, մեծերին և փոքրերին:
Հասավ ժամանակը՝ կորստի մատնելու նրանց,
որոնք ապականում են երկիրը:»

¹⁹ Եվ ահա երկնքում բացվեց Աստծու տաճարը, և այնտեղ երևաց Աստծու Ուխտի տապանակը: Եղան փայլատակումներ, ձայներ, որոտներ, երկրաշարժ և ուժեղ կարկուտ:»

^{11.11} Եզկ 37.10:

^{11.12} Դ Թզ 2.11:

^{11.13} Հտ 6.12, 16.18:

^{11.15} Ելք 15.18, Դն 2.44, 7.14, 27:

^{11.18} **u** Սղ 2.5, 110.5: **բ** Սղ 115.13:

^{11.19} «Աստծու [մի շարք ձեռ.՝ Տիրոջ] Ուխտի տապանակը» անցյալում խորհրդանշում էր Աստծու ներկայությունն իր ժողովրդի մեջ: Մովսեսի օրոք շինված տապանակը կորավ տաճարի կործանման ժամանակ, ՔԱ 587թ.: Այստեղ տապանակը խորհրդանշում է Աստծու Ուխտն ու հավատարմությունն իրեն հավատացողների հանդեպ:

^{11.19} Բ Մկ 2.4-8: **u** Հտ 8.5, 16.18: **բ** Հտ 16.21:

Կինը և վիշապը

¹ Եվ ապա երկնքում երևաց մի մեծ նշան. մի կին, որ հագուստի նման հագել էր արեգակը, լուսինն առել էր իր ոտքերի տակ և իր գլխին ուներ մի պսակ՝ տասներկու աստղերով:² Նա հղի էր, ճշում էր երկունքի մեջ և ծննդաբերելու մոտ լինելով՝ սաստիկ ցավեր էր քաշում:

³ Երկնքում երևաց նաև մի այլ նշան. հրեղեն մի մեծ վիշապ, որ ուներ յոթ գլուխ ու տասը եղջյուր և յուրաքանչյուր գլխի վրա՝ մի թագ:⁴ Նա իր պոչով քաշում տանում էր երկնքի աստղերի մեկ երրորդ մասը, որը նետեց երկրի վրա: Նա կանգնեց ծննդաբերելու մոտ եղող կնոջ առաջ, որպեսզի երբ կինն իր զավակին ծնի, կույ տա նրան:⁵ Կինը ծնեց մի արու զավակ, որ սահմանված էր երկաթե մականով հովվելու բոլոր ազգերին: Բայց կնոջ զավակը հափշտակվելով տարվեց Աստծու և նրա գահի մոտ:⁶ Կինը փախավ դեպի անապատ, որտեղ նրա համար տեղ էր պատրաստվել Աստծու կողմից, որպեսզի այնտեղ կերակրվի հազար երկու հարյուր վաթսուն օր:

⁷ Եվ երկնքում պատերազմ տեղի ունեցավ: Միքայելն ու իր հրեշտակները կռվեցին վիշապի դեմ, որն իր հերթին պատերազմում էր իր հրեշտակներով:⁸ Բայց վիշապն ու իր հրեշտակները պարտվեցին: Երկնքում այլևս տեղ չմնաց նրանց համար:⁹ Մեծ վիշապը՝ այն առաջին օձը, որ Բանասարկու և Մատանա է կոչվում, և որ մոլորեցրեց ամբողջ աշխարհը, գցվեց երկիր: Նրա հրեշտակներն էլ իր հետ ցած գցվեցին:¹⁰ Եվ երկնքում լսեցի մի ուժեղ ձայն, որ ասում էր.

«Այժմ հասավ մեր Աստծու փրկությունը,
գորությունն ու արքայությունը.
հասավ նրա Օծյալի իշխանությունը,

^{12.1} «Մի մեծ նշան... մի կին, որ ... հագել էր արեգակը». այս կինը Քրիստոսի ճշմարիտ եկեղեցու մեծ խորհրդանիշն է (հմմտ հմր 17), միաժամանակ նա Մարիամ Աստվածածնի խորհրդանիշն է (հմմտ հմր 5):

^{12.3} «Հրեղեն մի մեծ վիշապ», որ Մատանան է (տե՛ս հմր 9): «Յոթ գլուխ». սա խորհրդանիշ է ամբողջական կամ մեծ իմաստության, ինչպես «տասը եղջյուր»-ը խորհրդանիշ է ամբողջական կամ մեծ գորության:

^{12.3} Դն 7.7:

^{12.4} Դն 8.10:

^{12.5} «Ծնեց մի արու զավակ». խոսքը վերաբերում է Քրիստոսին, որը «հափշտակվելով տարվեց Աստծու մոտ»՝ ակնարկելով նրա երկինք համբարձման մասին:

^{12.5} ա Ես 66.7: ք Սղ 2.9:

^{12.7} «Միքայել». Միքայել հրեշտակապետը Աստվածաշնչում ներկայանում է իբրև Աստծու ժողովրդի՝ իսրայելացիների պահապան հրեշտակը (տե՛ս Դն 10.21, 12.1):

^{12.7} Դն 10.13, 21, 12.1, Հղ 9:

^{12.9} «Բանասարկու». գրբ. ունի «Բեեղզեբուղ»: Բանասարկու նշ է «գրպարտող», որ Մատանա անվան կամ բառի ստուգաբանությունն է (տե՛ս հմր 10): Այստեղ հիշված «ցած գցվելը» Մատանայի և նրա արքանյակների սկզբնական անկումը չի պատկերում, այլ նրանց վերջնական արտաքսումը երկնքից: Դրա համար էլ նա ամբողջական կատաղությանը է պայքարելու Աստծու ժողովրդի դեմ (հմր 12-17):

^{12.9} ա Ծն 3.1: ք Դկ 10.18:

որովհետև ընկավ մեր եղբայրների չարախոսը,
նա, ով գիշեր-ցերեկ Աստծու առաջ
չարախոսում էր նրանց դեմ:

¹¹ Մեր եղբայրները հաղթեցին նրան Գառան արյունով
և իրենց տված վկայությամբ,
որովհետև անտեսեցին իրենց կյանքը
և հանձն առան մահը:

¹² Դրա համար ուրախացե՛ք, ո՛վ երկինք,
և դուք բոլորդ, որ բնակվում եք այնտեղ:
Վա՛յ ձեզ, երկի՛ր և ծո՛վ,
որովհետև ձեր մեջ ընկավ բանասարկուն.
նա լցված է գայրույթով՝
իմանալով, որ քիչ ժամանակ ունի»:

¹³ Երբ վիշապը տեսավ, թե ինքը գցվել է երկիր, սկսեց հետապնդել այն կնոջը, որ
արու գավակ էր ծնել: ¹⁴ Կնոջը տրվեցին մի մեծ արծվի երկու թևեր, որպեսզի
անապատում թռչի գնա իր տեղը, որտեղ պիտի կերակրվեր մի որոշ ժամանակ,
երեքուկես տարի՝ հեռու օձի ներկայությունից: ¹⁵ Ապա օձն իր բերանից հեղեղի պես
ջուր թափեց կնոջ հետևից, որպեսզի հոսանքն առնի տանի նրան: ¹⁶ Բայց երկինքն
օգնեց կնոջը. երկիրը բացեց իր բերանը և կուլ տվեց այն ջուրը, որը վիշապը թափել էր
իր բերանից: ¹⁷ Վիշապը գայրացավ կնոջ դեմ և գնաց պատերազմելու նրա մյուս
գավակների դեմ, որոնք հնազանդվում էին Աստծու պատվիրանին և իրենց
վկայությունն էին տալիս Հիսուսի մասին: ¹⁸ Եվ վիշապը կանգնեց ծովի ավազի վրա:

13

Երկու գազանները

¹ Ապա տեսա, որ ծովից ելնում էր մի գազան, որ ուներ յոթ գլուխ և տասը եղջյուր՝
յուրաքանչյուր եղջյուրի վրա մի թագ և յուրաքանչյուր գլխի վրա՝ հայիոյալից մի
անուն: ² Այն գազանը, որին տեսա, նման էր հովազի, նրա ոտքերը նման էին արջի
ոտքերի, բերանը՝ առյուծի բերանի: Վիշապը նրան տվեց իր գորությունը, իր գահը և

^{12.10} Հր 1.9-11, Ջք 3.1:

^{12.11} «Որովհետև անտեսեցին..... մահը». գրբ. ունի «որովհետև չհամաձայնեցին վիշապի հետ»:

^{12.12} «Իմանալով, որ քիչ ժամանակ ունի». գրբ. ունի «և կարճ ժամանակ ունի ապրելու»:

^{12.14} Դն 7.25, 12.7:

^{12.17} «Նրա մյուս գավակների դեմ», այսինքն՝ եկեղեցու բոլոր ճշմարիտ գավակների դեմ (տե՛ս հմր 1 և ծնթ):

^{13.1} «Շովից ելնում էր մի գազան». ըստ ոմանց՝ սա Հռոմեական կայսրության մի խորհրդանիշ է. «յոթ գլուխները» յոթ կայսրերն են: Ըստ ուրիշների՝ դա Նեոն է, Քրիստոսի հակառակորդը, որ հայտնվելու է վերջին ժամանակներում և Սատանայի գորությամբ եկած մի անձ է լինելու (տե՛ս ԲԹս 2.3-4: Հմմտ 11.7): «Տասը եղջյուր». տե՛ս 17.12-13: «Հայիոյալից մի անուն». Հռոմի կայսրերն իրենց աստված էին կոչում և աստվածային տիտղոսներ կրում:

^{13.1} Բ Եզր 11.1: ա Դն. 7.3: ք Հտ 17.3, 7-12:

մեծ իշխանությունը: *³ Գազանի գլուխներից մեկը թվում էր մահացու կերպով վիրավորված, բայց նրա մահացու վերքը բուժվեց: Ամբողջ երկիրը զարմացավ, հետևեց գազանին⁴ և երկրպագեց վիշապին, քանի որ նա իր իշխանությունը տվել էր գազանին. երկրպագեց նաև գազանին՝ ասելով. «Ո՞վ է նման այս գազանին, ո՞վ կարող է կռվել նրա դեմ»:

⁵ Եվ նրան լեզու տրվեց՝ մեծ-մեծ բաներ խոսելու և հայհոյություններ անելու համար: Նրան իշխանություն տրվեց՝ քառասուններկու ամիս գործելու: ⁶ Նա բացեց իր բերանը՝ հայհոյություններ անելով Աստծու դեմ և հայհոյեց նրա անունը, բնակարանը և երկնքի բնակիչներին: ⁷ Նրան արտոնություն տրվեց պատերազմելու Աստծու ընտրյալների դեմ և պարտության մատնելու նրանց: Նաև իշխանություն տրվեց բոլոր ցեղերի, ժողովուրդների, լեզուների և ազգերի վրա: ⁸ Եվ նրան պիտի երկրպագեն երկրի բոլոր բնակիչները, որոնց անունները, աշխարհի ստեղծագործությունից սկսած, գրված չեն մորթված Գառան պատկանող կյանքի գրքում: ⁹ Ով որ ականջ ունի, թող լսի: ¹⁰ Ով գերության է տարվելու, գերության կգնա, և ով սրով է սպանվելու, կսպանվի սրով: Ահա այստե՛ղ է Աստծու ընտրյալների համբերությունն ու հավատը: *

¹¹ Հետո տեսա մի ուրիշ գազանի, որ ելնում էր երկրից: Նա գառան եղջյուրների նման երկու եղջյուր ուներ և խոսում էր վիշապի նման: ¹² Նա առաջին գազանի ամբողջ իշխանությունն ի գործ էր դնում նրա առաջ և ստիպում, որ երկիրն ու նրա բոլոր բնակիչները երկրպագեն առաջին գազանին, որի մահացու վերքը բուժվեց: ¹³ Այս երկրորդ գազանը բազում հրաշքներ գործեց և մինչև իսկ երկնքից կրակ իջեցրեց երկիր՝ մարդկանց աչքերի առջև: ¹⁴ Նա իր կատարած հրաշքներով երկրի բոլոր բնակիչներին մոլորեցրեց առաջին գազանի դիմաց՝ նրանց ասելով, որ կանգնեցնեն արձանը գազանի, որ սրով վիրավորվեց, բայց բուժվեց:

¹⁵ Եվ նրան իշխանություն տրվեց՝ շունչ տալու գազանի արձանին, որպեսզի արձանը խոսեր, և ով չերկրպագեր գազանի արձանին, սպաներ նրան: ¹⁶ Գազանն ստիպում էր, որ բոլորն էլ, փոքր թե մեծ, հարուստ թե աղքատ, ազատ թե ծառա, դրոշմ դնեն իրենց

*13.2 «Վիշապը». տե՛ս 12.3-ի ծնթ:

*13.2 Դն 7.4-6:

*13.4 Գրք. չունի «երկրպագեց նաև գազանին»:

*13.5-6 Դն 7.8, 25, 11.36:

*13.6 «Երկնքի բնակիչներին». գրք. ունի «երկնային գոհասեղանին»:

*13.7 Դն 7.21:

*13.8 Սղ 69.28:

*13.10 «Եվ ով սրով է սպանվելու, կսպանվի սրով». գրք. ունի «ոմանք սրով կսպանվեն և ոմանք ինքնասպան կլինեն»:

*13.10 Եր 15.2, 43.11:

*13.11 «Մի ուրիշ գազանի, որ ելնում էր երկրից». այս երկրորդ գազանն աշխարհից է, ունի մարդկային ծագում և խորհրդանիշն է կրոնական մի իշխանության, որը ծառայում է աշխարհիկ իշխանություններին և ավելի ուշ կոչվում է «սուտ մարգարե» (տե՛ս 16.13, 19.20, 20.10): Մտ 7.15-ի լույսի տակ գազանի նկարագրությունն այդ մասին կասկած չի թողնում:

*13.14 «Նրանց ասելով, որ կանգնեցնեն...». գրք. ունի «երկրի բնակիչները նրան ասացին.

"Կանգնեցրո՛ւ...":

աջ ձեռքի և ճակատի վրա: ¹⁷ Եվ ոչ ոք չկարողանա գնել կամ վաճառել, եթե չունենա այդ դրոշմը, այսինքն՝ գազանի անունը և կամ նրա անվան տառերի թվի գումարը: ¹⁸ Ահա այստեղ է իմաստությունը. ով խելացի է, թող գումարի գազանի անվան թվերը, որ մարդու անվան թվերի գումարն է: Նրա անվան թիվը վեց հարյուր վաթսուներեց է:

14

Գառը և նրա ընտրյալները

¹ Հետո նայեցի և տեսա, որ Գառը կանգնած էր Սիոն լեռան վրա, և նրա հետ կային հարյուր քառասունչորս հազար հոգի, որոնց ճակատների վրա գրված էր նրա և նրա Հոր անունը: ² Եվ երկնքից մի ձայն լսեցի, որ նման էր առատահոս ջրերի կամ ուժեղ որոտի ձայնին: Չայնը հնչում էր իրենց քնարները հնչեցնող քնարահարների նվագի ձայնի նման: ³ Նրանք գահի և չորս կենդանիների ու երեցների առաջ երգում էին մի նոր երգ, որ ոչ ոք չէր կարող սովորել, բացի այն հարյուր քառասունչորս հազար հոգուց, որոնք փրկված էին երկրի բնակիչների միջից: ⁴ Սրանք այն մարդիկ են, որոնք չխառնակվեցին կանանց հետ. նրանք կույսեր են: ⁵ Սրանք հետևում են Գառանը, ո՛ր որ նա գնա: Սրանք փրկվեցին մարդկանց միջից՝ որպես երախայրիք՝ ընծայված Աստծուն և Գառանը: Սրանք երբեք սուտ չխոսեցին, անբիծ են:

Երեք հրեշտակները

⁶ Հետո տեսա երկնքի բարձունքում թռչող մի ուրիշ հրեշտակի, որ հավիտենական մի ավետիս ուներ քարոզելու երկրի վրա բնակվող բոլոր ազգերին ու ցեղերին, լեզուներին ու ժողովուրդներին: ⁷ Նա բարձր ձայնով ասում էր. «Վախեցե՛ք Աստծուց և փա՛ռք տվե՛ք նրան, որովհետև հասել է ժամանակը, որ նա դատի մարդկությանը: Երկրպագեցե՛ք երկնքի, երկրի, ծովի և ջրի աղբյուրների Արարչին»:

⁸ Այս հրեշտակին հետևում էր մի երկրորդ հրեշտակ, որ ասում էր. «Ընկա՛վ, ընկա՛վ մեծ Բաբելոնը, նա, որ բոլոր ժողովուրդներին հարբեցրեց իր պոռնկության թունդ գինով»:

⁹ Մի երրորդ հրեշտակ ևս հետևում էր նրանց և բարձրաձայն ասում. «Ով երկրպագում է գազանին և նրա արձանին, կամ ով նրա կնիքը դրոշմում է իր

^{14.1} Եզկ 9.4, Հտ 7.3:

^{14.2} Բ Եզր 6.17:

^{14.3} «Որոնք փրկված էին». բոց՝ «որոնք գնված են [Գառան արյունով]»:

^{14.4} «Չխառնակվեցին կանանց հետ». խոսքն անկասկած վերաբերում է հոգևոր պոռնկությանը: Այդ մարդիկ Աստծուն որևէ ձևով անհավատարիմ չգտնվեցին:

^{14.5} Սփ 3.13:

^{14.8} «Մեծ Բաբելոնը». այստեղ խոսքը չի վերաբերում Միջագետքի նշանավոր կայսրության կենտրոնական քաղաքին, որ հայտնի էր անառակ և անբարո կենցաղով: Այս գրքում այդ անունը խորհրդանշական է և նշում է Հռոմը, որ բարոյական ծայրահեղ անկման վիճակում էր գտնվում և հալածում էր Աստծուն ու նրա ընտրյալներին: Ըստ ուրիշների՝ այդ անունը ներկայացնում է Աստծուն ընդդիմացող կրոնական և աշխարհիկ իշխանությունների դաշնակցությունն ամբողջ աշխարհում, ինչ որ այստեղ «պոռնկության գինի» է կոչվում:

^{14.8} Ես 21.9, Եր 51.8, Հտ 18.2:

ճակատին կամ իր ձեռքի վրա, ¹⁰ նա պիտի խմի Աստծու բարկության գինին, այն անխառն գինին, որ լցվեց Աստծու բարկության բաժակի մեջ. նա պիտի տանջվի հրով ու ծծումբով, Աստծու սուրբ հրեշտակների և Գառան առաջ: ¹¹ Նրանց տանջանքի ծուխը կբարձրանա հավիտյանս հավիտենից: Գիշեր ու ցերեկ հանգիստ չեն ունենա նրանք, ովքեր երկրպագեցին գազանին ու նրա արձանին և կրեցին նրա անվան դրոշմը: ¹² Ահա այստե՛ղ է Աստծու ընտրյալների համբերությունը, որոնք պահում են Աստծու պատվիրանները և իրենց հավատը Հիսուսի հանդեպ:

¹³ Ապա երկնքից լսեցի մի ձայն, որ ինձ ասում էր.

- Գրի՛ր, ինչ որ ասում եմ. «Երանի՛ այն մեռելներին, որոնք այժմվանից իսկ ննջում են՝ հնազանդ լինելով Տիրոջը: Այո՛, - ասում է Հոգին, - որովհետև նրանք հանգստացան իրենց աշխատանքից և իրենց գործերն են վկայում իրենց մասին»:

Երկրի հունձը և քաղհանը

¹⁴ Հետո տեսա մի սպիտակ ամպ, որի վրա նստել էր Մարդու Որդուն նման մեկը: Նա իր գլխին ուներ ոսկե պսակ և ձեռքին՝ մի սուր գերանդի: ¹⁵ Երկնքում գտնվող տաճարից դուրս ելավ մի ուրիշ հրեշտակ, որ բարձրաձայն աղաղակեց ամպի վրա նստողին՝ ասելով. «Ուղարկի՛ր քո գերանդին և հնձի՛ր, որովհետև հնձելու ժամանակը հասավ, և երկրի հունձը պատրաստ է»:

¹⁶ Նա, ով նստել էր ամպի վրա, իր գերանդին զցեց երկրի վրա և հնձեց երկրի բոլոր բնակիչներին:

¹⁷ Մի ուրիշ հրեշտակ ևս դուրս ելավ երկնքում գտնվող տաճարից. սա էլ ուներ մի սուր գերանդի: ¹⁸ Հետո մի ուրիշ հրեշտակ, որ իշխանություն ուներ կրակի վրա, դուրս ելավ զոհասեղանից և բարձրաձայն աղաղակեց սուր գերանդի ունեցող հրեշտակին՝ ասելով. «Ուղարկի՛ր քո սուր գերանդին և քաղի՛ր երկրի այգու ողկույզները, որովհետև խաղողը հասել է»:¹⁹ Եվ հրեշտակն իր գերանդին նետեց երկրի վրա, քաղեց խաղողը ու զցեց Աստծու բարկության մեծ հնձանի մեջ: ²⁰ Խաղողը կոխտովեց քաղաքից դուրս, և հնձանից արյուն հոսեց ու բարձրացավ մինչև ձիերի սանձը, շուրջ երեք հարյուր կիլոմետր տարածության վրա:

15

^{14.10} Գրք. չունի «սուրբ հրեշտակների»:

^{14.10} ա Ես 51.17: ք Ծն 19.24, Եզկ 38.22:

^{14.11} Գրք. չունի «տանջանքի»:

^{14.11} Ես 34.10:

^{14.14} «Գերանդի». հաղթական Մարդու Որդու ձեռքում այս գերանդին հնձի նշան է, այսինքն՝ աշխարհից հավաքելու բոլոր արդարներին, ինչպես 17-րդ համարում հիշված հրեշտակի գերանդին նշան է բոլոր անօրենների հավաքելու՝ Աստծու դատաստանի հնձանում նրանց կոխտելու համար:

^{14.14} Դն 7.13:

^{14.15} Հվլ 3.13:

^{14.19} Գրք. չունի «բարկության»:

^{14.20} Ես 63.3, Ողբ 1.15, Հտ 19.15:

Վերջին պատուհասները

¹ Հետո երկնքում մեծ և զարմանալի մի ուրիշ նշան տեսա: Տեսա յոթ հրեշտակների, որոնք ունեին վերջին յոթ պատուհասները, որոնցով պիտի ավարտվեր Աստծու բարկությունը:

² Տեսա ապակե ծովի նման մի տարածություն՝ խառնված կրակով: Նրանք, որ հաղթեցին զազանին և նրա արձանին ու նրան, որի անվան գումարը թվով էր գրված, կանգնած էին ապակե ծովի վրա՝ Աստծու տված քնարները բռնած: ³ Նրանք երգում էին Աստծու ծառայի՝ Մովսեսի երգը, ինչպես նաև Գառան երգը՝ ասելով.

«Ամենակա՛լ Տեր Աստված,
մեծ են քո գործերը և սքանչելի.
ո՛վ թագավորդ բոլոր ազգերի,
արդար և ճշմարիտ են քո ճանապարհները:»^{*}

⁴ Ո՛վ չի վախենա քեզնից, Տե՛ր,
և ո՛վ չի փառավորի քո սուրբ անունը,
քանի որ միայն դո՛ւ ես սուրբ:

Պիտի գան բոլոր ազգերն ու երկրպագեն քեզ,
որովհետև հայտնվեցին քո արդար գործերը:»^{*}

⁵ Դրանից հետո տեսա, որ բացվեց երկնքի տաճարը, որտեղ գտնվում է Վկայության խորանը: ⁶ Յոթ հրեշտակները, որոնք ունեին յոթ պատուհասներ, տաճարից դուրս ելան՝ ծածկված մաքուր ու փայլուն կտավով և իրենց կրծքին ոսկե գոտիներ կապած:

⁷ Չորս կենդանիներից մեկը յոթ հրեշտակներին տվեց յոթ ոսկե անոթներ, որոնք լեցուն էին հավիտյանս հավիտենից կենդանի Աստծու բարկությամբ: ⁸ Տաճարը լցվեց Աստծու փառքի և զորության ծխով, և ոչ ոք չէր կարող տաճար մտնել, մինչև չավարտվեին յոթ հրեշտակների բերած յոթ պատուհասները:՝

16

Աստծու բարկության յոթ անոթները

¹ Հետո տաճարի միջից լսեցի մի ուժեղ ձայն, որ յոթ հրեշտակներին ասում էր.
«Գնացե՛ք և Աստծու բարկության յոթ անոթները դատարկեցե՛ք երկրի վրա»:

² Առաջին հրեշտակը գնաց և իր անոթի պարունակությունը թափեց երկրի վրա: Նրանք, որ զազանի դրոշմն ունեին կամ երկրպագել էին նրա արձանին, ծածկվեցին

^{15.3} «Ո՛վ թագավորդ բոլոր ազգերի». մի շարք ձեռ. ունեն «ո՛վ թագավորդ բոլոր ժամանակների»:

^{15.3} Ելք 15.1:

^{15.4} «Որովհետև հայտնվեցին քո արդար գործերը». զբբ. ունի «երբ որ հայտնվի քո արդարությունը»:

^{15.4} ա Եր 10.7: ք Սղ 86.9:

^{15.5} «Տաճարը, որտեղ գտնվում է Վկայության խորանը». ՀԿ-ի Վկայության խորանը աղոտ օրինակն է երկնային խորանի, որ Սինայի բարձունքում ցույց տրվեց Մովսեսին (տե՛ս Ելք 26.30):

^{15.5} Ելք 38.21:

^{15.8} Ելք 40.34, Գ Թգ. 8.10-11, Բ Մն 5.13-14, Ես 6.4:

գեշ և մորմոքոդ պալարներով:*

³ Երկրորդ հրեշտակն իր անոթը դատարկեց ծովի վրա. ծովի ջուրը մեռելի արյան նման լերդացավ, և այնտեղ եղած կենդանի բոլոր արարածները սատկեցին:

⁴ Երրորդ հրեշտակն իր անոթը դատարկեց գետերի և ջրի աղբյուրների վրա, ու նրանք արյուն դարձան: ⁵ Եվ լսեցի, որ ջրերի վրա իշխանություն ունեցող հրեշտակն ասում էր.

«Արդար ես դու, որ ես և էիր,
դու, Սո՛ւրբդ, քանի որ այսպե՛ս դատաստան արեցիր,
⁶ քանզի նրանց, ովքեր Աստծու ընտրյալների
և մարգարեների արյունը թափեցին,
խմել տվեցիր մի բան, որին արժանի էին»:

⁷ Ապա գոհասեղանից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Այո՛, ո՛վ ամենակալ Տեր Աստված, արդար ու ճշմարիտ են քո վճիռները»:

⁸ Չորրորդ հրեշտակն իր անոթի պարունակությունը թափեց արևի վրա և արևին արտոնություն տրվեց խանձելու մարդկանց: ⁹ Մաստիկ տապից այրվեցին մարդիկ և հայիոյեցին Աստծուն, որ իշխանություն ունի այս պատուհասների վրա, սակայն նրանք չապաշխարեցին և փառք չտվեցին Աստծուն:

¹⁰ Հինգերորդ հրեշտակն իր անոթը դատարկեց գազանի գահի վրա, և նրա թագավորությունը խավար դարձավ. մարդիկ ցավից իրենց լեզուներն էին կծոտում,^{*}
¹¹ իրենց ցավից ու վերքերի կսկիծից հայիոյում էին երկնքի Աստծուն, սակայն չապաշխարեցին իրենց գործերից:

¹² Վեցերորդ հրեշտակն իր անոթը դատարկեց Եփրատ մեծ գետի վրա, և ցամաքեցին նրա ջրերը, որպեսզի ճանապարհ պատրաստվի Արևելքի թագավորների համար:*

¹³ Եվ տեսա, որ վիշապի բերանից, գազանի բերանից և սուտ մարգարեի բերանից ելնում էին գորտերի նման երեք անմաքուր ոզիներ: ¹⁴ Դրանք դիվական ոզիներ էին, որոնք հրաշքներ էին գործում և գնում էին աշխարհի բոլոր թագավորների մոտ՝ պատերազմի հավաքելու նրանց ամենակալ Տիրոջ մեծ օրվա համար: Որովհետև Տերն այսպես ասաց. ¹⁵ «Ահա գալիս եմ գողի նման: Երանի՛ նրանց, ովքեր արթուն են մնում և պահում են իրենց զգեստները, որպեսզի մերկ չըջեն, և իրենց ամոթույքը չերևա»:

¹⁶ Ապա ոզիները թագավորներին հավաքեցին մի տեղ, որ երբայերեն կոչվում է Արմազեդոն:*

*16.2 «Ծածկվեցին գեշ և մորմոքոդ պալարներով». հմմտ Եզիպտոսի վրա եկած 6-րդ հարվածը (Ելք 9.9-11): Տե՛ս նաև 8.7-ի ծնթ:

*16.2 Ելք 9.10:

*16.4 Ելք 7.17-21, Սղ 78.44:

*16.10 Ելք 10.21:

*16.12 «Եփրատ գետ». տե՛ս 9.14-ի ծնթ:

*16.12 Ես 11.15:

*16.13 «Վիշապ». տե՛ս 12.3-ի ծնթ: «Գազան». տե՛ս 13.1-ի ծնթ: «Սուտ մարգարե». տե՛ս 13.11-ի ծնթ:

*16.15 Մտ 24.43-44, Ղկ 12.39-40, Հտ 3.3:

*16.16 «Արմազեդոն» եբր. նշ է «Մագեդոնի լեռ»: Մագեդոնը քաղաքը, որ կառուցված էր Կարմելոս

¹⁷ Յոթերորդ հրեշտակն իր անոթի պարունակությունը թափեց օդի մեջ, և երկնքի տաճարից ու գահից եկավ բարձր մի ձայն, որ ասում էր. «Եղա՛վ»: ¹⁸ Եվ ահա եղան փայլատակումներ, ձայներ ու որոտներ, և այնպիսի ուժեղ մի երկրաշարժ եղավ, որի նման երկրի վրա չէր եղել մարդու ստեղծվելուց ի վեր. այդքան ուժեղ երկրաշարժ չէր պատահել: ¹⁹ Մեծ քաղաքը երեք մասի բաժանվեց, և կործանվեցին բոլոր երկրների քաղաքները: Աստված հիշեց մեծ Բաբելոնը և նրան տվեց իր սաստիկ ցասման գինու բաժակից, որ խմի: ²⁰ Բոլոր կղզիները կորան, և լեռները վերացան մեջտեղից: ²¹ Երկնքից աներևակայելի մեծությամբ կարկուտ տեղաց մարդկանց վրա: Եվ մարդիկ հայիոյեցին Աստծուն՝ տեղացող այդ կարկուտի պատուհասի համար, քանի որ պատուհասը ահավոր էր և սաստիկ:՝

17

Պոռնիկ կինը

¹ Յոթ անոթներ ունեցող հրեշտակներից մեկը եկավ ինձ մոտ, խոսեց ինձ հետ և ասաց.

- Ե՛կ այստեղ, և ես ցույց կտամ քեզ այն դատապարտությունը, որին պիտի ենթարկեմ հոչակավոր պոռնիկին, այն քաղաքը, որ նստում է շատ ջրերի վրա:՝

² Երկրի թագավորները պոռնկություն արեցին նրա հետ, և նրա պոռնկության գինուց հարբեցին երկրի բնակիչները:՝

³ Հրեշտակը հոգով վերցրեց ինձ ու տարավ անապատ. այնտեղ տեսա մի կնոջ, որ նստել էր մի կարմիր գազանի վրա, որը ծածկված էր հայիոյալից անուններով: Եվ այդ գազանը, որին տեսա, ուներ յոթ գլուխ և տասը եղջյուր:՝ ⁴ Կինը հագել էր ծիրանի ու կարմիր հագուստ և զարդարված էր ոսկով, մարգարիտներով և թանկարժեք քարերով: Ձեռքին ուներ ոսկե բաժակ, որը լեցուն էր գարշելի բաներով, պոռնկության պղծություններով:՝ ⁵ Նրա ճակատին գրված էր խորհրդավոր մի անուն. «Մեծ Բաբելոն, մայր պոռնիկների և երկրի գարշելիների»:՝ ⁶ Տեսա, որ այդ կինը հարբած էր Աստծու ընտրյալների և Հիսուսի վկաների արյունից: Երբ տեսա նրան, շատ զարմացա:

լեռան ստորոտին, անցյալում եղել է արյունալի պատերազմների թատերաբեմ (տե՛ս Դտ 5.19: Դ Թգ 23.29), որի համար էլ այստեղ գործածվում է որպես խորհրդանիշ այն մեծ պատերազմի, որ Աստված մղելու է չարի դեմ:

^{16.16} Դ Թգ 23.29, Զք 12.11:

^{16.18} Հտ 8.5, 11.13, 19:

^{16.19} Ես 51.17:

^{16.20} Հտ 6.14:

^{16.21} Ելք 9.23, Հտ 11.19:

^{17.1} «Հոչակավոր պոռնիկին, այն քաղաքը, որ...». հմմտ հմր 5 և 18, տե՛ս նաև 14.8-ի ծնթ: «Նստում է շատ ջրերի վրա». տե՛ս հմր 15:

^{17.1} Եր 51.13:

^{17.2} Ես 23.17, Եր 51.7:

^{17.3} «Գազանը». տե՛ս 13.1-ի ծնթ:

^{17.3} Հտ 13.1:

^{17.4} Եր 51.7:

⁷ Հրեշտակն ինձ ասաց.

- Ինչո՞ւ զարմացար, ես քեզ կասեմ իմաստն այդ կնոջ և նրան կրող զազանի, որն ունի յոթ գլուխ և տասը եղջյուր: ⁸ Այն զազանը, որին տեսար, ապրում էր, բայց այլևս չի ապրում: Նա նորից կելնի անդունդից՝ դեպի կորուստ գնալու համար: Բոլոր նրանք, որ ապրում են երկրի վրա, և որոնց անուններն աշխարհի սկզբից գրված չէին կյանքի գրքում, կզարմանան՝ տեսնելով զազանին, որ ապրում էր, բայց այլևս չի ապրում, և սակայն մոտ է վերստին հայտնվելու: ⁹ Ահա այստե՛ղ է, որ պետք է իմաստություն ունեցող միտք ունենալ:

Յոթ գլուխները յոթ լեռներ են, որոնց վրա նստած է կինը: Նրանք միաժամանակ յոթ թագավորներ են: ¹⁰ Այս յոթ թագավորներից հինգն ընկան, մեկն այժմ ապրում է, իսկ մյուսը դեռ չի եկել: Երբ գա, կիշխի միայն մի կարճ ժամանակ: ¹¹ Եվ այն զազանը, որ ապրում էր, բայց այլևս չի ապրում, ութերորդ թագավորն է, որ առաջին յոթից մեկն է և դեպի իր կորուստն է գնում:

¹² Այն տասը եղջյուրները, որ տեսար, տասը թագավորներն են, որոնք դեռևս չեն թագավորում, բայց իշխանություն կստանան և մեկ ժամով կթագավորեն զազանի հետ: ¹³ Նրանք միակամ են և իրենց գորությունն ու իշխանությունը տալիս են զազանին: ¹⁴ Նրանք պատերազմելու են Գառան դեմ, բայց Գառը հաղթելու է նրանց, որովհետև ի՛նքն է տերերի Տերը և թագավորների Թագավորը. նրա կողքին պատերազմողները կանչվածներն են, ընտրյալները և հավատարիմները:՝

¹⁵ Հրեշտակը ինձ նաև ասաց.

- Այս ջրերը, որ տեսնում ես, և որտեղ նստած է պտռնիկը, ժողովուրդներն են, բազմությունները, ազգերն ու լեզուները: ¹⁶ Եվ զազանի տասը եղջյուրները, որ տեսար, կատեն պտռնիկին, կամայացնեն նրան ու կմերկացնեն, կուտեն նրա մսերը և մնացորդը կայրեն կրակով: ¹⁷ որովհետև Աստված այս բանը դրեց նրանց մտքում, որ կատարեն նրա կամքը, այսինքն՝ լինեն միակամ և իրենց թագավորությունը տան զազանին, մինչև որ իրականանան Աստծու խոսքերը: ¹⁸ Եվ այն կինը, որին տեսար, մեծ քաղաքն է, որ թագավորում է երկրի թագավորների վրա:

18

^{17.8} «Այն զազանը, որին տեսար, ապրում էր, բայց այլևս չի ապրում». այս խոսքը ցույց է տալիս, որ իր առաջին երևալուց հետո զազանը ժամանակավորապես կդադարի երևալուց և ապա վերջին ժամանակում կրկին դուրս կգա անդունդից՝ իր վերջնական կորուստը գտնելու համար: «Անդունդ». տե՛ս 9.1-ի ծնթ:

^{17.8} ա Դն 7.7, Հտ 11.7: ք Սղ 69.28:

^{17.9} «Յոթ գլուխները յոթ լեռներ են». այս պատկերով ակնարկվում է հին Հռոմը, որը հիմնված էր յոթ բլուրների վրա: Բայց Աստվածաշնչում «բլուր»-ը թագավորության կամ թագավորի խորհրդանիշ է, ինչպես հատուկ կերպով նշում է հաջորդ համարը (հմմտ նաև 13.1-ի ծնթ):

^{17.12} Դն 7.24:

^{17.14} «Տերերի Տերը և թագավորների Թագավորը». Գառանը տրված այս տիտղոսը Հին և Նոր Կտակարաններում Հայր Աստծուն տրված մի տիտղոս է (Բ Օր 10.17: Սղ 136.2-3: Դն 2.47: Ա Տմ 6.15), որ շեշտում է Գառան աստվածությունը:

^{17.16} Գրք. չունի «...կամայացնեն նրան ու կմերկացնեն»:

Բաբելոնի անկումը

¹ Այնուհետև տեսա մի ուրիշ հրեշտակի, որ իջնում էր երկնքից. նա ուներ մեծ իշխանություն, և նրա փառքից երկիրը լուսավորվեց: ² Հրեշտակը հզոր ձայնով աղաղակեց.

«Ընկա՛վ, ընկա՛վ մեծ Բաբելոնը
և դարձավ բնակավայր դևերի
ու արգելանոց՝ ամեն տեսակ պիղծ ոգիների.
բանտ եղավ բոլոր անմաքուր թռչունների
և անմաքուր ու ատելի գազանների համար.»^{*}

³ քանզի նրա պոռնկության թունդ գինուց
հարբեցին բոլոր ազգերը,
և երկրի թագավորները
պոռնկություն արեցին նրա հետ.
նրա անչափ զեխությունից
այս աշխարհի վաճառականներն
անհամեմատ հարստացան»:^{*}

⁴ Ապա երկնքից լսեցի մի ուրիշ ձայն, որ ասում էր.
«Դո՛ւրս ելեք այդ քաղաքից, ո՛վ իմ ժողովուրդ,
որպեսզի չլինի թե՛
մասնակից լինեք նրա մեղքերին,
որպեսզի չլինի թե՛
դուք էլ ընդունեք նրա պատիժը.»

⁵ քանզի նրա մեղքերը
դիզվեցին մինչև երկինք.
Աստված հիշեց նրա ամբարիշտ գործերը:^{*}

⁶ Արդ, դո՛ւք էլ հատուցեք Բաբելոնին,
ինչպես նա վարվեց ձեզ հետ,
կրկնապատիկը տալով նրան՝
իր գործերի փոխարեն:
Այն բաժակը, որ պատրաստեց ձեզ համար,
լցրե՛ք կրկնապատիկ սաստկությամբ:^{*}

⁷ Որչափ որ նա փառավորեց ինքն իրեն
և ապրեց զեխությամբ,
նույնչափ նրան սո՛ւզ հատուցեք ու տանջանք,

^{18.2} «Մեծ Բաբելոնը». տե՛ս 14.8-ի ծնթ: «Անմաքուր թռչունների և ... գազանների». գրք. ունի «անմաքուր և ատելի ոգիների»:

^{18.2} ա Ես 21.9, Եր 51.8, Հտ 14.8: բ Ես 13.21, Եր 50.39:

^{18.3} Ես 23.17, Եր 51.7:

^{18.4} Ես 48.20, Եր 50.8, 51.6, 45:

^{18.5} Ծն 18.20-21, Եր 51.9:

^{18.6} Սղ 137.8, Եր 50.29:

քանի որ նա ասում էր իր մտքում.

"Միշտ թագուհի եմ մնալու,
ես այրի չեմ և բնավ սուգ չեմ տեսնելու:"

⁸Դրա համար մեկ օրվա մեջ
նրա վրա պատուհասներ պիտի գան՝
թե՛ մահ, թե՛ սուգ և թե՛ սով.
նա պիտի՛ այրվի կրակով,
քանի որ հզոր է Տեր Աստվածը,
որ դատում է նրան»:

⁹Աշխարհի թագավորները, որոնք պոռնկություն արեցին նրա հետ և զվարճացան,
կողբան, լաց ու կոծ կանեն, երբ տեսնեն նրա հրկիզման ծուխը: ¹⁰Նրա տանջանքի
երկյուղից հեռու կկանգնեն և կասեն.

«Վա՛յ, վա՛յ քեզ, մե՛ծ քաղաք,
դո՛ւ, Բաբելո՛ն, հզո՛ր քաղաք,
մեկ ժամում եկավ հասավ դատաստանը քո:

¹¹ Աշխարհի վաճառականներն էլ
կողբան, կսգան քեզ վրա,
քանի որ ոչ ոք չի գնելու նրանց ապրանքը՝

¹² ոսկին, արծաթը,
թանկարժեք քարերն ու մարգարիտները,
բեհեզն ու ծիրանին,
ոսկեթել կերպասը և կամ որդան կարմիրը,
ամեն տեսակ խնկաբույր փայտեր,
փղոսկրյա անոթ, ազնիվ փայտից ամաններ,
նաև պղնձից ու երկաթից
և մարմարից անոթներ:՝

¹³ Այսուհետև ոչ ոք չի գնելու
կինամոն, համեմ, խունկ, անուշաբույր յուղ,
կնդրուկ, գինի և ձեթ, ազնիվ այլուր,
ցորեն, արջառ ու ոչխար,
ձի և ձիակառք, գերիներ և նույնիսկ մարդիկ:

¹⁴ Այո՛, ինչ դու ցանկացար քեզ համար,
հեռացավ քեզնից.

չքացան քո վայելչությունն ու փայլը,
այլևս չես գտնելու դրանք»:

¹⁵ Բոլոր վաճառականներն էլ, որոնք նրա միջոցով հարստացան, վախենալով նրա

^{18.7-8} Ես 47.7-9:

^{18.9-10} Եզկ 26.16-17:

^{18.11} Եզկ 27.31, 36:

^{18.12-13} Եզկ 27.12, 13, 22:

տանջանքներից՝ հեռու կմնան նրանից և լաց լինելով ու սգալով՝¹⁶ կասեն.

«Վա՛յ, վա՛յ, մեծ քաղաք,
որ հագնում էիր բեհեզ, ծիրանի և որդան կարմիր,
զարդարվում ոսկով,
անգին քարերով և մարգարիտներով,
¹⁷ մեկ ժամում վատնվեց
քո անչափ հարստությունը»:

Բոլոր նավավարները և բոլոր նրանք, որ նավարկում են տեղից տեղ, նավաստիներ և ձկնորսներ, հեռու կանգնեցին՝¹⁸ և տեսնելով հրկիզումի քո ծուխը՝ աղաղակում էին. «Այս մեծ քաղաքի նման ուրիշ քաղաք կա՞ր»:¹⁹ Հող ցանեցին իրենց գլուխներին և լաց լինելով ու սգալով՝ քարձրաձայն աղաղակում էին.

«Վա՛յ, վա՛յ, մե՛ծ քաղաք,
որի ճոխությունից հարստացան
բոլոր նավատերերը.
ա՛խ, ինչպե՞ս կործանվեցիր մեկ ժամում»:
²⁰ Ուրախացի՛ր նրա դատապարտության վրա, ո՛վ երկինք,
Եվ դուք՝ սրբեր, առաքյալներ, մարգարեներ,
որովհետև Աստված դատապարտեց նրան
և ձեր վրեժը նրանից լուծեց»:

²¹ Ապա մի հզոր հրեշտակ վերցրեց մեծ երկանաքարի նման մի քար և այն ծովը գցելով՝ ասաց.

«Այս նույն ուժգնությամբ պիտի ընկնի
մեծ քաղաքը՝ Բաբելոնը, և կորչի առհավետ»:
²² Պիտի լռեն բոլորը
քնարահարներ ու երաժիշտներ,
սրնգահարներ ու փողահարներ.
որևէ արհեստ գործադրող արհեստավոր
այլևս չի գտնվի քո մեջ.
երկանքի ձայնն այլևս չի լսվի քո մեջ.*

²³ Ճրագի լույսն այլևս չի փայլի քո մեջ.
փեսայի ու հարսի ձայնն այլևս չի լսվի քո մեջ,
որովհետև քո վաճառականները
հզորներն էին աշխարհի,

*18.15 Եզկ 27.31, 36:

*18.17 Ես 23.14, Եզկ 27.26-30:

*18.18 Եզկ 27.32:

*18.19 Եզկ 27.30-34:

*18.20 Բ Օր 32.43, Եր 51.48:

*18.21 ա Եր 51.63-64: ք Եզկ 26.21:

*18.22 Եզկ 26.13, Ես 24.8:

*18.22-23 Եր 7.34, 25.10:

որովհետև բոլորն էլ՝ ազգերը բոլոր,
մոլորվեցին քո թունավոր կախարդանքից:
24 Այս բաները պատահեցին,
քանի որ Աստված քո մեջ գտավ
ամբողջ արյունը մարգարեների,
Աստծու ընտրյալների
և երկրի վրա սպանված բոլոր մարդկանց»:

19

Հաղթական երգեր

¹ Հետո լսեցի երկնքում գտնվող մի հսկա բազմության մեծ ձայնը, որ ասում էր.

«Ալելուիա ,
մեր Աստծունն է փրկությունը,
փառքն ու զորությունը,^{*}

² քանզի ճշմարիտ և արդար է դատաստանը նրա:
Նա դատապարտեց մեծ պոռնիկին,
որ ապականում էր աշխարհն իր պոռնկությամբ,
և նրանից լուծեց նրա ձեռքով սպանված
իր ծառաների արյան վրեժը»:^{*}

³ Նրանք կրկին օրհներգեցին և ասացին. «Ալելուիա՛ , նրա հրկիզումի ծուխը
բարձրանում է հավիտյանս հավիտենից»:^{*}

⁴ Քսանչորս երեցներն ու չորս կենդանիները գետին ընկան և երկրպագեցին գահի
վրա նստած Աստծուն՝ ասելով. «Ամեն. ալելուիա՛ »:

Գառան հարսանեկան խրախճանքը

⁵ Եվ գահից մի ձայն եկավ, որ ասում էր.

«Օրհներգե՛ք մեր Աստծուն,
նրա բոլոր ծառաներդ,
դուք՝ փոքրերդ ու մեծերդ,
որ երկնչում եք նրանից»:^{*}

⁶ Ապա լսեցի մի մեծ բազմության ձայն՝ նման առատ ջրերի շառաչին և ուժեղ որոտի
ձայնին, որ դարձյալ ասում էր.

«Ալելուիա ,

^{18.24} Եր 51.49:

^{19.1} «Ալելուիա». եբր. այս բառը կազմված է «հալլելու» (= օրհնեցե՛ք) և «Եահ» (=Եահվեին, Եհովային, Տիրոջը) բաղադրիչներով: ՆԿ-ում այս բառը միայն այստեղ գործածվել է վեց անգամ: «Փառքը». գրբ. ավելացնում է «պատիվը»:

^{19.2} «Մեծ պոռնիկը», այսինքն՝ Բաբելոնը, «մեծ քաղաքը». տե՛ս 14.8-ի ծնթ:

^{19.2} Բ Օր 32.43, Դ Թգ 9.7:

^{19.3} Ես 34.10:

^{19.5} Սղ 115.13:

որովհետև թագավորեց Տերը՝
ամենակալ Աստվածը մեր։*

⁷ ուրախանանք, ցնծանք ու փառք տանք նրան,
քանի որ հասավ ժամը Գառան հարսանիքի,
և նրա հարսը պատրաստեց ինքն իրեն։*

⁸ հարսին տրվեց մաքուր և լուսափայլ բեհեզ՝
հագնելու համար»:

(Բեհեզը խորհրդանշում է Աստծու ընտրյալների արդար գործերը:)

⁹ Հրեշտակն ինձ ասաց.

- Գրի՛ր, ինչ որ ասում եմ. «Երանելի են բոլոր նրանք, որ հրավիրված են Գառան հարսանեկան ընթրիքին»։* ¹⁰ Ես ընկա նրա ոտքերի առաջ, որպեսզի երկրպագեմ, բայց նա ինձ ասաց.

- Զգո՛ւյշ, մի՛ երկրպագիր ինձ, որովհետև ես էլ քո և քո եղբայրների ծառայակիցն եմ, որոնք վկայություն են տալիս Հիսուսի մասին: Երկրպագիր միայն Աստծո՛ւն, որովհետև Հիսուսի մասին վկայելն է բուն մարգարեության հոգին։*

Սպիտակ ձին և ձիավորը

¹¹ Եվ ահա երկինքը բացվեց, և ես տեսա մի սպիտակ ձի, որի վրա նստող ձիավորը կոչվում է Հավատարիմ և Ճշմարիտ. նա արդարությամբ է դատում և պատերազմում։*

¹² Նրա աչքերը նման էին կրակի բոցի, գլխին ուներ բազմաթիվ թագեր, և իր վրա գրված ուներ մի անուն, որ իրենից բացի ոչ ոք չգիտի։* ¹³ Հագել էր մի պատմուճան, որ ներկված էր արյունով. նրա անունն է՝ «ԱՍՏՕՈՒ ԽՈՍՔԸ»։* ¹⁴ Երկնքի գորքերը սպիտակ ձիերով հետևում էին նրան՝ հագած սպիտակ և մաքուր բեհեզներ։* ¹⁵ Նրա բերանից ելնում էր սրված մի սուր՝ դրանով ազգերին հարվածելու համար: Նա նրանց կհովվի երկաթե մականով և կկոխոտի ամենակալ Աստծու ահեղ բարկության գինու հնձանը։* ¹⁶ Նրա պատմուճանի և ազդրի վրա գրված էր՝ «ԹԱԳԱՎՈՐ

*19.6 Բ Եզր 6.17: ա Եզկ 1.24: ք Սղ 93.1, 97.1, 99.1:

*19.7 «Գառան հարսանիքը». հարսանիքի պատկերումը թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանում արտահայտում է Աստծու և նրա ժողովրդի ամենասերտ հարաբերությունը (Ես 54.5-7: Օս 2.19: Մտ 22.2-14: Եփ 5.32 նն):

*19.9 Բնագիրը չունի «հրեշտակ» բառը, իսկ գրք. ասում է «երեցներից մեկը»: «Հրավիրված են». հուն. ավելացնում է «սրանք Աստծու ճշմարիտ խոսքերն են»:

*19.9 Մտ 22.2-3:

*19.10 «Որովհետև Հիսուսի մասին վկայելն է բուն մարգարեության հոգին». գրք. ունի «որովհետև այդ տեսիլքը և մարգարեական հոգին Հիսուսի կողմից հաստատվեց, քանի որ մարգարեները Սուրբ Հոգու միջոցով վկայություն տվեցին Հիսուսի մասին»:

*19.11 «Մի սպիտակ ձի». այս ձին և ձիավորը 6.2-ում հիշված չեն: Այս սպիտակ ձիու վրա նստողը Քրիստոսն է՝ որպես հաղթական թագավոր:

*19.11 ա Եզկ 1.1: ք Սղ 96.13, Ես 11.4:

*19.12 Դն 10.6:

*19.13 Իմս 18.14-18:

*19.15 «Սրված մի սուր». տե՛ս 1.16-ի ծնթ:

*19.15 ա Սղ 2.9: ք Ես 63.3, Հվլ 3.13, Հտ 14.20:

ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՏԵՐ ՏԵՐԵՐԻ»:

¹⁷ Հետո տեսա արեգակի վրա կանգնած մի ուրիշ հրեշտակի, որ բարձրաձայն աղաղակեց՝ երկնքում թևածող բոլոր թռչուններին ասելով. «Եկե՛ք, հավաքվեցե՛ք Աստծու մեծ ընթրիքին,՝ ¹⁸ որպեսզի ուտեք թագավորների, գորավարների, հզոր մարդկանց, ձիերի և նրանց վրա նստած հեծյալների մարմինները, ազատների և ծառաների, մեծերի և փոքրերի մարմինները»:

¹⁹ Ապա տեսա, որ գազանը և երկրի թագավորներն ու նրանց գորքերը հավաքվեցին, որպեսզի պատերազմեն սպիտակ ձիու վրա նստած հեծյալի և նրա գորքի դեմ:

²⁰ Գազանը բռնվեց, ինչպես նաև նրա հետ եղող սուտ մարգարեն, որ հրաշքներ էր գործում նրա ներկայությամբ և այդ հրաշքներով մոլորեցնում էր նրանց, որոնք գազանի դրոշմն էին առել իրենց վրա և երկրպագում էին նրա արձանին: Ապա գազանին ու սուտ մարգարեին ողջ-ողջ գցեցին կրակե լճի մեջ, որ բոցավառվում էր ծծումբով:՝ ²¹ Իսկ գազանի գորքերն սպանվեցին ձիու վրա նստած հեծյալի սրով, որը ելնում էր նրա բերանից: Եվ բոլոր թռչունները հագեցան նրանց մարմիններն ուտելուց:

20

Հազարամյա թագավորությունը

¹ Եվ տեսա մի ուրիշ հրեշտակի, որ իջնում էր երկնքից և իր ձեռքին ուներ անդունդի բանալին և մի մեծ շղթա:՝ ² Նա բռնեց վիշապին՝ այն առաջին օձին, որ Բանասարկուն է և Սատանան, և հազար տարով շղթայեց նրան:՝ ³ Հրեշտակը նրան գցեց անդունդը, կողպեց և կնքեց կողպեքը, որպեսզի այլևս չմոլորեցնի ազգերին, մինչև որ լրանա հազար տարին: Դրանից հետո նա պետք է ազատ արձակվի մի կարճ ժամանակով:

⁴ Ապա տեսա գահեր, որոնց վրա նստեցին նրանք, որոնց իշխանություն տրվեց դատելու: Տեսա նաև այն հոգիներին, որոնք Հիսուսին և Աստծու խոսքին իրենց սոված վկայության համար չարաչար սպանվել էին: Սրանք չէին երկրպագել գազանին և իրենց ճակատների ու ձեռքերի վրա չէին դրոշմել նրա կնիքը: Սրանք

^{19.16} «Թագավոր թագավորների և Տեր տերերի». տե՛ս 17.14-ի ծնթ:

^{19.17-18} Եզկ 39.17-20:

^{19.20} «Գազանը». տե՛ս 13.1-ի ծնթ: «Սուտ մարգարեն». տե՛ս 13.11-ի ծնթ:

^{19.20} Հտ 13.1-18:

^{20.1} «Անդունդ». տե՛ս 9.1-ի ծնթ:

^{20.2} «Հազար տարի». այս գլխում հինգ անգամ (տե՛ս նաև հմր 4, 5 և 7) խոսվում է հազար տարվա մի ժամանակաշրջանի մասին (հաճախ «հազարամյա» կոչված), որի ընթացքում Սատանան պետք է մնա կապված, իսկ Քրիստոսը պետք է իշխի իր ընտրյալների հետ: Ոմանք այդ հազարամյան բառացիորեն են հասկանում և սպասում են, որ այն լինի Քրիստոսի երկրորդ գալստից անմիջապես առաջ կամ հետո: Ոմանք էլ այն հասկանում են ավելի ազատ կերպով՝ ասելով, որ դրանով ուղիղ հազար տարի չպետք է հասկանալ, և որ այժմ մենք արդեն գտնվում ենք այդ հազարամյայի մեջ, երբ Քրիստոսն իշխում է իր ընտրյալներով, մինչև որ նրա երկրորդ գալստյամբ, մեռելների հարությամբ և վերջին դատաստանով Աստծու թագավորությունը հաստատվի նոր երկրի վրա:

^{20.2} Ծն 3.1:

վերակենդանացան և հազար տարի թագավորեցին Քրիստոսի հետ:՝ ⁵ Մնացած մեռելներից ոչ ոք չկենդանացավ, մինչև լրացավ հազար տարին: Սա մեռելների առաջին հարությունն է: ⁶ Երանելի և սուրբ են նրանք, որոնք բաժնեկից են մեռելների առաջին հարությանը: Սրանց վրա երկրորդ մահը իշխանություն չունի. սրանք կլինեն Աստծու և Քրիստոսի քահանաները և հազար տարի կթագավորեն Քրիստոսի հետ:՝

Սատանայի պարտությունը

⁷ Երբ լրանա հազար տարին, Սատանան ազատ կարձակվի բանտից: Նա կելնի և կմոլորեցնի երկրի չորս կողմերում գտնվող բոլոր ազգերին, Գոգին ու Մագոգին, և նրանց կհավաքի պատերազմելու համար. նրանց թիվն անհամար է ծովի ավազի չափ:՝ ⁸ Նրանք տարածվեցին երկրի վրա և շրջապատեցին Աստծու ընտրյալների բնակավայրն ու սիրելի քաղաքը:՝ ⁹ Սակայն երկնքից, Աստծու մոտից կրակ տեղաց և լափեց նրանց: ¹⁰ Իսկ Բանասարկուն, որը մոլորեցրեց նրանց, զգվեց կրակի և ծծմբի լիճը, ուր արդեն զգվել էին գազանը և սուտ մարգարեն. այնտեղ նրանք պիտի չարչարվեն գիշեր ու ցերեկ, հավիտյանս հավիտենից:

Վերջին դատաստանը

¹¹ Հետո տեսա մի մեծ, սպիտակ գահ և նրա վրա բազմած մեկին, որի ներկայությունից փախան երկինքն ու երկիրը՝ առանց հետք թողնելու:՝ ¹² Եվ տեսա մեռելներին՝ մեծ ու փոքր, որոնք կանգնած էին գահի առաջ: Բացվեցին գրքերը, և ապա բացվեց մի ուրիշ գիրք՝ Կյանքի գիրքը: Մեռելները դատվեցին ըստ իրենց գործերի, որոնք արձանագրվել էին այնտեղ:՝ ¹³ Ապա ծովը հանձնեց իր մեջ գտնվող մեռելներին. նույն բանն արեցին մահն ու դժոխքը, և յուրաքանչյուր մեռել դատվեց ըստ իր գործերի:՝ ¹⁴ Հետո մահն ու դժոխքը զգվեցին կրակի լիճը: Այս է երկրորդ մահը, որ կրակի լիճն է: ¹⁵ Եվ նա, ում անունը չկար Կյանքի գրքում, զգվեց կրակի լիճը:

21

Նոր երկինք և նոր երկիր

¹ Ապա տեսա մի նոր երկինք ու նոր երկիր, որովհետև նախկին երկինքն ու երկիրը անհետացան, և ծովն էլ կորավ:՝ ² Եվ տեսա սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը, որ իջնում էր Աստծու մոտից, երկնքից՝ զարդարված ու պատրաստ, ինչպես հարսն իր

^{20.4} Դն 7.9, 22:

^{20.6} «Երկրորդ մահը». 14-րդ համարում բացատրված է իբրև «կրակի լիճ» (հմմտ 21.8), ուր զգվողները «պիտի չարչարվեն գիշեր ու ցերեկ» (հմր 10):

^{20.7} «Գոգն ու Մագոգը» այս գրքում խորհրդանշականորեն ներկայացնում են այն բոլոր ազգերին, որոնք վերջին ժամանակներում թշնամություն են անելու Աստծու ժողովրդի դեմ:

^{20.8} ա Եզկ 7.2: ք Եզկ 38.2, 9, 15:

^{20.11-12} Դն 7.9-10:

^{20.12} Բ Եզր 6.20:

^{21.1} Ես 65.17, 66.22, Բ Պտ 3.13:

ամուսնու համար: * * ³ Երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Ահավասիկ Աստծու բնակավայրը մարդկանց մեջ է. Աստված բնակվելու է նրանց հետ, և նրանք կլինեն իր ժողովուրդը, և ինքը՝ Աստված, նրանց հետ կլինի իբրև նրանց Աստվածը:» * * ⁴ Նա կարբի նրանց աչքերից ամեն արտասուք, և այլևս ո՛չ մահ գոյություն կունենա. ո՛չ սուգ, ո՛չ ողբ, ո՛չ ցավ և ո՛չ էլ հոգնություն, որովհետև նախկիններն անցան գնացին:»

⁵ Նա, որ նստած էր գահի վրա, ասաց.

- Ահավասիկ ամեն բան նոր եմ դարձնում:

Ապա ասաց ինձ.

- Գրի՛ր սրանք, որովհետև այս խոսքերը ճշմարիտ և վստահելի են:

⁶ Եվ ասաց.

- Եղավ. ես եմ Ալֆան և Օմեգան, Սկիզբն ու Վախճանը: Ես ծարավածին ձրի ջուր կտամ կյանքի ջրի աղբյուրից: * ⁷ Ով որ հաղթի, կժառանգի այս բոլորը, և ես նրա Աստվածը կլինեմ, և նա՝ իմ որդին: * ⁸ Բայց վախկոտների, անհավատների, պիղծերի, մարդասպանների, պոռնիկների, կախարդների, կռապաշտների և բոլոր ստախոսների բաժինը կրակով և ծծումբով այրվող լիճն է, որ երկրորդ մահն է:

Նոր Երուսաղեմը

⁹ Ապա ինձ մոտ եկավ մեկն այն յոթ հրեշտակներից, որոնք ունեին վերջին յոթ պատուհասներով լեցուն յոթ անոթները. նա խոսեց ինձ հետ և ասաց.

- Ե՛կ, քեզ ցույց կտամ հարսին՝ Գառան կնոջը:

¹⁰ Նա հոգով ինձ բարձրացրեց, առավ և տարավ մի բարձր ու հսկա լեռան վրա և ցույց տվեց սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, որ իջնում էր երկնքից՝ Աստծու մոտից: * ¹¹ Նա փայլում էր Աստծու փառքով, և նրա փայլը նման էր թանկագին քարի փայլի, ինչպես բյուրեղի պես թափանցիկ հասպիս քարը: * ¹² Քաղաքն ուներ մի մեծ և բարձր պարիսպ՝ տասներկու դռներով, որոնց վրա կային տասներկու հրեշտակներ: Դռներից յուրաքանչյուրի վրա գրված էր Իսրայելի տասներկու ցեղերից յուրաքանչյուրի անունը: * ¹³ Արևելքից կային երեք դռներ, հյուսիսից՝ երեք, հարավից՝ երեք և արևմուտքից՝ երեք: * ¹⁴ Քաղաքի պարիսպն ուներ տասներկու հիմքեր, և դրանց վրա գրված էին Գառան տասներկու առաքյալների անունները:

¹⁵ Նա, ով խոսում էր ինձ հետ, իր ձեռքում ուներ ոսկե մի եղեգ՝ իբրև քանոն, որպեսզի

*21.2 «Նոր Երուսաղեմը» իր մեջ խտացնում է գույգ պատկերացումներ. մի կողմից նա ունի երկրային Երուսաղեմի և նրա տաճարի նմանություն, իսկ մյուս կողմից՝ Եդեմի դրախտի (հմմտ 22.1-5):

*21.2 Բ Եզր 13.36: ա Ես 52.1: ք Հտ 3.12: գ Ես 61.10:

*21.3 «Երկնքից». շատ ձեռ. ունեն «*quahig*»: Բնագրում «*բնակավայր*» բառի փոխարեն կա «*խորան*»:

*21.3 Եզկ 37.27, Ղև 26.11, 12:

*21.4 ա Ես 25.8: ք Ես 35.10, 65.19:

*21.6 Ես 55.1:

*21.7 Բ Թգ 7.14, Սղ 89.26-27, Ղև 26.11, 12:

*21.10 Եզկ 40.2, Բ Եզր 10.27:

*21.11 «*Հասպիս*». թանկարժեք քար՝ թափանցիկ կանաչ ու կարմիր գույնով:

*21.12-13 Եզկ 48.30-35:

չափի քաղաքը, նրա դռներն ու պարիսպը:՝ ¹⁶ Քաղաքը քառակուսի էր՝ հավասար երկարությամբ և լայնությամբ: Հրեշտակը եղեգով չափեց քաղաքը, որ երկու հազար երկու հարյուր կիլոմետր էր: Նրա երկարությունը, լայնությունը և բարձրությունը հավասար էին:՝ ¹⁷ Հրեշտակը չափեց նաև պարիսպը, որի բարձրությունը վաթսուհինգ մետր էր: Հրեշտակի գործածած չափը մարդկանց գործածած չափն էր:՝ ¹⁸ Պարիսպը կառուցված էր հասպիս քարից, իսկ քաղաքը մաքուր ոսկի էր՝ նման մաքուր և հստակ ապակու:՝ ¹⁹ Քաղաքի պարսպի հիմքերը զարդարված էին ամեն տեսակ թանկագին քարերով: Առաջին հիմքը հասպիս էր, երկրորդը՝ շափյուղա, երրորդը՝ կարկեհան, չորրորդը՝ զմրուխտ, ²⁰ հինգերորդը՝ եղնգաքար, վեցերորդը՝ սարդիոն, յոթերորդը՝ ոսկեքար, ութերորդը՝ բյուրեղ, իններորդը՝ տպագիոն, տասներորդը՝ քրիստապրաստս, տասնմեկերորդը՝ հակինթ և տասներկուերորդը՝ մեդեաիկ: ²¹ Տասներկու դռները շինված էին տասներկու մարգարիտներից, յուրաքանչյուր դուռը՝ մեկ կտոր մարգարիտից, և քաղաքի հրապարակը մաքուր ոսկի էր՝ նման թափանցիկ ապակու:

²² Քաղաքի մեջ տաճար չտեսա, որովհետև ամենակալ Տեր Աստվածն ու Գառը իրե՛նք էին տաճարը: ²³ Լուսավորվելու համար քաղաքը կարիք չուներ արեգակի և լուսնի, որովհետև Աստծու փառքն ի՛նքը լուսավորում էր այն, և նրա ճրագը Գառն էր:՝ ²⁴ Ժողովուրդները նրա լույսով կառաջնորդվեն, և երկրի թագավորները նրա՛ն կբերեն իրենց փառքը:՝ ²⁵ Քաղաքի դռները բնավ չեն փակվի, որովհետև այնտեղ գիշեր չի լինելու: ²⁶ Ազգերի փառքն ու պատիվը նրա՛ն կբերվի. ²⁷ այնտեղ չի մտնի ոչ մի պիղծ բան, ոչ էլ պղծություն գործող կամ ստախոս մարդ, այլ միայն նրանք, որոնց անունները գրված են Գառան Կյանքի գրքում:՝

22

Կենսատու ջուրը և կյանքի ծառը

¹ Հրեշտակն ինձ ցույց տվեց կենսատու ջրի՝ բյուրեղի նման փայլուն գետը, որ բխում էր Աստծու և Գառան գահից: ² Քաղաքի հրապարակի մեջտեղում և գետի այս ու այն կողմում կար Կյանքի ծառը, որ տարին տասներկու անգամ պտուղ էր տալիս, ամեն

^{21.15} Եզկ 40.3:

^{21.16-17} «Երկու հազար երկու հարյուր կիլոմետր». բնագրում՝ «տասներկու հազար ասպարեզ»: Ինչպես հեշտությամբ կարելի է նկատել, բոլոր հաշվումների մեջ էլ տիրապետող թիվը 12-ն է կամ նրա բազմապատկումը (տե՛ս հմր 17, «բարձրությունը 144 կանգուն էր», որ 12X12 է), որ ցույց է տալիս, թե այս թվերն իրական արժեք չունեն, այլ խորհրդանշական են՝ պարզապես Աստծու քաղաքի կատարելությունն արտահայտելու համար:

^{21.17} «Բարձրությունը» կամ թերևս «լայնությունը»:

^{21.18-21} Ես 54.11-12:

^{21.18} Տբ 13.16-17:

^{21.23} Ես 60.19-20:

^{21.24} Ես 60.3:

^{21.27} Ես 52.1, Եզկ 44.9:

^{22.1} Եզկ 47.1, Ջք 14.8:

ամիս՝ իր պտուղը, իսկ տերևները ծառայում էին ազգերին բժշկելու համար։³ Քաղաքում նգովյալ բան գոյություն չի ունենալու. Աստծու և Գառան գահը այնտե՛ղ է լինելու, և նրա ծառաները կպաշտեն նրան։⁴ Նրանք կտեսնեն նրա դեմքը, և նրա անունը կգրվի իրենց ճակատների վրա։⁵ Այնտեղ այլևս գիշեր չի լինելու, և նրանք կարիք չի ունենա ճրագի և արևի լույսի, որովհետև Տեր Աստված ի նքն է լուսավորելու նրանց. նրանք կթագավորեն հավիտյանս հավիտենից։

Հիսուսի գալուստը

⁶ Հրեշտակն ինձ ասաց.

- Ասաձս խոսքերը վստահելի են և ճշմարիտ: Տերը՝ մարգարեների հոգիների Աստվածը, ուղարկեց իր հրեշտակին, որպեսզի իր ծառաներին ցույց տա այն, ինչ որ պատահելու է շուտով: ⁷ Ահա գալիս եմ շուտով: Երանի՛ նրան, ով պահում է այս գրքի մարգարեության խոսքերը:

⁸ Ես՝ Հովհաննեսս, անձամբ լսեցի և տեսա այս բոլորը. և երբ լսեցի ու տեսա, գետին ընկա հրեշտակի ոտքերի առջև՝ երկրպագելու նրան, որ ինձ ցույց էր տալիս այս բոլորը: ⁹ Բայց նա ինձ ասաց.

- Զգո՛ւյշ, մի՛ արա, որովհետև ես էլ ծառայակիցն եմ քո և քո եղբայրների, այսինքն՝ մարգարեների և նրանց, որոնք պահում են այս գրքի պատգամները: Աստծո՛ւն երկրպագիր:

¹⁰ Ապա շարունակեց.

- Այս գրքի մարգարեության խոսքերը կնքված մի՛ պահիր, որովհետև մոտեցել է ժամանակը: ¹¹ Թող ամբարիշտը կրկին ամբարշտություն անի, վատ մարդը՝ իր վատությունը, ով արդար է, թող արդարություն անի, և սուրբն իր սրբությունը պահի:՝

¹² Ահա գալիս եմ շուտով, և ինձ հետ կբերեմ իմ վարձը, որպեսզի յուրաքանչյուրին հատուցեմ ըստ իր գործերի:՝ ¹³ Ես եմ Ալֆան և Օմեգան, Առաջինը և Վերջինը, Սկիզբն ու Վախճանը:՝

¹⁴ Երանելի են նրանք, որ պահում են նրա պատվիրանները: Նրանք իրավունք կունենան ուտելու Կյանքի ծառից և դռներով քաղաք մտնելու:՝ ¹⁵ Իսկ շնացողներն ու

՝22.2 «Հրապարակի մեջտեղում և գետի այս ու այն կողմում» կամ «հրապարակի մեջտեղում կար Կյանքի ծառը, որի մեկ և մյուս կողմից հոսում էր գետը»:

՝22.2 Ծն 2.9, Բ Եզր 22.12, 7.13:

՝22.3 Ձք 14.11 (տե՛ս Ծն 3.17):

՝22.4 «Նրանք կտեսնեն նրա դեմքը». Աստծուն դեմառդեմ տեսնելը կլինի մեծագույն պարզևն ու օրհնությունը, որ վայելելու են Աստծու ծառաները (հմմտ Ա Կր 13.12: Ա Հհ 3.2): Մինչդեռ մեղավորները հավետ գրկվելու են Աստծու ներկայությունից:

՝22.4 Բ Եզր 7.98:

՝22.5 ա Ես 60.19: ք Դն 7.18:

՝22.11 Դն 12.10:

՝22.12 ա Ես 40.10, 62.11: ք Սղ 28.4, Ես 40.10, Եր 17.10:

՝22.13 ա Հտ 1.8: ք Ես 44.6, 48.12, Հտ 1.17, 2.8:

՝22.14 «Որ պահում են նրա պատվիրանները». ձեռ. կեսն ունի «որ լվանում են իրենց պատմուճանները»:

՝22.14 Ծն 2.9, 3.22:

կախարդները, պոռնիկներն ու մարդասպանները, կռապաշտները և բոլոր նրանք, ովքեր սիրում են սուտը և ստություն են անում, կմնան դրսում:

¹⁶ «Ես՝ Հիսուսս, ուղարկեցի իմ հրեշտակին, որպեսզի եկեղեցիների մասին այս վկայությունը տա ձեզ: Ես Դավթի արմատն ու նրա սերունդն եմ, առավոտյան պայծառ աստղը:» ¹⁷ Եվ Հոգին ու Հարսն ասում են՝ Ե՛կ: Ով լսում է, թող ասի՝ Ե՛կ: Ով ծարավ է, թող գա, և ով ուզում է, թող ձրի առնի կյանքի ջրից:»

¹⁸ Եվ ես՝ Հովհաննէսս, ազդարարում եմ բոլոր նրանց, որոնք լսում են այս գրքի մարգարեության խոսքերը: Եթե որևէ մեկը մի բան ավելացնի սրա վրա, Աստված էլ նրան տրվելիք պատժի վրա կավելացնի այս գրքում նկարագրված պատուհասները:»

¹⁹ Եվ եթե որևէ մեկը մի բան պակասեցնի այս գրքի մարգարեության խոսքերից, Աստված էլ այս գրքում նկարագրված Կյանքի ծառից և սուրբ քաղաքից կպակասեցնի նրա բաժինը: ²⁰ Այս բոլորի մասին վկայողն ասում է. «Այո՛, գալիս եմ շուտով»: Ամեն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս:

²¹ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը թող լինի Աստծու ամբողջ ժողովրդի վրա: Ամեն:

^{22.16} «Եկեղեցիների մասին» կամ «եկեղեցիներում»:

^{22.16} Ես 11.1, 10:

^{22.17} Ես 55.1:

^{22.18-19} Բ Օր 4.2, 12.32: